Գ. Բ. ՋԱՀՈՒԿՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳՐԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

Г. Б. ДЖАУКЯН

ИСТОРИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА

ДОПИСЬМЕННЫЙ ПЕРИОД

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1987

4(47.925)
Ջ-22

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Բ. ՋԱՀՈՒԿՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳՐԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

2375

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1987

ԳՄԴ 81. 2Հ
Ջ 229

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների
թեկնածու Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել բանասիրական գիտությունների
դոկտորներ Հ. Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆԸ և Հ. Զ. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Ջահուկյան Գ. Բ.
Ջ229 *Հայոց լեզվի պատմություն։ Նախագրային ժամանակաշրջան/Պատ. խմբ. Լ. Ս. Հովսեփյան. —Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987.—748 էջ.*
Վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ին-տ.

Աշխատությունն ընդգրկում է հայոց լեզվի պատմության նախագրային ժամանակաշրջանի պատմությունը և բաղկացած է ներածությունից ու երեք մասից։ Առաջին մասում համակողմանիորեն բնութագրվում են հնդեվրոպական լեզուն և հնդեվրոպացիների կյանքն ու մշակույթը, վերականգնվում են հայերենի հնդեվրոպական բաղադրիչները, և որոշվում է հայերենի տեղը հնդեվրոպական բարբառների մեջ։ Երկրորդ մասում քննվում է հայերենի առանձնակի գոյության վաղնջական շրջանի պատկերը, և եղած տվյալների համադրությամբ բացահայտվում են նրա կառուցվածքի ու բառապաշարի հիմնական կողմերը։ Երրորդ մասում տրվում է հայերենի հնագույն շրջանի պատմությունը, և գծվում է V դ. լեզվավիճակի կազմավորման ընթացքը։ Աշխատության մեջ հատուկ ուշադրություն է նվիրված հայերենի և ուրիշ լեզուների փոխազդեցության հարցերին։

Աշխատությունը նախատեսված է բանասերների, պատմաբանների և հայոց լեզվի ու հայ ժողովրդի պատմությամբ հետաքրքրվողների համար։

Ջ $\frac{4602010000}{703(02)-87}$ 82—85 ԳՄԴ 81. 2Հ

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1987

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայկական ՍՍՀ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ձեռնարկել է հայոց լեզվի ամբողջական պատմության ստեղծումը։ Հայոց լեզվի պատմության գոյություն ունեցող շարադրանքներից, մասնավորապես Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» երկհատորյակից [**Աճառյան**, 1940—1951] այն տարբերվում է ոչ միայն իր ծավալով, այլև ընդհանուր մտահղացմամբ, նյութի ընդգրկման, դասակարգման և ժամանակագրական բաշխման սկզբունքներով։ Հ. Աճառյանի աշխատությունը փաստորեն ընդգրկում է միայն հայոց լեզվի, այսպես կոչված, արտաքին փաստերի շարադրանքը և «Հայերեն արմատական բառարանի» բառային նյութի ծագումնային դասակարգումը, այսինքն՝ բառապաշարի պատմությունը։ Մինչդեռ ներկա աշխատության հեղինակային կոլեկտիվի ըմբռնմամբ հայոց լեզվի պատմությունը որպես գիտակարգ պետք է տա հայոց լեզվի բոլոր տարատեսակների և բոլոր բաղադրիչների կարգացման պատկերը՝ հստակորեն բաշխված ըստ ժամանակագրական շրջանների։ Հայոց լեզվի պատմության շրջանաբաժանման և ժամանակագրական բաշխման սկզբունքները մշակվել են հատկապես Գ. Բ. Ջահուկյանի աշխատություններում [**Ջահուկյան**, 1956.1969, 6—68. **Джаукян**, 1967, 313—332. 1973, 115—121]։ Դրանց հիման վրա Լ. Ս. Հովսեփյանի կողմից կազմվել է «Հայոց լեզվի պատմության» նախագիծը [**Հովսեփյան**, 1977], որ դրվել է հրապարակային քննության և հավանության արժանացել։ Հարկ ենք համարում նշել, որ այս աշխատության մեջ օգտագործված են բազմաթիվ նոր նյութեր ու աղբյուրներ, որոնք հայտնի չեն եղել և չեն արտացոլվել Հ. Աճառյանի ու այլ հեղինակների՝ հայոց լեզվի պատմության ամբողջական և մասնակի շարադրանքներում։ Ընդհանուր առմամբ հեղինակները ջանացել են, որ աշխատությունն արտացոլի լեզվաբանական գիտության ժամանակակից մակարդակը և հայագիտության կարգացման վերջին շրջանի նվաճումները։ Լեզվի ինստիտուտը որոշ չափով նախապատրաստել է այս աշխատությունը հայոց լեզվի պատմության տարբեր շրջաններին (գրաբար, միջին հայերեն, արևմտահայ և արևելահայ գրական լեզուներ), հայոց լեզվի համեմատական և պատմական քերականությանը, գրական լեզվի կարգացման տարբեր փուլերին և պատմական բարբառագիտությանը նվիրված ուսումնասիրություններով։

«Հայոց լեզվի պատմության» նյութը բաշխված է հետևյալ կերպ.

1-ին գիրք՝ նախագրային ժամանակաշրջան (հեղինակ՝ Գ. Բ. Ջահուկյան).

2-րդ գիրք՝ հին շրջան (հեղինակ՝ Լ. Ս. Հովսեփյան).

3-րդ գիրք՝ միջին շրջան (հեղինակ՝ Պ. Կ. Վարդապետյան).

4-րդ գիրք՝ նոր շրջան. 1-ին մաս՝ արևելահայ տարածք (հեղինակներ՝ Ս. Գ. Աբրահամյան և Ն. Ա. Պառնասյան). 2-րդ մաս՝ արևմտահայ տարածք (հեղինակ՝ Ա. Ե. Սարգսյան)։

Լեզվի ինստիտուտը և հեղինակները շնորհակալություն են հայտնում բոլոր նրանց, ովքեր որևէ չափով նպաստել են աշխատության ստեղծմանը։ Ներկա գրքի հեղինակը իր պարտքն է համարում հատուկ շնորհակալություն հայտնելու իրանագետ Լ. Գ. Գերցենբերգին, որի տրամադրած նյութերը մեծապես օգնել են հայերենի իրանական փոխառությունների ցանկի լրացմանը։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՐԳ, ՆՐԱ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Լեզվի պատմություն» բառակապակցությունը երկարժեք է. այն նշանակում է և՛ լեզվաբանական մի որոշակի գիտակարգ, և՛ նրա ուսումնասիրության առարկան։ Ըստ լեզվաբանական գիտակարգերի ընդհանուր դասակարգման [Джаукян, 1976, 46—55] *լեզվի պատմությունը պատկանում է տարածական առումով առանձնական և ժամանակային առումով՝ պատմական կամ, ինչպես ընդունված է ասել, տարաժամանակյա գիտակարգերի թվին։ Բացատրենք այս դրույթն ըստ էության։*

Խոսելով լեզվի պատմության մասին որպես առանձնական գիտակարգի՝ մենք նկատի ենք առնում «լեզու» բառի գործածությունը մեկ հանրության պատկանող լեզվի առումով («հայոց լեզու», «ռուսաց լեզու» և այլն)՝ ի հակադրություն ավելի լայն (հմմտ. «մարդկային լեզու») կամ ավելի նեղ գործածությունների (հմմտ. «ուսանողության լեզու», «Թումանյանի լեզու» և այլն), այսինքն՝ սահմանազատում ենք լեզվի պատմություն գիտակարգի առարկան։ Այս առումով՝ հայոց լեզվի պատմություն գիտակարգի ուսումնասիրության առարկան հայ ժողովրդի տարբեր հատվածների հաղորդակցման միջոցն է՝ հայոց լեզուն։ Լայն առումով հայոց լեզվի պատմություն գիտակարգը պիտի նկատի առնի ինչպես ստանդարտ (գրավոր շրջանում՝ գրական) լեզուն, այնպես էլ բարբառային տարբերակները, ինչպես հայ ժողովրդի պատմության հետ կապված լեզվական փաստերը և, հատկապես, բառապաշարը, այնպես էլ հայոց լեզվի կառուցվածքի տարբեր կողմերը. այն պիտի հաշվի առնի լեզվի հասարակական, գործառական և անհատական տարբերակները՝ ըստ նրանց խաղացած դերի։ Այլ կերպ ասած՝ հայոց լեզվի պատմությունը բառիս բուն իմաստով պիտի ներառի և համադրված ներկայացնի ստանդարտ կամ գրական լեզվի պատմության, պատմական բարբառագիտության, համեմատական ու պատմական բառագիտության և համեմատական ու պատմական քերականության (լայն առումով՝ ներառյալ նաև հնչյունաբանությունը) տվյալները, պատմական հանրալեզվաբանության և պատմական ոճաբանության ընձեռած փաստերը։

Եթե մենք շեշտում ենք, որ հայոց լեզվի պատմությունը առանձնական գիտակարգ է, ապա այդ չի նշանակում, թե այն կանգնած է մեկուսի այլ գիտակարգերից։

Նախ և առաջ՝ հայոց լեզվի պատմությունը սերտորեն կապված է այնպիսի մասնակի մի գիտակարգի հետ, ինչպիսին հնդեվրոպական լեզվաբա-

նությունն է (հնդեվրոպաբանությունը). սրա ուսումնասիրության առարկան հնդեվրոպական կոչված լեզուներն են, որոնք միավորվում են «հնդեվրոպական լեզվաընտանիք» անվան տակ, և որոնց մեջ մտնում է նաև հայոց լեզուն (հայերենը)։ Հայոց լեզվի սկզբնական պատմությունը չի կարող տրվել առանց ցեղակից լեզուների տվյալների հաշվառման, առանց նկատի առնելու այն ենթադրական նախալեզուն, որ դրանց համեմատությամբ վերականգնվում է հնդեվրոպաբանների կողմից։ Երկրորդ՝ հայոց լեզվի պատմությունը սերտորեն կապված է այն լեզուների պատմության հետ, որոնք շփվել են հայերենի հետ, ազդել նրա վրա և ազդվել նրանից. հետևաբար, հայոց լեզվի պատմությունը որպես առանձնակի գիտակարգ կապի մեջ է գտնվում առանձնական այլ գիտակարգերի հետ, նյութ քաղում նրանցից և նյութ տալիս նրանց։ Երրորդ՝ հայոց լեզվի պատմությունը, ինչպես մասամբ նշվեց, սերտ կապի մեջ է գտնվում իրենց բնույթով ավելի նեղ այնպիսի գիտակարգերի հետ, ինչպիսիք են պատմական բարբառագիտությունը, պատմական ոճաբանությունը, առանձին հեղինակների և առանձին երկերի լեզվաբանասիրական ուսումնասիրությունը։

Խոսելով լեզվի պատմության մասին որպես պատմական կամ տարաժամանակյա գիտակարգի՝ մենք նկատի ենք առնում, որ նա քննում է իր ուսումնասիրության առարկան՝ լեզուն, նրա կրած փոփոխությունների և զարգացման պրոցեսի մեջ։ Այս առումով լեզվի պատմությունը հակադրվում է այնպիսի գիտակարգերի, ինչպիսիք են լեզվի գիտական քերականությունը և համաժամանակյա ոճաբանությունը։ Եթե սրանք նկատի են առնում լեզվի զարգացման մեկ կտրվածքը, նկարագրում նրա զարգացման մեկ շրջանի վիճակը, ապա լեզվի պատմությունը գնում է դեպի պատմության խորքերը, ցույց տալիս, թե ի՛նչ վիճակներով է անցել տվյալ լեզուն մինչև այս կամ այն վիճակին հասնելը, բացատրում է այդ վիճակի ներքին հակասությունների պատճառները, հասկանալի դարձնում շեղումների ու բացառությունների բնույթը, ցույց տալիս նրանց պատմական օրինաչափականությունը։ Սակայն լեզվի փոփոխությունները ցույց տալու, դրանց բնույթը պարզաբանելու համար անհրաժեշտ է համեմատել ուսումնասիրվող լեզվի առանձին կտրվածքները, մասնավորապես ելակետային և հանգակետային վիճակները։ Այս առումով լեզվի պատմությունը սերտորեն կապվում է առանձին վիճակները քննող գիտակարգերի հետ, օգտվում նրանց տվյալներից, հենվում նրանց վրա։ Եթե հայոց լեզվի պատմաբանը տալիս է գրավոր շրջանի պատմությունը, ապա չի կարող նախապես չնկարագրել գրաբարի սկզբնական վիճակը՝ հետագա փոփոխությունները ցույց տալու համար։ Եթե հայոց լեզվի պատմաբանը փորձում է տալ նախագրային շրջանի պատմությունը, ապա անհրաժեշտորեն պետք է ելնի սկզբնական ինչ-որ վիճակից։ Որպես այդպիսի ելակետ բնականաբար ծառայում է հնդեվրոպական այն լեզուն (նախալեզուն), որ վերականգնվում է հայերենի և ցեղակից լեզուների համեմատության միջոցով։

Լեզվի պատմությունը որպես տարաժամանակյա գիտակարգ իր նպատակներով ու խնդիրներով որոշ առումով հակադրվում է լեզվի համաժամանակյա նկարագրություններին և, հատկապես, նորմատիվ քերականություններին, որոնք լեզուն ներկայացնում են որպես որոշակի կանոններով գործող, որոշակի նորմաների ենթարկվող կայուն կառուցվածք։ Լեզվի

նորմատիվ քերականությունը իր սահմանած կանոններով հենց նպատակ ունի քիչ թե շատ կայունացնել լեզվի վիճակը՝ նրանով խոսող ժողովրդի տարբեր հատվածների և տարբեր սերունդների հաղորդակցումը ապահովելու նպատակով։ Չնայած այդ ջանքերին, որոնք ստանդարտ և, մանավանդ, գրական լեզվի առկայության պայմաններում լիովին գիտակցված և նպատակային բնույթ են կրում, լեզուն փոփոխվում է ավելի կամ պակաս արագությամբ, ընդ որում այդ փոփոխությունները շոշափում են նրա բոլոր կողմերը։ Հենց սրանք էլ կազմում են լեզվի պատմության առարկան։

Վերևում ասվածները պարզ են դարձնում լեզվի պատմության գիտակարգի նպատակն ու խնդիրները։

Բացի այն ընդհանուր հետաքրքրությունից, որ լեզվի պատմությունն ունի տվյալ լեզվով խոսող ամեն մի անձնավորության համար, լեզվի պատմությունը խիստ կարևոր է մասնագիտական մի շարք առումներով։

Ամենից առաջ՝ չի կարող կառուցվել որևէ ժողովրդի պատմությունը առանց այդ ժողովրդի լեզվի պատմության։ Հնագիտության, ազգագրության և այլ գիտությունների ու գիտակարգերի հետ միասին և նույնիսկ նրանցից ավելի մեծ չափով լեզվի պատմությունը օգնում է կառուցելու ժողովրդի պատմությունը։ Անգնահատելի է նրա դերը հատկապես ժողովրդի ծագման, նրա քաղաքակրթության, նրա նյութական ու հոգևոր մշակույթի պատմության, նրա հին գրավոր հուշարձանների վերծանման և ընթերցման հարցերը լուծելիս։ Բառերի պատմությունը նրանց նշանակած իրույթների (ռեալիաների) պատմություն է, և, ինչպես կտեսնենք հայոց լեզվի պատմության օրինակով, լեզվի քննությունը բացահայտում է ժողովրդի պատմության այնպիսի կողմեր, որոնք անհայտ են մնում այլ գիտակարգերի դեպքում։ Լայն առումով լեզվի պատմությունը մեծապես օգնում է այնպիսի գիտակարգերի կառուցմանը, ինչպիսիք են գրականության պատմությունը, իրավունքի պատմությունը և այլն։

Շատ կարևոր է լեզվի պատմության դերը բանասիրական աշխատանքի մեջ։ Այդ դերն այնքան մեծ է, որ հին աշխարհում քերականությունը հենց բանասիրական ուղղվածություն ուներ և դիտվում էր որպես երկերի բնույթի պարզաբանման բանալի։ Հետագայում, երբ ձևավորվում է գիտական բանասիրությունը, այն դառնում է պատմահամեմատական լեզվաբանության ձևավորման գլխավոր ազդակներից մեկը։ Մեր ժամանակներում լեզվի պատմության և բանասիրության կապի դրույթը անհերքելի ճշմարտության արժեք ունի։

Լեզվի պատմությունը կարևոր է ժամանակակից լեզվի քերականության դասընթացի կազմման և դասավանդման համար։ Ինչպես նշել ենք, լեզվի պատմությունը ցույց է տալիս ժամանակակից լեզվի կազմավորման պրոցեսը, բացատրում անկանոնություններն ու բացառությունները։ Լեզվի մեջ այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հնաբանություններն ու նորաբանությունները, չեն կարող չկապվել լեզվի պատմության հետ, և լեզվի համաժամանակյա ուսումնասիրության, նրա ոճաբանության հարցերի լուծման մեջ անհրաժեշտորեն մուտք են գործում տարաժամանակյա ուսումնասիրության, այսինքն՝ հենց լեզվի պատմության տարրերը։

Վերջապես, այս կամ այն լեզվի պատմությունը կարևոր է լեզվաբանական առումով, այն նյութ է տալիս այլ լեզուների պատմության կառուցման համար, օգնում է համեմատական լեզվաբանության օգտագործած փաստերի ճշտմանը, նպաստում ընդհանուր լեզվաբանության տեսության կառուցմանը և այլն, և այլն։

2. ԼԵԶՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Այն հարցը, թե ինչո՞ւ է լեզուն ժամանակի ընթացքում փոխվում, զուրկ է իմաստից. լեզուն չի կարող բացառություն կազմել բնության և հասարակության օրենքներից, այն չի կարող չփոխվել։ Այլ հարց է, թե ինչպե՞ս և ի՞նչ գործոնների ազդեցության տակ է տեղի ունենում այդ փոփոխությունը։

Ինչպես ամեն մի այլ երևույթի, այնպես էլ լեզվի փոփոխությունը պայմանավորված է ներքին և արտաքին պատճառներով։

Լեզվի փոփոխության ներքին պատճառները լեզվի համակարգի ներքին հակասություններն են, նրա անմիօրինակությունը, իշխող օրինաչափությունների կողքին հին օրինաչափությունների և սաղմնավորվող օրինաչափությունների, կանոնավոր ձևերի կողքին՝ անկանոնների (բացառությունների և շեղումների) առկայությունը, լեզվական իմաստների և լեզվական ձևերի (լեզվական նշանների ներքին և արտաքին կողմերի) անհամապատասխանությունները։ Լեզուն, կիբեռնետիկական տերմինաբանությամբ, որպես ինքնակատարելագործվող դինամիկ համակարգ, գնում է անմիօրինակությունները հաղթահարելու, բացառություններն ու շեղումները վերացնելու, լեզվական իմաստները լեզվական արտահայտության ձևերին համապատասխանեցնելու ուղիով։ Սակայն այն հանգամանքը, որ լեզվական իմաստները ենթարկվում են համակարգման ու կանոնավորման այլ օրինաչափությունների, քան լեզվական արտահայտության միջոցները, լեզվի հնչյունական կառուցվածքի բաղադրիչները, և որ հնչյունական օրենքների գործողությամբ հանդես եկած անհամապատասխանությունները որոշ չափով համահարթվում, բայց մինչև վերջ չեն հաղթահարվում համաբանության գործողությամբ,— այս հանգամանքը հիմք է տալիս նոր հակասությունների և նոր անկանոնությունների առաջացման համար։ Եթե լեզուն լիներ իդեալական համակարգ, ապա կբացառվեր լեզվի այդպիսի շարժումը. բայց ոչ մի բնական լեզու իդեալական չէ, և հենց շարժումը դեպի իդեալականություն կազմում է լեզվի փոփոխությունների էությունը. այլ կերպ ասած՝ լեզվի փոփոխությունները ոչ թե սոսկական փոփոխություններ են, այլ հիմնականում կատարելագործում ենթադրող փոփոխություններ, այսինքն՝ զարգացման որոշակի պրոցես։ Լեզուների շարժումը դեպի իդեալական վիճակ, «տարբերությունը այդ համընդհանուրից և ընդհանուրից հենց այն է, ինչ կազմում է նրանց զարգացումը» [Маркс-Энгельс, с. 21]։

Թեև վերևում մենք խոսեցինք այն մասին, որ լեզուն ինքնակատարելագործվող դինամիկ համակարգ է, բայց այդ չի նշանակում, որ լեզվի փոփոխությունն ու զարգացումը տեղի են ունենում միայն ներքին հակասությունների հաղթահարման ուղիով։ Լեզուն ինքնանպատակ համակարգ չէ. այն ծագել է և գոյություն ունի մարդկային այս կամ այն հանրության հաղորդակցումն ապահովելու համար, այսինքն՝ գործառում է որպես հաղորդակցության միջոց։ Այս առումով լեզվի փոփոխության և զարգացման վրա մեծ չափով ազդում են նաև, այսպես կոչված, արտաքին գործոնները։ Լեզվական այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում այս ճանապարհով, հայտնի են «գործառական փոփոխություններ» անունով։ Լեզվի արտաքին փոփոխությունները բառիս բուն իմաստով «արտաքին» չեն, եթե նկատի առնենք, որ լեզուն գոյություն ունի հասարակության մեջ, որ նրա բոլոր փոփոխությունները կատարվում են հենց հասարակական հաղորդակցման գործառության պայմաններում, և որ արտաքին գործոնների ազդեցությունն առաջ է բերում լեզվի ներքին փոփոխություններ։

Ինչպե՞ս է տեղի ունենում արտաքին գործոնների ազդեցությունը լեզվի վրա։

Առաջին՝ հարկավոր է նկատի ունենալ, որ լեզուն տարբերակված է հասարակության մեջ վայրից վայր, խմբավորումից խմբավորում, գործունեության բնագավառից բնագավառ, անհատից անհատ։ Հասարակության ամեն մի անդամ ունի իր «լեզուն», իր բառապաշարը, բառապաշարի իր ակտիվ և պասիվ շերտերը, արտահայտության իր սիրած եղանակներն ու միջոցները, լեզվական իր ունակությունները. խոսելով այնպես, որ հասկանալի լինի ուրիշներին, նա միաժամանակ խոսում է ոչ այնպես, ինչպես մյուսները։ Այս է հենց լեզվի ստեղծագործական կարողությունը։ Լեզվի տարածական, հասարակական և անհատական տարբերակները պատմական տարբեր պայմաններում ձեռք են բերում տարբեր արժեք և ազդում լեզվի փոփոխության ընթացքի վրա։ Այս կամ այն տարածքի, այս կամ այն հասարակական խմբավորման, այս կամ այն անհատի՝ հասարակության մեջ ունեցած դերի և ազդեցության փոփոխության համեմատ տեղի է ունենում լեզվական համապատասխան փոփոխություն։ Անհատական լեզվական ունեցվածքները (անհատական «լեզուները») ևս իրենց ընդհանրությունների ու տարբերությունների ծավալին համապատասխան ստեղծում են լեզվական փոփոխությունների համապատասխան միտումներ, որոնք հանգեցնում են ընդհանուր լեզվական փոփոխությունների, լեզվական արտահայտության ընդհանուր եղանակների, լեզվական սովորույթների և նորմաների փոփոխությունների։ Հասարակության բոլոր անդամների իդեալական նույնությունը կհանգեցներ լեզվական անշարժության, կբացառեր լեզվի փոփոխությունը, այսինքն՝ լեզուն կդադարեր ստեղծագործական կարողություն ունենալուց, խոսելը կզրկվեր լեզվական առաջադիմության այնպիսի կարևոր գործոնից, ինչպիսին խոսելու հաճույքն է։

Երկրորդ՝ ամեն մի լեզվական հանրություն գտնվում է պատմական փոփոխության մեջ, ապրում է տնտեսական, քաղաքական, մշակութային և գաղափարական անընդհատ նորացման պրոցես։ Այդ նորացումը համապատասխան դրսևորում է գտնում լեզվի մեջ, որ կոչված է բավարարելու հասարակության հաղորդակցման կարիքները, փոխանցելու կուտակվող փորձը սերնդից սերունդ։ Այսպիսով, հասարակական փոփոխությունները առաջ են բերում լեզվական փոփոխություններ, ստեղծում արտահայտության նոր միջոցների ու եղանակների անհրաժեշտություն, փոփոխում սրանց նշանակման ոլորտները, դրանք ընդլայնում կամ նեղացնում։ Այդ պատճառով էլ լեզուն դառնում է հասարակության պատմության ցուցիչ, հնարավորություն տալիս վերականգնելու այդ պատմության կորած օղակները։

Երրորդ՝ ամեն մի լեզվական հանրություն մեկուսացած չէ լեզվական այլ հանրություններից։ Այս կամ այն ժողովրդի տնտեսական, քաղաքական, մշակութային, գաղափարական բացարձակ մեկուսացումը միշտ էլ հաղվաղեմ երևույթ է եղել, իսկ մեր օրերում այն դարձել է անհնար։ Ժողովուրդների շփումն ու փոխազդեցությունը առաջ է բերում լեզվական փոխազդեցություն, լեզվական համապատասխան փոփոխություններ։

Կանգ առնենք ժողովուրդների և լեզուների փոխհարաբերության և փոխազդեցության հարցի վրա փոքր-ինչ ավելի հանգամանորեն։ Կարելի է տարբերել լեզուների փոխազդեցության երկու տեսակ՝ փոխներթափանցում (ինտերֆերենցիա) և փոխառություն։ Փոխներթափանցումը լեզուների համեմատաբար խոր փոխազդեցություն է, որ լինելով երկլեզվության արդյունք՝ կարող է ընդգրկել լեզուների նաև կառուցվածքային առանձնահատկությունները. լեզվական փոխազդեցությունն այս դեպքում սովորաբար կապվում է էթնիկական փոխազդեցության՝ տվյալ լեզուները կրող ժողովուրդների ամբողջական կամ մասնակի շփումների (կոնտակտների) հետ։ Փոխներթափանցման համար հիմք կարող են լինել հատկապես քաղաքական նվաճումը և ժողովուրդների մերձավոր հարևանությունը, որոնք պահանջում են խոսողներից անցում կատարելու մի լեզվից մյուսին և համապատասխանաբար հիմք են ստեղծում մի լեզվի՝ մյուսի վրա (սովորաբար մայրենի լեզվի՝ յուրացվող լեզվի վրա) ազդելու համար։ Փոխներթափանցման յուրատեսակ դրսևորումներ են խաչավորման այն երևույթները, որոնք վաղուց ի վեր հայտնի են ենթաշերտ (սուբստրատ), մակաշերտ (սուպերստրատ) և առշերտ (ադստրատ) անուններով։ Ենթաշերտը տեղացիների լեզվի ազդեցությունն է եկվորների և, հատկապես, նվաճողների լեզվի վրա, առաջինի նստվածքը երկրորդի մեջ։ Մակաշերտը եկվորների և, հատկապես, նվաճողների լեզվի ազդեցությունն է տեղացիների լեզվի վրա։ Առշերտը հարևան լեզուներից մեկի ազդեցությունն է մյուսի վրա, հատկապես խառը բնակչության վայրերում։ Հայտնի է, որ լեզվաբանները հաճախ են խոսում հայերենի մեջ ուրարտական և կովկասյան ենթաշերտի մասին, այս կամ այն հնչյունական կամ քերականական երևույթը բացատրում որպես ուրարտական կամ կովկասյան ազդեցության արդյունք։ Ենթաշերտի գաղափարի որոշ չարաշահում նկատվել է շատ հայագետների աշխատություններում, այդ թվում՝ նաև այնպիսի զգույշ հետազոտողի մոտ, ինչպիսին Ա. Մեյեն էր։ Էլ չենք խոսում Ն. Յա. Մառի, Գ. Ա. Ղափանցյանի և նրանց հետևորդների մասին, որոնք խաչավորումը դիտում են որպես լեզվի հիմնական ստեղծագործական սկզբունք, նոր լեզուների և նոր երևույթների ստեղծման հիմնական ուղի։ Փոխներթափանցման դրսևորումներից մեկն էլ պետք է համարել, այսպես կոչված, լեզվամիությունը, լեզուների երկարատև շփման հետևանքով առաջացած այնպիսի խմբակցությունը, որի անդամները բնորոշվում են կառուցվածքային ընդհանուր առանձնահատկություններով. այս ընդհանրությունները նյութական չեն, ինչպիսին լինում են ցեղակից լեզուների դեպքում, այլ կառուցվածքա-տիպաբանական, այսինքն՝ բնորոշվում են արտահայտության եղանակների ընդհանրությամբ։

Փոխառությունը սովորաբար սահմանափակվում է բառապաշարով և բառակերտման ընդհանուր կաղապարներով. փոխառության հիմքը տնտեսական, քաղաքական, կրոնական և մշակութային գործոններն են։ Նոր, մինչ այդ անծանոթ առարկաներն ու երևույթները կարող են արտահայտվել ոչ թե սեփական բառակազմական միջոցներով, այլ դրանք նշանակող այլազգի բառերով, երբեմն էլ սեփական նյութական միջոցներով, բայց մի այլ լեզվի համար բնորոշ եղանակներով. վերջինս բառակազմական կաղա-

պարի փոխառությունն է, որ հայտնի է բառապատճենում անունով։ Բառապատճենումը, օրինակ, հայերենի հին շրջանում կատարվել է հատկապես հունարենի, նոր շրջանում՝ ռուսերենի (արևելահայերենում) կամ ֆրանսերենի (արևմտահայերենում) օրինակով։ Փոխառությունները կարող են լինել անմիջական կամ միջնորդված (մի այլ լեզվի միջնորդությամբ), գրական կամ խոսակցական։

3. ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մեր «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» աշխատության մեջ առանձնացված է տարաժամանակյա (պատմական) հետազոտության ութ մեթոդ [**Джаукян**, 1978, 50—53]։ Կատարելով որոշ վերախմբավորում և մասնակիորեն փոփոխելով տրված անվանումները ըստ լեզվի պատմության գիտակարգի առանձնահատկությունների՝ կարելի է թվարկել հետևյալ հիմնական մեթոդները։

1. Համեմատություն. լեզվի պատմական ուսումնասիրության, կարելի է ասել, հիմնական մեթոդն է, որ իր անունը տվել է պատմահամեմատական լեզվաբանությանը։ Սակայն, եթե բուն համեմատական լեզվաբանության մեջ այդ բառն օգտագործվում է ցեղակից լեզուների համեմատության իմաստով, ապա մենք այստեղ նկատի ունենք այդ բառի հատկապես իմացաբանական իմաստը՝ որպես առարկաների և երևույթների ճանաչման հիմնական միջոցի։ Եվ իսկապես. առանց համեմատության չի կարող լինել իսկական ճանաչում և գնահատում։

Մասնավորելով մեր խոսքը լեզվի պատմության փաստերի նկատմամբ՝ մենք կարող ենք արձանագրել, որ լեզվի պատմությունը ենթադրում է ժամանակագրորեն տարբեր երկու կամ ավելի վիճակների համեմատություն։ Տալ տվյալ լեզվի պատմությունը՝ նշանակում է համեմատության մեջ դնել լեզվի զարգացման տարբեր փուլերի փաստերը՝ մի կողմից և տվյալ լեզվի ու այլ լեզուների համապատասխան փաստերը՝ մյուս կողմից։

Ամեն մի համեմատություն առաջին հերթին ենթադրում է երեք կարգի հնարավոր ելք՝ ա) համեմատվող ժամանակագրական մակարդակներում տվյալ փաստի (երևույթի, միավորի) առկայություն՝ a—a, բ) ժամանակագրական մակարդակներից մեկում դրա բացակայություն՝ a—$\bar{a}$ և գ) ժամանակագրական տվյալ մակարդակում գոյություն ունեցող տվյալ փաստի (երևույթի, միավորի) փոխարեն մի այլ փաստի (երևույթի, միավորի) առկայություն՝ a—b։ Համեմատությունը երկրորդ հերթին ենթադրում է առանձնացված ելքերից առաջինի համար նույնության (a=a) և տարբերության (a≠a) որոշում։ Որքան մեծ է համեմատվող փուլերի ժամանակային հեռավորությունը, այնքան քիչ կլինի նույնությունը, և այնքան կմեծանան համեմատվող միածագում (նույն ծագումն ունեցող) փաստերի (երևույթների, միավորների) տարբերությունների քանակն ու տարբերակվածության աստիճանը։ Քանի որ լեզվական հիմնական միավորները՝ բառերը, իրենց բաղադրիչներով ու կապակցություններով հանդերձ երկպլանային միավորներ են, այսինքն՝ ունեն բովանդակության պլան (իմաստ) և արտահայտության պլան (հնչյունական ձևավորում), հասկանալի է, որ տարբերությունները կարող են վերաբերել կամ միայն առաջինին (իմաստային կողմին), կամ միայն երկրորդին (հնչյունական կողմին), կամ միաժամանակ թե՛ մեկին, թե՛ մյուսին։ Այլ կերպ ասած՝ երկու ժամանակագրական մակարդակներում առկա տվյալ միավորը կարող է փոփոխված լինել միայն իմաստով, միայն հնչյունապես և թե՛ իմաստով ու թե՛ հնչյունապես։ Այդ փոփոխությունները, ինչպես նշվել է, կարող են լինել տարբեր աստիճանի՝ փոքրիկ տարբերություններից մինչև հնչյունական լիակատար փոփոխություն (նոր բառի առաջացում) և իմաստային մասնակի տեղաշարժից մինչև իմաստային կապի բացարձակ խզում (հնչյունական նույնության դեպքում՝ համանունություն)։ Եթե իմաստային տարրերը պայմանականորեն նշանակենք լատինական և հնչյունական տարրերը՝ հունական տառերով, ապա համեմատությամբ որոշվող փոփոխությունների տիպերը կարելի է արտահայտել մոտավորապես հետևյալ ձևով՝ 1) միայն իմաստային փոփոխություն՝ $a(a\alpha)\rightarrow a(b\alpha)$, 2) միայն հնչյունական փոփոխություն՝ $a(a\alpha)\rightarrow a(a\beta)$, 3) թե՛ իմաստային, թե՛ հնչյունական փոփոխություն $a(a\alpha)\rightarrow a(b\beta)$։

Այսպիսով, համեմատությունը հնարավորություն է տալիս պարզելու լեզվական տարբեր վիճակների փոխհարաբերությունը, փոփոխությունների բնույթն ու տիպերը։

2. **Վերականգնում.** վերականգնումը լայն չափերով կիրառվում է համեմատական լեզվաբանության մեջ, որտեղ փորձ է արվում վերականգնելու ոչ միայն լեզվի առանձին պակասող օղակներ, այլև լեզուն իր ամբողջությամբ։ Լեզվի պատմության մեջ վերականգնումն օգտագործվում է ավելի փոքր չափերով։ Ճիշտ է, լեզվի պատմությունն օգտվում է համեմատական լեզվաբանության վերականգնման արդյունքներից՝ տվյալ լեզվի նախագրային շրջանի փոփոխությունները գծելու համար, բայց հիմնականում պատրաստի ձևով։ Լեզվի պատմության մեջ վերականգնման մեթոդը կիրառվում է գերազանցապես առանձին պակասող օղակներ վերականգնելու համար։

Ըստ համեմատվող միավորների պատկանելության տարբերում են վերականգնման երկու տեսակ՝ արտաքին վերականգնում, որի դեպքում վերականգնումը կատարվում է այլ լեզուների փաստերի օգտագործմամբ, և ներքին վերականգնում, որի դեպքում համեմատության մեջ են դրվում տվյալ լեզվի միածագում ձևահնչույթաբանական տարբերակները, և որոշվում են ավելի հին ձևերը։ Այսպես, ջինջ և ջնջել ձևերի համեմատությամբ դժվար չէ վերականգնել վերջինիս ավելի հին *ջինջել ձևը։

Հնարավոր է լեզվի պատմության մեջ վերականգնման մեթոդի օգտագործման երկու հիմնական դեպք։ 1) Առաջին դեպքում լեզվի գրավոր շրջանում ավանդված փաստերի մեջ պակասում են առանձին տվյալներ, չկա համակարգի ենթադրելի որևէ տարր, այն փոխարինված է մի այլ տարրով՝ նորակազմությամբ կամ փոխառությամբ։ Այս դեպքում հնարավոր են և՛ արտաքին, և՛ ներքին վերականգնման տարբեր ուղիներ. առաջին հերթին հաշվի են առնվում համեմատական լեզվաբանության տվյալները (ցեղակից լեզուների փաստերը՝ այդ լեզուների մերձավորության աստիճանի և տարածքային փոխհարաբերությունների ամբողջության մեջ), հարևան լեզուների կատարած փոխառություններն ու համատիպ երևույթները, քննվող լեզվի մեջ առկա հոմանիշ ու համարժեք ձևերի պատմական փոխհարաբերությունը։ Այսպես, հնդեվրոպական այլ լեզուների համար ընդհանուր *k'm̥tóm (հ. հնդկ. śatám, ավ. satəm, հուն. ἑ-κατόν, լատ. centum, բրետ. kant, գոթ. hund, լիտվ. šim̃tas, հ. սլավ. съто, թոխ. Ա kant) բառի համար հայերենը չունի համապատասխան ձև, այլ գործածում է թերևս հնդեվրոպական մի այլ աղբյուրից եկող **հարիւր** (արդի **հարյուր**) բառը. նկատի ունենալով հայերենի հնչյունական օրինաչափությունները՝ կարելի է պարզել, որ այն V դարում պահպանվելու դեպքում պետք է ունենար ***սանդն** ձևը։ 2) Երկրորդ դեպքում մենք ունենք ելակետային և հանգակետային փաստերը, բայց չունենք դրանք միացնող օղակները։ Այս դեպքում կարող են միջակա օղակները վերականգնելու համար օգտագործվել ուրիշ լեզուների պատմությունից հայտնի փաստերը, հատկապես ընդհանուր բնույթի այն օրինաչափությունները, որոնք հայտնի են հանրույթներ (ունիվերսալիաներ) անունով, զուգակից միավորների առանձին փոփոխությունների արդյունքների տրամաբանական հաջորդականությունը և այլն։ Վերջինս սերտորեն առնչվում է մի այլ մեթոդի՝ տարաժամանակավորման կամ ժամանակագրավորման (хронологизация) մեթոդի հետ, որի մասին կխոսվի առանձին։

Ավելորդ չենք համարում կանգ առնել վերականգնման մեթոդի կիրառման մի նոր բնագավառի վրա, որ կօգնի նախ՝ վերականգնման ճշգրտության աստիճանի ու սահմանների որոշմանը և երկրորդ՝ գլխավոր փաստերի հիման վրա գրվող պատմության փաստերի ճշտմանը։ Այդ կիրառումը տվյալ լեզվի բարբառների նախնական վիճակի վերականգնումն է։ Հայոց լեզվի արդի բարբառների ընձեռած նյութի հետևողական վերականգնումը հնարավորություն կտար պարզելու, թե ո՛ր վիճակին է ամենից ավելի համապատասխանում ու ի՛նչ չափով է համապատասխանում վերականգնվող նախաբարբառային վիճակը, և կլրացներ հայոց լեզվի գրավոր փաստերի ընձեռած հնարավորությունները։

3. **Տարաժամանակավորում (ժամանակագրավորում, ժամանակաբաշխում).** տարաժամանակավորման տարբեր եղանակները հաջողությամբ կիրառվում են և՛ համեմատական լեզվաբանության, և՛ լեզվի պատմության մեջ։ Այս մեթոդի էությունը եղած փաստերի տարաբաշխումն է (таксономия) ըստ ժամանակագրական փուլերի, այսինքն՝ փաստերի ժամանակագրավորումն է (хронологизация)։ Հնարավոր է ժամանակագրավորման երկու եղանակ՝ բացարձակ և հարաբերական ժամանակագրության սահմանում։

Բացարձակ ժամանակագրությունը լեզվական փաստերի համապատասխանեցումն է արտալեզվական փաստերին, հասարակության մեջ ընդունված ժամանակագրության կիրառումը լեզվի փաստերի նկատմամբ։

Այսպես, ցեղակից լեզուների բաժանման ժամանակը որոշելու, այս կամ այն երկը թվագրելու համար կիրառվում է Մ. Սվոդեշի առաջարկած լեզվաժամանակագրական կամ բառավիճակագրական մեթոդը [հմմտ. НЛ, 1, 9—107. **Bergsland-Vogt**, 1962. **Szemerényi**, 2, 1982, 87—98], որ մեր կողմից կիրառվել է հայերենի նկատմամբ՝ նրա անկախ գոյության ժամանակը («տարիքը») որոշելու համար [**Джаукян**, 1969. 1978, 187—211]։ Այդ մեթոդի էությունն այն է, որ առանձնացվում է լեզվի համեմատաբար դանդաղ փոխվող, այսպես կոչված, հիմնական բառաֆոնդը, սահմանվում է այդ բառաֆոնդի փոփոխության որոշակի ցուցիչ, և դրա հիման վրա որոշվում է ցեղակից լեզուների բաժանման ժամանակը։ Մ. Սվոդեշն սկզբում առանձնացրել էր 215 բառ, հետո այդ թիվը հասցնում է 200-ի և ապա կանգ առնում 100-ի վրա. մի շարք լեզուների տվյալների զուգադրումով նա սահմանում է, որ 1000 տարվա ընթացքում միջին հաշվով դուրս է ընկնում այդ հիմնական բառաֆոնդի 15%-ը (այսինքն՝ 100 բառանոց ցուցակի դեպքում՝ 15 բառ) և պահպանվում 85%-ը (այսինքն՝ 100 բառանոց ցուցակի դեպքում՝ 85 բառ)։ Ըստ հիմնական բառաֆոնդի պահպանվածության էլ որոշվում է այս կամ այն լեզվի տարիքը՝ ցեղակից մի այլ լեզվից (լեզուներից) նրա բաժանվելու ժամանակը։

Լեզվական փաստերը ըստ շրջանների բաշխելու, այսինքն՝ լեզվի շրջանաբաժանման (պերիոդիզացիայի) համար գոյություն ունեն մի շարք եղանակներ։ Եղանակներից մեկը մեր առաջարկած ետադարձ հաշվարկման մեթոդն է [**Джаукян**, 1967, 319—320]։ Ըստ այդ մեթոդի՝ նկատի ունենալով լեզվի գրավոր զարգացման շրջանի համար առանձնացված փուլերի ժամանակագրական սահմանները՝ համապատասխան փուլեր են առանձնացվում նաև նախագրային շրջանի համար. այդ փուլերը, բնականաբար, կարող են ճշգրտվել ըստ արտաքին փաստերի (տվյալ լեզվից այլ լեզուների կատարած փոխառություններ, օտար մատենագիրների կողմից տվյալ լեզվի փաստերի վաղ գրանցումներ և այլն)։ Ե՛վ ժամանակագրության, և՛ ետադարձ հաշվարկման մեթոդների հիմքում ընկած է լեզվի փոփոխության տեմպերի մոտավոր համաչափության վարկածը, որ տալիս է հարաբերական արդյունք։ Ըստ ետադարձ հաշվարկման սկզբունքի՝ ժամանակակից հայերենը տարբերվում է V դ. հայերենից (ըստ, այսպես կոչված, դասական գրաբարի տվյալների) մոտավորապես այն չափով, որչափով վերջինս՝ մ.թ.ա. II հազարամյակի վերջերի լեզվից։ Այդ նույն ձևով էլ V դ. գրաբարը պետք է տարբերվեր մ.թ.ա. III դ. հայերենից մոտավորապես այնքան, որքան այն տարբերվում է մ.թ. XII դ. լեզվից՝ միջին հայերենի վաղ վիճակից։

Գրավոր ժամանակաշրջանի հարցերը, բնականաբար, ավելի հեշտ է լուծել։ Սակայն այստեղ էլ կան որոշակի դժվարություններ և, սրանց հետ կապված, տարբեր մոտեցումներ։ Եթե մի կողմ թողնենք լեզվի պատմության նկատմամբ ժողովրդի պատմության կամ գրականության պատմության շրջանաբաժանման արդյունքների մեխանիկական կիրառման փորձերը, ապա կարելի է տարբերել բուն իսկ լեզվական փաստերից ելնող շրջանաբաժանման երկու եղանակ՝ մենահատկանիշ և բազմահատկանիշ։ Առաջին դեպքում հաշվի է առնվում լեզվական որևէ էական հատկանիշ, երկրորդ դեպքում՝ հատկանիշների մի ամբողջություն։ Մենահատկանիշ շրջանաբաժանման օրինակ է Հ. Աճառյանի սկզբունքը. նա գրաբարը տարբերում է միջին հայերենից բայական կու մասնիկի և աշխարհաբարը՝ միջին հայերենից գ- նախդրի բացակայությամբ [Աճառյան, ՀԼՊ, 2, 1951, 443]։ Ի տարբերություն այս մոտեցման՝ մենք առաջ ենք քաշել լեզվի պատմության բազմահատկանիշ շրջանաբաժանման սկզբունքը՝ յուրաքանչյուր շրջանի համար սահմանելով նրան բնորոշ լեզվական հատկանիշների ամբողջությունը [**Джаукян**, 1973, 118—119]։

Հարաբերական ժամանակագրությունը սերտորեն կապված է ներքին վերականգնման հետ։ Հարաբերական ժամանակագրությունը լեզվական փաստերի հաջորդականության սահմանումն է՝ առանց իսկական ժամանակի (հասարակության մեջ ընդունված ժամանակահաշվարկման) հետ հարաբերելու։ Հայերենի հնչյունական համակարգի համար հարաբերական ժամանակագրության նման փորձեր կատարվել են հատկապես մեր և Կորտլանդտի կողմից [**Джаукян**, 1967, 318—319. **Kortlandt**, „First…". Կորտլանդտ, 1963]։ Բերենք հարաբերական ժամանակագրության մի օրինակ։ Հայտնի է, որ հայերենում տեղի են ունեցել՝ 1) հ.-ե. քմայնացած բաղաձայնների վերածում համապատասխան կիսաշփականների ու շփականների (*g'h>ձ,-զ, *g'>ծ, *k'>ս՝ *g'hijom>ձիւն, *dheig'h->դէզ, *g'en->ծին, *k'ërdi->սիրտ և այլն) և 2) բաղաձայնների ընդհանուր տեղաշարժի հետ կապված՝ ձայնորդներից հետո խուլերի ձայնեղացում (*mr̥-to-> մարդ, *penkᵘe>հինգ և այլն). արդ՝ ի՞նչ հաջորդականությամբ են կատարվել այս փոփոխությունները. այն հանգամանքը, որ հ.-ե. *k'-ն ձայնորդներից հետո ևս փոխվում է ս-ի (*prk'->հարսն), ցույց է տալիս, որ առաջին պրոցեսը նախորդել է երկրորդին, այլապես կունենայինք *prk'->*pr̥g'->*հարծ(ն)։

4. **Համաժամանակավորում (համաժամանակային տարաբաշխում).** մեր կողմից ներմուծվող այս պայմանական տերմինի տակ նկատի է առնվում զուգահեռ փաստերի տարածական (աշխարհագրական) և հասարակական-ոճական տարաբաշխումը կամ դասակարգումը։ Այս մեթոդը կարելի է կիրառել և՛ գրավոր ավանդված, և՛ վերականգնված լեզվական երևույթների նկատմամբ։ Եթե մենք ունենք համանիշային և համանունային ձևեր (լայն առումով), ապա նկատի ունենալով, որ բացարձակ զուգահեռությունը, այսինքն՝ աշխարհագրական կամ հասարակական տարբերակման բացակայությունը հազվադեպ երևույթ է, այդ զուգաձևությունները կարելի է և պետք է բաշխել ըստ աշխարհագրական տարածքների (լեզվաաշխարհագրական տարաբաշխում), իսկ աշխարհագրական որոշակի տարածքների առանձնացման անհնարինության դեպքում՝ ըստ լեզվի հասարակական-ոճական տարբերակների։ Այդպիսի փորձեր կատարվում են հնդեվրոպական լեզվաբանության մեջ, որտեղ վերջին ժամանակներս մեծ ուշադրություն է դարձվում վերականգնվող զուգահեռ միավորների (համանիշ բառերի և մասնիկների) տարածական և մասամբ հասարակական տարաբաշխմանը. փորձ է արվում որոշել, թե եղած զուգահեռ բառերը, մասնիկները, հնչյունական ձևերը տարածականորեն ինչպե՞ս են բաշխվել, հասարակական ի՞նչ խմբերի կամ գործառական ի՞նչ ոճերի են պատկանել, և այս բոլորն այն դեպքում, երբ ապահովված է վերականգնման ճշգրտությունը։ Այս մեթոդի կիրառման վրա են հիմնված հնդեվրոպական տարածքային (արեալային) լեզվաբանությունը (հնդեվրոպական բարբառագիտությունը) և հնդեվրոպական հանրալեզվաբանությունն ու համեմատական ոճաբանությունը։ Հնդեվրոպական լեզվի վերականգնման փորձը ցույց է տալիս, որ չնայած եղած ջանքերին՝ հնարավոր չէ վերականգնել մեկ միասնական լեզու, և որ թե՛ հնչյունական, թե՛ քերականական, թե՛ բառային վերականգնումների դեպքում առկա են զուգահեռություններ. համաժամանակային տարաբաշխման մեթոդը հենց փորձում է ցույց տալ այդ զուգահեռ ձևերի հիմքերը։

Մինչև այժմ չի կատարվել հայոց լեզվի հին շրջանի լեզվական զուգահեռ ձևերի հետևողական տարաբաշխում, թեև կան հին շրջանի բարբառների առանձնացման և ոճական տարբերակների որոշման առանձին փորձեր։

2375

ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА

5. Արտահարաբերում. մեր կողմից ներմուծվող այս տերմինի մեջ նկատի է առնվում լեզվական և արտալեզվական փաստերի հարաբերակցումը։ Այս մեթոդին են վերաբերում բառերի լեզվահնէաբանական և ստուգաբանական վերլուծության հիման վրա նրանց հիմքում ընկած սկզբնական իմաստների ու իրույթների պարզաբանումը, ժողովրդի պատմության տարբեր կողմերի, այսինքն՝ արտալեզվական փաստերի օգտագործմամբ բառերի սկզբնական իմաստների և այդ իմաստների փոփոխության օղակների որոշումը, լեզվի պատմության համար օգտագործվող տերմինների խմբավորումը, դրանց բանասիրական քննությունը, դրանց լեզվական առանձնահատկությունների հավաստիության աստիճանի և բնույթի որոշումը։

4. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Լեզվի պատմության ուսումնասիրության առարկայի և մեթոդների քննությունը մասամբ ցույց տվեց, թե ի՛նչ կարգի աղբյուրներից է նա օգտվում։ Այստեղ կանգ առնենք դրանց վրա ավելի հանգամանորեն՝ մասնավորելով խոսքը հատկապես հայոց լեզվի պատմության նկատմամբ։

Հայոց լեզվի պատմության աղբյուրները մեծ չափով տարբերվում են նախագրային և գրային ժամանակաշրջանների դեպքում, ուստի և աղբյուրների ընդհանուր տեսության փոխարեն մենք կտանք այս ժամանակաշրջանների աղբյուրների տեսությունը առանձին-առանձին։

Հայոց լեզվի նախագրային ժամանակաշրջանի աղբյուրների մեջ առաջին հերթին պետք է նշել լեզվաբանական այլ գիտակարգերի տվյալները։ Այստեղ, բնականաբար, առաջին տեղը պատկանում է հնդեվրոպական համեմատական լեզվաբանությանը և, սրա հետ կապված, հայոց լեզվի համեմատական ուսումնասիրությանը, որոնք պարզում են հայոց լեզվի տեղը հնդեվրոպական լեզուների մեջ, նրա սկզբնական բառապաշարն ու կառուցվածքային առանձնահատկությունները։ Համեմատական լեզվաբանության տվյալները հայոց լեզվի սկզբնական տարբերակների վերաբերյալ կարող են լրացվել հայ բարբառագիտության և գրաբարի ուսումնասիրության տվյալներով. հայ բարբառների արխաիկ գծերի վերհանումը և գրաբարի կառուցվածքի ներքին վերականգնումները հնարավորություն են տալիս զգալի նյութ ստանալու ավելի վաղ շրջանների վերաբերյալ։

Հայոց լեզվի նախագրային ժամանակաշրջանի պատմության համար երկրորդ հերթին աղբյուր են ծառայում հարակից գիտությունների և գիտակարգերի, հատկապես հայ ժողովրդի պատմության, հնագիտության, արձանագրագիտության ու դրամագիտության, ազգագրության ու ժողովրդական բանահյուսության տվյալները։ Հայ ժողովրդի պատմությունն ընձեռում է հայոց լեզվի պատմության արտաքին փաստերը։ Հնագիտությունը տալիս է նյութական մշակույթի այն իրույթները, որոնք պարզում և ճշտում են բառերի ու բառիմաստների վերականգնման, բառիմաստների ստուգաբանական ու լեզվահնէաբանական վերլուծության տվյալները։ Երկուսը միասին իրենց ժամանակագրական տվյալներով օգնում են լեզվական ժամանակագրության հարցերի լուծմանը։ Ազգագրությունն օգնում է շատ բառերի ու դարձվածքների սկզբնական բնույթի և արտալեզվական հարաբերությունների մեկնաբանությանը։ Պատմական աշխարհագրությունը և մասամբ ազգագրությունը օգնում են հատկապես հատուկ անունների երկու հիմնական խմբերի՝ տեղանունների և անձնանունների լեզվաբանական իմաստավորմանն ու արժեքավորմանը։ Ժողովրդական բանահյուսությունը նշանակալից նյութ է տալիս հայոց լեզվի պատմությանը. ժողովրդական ավանդավեպերը առասպելները, վիպերգությունները, զրույցները, երգերը, գալով դարերի խորքից, անցնելով սերնդից սերունդ, պարունակում են լեզվական արխաիկ ձևեր, արտահայտության եղանակներ և բառային գործածություններ, որոնց ուսումնասիրությունը կարող է մեծապես օգնել լեզվական հին վիճակների վերականգնմանը։ Պատահական չէ, որ իր «Հայոց լեզվի պատմության» 2-րդ մասում Հ. Աճառյանը դիմում է մեր մատենագիրների ավանդած վիպական հատվածներին՝ բառապաշարի ընիկ և փոխառյալ տարրերի հին փոխհարաբերությունը պարզելու նպատակով։

Հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության երրորդ աղբյուրը հայոց լեզվի հետ շփված, նրան փոխառություններ տված և նրանից փոխառություններ կատարած լեզուների տվյալներն են։ Եթե հայոց լեզվի կատարած փոխառությունները, շերտ-առ-շերտ գումարվելով ընիկ բառապաշարի վրա և երբեմն դուրս մղելով նրա առանձին տարրերը, կազմում են հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության անհրաժեշտ բաղկացուցիչ մասը, ապա հայերենից շրջակա լեզուների կատարած հին փոխառությունները հնարավորություն են տալիս պարզելու նրա կառուցվածքային առանձնահատկությունները։ Այս տեսակետից հատուկ արժեք ունեն կովկասյան լեզուների՝ հայերենից կատարած վաղ փոխառությունները. այդ լեզուները, ունենալով բաղաձայնական հարուստ համակարգեր, ընդհանուր առմամբ ճիշտ են տալիս հայերենի հնչյունական առանձնահատկությունները, մի բան, որ չի կարելի ասել իրանական լեզուների, ասորերենի, հունարենի մասին։

Վերջապես, հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության չորրորդ աղբյուրը հայ ժողովրդի և հայերենի վերաբերյալ հնագույն մատենագրական տվյալներն են, այն ժողովուրդների տվյալները, որոնք գիր ու գրականություն են ունեցել մինչև V դարը և շփվել են հայերի հետ։ Դրանց մեջ պետք է հիշել ինչպես հին սեպագիր արձանագրությունները (ակկադական, ուրարտական, հին պարսկական և այլն), այնպես էլ հունական, հռոմեական, ասորական, իրանական մատենագրական աղբյուրները։ Ցավոք սրտի, այս աղբյուրներում շատ քիչ են հայերեն առանձին բառերի նշումները (գլոսաները), բայց առատ են հատուկ անունների բազմաթիվ տառադարձումները։

Հայոց լեզվի գրավոր շրջանի պատմության հիմնական աղբյուրները, բնականաբար, հայ մատենագրության նմուշներն են՝ սկսած V դարից և վերջացրած մեր ժամանակներով։ Սակայն հարկավոր է նկատի առնել, որ դրանց ընձեռած նյութը հավասարարժեք չէ։ Այսպես, օրինակ, հին շրջանի մատենագրության մեջ համեմատաբար քիչ են խոսակցական լեզվի նմուշները, ժողովրդական բանահյուսության նմուշները մեզ հասել են միայն փշրանքների ձևով։ Հայ մատենագրության տվյալների օգտագործումը մի շարք դեպքերում պահանջում է նախնական բանասիրական-տեքստաբանական մանրակրկիտ աշխատանք, ձեռագրերի խմբավորում, բնօրինակային և եկամուտ տարրերի տարբերակում, հեղինակների և նրանց լեզվա-

կան առանձնահատկությունների հստակ տեղայնացում։ Այս դեպքում լեզվաբանական աշխատանքը հենվում է բանասիրական աշխատանքի վրա և հաճախ միահյուսվում նրա հետ։

Հայոց լեզվի պատմության գրավոր շրջանի ուսումնասիրության համար մեծ նյութ են տալիս և, ինչպես նշել ենք, որոշ առումով մտնում լեզվի պատմության գիտակարգի մեջ պատմական քերականությունը, պատմական բարբառագիտությունը և պատմական ոճաբանությունը։ Իրենց նշանակությունը շարունակում են զգալի չափով պահպանել նախագրային ժամանակաշրջանի աղբյուրների քննության մեջ թվարկված հարակից գիտությունների տվյալները, որոնց միանում են հայ գրականության պատմության նյութերը։ Եթե բառապաշարի պատմության ուսումնասիրության համար շարունակում է առաջնակարգ նշանակություն ունենալ շրջակա լեզուների ուսումնասիրությունը, ապա ուրիշ լեզուների՝ հայերենից կատարած փոխառությունները և Հայաստանի ու հայերենի վերաբերյալ ուրիշների տված մատենագրական տվյալները դադարում են առաջնային արժեք ունենալուց՝ կատարելով լոկ օժանդակ դեր։

Ընդհանուր առմամբ հարկավոր է շեշտել, որ ամենից ավելի արդյունավետ է լեզվի պատմության ուսումնասիրության բոլոր մեթոդների և աղբյուրագիտական բոլոր տվյալների համադրությունը։

5. ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԲԱԺԱՆՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԲԱԺԱՆՈՒՄԸ

Անժխտելի է, որ լեզվի փոփոխության պրոցեսը տեղի է ունենում այնպես, որ ապահովվի սերունդների հաղորդակցումը։ Սակայն այս դրույթից չի կարելի անել այն եզրակացությունը, թե լեզվի փոփոխությունը լրիվին հավասարաչափ հարաշրջություն է (էվոլյուցիոնավորում)՝ առանց արագացումների և դանդաղացումների, առանց էական տեղաշարժերի, առանց որոշակի անցումների։ Այդպիսի վիճակ թերևս կարելի է ենթադրել մի այնպիսի լեզվի համար, որ գոյություն ունի բացարձակորեն մեկուսացած փոքրաթիվ հանրության մեջ՝ վերջինիս համեմատական միօրինակության պայմաններում։ Իրականում լեզուները գործում են հասարակայնորեն և տարածականորեն տարբերակված հանրություններում, որոնք անընդհատ շփման մեջ են գտնվում այլ հանրությունների հետ։ Ենթակա լինելով ժողովրդի պատմական ճակատագրի ազդեցությանը՝ սրան հատուկ տնտեսական, քաղաքական, մշակութային ու գաղափարական տեղաշարժերով ու շփումներով, ամեն մի լեզու ենթարկվում է տարածական ու հասարակական տարբերակների համապատասխան տեղաշարժերի։ Այդ պայմաններում լեզվի պատմական պրոցեսը հեռու է հավասարաչափ ու աննկատ փոփոխությունների շարք լինելուց։ Այդ բանը հստակորեն երևում է հատկապես այն դեպքում, երբ մենք, առաջնորդվելով լեզվի պատմության գիտակարգի՝ լեզվի բոլոր տարբերակների պատմություն լինելու՝ մեր դավանած սկզբունքով, ուշադրությունը չենք կենտրոնացնում միայն մեկ, հատկապես ստանդարտ կամ գրական տարբերակի, մի առանձին բարբառի վրա, այլ հաշվի ենք առնում ու քննում լեզվի հասարակական ու տարածական բոլոր տարբերակների ամբողջությունը։ Այդ դեպքում շատ լավ երևում է, որ ժողովրդի պատմության մեջ տեղի ունեցող հեղաշրջումները չեն կարող չազդել լեզվի վրա, նրա մեջ առաջ չբերել նշանակալից փոփոխություններ, հիմք չտալ նորմաների փոփոխության և նույնիսկ նորմաների մի համակարգը մի ուրիշ, նախորդից զգալի չափով տարբերվող համակարգով փոխարինելու համար։ Այդ բանը հատկապես ցայտուն է դառնում գրի և գրականության գոյության շրջանում, երբ լեզվի փոփոխությունները վերջիվերջո հանգեցնում են գրական լեզվի նորմաների խախտման և նոր նորմաների հաստատման, հիմք տալիս նույնիսկ նոր՝ խոսակցական լեզվի առանձնահատկություններին ավելի համապատասխանող, գրական լեզվի հանդես գալու համար։

Որ տնտեսական, քաղաքական, գաղափարական տեղաշարժերը մեծապես ազդում են լեզվի վրա, առաջ բերում նրա մեջ նշանակալից փոփոխություններ, հիմք տալիս նորագոյացումների համար, առավելություն տալիս լեզվի մեջ գոյություն ունեցող տարբերակներից մեկին կամ մյուսին, դժվար չէ պարզել լեզուների պատմությունից։ Ժողովրդի անցումը նստակյաց կյանքի և կայուն երկրագործության՝ ընտանեկան կյանքի և գաղափարախոսության համապատասխան փոփոխություններով հանդերձ, հիմք է տալիս լեզվական համապատասխան փոփոխությունների, հատկապես տերմինային մեծաքանակ նորագոյացումների համար։ Քաղաքական տեղաշարժը, քաղաքական իշխանության փոփոխությունը կարող է հանգեցնել լեզվական իշխող նորմաների փոփոխության, մի ստանդարտ լեզվի՝ մի այլ ստանդարտ լեզվով փոխարինելուն, ստանդարտ լեզվի բարբառային հիմքի փոփոխության։ Նոր կրոնի հանդես գալը կարող է հանգեցնել լեզվական մեծաքանակ փոփոխությունների, բարբառներից մեկի գերակշռության ու ստանդարտացման, լեզվական ավելի կայուն նորմաների հաստատման, նոր գաղափարների արտահայտման լեզվական նոր միջոցների, նոր տերմինների և այլն։

Վերևում շարադրվածից դժվար չէ համոզվել, որ լեզվական անցումները երբեմն տեղի են ունենում բավականաչափ նկատելի կերպով։ Այս հանգամանքն էլ անհրաժեշտ է դարձնում լեզվի պատմության շարադրանքի մեջ հենվել շրջանաբաժանման որոշակի սխեմայի վրա, լեզվի պատմությունը շարադրել ըստ որոշակի շրջանների ու ենթաշրջանների, փուլերի ու ենթափուլերի։

Լեզվի պատմության պրոցեսի քննության մեջ մենք ելնում ենք չորս հիմնական սկզբունքից, որոնք մասամբ արտացոլվեցին վերևում։

1) Լրիվության կամ լիակատար ընդգրկման սկզբունք. ըստ այս սկզբունքի՝ լեզվի պատմությունը պետք է ընդգրկի լեզվի բոլոր տարատեսակների պատմությունը՝ առանց վերածվելու միայն գրական լեզվի կամ գրական լեզուների պատմության. վերջին դեպքում ավելի քիչ է երևում պատմական պրոցեսի բարդությունը. չէ՞ որ գրական լեզվի պատմությունը նորմավորման և նորմաների ժառանգորդականությունը պահպանելու պատմություն է։

2) Լեզվի պատմության դիալեկտիկայի հետևողական բացահայտման սկզբունք. ըստ այս սկզբունքի, որ սերտորեն կապվում է նախորդի հետ, լեզվական երևույթների պատմական քննության մեջ պետք է խուսափել ինչպես գռեհիկ էվոլյուցիոնիզմից, որ լեզվի պատմությունը պատկերացնում է որպես աննկատ քանակական փոփոխությունների պրոցես, հաշվի չի առնում

հարկ եղած չափով որակական անցումները, այնպես էլ մուտացիոնիզմից, որ անհրաժեշտ չափով չի հետևում որակական անցումների քանակական հիմքերի բացահայտմանը, լեզվի փոփոխությունները պատկերացնելով որպես հանկարծակի անցումների կամ «պայթյունների» մի շարք։

3) Լեզվի պատմության՝ ժողովրդի պատմության հետ սերտորեն կապված լինելու սկզբունք․ ըստ այս սկզբունքի՝ լեզուն որպես հասարակության հաղորդակցման միջոց գոյություն ունի հասարակության մեջ և հասարակության միջոցով, հետևաբար այն ենթակա է ժողովրդի զարգացման օրինաչափությունների ազդեցությանը։ Սակայն այդ ազդեցությունը տեղի է ունենում լեզվի ոչ բոլոր օղակներում հավասարաչափորեն և ոչ բոլոր դեպքերում անմիջականորեն ու ուղղագիծ կերպով։ Այլ կերպ ասած՝ պետք է խուսափել լեզվի և ժողովրդի պատմության կապի ինչպես գռեհիկ սոցիոլոգիական մեկնաբանությունից, այնպես էլ լեզվական պրոցեսի ինքնակայության (իմանենտության) սկզբունքից։

4) Լեզվական փաստերի առաջնայնության սկզբունք․ ըստ այս սկզբունքի՝ որքան էլ որ կարևոր լինեն արտալեզվական փաստերը լեզվական փաստերը հասկանալու համար, որքան էլ որ լեզվի գոյությունը պայմանավորված լինի հասարակության գոյությամբ, որքան էլ որ լեզվի պատմությունը սերտորեն կապված լինի ժողովրդի պատմության հետ, այնուամենայնիվ լեզվի պատմությունը պետք է լինի առաջին հերթին լեզվական փաստերի պատմություն, իր եզրակացությունների մեջ հենվի դրանց վրա և միայն դրանց միջոցով գնա դեպի ոչ լեզվական փաստերը։ Սա նշանակում է, որ լեզվի շրջանաբաժանումը չի կարող լինել ժողովրդի պատմության շրջանաբաժանման ընդօրինակումը, որ լեզուն ունի զարգացման իր սպեցիֆիկան, պատմական իր առանձնահատկությունները, իր ուրույն խընդիրները, որոնք հենց պետք է լինեն ուշադրության կենտրոնում։ Մնացած բոլոր փաստերը պետք է հաշվի առնվեն ըստ այն բանի, թե դրանք ինչպե՛ս և ի՛նչ չափով են արտահայտվում լեզվական փաստերի մեջ, ինչպե՛ս են համապատասխանություն գտնում այդ փաստերին, ինչքանո՛վ են նպաստում այդ փաստերի պարզաբանմանը։

Լեզվի պատմության նկատմամբ ցուցաբերած ընդհանուր մոտեցումն էլ որոշում է շրջանաբաժանման կոնկրետ սկզբունքները, որոնք հանգում են հետևյալին։

1) Բնականաբար, ենթադրվում է, որ առանձնացվող շրջանների ու ենթաշրջանների քանակը պայմանավորվում է ընդգրկվող ժամանակի երկարատևությամբ։ Սակայն այս սկզբունքը խախտվում է լեզվից լեզու ըստ նրանց զարգացման առանձնահատկությունների, պահպանված տվյալների և հետազոտողների մոտեցման, այսինքն՝ ըստ որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի։ Այսպես, պարսկերեն լեզվի գրավոր զարգացման մոտ 26 դարի, հայերենի գրավոր զարգացման մոտ 16 դարի և գերմաներենի զարգացման մոտ 12 դարի համար տարբերում են միևնույն հին, միջին և նոր շրջանները, ընդ որում տարբեր են դրանցից յուրաքանչյուրի ժամանակագրական ընդգրկման սահմանները։ Հասկանալի է, որ այս դեպքերում տարբեր են մոտեցումները, բայց չի կարելի հաշվի չառնել նաև օբյեկտիվ կողմերը՝ լեզուների փոփոխության տեմպերի տարբերությունը և գրավոր հուշարձանների բնույթը։ Կարելի է ասել, որ տարբեր են ոչ միայն տարբեր

լեզուների, այլև միևնույն լեզվի տարբեր շրջանների փոփոխության տեմպերը։ Այսուհանդերձ մենք ստիպված ենք որոշ չափով խախտել այս սկզբունքը նախագրային շրջանի փուլերի առանձնացման համար՝ ըստ լեզվաժամանակագրության մոտավորապես որոշելով ցեղակից լեզուներից հայոց լեզվի առանձնացման ժամանակը և ըստ ետադարձ հաշվարկման՝ նախագրային շրջանի փուլերի ժամանակագրական սահմանները։ Սակայն այս դեպքերում էլ ժամանակագրական սահմանները կարող են և պետք է ճշգրտվեն ըստ ժողովրդի պատմության, հարևան լեզուների և այլ ժողովուրդների մատենագրական վկայությունների տվյալների։

2) Լեզվի շրջաններն առանձնացնելիս պետք է հաշվի առնել առաջին հերթին հենց լեզվական տվյալները, այսինքն՝ լեզվական նորմաների այնպիսի էական փոփոխությունները, որոնք ընդգրկում են լեզվի բոլոր կողմերն ու մակարդակները։ Գրավոր շրջանում սա հաճախ նշանավորվում է ստանդարտ լեզվի այնպիսի փոփոխությամբ, որ հիմք է տալիս խոսելու նոր գրական լեզվի մասին։ Փոփոխության ժամանակակիցները սովորաբար ավելի ու ավելի են նկատում հին գրական լեզվի՝ խոսակցականից ունեցած տարբերությունները, անհասկանալի կամ դժվար հասկանալի դառնալը և հանդես են գալիս խոսակցական լեզվին ավելի մոտ գրական լեզվի հաստատման պահանջով։ Այսպիսի անցումները սովորաբար ունենում են արտալեզվական հիմքեր՝ նորմաների փոփոխության տնտեսական, քաղաքական ու գաղափարական անհրաժեշտություն, գրական լեզվի բարբառային հիմքի փոփոխության պահանջ՝ ըստ այս կամ այն բարբառով խոսողների ձեռք բերած ավելի մեծ ազդեցության։ Այսպիսով, ստանդարտ (գրական) լեզվի աչքի ընկնող փոփոխությունները սովորաբար ենթադրում են արտալեզվական փոփոխություններ և, ընդհակառակն, արտալեզվական աչքի ընկնող փոփոխություններն ազդում են և չեն կարող չազդել ստանդարտ (գրական) լեզվի նորմաների փոփոխության վրա։ Այս առումով, նկատի ունենալով լեզվի գրավոր և ոչ գրավոր լեզվավիճակների առանձնահատկությունները, գրի ու գրականության՝ լեզվի նորմավորման մեջ խաղացած դերը․ կարելի է լեզվի պատմությունն ամենից առաջ բաժանել նախագրային («նախապատմական») և գրային («պատմական») ժամանակաշրջանների։

3) Քանի որ լեզվի զարգացման շրջանների անցումները շոշափում են լեզվի բոլոր կողմերը, ուստի և սրան համապատասխան լեզվի շրջանաբաժանումը պետք է լինի բազմահատկանիշ, այսինքն՝ հենվի լեզվի կառուցվածքի և բառապաշարի փոփոխության բոլոր հիմնական կողմերի հաշվառման վրա։ Միահատկանիշ դասակարգումները կարող են ծառայել գերազանցապես որպես գործնական ուղեցույցներ․ տեսականորեն դրանք էական արժեք են ստանում, եթե արդյունք են լեզվի փոփոխության բոլոր կողմերի բարձր ընդհանրացման՝ էական փոփոխությունների բնույթի հաշվառումով։ Բազմահատկանիշ դասակարգման սկզբունքը հետևողականորեն անցկացնելով գրային ժամանակաշրջանի համար՝ նախագրայինի դեպքում մենք սահմանափակված ենք փաստերի ընձեռած հնարավորություններով։ Այս դեպքում, օրինակ, հայոց լեզվի պատմության մեջ առաջին պլանն է մղվում բառապաշարի փոփոխությունների բնույթը, իսկ կառուցվածքի փաստերը տրվում են ըստ հայտնիության աստիճանի․ երբեմն ստիպված ենք բավարարվել լոկ մի քանի հատկանիշի մատնանշմամբ։

4) Լեզվի պատմության շրջաններն առանձնացնելով առաջին հերթին ըստ ստանդարտ (գրական) լեզվի նորմաների էական փոփոխության՝ նորմաների մի համակարգի փոխարինմամբ մի այլ համակարգով՝ այդ փոփոխության բնույթը հասկանալի դարձնելու համար հարկավոր է ուշադրություն դարձնել լեզվի նաև այլ տարբերակների, խոսակցական լեզվի առանձնահատկությունների ու բարբառների վրա, այլև հաշվի առնել լեզվի, այդ թվում՝ հենց ստանդարտ լեզվի, հասարակական տարբերակների բնույթը, այսինքն՝ ընդգրկել տվյալ լեզվի գործառության բոլոր բնագավառները։ Այս դեպքում շրջանաբաժանումը կարտահայտի ոչ միայն որակական անցումները, այլև այդ անցումների հիմքերը։

5) Սրա հետ կապված և լեզվի զարգացման ժառանգորդականությունը ցույց տալու նպատակով առանձնացված շրջանների մեջ տարբերվում են ենթաշրջաններ՝ ըստ լեզվական նորմաների մասնակի փոփոխությունների, ըստ լեզվի գործառական շրջանակների փոփոխությունների ու անցումների, ըստ լեզվի տարբերակների բնույթի ու հարաբերակցության փոփոխությունների։

6) Լեզվի շրջանաբաժանումը արտացոլում է գտնում տերմինների որոշակի համակարգի մեջ։ Ներմուծվող տերմինները ըստ հնարավորին պետք է ճիշտ արտահայտեն զարգացման շրջանների ժամանակագրական հաջորդականությունն ու փոխհարաբերությունը և միանական լինեն։ Այս առումով բավական նպատակահարմար են «հին շրջան», «միջին շրջան» և «նոր շրջան», սրանց ներքին բաժանումների համար էլ՝ «սկզբնային կամ վաղ փուլ» և «ուշ կամ ետին փուլ» տերմինները։ Սակայն այս տերմինների կողքին հաճախ գործում են ավանդույթներով հարուստ ամեն մի լեզվի մեջ ավանդական անվանումներ, որոնք պետք է ճշգրտվեն ըստ ընդհանուր տերմինների և գործածվեն դրանց համապատասխան. հմմտ. հնդկերենի համար «սանսկրիտ», «պալի», «պրակրիտներ», հայերենի համար՝ «գրաբար», «աշխարհաբար» և այլն։ Ընդհանրապես, լեզվի զարգացման պրոցեսը լավ չարտացոլող, պատահական անվանումները (հմմտ. հայերենի համար, օրինակ, «նախնյաց ռամկորեն» անվանումը) պետք է զանց առնվեն։

Տարբերելով հայոց լեզվի պատմության նախագրային ու գրային ժամանակաշրջաններ, նախագրայինի նկատմամբ կիրառելով լեզվաժամանակագրության ու ետադարձ հաշվարկման մեթոդները և ստացված արդյունքները համապատասխանության մեջ դնելով արտաքին փաստերի հետ (հայ ժողովրդի պատմության, հարևան լեզուների և օտար մատենագիրների տվյալներ)՝ մեր «Հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության ակնարկներում» [Джаукян, 1967, 330—332] փորձել ենք տալ նախագրային ժամանակաշրջանի շրջանաբաժանման ընդհանուր պատկերը։ Այստեղ առանձնացված շրջանները ժամանակագրորեն ավելի մեծ ընդգրկում ունեն, քան գրավոր ժամանակաշրջանի համար առանձնացված շրջանները։ Սա բացատրվում է մասամբ օբյեկտիվ պատճառներով՝ փոփոխությունների քանակի և արագության (տեմպերի) տարբերություններով, մասամբ էլ մեր ունեցած տվյալների սակավաթվությամբ ու հատվածայնությամբ։ Այս դեպքում մենք ճշտորեն կարող ենք նշել ժամանակաշրջանի վերջը և հարաբերական ճշգրտությամբ՝ սկիզբը (հայոց լեզվի անկախ գոյության սկիզբը), բայց ոչ միջին օղակները։ Ինչքանով կարելի է որոշել հնդեվրոպական հին գրավոր լեզուների՝ խեթերենի, հին հունարենի, հին հնդկերենի տվյալների ու լեզվաժամանակագրական հաշվումների հիման վրա, հայոց լեզվի առանձնակի (անկախ) զարգացումն սկսվում է մ. թ. ա. III հազարամյակի սկզբներից։ Գրավոր ժամանակաշրջանի սկզբից՝ V դարից ետ գնալով մոտավորապես այնքան, ինչքան հայոց լեզուն անցել է մինչև մեր օրերը, կստանանք ժամանակագրական մի այլ սահման՝ մ. թ. ա. XII դարը, որ նշանակալից է նաև արտաքին փաստերի առումով։ Ըստ այս տվյալների և հաշվի առնելով մեր հիշյալ գրքում ստացված արդյունքները, մենք կարող ենք տալ շրջանաբաժանման որոշ ընդունելի սխեմա։ Մասնակի դժվարություն է հարուցում հայերենի ինքնուրույն գոյության առաջին շրջանի ռուսերեն протоармянский անվանման հայերեն համարժեքի հարցը։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե այն հարմար է արտահայտել «նախահայերեն» բառով, և վերջինս հենց այդ իմաստով էլ գործածված է Հ. Աճառյանի կողմից. «Լեզվական այն վիճակը,—գրում է նա,—որ ներկայացնում էր հայերենը հնդեվրոպական նախահայրենիքից հեռանալու միջոցին, կոչվում է նախահայերեն» [Աճառյան, ՀԼՊ, I, 1940, 105]։ Սակայն Հ. Աճառյանը փաստորեն նկատի ունի ոչ թե մի ամբողջ շրջան, այլ հնդեվրոպական միասնությունից առանձնանալու պահին հայերենի ունեցած վիճակը, որ փաստորեն համընկնում է հնդեվրոպական միասնության վերջում նրա ունեցած բարբառային առանձնահատկությունների ամբողջության հետ։ Նկատի ունենալով, որ գոյություն ունեցող «նախալեզու» և «նախահայրենիք» տերմինների մեջ հայերեն նախա-ն համապատասխանում է ռուսերեն ոչ թե прото-ին, այլ пра-ին («праязык», «прародина»), մենք գերադասում ենք նախահայերեն բառը օգտագործել հնդեվրոպական միասնության շրջանում հայերենի բարբառային վիճակը բնութագրելու համար[1], իսկ протоармянский տերմինի դիմաց օգտագործել վաղնջահայերեն տերմինը։ Այս դեպքում հայոց լեզվի ինքնուրույն գոյության նախագրային շրջանի համար կարելի է տարբերել երկու հիմնական շրջան՝ համապատասխան ենթաշրջանների առանձնացմամբ.

1. Վաղնջական շրջան (վաղնջահայերեն)՝ մ. թ. ա. III հազարամյակի սկզբներից մինչև մ. թ. ա. XIII դարը. այս շրջանի մեջ պայմանականորեն, առանց հետագա հանգամանալից բնութագրման, կարելի է առանձնացնել երկու ենթաշրջան՝

ա) սկզբնային վաղնջական՝ մ. թ. ա. III հազարամյակ.

բ) ուշ վաղնջական՝ մ. թ. ա. II հազարամյակի սկզբներից մինչև մ. թ. ա. XIII դարը։

2. Հնագույն շրջան (հնագույն հայերեն)՝ մ. թ. ա. XII դարից մինչև մ. թ. ա. IV դարը. այս շրջանում ավելի որոշակիորեն կարելի է տարբերել երկու ենթաշրջան՝

ա) վաղ հնագույն՝ մ. թ. ա. XII դարից մինչև մ. թ. ա. IV դարը.

բ) ուշ հնագույն՝ մ. թ. ա. III դարից մինչև մ. թ. IV դարը։

Անցնելով գրավոր ժամանակաշրջանի շրջանաբաժանմանը՝ մենք ուզում ենք նշել բուն լեզվակառուցվածքային առումով հայոց լեզվի զարգացման հին շրջանը V դարից սկսելու որոշ պայմանականությունը։ Եթե ճիշտ է Հ. Հյուբշմանը, որ նախաշեշտ վանկերում ի, ու ձայնավորների թուլացումն ու սղումը և է (=**եյ**), **եա**, **եայ**, **ոյ** երկբարբառների ու եռաբարբառների փոփոխությունը վերագրում է մինչև III դ. սկիզբն ընկած շրջանին [**Hübschmann**, 1898, 132], ապա գրաբարի կառուցվածքային համակարգը իր հիմնական գծերով ձևավորվել է V դարից ավելի վաղ՝ III դարից։ Քանի որ մեր նախորդ աշխատություններում հանգամանորեն քննված են հայոց լեզվի գրավոր ժամանակաշրջանի շրջանաբաժանման հետ կապված հարցերը՝ մենք այստեղ կբավարարվենք այդ շրջանաբաժանման սխեման բերելով։ Առանձնացվող շրջանների և ենթաշրջանների բնութագիրը կտրվի համապատասխան հատվածներում.

---

[1] Մոտավորապես «նախորդող» իմաստով. հմմտ. «նախահայր», «նախամայր» և այլն, այլև գրավոր շրջանի համար՝ «նախամիջին» ենթաշրջանը։

1. **Հին շրջան (հին հայերեն)**՝ V—XI դդ. այս շրջանի գրական լեզուն հայտնի է **գրաբար** անունով. ձևավորվելով Տուրուբերանի (Տարոնի աշխարհի) և Բարձր Հայքի ու Այրարատի՝ Տուրուբերանին հարող շրջանների խոսվածքների հիման վրա՝ գրաբարը մասամբ իր զարգացման առանձնահատկությունների, մասամբ էլ խոսակցական լեզվի բնականոն փոփոխության հետևանքով շրջանի վերջում զգալիորեն տարբերվել է խոսակցական լեզվից։ Հին շրջանի համար նպատակահարմար է առանձնացնել երեք ենթաշրջան.

ա) **վաղ հին կամ դասական գրաբարի**՝ V դարը.

բ) **ուշ հին կամ ետ-դասական գրաբարի**՝ VI—VII դդ.

գ) **նախամիջին**՝ VIII—XI դդ.։

2. **Միջին շրջան**՝ XII—XVI դդ. այս շրջանում հանդես է գալիս միջին գրական հայերենը՝ խոսակցական լեզվի հիման վրա, բայց նրա կողքին գործառական որոշ տարբերակմամբ որպես գրական լեզու գործում է նաև գրաբարը. միջին շրջանի համար կարելի է առանձնացնել երկու ենթաշրջան.

ա) **վաղ միջին կամ կիլիկյան նորմավորման**՝ XII—XIV դդ.

բ) **ուշ միջին կամ աշխարհաբարացման**՝ XV—XVI դդ.

3. **Նոր կամ աշխարհաբարի շրջան**՝ XVII—XX դդ. այս շրջանում հանդես է գալիս նոր գրական հայերենը կամ գրական աշխարհաբարը՝ խոսակցական լեզվի հիման վրա, բայց նրա կողքին առաջին ենթաշրջանում դեռևս գործում է գրաբարը։ Նոր շրջանի համար կարելի է տարբերել երեք ենթաշրջան.

ա) **վաղ աշխարհաբարի**՝ XVII դ. սկզբներից մինչև XIX դ. կեսը.

բ) **ուշ կամ երկնյուղ աշխարհաբարի**՝ XIX դ. կեսից մինչև 1920 թ.

գ) **ժամանակակից**՝ 1920 թ. մինչև մեր օրերը։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՆԱԽԱՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՇՐՋԱՆ

ՀԱՅԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐԲԱՌ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես նշվել է ներածության մեջ, մոտավորապես մ.թ.ա. III հազարամյակի սկզբներին հայերենն առանձնանում է հնդեվրոպական ընդհանրությունից և սկսում իր գոյությունը որպես անկախ լեզու։ Հայոց լեզվի պատմությունը բառիս բուն իմաստով սկսվում է հենց այս շրջանից՝ ընդգրկելով շուրջ հինգ հազարամյակ։ Մինչ այդ կարելի է խոսել հայերենի մասին որպես հնդեվրոպական ընդհանրության, այսինքն՝ հնդեվրոպական լեզվի (նախալեզվի) բարբառներից մեկի մասին։ Սա հայերենի նախապատմության շրջանն է՝ նախահայերենի շրջանը, որ ամբողջովին կապված է հնդեվրոպական լեզվի պատմության հետ։ Շարադրել հայոց լեզվի նախապատմությունը՝ նշանակում է շարադրել որպես հնդեվրոպական բարբառ նրա ձևավորման պատմությունը և նկարագրել այն որպես բարբառ՝ հնդեվրոպական այլ բարբառների հետ ունեցած նրա հարաբերության մեջ։ Քանի որ հայերենի՝ ձևավորված բարբառ լինելու մասին կարելի է խոսել՝ նկատի ունենալով հնդեվրոպական լեզվի զարգացման վիճակը հայերենի անջատման անմիջական նախօրյակին, ուստի մեր ուշադրության կենտրոնում կլինեն հենց այդ ժամանակ հայերենի ունեցած հնչյունական, քերականական և բառային առանձնահատկությունները։ Բառային առանձնահատկությունների քննությունն էլ հնարավորություն կտա պարզելու նրա ունեցած գաղափարների շրջանակը և սրանց հիման վրա գծելու հայ ժողովրդի ինքնուրույն զարգացման շրջանի սկզբին նրա ունեցած տնտեսական, քաղաքական և ընտանեկան վիճակը, նրա մշակույթի առանձնահատկությունները, կրոնական, արվեստային և այլ ըմբռնումները, այսինքն՝ նրա կյանքը, այն բոլորը, ինչով ապրում է ժողովուրդը։

Ինչպես ամեն մի բարբառ, այնպես էլ հայերենը հնդեվրոպական լեզվի այլ բարբառների հետ առաջին հերթին պետք է ունենար կառուցվածքային և բառային այնքան ու այնպիսի ընդհանրություններ, որոնք իրավունք են տալիս խոսելու նրա՝ հնդեվրոպական մեկ լեզվի բարբառ լինելու մասին։ Հնդեվրոպական լեզվի տարբեր բարբառներով խոսողները կարող էին անհրաժեշտության դեպքում հաղորդակցվել, իրար հետ խոսել և իրար հասկանալ։ Ինչպես ամեն մի լեզվի բարբառների դեպքում, այստեղ ևս պետք է գոյություն ունենային բոլոր բարբառներին, բարբառների մի մասին կամ միայն երկու բարբառի հատուկ երևույթներ, որոնք, ինչպես կտեսնենք, բացահայտվում են համեմատական լեզվաբանության և, հատկապես, նրա մի ճյուղը կազմող հնդեվրոպական տարածքային (արեալային) լեզվաբանության կամ հնդեվրոպական բարբառագիտության կողմից։ Ընդունված է երկու կամ ավելի բարբառների ընդհանուր հատկանիշները, որոնք քարտեզի վրա նշանակվելու դեպքում կազմում են տարբեր սահմաններ ու ձևեր ունեցող գծեր, կոչել զուգաբանություններ (իզոգլոսներ)։ Երբեմն նեղ իմաստով զուգաբանություններ են կոչում միայն երկու բարբառի պատկանող հատկանիշները, բայց ավելի ճիշտ է սրանց համար գործածել «բացառյալ (էքսկլուզիվ) զուգաբանություններ» տերմինը՝ «զուգաբանություններ» բառը գործածելով ընդհանուր իմաստով։

Ըստ հնչյունական, քերականական և բառային զուգաբանությունների աշխարհագրական տարածման բնույթի առանձնացվում են համապատասխան տարածքներ (արեալներ)[1], այստեղից էլ բխում է դրանք ուսումնասիրող գիտակարգի «տարածքային (արեալային) լեզվաբանություն» անվանումը։ Տարածքները տարբերվում են ըստ ընդգրկման, տեղադրության, ձևի և լինում են մեծ ու փոքր (երբեմն էլ, ըստ տարբերակվածության աստիճանի, նաև միջին), կենտրոնական ու եզրային, մեկուսացած ու չմեկուսացած և այլն, ընդ որում դրանց հիման վրա փորձ է արվում տարբերակելու լեզվական արխաիզմներն ու նորագոյացումները, որոշելու լեզվական երևույթների ժամանակագրական փուլերն ու հաջորդականությունը։

Հայոց լեզվի նախապատմությանը՝ նրա բարբառային զարգացման շրջանին նվիրված այս մասը մեր կողմից բաժանված է երկու հատվածի։ Առաջին հատվածում քննված են հնդեվրոպական լեզվի և հնդեվրոպացիների հետ կապված ընդհանուր հարցերը՝ հնդեվրոպական լեզուների դասակարգումն ու աշխարհագրական տարածումը, վերականգնված հնդեվրոպական լեզվի կառուցվածքը, բառապաշարը, բարբառային բաշխումը, զարգացման փուլերը և հնդեվրոպացիների բնակավայրը («նախահայրենիքը»), միասնության ժամանակը, կյանքն ու մշակույթը ըստ լեզվական տվյալների։ Երկրորդ հատվածում փորձ է արվում որոշելու հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների և նախահայերենի դիրքը՝ հնդեվրոպական բարբառների մեջ, պարզվում մյուս լեզուներին ու բարբառներին նրա մերձավորության աստիճանը՝ ըստ հնչյունական, քերականական և բառային առանձնահատկությունների ու սրանց տարածքային բաշխման, տրվում են հայերենի պահպանած հնդեվրոպական արմատների ու բառային միավորների իմաստային (թեմատիկ) խմբերը և այս կապակցությամբ կատարվում է հայերենի կորցրած հնդեվրոպական բառային առանձին միավորների վերականգնման փորձ։

---

[1] Վերջին ժամանակներում հայերեն սկսել են տարածք բառը գործածել տերիտորիայի իմաստով, բայց լեզվաբանության մեջ մենք այդ բառը գործածում ենք արեալի իմաստով։

I. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՀՆԴԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԸ

1. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

Հայերենը պատկանում է լեզուների այն մեծ ընտանիքին, որ ընդունված է կոչել հնդեվրոպական։ Այդ լեզուներով այժմ խոսում է մարդկության կեսը։

Ըստ ցեղակցական հարաբերության հնդեվրոպական լեզուները բաժանվում են խմբերի կամ, ինչպես հաճախ ասում են (ցեղակից լեզուների փոխհարաբերությունը ներկայացնելով ծագումնաբանական ծառի ձևով), ճյուղերի։ Սրանք տարարժեք են թե՛ ըստ ընդգրկած լեզուների թվի, թե՛ ըստ գրավոր հուշարձանների հնության աստիճանի, թե՛ ըստ այժմ խոսվող կամ չխոսվող («մեռած») լինելու։ Բազմանդամ խմբերի կողքին կան միայն մեկ լեզվից բաղկացածներ, մ.թ.ա. II հազարամյակից գրավոր հուշարձաններ ունեցողների կողքին՝ նորագիր և նույնիսկ դեռևս գիր ու գրականություն չունեցողներ, մեծաթիվ խոսողներ ունեցողների կողքին՝ խիստ փոքրաթիվ կամ միայն մեռած լեզուներով ներկայացվածներ։ Եթե, հետևելով ավանդույթին, «մեռած» համարենք ոչ միայն ասպարեզից լրիվին դուրս եկած լեզուները, այլև այժմ խոսվող լեզուներից տարբերվող հին գրավոր վիճակները, ապա հայերենը կարելի է բնութագրել որպես զգալի հնություն (մ. թ. V դարից սկսած գրավոր հուշարձաններ) ունեցող, երկու մեռած (հին և միջին) և երկու կենդանի (արևելահայ և արևմտահայ) գրական լեզուներով ներկայացած, ինքնին (առանց մերձավոր ցեղակիցների) մեկ խումբ (ճյուղ) կազմող լեզու։

Հնդեվրոպական լեզուների վերաբերյալ մեր գիտելիքների զարգացման արդի փուլում դժվար է որոշել խմբերի (ճյուղերի) ճիշտ թիվը. կան դեպքեր, երբ լեզուների առանձին համարվող որոշ խմբեր գիտնականները միավորում են մեկ խմբի մեջ (հմմտ. բալթիական և սլավոնական լեզուները), կամ երբ տվյալ լեզուների՝ հնդեվրոպական ընտանիքին պատկանելու հարցը վիճարկվում է։ Թվարկենք հնդեվրոպական լեզուների առանձին խմբերը (ճյուղերը) հիմնականում արևելքից արևմուտք հաջորդականությամբ և տանք դրանց համառոտ բնութագիրը։

1. **Հնդիրանական.**—Հնդիրանական կամ արիական[1] լեզուները ներկայացված են սկզբնապես իրար շատ մերձավոր հնդկական և իրանական լեզուներով։

Հնդկական թվագրված գրավոր հուշարձանները մ. թ. III դարից են՝ Աշոկա թագավորի ժամանակներից։ Սակայն կան ճշգրտորեն չթվագրված բազմաթիվ հուշարձաններ, որոնք գրված են հին հնդկերենով՝ սանսկրիտով։

---

[1] «Արի» անվանումն ընդհանուր է հին հնդիկների ու հին իրանցիների համար (հ. հնդկ. āri(y)a- «արի, արիացի», ավեստ. airyō, հ. պրսկ. ariya- «արիական») և պահպանվել է Իրան անվան մեջ։

Սրանցից հնագույնները Վեդաներն են՝ հոգևոր երգերի և ծիսական տեքստերի չորս ժողովածուները, որոնց կազմավորման ժամանակը տարվում է մինչև մ. թ. ա. II հազարամյակի կեսերը: Վեդաների և վեդայական կրոնի սրբազան այլ գրքերի լեզուն հայտնի է «վեդայական հնդկերեն» կամ «վեդայական սանսկրիտ» անունով: Սրան մոտ է դասական սանսկրիտը՝ սկսած «Մահաբհարատա» (մ. թ. ա. V—IV դդ.) և «Ռամայանա» (մ. թ. ա. IV դ.— մ. թ. IV դ.) էպիկական ստեղծագործությունների լեզվից և վերջացրած բազմասեռ այն գրականության լեզվով, որ ստեղծվել է սանսկրիտի՝ արդեն մեռած (ոչ խոսակցական) լինելու պայմաններում: Սանսկրիտը շարունակում էր գրական լեզու լինել նաև միջին գրական լեզուների՝ պրակրիտների (սկսած Աշոկայի արձանագրությունների շրջանից) և պալիի տարածման շրջանում: Միջին շրջանի լեզուների զարգացման ուշ վիճակը հայտնի է «ապաբհրանշա» («անկում») անունով. սրանից էլ սկիզբ են առնում նոր հնդկական լեզուները՝ հինդուստանի՝ հինդի (Հնդկաստանի ամենատարածված գրական լեզուն) և ուրդու (Պակիստանի հիմնական գրական լեզուն) տարբերակներով, բենգալի (Բանգլադեշում և Հնդկաստանում), բիհարի, մարաթի, փենջաբի, ռաջաստանի, գուջարաթի, ուրյա և այլն:

Հին իրանական լեզուներից առաջին հերթին հիշատակելի են ավեստերենը՝ զրադաշտական կրոնի սրբազան գրքի՝ Ավեստայի լեզուն, և հին պարսկերենը՝ Աքեմենյան թագավորական հարստության (հատկապես Դարեհի) սեպագիր արձանագրությունների լեզուն: Ավեստայի կազմավորման ժամանակը դրվում է մ. թ. ա. IX—IV դդ., և նրա հնագույն մասը համարվում են գաթաները: Հին պարսկական արձանագրություններն ընդգրկում են մ. թ. ա. VI—IV դդ.: Հին իրանական լեզուներից են նաև սակավ հայտնի մեդերենը (մարերենը), սկյութերենը, թերևս նաև կիմերերենը: Միջին շրջանն սկսվում է մ. թ. ա. III դարից և ներկայացված է արևմտյան՝ միջին պարսկերեն ու պահլավերեն և արևելյան՝ սողդերեն, խորեզմերեն, սակերեն լեզուներով: Նոր շրջանի արևմտաիրանական լեզուներն են նոր պարսկերենը (հնագույն գրավոր հուշարձանը՝ մ. թ. VIII դարից), թաջիկերենը, քրդերենը, բելուջերենը, թաթերենը և թալիշերենը, արևելաիրանական լեզուները՝ օսերենը (սկյութերենի և սրանից ծագած ալաներենի հաջորդը), աֆղաներենը (փուշտուն), յաղնոբերենը, պամիրյան լեզուները:

2. Թոխարական.—Թոխարական երկու լեզուները հայտնի են մ. թ. V—VII դդ. պատկանող և 1892 թ. սկսած Չինական Թուրքեստանում (Թուրֆանի, Կարաշարի, Քուչայի շրջաններում) հայտնագործված տեքստերով: Արևելաթոխարերենը պայմանականորեն կոչում են թոխարերեն Ա (A), արևմտաթոխարերենը՝ թոխարերեն Բ (B):

3. Հայերեն.—Հին ժամանակներից սկսած տարածված է եղել Հայկական բարձրավանդակում, հայտնի է մ. թ. V դարից սկսած գրավոր հուշարձաններով և հին, միջին ու երկու նոր գրական լեզուներով: Ունի մի քանի տասնյակ բարբառ: Մերձավոր ցեղակիցներ ունենալու հարցը առայժմ բաց է մնում՝ չնայած փռյուգերենի հետ սերտորեն կապելու փորձերին:

4. Խեթա-լուվիական կամ (հին) անատոլիական.—Խեթա-լուվիական խումբը ներկայացված է վաղ (մ. թ. ա. XVIII—XIII դդ.) և ուշ (մ. թ. ա. VIII—II դդ.) շրջանների մեռած (միայն գրավոր հուշարձաններով ավանդված) լեզուներով: Վաղ խեթա-լուվիական լեզուներից խեթերենը (հեթիթերենը), լուվերենը և պալայերենը հայտնի են մ. թ. ա. XVII—XIII դդ. բևեռագիր, հիերոգլիֆյան լուվերենը (հիերոգլիֆյան խեթերենը)՝ XVI—VIII դդ. հիերոգլիֆյան արձանագրություններով: Ուշ խեթա-լուվիական լեզուները գրի են առնված հունական գրի ձևափոխված տարատեսակներով՝ լիկիերեն և միլիերեն (լիկիերեն Բ) (մ. թ. ա. V—IV դդ.), լիդիերեն (մ. թ. ա. VII—II դդ.), կարիերեն (մ. թ. ա. VIII—IV դդ.): Այս բոլոր լեզուներն էլ խոսվել են Անատոլիական թերակղզում կամ Փոքր Ասիայում (արևմտյան Թուրքիայի տերիտորիայում), ընդ որում ուշ շրջանի լեզուները՝ սրա արևմտյան մասում:

Խեթա-լուվիական լեզուները ըստ ցեղակցական փոխհարաբերության (մերձավորության աստիճանի) այժմ բաժանում են երկու ենթախմբի՝ խեթական կամ խեթա-լիդիական՝ խեթերեն, պալայերեն, լիդիերեն, կարիերեն, և լուվիական կամ լուվա-լիկիական՝ լուվերեն, հիերոգլիֆյան լուվերեն, լիկիերեն:

Վ. Գեորգիևը խեթա-լուվիական լեզու է համարում էտրուսկերենը՝ հայտնի մ. թ. VII դարից մինչև մ. թ. սկիզբը ներկայացված արձանագրություններով [Georgiev, 1962, 1970—1971, 1973, 1975], Գ. Ջահուկյանը հայասերենը՝ հայտնի միայն մ. թ. ա. XIV—XIII դդ. խեթական արձանագրություններում հիշատակված հատուկ անուններով [Djahukian, 1961. Джаукян, 1964, Ջահուկյան, 1976]:

5. Սլավոնական.—Սլավոնական լեզուներն սկզբնապես միասնական են եղել՝ համեմատաբար ուշ (մ. թ. VI—VII դդ.) բաժանվելով երեք ենթախմբի՝ արևելյան, արևմտյան և հարավային: Հետագայում արևելյան ենթախմբի կազմում տարբերակվել են ռուսերենը, ուկրաիներենը և բելոռուսերենը, արևմտյանի կազմում՝ լեհերենը, սլովակերենը, կաշուբերենը, պոլաբերենը, լուժիկերենի երկու բարբառները՝ վերին և ստորին, հարավայինի կազմում՝ բուլղարերենը, սերբախորվաթերենը, մակեդոներենը, սլովեներենը: Այսպես կոչված հին կամ եկեղեցասլավոներեն լեզուն որպես գրական լեզու սկիզբ է առել IX դարում՝ մակեդոնական հիմքի վրա, և մեծ դեր է խաղացել հարավային ու արևելյան սլավոնական ժողովուրդների կյանքում: Աստիճանաբար գրավոր են դարձել նաև սլավոնական մյուս լեզուները:

6. Բալթիական.—Բալթիական լեզուներն են լիտվերենն ու լատվերենը (լատիշերենը), որոնց գրավոր հուշարձաններն սկիզբ են առնում XVI դարից, և պրուսերենը, որ գրի է առնվել XV—XVI դարերում ու XVII դարում դադարել գործածվելուց:

7. Փռյուգական.—Փռյուգացիները սկզբնապես բնակվել են Բալկանյան թերակղզում՝ թրակացիների հարևանությամբ: Մ. թ. ա. XII դ. մոտերքը նրանք տեղափոխվում են Փոքր Ասիայի արևմտյան մասը, որտեղ հետագայում հիմնում են բավականին հզոր պետություն: Եթե մի կողմ թողնենք փռյուգական ավելի վաղ («նախափռյուգական») շերտ որոնելու փորձերը (Օ. Հաաս), ապա բուն փռյուգերենի հուշարձանները՝ գրված հունական այբուբենով՝ ժամանակագրական երկու շերտ են կազմում՝ հին կամ վաղ փռյուգերենինը մ. թ. ա. VI—IV դարերից են (շուրջ հարյուր արձանագրություն), նոր կամ ուշ փռյուգերենինը՝ մ. թ. I—IV դարերից (76 արձանագրություն): Մ. թ. VI դարում փռյուգերենը դադարում է խոսակցական լեզու լինելուց:

8. **Թրակյան.**—Թրակերենը հնում տարածված է եղել Բալկանյան թերակղզու արևելյան մասում՝ աստիճանաբար տարածվելով նաև Փոքր Ասիայում։ Մ. թ. ա. V—IV դդ. այն դադարում է կենդանի խոսակցական լեզու լինելուց։ Թրակերենը հայտնի է հատուկ անուններով, հույն և հռոմայեցի հեղինակների հիշատակած բառերով (գլոսաներով), հունական տառերով գրված երկու տասնյակից ավելի համառոտ արձանագրություններով։ Թրակերենից տարբեր է եղել դակա-միզիերենը։ Թրակերենին զգալի չափով մոտ է պելասգերենը, որքանով որ այն վերականգնվում է հունական բառապաշարի՝ հունարենի բուն օրինաչափություններից շեղվող բառերի միջոցով։

9. **Հունական.**—Հունարենը գրավոր հուշարձաններով ներկայացված է մ. թ. ա. II հազարամյակի կեսերից սկսած։ Կրետե կղզում և հարավային Պելոպոննեսում հայտնաբերվել և 1952—1953 թթ. վերծանվել են այսպես կոչված գծային B վանկային գրով գրված կավե աղյուսներ (ընդհանուր թվով շուրջ 3000)։ Այս գիրը հույները փոխ են առել ինչ-որ լեզվից, որ չի տարբերել ձայնեղ ու խուլ բաղաձայնները, երկար ու կարճ ձայնավորները և այլն։ Պահպանվել են նաև գծային Ա կոչված գրով ավանդված հուշարձաններ, որոնք, սակայն, չեն ընթերցված։ Սրանք պատկանում են մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսին և ըստ ոմանց նույնպես հունարենով են։ Հունական բուն այբուբենով գրված հուշարձանները (տարբեր բարբառներով)՝ սկիզբ են առնում մ. թ. ա. VIII դարից։ Սրանցից հատկապես կարևոր են Հոմերոսին վերագրվող պոեմները՝ «Իլիականը» և «Ոդիսականը», որոնք արտացոլում են մ. թ. ա. XII դ. սկզբի դեպքերը, բայց վերջնական խմբագրությամբ գրանցվել են մ. թ. ա. VI դարում։ Տարբերում են իոնիական (ատտիկյան ենթաբարբառով), աքայական (արկադա-կիպրական), էոլիական և դորիական բարբառներ։ Մ. թ. ա. IV դարից սկսած տարածվում է ատտիկյան խոսակցական լեզվի հիման վրա կազմավորված ընդհանուր լեզուն՝ կոյնեն, որ դառնում է միջին հունարենի հիմքը։ Վերջինիս հիման վրա էլ XV—XVI դդ. կազմավորվում է նոր հունարենը։

10. **Ալբանական.**—Ալբաներենի գրավոր հուշարձաններն սկսվում են XV դարից։ Ոմանք ալբաներենը համարում են իլիրերենի հետնորդ, ուրիշները կապում են թրակերենի և նույնիսկ դակա-միզիերենի հետ։ Գրական լեզուն զարգացել է երկու բարբառների տարբերակների հիման վրա՝ հյուսիսային կամ գեգյան և հարավային կամ տոսկյան։

11. **Իլիրական.**—Իլիրերենը տարածված է եղել Բալկանյան թերակղզու հյուսիս-արևմտյան մասում՝ Ադրիատիկ ծովից մինչև թրակացիների բնակավայրերն ընկած տարածությունում, թեև ոմանք նրան ավելի մեծ տարածում են վերագրում։ Իլիրերենը հայտնի է հատուկ անուններով և հին հեղինակների պահպանած բառերով (գլոսաներով)։ Ոմանք նրա ճյուղավորումն են համարում մեսապերենը, որ ներկայացված է հունական ծագման այբուբենով մ. թ. ա. V—I դդ. գրված 300-ից ավելի արձանագրություններով (Կալաբրիայում և Ապուլիայում, որտեղ մեսապները երևացել են, ըստ անտիկ հեղինակների, Բալկանյան թերակղզուց)[2]։

12. **Վենետական.**—Վենետերենը տարածված է եղել Իտալիայի հյուսիս-արևելյան մասում՝ Ադրիատիկ ծովի հյուսիսային ափերին և մեր թվագրության սկզբներին դեռևս խոսակցական լեզու է եղել։ Այն հայտնի է մասնավորապես շուրջ 200 արձանագրություններով՝ գրված հունական այբուբենի մի տարբերակով։

13. **Իտալյան.**—Հին իտալյան լեզուները բաժանվում են երկու ենթախմբի՝ լատինա-ֆալիսկյան և օսկ-ումբրական։ Երկրորդ ենթախմբի լեզուներից օսկերենը ներկայացված է մ. թ. ա. V—մ. թ. I դդ. 250-ից ավելի արձանագրություններով՝ գրված էտրուսկյան հիմք ունեցող հատուկ այբուբենով։ Ումբրերենի արձանագրությունների քանակը մեծ չէ, բայց դրանցից մեկը պարունակում է 4000-ից ավելի բառ։ Գրված են սկզբնապես էտրուսկյան հիմք ունեցող, ավելի ուշ՝ լատինական այբուբենով։ Առաջին ենթախմբի լեզուներից ֆալիսկերենը հայտնի է միայն սակավաթիվ համառոտ արձանագրություններով։

Իտալյան լեզուներից ամենից ավելի կարևորը և լավ հայտնին լատիներենն է, որի հնագույն արձանագրությունը մ. թ. ա. 600 թվականից է։ Սկզբնապես լինելով Հռոմի լեզուն՝ նա աստիճանաբար դուրս է մղում Իտալիայի մյուս լեզուները, իսկ ավելի ուշ տարածվում է Հռոմեական կայսրության տերիտորիայում, հանդես գալիս իբրև, այսպես կոչված, ժողովրդական (վուլգար) լատիներեն։ Վերջինիս հիման վրա զարգանում են նոր լատինական կամ ռոմանական լեզուները՝ ա) արևմտառոմանական՝ իտալերենը, սարդիներենը, ռետոռոմաներենը, գալլա-ռոմանական կոչված ֆրանսերենը և պրովանսալերենը, իբերա-ռոմանական կոչված իսպաներենը, պորտուգալերենը, կատալոներենը և գալիսերենը, բ) արևելառոմանական՝ ռումիներենը, մոլդավերենը։ Ռոմանական լեզու է եղել XIX դ. մեռած դալմատերենը։

14. **Կելտական.**—Կելտական լեզուները բաժանվում են երեք ենթախմբի՝ գալիական, գաելական և բրիտական։ Գալիականը ներկայացված է մ. թ. առաջին դարերում գոյություն ունեցած գալերենով, որ հայտնի է շուրջ 60 համառոտ արձանագրություններով, հատուկ անուններով, հին հեղինակների ավանդած, այլև ֆրանսերենի փոխառած բառերով։ Գաելականը ներկայացված է մ. թ. IV դարից գրավոր հուշարձաններ ունեցող և այժմ Էյրեի պետական լեզուն հանդիսացող իռլանդերենով, Շոտլանդիայի լեռնային մասերում պահպանված շոտլանդերենով և Մեն կղզու լեզվով՝ մեներենով։ Բրիտականը ներկայացված է վալիսերենով (Անգլիայում՝ Ուելսում), կոռներենով (խոսվել է Անգլիայում՝ Կոռնուոլում մինչև XVIII դ.), բրետոներենով (Ֆրանսիայում՝ Բրետանում)։

15. **Գերմանական.**—Բաժանվում է երեք ենթախմբի՝ արևելյան, արևմտյան և հյուսիսային կամ սկանդինավյան։ Արևելյանը ներկայացված է միայն մեռած լեզուներով՝ գոթերենով (հայտնի հատկապես աստվածաշնչի՝ մ. թ. IV դ. կատարված թարգմանությամբ), վանդալերենով, բուրգունդերենով և այլն։ Արևմտյան ենթախմբի մեջ մտնում են գերմաներենը (վերին գերմաներեն), հոլանդերենը (ճյուղավորված ստորին գերմանականից և հայտնի Հոլանդիայում որպես նիդեռլանդերեն, Բելգիայում՝ որպես ֆլամանդերեն, Հարավ-աֆրիկյան Միությունում՝ որպես աֆրիկաանս), անգլերենը, ֆրիզերենը։ Հյուսիսային կամ սկանդինավյան ենթախումբը կազմում են դանիերենը, շվեդերենը, նորվեգերենը և իսլանդերենը. Հնագույն գրավոր հուշարձանները մ. թ. III դարից սկիզբ առնող ռունական արձանագրություններն են։

---

[2] Մեսապերենը իլիրերենից տարբեր լեզու են համարում Օ. Հաասը [Haas, 1962], Վ. Գեորգիևը [Georgiev, 1968]։

2. ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

ա) ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թվարկված լեզուների համեմատության հիման վրա վերականգնվում է մի լեզու, որ կոչվում է հնդեվրոպական լեզու կամ հնդեվրոպական նախալեզու, երբեմն էլ հնդեվրոպական հիմք-լեզու։ Այս լեզուն համեմատաբար ինտենսիվ տրոհման ժամանակաշրջանի նախօրյակին, անշուշտ, բարբառային նշանակալից տարբերակում է ունեցել։ Սակայն այն հարցը, թե հնդեվրոպացիներն ունեցե՞լ են արդյոք մեկ միասնական ստանդարտացված լեզու (որ բարձրացել է բարբառային որոշակի հիմքի վրա), թե՞ խոսել են իրարից անկախ բարբառներով, չի կարելի վերջնականապես լուծված համարել։ Հայտնի է միայն, որ արդեն գոյություն են ունեցել բանաստեղծական որոշակի ավանդույթներ և սրանց հետ կապված բանաստեղծական հատուկ բառեր ու դարձվածներ, ժողովրդական բանահյուսության ընդհանուր նմուշներ, հատկապես յուրահատուկ առածներ ու ասացվածքներ, դիցական ընդհանուր զրույցներ, կրոնական-ծիսական ընդհանուր բանաձևեր (անեծքներ, օրհնանքներ, աղոթքներ) և այլն։ Այս պայմաններում հնդեվրոպական մեկ ընդհանուր միասնական լեզվի վերականգնման փորձը որոշ պայմանականություն ունի, և կարելի է խոսել միայն հնդեվրոպական բարբառների համար ընդհանուր գծերի առկայության մասին՝ առանց շեշտելու դրանց՝ մեկ ստանդարտ լեզվի պատկանելու վարկածը։ Հնդեվրոպական լեզուն գիր ու գրականություն չի ունեցել[3], և հետևաբար նրա բնութագիրը տրվում է միայն համեմատական լեզվաբանության տվյալների հիման վրա։

Հնդեվրոպական լեզվի հնչյունական կառուցվածքի մեջ ձայնավորների համակարգը բնութագրվել է այսպես կոչված իռացիոնալ (քմայնացած) ձայնավորների բացակայությամբ, երկար և կարճ ձայնավորների հակադրությամբ, սրանց համապատասխան երկու գերկարճ (թուլացած) ձայնավորի և երկու շարք կազմող երկբարբառների առկայությամբ.

*e	*o	*a	*ь	*ei	*oi	*ai
				*eu	*ou	*au
*ē	*ō	*ā	*ə	*ēi	*ōi	*āi
				*ēu	*ōu	*āu

Իհարկե, երկար երկբարբառների ոչ բոլոր հնարավոր տիպերի համար են պահպանվել հավաստի օրինակներ։

Հնդեվրոպական լեզվի հնչյունական կազմի համար բնորոշ է եղել ձայնորդների յուրահատուկ համակարգի առկայությունը, որ միջին տեղ է գրավել ձայնավորական և բաղաձայնական համակարգերի միջև։ Ըստ դիրքի ձայնորդները կարող էին կատարել նաև ձայնավորի (վանկարար տարրի) և բուն բաղաձայնի (ոչ վանկարար տարրի) դեր. այս պայմաններում *i *և* *u *ձայնավորները հանդես են եկել ոչ թե որպես ինքնուրույն ձայնավորներ, այլ որպես ձայնորդի դիրքային տարբերակներ՝ ձայնավոր կամ վանկարար ձայնորդներ։ Հ.-ե.[4] ձայնորդներն ունեցել են նաև երկար տեսակներ, որոնց ինքնուրույն հնչույթներ լինելու հարցը չի կարելի վերջնականապես լուծված համարել, սակայն հարկավոր է նշել, որ սրանք տալիս են կարճերից տարբեր արտացոլումներ։ Այսպիսով, հ.-ե. ձայնորդների համակարգը ներկայացված է հետևյալ անդամներով՝*

Ոչ վանկարար	*i̯	(*y)	*u̯	(*w, *v)	*r	*l	*m	*n
Վանկարար	*i		*u		*r̥	*l̥	*m̥	*n̥
Վանկարար-երկար	*ī		*ū		*r̥̄	*l̥̄	*m̥̄	*n̥̄

Հնդեվրոպական բաղաձայնների համակարգը հարուստ է եղել պայթականներով (հատկապես ետնալեզվային պայթականներով), աղքատ՝ շփականներով. կիսաշփականներ չի ունեցել. հավաստիորեն վերականգնվող միակ շփականը s*-ն է, որ ձայնեղ բաղաձայններից առաջ գտնված դիրքում հանդես է եկել* z *տարբերակով։ Գերազանցապես խեթերենի տվյալների հիման վրա նախահնդեվրոպական շրջանի համար վերականգնում են նաև մեկ կամ մի քանի կոկորդային բաղաձայն (լարինգալ)՝* H (H_1, H_2, H_3...) *ուրույն ձայնորդի հատկությամբ,* *ə *ձայնավորին հարաբերակից։*

Ի տարբերություն ձայնավորների՝ հնդեվրոպական բաղաձայնների, մասնավորապես պայթականների ընդհանուր հնդեվրոպական համակարգի վերականգնումը դժվարությունների տեղիք է տալիս. այստեղ խիստ որոշակի են մի կողմից՝ բարբառային, մյուս կողմից՝ վաղ և ուշ հնդեվրոպական վիճակների տարբերությունները։ Դասական հնդեվրոպաբանությունն առանձնացնում էր երկու տասնյակ պայթական բաղաձայնից բաղկացած մի համակարգ, որ բնութագրվում էր ձայնեղների և խուլերի, շնչեղների և ոչ շնչեղների, շրթնայինների, առաջնալեզվայինների և ետնալեզվայինների, ետնալեզվայինների մեջ՝ քմայնացած, սովորական և շրթնայնացած շարքերի առկայությամբ՝

*bh	*dh	*g′h	*gh	*gᵘh	(*gʷh)
*b	*d	*g′	*g	*gᵘ	(*gʷ)
*p	*t	*k′	*k	*kᵘ	(*kʷ)
*ph	*th	*k′h	*kh	*kᵘh	(*kʷh)

Արդի հնդեվրոպաբանությունը այսպիսի վերականգնման դեմ բերում է տիպաբանական հնարավորության, հնչույթաբանական ճշմարտացիության, փաստական ճշգրտության, ժամանակագրական տարբերակման անհրաժեշտության հետ կապված զանազան առարկություններ։ Մասնավորապես վեճերի տեղիք են տալիս շնչեղ ձայնեղների իրական հնչման, շնչեղ խուլերի հնչույթաբանական առանձին կարգի առկայության, ետնալեզվայինների երեք շարքերի հնարավորության և, սրա հետ կապված, քմայնացածների ու շրթնայնացածների հնության, *b, *k′h *ու* *kᵘh *հնչույթների գոյության ու գրաված տեղի հարցերը։ Նշենք միայն, որ նկատի ունենալով հայերենի բար-*

---

[3] *Եվրոպայում պահպանված հին գծային նշանները Մ. Գիմբուտասը* [Gimbutas, 1973] *վերագրում է նախահնդեվրոպական քաղաքակրթությանը։*

[4] *Այսուհետև* **հնդեվրոպական** *բառի փոխարեն հաճախ օգտագործվելու է հ.-ե. համառոտումը։*

բառային դիրքը և շնչեղ ձայնեղների անվան տակ բերվող հնչույթների այլ հատկանիշով բնութագրված լինելու հնարավորությունը, կարելի է նրա համար վերականգնել պայթականների հետևյալ սկզբնավիճակը, որտեղ փակագծերում տրվում են արխաիկ հնչույթների հետքերը.

*bh	*dh	*g′h	*gh	(*gᵘ̯h)
*b	*d	*g′	*g	(*gᵘ̯)
*p	*t	*k′	*k	(*kᵘ̯)
*ph	*th	*k′h(?)	*kh	(*kᵘ̯h?)

Հնդեվրոպական շեշտը բարձրության (երաժշտական) է և որպես այդպիսին առաջ չի բերում անշեշտ վանկերի աչքի ընկնող թուլացում։ Այն միաժամանակ ազատ (բազմատեղ) է, այսինքն՝ կարող է ընկնել բառի տարբեր վանկերի վրա, և շարժական, այսինքն՝ կարող է ձևաբանական փոփոխության ժամանակ փոխել իր տեղը։

Ձևահնչույթաբանական այլ կարգի առանձնահատկությունների առումով կարելի է նշել հետևյալը. 1) հնդեվրոպական լեզվում մեծ դեր են խաղացել ձայնորդների *r/*n (հազվադեպ ուրիշ) և ձայնավորների *e/o/զրո, *ē/ō/ə, *ā/ə հերթագայությունները. ընդունված է ձայնավորների հերթագայության *e ձայնավորումը կոչել վերին, *o ձայնավորումը՝ միջին և զրոն՝ ստորին աստիճան. առաջին երկուսը միասին երբեմն կոչում են լիաձայն աստիճան. երկբարբառները ստորին աստիճանում ներկայացված են ձայնավոր ձայնորդով՝ *ei/oi/i, *eu/ou/u, այսպես և երկբարբառակերպները՝ *er/or/r̥ և այլն. 2) եղել են բաղաձայնների և ձայնորդների հերթագայության որոշ տիպեր՝ ա) s+ բաղաձայն (ձայնորդ) / բաղաձայն (ձայնորդ), այսինքն՝ s-ի առկայություն կամ բացակայություն բաղաձայնից (ձայնորդից) առաջ (շարժական *s՝ s mobile), բ) բաղաձայն +*u̯ /բաղաձայն, այսինքն՝ *u̯-ի առկայություն կամ բացակայություն *s-ից, *t-ից և այլ բաղաձայններից հետո՝ *su̯/s, *tu̯/t և այլն, գ) *r/n և այլն. 3) միավանկ արմատը և, հետևաբար, վանկը ունեցել են մոտավորապես (S)(T)(R)e(R)(T/S) կառուցվածքը, ընդ որում հնարավոր չեն եղել ձայնեղով սկսվող ու վերջացող (*bed տիպի) և խուլով սկսվող ու շնչեղ ձայնեղով վերջացող կամ շնչեղ ձայնեղով սկսվող և խուլով վերջացող (*tebh, *bhet տիպի) վանկեր [Szemerényi, 1970, 90—92]. 4) հնդեվրոպական բաղաձայնների կապակցություններում տեղի են ունեցել առնմանական, տարնմանական և այլ կարգի որոշ փոփոխություններ, որոնցից հարկավոր է հիշատակել ձայնեղ բաղաձայնի խլանալը խուլից առաջ (հմմտ. *d-ի խլացումը *-to- ածանցից առաջ՝ *-d-to->*-t-to-՝ բարբառային հետագա փոփոխություններով), շնչեղ ձայնեղ+խուլ կապակցության վերածվելը ձայնեղ+շնչեղ ձայնեղ կապակցության (Բարթոլոմեի օրենք՝ *-dh-t->*d-dh- տիպի, թեև այն սահմանափակված է հնդիրանական օրինակներով), սկզբնային ձայնեղի՝ իրենից առաջ *s ստանալով՝ խուլի վերածվելը (Զիբսի օրենք՝ *s-g> *s-k, այլև, ըստ Իլիչ-Սվիտիչի, *s-gh> *skh հնդիրանականում և, թերևս, հայերենում) և այլն. 5) վանկատումը բառասկզբում և բառավերջում հանդես գալով ըստ արմատի կառուցվածքի վերաբերյալ՝ 3-րդ կետում բերված կաղապարի՝ բառամիջում ենթարկվել է լրացուցիչ կանոնների. ա) երկու բաղաձայնի դեպքում մեկն է անցել հաջորդ վանկին (*ak′-tos, *ag′-ros և այլն), երեքի դեպքում՝ երկուսը. բ) կիսաձայն ձայնորդները կարճ ձայնավոր պարունակող վանկից հետո հանդես են եկել որպես *i(i̯), *u(u̯), երկար ձայնավոր պարունակողներից հետո՝ որպես *i̯, *u̯ (Զիվերսի օրենք)[5]։

Հնդեվրոպական լեզուն ունեցել է որոշակի թեքական-համադրական կառուցվածք. մեկ վերջավորությունն ի վիճակի է եղել արտահայտելու մեկից ավելի քերականարգային (կատեգորիական) իմաստներ, եզակին, երկակին և հոգնակին միևնույն իմաստների արտահայտության համար ունեցել են տարբեր վերջավորություններ, հաճախակի տեղի է ունեցել հիմքի և վերջավորության սահմանային տարրերի ձուլում (ֆուզիա)։ Սակայն քերականական զանազան մասնիկների գործածությունը առաջացրել է կցականության և վերլուծականության տարրեր, որոնք հետագայում զգալի զարգացում են ապրել առանձին հնդեվրոպական լեզուներում։

Հնդեվրոպական լեզվի ձևաբանական հիշյալ առանձնահատկության հետ միասին և հաճախ նրա հետ կապված կարելի է նշել մի շարք այլ առանձնահատկություններ ևս՝ վերջամասնիկների առատությունը և նախամասնիկավորման գրեթե բացակայությունը, բայց կազմում միջմասնիկավորման առկայությունը, վերջավորությունների հետ միասին հերթագայությունների և տոնային (բարձրության) տարբերությունների խաղացած կարևոր դերը, այսպես կոչված բնավոր (թեմատիկ՝ *-e/o-ով վերջացող) և անբուն (աթեմատիկ՝ բաղաձայնով, ձայնորդով և *-e/o-ից տարբեր ձայնավորով վերջացող) հիմքերի հակադրությունը, անվանական և բայական հիմքերի ձևաբանական ուժեղ և, ընդհակառակն, անվանական խոսքի մասերի՝ գոյականների, ածականների ու թվականների, թույլ տարբերակվածությունը, դերանունների՝ անուններից տարբեր թեքումը, քերակարգերի (քերականական կատեգորիաների) հարստությունն ու բազմազանությունը, երկակի թվի առկայությունը, անվան սեռային տարբերակումը և բազմահոլովայնությունը, բայասեռային տարբերակման անհստակությունը, կերպի արտահայտման կարևորությունը և ժամանակային տարբերակման աղքատությունն ու անհստակությունը, անորոշ ձևի բացակայությունը և այլն [Джаукян, *1967, 48*]։

Հնդեվրոպական անվանական հիմքը կարող է լինել ինչպես արմատական, այնպես էլ բարդ և ածանցավոր։ Ածանցները կարող են հանդես գալ ինչպես բնավոր (*e/o-ով), այնպես էլ անբուն (առանց *e/o-ի) ձևով՝ *-e/o-, *-ei/oi-, *-eu/ou-,*-tel-, *-teu-, *-men-, *-es/os-, *-ter/tor- և *-tel- (*-tro-, *-tlo-), *-ek- (*-ko-), *-er- (*-ro-), *-lo-, *-mo-, *-en- (*-no-), *-to-. անվանական արժեք ունեն նաև բայերից դերբայներ կազմող *-ent/ont/n̥t-, *-u̯es/u̯os/us- և *-meno/mno- ածանցները։

Հնդեվրոպական անունն ունեցել է՝ 1) երեք սեռ՝ արական, իգական և չեզոք, ընդ որում արականն ու իգականը տարբերակվել են նախկին ընդհանուր-շնչավոր դասի ներսում, որ հակադրվել է հետագայում չեզոքի փոխված անշնչին, 2) երեք թիվ՝ եզակի, երկակի և հոգնակի, 3) ութ հոլով՝ ուղղական, կոչական, հայցական, սեռական, բացառական, տրական, գործիական և ներգոյական։

---

[5] Հետագայում այս օրենքը լայնացրել և ճշտել է Էջերտոնը. ավելի ուշ այն քննարկել են Ֆ. Օ. Լինդեմանը և ուրիշները։

Սրանք, ինչպես նշվել է, տարբեր վերջավորություններ են ունեցել անբուն (աթեմատիկ) և բնավոր (թեմատիկ) հիմքերի համար [հմմտ. Szemerényi, *1970, 146, 171]։*

Անբուն (աթեմատիկ) հիմքեր

	Եզակի	*Հոգնակի*	*Երկակի*
Ուղղ.	*-s, —	*-es	*-e, *-ī/i
Կոչ.	—	*-es	*-e, *-ī/i
Հայց.	*-m/m̥	*-ns/n̥s	*-e, *-ī/i
Սեռ.	*-es/os/s	*-om/ōm	*-ous ?, *-ōs?
Բաց.	*-es/os/s, *-ed/od	*-bh(i̯)os, *-mos	*-bhi̯ō, *-mō
Տր.	*-ei	*-bh(i̯)os, *-mos	*-bhi̯ō, *-mō
Գործ.	*-e/o, *-bhi/mi	*-bhis/mis, *-ōis	*-bhi̯ō, *-mō
Ներգ.	*-i	*-su	*-ou

Բնավոր (թեմատիկ) հիմքեր

Ուղղ.	*-os (*ար.*), *-om (*չ.*)	*-ōs(*ար.*), *-ā (*չ.*)	*-ō, *-oi
Կոչ.	*-e (*ար.*), *-om (*չ.*)	*-ōs(*ար.*), *-ā (*չ.*)	*-ō, *-oi
Հայց.	*-om	*-ōns(*ար.*), *-ā (*չ.*)	*-ō, *-oi
Սեռ.	*-es(i̯)o/os(i̯)o	*-ōm	*-ōs
Բաց.	*-ōd	*-bh(i̯)os, *-mos	*-bhi̯ō(m), *-mo
Տր.	*-ōi	*-bh(i̯)os, *-mos	*-bhi̯ō(m), *-mō
Գործ.	*-ē/ō	*-ōis	*-bi̯ō(m),- *mo
Ներգ.	*-ei/oi	*-oisu	*-ou

Անբուն հիմքերի դեպքում շեշտը սովորաբար շարժական է, և կարող է տեղի ունենալ վերջավորության նախորդող տարրի ձայնավորի հերթագայություն։

Համեմատենք, որպես օրինակ, *ped-/pod- *«ոտք» անբուն (աթեմատիկ) և* *u̯l̥′kᵘ̯os *«գայլ» բնավոր (թեմատիկ) հիմքերի հոլովումը միայն եզակի և հոգնակի թվերով.*

	Եզակի	*Հոգնակի*
Ուղղ.-Կոչ.	*pēs	*péd-es
Հայց.	*ped-m̥	*péd-n̥s
Սեռ.	*ped-és/ós	*ped-óm
Բաց.	*ped-és/ós	*ped-bh(i̯)os
Տր.	*ped-éi	*ped-bh(i̯)os
Գործ.	*ped-é	*ped-bhis
Ներգ.	*ped-i	*ped-su
Ուղղ.	*u̯l̥′kᵘ̯os	*u̯l̥′kᵘ̯ōs
Կոչ.	*u̯l̥′kᵘ̯e	*u̯l̥′kᵘ̯ōs
Հայց.	*u̯l̥′kᵘ̯om	*u̯l̥′kᵘ̯ōns
Սեռ.	*u̯l̥′kᵘ̯osi̯o	*u̯l̥′kᵘ̯ōm
Բաց.	*u̯l̥′kᵘ̯od	*u̯l̥′kᵘ̯obh(i̯)os
Տր.	*u̯l̥′kᵘ̯ōi	*u̯l̥′kᵘ̯obh(i̯)os
Գործ.	*u̯l̥′kᵘ̯ō	*u̯l̥′kᵘ̯ōis
Ներգ.	*u̯l̥′kᵘ̯oi	*u̯l̥′kᵘ̯oisu

Ածականի համեմատության աստիճանների կազմությունը նախ՝ միասնական չէ հնդեվրոպական լեզվի համար, այլ հանդես է բերում բարբառային տարբեր զուգաբանություններ, երկրորդ՝ միևնույն լեզվում երբեմն հանդես է գալիս տարբեր հիմքերի համար տարբեր ձևերով։ Ամենից ավելի տարածված են եղել բաղդատականի *-i̯es/i̯os-*ով ու* *-tero-*ով և գերադրականի* *-es-to-*ով ու* *-tm̥mo-*ով ձևերը։ Համեմատության աստիճաններ ունեցել են նաև մակբայները։*

Հնդեվրոպական դերանունները ևս անուններից տարբերվում են իրենց իրադրական իմաստով. նրանց առարկայական վերաբերությունը կախված է իրադրությունից, և միևնույն դերանունը ըստ իրադրության կարող է նշանակել տարբեր անձեր ու իրեր, այլև իրադրական տարբերությունները կարող են արտահայտվել ու արտահայտվում են դերանվանական տարբեր խմբերով։ Սրա հետ կապված՝ դերանվան համար բնորոշ է առարկաների տարբերակումն ըստ խոսքի մեջ խաղացած դերի (ա. խոսող, բ. խոսակից, գ. ոչ խոսող, ոչ խոսակից, այսինքն՝ ըստ դեմքի), ըստ խոսողին և խոսակցին հայտնի լինելու կամ չլինելու և ըստ խոսողի նկատմամբ գրաված դիրքի ու հեռավորության։ Այսպիսով, դերանուններին հատուկ են դեմքի և դիրքի[6], այլև անվանականներից թվի, սեռի ու հոլովի քերականարգերը՝ սրանց յուրահատուկ դրսևորումներով. ա) հոգնակին նշանակում է ոչ թե մեկից ավելի խոսողների, այլ խոսողին ուրիշների (այդ թվում նաև, ըստ անհրաժեշտության, խոսակցի) հետ միասին. բ) սեռը տարբերակում է միայն խոսող և խոսակից չնշանակող դերանունները. գ) նկատվում է ուղիղ և թեք հոլովների խիստ հակադրություն և որոշ թեք հոլովների երկրորդային-անվանական կազմություն։

Հնդեվրոպական դերանուններն աչքի են ընկնում թեքման յուրահատկությամբ («դերանվանական հոլովում»). տարածված է ուղիղ և թեք հոլովների եզակի, երկակի և հոգնակի թվերի տարահիմքությունը (սուպլետիվիզմը)։

Անձնական դերանուններ ասելով փաստորեն հասկանում են 1-ին և 2-րդ դեմքերի դերանունները. 3-րդ դեմքի նշանակմանը ծառայում են ցուցական և, որոշ առումով, նաև անդրադարձ դերանունները։ Անձնական դերանունները տարբերակված են ըստ դեմքի, թվի և հոլովի. հոլովների մեջ առաջնային են ուղիղ և թեք հիմքերի տարբերությունները, երկրորդաբար հանդես են գալիս թեք հոլովների առանձին տեսակները՝ անվանական հոլովների համապատասխան վերջավորություններով և ձայնավորների հերթագայությամբ, ընդ որում դեր են խաղում նաև *bh *և* *gh *տիպի տարրեր։ Համեմատենք ուղիղ և թեք հիմքերի եզակի և հոգնակի վերականգնվող ձևերը.*

	I *դեմք*		II *դեմք*	
	Եզակի	*Հոգնակի*	*Եզակի*	*Հոգնակի*
Ուղիղ հիմք	*egō, *eg(h)ōm	*u̯es, *mes	*tu; *tū	*i̯ūs
Թեք հիմք	*me(n)-, *moi-	*nes-	*t(e)(u̯e)-	*ūes-

---

[6] *Այսպես ենք կոչում այն քերականարգը, որ բնորոշում է խոսողի նկատմամբ առարկայի (անձի, իրի) մերձավորությունը կամ հեռավորությունը, խոսքում նախապես հիշված լինելը կամ չլինելը։*

Անդրադարձ դերանվան հոլովաձևերը կազմությամբ նման են 2-րդ դեմքի դերանվան թեք հոլովաձևերին՝ *t-ի փոխարեն *s-ի առկայությամբ՝ *s(e)(u̯e)։ Այն սկզբնապես վերաբերել է բոլոր դեմքերին (հմմտ. հ. հնդկերեն, հոմերական հունարեն, բալթիական և սլավոնական լեզուներ), հետագայում մասնավորվել է միայն 3-րդ դեմքի համար։

Անձնական դերանունների թեք հիմքերից և անդրադարձի դերանվան հիմքից կազմվում են համապատասխան ստացական դերանունները։

Հնդեվրոպական ցուցական դերանունները տարբերակված են ըստ դիրքի, թվի, սեռի, հոլովի։ Ի տարբերություն անձնականների՝ նրանք նշանակում են մոտ կամ հեռու, նախապես հիշված (հայտնի, ծանոթ) կամ չհիշված առարկաներ և տարբերակված են ըստ սեռերի. հայերենի ցուցականների դիմային տարբերակումը համաբանական ուշ ձեռքբերում է։

Արդեն հիշված (հայտնի, ծանոթ) առարկա (անձ կամ իր) նշանակելու համար գործածվել են *so (ար.), *sā (իգ.), *tod (չեզոք), մերձավոր առարկա նշանակելու համար՝ *k'i-, *k'o- (որոշ տարածքներում նաև *i-, *e-), հեռավոր առարկա նշանակելու համար՝ *eno-/ono-, *eu̯o-/ou̯o-, *olo- դերանունները։

Հնդեվրոպական հարաբերական *i̯o- դերանունը լիտվերենում ստացել է ցուցականի արժեք։

Հարցական դերանուններն ունեցել են *kʷi-, *kʷo- հիմքերը, որոնք հավանաբար գործածվել են նաև որպես անորոշներ (հմմտ. հունարենը, այլև. որոշ բաղադրությամբ, հայերենը)։

Հնդեվրոպական բայական հիմքերը կարող են լինել, ինչպես անունները, բնավոր (թեմատիկ) և անբուն (աթեմատիկ), արմատական և ածանցավոր։ Սակայն, ի տարբերություն անվանականների, բայական հիմքերը կարող են կազմվել նաև կրկնությամբ, նրանց մեջ սովորաբար հանդես են գալիս այնպիսի ածանցներ, որոնք անվանական հիմքերի մեջ չեն հանդիպում, բարդված հիմքեր չկան, համեմատաբար թույլ է գծված բառակազմության և բառաթեքման սահմանը։ Նույնիսկ այն դեպքերում, երբ բայական ածանցները համընկնում են անվանականների հետ, նրանցից տարբերվում են գործառությամբ. այսպես, բնավոր (թեմատիկ) հիմքերի *-e/o- ածանցը լրացուցիչ կերպով հանդես է գալիս որպես բայական որոշ ձևերի տարբերիչ (ներկան և աորիստը կարող էին լինել բնավոր, կատարյալը՝ ոչ). *-i̯e/i̯o-ն, հանդես գալով որպես անուններից և ուրիշ բայերից նոր բայեր կազմող տարր, հատուկ է միայն ներկայի հիմքերին և դրանով իսկ լրացուցիչ կերպով ներկան տարբերում է աորիստից և կատարյալից։

Անվանական քերականգներից բային հատուկ է միայն թիվը իր երեք դրսևորումներով՝ եզակի, երկակի և հոգնակի։ Հ.-ե. բայը, ի տարբերություն, օրինակ, սեմականի, չի բնութագրվում սեռային տարբերիչներով։ Դերանվանական կարգերից բային հատուկ է դեմքը, բայց եթե դերանվան դեպքում այն բառա-քերականական արժեք ունի, և ամեն դերանուն կարող է ունենալ միայն մեկ դեմք, ապա բայը կարող է հանդես գալ դիմային երեք ձևերով էլ, որոնք գործածվում են ըստ իրադրության և ըստ համաձայնության։

Բուն բայական քերականգներից են եղանակը, բայասեռը, կերպը և ժամանակը։ Սրանից եղանակն արտահայտվում է՝ ա) հատուկ կազմիչ տարրերով, որոնք անմիջապես նախորդում են դիմային վերջավորություններին

և բնավոր հիմքերի դեպքում հաջորդում սրանց *-e/o- նիշին, բ) գրո նիշով, գ) երբեմն էլ հատուկ վերջավորություններով։ Կերպը և ժամանակը հստակորեն չեն տարբերվում, կերպային հիմնաձևերը փաստորեն արտահայտում են նաև ժամանակային իմաստներ, ընդ որում հնդեվրոպական լեզուն ժամանակներով հարուստ չէ։ Կերպա-ժամանակային տարբերություններն արտահայտվում են դիմային տարբեր վերջավորություններով, այսինքն՝ կերպա-ժամանակային ամեն մի իմաստ արտահայտվում է իրեն հատուկ վերջավորություններով։ Այդպիսին են նաև բայասեռային տարբերությունները, եթե դրանք ընդհանրապես արտահայտվում են։ Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ բայական կաղապարների տարբերությունները առաջին հերթին կերպա-ժամանակային են, այսինքն՝ կերպա-ժամանակային իմաստների ամեն մի հիմնական դրսևորում ունի իր յուրահատուկ կաղապարը, և բայը պետք է քննել ըստ սրանց։

Հնդեվրոպական լեզվի համար տարբերում են կերպա-ժամանակային երեք հիմնական ձևախումբ-կաղապար՝ ներկա, աորիստ և կատարյալ (պերֆեկտ)[7]։ Հնդեվրոպական լեզուների ապառնին զարգացել է գերազանցապես եղանակային հիմքի վրա և հավանաբար հնդեվրոպական լեզվի շրջանում ժամանակային քիչ թե շատ ընդհանուր դրսևորում չի ունեցել։ Ներկայի, աորիստի և կատարյալի տարբերությունը իրոք կերպա-ժամանակային է եղել. ներկան արտահայտել է չավարտված-տևական, աորիստը՝ ավարտված-անտևական (միանգամյա) գործողություն, կատարյալը՝ անցյալում կատարված գործողության ներկայում ստեղծած վիճակ (հետևանք)։ Իր այս բնույթի պատճառով կատարյալը շատ դեպքերում ստացել է ներկայի արժեք հմմտ. խեթ. -ḫi խոնարհումը, հոմերական հունարենի կատարյալի բազմաթիվ ձևերը, գերմանական պրետերիտո-պրեզենտային կոչված, այլև հայերեն գիտեմ, գամ բայերը։ Ժամանակային առումով ներկան ցույց է տալիս ներկա (այլև, ըստ իրադրության, ապառնի), աորիստը՝ անցյալ, կատարյալը՝ անցյալում կատարված գործողության առաջ բերած ներկա վիճակ։ Ընդունված է ներկայի վերջավորությունները կոչել առաջնային, աորիստինը՝ երկրորդային, թեև ըստ ծագման հավանաբար առկա է հակառակ հարաբերությունը։ Բացի այս ձևերից, հնդիրանական լեզուներում՝ սանսկրիտում և ավեստերենում, պահպանվել են ներկայի և աորիստի ձևեր՝ երկրորդային վերջավորություններով և առանց այսպես կոչված *e- նախահավելվածի (վերջինս, ինչպես կտեսնենք, հանդիպում է անցյալ ժամանակներում և բարբառային բնույթ ունի). այս ձևերն ընդունված է կոչել ինյունկտիվ. եթե կատարյալը կարելի է բնութագրել որպես և՛ ներկա, և՛ աորիստ, ապա սա կարելի է համարել ո՛չ ներկա, ո՛չ աորիստ՝ արտաժամանակային նշանակություն ունեցող ձև։

Ներկայի հիմքի համար կարելի է սահմանել $(R+)R(+if)(+sf_1)(+sf_2)(+t)$ բանաձևը, որտեղ R-ը արմատն է, if-ը՝ միջածանցը, sf-՝ը վերջածանցը (sf_1-ը՝ առաջնային, sf_2-ը՝ երկրորդային), t-ն՝ թեմատիկ *e/o- ձայնավորը։ Ըստ այս բանաձևի հնդեվրոպական ներկան կարող է ունենալ

---

[7] Արդի հայ քերականները կատարյալ կոչում են հ.-ե. աորիստի մնացորդային ձևերը, մինչդեռ հ.-ե. կատարյալը համապատասխանում է մոտավորապես վաղակատար-հարակատարին։

$2^5=32$ հիմքային ձև, ընդ որում առաջնային ածանցն էլ կարող է հանդես գալ մի քանի կոնկրետ ձևով (իրացումով)։ Սակայն իրականում հիմքային ոչ բոլոր տիպերն են վկայված և ոչ բոլոր լեզուներում։ Նշենք, որ՝ ա) կրկնությունը կարող է լինել սաստկական և քերականական. վերջինս սովորաբար տեղի է ունենում արմատի առաջին բաղաձայնի կրկնությամբ. հաջորդող *-i- ձայնավորով (հմմտ. *di-dō-՝ հուն. δί-δω-μι «տալիս եմ»). բ) *-ne- միջածանցը (հմմտ. *-i̯u-ne-g-՝ հ. հնդկ. junákti «միացնում է») որոշ դեպքերում հաջորդ տարրի հետ միանալով ստանում է վերջածանցի տեսք (հմմտ. *pu-ne-H-՝ հ. հնդկ. pu-ná-ti «մաքրում է», *r̥-n-u-՝ խեթ. ar-nu-ti «բերում է»). գ) առաջնային վերջածանցներից *-(ei)/i/ī-ն, *-ā-ն, այլև *-ē/ō-ն գործածվում են վիճակ արտահայտելու համար (հմմտ. *bhu-dhi-՝ լիտվ. bùdi «արթուն է», *gʷii̯-ā-՝ հայ. կեա-լ). դ) մյուս կարգի ածանցներից թեմատիկ *-ei̯o-ն ունի տևական-պատճառական արժեք. ե) երկրորդային-թեմատիկ *-i̯e/i̯o- և *-ske/sko- ածանցներն ունեն բայակազմական արժեք (բայեր են կազմում անուններից և այլ բայերից)։

Ներկայի համար վերականգնվում են հետևյալ վերջավորությունները։

	Եզակի	Հոգնակի
I դեմք	*-mi(անբուն), *-ō (բնավոր)	*-mes/mos (խեթ.*-u̯es/u̯os)
II դեմք	*-si	*-te
III դեմք	*-ti	*-nti

Աորիստի հիմքի կազմությունը ներկայի համեմատությամբ ավելի քիչ բազմազան է և ներկայացված ավելի քիչ իրացումներով։ Եթե մի կողմ թողնենք հ.-ե. բարբառային արժեք ունեցող *e- նախահավելվածը (որ, բացի աորիստից, նաև ներկայի հիմքից անկատար է կազմում), այն կարելի է արտահայտել $(R+)R(+sf_1)(+sf_2)(+t)$ բանաձևով։ Ի տարբերություն ներկայի՝ ա) աորիստը չունի միջածանցավոր հիմքեր, բ) եթե առաջնային *-ē- ածանցը, որ հանդիպում է միայն հունարենում և սլավոնական լեզուներում, ձևականորեն համընկնում է ներկայի *-ē- ածանցի հետ, ապա երկրորդային *-(i)s- ածանցը հատուկ է միայն աորիստին, և նրանով կազմվող հիմքերը հայտնի են «սիգմատիկ աորիստ» անունով. սլավոնականում (*-s- ձևով) կարող է հանդիպել նաև *-ē- ածանցից հետո, որ մեկ հիմք է ավել այն դիտելու որպես երկրորդային։ Աորիստի վերջավորությունները, ի տարբերություն ներկայի, վերջում չունեն *-ĭ նիշը, որ խոսում է ներկայի վերջավորությունների երկրորդայնության մասին.

	Եզակի	Հոգնակի
I դեմք	*-m	*-me(s)/mo(s)
II դեմք	*-s	*-te
III դեմք	*-t	*-nt

Կատարյալի հիմքի կազմությունն ավելի պարզ է և կարող է արտահայտվել $(R+)R$ բանաձևով, այսինքն՝ կատարյալը կարող է ունենալ միայն արմատական կամ կրկնավոր հիմք և զուրկ է ածանցական հատուկ մասնիկներից, հատկապես հիմքակազմ *-e/o- ձայնավորից[8]։ Կատարյալը ներկայից և աորիստից տարբերվում է հատկապես ա) *-e/o- թեմատիկ ձայնավորի բացակայությամբ, բ) արմատի հատուկ *o ձայնավորմամբ[9], գ) հատուկ վերջավորություններով.

	Եզակի	Հոգնակի
I դեմք	*-a	*-mes/mos
II դեմք	*-tha	*-te, *-a
III դեմք	*-e	*-r

Հնդեվրոպական որոշ լեզուներում վկայված են նաև ապառնի հատուկ ձևեր *-si̯e/si̯o- կամ *-se/so- ածանցներով և ներկայի վերջավորություններով։

Մինչև այժմ քննված հիմքային ձևերն ու վերջավորությունները պատկանում են ներգործական սեռին և սահմանական եղանակին։ Հնդեվրոպական լեզուն ունեցել է նաև ներգործականին հակադրվող ոչ ներգործական՝ «միջին սեռի» ձևեր, որոնք տարբեր լեզվախմբերում տարբեր դեր են կատարել՝ արտահայտելով ենթակայի օգտին կատարվող գործողություն, անդրադարձություն, կրավորականություն։ «Միջին սեռն» ունեցել է հատուկ՝ ներգործականից տարբեր, վերջավորություններ՝ որոշ լեզուներում երկու շարքի (և՛ առաջնային, և՛ երկրորդային), մյուսներում՝ միայն մեկ շարքի։ Սանսկրիտի և հունարենի հիման վրա վերականգնվող՝ «միջին սեռի» առաջնային վերջավորությունները տարբերվում են ներգործականներից գերազանցապես *-i ձայնավորի փոխարեն *-ai-ի, երկրորդային վերջավորությունները՝ դրա ձայնավորի փոխարեն *-o-ի առկայությամբ.

	Եզակի	Հոգնակի
	Ներկա	
I դեմք	*-ai	*-mes-dha
II դեմք	*-sai	?
III դեմք	*-tai	*-ntai
	Աորիստ	
I դեմք	?	*-me(s)-dhā?
II դեմք	*-so (*-se), *-tha(s)	?
III դեմք	*-to	*-nto, *-r?

Բացի սահմանականից, հնդեվրոպական լեզուն ունեցել է նաև հրամայական, ստորադասական (կոնյունկտիվ) և ըղձական եղանակներ, որոնցից վերջին երկուսը ոչ բոլոր լեզուներում ունեն հատուկ դրսևորում։

Հրամայական եղանակի եզակի 2-րդ դեմքը հավասար է ներկայի 2-րդ դեմքին՝ առանց սրա վերջավորության, հոգնակին՝ հոգնակի 2-րդ դեմքին՝ վերջավորությամբ հանդերձ. հնդիրանականում, հունարենում և հայերենում առկա է նաև եզակի հրամայականի հատուկ ձև *-dhi մասնիկով։ Սանսկրիտը և խեթերենը ունեն հրամայականի 3-րդ դեմքի հատուկ ձև՝ եզ. *-tu և հոգն. *-ntu վերջավորություններով։

---

[8] Սանսկրիտում ածանցավոր հիմքերի կատարյալը կազմվում է նկարագրական ձևով։

[9] Ձայնավորումը մեր բերած հիմքային բանաձևերում չի արտացոլված, թեև կարելի է արտահայտել (որպես յուրատեսակ միջածանցի արժեք ունեցող տարր) հատուկ նշանով՝ արմատի նշանից անմիջապես հետո։

Ստորադասականը հավանաբար արտահայտել է ենթադրվող, սպասվող գործողություն՝ տարբեր լեզուներում ստանալով բղձականի, երբեմն էլ պարզապես ապառնիի իմաստ։ Այն կազմվել է *-e/o- ածանցով, որ դրվել է առաջնային և երկրորդային վերջավորություններից առաջ և թեմատիկ ձայնավորի առկայության դեպքում ձուլվել նրա հետ ու այն երկարացրել՝ *-ē/ō-։

Ըղձականը արտահայտել է բղձական կամ հնարավոր գործողություն և անբուն (աթեմատիկ) հիմքերի դեպքում ունեցել է *-i̯ē/ī-, բնավոր (թեմատիկ) հիմքերի դեպքում՝ *-i- կազմիչը. վերջինս միանալով թեմատիկ ձայնավորի հետ կազմել է *-oi- նիշը։

Շարահյուսական առումով հնդեվրոպական լեզուն բնութագրվել է առաջին հերթին բառերի (բառաձևերի) ու ընդհանրապես նախադասության անդամների հարաբերական ինքնուրույնությամբ [**Мейе**, 1938, 363] և, սրա հետ կապված, ձևական խնդրառության բացակայությամբ. բառերն ստացել են այս կամ այն ձևը ըստ նախադասության ընդհանուր իմաստի, ըստ նրա մեջ իրենց կատարած դերի (գործառության)։ Բառերի քերականական հատուկ ձևավորման և զարգացած համաձայնության պայմաններում շարադասությունը քերականական դեր գրեթե չի կատարել, այսինքն՝ ազատ է եղել։ Այս կապակցությամբ նախադասության սկզբում դրվել է սովորաբար գլխավոր (ընդգծվող, տրամաբանական շեշտ կրող) բառը։ Որոշիչը համաձայնել է որոշյալի հետ սեռով, թվով և հոլովով, անուն ենթական՝ միայն թվով, այն էլ ոչ թե ձևականորեն, այլ ըստ իմաստի։ Առկա է եղել անվանական և բայական նախադասությունների հակադրություն, ընդ որում անվանական նախադասություններում հանգույցը գործածվել է ըստ անհրաժեշտության (հաճախ «զեղչվել» է)։ Դիմավոր բայ-ստորոգյալի մոտ անձնական դերանունները որպես ենթակա գործածվել են միայն ընդգծվելու դեպքում։ Մի այլ բառի հարող բառը կարող էր զուրկ լինել շեշտից։ Նախդիրը դեռևս ազատ բնույթ է ունեցել, այսինքն՝ չի հարել ոչ անվանը և ոչ բային. սրա հետ կապված հետագայում զարգացումը գնացել է երկու ուղղությամբ՝ ա) նախդիրը դարձել է իսկական «նախդիր», այսինքն՝ հարել է անվանը, բ) այն դարձել է նախաբայ (պրեվերբ)՝ բայական նախածանց, այսինքն՝ տեղի է ունեցել գործառական տարբերակում։

Հնդեվրոպական լեզուն չունի դեռևս երկրորդական նախադասություններ և, հետևաբար, ստորադասական շաղկապների զարգացած համակարգ. բառիս բուն իմաստով կարելի է խոսել միայն հարաբերական երկրորդական նախադասությունների և հարաբերական բառերի մասին։ Այս պայմաններում խիստ կարևոր է դերբայների և դերբայական դարձվածների դերը։

բ) ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Հնդեվրոպական լեզվաբանության զարգացման արդի վիճակը դեռևս հնարավորություն չի տալիս ամբողջական գաղափար կազմելու հնդեվրոպական լեզվի բառապաշարի բնույթի մասին։ Եղած բառարաններում հավաքված նյութը չունի ժամանակագրական միասնություն (ի մի են բերված հնդեվրոպական լեզվի զարգացման տարբեր շրջանների պատկանող բառեր), վերականգնողական հավասարարժեքություն (ընդհանուր տարածում ունեցող բառերի կողքին կան միայն զույգ լեզուների հիման վրա վերականգնված արմատներ ու բառեր), բառամիավորային միամակարդակություն (բառային արժեք ունեցող միավորների կողքին առկա են միայն արմատական վերականգնումներ)։ Այդ պատճառով էլ Հ. Աճառյանի բերած թվերը Ա. Վալդեի և Յ. Պոկոռնու «Հնդեվրոպական համեմատական բառարանում» ընդգրկված և, համապատասխանաբար, հայերենի պահպանած միավորների քանակի մասին [**Աճառյան**, ՀԼՊ, 1, 33] խիստ պայմանական են. Աճառյանը խոսում է այն մասին, որ այդ բառարանը պարունակում է 2223 «արմատ բառ» (իմա՛ բառահոդված, ավելի ճիշտ «արմատավորված»՝ տվյալ արմատի տակ միավորված բառաձևերով), և որ հայերենը պահպանել է 713 «արմատական բառ»՝ իրենց ածանցական 196 տարբերակներով։ Այսպիսով, մենք գաղափար չենք կազմում հնդեվրոպական լեզվի բուն բառապաշարի իմաստային խմբերի, խոսքի-մասային արժեքի և տարածքային իսկական բաշխման մասին, այլ իմանում ենք միայն արմատների ընդհանուր քանակը։ Վերականգնման ընդհանուր թերությունները և հատկապես բառարանների հեղինակների գործադրած մեթոդների արատավորությունը հանգեցնում են այն բանին, որ, ինչպես բազմիցս նշվել է, այդ բառարաններում մեծ թիվ են կազմում համանուն և համանիշ «բառերը», որոնց այդպիսի առատությունը ոչ միշտ է պայմանավորված բարբառային ու հասարակական-գործառական տարբերություններով, և վերականգնված իմաստները հաճախ ավելի վերացական ու ընդհանուր են, քան պետք է լինեն բնական լեզվում և այլն։

Հ. Աճառյանի օգտագործած հնդեվրոպական բառարանի՝ Յ. Պոկոռնու կողմից վերամշակված և բարելավված հրատարակության մեջ [**Pok.**, IES] արմատների քանակը որոշ չափով փոխված է՝ ըստ էության առանց մեծ տարբերության։ Ժ. Ժյուկուան, օրինակ, արմատի կազմության ճիշտ առանձնահատկությունները պարզելու նպատակով իր ուսումնասիրության մեջ, բացառելով բնաձայնական, դերանվանական և այլ վերականգնումները, իր հաշվումը հիմնում է Յ. Պոկոռնու բառարանի 2027 արմատի վրա (**Jucquois**, 1966)։ Հետաքրքրական է նշել, որ մոտավորապես նույն քանակի արմատներ են պարունակում նաև այլ լեզվաընտանիքների բառարանները (թյուրքական՝ 2220, բանտու՝ 2262 և այլն) [**Герценберг**, 1972, 132—133]։

Եթե նկատի առնենք, որ բառերի քանակը մի քանի տասնյակ անգամ գերազանցում է արմատների քանակը, ապա հնդեվրոպական լեզուն ունեցած պետք է լինի սովորական չափի բառապաշար։

Քանի որ բառապաշարի առարկայական արժեքի քննությունը հնդեվրոպացիների կյանքի, քաղաքակրթության ու մշակույթի, նրանց հասկացությունների ծավալի քննությունն է, մենք դրա վրա կանգ կառնենք հնդեվրոպացիների բնութագրմանը նվիրված հատվածում։ Հնդեվրոպական բառապաշարի բարբառային-տարածական և այլ լեզուների հետ ունեցած ընդհանուր շերտի մասին կխոսվի հնդեվրոպական բարբառներին և ցեղակցական կապերին նվիրված հատվածներում։ Այստեղ խոսենք հնդեվրոպական բառապաշարի բառագիտական-իմաստաբանական քննության որոշ հայեցակետերի մասին։

Ամենից առաջ մի քանի խոսք հնդեվրոպական բառապաշարի ծագումնային շերտերի մասին։

Հնդեվրոպական լեզուն, ինչպես ամեն մի այլ լեզու, չէր կարող լիովին մեկուսացած լինել։ Այն պետք է գտնված լիներ այլ լեզուների հետ որոշակի հարաբերության մեջ, որ արտահայտված կլիներ նրանց հետ ունեցած ընդհանուր տարրերով։ Եթե մի կողմ թողնենք պատահական նմանությունները, որոնք անխուսափելի են ձևույթների թվի, նրանց ոչ բազմատարրության և հիմնական իմաստների սահմանափակության պայմաններում, ապա կարելի է տարբերել լեզուների ընդհանրությունների երկու տեսակ՝ ժառանգված և ձեռքբերովի։ Ժառանգված ընդհանրությունները կարող են լինել կամ պայմանավորված մարդկանց ընկալման և արտասանական ձևավորման որոշ ընդհանրություններով, կամ սկզբնական ընդհանրությամբ։ Օգտագործելով եղած տերմինները որոշակի իմաստով՝ առաջին տիպի ընդհանրությունները կոչենք «տարրական ցեղակցություն», երկրորդները՝ բուն ցեղակցության դրսևորումներ։ «Տարրական ցեղակցության» երևույթներ են ձայնարկությունների, բնաձայնությունների, մանկական բառերի այնպիսի ընդհանրությունները, որոնք կամ հանդիպում են նաև ոչ ցեղակից լեզուների մեջ, կամ պատկանելով ցեղակից լեզուների, այնուամենայնիվ չեն կարող որոշակի օրինաչափություններով հաստատված համարվել։ Ձեռքբերովի ընդհանրությունները կարող են արդյունք լինել կամ տևական շփումների (կոնտակտների) ու փոխներթափանցման (ինտերֆերենցիայի), էթնիկական որոշակի փոխազդեցության (տևական տիրապետություն, մերձավոր հարևանություն և համատեղ գոյակցություն և այլն), կամ մշակութային, կրոնական և այլ գործոններով պայմանավորված փոխառությունների ու պատճենումների։ Առաջին տեսակի ձեռքբերովի ընդհանրությունների թվին է պատկանում ենթաշերտային (սուբստրատային), մակաշերտային (սուպերստրատային) և առշերտային (ադստրատային) ազդեցությունը, որ հաճախ հանգեցնում է նաև կառուցվածքային նոր տարրերի ու փոփոխությունների առաջացման։

Ցավոք սրտի, նշված հայեցակետերով հնդեվրոպական լեզվի ուսումնասիրությունը բավարար չի կարելի համարել։ Մասնավորապես անբավարար է հնդեվրոպական լեզվի՝ այլ լեզուների հետ ունեցած արտաքին կապերի՝ ձեռքբերովի ընդհանրությունների ուսումնասիրության վիճակը։ Մենք չենք կարող քիչ թե շատ վստահորեն խոսել հնդեվրոպական լեզվի վրա հնարավոր ենթաշերտային (սուբստրատային) ազդեցության մասին։ Փոքր-ինչ ավելի բարվոք է փոխառությունների ուսումնասիրության վիճակը, բայց այս դեպքում էլ հաճախ չկան որոշակի չափանիշներ տարբերելու հնդեվրոպական ընդհանրության շրջանում կատարված փոխառությունները հետագայում հնդեվրոպական առանձին լեզուներում ուրիշ լեզուներից թափանցած բառերից։ Այսպես, հայտնի չէ հ.-ե. *ag′-ro-s «արտ» (համարվում է *ag′- «քշել, տանել» արմատից կազմված) և շումեր. ager «արտ» բառերի փոխհարաբերությունը (հմմտ. նաև հայ. **ագարակ**, որ հին փոխառություն է)։ Անհնար չէ հայերենի այծ-ի և հունարենի αἴξ հիման վրա վերականգնված *aig′- «այծ» արմատի (հմմտ. նաև ավեստ. izaēna «կաշվյա», իմա՛ «այծի կաշվից») արևելյան ծագումը [հմմտ. **Pok.**, *1*, էջ *13*], մանավանդ որ կան այդ իմաստն ունեցող այլ արմատներ ևս. այն պետք է առնված լինի նախքան հայերենի քմայնացման հետևանքով կրած փոփոխությունները։ Բավականին տարածված է հ.-ե. *gᵘ̯ou-ի (ուղղ. *gᵘ̯ōus) «խոշոր եղջյուրավոր անասուն» (որից հայ. կով) շումերական ծագման (gu, հին gud «եզ, խոշոր եղջյուրավոր անասուն») վարկածը [հմմտ. **Pok.**, 1, էջ *483*]։ Անհնար չէ հ.-ե. «քար» կաղապարն արտահայտող և հ.-ե. *kar- «կարծր, կոշտ» կամ *(s)ker «կտրել» արմատներին վերագրվող շատ բառերի (այդ թվում հայ. քար-ի) միջերկրածովյան-իբերյան (*carra «քար, քարակույտ») ծագումը [**Pok.**, 1, էջ *53*]։ Ակնհայտորեն ոչ հնդեվրոպական բնույթ ունի *k′ik′er-ը, որի *k′eik′er- տարբերակից է ծագում հայ. սիսեռն բառը։ Հ.-ե. *u̯el- «պտտել, ծռել» արմատից բխեցվող *u̯oi-no-ի համար, որի *u̯oinii̯o- ձևից բխեցվում է հայ. գինի բառը, հավանական է համարվում նաև միջերկրական կամ փոքրասիական ծագում (հմմտ. նախասեմ. *u̯ainu «գինի») [հմմտ. **Pok.**, 1, էջ *112*]։ Այսպիսի օրինակների թիվը կարելի է մեծացնել, բայց հարցի հետագա լուծումը շատ բանով կախված է մի կողմից՝ ժառանգած ընդհանրությունների և, այսպես կոչված, հեռավոր ցեղակցության, մյուս կողմից՝ հնդեվրոպացիների բնակության վայրերի, քաղաքակրթության աստիճանի, տնտեսական հարաբերությունների իսկական բնույթի վերաբերյալ հարցերի լուծումից։

Համեմատաբար լայն ուշադրություն է գրավել հնդեվրոպա-սեմական բառային փոխառությունների հարցը։ Հնդեվրոպական լեզուների՝ սեմականներից կատարած փոխառությունների մասին տարբեր առիթներով խոսել են Հ. Լևին, Գ. Իպսենը, Ա. Շոտը, Վ. Վյուստը [**Lewy**, 1895. **Ipsen**, 1924. **Schott**, 1935. **Wüst**, 1956] և ուրիշները։ Վ. Մ. Իլլիչ-Սվիտիչը [**Иллич-Свитыч**, 1964a] Մյոլլերի «Հնդեվրոպա-սեմական համեմատական բառարանից» [**Möller**. *1911*,] առանձնացնում է 24 բառ, որոնք չեն կարող վերագրվել հեռավոր ցեղակցությանը և պետք է դիտվեն որպես սեմական աղբյուրից կատարված հնագույն հնդեվրոպական փոխառություններ՝ հ.-ե. *gᵘ̯ou- «եզ, կով» (հայ. կով) — աֆրաս. *g-w «եզ». հ.-ե. *ag′ro- «արտ» (հայ. արտ) — սեմ. *ḥ-d̲-r «ցանկապատված հողամաս, բակ, բնակատեղ». հ.-ե. *dhu̯er- «բակ, դուռ» (հայ. դուռն, դուռ-ս) — սեմ. *ṭ-w-r «ցանկապատ, ցանկապատված բակ». հ.-ե. *nāu- «նավ, աման» (հայ. նաւ) — սեմ. (<աֆրաս. *ʾ-n-w «աման, նավ». հ.-ե. *(a)ster- «աստղ» (հայ. աստղ)— *ʿ-ṯ-t-r «աստվածացված աստղ». հ.-ե. *septṃ «յոթ» հայ. (եւթն) — սեմ. (<աֆրաս.) (*š)-b-ʿ-tu, (*š)-b-ʿu «յոթ» և այլն։

Հնդեվրոպական լեզվի բառապաշարը, անշուշտ, տարբերակված է եղել ըստ գործառական-ոճական ոլորտների։ Թեև հիմնական գործառական ոլորտը եղել է առօրյա-խոսակցականը, սակայն սրա հետ միասին, ինչպես ցույց են տալիս վերջերս կատարված հետազոտությունները, այդ լեզուն հանդես է եկել բանաստեղծական խոսքի մեջ՝ սրան հատուկ պատկերավորությամբ, սիրված մակդիրներով, բանաստեղծական բնույթի (առանձնապես բարդ) բառերով, յուրահատուկ արտահայտություններով, երբեմն ռիթմական որոշակի կառուցվածքով։ Ռիթմական խոսքը թերևս մեծ նշանակություն է ունեցել ծիսական-կրոնական կյանքում։ Այսպես, ակնհայտորեն բանաստեղծական արժեք են ունեցել հ.-ե. *erku̯- «ճառագայթել, շողալ. պայծառ հնչել. գովերգել» բառարմատին պատկանող ածականները, գոյականները, բայերը. այստեղից է ծագում հայ. Ներգ-ը, բայց այն դարձել է սովորական գործածության բառ։

Հնդեվրոպացիների հասարակական-տնտեսական կյանքի, քաղաքական և մշակութային հարաբերությունների հետ կապված, անշուշտ, սկսել էին հանդես գալ հրապարակախոսական ու վարչա-գործարարական ոճի որոշ առանձնահատկություններ, սաղմնավորվել այնպիսի բնագավառների տերմինաբանական համակարգեր, ինչպիսիք են երկրագործությունը, անասնապահությունը և ձկնորսությունը, հաղորդակցման միջոցներն ու նավագնացությունը, արվեստը և արհեստագործությունը, քաղաքական հարաբերությունները, ռազմական գործը և հավատալիքները և այլն։ Այս տեսակետից Կ. Դ. Բաքի «Հնդեվրոպական լեզուների ընտիր հոմանիշների բառարանը» [Buck, 1949],—նախատեսված չլինելով հատկապես հնդեվրոպական միասնության շրջանի բառապաշարի վերականգնման նպատակին, պարունակելով բազմաթիվ նոր հասկացություններ (հմմտ. «լուցկի», «շաբաթ», «երեքշաբթի» և այլն) և չընդգրկելով բոլոր լեզուները,—այնուամենայնիվ հնարավորություն է տալիս գծելու հնդեվրոպական բառապաշարի սահմանները։ Այն պարունակում է 22 իմաստային խումբ՝ համապատասխան ներքին բաժանումներով, և մեկուկես հազարից ավելի հասկացություն։ Ընդգրկված իմաստային խմբերն են հետևյալները.

1. Ֆիզիկական աշխարհ.
2. Մարդկություն՝ սեռ, հասակ, ընտանեկան հարաբերություն.
3. Կենդանիներ.
4. Մարմնի մասեր, մարմնական գործառություններ և պայմաններ.
5. Ուտելիք և խմելիք. խոհարարություն և ամանեղեն.
6. Հագուստ. անձնական զարդարանք և խնամք.
7. Բնակարան, տուն, կահույք.
8. Երկրագործություն, բուսականություն.
9. Զանազան ֆիզիկական գործողություններ և սրանց հետ կապված հատուկ արվեստներ ու արհեստներ՝ գործիքներով, նյութերով ու արտադրանքներով հանդերձ. զանազան այլ հասկացություններ.
10. Շարժում. տեղափոխություն, փոխադրություն, նավագնացություն.
11. Ունեցվածք, սեփականություն և առևտուր.
12. Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ.
13. Քանակ և թիվ.
14. Ժամանակ.
15. Զգայական ընկալում.
16. Զգացմունք (զգացմունքների ֆիզիկական որոշ դրսևորումներով). խառնվածքային, բարոյական և գեղագիտական հասկացություններ.
17. Բանականություն, միտք.
18. Ձայնարձակում, խոսք, գրում և ընթերցում.
19. Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ. հասարակական հարաբերություններ.
20. Ռազմական գործ.
21. Օրենք.
22. Կրոն և նախապաշարմունք։

Հնդեվրոպական համեմատական լեզվաբանության հայեցակետից ավելի որոշակի նպատակադրում ունի Է. Բենվենիստի «Հնդեվրոպական հասարակությունների բառարանը» [Benveniste, 1969], որի ընդգրկումը նեղ է (տնտեսություն, ազգակցություն, հասարակություն, իշխանություն, իրավունք և կրոն), բայց ուղղված հնդեվրոպական համապատասխան նախնական գաղափարների առարկայական արժեքների վերլուծությանը։ Բենվենիստի որոշ եզրակացություններին մենք կանդրադառնանք հետո, բայց այստեղ նշենք, որ բառարանն առաջին փորձերից մեկն է ակնարկների ձևով քննարկելու իմաստային առանձին դաշտեր, հաստատելու որոշակի հակադրություններ ու կատարելու սահմանազատումներ, ցույց տալու իմաստային դաշտերին պատկանող տվյալ միավորների առարկայական արժեքները։

Վերականգնված հնդեվրոպական արմատների տարածվածության աստիճանը, ինչպես նշվել է, նույնը չէ. գրեթե բոլոր լեզուներում առկա արմատների կողքին մեծ թիվ են կազմում սահմանափակ տարածում ունեցողները, որոնք վկայում են տվյալ լեզուների՝ հնդեվրոպական բարբառային ընդհանուր տարածքների պատկանելու և հնագույն շփումների մասին (եթե, իհարկե, բացառենք ոչ հավաստի վերականգնումները, այլև ուշ ձեռքբերումները ժամանակագրական ավելի վաղ մակարդակի վերագրելու փաստերը)։ Համեմատաբար լայն տարածում ունեցող արմատներն ու բառերը հաճախ միաժամանակ հիմնական բառաֆոնդին պատկանող, հաճախադեպ և հին շերտ ներկայացնող միավորներ են։ Սրանց մասին գաղափար տալու համար դիմենք Գ. Ռ. Զոլտայի «Հայերենի տեղը հնդեվրոպական լեզուների շրջանում» աշխատությանը [Solta, 1960], որտեղ բերված են հայերենի ընդհանուր հնդեվրոպական և լեզուների մեծ մասում տարածված արմատների և արմատական բառերի օրինակներ.

Ա. Ընդհանուր հնդեվրոպական արմատներ.

1. Գոյականներ՝ ըստ Բաքի տարբերած խմբերի. (1) ֆիզիկական աշխարհ՝ *au̯ed- (*u̯ed-> հայ. գետ), *leuk- «լուսավորել, լուսավոր» (հայ. լույս, լուսին, լուսն, այլև լուցանեմ) և այլն. (2) ընտանեկան հարաբերություն՝ *pətēr «հայր» (հայ. հայր), *māter «մայր» (հայ. մայր), *dhug(h)əter «դուստր» (*dhukter>հայ. դուստր), *bhrāter «եղբայր» (հայ. եղբայր), *su̯esōr «քույր» (հայ. քույր), *au̯o-s «պապ» (հայ. հաւ «պապ»), *(H)an- «նախնի» (հայ. հան «տատ»), *su̯ek'rū- «սկեսուր» (*k'u̯ek'rū-> հայ. սկեսուր) և այլն. (3) կենդանիներ՝ *gᵘou- «խոշոր եղջյուրավոր անասուն՝ եզ, կով» (հայ. կով), *k'u̯on- «շուն» (հայ. շուն) և այլն. (4) մարմնի մասեր, մարմնական գործառություններ ու պայմաններ՝ *mēmso- «միս» (հայ. միս), *g'enu-; *g'enədh- «ծնոտ» (հայ. ծնաւտ), *okᵘ- «տեսնել, աչք» (հայ. ակն), *ōus-/us- «ականջ» (հայ. ունկն), *ped-/pod- «ոտք» (հայ. ոտն, հետ), *su̯eid- «քրտնել» (*su̯id-ro-> հայ. քիրտն), *su̯ep- «քնել» (*su̯op-no-> հայ. քուն) և այլն. (5) ուտելիք և խմելիք՝ *sal- «աղ» (հայ. աղ). (7) բնակարան, տուն, կահույք՝ *dhu̯er-, *dhur- «դուռ» (հայ. դուռն). (14) ժամանակ՝ *dei- «շողալ», *diu- «օր» (հայ. տիւ), *mēns- «ամիս» (հայ. ամիս), *g'hei- «ձմեռ. ձյուն» (հայ. ձմեռն, ձիւն) և այլն։

2. Ածականներ՝ *bherg'h-, *bhr̥g'hu- «բարձր» (հայ. բարձր, բերձ), *sen(o)- «հին» (հայ. հին), *meg'(h)- «մեծ» (հայ. մեծ), *gᵘher- «ջերմ, տաք» (հայ. ջերմ) և այլն։

3. Բայեր՝ *ag'- «քշել» (հայ. ածեմ), *bher- «տանել, բերել» (հայ. բերեմ), *u̯el- «պտտել, ոլորել» (հայ. գելում), *u̯eid- «տեսնել. տեսած լինել, իմանալ» (հայ. գիտեմ, գտանեմ), *dhēi- «ծծել» (հայ. դիեմ), *dhē- «դնել» (հայ. դնեմ), *es- «լինել» (*es-mi>հայ. եմ), *pō(i)-/pī- «խմել» (հայ. ըմպեմ), *men- «մտածել» (հայ. իմանամ?), *leig'h- «լիզել» (հայ. լիզեմ, լիզում), *pel-, *plē- «հոսեցնել, լցնել» (հայ. լի, լնում), *pleu- «հոսել, լողալ» (հայ. լուանամ), *k'leu- (հայ. լսեմ, լուայ), *leikᵘ- «լքել, թողնել» (հայ. լքանեմ), *g'en- «ճանաչել» (հայ. ճանաչեմ< *ծանաչեմ, ծանեայ), *g'en- «ծնել» (հայ. ծնանիմ), *gᵘei- «ապրել» (հայ. կեամ), *sed- «նստել» (հայ. նեծանիմ, ն-ստիմ), *meig'h- «միզել» (հայ. միզեմ), *er- «շարժել, բարձրացնել» (հայ. յառնեմ, յարեայ), *ed- «ուտել» (հայ. ուտեմ), *stā- «կանգնել» (հայ. ստանամ), *dō- «տալ» (հայ. տամ, ետու), *skel- «կտրել» (հայ. ցելում), *(s)ker- «կտրել» (հայ. քերել, քերթել, քերծել, քորել) և այլն:

4. Այլ բառեր՝ *per- «միջով, դեպը, հեռու» (հայ. հեռի, հեր-ու), *kᵘetu̯er,-or «չորս» (հայ. չորք), *(k)(s)u̯ek's «վեց» (հայ. վեց), *ok'tō «ութ», (հայ. ութ), *(e)nu̯n «ինն» (հայ. ինն և այլն):

Բ. Հնդեվրոպական լեզուների մեծ մասում տարածված արմատներ.

1. Գոյականներ՝ (1) *nebh-, *emb(h)-/omb(h)-/m̥bh- «խոնավ. ջուր, մառախուղ, ամպ» (հայ. ամպ, ամպրոպ), *ster-/stel- «աստղ» (հայ. աստղ). *peu̯ōr, *pū̆r «կրակ» (հայ. հուր), *meigh- «մթին, մառախուղ, ամպ» (հայ. մէգ) և այլն. (2) *gᵘenā «կին» (հայ. կին), *snusos «հարս» (հայ. նու) և այլն. (3) *u̯l̥p-, *lup- «աղվես» (*əlōpek'-> հայ. աղուես), *r̥k'to-s «արջ» (հայ. արջ), *angᵘhi- «օձ» (augᵤhi->հայ. աւձ), *el-en- «եղնիկ» (հայ. եղն), *au̯ei- «թռչուն» (հայ. հաւ), *mus- «մուկ» (հայ. մու-կն), *eg'hi- «ոզնի» (*og'hinii̯o-> ոզնի) և այլն. (4) *es-r̥- «արյուն» (հայ. արիւն), *i̯ekᵘr̥-t- (հայ. լեարդ), *smek'- «մորուք» (հայ. մաւ-րուք), *ost(h)- «ոսկոր» (հայ. ոսկր), *om(e)so-s «ուս» (հայ. ուս), *k'erd-, *k'ērd- «սիրտ» (հայ. սիրտ) և այլն. (5) *gᵘr̥nu-, *gᵘrāu̯ō(n)- «աղաց, երկան» (հայ. երկան), *gᵘer- «կլանել» (հայ. կեր, կերակուր), *melit- «մեղր» (հայ. մեղր) և այլն. (7) *dem-/dom- «տուն» (հայ. տուն). (8) *ag'-ro-s «դաշտ» (հայ. արտ), *arətrom «արոր» (հայ. արաւր), *gᵘel- «կաղնի» (հայ. կաղին, կաղնի) և այլն. (14) *u̯es-r̥ «գարուն» (հայ. գարուն) և այլն. (18) *bhā- «խոսել» (հայ. բան, բայ) և այլն:

2. Ածականներ՝ *ang'hu-s «նեղ» (հայ. անձուկ), *plāt- «լայն» (հայ. լայն), *neu̯o-s «նոր» (հայ. նոր), *solo- «ողջ, ամբողջ» (հայ. ողջ, ամբողջ), *ster- «ստերջ, անպտուղ» (հայ. ստերջ) և այլն:

3. Բայեր՝ *eu- «հագնել» (հայ. ագանիմ), *lab(h)-, *lap(h)- «լափել» (հայ. լափեմ), *leu- «հատել, բաժանել, արձակել» (հայ. լուծանեմ), *gᵘel- «կլանել» (հայ. կլանեմ), *enek'- «հասնել» (հայ. հասանեմ), *per-(g-) «խըփել» (հայ. հարկանեմ, հարի), *mer- «մեռնել» (հայ. մեռանիմ), *men- «մնալ» (հայ. մնամ), *ēp- «բռնել» (հայ. ունիմ), *euk- «վարժվել, ընտելանալ» (հայ. ուսանիմ), *k'er- «աճել, աճեցնել, սնել» (հայ. սերեմ), *derk'- «նայել» (հայ. տեսանեմ) և այլն:

4. Այլ բառեր՝ *semo- «մի, ինչ-որ» (հայ. ամէն, ամենայն), *ali̯os «այլ» (հայ. այլ), *anti «առջև, դիմաց» (հայ. ընդ «փոխարեն»), *kᵘu- «որտեղ, ուր» (հայ. ուր) և այլն.

Ինչպես ամեն մի լեզու, այնպես էլ հնդեվրոպերենը պետք է ունենար

բառերի բազմիմաստություն, համանունություն և համանիշություն։ Բազմիմաստության քիչ թե շատ ամբողջական քննարկումը առայժմ հնարավոր չէ երկու հիմնական պատճառով. միշտ չէ, որ կարելի է տարբերակել 1) բառիմաստների՝ տարբեր լեզուներում կրած փոփոխությունները հնդեվրոպական լեզվի մակարդակում կրած փոփոխություններից և 2) հնդեվրոպական լեզվի տարածական տարբերակներում բառերի ստացած առումները՝ միևնույն տարածքներում գործող բառերի բազմիմաստությունից։

Ավելի նպաստավոր են համանունության և համանիշության քննարկման պայմանները։ Սակայն այս դեպքում էլ մենք գործ ունենք մեծ մասամբ վերականգնված արմատական իմաստների և ոչ թե բուն բառիմաստների հետ, որ մեծացնում է և՛ համանունության, և՛ համանիշության քանակը, մանավանդ որ բոլոր տվյալների համադրության որոնումների մեջ վերականգնողների կողմից հակում է նկատվում հաճախ դիմելու ընդհանուր և վերացական իմաստների։

Ինչպես հայտնի է, համանունությունը բազմիմաստության սահմանն է. բազմիմաստության զարգացումը՝ բառիմաստի տարբեր առումների հեռացումը հանգեցնում է համանունների առաջացման։ Համանունության մյուս աղբյուրը փոխառություններն են, որոնք, մուտք գործելով լեզվի մեջ, կարող են արդեն եղած բառերի հետ համանուններ կազմել։ Արդի վիճակում մենք առայժմ կարող ենք հավաստիորեն խոսել միայն առաջին տիպի համանունների մասին, այն էլ նկատի առնելով գերազանցապես արմատական իմաստները։ 3. Պոկոռնու բառարանում համանուն արմատները մեծ թիվ են կազմում. երբեմն առկա են մեկ տասնյակից ավելի արմատային համանուններ. այսպես, օրինակ, *u̯er- համանուն արմատները խմբավորված են 13 տարբեր իմաստային խմբերի մեջ։ Բառային մակարդակում արմատական համանունությունը իրականում իբրև այդպիսին չի պահպանվում շնորհիվ տարբեր աճականների և ածանցների, տարբեր (թեմատիկ և աթեմատիկ) հիմքերի, հերթագայության տարբեր աստիճանների հանդես գալու։ Բերենք հնդեվրոպական արմատական համանունների մի շարք օրինակներ՝ ընտրելով այն խմբերը, որոնք գոնե մասամբ արտացոլված են հայերենում.

1. *al- (դերանվանական արմատ, որից *al-i̯o-> հայ. այլ. հմմտ. նաև աղաւաղել< *աղեւաղել?).

2. *al- «աճել, աճեցնել, սնել».

3. *al- «թափառել, մոլորվել» (հայ. աղամողիմ «մոլորվել, շեղվել», թերևս նաև բրբռ. ալարել).

4. *al- «այրել» (հայ. աղանձ?)[10].

5. *al- «աղալ» (հայ. աղամ, ալիւր).

6. *al- (*al-ōu-/aləu-, *al-bho-) «սպիտակ, փայլուն» (հայ. աղաւնի).

1. *bhā- «փայլել, լուսավորել, երևալ» (հայ. բանամ).

2. *bhā- «խոսել» (հայ. բան, բայ, բամ, բաս, բայ).

---

[10] Հ. Աճառյանը [ՀԱԲ, 1^2, էջ 120], հենվելով Ա. Վալդեի և Յ. Պոկոռնու բառարանի վրա, բխեցնում է հ.-ե. *l̥n̥dh- արմատից, սակայն այս արմատին պատկանող բառերի և դրանց վերագրվող իմաստների իրար հետ կապ ունենալը կասկածելի է. հմմտ. Mayrhofer, KEWA, 2 էջ, 41, Frisk, GEW, 2, էջ 87 և այլն։ Յ. Պոկոռնին չունի։

1. *del- «նպատակ դնել. հաշվել. դարանակալել» (հայ. տող, տողել).
2. *del- «երերալ» (հայ. տաղտ. տաղտուկ, տաղտկ(ան)ալ «ճկռել. ընկճվել. ձանձրանալ»).
3. *del- «ճեղքել, տաշել, քանդակել» (հայ. ատաղձ).
4. *del- «կաթել» (հայ. տեղ, տեղամ).
5. *del- «երկար».

1. *gel- «սեղմ(վ)ել, կլորանալ. կլոր բան» (հայ. բրբռ. կլոր, կլիկ «կատոր. փոքրիկ կլոր հաց. փոքր նարինջ. կաթիլ», կլճղրիկ «կոկիկ», կլոճ «խմոր հաց», կլճնել «տաք ջրի մեջ գնդվել (ալյուրի մասին)» և այլն).
2. *gel-, *g^{u}el-«կլանել» (հայ. կուլ, կլանել, բրբռ. կուլ, կլաքան «կոկորդ»).
3. *gel(ə)- «ցուրտ, սառչել» (հայ. կաղաւել «սառչել (օձի մասին)», բրբռ. կաղվիլ «սառչել»).

1. *g′en- «ծնել» (հայ. ծին, ծնանիմ).
2. *g′en- «ճանաչել» (հայ. ճանաչեմ<*ծանաչեմ, ծանեայ, ծանաւք).

1. *g′enu-, *g′onu- «ծունկ. անկյուն» (հայ. ծունկ, ծունր).
2. *g′enu-, *g′enədh- «ծնոտ» (հայ. ծնաւտ).

1. *g′her- «ցանկանալ, ախորժել» (հայ. ձիր-ք, ձրի, ձրել).
2. *g′her- «քերել, քերծել»
3. *g′her- «ճառագայթել, փայլել, շողալ»
4. *gh′er- «բռնել. շրջապատել, շրջափակել» (հայ. ձրձել «կորզել, շորթել»).
5. *gh′er- «աղիք (?)».
6. *g′her- «փոքրիկ».
7. *g′her-, *g′her-s- «սևեռել, հառել. փշաքաղվել, փայտանալ» (հայ. ձար «մազ», ձառ «ծուռ. տգեղ, կոշտ»).

1. *k′er- «վերնամաս, գագաթ, գլուխ. եղջյուր» (հայ. սար).
2. *k′er- «աճել. աճեցնել, սնել» (հայ. սեր, սերեմ, սերունդ, սեռ, սերմն).
3. *k′er- «թել հյուսել, կցել» (հայ. սարիք, սարդ).
4. *k′er- «վիրավորել, վնասել, քայքայել. քայքայվել».

1. *mel- «մանրել, փշրել, աղալ» (հայ. մալեմ, մլմլեմ, մեղմ, մեղկ, մլաղաց, մամուլ, մլուկն, բրբռ. մղմող «ցեց»).
2. *mel- «սխալվել. խաբել» (հայ. մեղ-ք, թերևս նաև՝ մոլոր, մոլի).
3. *mel- «դանդաղել».
4. *mel- «ուժեղ, մեծ».
5. *mel- «անդամ. զոդել, միացնել» (հայ. մարմին<իրան.?).
6. *mel- «մթնագույն, կեղտագույն. կոշտ» (հայ. մեղծ «ձանձախարիթ, մուր»).
7. *mel- «բուրդ, բրդյա զգեստ».
8. *mel- «երևալ. բարձրանալ. բարձունք».

1. *men- «ցցվել».
2. *men- «կոխել, ճզմել».

3. *men- «մտածել» (հայ. իմանամ?).
4. *men- «փոքր, մանր. փոքրացնել, մեկուսի» (հայ. մանուկ, մանր, մանչ).
5. *men- «մնալ» (հայ. մնամ).

1. *mer- «հյուսել, կապել. թել, թոկ».
2. *mer- «առկայծել» (հայ. մայր «խավար», բրբռ. մարել, մարմրել).
3. *mer- «սևացնել, մութ, գույն, բիծ» (հայ. մռայլ, մառ-ա-խուղ).
4. *mer- «մեռնել» (հայ. մեռանիմ, մարդ «մահկանացու»).
5. *mer- «տրորել» (հայ. մարտ «պայքար», մուրճ, մաշեմ, բրբռ. մեռ, մառ «փայտի ծեղ», մառել «ցորենը մանրել, կալսել»).
6.*mer-, *mer-s- «խանգարել, չարացնել, արհամարհել, մոռանալ» (հայ. մոռանամ).

1. *od- «հոտ արձակել» (հայ. հոտ).
2. *od- «զզվանք, ատելություն» (հայ. ատեամ).

1. *pel- «թափել, հոսել» (հայ. հեղում, ողողեմ).
2. *pel- «շարժել, քշել» (հայ. բրբռ. հլոտել «հրել, մղել, գլորել»).
3. *pel- «ծալել».
4. *pel- «աման»
5. *pel- «վաճառել, շահել».
6. *pel- «գորշ, գունատ» (հայ. ալի-ք «սպիտակ. ալիք»).
7. *pel- «այրել. տաք լինել».

1. *sem- «հանել, թափել, լցնել» (հայ. ամամ, աման).
2. *sem- «մի, մեկ. միասին» (հայ. մի, ամեն).
3. *sem- «ամառ» (հայ. ամառն).

1. *(s)meukh- «սողոսկել, մխվել» (հայ. մուխ, մխեմ).
2. *meukh- «ծխել, ծուխ» (հայ. մուխ).

1. *u̯el- «տեսնել» (հայ. գեղ, գեղեցիկ).
2. *u̯el- «ցանկանալ, ընտրել» (հայ. գեղձ «ուժեղ ցանկություն, փափագ»).
3. *u̯el- «ճնշել, մղել».
4. *u̯el- «մազ, բուրդ» (հայ. գեղմն).
5. *u̯el- «խաբել».
6. *u̯el- «գոլ, տաք» (հայ. գոլ, գաղջ).
7. *u̯el- «պտտել, ոլորել» (հայ. գել «ոլորած, պիրկ», գիլ, գիղ, գաղձ գեղձ «պատատուկ, բաղեղ»).
8. *u̯el- «պոկել, շորթել, թալանել»։

Էլ ավելի մեծ սուբյեկտիվությամբ է պայմանավորված հնդեվրոպական լեզվի ստուգաբանական բառարանների մեջ համանիշների առատությունը։ Ինչպես համանունության դեպքում, հնդեվրոպական լեզվից առանձին լեզուներին անցնելիս համանիշությունը հազվադեպ է նույնությամբ պահպանվում։ Այսուհանդերձ կարելի է մատնանշել հնդեվրոպական իսկական համանիշներ՝ պայմանավորված բառերի հասարակական-ոճական (հասարակական տարբերակվածություն, սովորական կամ բանաստեղծական լեզու, սովորական կամ հանդիսավոր խոսք և այլն), տարիքային-նշանակական և վերաբերմունքային (ուժեղացման աստիճաններ, նշանակման նրբերանգներ, դրական, բացասական կամ չեզոք վերաբերմունք), տարածական-բարբառային տարբերություններով և այլն։ Թողնելով վերջին դեպքը հատուկ քննարկման՝ բերենք որոշ օրինակներ մյուսների համար։

Ակնհայտորեն տարբերվում են միևնույն գաղափարներն արտահայտող բուն (մեծահասակների լեզվին պատկանող) և մանկական լեզվի (Lallwort) բառերը. այսպես, մեծահասակների լեզվի համար սովորական *pətér «հայր» (հայ. հայր), *mātér «մայր» (հայ. մայր) բառերի կողքին առկա են մանկական լեզվի բառեր՝ *appa (հմմտ. հայ. բրբռ. ափի, ափու «հայր, հայրիկ»), *atos, *atta- (հմմտ. հայ. բրբռ. ատո «ծեր կին, պառավ», ատտա «մայր, մայրիկ»), *am(m)a, *ami, *mā, *mam(m)ā «մայր» (հմմտ. հայ. բրբռ. մա, մամ «մայրիկ», մամի «պառավ կին»), *nana, *nena «մայր» (հմմտ. հայ. բրբռ. նան, նանա, նանե, նանի «մայր, մայրիկ») և այլն։ Հետաքրքրական է նշել, որ բուն *pətér- և *mātér- բառերը ծագումով նույնպես գալիս են մանկական լեզվից (*pə-, *mā-՝ -tēr-, *-ter- մասնիկով)։ Ինչպես որ հայ. մանկական լեզվում մամ(ա) կարող է միաժամանակ նշանակել և՛ «մայր», և՛ «ուտելիք», այնպես էլ հ.-ե. *pa(p)pa- նշանակում է միաժամանակ և՛ «հայր», և՛ «ուտելիք» (հմմտ. հայ. բրբռ. փափա «հաց, ուտելիք»)։

Սովորական և հանդիսավոր խոսքի տարբերությունները որոշակի արտահայտություն ունեն մարդկային խոսքը բնութագրող բառարմատների մեջ։ Խոսելու գաղափարը կարող է արտահայտվել *au- (*au̯ed-), *bha-, *bhel-, *u̯ekᵘ-, *u̯er- և այլ արմատների պատկանող բառերի միջոցով, որոնք, սակայն, գործածելու դեպքում ունենում են ակնհայտ ոճա-իմաստային տարբերություններ. այս տեսակետից բնորոշ օրինակներ է տալիս հին հնդկերենը, որտեղ vádati-ն նշանակում է «ձայն է բարձրացնում, խոսում է», vandate-ն (ռնգային միջածանցով ձև)՝ «գովում է, փառաբանում է, ակնածանքով ողջունում է» [(a)u̯ed-], *sa-bhā-ն (*sm̥-bhā-)՝ «ժողով» (*bhā->հայ. բան, բայ, բամ), *bhaṇdatē-ն «խոսում է, ծաղրում է, վատաբանում է» (*bhel-), vákti-ն՝ «ասում է, խոսում է» (u̯ekᵘ-, հայ. գոչել), vrata-ն՝ «պահանջ, պատվիրան, կանոնադրություն, հանդիսավոր խոստում, ուխտ» (*u̯er-, հայ. երդումն?) և այլն, այսինքն՝ տարբերակվում են խոսքի սովորական (*u̯ekᵘ->vákti), հանդիսավոր (շատերի առջև արտասանվող), կրոնական-ծիսական, վատաբանական տեսակները. նշանակալից տարբերություններ է բովանդակում կամքի արտահայտությունը՝ ըստ ուժգնության տարբեր աստիճանների և տարբեր երանգների (սովորական ցանկություն, պահանջ, կարիք և այլն)՝ *ais- (հայ. այց, հայց), *au- (հայ. աւիւն), *u̯el- (հայ. գեղձ «ուժեղ ցանկություն, փափագ»), *gheidh-, *gheldh- և այլն։

Հնդեվրոպական լեզուների համեմատական բառարանն ըստ արմատների կազմելու սովորույթի առաջ բերած անպատեհությունները և արմատների նախնական իմաստների վերականգնման թերությունները հատկապես ակնհայտ են դառնում այնպիսի իմաստների դեպքում, որոնցից շատ այլ իմաստներ կարող են ածանցվել՝ «փայլել», «մթին», «ուռչել», «խփել» և այլն։ Հմմտ. օրինակ, «փայլել, լողալ, լուսավորել, սպիտակ» իմաստի արտահայտման դեպքերը՝ *al- «փայլուն, սպիտակ» (հայ. աղաւնի), *ar(e)g'- «փայլուն, սպիտակավուն» (հայ. արծաթ, արծնեմ, արծարծեմ), *au̯es- «լուսավորել», *aug- «փայլել, տեսնել», *bhā- «փայլել, լուսավորել, երևալ» (հայ. բանամ), *bheigᵘ- «փայլել», *bhel- (*bhlei-, *bhleig'-, *bhleik-, *bhleu-) «փայլուն, սպիտակ» (հայ. բալ), *bher- «փայլուն, բաց դարչնագույն» (հայ. բորենի), *bherəg'- «փայլուն, սպիտակ» (հայ. բարտի?), *bherək'- «շողալ», *dei- «փայլել, շողալ» (հայ. տիւ), *g'hel- «փայլել շողալ» (հայ. ձաղ), *k'eu- «լուսավորել, պայծառ» (սուրբ, թերևս նաև շող, շուք), *leuk- «լուսավորել, լուսավոր» (հայ. լոյս, լուցանեմ), *(s)p(h)el- «փայլել, շողալ» (հայ. փայլ, փաղփաղիմ, փողփողեմ) և այլն։

Հնդեվրոպական լեզվում լայնորեն գործում են բառակազմության երկու հիմնական եղանակները՝ բառաբարդումը և բառածանցումը, սակայն նախ՝ բարդության ոչ բոլոր տեսակներն են հավասարապես տարածված և երկրորդ՝ նախածանցումը բառիս բուն իմաստով բացակայում է։

Հնդեվրոպական բարդությունները, ինչպես կարելի է դատել հատկապես հին հնդկերենի և հին հունարենի տվյալների հիման վրա, կարող էին կերտվել բաղադրիչների ինչպես համադասական, այնպես էլ ստորադասական հարաբերությամբ։ Համադասական տիպը հայտնի է dvan-dva (<dvam-dvam «երկու երկու») անունով և համապատասխանում է արդի հայ. քերականության մեջ տարբերվող բաղհյուսական բարդությանը. այդպիսիք են, օրինակ, միավորների և տասնավորի միացությամբ կազմված թվականները (հմմտ. հայ. երկո-տասան «տասներկու», հ. հնդկ. dvā-daśa, հուն. δώδεκα, լատ. duo-decim և այլն)։ Ստորադասական բարդությունները լինում են մի քանի տեսակ. մասնավորապես լայն տարածում են ունեցել, այսպես կոչված, bahuvrīhi տիպի բարդությունները, որոնք նշանակել են մի բան ունեցող և կատարել են ածականի դեր (հմմտ. հնդ. bahu-vrīhi «բազմաբրինձ»). մեծ թիվ են կազմել այն գոյականները, որոնց առաջին բաղադրիչը լրացրել է երկրորդի իմաստը՝ karmadhāraya տիպի (ինչպես հայ. մեծատուն, հ. հնդկ. madhya-dinam «միջ-օրե» և այլն), tatpuruṣa տիպի (ինչպես հայ. հաւր-եղբայր, հուն. πατρ-άδελφος կամ հովիւ<*ovi-pā «խաշնարած, ոչխարապահ») և այլն։

Վերականգնումը ոչ միշտ է հնարավորություն տալիս որոշելու հիմքակազմության քննության կապակցությամբ թվարկված ածանցների գործուն և ոչ գործուն, արտադրողական (տարածված) և ոչ արտադրողական տեսակները։ Կարելի է ասել, որ ինչպես ընդհանրապես, այնպես էլ հնդեվրոպական լեզվում վերջածանցները կարող են լինել երկու տիպի՝ ա) իմաստափոխական (իմաստահավելական), որոնք բառին հաղորդում են իմաստային նոր առում՝ առանց նրա խոսքի մասային արժեքը փոխելու, և բ) գործառական-փոխանցական, որոնք փոխում են բառի խոսքի-մասային արժեքը, բայից կերտում են գոյական, գոյականից՝ ածական և այլն [հմմտ. Ջահուկյան, 1974, 158]։ Որոշ ածանցներ կարող են զուգակցել երկու տիպի արժեքները։

Բայական իմաստափոխական ածանցների դեպքում դժվար է տարբերություն անցկացնել բառակազմական և բառափոխական իմաստների միջև. այդպիսի «ածանցները» կարող են արտահայտել կերպա-վիճակային զանազան տարբերություններ՝ տևականություն, սաստկություն և այլն։ Մոտավորապես նույն վիճակն է նաև ածականի դեպքում, որտեղ ածանցները կաբող են ցույց տալ ինչպես համեմատելի հատկություն՝ բաղդատական կամ գերադրական արժեքով, այնպես էլ հատկության ուժեղություն և թուլություն՝ առանց համեմատության։ Գոյականների դեպքում ամենից ավելի տիպական իմաստափոխական արժեքը փոքրացուցիչ-փաղաքշականն է, որ հնդեվրոպական լեզվում արտահայտվել է *-(e)k(o)- ածանցով. համա. *mer-i̯o-k(o)- «մարդուկ», հ. հնդկ. maryakaḥ «մարդուկ», հուն. μεῖραξ «պատանի» և այլն։ Փաստորեն բառակազմական արժեք ունեն նաև սեռակազմ (օրինակ՝ իգականակազմ) ածանցները։

Մեծ թիվ են կազմել գործառական-փոխանցական ածանցները՝ երբեմն իմաստափոխական արժեքով։

Գործառական ածանցների բնորոշ օրինակներ են դերբայական մասնիկները, որոնք բայահիմքերից կերտել են ածականներ՝ *-ent/ont/n̥t (համա. *bheront- «տանող»), *-u̯es/u̯os/u̯s (համա. *u̯oidus «իմացող»), *-meno/mno- (համա. *bheromenos «բերող (իր համար), բերվող»)։ Բայահիմքերից այլ խոսքի մասեր կերտող ածանցներից պետք է հիշել առաջին հերթին գոյականակերտ ածանցները՝ ա) գերազանցապես բայանվանական (գործողության անուն կազմող)՝ *-tei/ti- (*-es-tei-) (համա. *mr̥-ti- «մահ»՝ *mer-ից), *-teu/tu- (համա. *-pr̥-tu- «անցում»՝ per-ից), *-men- (համա. *bher-men- «կրում»՝ *bher-ից), *-es/os- (համա. *k'leu-os- «լուր»՝ *k'leu-ից) և այլն, բ) գործողի անուն նշանակող՝ *-ter-, *-tel- (համա. *g'enə-ter, *-tel- «ծնող»՝ *g'en-ից, հայ. ծնաւղ), գ) գործիք նշանակող՝ *-tro-, *tlo- (համա. *arā-trom «վարելու գործիք, արոր», հայ. արաւր) և այլն։

Զգալի թիվ են կազմել ածականակերտ ածանցները, որոնք ածականներ (երկրորդաբար՝ գոյականներ) են կազմել բայերից և գոյականներից՝ *-(i)i̯o- (համա. *gᵘou̯i̯o- «կովային»՝ *gᵘou-ից, հայ. կոգի, բառացի՝ «կովային»), *-mo- (համա. *luk-mo- «լուսավոր»՝ *leuk-ից,) *-(e)no- (համա. *louks-no- «լուսավոր»՝ *leuk-s-ից), *-ro- (համա. *k'eubh-ro- «լուսավոր»՝ *k'eu-bh-ից, հայ. սուրբ), *-to- (համա. *k'lu-to- «լսված»՝ *k'leu-ից, հայ. լու) և այլն։

Անուններից բայեր կերտող ածանցներն են *-i̯e/i̯o-, *-ske/sko- (համա. *senei̯o- «ծերանում եմ»՝ *sene-ից, *medhu-skō «հարբում եմ»՝ *medhu-ից)։

գ) ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

Հայոց լեզվի պատմության տեսանկյունից հնարավոր է հնդեվրոպական բարբառների քննարկման երկու եղանակ. ա) քննարկել հնդեվրոպական բարբառներն ընդհանրապես և որոշել հայերենի բարբառային դիրքը. բ) քննարկել հնդեվրոպական բարբառների փոխհարաբերությունը հայերենի առումով, այսինքն՝ ընտրել միայն այն զուգաբանությունները, որոնք հատուկ են հայերենին, և բոլոր մյուս լեզուները դիտարկել ըստ դրանց։ Առաջին մոտեցումը կարելի է կիրառել հնդեվրոպական բարբառների ընդհանուր քննարկման ժամանակ՝ ներկա հատվածում, երկրորդ մոտեցումը՝ հայերենի բարբառային դիրքը որոշելիս՝ հետագա շարադրանքում։

Հնդեվրոպական բարբառների գիտական քննության հիմքերը դրվել են

մի կողմից՝ Յ. Շմիդտի «ալիքների տեսությամբ» և մյուս կողմից՝ այսպես կոչված, լեզվաբանական աշխարհագրությամբ. ստեղծվել է ուսումնասիրության մի հատուկ բնագավառ, որ կոչվում է տարածքային (արեալային) լեզվաբանություն [Макаев, 1964]։ Մինչ այդ իշխել է հնդեվրոպական լեզվի համեմատական միասնության գաղափարը։ Ա. Շլայխերի ծագումնաբանական ծառի տեսությունը հնդեվրոպական լեզուների փոխհարաբերությունը պատկերացնում էր որպես հնդեվրոպական ընդհանուր նախալեզվից հիմք-լեզուների, ապա առանձին լեզուների, սրանց մեջ էլ բարբառների առանձնացման, վերջին հաշվով՝ անընդհատ ճյուղավորման պրոցես։ Յ. Շմիդտը [J. Schmidt, 1872] առաջ է քաշում այն դրույթը, որ հնդեվրոպական լեզուները բնութագրվում են անցումնային տարբեր հատկանիշների փնջերով, որոնք սկզբնապես կազմել են անցողիկ գծերով միավորված անընդհատ շարքեր. այդ անընդհատությունը խախտվել է, որովհետև չեն պահպանվել միջանցիկ բազմաթիվ լեզուներ։ Նորագոյացումների տարածումը Շմիդտը պատկերացնում էր կենտրոնից տարածվող և աստիճանաբար հանգչող ալիքների ձևով։ Ընդունելով հնդեվրոպական նախալեզվի բարբառային տարբերակվածությունը՝ Շմիդտը հայտնում էր այն կարծիքը, որ հնդեվրոպական լեզուների հետագա տարածումը արտացոլում է նրանց՝ սկզբնական տարածական փոխհարաբերությունը։ Այլ կերպ ասած՝ Շմիդտի տեսության մեջ հատուկ սահման չէր անցկացվում հնդեվրոպական բարբառների և հետագայում հանդես եկած լեզուների միջև, նկատի չէր առնվում բարբառների խառնման և միավորման հնարավորությունը առանձին լեզուների կազմավորման ժամանակ։

Յ. Շմիդտի գրքի լույս տեսնելուց մի քանի տարի անց Գ. Վենկերի ձեռնարկած գերմանական, ապա, ավելի ուշ, Ժ. Ժիլյերոնի ձեռնարկած ֆրանսիական բարբառագիտական ատլասների կազմման աշխատանքների հետ կապված բարբառագիտության մեջ տարածվում է այն միտքը, որ բարբառների միջև որոշակի սահմաններ չկան, և որ կարելի է խոսել միայն լեզվական (հնչյունական, քերականական, բառային) առանձին հատկանիշների (զուգաբանությունների) տարածման սահմանների մասին. ամեն մի բարբառ կամ խոսվածք բնորոշվում է զուգաբանությունների որոշ ամբողջությամբ, ընդ որում բարբառային կենտրոնները բնութագրվում են ցանցի խտությամբ, սահմանները՝ նոսրությամբ։

Շմիդտի «ալիքների տեսության» և լեզվաբանական աշխարհագրության նվաճումների լույսի տակ առաջին անգամ Ա. Մեյեն է փորձում հետևողականորեն քննել հնդեվրոպական բարբառների փոխհարաբերության հարցը [Meillet, 1908]։ Նա խնդիր է դնում տարբերելու հնդեվրոպական բարբառներին հատուկ գծերը հնդեվրոպական լեզուներին հատուկ գծերից, այսինքն՝ սահմանազատել բարբառային հին գծերը առանձին լեզուների նորագոյացումներից։ Այսուհանդերձ Մեյեն տուրք է տալիս Ա. Շլայխերի ծագումնաբանական ծառին և որոշ կարգի (օրինակ՝ իտալա-կելտական) ընդհանրությունների մասին խոսում է որպես հավաստված իրողություն։ Եթե հնդեվրոպական լեզուները նախկինում բաժանում էին centum և satəm խմբերի[11] (հ. ե. չշրթնայնացած ետնալեզվայինները պահպանելու կամ դրանք առաջնալեզվային պայթականների, կիսաշփականների և շփականների վերածելու հատկանիշի հիման վրա, ապա Մեյեն այդ տարբերակումը դիտում է որպես բարբառային հատկանիշներից միայն մեկը, որին նա միացնում է հնչյունական և քերականական այլ հատկանիշներ ևս, այլև սահմանում է բառային զգալի տարբերություններ։ Հնդեվրոպական բարբառների ընդհանուր փոխհարաբերությունը Մեյեն պատկերացնում է հետևյալ կերպ.

---

[11] Ըստ հարյուր բառի լատինական և ավեստյան նշանակումների։ Centum և satəm անվանումները առաջին անգամ օգտագործել է Բրադկեն 1890 թ.։



Հետագայում, խեթերենի և թոխարական լեզուների հնդեվրոպական բնույթի որոշման հետ կապված Ա. Մեյեն վերանայում է իր սկզբնական բաժանումը և որոշում հնդեվրոպական բարբառների երեք խումբ՝ 1) արևմտյան՝ իտալյան ու կելտական, 2) արևելյան՝ խեթական, թոխարական ու հայկական, և 3) կենտրոնական՝ հնդիրանական, բալթիական, սլավոնական, հունական ու գերմանական [**Meillet**, BSL, 32,1 և հջ.]։ Իր գրքի երկրորդ հրատարակության մեջ (1922) Մեյեն առաջ է քաշում այն դրույթները, որ ա) գերմանական, իտալական ու կելտական լեզուները բնորոշվում են մի շարք նորագոյացումներով՝ հակադրվելով մյուս լեզուներին, և որ բ) հարկավոր է հնչյունա-քերականական զուգաբանությունների տարածման գոտիները տարբերել բառային զուգաբանությունների տարածման գոտիներից. երկու կամ ավելի տարածքների համար ընդհանուր ծիսական (սակրալ), իրավական և այլն բառապաշարը խոսում է ընդհանուր հասարակական կառուցվածքի, բայց ոչ ցեղակցական ընդհանուր կապերի մասին. այսպիսով, Մեյեն դնում է բառային զուգաբանությունների տարբերակված քննության հարցը։

Ա. Մեյեի՝ հնդեվրոպական բարբառների փոխհարաբերության վերաբերյալ սկզբնական հայացքները նույնությամբ որդեգրվում են Հ. Աճառյանի կողմից նրա «Հայոց լեզվի պատմության» մեջ [1, 1940, 24—33]։

Հնդեվրոպական տարածքային լեզվաբանության հետագա ձևավորման վրա զգալի ազդեցություն են գործում մի կողմից՝ իտալական նեոլինգվիստների՝ լեզվական տարածքների տարբերակման սկզբունքները և լեզուների խառնվածության ու ենթաշերտի (սուբստրատի) կարևորության վերաբերյալ նրանց դրույթները, մյուս կողմից՝ Ն. Ս. Տրուբեցկոյի առաջ քաշած «լեզվամիության», որպես լեզուների՝ կառուցվածքային որոշակի հատկանիշներով, բնութագրվող ընդհանրության, գաղափարը, որ հետագայում ազդում է նաև հենց նեոլինգվիստիկայի ներկայացուցիչների վրա։

Նեոլինգվիստական ուղղության ներկայացուցիչ Ջ. Բոնֆանտեն, փորձելով ճշգրտել Ա. Մեյեին, հնդեվրոպական բարբառները տարբերում է

հետևյալ ձևով՝ 1) արևմտյան՝ իտալական, կելտական ու գերմանական, 2) արևելյան՝ հնդիրանական ու սլավոնական, 3) կենտրոնական՝ բալթիական (հյուսիսում) ու հունական (հարավում) [**Bonfante**, 1931, 69 և հջ.]։

Վ. Պիզանին տարբերում է բարբառային չորս խումբ՝ 1) կենտրոնական (գերմանական, բալթիական, սլավոնական, իլիրական, թրակյան), 2) արևմտյան (լատինական, կելտական), 3) հարավային (հունական, օսկ-ումբրական) ու 4) արևելյան (հնդիրանական), և տալիս հնդեվրոպական բարբառների դասավորման հետևյալ սխեման [**Pisani**, 1933, 545 և հջ. 1940]։



Ֆ. Շպեխտը իր աշխատություններում [**Specht**, 1935, 1—2. 1939, 1—2. 1944] դնում է հ.-ե. ընդհանրությունից տարբեր խմբերի դուրս գալու հաջորդականության հարցը՝ առաջ քաշելով այն դրույթը, որ հնդեվրոպական ընդհանրությունից ամենից առաջ դուրս են եկել արիացիները, հույները և հայերը, որի հետևանքով առաջացել են երկու տարածքներ՝ հունահայկական և իտալա-կելտա-գերմանա-բալթա-սլավական. այստեղից բխում է, որ ընդհանուր հնդեվրոպական են միայն այն զուգաբանությունները, որոնք հատուկ են հունարենին կամ հայերենին և մի այլ լեզվի։ Վ. Բրանդենշտայնը հնդեվրոպական ընդհանրությունից առաջինը դուրս եկած է համարում հնդիրանցիներին [**Brandenstein**, 1936, 26. 1936, 234. 1962, 47]։

Նշած տվյալներն ընդհանրացնելու նոր փորձերից են Վ. Պորցիգի «Հնդեվրոպական լեզվաշրջանի անդամատումը» [**Porzig**, 1954] և Ջ. Դևոտոյի «Հնդեվրոպական լեզվական և էթնիկական ընդհանրության ծագումը» [**Devoto**, 1962] աշխատությունները։

Վ. Պորցիգը հնչյունական և քերականական տվյալների հետ միասին լայնորեն օգտագործում է նաև բառային տվյալները, մեծ նշանակություն է տալիս երկու և ավելի լեզուների ընդհանուր նորագոյացումներին և աշխատությունը կառուցում է արևմտյան ու արևելյան տարածքների հակադրության դրույթի վրա. արևմտյան տարածքին նա հատկացնում է կելտական, լատինական, օսկ-ումբրյան, գերմանական, այլև (ըստ հայտնի տվյալների) իլիրական, արևելյանին՝ արիական, բալթիական, սլավոնական, հունական, հայկական, այլև (ըստ հայտնի փաստերի) թրակյան, փռյուգական, որոշ վերապահությամբ էլ խեթական, թոխարական և ալբանական խմբերը [**Porzig**, 1954, 213]։

Ջ. Դևոտոն իր գիրքը կառուցում է լեզվական և արտալեզվական փաստերի համադրության հիման վրա։ Նա լայն չափերով օգտագործում է հնդեվրոպական լեզուների բառապաշարի տվյալները՝ կատարելով լեզվա-տարածքային և հասարակական-շերտագրային բաշխում։ Դևոտոյի համար հատուկ կարևորություն են ստանում այս առումով միևնույն իմաստների արտահայտման տարբերությունները և, սրա հետ կապված, համանիշության պրոբլեմը։

Սովետական գիտնականներից հնդեվրոպական տարածքային լեզվաբանության անցած ուղուն, ձեռք բերած արդյունքներին, մեթոդներին և պրոբլեմներին հատուկ աշխատություն է նվիրել Է. Ա. Մակաևը [Макаев, 1964]։

Հնդեվրոպական բարբառների դասակարգման նորագույն այլ փորձերից պետք է նշել Թ. Բառոուի և Վ. Գեորգիևի դասակարգումները։ Առաջինը [Burrow, 1956, 13] satəm խմբի լեզուները համարում է կենտրոնական և տարբերում է չորս եզրային խումբ՝ 1) արևմտյան՝ իտալական, կելտական, գերմանական, 2) հունական, որ հատուկ կապեր ունի կենտրոնականի հետ, 3) արևելյան՝ թոխարական, 4) խեթական։

Վ. Գեորգիևը [Георгиев, 1959, 277—283, Georgiev, 1980, 358—363] տարբերում է չորս խումբ՝ 1) հյուսիսային՝ ա) բալթիկ-սլավոնա-գերմանական ու բ) թոխարական, 2) արևմտյան՝ ա) կելտա-իտալա-վենետյան ու բ) իլիրական (մեսապերենի հետ միասին), 3) կենտրոնական՝ Ա. ա) հունական (մակեդոնական), բ) դակա-միզիական (ալբանական), գ) հնդիրանական և դ) հայ-փռյուգական, Բ. ա) թրակյան, պելասգյան, տերմիլյան (լիկիերեն), բ) կարիական, 4) հարավային՝ խեթա-լուվական կամ անատոլիական (խեթերեն՝ լիդիերենի հետ միասին, լուվերեն՝ լիկիերենի հետ միասին, հիերոգլիֆյան «խեթերեն», պալայերեն, էտրուսկերեն)։

Հնդեվրոպական բառապաշարի տարածքային բաշխման ուսումնասիրության համար հատուկ արժեք ունի արդեն հիշատակված Կ. Դ. Բաքի «Հնդեվրոպական հիմնական լեզուների ընտրովի հոմանիշների բառարանը» [Buck, 1949], որտեղ բառերը բաժանված են իմաստային խմբերի, և բերված են միևնույն իմաստներն արտահայտելու համար հնդեվրոպական լեզուների օգտագործած հոմանիշները՝ խմբավորված ըստ ծագման։ Ցավոք սրտի, հայերենի նյութը գրեթե չի օգտագործված։ Սակայն հայերենի բառային զուգաբանություններին նվիրված է հատուկ աշխատություն՝ Գ. Ռ. Զոլտայի «Հայերենի տեղը հնդեվրոպական լեզուների շրջանում» [Solta, 1960]։ Այստեղ Զոլտան փորձում է հայերենի տեղը որոշել ըստ բառային զուգաբանությունների։ Գերադանցապես Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» տվյալների հիման վրա նա առանձնացնում է հայերենի ա) ընդհանուր հնդեվրոպական, բ) լեզուների մեծ մասի հետ ընդհանուր, գ) մի քանի լեզվի հետ ընդհանուր և դ) միայն մեկ լեզվի հետ ընդհանուր բառեր և ապա անում եզրակացություններ։ Հատուկ արժեք է տրվում բառային վերջին տիպի (էքսկլուզիվ) զուգաբանություններին և ըստ դրանց քանակի հայերենի հետ առնչվող հ.-ե. լեզվախմբերը բաշխվում են մերձավորության տարբեր աստիճաններով։ Զոլտայի աշխատությունը մեթոդիկայի տեսակետից նորություն էր հնդեվրոպական լեզվաբանության մեջ ընդհանրապես։

Փորձեր են արվել հնդեվրոպացիների բարբառային փոխհարաբերությունը որոշելու վիճակագրական տվյալներով։ Ա. Լ. Կրյոբերը և Կ. Դ. Կրետիենը 1937 թվականին և հետո [Kroeber–Cretien, 1937, 1939. Kroeber,

1960], հենվելով 30 հնչյունական և 44 ձևաբանական զուգաբանությունների վրա, առանց տարբերելու հին գծերն ու նորագոյացումները, որոշում են կելտական, իտալական, հունական, հայկական, իրանական, հնդկական (սանսկրիտ), սլավոնական, բալթիական և գերմանական լեզուների փոխհարաբերությունը։ Ըստ նրանց հաշվումների՝ հայերենը ամենից ավելի մոտ է հնդիրանականին և հունականին. հակառակ տարածված կարծիքների՝ իտալականը և գերմանականը մոտ են բալթիականին, բայց ոչ այնքան մոտ կելտականին։

Ըստ Կրյոբերի հաշվումների՝ հայերենի ու հունարենի գործակիցներն ընդհանուր առմամբ զուգահեռ են, բարձր՝ իրանականի (ինչպես նաև սանսկրիտի) ու իրար և ցածր՝ կելտականի ու գերմանականի նկատմամբ. հայերենը և հունարենը տարբերվում են իրարից հատկապես նրանով, որ հունարենը բարձր աստիճանի նմանություն ունի իտալյանին, իսկ հայերենը՝ սլավոնականին ու բալթիականին [Kroeber, 1960, 7]։

Կարելի է նշել նաև այլ հաշվումներ. Կրյոբերից և Կրետիենից ավելի վաղ նման հաշվումներ կատարել են լեհ գիտնականներ Չեկանովսկին (20 հատկանիշ) և Մոշինսկին (19 հատկանիշ, նախորդի տվյալների լրացուցիչ հաշվառմամբ՝ 22 հատկանիշ)։ Ավելի ուշ շրջանի համար նշելի են Ռոսի հաշվումները։

Կարելի է ասել, որ չնայած եղած այլևայլ տարբերություններին՝ բոլոր հետազոտողները միաձայն են այն հարցում, որ հայերենը ամենից ավելի մոտ է հնդիրանական ու հունական խմբերին, և որ centum ու satəm հին բաժանումը միակողմանի է ու իրեն չի արդարացնում։

Հնդեվրոպական լեզուների փոխհարաբերության ճշգրիտ պատկերը որոշելուն խանգարում են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հանգամանքներ։

Օբյեկտիվ հանգամանքներից է առաջին հերթին հնդեվրոպական լեզուների հայտնիության և հուշարձանների հնության ու երկարատևության աստիճանների տարբերությունը. շատ լավ հայտնի, հնագույն գրավոր հուշարձաններ և երկարատև պատմություն ունեցող լեզուների կողքին առկա են շատ քիչ կամ նույնիսկ միայն անունով հայտնի, համեմատաբար ուշ շրջանի պատկանող հուշարձաններ ունեցող և նույնիսկ գիր ու գրականություն չունեցող լեզուներ։ Խեթա-լուվական, հնդիրանական և հունական խմբերը ներկայացված են մ. թ. ա. II հազարամյակից, իտալյանը՝ մ. թ. ա. I հազարամյակից, գերմանականը, կելտականը, հայկականը, թոխարականը և սլավոնականը՝ մ. թ. I հազարամյակից, բալթիականը, ալբանականը՝ մ. թ. II հազարամյակի կեսերից սկսվող հուշարձաններով։ Հնդիրանականը, հունականը, գերմանականը, կելտականը, հայկականը, սլավոնականը, բալթիականը, ալբանականը ներկայացված են մինչև այժմ հարատևող կենդանի լեզուներով, խեթա-լուվականը, թոխարականը, թրակյանը, փռյուգականը, իլիրականը (մեսապերենով հանդերձ), վենետյանը՝ միայն մեռած լեզուներով, որոնք հայտնի են տարբեր չափով։ Ընդհանրապես տարբեր է լեզուների պատմության երկարատևության աստիճանը։ Այս պայմաններում մենք հաճախ կարող ենք միայն պայմանականորեն արձանագրել տվյալ խմբում այս կամ այն երևույթի բացակայությունը, և ավելի հավաստի են հակադրական (կոնտրարային), քան հակասական (կոնտրադիկտորային) զուգաբանությունները. երկրորդ դեպքում նշվում է միայն առկայությունը կամ բացակայությունը. առաջին դեպքում՝ տվյալ միավորի (ձևի) դիմաց տրվում է նրան հակադրվող մի այլ միավոր (ձև)։

Օբյեկտիվ դժվարություն հարուցող կարևոր էական հանգամանք է լեզվակառուցվածքի փոփոխության անհամաչափությունը։ Այսպես, նոր պարսկերեն գրական լեզուն մ. թ. IX—X դարերից սկսած մինչև մեր օրերը էական փոփոխություններ չի կրել, մինչդեռ հայերենը այդ նույն ժամանակամիջոցում անցել է հին շրջանից միջինին և ապա նորին, ընդ որում համապատասխանաբար հանդես են եկել գրաբարը, միջին գրական հայերենը և նոր գրական լեզուն իր երկու տարբերակներով։ Չնայած իր հուշարձանների ոչ մեծ հնությանը՝ լիտվերենը պահպանել է խիստ արխաիկ գծեր, մինչդեռ համեմատաբար վաղ ավանդված թոխարական լեզուները և լիտվերենի հետ գրեթե միաժամանակ ավանդված ալբաներենը ենթարկվել են կառուցվածքային մեծ փոփոխությունների։ Բառապաշարում համեմատաբար քիչ օտար տարրեր ունեցող իտալյանի կողքին առկա են մեծ չափով օտար ազդեցության ենթարկված հայերենն ու ալբաներենը։ Քանի որ լեզուն մեկ միասնական համակարգ չէ, այլ գոյակցող համակարգերի ամբողջություն, ուստի տարբեր է նաև դրանց փոփոխականությունը։

Սուբյեկտիվ հանգամանքների մեջ պետք է նշել հնդեվրոպական լեզուների արխաիկ տարրերի և նորաբանությունների անբավարար տարբերակումը[12], առանձնացվող հատկանիշների՝ տարբեր լեզուներում ունեցած հաճախականության և կառուցվածքի մեջ խաղացած դերի անբավարար հաշվառումը։

դ) ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Հնդեվրոպական լեզվաբանության զարգացման արդի փուլի համար բնորոշ է հնդեվրոպական լեզուն ժամանակագրորեն շերտավորելու միտումը՝ ըստ սրա ընձեռած օբյեկտիվ տվյալների։ Այս նպատակն իրագործվում է առաջին հերթին հնդեվրոպական լեզուների ընդհանրությունների ոչ միայն տարածական-բարբառային, այլև ժամանակագրական բաշխման և վերականգնված ընդհանուր լեզվի կառուցվածքային միավորների տարբերակների համեմատության ու ներքին վերականգնման միջոցով։ Վաղուց ի վեր գիտնականների սեփականությունն է դարձել այն միտքը, որ ոչ բոլոր ընդհանուր երևույթները պետք է հասցնել հնդեվրոպական միասնության շրջանը, և որ այդ շրջանին հասցնելու դեպքում էլ պետք է տարբերել ժամանակագրականորեն հին և նոր երևույթներ։ Սրա հետ միասին հնդեվրոպական լեզվի նկատմամբ ներքին վերականգնման մեթոդի և հարաբերական ժամանակագրության սկզբունքի լայն կիրառումը հնարավորություն է տալիս որոշելու կառուցվածքի և բառապաշարի հին և նոր շերտեր, արխաիկ գծեր և նորաբանություններ։ Այս վերականգնումներին երբեմն օգնում են հնդեվրոպական և նրանց հետ հեռավոր ցեղակցություն ունեցող ոչ հնդեվրոպական լեզուների համեմատության տվյալները. այսպես, կոկորդայինների հիպոթեզը աջակցություն է գտնում հնդեվրոպա-սեմական, էրգատիվ կառուցվածքի վերականգնման դրույթը՝ հնդեվրոպա-խուռա-ուրարտական ցեղակցության վարկածի մեջ և այլն։ Իհարկե, առայժմ վաղ է խոսել բոլոր վերականգնումների ժամանակագրական որոշակի բաշխման և հնդեվրոպական լեզվի զարգացման որոշակի փուլերի առանձնացման մասին, բայց արդեն հնարավոր է նշել, որ հետազոտողները սովորաբար տարբերում են լեզուների տրոհմանը անմիջապես նախորդող և ավելի վաղ շրջաններ։ Եթե առայժմ մի կողմ թողնենք դրանք կապող (միջին) շրջանի վերականգնման հնարավորությունը, որ առայժմ չի իրականացած, ապա կարելի է վաղ հնդեվրոպական շրջանի լեզվավիճակը կոչել նախահնդեվրոպերեն, ուշ հնդեվրոպական շրջանինը՝ համահնդեվրոպերեն։ Խոսել հնդեվրոպական լեզվի արխաիկ տարրերի բացահայտման մասին՝ նշանակում է նկարագրել նախահնդեվրոպերենի վերականգնման փորձերի վիճակը։ Կանգ առնենք այդ փորձերի վրա [հմմտ. հատկապես **Szemerényi**, 1970. **Савченко**, 1974]։

Մի կողմից՝ հնդեվրոպական ձայնդարձի համակարգը, որտեղ երկար *ē, *ō, *ā ձայնավորներին ստորին աստիճանում համապատասխանում է *ə-ն, և հնարավորություն է ստեղծվում դրանց հարաբերությունը երկբարբառների օրինակով մեկնաբանելու *eə/ə ձևով (հմմտ. *ei/i), մյուս կողմից՝ խեթերենի հայտնագործումը, որտեղ հ.-ե. այլ լեզուների երկար ձայնավորներին երբեմն համապատասխանում են կարճ ձայնավոր + ḫ(ḫ) կապակցությունները, հնդեվրոպաբանների զգալի մասին հանգեցրին հ.-ե. լեզվի այնպիսի նախնական վիճակ ենթադրելուն, որտեղ եղել են կոկորդային բաղաձայններ։ Սակայն վիճելի են կոկորդայինների քանակի և բնույթի հարցերը։ Ենթադրվում է սովորաբար երեք (ըստ *ē, *ō, *ā ձայնավորների հետ հերթագայվելու՝ *ə$_1$, *ə$_2$, *ə$_3$ կամ, այլ նշանակմամբ, *H$_1$ *H$_2$, *H$_3$), երբեմն էլ մեկ, երկու, չորս և ավելի (մինչև տասը) կոկորդային։ «Կոկորդային» (լարինգալ) անվան տակ երբեմն հասկանում են նաև ետնալեզվային և ըմպանային (ֆարինգալ) հնչյուններ։ Մեկ «կոկորդային» ընդունողները այն գրում են սովորաբար որպես ḫ կամ ħ։ Ըստ կոկորդայինների տեսության՝ երկար ձայնավորներ ստացվել են ձայնավոր + կոկորդային կապակցություններից. կոկորդայինները դադարելով անկախ հնչյուններ լինելուց՝ նախորդ ձայնավորները երկարացրել են (ըստ ոմանց՝ նաև նոր երանգ հաղորդել), իսկ հաջորդ ձայնավորների քանակի (երկարության) վրա սովորաբար ազդեցություն չեն գործել։

Հնդեվրոպական պայթականներից շնչեղների շարքերը հաճախ մեկնաբանվում են որպես ձայնեղ + «կոկորդային» (*bh, *dh, *gh) և խուլ + «կոկորդային» (*ph, *th, *kh) շարքերի հետագա ձևափոխություններ, թեև վեճեր կան ընդհանրապես շնչեղների ինքնուրույն շարքեր լինելու, ինչպես նաև ձայնեղների և խուլերի հակադրության իսկական բնույթի մասին։

Ետնալեզվայինների երկու հակադրությունները,—շրթնայնացած-չշրթնայնացած (*g^{u}h, *g^{u}, *k$_{u}$: *gh, *g, *k) և քմայնացած-չքմայնացած (*g'h, *g', *k': *gh, *g, *k),—ոչ միայն վերագրվում են տարբեր տարածքների և մեկնաբանվում որպես բարբառային հատկանիշ, այլև հատկացվում ժամանակագրական տարբեր շերտերի. սովորաբար առաջնային է համարվում շրթնայնացած-չշրթնայնացած հակադրությունը, և այն վերագրվում է հնդեվրոպական լեզվի զարգացման վաղ շրջանին. քմայնացումը համարվում է սովորաբար ավելի ուշ ծագած, թեև կան քմայնացման երևույթի հընության տեսակետի կողմնակիցներ նույնպես։ Ինչպես որ «կոկորդայինների» հիպոթեզը աջակցություն է գտնում հնդեվրոպա-սեմական ցեղակցության հիպոթեզի և ապա նոստրատիկ լեզվաբանության կողմից, այնպես էլ հ.-ե. շրթնայնացած և քմայնացած ետնալեզվայինների համար փորձ է արվում ցույց տալու նոստրատիկ հիմքեր. թյուրքական լեզուներում հ.-ե. շրթնայնացածներին համապատասխանում են շրթնային, քմայնացածներին՝ առաջին շարքի ձայնավորներից առաջ գտնվող ետնալեզվայիններ [**Иллич-Свитыч**, 1964б, 22—26]։

---

[12] Թեև դրանց տարբերակման որոշ մեթոդներ կան. այսպես, օրինակ, հայտնի է, որ եզրային՝ իրարից հեռու բարբառների ընդհանուր գծերը սովորաբար հին են լինում։

Ինչպես հայտնի է, հ.-ե. լեզուն ունեցել է արմատական աճականների կարգը. սրանք որոշակի իմաստից զուրկ այն հնչյուններն են, որոնք հանդես են գալիս բուն արմատի վերջում (հմմտ. հայ. լպիր–ծ և լպիր–շ՝ լիրբ-ի կողքին, ոլոր–տ՝ ոլոր-ի կողքին և այլն)։ Նկատվել է, որ հ.-ե. վերջածանցների ձայնավորները ենթարկվում են կանոնավոր հերթագայության, մինչդեռ աճականները հերթագայումից ընդհանրապես զուրկ են։ Այստեղից ենթադրվում է, որ աճականները ծագել են նախքան հ.-ե. հերթագայությունների, հատկապես ձայնդարձի համակարգի առաջացումը։ Իսկ ինչպե՞ս է առաջացել ձայնդարձի համակարգը։ Ակնհայտ է, որ ձայնդարձի ստորին աստիճանը ոչ այլ ինչ է, եթե ոչ ձայնավորի կամ երկբարբառի թուլացում. այդպիսի թուլացումը սովորական է ուժային (ոչ տոնային-երաժշտական) շեշտի դեպքում, ուստի ենթադրվում է վաղ հնդեվրոպական շրջանի համար ուժային շեշտ, որ հետո փոխարինվել է բարձրության (տոնային-երաժըշտական) շեշտով։ Երկար և կարճ ձայնավորների հերթագայությունը (այսպես կոչված, քանակական ձայնդարձը) բացատրվում է ձայնավորների դիրքով (երկարացում հաջորդ վանկի կամ բաղաձայնի անկման հետևանքով), ձևաբանական պատճառներով և այլն։

Ենթադրելով ածանցների մեջ հերթագայություն և ըստ «կոկորդայինների» հիպոթեզի վերականգնելով մեկ նախնական ձայնավոր՝ e, է. Բենվենիստը գտնում է, որ այն փոխել է երանգը՝ զուգորդվելով նախորդող «կոկորդայինի» հետ և փոխել երանգն ու երկարել՝ զուգորդվելով հաջորդող «կոկորդայինի» հետ՝ ə$_1$e>e, ə$_2$e>a, ə$_3$e>o, eə$_1$>ē, eə$_2$>ā, eə$_3$>ō։ Համապատասխանաբար նա վերականգնում է բուն արմատի և ածանցի փոխհարաբերության երկու տիպ՝ 1) շեշտված ձայնավորով արմատ ու առանց ձայնավորի ածանց (*pét-r-) և 2 անշեշտ ու անձայնավոր արմատ և շեշտված *e ձայնավորով ածանց (*pt-ér-). սրանից առաջինը նա կոչում է հիմքի առաջին վիճակ, երկրորդը՝ երկրորդ վիճակ։ Ըստ Բենվենիստի՝ I վիճակը կարող է ունենալ միջադաս աճական (*i̯eu-g-s-), II վիճակը՝ ետադաս աճական (*i̯u-ne-g-) [**Benvenist**, 1935. **Бенвенист**, 1955]։ Բենվենիստի այս տեսությունը սկզբում լայն տարածում է գտնում, բայց հետագայում ենթարկվում է քննադատության՝ հայեցողականության և տիպաբանական քիչ հավանականության համար։ Էլ չենք խոսում այն մասին, որ «կոկորդայինների» հիպոթեզը նույնպես ընդհանուր ընդունելություն չի գտել։

Անվանական քերակարգերի և սրանց դրսևորման առանձնահատկությունների ուսումնասիրությունը ևս հնարավորություն է տալիս վերականգնելու ավելի նախնական վիճակի որոշ գծեր։

Այն հանգամանքը, որ ա) չեզոք սեռի ուղղականն ու հայցականը միշտ համընկնում են, բ) արական ու իգական սեռերի տարբերակումը հստակ չի անցկացվում (առկա են արականի ձև ունեցող իգական ու իգականի ձև ունեցող արական անուններ), և գ) խեթերենը չի տարբերում արականի ու իգականի ձևերը, գիտնականներին հիմք է տալիս վերականգնելու մի վիճակ, որ բնութագրվում է շնչավորի ու անշունչի կամ, ինչպես այժմ ավելի ճիշտ է համարվում, ակտիվի և պասիվի հակադրությամբ։ Սրա և որոշ այլ փաստերի հիման վրա նախահնդեվրոպական լեզվի համար ենթադրվում է էրգատիվ կառուցվածք, որի դեպքում անցողական բայերի ուղիղ խնդիրը և անանցողական բայերի ենթական ձևավորվում են միակերպ, իսկ անցողական բայերի ենթական ստանում է հատուկ հոլովական ձևավորում՝ էրգատիվ հոլով։ Հնդեվրոպական լեզվի հեռավոր ցեղակցության (նոստրատիկ տեսության) կողմնակիցները այս վիճակը տիպաբանորեն և նյութականորեն համեմատում են ուրարտական անունների ձևավորման հետ [**Джаукян**, *1963, 1967*]։

Հնդեվրոպական լեզուների անվանական հոլովման և թվակազմության առանձնահատկությունների, ինչպես նաև հատկապես խեթերենի համապատասխան փաստերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վերականգնելու մի վիճակ, երբ չի եղել թվային տարբերակում (նույն հոլովական վերջավորությունները հանդես են եկել և՛ եզակի, և՛ հոգնակի թվերում. հմմտ. խեթ. սեռականի վերջավորությունները), և հոլովների համակարգը բազմանդամ չի եղել։ Չեզոք սեռին պատկանող այսպես կոչված տարաձև (հետերոկլիտիկ) անունների հոլովման սկզբնական վիճակը բնութագրվել է արմատական *–r–ով և *–i–ով վերջացող եզակի ուղղական-հայցականի ու *–n–ով վերջացող հոլովական այլ հիմքերի հակադրությամբ։ Ուղիղ և թեք հոլովների սկզբնական հակադրությունը երևում է թեկուզ այն փաստից, որ սեռական հոլովի սկզբնական գործառությունների շրջանակը խիստ լայն է եղել՝ ցույց տալով ընդհանրապես սահմանափակ առումով մասնակցություն (հարաբերություն)։

Դերանվանական հոլովման առանձնահատկությունների ուսումնասիրությունը ևս բերում է այն եզրակացության, որ անձնական դերանունների բազմահոլով համակարգը համեմատաբար ուշ (ըստ ոմանց՝ առանձին լեզուների) ձեռքբերում է՝ անվանական հոլովման ազդեցության հետևանք, և որ սկզբնապես անձնական դերանունները ունեցել են միայն ուղղականի և թեք հոլովի հակադրություն։ Դժվար չէ կռահել, որ տարահիմք (սուպլետիվ) հոլովումը ձևավորվել է անկախ դերանունների և սրանց տարբերի զուգորդումով։ Պատահական չպետք է համարել, որ անձնական դերանունների առաջին դեմքի թեք հիմքը՝ *me-ն զուգահեռներ ունի նոստրատիկ այլ լեզուների համապատասխան դերանունների ուղղականի մեջ։ Ուշ ծագած է համարվում արևելյան տարածքում տարածված հոգնակի 1-ին դեմքի *mes ձևը, որ ներկայացնում է պարզապես *me-ի հոգնակին։

Սկզբնական ակտիվ-պասիվի դասա-սեռային հակադրությունը հատուկ է նաև ցուցական դերանունների որոշ տիպերի. այսպես, մերձավոր կամ արդեն հիշված առարկան ցույց տվող *so(s). *sā. *tod դերանվան արականն ու իգականը կազմված են միևնույն արմատական բաղաձայնից և հակադրվում են չեզոքին։

Հնդեվրոպական բայական համակարգի վերլուծությունը բացահայտում է մի այնպիսի վիճակ, որ ամենից առաջ բնութագրվում է կերպային, բայց ոչ ժամանակային տարբերություններով՝ տևական-անավարտ և անտևական-ավարտուն եզրերի հակադրությամբ. այս հակադրությունն էլ կամ ընդհանուր տարածում չի գտել, կամ խեթերենում շատ վաղ վերացել է: Հավանաբար սրանց կողքին գոյություն է ունեցել նաև կատարյալը (պերֆեկտը) սկզբնապես ոչ թե որպես գործողության թողած վիճակային հետևանքի, այլ ընդհանրապես որպես վիճակի արտահայտություն: Ժամանակային տարբերությունները հնդեվրոպերենում զարգացել են ավելի ուշ՝ մասամբ կերպի, մասամբ եղանակի (հմմտ. ապառնին) քերականարգերի հիման վրա: Վաղուց ի վեր հնդեվրոպական լեզվաբանության մեջ արտահայտված է այն կարծիքը, որ սիգմատիկ (*-s-ով) աորիստը ձևավորվել է ավելի ուշ, քան պարզը. ոմանք նույնիսկ գտնում են, որ սիգմատիկ աորիստը առանձին հնդեվրոպական լեզուներում ծագել է անկախաբար՝ միևնույն սիգմատիկ ածանցների բազայի վրա: Բուն պարզ աորիստի հնությունը հաստատվում է նրա վերջավորությունների բնույթով. ներկայի վերջավորությունները վերջում ունեն *i տարրը, աորիստը՝ ոչ, որ խոսում է աորիստի՝ հիշյալ հակադրության մեջ ոչ նշանակիր անդամ լինելու մասին: Հավանական է կարծել, որ աորիստի վերջավորություններն սկզբնապես հատուկ եղանակա-ժամանակային տարբերակում չեն ունեցել՝ արտահայտելով պարզապես գործողություն, որ, ինչպես ցույց է տալիս հնդիրանական ինյունկտիվ կոչված ձևակարգը, արտահայտում է ըստ իրադրության և կոնտեքստի մի կողմից՝ և՛ անցյալ, և՛ ապառնի, մյուս կողմից՝ և՛ ցանկություն, և՛ հորդոր: Կարելի է նշել, որ այս շրջանում եղել է միայն գործողություն և վիճակ (հատկապես հոգեվիճակ) արտահայտող աորիստի և կատարյալի (պերֆեկտի) տարբերակում: Այսպես կոչված միջին սեռի վերջավորությունների մի մասի համընկնումը կատարյալի (պերֆեկտի) վերջավորությունների հետ ցույց է տալիս, որ երկուսն էլ զարգացել են վիճակի նախնական քերականարգի բազայի վրա [Савченко, 327]: Բայի համակարգում գործողության և վիճակի սկզբնական հակադրությունը համապատասխանում է անվան համակարգում ակտիվի և պասիվի սկզբնական հակադրությանը:

Եղանակներից հրամայականը և սահմանականը նախնական են, ըղձականը և ստորադասականը զարգացել են համեմատաբար ավելի ուշ:

ե) ՑԵՂԱԿՑԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Հնդեվրոպական լեզուների ցեղակցության գաղափարի ձևավորման, հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ մտնող լեզուների տեղի որոշման, հնդեվրոպականից տարբեր լեզվաընտանիքների (ուրալյան, թյուրքական, սեմական և այլն) հավասարման և սահմանազատման հետ միասին աստիճանաբար զարգանում ու ձևավորվում է լեզվաընտանիքների հեռավոր ցեղակցության գաղափարը՝ անցնելով զարգացման երկու շրջան:

Հեռավոր ցեղակցության գաղափարի ձևավորման առաջին շրջանը, կարելի է ասել, սկսվում է Ֆ. Բոպպի ժամանակներից և տևում է մինչև XX դ. 20-ական թվականները: Այս շրջանի առաջին փուլում, որ տևում է մինչև XIX դ. 70-ական թվականները, դեռևս չկան մերձավոր և հեռավոր ցեղակցության սահմանազատման որոշակի չափանիշներ: Ֆ. Բոպպը, չունենալով մեթոդի ճշգրտություն և հնչյունական որոշակի օրինաչափությունների գոյության գաղափար, 1840-ական թվականներին հնդեվրոպական լեզվաընտանիքի անդամներ է որոնում նաև Կովկասի քարթվելական լեզուների, հատկապես վրացերենի մեջ: Երկրորդ փուլում, սկսած 1870-ական թվականներից մինչև XX դ. սկզբները, հնդեվրոպաբանության մեջ արմատավորվում են հետազոտության ավելի ճշգրիտ մեթոդներ, և կատարվում է հնդեվրոպական լեզվի գիտական սիստեմատիկ վերականգնում, բայց չկան համեմատվող մյուս լեզվախմբերի նախնական վիճակների (նախալեզուների) վերականգնման նույնչափ ճշգրիտ տվյալներ: Այդ պատճառով էլ միջընտանիքային համեմատությունները դեռևս չունեն անհրաժեշտ հավաստիություն: Շատ լեզվաբաններ համեմատություններ են կատարում ուրալյան և ալթայական, հնդեվրոպական և քարթվելական, հնդեվրոպական և սեմական, քարթվելական և սեմական, դրավիդյան և ուրալա-ալթայական լեզվախմբերի միջև և այլն: Առաջին շրջանի երրորդ փուլում, սկսած մեր դարի սկզբներից մինչև 20-ական թվականները, զույգ լեզվաընտանիքների ավելի ինտենսիվ ուսումնասիրությունների հետ միասին, հանդես են գալիս մի կողմից՝ Ա. Տրոմբետտիի և մյուս կողմից՝ Հ. Պեդերսենի ընդհանրացնող աշխատությունները: Սրանցից առաջինը, ձգտելով ապացուցել աշխարհի լեզուների ծագման միասնությունը, հարուստ տվյալներ է բերում նաև իրոք հեռավոր ցեղակցության մեջ գտնվող լեզվաընտանիքների բառային (հատկապես դերանունների, թվականների), բառակազմական, ձևաբանական և շարահյուսական ընդհանրությունների վերաբերյալ: Մոտավորապես նույն ժամանակներին պատկանող իր աշխատություններում հայտնի հնդեվրոպաբան Հ. Պեդերսենը որոշակիորեն ձևակերպում է այն միտքը, որ գոյություն է ունեցել հեռավոր ցեղակցության մեջ գտնվող հնդեվրոպական, ուրալա-ալթայական և սեմաքամական լեզուների սկզբնական ցեղակցական ընդհանրություն, որ նա կոչում է «նոստրատիկ»:

Երկրորդ շրջանը կապված է առաջին հերթին հնդեվրոպականի հետ հեռավոր ցեղակցությամբ առնչվող ընտանիքների սկզբնական վիճակների (նախալեզուների) վերականգնման բնագավառում ձեռք բերված գիտական մեծ առաջընթացի հետ: Մեր դարի 20—30-ական թվականներին մեծ առաջադիմություն է նկատվում ուրալյան, սեմա-քամական, դրավիդյան, 20—50-ական թվականներին՝ ալթայական, վերջին տասնամյակներում՝ քարթվելական լեզուների համեմատական ուսումնասիրության մեջ, որ հիմք է տալիս հնդեվրոպական, ուրալյան, սեմա-քամական, դրավիդյան, ալթայական, քարթվելական նախալեզուների (և ոչ առանձին լեզուների) համեմատության համար, մանավանդ որ նոր քայլեր է անում նաև հնդեվրոպական տարածքային (արեալային) լեզվաբանությունը, և սրա մեթոդներն սկսում են կիրառվել ալթայական ու այլ լեզուների ուսումնասիրության բնագավառում: Բացի այս լեզուներից, խոսվում է նաև խուռա-ուրարտական (Գ. Ջահուկյան), չուկոտակամչատկյան (Ա. Բ. Դոլգոպոլսկի) և որոշ այլ ընտանիքների՝ նոստրատիկ ընդհանրությանը պատկանելու մասին: Մոտավորապես XX դ. 60-ական թվականների կեսերից սկսվում է նոր շրջանի երկրորդ փուլը, երբ փորձ է արվում ի մի բերելու կատարված ուսումնասիրությունների արդյունքները, հաստատելու նոստրատիկ լեզուների՝ համեմատվող քերականական և բառային միավորների միջև որոշակի հնչյունական համապատասխանություններ, վերականգնելու նոստրատիկ լեզուների հնչյունական և քերականական կառուցվածքները, կատարելու այդ լեզուների համեմատական բառարան կազմելու փորձ։ Այս բնագավառում պետք է նշել առաջին հերթին Վ. Մ. Իլլիչ-Սվիտիչի աշխատությունները, մանավանդ նրա «Նոստրատիկ լեզուների համեմատության փորձը» [Иллич-Свитыч, 1971—1976]։ Այս աշխատության մեջ, ցավոք սրտի, տեղ են գտել միայն վեց ընտանիքների (սեմա-քամական, քարթվելական, հնդեվրոպական, ուրալյան, դրավիդյան, ալթայական) լեզուների վերաբերյալ տվյալներ. հեղինակի վաղաժամ մահը զրկեց նրան խուռա-ուրարտական և այլ լեզվաընտանիքների նյութը օգտագործելուց, թեև նա այդ մտադրությունն ուներ։ Իլիչ-Սվիտիչի աշխատանքը շարունակվում, լրացվում, ճշգրտվում է ուրիշ գիտնականների կողմից։

Իլիչ-Սվիտիչի աշխատության հրատարակված երկու հատորները պարունակում են նոստրատիկ լեզվի համար վերականգնված բառային և քերականական 353 միավոր։ Դրանց մեծ մասը (276 միավոր) արտացոլված է հնդեվրոպական լեզուներում, ընդ որում կասկածելի կամ առանձին լեզուների փաստերի վրա հիմնված միավորների թիվը միայն երկու տասնյակ է։ Նոստրատիկ լեզվի վերականգնված ձևերն ընդգրկում են դերանուններ և դերանվանական ածանցներ, քերականական և բառակազմական միավորներ, մարմնի մասերի, մարդու տարիքի և ազգակցության, անկենդան բնության, կենդանական և բուսական աշխարհների, տարածական հարաբերությունների անվանումներ, բայեր, ածականներ։ Այսպիսով, առկա է այն բոլորը, որ հարկավոր է լեզվին իբրև այդպիսին հանդես գալու համար։

Եթե նույնիսկ նոստրատիկ վերականգնումները ոչ թե սկզբնական նոստրատիկ լեզվի փաստեր են, այլ քննվող լեզուների հնագույն շփումների վկայություններ, ապա, այնուհանդերձ, նրանք կազմում են համեմատվող լեզվախմբերի բառային և քերականական միավորների հնագույն շերտերը։ Այս առումով խոսել հնդեվրոպական լեզվի և, սրա հետ կապված, հայերենի նոստրատիկ շերտի մասին, նշանակում է առանձնացնել նրա բառապաշարի ժամանակագրականորեն ամենից ավելի հին շերտը։ Ստորև կբերենք նոստրատիկ ծագման համեմատաբար հավաստի հնդեվրոպական որոշ քերականական մասնիկներ և բառարմատներ, որոնք արտացոլված են նաև հայերենում։

1. **Քերականական կազմիչներ.** հ.-ե. եզակի հայցականի *-m վերջավորություն, որ պահպանված է հայերեն որոշ բառերի -ն վերջածայնում՝ ձեռ-ն, ոտ-ն և այլն (նոստր. *-mA—նշանակիր ուղիղ խնդրի կազմիչ). հ.-ե. անունների թեք ձևի *-(e)n կազմիչ, որ պահպանված է հայերեն որոշ բառերի եզ. գործիականում և հոգնակի հոլովներում՝ բարձր—բարձամբ (<*բարձան-բ)—բարձանց, մանր—մանումբ—մանունց և այլն (նոստր. *-n—անունների և դերանունների թեք հոլովների կազմիչ). հ.-ե. ածականակերտ *-i(i̯)o- ածանց (ածականների հաճախակի գոյականացմամբ), որ պահպանվել է հայերեն մի շարք բառերի -ի վերջածայնում՝ բար-ի, կող-ի (բուց. «կողային») և այլն (նոստր. *-jʌ ածականակերտ ածանց). հ.-ե. ածականակերտ *-l- ածանց, որ հայերենում ստացել է դերբայական ածանցի արժեք՝ բերե-լ բերեա-լ և այլն (նոստր. *-lʌ —ածականակերտ ածանց). հ.-ե. անվանակերտ *-mo- ածանց>հայ -մ վերջածայն որ-մ, ջեր-մ և այլ բառերում (նոստր. *mA—անվանակերտ ածանց). գերմ. անցյալ ժամանակի -t—կազմիչ, որ թերևս (ըստ Աճառյանի) զուգահեռ ունի հայ. անցյալ անկատարի -յ-ի մեջ (գնա-յ-ի) (նոստր. *-di—անցյալ ժամանակի կազմիչ). հ.-ե. կրկնական-սաստկական բայերի *-sk—կազմիչ>հայ. անցյալ կատարյալի և ապառնու -ց- (նոստր. *-C'i—հաճախական և կրկնական բայերի կազմիչ) և այլն։

2. **Դերանուններ և դերանվանական ու սպասարկու մասնիկներ.** հ.-ե. *me- (1-ին դեմքի անձն. դերան. թեք հոլ. հիմք)> հայ ի-մ, ի-ն-ձ, ի(-)ս (նոստր. *-mi «ես»), հ.-ե. *me-s «մենք»>հայ. մեք (նոստր. *mä «մենք ձեզ հետ միասին» (inclus.). հ.-ե. *(e)no-/(o)no- (ցուց. դերան.՝ հեռավոր առարկայի համար)> հայ. նա, այ-ն, -ն, նո-յն, ա-ն-դ (նոստր. *NA). հ.-ե. *al- (դերանվանական արմատ, որտեղից *al-i̯o->հայ. այլ (նոստր. *ʕal'ʌ). հ.-ե. *kʷe (շաղկապական («և») և անորոշ-սաստկական մասնիկ) > հայ. -ք (ո-ք), -չ (ին-չ) (նոստր. *ḳ(o)). հ.-ե. *kʷo- «ով» (*kʷi- «ինչ», *kʷu- —մկր. հիմք և այլն)> հայ. ո(վ) (այլև ո-մն, ո-ք, ո-ր, ի-նչ, ի-մն, ի-ք, քան, ուր) (նոստր. Ḳo). հ.-ե. *mē «մի՛» հայ. մի՛ (նոստր. *mä) և այլն։

3. **Գոյականներ.** (1) ֆիզիկական աշխարհ. հ.-ե. *amer-/āmōr «օր» > հայ. աւր, սեռ. աւուր (նոստր. *ʔamu «առավոտ, օրվա լույս»), հ.-ե. *āt-(e)r- «կրակ»> հայ. այրեմ, (նոստր. *qoṭl «վառել կրակ»). հ.-ե. *ker- «ժայռ, քար»> հայ. քար (նոստր. *Ḳarʌ). հ.-ե. *k'er- «եղյամ, սառույց» >հայ. սառն (նոստր. *Ḳirʌ «եղյամ»). հ.-ե. *mer- «կեղտոտ, մթին»> հայ. մառախուղ, մառն (մայր «խավար»), մռայլ (նոստր. *mArʌ «բիծ, կեղտոտ»). (2) մարդկություն, հասակ, ազգակցություն. հ.-ե. gʷen- «կին»> հայ. կին (նոստր. *küni-). հ.-ե. *g'(ь)lōu «ամուսնու քույր, տալ»> հայ. տալ (նոստր. *kälU «խնամակցուհի»). հ.-ե. *(ə)ner- «տղամարդ, կենսական ուժ»> հայ. այր, սեռ. առն և այլն (նոստր. NaJRʌ). (3) կենդանիներ. հ.-ե. *b(h)lou, *plou- «լու»> հայ. լու (նոստր. *purcʌ(gʌ)/pulcʌ(gʌ)). հ.-ե. *el-en- «եղնիկ, եղջերու» >հայ. եղն (նոստր. *ʔili). հ.-ե. *ers-, *ṛsen- «արու, որձ»> հայ. առն «արու ոչխար» (նոստր. *Herä «արու կենդանի»). հ.-ե. *ger- «կռունկ»> հայ. կռունկ (նոստր. *karʌ/kurʌ). հ.-ե. *g'hdu- (*dhg'hū?) «ձուկ»> հայ. ձուկն (նոստր. *diga). հ.-ե. *k'u̯on- «շուն»> հայ. շուն, թերևս նաև սկունդ (նոստր. ḲüjnA «գայլ, շուն»). հ.-ե. *mel- «մեղու»> հայ. մեղր, մեղու (նոստր. *majλʌ) և այլն. (4) մարմնի մասեր, հ.-ե. *dud- «վերջավորություն»> հայ. տուտն, տտուն (նոստր. *duλʌ). հ.-ե. *g'enu- «ծունկ»> հայ. ծունկ, ծունր (նոստր. *?küjñA). հ.-ե. *g'hes- «ձեռք» (*g'hes-to-, *ghes(o)r-)>հայ. ձեռն. (նոստր. *gäti), հ.-ե. *k'er- «մարմնի վերնամաս, գագաթ, եղջյուր»> հայ. սար (նոստր. *ḲErʌ). հ.-ե. *k'erd- «սիրտ» (*kērdi-)> հայ. սիրտ (նոստր. *ḲErdʌ). հ.-ե. *krep- «մարմին, կերպարանք» (*krop-)> հայ. որովայն[13] [նոստր. Ḳarb(ɪ)]. հ.-ե. *lek- «մարմնի անդամ, վերջավորություն»> հայ. բրբռ. լոք «մեծ քայլ» [նոստր. *ɫ/a/Ka «ոտք (crus)»]. հ.-ե. *lēp-/lōp-/ləp- հարթ. ափ» (*lōph-, *ləph-)> հայ. բրբռ. լուփ, լափ «ափ, բուռ» (նոստր. ɫapʌ). հ.-ե. *mēms- «միս»> հայ. միս (նոստր. *Homsa). հ.-ե. *okʷ «տեսնել, աչք»> հայ. ակն (նոստր. *HuKʌ) և այլն. (8) բուսականություն. հ.-ե.

---

[13] Ըստ ոմանց՝ *oreu-«աղիք», ըստ ուրիշների՝ *prep- «աչքի ընկնել. երևույթ, կերպարանք» արմատներից (վերջին ստուգաբանությունն ընդհանրապես անհավանական է)։

*k'el- «ցողուն, ծղոտ»> հայ. սաղարթ (նոստր. *Ḳila-). հ.-ե. *mor- «մոշ, թութ»>հայ. մոր, մորի, մորենի, թերևս նաև մոշ (*մորշ <*mors-?) (նոստր. *marja «հատապտուղ»). հ.-ե. *os-k- «հացի»>հայ. հացի (նոստր? *Hosʌ) և այլն.(18) ձայնարձակում, խոսք. հ.-ե. *nom- «անուն» (*onō-mno-)> հայ. անուն, սեռ. անուան (նոստր. *nimi) և այլն։

4. Ածականներ՝ հ.-ե. *ak'- «սուր»> հայ. ասեղն (նոստր. *HoḲi «սուր ծայր, սայր»). հ.-ե. *bher- «լավ, մեծ» (ըստ Իլլիչ-Սվիտիչի, որ տարբերում է *bher- «տանել, բերել» արմատից) > հայ. բարի, բարւոք նոստր. *bara- «մեծ, լավ»). հ.-ե. *bherg'h- «բարձր» > հայ. բարձր, բերձ [նոստր. *berg(i)]. հ.-ե. *dei- «մեծ (?)»(<«շողալ»)> հայ. տի (տի-եզերք, տի-կին, *տի-այր> տէր) (նոստր. *did «մեծ»)[14]. հ.-ե. *k'en- «դատարկ, սին»> հայ. սին (նոստր. *KEñU «դատարկ, թեթև») և այլն։

5. Բայեր՝ հ.-ե. *as- «վառ(վ)ել» (*azg'h-, *a(z)gi̯o-?)> ազազիմ, ա-ճիւն (նոստր. *ʔaSa «կրակ»). հ.-ե. *bher- «տանել, բերել»> բերեմ (նոստր. *bari). հ.-ե. *bher- «ծակել, կտրել, փորել»> հայ. բիր, բրեմ, այլև բերան (նոստր. *bura «ծակել»). հ.-ե. *bheu- «աճել»> հայ. բոյս, բուսանիմ (նոստր. *buHi «աճել, ծագել»). հ.-ե. *dheu- «գիտակցությունը կորցնել, մեռնել»> հայ. դի (նոստր. *dʌwʌ «հիվանդանալ, մեռնել»). հ.-ե. *dheu- «փչել, սասանել, տատանել»> հայ. դեդևիմ (նոստր. *dEwHi). հ.-ե. *dhē- «դնել»> հայ. դնեմ, աոր. ե-դի, հրամ. դի՛-ր (նոստր. *dʌʔʌ). հ.-ե. *ed- «ուտել»> հայ. ուտեմ (նոստր. *ʔitä). հ.-ե. *ei- «գնալ»> հայ. էջ, իջանեմ (նոստր. *ʔejʌ). հ.-ե. *er- «շարժ(վ)ել, բարձրացնել, բարձրանալ»> հայ. յառնեմ, յորդորեմ, այլև արմ(ատ) (նոստր. *Horä «բարձրանալ»). հ. ե. *ēs- «նստել». *es- «լինել» (*es-mi)> հայ. եմ (նոստր. *ʔesA «նստակյաց դառնալ, տեղում լինել»). հ.-ե. *gem- «բռնել, սեղմել» >հայ. ճմլեմ, բրբռ. ճմռել (նոստր. *kamu-). հ.-ե. *g'en- «ճանաչել»> ճանաչեմ (*ծանաչեմ), աոր. ծանեայ, այլև ծանաւթ (նոստր. *KENʌ). հ.-ե. *gᵘei- «ապրել»> հայ. կեամ, կեանք (նոստր. *kolHa «պարարտ, առողջ»). հ.-ե. *gᵘer-, *ger- «կլանել, կոկորդ»>հայ. աոր. կեր-ի (եկեր), կեր, կերակուր. կոկորդ (նոստր. *gUrʌ). հ.-ե. *ker- «վառ(վ)ել» (*khr̥-s-)> խարշեմ (նոստր. Ḳarʌ). հ.-ե. *kᵘel- «պտտ(վ)ել> հայ. ճոլ, ճոլովեմ (նոստր. *ḳol'ʌ «կլոր»). հ.-ե. *kᵘem- «կլանել, խպշտել»>հայ. քիմ-ք (նոստր. *ḲUmv). հ.-ե. *lak- «լիզել, լակել»> հայ. լակեմ (նոստր. *laḳʌ). հ.-ե. *lem- «ջարդել, մանրել, կակուղ, փափուկ»> հայ. լմեմ, լմլմեմ «ճմռել, կակղացնել» (նոստր. *l'ama «տրորել, կակղացնել»). հ.-ե. *med- «չափել, կշռադատել»> հայ. միտ-ք (նոստր. *metʌ «զգալ, գիտակցել»). հ.-ե. *mel- «մանրել, փշրել, աղալ»> հայ. մալեմ, այլև մուլ- (մլ-աղաց), մեղմ, մեղկ, բրբռ. մղմեղ, մղմող «ցեց» (նոստր. *moLʌ). հ.-ե. *men- «մտածել»> հայ. ի-մանամ? (նոստր. manu). հ.-ե. *men- «մնալ»> հայ. մնամ (նոստր. *mʌnʌ «տեղում մնալ, ամուր կանգնել»). հ.-ե. *mer- «մեռնել»>հայ. մեռանիմ (նոստր. *(ä)rʌ «հիվանդանալ, մեռնել»). հ.-ե. *(s)kel- «ճեղքել»> հայ. ցելում, ցեղ (նոստր. *calu). հ.-ե. *(s)keu- «նայել» >հայ. ցոյց, ցուցանեմ (նոստր. *ćUHʌ) և այլն։

---

[14] Իլլիչ-Սվիտիչը տալիս է միայն բալթիական ձևերը՝ չիմանալով հայերենի մասին։

3. ՀՆԴԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԸ

ա) ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

Այն հարցը, թե որտեղ էին ապրում հնդեվրոպացիները՝ վերականգնվող հնդեվրոպական լեզվով խոսող ցեղերը, նախքան ինտենսիվ տրոհման ժամանակները, գիտության զարգացման տարբեր շրջաններում տարբեր լուծում է ստացել։ XIX դարի առաջին կեսին տարածված էր այն կարծիքը, որ հնդեվրոպացիների «նախահայրենիքը» գտնվել է Ասիայում։ Տարակարծություն էր հարուցում միայն այն հարցը, թե Ասիայի հատկապես ո՛ր մասում է այն եղել։ Եթե մի կողմ թողնենք Հնդկաստանում կամ Մարաստանի, Հայաստանի և Վրաստանի տերիտորիայում տեղադրելու սկզբնական փորձերը, կարելի է նշել, որ շուտով գրեթե ընդհանուր ընդունելություն է գտնում հնդեվրոպացիների «նախահայրենիքի»՝ կենտրոնական Ասիայում գտնվելու կարծիքը (ըստ Պոտտի՝ Հիմալայների հյուսիսային լանջերից մինչև Կասպից ծովն ընկած վայրերում), որ կողմնակիցներ է ունենում նաև ավելի ուշ՝ XIX դ. II կեսին, հատկապես Ա. Պիկտեի և Մ. Մյուլլերի աշխատություններում [**Pictet**, 1859—1863. **Müller**, 1861]։

XIX դ. երկրորդ կեսին, հատկապես Ռ. Լաթամի «Համեմատական բանասիրության տարրերը» գրքից [**Latham**, 1862] հետո աստիճանաբար կողմնակիցներ է նվաճում և վերջիվերջո լայն ընդունելություն գտնում այն կարծիքը, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը պետք է փնտրել Եվրոպայում։ Սրա համար ոչ միայն լեզվաբանական ապացույցներ են բերվում (ֆիզիկական աշխարհի և բնական պայմանների, բույսերի և կենդանիների անվանումների վերլուծությունը, արիացիների և սլավոնների մերձավոր կապերի բացահայտումը[15], այլև նշվում են հնդեվրոպական ժողովուրդների սկզբնական ավանդությունները, նրանց վերաբերյալ մարդաբանական և հնագիտական տվյալները։ Այս դեպքում ևս որոշ տարակարծությունների տեղիք է տալիս այն հարցը, թե Եվրոպայի հատկապես ո՛ր մասը պետք է համարել հնդեվրոպացիների «նախահայրենիքը»։ Եթե այս դեպքում ևս մի կողմ թողնենք ծայրահեղությունները ու սկզբնական որոնումները, ապա կարելի է ասել, որ վերջիվերջո ընդհանուր տարածում է գտնում այն տեսակետը, որ հնդեվրոպացիների սկզբնական բնակավայրը («նախահայրենիքը») պետք է որոնել հարավ-արևելյան Եվրոպայում, հատկապես Բալթիկ և Սև ծովերի միջև ընկած տարածությունում։ Ոմանք այս տարածությունն ընդլայնում են՝ ներառելով Միջին (կենտրոնական) Եվրոպան, ուրիշներն ընդգրկում են նույնիսկ մինչև Ուրալյան լեռներն ընկած տարածությունը։ Հնագիտական առումով գրեթե ընդհանուր միտում է նկատվում հնդեվրոպացիներին համարել մարտական տապարի և թելային կերամիկայի մշակույթի կրողներ[16], նրանց մշակույթը հատկացնել հյուսիսային նոր քարի դարի շրջանին։ Որոշ հետազոտողներ, հատկապես Չայլդը, անիվավոր կառքը (սայլը) համարում են հնդեվրոպական հայտնագործություն, թեև այս դեպքում էլ հարկ է լինում որոշել, թե մետաղագործության անծանոթ հնդեվրոպացիներն ինչպե՞ս էին կարողանում այն սարքել, և ի՞նչ կենդանիներ էին լծում (եզնե՞ր, որ ոմանք ավելի հավանական են համարում, թե՞ ձիեր)։ Հատկանշական է, որ կառքի անվանումը ընդհանուր հնդեվրոպական չէ, այլ տարբեր խմբերում ներկայացված է տարբեր ձևով [հմմտ. **Porzig**, 1954, 183. **Виноградов**, 1969, 21][17]։ Մ. Գիմբուտասը իր աշխատություններում [**Gimbutas**, 1968, 1973 և այլն] հնդեվրոպացիների համար բնորոշ է համարում, այսպես կոչված, դամբանաթմբային (կուրգանային) թաղումը։

---

[15] Տեղանունների և մասնավորապես գետանունների ուսումնասիրությունը բացահայտում է հնդեվրոպական հին շերտ։ Վերականգնված բառապաշարը ցույց է տալիս բնական այդ գոտու համար բնորոշ կլիմա (ձյան և ձմռան հասկացություններով), բուսականություն («կաղնի», «հացի», «փեկոն», «ցարասի» կամ «կեչի», «ուռենի»), կենդանական աշխարհ («արջ», «գայլ», «աղվես», «եղջերու») և այլն։

[16] Հետաքրքրական է սակայն, որ տապարի (կացնի) համար չկա ընդհանուր հ.-ե. անվանում (կան տարածքային տարբերություններ)։

1970-ական թվականների սկզբներից Թ. Վ. Գամկրելիձեն և Վ. Վ. Իվանովը [**Гамкрелидзе-Иванов**, 1972, 1981] նորից առաջ են քաշում Չ. Ցայտից եկող այն տեսակետը, որ հնդեվրոպացիների «նախահայրենիքը» պետք է տեղադրել Առաջավոր Ասիայում, հատկապես Հայկական բարձրավանդակում (արևելյան Անատոլիայում, Հարավային Կովկասում) և Հյուսիսային Իրանում, որտեղից նրանք տարածվել են իրենց հետագա բնակության վայրերը։ Այս տեսակետն ապացուցելու համար նրանք նկատի են առնում՝ 1) հնդեվրոպական և հինարևելյան մշակույթների կապը, 2) այնպիսի կենդանիների և բույսերի անունների առկայությունը, որոնք տարածված չեն հյուսիսում («առյուծ-ինձ», «վարդ», «որթ», «խաղող», «գինի», «բրինձ»), 3) շփումը հին արևելքի երկրների հետ և սեմական ու այլ լեզուներից կատարված փոխառությունները, 4) հնդեվրոպացիների՝ անիվավոր կառքեր ունենալը, որ կապված է առաջավոր Ասիայում մետաղի մշակության հետ և խոսում է հնդեվրոպական նախահայրենիքի՝ կուր-արաքսյան մշակույթի շրջանի հետ համընկնելու մասին (հմմտ. Լճաշենի մարտակառքի տիպը), 5) հին գրավոր հ.-ե. ժողովուրդների՝ խեթերի, հույների, արիացիների՝ նշված տարածքին համեմատաբար մոտ լինելը, 6) անատոլիական հիդրոնիմիայի (ջրանունների) հ.-ե. բնույթը և այլն։ Ենթադրվում է, որ հայերը գրեթե տեղաշարժ չեն կատարել, խեթերը, հույները, արիացիները համեմատաբար փոքր տեղաշարժ են կատարել, արևմտյան լեզուների սկզբնական տարածքը եղել է հյուսիսսևծովյան շրջանը։

Դժբախտաբար, այս վարկածը ունի նույնքան (եթե ոչ ավելի ուժեղ) հակառակ փաստեր՝ հին կենդանիների և բույսերի նշված անունների ընդհանուր հնդեվրոպական չլինելը, հայկական բարձրավանդակի տեղանունների ակնհայտ ոչ բուն հնդեվրոպական բնույթը, նշված փոխառությունների կասկածելիությունը և այլն։

Նախքան Գամկրելիձեի և Իվանովի վարկածի հանդես գալը, 1964 թ. ավարտված և 1967 թ. լույս տեսած մեր «Очерки по истории дописьменного периода армянского языка» գրքում հնդեվրոպացիների «նախահայրենիքը» որոշելու հարցի լուծման համար կարևոր էր համարվում հետևյալ երեք հանգամանքի հաշվառումը (էջ 38—39)։

---

[17] Հնդեվրոպացիների «նախահայրենիքի» մասին 1892—1963 թթ. հայտնված կարծիքները ամփոփված են Ա. Շերերի հրատարակած „Die Urheimat der Indogermanen" հոդվածների ժողովածուում (Darmstadt, 1968)։ Հարցի պատմության մասին տե՛ս նաև **Виноградов**, 1969 և **Mallory**, 1973։

1. Հնդեվրոպացիների զբաղեցրած տարածության մասին խոսելիս չի կարելի նկատի չունենալ, որ այն պետք է փոփոխված լինի։ Հնդեվրոպական ցեղերի՝ մ. թ. ա. V հազարամյակի զբաղեցրած տարածությունը, եթե նույնիսկ նրանք տեղափոխված չլինեն, չէր կարող համընկնել III հազարամյակում զբաղեցրած տարածության հետ։ Մասնավորապես պետք է նկատի առնել, որ հնդեվրոպական առանձին լեզուների կրողների՝ հնդեվրոպական ընդհանրությունից առանձնանալու պրոցեսը պետք է երկարատև եղած լինի։

2. Հայտնի է, որ ինտենսիվ տրոհման նախօրյակին՝ միասնության շրջանի վերջերին, հնդեվրոպացիների կյանքում սկսել էր կարևոր դեր խաղալ երկրագործությունը, սակայն տնտեսության գերակշռող ճյուղը շարունակում էր մնալ անասնապահությունը, դեռևս մեծ դեր էին խաղում որսորդությունը և ձկնորսությունը։ Ավելի վաղ, երբ հնդեվրոպացիների տնտեսության ճյուղերը հիմնականում անասնապահությունը և որսորդությունն էին, նրանք պետք է առանձնապես շարժական լինեին։ Հասկանալի է, որ խոսելով «նախահայրենիքի» մասին, նկատի է առնվում նրանց բնակավայրը ընդհանրության շրջանի վերջերին։ Ավելի վաղ նրանք կարող էին գտնված լինել այլ վայրերում։

3. Հնդեվրոպացիների ցեղակցական կապերը սեմիտների, այլև քարթվելական, թյուրքական ժողովուրդների հետ, այդ կապերը ժխտելու դեպքում էլ նրանց միջև նախնական շփումների ու փոխառությունների ժխտման անհնարինությունը, ենթադրել են տալիս, որ «հնդեվրոպացիները մի ժամանակ բնակվել են այն տերիտորիայում, որ սահմանակից է եղել սեմական ցեղերի կողմից բնակեցված տարածությանը»։

Իբրև ընդհանուր եզրակացություն կարելի է ասել, որ մենք գործ ունենք հնդեվրոպացիների բնակության երկու հնարավոր վայրերի՝ 1) նախնական, երբ նրանք նոր էին բաժանվել նոստրատիկ ընդհանրությունից կամ, եթե նոստրատիկ վարկածը ժխտվում է, շփման մեջ էին սեմական, քարթվելական և այլ ժողովուրդների հետ, և 2) ավելի ուշ, երբ նրանք գտնվում էին ինտենսիվ տրոհման՝ հնդեվրոպական ժողովուրդների առանձնացման նախօրյակին։ Առաջին շրջանի համար հավանական է հնդեվրոպացիների՝ Ասիայում գտնվելու, երկրորդ դեպքում՝ Եվրոպայում գտնվելու վարկածը։ Դժվարություն է հարուցում միայն այն հարցը, թե հայերը, խեթերը, արիացիները բաժանվել են արդյոք հենց Ասիայում եղած ժամանակ և Եվրոպայում ընդհանրապես չեն եղել, թե նրանք (հատկապես հայերն ու արիացիները) եղել են Եվրոպայում, ապա վերադարձել Ասիա, ընդ որում հայերը՝ հենց իրենց բնակության սկզբնական վայրերը։

Վերջին ժամանակներս տարբեր հետազոտողների կողմից զարգացվում է այն միտքը, որ հնդեվրոպացիները Եվրոպայի հին բնակիչներ չեն։ Այսպես, Մ. Գիմբուտասը [**Gimbutas**, 1973] տարբերում է «Հին Եվրոպան» իր քաղաքակրթությամբ «Հնդեվրոպական Եվրոպայից». հին եվրոպական քաղաքակրթության շրջանը նա հատկացնում է մ. թ. ա. 7000—3500 թթ., հնդեվրոպականը՝ մ. թ. ա. 3500 թ. հետո ընկած ժամանակաշրջանին։ Գիմբուտասը փորձում է գծել հին Եվրոպայի քաղաքակրթության զարգացման փուլերը և նույնիսկ գրություն ունենալու հնարավոր փաստը՝ բերելով մի շարք նշաններ։ Հնդեվրոպացիների մուտքը նա կապում է, ինչպես նշվել է, այսպես կոչված, դամբանաթմբերի (կուրգանների) և դամբանաթմբային թաղման հետ։

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ տարածված կարծիքով հնդեվրոպական միասնության շրջանը համընկնում է հետսառցային ատլանտյան կլիմայի շրջանի հետ, երբ կլիման ավելի տաք և խոնավ է եղել Եվրոպայում, քան հիմա։

բ) ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Հնդեվրոպական միասնության ժամանակի մասին խոսելիս հարկավոր է նկատի առնել երկու հանգամանք. նախ՝ հնդեվրոպացիների միասնական գոյության շրջանը պիտի բավական երկարատև եղած լինի, և, հետևաբար, առաջին հերթին այստեղ նկատի է առնվում այն ժամանակը, որ անմիջապես նախորդել է հնդեվրոպական ժողովուրդների ինտենսիվ առանձնացման կամ, որ նույնն է, հնդեվրոպական միասնության ինտենսիվ տրոհման շրջանին. երկրորդ՝ ինտենսիվ տրոհման շրջանն էլ չպետք է շատ կարճատև եղած լինի. ակնհայտ է, որ հնդեվրոպական ժողովուրդների առանձնացումը եղել է տևական պրոցես, և որ այդ ժողովուրդներն առանձնացել են ոչ միանգամից։ Եթե նույնիսկ հարցը կոնկրետացնենք և խոսենք այն ժամանակի մասին, որ անմիջապես նախորդել է առաջին ժողովրդի (խեթա-լուվացիների նախնիների՞) առանձնացմանը, ապա չի կարելի վստահ լինել, որ դրանից առաջ՝ հետագայում անհետացած ուրիշ լեզու չի առանձնացել։ Էլ չենք խոսում այն մասին, որ առանձնացման հաջորդականության հարցը չի կարելի լիովին լուծված համարել, մանավանդ, որ բարբառային տարածքների տարբերակվածությունը արդեն ինքնին վկայում էր նրանց սկզբնական առանձնացվածության մասին։ Իհարկե, փաստերի զուգադրության հիման վրա կարելի է խոսել ժամանակագրական որոշակի շերտերի մասին, որոշել ինչպես հին, այնպես էլ առանձնացումից հետո առաջացած երևույթները, բացահայտել բարբառային որոշակի առանձնահատկությունները։

Երկար ժամանակ ընդունված էր այն կարծիքը, որ հնդեվրոպացիների ինտենսիվ տրոհման շրջանն ընկնում է մ. թ. ա. III հազարամյակի կեսերին։ Սակայն այս կարծիքը կարելի է ընդունել խիստ վերապահորեն՝ միայն որոշ լեզուների համար և ակնհայտ համարել հնդեվրոպական ուրիշ՝ ավելի վաղ առանձնացած լեզուների գոյությունը։ Հնդեվրոպաբանության զարգացման արդի փուլում կասկած չի հարուցում, որ մ. թ. ա. III հազարամյակում հնդեվրոպական մի շարք լեզուներ, այդ թվում՝ հատկապես խեթա-լուվականը, արիականը, հայկականը, հունականը առանձնացած են եղել։ Ի՞նչ կարգի փաստեր կան այս տեսակետը ապացուցելու համար։ Այդ փաստերը հիմնականում լեզվական են, որոնք ապացուցողական ավելի մեծ ուժ են ստանում զուգադրվելով հնագիտական-պատմական փաստերի հետ։

Ամենից առաջ՝ մ. թ. ա. II հազարամյակից հայտնի խեթա-լուվական լեզուները, հունարենը (կրետա-միքենյան «գծային B» գրության արձանագրությունների լեզուն), հնդկերենը արդեն ունեն իրարից այնքան տարբեր կերպարանք, որ չի կարելի չենթադրել առանձնակի զարգացման բավականաչափ երկար ժամանակաշրջան։ Խեթա-լուվական սեպագիր լեզուներից խեթերենը հայտնի է մ. թ. ա. XVII—XIII, լուվերենը և պալայերենը՝ XIV—XIII դդ. գրավոր հուշարձաններով։ Առաջին իսկ գրավոր հուշարձաններում խեթերենը մեծապես տարբերվում է հնդեվրոպական լեզվի այն վիճակից, որ վերականգնվում է համեմատաբանների ջանքերով։ Դեռ ավելին, խեթերենը արդեն զգալիորեն տարբերվում է պալայերենից և մանավանդ լուվերենից, մի փաստ, որ խոսում է այդ լեզուների՝ հնդեվրոպական միասնական լեզվից անջատվելուց հետո անկախ զարգացման բավական երկար ժամանակ անցած լինելու մասին։ Թեև մինչև խեթերենի հայտնագործումն ու վերծանումը հնդեվրոպական լեզվի վերականգնումը կատարվում էր գերազանցապես հին հնդկերենի և հին հունարենի փաստերի համադրության հիման վրա, բայց եղած տարբերությունները խոսում են մինչև մ. թ. ա. II հազարամյակի կեսերը (երբ, արդի տվյալներով, հանդես են գալիս «գծային B» կոչված գրով գրված հունական հուշարձանները, հին արևելքի գրավոր հուշարձաններում հիշատակվում են հնդկական բառեր ու անուններ, սկսում են կազմավորվել հնդկական հնագույն հուշարձանները՝ վեդաները) նրանց անցած երկարատև ուղու մասին։

Արդեն նշվել է, որ հնդեվրոպացիների մոտ գերակշռում էր անասնապահական տնտեսությունը, և որ նրանք արդեն անցում էին կատարում դեպի երկրագործական տնտեսությունը։ Զարգացած երկրագործությունը հատուկ է հնդեվրոպական ժողովուրդների առանձնակի գոյության շրջանին։ Եթե սրան միացնենք այն փաստը, որ հնդեվրոպացիներին միասնության շրջանին հավանաբար անհայտ էին մետաղագործությունը (մետաղների անվանումներն ընդհանուր չեն) և զարգացած բրուտությունը (կավագործությունը), ապա կարելի է ասել, որ հնդեվրոպական միասնության շրջանը համընկնում է նոր քարի դարի հետ և ավարտվում է նոր քարի դարի վերջերին։ Արդի գիտության մեջ կարելի է ընդունված համարել, որ հնդեվրոպական միասնության շրջանն ընկնում է մ. թ. ա. V—IV հազարամյակներում։

Լեզվաժամանակագրական հաշվումները ցույց են տալիս հնդեվրոպական լեզուների տրոհման համեմատաբար ավելի ուշ ժամանակաշրջան, որ բացատրվում է մասամբ ընդգրկված լեզուների բնույթով, մասամբ այդ մեթոդի ընդհանուր թերություններով։ Մ. Սվոդեշը, հիմք ընդունելով իր կազմած 200 բառանոց ցուցակը և 1000 տարվա ընթացքում բառապահպանման 81%-ի ցուցիչը, գերմանացիների և սլավոնների բաժանման (անկախ գոյության) ժամանակը դնում է 33,5 (±4) դար առաջ (24% ռուս-անգլիական համընկում), այսինքն՝ 1950 թ. համեմատությամբ մ. թ. ա. մոտավորապես 1400 թ. մոտերքը (4 դարի հնարավոր տարբերությամբ)։ Ռոմանագերմանական տարամիտման ժամանակը համապատասխանաբար նա դնում է 34 (±4) դար առաջ (23,5% ֆրանս-անգլիական համընկում), ռոմանասլավոնականինը՝ 37 (±4) դար առաջ (21% ֆրանս-ռուսական համընկում)։ Հենվելով Մ. Գիմբուտասի վրա՝ Մ. Սվոդեշը փորձում է այս տվյալները համապատասխանեցնել հնագիտական տվյալներին. ինչպես հայտնի է, Մ. Գիմբուտասը [Gimbutas, 1952] հյուսիսեվրոպական բնակչության տեղաշարժը, որ սկիզբն է դրել գերմանացիների և սլավոնների առանձնակի գոյությանը, հատկացնում է մ. թ. ա. 2000—1800 թթ.[18]։

Մ. Սվոդեշի նշած ժամանակը զգալիորեն կմեծանա, եթե նկատի ունենանք մի կողմից՝ ոչ եվրոպական լեզուները, մյուս կողմից՝ լեզվաժամանակագրական մեթոդի՝ Կ. Բերգսլանդի և Հ. Ֆոգտի կողմից նորվեգերենի, վրացերենի, հայերենի տվյալների հիման վրա կատարված ճշտումը [Bergsland–Vogt *1962*] և մանավանդ հայերենի տվյալների ստուգման մեր արդյունքները [Джаукян, *1969. 1978, 187—211*. Հմմտ. նաև Szemerenyi, *1982, 87—98*]։ Ըստ Բերգսլանդի և Ֆոգտի՝ հիշյալ լեզուների տվյալներով հիմնական բառաֆոնդի պահպանման ցուցիչը 1000 տարվա ընթացքում 215 և 200 բառի դեպքում կազմում է 90,1%, 100 բառի դեպքում՝ 93,9% և ոչ թե 81% կամ 85%, ինչպես ընդունում է Սվոդեշը։ Նկատի ունենալով հայերեն նոր գրական լեզվի զարգացման առանձնահատկությունները և Բերգսլանդի ու Ֆոգտի բառացանկի թերությունները, մենք կատարել ենք նոր հաշվում և ստացել արևելահայ գրական լեզվի համար 215 բառանոց ցուցակի դեպքում 88,46%, 200 բառանոցի դեպքում՝ 88,17%, 100 բառանոցի դեպքում՝ 92% պահպանման ցուցիչ։ Լոռու բարբառի համար, որ, ի տարբերություն գրական լեզվի, արհեստական միջամտության չի ենթարկվել, համապատասխանաբար ստացվել են 80,32%, 80,17% և 88,46%։

---

[18] Վերևում մենք տեսանք, որ ավելի ուշ Գիմբուտասը հնդեվրոպացիների՝ Եվրոպայում հայտնվելու ժամանակը դնում է մ. թ. ա. 3500թ.։

Հետաքրքրական է նշել, որ հայ-ռուսական համապատասխանությունների հաշվումը Սվոդեշի օրինակով (300 բառանոց ցուցակի հիման վրա և պահպանման 81%-ի ցուցիչով) տալիս է հայ-սլավոնական բաժանման համար 41 (±4) դար, այսինքն՝ սլավոնա-գերմանական բաժանումից 750 տարի ավելի վաղ ժամանակ։ Էլ ավելի մեծ կլինի բաժանման ժամանակը 81% ցուցիչը ճշգրտելու և պահպանման ավելի մեծ ցուցիչ ընդունելու դեպքում. մենք կգնանք մ. թ. ա. III հազարամյակի սկզբները և նույնիսկ IV հազարամյակի վերջերը։

Բոլոր դեպքերում էլ ակնհայտ է, որ հնդեվրոպական միասնության տրոհումը երկարատև է եղել՝ ընդգրկելով թերևս մեկ հազարամյակից ավելի ժամանակաշրջան։

գ) ՄՇԱԿՈՒՅԹԸ

Համեմատական լեզվաբանության տվյալների հիման վրա հնդեվրոպացիների մշակույթի ամբողջական պատկերը գծելու սկզբնական համարձակ փորձերից [Pictet, *1859—1863*, Schrader, *1883* (Шрадер, *1886*). *1901*. Hirt, *1904—1907* և ուրիշներ] հետո նախ հանդես է գալիս որոշ հոռետեսություն և առանձին հարցերի զգուշավոր քննության ձգտում, ապա սկսվում է իմաստաբանական նորագույն մեթոդների կիրառման, իմաստային հակադրությունների համակարգի հաստատման և ձեռք բերված արդյունքները հնագիտության, ազգագրության, պատմական զանազան գիտաճյուղերի տվյալների հետ զուգադրելու միջոցով ավելի խորացված քննության շրջանը։ Այս նոր՝ ժամանակակից շրջանի համար բնորոշ են հատկապես առանձին հարցերին նվիրված ստուգաբանական-իմաստաբանական ուսումնասիրությունները, որոնց հետ միասին սկսում են երևան գալ ընդհանրացնող աշխատություններ, ինչպես, օրինակ, արդեն հիշատակված՝ Ջ. Դևոտոյի և Է. Բենվենիստի աշխատությունները [Devoto, *1962*. Benveniste, *1969*]։

Հնդեվրոպական մշակույթի՝ ստորև տրվող ակնարկը հենվում է ինչպես նախնական համադրության, այնպես էլ արդի ընդհանրացնող աշխատությունների տվյալների վրա [հմմտ. նաև Иванов, *1957*. Герценберг, *1972, 55—76* և այլն]։ Կխոսենք նաև հնդեվրոպացիների նյութական մշակույթի և տնտեսության, ապա հասարակական կազմակերպության, ընտանեկան կառուցվածքի և հոգևոր մշակույթի առանձնահատկությունների մասին։

Հնդեվրոպացիների կյանքի պատկերի վերականգնումը նախկինում կատարվում էր համեմատաբար պարզ ճանապարհով. վերականգնելով ընդհանուր բառը և նրա իմաստը՝ սովորաբար եզրակացություն էր արվում նշանակված առարկայի կամ հասկացության՝ հնդեվրոպացիներին ծանոթ լինելու մասին։ Սակայն բառի գոյությունը և նույնիսկ իմաստային համընկնումը դեռ բավական չեն խոսելու այն մասին, որ վերականգնվող նախաձևն ունեցել է հնդեվրոպական հետագա ժողովուրդների նախնիների մոտ միևնույն նշանակությունը։ Այս պատճառով էլ արդի էտապում կարևոր դեր են խաղում բառիմաստների հակադրությունների համակարգի սահմանումը, տվյալ իմաստների հետ միասին բացակայող իմաստների հաշվառումը, բառիմաստների հնագույն վկայությունների բազմակողմանի քննությունն ու վերլուծությունը, միևնույն ծագումը չունեցող, բայց միևնույն գաղափարն արտահայտող տերմինների համեմատությունը, պատմական գիտաճյուղերի ողջ համալիրի նորագույն տվյալների համադրությունը։ Այս բոլորը հնարավորություն են տալիս ավելի խոր թափանցելու հնդեվրոպացիների կյանքի ու մտածողության եղանակների մեջ, թեև պետք է ասել, որ առայժմ չի կարելի խոսել այդ ուղղությամբ տարվող աշխատանքի քիչ թե շատ ավարտուն լինելու մասին։

Ինչպես նշել ենք, հնդեվրոպական միասնության շրջանն ընկնում է նոր քարի դարում, հատկապես սրա վերջերին։ Հնդեվրոպացիների տնտեսության հիմնական ճյուղը անասնապահությունն էր, որի հետ միասին դեր էին խաղում նաև որսորդությունն ու, համեմատաբար սակավ, ձկնորսությունը։ Հնդեվրոպացիներն արդեն անցում էին կատարում դեպի երկրագործությունն ու սրա հետ կապված նստակյաց կյանքը։

Հնդեվրոպացիների բավականին զարգացած անասնապահական տնտեսության մասին խոսում են ոչ միայն ընտանի կենդանիների ընդհանուր անունները, այլև նրանց խնամքի ու բուծման, նրանց տված մթերքների վերաբերյալ տերմինները, որոնց համադրությունը բացահայտում է հետաքրքրական փաստեր։ Ընտանի կենդանիները կազմում էին այսպես կոչված շարժական ունեցվածքը և ծառայում էին որպես հարստության աղբյուր. Է. Բենվենիստը, հակառակ ընդունված կարծիքի, նույնիսկ հ.-ե. *pek'u- «ոչխար. մանր եղջյուրավոր անասուն. անասուն» բառի համար առաջնային է համարում «անձնական շարժական հարստություն» իմաստը[19]։ Անասնապահության խաղացած կարևոր դերի մասին է խոսում այն հանգամանքը, որ եղել են տարբերակված անվանումներ որձ և էգ կենդանիների ու նրանց ձագերի, որոշ դեպքերում՝ հասակային տարբեր աստիճանների, ընդհանրապես արուի (որձի) և արու-արտադրողի (համեմ. հ.-ե. *ers- «արու կենդանի», որից հայ. առն, և *u̯ers- «արու արտադրող»), առանձին կենդանիների ընտանի և ոչ ընտանի տեսակների համար։ Անասնապահության հետ կապված գաղափարներից նշենք «արածել», «արոտ» և «հովիվ» (համեմ. հ.-ե. *pā- «կերակրել, արածացնել», որից հայ. հաւան, հաւտ, (հովի)ւ), «կթել» (համեմ. հ.-ե *melg- «շփել, շփելով հանել. կթել») և «կաթ» (համեմ. հ.-ե. *g(a)lakt- «կաթ», որից թերևս հայ. կաթ, բրբռ. *կաղց), «կարագ» (համեմ. *gᵘəu̯ii̯o- «կովային» > հայ. կոգի «կարագ»), «բուրդ» (համեմ. հ.-ե. *u̯el- «մազ, բուրդ», որից հայ. գեղմն), «կրտել» (սովորաբար «կտրել» իմաստից), «կաշի» և այլն։ Սակայն կա այն կարծիքը, որ հնդեվրոպացիները կաթ չէին խմում. պատահական չէ, որ համեմատաբար ուշ շրջանում հույները սկյութներին և կիմերներին կոչել են «կաթնակերներ»՝ կաթ գործածելը համարելով յուրահատուկ տարբերիչ հատկանիշ։ Բուն կաթնատնտեսությունը զարգանում է առանձին ժողովուրդների մեջ։

---

[19] Բենվենիստի այս կարծիքը անհավանական է, եթե նկատի առնենք բառի սեմական և ուրարտական զուգահեռները. հմմտ. ուրարտ. paḫi/ani/e «եզ, արջառ, խոշոր եղջյուրավոր անասուն», եբր. bāqar «խոշոր եղջյուրավոր անասուն, կով, ցուլ», ասոր. bagra «նախիր», արաբ. baqara (>հայ. պաքարայ) «եզ, կով»։ Սեմական աղբյուրից է, անշուշտ, հայ. պախրէ «տավար, նախիր» բառը։ Հմմտ. նաև պաճար «նախիր, տավար, եզ, կով»։ Էլ չենք խոսում այն մասին, որ բառի նախնական իմաստը ավելի կոնկրետ պետք է եղած լինի։

Եթե չխոսենք ամենավաղ ընտելացված ընտանի կենդանու՝ շան մասին (հ. ե. *k'u̯on- > հայ. շուն, թերևս նաև սկուն), ապա հնդեվրոպացիներին ծանոթ են եղել հատկապես կովը, եզն ու ցուլը (համեմ. հ.-ե. *gᵘou- «տավար», որից հայ. կով և այլն), ձին (հ.-ե. *ek'u̯o-s, *eikᵘo-s, որից թերևս հայ. էշ՝ անվան ուշ փոխանցմամբ, որովհետև հնդեվրոպացիները էշ չեն ունեցել), ոչխարը [հ.-ե. *ou̯i-s, որից հայ. հովի-(ւ)], այծը (համեմ. *aig'- > որից հայ. այծ, *ag'- «այծ», *bhug'o-s «արու այծ, քաղ», որից հայ. բուծ «կաթնակեր գառ, կամ ուլ»)։

Հնդեվրոպացիների կյանքում համեմատաբար քիչ դեր է խաղացել ձկնորսությունը. չկան ձկների ընդհանուր տարբերակված անվանումներ։

Մեղրը (հ.-ե. *medhu- և *meli-, որից հայ. մեղր) ձեռք է բերվել բնական վիճակում, և նրանից պատրաստվել հատուկ խմիչք՝ մեղրագինի։

Հնդեվրոպացիներն արդեն անցում էին կատարում դեպի երկրագործական տնտեսությունը։ Այդ մասին է վկայում ընդհանուր (և՛ արևելյան, և՛ արևմտյան լեզուներին հատուկ) *ar- «հերկել, վարել» արմատը, որից կազմված է *arətrom (> հայ. արաւր) բառը. թերևս այս նույն արմատից է գալիս նաև հայ. հարաւունք «արտ, վարուցանք» բառը։ Ընդհակառակն, *ag'ros (> հայ. արտ) բառը սկզբնապես չի ունեցել ընդհանրապես «արտ» իմաստ, այլ նշանակել է «դաշտ», նույնիսկ «արոտ» (վայր, որտեղ քշվել են անասունները, եթե այն ծագում է *ag'- «քշել» արմատից, որտեղից հայ. ածեմ)։ Ընդհանուր տարածում ունի նաև *i̯ugom «լուծ» բառը, մինչդեռ *sei- «ցանել», *g'r̥nom «հատիկ» իմաստները հատուկ են միայն արևմտյան, *i̯eu̯os «հացահատիկ» (հատկապես «գարի») բառը՝ արևելյան տարածքին. *g'herzdh- «գարի» բառը համեմատաբար սահմանափակ ընդգրկում ունի (հայ. գարի բառը հնչյունական ձևով շեղվում է)։

Նոր քարի դարի մարդկանց, այդ թվում՝ հնդեվրոպացիների, կյանքում նշանակալից դեր է խաղացել տնայնագործությունը՝ ներքին կարիքները բավարարող, այսպես կոչված՝ տնային արհեստագործությունը։ Շինարարական զանազան աշխատանքները, գործիքների, զենքերի և փոխադրամիջոցների, ամանեղենի և հագուստեղենի պատրաստումը պահանջում էին հում նյութի որոշակի մշակում և համապատասխան ունակությունների փոխանցում սերնդից սերունդ։ Հայտնի է նույնիսկ, որ նոր քարի դարն սկսվում է կավագործական զանազան արտադրանքներով, և որ հնդեվրոպացիներին հատուկ է եղել թելային նկարազարդումը։ Հնդեվրոպացիների կյանքում տնայնագործության (տնային արհեստագործության) խաղացած կարևոր դերի մասին են վկայում զանազան մասնագիտացված գործողությունների և դրանց տված արտադրանքների ընդհանուր և մասնակի տարածում ունեցող անվանումները։ Հաճախ հնարավոր է որոշել ոչ միայն արտադրանքների տարբեր տեսակները, այլև արտադրման եղանակները (տեխնոլոգիան)։

Հնդեվրոպացիների լեզվում եղել են հատուկ բառեր և տերմիններ հիշյալ արտադրատեսակների պատրաստման հետ կապված գործողությունների համար՝ *del- «ճեղքել, (փայտի վրա) քանդակել, փորագրել, ճարտարորեն տաշել» (> հայ. ատաղձ), *kᵘer- «անել, կերտել, ձև տալ» (այստեղից, իրանական միջնորդությամբ, հայ. կերտել) և *kᵘer- «աման», *ter- «շփել, պտտելով շփել, ծակ բանալ, պտտել», (> հայ. բուր), *bher- «սուր գործիքով մշակել՝ քերծել, կտրել, ճեղքել» (> հայ. բերան՝ սկզբնական «բացվածք» իմաստից), *tek'þ- «հյուսել, տան փայտյա «հյուսվածքը» կազմել (ըստ ոմանց՝ այստեղից հայ. հիւսն հիւսել) և *tek- «գործել, հյուսել» (> հայ. թեքել) և այլն։ Մասնավորապես շինարարական աշխատանքների հետ կապված տերմիններից պետք է հիշել *dem(ə)- «կառուցել» (սկզբնապես «իրար միացնել») և *dom- (> հայ. տուն), *dheig'h- «կավը լմել և նրանով պատել կամ քսել, հունցել. ամբարտակ բարձրացնել» (> հայ. դէզ, դիզել), և *dheig'ho-s «ամբարտակ, պատ», *dhu̯er-, *dhur- «դուռ» (> հայ. դուռն, հգն. դուրք), *anətā «դռան սյուն» [> հայ. դր-անդ(ի) «դավիթ, մուտք, շեմք», անդաստակ «նախագավիթ»] և այլն։ Լայնորեն ներկայացված են հագուստի պատրաստման հետ կապված բառերն ու տերմինները՝ *eu-/ou- «հագնել» (> հայ. ագանիմ, ուբոց «ծածկոց, զգեստ», աւդ «կոշիկ, ոտնաման»), *u̯es- «հագցնել» (> հայ. զ-գեստ, զ-գե-նում), *nogᵘ- «մերկ» (> հայ. մերկ), *bhoso-s «մերկ, բոկոտն» (> հայ. բոկոտն), *si̯ū- «կարել», *snē- «մանել», *u̯ebh- «հյուսել», *u̯eg- «հյուսել, կցել» (*u̯ēg-/u̯əg'- > զ-գածիմ «հագնել», առի-գած «գոգնոց», գաւտի), *pan- «հյուսվածք, գործվածք» և *(s)pen- «մանել, հյուսել, գործել» (> հայ. հանում, այլև հենում, հինում «հյուսել», հեն-ք «հինվածք, հյուսվածք») և այլն։ Հավանաբար առկա էր սայլագործությունը, և սայլը կարևոր դեր էր խաղում հնդեվրոպացիների կյանքում. բացի *u̯eg'h- «շարժվել, ճանապարհորդել կառքով (սայլով) գնալ» բայից և նրա «ճանապարհորդելու միջոց, սայլ, կառք» իմաստով ածանցյալներից, կան սայլի (կառքի) մասերի ընդհանուր և մասնակի տարածում ունեցող հետևյալ անվանումներ՝ *ak's- (*ag'-es-) «առանցք», *kᵘekᵘlo-, *kᵘokᵘlo- «անիվ» (> հայ. բրբռ. հոլոլ «անիվ, սայլ»), *kᵘel- «գլոր(վ)ել» (> հայ. հոլով, բրբռ. հոլ) և *roto- «անիվ» [(*ret(h)- «վազել, գլորել»]։ Ջրային հաղորդակցության համար հնդեվրոպացիները պատրաստել են հատուկ նավակներ («նավեր»)՝ *nāu-, որից հայ. նաւ (իրանական միջնորդությամբ)։

«Վաճառել» և «վաճառական» տերմինների բացակայությունը ցույց է տալիս, որ հնդեվրոպացիներն իրենք ընդհանրապես առևտրով չեն զբաղվել. ենթադրվում է, որ առևտրական գործը գտնվել է հիմնականում եկվոր օտարների (սուբարների) ձեռքում [Pisani, 1969], ընդ որում այն հավանաբար պարբերական բնույթ չի կրել: Սրա հետ կապված՝ նախ՝ գնելու և վաճառելու համար տարբերակված տերմիններ չեն եղել, երկրորդ՝ տարածված են եղել հատկապես վճարելու հետ կապված բառերը, ընդ որում վճարը կատարվել է որպես հատուցում՝ առաջին հերթին անասուններով, երբեմն էլ հատուկ ծառայությամբ. հմմտ. *u̯es- «գնել» և *u̯es-no- «գին» (> հայ. գին), *kʷrei- «գնել» և *kʷroi̯o- «գին», *mis-dho- (mizdho-) «վարձ(ատրություն), հատուցում» (այլև «մրցանակ»), *algʷh- «վաստակել. փոխհատուցում, արժեք» (> իրան. > հայ. արժէք) և այլն: Եկամուտի (հարստության) աղբյուր է ծառայել ռազմավարը. հմմտ. *lāu- «ավար առնել» (հ. հնդկ. *lōtam- «ավար», լատ. *lucrum- «օգուտ, շահ», կիմր. *golud- «հարստություն», հ. իռլ. *lōg- «վճար, վարձատրություն» և այլն). գնումը յուրատեսակ փրկագին է եղել, որ կատարել են ոչ գերիները: Նույն առումով առևտուրը եղել է փոխանակություն, որի հետ միասին դեր է խաղացել նվիրատվությունը՝ անհատույց տրումը. հմմտ. *dō-ro- (> հայ. տուր-ք, հուն. δῶρον «նվեր»): Փոխանակությունը լայն առումով հոգևոր ընդգրկում զուգակցվել է երախտապարտության, հավատարմության, շռայլության ու զոհաբերության և այլ հասկացությունների հետ. Եթե բուն գնելու և գնի հասկացությունները կապված են, այսպես կոչված, արտաքին փոխանակության՝ առևտրի հետ, ապա այս հասկացությունները բխում են ներքին փոխանակության անհրաժեշտությունից, որի հետ առնչվում են պարտք (փոխ) տալու և պարտք (փոխ) առնելու հասկացությունները:

Բուն հնդեվրոպական հասարակությունը գտնվել է նախնադարյան համայնքի քայքայման և դասակարգային հասարակության կազմավորման շեմին: Թագավորը (*reg′-s) բառիս բուն իմաստով եղել է միայն ռազմական առաջնորդ, գլխավոր քուրմ-շաման: Կարծիք կա, որ հետագա էվոլյուցիայի համար դեր է խաղացել արևելյան բռնապետական թագավորությունների հետ շփումը, որ հանգեցրել է նրա գործառական դերի փոփոխության, հասարակության շերտավորման ուժեղացման, դասակարգային հասարակության առաջացման, կենտրոնացվածության: Դեռևս չկա ձևավորված ստրկատիրություն, և, սրա հետ կապված, բացակայում է «ստրուկ» ընդհանուր տերմինը: Չկա նաև միասնական ժողովրդի ըմբռնումը, թեև արդեն նկատվում են միասնականացնող միտումներ. *teutā բառը «ժողովուրդ» իմաստով ընդհանուր տարածում չունի և համեմատաբար ուշ է զարգացել:

Բավականին ուժեղ է «սեփականի» [*s(u̯)e-] և «ոչ սեփականի» («օտարի») հակադրությունը, որ կարող էր սկզբնապես կապված լինել սեփական տոհմի ու այլ տոհմերի տարբերակման հետ և հետագայում ավելի լայնորեն գնահատվել: Հ.-ե. *leudh-ը սկզբնապես նշանակել է «աճել, բարձրանալ, սերվել», ապա ստացել «ընդհանուր ծագմամբ կապված՝ սերված մարդիկ», ավելի ուշ՝ «ժողովուրդ» իմաստը. այն ամենայն հավանականությամբ շատ ավելի ուշ է ձեռք բերել «ազատ» իմաստը (հմմտ. հուն. ἐλεύθερος, լատ. līber «ազատ»)՝ ի հակադրություն «ոչ ազատի». սրա վերագրումը հնդեվրոպական շրջանին պետք է համարել մոդեռնացում: Նույնպիսի մոդեռնացում պետք է համարել Ժ. Դյումեզիլի կարծիքը «ազատների»՝ ըստ գործառության բաժանվելու միտման մասին՝ քրմերի, ռազմիկների և երկրագործների դասերի հետագա առանձնացմամբ [**Dumezil**, *1941. 1969*]:

Հնդեվրոպական հասարակության հիմնական միավորները (համայնքները, տոհմերը) հայտնի են հետևյալ արմատներով՝ *uoik′- «տուն, բնակարան. գյուղ, տոհմ»[20], *bheu- «աճել. լինել» և անվանական գործածությամբ՝ «բնակություն, բնակատեղի» (հմմտ. հայ. բոյն և, իրան. միջնորդությամբ, բուն), *gen- «ծնել» և անվանական գործածությամբ՝ «ծին, տոհմ, ցեղ» (>հայ. ծին, ծնունդ):

Ցեղակցական տերմինաբանության վերլուծությունը և պատմական ազգագրական տվյալների հետ նրա զուգադրությունը հնարավորություն են տալիս ոչ միայն բացահայտելու միասնության շրջանի հնդեվրոպական ընտանիքի ու ազգակցական հարաբերությունների պատկերը, այլև գաղափար կազմելու որոշ ավելի վաղ առանձնահատկությունների և հետագա տեղաշարժերի մասին: Բնորոշվելով նախնադարյան համայնական հասարակության ուշ շրջանի ընդհանուր առանձնահատկություններով՝ այդ ընտանիքը հանդես է բերում մի տիպ, որ հետազոտողները մոտ են համարում ամերիկյան օմահա ժողովրդի ընտանեկան տիպին, և որի մեջ թերևս բացահայտվում են զուգային խաչաձև-կուզենային ամուսնության գծեր [**Friedrich P.**, *1966*. **Benveniste**, *1969, 223* և հջ.]: Սակայն, մեր կարծիքով, այս գծերը գալիս են շատ հնից և մնացուկային բնույթ ունեն: Հնդեվրոպական ընտանիքը բնութագրվում է նրանով, որ ամուսնացած զույգը դեռևս ինքնուրույնություն չունի, և չի կարելի խոսել իսկական իմաստով ամուսնության, բուն իմաստով այր ու կնոջ սերտ հարաբերության մասին. ավելի ամուր են ամուսինների՝ համայնքի, քան իրար հետ ունեցած կապերը: Այս է պատճառը, որ չկան ամուսնության և կին-ամուսնու հատուկ անվանումներ: Ընտանիքը տարամուսնական է (էկզոգամ, այսինքն՝ կինը բերվում է դրսից՝ այլ համայնքից (տոհմից, տարամուսնական խմբից), ուստի շատ են կնոջ՝ այր-ամուսնու ազգականներին նշանակող ընդհանուր տերմինները (*su̯ek′rū- «սկեսուր», որից *k′u̯ekura ձևի միջնորդությամբ հայ. սկեսուր, *g′(ь)lou- «տալ, ամուսնու քույր» > հայ. տալ, *dāiu̯ēr- «տեգր» > հայ. տայգր, *i̯enəter-, *i̯neter- «տալեգրակին» > հայ. ներ)[21], և գրեթե չկան կին-ամուսնու ազգականներին նշանակող ընդհանուր տերմիններ: Բացի սրանից, ամուսնություն կնքելու տերմինները խոսում են կնոջը դրսից բերելու մասին (հմմտ. *u̯edh- «բերել. կին բերել, ամուսնանալ» և *dō- «տալ. կնության տալ»): Ամուսնությունը կարող էր տեղի ունենալ միայն նույն սերնդին պատկանողների միջև: Սակայն, ինչպես նշվեց, բացահայտվում են խաչաձև-կուզենային ամուսնության հետքեր. հմմտ. *su̯o-s «պապ մոր կողմից» և *au̯entro- «քեռի», *nepōt- «թոռ աղջկա կողմից» և *nepōt- «քեռորդի»:

Որ բուն մենամուսնությունը զարգացել է սկզբնական տարամուսնական տոհմային կազմակերպության ներսում գործող զուգամուսնությունից, երևում է հետևյալ փաստերից. նախ՝ *bhrāter «եղբայր» բառը (> հայ. եղբայր) սկզբնապես նշանակել է տոհմի՝ ֆրատրիայի անդամ, *su̯esŏr- «քույր» բառը (> հայ. քոյր)՝ *su̯e- «իր, սեփական» (իմա՝ սեփական էկզոգամային խմբին պատկանող) +*s(u̯)ōr- «կին». երկրորդ՝ *pətēr- «հայր» (> հայ. հայր) և *māter- (> հայ. մայր) բուն առումով նշանակել են ավագ սերնդի արական և իգական ներկայացուցիչներին (հմմտ. հայրենի,

---

[20] Հմմտ. հայ. տուն բառի «տոհմ, ցեղ» իմաստային առումը:

[21] Կարծիք կա, որ վերջին երեքի նախնական իմաստը փոխվել է (նրանց ստուգաբանական իմաստն արդեն մթագնված է):

հայրենիք) և հակադրվել արենակցական հարաբերություն արտահայտող *atta- «արենակից հայր, դաստիարակ» և *anna- «սնող մայր» տերմիններին, որոնք նաև մանկական բնույթի բառեր են եղել. երրորդ՝ նեղ ընտանեկան ազգակցություն ցույց տվող բառերի ստուգաբանական իմաստների մթագնածությունը խոսում է դրանց իմաստային տեղաշարժի մասին:

Հնդեվրոպացիներն, անշուշտ, ունեին կրոնական որոշ գաղափարներ՝ հատուկ վերաբերմունքով պաշտամունքային աշխարհի նկատմամբ, համապատասխան ծիսական արարողություններով և պատկերացումներով: Աստվածայինը կապվում էր մի կողմից՝ շողացող երկնքի և լուսավոր օրվա, մյուս կողմից՝ նախնիների («հոր»՝ *pətér «ավագ սերնդի ներկայացուցիչ, նախնի, հայր») պաշտամունքի հետ. հմմտ. *dei- «շողալ», որից «պաշտվող երկինք», «օր», «աստված» գաղափարները, այլև *dįēus-pəter «երկնահայր, երկնային հայր» կազմությունը. այստեղից են հայ. տիւ, թերևս նաև երկին (*dųi-?) և սէ-րկ «այսօր» (*k'e-dųi-?) բառերը[22]: Այս աղբյուրից են ծագում հուն. Զևսի և հռոմեական Յուպիտերի անունները: «Դիցական» կրոնական գաղափար է արտահայտել նաև *dhēs- արմատը, որից հայ. դիք (*dhēses) բառը: Աստվածները որպես երկնային էակներ հակադրվում էին հողածիններին (հմմտ. լատ. homo «մարդ» և humus «հող»՝ *g'hom- < *ghdom/ *g'hdem) և որպես անմահներ՝ մահկանացուներին (հմմտ. հայ. մարդ > *mŗ-to-s՝ *mer- «մեռնել» > հայ. մեռանիմ): Աստծու գաղափարի կապը բաշխելու, բաժին հանելու գաղափարի հետ ցույց է տալիս *bhag- «բաշխել, բաժին հանել» արմատը, որից ծագում է աստծու անունը հնդիրանցիների (հմմտ. իրանական աղբյուրից փոխառած հայ. բագին, Բագաւան, Բագարան, Բագարատ բառերը՝ բագ- «աստված» բաղադրիչով), փռյուգացիների, սլավոնների մոտ (հմմտ. ռուս. бог «աստված», այլև богатый «հարուստ, ունևոր», убогий «աղքատ, չունևոր») [տե՛ս նաև Աճառյան, ՀԼՊ, 1940, 20]:

«Սրբազանը», ինչպես ցույց է տվել Բենվենիստը, մի կողմից՝ այն է, ինչ լի է աստվածային ուժով (*k'ųen-, որից, իրանական միջնորդությամբ, հայ. սպանդ(ա)- «սուրբ» բաղադրիչը՝ ս(պ)անդարամետ «երկրի խորք» բառի և համապատասխան դիցանվան մեջ, *is-, *sak-), մյուս կողմից՝ այն, ինչ մարդկանց արգելված է դիպչել (*kail-, *įeg'-, *ųeik-): Համապատասխանաբար մարդիկ աստվածներից խնդրում էին հօգուտ իրենց որևէ բան կատարել կամ ի վնաս իրենց կատարվող որևէ բան թույլ չտալ, ընդ որում խնդիրքը լինում էր կամ խոսքերով (որպես աղոթք), կամ զոհաբերությամբ: Կրոնական բնույթ ուներ նաև ուխտը՝ մի բան կատարելու կամ չկատարելու խոստումը: Աստվածներին դիմելու ձևերն էին զոհաբերվող կենդանու մսի ծուխը բարձրացնելը մինչև աստվածներին հասնելը (*dhū-), կրակի մեջ հալած յուղ լցնելը՝ աստվածներին կերակրելու համար (*g'heu-, որից հայ. ձեւ, ձոյլ), մի բան հայցելը, որի համար իրավունք կա (*prek'- որից հայ. հարցանեմ), աղոթելը (*mel-d(h)-, *mel(th)-, որից հայ. մաղթեմ) և այլն: Կրոնական-ծիսական բնույթ ունեն նաև *eųeg^{u}h- «փառաբանելով խնդրել», (>հայ. գոգ «ասա՛»), *įag- «պաշտել, (կրոնական առումով) հարգել, մեծարել» (այստեղից, իրանական միջնորդությամբ, հայ. յազեմ «զոհել»), այլև *k'red-dhē- «հավատալ» բառերը:

---

[22] Երկին-ն ըստ Գ. Ջահուկյանի և Է. Աղայանի, սէրկ-ը՝ ըստ մեր ստուգաբանության:

Կարգի, օրենքի ընդհանուր գաղափարը (*art-, *ŗt- >հայ. արդ «ձև, կարգ», զ-արդ, արդ «այժմ», արդար) բուն իրավական հարաբերությունների բնագավառում արտահայտվել է առաջին հերթին որպես «աստվածային» օրենք՝ կրոնական սկզբունք, որ մարդիկ պարտավոր են պահպանել. աստվածային խոսքը (*bhā-, որից հայ. բան) ուներ անառարկելիություն, ում կողմից էլ որ արտասանվեր: Սրա կողքին գոյություն ուներ օրենք, որ մարդկանց համաձայնության արդյունք էր և արգելք էր դնում տարբեր իրավախախտումների և զանցառությունների վրա. *deik'-ը նշանակում էր ոչ միայն «խոսել» կամ «ցույց տալ» ընդհանրապես, այլև ցույց տալ ճիշտը, պարտավել և հրահանգավորել (հմմտ. հուն. δίκη «օրենք»): Ընտանեկան օրենքը ևս համարվում էր աստվածային սահմանում. հմմտ. *dhē- «դնել» արմատից ծագող *dhē-m-, որից հ. հնդկ. *dhāman- «սահմանում, օրենք», հուն. θέμις «օրենք, սահմանում, պարտականություն» (θέμις —օրենքի և արդարադատության աստվածուհի):

Իրավական և միաժամանակ կրոնական արժեք ունեին երդումը (ուխտը) և նզովքը (անեծքը): Երդմնազանցությունը իր հետ բերում էր նզովք: Կան երդման և նզովքի գաղափար արտահայտող բառեր, որոնք ցույց են տալիս երդման ձևը («երդվել՝ ձեռքը հողին դիպցնելով»՝ *om-) և մոգական բնույթը: Որպես դատավոր հանդես էր գալիս թագավոր-մոգը, որ ցույց էր տալիս ուղիղը, գծում սահման *(reg'- «ուղիղ, ուղղել, գծել», *reg'-s «թագավոր»՝ արդեն նշված իմաստով): Դատավորը կշռադատում էր կողմերի ասածները և որոշում խրախուսանքի և պատժի չափը (*med- «չափել, կշռադատել», որից հայ. միտ-ք, հ. իռլ. *midiur «դատել», օսկ. *meddiss «դատավոր»): Վկա էր ծառայում ականատեսը, որ ցույց է տալիս «վկա» բառի կազմությունը *ųid- «տեսնել» արմատից:

Հնդեվրոպացիներն, անշուշտ, կարողացել են նկարել, գաղափար են ունեցել գեղեցիկի մասին, զարդարանքներ կրել, գործիքներ և կարասի պատրաստելիս երբեմն հասել արվեստի աստիճանին, ունեցել բանահյուսություն, գնահատել ճարտասանությունն ու գեղեցիկ խոսքը: Սակայն այս բոլորի մասին մեր ունեցած պատկերացումները խիստ թերի են:

Պահպանված ընդհանուր թվականները խոսում են հնդեվրոպացիների բավականին բարձր հաշվական կարողությունների մասին՝ տասնորդական համակարգով և տասներկուորդական մնացուկով: Նրանք, անշուշտ, առաջնորդվել են որոշակի օրացույցով, որի մեջ տարբերվել են տարվա եղանակները. ամիսները եղել են լուսնային (հմմտ. *mens- «լուսին» և «ամիս»), ժամանակի հաշվարկման մեջ մեծ դեր են խաղացել արտադրական գործունեության ժամանակային փուլերը, այլև զանազան տոները և ծիսական-կրոնական ժամկետները:

II. ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՂԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՄԵՋ

1. ՀԱՐՑԱԴՐՈՒՄԸ

Խոսելով հայերենի բարբառային դիրքի մասին՝ հնդեվրոպաբան-հայագետները հաճախ շփոթում են երկու բան՝ մի կողմից՝ դեռևս միասնության շրջանում հայերենի բարբառային նախավիճակի տեղը հնդեվրոպական բարբառային նախավիճակի մեջ և մյուս կողմից՝ հայերենի, որպես արդեն առանձնացած և ձևավորված լեզվի, մի որոշակի փուլի (սովորաբար հին հայերենի գրավոր վիճակի՝ գրաբարի) հարաբերությունը հնդեվրոպական մյուս լեզուներին։ Առաջին դեպքում պետք է առանձնացվեն այն արխաիկ գծերը, որոնք բնորոշ են եղել նրան դեռևս միասնության շրջանում, մինչդեռ երկրորդ դեպքում փաստորեն հաշվի են առնվում արխաիկ գծերի հետ միասին նաև նորագոյացումները և հին շփումների հետևանքով առաջացած բառային ընդհանրությունները։ Իհարկե, կարելի է ենթադրել, որ հայերենը միանգամից չի առանձնացել որպես ինքնուրույն միավոր, այլ նախ գտնվել է առանձնացած ինչ-որ (ասենք՝ հնդիրանա-հունա-հայկական) լեզվակոմպլեքսի մեջ, ձեռք բերել սրան հատուկ ընդհանուր գծեր (նորագոյացումներ), ապա անցել ինքնուրույն զարգացման ուղի։ Բոլոր դեպքերում էլ դժվար է գծել հին և նոր առանձնահատկությունների ճշգրիտ ժամանակային և տարածքային սահմանները։

Մինչև այժմ կատարված հետազոտությունների երկրորդ թերությունն այն է, որ հաճախ ոչ թե նկատի է առնվում լեզուների և զուգաբանությունների ողջ կոմպլեքսը, այլ քննվում են միայն որոշ լեզուներ ու լեզվատարածքներ, միայն հնչյունա-քերականական կամ միայն բառային որոշ թվով (ոչ լրիվ) զուգաբանություններ։

*Հայոց լեզվի՝ հնդեվրոպական լեզուների մեջ գրաված տեղի հարցը սկիզբ է առնում Հ. Հյուբշմանի նշանավոր աշխատությամբ [***Hübschmann**, 1875],* *որտեղ նա, հիմնավորելով հայերենի՝ իրանականից անկախ հնդեվրոպական լեզու լինելու դրույթը, միաժամանակ հայտնում է այն կարծիքը, որ հայերենը միջին դիրք է գրավում իրանական և բալթիկ-սլավոնական լեզուների միջև։*

*Փոքր-ինչ այլ եզրակացության է հանգում Հ. Պեդերսենն իր «Հայերենը և դրացի լեզուները» աշխատության մեջ և այլուր [***Pedersen**, 1900. 1906. 1925]։ Պաշտպանելով այն տեսակետը, որ լեզուների* centum *և* satəm *տարբերությունը չի կարելի համարել հնդեվրոպական բարբառային բաժանման հիմքը, նա նշում է* satəm *լեզու հայերենի մերձավորությունը մի կողմից՝* centum *լեզու հունարենին, զգալի չափով նաև կելտերենին, մյուս կողմից՝* satəm *լեզու ալբաներենին, այսինքն՝ մերձավորության աստիճանը որոշում է անկախ հիշյալ բաժանումից՝ այլ հատկանիշների հիման վրա։*

*Հայերենի՝ հունարենի հետ ունեցած մերձավորության դրույթը հիմնավորվում և ճշտվում է Ա. Մեյեի աշխատություններում, հատկապես նրա «Հայերենի բարբառային դիրքը» աշխատության մեջ [***Meillet**, 1895]։ Այստեղ Ա. Մեյեն հաստատում է հայերենի՝ հունական, արիական և բալթիկ-սլավոնական լեզուների հետ ունեցած մերձավոր կապերի դրույթը։*

Մեյեի կարծիքը հետագայում տիրապետող է դառնում։ Կարելի է մատնանշել միայն հետևյալը.

*1. Եթե Մեյեն հայերենի և բալթիկ-սլավոնական լեզուների մերձավոր կապերի գաղափարը միայն ուրվագծում է, ապա Հ. Կարստինը հատուկ աշխատություն է նվիրում այդ հարցին [***Karstien**, 1955]՝ բերելով հայ-սլավոնական 52 զուգաբանություն՝ ինչպես հնչյունա-ձևաբանական, այնպես էլ բառա-իմաստային։ Ըստ Կարստինի՝ հայերենը միջին դիրք է գրավում հունական և սլավոնական լեզուների միջև։ Ավելի քիչ են հայ-բալթիական զուգաբանությունները. Ջ. Գրեպինը հայտնում է նույնիսկ այն կարծիքը, որ հայերենը և բալթիականը չունեն հատուկ մերձավորություն [***Greppin**, 1976.* **Греппин**, *1976]։ Այս հարցը դժվարանում է մանավանդ այն պատճառով, որ հնդեվրոպաբաններից ոմանք բալթիականը միավորում են սլավոնականի հետ, մյուսները դիտում որպես անկախ խումբ։ Այժմ իշխող է երկրորդ կարծիքը։*

*2. Լայն քննարկման առարկա է դառնում հայ-փռյուգական մերձավոր ցեղակցության խնդիրը։ Այստեղ նկատելի է երկու ծայրահեղություն։ Ոմանք հենվելով ինչպես անտիկ հեղինակների (Հերոդոտ, Եվդոքսոս, Դիոնիսիոս Հալիկառնասացի), այնպես էլ փռյուգերենի համեմատաբար սակավաթիվ տվյալների վրա, խոսում են հայերենի ու փռյուգերենի մերձավոր ցեղակցության մասին և նույնիսկ հնարավոր համարում հայերենն ու փռյուգերենը միավորելու մեկ խմբի մեջ [***Bonfante**, 1946. Դյակոնով, 1956.* **Дьяконов**, 1961. **Георгиев**, 1958, 138—145. **Бэнэцьяну**, 1961, 97—102]: *Մյուսները, սկսած Հյուբշմանից, բացառում են այդպիսի մերձավոր ցեղակցության հնարավորությունը* [**Hübschmann**, AG, I, 1895, 405. **Meillet**, 1936, II. Աճառյան, *ՀԼՊ, 1, 1940, 123—133.* Ջահուկյան, *1970, 100—122]։ Փորձելով լուծել հակասությունը՝ Օ. Հաասը արձանագրություններով ներկայացված բուն փռյուգերենի կողքին տարբերում է այսպես կոչված նախափռյուգերենը, որ, ըստ նրա, ներկայացված է առանձին բառերով (գլոսներով) ու հատուկ անուններով, և որ առանձնապես մոտ է հայերենին* [**Haas**. 1966]*։ Օ. Հաասի կարծիքը նախափռյուգական շերտի մասին ենթարկվում է քննադատության* [**Gusmani**, I, F, 72, 3, 1967, 323—328. **Heubeck**, G, 39, 6, 1969, 579—583. **Dressler**, S, 14, I, 1968, 40—50]: *Մենք եղած տվյալների քննությամբ հանգել ենք այն եզրակացության, որ փռյուգերենի լեզվական շերտերը «շնորհիվ հնդեվրոպական լեզվամիասնության շրջանում գրաված դիրքի, հունական և հայկական ցեղերի հետ ունեցած հետագա համակեցության, այլև որոշ շրջանում միևնույն տիպի լեզվական միջավայրերի ազդեցության բնութագրվում են այնպիսի առանձնահատկություններով, որոնք մերձավորության և ընդհանրության տարբեր աստիճաններով նրանց կապում են հունարենի, հայերենի և բալթիկ-սլավոնական լեզուների, ապա նաև պելասգերենի և թրակերենի հետ» [Ջահուկյան, 1970, 122]։ Այս եզրակացության մեջ այժմ հարկավոր է որոշ վերապահումներ կատարել. նախ կասկածելի պետք է համարել փռյուգական երեք շերտերի* տարբերակման հաասյան կարծիքը, և համառոտորեն խոսել միայն բուն փռյուգերենի մասին. երկրորդ՝ մի կողմ թողնել պելասգերենի հարցը՝ նրա վիճելիության պայմաններում և խոսել միայն թրակերենի մասին, մանավանդ որ հունարենի մեջ վերականգնվող այն շերտը, որ համարվում է պելասգերեն, շատ մոտ է թրակերենին. երրորդ՝ խոսել սլավոնական և բալթիկ-սլավոնական լեզուների մասին տարբերակված ձևով։

3. Խեթերենի հայտնագործումից և նրա հնդեվրոպական բնույթի հաստատումից հետո խեթա-լուվական լեզուների առանձնահատկությունների ուսումնասիրության ընթացքում հաճախ է ծագել հայ-խեթա-լուվական փոխհարաբերության հարցը։ Այստեղ էլ նկատելի է երկու ծայրահեղություն։ Եթե Ջ. Բոնֆանտեն խեթերենի՝ հնդեվրոպական լեզուների մեջ գրաված տեղի հարցին նվիրված իր աշխատության մեջ փորձում է ապացուցել, որ հայերենը հատկապես մոտ է հունարենին և խեթերենին [Bonfante, 1939, 381], ապա Հ. Պեդերսենը հայտնում է այն կարծիքը, որ հայերենն ու խեթերենը կանգնած են իրարից շատ հեռու՝ հակառակ ծայրերում. հայերենը ընդհանուր զուգաբանություններ ունի խեթերենից հեռու կանգնած լեզուների հետ և, ընդհակառակն, չունի այդպիսիներ խեթերենին մոտ լեզուների հետ [Pedersen, 1945, 5]։ Ի հաստատումն այս կարծիքի՝ Ա. Կամենհուբերը մերձավոր կապեր է տեսնում նաև խեթական, խուռյան ու գերմանական լեզուների միջև և գտնում, որ հարկավոր է վերանայել արևմտյան և արևելյան բարբառային տարածքների հակադրության տեսակետը [Kammenhuber, 1961]։

4. Սկսած Հ. Պեդերսենից խոսվում է նաև հայերենի և ալբաներենի մերձավոր կապերի մասին [Pedersen, 1900. Pisani, 1951. 1954. Bonfante, 1978], սակայն հիմք կա կարծելու, որ ալբաներենը հատուկ մերձավոր կապեր հայերենի հետ չի հայտնաբերում։

Հայերենի հնդեվրոպական լեզուների մեջ գրաված դիրքի մասին հետաքրքրական եզրակացությունների է հանգում Գ. Ռ. Զոլտան իր արդեն հիշված աշխատության մեջ, որ նվիրված է հատկապես բառային զուգաբանություններին [Solta, 1960, 482]։ Այսպես կոչված, բացառյալ (էքսկլյուզիվ) զուգաբանությունների հիման վրա Զոլտան տալիս է հայերենի հետ հնդեվրոպական լեզուների մերձավորության հետևյալ աստիճանները՝ 1) հունական, 2) հին հնդկական, 3) գերմանական, 4) բալթիական, 5) սլավոնական, 6) լատինական, 7) իրանական, 8) կելտական, 9) ալբանական, 10) թոխարական, 11—14) փռյուգական, թրակյան, իլիրական, խեթական։ Ինչպես տեսնում ենք, Զոլտան փաստորեն հաստատում է Հ. Պեդերսենի կարծիքը հայերենի և խեթերենի՝ իրարից հատկապես հեռու կանգնած լինելու մասին։

Գ. Ջահուկյանը իր «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» գրքում ճշտում է հայերենի՝ Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի հին լեզուների՝ իլիրերենի, հին մակեդոներենի, թրակերենի, դակա-միզերենի, պելասգերենի, փռյուգերենի, խեթա-լուվական լեզուների հետ ունեցած փոխհարաբերության հարցը։ Հիմք ընդունելով հնչյունա-քերականական որոշ հատկանիշներ՝ նա գալիս է այն եզրակացության, որ այդ լեզուներից հայերենին ամենից ավելի մոտ էր «նախափռյուգերենը, եթե նրան հատուկ էին բուն փռյուգերենի մյուս կարևոր առանձնահատկությունները։ Ըստ մերձավորության աստիճանի նրան հաջորդում են փռյուգերենը և հին մակեդոներենը։

Ավելի քիչ մերձավոր են խեթերենը, թրակերենը և պելասգերենը։ Ամենից ավելի հեռու է կանգնած իլիրերենը»։ «Բառապաշարի ծագումնային զուգադիպությունների համակողմանի քննությունը (որքանով այդ հնարավորություն է տալիս պահպանված նյութը) հիմնականում հաստատում է ... բերված եզրակացությունը» [Ջահուկյան, 1970, 164]։

Հայերենի բարբառային դիրքը որոշելու համար բառային զուգաբանությունների դերի քննությանն է նվիրված է. Ա. Մակաևի «Հայ-հնդեվրոպական բառային զուգաբանությունները և տարածքային լեզվաբանությունը» ուսումնասիրությունը [Макаев, 1967]։ Քննության առնելով հայերենի տարածքային բնութագրմանը նվիրված աշխատությունները՝ Մակաևը հատկապես կանգ է առնում հայ-արիական, հայ-սլավոնական, հայ-հունական և հայ-գերմանական բառային զուգաբանությունների վրա։ Հայ-գերմանական զուգաբանությունների հետ կապված նա կասկածի տակ է առնում ընդհանրապես արևմտյան ու արևելյան տարածքների տարբերման նպատակահարմարությունը և նշում մի կողմից՝ Վ. Ի. Աբաևի բերած սկյութա-գերմանական (ավելի լայնորեն, իրանա-գերմանական) [Абаев, 1965] և մյուս կողմից՝ Կամենհուբերի բերած խեթա-լուվական, կելտական, գերմանական, իտալական զուգաբանությունների կարևորությունը [Kammenhuber, 1961]։ Ընդհանուր առմամբ համաձայնելով Զոլտայի եզրակացությունների հետ՝ Մակաևը միաժամանակ անում է տարածքային լեզվաբանության մեթոդիկայի և Զոլտայի կիրառած սկզբունքների վերաբերյալ դիտողություններ։ Մասնավորապես նա անհրաժեշտ է համարում տարբերակել շփման հետևանքով ծագած և զուգահեռ զարգացման արդյունք հանդիսացող նորագոյացումները, բացառյալ զուգաբանություններ հաստատելիս նկատի ունենալ այլ լեզուներում ևս տվյալ բառերի սկզբնապես առկա լինելու հնարավորությունը, նյութի ստուգաբանական հատուկ մշակման անհրաժեշտությունը։ Մակաևը նշում է, որ Գ. Ռ. Զոլտան, այլև Վ. Պորցիգը, Ա. Կամենհուբերը տարածքային բնութագիր տալիս բառային չափանիշների ներքին տարբերակում չեն անցկացնում՝ հենվելով հավասարապես և՛ իմաստային, և՛ բառակազմական, և՛ ձևաբանական, և՛ աճականային ընդհանրությունների վրա[1]։ Միաժամանակ, ըստ Մակաևի, հայ-խեթական զուգաբանությունների քանակն ու բնույթը, այլև խեթական բառերի անբավարար իմացությունը հիմք չեն տալիս հավաստի եզրակացությունների համար։ Մակաևը հատուկ ուսումնասիրություն է նվիրել հայ-կելտական զուգաբանությունների հարցին, որտեղ փորձում է բացահայտել հայ-կելտական մերձավոր շփումների առկայությունը [Макаев, 1974]։

Հարցի օբյեկտիվ քննության նպատակով մեր կողմից կարվեն ամբողջական աղյուսակներ, որոնցում կբերվեն հայերենի հնչյունական, քերականական և բառային զուգաբանությունները, ընդ որում՝ ա) ընդհանուր հիմքակազմական արժեք ունեցող ածանցների ընդհանրությունները կքննվեն ձևաբանական, իսկ առանձին բառերի բառակազմական ընդհանրությունները՝ բառային զուգաբանությունների մեջ. բ) արմատների աճականական և հերթագայական ձևավորման, ինչպես նաև իմաստային համընկումները կքննվեն բառային զուգաբանությունների հետ կապված։ Նկատի է առնվում, որ միայն բառային զուգաբանությունները անբավարար են վճռական եզրակացությունների համար։

---

[1] Իրականում այս բոլոր հատկանիշների մերձավորության հաշվառումը կարևոր է, միայն թե տարբեր դեպքերում կարող է տարբեր լինել նրանց տեսակարար կշիռը։

Աղյուսակների մեջ՝ 1) հաշվի են առնվում Հ. Աճառյանի և Յ. Պոկոռնու բերած հավաստի ստուգաբանությունները. 2) դրանք լրացվում են նոր հավաստի ստուգաբանություններով. 3) տեղ է տրվում բարբառային բառերին. 4) ըստ հնարավորության տարբերվում են միասնության շրջանի համար ենթադրվող զուգաբանությունները ուշ նորագոյացումներից (շփման հետևանքով ծագածներից և զուգահեռ զարգացումներից), թեև հեղինակն այն կարծիքին է, որ զուգահեռ զարգացումը սովորաբար ենթադրում է՝ սկզբնական ընդհանուր միտման իրացում, երբեմն էլ ընդհանուր կամ համատիպ միջավայրերի ազդեցություն. 5) գերադասություն է տրվում հակադրական զուգաբանություններին հակասականների նկատմամբ (այսինքն՝ միևնույն միավորի տարբեր դրսևորումներին և ոչ թե միավորի առկայությանը կամ բացակայությանը). 6) միայն մեռած լեզուներով ներկայացած խմբերի չվկայված փաստերի դեպքում վանդակները չեն լրացվում։ Մեր «Հայ բարբառագիտության ներածություն» գրքի (Երևան, 1972) սկզբունքներին համապատասխան հատկանիշի առկայությունը (այո) նշանակվում է պլյուսով (+), բացակայությունը (ոչ) մինուսով (—), մասնակի առկայությունը՝ պլյուս-մինուսով (±), որոնք հաշվարկման ժամանակ համապատասխանաբար գնահատվում են որպես մեկ, զրո և կես միավոր։

2. ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հնչյունական զուգաբանությունների ցանկը կազմելիս հաշվի են առնվել ընդհանրապես հնդեվրոպական տարածքային լեզվաբանությանը նվիրված և մասնավորապես հայերենին վերաբերող գրեթե բոլոր փաստերը։ Առկա գրականության մեջ դրանք սովորաբար թերի են լինում և չեն ընդգրկում հնչյունական կառուցվածքի բոլոր կողմերը։ Հեղինակն այն կարծիքին է, որ առանց ամբողջական ընդգրկման հնարավոր չէ քիչ թե շատ ճշգրիտ գաղափար տալ հնչյունական կառուցվածքների փոխհարաբերության մասին, և որ ճիշտ չէ աչքի ընկնող մի քանի փաստի հիման վրա հեռու գնացող եզրակացություններ անել։

Հնդեվրոպական զուգաբանություններն ըստ հնարավորին լրիվ ներկայացնելու ձգտումն առկա է Ա. Լ. Կրյոբերի և Կ. Դ. Կրետինի՝ հնդեվրոպական լեզուների քանակական դասակարգմանը նվիրված այն հոդվածներում, որոնց մասին խոսել ենք հնդեվրոպական բարբառների ընդհանուր քննության ժամանակ։ Այդ հեղինակները իրենց սկզբնական հոդվածներում բերում են 74 հատկանիշ՝ 30 հնչյունական և 44 ձևաբանական՝ դրանց ընտրության և դասավորության մեջ հենվելով Ա. Մեյեի «Հնդեվրոպական բարբառները» աշխատության տվյալների վրա, օգտագործելով նաև Բրուգմանի ու Կիկերսի հնդեվրոպական լեզուների համեմատական քերականությունները և Ֆ. Զոմերի՝ լատիներենի համեմատական քերականությունը [Sommer, 1914]։

Այսուհանդերձ մեր և այս երկու հեղինակների կազմած ցուցակները նշանակալից չափով տարբերվում են.

1. Կրյոբերը և Կրետինը թեև առանձնակի նշում են հնչյունական և քերականական հատկանիշների համարները, բայց բուն ցուցակում դրանք բերում են առանց տարբերակման՝ փոխեփոխ։ Մեզ մոտ հնչյունական և քերականական զուգաբանությունները ոչ միայն տարբերակված են, այլև հիմք են տալիս առանձնակի եզրակացությունների համար։

2. Մեր ցուցակներում բնականաբար նկատի չեն առնված այն բոլոր հատկանիշները, որոնք հայերենի համար տարբերակիչ արժեք չունեն, ինչպես, օրինակ, ō-ի ā կամ ā-ի ō դառնալու, հոգնակի սեռականի, ածականների համեմատության աստիճանների, բղձականի կազմության վերաբերյալ կետերը և այլն։ Ընդհակառակն, առկա են մեծ քանակությամբ այնպիսի կետեր, որոնք հայերենի դիրքի որոշման առումով էական նշանակություն ունեն. մասնավորապես պետք է նշել, որ մեր ցուցակներում դերանունների վերաբերյալ բոլոր կետերը նոր են, հատուկ ուշադրություն է դարձված Վ. Պորցիգի տված հատկանիշների վրա և այլն։ Ընդհանրապես բացառված են խիստ մասնակի բնույթի և անհավաստի հատկանիշները։

3. Բացի Կրյոբերի և Կրետինի նշած լեզուներից, մեր ցուցակներում ընդգրկված են նաև թոխարական լեզուները, ալբաներենը, փռյուգերենը, թրակերենը, իլիրերենը և վենետերենը (վերջին երեքը՝ միայն հնչյունական ցուցակներում՝ ըստ առկա նյութի)։

4. Քանի որ գնահատման մեր համակարգը հնարավորություն է տալիս որոշելու հատկանիշի առկայության (+), բացակայության (—) և մասնակի դրսևորման (±) տարբերությունները, մենք ընդհանրապես հրաժարվում ենք միևնույն հատկանիշը մի քանի կետով արտահայտելու (մանրատելու) և ընդհանրապես նյութի անհավասար բաշխման սկզբունքից, որ առաջ է բերում գնահատման անճշտություն. այսպես, այնպիսի մի կարևոր հատկանիշ, ինչպիսին *o-ի և *a-ի տարբերակվածությունն է, Կրյոբերը և Կրետինը արտահայտում են միայն մեկ կետով, մինչդեռ *ō-ի և *ā-ի տարբերակվածության հատկանիշը բաշխում են երեք կետի մեջ. «22. *ā և *ō չձուլված. 23. *ā ձուլված *ō-ին. 24. *ō ձուլված *ā-ին». միջին դիրքի ə-ի անկումը բաշխված է 3 կետում. հաճախակի են միևնույն հատկանիշի լրիվ և մասնակի դրսևորման վերաբերյալ առանձին կետերը, որոնք ±-ի ներմուծման դեպքում դառնում են ավելորդ։

Վերջում նշենք, որ մեր ցուցակն ընդհանրապես կազմված է նորագույն ուսումնասիրությունների հիման վրա՝ հնդեվրոպական տարածքային լեզվաբանության վերջին նվաճումների հաշվառումով և լիովին անկախ է Կրյոբերի և Կրետինի ցուցակներից։

Զուգաբանությունները դասավորված են հետևյալ հաջորդականությամբ. նախ բերվում են բաղաձայնական (ըստ հարացուցային և շարակարգային խմբերի), ապա ձայնորդային և վերջապես ձայնավորային հատկանիշները։ Հատկանիշները ձևակերպելիս ըստ հնարավորին նկատի են առնվում ելակետային վիճակները, որոնց առանձին դրսևորումները և հետագա զարգացումները երբեմն նշվում են փակագծերում։ Ինչպես նշվել է, հաշվի են առնվում սկզբնական ընդհանրությամբ պայմանավորված հատկանիշների հետ միասին նաև զուգահեռ զարգացման փաստերը, որոնք պետք է որոշ հիմք ունեցած լինեն արտասանական միատիպ ունակությունների մեջ։ Ըստ հայերենի բնույթի թույլատրվում է բացառողական ձևակերպում, այսինքն՝

դրական է գնահատվում երևույթի միաժամանակյա բացակայությունը հայերենում և այլ լեզուներում (հմմտ. 5-րդ և 16-րդ կետերը)։

Լեզվախմբերը դասավորված են արևելքից արևմուտք հաջորդականությամբ, ընդ որում ընդգրկվում են հավաստիորեն առանձնացվող բոլոր խմբերը։ Փաստերը գնահատելիս սովորաբար նկատի է առնվում յուրաքանչյուր լեզվախմբի համար մեկ (հատկապես հնագույն և լավ հայտնի) ներկայացուցիչ, սակայն անհրաժեշտության դեպքում բերվում են նաև մյուս լեզուների փաստերը։ Հայերենի համար բնականաբար նկատի է առնվում առաջին հերթին գրաբարը (V դարի ստանդարտ վիճակով), հնդկականի համար՝ սանսկրիտը, իրանականի համար՝ ավեստերենը, թոխարականի համար՝ միաժամանակ և՛ արևելաթոխարերենը (թոխարերեն Ա), և՛ արևմտաթոխարերենը (թոխարերեն Բ), խեթա-լուվականի համար՝ բուն խեթերենը (նեսերենը), սլավոնականի համար՝ հին սլավոներենը, բալթիականի համար՝ լիտվերենը, հունականի համար՝ հին հունարենը, իտալյանի համար՝ լատիներենը, կելտականի համար՝ հին իռլանդերենը և գերմանականի համար՝ գոթերենը։

Հայերենի հետ ունեցած ընդհանրությունը գնահատվում է պլյուսով, տարբերությունը (հակադրությունը)՝ մինուսով։ Հարցականների քանակը գումարվելով պլյուսների քանակի վրա դիտվում է որպես համընկումների հնարավոր սահման և նշանակվում փակագծի մեջ → նշանից հետո՝ 6(→7), 5,5(→7,5) և այլն։ Պետք է նկատի առնել, որ մինուսները չեն նշանակում նրանցով բնութագրվող լեզուների իրական ընդհանրությունը. մինուսը նշում է միայն հատկանիշի բացակայությունը, բայց ոչ անպայմանորեն որոշակի հատկանիշի առկայությունը, եթե փակագծում հատուկ չի նշվում հակառակ փաստը։ Պլյուս-մինուսով (±) գնահատվում են՝ ա) հատկանիշի արտահայտման օրինակների սակավաթվությունը՝ ի տարբերություն մեծաթվության և կանոնականության, բ) դիրքային պայմանավորվածություն ունեցող տարբերությունները՝ ի հակադրություն ոչ դիրքային (էական, օրինակ՝ հնչույթային) տարբերությունների, գ) միևնույն խմբին պատկանող ենթախմբերի (օրինակ՝ իտալյանի համար՝ լատիներենի և օսկերենի ու ումբրերենի, կելտականի համար՝ գոյիականի, գաելականի և բրիտականի, գերմանականի համար՝ գոթերենի և հին վերին գերմաներենի ու հին սկանդինավյանի և այլն) փաստերի տարբերությունները։ Ձայնավորների ընդհանրությունները գնահատելիս ըստ հնարավորին նկատի է առնվում շեշտակիր դիրքը, և բացառվում են անշեշտակիր դիրքի հետ կապված ներքին թուլացումները (ռեդուկցիա)։ Համեմատաբար էական և հին ընդհանրությունները (բուն զուգաբանությունները) օժտվում են աստղանիշերով։

Ըստ անհրաժեշտության աղյուսակի վերջում տրվում են ծանոթություններ և մեկնաբանություններ՝ հատկանիշների թվահամարներով։

Հնչույթների դիրքերի համար կիրառվում են հետևյալ նշանակումները՝ p-՝ բառասկզբնային p. -p-՝ բառամիջային p. -p՝ բառավերջային p. V՝ ձայնավոր. C՝ բաղաձայն։

Ավելորդ չենք համարում նշել, որ զուգաբանությունների ցանկերի կազմումը և գնահատումը կապված են եղել մեծ դժվարությունների հետ՝ մասնավորապես որոշ տվյալների հակասականության պայմաններում։

Աղյուսակների մեջ լեզվախմբերի համար կիրառված են հետևյալ համառոտագրությունները՝ Հ—հնդկական, Ի—իրանական, Թ—թոխարական,

Հատկանիշներ	Հ	Ի	Թ	Խ	Ս	Բ	Փ	Թր	Հն	Ա	Իլ	Վ	Իտ	Կ	Գ
*1. *bh, *dh, *gh : *b, *d, *g հակադրության պահպանում	+	—	—	—	—	—	+	+	—	—	—	±	±	—	+
*2. *b, *d, *g : *p, *t, *k հակադրության պահպանում	+	+	—	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
*3. *p, *t, *k : *ph, *th, *kh հակադրության առկայություն	+	+	—	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	—
*4. *gh, *g, *k : *g′h, *g′, *k′ («կենտումային»—«սատեմային») հակադրության առկայություն	+	+	+?	—	+	+	±	+	—	+	±	—	—	—	—
*5. *gh, *g, *k : *gᵘ̯h, *gᵘ̯, *kᵘ̯ հակադրության բացակայություն	+	+	±	—	+	+	±	+	—	—	+	—	—	—	—
*6. Բաղաձայնական տեղաշարժ (*bh, *dh, *gh > b, d, g. *b, *d, *g > p, t, k. *p, *t, *k > ph, th, kh)	—	—	—	±?	±	—	+	+	—	—	—	—	—	—	+
7 *r+*p/*t/*k>r+b/d/g	—	—	—	—	—	—	—	±	—	—	—	—	—	—	±
8. *p->h, (-f),— (f շփականը նշանակվում է ±-ով)	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	±
*9. *s->h,—	—	+	—	—	—	—	±	—	+	±	—	—	—	—	—
10. *r(*u/*i/*k)+s>r(/u/i/k)+š (կամ այլ հնչույթ՝ ±)	+	+	—	—	±	+	—	—	—	—	—	—	—	—	—
*11. HV->hv (կամ այլ հնչույթ+V)	—	—	—	+	—	—	—	—	—	—	—	?	—	—	—
12. *tt>st (ի հակադրություն *tt>tt, ts, (s)s փոփոխությունների)	—	+	—	—	+	+	+	+	+	—	+		—	—	—
13. *pt, *kt և պայթականներից կազմված այլ բաղաձայնախմբերի պարզեցում կամ առաջին տարրի շփականացում	—	—	—	—	+	—	—	+	—	+	—	—	—	+	+
*14. *sr>hr, r(r) (ի տարբերություն *sr>str, fr, br փոփոխությունների)	—	+	+?	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	—
*15. Մի շարք բառերում *r-/*l-/*m-/*n- . . . >e/o/a+r-/l-/m-/n- . . .	—	—	—	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	—
16. *r->er-/or-/ar- (այլև *r->hr, rh՝±) (ի տարբերության *r->r- համապատասխանության)	—	—	—	+	—	—	—	—	±	—	—	—	—	—	—
*17. *r : *l հակադրության պահպանում	±	—	+	+	+	+	±	+	+	+	+	+	+	+	+
*18. *-m>-n	—	—	+?	—	+	+	+	+	+	?	—	∓	—	+	+
19. *i̯-> աղմկավոր բաղաձայն (ǰ, j, h և այլն)	—	—	—	—	—	—	—	—	+	+	?	?	—	±	—
20. *u̯->g(w)	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	+	—
*21. *r̥-, *l̥>ar, al	—	—	+	+	—	—	+	—	+	—	—	—	—	—	—
*22. *m̥, *n̥>am,an (*m̥, n̥>a փոփոխությունը նշանակվում է ±-ով)	±	±	+	±	—	—	±	—	—	—	—	—	—	—	—
*23. *o : *a հակադրության պահպանում	—	—	—	—	—	—	+	—	+	—	+	+	+	+	—
*24. *e-ի երանգի պահպանում	—	—	±?	±	+	+	+	+	+	±	+	+	±	∓	±
*25. *ə>a	—	—	+	+	+	+	+	+	±	+	+	+	+	+	+
26. CəC>CC	—	+	—	?	+	+	?	?	—	?	?	?	?	?	+
27. *ə>a	+	+	+	+	—	—	+	?	±	+	?	?	?	—	—

Խ—խեթա-լուվական, Ս—սլավոնական, Բ—բալթիական, Փ—փռյուգական, Թր—թրակյան, Հն—հունական, Ա—ալբանական, Իլ—իլիրական, Վ—վենետական, Իտ—իտալյան, Կ—կելտական, Գ—գերմանական։

Հնչյունական զուգաբանությունների աղյուսակի տվյալներն օգտագործելիս առանձին կետերի համար հարկավոր է նկատի ունենալ հետևյալը.

1. *bh, *dh, *gh:*b, *d, *g հակադրությունը փաստորեն միայն հնդկականում է արտահայտվում շնչեղության առկայությամբ և բացակայությամբ. տեղաշարժի ենթարկված լեզուներում այն արտահայտվում է b, `d, `g: `p, `t, `k ձևով (հայերենում թերևս b, d, g-ի շնչեղությամբ որոշ տարածքներում), հունարենում ph, th, kh:b, d, g ձևով (ձայնեղների շնչեղությամբ և միաժամանակյա խլացմամբ), իտալյանում և վենետականում՝ *bh, *dh, *gh-ի՝ սկզբնային դիրքում շփականանալով (վերածումով f-ի),

2. *b, *d, *g:*p, *t, *k հակադրությունը տեղաշարժի ենթարկված լեզուներում արտահայտվում է p, t, k:ph, th, kh հակադրությամբ, ընդ որում շնչեղ խուլերն էլ կարող են ամբողջովին (գերմանականում) կամ մասամբ շփականանալ։ Փռյուգերենի և թրակերենի շնչեղությունն ուժեղ չէ, և շնչեղները հաճախ արտահայտված են հունական պարզ խուլերով։ Խեթերենն այս տարբերությունը թերևս պահպանել է կրկնավոր—ոչ կրկնավոր նշանակմամբ։ Թոխարերենը բոլոր ձայնեղները վերածել է խուլերի՝ տարբերակում անցկացնելով միայն ըստ քմայնացման արդյունքների,

3. Հ.-ե. *kh-ն սլավոնականում տարբերվում է *k-ից՝ *kh>x, *k>k։

4. Այս հակադրությունն ունեցողները, ինչպես նշել ենք, հայտնի են որպես satəm լեզուներ՝ ի տարբերություն centum լեզուների։ Սակայն պետք է նկատի առնել, որ քմայնացումը շատ դեպքերում չի տարածվել բոլոր բառերի վրա, և մեզ մոտ որպես սատեմային գնահատված սլավոնական և բալթիական լեզուներն ունեն կենտումային տարրեր։ Թոխարերենը բոլոր ձայնեղները վերածել է խուլերի՝ տարբերակում անցկացնելով միայն քմայնացածների դեպքում։

5. *gh, *g, *k : *gu̯h, *gu̯, *ku̯ (ոչ շրթնային—շրթնային) հակադրությունը պահպանած լեզուները սովորաբար չունեն 4-րդ կետում նշված հակադրությունը և ընդհակառակը։ Սակայն ալբաներենը, լինելով satəm տիպի լեզու, պահպանել է նաև 4-րդ կետում նշված հակադրության հետքերը ըստ բաղաձայնների քմայնացման։ Թոխարերենը լինելով հիմնականում centum լեզու, հազվադեպ բացառություններով [հմմտ. **Иванов,** «Тохарские языки», 13], չի պահպանել *gh, *g, *k: *gu̯h, *gu̯, *ku̯ հակադրությունը։ Հայերենը ունի շրթնայինների որոշ հետքեր, բայց մեր կողմից գնահատված է որպես հիմնականում այդ հակադրությունը չճանաչող լեզու[2]։

6. Խեթերենի վիճակը լիովին պարզ չէ. այն նշանակված է մինուսով՝ ըստ որոշ հետազոտողների սահմանած վիճակի, այսինքն՝ ընդունվում է *bh, *dh, *gh>*b, *d, *g> p, t, k անցում, որի հետևանքով նախկին շնչեղ և ոչ շնչեղ ձայնեղները խառնվել են [**Гамкрелидзе, ПС,** 1961, 252—253]։

7. *r-ից հետո խուլերի ձայնեղացումը գերմանականում կապված է ոչ թե տվյալ դիրքի, այլ Վեռների օրենքի գործողության հետ, այսինքն՝ պայմանավորված է շեշտի դիրքով։

---

[2] Այլ կարծիքի է Վ. Պիզանին, բայց նրա բերած ապացույցները կասկածելի են։

10. Հայերենում այս փոփոխությունն արտահայտված է միայն մասամբ (փաստորեն ±) և թերևս ենթաշերտային (սուբստրատային) ազդեցությամբ։

11. Ալբաներենում՝ միայն որոշ դեպքերում (դիրքերում). հմմտ. *sūlo->(h)ül «աստղ» (այլև *sm>m)։ Փռյուգերենում ընդհանրապես *s->s-, բայց *su̯ կապակցության մեջ *s-ն ընկնում է, մի դեպք, որ վերաբերում է բաղաձայնական կապակցությունների փոփոխությանը։

12. Հայերենի համար *tt>st փոփոխությունը լոկ ենթադրվում է բաղաձայնախմբերի փոփոխության ընդհանուր օրինաչափության հիման վրա. ենթադրվող (*tt>)*tst միջակա աստիճանը հայերենում պետք է տար *st [հմմտ. Ջահուկյան, ՀԱ, 1976, 271—272]։

Ալբաներենը ունի s, որ ըստ Է. Հեմպի [AID, 116] գալիս է թերևս *ts-ից. Ա. Մեյեն ընդունում է *tt>st փոփոխությունը, որ նույնությամբ նշում է Հ. Աճառյանը։

13. Վ. Պորցիգը [**Porzig**, 1954, 78—79] տարբերում է hr և r(r) փոփոխությունները՝ երկրորդը համարելով առնմանության արդյունք և հայերենը հատկացնելով սրան. նրա համար հիմք է ծառայում *sr-ի և *pr-ի փոփոխությունների տարբերությունը՝ *sr>r և *pr>r։ Սակայն Վ. Պորցիգի վարկածը կասկածելի է, եթե նկատի առնենք *sr>*hr>r փոփոխության հնարավորությունը (Վ. Պիզանի)։

15. Հայերենը և հունարենը ունեն զգալի թվով ընդհանուր բառեր, որոնց «ձայնավոր+ձայնորդ» սկզբի դիմաց այլ լեզուներ ունեն ձայնորդով սկիզբ. առանձին դեպքերում հավելյալ ձայնավորներ ունեն նաև խեթերենը, թոխարերենը, լիտվերենը, թրակերենը, ալբաներենը, հին իռլանդերենը, որոնց համար, սակայն, դրանք բացառություններ են կամ պայմանավորված են այլ պատճառներով (հմմտ. *me «ինձ», *neu̯n «ինն», *nomn̥ «անուն», *reku̯- «խավար» բառերի արտացոլումները)։

16. r-ով բառ սկսելու կարողությունը հատուկ է հնդեվրոպական լեզուների մեծ մասին, բայց որոշ լեզուներում, այդ թվում հայերենում սահմանափակված է մասամբ ներքին պատճառներով, մասամբ ենթաշերտային ազդեցությամբ [**Kammenhuber**, 1961, 57—58]։ Հունարենում բառասկզբի r-ն կամ ուղեկցվում է նախորդող ձայնավորով, կամ ունենում շնչեղություն։

18. Վերջավանկերի անկումը ալբաներենում հնարավորություն չի տալիս ճշտորեն որոշելու վերջնային *m-ի (օր.՝ հայցականի վերջավորության) բախտը։

19. Հայերենում *i̯-ն տալիս է ջ։ Թրակերենի միակ օրինակն է Iuras գետանունը, որի սկզբնահնչյունը զուգահեռներ ունի լիտվ. jūra «ծով», հայ. յուր, -ոյ բառերի մեջ. սրանք ենթադրում են i̯-ի հավելում դեռևս հ.-ե. միասնության շրջանում, թեև ոմանք i̯-ն համարում են լեզուների անկախ զարգացման արդյունք՝ ուշ հավելում [հմմտ. **Дуриданов**, 1976, 97]։ Կելտական լեզուներում *i̯-ն մասամբ պահպանվում է, մասամբ վերածվում է h-ի կամ ընկնում [հմմտ. **Льюис—Педерсен**, 1956, 38—39]։ Հունարենում այն վերածվում է մասամբ ζ-ի, մասամբ շնչի։

20. Հ.-ե. *u̯-ն գ-ի է վերածվել (թերևս անցնելով միջին *gw աստիճանով) բավականաչափ ուշ և, հետևաբար ուղղակի կապ չունի կելտական խմբից գալականի gw-ի հետ. սրանք զուգահեռ զարգացման արդյունք են և

ինչպես նշվել է, թերևս հիմք են ունեցել ելակետային արտասանական ընդհանուր առանձնահատկության մեջ։

21. Հայերենում՝ ար, ալ/աղ, *հունարենում՝* αρ/ρα, αλ/λα*։ Հնդկերենում պահպանվում է ձայնավոր ձայնորդը, ուրիշ լեզուներում* a*-ի փոխարեն հանդես են գալիս այլ ձայնավորներ՝* u, o, i, e*։*

22. Մինուսով նշանակվածներն ունեն u, o, i, e *ձայնավորներ։ Պլյուս-մինուսով (±) նշանակվածներից խեթերենը* *ṛ*-ի դիմաց ունի* a, ṇ*-ի դիմաց՝* a(n)*.*

23—24. Թեև հայերենին վերագրվում է *e*-ի երանգի պահպանում, բայց ռնգայիններից առաջ այն վերածվել է* ի*-ի։*

26. Փաստերը բերված են ըստ Ա. Մեյեի, որ հենվում է գերազանցապես *dhug(h)əter *«դուստր» օրինակի վրա։ Սակայն ուրիշ դեպքերում նման համապատասխանություններ դժվար է հաստատել։*

Ի՞նչ եզրակացությունների կարելի է հանգել բերած տվյալների հիման վրա.

1. Ըստ հնչյունական ընդհանուր հատկանիշների քանակի հայերենի հետ մյուս լեզվախմբերն ունեն մերձավորության հետևյալ աստիճանները.

1. Հունական՝ 14.
2. Փռյուգական 12,5(→13,5).
3. Թրակյան 11(→13).
4. Սլավոնական՝ 11.
5. Իրանական՝ 10,5.
6. Բալթիական՝ 10.
7. Կելտական՝ 9,5(→10,5).
8. Գերմանական՝ 9,5.
9. Խեթա-լուվական՝ 8,5(→10,5).
10. Թոխարական՝ 8,5.
11. Իլիրական՝ 8,5(→11,5).
12. Ալբանական՝ 8(→10).
13. Հնդկական՝ 8.
14. Վենետական՝ 6(→10).
15. Իտալյան՝ 6.

2. Եթե համեմատենք մեր տվյալները Ջոլտայի՝ բառային բացառյալ զուգաբանությունների հիման վրա կազմած ցուցակի տվյալների հետ, ապա կարելի է նշել, որ ա) իրենց տեղերը համեմատաբար կայուն կերպով (մինչև 3 աստիճանի տարբերությամբ) պահպանում են հունական (1-ին՝ մեր և 1-ին՝ Ջոլտայի ցուցակում), սլավոնական (4-րդ և 5-րդ), իրանական (5-րդ և 7-րդ), բալթիական (6-րդ և 4-րդ), կելտական (7-րդ և 8-րդ), թոխարական (10-րդ և 10-րդ), ալբանական (12-րդ և 9-րդ), իլիրական (11-րդ և 13-րդ) խմբերը, բ) մեծ չափով փոխում են իրենց տեղերը փռյուգական (2-րդ և 11-րդ), թրակյան (3-րդ և 12-րդ), խեթա-լուվական (9-րդ և 14-րդ), գերմանական (8-րդ և 3-րդ), հնդկական (13-րդ և 2-րդ) խմբերը, ընդ որում առաջին երեքը շատ ավելի մոտ են հնչյունապես, քան բառապես, վերջին երկուսը՝ ընդհակառակն։ Սակայն փռյուգական և թրակյան խմբերի դեպքում պետք է հաշվի առնել նրանց բառային նյութի պակասավորությունը, որ համապատասխանաբար կարող էր բացասաբար անդրադառնալ Ջոլտայի եզրակացությունների վրա։

3. Երկու ցուցակներում էլ սանդղակի առաջին կեսում (1—7/8 աստիճաններում՝ մեր և 1—7-րդ՝ Ջոլտայի ցուցակում) տեղ են գրավում հունական, սլավոնական, իրանական, բալթիական խմբերը։ Գերմանականը տեղ է գրավում գրեթե մեջտեղում՝ կելտականի հետ միասին։

4. Երկու ցուցակներում էլ սանդղակի երկրորդ կեսում տեղ են գրավում խեթա-լուվական, թոխարական, ալբանական, իլիրական խմբերը։

Եթե բացառենք կասկածելի, միասնության շրջանի համար բացառվող և զուգահեռ զարգացմամբ ու համատիպ միջավայրերի ազդեցությամբ բացատրվող դեպքերը (7, 8, 10, 12, 13, 16, 19, 20, 26, 27), ապա ցանկում ստորանիշ կրող մնացած 16 դեպքերի համար կստանանք համապատասխանաբար հետևյալ հաջորդականությունը.

1. Փռյուգական՝ 10,5(→11,5).
2. Հունական՝ 10,5.
3. Թրակյան՝ 8,5.
4—6. Թոխարական՝ 7,5.
4—6. Սլավոնական՝ 7,5.
4—6. Իլիրական՝ 7,5.
7. Խեթա-լուվական 6,5(→8,5).
8. Բալթիական՝ 7.
9—10. Իրանական՝ 6,5.
9—10. Գերմանական՝ 6,5.
11—12. Հնդկական՝ 6.
11—12. Վենետական՝ 6.
13. Կելտական՝ 5,5.
14. Ալբանական՝ 5(→6).
15. Իտալյան՝ 5։

Ինչպես տեսնում ենք, պատկերը համեմատաբար քիչ է փոխվում. Նշելի են միայն թոխարականի, իլիրականի և կելտականի տեղաշարժերը. առաջին երկուսը հայերենին ավելի են մերձենում, երրորդը՝ ընդհակառակն։

3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քերականական զուգաբանությունների ցանկն ընդգրկում է հիմնականում ձևաբանական, հազվադեպ նաև բառակազմական (հիմքերի կազմության հետ կապված) և շարահյուսական (հիմքերի և ձևերի գործածության հետ կապված) հատկանիշներ։ Դրանք դասավորված են հետևյալ հաջորդականությամբ. նախ բերվում են անվանական, ապա դերանվանական և, վերջապես, բայական հիմքակազմության և ձևակազմության հետ կապված հատկանիշները, ընդ որում դերանունների դեպքում ընդգրկվում է նախ անձնական, ապա ցուցական և հետո մյուս դերանունների, բայերի դեպքում՝ նախ ներկայի և ապա անցյալի ձևերի կազմությունը։

Նկատի ունենալով թրակյան, իլիրական և վենետական (ու սրա հետ կապված մեսապյան) քերականական ձևերի վերաբերյալ տվյալների անբավարարությունը՝ մենք քերականական զուգաբանությունների ցանկից հանում ենք այդ լեզուները, մանավանդ որ, բացի թրակերենից, մյուսները հայերենի հետ առանձին մերձավորություն չեն ցուցաբերում։

Հատկանիշներ	Հ	Ի	Թ	Խ	Մ	Բ	Փ	Թր	Հն	Ա	Իլ	Վ	Իտ	Կ	Գ
*1. Գործող անձի *-tel/tl- ածանց՝ ի հակադրություն *ter-ի	—	—	—	+	+	—	—?		—	—			—	—	—
*2. *-l(o)-ով հիմքերի գերբայական գործածություն	—	—	+	—	+	—	—		—	—			—	—	—
3. *-o-ով հիմք ունեցող իգական սեռի գոյականներ	—	—	—	+	—	—	—		+	—			+	—	—
4. Ածական համեմատության աստիճանի կազմության նկարագրական եղանակ	—	—	+	+	—	—	—?		—	—			—	—	—
*5. Գործիականի *-bhi (հգն. *-bhis) վերջավորություն	+	+	±	—	—	—	—?		+	—			—	+	—
6. Գործիականի, տրականի և բացառականի *-bh- կազմիչ՝ ի տարբերություն *-m-ի	+	+	±	?	—	—	?		+	?			+	+	—
7. Արական հոգնակի ուղղականի երկրորդական *-oi վերջավորության բացակայություն	+	+	—?	+	—	—	—		—	—			—	—	—
8. Հոգնակի ներգոյականի *-s- (*-su, *-si) կազմիչ	+	—	—	—	+	+	?		+	+?			—	—	—
*9. 1-ին դեմքի անձնական դերանվան սեռական հոլովի և տրական դերանվան *-m/n-ով հիմքի բացակայություն	—	—	—	+	—	—	+		+	+			+	—	—
*10. 1-ին և 2-րդ դեմքերի անձնական դերանունների՝ ետնալեզվային պայթականով (*g'h, *g') աճած ձևեր	+	—	—	—	—	—	—		+	—			+	—	—
11. 1-ին դեմքի անձնական դերանվան հայցականի և այլ թեք հոլովների ձայնավոր նախահավելված (*e-me և այլն)	—	—	—	+	—	—	—		+	—			—	—	—
12. 2-րդ դեմքի անձնական դերանվան թեք հոլովների և տրական ու անդրադարձ դերանունների *-u̯-ով աճած ձև	+	+	—	—	+	+	+		+	+?			+	+	—
*13. 1-ին դեմքի անձնական դերանվան հոգնակի *mes ձև՝ ի տարբերություն հատկապես *u̯es ձևի	—	—	—	—	+	+	?		+	—			—	—	—
14. Մերձավոր առարկա ցույց տվող *k'o- դերանվանական հիմք՝ ի տարբերություն *k'i- և այլ հիմքերի	—	—	—	±	—	—	—		—	—			—	—	—
*15. Հեռավոր առարկա ցույց տվող *-n- տարրով ինքնուրույն դերանուն	±	±	+	+	+	+	+		±	—			—	—	+
16. Հարցական *kᵘo- և *kᵘi- հիմքերի միաժամանակյա պահպանում (անձի և իրի տարբերակմամբ՝ +, այլ արժեքով՝ ±)	+	—	—	±	+	—	—		—	—			±	—	—
*17. *i̯o- հարաբերական դերանվան փոխարինում հարցական (և ցուցական) դերանուններով (*i̯o-ի միաժամանակյա պահպանում այլ գործառությամբ՝ ±)	—	—	+	+	±	±	—		—	—			+	+	±
18. Ներկայի *-n(e)- միջածանցով բայահիմքերի կորուստ կամ փոխարինում վերջածանցավոր հիմքով	—	—	—	—	+	—	—?		—	+			—	—	+
*19. *-neu/nu- ածանցով կազմություններ	+	+	—	+	—	—	—?		+	—			—	+	—
20. Ներկայի *-i̯e/i-, *-i- վիճակացույց ածանց (վիճակացույց *-i-, *-i-՝ +, վիճակացույց *-i̯e- կամ միաժամանակ նաև *-i̯o- և *-i-՝ ±)	+	+	—	—	+	+	?		+	±			±	±	±
21. Ներկայի *-ē- վիճակացույց ածանցով հատուկ հիմքային ձևերի բացակայություն	+	+	+	+	—	—	?		±	—			—	±?	—
*22. Վիճակի և վիճակային անցման իմաստների արտահայտում միևնույն բայով կամ տարբեր բայերով՝ ի տարբերություն ձևաբանական («վիճակացույց ածանցի առկայություն—բացակայություն») արտահայտության եղանակի	+	+	+	+	—	—	+		+	+			—	+	—
23. Տևական և սաստկական *-ā- ածանցով բայահիմք (այլ հիմքերի հետ խառնված կամ ոչ պարզ իմաստով՝ ±)	—	—	+	—	+	+	—		—	—			+	±	±
24. Ներկայի աթեմատիկ հիմքի 1-ին դեմքի *-mi (կամ երկրորդային *-m) վերջավորության տարածում թեմատիկ հիմքի վրա	+	±	+	±	+	—	—?		—	—			—	—	—
25. Ներկայի հոգնակի 2-րդ դեմքի *-te վերջավորության վրա *s-ի հավելում (*-tes)	—	—	—	—	—	—	—		—	—			+	—	—
26. Ներկայի և ապառնի համադրական (վերջածանցական) տարբերակված ձևերի առկայություն (հայերենից տարբեր *-s(i)e-ով ձևերը նշվում են ±-ով)	+	±	+	—	±	+	+		+	+			+	+	—
27. Կատարյալի (պերֆեկտի) և աորիստի՝ հ.-ե.-ից ժառանգված տարբեր հարացույցերի բացակայություն	—	—	+	+	+	+	—?		—	+			+	+	+
*28. Անցյալի (աորիստ) *e- նախահավելվածով ձևեր	+	+	—	—	—	—	+		+	—			—	—	—
*29. *-is-ով անցյալ (աորիստ) (համապատասխան *-s-ով ձևեր՝ ±)	+	—	±	±	—	—	—		—	—			+	—	—
30. Կրկնավոր հիմքով անցյալ (աորիստ և պերֆեկտ)	+	—	+	—	—	—	—		+	—			+	—	+
*31. Անցյալի *-u̯-ով վերջավորություն	+	—	+	+	—	—	—?		—	—			+	—	—
*32. *-r-ով բայական վերջավորություններ	+	+	+	+	—	—	+		—	—			+	+	—
*33. (Աթեմատիկ) հրամայականի *-dhi- կազմիչ	+	+	—	+	—	—	?		+	—			—	—	—
34. Հրամայականի (հայերենում արգելականի) *-r-ով վերջավորություն	—	—	+	—	—	—	?		—	—			+	—	—
*35. mē մասնիկով արգելական հրամայական	+	+	+	—	—	—	+		+	+			—	—	—

Քերականական հատկանիշների նշանակումն ու գնահատումը կատարվում է նույն սկզբունքներով, ինչ հնչյունականներինը։

Քերականական զուգաբանությունների աղյուսակի առանձին կետերի վերաբերյալ հարկավոր է նշել հետևյալը.

1. -tel- ածանցը հայերենում ներկայացված է ձայնդարձի ստորին աստիճանով (-tl-)՝ միացած հիմքային -ա- տարրի հետ. երկուսը միասին գերբայակազմ արժեք են ստացել *g'enətl-> ծնաւղ։

2. *-lo-ն հայերենում հանդես է գալիս որպես, այսպես կոչված, անցյալ դերբայի (ծնեալ, -ոյ), այլև անորոշի կազմիչ (ուտել, -ոյ)։

3. Հայերենը կորցրել է սեռային տարբերությունները՝ պահպանելով միայն առանձին հետքեր։ Շնչավորի (=արական+իգական) և անշունչի հնագույն հակադրության վկայությունն է համարվում նաև «հարս» բառը, որի նույն սեռականը ցույց է տալիս *-o-ով հիմք, ինչպես հունարենում νυός և լատիներենում (nurus). մյուս լեզուները *snusos-ից ծագող ձևերը վերածել են -ā-ով իգականի (հմմտ. ռուս. сноха)։ Խեթերենն ընդհանրապես չի տարբերում արականը և իգականը։ Փռյուգերենն ունի -o- հիմքով մեկ բառ՝ տր. sorou «աճյունասափոր», բայց այն փոխ է առնված հունարենից և հավանաբար պահպանել է հունարենի իգական սեռը [հմմտ. **Haas**, *1966, 222*]։

4. Հայերենը հնդեվրոպական բաղդատականի ածանցներն ընդհանրապես չի պահպանել, իսկ խեթերենը և թոխարերենը պահպանել են մնացուկների ձևով. հմմտ. է. Բենվենիստի «Թոխարերենը և հնդեվրոպերենը» հոդվածը [ռուս. թարգմ. տե՛ս ТЯ, *1959, 99*]։

5. Գործիականի *bhi-ն հայերենում առկա է -բ (անձամ-բ), -ւ (ամա-ւ), -վ (գետո-վ) տարբերակներով։ Կարծիք կա, որ *bhi-ն սկզբնապես սպասարկու բառ է եղել։ Հունարենում այն մակբայակերտ արժեք ունի, թոխարերենում հանդես է գալիս որպես սեռականի կազմիչ [հմմտ. **Иванов**, ТЯ, *26—27*]։

6. Հայերենում *-bh-ն ներկայացված է միայն եզակի և հոգնակի գործիականում՝ -բ, -բ-ք, -ւ, -ւ-ք, -վ, -վ-ք (հմմտ. նախորդ կետը)։ Խեթերենում, փռյուգերենում և ալբաներենում ընդհանրապես չի ներկայացված. ալբաներենի հոգնակի սեռական-տրականում ինչպես նաև որոշյալ առման բառերի բացառականում հանդիպող v-ն համարվում է ուշ հավելում՝ ձայնավորների միջև եղած հորանջից խուսափելու համար [հմմտ. Десницкая, APCIEB 21, ծան. 30]։

7. Հայերենը հոգնակի *-oi վերջավորությունը, եթե այն նույնիսկ ունեցած լիներ, չէր կարող պահպանել բառավերջում։ Ալբաներենում *-oi>*-i [ըստ է. Պ. Համպի և Շ. Դեմիրայի]։ Հնարավոր է նաև, որ թոխարերենի հոգնակի վերջավորություններից որևէ մեկը պահպանած լինի *oi-ը (հմմտ. i-ն)։

8. Հոգնակի ներգոյականի -s-ն հայերենում խառնվել է հոգնակի հայցականի վերջավորության հետ (ի գետս «գետերում» և զգետս «գետերը»)։ Հաջորդող ձայնավորը պարզ չէ. մյուս լեզուներում այն մասնակի զուգաբանություն է կազմում՝ *-si և *-su։ Ալբաներենը զրկված է հայցականով, որովհետև բզա- sh-ի հանգելը ներգոյականի *-s-ին կասկածելի է [հմմտ. Десницкая, APCIEB, 193]։

9. Լեզուների մի մասն ունի *mem- հիմք, բայց այն համարվում է առնմանության արդյունք։ Փռյուգերենի հայց. *mem(e) ձևը թերևս ոչ կրկնության արդյունք է։

10. Թոխարերենի իգ. 1-ին դեմքի ñuk ձևի k-ն թերևս երկրորդական է։

12. Պարզ չէ թոխարերենի և ալբաներենի վիճակը. առաջինն ունի 2-րդ դեմքի համար cwas տիպի տրական, երկրորդը՝ սոսացականի y-t (-t հոդով) ձև. Յ. Պոկոռնու բառարանում (Pok., 1, 1098) y-t-ն բերված է *t(e)u̯os ձևի տակ։

14. Հայերենի *-o-ով հիմքը երևում է ու-յն ձևի մեջ։ Խեթերենը *k'o-ն պահպանել է ընդհանուր (արական-իգական), *k'i-ն՝ միջին («չեզոք») սեռում։

20. Հայերենը բալթիականի և սլավոնականի նման հստակորեն տարբերում է վիճակացույց *-ī- և անվանածանց *-i̯e/o-ով բայական հիմքերը։ Մյուս լեզուներից, ըստ Ա. Մեյեի [Meillet, 1908, 109—113], հնդիրանականը և հունականը ունեն երկու տիպերի համար էլ *-i̯e/o-, ալբաներենը, իտալյաները, կելտականը և գերմանականը՝ *-i̯o/ī- [հմմտ. նաև Hamp, AID, 116]։

21. Հայերենում *-ē-ն պիտի խառնվեր *-ī-ի հետ։ Ըստ Ա. Մեյեի [տե՛ս **Мейе**, *1938, 124*] «այս տիպը լավ է պահպանված սլավոնականում, բալթիականում, գերմանականում, լատիներենում և հունարենում, բայց այն բոլորովին չկա հնդիրանականում»։ Ալբաներենը, ըստ է. Պ. Համպի [Hamp, AID, *117*], «հարուստ է *-ē- պրետերիտով»։ Փռյուգերենի ավանդված ձևերը հիմք չեն տալիս որոշակի եզրակացության համար։ Յ. Շպեխտը նշում է *-ē-ով վիճակացույց բայերի հարացույցի առկայությունը թելային խեցեգործության տարածման շրջանում (սլավոնական-բալթիական, լատինական, գերմանական լեզուներում) և դրա բացակայությունը հայերենում ու հունարենում (իրականում, սակայն, հունարենն ունի *-ē-ով մնացուկային ձևեր) [հմմտ. **Макаев**, *1964, 43—44*]։

22. Ինչպես նշում է և Պորցիգը, սլավոնական, բալթիական, իտալյան և գերմանական լեզուները ձևաբանորեն տարբերում են վիճակի և վիճակային անցման իմաստները. հմմտ. ռուս. сидеть և садиться, լատ. sedeō և sīdō և այլն։ Գրաբարը բուն քերականական այդպիսի տարբերակում չունի (հմմտ. նստիմ «1. նստած եմ. 2. նստում եմ»), և անհրաժեշտության դեպքում այն անցկացնում է տարբեր բայերով ու նկարագրական եղանակներով։ Ժամանակակից հայերենը երկրորդաբար տարբերակում է -ած եմ և -ում եմ ձևերով՝ նստած եմ—նստում եմ, կանգնած եմ—կանգնում եմ և այլն։

24. Հայերենում և սանսկրիտում աթեմատիկ հիմքերի *-mi-ն ընդհանրացել է՝ տարածվելով թեմատիկ հիմքերի վրա. սլավոնականում այդ նույն դերը կատարել է երկրորդային *-m վերջավորությունը։

25. Հայերենը և լատիներենը հոգնակի երկրորդ դեմքի *-te-ի վրա ավելացրել են *-s՝ թերևս համաբանորեն և իրարից անկախ ընդհանրացնելով եզակիի վերջավորությունը. հմմտ. գրաբ. գնա-յք և լատ. ornā-tis «զարդարում եք»։

26. Հնդեվրոպական մի շարք լեզվախմբերում չկան ապառնի արտահայտության հատուկ վերջածանցավոր ձևեր. մյուս լեզուները, այդ թվում նաև հայերենը, ստեղծել են ապառնի հատուկ ձևեր՝ մասամբ ստորադասական եղանակի, մասամբ, այսպես կոչված, ցանկականի ձևերի բազայի վրա, ընդ որում սանսկրիտը, լիտվերենը, փռյուգերենը, հունարենը, լատիներենը, կելտականը տարածել են *-s(i̯)e/o- ածանցական մասնիկը, որ ավեստերենում և սլավոնականում լոկ մնացուկներ ունի։ Թոխարերենը, գրաբարի նման, ապառնին արտահայտում է ստորադասականի ձևերով. ալբաներենը [illegible] ստորադասականի հիման վրա կազմել է ապառնիի վերլուծական

ձևեր։ Բոլոր դեպքերում էլ հայերենի և այս լեզուների ապառնիի կազմության ընդհանրությունը ծագումնային-նյութական չէ, այլ տիպաբանական։

27. Աորիստի և կատարյալի (պերֆեկտի) տարբերակում անցկացնում են միայն հնդիրանական, հունական և թերևս փռյուգական խմբերը (փռյուգականի համար հմմտ. եզ. 3-րդ դեմքի աոր. e-daes և պերֆ. dakar ձևերը՝ միևնույն *dhē- «դնել» արմատից)։ Մյուսները կամ դրանք խառնել են՝ մեկնումեկի գերակշռությամբ, կամ պահպանել մնացուկային ձևով. այսպես, խեթերենում պերֆեկտի բազայի վրա կազմավորվել է ներկայի -ḫi խոնարհումը, գերմանականում՝ այսպես կոչված անցյալա-ներկայական (praeterito-praesentia) կոչված բայերի խոնարհումը և այլն։ Հայերենում ներկայի արժեք ստացած գիտեմ և գոմ բայերի հիմքային ձևերը (*u̯oid- և *u̯os-) համարվում են պերֆեկտի մնացորդ։ Հայերենի անցյալ կատարյալը կազմվել է անկատարից՝ աորիստի խառնուրդով։

28. Հայերենում *e- նախահավելվածը սահմանափակվել է միայն միավանկ հիմքերով. այն ունեցող մյուս լեզուներում այդպիսի սահմանափակում չկա։

29. *-is-ով անցյալի ձևերը հայերենում պահպանվել են անցյալ կատարյալի -եա-ց-ով և անցյալ դերբայի -եա-լ-ով ձևերի մեջ՝ *-is-ā->-եա-։ Է. Բենվենիստը [հմմտ. Бенвенист, ТЯ, 95] *-is-ով ձևերի հետ միացնում է նաև թոխարերենի և խեթերենի անցյալի -s-ն (հմմտ. 2-րդ դեմքի համար թոխարերենի -s-t և խեթ. -s-ta-), որի դեպքում, ըստ նրա, «չի կարելի խոսել ոչ նորագոյացման, ոչ սիգմատիկ աորիստի, ոչ էլ միայն թոխարերենին ու խեթերենին հատուկ փաստի մասին»։

30. Հայերենը պահպանել է միայն մեկ կրկնավոր հիմք՝ արարի «արեցի»՝ առնեմ-ից, մինչդեռ սանսկրիտում և հունարենում կրկնությունը կազմության տարածված եղանակ է։

31. Հայերենում *u̯-ն հանդես է գալիս միջին-կրավորական սեռի -ա-ւ վերջավորության մեջ։ Ալբաներենի անցյալի 1-ին և 2-րդ դեմքերի v-ն երկրորդական է, ինչպես հոգն. սեռ.-տր. -v-ն (տե՛ս 6-րդ կետը) [հմմտ. Десницкая, БФ, 60].

33. Հրամայականի *-dhi-ն հայերենում հանդես է գալիս -ջի՛-ր տիպի հրամայականում։ Խեթերենի դեպքում հմմտ. arnu-t, i-t տիպի հրամայականները, որոնց -t-ն գալիս է *-dhi-ից։

[*(s)ner-]		+	+			+	+			+	—			—	—	+
*(s)ner-k-	ներգեւ4.82	—	—			—	—			+	—			—	—	+
[*snēu-]		+	+	+		+	+			+	+			+	—	+
*sneurt-	նեարդ4.131	+	+	+		—	—			+	—			+	—	+
*snēu-	+անիւ10.76															
[*snusós]		+	—			+	—			+	+			+	—	+
*snusos	նու,-ոյ2.64	—	—			—	—			+	—			±	—	—
[*solo-]		+	+	+		—	—			+	+			+	+	+
*sollo- (*solulo-?)	ողջ,-ոյ4.83, 11.26, 13.13 (ամբողջ13.13)	—	—			—	—			—	—			—	+?	—
[*(s)p(h)ei-]		+	—	+	+	+	+		+	+	—			+	—	+
*phikinā-	փքին,-աց20.25	—	—			—	+			—	—			+	—	+
*phat-di-	+փայտ,-աց20.25	—	—	+		—	±		±	—	—			±	—	+
[*spek'-]		+	+			—	—			+	+			+	-	+
*pek'-	+բ. (*հեատնել>) հիանիլ 15.51	+	—			—	—			—	+			—	—	—

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
[*(s)pel-]		−	−	+		−	−			+	−			−	−	+
*spel-	(առա-)սպել18.21	−	−	−		−	−			−	−			−	−	+
[*(s)p(h)el-₁]		+	+	+		+	+			+	−			+	+	+
*phel-g-	փեղկ7.221	−	−			−	+			+	−			−	+?	+
[*(s)p(h)el-₂]		+	−			−	+			+	−			−	+	−
*phol-	փողփողեմ15.56															
*phьl-	փաղփաղիմ15.56															
*phьlil-	փայլ,-ի15.56	+	−			−	−			−	−			−	−	−
[*sp(h)elg'h(en)]		+	+			+	−			+	−			+	+	−
*phəlg'n̥ia?	(*փաղծայն>)փայծաղն 4.471															
[*(s)pen-(d-)₁-. հմմտ.*sp(h)ei-, *sp(h)e-]		−	−			+	+	+		+	+			+	−	+
*pen-	հինեմ (-ում, հենում)6.33 բ. հեն-ք6.21	−	−			+	+			±	±			−	−	−
*pьn-?	հանում6.33															
*phən-?	փան-աք?11.52	−	−			−	−			+	−			−	−	−
*phenį-(> *phein-)	փին-ատ?11.52	−	−			−	−			+	−			−	−	−
[*(s)pen-₁, *(s)pondho-]		−	−		+?	+	−			−	−			+	+	+
*phondho-	փունդ5.26															
[*+sp(h)en-]		−	−			−	−			+	−			−	−	−
*phen-	փին4.66															
*phen-th-	փն-թի15-88															
[*speno-, *stĕno- *p(ə)stĕno-]		+	+	+		−	+			+	−			−	−	+
*stēno-	ստին-ք4.41	+	−			−	−			+	−			−	−	−
*psen-	+(միա-)սին5.12	−	−			−	±			−	−			−	−	±
*pson-	սուն-, սնեմ5.111															
*psn̥-	սան2.731															
[*sper-₃]		−	−			−	+			+	−			−	−	−
*phьr-	փարեմ16.27															
[*(s)p(h)er-₄, *(s)p(h)erəg-]		−	−			+?	−			+	−			−	−	±
*pherg-to-	փերթ (բ. փրթիկ)9.28															
*phereg-?	փետեկեմ?9.27	−	−			−	−			+	−			−		−
[*(s)p(h)er-₁]		+	+			−	+			+	−			+	+	+
*spr̥-nā-mi-	սպառնամ18.44	+	−			−	−			−	−			±	±	±
*phēr-t-	+փրթանիմ(բ.փրթիլ)11.25 +բ. փոթկալ16.25															
[*(s)p(h)er-₂]		−	−		+	−	+			+	−			−	+	+
*sphēr-s-	սփռեմ9.34	−	−		+	−	−			±	−			−	−	−
*spēr-s-	+բ. սպառիլ16.53															
*pher-s-	փռեմ9.31															
*phьrəd-?	փարատեմ10.49	−	−			−	−			+	−			−	−	+
*phōr-phōr-	փրփուր?1.351	−	−			−	−			+	−			−	−	−
*phorsįio-	փոշի?1.213	−	−		+?	−	−			−	−			−	−	−
*phēr-sk-	փրց-լի-ք?4.56															
[*(s)p(h)er-₃]		−	−			−	+			+	−			−	−	+
*spēr-d-	+սպ(ր)տուր4.66	−	−			−	−			+	−			−	−	+
[*(s)p(h)erd(h)-]		+	+		+	+	+		+	+	−			−	−	+

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
spr̥dh-	սպարդիմ (բ. սպրթնիլ, սփրթնիլ)16.53															
*pr̥th-?	հարթ-նում?16.53 արթ-ուն (զ-արթնում)? 4.63															
[*(s)p(h)eu-d-]		±	+			−	+			+	+			−	−	+
*pheu-t?	փույթ,-ոյ6.99, 16.14															
[*(s)p(h)(i)ēu-, *(s)t(h)(i)ēu-]		+	+			+	+			+	−			+	−	+
*thū-ko-	թուք,-ոյ (թքանեմ)4.56	+	+			−	−			−	−			−	−	−
(*ptu-ko-?)		(−)	(−)			(−)	(−)			(+)	(−)			(−)	(−)	(−)
*thū-?	+բ. թու4.56															
[*+sp(h)ong-]		−	−			−	−			+	−			+?	−	−
*psong-	սունկն5.801															
[*srebh-,*sr̥bh-, *serbh-]		−	−	+?		+	+			+	+			+	+	±
*sr̥bh-	սրբ,-իմ (-ենամ)4.98, 5.13	−	−			+	+			+	+			+	−	−
[*srenk-]		−	−			−	−			+	−			−	+	−
*srongh-? (*sronk-?)	ռունգն4.23	−	−			−	−			+	−			−	−	−
[*sreu-]		+	+			+	+		+	+	−			−	+	+
*srou̯ən-?	ռոռգանեմ1.361 առոգանեմ1.361	−	−			−	+			−	−			−	−	−
*sru-t-	առու,-աց (-ո)1.36	+	−			−	+			−	−			−	−	−
[*stā-]		+	+	+	+	+	+	+	+	+	+			+	+	+
*stə-nā-mi	ստանամ11.16	−	±	±		±	±			±	±			+	−	−
*steu̯a-ro-	ստուար12.63	+	+			−	−		+	+?	−			−	−	+
[*stāi-, *sti-]		+	+			+	+			+	−			+	−	+
*stii̯a	ստի?12.51															
[*steb(h)-]		+	+			+	+			+	−			−	+	+
*tob-	թոպեմ9.21	+	−			+?	+?			+	−			−	−	+
[*steg-]		−	−			+	+			−	−			+	−	+
*təg-	թակ-ագ9.48 թակ-եղն9.48 թակ-արդ3.791 բ. թակ-ել9.21															
*təg-no-	թակն9.49	−	−			−	−			−	−			+	−	−
[*steib(h)-, *steip-]		+	−			+	+			+	−			+	−	+
*steib-	ստէպ14.32, ստիպեմ 19.48	−	−			−	+			+	−			−	−	−
[*steig-]		+	+			−	+	+		+	−			+	+	+
*steig'-?	ստէծ (ստեծ)?6.331															
[*steigᵘ-]		−	−			+	−			−	−			−	+	−
*toigᵘ-no-	թէկն (>թեկն)4.19	−	−			+	−			−	−			−	−	−
[*stel(ə)-₂]		−	−			+	+			−	−			+	−	−
*stl̥-no-?	(առա-)ստաղ7.28															
[*stel-₃]		+	−			+	+	+	+	+	+	+		+	+	+
*stel-g'-	ստեղծ-անեմ9.44	−	−			−	+			−	−			−	+	−
*stel-no-?	ստեղն8.551	+	+			+	+	+		+	−			+	+	+
[*(s)ten-₁]		+	+			+	+			+	−			+	+	+
*ten-	+բ.թնալ(թնթնալ)16.37	+	+			−	−			+	−			+	+	+
*teng-	+բ. թնկթնկալ (թնգթնգալ) 16.37	−	−			−	−			+	−			−	−	+

1	2	3	4	5	3	7	8	9	10	11	12	13	14	25	13	17
[*sten-₂'		—	—			—	+?			+	—			—	—	+
*tengh-ի հետ]		(−)	(+)	(+)		(+)	(+)			(−)	(−)			(+)	(−)	(+)
*stengh-	+ստնգամ4.851															
[*(s)ter(ə)-₁																
*(s)trē-]		—	—			+	+		+	+	+			+	+	+
*strō-?	+ստրուկ?19.42	—	—			+	+			±	—			±	±	--
*storii̯o-	ստորի6.331															
[*ster-₂]		+	+	+		—	—			+	—			+	+	+
[*əste(r)l-?	աստղ1.54	—	--	—		--	—			±	—			+	—	—
[*ster-₆]		+	—			+	—			+	+			+	—	+
*ster-dho-	ստերդ3.141	—	—			—	—			—	—			—	—	+
*ster(dh)i̯o-	ստերջ3.141	—	—			—	--			+	—			—	—	—
[*(s)ter-₈]		—	+		+?	+	+		+	+	—			+	+	+
*tor-	թոր-եմ10.32	—	±			+	+			—	—			—	—	±
*tər-	թար-ախ4.851															
[*(s)teu-₁]		+	—			+	+		+	+	+			+	+	+
*tu-n-d-	(*թունտ>)թունդ (-եմ,-ամ)18.11	+	—			—	—		+	+	+			+	+	+
[*steu-₂, *teu-]		+	+			—	—			+	—			—	—	—
*tou-	թո-թովեմ?4.961															
[*steu̯ə-, *stāu-]		+	—			+	+			+	—			—	—	—
*steu̯o-	ստեւ,-ոյ4.141	+	—			—	—			—	—			—	—	—
[*su-]		+	+			+	+			+	—			—	+	+
*su-	հու-13.15(հ-մուտ9.41)															
[*su̯ād-, հմմտ.																
*dl̥k'u-?]		+	+			—	+			+	—			—	+	+
*suād-l-sk'u-	քաղցր,-ու15.35															
[*su̯eid-]		+	—			—	+			+	+			+	+	+
*su̯id-ro-m	քիրտն4.55	—	—			—	+			+	—			—	—	—
[*su̯ek'ru-]		+	+			+	+	+		+	+			+	+	+
(*su̯ek'urā>)																
*k'u̯ek'urā	սկեսուր,-աց2.62 (-այր 2.61)	+	+			—	—			—	—			—	—	—
[*(k')su̯ek's]		+	+	+		—	—			+	+	+		+	+	+
*ksu̯ek's	վեց13.531	+	—			—	—			—	--			—	—?	—
*ksu̯ьk's-k'omtə	(*վացսուն>)վաթսուն 13.531	—	—			—	+			+	—			—	—	+
[*su̯el-]		+	—			—	+			+	—			—	—	+
*su̯l̥d-sk-	քաղց(-նում)5.14	—	—			—	—			—	—			—	—	+
[*s(u̯)en-]		+	+			—	+			—	—			+	+	+
*son- (*sun-?)	հունձ15.44	—	—			—	+			—	—			—	+	—
[*su̯ep-]		+	+	+	+	+	+			+	+			+	+	+
*su̯op-no-s	քուն,-ոյ4.61	+	+	±		±	±			±	±			+	±	+
[*su̯esor-]		+	+			+	+	+		+	—			+	+	+
*su̯esōr-	քոյր2.45	+	+			±	±	+		±	—			+	+	+
(սեռ. *-sros)	(սեռ. քեռ)2.45															
[*tā-, *tāi-,																
*tāu-]																
*tā-ni-	թան5.64	—	+			+	+		+	+	—	+	+	+	+	+
	թանձ4.841															
*tə-nā-mi?	թանամ15.83															
*tā-kh-	+թա-թախեմ10.33	—	—			—	—			+	—			—	—	—
*təi-ni-	+բ. (*թայն>)թէն15.83	—	—			+	—			—	—			—	—	+

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
*təu-skh-?	թաւշնիմ4.82															
	թաւշկանամ15.261															
*təu-b-	+թաւպ4.821															
*tī-ro-	թր-իր4.66, -եմ5.531	—	—			—	+			—	—			—	—	—
(*tū-ro-?)	(բ. թի-թրէն)7.311															
*tū-r-	թուրմ, թրմեմ15.83															
	թուրջ-, թրջեմ15.83															
[*tal-]		—	—			—	+			+	—			+	—	—
*tal-	+բ. թալ8.531															
*tel-?	+թել-ուկ8.531															
[*tap-₁]		—	—			+	—			—	—			—	—	—
*tap-	թա-թաւեմ10.33															
*tap-ni-	թաւն1.751															
[*tap-₂]		—	—			—	—			+	—			—	—	+
*tap-	+թաւալեմ?10.15															
[*tata-, *tĕta-]		+	—			+	+			+	+			+	+	+
*teta-	տխտ?4.41	—	—			—	—			+	—			—	—	+
*teit-?	տխտան?2.721															
[*tek-' *tek'-ի																
հետ]		-	+			—?	—			—	—			+?	-	+
*tek-	թերեմ9.61															
*tēk-ro-	թիւր (թեւր)?12.74															
*tek-lo-	+թել,-ոյ6.38															
[*tel-₁]		+	—		+	+	+			+	—		+	+	+	+
*tol-nu-mi?	թողում?19.47															
*toli̯o-?	թոյլ,-ոյ (-ի)4.82															
*tel-	+թեղ12.21															
[*tel-₂]		+	—			+	+			+	—	+		+	+	+
*tel-	թի-թեղն9.69															
*tol-	թաղ19.151															
	թաղ-ի-ք6.27															
	թաղ-եմ4.78															
	թաղ-12.64															
*tl̥-to-?	+թաղթ8.531															
[*tem(ə)-]		+	—			+	—			—	—			+	—	+
*temiro-?	թմ(ր)րիմ (թմրիր)4.911															
[*temp-]		—	+	+		+	+			—	—			+	+	—
*tm̥p-	թամբ,-աց10.661															
[*tengh-]		—	+	+		+	+			—	—			+	—	+
*tn̥g'hu-?																
(*tn̥ghi̯u-?)	թանձր,-ու12.64	—	—			+	+			—	—			—	—	+
[*ter-₂]		+	+			—	+			+	+			+	+	+
*tor-no-	թոռն2.48	+	±			—	+			±	—			±	—	—
	+բ. թոռ14.13															
*tr̥-mo-	թարմ14.13	—	—			—	--			±	—			+?	—	+
[*ter-₃]		+	—	+		+	+		+	+	+			+	+	+
*tōro-	թուր,-ոյ20.27															
*tor-g'-	+բ. թործ9.451															
*tori-g'-?	+բ. թորիծ9.46															
*tōrg'-	թուրծ4.208															
*trag'-	արածեմ3.16	—	—	+		—	—			+	—			±	—	±
[*ter-₄]		—	—			—	—			+	—			+	+	—
*tōr-tōro-	թրթուր,-ոյ3.84															

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
[*ters-]		+	+			—	—			+	+			+	+	+
*tors-	թոռ-ոմ8.521	+?	—			—	—			—	—			+	—	+
	թորշ-ոմ8.521															
*tr̥s-	թառ-ամ8.521	+	—			—	—			—	—			—	—	+
	թարշ-ամ8.521															
*tr̥si̯ā-	թառ (-իմ)3.511	—	—			—	—			+	—			—	—	+
[*tet(e)r-]																
*tьtēr?	տատրակ?3.641	+	+			+	+			+	—			±	—	—
[*teu-]		—	—			—	—			+?	—			+	+	+
*tou-	թողեմ22.43															
[*tēu-, *teu̯ə-, tu̯ō-]		—	—			—	—			—	—			—	+	—
*tēu̯o-	թիւ,-ոյ13.12	+	+		+	+	+		+	+	—	+		+	+	+
*təu̯o-	թաւ12.64	+	+			+	—			+	—			±?	—	—
*tu-pho-	թուփ,-ոյ1.421	+	+			±	—			+	—			+?	—	—
*tur-so-	+թուռ4.208, (թուրշ>) թուշ4.208	—	—			—	—			+	—			—	—	+
*tu-m-bh-?	թումբ1.22	+	+			—	—			+	—			+	—	—
[*to-, *tā-]		±	—			—	—			+	—			—	+	±
*to-	դ-, -դ (դ-ա, այ-դ, աւա--դ-իկ)23.33, 23.34	+	+	+	+	+	+	+		+	+			+	+	+
	դո-յն23.32															
*te-?	(ե-)թե (ե-թէ, եթիւ, թե-թու-ք)23 65	—	—			—	+			—	—			—	—	+
[*tor-]		+	—		+	+	+			+	—			—	—	—
*ter-	ըն-թեռ-նում18.52	—	—		+	—	+			—	—			—	—	—
*tōr-tōr-	թրթրակ?18.21	—	—		—	+	—			—	—			—	—	—
[*treg-]		—	—			+	+			—	—			—	+	+
*treg-	արեկ4.81															
[*trei-]		+	+	+	+	+	+		+	+	+	+	+	+	+	+
*trei̯es	երեք13.41															
*tri-	երի-ց-ս13.44															
	երե-ամ13.41															
*trii̯ək'omtə?	երեսուն13.531	+	+	+		—	—			+	—			+	+	—
[*tres-, *ters-]		+	+			±	+			+	—			+	+	—
*tres-?	եր-եր10.26															
[*tū-]		+	+	+	+	+	+			+	+			+	+	+
*tu	դու23.13															
*tu̯e-g'h-	քե-զ23.94	—	—		+	—	—			—	—			—	+	—
*tu̯o-	քո(յ)23.23	+	+			+	+			+	+			+	—	—
[*tu̯er-]		—	—			+	+			+	—			—	+	—
*tu̯r̥-p-	թարր (թարփ)3.661	—	—			—	—			+	—			—	—	—
[*ub-]		+	+			—	+		+	—	—			—	—	—
*ub-	+բ. հուպ9.342															
[*ul-]		+	—			—	+			+	—			+	+?	—
*ul-ul-	+բ. ուլուլալ16.37	+	—			—	+			—	—			+	—	—
[*uper-]		+	+			—	—			+	—			+	+	+
*uper-	(ի) վեր23.57															
*upero-	վեր,-ոյ12.33															
[*up(o)]		+	+			+	—			—	—			+	+	+
*(ek)s-ub-	հուպ,-ոյ12.43	—	—			—	—			—	—			+	—	—
[*u̯adh-]		—	—		+?	—	—			—	—			+	—	+
*u̯adh-mi	գամ10.48 (գ-գամ15.11)															

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
[*u̯ai-]		—	+		+	—	+			—	+			+	+	+
*u̯ai-	վայ16.34															
*u̯ai-i̯e-?	վայեմ16.34	—	—			—	+			—	—			—	—	+
*u̯ai-lo-'		—	—			—	—			—	—			—	+	—
*u̯l̥kᵘo-ի հետ	գայլ,-ոյ3.71															
[*u̯al-]		—	—	+		+	+			—	—			+	+	+
*u̯al-	(ն-)ուաղ?4.82															
[+*u̯ed-]		—	—		+	—	—			+	—			—	—	—
*u̯edeno-	+գետին,-ոյ1.212															
[*u̯ei-]		(+)	(—)		(+?)	(+)	(+)		(+)	(+)	(+)			(+)	(+)	(+)
*u̯oi-nii̯om?	գինի5.92	—	—		+	+	—			+	+			+	+	+
[*u̯(e)idi]		+	+			+	+	+		+	—			+	+	+
*u̯i-n-d-	գտ-անեմ11.32	+	—			—	—			+	—			—	+?	—
(աոր.*e-u̯id-et)	(աոր. եգիտ)11.32															
*u̯i(n)d-?	գի-ւ-տ11.32															
*u̯oid-	գիտ-եմ17.17	+	+			+	+			+	—			+	+	+
	գէտ (գիտ-ուն)17.21, 22.43															
[*u̯eis-₃]		+	+			+	+			+	—			+	+	+
*u̯eis-kho-	գէշ4.77															
[*u̯ekᵘ-]		+	+	+	+	—	—			+	—			+	+	+
*u̯okui̯e-	գոչեմ18.13															
[*u̯el-₁]		—	—			—	—			—	—	+		+	+	+
*u̯el-	գեղ,-ոյ16.81															
[*u̯el-₂]		+	+		+	+	+		+	+	—			+	+	+
*u̯eldi̯-	գեղձ16.62	—	—			—	—			+	—			—	+	—
[*u̯el-₄]		+	+		+	+	+			+	—			+	+	+
*u̯el-mn̥	գեղմն6.22	—	—			—	—			—	—			+	—	+
[*el-₅]		—	—			—	+			+	—			—	+	—
*u̯el-?	գեղեմ12.27	—	—			—	+			+	—			—	+	—
*u̯ol-	գող11.57, 21.45	—	—			—	—			+	—			—	—?	—
	գող-եմ12.27															
*u̯ьl- (*u̯l̥-?)	գաղեմ12.27															
*u̯el-d-	գեղտ17.36	—	—			—	+			—	—			—	—	—
*u̯ol-d-	գողտ-ուկ17.36															
*u̯l̥-d-	գաղտ-նի17.36															
[*u̯el-₆]		—	—			—	+			—	—			—	—	—?
*u̯olo-	գոլ15.85															
[*u̯el(ə)-₇]		+	+	+	+	+	+			+	+	+		+	+	+
*u̯elu-	գելում10.14	—	—	+		—	—			+	—			+	—	+
*u̯elūmn̥	գելումն10.14	—	—			—	—			+	—			+	—	+
*u̯elā	գիլ (-որ,-ան)1.44															
	գիղ1.44															
*u̯ele-	գլեմ10.15	+	—			+	+			—	—			—	—	—
*ulə-ro-	լար,-ոյ (-ի,-այ)9.19	—	—			—	—			+	—			+	—	—
*u̯al-	գալ-ար10.14															
*u̯l̥-m̥-bhi-	լամբ12.821															
(*u̯l̥-n̥-ից)		—	—			+	+			—	—			—	—	+
*u̯lo-ro-?	+ոլոր10.14															
	ոլոր-տ10.14															
*u̯el-g'h-	գեղձ8.511															
*u̯l̥-g'h-	գաղձն8.511															
[*u̯el-₈]		—	—		+	+	+			+	—			+	+	+
*u̯ol-ph-	+բ. գլփել11.14															
[*u̯elk-, *u̯elg-		—	—			+	+			—	+	+		—	—	+

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
*(հմմտ.*u̯el-$_6$)]																
*u̯l̥ki̯o-?	ղաղղ15.85	—	—			—	+			—	—	+		—	+	+
[*u̯en-]		+	+	+	+	+	—			—	—		+	+	+	+
*u̯on-	գուն9.99															
[*u̯endh-]		+	—	+		—	—			+	+			+	—	+
*u̯endhā	գինդ,-ագ6.711	—	—			—	—			—	+			—	—	—
*u̯endhi̯o-	գինձ,-ոյ8.531															
[*u̯er-$_1$Aβ.հմմտ.		—	—			+	+			+	+			—	—	—
*u̯er-$_2$B?]		(+)	(−)	(+)		(+)	(+)		(−)	(+)	(−)			(−)	(+)	(+)
*u̯er-	գեր23.57	—	—			—	—			+	—			—	—	—
[*u̯er-$_4$]		—	—			+	+			+	—			—	+	—
*u̯er-	գեր-ի20.47	—	—			—	—			+	—			—	+	—
	գեր-եմ20.47															
[*u̯er-$_6$]		+	+		+	+	+			+	—			+	—	+
*u̯rē-dhu-?	երդու-մն21.25	—	+			+	—			—	—			—	—	—
	երդ-նում21.24															
[*u̯er-$_7$]		+	+	+		+	+			+	+			+	—	+
*u̯ēro-	գիր,-ոյ18.51	—	—			—	—			—	—			—	—	+
*u̯erd-s-	գերծ-անեմ (-եմ,-ում) 9.221	+	+			—	+			—	—			+	—	+
(թե՞ *u̯erg'-?)		(−)	(−)	(+)		(−)	(−)			(−)	(−)			(−)	(−)	(−)
*u̯reid-s-	երգիծ-անեմ9.28	—	—	—		—	—			—	—			—	—	+
*u̯ri-t-	+երիթ9.451	—	—			—	—			—	—			—	—	+
[*u̯(e)rad-]		—	—	+		—	—			+	+			+	+	+
*u̯rād	+արգատ8.451															
[*u̯erg'-]																
*u̯org'o-	գործ,-ոյ9.12	—	+	+		—	—	+		+	+	+		—	+	+
*u̯orgei̯e-	գործեմ9.13	—	—			—	—			+	—			—	—	+
[*u̯er-ьnā]		—	—			—	—			—	+			—	+	—
*u̯erьnā-	գերան,-ագ9.51															
[*u̯ьren-]		+	+			—	—			+	—			—	—	—
*u̯ьren-	գառն,-ին3.29															
[+*u̯erp-?]		—	—			+	—			+	—			—	—	—
*u̯erp-	գերբեմ (-փեմ)?11.27 +գերբն9.38															
[*u̯es-$_1$																
*u̯ose	գո-յ (գո-մ, գո-ս)9.91	+	+	+	+	—	—		+	+	—	+		+	+	+
*u̯osi	գոյ,-ի9.91	—	—			—	—			—	+			—	—	+
[*u̯es-$_5$]		+	+	+	+	—	—			+	—			+	—	+
*u̯es-nu-mi	զ-գենում (բ.զգենուլ)6.11	—	—			—	—			+	—			—	—	—
*u̯es-tu-	զ-գեստ,-ու, բ. զգեստ6.12	—	—		+?	—	—			—	—			+	—	+
[*u̯es-$_8$]		+	+		+	+	—			+	—			+	—	—
*u̯es-no-	գին,-ոյ11.87	+	—			±	—			±	—			+	—	—
[*u̯esperos,																
*u̯ekeros]		—	—			+	+		+	+	—			+	+	+
*u̯eikero-	գիշեր,-ոյ14.42	—	—			+	+		±	—	—			—	—	—
(*u̯eiskhero-?)																
[*u̯es-r̥-, սեռ.																
*u̯es-n-es]		+	+		+	+	+			+	—			+	+	—
*u̯ьsr̥-?	գար-ուն14.75	±	+		—	—	+			+	—			+	+	—
[*uet-]		+	+		+	+	— —			+	+			+	+	+
(per-)ut-i	(հեր-)ու14.731	+	—			—	—			+	—			—	+	—
[*u̯ī-k'm̥t-i]		+	+	+		—	—			+	+			+	+	—
*u̯īk'm̥tī-	(*գսան>)քսան13.531															
[*u̯l̥p-, *lup-]		+	+			—	+			+	—			+	—	—
*(ə)lōpek'u-	աղուէս,-եսու3.74	—	—			—	—			+	—			—	—	—
[*u̯ord-?]		—	—			—	+			—	—			—	—	—
*u̯ordo-	որդն,-ոյ3.631															

Բառային զուգաբանությունների աղյուսակում տեղ գտած առանձին բառերի վերաբերյալ ստորև արվում են համապատասխան մեկնաբանություններ։

Ասեղն-ի *(հին* *ասիղն<*ak'ilon) *դեպքում հաշվի է առնված* *-i-*ով և* *-i̯-*ով հիմքերի ընդհանրությունը։* *-l- *ածանցի բաշխումը փոքր ինչ տարբեր է՝ ընդգրկելով սլավոնական, իտալյան, կելտական և գերմանական խմբերը՝ առանց ծագումնաբանական-տարածական որոշակի արժեքի* [**Solta**, *1960, 123*]*։ Կարևոր է նշել մի կողմից՝* *-i-*ով հիմքի համատեղումը* *-l- *ածանցի հետ նաև սլավոնականում (հ. սլավ.* osьla *«հեսան»), մյուս կողմից՝ հայ-իտալյան բառիմաստների համընկումը (լատ.* acus *«ասեղ»)։*

Հ. **Աճառյանը** [*ՀԱԲ, 1², 120—121*] **աղանձ**-*ը համեմատում է հ. հնդկ.* randh- *«եփել», հուն.* λάσανα *«կաթսայի եռոտանի», հ. պրուս.* landan *«կերակուր», իռլ., հ. կոռն.* lann *«տապակ» բառերի հետ, որոնց համար* Walde-Pokorny-*ի բառարանում* [2, 439] *արվում է* *lendh-*արմատը։ Այս բոլոր համեմատությունները խախուտ են և* Pokorny-*ի բառարանում չեն բերված* [*հմմտ. նաև* **Mayrhofer**, KEWA, *3, 40 և* **Frisk**, GEW, *2, 87*]*։ Լիովին համոզիչ չի կարելի համարել նաև մեր առաջարկած ստուգաբանությունը։*

Անդ *բառի թոխարական զուգահեռը իմաստային է՝ Ա* ānt, *Բ* ānte *«հարթություն»։*

Ընչուղ *(սրան կարելի է միացնել նաև* **անդի-ն**) *բառի կելտական զուգահեռը իմաստային է՝ կիմր.* anner, *բրետ.* ounner *«երինջ», հ. կիմր.* enderic *«հորթ», կիմր.* enderig *«ցուլ, եզ»։*

Անքատ-*ի ստուգաբանությունը պատկանում է Է. Աղայանին* [*1974, 22—23*]. *կասկածելի է և՛ հնչյունապես (սպասվող* գ-*ի դիմաց* ք-*ի առկայությունը Աղայանը բացատրում է* **աղքատ** *բառի ազդեցությամբ), և՛ իմաստով (***անքատ** *«կարոտ, աղքատ. ագահ»՝ հուն.* ἀνάγκη *«անհրաժեշտություն», հ. իռլ.* écen, *մ. կիմր.* anghen, *կիմր.* angen, *բրետ.* anken *«կարիք, անհրաժեշտություն» (իռլանդերենում նաև «բռնություն»), թերևս նաև հ. վ. գերմ.* āhta *«թշնամական հետապնդում, հալածանք» բառերի դիմաց)։*

Հայ. **անթեղ**, *հուն.* ἄνθραξ *«ածուխ» և վրաց.* anteba *«վառել» բառերի համընկումը մատնանշել են Հ. Աճառյանը (ՀԱԲ, 1², 194] և Հ. Ֆոգտը* [**Vogt**, *1937, 333*], *ընդ որում Հ. Աճառյանը առաջին երկուսի կապը համարում է պատահական և հայերենը բխեցնում կովկասյան աղբյուրից։ Նշենք, որ վրաց.* ant- *արմատը կանգնած է առանձնակի, զուգահեռներ չունի քարթվելական մյուս լեզուներում, այլև կովկասյան այլ լեզվախմբերում։ Հայ. և հուն. բառերի ծագումնային կապը Հ. Ֆրիսկը* [GEW, *1, 11*] *և Պ. Շանտրենը* [DELG, *1, 90*] *համարում են կասկածելի։ Բարբառային* **անթայր** *«կայծ» բառը միացվել է սրանց մեր կողմից։*

Հետազոտողները տարբերում են ընդ «փոխարեն» (սեռ. հոլովով) և ընդ «տակ» (գործիական հոլովով) նախդիրները՝ առաջինը կապելով anti, երկրորդը՝ *n̥dhos (հ. հնդկ. adhá-, ավ. adə, թոխ. Ա añč «ցած, ներքև», հ. իսլ. und «տակ, ներքո») նախաձևերի հետ: Հնարավոր է ենթադրել երկու իմաստների խառնում հայ. ընդ-ի մեջ, թեև «տակ» իմաստը հայերենում արտահայտվում է գործիականով, հին հնդկերենում՝ հայցականով և սեռականով, այսինքն՝ առկա է գործառական տարբերություն:

Բարբառային առի (առոէ) «շատ, հույժ» բառի և հ. հնդկ. ari-, հուն. ἀρι- «շատ, հույժ» նախամասնիկների համեմատությունը պատկանում է Հ. Աճառյանին [ՀԼՊ, 1, 119]: Հ. հնդկ. և հուն. ձևերը հատկացվում են *ar- արմատին, բայց որոշ կասկածով՝ հուն. ἀρι-ի համար ἐρι- տարբերակի առկայության պայմաններում [Pek., 1,56]:

(Չ)արդ,-ու բառի զուգահեռներից +-ով են նշանակված *tu-ով, ±-ով՝ *-t-ով և *u-ից տարբեր ձայնավորով (*-ti-ով) հիմքերը:

Երիւր «պատշաճ, հարմար» բառը *ar- արմատին է կապում Հ. Աճառյանը [ՀԱԲ, 2, 57—58]՝ հենվելով հատկապես Ա. Մեյեի վրա և ենթադրելով *ar-/*er- ձայնդարձ, որ քիչ հավանական է: Մենք դրել ենք *ri-tro- նախաձև՝ *ar-ի *rī-ի (*rēi-) հիմքային տարբերակից. հմմտ. լատ. rītus «ծես, սովորույթ», rite «ըստ ընդունված կարգի, պատշաճորեն», հ. վ. գերմ. rīm «շարք, թիվ» և այլն: Տարածքային բաշխումը հիմնականում նույնն է ճարիւր-ի հետ՝ այն տարբերությամբ, որ վերջինիս դեպքում հունական, կելտական և գերմանական խմբերն ունեն մերձավոր «թիվ» իմաստը, իտալյանը՝ ոչ, մինչդեռ երիւր-ի դեպքում հունականը, լատինականը և մասամբ գերմանականը ունեն համեմատաբար մերձավոր իմաստներ:

Ուրանամ-ի համեմատությունը հուն. ἀρνέομαι «ուրանում եմ, ժխտում եմ, մերժում եմ» բայի հետ գալիս է դեռ ՆՀԲ-ից. Պոկոռնին [Pok., 1, 62] վերջինս բերում է *ar- արմատի տակ՝ ալբ. rrem «կեղծ», rremë, rrenë «կեղծիք, սուտ», nërroj (*rrënoj) «ուրանում եմ, ժխտում եմ» և, կասկածով, հայ. ուրանամ-ի հետ միասին՝ նշելով նաև *ōr-, *ər- «խոսել, կանչել» արմատը. հայերենը ձևով ավելի մոտ է վերջինիս, թեև իմաստով տարբերվում է, այս պատճառով էլ, ինչպես Աճառյանը [ՀԱԲ, 3², 614—615] և Զոլտան [Solta, 1960, 385—386], մենք տալիս ենք միաժամանակ երկու արմատի զուգահեռներն էլ:

Արաւր-ի դեպքում +-ով են նշանակված հայերենի հետ նույնական *-tro- ածանցով, ±-ով՝ վերջինիս *-tlo- տարբերակով ձևերը:

Արդն-ի (հմմտ. նաև գեղ-արդն) համեմատությունը լիտվ. ar̃das «ձող (խրձերը վրան կախելու և չորացնելու համար)», հին ardamas «առագաստի չեղակի հենաձող» բառերի հետ պատկանում է Պետերսոնին [KZ, 47, 245], որն ավելացնում է նաև ռուս. և լատ. անհավաստի ձևեր: Համեմատությունն ընդունում է Յ. Պոկոռնին [Pok., 1, 63] և չի ընդունում Հ. Աճառյանը [ՀԱԲ, 1, 309—310]: Է. Աղայանը [1974, 32] բխեցնում է *rēt- «ձող» արմատից՝ ենթադրելով, այսպիսով, որ *ē>ի անցումն ու ի-ի անկումը նախորդել է *rt>րդ անցմանը, որ անհավանական է. վերջինս չէր կարող այդքան ուշ տեղի ունենալ (մ.թ. 3-րդ դարից հետո): Կապ չունի՞ արդյոք սկյութ. ardun, օս. ärdun «աղեղ» բառի հետ, որ ծագում է *druno- «փայտյա» հիմքից:

Արգ-անդ-ի համեմատությունը կիմր. arffed (arpet) «ծոց, գիրկ» բառի հետ պատկանում է Է. Լիդենին [Lidén, 1904, 21], որ ընդունում է Հ. Աճառյանը [ՀԱԲ, 1, 303] և ավելացնում արգ-անաել բայի արգ-ը: Գ. Զոլտան [Solta, 1960, 406—407] գերադասում է Հ. Պեդերսենի համեմատությունը հ. սլավ. grǫdь (ռուս. грудь) «կուրծք» բառի հետ, որ ուրիշները միացնում են հուն. βρένθος «հպարտություն» և լատ. grandis «մեծ» բառերին (հ.-ե. *gᵘrendh-. հմմտ. Pok., 1, 485): Հ. Պեդերսենի կարծիքը հավանական կլինի, եթե *gᵘrebh-ը կապ ունենա *gᵘrendh-ի («սաղմ, երեխա, ձագ») հետ՝ *gᵘer-ից(?), որից թերևս հայ. կորիւն (*gᵘor-): Այլապես արգ-ը չի կարող միացվել արգանդ-ին:

Հ. Աճառյանը [ՀԱԲ, 4², 607—608], հենվելով այլ կարծիքների վրա, աւդ «կոշիկ» բառը միացնում է ագանիմ-ի հետ և բխեցնում *eu-/ou- «հագնել» արմատից. հմմտ. ավ. aoϑra, ռուս. об-увь «կոշիկ», լատ. ind-uō, -ere «հագնել», լիտվ. aũti, լատվ. àut «կոշիկ հագնել» և այլն: Ընդհանրապես ենթադրելի է երկու արմատների կապը:

Աւետ (աւէտ) բառի ստուգաբանությունը պատկանում է Է. Աղայանին [1974, 35]:

Ջուր բառի *i̯- նախահավելվածով *i̯uro- նախաձևը վերականգնված է ըստ բալթ. ձևերի (լիտվ. jū́ra, լատվ. jūra. պրուս. jūrin (հյց.) «ծով»), որոնց մեր կողմից միացված է թրակ. Iuras գետանունը. սա բխեցվում է jūras «ջուր, գետ» հասարակ անունից [Дуриданов, 1976, 76]: Հայ. բառը իմաստով մոտ է հ. հնդկ. և թոխ. բառերին (հմմտ. նաև թրակ.): Նվազ հավանական է բխեցումը *gᵘhdōro- (ավելի ճիշտ՝ *gᵘhdi̯ōro-) ձևից (*gᵘhder-. հմմտ. Pok., 1, 487):

Առաւաւտ-ի աւ-ի (առ- նախածանցով և -աւտ վերջածանցով) համեմատությունը լատ. aurora, հուն. ἕως (դոր. ἀώς), լիտվ. aušrà «արշալույս» բառերի հետ պատկանում է Պ. Պատրուբանիին և Ժ. Դյումեզիլին (հ.-ե. *au̯es-): Հայերենի մերձավոր զուգահեռները մենք որոշել ենք ըստ ձայնդարձի վերին աստիճանի (*āus-՝ ի տարբերություն *u̯es-, *us- ձևերի): Է. Աղայանը [1974, 26—27] բխեցնում է *sau̯el- «արև» նախաձևի *sau- մասից (*-el-ը դիտում է որպես ածանց), որ, սակայն, այս «մաքուր» ձևով ոչ մի տեղ չի պահպանվել:

Բարբառային փամփ-, փմփ- արմատը դժվար չէ բացահայտել փամփլիկ «փափլիկ», փամփուս «քնքուշ», փմփուխ (փմփլիկ, փմփլուկ) «փափուկ, քնքուշ, գիրգ, փափլիկ, գիրուկ», փմփուլիկ «քնքուշ», փմփուշ, փըմփուս «փափուկ», փմփռնել «գիրանալ, փամփլանալ» բառերի մեջ: Հավանաբար ճիշտ է Տերվիշյանը [հմմտ. ՀԱԲ, 4², 492], որ փափուկ-ը համեմատում է այս արմատին պատկանող լիտվ. pam̃pti «ուռչել», pam̃palas «գեր մարդ» բառերի հետ:

Բա «թե, որ, իրոք, անշուշտ» բառը Պոկոռնին [Pok., 1, 113] դնում է *bhē, bhō մասնիկին պատկանող ձևերի մեջ, իսկ Աճառյանը [ՀԱԲ, 1², 384] միացնում է բամ «ասում եմ» բային, մանավանդ որ սրա դիմավոր ձևերը ստացել են յուրահատուկ շաղկապային արժեք (հմմտ. «Ասացի բամ ...»): Ենթադրելի է խառնուրդ (կոնտամինացիա):

*Bheu-t-, *bhu-t- նախաձևերում շնչեղ ձայնեղի և խուլի համատեղումը միևնույն արմատական ձևում հնարավոր է միայն *-t-ի աճական լինելու և իբրև այդպիսին գիտակցվելու պայմաններում:

Լու-ի զուգահեռներից +-ով նշանակվածները ունեն *pl- սկիզբ և *-s- մասնիկ, ±-ով նշանակվածը՝ միայն *pl-:

Փռյուգական βεκός «հաց» բառի համար ենթադրվում է սկզբնական «(հացի) կտոր» իմաստը, և այն հատկացվում է *bheg-ին: Սակայն նկատի ունենալով հայ. **բոկեղ** «մի տեսակ կլորակ հաց» զուգահեռը և վերջինիս համար ընդունելով Հ. Աճառյանի ստուգաբանությունը՝ մենք βεκός հատկացրել ենք *bhĕ-g- «տաքացնել, խորովել, թխել» արմատին՝ բնականաբար ենթադրելով կարճ ձայնավորով տարբերակ: Տե՛ս *bhē- (**բովեմ** և **բոկեղ**):

Բիլ «բաց կապույտ» (և ոչ «մի տեսակ ձուկ», ինչպես տրված է Հ. Աճառյանի ՀԱԲ-ում, 1^2, 450) բառի նախնական ստուգաբանությունը պատկանում է Է. Աղայանին [1974,47]. այն ճշտված և տարածքային բաշխման առումով քննված է Լ. Սարաջևայի կողմից [**Сараджева**, 1976, 191]:

Երբ-ը սովորաբար համեմատվում է հուն. ὄ-φρα «մինչև որ», թոխ. kupre «երբ» բառերի երկրորդ բաղադրիչների հետ: Հ. Աճառյանը համարում է **իբր-ի** տարբերակը, այսինքն՝ կազմված է համարում հայկական հողի վրա: Ըստ Բուգգեի՝ **իբր-ը** ծագում է **ի՛ բար** ձևից (հմմտ. նաև մակբայակերտ **-(ա)բար**):

Բուռն «սաստիկ» բառը Հ. Աճառյանը [ՀԱԲ, 1^2, 486] միացնում է **բուռն** «բուռ» բառի հետ: Առանձնացված և ստուգաբանված է ներկա ձևով մեր կողմից. հմմտ. հ.հնդկ. bhūrni- «բուռն, սաստիկ, ուժգին, կատաղի», հուն. φορμός (*bhr̥-mo-) «իրարանցում», ալբ. burme «լիահասուն»:

Բորենի բառի (ունի նաև **բորեան, բորէ, բորայ** ձևերը) ստուգաբանությունը պատկանում է Հ. Աճառյանին [ՀԱԲ, 1^2, 477]: Հնարավոր է բառի իրանական ծագումը, թեև մեզ հայտնի ձևերը հայերենից իմաստով տարբեր են (հմմտ. ավեստ. bawri «կուղբ», bawraini- «կուղբային, կուղբի»): Հ.-և. *bher- «փայլուն, բաց շագանակագույն» արմատից ծագող շատ ձևեր կենդանիներ են նշանակում և աղյուսակում տրված են +-ով. ±-ով է նշված այդ առումը չունեցող թոխարերենը:

Բաճ (բարճ) բառը ամենայն հավանականությամբ իրանական ծագում ունի և արտացոլում է հյուս. իրան. -rt->(r)h անցումը:

Բրէտ-ի -էտ-ը Գ. Ղափանցյանը [ՏԳԱԻ, 2, 111] ածանց է համարում՝ նկատի ունենալով նաև կենդանական **առնէտ, կրէտ** անունները: Սրանցից **կրէտ-ի** ծագումը հայտնի չէ, իսկ **առնէտ-ը** Հ. Աճառյանը [ՀԱԲ, 1^2 262] փոխառություն է համարում ասորերենից՝ arnā-'ā «առնետ»:

Բուրդ-ը զուգահեռ ունի գերմանականում միայն ձայնդարձի միջին աստիճանով, բայց տարբեր է ձայնավորի երկարությամբ և իմաստով:

Բարձր (սեռ. **բարձու**) բառի մերձավոր զուգահեռները տրված են ըստ *u-ով հիմքի:

Բայ «որջ» բառի համար ±-ով նշանակված են ձայնդարձային *bhu̯ā-/*bhu̯(ə)-ով, +-ով՝ նաև *-t-ով զուգահեռները (ալբ. botë «աշխարհ, երկիր»<*bhu̯ātā կամ *bhu̯ētā): Ստուգաբանությունը պատկանում է Է. Աղայանին [1971, 35—36], որ, սակայն, չի խոսում բառի բառակազմական-ձայնդարձային առանձնահատկությունների տարածքային բաշխման մասին:

Բլիթ-ի զուգահեռները տրված են ±-ով ըստ ատամնային առկայության (*-d-՝ հայերենի *-t-ի դիմաց):

Հ. Աճառյանը [ՀԱԲ, 1^2, 424—425] չի ընդունում **բարկ** «կծու, դժնի» բառի այս ստուգաբանությունը, որ ունի Յ. Պոկոռնին [**Pok.**, 1, 163]:

Զուբատին և Մախեկը **անդունդ-ին** են միացնում նաև հ. սլավ. dъno «տակ, հատակ, խորք» բառը՝ *dъbno<*dъdno անցմամբ տե՛ս [**Шанский** 1, 5, 144]: Սակայն ավելի տարածված է *dъno-ի *dheu-b-ից ծագելու վարկածը:

Տիւ-ի դիմաց ±-ով նշանակված են *diu̯-ի հետքերը սլավոնականում՝ ըստ հ. սլավ. dъždь «անձրև» բառի *dus-di̯us «վատ օր» ստուգաբանության [**Шанский**, 1, 5, 153] և հունարենում՝ ըստ հուն. ἔν-διος «միջօրեի, կեսօրվա» (ἐν-διϝιος) բառի:

Երկին-ի ստուգաբանությունը պատկանում է Էսապալյանին [ՀԱ, 1942 198-202] և Է. Աղայանին [1974, 65—67]: Հնչյունապես կասկածելի է: **Սերկ-ի** ստուգաբանությունը (Դյումեզիլ, Ջահուկյան) այս ձևով հարուցում է հնչյունական նույն դժվարությունը, ինչ **երկին** բառինը:

Տող-ի ստուգաբանությունը պատկանում է Շեֆտելովիցին և Պեդերսենին [**Pok.**, 1, 193]: Հ. Աճառյանը (ՀԱԲ, 4^2, 418] որոշ կասկածով փոխառություն է համարում ուրարտերենից, որից փոխառված են, ըստ նրա, նաև վրաց. ţoli «հավասար, նման, հասակակից», ţoleba «բաղդատել» բառերը: Է. Աղայանը [1974, 137—146] հանգեցնում է *del- «ճեղքել, կտրել, արվեստով շինել» արմատին:

Տղել «շարժել» բայի համար (**ան-տղելի, ան-տիղ** «անշարժ») հմմտ. հ.հնդկ. dolayati «օրորում է, տատանում է», -tē «տատանվում է, օրորվում է»: Սկզբնական «երերալ, տատանվել» իմաստի հետ են կապված «հապաղել» (լիտվ. delsti), «անվստահ քայլել» (շվեդ. tulta), «տատանվել, անվստահ լինել» (հ. անգլ. tealtian) իմաստները և այլն: Հայ. **տաղտել** «շարժել», **տաղտուկ** «ձանձրույթ» (հին «ընկճում»), **տաղտապել** «նեղել, չարչարել» բայերը ունեն *-d- աճականը, ինչպես բերված գերմանական խմբի բառերը: **Տնտղել** «որոնել, քննել» բայը **տղել-ի** հետ կապում է Հ. Աճառյանը [ՀԱԲ, 4^2,413], որ համեմատում է այն հուն. δενδίλλω «հայացքը այս ու այն կողմ շարժել» (ավելի ճիշտ՝ «բազմանշանակ նայել, հայացք նետել, աչքով անել») բայի հետ և վերականգնում ընդհանուր *dil- արմատը:

Տեղ («առատ անձրև»), **տեղամ, տիղմ** բառերի ստուգաբանությունը պատկանում է Պետերսոնին [տե՛ս **Pok.**, 1, 196]. հմմտ. մ. իռլ. delt «ցող» (նաև գետանուն), բրետ. dalt «խոնավ»: Հ. Աճառյանը [ՀԱԲ, 4^2, 392] **տեղ-ը** փոխառություն է համարում ասորական աղբյուրից (հմմտ. ասոր. ţallā- «ցող»՝ արամ. ţallā, եբր. ţal «ցող, անձրև» բառերի կողքին), իսկ **տիղմ-ը** և բ. **տիղ-ը** [ՀԱԲ, 4^2, 406—407] բխեցնում է հ.-և. *stēl-ից, որ հնչյունապես անընդունելի է (չկա տեղաշարժ):

Տուն-ի արմատական *dom- նախաձևը առանձնակի առկա է (+) նաև հնդիրանականում (հ. հնդկ. dán, dám-, ավեստ. ներգ. dąm(i)), հունարենում (δῶ «տուն»). բալթիականում և գերմանականում պահպանված է միայն իբրև բառերի առաջին բաղադրիչ (±)՝ լիտ. dim-stis «բակ», շվեդ. tomt «շինության տեղ»:

Տատանեմ-ի ստուգաբանությունը (հմմտ. հուն. δονέω «ցնցում եմ, տատանում եմ») Հ. Աճառյանինն է [ՀԱԲ, 4^2, 380], որ վերականգնում է և հ.-և. համապատասխան *den- արմատ:

Տառանեմ-ի մեջ *derk'-ի *r-ի անկումը Ա. Մեյեն [Meillet, 1936^2, 135] բացատրում է որպես *spek'-ի հետ խառնվելու (կոնտամինացիայի) արդյունք: Գ. Զոլտան [Solta, 1960, 167] բացատրում է որպես r-ի՝ հայերենի համար սովորական անկում (հմմտ. aržan>ažan):

Տորգ «սարդոստայն» բառի ստուգաբանությունը պատկանում է Հ. Աճառյանին [ՀԱԲ, 4^2, 422], որ նկատի ունի բրբռ. տորգ «ծանրություն վերցնելու ձող», «ոստայնանկի հաստոց», «գորգ հյուսելու համար փայտյա սարք» իմաստները:

Տեւեմ-ի համար նշված են բալթյան բուն զուգահեռները՝ իմաստի զգալի մերձավորությամբ (+) կամ առանց դրա (±):

Տոկ-ի համար տրվող *dou̯o-go- նախաձևը [Pok., 1, 219] չունի համապատասխան զուգահեռ: Հ. Աճառյանի [ՀԱԲ, 4^2, 416] տված *dou̯oko- նախաձևը անբացատրելի է թողնում տեղաշարժի բացակայությունը: Դժվար է ենթադրել նաև *dou̯o-du̯o- (*douə-du̯o-ից) կրկնավոր ձև, որովհետև *du̯o-ն ձայնավորից հետո թերևս պիտի տար րկ և ոչ կ (վերջինիս համար հմմտ. *meldu̯i->մեղկ, որտեղ *du̯-ն գտնվում է *l-ից հետո):

Երկար-ի զուգահեռներից +-ով նշանակված են *dū-r-ից ծագողները՝ ի տարբերություն *du̯ā-r-ից ծագողի (+):

Երկայն-ի համար իբրև զուգահեռներ են նշված *-n- ածանցով ձևերը, թեև սրանց (հատկապես գերմանականի) ծագումնային կապը հայերենի հետ կասկածելի է:

Հայ. տուտն (–ան), տուռն (–ոյ) «ծայր, վերջավորություն, ագի, պոչ. շորի ծայր, քղանցք. փայտի ծայր» բառերը գերմ. *tutan-ին պատկանող իսլ. tota «ծայր, կոշիկի քիթ», նորվ. բրբռ. tota «ցցվածք», մ.անգլ. tote «ծայր» և այլն բառերի հետ համեմատել է Պետերսոնը՝ վերականգնելով ընդհանուր *dud- արմատը. ընդունում է Աճառյանը [ՀԱԲ, 4^2, 430]: Կասկածելի է բառերի մանկական-կրկնավոր բնույթի պատճառով. հմմտ. խեթ. titita «քիթ», այլև կովկասյան լեզուներում հանդիպող ձևերը:

Տ-ի զուգահեռներից ±-ով նշանակված են մնացուկային ձևով պահպանվածները: Հայ. տ-ն Բոլոնիեզին բխեցնում է *dē-ից, Դրեսլերը՝ *dis-ից: Եթե նկատի առնենք, որ *s-ն ընկնում է միայն միջձայնավորային դիրքում (այնինչ մեզ հայտնի ձևերում այդպիսի դիրք չկա), ապա թերևս ընդունելի լինի Բոլոնիեզիի կարծիքը:

Դակու «ուրագ կամ կացին» բառի համեմատությունը հուն. θήγω «սրել» բայի հետ պատկանում է Լիդենին և ընդունվում է Աճառյանի [ՀԱԲ, 1^2, 613], Ֆրիսկի [GEW, 1, 670], Շանտրենի [DELG, 2, 434] կողմից: Անհավաստի է մնում լիտվ. dagỹs «փշփշոտ մի բույս», մ.լատ. daga «դաշույն» բառերի կապը սրանց հետ:

Դայեակ-ը հանված է բնիկ բառերի ցանկից որպես փոխառություն: Դեռևս Աճառյանը [ՀԱԲ, 1^2, 618—619] ցույց է տվել բառի իրանական ծագումը, որպես աղբյուր նշելով պհլ. dāyāk նույնիմաստ բառը և ապացույց համարելով հատկապես -եակ վերջածանցի առկայությունը: Հյուբշմանը [AG, 437] դրել էր բնիկ հայկական բառերի մեջ [հմմտ. նաև Pok., 1, 241]:

Աճառյանը [ՀԱԲ, 1^2, 679—680] դոն «մի տեսակ հաց, պաքսիմատ» բառը համեմատում է լիտվ. dúona «հաց», լատվ. duõna «հացի կտոր», ապա, սրանցից հետո, հ.հնդկ. dhānā- «հացահատիկ, ցորեն», պրսկ. dān «հատիկ, ընդեղեն» և այլն բառերի հետ [հմմտ. Pok., 1, 242]: Սակայն նախ՝ հայերենում ենթադրելի էր *dhōnā>*դուն ձևը, երկրորդ՝ իմաստը հեռու է վերականգնվող «հացահատիկ» իմաստից և երրորդ՝ բառը հանդիպում է միայն ուշ տեքստերում:

Հայ. դողամ (դող, դող-դոջ) բայը զուգահեռներ ունի միայն գերմանական լեզուներում՝ նորվ. և շվեդ. բրբռ. dilla «ճոճել, տարուբերել» նորվ. բրբռ. dalla, dulla «մանրաքայլ գնալ» ն.գ. dallen «թրև գալ», նորվ. dalte, dilte «վարգել, մանրաքայլ գնալ», հոլ. dallen «դանդաղ քայլել», անգլ. dally «ժամանակ վատնել, հապաղել» և այլն: Կասկածելի է իմաստի տարբերության պատճառով: Դանդաղ-ի և դոնդող-ի ստուգաբանությունը պատկանում է Աղայանին [1974, 58—59], որի կարծիքով սրանք իմաստային կապ են ստեղծում դողամ-ի և գերմ. բայիմաստների միջև:

Դրոյլ «դռնապան» բառի ստուգաբանությունը պատկանում է Աղայանին [1974, 62]:

Տրուպ «նվաստ, փոքր, խեղճ» բառի ստուգաբանությունը պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 4^2, 439], որ ենթադրում է նախաձևի *dhrōb->*drōb- առնմանական հնչյունափոխություն: Կասկածելի է, մանավանդ եթե նկատի առնենք իմաստային զգալի տարբերությունը. սլավ. և գերմ. բառերն ունեն ֆիզիկական («փշրել, մանրել») իմաստ, հայերենը՝ ոչ:

Երկն-ի համեմատությունը հուն. ἐδύνα (էոլ.), ὀδύνη (ատտ.) «ցավ» բառի հետ պատկանում է Հ. Ֆրիսկին [Frisk, 1944, 11 և հջ.] և ընդունվում է Պոկոռնու [Pok., 1, 289] ու Զոլտայի կողմից [Solta, 1960, 419]: Աճառյանը [ՀԱԲ, 2^1, 64 և 65] նույնացնում է երկնչիմ բայի երկն-ի հետ: Կասկածելի պետք է համարել Ֆրիսկի կողմից երկն-ի և երկ-ի միացումը իրար հետ, եթե ճիշտ է Աճառյանի կարծիքը երկ-ի իրանական ծագման մասին [ՀԱԲ, 2^2, 58. հմմտ. սոգդ. 'rk, մանիք. պհլ. arq, յաղնոբ. ark «գործ»]:

Առած բառի ած-ի ստուգաբանությունը տրված է ըստ Մաքսուդյանի [MSS 17, 356], որի կարծիքն ընդունում են Մեյեն [Ernout-Meillet, 1959, 19] և Պոկոռնին [Pok., 1, 290]: Աճառյանը [ՀԱԲ, 1^2, 245] կազմված է համարում առ-ն-ում բայից -ած ածանցով («առնված բան»):

Եզր-ը իմաստային առումով ամենից ավելի մոտ է բալթիական (առանց *r-ի) ձևերին (հմմտ. լիտվ. ežẽ, լատվ. eža, պրուս. asy «սահմանագիծ»): Զոլտան [Solta, 1960, 416] համարում է հայ-բալթիկ-սլավոնական զուգաբանություն՝ ոչինչ չասելով հունական Ἀχέρων, փռյուգական Ἔζαρα, Ἄζαρα, թրակյան Αζαρατης, իլիրական Ozera? զուգահեռների մասին: Սմիրնովին [ВЯ, 1967, 4, 1] սրանց է միացնում նաև հ. իսլ. əegir «ծովաստված» և հ. անգլ. eagor «ծով» բառերը [հմմտ. նաև Топоров, 1, 120—121]:

Էշ բառի հատկացումը հ.-ե. *ek'u̯o- «ձի» հիմքին կասկածներ է հարուցում և՛ իմաստով, և՛ հնչյունապես: Սակայն իմաստային նման անցումը անհնար չէ, իսկ ինչ վերաբերում է հնչյունական կողմին, ապա կարելի է ասել հետևյալը. 1) էշ, -ոյ ձևը ենթադրում է *eik'u̯o- կողմնակի ձև, որի առկայությունը հաստատվում է նույնպես անբացատրելի համարվող հուն. ἵππος «ձի» բառի առկայությամբ [հմմտ. DELG, 2, 468]: Աճառյանը [ՀԱԲ, 2^2, 117] ե-ի փոխարեն է-ի առկայությունը համարում է հաջորդ շ-ի ազդե-

ցության արդյունք. 2) ինչպես ցույց է տվել Վան Վինդեկենսը [**Windekens**, ***1976.*** *հմմտ. նաև* Джаукян, 1982, 75], *k'u̯>r *փոփոխությունը հայերենի համար օրինաչափ է, իսկ* *k'u̯>սկ *անցումը պայմանավորված է կողմնակի հանգամանքներով:*

Աղտ-*ը Աճառյանը* [*ՀԱԲ, 1², 136*], *հենվելով Հյուբշմանի և այլ նախորդների վրա, համեմատում է հուն.* ἄρδα *«աղտ, կեղտ» բառի հետ՝ անբացատրելի թողնելով հուն.* ρ—*հայ.* ղ *համապատասխանությունը:* Աղտ, աղտիւր, եղտիւր *բառերի՝ բերված ստուգաբանությունը պատկանում է Պետերսոնին. այն ընդունվում է Պոկոռնու* [**Pok.**, 1, 305] *և Զոլտայի կողմից* [**Solta**, 1960, 179—280]: *Ըստ ատամնային աճականի ընդհանրության հայերենի հետ մոտ են հ. վ. գերմ.* oltar *«կեղտակոտր», հ. սկանդ.* uldna *«բորբոսնել»: Այս արմատին վերագրվող* աղբ-*ը տե՛ս* *sal-*ի տակ:*

Ողբ-*ի համար Զոլտան* [**Solta**, 1960, 197] *նշում է նաև* *el/*ol-*ին զուգահեռ* *ul- *հնչյունարմատին* (Schallwurzel) *պատկանող լիտվ.* ulbúoti *«կանչել, երգել» բայը, որ ունի հայերենին համապատասխան շրթնային աճական:*

Ողողանամ *բայի հետ միասին Աճառյանը [ՀԱԲ, 3², 555] հիշատակում է նաև բրբռ.* **ուլուլալ** *«ողբալ» բայը, որ, սակայն ունի այլ ձայնավորում և մեր կողմից հատկացված է հ.-ե.* *ul- *(կրկն.* *ul-ul-*) արմատին («ճչալ, ոռնալ»):*

Ողոք-*ի զուգահեռները նշված են ըստ ետնալեզվային աճականի՝ անկախ սրա կոնկրետ դրսևորումից:*

Աղատել *«դառն ողբալ» բայի ստուգաբանությունը պատկանում է Աղայանին [1974, 17]:*

Եղծ *(եղծանեմ),* **աղճ** *«աղետ, եղեռն»,* **աղէտ**, **աղճատ** *բառերի ստուգաբանությունը պատկանում է Աղայանին [1974, 17—18]:*

Ողորմ *և* **ողորմիմ** *բառերը Մեյեն* [MSL, 10, 270] *համեմատում է գոթ.* arms, *հ. վ. գերմ.* arm *«խեղճ, ողորմելի», գոթ.* armen, *հ. վ. գերմ.* (ir-)b-armen *«ողորմել» բառերի հետ, որ ընդունում են Աճառյանը* [*ՀԱԲ, 3², 556*] *և Զոլտան* [**Solta**, 1960, 427—428]: *Սակայն այս շարքում հայերենի համար ենթադրվում է կրկնավոր ձև* *or-orm-> *(տարնմանությամբ)* *ol-orm *նախաձև, և փաստորեն բացատրվում է գերմ. բառերի պատկանելությունը* *orbho-*ին (որտեղից հայ.* **որբ** *և* **արբանեակ**):

Եղանիմ *բայի (առր.* **եղէ**) *բերված ստուգաբանությունը պատկանում է Պեդերսենին. կասկածելի է, թեև բայի հ.-ե. ծագումը կասկած չի հարուցում: Աճառյանը [ՀԱԲ, 2², 14 և 3³ 394], հենվելով Մեյեի համեմատության վրա (հուն.* πέλομαι *«շարժվել, գտնվել, լինել»),* **յեղում** *բայի հետ միասին բխեցնում է* *ku̯el- *«պտտ(վ)ել, դառնալ, բնակվել» արմատից, որի* *ku̯-*ի անկումը հայերենի համար այնքան էլ սովորական չէ (այստեղից* **հոլ**, **հոլով**)*: Պոկոռնու բառարանում* [**Pok.**, 1, 601] *կասկածով հատկացված է* *k'lei- *«թեքել, հենել» արմատին: Զոլտան* [**Solta**, 1960, 87—88] *հենվում է Աճառյանի վրա:*

Ելուզանեմ-*ը* **ելանեմ**-*ի պատճառականն է, և այն չի կարելի կտրել երկբարդից ու համեմատել հ. հնդկ.* rōhati, ródhati *«ելնում է, աճում է», հուն.* ἐλεύθερος *«ազատ» և այլ բառերի հետ, որոնք պատկանում են* *leudh- *«ելնել, բարձրանալ» արմատին* [*հմմտ.* **Solta**, 1960, 244], *եթե ա) վերջինս չի պատկանում* *el-*ին, կամ բ)* **ելանեմ**-*ի ու* **ելուզանեմ**-*ի կապը տարահիմքային (սուպլետիվ) չէ:*

Հավանաբար *ōlen-*ից է ծագում նաև* **ուլն** *«ուլունք. վեգ. պարանոցի օղակաձև ոսկր» բառը, որ Լիդենը* [Lidén, 1906, 129] *միացնում է* **ուլն** *«պարանոց» բառի հետ:*

Ոլոք-*ի զուգահեռներից իլլիրերենի համար հիմք է ընդունվել Հեսիքիոսի հիշատակած* ἄλαξ· πῆχυς, Ἀθαμάνων *բառը (աթամանները խոսել են իլլիրական բարբառով):* **Ոլոք**-*ի նախաձևի համար հմմտ. նաև* *lek- *«մարմնի վերջավորություններ. ծռել. ցատկել» արմատը, որ թերևս* *el-*ի աճականով ձևն է. վերջինից հավանաբար ծագում է բրբռ.* **լոք** *«մեծ քայլ» բառը:*

Իմանամ-*ի հատկացումը* *em- *«վերցնել, առնել» արմատին պատկանում է Պատրուբանիին և Պեդերսենին [հմմտ. ՀԱԲ, 2², 241]: Այն հաստատվում է* **իմանալ**-*ի «զգալ» և* **անիմաստ**-*ի «անհնազանդ» իմաստներով. «վերցնել, բռնել→ըմբռնել» անցումը շատ սովորական է: Մեյեն [MSL, 8, 280] հատկացնում է* *men- *«մտածել» արմատին [հմմտ.* **Solta**, *1960, 91—92], որ անհավաստի է.* **իմանամ**-*ը կազմված է* **իմ**- *արմատից՝* **ան**-*ածանցով, և* **ման**-*ը առանձնացնելը ճիշտ չէ (եթե չենթադրենք ուշ վերատարրալուծում, որ քիչ հավանական է):*

Ընծայ *բառի համեմատությունը հ. հնդկ.* aṁhiti- *«ընծա, նվեր» բառի հետ պատկանում է Լագարդին (Բյոտիխեր)* [*հմմտ. ՀԱԲ, 2², 128*], *այն նշվել է նաև Շեֆտելովիցի* [BB, 28, 229] *և Օտրեմբսկու կողմից* [**Otręmbski**, 1939, 198]: *Ընդունում է Աճառյանը* [*ՀԱԲ, 2², 128*]: *Չի ընդունում Մայրհոֆերը* [KEWA, 1, 14], *որ ավելի հավանական է համարում բխեցնել հ. հնդկ. բառը* ana-(d)hiti- *ձևից:*

Հ.-ե. *eph-*ի վերականգնումը հենվում է հայ-հունական* **եփեմ**—ἕφω *զուգաբանության վրա, միայն թե Պոկոռնին վերականգնում է* *eph- *արմատ, Հյուբշմանը և Աճառյանը՝* *seph- [*ՀԱԲ, 2², 72, հմմտ. նաև* **Frisk**, GEW 1, 605]: *Ճիշտ չէ* *phs> փ *անցում ենթադրելը:*

Յոպոպ-*ի մեջ տեղաշարժի բացակայությունը բացատրվում է հիմքի բնաձայնականությամբ: Զոլտան* [**Solta**, *1960, 428—429*] *առանձնապես մոտ է համարում հայերենի և հունարենի* (ἔποφ, -οπος, ἀπαφός *(Հես.)) ձևերը. սակայն հմմտ. նաև լատ.* upupa, *եթե նկատի չառնենք գերմանականից ն. գերմ.* Hupphupp *ձևը: Բարբառ.* **պուպու**-*ն կարող է լինել կամ փոխառություն պարսկերենից, կամ* **յոպոպ**-*ին զուգահեռ կազմություն, թեև Աճառյանը* [*ՀԱԲ, 3², 406*] *համարում է «նոր նմանաձայնությամբ» կազմված:*

Որոր *և* **ուրուր** *բառերի զուգահեռները որոշվել են ըստ* *-el- *ածանցի ընդհանրության, սակայն հնարավոր է ենթադրել սկզբնական կրկնավոր ձևեր՝* *or-or- *և* *ōr-ōr- *Զոլտան* [**Solta**, 1960, 325] *իմաստային առումով մոտ է համարում հուն.* ὄρνις *«թռչուն» բառին՝ նկատի առնելով, որ մյուս լեզուներում առկա է գերազանցապես «արծիվ» իմաստը: Սակայն հուն. հիմքի կազմությունը հեռու է հայ. հիմքերի ձևերից:*

Երթամ-*ի զուգահեռները որոշված են ըստ բայական ձևերի մեջ աճականի առկայության, թեև հունարենում առկա է* *-gh- (ἔρχομαι *«գալիս եմ»), ալբաներենում՝* *-d(h)- (erdha *«եկա»):*

Երկիր-ի համար *er-tu̯- նախաձևը վերականգնված է հեղինակի կողմից՝ գերմ. և կելտական համապատասխան աճականներով ձևերի հիման վրա։ Այս դեպքում հնչյունական դժվարությունը վերանում է։ Ցինկը և ապա Պեդերսենը վերականգնում են *er-u̯-՝ ենթադրելով հետագա ձևափոխություն երկին-ի ազդեցությամբ (*eru̯-> երգ- >երկ-իր)։ Անհավանական են Մեյեի (հմմտ. երկ-առ) և Աղայանի [*dhu̯er-] առաջարկած ստուգաբանությունները՝ առաջինը ըստ իմաստի, երկրորդը՝ հնչյունապես։

Որոնեմ-ի նախաձևի վերականգնումը դժվարություն է հարուցում. անսովոր է –ոն– կապակցությունը (փխկ. –ուն–> -ն-ի), որի պատճառով էլ Աճառյանը [ՀԱԲ, 3², 585] այս ստուգաբանությունը չի ընդունում։ Սակայն հայ-հունական զուգաբանությունը բացահայտ է (հմմտ. հուն. ἐρευνάω «որոնում եմ», հոմեր. ἐρεείνω «հետազոտում եմ, հարցնում եմ», այլև հ. սկանդ. rayna «փորձել»), և պետք է գտնել ընդունելի բացատրություն։

Արիւն-ի ար-ը ենթադրում է ոչ թե *esr̥- (որ պիտի տար *e(h)ar> եար-՝ *եր-իւն), այլ երկար ձայնավորով *ēsr-ի *əsr- ձայնդարձով ձև, որից *a(h)ar-> ար-՝ ար-իւն։ Այդպիսի երկար *ē-ով ձև ունի հունարենը (հմմտ. ἦαρ՝ ըստ Հեսիքիոսի)։

Ուսանիմ-ի զուգահեռները տրված են ըստ իմաստային նշանակալից մերձավորության։ **Ամուսին**-ի իմաստային զուգահեռն է լատ. uxor (*uk-sor) «կին, կին-ամուսին» բառը։

Պեդերսենը [KZ, 40, 210] *eugʷh- արմատին է հատկացնում նաև յուզեմ (յոյզ) բայը (ուշ՝ ուզեմ), որ կասկածով տալիս է նաև Պոկոռնին [Pok., 1, 348, հմմտ. նաև Solta, 1960, 373]։ Սակայն ավելի հավանական է յոյզ-ի իրանական ծագումը (*yōz- <հ.-ե. *i̯eug'-) որ ընդունում են Հյուբշմանը (AG, 199), Աճառյանը [ՀԱԲ, 3² 404] և Պոկոռնին [Pok., 1, 512]։

Գլուխ-ը սովորաբար համեմատվում է լիտվ. galvà, լատվ. galva, հ.սլ. glava (ռուս. голова) նույնիմաստ բառերի հետ։ Այս ստուգաբանության ճշտության դեպքում բալթիական և սլավոնական բառերը պետք է անջատել գերմ. «ճաղատ» իմաստով բառերից, որոնք Պոկոռնին [Pok., 1, 349] տալիս է *gal- արմատի տակ՝ բալթիկ-սլավոնական ձևերի հետ միասին՝ նշելով, որ վերջիններիս՝ հայերենի հետ կապ ունենալու դեպքում գերմ. ձևերը պետք է փոխառություն համարել լատիներենից (calvus)։

Կարծր-ի ստուգաբանությունը պատկանում է Շեֆտելովիցին և Պեդերսենին [հմմտ. ՀԱԲ, 2², 552, Pok., 1, 353]։ Պոկոռնին տալիս է հունական (γοργός «ահավոր»), կելտական (հ. իռլ. garg(g) «բիրտ, վայրենի»), բալթիական (լիտվ. gražoti «սպառնալ») և սլավոնական (հ. սլ. groza «վախ», ռուս. грозный «ահավոր»), բայց ոչ գերմանական զուգահեռներ. վերջինիս համար տե՛ս ՀԱԲ, 2², 552, որտեղ բերված է մ. վ. գերմ. karc «ուժեղ, բիրտ» բառը։

Ընձուիմ, **ընծուիմ** «ծագում եմ, ծլում եմ» բայի պատկանելությունն այս արմատին տրված է ըստ Աղայանի [1974, 69—70]։

Կղիբ-արմատը հանդիպում է միայն հնչյունափոխված ձևով՝ կղբել «հանգուցել», կղբ–կապ բառերի մեջ. Աճառյանը (ՀԱԲ, 2² 657] վերականգնում է կուղբ ձևը։ Մեր վերականգնումը հենվում է համապատասխան զուգահեռների վրա՝ *glei-t- կամ *gleu-t- եթե հայերենում *gl-՝ կապակցության մեջ g-ն ընկել է (հմմտ. *kl-> լ-), ապա ենթադրելի է *ē-ով նախաձև՝ *gēlei-t- կամ *gēleu-t-։

Չժխտելով կաղաւել (բրբռ. կաղիլ, կաղվիլ) «սառչել» բայի առկայությունը, որ Աճառյանը [ՀԱԲ, 2², 495] հատկացնում է *gel(ə)- «ցուրտ, սառչել» արմատին, մենք սրանցից առանձնացրել ենք կաղաւել «կծկվել, կուչ գալ» (բրբռ. կ(ա)ղավել. հմմտ. նաև կլապտիլ) բայը՝ այն հատկացնելով *gel- «սեղմ(վ)ել, կուչ ածել, կուչ գալ» արմատին։ Հնարավոր է ենթադրել կամ երկու արմատների հնագույն կապի արտացոլում հայերենում, կամ դրանց խառնում (կոնտամինացիա)։

Ընկղմեմ բայի համար վերականգնելով *կող– արմատ (որ խառնվել՝ կոնտամինացվել է կլանեմ-ի կուլ արմատի հետ)՝ Մեյեն այն համեմատում է լիտվ. gilùs, gilmė̃ «խորություն», լատվ. dziļš «խոր», dzeļme, dzeļmenis «խորություն» և հ. սլ. glǫbokъ, ռուս. глубокий «խոր» բառերի հետ, որոնց միացնում է նաև այդ լեզուներում գոյություն ունեցող թռչնանուններ («սուզարար» և այլն)։ Աճառյանը [ՀԱԲ, 2, 129—138] ընդունում է այս մեկնությունը։ Ստուգաբանական այլ բառարաններ սրանք չեն միացնում։ Պոկոռնին [Pok., 1, 367] սլավոնական բառերը բերում է (ըստ Մախեկի) *gelebh-ի տակ՝ ենթադրելով ռնգային *glembh- ձև։ Շանսկու ռուսերեն ստուգաբանական բառարանում [Шанский, 1, 4, 97—98] սրանք հատկացվում են *gleubh-ի ռնգայինով *glumbh- ձևին (ըստ Սլավսկու, Հոլուբի)։ Ֆրենկելը [LEW, 1, 151] բալթիական ձևերը համեմատում է սլավոնական այլ ձևերի հետ (ռուս. Желома, Желомя գետանուններ և թերևս голомя, голомень «բաց ծով» և այլն)։ Մենք գերադասել ենք առանձնացնել հ.-ե. հատուկ *gel- արմատ՝ հիմքային *gēl-(e)m- ձևով, որից բխեցրել ենք հայ. կղմ-ը՝ բաց թողնելով մյուս ձևերի հարցը. հնարավոր է, որ *g(e)lebh-ը և *gleubh-ը *g(ē)lem-ի հետ միասին ներկայացնում են սրա աճած հիմքային ձևերը, և որ այս *gel-ը կապված է *gel- «կլանել» արմատի հետ (այսինքն՝ առկա է ոչ թե ուշ խառնում, այլ նախնական կապ)։

Ծաղիկ բառի հունարեն զուգահեռն է Հեսիքիոսի բառարանի γελεῖν· λάμπειν, ἀνθεῖν («փայլել, ծաղկել») բառը [ըստ Petersson-ի, KZ 47, 289]։ Աճառյանը [ՀԱԲ, 2², 438] չի ընդունում [հմմտ. նաև Solta, 1960, 423, ծան.]։

Հայերեն տալ, -ոյ և հուն. γάλως (γαλωFος) բառաձևերի հիմքային ձայնավորման հատուկ մերձավորությունը նշել է Զոլտան [Solta, 1960, 59]։ Հիմքի *-u̯-ն (*gəlōu̯-) հավանաբար պահպանված է որոշ բարբառների տալվ ձևի մեջ [հմմտ. ՀԱԲ, 4², 357], որ, այսպիսով, հանդես է բերում գրաբար ձևից ավելի հին կերպարանք։ Այս դեպքում տեղի է ունեցել *-u̯-ով հիմքի անցում *-o-ով հիմքի՝ զուգահեռաբար և՛ հայերենում, և՛ հունարենում։ *g'> տ անցման համար հմմտ. *ag'ro-> արտ և այլն, թեև տ-ն այս դեպքում ոմանք համարում են տայգր-ի (*dāiu̯ēr) ազդեցության արդյունք։

Ծամեմ-ի զուգահեռները որոշված են ըստ հայերենին իմաստով մոտ սկզբնական բայաձևերի առկայության [հմմտ. Solta, 1960, 255]՝ հ.հնդկ. jambhatē «(ատամներով) բռնում է», պրակ. jambháyati, ավեստ. həm-jəmbayati «մանրում է», հ. սլավ. zębǫ «պատառոտում եմ»։

Ծամելի-ի զուգահեռն է հուն. γαμφηλή «ծնոտ» համիմաստ բառը։

Ծանաւթ-ը Շարպանտիեն [IF, 25, 243] համեմատում է հ. հնդկ. jñapti- «իմացություն, տեղեկություն» բառի հետ՝ նշելով հատկապես *-i-ով հիմքի նախնականությունը և *-p-ով ձևերի ընդհանրությունը: Գոդելը [Godel, 1975, 80] -ւթ-ն բխեցնում է *-kt-ից՝ սահմանելով բայական *-ak-i̯e- (ճանաչեմ, աղաչեմ, ամաչեմ) և բայանվանական *-ak-ti- (ծանաւթ, աղաւթ-ք, ամաւթ) ձևերի համապատասխանությունը: *-kt-ի այսպիսի -ւթ փոփոխությունը անհավանական է (այս դեպքում *-k-ն պիտի ընկներ). կարելի կլիներ ենթադրել *-kt->-p անցում՝ ւ-ի հետագա (հայերենին հատուկ) հավելումով, եթե ճիշտ չէ Շարպանտիեի վարկածը:

Ծեծ-ի համեմատությունը հ.հնդկ. jájati, jañjati «կռվում է, պայքարում է» բայի հետ պատկանում է Շեֆտելովիցին [BB, 28, 295]: Ընդունում է Աճառյանը [ՀԱԲ, 2^2, 45] և իր կողմից ավելացնում ծանծ «ցորենի ծեծելուց հետո մնացած կճեպ ու հարդ» բառը՝ նշելով ռնգային և ոչ ռնգային ձևերի զուգահեռ առկայությունը հայերենում և հին հնդկերենում: Իմաստային տարբերությունը այս համեմատությունը դարձնում է քիչ հավանական: Թեև Աճառյանը վրացական համապատասխան çeç արմատը բխեցնում է հայերենից, բայց հնարավոր է նաև հակառակ ենթադրությունը: Հավանաբար ծանծ-ի հետ կապված է ծնծ–ատ «կճեպը չհանված բրինձ, չալթուկ(?)» անստույգ բառը:

Եթե ծունկ(ն), ծունգ(ն) բառը իրոք բխում է ետնալեզվային աճականով *g'on-g- ձևից, ապա հմմտ. հուն. γνύξ, այլև թերևս, պհլ. zanuk, սոգդ. z'nwk: Մեյեն [Mellet, 1936, 2, 84] տալիս է երկակի *gōnu̯i ձևը, որ սխալ է համարում Զոլտան [Solta, 1960, 166, ծան.]: Նշելի է, որ հունական և իրանական հիմքային ձևերը հայերենից ձայնավորմամբ տարբեր են:

Կերկեր «սև փարփար» և կերկերիմ «խզվել (ձայնի մասին)» բառերի ստուգաբանությունը պատկանում է Աղայանին [1974, 82—84]: Կարկաչ «ճռվողյուն, քրքջոց. կրճտոց. խոխոջ» բառը որոշ հեղինակների կողմից հատկացվում է նաև *ker- բնաձայնական արմատին, ընդ որում *k-ի չհնչյունափոխվելը բացատրվում է արմատի բնաձայնականությամբ [Solta, 1960, 44—45]: Աճառյանը [ՀԱԲ, 2^2, 553] համարում է ինքնուրույն բնաձայնական կազմություն: *Ger-ից ծագելու դեպքում կարկաչ-ը պետք է հին կազմություն լինի: Կերկերիմ-ը Պեդերսենը համեմատում է հուն. γαργαρίζω «խախաչում եմ, բերանս ջրով ողողում եմ» բայի հետ և հանգեցնում *gu̯er- «կլանել» արմատին [ընդունում է Պոկոռնին. Pok., 1, 476], որ խիստ կասկածելի է:

Կռունկ-ի նախաձևի վերականգնումը վեճերի տեղիք է տվել. բացի *gērong-ից կամ *gōrong-ից (Մեյե) առաջարկվել են նաև *gērung- (Պեդերսեն), *gᵘrung- (Վինտեր) ձևերը: Զուգաբանությունները որոշված են ըստ իմաստի:

Բրբռ. կռավել և հնից ավանդված ագռաւ («ագռավ», այլև «բու») բառերի ստուգաբանության համար հիմք են ծառայել գերմանական ձևերը (հ. վ. գերմ. *krā(w)a, krāiā, հ. անգլ. crāwe «ագռավ» և այլն), որոնցից առաջինում առկա է տեղաշարժ (թերևս բարբառային հողի վրա), երկրորդում՝ ոչ: Ագռավի անվանումներ կազմված են զուգահեռ *ker- արմատից ևս, բայց նրանով դժվար է բացատրել ագռաւ-ի գ-ն (ձայնեղացում ռ-ի ազդեցությա՞մբ):

Կռնչիմ «կուչ գալ» բայը Աճառյանը [ՀԱԲ, 2^4, 672] բխեցնում է *greng'h- նախաձևից, որ հնչյունաբանորեն անընդունելի է:

Աճառյանը [ՀԱԲ, 2^2, 474], հետևելով Մեյեին [MSL, 7, 165], ծուռ-ը համեմատում է հուն. γυρός «կոր» բառի հետ և վերականգնում է մեկ ընդհանուր *g'uro- նախաձև [հմմտ. նաև Solta, 1960, 437—438]: Սակայն ավելի հավանական է հուն. բառի պատկանելությունը *geu- «ծռել» արմատին, որին թերևս պատկանում է նաև հայ. կոր-ը (միևնույն *-ro- ածանցով): Այս դեպքում ավելի ընդունելի է Լիդենի կարծիքը, որ ծուռ-ը հատկացնում է «շրջել, ծռել, ոլորել» արմատին [հմմտ. նաև Pok., 1, 392]: Աղայանը [1974, 105—106] կոր-ը բխեցնում է *ger- «պտտել, ոլորել» արմատից, սակայն չկան այս արմատին պատկանող և հայերենին զուգահեռ՝ առանց ածանցի և ածականի ձևեր: Էլ ավելի անհավանական է կրունկն, կուռն և այլն բառերի հատկացումը *ger-ին:

Կումբ-ի համեմատությունը գերմ. բառերի հետ (հ. անգլ. cumb «թաս», մ. վ. գերմ. «սարք, աման, թաս» և այլն) պատկանում է Շեֆտելովիցին [BB, 28, 308]: Պոկոռնին [Pok., 1, 396] սրանք բերում է *geu- արմատի տակ և որոշ կասկածով միացնում պրսկ. gumbed «գմբեթ», լիտվ. gumbas «ուռուցիկություն, ուռույց». լատվ. gumba «ուռուցք», հ. սլ. gǫba «բուս. սունկ», ռուս. губа «շրթունք» և губа «ծառասունկ» բառերը: Շեֆտելովիցի ստուգաբանությունը հնարավոր է, եթե հայերենի համար ենթադրենք կամ նախնական *-bh-ով (*-p-ո՞վ) ձև, կամ նախնական պ-ի հետագա ձայնեղացում մ-ի մոտ (*kumb->կումպ>կումբ): Աճառյանը [ՀԱԲ, 2^2, 658—659], հենվելով Վալդե-Պոկոռնու բառարանի վրա, տալիս է միայն բալթիկ-սլավոնական ձևերը՝ առանց բացատրելու *-b-ի՝ հայերենում անփոփոխ մնալը *gumb- նախաձև ենթադրելու դեպքում:

Կրակ-ի ստուգաբանությունը կասկածելի է. ենթադրվող *gu-ro- նախաձևը (*-ro- ածանցով) զուգահեռներ չունի (այլուր *-lo-ով ձևեր). թերևս առկա է հուր-ի ազդեցությունը:

Կաղաղ «որջ» բառը (թերևս նաև կաղաղանալ «հանգստանալ (?)») իմաստով շատ մոտ է բալթիական բառերին (լատվ. guõlis «անկողին, հանգստավայր. որջ», լատվ. guoļa «հանգստավայր, բույն», այլև լիտվ. guliù, gulti «պառկել», guliù, guléti «պառկած լինել», լատվ. gult(ies) «պառկել», gulêt «քնել, պառկել քնելու. պառկած լինել»), ընդ որում հայ. կաղ-ը և բալթ. *gul-ը կարող են հանգեցվել միևնույն ձայնդարձով ձևին՝ *gьl- [հմմտ. Solta, 1960, 310, ծան.]:

Կող-ի (այստեղ նաև կող-մն և կողն, որից ան-կողին) համեմատությունը թոխար. kalymi «կողմ» բառի հետ պատկանում է Մեյեին [MSL, 17, 294, ծան.]: Ընդունում է Աճառյանը [ՀԱԲ, 2^2, 620—621]:

Ձաւնեմ-ի այս ստուգաբանությունը պատկանում է Օստհոֆին [BB, 24, 182] և ընդունվում է Պոկոռնու [Pok., I, 423] ու Զոլտայի [Solta, 1960, 160] կողմից: Ինչպես նշում է վերջինս, հայերեն բառն առանձնապես մոտ է ավեստերենի zavaiti «կոչում է. նզովում է» (հմմտ. հայ. նզովք, ն-զովել իրանական փոխառությունը) և լիտվ. žavėti, լատվ. zavêt «կախարդել» բառերին՝ որպես կրոնական ոլորտին պատկանող բառ: Աճառյանը [ՀԱԲ, 3^2, 161—162] ընդունում է Մյուլլերի [SWAW, 66, 274] ստուգաբանությունը՝ *g'heu-/g'hu-ից (հմմտ. ձեւ, ձոյլ)՝ ենթադրելով -աւն ածանցով կազմություն:

Գէր-ի համեմատությունը հ. սլ. žirъ, ռուս. жир բառերի հետ իրարից անկախ կատարել են Ղափանցյանը [ЗВО, 23, 354] և Պիզանին [KZ, 68, 163]։ Չեն ընդունում Մեյեն և Աճառյանը [ՀԱԲ, 1^{2}, 553], բայց ընդունում է Զոլտան [Solta, 1960, 435]։

Ձմեռն ձևը զուգահեռներ ունի հուն. χειμερινός և լատ. hibernus «ձմեռային» բառաձևերի միջև։ Նրանց համար վերականգնվող *g'heimerinos ընդհանուր նախաձևի դեմ առարկում է Սեմերենյին [«Glotta», 38. հմմտ. նաև Anttila, 1969, 134]։

Ձաղ-ի ստուգաբանությունը պատկանում է Մեյեին (MSL, 10, 280)։ Այն ընդունվում է Աճառյանի կողմից [ՀԱԲ, 3^{2}, 143], որ հայերենը բխեցնում է *g'hleu-ի՝ *-eu-ից զուրկ և ստորին ձայնդարձով *gh]- ձևից (այս դեպքում անբացատրելի է մնում -ու-ով հիմքը)։ Պոկոռնին [Pok., 1, 451] Մեյեի և Աճառյանի բերած զուգահեռները տալիս է *ghleu- (չքմայնացած *gh-ով) «ուրախ լինել, կատակել» նախաձևի տակ՝ այն բխեցնելով ghel- «գոչել» կամ *ghel- և ghel-) «փայլել» արմատից։ Եթե նկատի առնենք հայերենի տվյալները, որ չի բերում Պոկոռնին, ապա ճիշտ կլինի երկրորդ ենթադրությունը, մանավանդ որ բալթիկ-սլավոնական ձևերի մեջ քմայնացման բացակայությունը հատուկ է նաև *g'hel-ին պատկանող բալթիկ-սլավոնական որոշ ձևերի և բացատրվում է նրանց բարբառային դիրքի երկակիությամբ (հմմտ. ռուս. берег «ափ»՝ *bherg'h-ի դիմաց)։ Ձաղ-ը միավորվում է հուն. χλευή «ծաղր, կատակ» և հ. իսլ. glȳ «ուրախություն», հ. անգլ. glēo, glīw «խաղ, ուրախություն» ձևերի հետ հիմքի «մաքրությամբ» (ածանցի և աճականի բացակայությամբ), մանավանդ եթե նկատի առնենք *-u-ով հիմքի նախնականությունը նաև հայերենի համար (*g'hьlu-> ձաղ, -ու)։ Բալթիկ-սլավոնական ձևերը աճականներով և ածանցներով են, ուստի և նշանակված են ±-ով։ Ձղմել «դիտել, սևեռուն նայել» բայը հատկացրել ենք *g'hel- արմատին մենք՝ նկատի ունենալով այդ արմատին պատկանող բառերի մեջ համապատասխան իմաստների առկայությունը և հատկապես *ghlu-m-ից ծագող նորվ. բրբռ. glȳma «մռայլ, սպառնագին նայել», արև. ֆրիզ. glumen «զարմանակալ նայել, զարմանակալել» բառաձևերը (հմմտ. նաև *ghel-ի հիմքային այլ ձևից ծագող ռուս. глядеть «նայել» բայը։)

Ձեղուն «առաստաղ. քիմք» բառի ստուգաբանությունը պատկանում է Ադոնցին [«Mélanges Boisacq», 1, 9,]։ Պոկոռնին [Pok., 1, 436] բերում է այն հուն. χελύνη «շրթունք. ծնոտ», χεῖλος «շրթունք» և հ. իռլ. giolnar «ծնոտ», շվեդ. gäl, դան. goelle «խռիկ, ծնոտ» բառերի հետ միասին՝ վերականգնելով «ծնոտ» ընդհանուր իմաստը, որ չի կարող, սակայն, բացատրել հայերենի «առաստաղ» իմաստը («քիմք» իմաստը ակնհայտորեն «առաստաղ»-ի փոխաբերական առումն է)։ Իմաստային հիմունքով Աղայանը [1974, 108—111] մերժում է այս ստուգաբանությունը և ճիշտ համարում Բեդիրյանի [1955, 103]՝ ձեղուն-ը ձող-ի հետ կապելու փորձը, մանավանդ որ կա ձողունք ձայնդարձային ձևը։ Եթե նկատի առնենք χελύνη, χελώνη «կրիա. (կրիայի) պատյան. (փայտե) ծածկ», χέλυς «կրիա. կրծքավանդակ, կուրծք», χέλυσμα «փայտե պաշտպանական սարք՝ նավից ափ իջնելու համար» զուգահեռ ձևերի առկայությունը (որոնց և χελύνη «շրթունք, ծնոտ» բառի իմաստային կապի մեկնությունը դժվարություններ է հարուցում) [հմմտ. Frisk, GEW, 2, 1086—1087], ապա հայ. կտուր և կարել բառերի իմաստային առումները, թերևս հնարավոր է *g'helunā-ի տակ բերվող ձևերը միավորել *g'hel- «կտրել» արմատի տակ բերվող ձևերի հետ և այսպիսով, ձեղուն, ձողունք, ձող, ձլեմ «տկռել» բառերի կապը համարել սկզբնական (այսինքն՝ *ghelunā-ի տակ բերվող ձևերը հին ածանցումներ համարել *g'hel-ից)։ Դեռ ավելին, նկատի առնելով այս արմատի տակ բերված բրբռ. ձաղտել ձևի ակնհայտ կապը ձաղկել ձևի հետ՝ վերջինիս ընդհանուր աղբյուր *g'halg(h)-ը ձայնավորման որոշ ձևափոխությամբ կարելի է կապել *g'hel-ի հետ որպես սրա *-g(h)- աճականով ձև։

Գերդաստան-ը թերևս իրանական փոխառություն է (հմմտ. *gh-ի քըմայնացումը և -ստան) ածանցը, թեև Աճառյանը (ՀԱԲ, 1^{2}, 54) դնում է բնիկ բառերի շարքում։

Գարշ-ի ստուգաբանությունը պատկանում է Բուգգեին [KZ, 32, 35] և ընդունվում է Պոկոռնու [Pok., 1, 445] ու Աճառյանի կողմից [ՀԱԲ, 1^{2}, 523]. հմմտ. ավեստ. grəhma, «մեղավոր, հանցավոր», լիտվ. grasùs «ըս-. պատանական, տհաճ, զզվելի», մ. վ. գերմ. garst «ապականված, կծված», (իմաստի համար հմմտ. գարշեմ «զզվել. պղծվել, ապականվել»), հ. իռլ. gersta «գրգռել, դառնացնել», այլև թերևս մ. իռլ. goirt «դառը», հ. իռլ gortae «քաղց» և այլն։ Մեյեն [MSL, 8, 280] և, նրա հետևողությամբ, Զոլտան [Solta, 1960, 371—372] համեմատում են հ. հնդկ. hárṣate hṛṣyati «բիզ-բիզ է կանգնում, սարսափում է, գրգռված է» լատ. horreō, -ere «բիզ-բիզ կանգնել, սարսափել» և այլն բառերի հետ, որոնք, սակայն հայ. ձար բառի հետ միասին պատկանում են *g'hers- արմատին (հ. հնդկ., ավեստ., հայ., այլ. ձևերը ենթադրում են *g'h-ով արմատ)։

Գոմ-ի ստուգաբանությունը կասկածելի է. *-ghom-ը պիտի տար *գուն և ոչ գոմ (հմմտ. *dom>տուն)։

Կածան-ի համեմատությունը սլավոնական համապատասխան ձևերի հետ (սերբ. gâz «անցահուն», սլովեն. gâz «կածան ձյան միջով», բուլղ. газа «գնալ, անցնել») պատկանում է Լիդենին և ընդունվում է Աճառյանի կողմից [ՀԱԲ, 2^{2}, 487]։ Նորերս սլավ. ձևերը բխեցվել են *g^{u}ā- «գնալ» արմատի *-g'- աճականով ձևից [հմմտ. Трубачев, „Этимология", 1974, 22 և ЭССЯ, 6, 114]։ Բեռնեկերը [Berneker, 1, 239] սրանց միացնում է լիտվ. gõžti «ուռճանալ», լատվ. gazt «թափել» բառերը։

Կորկոտ-ի համեմատությունը լիտվ. grúdas, լատվ. graûds «(հացա)հատիկ», հ. սլ., ռուս. груда «կույտ», կիմր. gro, հ. կոռն. grou «ավազ» և այլն բառերի հետ պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 2^{2}, 651] և ընդունվում է Զոլտայի կողմից [Solta, 1960, 169—170]։ Սակայն այս բառերը, որոնք կարող են ունենալ և՛ g-ով և՛ *gh-ով նախաձև, Պոկոռնին [Pok., 1, 460—462] բերում է *ghrēu- «տրորել, մաշեցնել» նախաձևի տակ, որպես *gher- «տրորել» արմատի աճականով ձև։ Եթե Աճառյանի ստուգաբանությունը ճիշտ է, ապա հիշյալ ձևերը կամ պետք է տարբերել հուն., գերմ. ձևերից, կամ, թերևս, ենթադրել *gh-ի շնչեղության կորուստ հայերենում *-d- աճականի ազդեցության տակ՝ *ghoghrod->*gogrod-> կորկոտ (հմմտ. թերևս *g^{u}hid->*g^{u}əid->կայտ-առ?)։ +-ի և ±-ի տարբերակումը կատարված է ըստ իմաստի։

Կամուրջ-ը առաջին անգամ համեմատել է հուն. γέφυρα «պողոտա, կամուրջ» բառի հետ Մյուլլերը [SWAW, 84, 14]։ Սովորաբար վերականգնըվել են *gambh-, *gm̥bh- նախաձևեր. *gu̯ebh- հատուկ նախաձևի վերականգնումը պատկանում է Մեյեին, որ *gu̯-ի համար նկատի ունի γέφυρα-ի կողքին βέφυρα և δέφυρα բարբառային ձևերը: Յակոբսոնը [„Wörter und Sachen" 2, 189] սրանց միացնում է լատ. vibia «գերան» բառը:

Գեջ-ի համեմատությունը սլավոնական (հ. սլ. židъkъ, ռուս. жидкий «հեղուկ» (ած.) և այլն) բառերի հետ պատկանում է Լիդենին [Lidén, 1906, 51] և ընդունվում է Մեյեի ու Աճառյանի կողմից [ՀԱԲ, 1^2, 551]: Այս դեպքում սլավոնականից պետք է առանձնացնել հուն. δεῖσα «կեղտ, տիղմ» և կապված սրանց հետ միացվող գերմ. բառերը [Pok., 1, 469], եթե չենթադրենք կամ բարբառային *gu̯h/gu̯ տատանում, կամ հայերենում *gu̯edhi̯o->*gu̯hedhi̯o-> գեջ- անցում:

Կրեմ բայի ստուգաբանությունը պատկանում է Աղայանին [1947, 84—85]: Եթե ճիշտ է, ապա այն պետք է համարել անվանածանցային կազմություն (*-i̯e/i̯o- ածանցի օգնությամբ)՝ *gu̯er- «ծանր» ածականից: Իմաստի համար հմմտ. հատկապես հուն. βρίθω «ծանր եմ. բեռնված եմ, բեռ ունեմ, կռում եմ» բայը:

Կռիւ «կռիվ, վեճ, պատերազմ. ոտքը ամուր դնելու՝ կառչելու՝ հաստատվելու տեղ» (կռուիմ «կառչում եմ») բառի զուգահեռները որոշված են ըստ *-l-ով հիմքի առկայության և իմաստային մերձավորության ամենից ավելի մոտ են հուն. βρίμη «ուժեղ ճնշում, սեղմում. բարկություն, հայհոյանք», βριαρός «ամուր, ուժեղ», հ. վ. գերմ. krēg «համառություն», մ. վ. գերմ. kreig «ջանք, լարում. կռիվ», ն. վ. գերմ. Krieg «կռիվ» բառերը: Աճառյանը [ՀԱԲ, 2^2, 671] հայ. և գերմ. բառերի կապը համարում է պատահական:

Կատակ և հ. հնդկ. gádati «ասում է, խոսում է», gada- «խոսք, զրույց, ասացվածք» բառերի համեմատությունը պատկանում է Լիդենին [Lidén, 1906, 81] և ընդունվում է Աճառյանի կողմից: Հ. հնդկ. բառը Պոկոռնին [Pok., 1, 480—481] բերում է *gu̯et- «խոսել» արմատի տակ՝ *t-ի փոխարեն հին հնդկերենում d-ի առկայությունը համարելով երկրորդական: Մայրհոֆերը [KEWA, 1, 319—320] չժխտելով սա և gad-ի d-ն համարելով vad-ի ազդեցության արդյունք՝ միաժամանակ նշում է գերմ. (նորվ. kvata, վեստֆալ. kwātern «շաղակրատել») ու իրանական (ավեստ. հ. պրսկ. jad- «խնդրել») զուգահեռներ և ենթադրում *gu̯ed- արմատ: Բոլոր դեպքերում հայերենի իմաստը հեռու է մնում:

Կոյ (>կու) բառի համար վերականգնվող *gu̯ou-to- նախաձևը կասկածելի է (*t-ն *-o-ից առաջ տալի՞ս է արդյոք յ), *gu̯ou-so-ն (Պեդերսեն) չունի զուգահեռներ այլ լեզուներում: Այդ պատճառով էլ մենք տալիս ենք *-t-ով նախաձև՝ առկա թողնելով սրա ածանց, թե աճական լինելու հարցը. *-t-ից հետո թերևս պետք է ենթադրել *-i-:

Կորիւն-ի ստուգաբանությունը պատկանում է Մյուլլերին [SWAW, 136, 11] և ընդունվում է շատերի կողմից: Դժվարություն է հարուցում նախաձևի վերականգնումը: Պոկոռնին [Pok., 1, 485] հուն. βρέφος «սաղմ, ձագ», մ. իռլ. brommach և հ. սլավ. žrěbę (ռուս. жеребенок) «քուռակ, մտրուկ» բառերը բերում է *gu̯rebh- հիմնաձևի տակ: Հաասը [Haas, 1966, 249], նկատի առնելով (նախա)փռյուգ. κορυβαντ- «փռյուգիական Կիբելայի քուրմ» (իբր *«զավակ») զուգահեռը, հայերենի համար տալիս է* gu̯orebhn̥t- նախաձևը, որ կասկածելի է:

Կրծեմ (կուրծ-) բայի ստուգաբանությունը պատկանում է Մյուլլերին [Müller, Armenaca, 6, 4] և ընդունվում է Հյուբշմանի ու Աճառյանի կողմից [ՀԱԲ, 2^2, 666]: Հայերենի համար ենթադրվում է *-g'-ով (փխն. *-g'h-ի) և երերուն ձայնդարձով (Schwebeablaut) ձև. Պոկոռնին [Pok., 1, 485—486] տալիս է միայն *-g'h-ով *gu̯rēugh-/*gu̯rūgh- նախաձևը՝ հենվելով հատկապես հուն. βρύχω «կրճտում եմ, կրծում եմ» բայի վրա, թեև հնարավոր է նաև *-g'-ով տարբերակ: Պեդերսենը և նրա հիման վրա Պոկոռնին [Pok., 1, 474] բխեցնում են *gu̯er- «կլանել» արմատից, որ անհավանական է:

Կայտառ-ի ստուգաբանությունը տվել ենք մենք՝ կորկոտ բառի օրինակով ենթադրելով *gu̯həi-d-> *gu̯əi-d-> կայտ-առ փոփոխությունը. հմմտ. հուն. φαιδός «պայծառ, ուրախ», լիտվ. gaidrùs «պայծառ» և այլն:

Եթե ջնջեմ-ի երկրորդ ջ-ն գալիս է *-i̯-ից (*gu̯hen-i̯e-), ապա այն զուգահեռներ ունի հուն. θείνω «խփում եմ», ալբ. gjanj «հալածում եմ», լիտվ. geniù, genéti «հատում եմ» ձևերի մեջ: Զոլտան [Solta, 1960, 81] հնարավոր է համարում վերականգնել կրկնավոր ձև՝ հ. հնդկ. jánghanti:

Լեարդ-ի նախաձևի վերականգնումը դժվարություններ է հարուցում. ենթադրվում են նաև *lepr̥t-, *lesr̥t- նախաձևերը, ընդ որում առաջին դեպքում նկատի է առնվում գերմ. (հ. սկանդ. lifr, հ. անգլ. lifer, հ. վ. գերմ. lìber) ձևերը, որոնք ծագում են *leip- արմատից («ճարպոտ, յուղոտ»), երկրորդ դեպքում՝ խեթ. lišši-ն: Բուն *i̯ēku̯r̥t- նախաձևի դեպքում հայ. լ-ն բացատրվում է կամ որպես անկանոն հնչյունափոխություն, կամ սկզբնական *li̯-ի (*li̯ēku̯r̥t-) արտացոլում, կամ գերմանականի տիպի նախաձևի ազդեցություն:

Լուծ բառի համար (*i̯ugom) սովորաբար ընդունվում է լուծանեմ բայի ազդեցություն, թեև կան նաև *i̯>l անցման այլ բացատրություններ ևս:

Ջով «ծիլ. գդմնու արձակած թև. չվան» (ճապաղով) «հասու ծիլերով (ցորեն)» բառի համեմատությունը հ. հնդկ. yáva- «ցորեն. գարի. կորեկ», yawasá- «խոտ. արոտ, մարգագետին», մ.պ. yav, jav «գարի», հուն. ζε(ι)αί (հգն.) «կարմրահատ ցորեն», լիտվ. jāvas «հացահատիկ», yávya «ցորենը չորացնելու տեղ», ռուս. овин «ցորենի խրձերը չորացնելու տեղ, չորանոց» բառերի հետ պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 4^2, 131]: Կասկածելի է իմաստային տարբերության պատճառով:

Քամակ բառի համեմատությունը բալթիական բառերի հետ (լատվ. kamials, պրուս. caymoys «ուս») պատկանում է Լիդենին [Lidén, 1906, 30] և ընդունվում է Աճառյանի կողմից [ՀԱԲ, 4^2, 548]:

Դուք-ի համար ենթադրվում է դու-ի ազդեցություն՝ *i̯us> *ջուք> դուք անցմամբ:

Սաստ (սաստիկ, սաստել) բառերի համեմատությունը հ. հնդկ. śiṣṭi- (ավելի ուշ śāsti-) «պատիժ, սաստ, հրաման», śāstár- «պատժող, հրամայող», ավեստ. sāstar- «հրամայող, իշխող», մ.պ. sāstár «իշխող» և այլն բառերի հետ տարածված է [հմմտ. ՀԱԲ, 4^2, 177—178. Pok., 1, 533], բայց կասկածելի. ավելի հավանական է հայերենի՝ իրանական աղբյուրներից փոխառյալ լինելը:

Քուք «որք, հառաչանք», քքուիմ «լալիս եմ, ողբում եմ, հառաչում եմ, քրքջում եմ» բառերի մեջ *u-ին հաջորդող *-k-ի՝ հայ. ս-ի չփոխվելը (հմմտ. *dhugəter> *dhukter-> դուստր) բացատրվում է արմատի բնաձայնականությամբ: Քուք-ի ստուգաբանությունը պատկանում է Մեյեին [MSL, 12, 214. հմմտ. նաև ՀԱԲ, 4², 597], քքուիմ-ինը՝ Աճառյանին [ՀԱԲ, 4², 604]: Դժվար թե հ.-ե. այս արմատից լինի քուս- «բամբասանք, չարախոսություն» արմատը:

Խոյլ-ը ենթադրում է *kheul- նախաձև, որը ձայնավորմամբ չի համապատասխանում համեմատվող բառերին՝ հուն. χήλη «ուռուցք», հ. սկանդ. haull, հ. անգլ. hēala, հ. վ. գերմ. hōla «փոշտանք», լիտվ. բրբռ. kúle «խիլթ», ռուս. кила «փոշտանք. ծառի խիլթ». սակայն համապատասխանությունն ակնհայտ է, և կարելի է ենթադրել նախնական բարբառային տարբերություն [հմմտ. ՀԱԲ, 2², Solta, 1960, 162—163]: Մենք հակված ենք այս բառերին միացնելու խաղուարտ և բրբռ. խիլք բառերը: Պետերսոնը [KZ, 17, 277] համեմատում է հ. հնդկ. khōlaka «մրջնադեզ», լիտվ. kulỹs «խուրձ», ռուս. шулята «ամորձիք» բառերի հետ՝ բխեցնելով *keu- «ծռել, կամար կապել» արմատի *kheu-l- ածանցական տարբերակից, որ կասկածով բերում է Պոկոռնին [Pok., 1, 588]:

Սեր-ի զուգահեռներից +-ով նշանակված են ածանցով և իմաստով մերձավոր գերմանական (հ. սկանդ. hyrr «բարեկամական, բարյացակամ», հ. անգլ. hīore, hīere, «հաճելի, մեղմ», մ. վ. գերմ. gi-hiure «մեղմ, հաճելի»), ±-ով՝ միայն իմաստով մերձավոր հնդկական (հ. հնդկ. śēva-, śiva- «բարեկամական, սիրելի») և կելտական (հ. իռլ. cōem, cōim «սիրելի») ձևերը:

Սիղեղ (սեղեղ, սեղեխ և այլն) «սիրեկան» բառի ստուգաբանությունը մերն է: Եթե այն ճիշտ է, ապա կամ հայասերենի Šillili- դիցանվան հետ մեր կատարած համեմատությունը [ArO, *1961, 377—378*] ճիշտ չէ, կամ հայասերենի մեջ ենթադրելի է սատեմային հիմքով (հայերեն) տարր:

Ցին-ը համեմատվում է կամ հնդիրանական բառերի (հ. հնդկ. s'yená- «արծիվ, բազե», ավեստ. saēna- «մի մեծ գիշատիչ թռչուն, արծիվ»), կամ էլ հուն. ἰκτῖνες «ցին» բառերի հետ: Առաջինները ծագում են գույն նշանակող *k'ēi- արմատից, իսկ հունարեն բառը հայերենից դուրս հավաստի զուգահեռներ չունի: Երկու դեպքում էլ կան հնչյունական դժվարություններ. *ki̯-ն սովորաբար տալիս է չ, ուստի մենք ենթադրել ենք *ski̯-, որ պիտի տար ց:

Աքաղաղ-ի ա-ի համար ենթադրվում է փոքրասիական ազդեցություն [**Solta**, 1960, 67—68, ծան.], հմմտ. նաև ա-տաղձ՝ *dl̥-ghl̥-ից: Հնարավոր է աքաղաղ-ի համար ենթադրել հին կրկնավոր ձև:

Ցուլ-ի զուգահեռներից հունարենը σκύλαξ «շնիկ, լակոտ» բառը հայերենին մոտ է իմաստով (կենդանու անուն) և ձայնավորմամբ (+), մյուսները՝ միայն իմաստով (կենդանիների անուններ)՝ ±. հմմտ. լիտվ. kalē «էգ շուն», ալբ. këlysh «ձագ, շան ձագ, լակոտ», մ. իռլ. cailēn, կիմր. colwyn «շնիկ»: Ցուլ-ի համեմատությունը հուն. բառի հետ պատկանում է Մեյեին [BSL, 79, 20]:

Հնարավոր է սամի և սիմ «կոթող» բառերի իրանական ծագումը, թեև պահպանված իրանական բառերը իմաստով կամ ձևով հայերեն բառերից հեռու են:

Խինդ-ի ճշգրտված համեմատությունը իրանական համիմաստ բառերի հետ (պհլ. xandītan «խնդալ», xandak «ժպիտ», սոգդ. xand «ծիծաղել» և այլն) պատկանում է Հյուբշմանին [IF Anz. 10, 48]: Ընդունում է Աճառյանը [ՀԱԲ, *2², 267*] և ավելացնում խնծիղ (<*խնձիղ) «ցնծություն, հրճվանք» բառը [ՀԱԲ, *2², 267 և 379—380*]: Լիովին հնարավոր է խնչոյք-ի կապը այս բառերի հետ: Վերականգնվող *khendh- արմատը թերևս կապված է *(s)kand-, *(s)kend- «փայլել, վառվել, լուսավոր» արմատների հետ:

Բալթիկ-սլավոնական համապատասխան բառերի հետ խարեմ-ը միավորվում է ձայնդարձի ստորին աստիճանով (հմմտ. լիտվ. kuriù, kùrti «տաքացնել», ռուս. курить «ծխել»), խարշեմ-ը՝ *-s- աճականով (հմմտ. լատվ. karsêt «շիկացնել» ռուս. красный «կարմիր») [Solta, 1960, 253—254. միայն թե Զոլտան չի նշում, որ *-s- աճական ունի և հայերենին մոտ է նաև հնդկականը. հմմտ. հ. հնդկ. kuṣāku- «կրակ, արև»]: Այս բոլոր դեպքերում զուգահեռներ չունի հայ. խ-ն, ուստի մենք հակված ենք խարեմ, խարշեմ և խորովեմ բառերի համար ենթադրելու իրանական ծագում՝ հավանաբար *su̯el- «ծխալ, այրել» արմատից, թեև իրանական համապատասխան ձևերը չեն պահպանվել:

Սեռն «զուտ, սերտ, խիտ» բառի -ն-ն զուգահեռ ունի ալբ. thjerrë «ոսպ» բառի *k'er-n- նախաձևի *-n-ի մեջ, թեև իմաստով սեռն-ին մոտ են նույն արմատից ծագող լատ. creber «սերտ, խիտ», cresco, -ere «աճել, ուռճանալ» բառերը:

Հ.-ե. *k'er- «աճել. աճեցնել, սնել» արմատից ծագող հայերեն բառերից սերեմ-ի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ բայական ձևերի առկայության, ընդ որում հայերենին իմաստով ամենից ավելի մոտ է լատ. creō, -ēre «ստեղծել, սերել, ծնել» բայը: Մյուս ձևերի մերձավորությունը որոշված է ըստ *-s-ով, *-n-ով, *-mn-ով ընդհանուր ձևերի առկայության:

Հայ. սարի «շղթա, կապանք», սարդ բառերի համեմատությունը հուն. καῖρος «հյուսվածքի թել», καιρία «երիզ, ժապավեն» բառերի հետ պատկանում է Պետերսոնին և ընդունվում է Պոկոռնու [Pok., 1, 577] ու Աճառյանի [ՀԱԲ, *4², 187—188*] կողմից: Վերջինս սրանց միացնում է սարել. սար-ք բրբռ. սարել «մանել» բառերը: Զոլտան [Solta, 1960, 330—331] նշում է նաև հ. հնդկ. sr̥n-khala- «շղթա, կապանք» բառի առկայությունը:

Ցուցանեմ-ի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ սկզբնային s-ի առկայության [*skeu-]՝ մ. պրսկ. škōh-, ն. պրսկ. šikōh «հոյակապություն», հուն. θυο-σκόος «զոհագետ», հ. վ. գերմ. scouwōn «նայել», պրուս. au-schaudētwei «վստահել». վերջինս իմաստով բավականաչափ հեռու է և նշանակված է ±-ով [հմմտ. նաև **Топоров**, 1, 161—163]:

Խուն «քիչ, սակավ» բառերի համեմատությունը ալբ. (h)unjem «իջնում եմ, ցածրանում եմ», únjet «ցած, ստոր» և ռուս. хилый «վտիտ», хулить «հայհոյել» և այլն բառերի հետ պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 2², 420], որ վերականգնում է *q(h)un- արմատ, այլև խուն-ին միացնում է սուն «քիչ» բառը խ/ս այլուր հայտնի հերթագայությամբ (խարիսխ—սարիսխ, դրախտ—դրաստ): Կասկածելի է, մանավանդ որ խ/ս հերթագայությունը բուն հայերենին հատուկ չէ: Սուն-ը մենք խուն-ից անջատել և դրել ենք *k'eu-

«ուռչել. կամար. փոս, խոռոչ» արմատի տակ. հմմտ. հ. հնդկ. śūnam «պակաս», śūnyá- «դատարկ» [Pok., 1, 592]:

Սոր «ծակ, խոռոչ» բառի զուգահեռներից +-ով նշանակված են *-r- ածանցով և իմաստի մերձավորությամբ (հմմտ. ավեստ. sūra-, հուն. κύαρ «ծակ, անցք», լատ. caverna «փոս, այր, խոռոչ»), ±-ով՝ միայն *-r- ածանցով բնութագրվող բառերը:

Լեռում «մանրել, փշրել, ճզմել», լոռմ «փոշիացնել» բառերի համեմատությունը հ. հնդկ. kliśnāti «տանջում է, նեղում է», kléśa- «տանջանք, նեղություն», sam-kliś- «ճզմել», լիտվ. klišes «խեցգետնի ճանկեր», հ. սլավ. kleštiti «ճնշել, սեղմել» և այլ բառերի հետ պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 2², 276]: Կան իմաստային և հնչյունական (հ.-ե. *-ei-՝ հայ. *-e/o-ի դիմաց) դժվարություններ:

Լսեմ բայի համար *k'lu-k'e- նախաձևի վերականգնումը պատկանում է Մեյեին [BSL, 26, 3]: Զոլտան [Solta, 1960, 29] ենթադրում է *-s- ածանց, բայց ձայնավորների միջև *-s-ն ընկնում է:

Կաքաւ-ը ձևով և իմաստով ամենից ավելի մոտ է հուն. κακκάβη «կաքավ» բառին, ապա նաև լատ. caccilāre, ստ. գերմ. kakkela «կռկռալ» բառերին, որոնք հանգեցվում են *kakk- բնաձայնական արմատին: Համատիպ բնաձայնական բառեր կան նաև այլ լեզվախմբերում. հմմտ. աքքադ. qaqabanu, ասոր. qaqqəwā, վրաց. ḳaḳab, մեգր. ḳoḳobe- «կաքավ» և այլն: Հավանական է հայ. բառի փոխառյալ լինելը (ըստ Աճառյանի հուն.>ասոր.>հայ. հմմտ. ՀԱԲ, 2², 563—564), մանավանդ որ կան հնչյունական նույնացման դժվարություններ:

Քուղ «ոլորած գերձան, վուշե թել» բառի համեմատությունը հուն. κλώθω, κλώσκω «մանում եմ», լատ. colus, -ūs «իլիկ. մանած թել» բառերի հետ մերձ է. առանձնապես մոտ են հայերեն և լատիներեն բառերը: Սակայն հուն. և լատ. բառերի համեմատությունն ընդհանրապես կասկած է հարուցում, իսկ հուն. κλώθω-ն ոմանք դիտում են որպես նախահունական բառ և բխեցնում *gel-ից (հմմտ. գերմ. Kleid- «հագուստ»):

Հայ. սրունք-ի համեմատությունը լատ. crūs համիմաստ բառի հետ պատկանում է Հյուբշմանին [ZDMG, 1850, 362]: Դժվարություն է հարուցում *k'-ի պահպանվելն այս դիրքում: Վինտերը ենթադրում է *k'^{u}rūsni- նախաձև: Հնարավոր է բառի իրանական ծագումը (հմմտ. ավեստ. sraoni «հետույք, զիստ») կամ խառնում իրանական ձևի հետ:

Ցամաք-ը Աճառյանը [ՀԱԲ, 4², 448] համարում է փոխառություն ասորական բարբառային որևէ կորած ձևից՝ նշելով սեմական ṣmq «չորացնել» արմատի առկայությունը (եբր. smq «չորացնել», արաբ. ṣāmiq «ծարավ, քաղցած»): Մեր կողմից բերված ստուգաբանությունը նշվել է շատերի կողմից (սկսած Լագարդից) և արտացոլվել Պոկոռնու բառարանում (Pok., 1, 624):

Խաղաղ-ի համեմատությունը հուն. χαλάω «թողնում եմ, թուլացնում եմ, զիջում եմ», ևս. ἄ-χαλος «անհանգիստ» բառերի հետ պատկանում է Պիզանիին [KZ, 63, 167] և ընդունվում է Զոլտայի կողմից [Solta, 1960, 436—437]: Հուն. χαλάω-ն այլ հետազոտողներ բխեցնում են *ghē- «դատարկ լինել. թողնել, հեռանալ» արմատից (*ghə-lo-s>χαλ-): Խաղ, խաղամ բառերի համեմատությունը χαλάω-ի հետ առաջարկել է ավելի վաղ Մեյեն [Meillet, 1936, 36]: Երկու համեմատություններն էլ կասկածելի են իմաստային տարբերության պատճառով:

+-ով նշանակված են *khād-ից ծագող և հայերեն խած-աճ-եմ-ին մերձավոր հ. հնդկ. khādati, ն. պրսկ. xayad «կրծում է, ծամում է», ±-ով՝ հուն. κνώδων «սուր, ատամներ», լիտվ. kándu, ką́sti, հ. սլավ. kusati, ռուս. кусать «կծել» զուգահեռները. վերջիններիս կապը հայերենի հետ կասկածելի է. Պոկոռնին [Pok., 1, 560] դրանք դնում է *ken- «սեղմել, կճմթել» արմատի տակ, թեև նշում է հնդիրանական բառերի հետ կապի հնարավորությունը [Pok., 1, 634]:

Չորք, չորեք, քառ- ձևերի նախատիպերի վերականգնումը դժվարություններ է հարուցում, և հետազոտողները այս դեպքում տարամիտվում են: Չորք-ի (չորեք-) համար մենք ենթադրել ենք *k^{u}etu̯ores նախաձևը, որը դժվարությունները չի վերացնում [հմմտ. Godel, 1975, 77, ծան.]:

Ուր-ի համար ±-ով նշանակված են *k^{u}u-, ±-ով՝ *k^{u}u-r ձևերը:

Ոչ-ի *o-k^{u}i նախաձևը տրված է ըստ Պիզանիի [RL, 1, 166] և Զոլտայի [Solta, 1956, 456]. համեմատվում է հուն. οὐ-χί համիմաստ ձևի հետ:

Լամ-ի զուգահեռներից +-ով նշանակված են՝ *lā- ձևից ծագող և իմաստով հայերենին մոտ լատ. lā-mentum «ողբ» (lā-mentāri «ողբալ»), ±-ով՝ *lā- ձևից ծագող, բայց իմաստով տարբեր հնդկական, հունական, բալթիական և սլավոնական ձևերը. ընդ որում հուն. λῆ-ն կարող է ծագել և՛ *lā-ից, և՛ *lē-ից: Աճառյանը [ՀԱԲ, 2², 257—258] բխեցնում է *plā-k- (*pla-g-) «լայն և հարթ. տարածել» հիմքի անաճական *plā- ձևից՝ «ծեծել» →«կուրծք ծեծել, կոծել» → «լալ» անցումով, որ առկա է, օրինակ, ռուս. плакать «լալ» բայի մեջ. սակայն առանց *-k/g-ի ձևեր չկան, իսկ եթե *plāk/g-ը ծագում է *pelə-/plā- «լայն և հարթ» արմատից, ապա վերջինիս մեջ իմաստային այդ անցումը չկա: Այս ստուգաբանության հետ կարելի է համաձայնել միայն այն դեպքում, եթե հայերենի համար ենթադրենք սկզբնական աթեմատիկ հիմք՝ *plāk-mi> լամ:

Լաւ-ի համեմատությունը լիտվ. lābas «լավ» բառի հետ պատկանում է Լագարդին [Lagarde, 1854, 456]: Բագրատունին, Մյուլլերը [SWAW, 136 95] համեմատում են հուն. λωΐων «ավելի ցանկալի, ավելի լավ» ձևի հետ, որ ծագում է *lāu- «ձեռք բերել, վայելել» արմատից: Աճառյանը [ՀԱԲ, 2², 268] չի ընդունում ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը:

Պոկոռնին տարբերում է *leg- «կաթել, լուծվել» [Pok., 1, 657] ու *leug- «սեղմում, ճահիճ» [Pok., 1, 686] նախաձևեր և հայ. լիկ-ը բերում առաջինի տակ. Աճառյանը [ՀԱԲ, 2², 281—282] լիկ-ի համար բերում է *leu-g-ի տակ դրված ձևերը, բայց տալիս է *leig-/lig- նախաձև. լիճ-ը նա կասկածով կապում է լիկ-ի [ՀԱԲ, 2², 282] հետ, այն պայմանով, որ «ապացուցվի, թե հնդկ. *gi̯- տալիս է հյ. ճ» [*gi̯>ճ անցման համար հմմտ. Jahukian, 1975, 36]: Որպես հայերենի զուգահեռներ կարելի է նշել հ. իռլ. legaim «լուծվում եմ, հալչում եմ», կիմր. llaith, բրետ. leiz (*lekto-) «խոնավ», հ. իսլ. lekr, ն. վ. գերմ. lack «հոսանքը ունեցող», հ. անգլ. leccan «թրջել» և հատկապես երկար ձայնավորով հ. իսլ. lōkr «առու» (նորվ. lok «ջրափոս»): Նույն *leg- արմատին Աճառյանը [ՀԱԲ, 2², 289] հատկացնում է լկիմ «սկսել, հալչել (սառույցի մասին)» բայը՝ առանց նշելու լիկ-ի հետ դրա ունեցած կապը:

Լիբբ-ը Պիզանին [Pizani, 1959a, 140] բխեցնում է հ.-ե. *leubh- «ցանկանալ» արմատից (*libhri-ի i-ի համար հմմտ. լատ. libet «ցանկալի է»՝ lubet-ի կողքին)։

Աղքատ-ի զուգահեռներից +-ով նշանակված է հունարենը, որ ունի *o- նախահավելվածով ձև՝ ὀλίγος «փոքր». մնացածներն ունեն առանց *o-ի ձևեր, ընդ որում հ. իռլ. líach «խեղճ, թշվառ» և պրուս. likuts «փոքր» ձևերը հայերենին մոտ են մի ուրիշ հատկանիշով՝ վերջին բաղաձայնի *-k- տարբերակով՝ մյուսների *-g-ի դիմաց։ Համեմատությունը պատկանում է Լիդենին [Lidén, 1906, 97]։

Լիզեմ-ը միավորվում է հուն. λείχω և թերևս հ. իռլ. ligim նույնիմաստ բայերի հետ ներկայի ձևավորմամբ և թեմատիկ կազմությամբ (եթե հ. իռլ. lig-ի -i-ն արտացոլում է սկզբնական *-ei-ը և ոչ *i-ն)։ **Լիզանեմ**-ը միավորվում է հուն. λιχνεύω և լատ. lingo ձևերի հետ նախնական ռնգային միջածանցով։

Լոյս-ը Աճառյանը [ՀԱԲ, 2², 296] հանգեցնում է *leud- արմատին, բայց բերում է մի այլ՝ *leid- արմատին պատկանող զուգահեռներ։ Ճշտումը կատարված է մեր կողմից. հմմտ. հ. իսլ. lyta «այլանդակել, անպատվել», պրուս. laustinti «հնազանդեցնել, նվաստացնել», ռուս. лудить «խաբել»։

Բրբռ. **լոպկել**, **լպոկել** և մ. հայ. **պոլոկել**, բրբռ. **պլոկել** բայերի համեմատությունը *lep- և *leub(h)- արմատներից ծագող բառերի հետ պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 4², 94—95]։ Հայերենի նախաձևերի ճշգրտումը մերն է, ընդ որում *lou̯ob-ը, որից բխեցվում է լոպ-ը, կարող է ծագել *lou̯əb-ից՝ ձայնավորների ներդաշնակությամբ (հմմտ. նոր, սոր և այլն)։ Հայ. ձևը մոտ է գերմանականին *-b-ով. բալթ.-սլավ. ձևերը կարող են պատկանել ինչպես *-b-ով, այնպես էլ *-bh-ով նախաձևերին։

Լուծանեմ-ի ստուգաբանությունը Պեդերսենինն է [KZ, 39, 352. հմմտ. նաև Pok., 1, 686]։ Մեյեն [BSL, 79, 4] և, նրա հետևողությամբ, Աճառյանն [ՀԱԲ, 2², 293—294] ու Զոլտան [Solta, 1960, 252—253] բխեցնում են *leu- արմատից՝ նկատի ունենալով հատկապես հուն. λύω նույնիմաստ արմատը։ Կարելի է հայերենում ենթադրել երկու արմատների խառնում (կոնտամինացիա)։

Եղուկ «ավաղ, ափսոս, խեղճ, ողորմելի, թշվառ» բառի ստուգաբանությունը պատկանում է Շեֆտելովիցին [BB, 28, 308] և ընդունվում է Աճառյանի կողմից։ Կասկածելի է *-ug->-ուկ անցման պատճառով. թեև *leug'- արմատը ունի նաև *leug- տարբերակը, բայց *-u-ից հետո հայերենում *g-ն նույնպես քմայնանում է և փոխվում -ծ-ի։ Իմաստի համար հմմտ. հ. հնդկ. -ruj «ցավ, հիվանդություն», հուն. λευαλογές, λυγρός «ահավոր, տանջալի, վշտալի. խեղճ», լատ. lūgeō, -ēre «սգալ», lūgubris «վշտալի, սգալի»։

Լուցանեմ (լոյց-) բայի զուգահեռը տրված է ըստ Շեֆտելովիցի [ZII, 6, 121]՝ իռլ. loscaid «այրում է», սակայն սա չի ընդունվում Walde-Pokorny-ի բառարանում [հմմտ. Solta, 1960, 41]։ Հ.-ե. *leuk- արմատի մնացած ածանցյալներից լոյս-ի զուգահեռները տրված են ըստ կազմության (հ. հնդկ. roká- «լույս», կիմր. llug «փայլ»), լուսին-ի և լուսան-ի զուգահեռները՝ մասնավորապես ըստ իմաստի։

Մամ «տատ» բառը Լագարդը [Lagarde, 1877, 1414] փոխառություն է համարում պրսկ. mām-ից («մայր»)։ Հյուբշմանը [AG, 191, 341, 513] ընդունում է այս կարծիքը, բայց նշում է նաև հունարենից փոխառված լինելու հնարավորությունը։ Աճառյանը [ՀԱԲ, 3², 242], նշելով պրսկ. բառի իմաստի տարբերությունը, փոխառություն է համարում հունարեն μάμμα, μάμμη «տատ» բառից։ Եթե նկատի առնենք բառի տարածվածությունը բարբառներում՝ տարբեր ձևերով և իմաստներով (մամ, մամա, մամիկ «տատ», մամ «մայր», մամո «մայրիկ») և, մանավանդ, մամա «ուտել» մանկական բառի գոյությունը, ապա կարելի է ավելի հավանական համարել հայ. բառերի բնիկ լինելը, թեև, իհարկե, հնարավոր է որոշ տարածքներում խառնում (կոնտամինացիա) հուն. և պրսկ. ձևերի հետ. ակնհայտ հունական ծագում ունի մամի «դայակ, մանկաբարձուհի» բառը (Պոլսի բարբառ)։

Մատաղ բառի ստուգաբանությունը պատկանում է Շեֆտելովիցին [BB, 28, 29]։ Մյուլլերը [Müller, Armeniaca, 6] և Աճառյանը [ՀԱԲ, 3², 267—268] բխեցնում են *mel- «փշրել, մանրել» արմատի *-d- աճականով *mḷd- ձևից՝ *մաղտ>մաղ-աշ և *mlad->մաղատ>մատաղ անցումներով, որ քիչ հավանական է, թեև իմաստով հայերենին մոտ են հ. սլավ. mlade, ռուս. младший «կրտսեր», молодой «երիտասարդ, մատաղ» և այլն ձևերը։

Մաստ «ածիկ» և մազդ (բրբռ. մաստ) «պինդ, հաստ, թանձր» բառերից առաջինի մասին Աճառյանը [ՀԱԲ, 3², 265] գրում է. «Կազմությունը և ծագումն ինձ անհայտ է»։ Երկրորդը [ՀԱԲ, 3², 222] նա բխեցնում է արևելաիրան. mästa «մեծ» (ավեստ. masit(a)- «ընդարձակ, մեծ») բառից. սակայն առաջին բառի համար իրանականում չկա համապատասխան իմաստ (հմմտ. ն.պրսկ. mast «մածուն»), ուստի այն կարելի է թերևս համարել ինքնուրույն հայկական կազմություն։ Երկրորդ դեպքում դժվար է հայերենի համար ենթադրել անմիջական արևելաիրանական աղբյուր, մանավանդ եթե նկատի առնենք հայ. և իրան. ձևերի տարբերությունը (-զդ՝ -st-, -sit- ձևերի դիմաց). ավեստ. masit(a)-ն ծագում է *mas-ից, որ գալիս է հ.-ե. *māk' «երկար և բարակ» արմատից։ Բոլոր դեպքերում էլ հնարավոր է ենթադրել կորած իրանական աղբյուրներ՝ *mad- արմատից։ Եթե այս բառերը (մանավանդ մաստ-ը) հայկական ծագում ունեն, ապա հայերենը պատկանում է հ.-ե. այն բարբառներին, որոնցում *-dt-ն և *-tt-ն տալիս են -st։

Մախ «նախանձ» բառի ստուգաբանությունը հնարավոր է, եթե ճիշտ է Ֆրենկելի կողմից [Fraenkel, LFW, 1, 463] հուն. μῆχος «միջոց» և լիտվ. mokēti «կարողանալ, հասկանալ» ձևերի համեմատությունը՝ *makh- նախաձևով. այդ դեպքում հայ. մախ-ը և հուն. μηχανή-ն «գործիք, միջոց. հնարք, խորամանկություն» պետք է ենթարկված լինեն իմաստային ընդհանուր փոփոխության։

Մածուն-ի (մածնում, մածանիմ) տրվող ստուգաբանությունը պատկանում է Լիդենին [BB, 21, 99] և ընդունվում է Աճառյանի կողմից [ՀԱԲ, 3², 228—230]. հմմտ. հուն. μαγῆναι «ճմռել», μαγίς «ճմռած զանգված», մ. իռլ. maistrid «խնոցի է հարում», ռուս. мазь «քսուք», масло «յուղ, կարագ», мазать «քսել» և այլն։ Հյուբշմանը [ZDMG, 44, 56] և նրա հետևողությամբ Պոկոռնին [Pok., 1, 694] բխեցնում են *mad- «խոնավ, հյութեղ, յուղոտ, թաց» արմատից՝ *madi̯-> մած-։

Մաքի-ի համեմատությունը գերմանական բառերի հետ (գոթ. mada, հ. վ. գերմ. mado «որդ, ճիճու») պատկանում է Պետերսոնին [Petersson, 1921, 32 և հջ.] և ընդունվում է Պոկոռնու կողմից: Համապատասխան ձևերի գոյությունը քարթվելականում՝ հնչյունական օրինաչափ անցումներով (վրաց. matl-, մեգր. muntur-, ճան. muntur-, muntr, սվան. mat-) ենթադրում է կամ հ.-ե.— քարթվ. հնագույն հարաբերություն, կամ հայ. ձևի փոխառվածություն:

Մատն-ի մեջ *-t-ի արտացոլումը որպես -տ բացատրվում է -ն-ի հարևանությամբ. հմմտ. տկն [ՀԱԲ, 3², 270]:

Մեջ-ի համար հմմտ. հ. հնդկ. mádhyas, հուն. μέσος, լատ. medius, գոթ. midjis «միջին»: Բալթիկ-սլավոնականում բառերն ստացել են հիմնականում կոնկրետ առումներ (լիտվ. mēdžias «ծառ», լատվ. mežs «անտառ, փայտեղեն», հ. սլավ. mežda «փողոց», ռուս. межа «սահման»), ուստի նշանակված են ±-ով:

Մոզ-ի զուգահեռները որոշված են *-g'h-ով՝ ի հակադրություն *-g'-ի. հմմտ. հ. հնդկ. mah-, ավեստ. maz- «մեծ»:

Մոյթ-ի զուգահեռներից +-ով նշանակված են *-th-ով (հ. հնդկ. methí-, méthi- «մույթ, սյուն»), ±-ով՝ *-t-ով ձևերը:

Մեզ-ի զուգահեռներից +-ով նշանակված են իմաստով հայերենին մոտ և *-gh-ով ու *-i-ի բացակայությամբ բնութագրվող հնդիրանական ձևերը (հ. հնդկ. meghá- «ամպ», míh- «մեզ», ավ. maēϑa- «ամպ»): Բենվենիստը հակված է մեզ-ը համարելու իրան. փոխառություն:

Աճառյանը [ՀԱԲ, 3², 342] մողես-ը համարում է փոխառություն իրանական աղբյուրից նկատի առնելով պրսկ. mālūs (mālōs) «կանաչ մողես» բառը: Կասկածելի է համարում Մեյեն (նույն տեղում):

Մեղկ-ի զուգահեռներից +-ով նշանակված են *-du/du̯-ով (հմմտ. հ. հնդկ. mr̥du-, իգ. mr̥dvī, հուն. βλαδύς, լատ. mollis<*ml̥du̯is), ±-ով՝ *-d-ով զուգահեռները. վերջիններից ձայնավորմամբ հայերենին մոտ են կելտ. (հ. իռլ. meldach «քնքուշ») և հուն. μέλδω «հալեցնում եմ» ձևերը:

Մարմին, -ոյ բառը ակնհայտ զուգահեռ ունի հ. հնդկ. marman- «անդամ, անպաշտպան մարմնամաս» բառի մեջ, որն իր հերթին համեմատվում է հուն. μέλος «անդամ», բրետ. mell, կոռն. mel «կոճ», թոխ. Ա, Բ mälk «կցել», այլև, որոշ կասկածով, լիտվ. mélmenys «երիկամի վրայի միս», լատվ. mélmeni «աճուկ, սրունք. զիստ» բառերի հետ և բխեցվում *mel- «անդամ. կցել» արմատից: Սակայն հայերենի համար անսովոր է *l>r անցումը, ուստի ավելի հավանական է ենթադրել փոխառություն կամ կորած իրանական աղբյուրից [հմմտ. Pok.. 1, 720], կամ, թերևս, Առաջավոր Ասիայի հնդիկներից (անմիջաբար կամ միջնորդված. հմմտ. նաև ջամբ «ուտելիք», ջամբել «մանրելով ուտեցնել, սնել, խնամել» և հ. հնդկ jambhatē «ատամներով բռնում է»՝ բուն հայ. ծամել-ի դիմաց՝ *g'embh- արմատից): Զոլտան [Solta, 1960, 426] հայ. և հնդկ. բառերը միացնում է կրկնավորությամբ, բայց ավելի հավանական է ենթադրել *-meno- ածանցով ձև:

Մեղծ «մուր» բառի համար հմմտ. հ. հնդկ. mála- «կեղտ», maliná- «կեղտոտ, սև», հուն. μέλας «սև», մ. վ. գերմ. māl «բիծ», բալթ. *mēlna «սև» [WP, 2, 275]: Պետերսոնը [Petersson, 1920, 135] բխեցնում է *smel- «դանդաղ այրել, մխալ» արմատից, որից հայ. մուլ, մլմլալ. անհավանական չէ: Ճիշտ չէ Աճառյանի ստուգաբանությունը [ՀԼՊ, 1, 62]՝ հ.-ե. *smerd- «հոտ արձակել» արմատից:

Մոլ «ծառերի մոտ բուսած երկրորդական ճյուղ, ծիլ» բառի ստուգաբանությունը պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 3², 338], որ հայերենին առանձնապես մոտ է համարում հուն. μολεύω «էտում եմ, մոլերը կտրում եմ», այլև βλαστάνω «ծլում եմ, աճում եմ», βλαστός, βλάστη «ծիլ, բողբոջ» և այլն բառերը (որոնցից երկրորդների *mel- «դուրս գալ, ծագել, երևալ» արմատին պատկանելը կասկածելի է): Սակայն հմմտ. *mel- «մանրել», որից հայ. մեղմ:

Մաղթեմ-ի բխեցումը *meldh-ից հնարավոր չէ, եթե չենթադրենք *-dh-ի անձայն լինելը և հայերենը չբխեցնենք *-th- անձայնով ձևից [հմմտ. ՀԱԲ, 3², 238—239]: Բենվենիստը հակված է այն փոխառություն համարելու խեթերենից:

«Մեղր» իմաստն արտահայտելու համար հ.-ե. լեզուն ունեցել է *melit- և *medhu- բառերը, որոնք տարբեր տարածքներ են ընդգրկել: Հայերեն մեղր (սեռ. մեղու) բառը յուրատեսակ միջին դիրք է գրավում՝ հարելով *melit-ին (հմմտ. սկյութ. μελίτιον, հուն. μέλι, -τος, ալբ. mjal, լատ. mel, հ. իռլ. mil, գոթ. milib, խեթ. milit), բայց *medhu-ի նման ունենալով *-u-ով հիմք:

Բրբռ. մանել «հասկանալ» բայի ստուգաբանությունը մերն է. այն ճիշտ է, եթե մանել-ը «թել մանել» իմաստի փոխաբերական գործածությունը չէ:

Մանր-ի զուգահեռները որոշված են ըստ *-u-ով հիմքի, մանչ-ինը՝ ըստ *-k-ի, թեև այստեղ հայերենն առանձնանում է (չ-ն ենթադրում է *k-ի քմայնացում (այլապես *-nk>-նգ, *-nk̂>-նչ): Զոլտան [Solta, 1960, 354] *-k-ով խմբի հետ է կապում նաև մանուկ-ը, բայց այստեղ ունենք կամ *-u-ով, *-k-ով և *-n-ով հիմքերի զուգորդում *mьnukon>*մանուկն՝ ն-ի հետագա անկմամբ եզ. ուղղական-հայցականում և պահպանմամբ այլ հոլովներում՝ մանկան, մանկունք և այլն), կամ, ինչպես կարծում է Աճառյանը [ՀԱԲ, 3², 255 և 257], -ուկ- փոքրացուցիչ ածանցի հետագա հավելում (վերջին դեպքում էլ, այնուամենայնիվ, -ուկ-ի ու-ն այստեղ արտացոլում է հին *-u-ն): Աճառյանը [ՀԱԲ, 256] մանչ-ի մա-ն համեմատում է լատ. masculus-ի mas-/mās- «տղամարդ, արու» հիմքի հետ և վերականգնում ընդհանուր *mās- արմատ, որ ավելի քիչ հավանական է, քան տրված ստուգաբանությունը [հմմտ. նաև Պալասանյան, 1870, 13]:

Պոկոռնին [Pok., 1, 734] մառախուղ-ը մռայլ-ի հետ միասին դնում է *mer- «սևացնել, մթին գույն, բիծ» արմատի տակ, որ ավելի քիչ հավանական է, եթե չենթադրենք կամ երկու արմատների (*mer- «առկայծել» և *mer- «սևացնել. մթին գույն») սկզբնական կապ, կամ նրանց խառնում (կոնտամինացիա) հայերենում:

Մոռանիմ-ի զուգահեռներից +-ով նշանակված են *-e- ձայնավորմամբ բայերը:

Մաճ-ը ամենայն հավանականությամբ իրանական փոխառություն է, թեև համապատասխան բուն իրանական ձևը բացակայում է:

Մրջիմ «թմրել, ընդարմանալ, գլխապտույտ ունենալ» բայը Շեֆտելովիցը [KZ, 53, 260] և, նրա հետևողությամբ, Աճառյանը [ՀԱԲ, 2², 101] համեմատում են հ. հնդկ. mūrcati «պնդանում է, թանձրանում է, ընդարմանում է, շշմում է, թմրում է, ուշաթափ է լինում», պհլ. vē-mār «հիմարդ», հուն. βρότος «(վերջից) հոսող արյուն» բառերի հետ, որոնք համարվում են *mer- «մեռնել» արմատի ճյուղավորումը։

Թերևս մամուռ-ի հետ կապված է մուշիլ (*մուրշիլ) «ընկճվել» բայը՝ հնչյունական նույն համապատասխանությամբ ինչ մոռ և մոշ (*mors-)։

Մաւր-ի ստուգաբանությունը Պետերսոնինն է [KZ, 47, 1916, 281], որ գրեթե միաժամանակ [LUÅ, 1916, 17—18] բխեցրել է նաև *mak- «թաց, խոնավ» արմատից։ Պոկոռնին [Pok., 1, 698 և 742] տալիս է երկու ձևն էլ՝ *mak-ri- (հմմտ. մաւրուք) և *məu-ri- նախաձևերով։ Աճառյանը [ՀԱԲ, 3^2, 379] ընդունում է միայն առաջինը։

Մամուռ-ի զուգահեռներից +-ով նշանակված են կազմությամբ (*-s-ով) և իմաստով (հ. վ. գ. mas, հ. սլավ. мъхъ), ±-ով՝ միայն կազմությամբ մոտ բառերը։

Մուտ, մտանեմ բառերի համեմատությունը գերմանական բառերի հետ (հմմտ. գոթ. ga-mōtjan «հանդիպել») պատկանում է Բուգգեին [Bugge, 1890, 48], որի հետ Մեյեն [MSL, 10, 278] նախ համաձայնել է, բայց հետո հրաժարվել [MSL, 26, 4]։ Մուտ-ը մեր որոշ աշխատություններում կապվել է մոյծ, մուծանեմ բառերի հետ տ/ծ հերթագայությամբ. հմմտ. բուտ և բոյծ, բուծանեմ։

Լատ. mōrum «թութ. մոշ» բառը համարվում է փոխառություն հունարենից (կամ միջերկրական աղբյուրներից), ուստի և չի մտցված հ.-ե. *mo-ro- «մոր, մոշ» հիմքի զուգահեռների մեջ։

Մունջ-ի համար Աճառյանը [ՀԱԲ, 3^2, 359] տալիս է *mundi̯o- նախաձևը, որ, սակայն, կտար *մունճ։ Մունչ «խոսք» բառը Աճառյանը [ՀԱԲ, 3^2, 358—359] համարում է բնաձայնական բառ և չի կապում հ.-ե. *mu- արմատի հետ։ Մունջ-ի զուգահեռներից +-ով նշանակված են արմատային ածականներով և իմաստով հայերենին մոտ բառերը (հուն. μυνδός, լատ. mutus «համր, մունջ»), ±-ով՝ կամ միայն իմաստով մոտ (հ. հնդկ. mūka- «համր»), կամ միայն ատամնային ածական ունեցող, բայց իմաստով համեմատաբար հեռու (հ. վ. գերմ. mutirōn «մռմռալ», լիտվ. mūtė «բերան») բառերը։

Նան, նանի, նանե, նանա բառերի համար հնարավոր է ենթադրել նաև իրանական ծագում (հմմտ. ն. պրսկ. nana «մայր»), եթե չենթադրենք բնիկ և իրանական փոխառյալ ձևերի խառնուրդ (բաղարկություն)։

Նաւ-ը կարող է լինել նաև իրանական ծագում ունեցող բառ. հմմտ. նաւազ, որ ակնհայտ իրանական ծագում ունի (հմմտ. ավեստ. navāza- «նավորդ»)։

Նքոյր (նգոյր) «մաղ» բառի ստուգաբանությունը (*neik- «հացահատիկը մաղել՝ քամհարել») պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 3^2, 477]։

Այր (սեռ. առն) բառի հնդեվրոպական ծագումը կասկած չի հարուցում, բայց վիճելի է նրա բուն նախաձևի հարցը. հետազոտողները հանգեցնում են ոչ միայն *əner-ին, այլև *i̯sen-, *ari̯o- նախաձևերին։ Հնարավոր է համարվում նաև տարբեր հիմքերի զուգակցում։ Արի «քաջ» բառը հատկացվում է սովորաբար այր-ի առ- հիմքաձևին, բայց Մարկվարտը սա չի ընդունում, հատկացնելով *ar-ին, որից առնեմ։

Նիզ «լարում, ջղաձգություն, ուժ տալը (երկունքի, փորացավի ժամանակ)» բառի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ «մաքուր» հիմքի՝ *-r(o)- ածանցի և *-g- աճականի բացակայության. իմաստով հայերեն բառի մոտ են հ. հնդկ. nudáti «հրում է, շարժում է», հուն. νύσσω «ծակում եմ, խփում եմ, հրում եմ», մ. ստ. գերմ. nuck(e) «հանկարծակի հարված. նենգություն», լիտվ. niùrkyti «սեղմել, ճզմել» բառերը։

Մերկ-ի հետ մերձավորությունը որոշված է ըստ m- նախաբաղաձայնի՝ ավեստ. maγna-՝ մյուսների n-ի դիմաց։ Զոլտան [Solta, 1960, 228—229] ածանցով մոտ է համարում լատիներեն nudus-ին՝ *nog^{u}edos-ից, նկատի ունենալով, որ *g^{u}d-ն հայերենում կարող է տալ րկ. բայց այս ենթադրությունն անհավանական է։

Աճեմ-ը սովորաբար համեմատում են հ.-ե. *au̯eg-ից ծագող ձևերի հետ, սակայն հնչյունապես *au̯eg-, *u̯ōg-, *aug- ձևերից աճեմ-ը չի կարող բխել (եթե չենթադրենք կողմնակի *ag- ձև կամ *u̯-ի անկում *-ō/ə-ից առաջ մեզ անհայտ պայմաններում)։ Պոկոռնին [Pok., 1, 773] առանձնացնելով *ōg- «աճել. հատապտուղ» արմատ՝ բալթիական (լիտվ. úoga «հատապտուղ»), սլավոնական (ռուս. ягода «հատապտուղ»), կելտական (կիմր. aeron «ծառապտուղ»), գերմանական (գոթ. akran «պտուղ») ձևերին կասկածով միացնում է նաև հայ. աճեմ-ը. Զոլտան [Solta, 1960, 76—77] սա համարում է քիչ հավանական՝ մատնանշելով Պեդերսենի կողմից բերված հ. իռլ. ásim «աճում եմ» բայը, որ կարող է լինել հայ-կելտական զուգաբանության նմուշ՝ *-u-ի համապատասխան կորուստով *aug-ի մեջ։

Ութ-ի *optō նախաձևը (*ok'tō-ից) համարվում է *septm̥> եւթն թվականի ազդեցության արդյունք։ Գեորգիևը առաջարկում է *ottō ձևը՝ հենվելով փռյուգ. οτυFοι (*ok'tou̯oi) ձևի վրա։

Բրբ. ակլակ «զարմանակալ» բառի մերձավոր զուգահեռները նշանակված են +-ով ըստ *-l-ի առկայության (իմաստային տարբերության պայմաններում)՝ լատ. oculus «աչք», լիտվ. akýlas «ուշադիր». հուն. ὀφθαλμός «աչք» բառը բացառված է, որովհետև այն ունի լրացուցիչ -θ- տարրը։

Ակն-ի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ. *-n-ով հիմքի առկայության և *-(e)s- և *-p- կազմիչների բացակայության՝ սլավոնական (հմմտ. ռուս. окно «լուսամուտ») և գերմանական (*aun- < *oku̯en-) խմբերում. որոնց միացված է հունարենը այլ հիմունքով՝ ըստ կրկնավոր kk-ի առկայության (հմմտ. հյց. ὄκκον «աչք»՝ ըստ Հեսիքիոսի), եթե հայ. -կ-ն (փոխանակ ք-ի) գալիս է կրկնավոր k(^{u})-ից և ոչ թե արդյունք է ն-ի ազդեցության։

Բրբ. *անծող (անձող) «ածուխ» բառի *angi̯ol- նախաձևի մեջ *g-ի քմայնացումը երկրորդական է՝ թերևս *angoli-ի -i-ի դրափոխության արդյունք։ *Անծող ձևից կարող էր ծագել ածուխ ձևը՝ ծուխ բառի հետ խառնվելով (կոնտամինացիա). ավելի քիչ հավանական է ենթադրել կամ տարածքային հին ł > γ անցում՝ վերջինիս վաղ խլացմամբ (հմմտ. ածուղ գրչությունը՝ ածուխ-ի կողքին), կամ պարզապես հին ածուղ-ի ուշ ածուխ գրչություն։

Արբանեակ «ծառա» բառի զուգահեռներից +-ով նշանակված են և՛ իմաստով, և՛ *-n- ածանցով (հ. սլավ. rabъ, ռուս. раб «ստրուկ», ребенок «երեխա»), ±-ով՝ միայն իմաստով (գոթ. arbaiþs, հ. վ. գերմ. Arbeit «աշխատանք») կամ միայն ձևով (հուն. ὀρφανός «որբացած, զրկված, որբ») մոտ բառերը։

Որովայն-ի համեմատությունը հուն. ὀρύα «աղիք» և լատ. arvīna «ճարպ» բառերի հետ պատկանում է Պետերսոնին [IF, 35, 211]: Աճառյանը [ՀԱԲ, 3², 586—587] գերադասում է Լիդենի ստուգաբանությունը [Lidén, 1906, 22]՝ *krep- «մարմին, կերպարանք» արմատի *krop- ձևից: Պոկոռնին դնում է *prep- «աչքի ընկնել, երևույթ, կերպարանք» արմատի տակ (այստեղից են երևիմ. երևս բառերը): Թեև արգ-անդ, արգ(-ա-ճամբմ) «փոր, աղիք» բառերը մենք Լիդենի [Lidén, 1906, 21] և Աճառյանի [ՀԱԲ, 1², 302—303] հետևողությամբ դրել ենք *arkᵘ- արմատի տակ, բայց թերևս, դրանք կարելի է հատկացնել *orų-ին (կասկածելի է որկոր-ը, եթե չենթադրենք orų- > *որգ-որ > որկոր անցում):

Որթ «խաղողի տունկ, խաղող» բառի համեմատությունը ալբ. hardi «որթ» բառի հետ պատկանում է Պեդերսենին [KZ, 36, 99, BB, 20, 231]: Պոկոռնին [Pok., 1, 782, 823] բերում է միաժամանակ և՛ սա, և՛ Պետերսոնի ստուգաբանությունը (հուն. πτόρθος «ծիլ, բողբոջ, ընձյուղ»՝ *perth- արմատից): Աճառյանը [ՀԱԲ, 3², 579—580] գերադասում է ՆՀԲ-ից եկող մեկնությունը՝ որթ-ը կապելով որթ «հորթ» բառի հետ (հմմտ. երինջ «մեծ հորթ» և բրբռ. «խաղողի որթի մատ»): Եթե վերջինս ճիշտ է, ապա թերևս հայ. և հուն. բառերը պետք է դնել *per- «ծնել» արմատի տակ, որից հայ. որթ «հորթ»:

Ազգր-ի համեմատությունը հուն. ὀσφύς համիմաստ բառի հետ պատկանում է մեզ. վերջինս համեմատվում է նաև հ. իռլ. odb, կիմր. oddf «պալար, խիլ» բառերի հետ՝ *osbho- > *ozbho- անցմամբ: Աճառյանը [ՀԱԲ, 1², 86], հենվելով Մեյեի վրա [MSL, 23, 259—260], կապում է հ. հնդկ. sákthi-, ավեստ. haxti- և հուն. ἰσχί, ἰσχίον համիմաստ բառերի հետ, բայց դրանցից առաջինները ավելի հակված են բխեցնելու *skeng- արմատից [Pok., 1, 930]. հուն. ձևերը հեռու են թե՛ հնդիրանական ձևերից (ըստ Զոմերի), թե՛ հայկական ազգր-ից, և նրանց ծագումն էլ պարզ չէ [Frisk, GEW, 1, 741, Chantraine, DELG 1, 472].

Ձու-ի զուգահեռները որոշված են ըստ *-ų-ի բացակայության. հմմտ. նախասլավ. *ōįa- (ռուս. яйцо), գերմ. *oiįam:

Աճառյանը [ՀԱԲ, 1², 84], հենվելով Պատրուբանիի վրա [IF, 13, 124—125], ազգ-ը բխեցնում է պհլ. azg «ճյուղ» բառից, որ, սակայն, իմաստով հեռու է մնում, եթե չենթադրենք հենց իրականում «ճյուղ → ազգ» անցում: Ոզոր-ի («ճյուղ, ճիպոտ») համեմատությունը հուն. ὄσχος և պհլ. azg «ճյուղ» բառերի հետ պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 3², 550], որ, սակայն, անբացատրելի է թողնում հայերենի *ozg'h- ձևը՝ *ozg-ի դիմաց. թերևս ենթադրելի է *azghįo- նախաձև:

Աճառյանը [ՀԱԲ, 3², 117—118, 138—139] և Զոլտան [Solta, 1960, 173—174] միացնում են *pā- «սնել, արածեցնել» և *pō(i)- «արածեցնել, պահպանել» արմատներին պատկանող բառերը [Pok., 1, 787 և 839], որոնց համար թերևս հնարավոր է ենթադրել սկզբնական ընդհանրություն [հմմտ. WP, 2, 72 և հջ. Mayrhofer, KEWA, 1, 215]: Երկրորդ արմատին պատկանող զուգահեռները մենք նշանակում ենք ±-ով:

Բրբռ. մանկ. փափա «կերակուր, ուտելիք» բառի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ իմաստի՝ լատ. pāpa, pappa «կերակուր, ուտելիք», pappō, -āre, հ. վ. գերմ. pappen «ուտել»:

Հաւ «ծայր, սկիզբ» և յաւ «ծայր, վերջ» բառերի համեմատությունը հուն. παύω «դադարեցնում եմ», παῦλα «դադար, վերջ», լատ. pausa «դադար, վերջ» բառերի հետ պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 3², 67 և 390]՝ *paus- «ծայր» արմատից: Պոկոռնին առանձնացնում է *paus- «բաց թողնել» արմատ՝ հունական բառերը բերելով բալթիկ-սլավոնականների հետ միասին (պրուս. pausto «վայրի», ռուս. пустить «(բաց) թողնել», пустой «դատարկ», пустыня «անապատ»): Լատ. pausa-ն համարվում է փոխառություն հուն. παῦσις-ից, թեև Մեյեն [Ernout—Meillet, 1959⁴, 490] կասկածի տակ է առնում սա՝ նկատի ունենալով հուն. բառի ուշ վկայությունը և հուն. ու լատ. բառերի հիմքային տարբեր ձևավորումը:

Կասկածելի է հետ-ը դիտել որպես սկզբնապես չեզոք (*pedom) և մերձավոր համարել հուն. πέδον, ումբր. peřum, պրուս. pedan «գետին» բառերին՝ ի հակադրություն հ. սլավ. pedъ «տակ, հատակ» ձևի [Solta, 1960, 54]: Մենք դրել ենք *pedo- նախաձև՝ առանց pedom-ը և *pedos-ը տարբերելու: Ոտն-ի զուգահեռները որոշված են գերադանցապես ըստ իմաստի:

Յատակ-ն ստուգաբանել է և *pəd- նախաձևը տվել Աճառյանը [ՀԱԲ, 3², 386]. կարելի էր ենթադրել *pod- նախաձև, բայց դրան խանգարում է *o > a անցման պայմանների ոչ լիակատար պարզությունը: Վերջին դեպքում հայերենին մոտ կլինեին բալթիկ-սլավոնական լեզուները: Սակայն հնարավոր է բառի իրանական ծագումը:

Հիւանդ-ի նախաձևերից *pēpn̥to-ն վերականգնելու համար հիմք են ծառայել հ. հնդկ. կրկնավոր pāpa- «չար», pāpmán «աղետ, վնաս, ցավ» ձևերը (ըստ Լեկի. հմմտ. Pok., 1, 793), *pēįn̥to-ի համար՝ Բրուգմանի *pēųnto- և Հյուբշմանի ճշտած *peįn̥t- վերականգնումները [ՀԱԲ, 3², 98. հմմտ. հուն. ἀ-πήμαντος «ոչ հիվանդ»]: Թերևս կարելի է ենթադրել *pēi-mn̥-to- նախաձև, բայց լիովին պարզ չեն *m > ւ անցման պայմանները: Աճառյանը [ՀԱԲ, 4², 634—635] համեմատում է հուն. πόνος «աշխատանք, ջանք, գործ. ցավ, տանջանք» բառերի հետ՝ առանձնացնելով այն *(s)pen- «ձգել, լարել. հյուսել» արմատից, որ, սակայն, անհամոզիչ է:

Ասր-ի զուգահեռներից +-ով նշանակված են *-o- ձայնավորմամբ (հմմտ. հուն. πόκος «բուրդ, բրդի փաթիլ, մալանչ»), ±-ով՝ *-u- հիմքով զուգահեռները, որոնք, սակայն, ունեն հայերենից տարբեր («անասուն») իմաստ:

Լնում-ին զուգահեռ է հ. հնդկ. *pr̥-nā-mi-ն, որ, սակայն, տարբերվում է -n-ին հաջորդող տարրով՝ (*-nā- ածանց՝ *-nu-ի դիմաց):

Լի-ի համար վերականգնվող երկու նախաձևերից *plē-t-ը հիմնված է հ. հնդկ. prāta-, ալբ. plot- (*plē-to-s), լատ. complētus նույնիմաստ զուգահեռների վրա (հայերենում t-ին հաջորդող ձայնավորի հարցը պարզ չէ, եթե չենթադրենք *t-ի քմայնացում նաև *-o-ից առաջ դանված դիրքում) *pleįos-ը՝ հուն. πλέως զուգահեռի վրա: Աճառյանը [ՀԱԲ, 2², 400—401], հենվելով Հյուբշմանի և այլ նախորդների վրա, այստեղ է դնում նաև յղի-ն. վերջինս կասկածելի համարելով ղ-ի պատճառով՝ Մեյեն դնում է *polō- «ձագ» ձևից [հմմտ. Pok., 1, 843՝ *į-polniįa]:

Հեղ (ճաղ) «անգամ» բառի +-ով նշված մերձավոր զուգահեռները որոշված են ըստ հայերենին իմաստով մոտ ածանցավոր ձևերի (*-plo- «-ից, անգամ»). ±-ով նշանակված է իրանականը՝ ըստ ավեստ. bi-fra- «համեմատություն, նմանություն» զուգահեռի, որ իմաստով հեռու է:

Ճոլեմ, ճոլոճեմ «ի մի հավաքել» բառերի ստուգաբանությունը [հմմտ. Pok., 1, 799] կասկածելի է, եթե դրանք իրոք ներկայացնում են ճոյլ «խումբ» բառի հնչյունափոխված ճոլ ձևի ածանցյալները:

Ճինգեր-ի (ճինգեր-որդ) համեմատությունը գոթ. figgrs, հ. վ. գերմ. Finger «մատ» [*penkᵘ̯ros] բառերի հետ բերում է Զոլտան [Solta., 1960, 453] («մատ» և «հինգ» իմաստների հարաբերակցության համար հմմտ. Oehl, 1933, 205): Սրանց մենք միացրել ենք կելտականը՝ նկատի ունենալով հ. իռլ. cōicer «հնգյակ» բառը, որ բերում է Պոկոռնին գերմ. բառերի հետ միասին:

Երա-խայր-ի եր(ա)-ի համեմատությունը *per-ից ծագող զանազան բառերի հետ պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 2^2, 34]: Նախաձևի ճշտումը կատարել ենք մենք՝ նկատի ունենալով *prō- «վաղ» նախաձևը. հմմտ. հ. հնդկ. prā-tár-, հուն. πρωΐ և այլն:

Հարու-ի զուգահեռներից +-ով նշանակված են բացի «նախկին, առաջին» իմաստից նաև «հարավային» իմաստն ունեցող իրանական ձևերը, ±-ով՝ մնացածները: Հարու-ի ստուգաբանությունը մերն է [ԼՀԳ, 1973, 6 20]:

Երեց, -ու բառի զուգահեռներից (հուն. πρέσβυς «ծեր. երեց, ավագ», լատ. priscus «վաղեմի») հունականը կասկածելի է, որովհետև -βυς-ի մեջ ենթադրվում է *gᵘ̯ous «անասուն» իմաստը [հմմտ. Solta, 417—418]:

Որթ «հորթ» բառի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ *-th-ի (հ. հնդկ. pṛthuka- «անասուն. հորթ, ձագ»), որդի-ի զուգահեռները՝ ըստ *-t-ի, որ այդ դիրքում տալիս է դ: Ուրջու «խորթ զավակ» բառի ստուգաբանությունը պատկանում է Բուգգեին [KZ, 32, 23 և IF, 1, 451]: Ավելի քիչ հավանական է բխեցնել *putrįo- նախաձևից (*pōu- «փոքր. ձագ»)՝ ենթադրելով *putrįo-> ուրջ անցում (*į->ջ) կամ, ինչպես կարծում է Աճառյանը [ՀԱԲ, 4^2, 641—642], -ջ-ն դիտել որպես սեռական մասնիկ (հմմտ. գեղջ)՝ ու-ի հետագա հավելմամբ (հմմտ. ճաւրու, մաւրու):

Հերկ-ի միացումը ճարկանեմ-ին առաջարկել է Մեյեն [Meillet. 1908, 129]. անհավանական է կապը *perk'- «պատռել, հերկել. ակոս» արմատի հետ (*perk->*ճերս): Պարզ չէ ճերձեմ բայի կապը սրանց հետ:

Գեորգիևը [Urgr. und Urill., 1936, 98] որպես պելազգյան բառ հայ. ճարսն, լատ. procus «փեսացու» խմբին է միացնում նաև հուն. παρθένος «կույս, աղջիկ, երիտասարդ կին» բառը. սակայն այս համեմատությունը ընդունելություն չի գտնում հունարենի ուսումնասիրողների կողմից [Frisk, GEW, 2, 475, Chantraine, DELG, 3, 858]: Որպես ճարսն-ի մերձավոր զուգահեռներ +-ով են նշանակված իմաստով հայերենին մոտ լատ. procus «փեսացու», լիտ. piršti «հարսնախոսել» բառերը:

Թի-ի համեմատությունը հուն. հոմ. πτύον, ատտ. πτεόν «երնելու թի, հեծանոց, հոսելի» բառերի հետ պատկանում է Աճառյանին [MSL, 20, 161—162,. ՀԱԲ, 2^3, 181—182]. Պոկոռնին [Pok., 1, 827] հուն. բառերը կասկածով միացնում է *peu- «մաքրել, զտել, մաղել» արմատին (այս դեպքում πτ- խումբը հունարենում դիտվում է որպես նորագոյացություն):

Աճառյանը [ՀԱԲ, 2^2, 182—183] թիթեռն բառի հետ կազմությամբ միացնում և *pet-ից բխեցնում է նաև թիթեղն բառը, որ մենք բերել ենք *tel- «հարթ, հարթ գետին, տախտակ» արմատի տակ՝ ըստ Պետերսոնի ըստուգաբանության [KZ, 47, 259]. *pet-ի *-l-ով կազմությունները իմաստով հայերենից շատ հեռու են և ավելի մոտ *pet- «տարածել» արմատից ծագող ձևերին (հմմտ. հուն. πέταλον «թերթ, թիթեղ»): Թեւ-ի ստուգաբանությունը պատկանում է Աղայանին [1974, 70—71]:

Բրբռ. պիպի «հնդկահավի ձագ» և բիբի «մի թռչուն» բառերի ստուգաբանությունը մերն է. վերջինս նմանաձայն է բ(ի)բեմ «ծվծվալ, ճվճվալ (ձագերի մասին)» բային, որը Պոկոռնին [Pok., 1, 830] դնում է ալբ. bibë «ձագ, բադի ձագ. հնդկահավ» և հուն. πίφιγξ, πιφαλλίς «մի թռչուն» բառերի հետ միասին. հուն. բառը մենք առանձնացրել ենք, որովհետև Ֆրիսկը [GEW, 2, 546] և Շանտրենը [DELG, 3, 209] այն համարում են *pip-ի շնչեղացված տարատեսակը: Աճառյանը [ՀԱԲ, 1^2, 433 և 449] բ(ի)բեմ-ը համարում է բնաձայն կազմություն (հմմտ. բբչալ):

Լայն-ի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ *-n- ածանցով ձևերի, ընդ որում կելտականն ունի հայերենի հետ համընկնող իմաստ (հ. իռլ. lathan, կիմր. llydan, կոռն. բրետ. ledan «լայն»), հունարենը՝ շեղված (πλάτανος «սոսի, չինարի»՝ *«լայնատարած ճյուղերով»): Հ. սլավ. plesna-ն («ներբան») ունի լրացուցիչ *-s- (*plet-s-na) և իմաստով հայերենից հեռու է, ուստի նշանակված է մինուսով: Քիչ հավանական է Լիդենի [GHA, 1933, 44] համեմատությունը լատ. latus- «լայն» բառի հետ (*stel- «փռել, տարածել»):

Ճինինամ «հևալ» բայի ստուգաբանությունը պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 3, 95—96], որը, սակայն, հայերենի նախաձևը չի ճշտում: Նրա մատնանշած բարբառային ճենճալ, ճնիկ-ճնիկ անել ձևերը ենթադրել են տալիս *pen- նախաձև, ճինինամ-ը՝ *pein- (կրկնությամբ), որպիսիները այլ լեզուներում չեն հանդիպում: Թերևս հայերենի համար բանալի են տալիս մի կողմից՝ հուն. կրկնավոր ποι-πνύω «շտապում եմ, ընկնում», մյուս կողմից՝ գերմ. *fnēs-, *fnōs-, *fnas- ձևերը, որոնց հիման վրա մենք վերականգնել ենք *poi-pnes- կրկնավոր նախաձևը:

Ըմպեմ-ի նախաձևի վերականգնումը դժվարություններ է հարուցում: Մենք ենթադրում ենք թեմատիկ կրկնավոր ներկա, ինչպես հ. հնդկ. pibati= հ. իռլ. ibid «խմում է», լատ. bibō (*pi-bō) «խմում եմ» ձևերում՝ *pibeti> *hipeti անցմամբ և ընդ-ի հետագա հավելմամբ՝ *ընդ-հիպե> ըմպե: Ըմպ-ը կազմվել է հայկական հողի վրա՝ ու-ի համաբանական (անալոգիական) վերականգնմամբ՝ ունդ—ընդարույս, ունչ—ընչացք տիպի զույգերի հիման վրա [հարցի պատմությունը տե՛ս ՀԱԲ, 3^2, 599—600, Solta, 1960, 90—91]:

Որս բառի համեմատությունը հուն. πόρκος «ուռկան» բառի հետ պատկանում է Պատրուբանիին [KZ, 37, 428]. Աճառյանը [ՀԱԲ, 3^2, 588] ընդունում է որոշ կասկածով: Կապ ունի՞ արդյոք *pork'os «խոզ» բառի հետ:

Պեդերսենը ըստ-ի հետ կապում է նաև ստոր-ը (հմմտ. լատ. posterus «հետագա»), որ չի ընդունում Աճառյանը [ՀԱԲ, 4^2, 278] և կասկածելի է համարում Պոկոռնին [Pok., 1, 841]:

Ճոյ-ի ստուգաբանությունը պատկանում է Աճառյանին: Կասկածելի է իմաստային տարբերության պատճառով. ճոյ-ի սկզբնական իմաստն է «վախ, սարսափ» և ճոյակապ բառի մեջ երկրորդաբար է ստացել «զարմանա-, հրաշա-» իմաստը:

Փոքր-ի համեմատությունը *pōu- «փոքր(իկ), քիչ» արմատից ծագող ձևերի հետ շատ տարածված է, բայց դժվարություն է հարուցում ճիշտ նախաձևի վերականգնումը. հարկավոր է բացատրել փ- նախաձայնը և -u- կամ *-ō(u)-> հայ. -ո- անցումը. Աճառյանը [ՀԱԲ, 4², 530] -փ-ի համար նշում է հուն. φαῦλος «չնչին, անպիտան» բառը (Էռնու-Մեյեի լատիներենի ստուգաբանական բառարանի հիման վրա) և *-u->-ո անցման համար ենթադրում տարնմանություն *phuku-> *phokhu-: Մերձավոր զուգահեռները որոշված են ըստ նախաձայն *ph-ի (համմտ. հուն. φαῦλος) և *-k- ածանցի (լատ. paucus, հ. վ. գերմ. fōh «քիչ»):

Ամուրի-ի ստուգաբանությունը տրված է ըստ Ադոնցի („Mélanges Boisacq", 1, 12]. ընդունում է Գոդելը [Godel, 1975, 79]. համմտ. հ. հնդկ. putro, ավեստ. puϑra- «որդի, երեխա», օսկ. puklo «երեխա»: Եթե սա ճիշտ է, ապա կամ հնդիրանական ձևերը ծագում են *putro- և ոչ *putlo- ձևից, ինչպես օսկերենը, կամ հայերենն ունի սրանցից տարբեր նախաձև:

Նրան-իկ և երջան-իկ ձևերի ստուգաբանությունը պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 4², 662]. նախաձևերի ճշգրտումը մերն է: Աճառյանը ենթադրում է -ան- ածանց (*pri̯-> երջ-, *pri->երի՝ ի-ի անկմամբ -ան-ի մոտ), որ նույնպես հնարավոր է: Սակայն ենթադրվում է նաև իրանական ծագում:

Երես-ը Վան Վինդեկենսը [KZ, 68, 218] համեմատում է թոխ. Ա ere, Բ aräm «տեսք» բառերի հետ և, այսպիսով, բաժանում *prep-ից [համմտ. և Solta, 1960, 375]:

Թեղի-ի ստուգաբանությունը կասկածելի է. Հյուբշմանն այն համարում է փոխառություն հունարենից: Աճառյանը [ՀԱԲ, 2², 171] համեմատում է միայն լատ. tilia, մ. իռլ. teili «թմբի, լորի» բառերի հետ և նշում հունարենի հետ միացնելու դժվարությունը: Զոլտան [Solta, 1960, 420] հավաստի է համարում հայ-հունական կապը և կասկածելի լատ. ու վեներական (կամ իլլիրական) զուգահեռները, մանավանդ, եթե նկատի առնենք իմաստային տարբերությունը:

Սուտ-ի ստուգաբանությունը՝ *psudo-ից (ըստ հուն. ψεῦδος համանիշի) պատկանում է Բուգգեին (KZ, 32, 25) և ընդունվում է Աճառյանի կողմից [ՀԱԲ, 4², 253]:

Որոնեմ-ի ստուգաբանությունը պատկանում է Պատրուբանիին [ՀԱ, 1968, 26] և կասկածով ընդունվում է Աճառյանի կողմից [ՀԱԲ, 3², 584]: Համեմատված բառերից լատ. rōdō «կրծում եմ» բայը Պոկոռնին բերում է *red-/rod- «քերել, կրծել» և *u̯rōd- (*u̯er- «պատռել, քերծել») նախաձևերի տակ, առաջին դեպքում տալով կելտական (կիմր. rhathu «հղկել, կոկել, հարթել», բրետ. rasa «ածիլել») և գերմանական, (հ. վ. գերմ. rāzi «կծու», երկրորդ դեպքում գերմանական (հ. անգլ. wrōtan «փորել») զուգահեռներ [Pok., 1, 854 և 1, 1163]. հ. հնդկ. rádati «կծում է, կրծում է, կրտում է» բայի պատկանելությունը *red-ին համարվում է կասկածելի [Mayrhofer, KEWA, 3, 39—40], բայց հայ. կարճ ձայնավորով ձևը այն դարձնում է հավանական: Պերսոնը *rēd-ը, *reu-ը *rei-ը համարում է *er(ə)- «ցանցառ, հեռու-հեռու. իրարից հեռանալ, բաժանվել» արմատի աճականներով ձևերը:

Առիք «առաստաղ» բառի ստուգաբանությունը կասկածելի է՝ իմաստային զգալի տարբերության պատճառով. *reik- «լայն բանալ. ձող» նախաձևը համարվում է *rei- «հենել, նեցուկ դնել» արմատի աճականով ձևը՝ դրան համիմաստ *reid- նախաձևի հետ միասին. իմաստի զարգացման համար համմտ. ձեղուն և ձող. առիք-ի ք-ն հին հոգնակերտ է, բայց այն կարող էր այդպիսին դառնալ ուշ ժամանակաշրջանում *rik-> առիք>առի-ք, թեև հնարավոր է ենթադրել նաև առանց աճականի ձև, ինչպես տրված է աղյուսակում:

Երի «կենդանու լանջամաս, եղբուծ» բառի համեմատությունը լիտ. rietas, լատվ. rieta «ոտք», հ. սլավ. ritr «հետույք» բառերի հետ պատկանում է Լիդենին [„Mélanges Pedersen", 88 և հջ.]. ընդունում են Պոկոռնին [Pok., 1, 863] և Զոլտան [Solta, 1960, 418]: Աճառյանը [MSL, 20, 163. ՀԱԲ, 2², 54—55] կապել է *perə- նախաձևին («առջևը, առաջակողմ» իմաստով), բայց Լիդենի ստուգաբանությունից հետո այս ստուգաբանությունը կորցրել է իր ուժը:

Առիւծ (առյուծ) բառի ստուգաբանությունը պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 1², 259], որ բխեցնում է *reug'- «մռնչալ» նախաձևից՝ իբրև «մռնչացող». սակայն *reug'-ը պիտի տար *(ա)ռոյծ, ուստի ենթադրելի է *rēug'- կամ *reu̯əg'- նախաձև:

Ործամ-ի մերձավոր զուգահեռը որոշված է նախահավելվածի (հուն. ἐ-ρεύγομαι «փսխում եմ») և նշանակված +-ով. մնացածները նշանակված են -ով. ործամ-ը ծագում է *որուծ-ամ-ից (<*orug'-):

Արջ-ի ջ-ի համար ենթադրվում է արջն «սև» բառի ազդեցությունը:

Ատոք «լիքը, հասուն (ցորեն, սերմ)» բառը ծագում է *sa- «կուշտ, հագեցած. կշտացնել, հագեցնել» արմատից *-d- աճականով, որ, բացի հայերենից, ունի նաև հունարենը՝ ἄδην «բավականին, կուշտուկուռ»: Յագենամ-ի *sa-u̯- նախաձևի *-u̯- աճականը հավանաբար զուգահեռ ունի սլավոնականում (համմտ. ռուս. сыт «կուշտ»):

Աղտ «աղ» բառի *sal-d- նախաձևը (*-d- աճականով) զուգահեռներ ունի գերմանական լեզուներում (գոթ., հ. իսլ., հ. անգլ. salt), թրակերենում (Salsovia<*sal-s-t-ou-), իլլիրերենում (Saldae). -d-ն որպես բայական տարր (ներկայի կազմիչ) հանդիպում է լատիներենում (sallō, -ere «աղել») և երկրորդաբար (բայից կազմված անվանական ձևերում)՝ բալթիկ-սլավոնական լեզուներում (լիտ. saldùs, լատվ. salds, ռուս. сладкий «քաղցր»):

Աղ-ատ-ի ստուգաբանությունը (*sal- «կեղտաղորշ» արմատից) պատկանում է Աղայանին [1974, 18—19]:

Քեռի և քոյր բառերի կապը նշում է Աճառյանը [ՀԱԲ, 4², 666—667]՝ մեկնաբանելով առաջինը որպես «այն անձը, որի քույրը խոսողի մայրն է»: Մենք [ՊԲՀ, 1963, 4, 95—96] քեռի-ն համարել ենք *su̯-esor- «սեփական քրոջից» ձևից (որպես քոյր-ից անկախ կազմություն)՝ *su̯esri̯o->քեռի:

Համ-ի համար Լիդենը [Lidén, 1906, 67] տալիս է *sap-mo նախաձևը, որ ընդունում է Պոկոռնին [Pok., 1, 880]: Աճառյանը [ՀԱԲ, 3², 16] մերժում է՝ նշելով, որ *sap-mo-ն պիտի տար *հաւմ (հօմ): Մենք փորձում ենք փրկել՝ կապելով *sap-ի *sab- տարբերակի հետ (*sab-mo-), որ հանդիպում է գերմանականում (հ. անգլ. sæp, մ. ստ. գերմ. sap(p) «հյութ») և իտալական (<վենետական) ու իլիրական տեղանուններում:

Հյուբշմանը Նիստ-ը համարում է երկրորդական կազմություն՝ նստիմից և ոչ անմիջական շարունակությունն *ni-zd-o-ի, որ ունի գերադանցապես «բույն» իմաստը։

Զ-երծանեմ բայի համեմատությունը հ. հնդկ. sṛjáti, sarjati «արձակում է», ավեստ. hərəzaitʼ, harəzaiti «արձակում է, ուղարկում է» բայերի հետ կատարել է Լագարդը [Lagarde, 1854, 321]. ընդունում են Հյուբշմանը և Աճառյանը [ՀԱԲ, 2², 92—93]։ Պոկոռնին [Pok., 1, 900—901] հնդիրանական բառերը անջատում է հայերենից և կապում հ. իռլ. selg «որս», մ. վ. գերմ. selk «կախել, իջնել (ամպերի մասին)» և այլն բառերի հետ, որ ավելի քիչ հավանական է։

Աղբ «կեղտ. կղկղանք» բառի համեմատությունը խեթ. šalpa- «կղկղանք» բառի հետ հեղինակինն է [ԼՀԳ, 1979, 3, 23—24]. մյուս լեզուներն ունեն գերադանցապես «յուղ, ճարպ» իմաստը, որ հայերենում ևս պահպանվել է «հողը աղբով պարարտացնել», բրբռ. «պարարտություն» իմաստների մեջ։ Աճառյանը [ՀԱԲ, 1², 123—124] բխեցնում է կովկասյան աղբյուրից (լազ. lebi «կեղտ»). Լիդենը և Պետերսոնը կապում են աղտ բառի հետ և բխեցնում *el- «հեղձել, հոտել» արմատից (այս դեպքում *-bh- աճականը մնում է առանձնակի, և իմաստն դյուրիրեն շեղվում է [հմմտ. Pok., 1, 355 և Solta, 1960, 279]։

Ամամ «լցնել», աման բառերի ստուգաբանությունը պատկանում է Պետերսոնին [KZ, 47, 279]։ Պոկոռնին [Pok., 1, 901—902] այս արմատի տակ բերում է հուն. ἄμη «դույլ», ἀμίς «միզաման», լատ. sentīna «նավի կեղտաջրանոց, կեղտաջուր», հ. իռլ. sem- «ջուր թափել», լիտ. semiù, sémti «(շերեփով) հանել, լցնել» բառերը և այլն։ Աճառյանը [ՀԱԲ, 1², 143—144], հետևելով Պիկտեին, համեմատում է Պոկոռնու կողմից *am- «բռնել» արմատի տակ դրված հ. հնդկ. amatram «աման», լատ. ampla «բռնակ, կանթ», amplus «լայն, ընդարձակ» բառերի հետ՝ ավելացնելով հուն. այն բառերը, որ Պոկոռնին բերում է *sem- արմատի տակ։ Վերջինս անջատում է աման-ը ամամ-ից՝ առաջինը բերելով *am- արմատի տակ։

Հիմն-ի համեմատությունը խեթ. šamana- «հիմք» բառի հետ պատկանում է Լարոշին [BSL, 58, 73—77]։ Մենք այս զուգահեռը քննել ենք *sē(i)- արմատից անկախ [SCO, 2, 69—70]։

Ընթանամ-ի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ ֆիզիկական շարժման իմաստի ակնյայտության՝ ի հակադրություն հոգեկանի. հմմտ. մի կողմից՝ ավեստ. hant- «հասնել, հասցնել», հ. իռլ. sēt «ճանապարհ», հ. վ. գերմ. sentan «ուղարկել», sindōn «գնալ», լիտ. siunčiù, լատվ. sùtu «ուղարկում եմ» և մյուս կողմից՝ լատ. sentiō, -īre «զգալ» և այլն։ Հայ. գալ-ը և զ-գալ-ը ունեն իմաստային միևնույն փոխհարաբերությունը։

Անցանեմ-ի ստուգաբանությունը մերն է [Джаукян, 1967, 175, ծան. 34, 216]. ամենայն հավանականությամբ կազմված է սիգմատիկ աորիստի հիմքից (*sn̥t-s- > անց)՝ -ան-եմ-ով։ Աղայանը [1974, 19—20] ենթադրում է *-sk-, որը, սակայն, այլուր չի հանդիպում։ Պեդերսենը համեմատում է հուն. ἄντομαι «ընդառաջ եմ գնում, հանդիպում եմ» բայի հետ, որ չի ընդունում Աճառյանը [ՀԱԲ, 1², 212—213]։

Աճառյանը [ՀԱԲ, 3², 396], տալով յեռում-ի՝ բերվող ստուգաբանությունը (*ser-s-), ավելացնում է. «Ձևով ու կազմով հմ. յեռ- ճիշտ այն է, ինչ որ հն. ἔνερσις, ուր ἐν- = յ-, ερσ- = -եռ-»։ Սակայն ἔνερσις «խրում, մըխում» բառի մեջ -σι-ն գալիս է *-ti- ածանցից։

Ուստր-ի -տր-ի համար ենթադրվում է դուստր-ի ազդեցություն. ուս-ը զուգահեռ ունի կիմր. hogen (*sukā) «աղջիկ» ձևի մեջ՝ ընդհանուր *-k-ով, որ հայերենում *-u-ից հետո տալիս է -ս-. Հյուբշմանը [Hübschmann, 1901, 69] համեմատում է հ. անգլ. suhterga «եղբորորդի» բառի հետ, որ անհավանական է համարում Զոլտան [Solta, 1960, 326, ծան.]. իր հերթին Զոլտան հաշվի չի առնում կելտական *-k-ով զուգահեռը և հայերենին ամենից ավելի մոտ է համարում հուն. υἱύς, υἱός, թոխ. B soyā «որդի» ձևերը, որոնք հակադրվում են հնդիրանա-գերմանա-բալթիկ-սլավոնական *nu-ով ձևերին։ Մենք կելտականը նշել ենք ∔-ով, հունականը և թոխարականը՝ ±-ով.

Հ.-ե. *seug-ը պիտի տար *(ն)ոյծ և ոչ ծիւծանիմ, ուստի մենք ենթադրել ենք *sēug նախաձև (հնարավոր է նաև *seu̯əg- նախաձևը)։ Ծիւծանիմ-ը զուգահեռ ունի միայն գերմանական լեզուներում՝ գոթ. siuks «հիվանդ», հ. իսլ. sjūkr «հիվանդ, տրտում» և այլն։

Հայ ինձ-ը զուգահեռ ունի հ. հնդկ. simhá- «առյուծ» ձևի մեջ։ Նկատի առնելով, որ սրանք չեն կարող հնդեվրոպական լեզվից գալ, Զոլտան [Solta, 1960, 420—421] որպես երկուսի աղբյուր ենթադրում է որևէ ասիական լեզու։

Խայթ և խիթ «ցավ, վերք. քարանձավ. խութ» բառերը օրինաչափ կերպով համեմատվում են մ. նիդերլ. heien «խփել, հրել», մ. վ. գերմ. heie «թակ», լատ. caedō, -ere- «խփել, հատել, սպանել, սեղմել», caiō, -āre «խփել, թակել, հատել» և այլն բառերի հետ, որոնց համար վերականգնվում է *(s)k(h)ai-, *-d-, *-t- «խփել, խթել, հրել» արմատը [Pok., 1, 917]. որոշ հետազոտողներ սրանց միացնում են նաև հ. հնդկ. khidáti «պատռում է, հրում է, ճնշում է», kh^dā «ճնշում, հոգնություն» բառերը։ Աճառյանը [ՀԱԲ, 2², 325] խայթ և խիթ բառերի հետ ստուգաբանորեն կապում է իմաստով և ձևով ակնհայտորեն սրանց մոտ մի շարք բառեր՝ խեթ, խոթ, խութ խուփ և այլն, որոնց ձայնավորումը հնարավոր չէ բացատրել բերված զուգահեռներով և ենթադրում է *ĕ/ŏ/ə, *ĕu/*ŏu/*əu ձայնդարձներ։ Գործն ավելի է բարդանում, երբ նկատի ենք առնում խաչ, խայչ, խեչ, խոչ զուգահեռ ձևերի առկայությունը, որոնցից առաջինի համար նշվում են ն. պրս. xada «երկար և ուղիղ ճյուղ. երկար փայտ» և լիտվ. kótas, լատվ. kats «կոթ» զուգահեռները [Lidén, KZ, 56, 211. ՀԱ, 41, 465 և հջ. հմմտ. և Solta, 1960, 308—309]։ Պոկոռնին *(s)k(h)ai- նախաձևի տակ է դնում նաև խիթռ-ը (*khid-ro-), որ, սակայն, չի ընդունում Աճառյանը [ՀԱԲ, 2², 371]։ Թերևս այստեղ առկա են մասամբ բուն հայերեն ձևերի հետ խառնված փոխառյալ ձևեր, մասամբ հին բարբառային տարբերակներ։

Ծերտ բառի՝ Պոկոռնու բերած [Pok., 1, 919] ստուգաբանությունը չի ընդունում Աճառյանը [ՀԱԲ, 3², 511—512]. հայերենի հետ *-r- ածանցով միավորվում են հուն. σκιδαρός «նեղ, ցանցառ, փխրուն» (ըստ Հեսիքիոսի), մ. անգլ. scateren «ցրել, ջարդել, փշրել», լիտվ. skedervá «տաշեղ», ռուս. щедрый «շռայլ», վ. լուժ. šćedrić «փշրել» բառերը։ Աղայանը [1974, 128—129], հետևելով Պատրուբանիին, բխեցնում է *sqerd-ից (ավելի ճիշտ պետք է լիներ *skherd-)՝ կապելով քերել, քերթել բառերի հետ։

Ցելում-ին իմաստով և ձևով ամենից ավելի համապատասխանում են գերմանական (հ. իսլ. skilja «բաժանել») և բալթիական (լիտվ. skeliù, skélti «ճեղքել») բայաձևերը [հմմտ. Solta, 1960, 106], ավելի հեռու են մնում հուն. σκάλλω «փորում եմ», ալբ. shtel' «բացում եմ, փայլեցնում եմ, սրում եմ. վառում եմ», խեթ. iškallāi- «պոկել» բայերը: Առաջինները նշանակված են +-ով՝ երկրորդները՝ ±-ով:

Աղայանը [1974, 77—78, 126—127] *skel-ից է բխեցնում նաև խեղբ «ծիլ, ընձյուղ», խեղեփ «կես մաս», շեղբ «դանակի երկաթ» բառերը՝ առանց *-kh-ով և *-skh-ով համապատասխան զուգահեռներ նշելու: Շեղբ բառը Աճառյանը [ՀԱԲ, 3², 508] համարում է փոխառություն ասոր. šelpā «դանակ» բառից:

Խուլ-ի համեմատությունը հուն. κωλός «կաղ» (այլև «խուլ». հմմտ. κωλὸν οὖς «խուլ ականջ») բառի հետ պատկանում է Մեյեին [BSL, 36, 114 և հջ.]: Մենք [Джаукян, 1967a, 118] խուլ-ը ան-խուլ «ամայի, անբնակ», գ-ան-խուլ «ծածուկ, գաղտնի» բառերի հետ միասին դիտել ենք հ.-ե. կողմնակի շերտի բառ և համեմատել *keu- «ծածկել, փաթաթել» արմատին պատկանող բառերի հետ: Աճառյանը [ՀԱԲ, 2², 415] Մեյեի ստուգաբանությունը չի ընդունում:

Եթե ճիշտ է *skhьl-> սխալ ստուգաբանությունը, և հայերենը հին փոխառություն չէ, ապա թերևս կարելի է հաստատել *skh> շ փոփոխությունն առաջին շարքի ձայնորդներից առաջ (հմմտ. *skhed-ri-> շերտ, *skhel-> շեղ և այլն), *skh> սխ փոփոխությունն՝ այլ դիրքերում:

Քարբ «արքայիկ օձ» բառի համեմատությունը հուն. σκορπίος «կարիճ» բառի հետ պատկանում է Տերվիշյանին և ընդունվում է Աճառյանի կողմից [ՀԱԲ, 4², 561]. ±-ով են նշանակված հայերեն բառից իմաստով հեռու, բայց *-p- ածանցն ունեցող ձևերը:

Քերեմ, քորեմ բայաձևերի մերձավոր զուգահեռներից +-ով նշանակված են *e/o ձայնդարձն ունեցող ալբ. ձևերը՝ korr (*kērno-) «կտրում եմ, քաղում եմ» և harr (*skorno-) «քաղհանում եմ». մյուսները նշանակված են ±-ով [հմմտ. Solta, 1960, 106—107]:

Ցայտեմ-ի համեմատությունը լատ. scateō -ēre (հին scatō, -ere) «բըխել» բայի հետ պատկանում է Մեյեին [հմմտ. Ernout—Meillet, DELL⁴, 863]: Ընդունում են Աճառյանը [ՀԱԲ, 4², 449] և Զոլտան [Solta, 1960, 389—390]:

Բիւ-ի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ *s-ի և ածանցի բացակայության:

Խուղ-ի զուգահեռներից +-ով նշանակված են *-l- ածանց ունեցող և իմաստով հայերենին մոտ գերմանական բառերը (հ. իսլ. skjōl «թաքստոց, ապաստարան, մարագ», հ. ֆրիզ. skūle «խրճիթ, խուղ» և այլն), ±-ով՝ մնացածները: Պոկոռնու [Pok., 1, 951] բերած բառերից խաւար-ը իրանական փոխառություն է [հմմտ. ՀԱԲ, 2², 351 և Ջահուկյան, ԼՀԳ, 1979, 3, 25—26], խուփն-ը՝ խափ-ի ձայնդարձը [ՀԱԲ, 2², 423]. հնարավոր է խուց-ի՝ սեմական (աքքադական) փոխառություն լինելը (հմմտ. աքքադ. ḫuṣṣu «ցանկապատ, ծածկ». ՀԱԲ, 2², 422—423):

Մինչ-ի ստուգաբանությունը պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 3², 322]: Կասկածելի է իմաստային տարբերության պատճառով: Ավելի հավանական է բխեցնել մակբայների և նախդիրների հիմքում ընկած *me- նախաձևից, որից հայ. մերձ (= հուն. μέχρι(ς) «մինչև»):

Մաւրուք-ի զուգահեռներից +-ով նշանակված են *-ru- հիմքով (հ. հնդկ. śmáśru-, խեթ. zama(n)kur (*smokru- կամ *smokur-) բառերը, ±-ով՝ միայն *-r- պարունակողները, որոնք իմաստով էլ ավելի քիչ են մոտ հայերենին:

Մուլ «ծուխ», մըմլալ բառերի ստուգաբանությունը պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 3², 352]. հմմտ. մ. իռլ. smāl, smōl, smūal «կրակ, մոխիր», ստ. գերմ. smelen, smölen «մարմրել, մըմլալ» և այլն:

Բրբռ. մուզ (կա արդի գրական լեզվում) <մոյզ բառի ստուգաբանությունը [Pok., 1, 971] կասկածելի է. հ.-ե. *-gh-ն *-u-ից հետո պիտի փոխվեր ձ-ի:

Հետազոտողները տատանվում են հայ. ողջ-ը՝ *sol-(o-) «ողջ, ամբողջ» հիմքին, թե *al-, *ol- «դրանից դենը» արմատին հատկացնելու հարցում. վերջին դեպքում առկա են հ. իռլ. oll «ընդարձակ, մեծ», գոթ. alls «ողջ, բոլոր» և այլն զուգահեռները. մենք դրել ենք առաջինը, որովհետև՝ ա) երկրորդ դեպքում ունենք ali̯o-> այլ անցումը (*al- և ոչ *ol- ձևից), բ) *sol-ին պատկանող լատիներենի և հայ. միջև կա իմաստային բացահայտ զուգահեռ [հմմտ. Solta, 1960, 230—231]: Հայերենի նախաձևը գրվում է *soli̯o- կամ *solu̯i̯o-:

Բրբռ. հիսնել «նայել» բայի ստուգաբանությունը պատկանում է Աղայանին [ԲՍՀ, 149—147]:

Հենում -ե-ով ձևի առկայությունը հինեմ ձևի կողքին Մեյեն [Meillet, 1936², 55] բացատրում է հաջորդ ու-ի ազդեցությամբ (հմմտ. զգենում): Հենում-ի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ *s-ի բացակայության, ընդ որում +-ով նշանակված են իմաստով մոտ ձևերը (հմմտ. լիտվ. pinù, pìnti «հյուսել», հ. սլավ. рьнǫ «լարում եմ»): Հենում-ը և հանում-ը գալիս են կամ ձայնդարձի տարբեր աստիճաններից, կամ, ինչպես կարծում է Վինտերը [AID, 202], բարբառային հնագույն տարբերակներից. թերևս հնարավոր է հանում-ը բխեցնել *pan- «գործվածք» արմատից, որ, անշուշտ, կապված է *(s)pen-ի հետ:

Փանաք «տկար, խեղճ, աղքատ», փանաք-ի «չնչին, աննշան» բառերի համեմատությունը հուն. σπάνις «կարիք, պակասություն», σπάνιος «հազվագյուտ, սակավ, պակասավոր», πεῖνα, πείνη «քաղց», πένης «աղքատ, չունևոր» բառերի հետ պատկանում է Տերվիշյանին և ընդունվում է Աճառյանի կողմից [ՀԱԲ, 4², 479]:

Փինառ «աղքատ, խեղճ, ողորմելի» բառի ստուգաբանությունը Աճառյանինն է [ՀԱԲ, 4², 505], որն անբացատրելի է թողնում ի-ն (սա կարող էր գալ *ei-ից). մեր տված նախաձևի համար հմմտ. մէջ< *meidhi̯o- <*medhi̯o-:

Փին «աղբ, կղկղանք» բառի համեմատությունը հուն. πίνος «կեղտ, ժանգ», πιναρός, πινόεις «կեղտոտ» բառերի հետ պատկանում է Տերվիշյանին և Աճառյանին [ՀԱԲ, 4², 404], փն-թի «կեղտոտ, զզվելի» բառինը՝ Աճառյանին [ՀԱԲ, 4², 507], միայն թե անհամոզիչ է փն-թի-ի աճառյանական մեկնությունը որպես փին+թի «աղբ թի» (որպես պատկերավոր բառ): -թ-ն թերևս անձական է: Այլ հետազոտողներ հուն. բառերի ծագումը համարում են անհայտ [GEW, 2, 540. DELG, 3, 903—904]:

Ստինք-ի մերձավոր զուգահեռներն են հ. հնդկ. stánaḥ, հուն. στήνιον «կուրծք» (ըստ Հեսիքիոսի). Զոլտան [Solta, 1960, 303—305] նշում է հայերեն և գերմ. ու բալթ. բառերի (հ. իսլ. speni, լիտվ. spenŷs «ստինք») իմաստային մերձավորությունը, բայց սրանք ձևով հակադրվում են հայ-հնդկա-հունական բառերին:

Սպառնամ-ը սերտորեն միավորվում է հ. հնդկ. spṛṇāmi «սպանում եմ» (հմմտ. նաև spṛṇóti «ետ է մղում») բայի հետ. լատ. spernō, -ere- «հեռացնել, արհամարհել», հ. իսլ. sperna «ոտքով հրել» բայերը թեմատիկ հիմք ունեն և հայերենից փոքր ինչ ավելի հեռու են, քան հ. հնդկ. ձևը, որ Զոլտան նկատի չի ունենում [Solta, 1960, 389]:

Փարատեմ բայի աղբյուրը Աճառյանը (ՀԱԲ, 4², 486, 487) համարում է ասոր. pəraṭ «ցրել, (անունը) տարածել» բայը, որ քիչ հավանական է. այստեղ հավանաբար մենք գործ ունենք հնդեվրոպա-սեմական ընդհանուր (նոստրատիկ) ժառանգության հետ, և երկու ստուգաբանությունների միջև ընտրությունը դժվարանում է: Փարատեմ-ի մեր բերած ստուգաբանության համար տե՛ս Pok., 1, 993. տ-ն այստեղ թերևս գալիս է նախկալի *-d- ածանցից և զուգահեռ ունի նիդեռլ. sproeten «սրսկել», sproetelen «ցնդել» բայերի մեջ:

Փրփուր-ի համեմատությունը հուն. ἀφρός հոմանիշի հետ և վերագրումը *(s)p(h)er- արմատին պատկանում է Մեյեին [BSL, 93, 51 և 35, 110]. ընդունում է Աճառյանը [ՀԱԲ, 4², 535] և ավելացնում օս. ffiur հոմանիշը. սակայն փրփուր-ի օս. բուն անունն է fynk, finkä, որ *faina-ka-ի միջոցով [Абаев, ИЭСОЯ, 1, 498] հանգում է *(s)poimno- նախաձևին [Pok., 1, 1001]:

Փոշի-ի համեմատությունը խեթ. parš- «փշրել» բայի հետ պատկանում է Պիզանիին: Աճառյանը [ՀԱԲ, 4², 509, 516, 522—523] փոշի-ն փշուր-ի հետ միասին, ինչպես և փուխր-ը հակված է համարելու կովկասյան փոխառություն:

Ստանամ-ի զուգահեռներից +-ով նշանակված են հայերենին կազմությամբ և իմաստով (լատ. prae-stināre «ձեռք բերել, գնել»), ±-ով՝ միայն կազմությամբ մոտ զուգահեռները:

Թմբեմ «ծեծել» բայի զուգահեռները որոշված են ըստ *-b-ի առկայության (*-p-ի և *-bh-ի դիմաց) և ռնգային միջամասնիկի բացակայության. հմմտ. հ. հնդկ. stábaka- «փունջ», հուն. στόβος «նախատինք, պարծենկոտություն», στοβέω «նախատում եմ», հ. վ. գերմ. stepfen, stapfōn «ամուր ոտք դնել, ամրաքայլ գնալ». բալթիական և սլավոնական ձևերը կարող են ծագել ինչպես *-bh-ով, այնպես էլ *-b-ով ձևերից (լատվ. stabs «սյուն», ռուս. բրբռ. стебать «մտրակել, ծեծել»). Հայերեն բառի հետ իմաստով ամենից մոտ են սլավոնականները: Աճառյանը [ՀԱԲ, 2², 197] տալիս է *(s)tob- նախաձևը, բայց օրինակները բերում է *(s)teu- *-b(h)h-, *-p- արմատի ածանցյալներից: Կարելի է նշել հ.-ե. արմատների բնաձայնական-նկարագրական բնույթը, որի դեպքում հնարավոր է ձայնավորման տատանում:

Ստեպ, **ստիպեմ** բառաձևերին ձևով (*steib-՝ *steibh-ի և *steip-ի դիմաց) ամենից ավելի մոտ են հուն. στείβω «տրորում եմ, քայլում եմ, սարում եմ», հ. լիտվ. staibus «ուժեղ, քաջ» բառերը. սլավոնական բառերը ձևով մոտ են, իմաստով՝ հեռու (հմմտ. ռուս. стебель «ցողուն»), իտալյանը (լատ. stipō, -āre «ճխտել, լցնել, խտացնել») և գերմանականը (հ. անգլ., մ. վ. գերմ. stīf «պինդ»)՝ ընդհակառակը: Իմաստով և ձևով հեռու է հնդկականը: Աճառյանը [ՀԱԲ, 4², 433] ստեպ-ին է միացնում նաև ստիպ-ը, որ, սակայն, հնչյունապես և իմաստով հեռու է մնում:

Ստեղծանեմ-ի հատկացումը *stel-ին [ՀԱԲ, 4², 270—271] Զոլտան [Solta, 1960, 333, ծան. 81a] կասկածի տակ է դնում ծ-ի պատճառով, որ Աճառյանը հակված է բացատրելու հայկական հողի վրա. սակայն հմմտ. *stel-g-, որ առկա է կելտական, գերմանական և բալթիական խմբերում. *stel-g-ի համար կարելի է ենթադրել և *stel-g'- տարբերակ, եթե նկատի ունենք բալթիականի տատանումը հ.-ե. քմայինների արտացոլման մեջ:

Բրբռ. **թնալ**, **թնթնալ**-ի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ *s-ի բացակայության, **թնկթնկալ**-ինը՝ ըստ ետնալեզվային կ-ի առկայության:

Ստի «թավ, մազոտ» բառի մասին Աճառյանը [ՀԱԲ, 4², 274] գրում է. «Անշուշտ նույնն է ստեւ բառի հետ»: Վերջինս նա [ՀԱԲ, 4², 273] բխեցնում է *steu̯ə- «խտանալ, սեղմվել» արմատից, որ Պոկոռնին [Pok., 1, 1035] *stāu-, *stau-/stū- տարբերակներով կապում է *stāi-, *stī-, *stḷ-ā- «խտանալ, լերդանալ» հիմքերի հետ որպես *stā- «կանգնել» արմատի աճականով ձև: Ստև «անասունի (հատկապես ագռավի) բուրդ» բառի համար Աճառյանը նշում է հ. հնդկ. pṛthu-ṣṭu- «լայնահյուս, լայնածամ, լայն մազափնջով», stupá- «մազափունջ», stuka- «մազափունջ» բառերը. մյուսները իմաստով հեռու են: Ստի-ի զուգահեռները նույնպես իմաստով հեռու են հայերենից. ուստի և հայերեն բառի ծագումը նշված է հարցականով:

Ստնգամ «ջղաձգվել» բայի համար կարելի է նշել մի կողմից՝ հուն. στενός (στεν-F-ός) «նեղ», στεῖνος «նեղվածք, նեղ տեղ, նեղություն», στείνομαι «նեղ եմ դառնում», հ. իսլ. stinnr «պինդ», թերևս նաև լատվ. stinte «սառցաշիթ» (*sten- «նեղ, սեղմել, նեղացնել»), մյուս կողմից՝ ավեստ. θang- «ձգել, լարել», լատ. tēmō (*teŋksmō) «սռնի, քեղի», ռուս. растягивать «ձգել», тугой «ձիգ», լիտվ. tingùs «ծույլ», հ. իսլ. þungr «ծանր» բառերը (*tengh- «ձգել, լարել»). Թերևս մենք գործ ունենք միևնույն *(s)ten-, *-gh- արմատի հետ: Երկրորդ արմատի ածանցյալները բերված են փակագծերում:

Ստրուկ-ի զուգահեռներից +-ով նշանակված են *strō- հիմնաձևով և մերձավոր իմաստով (հմմտ. ռուս. страда «ծանր աշխատանք. ծանր աշխատանքի ժամանակ՝ հունձ», страдать «չարչարվել, տանջվել», (հին) «աշխատել»), ±-ով՝ մյուս ձևերը: Սակայն հնարավոր է որ -ուկ-ը լինի ոչ թե ուշգրված ածանցական մասնիկ, այլ դա *-ōg- ձևից (*g-ն առկա է գերմ. և բալթ. ձևերում):

Ստորի «ջուլհակահաստոցի գլան, որի վրա փաթաթվում է կտավը» բառի ստուգաբանությունը պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 4², 278]. հմմտ. հուն. σταῖρα «նավի առաջածայրը», στῆριγξ «հենցակ, հենարան», հ. վ. գերմ. storro «ծառաբուն, կոճղ» և այլն:

Աստղ-ի նախաձևի հարցը դժվարություն է հարուցում. այն մի կողմից՝ մոտ է լատ. stellā-ին (*stēr-lā)՝ *-l-ի առկայությամբ, մյուս կողմից՝ հունարենին՝ ա- նախաձայնով (ἀστήρ). սրանցից առաջինը մենք նշանակել ենք +-ով՝ երկրորդը՝ ±-ով:

Թոր(եղ)-ի զուգահեռներից +-ով նշանակված են առանց *s-ի և աճականի (բուլղ. tor «գոմաղբ», լիտվ. terménti «կեղտոտել»), ±-ով՝ միայն առանց աճականի ձևերը, թեև հայերեն թոր(եղ) և թարախ բառերին իմաստով մոտ ձևեր կան նաև մյուսների մեջ։

Թունդ-ի հնչյունական մեկնաբանությունը Աճառյանինն է [ՀԱԲ, 2², 206—207]՝ *tund->*թունտ>թունդ (երկրորդական ձայնեղացում ն-ի մոտ), կասկածելի է։ Թերևս ենթադրելի է *-dh- կամ *-t- աճականով ձև, որոնցով հայերենը մնում է առանձնակի։

Աճառյանը [ՀԱԲ, 2², 199] և, նրա հետևողությամբ, Զոլտան [Solta, 1960, 378—379] թովեմ-ը միացնելով թոթովեմ-ի հետ՝ դրանք բխեցնում են *steu- «բարձրաձայն գովաբանել» արմատից (հ. հնդկ. stāuti, stavatē «գովաբանում է», հուն. στεῦται «խոստանում է (պարծենալով)»), որ անհավանական է թե՛ ձևով (առանց *-s-ի արմատը չի հանդիպում), թե՛ իմաստով։ Մեր ստուգաբանությամբ (*teu- «բարեկամաբար ուշադրություն դարձնել») հայ. բառին առանձնապես մոտ է կելտականը. հմմտ. մ. կիմր. tut (*teu-to-) «կախարդ, թովող»։

«Քաղցր» իմաստի համար առկա են հ.-ե. *sụad-, *dḷku- և *saldu- հիմքերը, ընդ որում առաջինը համեմատաբար լայն տարածում ունի, երկրորդն ընդգրկում է հունա-իտալյան, երրորդը՝ բալթիկ-սլավոնական տարածքը։ Հայերենի նախաձևի հարցը դժվարություններ է հարուցում, վերականգնվում են *sụḷk'hu- (Բարթոլոմե), *dụḷk'u- (Շեֆտելովից), *dḷk-sk'u-> *k'ḷd-sk'u (Պետերսոն) և այլ ձևեր, որոնցից ոչ մեկը համոզիչ չէ։ Մենք հիմք ենք ընդունում *sụad- արմատը՝ *-l- և *-sk- կազմիչներով (խառնուրդ *dḷk'u-ի հե՞տ)՝ *sụad-l-sk'u- քաղց-ր,-ու (ենթադրվում է *-d-ի անկում *-l-ից առաջ գտնված դիրքում)։

Մեյեն [Meillet, 1936², 55] վաթսուն-ի մեջ ա-ի առկայությունը բացատրում է ու-ի ազդեցությամբ, որ քիչ հավանական է։

Քուն-ի զուգահեռներից ±-ով նշանակված են *sụop-no-, *sụep-no- (հ. հնդկ. svápna-, ավեստ., xᵛafna-, լատ. somnus (*sụopnos կամ *sụep-nos), հ. իսլ., հ. անգլ. svefn). ±-ով *sup-no-, *sop-no- և այլն նախաձևեր ունեցողները։

Քույր-ի զուգահեռներից ±-ով նշանակված են ա) հունարենի՝ Հեսիքիոսի ավանդած մնացուկային ἔορ (կոչ.) «դուստր, ազգական», ἔορες (հգն.) «ազգականներ» ձևերը, որոնք իմաստով էլ տարբեր են, և բ) *sụ-ի փոխարեն *s- նախաձայնով ձևերը (լիտվ. sesuõ, ռուս. сестра «քույր»)։

Կապ ունե՞ն արդյոք թաթախել բայի հետ թաթաղել «արյունաթաթախ դարձնել» (թ՞ե «ծեծել») և թաթամշիլ «լուծվել, մեղկանալ, լքվել» բայերը։

Աճառյանը [ՀԱԲ, 2², 150 և 217] թաւն-ը կապում է թանամ-ի հետ և բխեցնում *tā-ի *tāu- տարբերակից (թաւն< *tāu-ni-)։

*Tēta> տիտ անցման մեջ բաղաձայնական տեղաշարժի բացակայությունը բացատրվում է արմատի մանկական բնույթով (Lallwort)։

Պոկոռնին [Pok., 1, 1061], հենվելով Շեֆտելովիցի վրա, տալիս է նաև թաղար բառը, որը, սակայն, թյուրքական (<պրսկ.) ծագում ունի և հանդիպում է միայն ուշ շրջանում [հմմտ. ՀԱԲ, 2², 146]։

Աճառյանը [ՀԱԲ, 2², 190] թմ(ր)րիմ-ի համար ընդունում է Պեդերսենի ստուգաբանությունը և, նախնական համարելով ր-ով ձևը, այն համեմատում է հուն. τύμβος «գերեզմանին մոտեցած, զառամ» բառի հետ ու բխեցնում *tumb- արմատից։ Սակայն մի կողմից՝ բերված հուն. բառը τύμβος «գերեզմանաթումբ. գերեզման» բառի փոխաբերական գործածությունն է [հմմտ. Frisk, GEW, 2, 944], մյուս կողմից՝ *tumb- ձևը պիտի տար թումպ- (միայն երկրորդաբար կարող էր լինել պ-ի ձայնեղացում մ-ի մոտ, բայց պ-ով ձևն ընդհանրապես չի հանդիպում)։

Թանձր-ը Հյուբշմանը [AG, 1, 448] համեմատում է հիմնականում *tenk- արմատից ծագող ձևերի հետ, որ ընդունում է Աճառյանը [ՀԱԲ, 2², 152—153], նշելով, սակայն, *tṇg'hu- նախաձև։ Զոլտան [Solta, 1960, 223] դրա հիման վրա հայերենի ու-ով հիմք ունեցող ձևը ամենից ավելի մոտ է համարում լիտվ. tánkus «խիտ, հաճախակի» բառին։ Հ.-ե. *tenk-ը և *tengh-ը *ten- «ձգել» արմատի *-k- և *-gh- աճականներով ձևերն են [հմմտ. Pok., 1, 1067—1068]։

Թարմ-ի *tṛ-mo- նախաձևը հունարենի հետ կապվում է միայն «կիսով չափ». վերջինս ունի *-mōn ածանցով ձև (τεράμων) «քնքուշ, դյուրեփ»)։ Զոլտան [Solta, 1960, 350] նշում է միայն ալբանական և հունական ձևերը՝ Պոկոռնու բառարանում [Pok., 1, 1071] բերված լատ. termes «հատված ճյուղ» և հ. իսլ. þyrma «խնայել» (*þormaz «քնքուշ, թույլ») ձևերի պատկանելությունը համարելով կասկածելի։

Թրածեմ-ի (հմմտ. նաև թուրծ «այրու» և թործ «անկյունաձև տաշվածք») զուգահեռներից ±-ով նշանակված են հնչյունապես (*terg'-՝ փխկ. trōg'-ի ու *tōrg'-ի) և իմաստով համեմատաբար հեռու գտնվող ձևերը։ Թուրծ-ի ստուգաբանությունը պատկանում է Լիդենին [Lidén, 1906, 33]. կասկածելի է իմաստային նկատառումներով. թերևս այն համեմատելի է լատ. turgeō, -ēre «ուռած լինել» (հմմտ. այտ և այտնում) բայի հետ, որ ծագում է *tēu- «ուռչել» արմատից։

Աճառյանը [ՀԱԲ, 2, 214], հետևելով Պետերսոնին, թրթուր-ը բխեցնում է *ter- «տրորել, շփել, ծակել» արմատից։ Պոկոռնու բառարանում [Pok., 1, 1076] դրանից առանձնացված է *ter- «մանրող, ծակող միջատ» արմատը (նախորդի հետ նրա ունեցած կապի մատնանշումով), բայց հայ. բառը չի բերված։ Զոլտան նույնպես չունի։

Թառամ (թարշամ) և թոռոմ (թորշոմ) ձևերի զուգահեռները տրված են ըստ ձայնդարձի տարբեր աստիճանների՝ *tṛs- և *tors-։

Tьtēr-> տատր-ակ անցման մեջ բաղաձայնական տեղաշարժի բացակայությունը բացատրվում է արմատի բնաձայնականությամբ։

*To- > դ-, -դ (դ-ա, դո-յն, այ-դ, -դ) և *tū> դու անցումներն օրինաչափ չեն. *t-ի ձայնեղացումն այս դեպքերում դիրքային պայմանավորվածություն ունի։

Թէ-ի (հին ձեռագրերում թե) համեմատությունը հ. անգլ. þe, հ. սաքս. the և լիտվ. te, -t բառերի և մասնիկների հետ պատկանում է Մեյեին [MSL, 9, 154, ծան. և MSL, 23, 142]. այն ընդունում են Աճառյանը [ՀԱԲ, 2², 179—180] և Զոլտան [Solta, 1960, 398—399]։ Հյուբշմանը չի ընդունել՝ եթե-ն համարելով ավելի նախնական։ Կասկածելի է նաև հայ. թէ-ի և հիշյալ բառերի պատկանելությունը *t- ցուցական հիմքին։

Թրթրակ «ճարտարախոս» բառի ստուգաբանությունը պատկանում է Պետերսոնին [LUÅ, 1916, 90. հմմտ. նաև Pok., 1, 1089, Solta, 1960, 250]։

Աճառյանը [ՀԱԲ, 2², 185] կապում է թիռ արմատի հետ՝ նկատի ունենալով կրկնավոր ձևերը և մեկնելով իբրև «շուտ դարձող, ճարտարախոս (լեզու)» [ըստ ՆՀԲ-ի, 1, 823]:

Ընթեռնում-ի զուգահեռները որոշված են ըստ իմաստի մերձավորության՝ խեթ. tar- «ասել, կոչել», լիտվ. tariù, tarti «ասել»: Հայերենը ցույց է տալիս *ter- նախաձև: Հուն. τορέω «ծակում եմ. կտրում եմ. հանում եմ. հստակ հայտարարում եմ» բայը հանդեցվում է *ter- «ծակել» արմատին, թեև իմաստի զարգացումը յուրօրինակ է:

Երեսուն-ի համար սովորաբար արվող *trik'omtə նախաձևը կհանդեցներ *երսուն ձևին, ուստի մենք վերականգնում ենք *trii̯əkomtə նախաձևը:

Արեկ «զորավոր, շատ, առավել, սաստիկ, գերազանց» բառի համար հմմտ. հ. իռլ. trēn (*tregs-no-) «քաջ, ուժեղ», հ. իսլ. þrek(r) «ուժ, քաջություն» և այլն (*treg- «ուժերը լարել»): Պակաս հավանական է հանդեցումը *preg- «ագահ, ուժգին» նախաձևին:

Բուգգեն [Bugge, 1889, 13] և Պոկոռնին [Pok., 1, 1095] երեր-ի նախաձևը գտնում են *tres-ri-, որ, սակայն, պիտի տար *երեռ (հետագա առնմանությամբ երեր?): Ավելի հավանական է երեր-ի հայկական կազմություն լինելը՝ *tres->եր-՝ հետագա կրկնությամբ, մանավանդ, որ այն պահպանվել է չկրկնված ձևով բրբռ. երկծալ և երվերալ բայերի մեջ [ՀԱԲ, 2², 48]:

Վայ, վայեմ բառերի մեջ *u̯> վ- համապատասխանությունը (փոխանակ *u̯>գ-ի) բացատրվում է արմատի բնաձայնականությամբ: Սրանցից վայեմ-ի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ բալթյան ձևերի առկայության՝ լատվ. vajat «վշտացնել, հալածել», հ. վ. գերմ. weinōn «լալ», թեև առկա են տարբեր կազմություններ:

Գետին բառի համար հմմտ. խեթ. utne (Գյոցե, Պեդերսոն), հուն. οὖδας (Շեֆտելովից) [BB, 29, 27 և 40] զուգահեռները, թեև վերջինիս մեջ (οὖ-ի հնչյունական համապատասխանությունը չի բացատրվում (ὀ-Ϝod- ?). հմմտ. նաև հուն. ἔδαφος «գետին» [Frisk, GEW, 2, 442]: Հ.-ե. նախաձևի վերականգնման նոր փորձ է կատարել Համպը [Hamp, 1969a]:

Գիւտ-ի -ւ-ի ծագման հարցը դժվարությունների առիթ է տալիս. այն կարող է լինել հավելական (հմմտ. յատ- և յա-ւ-տ, մատ-չիմ և մաւտ, արածեմ և արաւտ և այլն), ծագել *-n-ից (հմմտ. *o-ngu̯-> աւծ-անեմ, *angu̯t-> աւձ) [Meillet, 1936², 44] կամ լինել հաջորդող շրթնային տարրի ազդեցություն [Պեդերսեն, 1907, 123]:

Գայլ-ի համար հմմտ. գալլ. *u̯ai-lo-s, հ. իռլ. fáel «գայլ»: Ոմանք այն հանդեցնում են *u̯l̥kʷos «գայլ» նախաձևին (*u̯l̥kʷi̯os?), բայց կան հնչյունական դժվարություններ. թերևս կարելի է ենթադրել խառնուրդ (կոնտամինացիա):

Գեղ-ի ստուգաբանությունը [*u̯el- «տեսնել», որտեղից լատ. voltus, բրետ. guelet «տեսք»] պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 1², 532—533]. Մեյեն [MSL, 8, 290] և Պոկոռնին [Pok., 1, 1137] բխեցնում են *u̯el- «ցանկանալ» արմատից: Զոլտան [Solta, 1960, 141—142] հարում է Աճառյանին և իմաստային զարգացման համար բերում տես-ք—տեսօք զուգահեռը:

Գեղմն-ի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ ձայնդարձի աստիճանի ընդհանրության՝ լատ. vellus, հ. անգլ. wil- (wil-mod «ճախարակ» բառի մեջ). Զոլտան [Solta, 1960, 142] գերմանականը չի նշում:

Հայերեն մեծաքանակ ածանցյալների հատկացումը հ.-ե. *u̯el- «խաբել?» արմատին լիովին հավաստի չէ (լատվ. wilt, լիտվ. pri-wilti «խաբել», մ. իռլ. fell «խաբեբայություն», հուն. ἐλεφαίρομαι «խաբում եմ, կործանում եմ», ὀλοφώιος «խաբեբայական, նենգ, չարամիտ»): Մեյեն [MSL, 9, 150] առաջինն է գող և գաղտ բառերը համեմատել բալթիական ձևերի հետ, Աճառյանը [ՀԱԲ, 1², 506—507, 572—573] սրանց ավելացրել է գեղեմ, գաղեմ, գեղտ, գողտ ձևերը: Պոկոռնին [Pok., 1, 1140] *u̯el- «խաբել» արմատի տակ հայերեն ձևերը չի բերում: Հետաքրքրական է նշել, որ հայերենին ամենից ավելի մոտ համարվող բալթիական ձևերը [Solta, 1960, 452—453] բալթիագետները բխեցնում են նաև *u̯el- «ցանկանալ» արմատից [Fraenkel, LEW, 2, 1254—1255]: Հայերեն բառերի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ ձայնդարձի համապատասխան աստիճանի և ատամնային աճականի կամ ածանցի առկայության (հայ. *-d- և բալթ. *-t-): Գող-ի համար հմմտ., թերևս, գոթ. wilwan «կողոպտել», wulwa «կողոպուտ» (*u̯el- «պոկել. կողոպտել»):

Գաղջ-ը դրված է *u̯elk/g- «խոնավ, թաց» արմատի տակ ըստ գերմանական նույնիմաստ զուգահեռների՝ ն. իսլ. valgr, հ. անգլ. wlaec, wlacu, մ. ստ. գերմ. wlec «գոլ, գաղջ», որոնք Աճառյանը [ՀԱԲ, 1², 506 և 571] բերում է որպես հայ. գոլ և լիտվ. vilditi «գոլացնել» բառերի զուգահեռներ. Պոկոռնին [Pok., 1, 1140 և 1145] *u̯el- «գոլ» և *u̯elk/g- «խոնավ, թաց» նախաձևերը դնում է առանձին: Թերևս *u̯elk/g-ը պետք է դիտել որպես *u̯el-ի աճականով ձև և գաղջ-ը կապել գոլ-ի հետ *-k- կամ *-t- (*-dn-?) աճականով:

Վեր-ի համեմատությունը հուն. ἀείρω «բարձրացնում եմ» բայի հետ պատկանում է Մեյեին [BSL, 79, 9] և ընդունվում է Աճառյանի կողմից [ՀԱԲ, 1², 539—540]: Հուն. ἀείρω-ն սովորաբար միացնում են (συν-)αείρω «կապում եմ, միացնում եմ» բայի հետ և բխեցնում *u̯er- «կապել, միացնել» արմատից [Pok., 1, 115]. Ֆրիսկը [GEW, 1, 23] սրանք առանձնացնում է և առաջինի ծագումը համարում չորոշված: Աճառյանը հուն. բայի հետ միասին հիշատակում է նաև *u̯er- «բարձր տեղ» արմատին (հատկապես *-s- աճականով ձևին) պատկանող բառեր (հ. հնդկ. várṣman-, հ. սլավ. врьхъ «բարձունք» և այլն), բայց սրանք ընդհանրապես տարբերվում են հուն. բայից:

Երդումն-ի մերձավոր զուգահեռները որոշված են ըստ իմաստի (հմմտ. օս. ord և հ. սլավ. rota «երդում»): Դժվարություն է հարուցում ճիշտ նախաձևի վերականգնումը. Հյուբշմանը [AG, 1, 443, IF Anz. 10, 45] և, նրա հետևողությամբ, Աճառյանը [ՀԱԲ, 2², 44] տալիս են *ertu- նախաձևը, որ, սակայն, չի համապատասխանում մյուս ձևերին: Մեր վերականգնումը ճիշտ է, եթե *u̯r- կապակցության մեջ *u̯-ն ընկնում է (հմմտ. արգաս-ի մասին ստորև):

Արգաս «խաղողի որթի կտրած ճյուղ» բառի ստուգաբանությունը Աղայանինն է [1974, 30—31] և հնարավոր է, եթե *u̯r- կապակցությունը իրոք փոխվում է րգ-ի, ինչպես *u̯reig'- կամ *u̯reid-s- > երգիծանեմ բառում, այլուր *u̯-ն *r-ից առաջ ընկնում է:

Զգեստ-ի (բրբռ. զեստ) մերձավոր զուգահեռներն են (*t-ով) լատ. vestis, գոթ. wasti (*-i̯ā-ով հիմք), թոխ. B wastsi, wästsi «հագուստ, զգեստ» (վերջինս թերևս նորակազմություն է. հմմտ. Pok., 1, 1173)։ Սակայն հայ. *-u-ով հիմքը մնում է առանձնակի։ Զոլտան [Solta, 1960, 248] հայ. զգեստ-ին ամենից մոտ է համարում լատ. vestis-ը։

Գին-ի մերձավոր զուգահեռներից +-ով նշանակված են *-ē- ձայնավոր ունեցող և իմաստով հայերենին մոտ (լատ. vēnum, հավանաբար նաև հ. հնդկ. vasná «գին», ±-ով՝ *-o- ձայնավոր ունեցող (հուն. ὦνος «գին») կամ իմաստով հեռու (հ. սլ. vьno «օժիտ») զուգահեռները։

Գիշեր-ի ճիշտ նախաձևի վերականգնումը դժվարություն է հարուցում. *-sp-ով և *-k-ով տարբերակներից (*u̯esperos և *u̯ekeros) հայերենը մոտ է համարվում երկրորդին (հմմտ. լիտ. vàkaras և ռուս. вечер «երեկո»), բայց *-k-ի փոփոխությունը -շ-ի միջձայնավորային դիրքում այլ օրինակներ չունի, թեև հնչյունաբանորեն հավանական է (հմմտ. *ēghi-> իժ, որտեղ *-gh->-ժ)։ Միաժամանակ -ի-ի համար ենթադրելի է *-ei->-ē->-ի։ Այս նկատառումով հնարավոր է ենթադրել նաև *u̯eiskheros նախաձև. ճիշտ չէ *u̯eqhero-ն [Solta, 1960, 297], որ պիտի տար *գեխեր։ Պետերսոնը [Petersson, 1921, 231 և հջ.] հանգեցնում է մի այլ արմատի՝ *u̯eik'- «խոնավ», որ լրիվին անհավանական է։

Գարուն բառի համար տալիս են *u̯esr- նախաձևը [ՀԱԲ, 1², 524], բայց այն չէր կարող տալ գարուն, այլ գե(ո̆)ար-ուն> *գերուն։ Թույլ տալ ձայնավորների ներդաշնակություն՝ *գեո̆ար> *գաո̆ար անցում, անհավանական է։ Այդ պատճառով էլ մենք ենթադրում ենք թուլացած ձայնավորով (Schwa secundum) նախաձև։ Հմմտ. նաև արիւն բառի մասին ասվածը։

Աղուես-ի համար որպես մերձավոր զուգահեռ նշանակված է հունարեն ἀλώπεξ-ը, որ ունի ἀ- նախահավելված։ Թերևս այս արմատն առկա է նաև սլավոնականում (հմմտ. ռուս. лиса «աղվես», որի հնչյունական զարգացումը, սակայն, լրիվին պարզ չէ)։

Երգիծանել-ի ստուգաբանությունը (հ. անգլ. wrītan «փորել, քերծել», հ. սաքս. wrītan «պատռել, վիրավորել, քերծել, գրել» և այլն) պատկանում է Ֆրիսկին [Frisk, 1944, 28 և հջ.], որ հայ. *-s-ն սիգմատիկ աորիստի կազմիչ է համարում։ Մեյեն [MSL, 10, 281] բխեցնում է *u̯rēg'-ից [հմմտ. ՀԱԲ. 2, 43. Pok., 1, 1181. Solta, 1960, 245—246]։ Սակայն *u̯rēg'-ը կըտար *երգծանել, եթե, իհարկե, *u̯r-ն ընդհանրապես տալիս է երգ- և ոչ եր- (*u̯-ի անկում]։

Ինչպես որ հնչյունական և քերականական զուգաբանությունների մեջ առանձնացվեցին համեմատաբար հավաստիներն ու կարևորները (այդ թվում՝ հատկապես արխաիկ բնույթ ունեցողները և ընդհանուր նորագոյացությունները), այնպես էլ բառային զուգաբանությունների մեջ հարկավոր է տարբերել այն միավորները, որոնք կազմում են հիմնական բառաֆոնդը և համեմատաբար ավելի կայուն են։ Սրա համար մենք հիմք ենք ընդունել Սվոդեշի 100 բառանոց ցուցակը։ Ստորև բերում ենք համապատասխան աղյուսակը՝ փոխառյալ և անհայտ ծագումով բառերը առնելով փակագծերի մեջ։ Այստեղ միավորների համապատասխանությունը գնահատված է այլ սկզբունքներով, քան այդ արված է բառային ընդհանուր աղյուսակի դեպքում։ Վերջինիս մեջ գնահատման հիմք է ընդունված ծագման ընդհանրությունը, ընդ որում իմաստային նշանակալից շեղումների և տարածքային (հնդեվրոպական-բարբառային) տարբերությունների առկայության դեպքում հայերենի իմաստային հատուկ մերձավորները գնահատված են այնպես, ինչպես կառուցվածքային հատկանիշները (ձայնդարձի միատեսակ աստիճանի, միևնույն աճականի և ածանցի առկայություն). 100 բառի հիման վրա կազմված աղյուսակում գնահատման հիմք է ընդունված իմաստային մերձավորությունը, մանավանդ որ՝ 1) Սվոդեշի ցուցակը կազմված է հենց իմաստային հիմքի վրա, և 2) ծագումնային ընդհանրության առկայությունը ինքնին պայման է եղել գնահատման համար (ինչպես նշվեց, ոչ բնիկ հնդեվրոպական բառերը չեն գնահատվել)։

	Հայերեն	Հ	Ի	Թ	Խ	Ս	Բ	Փ	Թր	Հն	Ա	Ի լ	Վ	Իտ	Կ	Գ
1.	ամեն-այն	±	±	±		—	—			±	—			—	—	±
2.	աճիւն	—	—			—	—			+	—			—	—	+
3.	որով-այն	—	—			—	—			+	—			±	—	—
4.	(կեղեւ)	—	—			—	—			—	—			—	—	—
5.	մեծ	+	+	+	+	—	—			+	+			—	—	+
6.	հաւ	+	+			—	—			±	±			+	±	—
7.	խածանեմ	+	+			±	±			—	—			—	—	—
8.	(սեաւ)	—	—			—	—			—	—			—	—	—
9.	արիւն	+	—	+	+	—	+			+	—			+	—	—
10.	ոսկր	+	+			—?	—			+	+			+	+	—
11.	լանջք	—	—			+	—			—	—			—	—	±
12.	այրեմ	—	±			±	—			—	±?			±?	±?	—
13.	(մագիլ)	—	—			—	—			—	—			—	—	—
14.	ամպ	+	+			—	+			+	—			—	+	+
15.	սառն	—	—			±	±			—	—			—	—	+
16.	գամ	—	—		+?	—	—			—	—			+	—	+
17.	մեռանիմ	+	+			+	+			+	—			+	—	—
18.	շուն	+	+	+		+?	+			+	—			+?	+	+
19.	ըմպեմ	+	+			+	+			+	+			+	+	—
20.	չոր	—	—			—	—			+	—			+	—	+
21.	ունկն	—	+			+	+			+	+			+	+	+
22.	երկիր	—	—			—	—			+	—			—	+	+
23.	ուտեմ	+	+		+	+	+			+	—			+	+	+
24.	ձու	—	+			+	—			+	—			+	+	+
25.	ակն	+	+	+		+	+			+	+			+	±?	+
26.	գէր	—	—			+?	—			—	—			—	—	—
27.	(փետուր)	—	—			—	—			—	—			—	—	—
28.	հուր	—	—	+	+	+	+			+	—			+	—	+
29.	ձուկն	—	—			—	+			+	—			—	—	—?
30.	թռչիմ	+	+		±	—	—			±	—			±	±	+
31.	ոտն	+	+	+	+	+	+			+	—			+	±	+
32.	լի	+	+			+	+			+	+			+	+	+
33.	տամ	+	+	+?		+	+			+	+	+*	+	+	—	—
34.	բարի	—	—			—	—			—	—			—	—	—
35.	(կանաչ)	—	—			—	—			—	—			—	—	—
36.	(մազ)	—	—			—	—			—	—			—	—	—
37.	ձեռն	—	—	+	+	—	—			+	+			±?	—	—
38.	գլուխ	—	—			+	+			—	—			—	—	—
39.	լսեմ	+	+	+		+	+			+	+			+	+	+
40.	սիրտ	—	—		+	+	+			+	—			+	+	+
41.	եղջիւր	+	+	+	+	+	+			+	—		+	+	—	+
42.	ես	—	—		—	—	—			—	—			—	—	—
43.	(սպանանեմ)	—	—			—	—			—	—			—	—	—
44.	ծունր, -գ(ն)	+	+	+	+	—	—			+	—	+		+	—	+
45.	գիտեմ	+	+			+	+			+	—			±	+	+
46.	(տերեւ)	—	—			—	—			—	—			—	—	—
47.	(ընկողմանիմ)	—	—			—	—			—	—			—	—	—
48.	լեարդ	+	+			±	+			+	—			+	±	—
49.	երկայն (-ար)	+	+		±	—	—			+	—			±	—	—
50.	ո(ր)ջիլ	±	—			—	+			—	±			—	—	—

---

* Մեսապերենում։

	Հայերեն	Հ	Ի	Թ	Խ	Ս	Բ	Փ	Թր	Հն	Ա	Իլ	Վ	Իտ	Ի	Գ
51.	մարդ	+	+			—	—			+	—			—	—	—
52.	(բազում)	—	—			—	—			—	—			—	—	—
53.	միս	+	—	+		+	+			±	+			±	±	+
54.	լուսին	—	—			+	—			—	—			+	—	—
55.	լեառն	—	—			—	—			+	—			±	±?	±
56.	բերան	—	—			±	+			+	—			—	+	—
57.	անուն	—	—			—	+			+	+			—	—	—
58.	(պարանոց)	—	—			—	—			—	—			—	—	—
59.	նոր	+	+	+	+	+	+			+	—			+	+	+
60.	գիշեր	—	—			±	+			+	—			—	+	—
61.	(քիթ)	—	—			—	—			—	—			—	—	—
62.	ո-չ	—	—	—		—	—			+	—			+	—	—
63.	մի	±	±	+		—	—			+	—			±	±	±
64.	անձն	—	—			—	—			—	—			—	—	+
65.	տեղ	—	—			—	—			—	—			—	+	—
66.	(կարմիր)	—	—			—	—			—	—			—	—	—
67.	ուղի	—	—			+	—			—	—			—	—	—
68.	արմատ	—	—			—	—			—	—			—	—	—
69.	բոլորակ	—	—			—	—			—	—			—	—	+
70.	աւազ	—	—			—	—			+	—			+	—	—
71.	ասեմ	—?	—?			—	—			+	—			+	—	—
72.	տեսանեմ	+	+			—	—			+	+			+?	+	+
73.	սերմն	—	—			—	+			+	+			+	+	—
74.	նստիմ	+	+			+	+			+	—			+	—	+
75.	(մորթ)	—	—			—	—			—	—			—	—	—
76.	քնեմ (քուն)	+	+			+	+			+	+			+	+	+
77.	փոքր	—	—			—	—			+?	—			+	—	+
78.	մուխ	—	—			+	+			+	—			—	+	+
79.	(կանգնեմ)	—	—			—	—			—	—			—	—	—
80.	աստղ	+	+			—	—			+	—			+	+	+
81.	քար	—	—			—	—			—	—			—	+	±
82.	արեւ	+	—			—	—			—	—			—	—	—
83.	լողանամ	—	—			—	—			+	—			+	±	±
84.	պոչ	—	—			—	—			—	—			—	—	—
85.	նա	—	—		+	+	+			+	—			—	—	+
86.	սա	—	—	+		+	+	+		+	—			+	+	+
87.	դու	+	+	+	+	+	+			+	+			+	+	+
88.	լեզու	+	+	+		+	+			—	—			+	+	+
89.	ատամն	+	+			±	+	+		+	—	+		+	+	+
90.	ծառ	—	—			—	—			+	—			+	—	+
91.	երկու	+	+	+		+	+			+	+			±	+	+
92.	երթամ	+	+		±	—	—			+	—			+	+	+
93.	ջերմ	+	+	+		±	+	+	+	+	+			+	+	+
94.	ջուր	+	—	+		—	—		+	—	—			—	—	+
95.	մեք	—	—			+	+			+	—			—	—	—
96.	զ-ի-նչ	+	—		±	+	—			+	—			±	±	±
97.	(սպիտակ)	—	—			—	—			—	—			—	—	—
98.	ո(վ)	+	+	+?		+	+	+?	+	+	+			±	+	+
99.	կին	+	+	+		+	+			+	+	+		—	+	+
100.	դեղին	—	—			±	—			—	—			—	—	—

Հիմնական բառաֆոնդին պատկանող բառերի զուգաբանությունների աղյուսակի առանձին կետերի վերաբերյալ հարկավոր է նկատի ունենալ հետևյալը․

15. **Սառն** («սառը, ցուրտ. սառույց») և **ցուրտ** համանիշներից ընտրված է առաջինը որպես ավելի հավաստի ստուգաբանություն ունեցող. վերջինս Պոկոռնին [Pok., 1, 597] բերում է *k'eu̯ero- «հյուսիս, հյուսիսային քամի» նախաձևի տակ՝ հենվելով Շեֆտելովիցի համեմատության վրա, բայց սա անհավաստի է համարում Աճառյանը [ՀԱԲ, 4², 463—464]: Թերևս ավելի հավանական է **ցուրտ**-ի հանգեցումը նույն արմատին, ինչ **սառն**-ինը՝ շարժական *s-ով [*sk'ōr-d-> **ցուրտ**?]:

20. **Չոր** և **ցամաք** համանիշներից ընտրված է առաջինը որպես ավելի սովորական. նշենք, որ **ցամաք**-ը Աճառյանը [ՀԱԲ, 4², 448] համարում է ասորական ծագում ունեցող բառ:

34. **Բարի** և **լաւ** համանիշներից բերված է առաջինը, մանավանդ որ **լավ**-ի բալթիական և հունական զուգահեռների միջև ընտրություն կատարելը դժվար է:

45. **Ճանաչեմ** և **գիտեմ** համանիշներից ընտրված է երկրորդը, մանավանդ որ առաջինի հ.-ե. բուն ձևի վերականգնումը դժվարությունների հետ է կապված:

65. **Անձրեւ** և **տեղ** համանիշներից ընտրված է երկրորդը, թեև վերջինիս իմաստն ավելի նեղ է («հորդ անձրև»). առաջինի ծագումն անհայտ է, երկրորդի հնդեվրոպական ծագումը՝ հավանական (Աճառյանի կարծիքը **տեղ**-ի ասորական ծագման մասին հավաստի չէ. հմմտ. ՀԱԲ, 4², 392):

68. **Արմատ** բառի համար հատուկ զուգահեռներ չեն նշվել, որովհետև հ.-ե. *er «շարժ(վ)ել, բարձրացնել» արմատից ծագելու դեպքում [հմմտ. ՀԱԲ, 1², 326—327] այն չունի իմաստային բացահայտ համարժեք (մնում է իր իմաստով առանձնակի), իսկ *u̯(e)rād- «ճյուղ, արմատ» նախաձևին հատկացնելը հնչյունական դժվարություններ է հարուցում:

75. **Մորթ**-ի ծագումն անհայտ է. նրա համանիշները՝ **մաշկ**, **կաշի**, սեմական ծագում ունեն:

78. **Մուխ**-ի **ծուխ** համանիշի ծագումն անհայտ է (խեթակա՞ն): Գերադասություն է տրվել առաջինին:

79. Թեև **յառնեմ**-ը հնդեվրոպական ծագում ունի, բայց իր բազմիմաստությամբ զգալիորեն հեռանում է անգլ. stand բառից, ուստի ընտրված է **կանգնեմ**-ը որպես վերջինիս բացահայտ համարժեք:

83. **Լոգանամ** և **լողանամ** համանիշներից ընտրված է առաջինը որպես ավելի հավաստի ստուգաբանություն և իմաստային մերձավոր զուգահեռներ ունեցող:

84. **Պոչ**, **ագի**, **ձետ** համանիշներից ընտրված է առաջինը՝ որպես ամենից ավելի ընդհանուր իմաստ ունեցող, թեև նրա հնդեվրոպական ծագումը չի հավաստված: **Ձետ**-ը բնիկ հնդեվրոպական բառ է, բայց իմաստային բացարձակ զուգահեռներ չունի:

Բառային զուգաբանությունների ուսումնասիրությունը բերում է հետևյալ եզրակացություններին[4].

1. զուգաբանությունների ընդհանուր աղյուսակում համապատասխան գրկահատում ունեցող 1400 միավորի հիման վրա, ըստ հայերենի հետ ունեցած մերձավորության հնդեվրոպական մյուս լեզվախմբերը դասավորվում են հետևյալ հերթականությամբ (բերվող թվերի մեջ ներառված են հարցականով ձևերը և բացառված փակագծերում բերված երկրորդական զուգահեռները).

1. Հունական՝ 878
2. Գերմանական՝ 783,5
3. Հնդկական՝ 661,5
4. Իտալյան՝ 636
5. Բալթիական՝ 625,5
6. Սլավոնական՝ 579,5
7. Կելտական՝ 542,5
8. Իրանական՝ 456

---

[4] ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքում տեղի ունեցած հայագիտական միջազգային կոնֆերենցիայում կարդացած մեր զեկուցման մեջ բերված տվյալները [FICAL, 1980] այստեղ ճշտված են, ուստի և առկա են գնահատման մասնակի տարբերություններ:

9. Թոխարական՝ 256,5
10. Ալբանական՝ 247,5
11. Խեթական՝ 209
12. Փռյուգական՝ 155,5
13. Իլիրական՝ 125,5
14. Թրակյան՝ 100,5
15. Վենետական՝ 24,5

2. Բառային կարևոր զուգաբանություններում ընդգրկված 100 միավորի հիման վրա՝ ըստ հայերենի հետ ունեցած մերձավորության աստիճանի լեզվախմբերը դասավորվում են նախորդի համեմատությամբ միայն մասնակի տարբերություններով (մասնավորապես իտալյանը տեղաշարժ է ունենում 4-րդից 2-րդ, իրանականը՝ 8-րդից 6-րդ, ալբանականը՝ 10-րդից 9-րդ տեղը).

1. Հունական՝ 56
2. Իտալյան՝ 44
3. Գերմանական՝ 42,5
4. Հնդկական՝ 39
5. Բալթիական՝ 37,5
6. Իրանական՝ 37
7. Սլավոնական՝ 35
8. Կելտական՝ 33,5
9. Ալբանական՝ 19,5
10. Թոխարական՝ 23
11. Խեթա-լուվական՝ 16,5
12. Իլիրական՝ 5
13. Փռյուգական՝ 4
14—15. Թրակյան՝ 2
14—15. Վենետական՝ 9

3. Ի տարբերություն հնչյունական և քերականական զուգաբանությունների՝ բառային զուգաբանությունների դեպքում կենդանի ներկայացուցիչներ ունեցող և միայն մեռած լեզուներով ներկայացված խմբերը դասավորվում են գրեթե որոշակի սահմանագծով, որ բացատրվում է եղած տվյալների բնույթով. կենդանի ներկայացուցիչներ ունեցող լեզվախմբերը գրավում են 1—8-րդ և 10-րդ, միայն մեռած լեզուներով ներկայացվածները՝ 9-րդ և 11—16-րդ տեղերը։

4. Բնականաբար, բառային ընդհանրությունների քննության մեր և Գ. Ջուկայի տվյալները բավականաչափ մոտ են. առանձնապես մոտ են ընդհանուր զուգաբանությունների հիման վրա մեր ստացած տվյալները Գ. Ջուկայի, այսպես կոչված, բացառյալ զուգաբանությունների հիման վրա ստացած տվյալներին։

Բոլոր կարգի տվյալների համադրությամբ կարելի է հանգել հետևյալ ընդհանուր եզրակացություններին.

1. Կենդանի ներկայացուցիչներ ունեցող լեզվախմբերից բոլոր տվյալներով հայերենին ամենից ավելի մոտ է հունականը, ամենից ավելի հեռու՝ ալբանականը. արևմտյան խմբի լեզուները, հեռու լինելով հայերենից կառուցվածքային տեսակետից, բառապաշարով նրան մեծ չափով մոտենում են։

2. Միայն մեռած լեզուներով ներկայացված խմբերից համեմատաբար կայուն են թոխարականի, խեթա-լուվականի և վենետականի տվյալները. առաջին երկուսը բավականաչափ մոտ են հայերենին՝ հնչյունապես զիջելով փռյուգերենին և թրակերենին. վենետականը գրավում է հայերենի նկատմամբ ամենահեռավոր դիրքը։

5. ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ԽՄԲԵՐ

Ինչպես նշվել է, Կ. Դ. Բաքի հնդեվրոպական համանիշների բառարանում հայերենին գրեթե տեղ չի տրվել, իսկ Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» մեջ կատարված խմբավորումը հենվում է լոկ հայերեն բառերի առկա իմաստների վրա։ Հ. Աճառյանը չի քննարկում հնդեվրոպական բառիմաստային խմբերի հետ հայերենի բառիմաստների ունեցած փոխհարաբերությունը, եղած իմաստային անցումները, հնդեվրոպական մյուս լեզուների համապատասխան խմբերի նկատմամբ հայերենի իմաստների բաշխումը։ Հայերենի բառային զուգաբանությունների՝ վերևում բերված ցանկում զգալի չափով հաշվի են առնված նաև իմաստային առնչությունները, բայց հատուկ ուշադրություն չի դարձված հնդեվրոպական բառիմաստային խմբերի և հայերենի բառերի՝ դրանց մեջ գրաված դիրքի հարցերին։ Մինչդեռ սա կարևոր է ոչ միայն հայերենի բարբառային դիրքը որոշելու, այլև հայերենի նախնիների մշակութային վիճակը և մոտավոր մակարդակն ու առանձնահատկությունները պարզելու տեսակետից։

Նախորդ շարադրանքի ընթացքում մենք առիթ ունեցանք խոսելու Բաքի բառարանում առանձնացված խմբերի մասին և բերեցինք դրանց պատկանող որոշ բառիմաստներ։ Այստեղ մեր ուշադրության կենտրոնում կլինի հայերենի իմաստային առնչությունների հարցը։

Ըստ Բաքի առանձնացրած 22 թեմատիկ խմբերի բառիմաստները դասավորված են գլխավոր և ավելի մանր բաժանումներով, ընդ որում բացի հիմնական թվային նշանակում ունեցող իմաստային միավորներից երբեմն միևնույն թվահամարի տակ տրվում են համանիշներ. սովորական (բուն) համանիշները ստորև բերվող խմբերում առանձնացվում են ստորակետերով, Բաքի մոտ տրվող և կետ-ստորակետով առանձնացվողները՝ միջակետերով։ Պետք է նշել, որ թվահամարներով և առանց թվահամարների տարբերվող միավորների առանձնացման հիմունքները ոչ բոլոր դեպքերում են որոշակի։ Միաժամանակ, Բաքը չունի իմաստների դասակարգման ընդհանրական չափանիշներ, հաճախ առաջնորդվում է կամ անգլերենի լեզվազգացողությամբ, կամ հունարենի և հին հնդկերենի տվյալներով, ուստի և այս կամ այն իմաստի վերագրումը այս կամ այն խմբին և ենթախմբին որոշ դեպքերում պայմանական է։ Իհարկե, մենք հնարավորություն ունեինք կատարել իմաստային հստակ սահմանազատում՝ հենվելով մեր համընդհանուր լեզվաբանական կաղապարի կատեգորիաների վրա. սակայն այս դեպքում հնարավոր չէր լինի հայերենի տվյալները անմիջական համեմատության մեջ դնել ցեղակից լեզուների համապատասխան տվյալների հետ։ Այս նպատակով էլ, հրաժարվելով նման հետևողական դասակարգումից, մենք աշխատել ենք ըստ հնարավորին ճշգրտորեն հետևել Բաքի դասակարգմանը։ Սրա հետևանքը եղել է այն, որ միևնույն բառը երբեմն ընկել է տարբեր թեմատիկ խմբերի և ենթախմբերի մեջ՝ ոչ միայն բառի բազմիմաստության, այլև իմաստային ոչ հստակ խմբավորման հետևանքով։ Նման դեպքերում բառը մեկ անգամ (ըստ հիմնական իմաստի) բերվում է առանց փակագծերի, իսկ երկրորդ և երրորդ անգամ բերվելիս (այդ թվում բարդ և ածանցավոր բառերի կազմում) առնվում է միջակ փակագծերի մեջ։ Միջակ փակագծերի մեջ են առնվում նաև նորակազմ ձևերը։ Բացի վերևում նշվածից՝ ստորև բերվող ցանկը կազմելիս մենք առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով.

1) Ամեն մի բառահոդվածում բառերը դասավորվում են ըստ իմաստային մերձավորության աստիճանի՝ սովորաբար Բաքի տվյալներին համապատասխան. իմաստային գրեթե համարժեք տարբերակները բերվում են այբբենական կարգով։

2) Հայերենի հին և միջին շրջաններին պատկանող (գրաբար և միջին հայերեն) բառերը տրվում են հին, աշխարհաբար և բարբառային բառերը՝ նոր ուղղագրությամբ. վերջիններս բերվում են առանց խիստ տառադարձության և ունեն բ. նշումը։

3) Բառերն ըստ հնարավորին բերվում են արմատական ձևով, այսինքն՝ արմատական բառերին առավելություն է տրվում ածանցավոր և բարդ բառերի նկատմամբ։

4) Ածանցավոր, բարդ և հոգնաձև բառերի բաղադրիչները ըստ անհրաժեշտության առանձնացվում են գծիկով. գծիկ է դրվում նաև առանձին գործածված բաղադրամասերի կողքին։

5) Սովորական (կլոր) փակագծերի մեջ տրվում են լրացուցիչ բառաձևերը, բառատարբերակները և բառամասերը, ընդ որում առաջին երկուսը՝ բացատով, երրորդը՝ առանց բացատի։

6) Նոր գրական լեզվում չգործածվող, դժվար հասկանալի և համանուն բառերը, այլև բազմիմաստ բառերի տարբեր առումները համառոտակի բացատրվում են, ընդ որում բացատրությունները առնվում են չակերտների մեջ։

7) Ենթադրական բառաձևերը և բառիմաստները օժտվում են աստղանիշով (*)։

8) Անգլերենի տարբեր խոսքի մասերի դիմաց ընդհանուր առմամբ տրվում են հայերեն համապատասխան խոսքիմասային ձևերը, թեև դրանք կարող են երկրորդային (ածանցված) լինել. այս դեպքում փակագծերում տրվում են նախատիպ ձևերը (հնչյունափոխված ձևերի դեպքում միջակ փակագծերում բերվում են չհնչյունափոխված ձևերը)։

9) Բաքի բառարանի համապատասխան թվահամարների տակ բերված իմաստների դիմաց հայերենի հնդեվրոպական ծագման բառերի իմաստային համարժեքների բացակայության դեպքում թվահամարը բերվում է՝ օժտվելով գծով (որպես բացակայության նշան)։ Գծեր են դրվում նաև Բաքի կողմից ներմուծված նոր գաղափարների դեպքում (լուցկի, պատառաքաղ, երկուշաբթի, երեքշաբթի և այլն), որպեսզի չներմուծվեն հնդեվրոպացիների մշակույթին անհարիր գաղափարներ։

10) Բաքի բառարանում տեղ չգտած իմաստային տարբերակները տրվում են ամենից ավելի մոտ իմաստների կամ տվյալ ենթախմբի ամենավերջին իմաստի թվահամարների տակ՝ 1.111, 1.112, 1.113 և այլն ձևով։ Կասկածելի ստուգաբանությամբ բառերն օժտված են հարցականով։

11) Բաքի բառարանում տեղ չգտած դերանվանական և սպասարկու բառերն ու մասնիկները բերվում են մեր կողմից առանձնացված լրացուցիչ (23-րդ թեմատիկ) խմբի մեջ։

1. Ֆիզիկական աշխարհ

1.1—. 1.11 նիւթ.

1.21 երկիր (?). 1.212 հող, գետին. 1.2121 բունձ «հողակոշտ». 1.213 փոշի (?). 1.214 աղտ [աղտիւր (եղտիւր) «ճահիճ, ջրարբի մարգագետին»], գայռ «ցեխ, տիղմ», գոռ «ցեղ, գայռ», մաւր «ճահիճ, ցեխ, տիղմ», միծ «ցեխ, հոտած տիղմ», տիղմ (?), բ. տիլ «տիղմ, ցեխ» (?), բ. քոռ «ցեխ». 1.215 աւազ. 1.22 լեառն (?). սար. բլուր. թումբ (?). 1.23—. 1.24—. 1.125 —.1.26 ցամաք (?). 1.27 եզր.

Վաղնջահայերենը բնութագրվել է բաղաձայնական համակարգի հետևյալ փոփոխություններով. 1) հնդեվրոպական քմայնացած ետնալեզվայինների առաջնալեզվայնացման, հատկապես շփականացման և կիսաշփականացման պրոցեսը հասնում է իր ավարտին, այսինքն՝ հ.-ե. *ǵh, *ǵ, *ḱ բաղաձայնները համապատասխանաբար փոխվում են j-ի (ձ) ու, միջին դիրքում, z-ի (զ), c-ի (ծ) և s-ի (ս). 2) ամենայն հավանականությամբ իր բոլոր հիմնական առանձնահատկություններով ներկայացված է հնդեվրոպական բաղաձայնների հայկական տեղաշարժը, այսինքն՝ խուլերը վերածվել են շնչեղ խուլերի, ձայնեղները՝ խուլերի, շնչեղ ձայնեղները՝ ձայնեղների (թերևս շնչեղության պահպանումով որոշ խոսվածքներում՝ առանց հնչույթային տարբերակման. պարզ չէ, *p>h փոփոխությունը տեղի՞ էր ունեցել, թե՞ առկա էր որևէ միջակա հնչյուն, առանձնապես f-ն (ավելի քիչ հավանական է ենթադրել *p^c, եթե նկատի առնենք, որ հնդեվրոպական բարբառային շնչեղ խուլ *ph-ից եկած p^c-ն մնում է անփոփոխ). այսպիսով տեղի են ունեցել հ.-ե. *p, *t, *k>վ.-հ. *f(?),*t^c,*k^c, հ.-ե. *b, *d, *g> վ.-հ. *p, *t, *k, հ.-ե. *bh, *dh, gh>վ.-հ. *b(h), *d(h), *g(h) փոփոխությունները. հավանական է հ.-ե. խուլերի ձայնեղացումը ձայնորդներից հետո՝ *rp>rb, *rt>rd և այլն. 3) դեռևս հնդեվրոպական շրջանում հայ-հունա-հնդիրանական տարածքում տարբերակված են եղել շնչեղ խուլերը, որոնք հայերենում կրել են հիմնականում պարզ խուլերից տարբեր փոփոխություններ՝ *ph, *th, *kh>p^c, t^c, x (փ, թ, խ), ընդ որում *th-ն, ի տարբերություն պարզ *t-ի, չի ձայնեղացել ձայնորդներից հետո՝ *rth>rt^c, բայց *rt>rd. 4) հնդեվրոպական հայ-հունա-իրանական տարածքում *s-ի թուլացման և h-ի վերածվելու պրոցեսը հայերենում հասնում է իր ավարտին, ընդ որում անհայտ է, h-ն ընկնո՞ւմ է միջին վանկերում, թե՞ այդ անկումը տեղի է ունենում ավելի ուշ. *s>h փոփոխության հետևանքով հայերենից դուրս եկած հին *s-ին փոխարինում է *ḱ-ի շփականացմամբ ծագած s-ն (ս)։

Այս փոփոխությունների հետևանքով վաղնջահայերենում պետք է հաստատվեր հնդեվրոպականից մեծապես տարբեր բաղաձայնական համակարգ, որտեղ մեծ թիվ էին կազմում շփականները, կային սուլական կիսաշփականներ, և բացակայում էին շրթնայնացված ետնալեզվայինները (ընդհանրապես վերջինները նախահայերենում միայն առանձին հետքեր են թողել, և վաղնջահայերենում շրթնային տարրը հանդես է եկել առանձին արտացոլումների ձևով՝ u, w). շչական շփականները և կիսաշփականները, ամենայն հավանականությամբ, հանդես են գալիս հետագույն շրջանում՝ գերաղանցապես երկրորդ քմայնացման հետևանքով։

Այսպիսով, վաղնջահայերենի համար կարելի է վերականգնել բաղաձայնների հետևյալ տիպերը.

*b(h)	*d(h)	*g(h)	*j(h)		
*p	*t	*k	*c		
*p^{c}	*t^{c}	*k^{c}	*c^{c}		
*f (β)?	*θ (*δ)?	*x (*γ?)	*s	*z	*h

Հայտնի չէ, հնդեվրոպական ազատ (բազմատեղ՝ տարբեր վանկերի վրա ընկնող) շեշտի՝ հիմնականում վերջընթեր դառնալու պրոցեսը քննարկվող շրջանում ավարտվե՞լ է արդյոք, թե՞ ոչ, բայց որ այդ պրոցեսը մեծապես նախապատրաստվել է այս շրջանում, կասկած հարուցել չի կարող։

Վաղնջահայերենին պետք է վերագրել հնդեվրոպական վանկի այնպիսի փոփոխությունը, որ այն այլևս չէր վերջանում պայթականներով։ Հայտնի չէ, տեղի ունեցե՞լ էր արդյոք հնդեվրոպական *r-ի՝ հայերենին հատուկ դրափոխությունը՝ *dhabhro->դարբին։

2. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Վաղնջահայերենի քերականական կառուցվածքը մեզ հայտնի է շատ ավելի քիչ չափերով, քան հնչյունականը։ Եթե հնչյունական կառուցվածքի վերաբերյալ եզրակացություններ կարելի է անել առանձին բառերի վերականգնման տվյալների, բառափոխառությունների հիման վրա, ապա քերականական կառուցվածքի վերականգնման համար անհրաժեշտ են բառակապակցությունների վերականգնման տվյալներ։ Սակայն բառակապակցությունների փոխառությունը հազվադեպ երևույթ է, արխաիկ բարդությունների ուսումնասիրությունն էլ անհրաժեշտ փաստեր չի ընձեռում։ Կարելի է անել միայն որոշ ընդհանուր եզրակացություններ հնդեվրոպական լեզվի վերականգնման տվյալների ու հայերենի ուշ ավանդված փաստերի համեմատության հիման վրա՝ կատարելով ստացված արդյունքների ժամանակագրական որոշ տարաբաշխում։ Այս դեպքում մեզ օգնում են հնչյունական փաստերը ևս, որքանով ձևաբանական փաստերը պայմանավորված են հնչյունական փաստերի ազդեցությամբ։

Վաղնջահայերենը, անշուշտ, պահպանել էր հնդեվրոպական ձևաբանական կառուցվածքի թեքականությունը։ Սրա հետ միասին այն պետք է բնութագրվեր նախամասնիկների խիստ փոքր դերով և վերջամասնիկների առատությամբ։

Ի՞նչ հավանական փոփոխություններ պետք է ենթադրել վաղնջահայերենի ձևաբանական կառուցվածքի համար. 1) հավաստիորեն կարելի է պնդել, որ այս շրջանում ավարտվում է միջմասնիկավորման վերացման պրոցեսը՝ բայական *-ne- միջամասնիկի և *-ne- վերջամասնիկի՝ վաղուց սկսված փոխազդեցության հետևանքով. առաջինը փոխարինվում է վերջինով. 2) ձայնորդների հնդեվրոպական համակարգի քայքայման հետևանքով *-i-ով և *-u-ով հիմքերը անցնում են ձայնավորային հիմքերի շարքը, իսկ *-r-ով, *-l-ով, *-m-ով, *-n-ով վերջացող հիմքերը ստանում են հատուկ հոլովման տիպերի արժեք. եթե նկատի առնենք, որ բառավերջային *-m>-n փոփոխությունը հիմքեր է ունեցել նախահայերենում, ապա կարելի է ասել, որ վաղնջահայերենում արդեն առկա է *-r, *-l, *-n ձայնորդներով հիմքերի հատուկ հոլովումը. 3) նկատի ունենալով ինչպես հնդեվրոպական շրջանում նկատվող միտումները (հմմտ. նաև հին հնդկերենի հոլովման առանձնահատկությունները), այնպես էլ հայերենի *s>h փոփոխությունը՝ թերևս h-ի մասնակի անկմամբ, պետք է կարծել, որ վաղնջահայերենում պայթականով վերջացող հիմքերը եզակի ուղղականում լրիվին զուրկ էին *s վերջավորությունից. սրա հետևանքով փոխվում է հնդեվրոպական պայթականով վերջացող անբուն (աթեմատիկ) և բնավոր (թեմատիկ) հիմքերի ընդհանուր փոխհարաբերությունը. հայցականի վերջավորության տարածմամբ ուղղականի վրա որոշ բնավոր հիմքեր անցնում են -n-ով հիմքերի շարքը. հնդեվրոպական *-es-ով հիմքերի համար ևս պիտի ենթադրել բնավոր (թեմատիկ) հիմքերի հետ ուժեղ փոխազդեցություն. սրա հետ է կապված թերևս անբուն ձևերի շարժական շեշտի անցումը բնավոր հիմքերին. 4) ամենայն հավանականությամբ վաղընջական շրջանին պետք է վերագրել հիմքերի և վերջավորությունների մեջ իրար հետ հերթագայվող հ.-ե. *e և *o ձայնավորներից մեկնումեկի գերակշռություն ստանալը հոլովման և խոնարհման համակարգերում. ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ բնավոր հոլովման մեջ գերակշռություն է ստանում o-ն, բնավոր խոնարհման մեջ՝ e-ն. բնավոր և անբուն հիմքերի փոխազդեցության ուժեղացման դրսևորում պետք է համարել հ.-ե. *-no-ով, *-ro-ով հիմքերի *-ni-ով, *-ri-ով տարբերակների առկայությունը. 5) քանի որ այս շրջանում հնդեվրոպական վերջավորությունների անկումը բացառվում է, ուստի պետք է կարծել, որ հնդեվրոպական հոլովման և խոնարհման վերջավորությունները հիմնականում պահպանվել են՝ ենթարկվելով բաղաձայնների տեղաշարժի, *s>h փոփոխության և հնչյունական այլ երևույթների հետ կապված մասնակի փոփոխությունների, այսինքն՝ հոգն. *-es-ը դարձել է *-eh, եզ. սեռ. *-osi̯o-ն՝ *-ohyo (ուշ՝ *-oyo), գործ. *-bhis-ը՝*-b(h)ih, խոնարհման ներկայի հգն. 1-ին դեմքի *-mes-ը՝ *-meh, 2-րդ դեմքի *-te-s-ը՝ *-te-h և այլն. 6) դժվար է որևէ բան ասել սեռային տարբերությունների և երկակի թվի մասին. հնարավոր է, որ այս շրջանում դեռևս առկա էին արական, իգական, ու չեզոք սեռերի և եզակի, երկակի ու հոգնակի թվերի հակադրությունները. 7) բայի մեջ հնդեվրոպական կատարյալի (պերֆեկտի) առկայության մասին որևէ տեղեկություն չկա, բայց կասկած չի կարող լինել ներկայի և աորիստի հիմքերի հակադրության շարունակման մասին, ընդ որում *s>h փոփոխությունը պետք է հիմք տար, այսպես կոչված, սիգմատիկ (*s-ով) աորիստի համապատասխան փոփոխության համար. 8) թերևս այս շրջանին է վերաբերում հնդեվրոպական *-sk-ով (*sk´-ով) հիմքերի դերի մեծացումը, հատկապես հաստատուն կերպով ապառնու արժեք ստանալը. *sk (*sk´)>c փոփոխությամբ ստեղծվում է ցոյական հիմքերի հետագա համակարգը։

3. ԾԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Շարահյուսական առումով վաղնջահայերենը պիտի պահպանած լիներ հնդեվրոպական լեզվի հիմնական առանձնահատկությունները։ Ինչպես ցույց է տալիս հնդեվրոպական այլ լեզուների, հատկապես հին հնդկերենի և հին հունարենի համեմատությունը հին հայերենի հետ, վերջինս դեռևս հիմնականում պահպանել է հնդեվրոպական նախադասության համեմատաբար ազատ շարադասությունը. բնականաբար այդ վիճակը պետք է լիներ նաև վաղընջահայերենում: Սակայն եթե խնդրառությունը, մասնավորապես ձևական խնդրառությունը հին հայերենում խիստ կարևոր դեր է կատարում, այսինքն՝ բառերի հոլովման ձևավորումը հաճախ կախված է ոչ այնքան նախադասության ընդհանուր իմաստից, որքան խնդրառու բառի բնույթից, ապա վաղնջահայերենում խնդրառության դերը համեմատաբար թույլ պիտի եղած լինի: Ընդհակառակն, ուժեղ է եղել համաձայնության դերը. մասնավորապես պետք է նշել որոշչի և որոշյալի՝ սեռով, թվով ու հոլովով համաձայնելու պարտադրականությունը, որ հին հայերենում որոշ չափով խախտված է. նախադաս որոշիչը կարող է չհամաձայնել որոշյալի հետ, այլ դեպքերում էլ համաձայնությունը տեղի է ունենում գերազանցապես ըստ հոլովի, հաճախ նաև ըստ թվի, բայց, ինարկե, ոչ ըստ սեռի, որ հին հայերենում բացակայում է: Վերջինում նոր երևույթ է նաև հինգ և ավելի թվականների հոլովումը, որ հնդեվրոպականում չի եղել. պետք է կարծել, որ վաղնջահայերենում դեռևս պահպանվել է հնդեվրոպական վիճակը: Անձնական դերանունների որպես ենթակա գործածվելը կախված է եղել ենթական ընդգծելու պահանջից, ինչպես հնդեվրոպականում և հին հայերենում:

Քանի որ հին հայերենը չունի հնդեվրոպական հարաբերական *i̯o- դերանունը, պետք է կարծել, որ *i̯o-ի դերի թուլացումն արդեն առկա է եղել վաղնջահայերենում՝ ուժեղացնելով հարցական դերանունների հարաբերական դերը: Միաժամանակ շարունակել են կարևոր դեր խաղալ դերբայական դարձվածները՝ ավելի հաճախակի հանդես գալով երկրորդական նախադասությունների փոխարեն:

4. ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

ա) ՎԵՐՋԱԾԱՆՑՈՒՄ

Թեև բառակազմությունը հնդեվրոպական լեզվում ակնհայտ ձևաբանական արժեք ունի և համեմատաբանների կողմից քննվում է հիմքերի կազմության մեջ, բայց նկատի առնելով հնդեվրոպական հիմքերի՝ վաղնջահայերենում կրած փոփոխությունները՝ մենք նպատակահարմար ենք համարում այն քննել առանձին, մանավանդ որ այս դեպքում տվյալներն ավելի շատ են:

Ինչպես ամեն մի լեզու, այնպես էլ վաղնջահայերենը պետք է ունենար կենդանի և քարացած, գործուն և ոչ գործուն, արդյունավետ և ոչ արդյունավետ ածանցներ: Այսպես, հայտնի է, որ ազգակցական անունների մեջ հանդիպող հ.-ե. *-tēr ածանցը դեռևս հնդեվրոպական շրջանում դադարել էր գործուն ածանց լինելուց: Որոշ ածանցներ համապատասխան անածանց հիմքերի բացակայության պայմաններում այլևս չէին գիտակցվում որպես այդպիսիներ: Եթե փորձենք հայերենի հնդեվրոպական ծագման բառերի՝ առաջին մասում բերված ցանկի հիման վրա որոշել վաղնջահայերենի՝ հնդեվրոպականից ժառանգած անվանական ածանցները, ապա կստացվի հետևյալ պատկերը. վաղնջահայերենում մասամբ անգործածական են դարձել հնդեվրոպական որոշ ածանցներ, երկրորդները շարունակում են գործել գրեթե նույն չափով, երրորդների գործառության շրջանակները լայնացել են. պետք է նշել հատկապես հնդեվրոպական հիմքակազմիչ տարրերի և գործուն ածանցների զուգորդումների հիման վրա հանդես եկած և լայն գործածություն ստա-

ցած ածանցները: Վաղնջահայերենի ածանցների՝ ստորև բերվող ցանկում տրվում են վերականգնված վաղնջահայ ձևերը՝ համապատասխան հնդեվրոպական և հին հայկական (գրաբարյան), հազվադեպ նաև բարբառային ձևերով հանդերձ, ընդ որում որպես օրինակներ բերվում են գրանցված գրաբարյան կամ բարբառային բառերը, անհրաժեշտ դեպքերում՝ համապատասխան վերականգնումներով:

Վաղնջահայերենը բավականաչափ հարուստ է բնավոր (թեմատիկ) հիմքեր կազմող ածանցներով.

1) Վ.-հ. *(i)i̯oh (ար.), *-(i)i̯on (չեզ.), *-(i)i̯ā (իգ.) [հ.-ե. *-(i)i̯os, *-(i)i̯om, *-(i)i̯ā]> հ. հ. -ի. այս երկրորդային ածանցը կազմել է գոյականներից և բայերից ածականներ և ածականացված գոյականներ. վաղնջահայերենում այն եղել է դեռևս գործուն և արդյունավետ ածանց, հին հայերենում դադարել է արդյունավետ լինելուց, թեև պահպանվել են ածանցելի և ածանցյալ հիմքերի հակադրություններ. ա) գոյականներ՝ ալի-ք, աղաւնի, աղ-աւր-ի-ք (*աղ-աւր՝ աղամ-ից), ամուրի, այգի, անդի (անդեայ) «տավար» (հմմտ. անդ), արծուի, աւձիք, բարտի, բորենի, գարի (?), գերի (հմմտ. գերեմ), գինի, երկ-սայրի (հմմտ. սայր), կաղնի (հմմտ. կաղին), կոգի «կարագ» (նախապես *«կովային»=հ. հնդկ. gáv-ya-. հմմտ. կով), հանի «տատ» (հմմտ. հան), հացի, հոգի (հմմտ. հոգ, հով), հոլանի, մատանի (հմմտ. մատն), մարի, մաքի, յղի, ներքինի (հմմտ. ներքին), շողի-ք (?), ոզնի, որդի, (ամ-, մի-)որձի (հմմտ. որձ), ուղի (հմմտ. աւղ, որ, սակայն, կապը արդեն խզել է ուղի-ի հետ), սամի, սարի-ք «շղթա, կապանք», ստորի «ջուլհակային հաստոցի գլան», տեղի (հմմտ. տեղ<ետեղ-), ցաքի «մի բույս» (հմմտ. ցաք, ցախ), քանի (հմմտ. քան), քեղի, քենի, քեռի. այստեղ հատուկ խումբ են կազմում ծառանունները՝ բարտի, կաղնի, հացի, մայրի, ավելի ուշ՝ համաբանությամբ՝ եղևնի. համեմատաբար ուշ է տարածում ստանում -ենի ածանցը, որ ոմանք ուրարտական ազդեցությամբ են բացատրում[1]. փաղաքշական արժեք ունեն հանի-ն՝ կազմված հան-ից, մոզի-ն (հմմտ. հուն. μοσχίον «հորթ, հորթուկ»՝ μόσχος «հորթ, երինջ» բառից), այլև, թերևս, բարբառային ապի-ն (հմմտ. հ.-ե. *appa՝ հուն. ἄππα «հայրիկ, ապի»). բ) ածականներ՝ ամայի (հմմտ. ամամ «թափել, լցնել»), արի (հմմտ. այր, ար-, ար-ու), աւելի (հմմտ. յաւելում), կենդանի (հմմտ. կենդան-անամ, ան-կենդան), հոլանի, ձրի (հմմտ. ձիր), մոլի (հմմտ. մոլիմ), յղի, (ա)նաւթի, փանաքի «խեղճ» (հմմտ. փանաք), փնթի[2]: Հնարավոր է ենթադրել, որ ա-ով հիմքերի վրա տարածված սեռական-տրականի -ի վերջավորությունը ծագում է այս ածանցից: Հ. հ. -ի-ն հաճախ հանդես է գալիս հոգնակիի -ի-ք ձևով՝ աւետիք (հմմտ. աւետեմ), նստիք «գահավորակ» (հմմտ. նստիմ), (հաց)ուտիք (հմմտ. ուտեմ), այլև գործիք, հարսանիք, ցուիք և այլն: Հավանաբար *-eni̯o- ձևից է ծագում -նի ածանցը՝ գաղտնի (այլև ուշ յայտնի, նախնի):

Մի շարք դեպքերում այս ածանցի *-i̯- տարբերակը՝ ա) ենթարկվել է դրափոխության, բ) վերածվել է ջ-ի, գ) քմայնացրել է նախորդ պայթականները և հետագայում դրանք վերածել համապատասխան շփականների՝ *ghi̯> ջ. *gi̯> ճ,*ki̯ >չ. վաղնջահայերենում վերջին երկու փոփոխությունները դեռ չեն կատարվել, բայց դրափոխության երևույթը հավանաբար արդեն առկա է եղել՝ այլ (հ.-ե. *al-i̯o-), այր (հ.-ե. *anri̯o-?), ձայն (հ.-ե. *gh'hu̯ebu̯i̯i-), ճշոյլ (համա. շող), ցայլ, թերևս նաև քայլ (հ.-ե. *sklii̯- և *kli̯i-)։ Վերջին երկու դեպքերի համար բերենք մի քանի օրինակ՝ անուրջ <*onōri̯o-, մէջ <*meidhi̯o- <*medhi̯o-, ստերջ <*ster-dhi̯a (համա. ստերդ), լիճ <*lēgi̯ā (համա. լիկ), պոչ <*bou̯oki̯o-(?) և այլն։

---

[1] Վ. Բենեցյանուն V. Bănăteanu, 1960] բխեցնում է ուրարտական աղբյուրից:

[2] Հ. Աճառյանը [ՀԱԲ 4^2, 507], ինչպես նշվել է, համարում է բարդություն՝ փին+թի, բայց ավելի հավանական է թ-ի աճական լինելը:

Որոշ դեպքերում էլ այս ածանցն ունեցող բառերը ենթարկվել են հետագա բաղադրության և նույնիսկ հին հայերենում պահպանել իրենց վերջնաձայնավորը՝ միա-յն <* smii̯ā-ից (համա. մի)։

2) Վ.-հ. *-ik-i̯ā (հ.-ե. *-ik-i̯ā. համա. հ. սլ. которичь «կռվարար»)[3] > հ. հ. -իչ. բաղադրյալ ածանց, որ կազմել է գործողի անուն և հետագայում լայնորեն տարածվել է ենթակայական դերբայի արժեքով՝ արարիչ, բրիչ, գրիչ, գործիչ, լուծիչ, ստեղծիչ և այլն. այս ածանցի տարբերակը պետք է համարել համեմատաբար քիչ տարածված *-uk-i̯ā -ն> հ. հ. -ուչ՝ անյարուչ «չմիացող, անմիաբան», ընկալուչ «ընդունող. փեսա» (համա. ընկալիչ), բաբաուչ, մարբուչ, սրտառուչ, տեսուչ։

3) Վ.-հ. *-kʻ(o)- [հ.-ե. *k(o)-]> հ. հ. -ք. հնդեվրոպական լեզվում այս ածանցը կազմել է գոյականներից ածականներ ու գոյականներ (վերջիններս՝ հաճախ փոքրացուցիչ-փաղաքշական արժեքով) և ածականներից գոյականներ. վաղնջահայերենում հավանաբար արդեն դարձել է քիչ գործուն ածանց՝ տալով փոքրաթիվ նոր կազմություններ, իսկ հին հայերենում ընդհանրապես դադարել է այդպիսին լինելուց. սրան մասամբ նպաստել է միևնույն ծագումն ունեցող իրանական փոքրացուցիչ-փաղաքշական -ak, -īk, -ōk, -ūk (>-ակ, -իկ, ոյկ, -ուկ) ածանցների տարածումը. ատոք, բարւոք (համա. բարի), բողոք, բորբոք (համա. բորբ), թանաք (համա. թան), թուք (համա. բրբռ. թու), ճերիք (?), ոլոք, ողոք, շուք (?), սլաք, ցամաք (?), փանաք «խեղճ», փորոք, փուք «օդը», քուք «ծեծելու փայտ»։ Առանձին դեպքերում հին հայերենում այս ածանցը պահպանվել է միայն բաղադրություններում՝ արտաք-ս (և արտաքոյ), ներք-ին (և ներքոյ)։ Թերևս հ.-ե. *-ko-ի մի տարբերակն է եղել *kho-ն որ հանդիպում է գլուխ,-ոյ բառում (հ.-ե. *gōlu-kho-)։ Եթե ճիշտ է պոչ բառի ստուգաբանությունը՝ հ.-ե. *bou̯oki̯o-ից [*b(h)(e)u- «փչել, ուռչել»], ապա սկզբնական *-ko- ածանցի *-k-ն քմայնացել է հնագույն հայերենում *-i̯-ի ազդեցությամբ (համա. փուք—փչել)։

Մի շարք բառերում առկա -կ-ի համար ենթադրվում է սկզբնական *-g(o)- մասնիկ, որ կարող է լինել կամ *-ko-ի տարբերակը, կամ աճականի և հիմքակազմ *-o-ի զուգորդում՝ բոկ (*boso-go-), տոկ (*dou̯ōg- . համա. տեւ-եմ) և այլն։ Վաղնջահայերենում այն հավանաբար արդեն չի գիտակցվել որպես անկախ ածանց։

4) Վ.-հ. *-lɔh (ար.), *-lon (չեզ.) *-lā (իգ.) (հ.-ե. *-lōs, *-lōm, *-lā)> հ. հ. -լ, սեռ. -ոյ. այս ածանցը հնդեվրոպական շրջանում կազմում էր անուններից անուններ՝ ընդլայնելով ածանցելի հիմքերը, իսկ այն տարածքում, որին պատկանում էին նախահայերենը, նախասլավոներենը և այլն, անուններ էր կազմում նաև բայերից. վաղնջահայերենում այս գործառությունը ընդարձակվել է՝ հնդեվրոպական դերբայական բուն մասնիկների արտամղումով. նրանով կազմվում են՝ ա) անորոշ՝ ածել,-ոյ, բերել,-ոյ և այլն, բ) անցյալ դերբայ՝ ածեալ,-ոյ, բերեալ,-ոյ, այլև գ) *-i̯o- (>հ. հ. -ի) մասնիկի հաբակցությամբ (*-lii̯o- >հ. հ.-լի)՝ ապառնի դերբայ՝ երբեմն ենթակայականի արժեքով՝ ածելի, բերելի և այլն և դ) -ց-ի հարադրությամբ՝ բուն ապառնի դերբայ՝ ածելոց, բերելոց և այլն։ Անմիջաբար հնդեվրոպականից եկող *-lo-ով և *-lā-ով կազմությունները համեմատաբար քիչ են և դեռևս վաղնջահայերենում սահմանափակ գործածություն են ունեցել՝ ամուլ, -ոյ, աղ, -ոյ (և -ից), աքաղաղ, -ոյ (համա. բրբռ. աքլոր), գայլ (*u̯al-lo-՝ *u̯lku̯i̯o-ի բաղարկությամբ), ընչուղ, -ոյ (?), թել, -ոյ (*tek-lo-?), ծիլ, ծիղ, -ոյ, ձոյլ (համա. ձեւ. վաղնջահայերենում՝ *jew-lo-՝ *jew-ի կողքին), մատաղ, -ոյ, ուլ, -ոյ, շող, -ոյ, քաղ (քող), -ոյ։ Առանձին խումբ են կազմում հին հայերենում «ձայնավոր/երկբարբառ+լ/ղ» հնչյունախմբով վերջացող բազմավանկ բառերը, որոնց այդ հնչյունախմբերը հավանաբար դեռևս գիտակցվել են որպես ածանցական մասնիկներ, և որոնց ձայնավորներն ու երկբարբառները գալիս են հին հիմքակազմ տարրերից՝ վ.-հ. *-elo-, *-olo-, *-ilo- և այլն. այս բառերի հոլովաձևերը երբեմն չեն ավանդված կամ ավանդված են համեմատաբար ուշ. վաղնջահայերենում դրանց ածանցային արժեքը ամենայն հավանականությամբ պարզորեն գիտակցվել է՝ անբեղ (համա. բ. անբայր, եթե անբեղ-ը կազմված չէ բեղել բայից՝ ան- նախամասնիկով), բ. անձող (գրբ. ածուխ), արգել (համա. բ. բք-արգ), բորեղ (համա. բոռ), երկիւղ (համա. երկնչիմ), ընչուղ, -ոյ, խնծիղ (համա. խինձ, խնչոյք), մարիլ, բակաղ (համա. բակ(ն)), տարգալ և այլն։ Բացի բակաղ-ից -աղ ածանց է առանձնացվում խանդաղ-ատ, կախաղ-ան, կենցաղ, այլև յաշաղեմ, յապաղեմ բառերում. Թեև տորմիղ/լ բառի մեջ կարելի է առանձնացնել -իղ/լ-ը որպես ածանց (համա. տարմ, որ տորմ-ի ձայնդարձային տարբերակն է), բայց տորմ-/տարմ- արմատի ծագումն անհայտ է։

Մի շարք բառերում *-lo-, *-lā- ածանցի *-o-ն և *-ā-ն արտացոլող -ո- և -ա- հոլովիչների փոխարեն առկա է այլ հոլովիչ, հատկապես -ի-ն. այս *-li-ն պետք է համարել *-lo- ածանցի տարբերակը. սրանց հարաբերությունը հավանաբար նույնն է, ինչ *-ni- և *-no- ածանցներինը. կան դեպքեր էլ, երբ տեղի է ունեցել սկզբնական *-o-ի փոփոխություն՝ համատիպ հիմքերի համաբանությամբ. համա. բոյլ, դայլ, դուլ, խուլ, ճոյլ, սալ (*k'əlā), բ. սրլուլ «սառնամանիք», քաղ «արու այծ. անասնախառնք» (համա. քաղոց ամսանունը, որտեղ -ո-ն գալիս է *-o-ից)։

Մի շարք դեպքերում հին հայերենում *-lo-ով հիմքերը պահպանվել են միայն բաղադրությունների կազմում՝ բ. ակլակ «դարան», ասեղն (*ak'ilon), պաք (*k'ū-lā), փրցլի-ք։

5) Վ.-հ. *-mo- (հ.-ե. *-mo-)> հ. հ. -մ. այս ածանցը հնդեվրոպական շրջանում կազմել է ածականներ և գոյականներ. վաղնջահայերենում այն դեռևս պահպանած պիտի լիներ իր ածանցական արժեքը, բայց հին հայերենում դադարել է գործուն ածանց լինելուց՝ պահպանվելով ոչ մեծ քանակությամբ բառերի մեջ՝ թարմ, թուրմ (համա. թրեմ «այլուր շաղախել», թուրջ, թրջեմ), ճամ, մեղմ (համա. մալեմ «մանրել», մլմլել «շփել», մեղկ), ողորմ,

---

[3] Համեմատությունը հ. սլ. բառերի հետ և *-ik-i̯ā ձևի վերականգնումը պատկանում է Ա. Մեյեին [Meillet, 1936, 75]։ Այն հանգամանքը, որ -իչ-ը միանում է արմատի հիմքին, այս ստուգաբանությունը դարձնում է փոքր-ինչ կասկածելի։

որմ (*ork-mo-?), **ջերմ** (*հմմտ.* **ջեր** *«տաքություն»,* **ջերմն**), **սերմ** (*հմմտ.* **սերեմ, սեր-ունդ**), **տրամ** *«ամուր»,* **տիղմ** (*հմմտ. բ.* **տիղ**)։ *Մի շարք դեպքերում այն ներկայացված է բաղադրությունների կազմում՝* **աղմ-ուկ, արմ-ուկն, յարմ-ար, ցամ-աք** *(?)։*

6) Վ.-հ. *-(e-, o-)no-, *-na [*հ.-ե.* *-(e-, *o-)-no-, *-nā]> *հ. հ.* **-(ի-ու-)ն**. *այս ածանցը հնդեվրոպականում կազմել է ածականներ ու բայանուններ և վաղնջահայերենում, ամենայն հավանականությամբ, պահպանել է իր գործածությունը. հին հայերենում այն ներկայացված է մի քանի կերպ. ա) առանձին բառերի վերջում, որոնց թեք հոլովներում հիմքային* *-o- *ձայնավորը դեռևս պահպանվել է՝* **բերան, -ոյ, բոյն, -ոյ, գին, -ոյ, մուն, -ոյ** *«մժեղ»,* **քուն, -ոյ և գերան, -աց, կեանք, -աց** (*հմմտ.* **կեամ**). *բ)* **-ն-***ով հիմքերի* **ն-***ի մեջ, որը իբրև ածանց չի գիտակցվում՝* **աղն** *«աղետ»,* **բեռն** *(*bher-no-. հմմտ.* **բերեմ**), **բուռն, դառն** *(?),* **բակն, բէկն, բոռն, լեառն, կուռն, ձմեռն, սառն, սեռն (?), ստեղն, տառն** *«թոկ»,* **տոռն** *«սանդի կոթ». գ)* **-ին,** *սեռ.* **-ոյ** *ածանցի ձևով, որ նույնիսկ ընդարձակել է իր գործածության շրջանակները և շարունակել է բառեր կազմել՝* **ամուսին, գետին, դարբին, դեղին** (*հմմտ.* **դեղ** *«բույս, դեղ»*), **եղեւին, կաղին** (*բ.* **տ-կողին**), **ոստին** *«չոր, անջրդի», այլև* **առաջին, լռին, միջին, ներքին, ջերին** (*հմմտ.* **ջեր** *«տաքություն»,***ջերմ**) *և այլն. սրա մի տարբերակն է* **-յն-***ը, որ ավելացել է* **-ա-***ով վերջացող հիմքերի վրա և ստացել* **-այն** *տեսքը՝ անցնելով* **-ի-***ով հիմքերին՝* **ամենայն, երկայն** (*հմմտ.* **երկար**), **միայն, որովայն, ստայն, ունայն** *և այլն. դ)* **-ուն-***ի ձևով, որ, թերևս, մասամբ խառնվել է հ.-ե. միջին սեռի դերբայական* *-o-mno-*ից* *(*-o-meno-) ծագող* **-ուն-***ի հետ՝* **ադփուն** *«տկար»* (*հմմտ.* **ադիփ**), **բեղուն** *«պտուղ, բերք»,* **իմաստուն** (*հմմտ.* **իմաստ**), **ձեղուն** (*հմմտ.* **ձող?**)։

Մի շարք դեպքերում հին հայերենում առկա են **-ո-***ից և* **-ա-***ից տարբեր ձայնավորներով, հատկապես* **-ի-***ով հիմքեր, որոնց* **-ի-***ն մասամբ գալիս է* *-no-*ի տարբերակը ներկայացնող* *-ni-*ից, մասամբ* *-o-*ով հիմքերից անցել է* **-ի-***ով հիմքերին համաբանությամբ (հատկապես* **-յն-***ի դեպքում. հմմտ. վերևում քննված* **-(ա)յն-***ով բառերը)՝* **բան** (*bhā-ni-), **թաւն** (*tap-ni-), **լայն** (*plateno-), **մոյն** *«վայելչություն»,* (*mou-no-), **-մոյն** *«-խեղդ»* (*mou-no-), **սրունք** (*k′runi->*k′uruni-), **տաւն** (*dāp-ni-) *և այլն։*

Վ.-հ. *-no-*ով հիմքերը ևս հին հայերենում երբեմն ներկայացվում են բաղադրությունների մեջ, որոնք մասամբ գալիս են հնից (հատկապես* **-նի-***ով բառերի դեպքում՝* *-n(o)-+*-i̯o- *բաղադրյալ ածանցից), մասամբ հետագա կազմություններ են՝* **բարենի** *(?),* **կուենի, նոլանի, ոզնի, քենի**։

7) Վ.-հ. *-(e)ro, *-(e)rā [*հ.-ե.* *-(e)ro-, *-(e)rā] >*հ. հ.* **-ր,** *սեռ.* **-ոյ** *և* **-աց**. *այս ածանցը հնդեվրոպական լեզվում կազմում էր ածականներ, որոնք մասամբ գոյականացել են. վաղնջահայերենում այն հնդեվրոպականից եկող բառերի մեջ զգալի չափով կորցրած է եղել իր բառակազմական արժեքը, եթե մանավանդ այդ շրջանում է տեղի ունեցել* *-r-*ի դրափոխությունը բաղաձայնից հետո գտնված դիրքում՝ «բաղաձայն* +r»>«r+*բաղաձայն» ձևով. սրան հակառակ «հիմքի ձայնավոր տարր* +*-ro-» *կապակցության բազայի վրա տարածվում և հին հայերենում ակտիվանում են* **-ար, -որ, -ուր** *ածանցները։ Հնդեվրոպականից եկող և հին հայերենում իբրև բաղադրյալ չգիտակցվող կամ թույլ գիտակցվող բառերի մեջ բուն ածականները սակավաթիվ են՝* **բիւր, -աց, իւր, -ոյ, լուռ, -աց, նոր, -ոյ, չոր** (*ուշ* **-ոյ, -ից**), **սուր, -ոյ** *(և գոյական)։ Համեմատաբար շատ են գոյականները՝ պահպանված* **-ո-** *կամ* **-ա-** *հիմքակազմ տարրով՝* **ալեւր (ալիւր), -ոյ, աներ, -ոյ, անուր, -ոյ, դիր, -ոյ,** *(և* **-ից**. *հմմտ.* **դնեմ<*դի-ն-եմ**), **գիշեր,-ոյ, իր,-աց, լար,-ոյ** *(և* **-ից, -աց**), **լուր,-ոյ** (*հմմտ.* **լու,** *առ.* **լուայ**), **նիւր,-ոյ** *(?),* **ձոր,-ոյ, մամուռ (-ոյ ?), մաւր,-աց** *«ճահիճ»,* **ոլոր** *(-ոյ?),* **սէր,-ոյ, սոր,-ոյ** *«ծերպ, խոռոչ»,* **սուր, -ոյ** *«թուր»* (*հմմտ.* **սուր** *«սուր»*), **տուր,-ոյ** (*հմմտ.* **ե-տու**)։ *Մի քանի բառում* *-ro-*ի փոխարեն առկա է* *-ri-*ով հիմք (սրանց հարաբերությունը մոտավորապես այնպիսին է, ինչպիսին* *-no-*ով և* *-ni-*ով հիմքերինը)՝* **բառ,-ից, լիր,-ից, սայր,-ից**։ *Ինչպես նշվեց վերևում, մի շարք բառերում* *-r-*ի դրափոխության հետևանքով կապը լիովին խզվել է նախկին* *-ro-*ով* (*-rā-*ով*) *և* *-ri-*ով հիմքերի հետ՝* **արտ, լիրբ, մերկ, մերձ, մուրկ, նուրբ, չերտ, պորտ, սուրբ**։ *Հաճախ այդպիսին է վիճակը նաև այն դեպքում, երբ* *-ro- *ածանցը հանդիպում է միայն բաղադրությունների կազմում (այդ թվում՝ աճած որևէ ածականով)՝ մանավանդ* *r-*ի դրափոխության պայմաններում՝* **ամպրոպ, արբունք** *(*abh-ro-),* **բերրի, դարբին** *(*dhabh-ro-),* **թրիք, թուրմ, թուրջ, կորի** *«փոքրիկ ջրանցք»,* **կրակ** *(?),* **ոլորտ**։ **Եզր** *բառը հնում ունեցել է* *-o-*ով հիմք (հմմտ. հ. սլավ.* езеро, *ռուս.* озеро*), բայց անցել է հին հայերենի* **-ր-***ով հիմքերի շարքը՝ սեռ.* **եզեր**։ *Զգալի թվով բառերում լրացուցիչ* **-ն-***ի առկայության պայմաններում (եզակի հայցականի վերջավորության տարածում ուղղականի վրա, լրացուցիչ* *-en- *կամ* *-no- *ածանցների հավելում, համաբանություն) դրանք անցել են* **-ն-***ով հիմքերի շարքը՝* **ամառն, եղեռն, կաւառն** *«նեղ առու»,* **ձմեռն, քիրան**։

*-ro- *ածանցն է ենթադրվում նաև հին հայերենի դասական թվականների* **-իր** (**երկիր, երիր, չորիր**), **-րորդ** *և* **երորդ** *ածանցների մեջ. հմմտ.* *du̯i-ro- >**երկիր** (**երկրորդ**), *penkᵘ̯e-ro >**հինգերորդ** *և այլն։*

Մի քանի խոսք ասենք նախորդ ձայնավորով և *-ro-*ով կազմված* **-ար, -որ, -ուր** *ածանցների մասին. սրանց առանձնացումը մասամբ պայմանական է՝ հիմնված համապատասխան այլ բառերի օրինակի վրա, մասամբ իրական՝ հաստատված համապատասխան ածանցելի հիմքերի առկայությամբ։ Սրանցից* **-ար-***ը խառնվել է հնից եկող* **-ար-** *բայածանցի (հմմտ.* **մեծ-ար-եմ** *և հուն.* μεγαίρω> *μεγαριω) *և, թերևս,* **առնեմ-***ի* **ար-** *բայահիմքի հետ,* **-որ-***ն էլ հանդիպում է նաև համապատասխան բայահիմքերի կազմում. 1)* **-ար՝ արդար** (**զ-արդ-ար-եմ, յ-արդար՝ արդ-***ից*), **գալար** (*հմմտ. բ.* **գալ,** *այլև* **գել, գիլ**), **դալար** (*հմմտ. հուն.* θαλερός *«մատաղ»*), **երկար** (*հմմտ.* **երկայն** *և հուն.* δηρόν *«երկար ժամանակ»*), **մթար** (*հմմտ.* **մութ**), **մոլար** (*հմմտ.* **-մոլ, մոլի, մոլոր**), **պալար** *և այլն. 2)* **-որ՝ բեկոր** (*հմմտ.* **բեկ, բեկանեմ**), **բոլոր, գլոր** (*հմմտ.* **գիլ** *«գլորում»,* **գլել** *«գլորել»*), **սին-լքոր** (*հմմտ.* **լքանեմ**) *և այլն. 3)* **-ուր՝ բլուր, թաքթաքուր** *և այլն։*

Վերջապես, հ.-ե. *-ro-*ն է առկա հավանաբար նաև հին հայերենի* **-եար,** *սեռ.* **-ոյ** *հոգնակերտ-հավաքական մասնիկի մեջ, որ առկա է* **բանեար, իշեար, որեար** *«մարդիկ» բառերի մեջ՝ իմաստային անցմամբ։*

8) Եթե վաղնջահայերենում տեղի էր ունեցել *sḱ (*sk)>cᶜ(**ց**) *փոփոխությունը, ապա հնդեվրոպական* *-sḱ-*ով* (*-sk-*ով*) *ածանցական կազմությունները պետք է գոյություն ունենային* -cᶜ-*ի ձևով։ Հնդեվրոպական լեզվում* *-sḱ-*ով* (*-sk-*ով*) *կազմվել են ածականներ, որոնք մասամբ գոյականացել են։ Հին հայերենում մենք ունենք* **-ց-***ով կազմությունների երկու տիպ՝*

ա) զուտ անվանական, որոնք զուգահեռներ չունեն բայական ց-ով ձևերի մեջ, և բ) անվանա-բայական, որոնց դեպքում նկատվում է անվանական և բայական ձևերի ակնհայտ զուգահեռություն, այսինքն՝ բայական (հատկապես աորիստային) -ց-ով հիմքերը հանդես են գալիս նաև որպես անվանական կազմություններ։ Հնդեվրոպականից նույնությամբ եկած -ց-ով կազմությունները սակավաթիվ են, ընդ որում դրանք սովորաբար կարող են հանդես գալ նաև որպես բայահիմքեր՝ -ն-ով, -ան-ով կամ առանց դրանց, և -ց-ն պահպանվում է ամբողջ հարացույցում՝ **այց** *(***այց-եմ***՝ հազվադեպ. ավելի հաճախակի է* **այց առնել** *հարադրական բայը) և* **հայց (հայցեմ), հարց (հարց-ան-եմ), ցոյց (ցուց-ան-եմ), քաղց (քաղց-ն-ում).** *պետք է ենթադրել, որ վաղնջահայերենում առկա էր անվանական և բայական -ց-ով կազմությունների մերձեցման միտում, թեև վերջին ձայնավորների պահպանության պայմաններում անվանական և բայական հիմքերը պիտի տարբերակված լինեին։ Բայի աորիստային ձևերում* $-c^{c}$ *-ի (-ց-) տարածման հետ կապված այս պրոցեսը այլ ուղղություն է ստանում. այս դեպքում առկա է ոչ թե անվանական և ընդհանուր-բայահիմքային, այլ անվանական և աորիստա-հիմքային զուգահեռություն. այլ կերպ ասած՝ աորիստային շատ հիմքեր կարող են գործածվել կամ որպես ինքնուրույն անվանական ձևեր՝ հաճախ հոգնակերտ* **-ք**-*ի հարակցությամբ* (**բաց**՝ **բանամ**-*ից*, **ընթաց-ք**՝ **ընթանամ**-*ից*, **սառոյց**՝ **սառնում**-*ից և այլն), կամ որպես բաղադրությունների երկրորդ բաղադրիչ* (**սր-ընթաց**՝ **ընթանամ**-*ից*, **Երկայնակեաց**՝ **կեամ**-*ից*, **ծագասնոյց**՝ **սնանիմ**-*ից և այլն)։*

Այս ածանցի հիման վրա կազմված է **-ոց**, *սեռ.* **-աց** *ածանցը* (*o skā)? *աստիճանաբար լայն տարածում է ստացել՝ կազմելով նոր բառեր՝* **աւթ-ոց** *«ծածկոց»* (*au-ti->**աւթ**+**-ոց**), **հն-ոց** (**հուն-**՝ **հուր**-*ի տարբերակը*+**-ոց**) *և այլն. այն կա նաև* **-ան**-*ի հետ միացած՝* **-ան-ոց** *ձևով՝ հատկապես տեղացույց նշանակությամբ։* **-(ա-,ե-)ցի** *ածանցը գալիս հ.-ե.* *-sk'o- *ու* *-ii̯o- *ածանցների միացումից և վաղնջահայերենում պետք է լայն տարածում ստացած լիներ՝* *$-c^{c}$ii̯ā *ձևով. այն ցույց է տալիս ծագում որևէ տեղից*[4]։

Ինչ վերաբերում է **երկիցս, երիցս** *տիպի ձևերին, ապա դրանք կարող են ինչպես հնդեվրոպական կազմություններ լինել (հմմտ. հ. վ. գերմ.* zwiski *«կրկնակի».* Meillet, *1936, էջ 101), այնպես էլ կազմված լինել հայկական հողի վրա. վերջին դեպքում անբացատրելի է մնում* **երկիցս** *ձևը (փխկ.* **եր-կուց-ս**), *եթե, իհարկե,* **-ի-ն** *համաբանական չէ։*

9) Հ.-ե. *-so- *ածանցն է վերականգնվում հին հայերենի մի շարք բառերում՝* **բոց** (*bhok'-so-), **թուռ** (*tur-so. *հմմտ. նաև* **թուշ**< *__թուրշ__), **քացախ** (*ku̯at-so-) *բառերում, բայց ածանցը վաղնջահայերենում արդեն դադարած է եղել գործուն լինելուց։*

10) Հ.-ե. *-tero- *ածանցը, որ կազմված է եղել* *-t(o)- *ու* *-ero- *ածանցներից, հայերենում թողել է միայն առանձին հետքեր և վաղնջահայերենում էլ հավանաբար գործուն չի եղել. նրա առկայությունը հավաստի է միայն* **ընդեր,-ի,-աց** (*en-terā. *հմմտ. հուն.* ἔντερον, *հգն.* ἔντερα *բառում, հավանական՝* **հաստոյր** *«ուժգին» (հմմտ.* **հաստ**), **նքոյր** *«մաղ»* (*neik *«մաղել»)* *բառերում և դերանվանական սեռական* **ոյր** *«ում»,* **էր** *«ինչի» ձևերում։ Կասկածելի է* **եղջիւր** *բառի համար* *elditro- *նախաձևի վերականգնումը։*

11) Հ.-ե. *-to- *ածանցի դիրքային տարբեր փոփոխությունների, այլև* *-lo-*ի դերբայական դերի աշխուժացման հետ կապված հայերենում խախտվում են* *-to-*ի միասնության և արդյունավետության հիմքերը. հավանական է կարծել, որ վաղնջահայերենում մեծ չափով պակասել էր նրա դերը, և խզվել էին նրա տարբեր իրացումների հիմքերը.* *-no-*ի և* *-lo-*ի նման այդ ածանցը հնդեվրոպական լեզվում կազմել է բայական ածականներ՝ դերբայական արժեքով, այլև հանդես եկել գոյականներից ածականներ և բայերից գոյականներ կազմելու գործառությամբ. հին հայերենում այն ըստ դիրքերի ներկայացված է՝ ա)* **թ**-*ով՝* **արծաթ,-ոյ, բաղթ** *«ձվի թաղանթ» (?),* **հիւթ (հիւթ), փերթ,** *բ)* **դ**-*ով (ձայնորդներից հետո)՝* **հիւանդ, մարդ** *(հմմտ.* **մեռանիմ**), **սկունդ** *«շան ձագ» (?), գ)* **տ-ով** (**ս**-*ից հետո)՝* **երաստ-անք,** *դ)* **-յ**-*ով՝* **բայ** *«որջ» (հմմտ.* **բայոց**), **կոյ** *և ե) զրոյով՝* **առու**(*sru-to- *կամ* *sru-ti-), **դի, լի** (*plēto- *կամ* *plei̯o-), **լու** *«լսված»,* **մարի, տի** *«տարիք»։*

Հ.-ե. *-to- *ածանցը հանդես է եկել նաև* *-do- *տարբերակով (հմմտ. հ. հնդկ.* das'át—*հուն.* δεκάδ- *«տասնյակ»). այս ձևն ունեն* **լաստ, մաստ** *«ածիկ» (եթե իրանական փոխառություն չէ),* **սուտ, ցուրտ** *բառերը։*

Առայժմ դժվար լուծելի է հին հայերենի **աղքատ, անքատ, արմատ** *(հմմտ.* **արմ, գ-արմ, արմն**), *բ.* **լմփատ** (<**լամբատ**) *«գեր»,* **հաստատ** *(հմմտ.* **հաստ**), **հաւատ** *(?) բառերի* **-ատ**-*ի հարցը. այն համեմատում են հ. հնդկ.* dṛṣad *«ջրաղացաքար» և հուն.* φυγάς, -άδος *«վազող, փախչող» բառերի հետ, որ իմաստապես քիչ հարմար է [հմմտ.* Greppin, *1975, 55—56. շփոթում է* **-ատ** *«հատված, կտրված» ածանցի հետ, որ, սակայն, ամենայն հավանականությամբ, ծագում է* **հատ-ան-եմ** *բայի արմատից]։ Այս նույն ձևով* **-ուտ**-*ը* (**աղբուտ, աւազուտ, թաւուտ, հացուտ, տղմուտ** *և այլն) Ս. Բուգգեն* [**Bugge**, *1899, 38] համեմատում է հուն.* -ώδης *-ի հետ (հմմտ.* ἀμαθώδης *«ավազուտ»՝* ἄμαθος *«ավազ» բառից)։ Թերևս սրա հետ, նախորդ ձայնավորի տարբերությամբ, կապված է* **-ոտ**-*ը՝* **բորոտ, լուսնոտ** *և այլն [հմմտ.* **Pedersen**, *1906, 474], որ ոմանք համարում են* **հոտ**-*ից կամ նրա* *od- *նախաձևից ծագած. այստեղից է* **-ոտ-ի-ն** (**սնոտի**)՝ *մասամբ իմաստով հեռացած* (**ոսկրոտի**). *այս նույն ձևով՝* *__-ուտ-ի__-*ից է* **-տի-ն** (**մանկտի**)։ *Ավելի քիչ հավանական է սրանց հետ* **-էտ** *ածանցի կապը, որ հանդիպում է կենդանիների անունների մեջ՝* **բրէտ** *«իշամեղու» (հմմտ.* **բոռ**), *այլև* **առն-էտ**, *որի հիմքը համարվում է փոխառված ասորերենից* (arnā'a)։

12) Հ.-ե. *tro- *ածանցը, որ ունի նաև* *-tlo-, *-dhro-, *-dhlo-, *-thro- *տարբերակները, հին հայերենում լիովին կորցրել է իր արդյունավետությունը, և պետք է կարծել, որ այդ պրոցեսն սկսված է եղել վաղնջահայերենում։ Հնդեվրոպականում այս ածանցը կազմել է գործողության միջոցի, գործիքի անուններ, որ շատ լավ երևում է* **աղաւր-ի-ք** *և* **արաւր** *բառերում։ Մնացած բառերից են՝* **հաւր-ան** *«հոտ (անասունների)»,* **մարթ-անք** (*mag-thro-), **մութ** (*mu-tro-), **յ-ՙրիւր** (*rī-tro-՝ *ar-*ից). հմմտ. նաև* **հարիւր** (*ari-tro-՝ *հուն.* ἀριθμός *«թիվ»։*

Անհնար չէ ենթադրել, որ այս ածանցի *-dhro- *տարբերակից է ծագում* **-որդ** *ածանցը՝* r-*ի սովորական դրափոխությամբ և իմաստի հետագա լայնացմամբ. ավելի քիչ հավանական են* **-որդ**-*ի ծագման այլ վարկածները* (**որդ-ի** *բառից կամ լատ.* ordo *«կարգ» բառի հետ միասին միևնույն հ.-ե. աղբյուրից և այլն)։ Այս ածանցը, բացի բայական հիմքերից* (**անցորդ, լողորդ,** մնացորդ և այլն), բառեր է կազմում նաև գոյականներից ու ածականներից՝ այգորդ, այլորդ, անդէորդ, ամլորդ, լծորդ, հաղորդ (հմմտ. ալբ. palë «զույգ, ծալք»՝ *pel-ից), միջնորդ, յաջորդ, յետնորդ և այլն, ինչպես նաև դասական թվականներ առանձին (քառ-որդ) և -եր, -իր ածանցների հետ միասին (երրորդ, չորրորդ, հինգերորդ և այլն)։

---

[4] *Կան նաև* **-ցի**-*ի ծագման այլ վարկածներ (Գ. Ղափանցյան, Գ. Ջահուկյան)։*

Համեմատաբար ավելի դժվար է հնդեվրոպական անբուն (աթեմատիկ) ածանցների՝ վաղնջահայերենում արտացոլվելու հարցի լուծումը, եթե նկատի ունենանք վերջնավանկերի և վերջնաձայնավորների անկման և թուլացման հետևանքով հին հայերենում նրանց բացահայտման դժվարությունը։ Քիչ թե շատ որոշակի խոսք կարելի է ասել միայն մի շարք ածանցների մասին։ Համեմատաբար լավ են պահպանվել ձայնորդներով վերջացող հիմքերը։

1) Վ.-հ. *-en/-on (հ.-ե. *-en/-on)>հ. հ. -ն այս ածանցը հնդեվրոպական լեզվում կազմում էր ածականներ՝ գերազանցապես գոյականացած. հայերենում առկա են միայն գոյականներ, որ[illegible] բառակազմական կապը հին հայերենում գրեթե լրիվին խզված է. -ն-ն այստեղ հանդես է գալիս միայն որպես հոլովման հիմքի ձևական ցուցիչ՝ ակն (*okᵘ-en-?), անձն, առն «արու վայրի ոչխար», արդն «նիզակ» (գեղ-արդն), եզն, եղեռն, եղն, երկն, ծիծառն, ողն, սիւն, ուլն «պարանոց»։ Հ.-ե. *-m>հայ. ն անցմամբ, որ, հավանաբար, առկա է եղել դեռևս հնդեվրոպական շրջանում որպես բարբառային զուգաբանություն, այս հիմքերին միացել են երկու կարգի բառեր ևս՝ 1) բնավոր հիմքերի չեզոք սեռի *-om>*-on վերջավորությամբ բառերը և 2) այն բառերը, որոնց հայցականի *-(o)m>*-(o)n վերջավորությունը տարածվել է ուղղականի վրա. բնականաբար սրանց միացել են նաև այն բառերը, որոնց ն-ն հանդես է եկել համաբանությամբ։

*-en/-on ածանցը մի շարք դեպքերում հանդես է գալիս նախորդ հիմքային տարրերով բաղադրված ածանցների մեջ, որոնք բավական տարածում են ստացել։ Նշելի են հատկապես հ.-ե. *-kōn> վ.-հ. *-kʿōn> հ. հ. -կն հ.-ե. *-i-ōn> վ.-հ. *-i-ōn> -իւն ածանցները։

Վ.-հ. *-kʿōn (հ.-ե. *-kōn՝ *-ko- ածանցի անցումով *-n-ով հիմքերի շարքը)>հ. հ. -կն (ձայնավորի անկմամբ տեղի է ունեցել -kʿ-ի ապաշնչեղացում *-n-ի մոտ. հմմտ. նաև մատն փխկ. *մաքն). այս ածանցը վաղնջահայերենում բավական տարածված է եղել և հանդիպում է հատկապես կենդանիների ու մարմնի մասերի անվանումների մեջ՝ արմուկն, կրուկն, ունկն, ձուկն, մուկն «1. մուկ կենդանին. 2. մկան». այն առկա է նաև դալուկն «դեղնախտ» բառի մեջ։ Հին հայերենում արմատի և ածանցի փոխհարաբերությունը լրիվին գիտակցվում է դիակն բառի մեջ (-կն<*-ā-kon?), բայց արեգակն, կայծակն, փայլակն բառերը հակված են մեկնաբանելու որպես բարդություններ ակն «աչք» բաղադրիչով. -իկ-ով և -ուկ-ով վերջացող մի շարք փոքրացուցիչ-փաղաքշական բառերում, որոնք թեք հոլովներում ունեն ն-ով հիմք, պետք է ենթադրել թերևս վաղնջահայերենում համապատասխան *-kʿon -ով հիմք՝ ստացված -կն-ի ն-ի հետագա անկումով՝ աղջիկ (*աղջիկն), -կան, ծաղիկ,-կան, մանուկ,-կան: Հավանաբար այս կարգի բառերի հետ բաղարկվելով (խառնվելով) հետագայում լայն տարածում են ստանում իրանական -իկ, -ուկ-ով փոքրացուցիչ-փաղաքշական ածանցները։ Այս -կն-ը պահպանվել է նաև նաւկնեար հավաքական-հոգնակի ձևի մեջ։

Վ.-հ. *-i-ōn (հ.-ե. *-i-ōn. հմմտ. լատ. -iō, սեռ. -iōnis) > հ. հ. -իւն. որոշ դեպքերում թերևս այս ածանցի հետ խառնվել են բնավոր *-no-ով և նույնիսկ գերբայական *-mno-ով բաղադրությունները՝ զուգորդված նախորդ տարրերի հետ. հմմտ. անիւն, անկիւն, արիւն, ափիւն (?), կորիւն (?), հերիւն, մրջիւն, որքիւն «վերք» և այլն. այս ածանցը հին հայերենում գործուն է եղել և կազմել է բազմաթիվ նոր բառեր, հատկապես բայանուններ բնաձայնական և ոչ բնաձայնական հիմքերից. սրանք հաճախ ունեն -մն-ով զուգահեռներ՝ գոչիւն—գոչումն, լալիւն—լալումն. հմմտ. նաև մրջիւն—մրջիմն:

Հին հայերենում լայն տարածում ունեցող և բայանուններ կազմող -ութիւն ածանցի վերաբերյալ կարծիքները տարամիտվում են, և առայժմ նրա հնության վերաբերյալ հավաստի խոսք ասելը դժվար է, մի կողմից՝ այն զուգահեռ ունի լատ. -tiō, սեռ. -tiōnis բայանվանական ածանցի մեջ, մյուս կողմից հեշտությամբ բացատրվում է հայերենի բազայի վրա՝ -ոյթ և -իւն ածանցներով, մանավանդ որ կան ծերոյթ և ծերութիւն տիպի զուգահեռ ձևեր։ Քանի որ այս երկու ածանցներն էլ հնդեվրոպական ծագում ունեն՝ *-eu-ti- ու *-i-ōn, և քանի որ -իւն-ի -ի-ն կարող է գալ տարբեր աղբյուրներից, ուստի հնարավոր է ենթադրել այս ածանցի ծագում *-eu-ti-ōn ձևից։ Սակայն եթե *-ti-ōn-ը զուգահեռ ունի, ապա *eu-ով ձևը մնում է առանձնակի և պետք է տարածում գտած լինի հայկական հողի վրա, թերևս վաղնջական շրջանից սկսած. նախորդող ու-ի համար հմմտ., թերևս, մի կողմից՝ ծերութիւն (և ծերոյթ. հմմտ. հուն. γραῦς, ավեստ. zaurvan-), յարութիւն (հմմտ. հուն. ὁρόω «հետևել»), մյուս կողմից՝ երիցութիւն (հմմտ. սեռ. երիցու), թողութիւն (հմմտ. թողում) և հոգածութիւն (հմմտ. հոգածու), հոգաբարձութիւն (հմմտ. հոգաբարձու) և այլն։

2) Վ.-հ. *-men/-man (հ.-ե. *-men/-mn̥)>հ. հ. -մն. այս ածանցը հնդեվրոպականում կազմում էր գերազանցապես գործողության անուններ՝ հազվադեպ նաև գործողության առարկայի և արդյունքի նշումով. հանդիպում են նաև գործողության անձի անուններ. հին հայերենում առկա ձևերից հիշենք արմն «արմատ» (հմմտ. արմ, արմատ), ատամն, բեղմն (հմմտ. բեղուն «բերք»), գեղմն «բուրդ», կողմն (հմմտ. կող), հիմն, ջերմն (հմմտ. ջեր «տաքություն», ջերմ), սերմն (հմմտ. սեր-եմ, սերունդ). մի շարք բառերում պահպանվել է -մն-ին նախորդող -ու- (*-eu/-u- սկզբնաձայնավորը՝ այտումն, գելումն (հմմտ. գելում), երդումն (հմմտ. երդու-այ): Այս -ու-ն, գիտակցվելով որպես անհրաժեշտ մաս, մտնում է հետագայում խիստ ակտիվացած -ումն ածանցի մեջ, որ կազմում է բազմաթիվ նոր բայանուններ, երբեմն -իւն-ին կամ -ութիւն-ին զուգահեռ՝ լքումն (հմմտ. լքանեմ), հոլովումն (հմմտ. հոլովեմ) և այլն, ընդ որում նաև կատարյալի հիմքից (իմացումն. հմմտ. իմանամ, իմացայ) և պատճառականի հիմքից (մատուցումն. հմմտ. մատուցանեմ): Հասկանալի է, որ վաղնջահայերենում -ումն-ը (*-u-men/-u-man) այսպիսի տարածում ունենալ չէր կարող. դեռևս գործում էին հնդեվրոպական հիմնական օրինաչափությունները։

3) Հ.-ե. *-er/-or ածանցը, որ հայերենում պահպանված է ազգակցական անունների (տայգր, քոյր) և, թերևս, վեր (*up-er), ներ- (*en-er-) ձևերի մեջ, դեռևս հնդեվրոպական շրջանում գործուն չի եղել, և վաղնջահայերենում այն, ամենայն հավանականությամբ, իբրև ածանց գրեթե չի գիտակցվել։

4) Հ.-ե. *-ter ածանցի *-tel տարբերակը հայերենում պահպանվել է *-ā-ի հարադրությամբ և դրա աստիճանով՝ -աղ ձևով (*-ā-tlā). այն կազմել է և շարունակում է կազմել գործողի (անձի) անուններ՝ հայերենում, այս-

պես կոչված, ենթակայական դերբայի արժեքով. այդ լավ երևում է հ. հնդկ. janitár-, հուն. γενέτωρ, լատ. genitor և հայ. ծնաւղ համիմաստ ձևերի համեմատությամբ: Այն աչքի է ընկնում մեծ արդյունավետությամբ և կարող է համապատասխան ձևեր կազմել բոլոր բայերից, ընդ որում կան և՛ ներկայի, և՛ աորիստի հիմքից կազմված ձևեր (երբեմն զուգահեռաբար՝ ծնաւղ—ծնանաւղ/-ող): Այն հանգամանքը, որ -աւղ-ի հետ միասին հանդիպում է նաև -ող գրությունը, կամ արդյունք է -աւղ-ի աւ-ի վաղ բարբառային մենաբարբառացման, կամ, թերևս *-ātlo -ից ծագող -աւղ-ի և *-olo-ից (հմմտ. հուն. -ωλος) ծագող -ող-ի խառնվելու: Վերջին դեպքում պետք է կարծել, որ վաղընջահայերենում դրանք իրարից դեռևս տարբերվելիս են եղել *-āwlā և *-o-lo- ձևերով. վերջինս պետք է հիմք տված լինի *-lijo- ձևի համար (>հ. հ. -լի), որ գործածվում է նաև ենթակայական դերբայի արժեքով՝ գործելի «գործող» [Աբրահամյան, 1953, 35—36]:

Հնարավոր է նաև *-tel-ի *-e-ով ձևի առկայությունը, եթե ճիշտ է *dhurotel>դրոյլ «դռնապան» ստուգաբանությունը (հմմտ. դուռն, հգն. դուր-ք. Աղայան, 1974, 62):

Ինչ վերաբերում է հ. հ. -յր-ի մեջ պահպանված *-ter- ածանցին, որ կազմել է ազգակցական անուններ, ապա դեռևս հնդեվրոպական շրջանում այն դադարել էր գործուն լինելուց՝ եղբայր, հայր, մայր:

5) Հ.-ե. բուն *-tei-/-ti- (և *-thei-/-thi-) և *-teu/-tu- ածանցների *-t-ն հին հայերենում և, հավանաբար, արդեն վաղնջահայերենում ներկայացված է նույն հնչյունական տարբերակներով, ինչ բնավոր *-to- ածանցի *-t-ն, այսինքն՝ -թ, -դ, -տ, -յ հնչյուններով. նշանակում է՝ հնդեվրոպական ածանցը, որ կազմելիս է եղել բայանուններ (հայերենում՝ նաև թանձրացական դարձած) արդեն կորցրած է եղել իր միասնությունը, դադարել է գործուն ու արդյունավետ լինելուց. այսպես, *-tei-/-ti-ն ներկայացված է -թ-ով՝ աւթ «գիշերում» (հմմտ. ագանիմ «գիշերել»), աւթ-ոց «ծածկոց» (*au-ti-+-ոց. հմմտ. ագանիմ «հագնել»), կարթ, նաւթի (անաւթի) «քաղցած» (*nagᵘh-ti-jo-), -դ-ով՝ բարդ «դեզ» (*bhr̥-ti-), սարդ (*k'r̥-ti-?), -տ-ով՝ սաստ (*k'əs-ti-?), -յ-ով՝ բայ, ընծայ (հմմտ. հ. հնդկ. amhiti-). հմմտ. նաև մոյթ (*meu-thi-՝ հ. հնդկ. mēthi- «մույթ, նեցուկ»):

Ավելի գործուն է եղել *-s-ti- բաղադրյալ ածանցը՝ նախորդ -ե-, -ի-, -ա-, -ու- ձայնավորներով՝ արուեստ (հնարավոր է սրա իրանական ծագումը), ուռեստ, հանգիստ (*sm̥-kᵘi-sti-), առագաստ, զ-գաստ, իմաստ, ուրաստ, ելուստ, թաքուստ, երկրորդաբար՝ գալուստ:

Սակավաթիվ բառերով է ներկայացված հ.-ե. *-teu-/-tu- ածանցը՝ արդ (զ-արդ), զգեստ (*ṷes-tu-. հմմտ. զգենում):

Աստիճանաբար գործուն և արդյունավետ է դարձել հավանաբար հ.-ե. *-ti-ի բազայի վրա ձևավորված *-eu-ti- բաղադրյալ ածանցը, որ հին հայերենում տվել է -ոյթ տեսքը. այն կազմում է հիմնականում բայանուններ՝ ելոյթ, երեւոյթ (հմմտ. երևիմ), զ-այրոյթ (հմմտ. զ-այրանամ և այրիմ և այլն), հազվադեպ՝ այլ անուններ՝ ծերոյթ (հմմտ. ծերութիւն):

Վաղնջահայերենում գործուն է եղել նաև հ.-ե. *-ti-ի բազայի վրա կազմավորված *-on-ti->հ. հ. -ունդ ածանցը՝ ելունդ, ծնունդ, սերունդ, սնունդ բառերում: Հավանաբար *-n̥-ti-ից ծագած պետք է համարել մի քանի բառերում հանդիպող -անդ ածանցը՝ աղանդ, արգանդ, եռանդ, ընդ որում վերջինս ունի նաև -ն-ով աճած ձև՝ եռանդն. դժվար է ասել, թե բաղանդ/թ բառի -անդ/թ-ը կապ ունի՞ արդյոք այս ածանցի հետ:

Հնդեվրոպական լեզուն ունեցել է դերբայական երեք տիպի ածանց՝ 1) ներկայի և աորիստի ներգործական սեռի՝ *-ent/-ont/-n̥t, 2) կատարյալի (պերֆեկտի) ներգործական սեռի՝ *-ṷes/-ṷet և 3) ներկա-աորիստ-կատարյալի կրավորական սեռի՝ *-menos/-mnos:

Սրանցից առաջինը վաղնջահայերենում հավանաբար դեռ պահպանվել է, բայց հետագայում հավաստի հետքեր չի թողել. եթե նկատի առնենք հընագույն հայերենում շեշտի առաջ բերած վերջավանկային թուլացումներն ու անկումները, ապա այն չէր կարող պահպանվել ոչ -ուն-ով, -ան-ով բայածականների (արբուն, գիտուն, -ասան, մածան և այլն), ոչ էլ ելունդ, ծնունդ, սերունդ, սնունդ բառերի -ունդ-ի մեջ [հմմտ. Greppin, 1975, 139—146]:

Ավելի հավանական է կարծել, որ հնդեվրոպական *-ṷes-ը (իգ. *-usjā) պահպանվել է հին հայերենի -ու ածանցի մեջ, որ հին հայերենում առկա է միայն մնացուկային ձևով՝ մասամբ կատարյալի կորստի, մասամբ այլ ծագման վերջամասնիկների և հիմքակազմ տարրերի հետ խառնվելու հետևանքով. ամենից առաջ պետք է նշել այն բայածականները, որոնք գործածվում են հարադրական բայերի կազմում՝ հասու, յաղթու (նաև յաղթկու), լսու (լսու լինիմ), ապա համ նշող կծու, բ. մռու ածականները և, վերջապես, այն բարդ ածականները, մասամբ գոյականացած, որոնց մեջ -ու-ով ձևերը կազմում են երկրորդ բաղադրիչը՝ -ածու (ականածու), -առու (մտառու), -արբու (գինարբու), -արկու (բանսարկու), -ըմպու (գինըմպու), -կալու (ակնկալու), այլև -կացու (վերակացու) և այլն. այս ածանցով կան կազմված նաև գոյականներ՝ ածու (հմմտ. հուն. ἄγυια «փողոց»), դակու «ուրագ» կամ «կացին» (?): Այս -ու-ն է, որ հանդես է գալիս մի կողմից՝ որպես -ուած ածանցի առաջին բաղադրիչ (գործուած և առուած և այլն. հմմտ. անհայտ, թերևս խեթ. ծագման, հիմքով հատու և հատուած), մյուս կողմից՝ որպես -ացու և կու ածանցի երկրորդ բաղադրիչ (հարսնացու, յաղթկու՝ յաղթու-ի կողքին):

-ու-ն պահպանվել է նաև հոգնակերտ -ք-ի հետ զուգակցված -ու-ք ձևով՝ այրուք, գինարբուք, գինըմպուք, քամուք, բ. ծամուք, փլուք և այլն:

Տարբեր ծագում ունեն արու, եղջերու, մեղու և մաւրու, ուրջու «խորթ որդի» բառերի ու-երը:

Հնարավոր է նաև բայածականներ կազմող -ուն ածանցի ծագումը *-mnos դերբայական ածանցից. վերևում հիշված արբուն, գիտուն տիպի բայածականները, ամենայն հավանականությամբ, ծագում են հենց այսպիսի ձևերից (հմմտ. *onōmno->անուն): Այս -ուն-ը խառնվել է *-ono-, *-u-no- տիպի կազմություն ունեցող ածականների հետ:

Հայերենի գործիականի կազմիչը, որ վաղնջահայերենում պիտի ունենար *-bi/-wi (*-vi) տեսքը (>հ. հ. -բ, -ւ, -վ), հավանաբար հանդես է եկել նաև մակբայակերտ արժեքով: Հետաքրքրական է նշել, որ մակբայակերտ արժեքով այն միշտ չէ, որ ունի համապատասխան գոյականների բուն հոլովական ձայնավորումը. այսպես, արդար, հետ «հետք, ոտք» բառերը հոլովվում են -ո- հիմքով հոլովմամբ, որ համաբանությամբ տարածվել է բոլոր թեք հոլովների վրա, բայց մակբայական արժեքով նրանք ունեն -ե- ձայնավորումը՝ արդարեւ, այնուհետեւ, այսուհետեւ, որովհետեւ ձևերում: Պետք է կարծել որ մակբայական այս մասնիկն է առկա, տարբեր ձայնավորումներով. առաջեաւ (առաջ-ի), բարեաւ, իրաւ (իր, -ի, -աց), իբրեւ (իբր), լրիւ (լիր, -ի, -ից), ստուգիւ (ստոյգ,-ի,-աց), մեղմով (մեղմ,-ոյ), փութով (փոյթ,-ով), իբրու (*իբրուս), այնու-, այսու- ձևերում։ Այս մասնիկից են կազմված -եւին (ամենեւին), -ովին (բոլորովին, գլխովին, իւրովի(ն) ածանցական ձևերը որոնց մեջ երկրորդ տարրերը կամ սովորական -ին,-ի ածանցներն են, կամ գալիս են հին *-bhi-ի ի-ի և հաջորդող -ն-ի զուգորդումից, այսինքն՝ նախնական *-i-ն պահպանվել է հաջորդող *-no- տարրի առկայության պայմաններում։

բ) ՆԱԽԱԾԱՆՑՈՒՄ

Հին հայերենը մեծ քանակությամբ նախամասնիկավոր կազմություններ չի պահպանել, ընդ որում դրանք էլ մասամբ կորցրել են իրենց գործունությունն ու արդյունավետությունը։ Այդ է պատճառը, որ հունաբան դպրոցի հեղինակները հունական ածանցավոր կազմությունները պատճենելիս դիմել են նոր միջոցների՝ հազվադեպ միայն կենդանացնելով հին նախամասնիկավոր կազմությունները։

Ա. Մեյեն և հնդեվրոպական համեմատական լեզվաբանության այլ ներկայացուցիչներ նախամասնիկավոր կազմությունները դիտում են որպես սովորական բարդություններ և քննում նրանց հետ միասին [Мейе, 1938, 297. Meillet, 1962, 163]. այս դեպքում բարդությունների կազմության ընդհանուր սկզբունքները չեն փոխվում, միայն թե առաջին բաղադրիչները լինում են ձևաբանորեն չփոխվող՝ սպասարկու բառեր։

Հնդեվրոպականից եկող նախածանցավոր կազմություններից, որոնք և՛ վաղնջահայերենում, և՛ հին հայերենում պահպանել են իրենց գործունությունն ու արդյունավետությունը, պետք է հիշել առաջին հերթին ան- ժխտական նախամասնիկով բաղադրությունները (հմմտ. հ. հնդկ. a-, հուն. ἀ-, լատ. in-, գոթ. un-՝ հ.-ե. *n̥-, ձայնավորից առաջ՝ *ьn-)՝ անամպ, անայր, անանձն, անանուն (հմմտ. հուն. ἀνώνυμος), անարգել, անգործ, անդունդ, անեզր, աներկիւղ, անպառամ, անլոյս, անլուսին, անծանաւթ (հմմտ. հ. հնդկ. ajñata-, հուն. ἄγνωτος, լատ. ignōtus, գոթ. un-kunþs), անձայն, անմիտ, անպտուղ, անջուր, անսերմն, անսուտ (հմմտ. հուն. ἀψευδής) անփորձ (հմմտ. հուն. ἄπειρος) և այլն։ Ոմանք այս *n̥- ժխտականն են տեսնում նաև ամուլ (*n̥-pōlo-?), ամուրի (*n̥-putrii̯o-?) բառերում, որ կասկածելի է։ Կասկածելի է նաև նուաղ բառի՝ *nē-u̯al-ձևից բխեցնելը՝ *ne- ժխտականով։

Հնդեվրոպական ծագում ունի, բայց հին հայերենում արդեն դադարել է գործուն լինելուց տ- ժխտական նախածանցը, որ համեմատում են կամ հ. հնդկ. duḥ-, հուն. δυσ-, լատ. dis- (հ.-ե. *dus-), կամ լատ. dē- (հ.-ե. *dē) մասնիկների հետ. հնչյունական առումով առաջին համեմատությունը խոցելի է. եթե հայերեն բառերը իրոք հին կազմություններ են, ապա վերջին *-s-ն բաղաձայններից առաջ չպետք է ընկներ. տ-ն պահպանվել է հիմնականում հնդեվրոպական հիմքերի մոտ՝ տ-գեղ, տ-գէտ, տ-հալ, տ-հաճ (?), տ-հաս, տ-ձեւ, տ-մարդի, տ-քնիմ, բբռ. տ-կեր, տ-կոտ (տ-կոտն «կոնատ»)։ Այս կազմությունները վաղնջահայերենում դեռևս գործուն տիպ են եղել։

Մյուս կարգի նախածանցավոր կազմությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ 1) կազմություններ, որոնց նախածանցները գործել են միաժամանակ որպես նախդիրներ, և 2) այլ կազմություններ, որոնք գերազանցապես ժառանգվել են պատրաստի ձևով և այլևս հիմք չեն ծառայել նոր բաղադրությունների հանդես գալու համար։ Առաջինները հին հայերենում հիմնականում գիտակցվող կազմություններ են, բայց ոչ այնքան արդյունավետ և իմաստներով ոչ այնքան որոշակիորեն տարբերակվող։ Այս պատճառով էլ հունաբան դպրոցի հեղինակները մասամբ դրանք դարձնում են գործուն՝ որոշակի համապատասխանության մեջ դնելով հունական նախածանցների հետ, մասամբ գործածության մեջ են դնում այլ նախածանցներ։

Բերենք նախ առաջին խմբի նախածանցները և թվարկենք դրանցով կազմված բառերը՝ նկատի ունենալով, որ վերջիններս կարող էին զգալի մասով առկա լինել նաև վաղնջահայերենում։

1) Վ.-հ. *i̯ō- (հ.-ե. *g'hō «հետևում, հետո, համար», որից բալթ. *a-žo, սլավ. za)>հ. հ. զ- (հազվադեպ նաև ձ- հմմտ. զ-գայր և ձ-գեռ-տ). որպես նախդիր հին հայերենում սա հանդիպում է գոյականների տրական (որպես ճարկանել, զարկանել բայերի խնդրի ցուցիչ՝ զարկանել զգետնի), հայցական (որպես որոշյալ հայցականի ցուցիչ՝ բամել զջուրն), բացառական (որպես ասացական, իմացական, զգացական ու հոգեվիճակային բայերի խնդրի ցուցիչ՝ «մասին» իմաստով՝ ասել զնմանէ «ասել նրա մասին», այլև որպես առնել, ունել, բուռն ճարկանել, յղել, գալ և այլ բայերի խնդրի ցուցիչ՝ յղել զնմանէ «ուղարկել նրա ետևից». հմմտ. ռուս. посылать за ним) և գործիական «շուրջը» իմաստով՝ զնովաւ «նրա շուրջը», այլև որպես անցանել, ծիծաղել և այլ բայերի խնդրի ցուցիչ՝ ծիծաղել զնովաւ): Որպես նախածանց այն հանդիպում է հնդեվրոպական հիմքեր ունեցող հետևյալ բառերում՝ զանգանեմ, զեղծանեմ, զաչացու «կույր», զականեմ «զննել» զարդ, զարդարեմ, զարթնում, զարկ, զարկանեմ, զարմ, զարմանամ, զգամ, զգաւն, զգենում (հմմտ. բբռ. գենալ), զգեստ, զգետնեմ, զգլխեմ, զգնամ, զեկուցանեմ (հմմտ. գամ, եկի և զգամ, զ-եկ-), զեղում (հմմտ. հեղում), զեռամ, զեռուն, զինչ, զիջանիմ, զկծեմ, զնեմ, զմէ (հմմտ. իմ), զով (հմմտ. հով): Զ-ն, համեմատաբար ուշ, դրվել է նաև նախդրավոր այլ կազմությունների մոտ՝ զ-ան-գիտեմ, զառածանեմ, զառամ, զառանցեմ, զարտուղի և այլն։

2) Վ.-հ. *(h)oṙu- (հ.-ե. *porsō՝ հուն. πόρσω, πόρρω, լատ. porrō «առաջ, ավելի առաջ, հեռու»)>հ. հ. առ-. առաջին հերթին գործածվելով որպես նախդիր՝ տարբեր հոլովներով, սա հին հայերենում արտահայտում է գերազանցապես մերձավորության գաղափար, որ հիմնականում պահպանվում է նաև նախածանցային գործածության դեպքում։ Որպես այդպիսին առ-ը հանդես է գալիս և՛ բայերի և՛ հնից եկող անվանական կազմությունների դեպքում. սպ-ով և ստ-ով սկսվող արմատների մոտ հանդիպում է լրացուցիչ ա (առա-), որ կարող է լինել կամ նախահավելվածային, կամ, թերևս, հ.-ե. *ə վերջաձայնի զրո աստիճանի արտացոլում՝ *porsə-> առա-. վերջին ենթադրության ճիշտ լինելու դեպքում մենք գործ ունենք հին կազմությունների հետ. քիչ հավանական է հոդակապ ենթադրելը։ Հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից առ-ն ստացել է նոր գործածություն՝ հուն. προσ-ի դիմաց։ Առանձնացնենք ոչ հունաբան հին կազմությունները՝ առագաստ (հմմտ. ագանիմ «հագնել»), առածիմ (հմմտ. ածեմ, ածիմ), առակ, առակոյտ «հա-

կառակող» (առակումն «հակառակություն») (?), առանձին, առանց, առասպել, առաստաղ, առաւել, առաւաւտ (?), առաւրեայ, առաքինի (հ.-ե. *ken- «ջանալ, աշխատել». հմմտ. մ. կիմր. gochawn, gogawn «գերազանց») (?), առէջ, առընթեր (առ+ընդ+թեր), առլնում, առխեթեմ, առողջ: Առաջ բառը կամ բխեցվում է առ-ին մերձավոր *porsədi̯o-ից, կամ համարվում առ+աջ կազմություն. նրանով կան կազմված զանազան բաղադրություններ՝ նախորդող յ-ով կամ առանց դրա (առաջա և յառաջա- ձևերով), բայց դրանց հնության աստիճանը որոշել դժվար է:

3) Վ.-հ. *andi- (*əndi-?)(հ.-ե. *anti «դիմաց, առջև» և*n̥dhos «տակ», վերջինս հոլովված ձևով գործածված)>հ. հ. ընդ-, հազվադեպ ընտ-՝ դ-ի և տ-ի շփոթությամբ (ձայնավորներից առաջ), ըմ- (շրթնային բաղաձայններից առաջ) և ըն- (այլ բաղաձայններից առաջ). որպես նախդիր արտահայտում է և՛ հ.-ե. *anti-ից եկող («դիմաց, փոխարեն», «հետ, միասին»), և՛ *n̥dhos-ից («տակ») եկող իմաստներ՝ վերջինս մասնավորապես գործիական հոլովով: Հունաբան հեղինակները հետագայում ընդ-ի հետ միասին օգտագործում են նրա բարբառային տարբերակը՝ ենթ: Նախդիր-նախածանցի երեք տարբերակներից առաջինը սովորաբար գործածվում է առանց հոդակապի. դասական շրջանի հնդեվրոպական արմատներով կազմություններից նշենք ընդարմանամ, ընդաւագեմ, ընդգեղձանիմ, ընդգնիմ, ընդել (ընդելանիմ, ընդելնում, ընդելուզանեմ և ընդելուցանեմ), ընդմիջեմ, ընդմտանեմ, ընդմիտ (ընդմտատուր), ընդոդնիմ «անհոգ նստել» (հմմտ. յոդնիմ), ընդոստ, ընդունայն, ընդունիմ. -ա- հոդակապով այն հանդես է գալիս ընդարբոյս (ընտարբոյս), ընդակից (կից-ը *gʷei- «սեղմել, ներառել» արմատի՞ց), ընտասուն, ընդոծին բառի մեջ պահպանվել է հին *-o-ով հիմքը: Ըն- ձևը առկա է ընթեռնում, ընկեր, ընկլնում (ընկլուզանեմ), ընկողնիմ, ընկողմանիմ, ընձեռեմ, ընկալոյ (հմմտ. ընդունիմ, աոր. ընկալայ), ընծուիմ (ըն-ծիւղ) բառերում: Ըմ- ձևը հանդես է գալիս ըմբռնեմ, ըմբերեմ, ըմբերանեմ, ըմպեմ (համարանական վերականգնմամբ՝ ումպ):

4) Վ.-հ. *osti- (*əsti?) (հ.-ե. *posti)>հ. հ. ըստ-. որպես նախդիր ունի «ըստ, համաձայն», «դեպ, այն կողմը» և հնդեվրոպականին մոտ «հետո, հետևից» (մի ըստ միոջէ «մեկը մյուսի հետևից, հաջորդաբար») իմաստները: Որպես նախածանց գրվում է ոչ միայն ըստ-, այլև առանց ը-ի՝ ստ- ձևով՝ (ը)ստանձնեմ, (ը)ստգիտ, (ը)ստգտանեմ, ստգիտել, (ը)ստերիւրեմ, ըստունգանեմ (<ըստունկանեմ), ըստնուն «ներհուն, հմուտ»:

5) Վ.-հ. *i/y- (հ.-ե. *en «մեջ»)>հ. հ. յ- (միայն ձայնավորներից առաջ. բաղաձայններից առաջ ընկել է). համապատասխանում է հին հայերենի ի նախդրին, որ ձայնավորից առաջ գտնված դիրքում ունեցել է յ- ձևը (ի գետոյ, բայց յականէ). քանի որ հ.-ե. *p-ն ու *s-ն երբեմն կարող են փոխվել յ-ի՝ փոխանակ հ-ի (հմմտ. յիսուն՝ հինգ-ի դիմաց, յաւրայ «խորթ հայր» հայր-ի դիմաց), և քանի որ հ-ով բառերը կարող են ունենալ նաև յ-ով տարբերակներ (հմմտ. հատանեմ—յատանեմ), ուստի երբեմն դժվար է որոշել բառասկզբնային յ-ի բնույթը՝ նրա ածանցական, թե ոչ ածանցական ծագումը. այդ դեպքում կարելի է նկատի առնել 1) առանց յ-ի ձևերի առկայությունը և 2) բառերի ստուգաբանությունը. հ.-ե. *p-ով և *s-ով բառերի դեպքում յ-ի նախդիր լինելը քիչ հավանական է. նշենք նաև, որ առանց յ-ի մի շարք ձևեր կարող են արդյունք լինել յ-ի հետագա անկման: Բերենք հնդեվրոպական արմատներով և յ- նախածանցով հիմնական կազմությունները՝ յածեմ,-իմ (հմմտ. ածեմ,-իմ), յականեմ (հմմտ. ական, ականեմ), յաղեմ (հմմտ. աղ, աղեմ), յաճախ (հմմտ. աճ), յաման (հ.-ե *omə-?), յայտ (հ.-ե. *ai- «այրել, լուսավորել», թե՞ այց), յայցեմ (հմմտ. այց, այցեմ), յանձանեմ (հմմտ. յ-անձ-ն), յանձնեմ, յանցանեմ (հմմտ. անցանեմ, զանցանեմ), յաշաղեմ, -իմ «նախանձել» (հմմտ. աչ-ք), յաջողեմ, յաջորդ (հմմտ. աջ), յառաջ (հմմտ. առաջ), յառնեմ (հմմտ. արի՛ «վեր կաց»), յար (հմմտ. առնեմ, ար-), յարմար, յաւդ (հմմտ. զաւդ), յեղուզակ (հմմտ. եղանեմ, եղուզակ), յետ (հմմտ. հետ, հետ) (?), յերիւրեմ (հմմտ. երիւր, ստերիւրեմ), յերկար (հմմտ. երկար), յերկուանամ, յղեմ (հմմտ. ուղի), յղի (?), յոգն, յոյս (?), յորդ, յորդոր, յորձ (հմմտ. յորդ) (?), յորձ «արու ոչխար, խոյ» (հմմտ. որձ):

Հունաբան դպրոցի ներկայացուցիչների գործածած ըն- (բաղաձայնից առաջ) և ն- «մեջ» նախդիրները թերևս որևէ բարբառում այդ ձևով պահպանված ի/յ- նախդրի տարբերակներն են. Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3^2, 434) այդ ն-ն է տեսնում նաւագել «ծածկել» բայի մեջ (հմմտ. նաև ընդաւագել):

6) Վ.-հ. *(a)cʿ- (հ.-ե. *ad-sk´-)>հ. հ. ց-. այս նախդիրը «մինչև» նշանակությամբ հին հայերենում հազվադեպ է հանդիպում որպես նախածանց, բայց պետք է կարծել, որ վաղնջահայերենում համեմատաբար ավելի ակտիվ գործածություն է ունեցել. ց-ով կազմություններ են ցայգ «մինչև այգ, գիշեր», ցանկ «պատ, պարիսպ» (հմմտ. անկանիմ), ցերեկ:

Երկրորդ խմբի նախամասնիկավոր կազմությունները հին հայերենում ներկայացված են հազվադեպ օրինակներով, որոնց մեջ սկզբնական կազմությունը կամ չի գիտակցվում, կամ թույլ է գիտակցվում. վաղնջահայերենում թերևս այս կազմությունների մեջ հանդես եկող նախամասնիկները ավելի ակտիվ դեր են կատարել:

1) Վ.-հ. *ambi- (հ.-ե. ambhi «շուրջը, երկու կողմից»)>հ. հ. ամբ-. առկա է միայն ամբ-ողջ բառի մեջ (հմմտ. ողջ, առ-ողջ):

2) Վ.-հ. *an- (հ.-ե. an «(թեք հարթության) վրայով, վրա»)>հ. հ. ան-. առկա է անկողին, անձեռոց, այլև, թերևս, անհայտ ծագման անդորր (անդոյր. հմմտ. դիւր, դոյր) բառերում. հավանաբար այս ածանցն է առկա նաև (ն)ամբառնամ, նամբերեմ, նան-ուր բառերում՝ խառնված իրանական ծագման (ն)ամ-, (ն)ան- նախածանցի հետ. անհնար չէ նույն մասնիկի մի այլ տարբերակը (*nō/nə) տեսնել նա-խանձ բառի մեջ (հմմտ. խանդ, խանձ), եթե այն իրանական ծագում չունի:

3) Վ.-հ. *ni- (հ.-ե. *ni-, *nei- «ցած»)>հ. հ. ն(ի)-՝ նի-ստ (նստիմ), նիւթ (հմմտ. հիւթ), նկուղ *ni-gu-la-՝ *geu- «ծռել» արմատի՞ց. հմմտ. մ. վ. գերմ. kūle, մ. ստ գերմ. kūle, հ. շվեդ. kūla «փոս, խոռոչ») (?), այլև անհայտ ծագման նայիմ (հմմտ. հայիմ), նեցուկ (հմմտ. յենում, աոր. յեցայ):

4) Վ.-հ. *(h)am- (հ.-ե. *sm̥- «համա-, միասին»)>հ. հ. ամ-, ան- (ոչ շրթնային բաղաձայնից առաջ). առկա է ամ-ուսին (հմմտ. ուսանիմ), ամ-[illegible]ձիք, թերևս նաև անտառ (*sm̥-dəru-՝ *deru-, *doru- «ծառ» բառից) բառերում:

5) Վ.-հ. *hu- (հ.-ե. *su- «լավ»)>հ. հ. հ(ը)-. անկախ բառ է՝ նախամասնիկի արժեք ստացած՝ հ-լու (հմմտ. լսեմ, լու, լուր), հմուտ (հմմտ. մուտ, մտանեմ) բառերում. հետագայում խառնվել է իրանական hu-ի հետ, որ առկա է հզաւր (հմմտ. զաւր), հմայեմ, հնար բառերում, ընդ որում սրանցից առաջինը վերլուծելի է հենց հայերենում:

Հավանաբար վաղնջահայերենում իր անկախությունը արդեն կորցրել էր հ.-ե. *e-, *o-, *ei- դերանվանական մասնիկը, որ հանդես է գալիս ե-րէ, յ-ո-գն, ո-ստ, այ-ս, այ-դ, այ-ն, այլև, թերևս, ա-ճաւքի և անհայտ ծագման ա-ճաւսր բառերում։

Հայտնի չէ, գիտակցվե՞լ է արդյոք ճեռւ բառի կազմությունը վ.-հ. *he-ruyi (հ.-ե. *peruti) բաղադրության մեջ. հավանաբար ոչ, որովհետև ճեռ-ը որպես բաղադրիչ այլուր չի հանդիպում (*per-ի տարբերակներից են առ-, երա-(խայրի), ճեռի)։

Մասնիկի արժեք է ստացել նաև տի– «մեծ» բառը (հ.-ե. dei- «փայլել», հմմտ. լիտվ. didis «մեծ» ?), որ հանդես է գալիս տէր<տի–այր, տի–եզեր–ք, տի–կին բառերում. սրանք բոլորն էլ հին կազմություններ են երևում։

Հուպ բառի մեջ Հ. Աճառյանը տեսնում է *(ek)s-ub- նախաձևը (հմմտ. լատ. sub «տակ»), որ, եթե ստուգաբանությունը ճիշտ է, իբրև բաղադրություն հայերենում չի գիտակցվել։

գ) ԲԱՐԴՈՒՄ

Հին հայերենում պահպանված բուն հնդեվրոպական բարդությունները սակավաթիվ են, բայց պետք է կարծել, որ դրանք համեմատաբար մեծաթիվ են եղել վաղնջահայերենում։ Նշենք վաղնջահայերենից եկող և հին հայերենում պահպանված մի շարք կազմություններ։

Հայերենի՝ հնդեվրոպական լեզվից ժառանգած բարդությունների տիպերի մեջ առաջին հերթին պետք է հիշատակել տասնավորներ և տասնյակներ նշող թվականները՝ կազմության ընդհանուր եղանակով, բայց հայերենին բնորոշ (վաղնջահայերենում արդեն առկա) առանձնահատկություններով՝ մետասան (<մեա–տասան<միատասան), երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան (–ե-ն գալիս է հ.-ե. *penku̯e-ի *e-ից՝ *penku̯e dek'm̥t-. հմմտ. հ. հնդկ. pañca-daśat, ավեստ. panca-dasa, գոթ. fimftaihun), վեշտասան և քսան (*u̯i-k'm̥ti <*du̯i-k'm̥ti. հմմտ. ավեստ. visaiti, հուն. դոր. Ϝίκατι, լատ. viginti), երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, յոթանասուն, ութսուն, իննսուն։

Հին պետք է լինեն նաև այն բարդությունները, որոնց առաջին բաղադրիչները թվականներ են, և որոնց այդ բաղադրիչները պահպանել են կազմության արխաիկ ձևեր՝ երկ(ի)–ով (< *du̯i-. հմմտ. հ. հնդկ. dvi-, հուն. δι-, լատ. bi-)՝ երկբայ (–ի-ի սղմամբ նախաշեշտ դիրքում), երկբան, երկբերան(ի), երկբոյս (–բուսի), երկգլուխ (–խի), երկեամ (<երկի–ամ), երկերիւր «երկու հարյուր», երկեւան (երկի+(ճ)աւան), երկճամ, երկձայն, երկմիտ, երկսայրի. երի-ով (<*tri-. հմմտ. հ. հնդկ. tri-, հուն. τρι-, լատ. tri-)՝ երեամ։ Ինչ վերաբերում է երեք-ով և չորեք-ով բարդություններին, ապա դրանք հնդեվրոպականից չեն գալիս, բայց, ինչպես ցույց են տալիս երեքտասան, չորեքտասան կազմությունները (–ե-ի պահպանմամբ) հին են և, հավանաբար, առկա են եղել վաղնջահայերենում։

Ինչպես հայտնի է, հնդեվրոպական լեզուն բարդության բաղադրիչների կապակցման հատուկ միջոց, և մասնավորապես, հոդակապ չի ունեցել։ Հին հայերենում էլ առկա –ա– հոդակապը տարածվել է միայն հնագույն շրջանում, այն էլ համեմատաբար ուշ՝ վերջավորությունների թուլացումից և անկումից հետո։ Վաղնջահայերենում շարունակվում էր հնդեվրոպական բարդությունների կազմության սովորական եղանակը այսինքն՝ բաղադրիչները միանում էին իրենց սովորական հիմքային ձևով, ընդ որում առաջին անդամ բաղադրիչը վերջավանկում սովորաբար ունենում էր ձայնդարձի զրո աստիճան։ Ասածից բխում է, որ հին բարդություններ պետք է որոնել հին հայերենի այն բառերի մեջ, որոնք կամ զուրկ են –ա– հոդակապից և պահպանում են առաջին բաղադրիչի հիմքային ձևը, կամ –ա– հոդակապը շարունակում է հնդեվրոպական *-ā- կամ սրա ստորին ձայնդարձը ներկայացնող *-ə- ձայնավորը։ Իհարկե, հնարավոր են դեպքեր, երբ բարդությունը գալիս է հնդեվրոպական շրջանից, բայց համաբանությամբ ստացել է –ա– ձայնավորը, մասնավորապես բնավոր –ո-ով ձևը փոխարինվել է ա-ով ձևով (հմմտ. Զորոփոր—Զորափոր տեղանունը)։

Հնդեվրոպական բարդությունները ևս երկու տիպի են եղել՝ կենտրոնաձիգ, որի դեպքում բարդության իմաստը սահմանափակվում է նրա ներսում՝ բաղադրիչների ընդհանուր իմաստով, և կենտրոնախույս, որի դեպքում բարդությունն ունի նաև լրացուցիչ իմաստ։ Առաջին տիպի բարդությունների մեջ մասամբ առկա է բաղադրիչների սովորական շարադասությունը (հմմտ. հուն. πατρ-άδελφος «հորեղբայր», ὁπλο-φόρος «զինակիր»), մասամբ լրացյալը նախորդում է լրացումին (առաջին բաղադրիչի բայահիմք լինելու դեպքում. հմմտ. հուն. φυγο-πτόλεμος «պատերազմախույս», բառացի «խուսապատերազմ»). վերջին տեսակը հայերենը չի պահպանել։ Երկրորդ տիպի բարդությունները հատկացական բնույթի են, այսինքն՝ ամբողջովին առնված ածականներ են, որոնք ցույց են տալիս մի բան ունենալը (հմմտ. լատ. magn-animus «մեծահոգի»՝ «մեծ հոգի ունեցող»)։

Քննենք նախ անհոդակապ բարդությունները։

Այստեղ նշենք ամենից առաջ ազգակցական անունները՝ վերևում հիշված հուն. πατρ-άδελφος տիպի, թեև դրանք կարող են մասամբ համաբանական նորակազմություններ լինել՝ հաւրեղբայր (*pətr-), մաւրեղբայր (*mātr-) քեռ-այր, քեռորդի (*su̯esr-)[5], թերևս նաև եղբաւր–որդի (*bhrātr-)։

Ձայնորդահանգ հիմքով առաջին բաղադրիչ ունեցող բառերից հիշենք ակնկոր, ակնհար, անձնտեր, շնորդի, տնտես, թերևս նաև ակներեւ, ձկնորս, մկնականջ և այլն. երկրորդ բաղադրիչի՝ ձայնավորով սկսվելու դեպքում հոդակապի բացակայությունը սովորական երևույթ է, և այդպիսի բարդությունները կարող են հին չլինել։

Հնդեվրոպական *-i-ով և *-u̯-ով հիմքեր ունեցող բառերը, հանդես գալով որպես բարդության առաջին բաղադրիչ, ըստ հնչյունափոխության ընդհանուր կանոնների հին հայերենում կորցրել են այդ ձայնավորները նախաշեշտ դիրքում և համընկել ուղղականի ձևերի հետ։ Սրանք գալիս են հնից, եթե, իհարկե, մենք գործ չունենք հոդակապի բացակայության բարբառային երևույթի հետ։ Ահավասիկ այսպիսի հիմքեր ունեցող բարդությունների մի խումբ՝ բանբեր, բանգէտ (և բանագէտ), քաղցկեղ. կասկածելի է այծքաղ բառի հնությունը, որ, հավանաբար, պատճենված է հունարենից [հմմտ. Meillet, 1962, 169]։

Հովիւ բառի մեջ, որ համարվում է հին *(H)ou̯i-pā բարդության հետագա ձևափոխություն, *-i-ն պահպանվել է շեշտի տակ եղած դիրքում։

---

[5] Ընդհանրապես *su̯esōr- «քույր» ձևն ինքը մեկնաբանվում է որպես հ.-ե. հին բարդություն՝ *su̯esōr- «յուր քոյրն»։

Տանուտէր բառի մեջ պահպանվել է առաջին բաղադրիչի ու-ով հիմքը հավանաբար այն պատճառով, որ սկզբնապես այն ըմբռնվել է որպես սովորական բառակապակցություն՝ տանու տէր, այսինքն՝ հիմքակազմ ու-ն ըմբռնվել է որպես սեռականի վերջավորություն։

Հին հայերենի -ի/ա-ով հիմքերը, որոնք արտացոլում են հնդեվրոպական *-ā/ə-ով հիմքերը, բառաբարդման մեջ, թերևս ավելի մեծ չափով, քան ցեղակից լեզուներում, պահպանել և, ինչպես նշեցինք, որպես հոդակապ տարածել են -ա-ով հիմքերը։ Նշանակում է՝ վաղնջահայերենում որպես առաջին բաղադրիչ այսպիսի հիմքեր ունեցող բարդությունները պետք է զգալի թիվ կազմած լինեին։ Թվենք հին հայերենի ա-ով հիմք ունեցող բառերով կազմված մի շարք բարդություններ, որոնց մեջ ա-ն կարող է ինչպես նախնական լինել, այնպես էլ որոշ մասով կազմված լինել -ա- հոդակապի տարածմամբ՝ ամանոր (ամ, -աց), բրածեծ (բիր, -աւ), գիտահարց (գէտ, -աց), երկարաբան (երկար, -աց), ընկերասէր (ընկեր, -աց), իրագէտ (իր, -աց), կենագործ (կեանք, -աց), կնամոլ, կնասէր (կին, -աւ), հովուասէր (հովիւ, -աց), մեծաբեռն, մեծագին, մեծատուն (մեծ, -աց), մեղուաբոյն (մեղու, -աց), մտադիր (միտք, -աց), քմազարդ (քիմք, -աց) և այլն։

Սրանց մեջ հատուկ հիշատակության արժանի են ամենա-ով բաղադրությունները, որոնց -ա-ն գալիս է հնից (հմմտ. ամենա-յն, ուշ՝ ամեն-այն) և որոնց ամենա-ն նշանակել է ոչ միայն «ամենա-, ամենից ավելի» ինչպես այժմ (երբ երկրորդ բաղադրիչն ածական է), այլև «ամեն ինչ» (երբ երկրորդ բաղադրիչը բայահիմք է՝ ամենաբեր, ամենագործ և այլն), «ամեն, ամեն մի» (երբ երկրորդ բաղադրիչը գոյական է՝ ամենագիշեր)՝ ամենաբեր, ամենագեղ, ամենագէտ, ամենագիշեր, ամենագործ, ամենածին, ամենակալ և այլն։

Ինչպես նշվել է, հնդեվրոպական բնավոր հիմքերը մտնում են բարդության կազմի մեջ որպես առաջին բաղադրիչ՝ պահպանելով հիմքային *-o- ձայնավորը։ Հին հայերենը այս տիպի բարդությունները չի պահպանել՝ դրանց *-o-ն փոխարինած լինելով -ա- հոդակապով։ Սակայն վաղնջահայերենում դրանք, անշուշտ, մեծ քանակ պիտի կազմած լինեին։ Ակնհայտ է, որ հին հայերենի -ա- հոդակապով բարդությունների այն մասը, որ ունեցել է հնդեվրոպական *-o- հիմքով առաջին բաղադրիչ, այդ հիմքային ձևը պահպանել է վաղնջահայերենում։ Այլ կերպ ասած՝ հետևյալ բարդությունները վաղնջահայերենում, ամենայն հավանականությամբ, -ա-ի փոխարեն *-o- են ունեցել (հմմտ. գիշերոյն—գիշերայն)՝ այլածին (հմմտ. հուն. ἀλλο-γενής), արծաթագին, արծաթագործ, աղամուտ, բուսաբեր, գետամոյն «գետախեղդ», գիշերամարտ, լիաբերան, լիաբուռն, լծադիր (և լծակից?), լուսաբեր (հմմտ. և լուսաւոր), լուսալի(ր), լուսամուտ, լուսատու, հոգաբարձ, հոգածու, հողագործ, հողածին, հրալից, ձիասէր, միջամուխ, միջամուտ, նորաբեր, նորագործ, նորամուտ, նորատիք, ողջամիտ, ջրադարձ, ջրածին «ջրից ծնված», սորամուտ «սոր (որջ, ծակ) մտնող», ստաբան, սրաբեւ, սրամիտ, սրատես, քնասէր և այլն։ Միայն ընդոծին բառի մեջ է, որ -ո-վ հիմքը պահպանվել է։

Հին հայերենում նշանակալից թիվ են կազմում այն բարդությունները, որոնց երկրորդ բաղադրիչը բայահիմք է և գալիս է համապատասխան հնդեվրոպական բայահիմքերից ու բայահիմքային կազմություններից՝ -ագ (հմմտ. ագանիմ «գիշերել»), -ած, -առ, -արած, -բեր, -բոյծ, -գործ, -գէտ, -գէ -գիր, -երեւ, -գ-երծ, -կալ, -կուլ, -հեղ (և -գ-եղ<գ-հեղ), -ման, -հիւս -սուն, -տես, -տեւ և այլն։ Այլ դեպքերում այսպիսի բայահիմքերը ներկայացնում են, ինչպես ածանցների կապակցությամբ նշվել է, կատարյալի հիմքը՝ -աց, -եաց, -ոյց ձևերով։ Ածանցների քննության կապակցությամբ մենք արդեն առիթ ենք ունեցել խոսելու այն բարդությունների մասին, որոնց երկրորդ բաղադրիչը բայահիմք է՝ օժտված -ու-ով, -ածու, -արկու, -առու, -երգու, -կալու, -պագու և այլն։

Վաղնջահայերենում առկա մի շարք բարդություններ հետագայում ըմբռնվել են որպես վերջածանցավոր կազմություններ, այսինքն՝ նրանց երկրորդ բաղադրիչները վերածվել են ածանցական մասնիկների (ածանցների և ածանցակերպների)՝ հնչյունական փոփոխությամբ, կամ առանց դրա. -ա- հոդակապը սրանց մեջ մասամբ սկզբնական է, մասամբ համաբանությամբ տարածված։ Այսպիսի կազմությունների մասին մանրակրկիտ խոսվել է ածանցների քննության կապակցությամբ, բայց այստեղ դրանց վրա կանգ կառնենք ավելի հանգամանորեն։

-(ա)բար (հ. հ. մակբայակերտ ածանց, որ ծագում է բար-ք բառի արմատից, վերջինս գալիս է հ.-ե. *bher- «բերել» արմատից և բերել բայի ձայնդարձային ձևն է. «բարքով, ձևով» իմաստի համար հմմտ. անգլ. մակբայական -ly<հ. անգլ. lic «նման» [Greppin, 1975, 21—22]՝ ընկերա-բար, մեծա-բար՝ հետագա ընկեր-ա-բար, մեծ-ա-բար ըմբռնմամբ և տարածմամբ այլ հիմքերով բառերի վրա՝ լրբաբար, հայրաբար, մայրաբար, նրբաբար և այլն. սրանց կողքին շարունակում են գոյություն ունենալ -բարոյ բաղադրիչով ածականները՝ հայրաբարոյ, մանկաբարոյ և այլն։

-ագ (հ. հ. ոչ գործուն ածականակերտ ածանց՝ ագանիմ բայի արմատից. քիչ է տարածված)՝ բացաւբեագ, այլև ոչ հնդեվրոպական հիմքով վայր-ագ։

-ած (հ. հ. ածականակերտ և գոյականակերտ ածանց, որ ծագում է ածեմ-ից և պատմական շրջանում փոխվել է դերբայակերտ ածանցի)՝ գոյականակերտ՝ ասած, գործած, ձուլած, որմած, անկած, ածականակերտ՝ արարած, ողորմած, ուսած, ցաւած, քնած (և քնէած). Հանդիպում է նաև -ուած տարբերակով՝ անկուած, գործուած, դարձուած, կիտուած, հատուած, հարուած, յաղուած, ստեղծուած և այլն (հմմտ. Ա. Ա. Աբրահամյան, 1953, 204—211). Սրանցից են կազմված -ած-ոյ, -ածու և -ուածոյ ածանցները՝ բրածոյ (հմմտ. բրած), հալածոյ, ձուլածու (հմմտ. ձուլած), քաղուածոյ-ք (հմմտ. քաղածոյ) և այլն. Հին ած-եմ-ի իմաստը պահպանել են ծաղրածու, փայլածու բառերը. Ա. Մեյեն [Meillet, 1962, 181] տարբերում է ածականակերտ -ած-ը գոյականակերտ -ած-ից. վերջինս Գրեպինը [Greppin, 1975, 22] համեմատում է հուն. -γ-ի հետ՝ ἅρπαξ, -αγος և բխեցնում հ.-ե. *-g′-ից.

-ա-կից (հ. հ. ածականակերտ ածանց, որ ծագում է կց-եմ բայի հիմքից. հնարավոր է այս բայի հ.-ե. ծագումը՝ *gu̯i-sk′- նախաձևից՝ *gu̯ei- «սեղմել, ներառել, խցկել» արմատից)՝ դրակից (հմմտ. դուռն, դրաց), կենակից (հմմտ. կեանք, -աց), այլև գործակից, երդակից, լծակից և այլն։

-ա-կալ (հ. հ. գոյականակերտ ածանց, որ ծագում է կալում «բռնել» բայի արմատից. ավելի ուշ շրջանում կալել-ը կազմել է բարբառներում և գրական լեզվում «պատել, ծածկվել» իմաստով բայեր՝ ճարպակալել, մասկալել և այլն)՝ երկրակալ, այլև դիակալ, տեղակալ, ձերբակալ և այլն։

-ա-ւոր և -ուոր (հ. հ. լայնորեն տարածված ածականակերտ և գոյականակերտ ածանց, որ ծագում է հ.-ե. *bher- «բերել» արմատի *bhorā ձևից և զուգահեռ ունի -ա-քեր-ով կազմությունների մեջ. հմմտ. հուն. -φορος, -φορα՝ լուսաւոր— λευκοφόρος)՝ մեղաւոր (հմմտ. մեղ-ք, -աց), մտաւոր, հիւթաւոր և աղեղնաւոր, ատամնաւոր, գեղարդնաւոր, երկնաւոր, երկրաւոր և այլն. հավանաբար համեմատաբար ուշ են կազմվել բայածանց անունները՝ անցաւոր և այլն։

-եղ (հ. հ. ածականակերտ ածանց, որ հավանաբար ծագում է հեղում «լցնել» բայի հիմքից և նշանակում է «շատ ունեցող»)՝ թիկնեղ, հիւթեղ և այլն. սրանից պետք է հետագայում կազմված և տարածված լինեն -եղ-ի և եղ-էն (-էն-ը իրանական աղբյուրից) ածանցները՝ աղտեղի, դեղնեղի (?), մսեղի (և մսեղէն), հրեղէն, ձիւնեղէն, քարեղէն և այլն։

-(ա)հար (հ. հ. ածականակերտ և գոյականակերտ ածանց (ածանցակերպ), որ ծագում է հարում, հար-կ-անեմ բայերի արմատից և ստացել է ածանցական արժեք)՝ ակնհար, գանահար, երդմնահար, երկնահար «շանթահար», կաղնահար, ներկահար «ներկող» և այլն. թերևս սրանից է ծագում ուշ ավանդված կացար (մի թռչուն) բառի -ար-ը (հմմտ. հատ>-ատ):

Բարդությունները կարևոր դեր են խաղացել հնդեվրոպական հատուկ անունների կազմավորման մեջ։ Հին հնդկական, հունական անձնանունները հաճախակի են կազմվում բարդության եղանակով։ Վաղնջահայերենը նույնպես պետք է ունենար բարդ անձնանուններ, որոնք, սակայն, չեն պահպանվել։ Դրանց բնույթի մասին միայն որոշ գաղափար են տալիս Ամանոր, Վանատուր (առաջին բաղադրիչը ոչ բնիկ) դիցանունները, Նորայր, Տիրայր, Սկայորդի (առաջին բաղադրիչը ոչ բնիկ, թերևս թրակյան աղբյուրից), Հրաչյա (եթե սա իրանական փոխառություն չէ. հմմտ. ավեստ. Fračya-) անձնանունները. Խորենացու հաղորդած Հաւրոյ անձնանունը կարող է լինել հուն. Πατρο-ով բարդ անձնանունների (հմմտ. Πατροκλῆς) տիպի որևէ հին անձնանվան կրճատ-փաղաքշական ձևը։

Զգալի թվով հին բարդ կազմություններ են պահպանվել բուն հայկական տեղանուններում. դրանց մեջ հաճախակի են հանդիպում այնպիսիները, որոնք կազմված են հիմքերի հնդեվրոպական սովորական հարումով, ընդ որում դժվար է երբեմն տարբերել դրանց բարդությո՞ւն, թե՞ պարզ հարադրություն լինելը. -ո-ով հիմքով՝ Աղոջրիկ (Աղւոյ ջրիկ), Զորափոր (Զորոյ փոր, Զորափոր), -ի-ով հիմքով (սրա անկմամբ նախաշեշտ դիրքում)՝ Այծպտկունք), -ա-ով հիմքով՝ Մեծագետ, Մեծամաւր:

դ) ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Հնդեվրոպական լեզուն, ինչպես հայտնի է, ունեցել է հիմքերի երկու տեսակ կրկնություն՝ քերականական և բառային. վերջինս հիմնականում սաստկական և արտահայտչական բնույթ է ունեցել։ Հին հայերենը քերականական կրկնության մնացորդներ գրեթե չի պահպանել. միակ հավաստի օրինակը առնեմ, աոր. արարի բայն է։ Կարելի է կարծել, որ վաղնջահայերենում քերականական կրկնությունն ավելի տարածված է եղել, բայց այս կարծիքը հիմնավորելու որևէ փաստ չունենք. ընդհանրապես կարելի է ասել, որ քերականական կրկնությունը հայկական բարբառային գոտում ավելի քիչ տարածում է ունեցել, քան այլ գոտիներում։ Ինչ վերաբերում է բառային կամ սաստկական կրկնությանը, ապա հայերենը ոչ միայն պահպանել է հնդեվրոպական համապատասխան կաղապարները, այլև հանդես բերել նոր կաղապարներ։ Ի տարբերություն բարդման, որ հատուկ է անուններին, կրկնությունն ընդգրկում է և՛ անվանական և՛ բայական հիմքերը։ Հատկապես մեծ թիվ են կազմում բնաձայն և արտահայտչական-նկարագրական բնույթի կրկնավոր հիմքերը։ Պետք է կարծել, որ հին հայերենի հնդեվրոպական ծագման կրկնավոր հիմքերը զգալի մասով գոյություն են ունեցել նաև վաղնջահայերենում։ Բարբառներում և ժամանակակից հայերենում կրկնավորների քանակը մեծ չափով աճել է. կրկնությունը արտահայտչական և գործառական մեծ դեր է խաղում։

Կարելի է տարբերել բառային կրկնության երկու հիմնական տեսակ՝ նույնական նական կամ անփոփոխ և ոչ նույնական կամ փոփոխական։

Նույնական (անփոփոխ) կրկնությունը լինում է առաջին հերթին ձայնավորով սկսվող արմատների դեպքում, սակայն հանդիպում է նաև բաղաձայնով սկսվող արմատների նույնական կրկնություն՝ աղաղակ (բ. աղաղել. հմմտ. նաև աղաղանչ «մի թռչուն»), ադկադկ «աղքատ», բիբի «մի թռչուն», երեր (երերիմ), բրբրակ «ճարտարախոս», կերկեր «մի թռչուն», կերկերիմ, մռմռամ, -եմ «մռնչալ», ողողանամ «ողբալ» (բ. ուլուլալ), ողողեմ, որոր, պղպղաքար «մեծ քար», ուրուր, փաղփաղեմ, փողփողիմ, քարքարոտ և այլն. վաղնջահայերենում այս կաղապարին են պատկանել նաև այն ձայնավորներով և երկբարբառներով արմատների կրկնությունները, որոնք հետագայում նախաշեշտ դիրքում հնչյունափոխվել են՝ բրբուր<*բուրբուր, փրփուր<*փուրփուր և այլն։

Ոչ նույնական կրկնությունը ներկայացված է մի շարք տիպերով. 1) սկզբնային հ կամ յ բաղաձայնը բացակայում է երկրորդ կրկնորդում, այսինքն՝ հիմնականը առաջին տարրն է՝ հագագ, հեղեղ, բ. հոլոլ, հոտոտիմ, բ. հոտուտ (<*հուտուտ), յոպոպ և այլն. այս տիպը, գերազանցապես հայկական ձևերում է՝ կապված *p>հ, *s>հ փոփոխության և նախաձայնավորային հավելական հ-ի առկայության հետ. մասամբ էլ սրանով է բացատրվում -ատ, -ուտ ածանցների ծագումը, որոնք գալիս են հատ (հատ-անեմ), հոտ արմատներից. 2) առաջին կրկնորդում բացակայում է երկրորդի վերջին տարրը, այսինքն՝ հիմնականը երկրորդ կրկնորդն է՝ դադար, դեդեւիմ, բաբախեմ, բաբաւեմ, բոբովեմ, պապաչեմ, բ. պուպուլ, տատանեմ, տատասկ. 3) երկրորդ տիպն ուղեկցվում է առաջին կրկնորդի ձայնավորի փոփոխությամբ. հայերենի համար բնորոշ են հատկապես սրա երկու ենթատիպերը. առաջին կրկնորդի մեջ ի ձայնավոր, որ գալիս է հ.-ե. *ei/oi տարրից (*ei կամ *oi>է, անշեշտ դիրքում՝ ի)՝ բիբեղն, բիբեռն, ծիծաղ, ծիծառն, սիսեռն. երկրորդ ենթատիպը ներկայացված է առաջին կրկնորդի ա ձայնավորով, որ գալիս է թուլացած *ə կամ *ь ձայնավորից՝ մամուլ, մամուխ, մամուռ. 4) տեղի ունի առաջին և երկրորդ կրկնորդների ձայնավորների հերթագայություն՝ առանց բաղաձայնների փոփոխության՝ կերակուր, մղմեղ, մղմող և այլն. 5) առկա է առաջին և երկրորդ կրկնորդների վերջին բաղաձայնների հերթագայություն՝ ուղեկցված կամ չուղեկցված ձայնավորների հերթագայությամբ. այս տիպը մասամբ հնդեվրոպական հիմքեր ունի, մասամբ հատուկ է հայերենին. հնդեվրոպական հիմքեր ունեցող հերթագայություններից պետք է հիշել հատկապես ռայերի հերթագայությունը ռնգային ձայնորդների հետ՝ բ. տարտղնել, տնտղեմ (հմմտ. տղեմ «շարժել» և հուն.

ὀξυδίλλω «հայացքը դես ու դեն անել»), որին կարող է գումարվել բաղաձայնական որևէ տարր, հատկապես չ՝ բաղբանչեմ, բ. մորմոնջ. սրա կողքին հանդես են եկել հատկապես հայերենի համար բնորոշ հերթագայություններ՝ r/ռ (<*r—*rs)՝ բարբառ, բրբռեմ «թռչկոտելով գնալ» և այլն, ձայնորդ/պայթական կամ կիսաշփական՝ բողբոջ, բորբոք, դողդոջ, կարկաչ, մարմաջ և այլն. մի շարք դեպքերում *r-ի դրափոխությունը խախտել է հնդեվրոպական կրկնության կաղապարը՝ կարկուտ (*gə-grōdo-), կորկոտ, տարտամ, տրտում և այլն. կան նաև կրկնավորներ, որոնց կաղապարները որոշակի չեն՝ որպես հետևանք այլևայլ փոփոխությունների՝ աղաւաղ, աքաղաղ և այլն. եթե աղտամուղտ-ը բարդություն չէ, այլ կրկնություն, ապա առկա է մ հավելական ձայնորդով կաղապար, որ հետագայում հայերենում լայն տարածում է ստացել։

5. ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

ա) ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Ձևավորվելով հնդեվրոպական լեզվի ընդերքում որպես առանձին բարբառ՝ հայերենը պիտի ունենար խոսվածքային ներքին տարբերություններ, որոնք պիտի պահպանվեին և նույնիսկ մեծանային նրա լեզվական անկախության՝ վաղնջահայերենի շրջանում։ Հնարավոր է բարբառային վաղ տարբերությունների բացահայտման երկու ուղի՝ քննել հնդեվրոպական բարբառային տարբերություններն ու պարզել, թե դրանցից որո՞նք են զուգահեռ դրսևորումներ տվել հայերենում, և քննել հայերենի բարբառային տարբերություններն ու պարզել, թե դրանցից որո՞նք են արխաիկ բնույթի։ Այս երկու եղանակներն էլ օգտագործված են մեր «Հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության ակնարկներ» [Джаукян, 1967] և «Հայ բարբառագիտության ներածություն» (1972) աշխատություններում։ Մեր «Հայոց լեզվի համեմատական քերականություն» աշխատության մեջ էլ [Джаукян, 1982] տրված են այն եղանակները, որոնցով կարելի է տարբերակել լեզվական զուգահեռ ձևերի (զուգաձևությունների, տարբերակների) բնույթը՝ բարբառային, թե հասարակական-գործառական կամ ոճական արժեք ունենալը։ Հայերենի բարբառային արխաիկ երևույթների բազմակողմանի ուսումնասիրությունը և ժամանակագրական բաշխումը, մանավանդ նախագրային շրջանի համար, ապագայի գործ է. գիտության զարգացման արդի փուլում կարելի է անել միայն ամենաընդհանուր դիտողություններ՝ օգտագործելով Հ. Աճառյանի [ՀԼՊ, 1, 118—122, 2, 114—141], Վ. Վինտերի [Winter, 1966, 201—211], Է. Աղայանի [1958, 67—80. 1964, 328—333] և մեր տվյալները [Джаукян, 1967, 97—153, 177—210, 248—272. Ջահուկյան, 1972, 245—330. Djahukian, 1983, 23—34]։

Հնչյունական առումով հնդեվրոպականից հայերենին անցնելիս նկատվում են հետևյալ տարբերությունները՝ կապված բաղաձայնների տեղաշարժի, պայթականների առաջին քմայնացման, ձայնորդների ու շփականների և ձայնավորների հին փոփոխությունների հետ.

1) հ.-ե. *bh-ի դիմաց սովորական բ-ի կողքին պ՝ բղբջակ և պղպջակ (հ.-ե. *bhu-l- և *bul-. հմմտ. հ. շվեդ. bulin «ուռած» և մ. ստ. գերմ. puyla «ուռուցք»), բղետ (բղէտ) և պղետ «բիծ» (հ.-ե. *bhel-, *bhlei- «փայլել»), բոյտն և պոյտն (հ.-ե. *bheu- և *beu- «փչել, ուռցնել»).

2) հ.-ե. *d, *g-ի դիմաց սովորական տ, կ-ի կողքին նաև դ, գ՝ տոփեմ, դոփեմ (հ.-ե. *deph-. հմմտ. սերբ. depiti «ծեծել»), կռունկ և գրեայ (գրէ) «կռունկ» (հ.-ե. *ger-. հմմտ. հուն. γέρανος «կռունկ»).

3) հ.-ե. *t, *k-ի դիմաց սովորական թ, ք-ի կողքին տ, կ՝ թէն (<թայն) «թաց» (այլև թաւն, թանամ, թաց) և տէն (<տայն) «թաց» (հ.-ե. *tāi-. հմմտ. ռուս. таять «հալչել»), քերթեմ և սկրթել «քերթել» (հ.-ե. *(s)ker-th-. հմմտ. լատ. cortex «կեղև», scortum «կաշի»).

4) հ.-ե. *ph, *th, *kh-ի դիմաց՝ սովորական փ-, թ-, խ-ի կողքին նաև բ, դ, գ և հ.-ե. *bh, *dh, *gh-ի դիմաց՝ սովորական բ, դ, գ-ի կողքին փ, թ, ք՝ փլանիմ և բ. բիլ (հ.-ե. *phel-. հմմտ. հ. վ. գերմ. fallan «ընկնել»), ցախ (բ. ցաք-) և ցագան (>բ. ծակ՛ան) (հ.-ե. *(s)k'akhā. հմմտ. հ. հնդկ. s'ākhā «ճյուղ» և s'ákála- «ձող, շերտ»), ընդ և ենթ (հ.-ե. *n̥dhos «տակ» և *anti «հետ. դիմաց, փոխարեն» ձևի կողքին).

5) հ.-ե. *p-ի դիմաց սովորական հ-ի կողքին նաև փ (<ph?)՝ հէք (հեգ, հիւանդ) և փէք «հեգ, խեղճ» (հ.-ե. *pē(i-)- «ցավեցնել. վնասել, արհամարհել»), հոգի «շունչ, ոգի» և փուք, փչեմ (հ.-ե. *p(h)(e)u- «փչել, ուռցնել»).

6) հ.-ե. *ph-ի դիմաց սովորական հ-ի և փ-ի կողքին պ՝ փաղփաղիմ, փողեմ, փողփողեմ, փայլ և պաղ «փայլ» (պաղապանծ բառում), պաղպանջ «փայլ, ցոլք», պող «կայծ. կրակ» (հ.-ե. *(s)p(h)el. հմմտ. հ. հնդկ. sphulinga- «կայծ»).

7) հ.-ե. *k(h)-ի դիմաց սովորական ք-ի և խ-ի կողքին նաև կ՝ խեղ և կեղ «ծուռ», կաղ (հ.-ե. *(s)k(h)el-. հմմտ. հուն. σκελλός «կաղ», σκολιός «ծուռ» և ատտ. σχελίς «կող»).

8) հ.-ե. *k-ի (*ku̯) դիմաց սովորական ք-ի կողքին նաև խ, որ պետք է գա *kh-ով տարբերակից՝ քիւ (*kēu̯o-) և խուղ (*khu-lo-), այլև հիւղ (*(s)keu- «ծածկել». հմմտ. հ. հնդկ. skāuti «ծածկում է», հ. իռլ. cūl «անկյուն, ապաստան»), քէն և բ. խէն (*ku̯oi-nā. հմմտ. ավ. kaēnā «պատիժ, վրեժ». եթե հայերեն բառերը փոխառություն չեն իրան. աղբյուրից).

9) հ.-ե. *g'h-ի դիմաց միևնույն դիրքում ա) ձ և բ) զ՝ զ-զայրեմ «զըլկատալ», զ-կոտալ և ձ-գոռալ (*g'hō), ոզնի և բ. ոձնի (հ.-ե. *og'hini̯o-. հմմտ. հուն. ἐχῖνος).

10) հ.-ե. *g'-ի և *u-ին հաջորդող *g-ի դիմաց սովորական ծ-ի հետ միասին տ՝ արածեմ և արատ, արուտ (*trəg'-. հմմտ. հուն. τρώγω «կրծել, ուտել»), բոյծ, բուծանեմ և բուտ, բտեմ (*bheug-/bhug- «վայելել». հմմտ. հ. հնդկ. bhunákti, bhuñjati «ուտում է, վայելում է», bhóga- «կերակուր օգտագործում. վայելք»).

11) հ.-ե. *p-ի և *s-ի դիմաց միևնույն դիրքում ա) հ, բ) յ և գ)—՝ հայր, սեռ. հաւր (*pətér, սեռ. *pətrós) և յաւրայ «խորթ հայր» (*pətr-), հող (*polo-) և ոտն (*pod-).

12) հ.-ե. *rs-ի դիմաց ա) ռ և բ) րշ՝ թառամիմ, թոռոմիմ և թարշամիմ, թորշոմիմ (*ters-/tors-/tr̥s-. հմմտ. հ. հնդկ. tr̥syati «ծարավ է», հուն. τέρσομαι «չորանալ»), բ. մառել «ցորենը կամնելով մանրել» և մա(ր)շեմ (*mer-s-. հմմտ. հ. հնդկ. masīm kar- «փոշիացնել», շվեդ. morsen «փշրել». հմմտ. նաև հայ. մարսեմ?).

13) հ.-ե. *r̥-ի դիմաց սովորական ար-ի կողքին նաև ուր՝ դարձ, դառ-

նամ (*dhr̥g'h-. հմմտ. խեթ. tarna- «թողնել. արձակել») և դուրգն (*dhr̥gh-(?)՝ *dhergh-ից. իմաստի համար հմմտ. հ. իռլ. droch «անիվ»).

14) բառասկզբի ձայնավորից առաջ հավելուրդային ն-ի, այլև ո-ից առաջ հավելուրդային կ-ի առկայություն (թերևս հին կոկորդայիններից)՝ նաւատ և աւատ (հ.-ե. *au- «ընկալել, ըմբռնել»), ոզնի և բ. կոզնի (հ.-ե. *og'hi-nii̯o-. հմմտ. հուն. ἐχῖνος, ռուս. еж), ոստ, բ. ոստղ և կոստղ (հ.-ե. *ozdos, հմմտ. խեթ. ḫašduir «ցախ»).

15) հ.-ե. ձայնորդներից առաջ ա) ձայնավոր նախահավելված և բ) նախահավելվածի բացակայություն՝ ա-նաւթի և նաւթի (*nāgu̯h-. հմմտ. հուն. νήφω «զգաստ՝ ժուժկալ լինել». այսպես նաև անհայտ ծագման ա-նաւսր և նաւսր).

16) հ.-ե. *e-ի դիմաց սովորական ե-ի և ի-ի (ռնգայինից առաջ) հետ միասին այլ ձայնավորներ՝ երեկ-(ոյ) և երէկ, բ. արակ, յարակու, ցորեկ (*regu̯os-. հմմտ. հուն. ἔρεβος «խավար»), վեց (*(ks)u̯ek's. հմմտ. հուն. ἕξ) և վաթսուն (*(ks)u̯ek's-kontə. հմմտ. հուն. ἑξήκοντα), ճինեմ, ճենում և ճանում «հյուսել» (հմմտ. լիտվ. pìnti «հյուսել»), եւթն և եաւթն (*septm̥. հմմտ. լատ. septem).

17) հ.-ե. ռնգայիններին նախորդող *ĕ-ի և *ŏ-ի դիմաց սովորական ի-ի և ու-ի փոխարեն ե և ո՝ լմեմ, լմլմեմ (գիւրալում) և բ. լոմլոմել, լեմ «տառամ» (*lem-/lom-), գոմ (հ.-ե. *ghom-. հմմտ. գալ. gamme «ոչխարի փարախ»), դոն «մի տեսակ հաց, պաքսիմատ» (հ.-ե. *dhōnā. հմմտ. լիտվ. dúona «հաց»), բ. բոնթորալ (հմմտ. հուն. τονθορύζω «քրթմնջալ, փնթփնթալ»).

18) հ.-ե. համապատասխան նախաձևերի դիմաց տվյալ տարբերակների առկայություն, որոնք արխաիկ բնույթի են և չեն կարող բացատրվել բարբառների հնչյունափոխության սովորական օրինաչափություններով՝ տալ և բ. տալվ (հ.-ե. *g'ьlōu-. հմմտ. ռուս. золовка), կաթն և բ. կաղց (հ.-ե. *galakt-? հմմտ. հուն. γάλα,-ακτος), շուն և բ. շըվըն (հ.-ե. *k'u̯on-. հմմտ. հուն. κύων).

բ) ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Մենք չենք կարող նշել վաղնջահայերենի համար բարբառային բնույթի մեծաքանակ ձևաբանական տարբերակներ։ Սա բացատրվում է մասամբ այս ուղղությամբ կատարված հետազոտությունների անբավարարությամբ, մասամբ էլ օբյեկտիվ պատճառներով. նոր միայն անջատվելով հնդեվրոպական ընդհանրությունից՝ վաղնջահայերենը չէր կարող տարածական շատ տարբերակներ ունենալ։ Հենվելով հին հայերենի և բարբառային արխաիզմների ուսումնասիրության տվյալների վրա՝ այստեղ կփորձենք նշել մի քանի այնպիսի երևույթներ, որոնք կարող էին գոյություն ունենալ վաղնջահայերենում։

1) Բարբառներում և գրաբարում առկա են հնդեվրոպական միևնույն արմատական ձևերի ձայնդարձային տարբեր աստիճաններ և տարբեր ձայնավորումներ, որոնք մասամբ պիտի հիմքեր ունենային վաղնջահայերենի խոսվածքային տարբերակներում՝ կապված ձայնդարձի հնդեվրոպական համակարգի աստիճանական քայքայման և համաբանական պրոցեսների տարածման հետ. բեկանեմ և բ. բոկել «բռնցքահարել» (հ.-ե. *bheg-, *bheng-, հմմտ. հ. հնդկ. banákti «բեկում է, կոտրում է», հ. իռլ. bang «խփել», նիդեռլ. bonkan «խփել, ծեծել»), թառամ, թարշամ և թոռոմ, թորշոմ (հ.-ե. *ters-/tors-/tr̥s- «չորանալ, թառամել»), լեսում և բ. լոսել «մանրել» (հ.-ե. *klek-*kleik'-ի կողքին), կաղին և բ. ա-կողին (հ.-ե. *gu̯el-), մեղու և բ. մողիկ «մեղու» (հ.-ե. *mel-), պեղեմ և բ. պողեմ (հ.-ե. *bel-) և այլն։

2) Եթե ճիշտ է այն կարծիքը, որ միջին հայերենում և բարբառների որոշ մասում պահպանված երկակիի -ուի (-վի) վերջավորությունը (աչուի, ոտուի, ձեռուի և այլն) հիմք ունի հնդեվրոպական երկակիի մեջ, ապա վաղնջահայերենում երկակիի քայքայման պրոցեսը պիտի առաջ բերած լիներ բարբառային տարբերակներ՝ համեմատաբար արխաիկ տարածքով։

3) Հին հայերենի հոլովման հիմքերի որոշ տարբերակներ պիտի գային դեռևս վաղնջահայերենից. մասնավորապես աստեղ և աստեղաց տարբերակները կարող էին գալ սովորական հոգնակիի և հավաքականի ձևերից (հմմտ. հուն. հգն. ուղղ. ἀστέρες և հավաք. ἄστρα)։

4) Բայական համակարգում արդեն վաղնջահայերենում պիտի նկատվեին խոնարհման հիմքերի փոխանցումներ. մասնավորապես հնդեվրոպական ռնգայինով հիմքերի հետագա քայքայումը կարող էր հանգեցնել վ.-հ. *-ā-ne-mi և *-e-mi>հ.հ. -անեմ և -եմ ձևերի փոխանցումներին՝ անիծանեմ և անիծեմ, բֆանեմ և բֆեմ և այլն։

5) Բայի խոնարհման համակարգում հին հայերենը պահպանել է արխաիկ ձևեր -ր կազմիչով. հատկապես հրամայականի ձևերում -ր-ով ձևերի փոխարինումը առանց -ր-ի ձևերով կարող էր գալ վաղնջահայերենից՝ թերևս այնտեղ ունենալով տարածքային տարբերություններ՝ նստարո՛ւք և նստա՛յք։

Ընդհանրապես վաղնջահայերենում կարող էին լինել հոլովման և խոնարհման զուգահեռ ձևերի, ինչպես նախդրավոր և աննախդիր ձևերի տարածքային տարբերություններ, որոնց ամբողջական բացահայտումը ապագայի գործ է։

գ) ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Մի շարք դեպքերում բարբառները գրաբարի համեմատությամբ հանդես են բերում արմատակազմական-բառակազմական զգալի տարբերություններ, որոնց հիմքերը թերևս հասել են մինչև վաղնջահայերենի շրջանը.

1) գրաբարյան արմատական ձևի դիմաց աճականով կամ հին ածանցով ձև՝ դեղ (հ.-ե. *dhel-. այստեղից նաև դեղձ, դեղին) և բ. դեղդ «մի բուսարմատ», բ. դլբիկ «պտղալից ճյուղ». խոյլ (հ.-ե. *k'heul-. հմմտ. լիտվ. kūla «խիլթ, պալար») և բ. խիլբ. մոր (հ.-ե. *mor-) և բ. մոռ, բ. մոշ (*մորշ) (հ.-ե. *mor-s-). քերեմ (հ.-ե. (s)ker-. այստեղից նաև քերթեմ, քերծեմ) և բ. քերցել «քերթել», բ. քերփել «կեղեքել» և այլն.

2) գրաբարյանից տարբեր աճական կամ հին ածանց՝ ակն (հ.-ե. *oku̯-) և բ. ակլակ (ակլակ մտնել «պահ մտնել, դարանակալել». հմմտ. լիտվ. akýlas «ուշադիր»). լպիրծ և բ. լպիրտ (հ.-ե. *slib-ro-, նույն արմատից՝

լիրր)․ ձաղկ (հ.-ե. *g̑'haig̑-) և բ. ձաղտել. ձմեռն (հ.-ե. *g̑'hei-) և բ. ձմեր *«ձյան պատճառած աչքացավ»* և այլն.

3) *գրաբարյան բաղադրյալ ձևի դիմաց արմատական ձև՝* զգեստ, զգենում (հ.-ե. *u̯es-) և բ. զեստ, զենալ, ճոլով և բ. ճոլ *«շրնչյուն»* (հ.-ե. *ku̯el-), ճմլեմ և բ. ճմել (հ.-ե. *gen-), սարիք, սարդ և բ. սարել *«մանել»* (հ.-ե. *k'er-), սպարդիմ *«դուլնը գցել»* և բ. սպռել (հ.-ե. *(s)p(h)er-), տիղմ և բ. տիլ (հ.-ե. *del-?) և այլն։

II. ԲԱՌԱՊԱՇԱՐ

Ա. ՀԻՄՆԱԾԵՐՏ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Վաղնջահայերենի բառապաշարի միջուկը կազմել են հնդեվրոպական շրջանից ժառանգած բառերը, որոնց թեմատիկ խմբերը բերվել են հայերենի տարածքային բնութագիրը տալու կապակցությամբ։ Բացի արմատական կամ իբրև այդպիսիներ գիտակցված բառերից, վաղնջահայերենի բառապաշարի մեջ մտել են նաև մեծ թվով վերջածանցավոր և նախածանցավոր, բարդ ու կրկնավոր նորակազմություններ։ Սրանց առանձնացման փորձ կատարվեց մեր կողմից վաղնջահայերենի բառակազմական հնարավորությունների քննության հետ կապված։

Այժմ փորձենք բերված տվյալների հիման վրա առանձնացնել վաղնջահայերենի բառապաշարի իմաստային խմբերը՝ ըստ անհրաժեշտության կատարելով համապատասխան վերականգնումներ։ Սա հնարավորություն կտա գաղափար կազմելու վաղնջահայերի բնակության վայրերի, կյանքի և գիտելիքների հնարավոր շրջանակի մասին։

Ինչպես ամեն մի այլ լեզվի, այնպես էլ հայերենի, այդ թվում նաև վաղնջահայերենի բառապաշարը բաժանվում է երկու հիմնական շերտի՝ մշակութային առումով համեմատաբար չեզոք և մշակույթա-քաղաքակրթական որոշակի արժեք ունեցող բառեր։ Առաջին կարգի բառերը բնության, անօրգանական և օրգանական աշխարհի, մարդու հոգեկան կյանքի, նրա ընկալումների, զգացմունքների, մտքի ու խոսքի, մարմնի սովորական գործառությունների, ընդհանուր ու սովորական գործողությունների ու հատկությունների նշանակումներն են և քերականական արժեք ունեցող բառերն ու մասնիկները։ Երկրորդ կարգի բառերը կապված են մարդու և մարդկային հասարակության զարգացման որոշակի աստիճանների հետ, իրենց գոյությամբ պայմանավորված դրանցով. այդպիսիք են տնտեսական, քաղաքական, հոգևոր մշակույթի, ընտանեկան հարաբերությունների անունները։ Բառապաշարի այս երկու շերտերի ուղղագիծ տարբերակումը ոչ միշտ է հնարավոր, եթե նկատի ունենանք, որ մշակութային բառերը հաճախ ծագում են առաջին կարգի բառերից, և որ սրանք համապատասխան պայմաններում կարող են ձեռք բերել մշակութային հատուկ իմաստներ։

Վաղնջահայերի մշակույթի և քաղաքակրթության պատկերը գծելիս բնականաբար առաջին պլան են մղվում երկրորդ կարգի բառերը։ Սակայն եթե նկատի առնենք, որ առաջին կարգի բառերը խիստ կարևոր են տվյալ լեզվով խոսող հասարակության բնական պայմանները և հասկացությունների ընդհանուր շրջանակը որոշելու հարցում, ապա հարկավոր կլինի կանգ առնել և նրանց վրա՝ ըստ հնարավորին տարբերակելով հիմնական և երկրորդական իմաստները։

Վաղնջահայերենի ժառանգած հնդեվրոպական բառապաշարի բնույթը որոշակի դարձնելու նպատակով քննությունը տանենք ըստ առաջին բաժնում տրված թեմատիկ խմբերի հաջորդականության, թեև դրանց մեջ մշակութային և ոչ մշակութային բառերի տարբերակումը հստակորեն չի անցկացված. այսպես, երկրագործության հետ կապված տերմինները տրվում են բույսերի ընդհանուր անվանումների հետ միևնույն բաժնում, տարածքային բաժանումները տրվում են հասարակականների հետ միասին և այլն:

Հարկավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ առաջին մասում տրված թեմատիկ ցանկը կազմված է հատկապես հին հայերենի և բարբառների առկա տվյալների վրա, մինչդեռ վաղընջահայերենից հին հայերենին անցնելիս տեղի ունեցած պիտի լինեն իմաստային զգալի փոփոխություններ, մասնավորապես հնդեվրոպական որոշ բառերի իմաստի նեղացում՝ ավելի լայն իմաստի հատկացումով նոր (փոխառյալ) բառերին, իմաստային անցումներ, հատկապես փոխաբերական իմաստի մղում առաջին պլան և այլն:

1. Ֆիզիկական աշխարհ: Ֆիզիկական աշխարհին վերաբերող բնիկ հընդեվրոպական բառերի մեջ լայնորեն արտացոլված են հնագույն ժամանակներից եկող, յուրաքանչյուր լեզվի անկապտելի մասը կազմող այնպիսի նըշանակումներ, ինչպիսիք են **հող, գետին, ջուր, գետ, առու, աղբիւր, արև (արեգ-ակն), լուսին, աստղ, որոտ, լոյս, շող, աւդ, ամպ** և այլն: Կասկածելի է **երկիր, փոշի, լեառն, ձոր, հոր, անտառ, ծառ, թուփ, որոտ, շանգ (շանթ), շուք, հողմ** և որոշ այլ բառերի բնիկ հնդեվրոպական լինելը (կամ հնդեվրոպական տվյալ ստուգաբանությունը):

Աչքի է ընկնում մի շարք բառախմբերի առատությունը. ցեխի և տիղմի նշանակումներ՝ **աղտ, գայռ, գոռ, մաւր, միծ, տիղմ** (?), բ. **տիլ**, բ. **քոռ**. Հոսող և կանգնած ջրերի հետ կապված բառեր՝ **ջուր, լիճ, լիկ, գետ, հեղեղ, ողող**, բ. **լավ** «հեղեղ», **առու, կաւառն, յորդ, յորձանք, հուն, առոգանեմ (ոռոգանեմ), աղբիւր**. քարի և քարքարոտ վայրի հետ կապված անվանումներ՝ **քար, գիլ, պալ (պաղ, պղպղաքար)**, բ. **քերծ**, բ. **քուրշ, խուր-ք, այր, անձաւ**, բ. **լափու(կ)**. ձյան, ցրտի և մառախուղի հետ կապված բառեր՝ **ձիւն, բուք, սառն (սառոյց)**, բ. **սլոկ**, բ. **սղին**, բ. **սղոն, լկիմ, հալհալ, մէգ, բալ, մառախուղ**, բ. **մռաժ**: Հայերենը զարմանալիորեն չի պահպանել լեռան հնդեվրոպական ամենից ավելի տարածված այնպիսի անվանում, ինչպիսին է *gᵘer-/gᵘor-ը, որ առկա է հնդիրանական, ալբանական, հունական, թրակյան, բալթիական, սլավոնական խմբերում, այսինքն՝ արևելյան ողջ տարածքում. այն հայերենում պիտի ունենար ***կեր, *կոր** կամ, թերևս, ***կուր** (*gᵘr̥-) տեսքը. ձևով և իմաստով մերձավոր **կարկառ** «քարակույտ» (այստեղից **կարկառել**) բառը պատկանում է **կառ** արմատին, որ պահպանվել է **կառչիմ (կառուցանեմ)** բայի մեջ, և որի ծագումն անհայտ է: **Լեառն** բառը հատկացվում է հ.-ե. *k'lei- «թեքել, հենել» արմատին որոշ կասկածով, ընդ որում բերված զուգահեռների մեջ գերակշռում է «բլուր» իմաստը (հմմտ. հուն. κλειτύς «զառիվայր, բլուր», լատ. clivus, գոթ. hlains «բլուր»): Ինչ վերաբերում է **սար** բառին, ապա նրա սկզբնական իմաստն է «գագաթ», և հայերենի «լեռնագագաթ>լեռ» իմաստը առանձնակի է կանգնած: Հայերենը չի պահպանել նաև **հովիտ** բառի համար հնդեվրոպական որևէ անվանում, եթե **գոգ** բառին չվերագրենք նախնական այդպիսի իմաստ:

Դաշտ բառի փոխարեն, որ իրանական ծագում ունի, վաղնջահայերենում, ամենայն հավանականությամբ, գործածվել է **անդ** (բ. **հանդ**) բառը (հմմտ. թոխ. A ānt, B ānte «հարթավայր»), որ հետագայում ստացել է «մշակված դաշտ՝ արտ» իմաստը:

Հայերենը չի պահպանել ծովի հնդեվրոպական որևէ անվանում, մանավանդ ավելի տարածված *mori- (mōri) անվանումը, որ առկա է Եվրոպայի հնդեվրոպական լեզուներում՝ իտալյան, կելտական, գերմանական, բալթիական, սլավոնական, և հայերենում պիտի ունենար ***մոր-** կամ ***մուր** ձևը (այստեղից չէ՞ Մուրց գետի անունը հմմտ. և *morisk- «ճահիճ»). Ճիշտ է, **ծով**-ը համեմատում են հ. իռլ. kaf և հ. իռլ. go «ծով» բառերի հետ, բայց այդ համեմատությունը կասկածելի է. անհավանական է համեմատությունը նաև հուն. ζάψ «ծով» բառի հետ, որ բնիկ հունական չի համարվում [հմմտ. **Furnée**, 1972, 176]: Չի պահպանված նաև ծովի հետ կապված կղզու անվանումը. **կղզի** բառը հավանաբար սեմական ծագում ունի: **Ցամաք** բառը մենք կասկածով ենք դրել հնդեվրոպական բառերի ցանկի մեջ (հմմտ. հ. հնդկ. kṣāmá- «այրված, չորացած»). այն կարող է լինել, ինչպես կարծում է Աճառյանը, սեմական ծագման (հմմտ. և **սմքել**): Բառացանկում մեր կողմից դրված **եզր** բառը ունեցել է ընդհանրապես «եզր» իմաստը, բայց գործածվել է նաև «ծովի կամ գետի ափ» իմաստով. հայտնի չէ վաղնջահայերենում նրա մասնավորվածության աստիճանը. **ափն** բառի ծագումը որոշ չէ. նրա կապը հ.-ե. *āpero- «ափ» արմատի հետ կասկածելի է հնչյունական պատճառներով [հմմտ. **Pok.**, 1, 53]: Սակայն սրանց կողքին կան լճի, ալիքի, փրփուրի հնդեվրոպական անվանումներ:

Հայերենը չի պահպանել ծառի այնպիսի տարածված անվանում, ինչպիսին է հ.-ե. *deru-ն, թեև, որոշ կասկածով, կարելի է նրան հանգեցնել **ան-տառ** բառը, այլև կան այդ հիմքից ուրիշ ածանցյալներ (**տարգալ, տորն** «սանդակոթ» և այլն): Սրա փոխարեն առկա **ծառ** բառի հնդեվրոպական ծագումը կասկածելի է, նրա զուգահեռներն էլ ունեն «ճիպոտ» նախնական իմաստը: **Ատաղձ, փայտ** բառերը սովորաբար նշանակում են պատրաստի փայտը իբրև նյութ, թեև **փայտ**-ը կարող է գործածվել նաև «ծառ» իմաստով:

2. Մարդկություն. սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն: Վաղնջահայերենը պիտի ժառանգած լիներ մարդու սեռի, տարիքի և ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ հնդեվրոպական հիմնական անվանումները՝ տարածքային որոշակի սահմանափակումներով: Սրանց մեջ զգալի թիվ են կազմում համապատասխան մանկական բառերը՝ պահպանված գերազանցապես հայ բարբառներում: Հնդեվրոպական ցեղակցական անուններին գումարվել են ազգակցության տարբեր աստիճաններ նշող նոր անվանումներ՝ գերազանցապես ժառանգված հնդեվրոպական անվանումների բազայի վրա և նկարագրական բնույթի:

Մարդու, նրա սեռի և տարիքի հետ կապված անվանումներից հիշենք **մարդ, անձն, այր, կին, աղիջ, մանուկ, մատաղ**: Վաղնջահայերենում լայնորեն պետք է ներկայացված լինեին ազգակցական տերմինների սկզբնական ձևեր՝ **հայր, մայր, ուստր, դուստր, որդի, եղբայր, քոյր, հաւ, հան** «տատ», **թոռն, սկեսուր, հարսն, նու, յաւրայ, մաւրու, որբ**: Կասկածելի է **ամուրի, քեռի, աներ, հոր** «փեսա», **ուրջու** «խորթ որդի», **այրի** բառերի հընդեվրոպական ծագումը: Մեծ թիվ են կազմում այս բառերի բազայի վրա կազմված բաղադրյալ անունները, որոնք մասամբ գալիս են հնից և զուգահեռներ ունեն հնդեվրոպական այլ լեզուներում՝ հաւրեղբայր, մաւրեղբայր, եղբաւրորդի, այլև հաւրաքոյր, մաւրաքոյր, դուստր եղբօր(ն) և այլն: Բացակայում են կնոջ ազգականների մի շարք նշանակումներ, որոնք հնդեվրոպականում էլ մասամբ չեն եղել. զոքանչի համար չկա բնիկ հայերեն անուն, աներ բառի հնդեվրոպական ծագումը, ինչպես նշվեց, կասկածելի է: Կասկածելի է նաև հոր «փեսա» բառի հնդեվրոպական ծագումը, իսկ փեսայ բառի ծագումն անհայտ է: Բավական շատ են խորթ ազգականների անունները՝ յաւրայ, մաւրու, ուրջու: Սակայն հայերենը չի պահպանել այրիացած տղամարդու և կնոջ հնդեվրոպական տարածված անվանումները, հատկապես *u̯idheu̯o-, -ā, *u̯idhu- ձևերը, որ պիտի տային *գդեւ կամ *գիդ. այրի բառը, ամենայն հավանականությամբ, կամ հայկական նորակազմություն է, կամ հնդեվրոպական ծագում չունի և պատահմամբ է նման այր բառին:

3.Կենդանիներ: Հայերենը հարուստ է ինչպես վայրի, այնպես էլ ընտանի կենդանիների բնիկ հնդեվրոպական անուններով: Որս, երէ (էրէ), թակարդ, թարբ բառերը ցույց են տալիս որսորդության և ձկնորսության տարածվածությունը, սակայն ձկնորսությունը հավանաբար կապված է եղել ավելի շատ գետերի ու լճերի հետ, և ձկնատեսակների բնիկ հնդեվրոպական անվանումները շատ քիչ են: Զարգացած անասնապահության մասին են խոսում ոչ միայն կով, եզն, *հովի «ոչխար» (հովիւ բառում), այծ բառերի և նրանց տարբեր հասակների անվանումների առատությունը՝ հորթ, մոզի, երինջ, որոջ, գառն, ուլ և այլն, այլև այնպիսի անասնապահական տերմինները, ինչպիսիք են հաւան «հոտ», արածեմ, հովիւ, ստերջ, տաւար, թերևս նաև գոմ Հայերին հայտնի են եղել շուն, ձին (բայց ոչ տարածված հնդեվրոպական անվանումով), էշը: Վայրի կենդանիների անուններից սովորական են գայլ, արջ, աղուէս, ինձ, լուսան, ոզնի: Առիւծ, կորիւն անվանումները կազմված կամ մասնավորված են ավելի ուշ՝ հնդեվրոպական համապատասխան հիմքերի վրա: Բավական շատ են թռչունների, սողունների և միջատների անվանումները՝ հաւ, աքաղաղ, աղաւնի, արծուի, բու, լոր (?), ծիծառն, կաքա (?), կկու, կռունկ, յոպոպ, որոր, ցին, ուրուր, անիծ, լու, մաթիլ, մլուկ, մրջիւն, ո(ր)ջիլ (?), սարդ, տիզ, մեղու, բոռ, կէտ, մուն, մլակ, թիթեռն, աւիծ, քարբ և այլն: Եթե ճիշտ է կրիայ բառի ստուգաբանությունը, և եթե այն իմաստային ուշ մասնավորման արդյունք չէ, ապա հայերը պիտի բավական վաղ ծանոթացած լինեին այդ կենդանուն:

Վերևում նշվեց, որ հայերենը չի պահպանել ձիու հնդեվրոպական տարածված անվանումը նույն իմաստով (*ek'u̯o-ի *eik'u̯o- տարբերակը տվել է էշ), այլ առկա է միայն հնդկական զուգահեռ ունեցող ձի բառը (հ հնդկ. ha'ya- «նժույգ»). Հովատակի, զամբիկի, մտրուկի համար բուն հնդեվրոպական անունների բացակայությունը խոսում է այն մասին, որ վաղնջահայերի մոտ զարգացած ձիաբուծություն չի եղել:

Հայերենը չի պահպանել խոզի հնդեվրոպական անվանումը (*sus), այլև ընդհանրապես խոզի հետ կապված հնդեվրոպական անվանումներ. խոզ, վարազ, խոճկոր անվանումները համեմատաբար ուշ են հանդես եկել:

Կատվի (կատու, կուզ), վագրի, փղի, կապիկի, ուղտի անունները վաղնջահայերենում չեն եղել. ինչպես կտեսնենք, դրանք հայերենում հայտնի են դարձել ավելի ուշ: Հետաքրքրական է նշել, որ կատվի ընդհանուր անվանումը հունարենի մեջ κάττα ձևով մուտք է գործել բավականաչափ ուշ՝ VI դ.: Դասական հայերենում կատուն հայտնի է կուզ անվանումով, որ իրանական ծագում ունի:

4. Մարմնի մասեր, մարմնական գործառույթներ և պայմաններ: Հայերենը պահպանել է մարմնի մասերի և մարմնական գործառույթների մեծաքանակ անուններ, որոնք ընդգրկում են գրեթե բոլոր հիմնական հասկացությունները. մարմնի մասերի անվանումներից նշենք՝ միս, ջիլ, նեարդ, մաւրուք, արիւն, ոսկր, կող(ն), թիկն (թէկն), կուռն, ողն, գլուխ, երես, ծնաւտ, այտ, ակն (աչք), ունկն, բերան, քիմ-ք, լեզու, ատամն, լինդ, ուլն, կոկորդ, որկոր, ուս, ձեռն, արմուկն, բուռն, մատն, բոյթն, ոտն, ոլոք, ծունգ(ն), եղունգն, լանջ, ստինք, սիրտ, լեարդ, արգանդ, փայծաղն և այլն: Առանձնապես պետք է նշել զանազան հիվանդությունների ու վնասվածքների անունների առկայությունը՝ մասամբ ժառանգած հնդեվրոպական միասնության շրջանից, մասամբ տրված հնդեվրոպական համապատասխան անվանումների բազայի վրա՝ դրանց իմաստային մասնավորմամբ ու տերմինավորմամբ՝ հիւանդ, դալուկն, թանչ (?), լուսն, խիթ, բ. ձմեր, մարմաջ, կեղ, բորոջ, այտումն, պալար, խոյլ և այլն:

Մարմնի մասերի ու մարմնական գործառույթների անվանումների մեջ բացակայում են մի շարք կարևոր օղակներ, որոնց առկայությունը վաղնջահայերենում գոնե մասամբ ենթադրելի է:

Առաջին հերթին նշենք հայերենում մաշկի, եղջյուրի, մազի տարածված հնդեվրոպական անվանումների բացակայությունը: Մաշկ, մորթ, կաշի բառերից ոչ մեկը բնիկ հնդեվրոպական չէ, եղջիւր բառի հնդեվրոպական ստուգաբանության փորձերն առայժմ անհամոզիչ են, իսկ մազի համար պահպանված և թեմատիկ խմբում մեր կողմից տրված ձար բառի՝ մազի ընդհանուր անվանում լինելու հարցի լուծումը դժվար է. այն մեզ հայտնի հուշարձաններում գործածվում է հատկապես որպես կենդանու (ձիու) մազի անվանում. հեր և մազ բառերի ծագումը հայտնի չէ, թեև առաջինը հիշեցնում է, հավանաբար պատահականորեն, գերմանական համապատասխան բառերը (հմմտ. գերմ. Haar). գէս և վարս բառերը իրանական ծագում ունեն և վաղնջահայերենում չեն եղել: Եղջյուրի համար վաղնջահայերենը թերևս պահպանած է եղել և հետագայում կորցրել է հնդեվրոպական ընդհանուր անվանումը *k'er- արմատից, որից ինչպես նշվել է, ծագում է սար «գագաթ, լեռնագագաթ» բառը: Թեև մարմին բառը բացահայտ զուգահեռ ունի հ. հնդկ. marman «անդամ, հոդավորություն. բաց՝ անպաշտպան մարմնամաս» բառի մեջ, բայց ընդհանուր ձևի վերականգնումը դժվարանում է. եթե հնդկական բառը ծագում է *mel- «անդամ, հոդավորել» արմատից [հմմտ. Pok. I, 720], ապա հայերենը փոխառություն կարող է լինել, որովհետև *l>r անցումը նրան հատուկ չէ:

Գլխի մասերի անվանումներից հայերենը չունի գանգ, ուղեղ, ճակատ, նե, կզակ, քիթ, շուրթ նշանակող հնդեվրոպական բառեր: Հատկապես պետք է նշել հոնքի ու քթի համար տարածված հնդեվրոպական *bhrū- ու *nas- հիմքերի կորուստը և նրանց փոխարինումը անհայտ (ուրարտակա՞ն) ծագման յաւնք ու քիթ բառերով. Թերևս բնիկ հնդեվրոպական անվանումները վաղնջահայերենում պահպանված են եղել։

Մարմնի այլ մասերի անվանումներից նշենք փետուր, կուրծ (անսանակուրծք), թոք նշանակող հնդեվրոպական բառերի կորուստը։ Փետուր բառը բնիկ հնդեվրոպական չէ, բայց կարող է վաղ շրջանում յուրացված լինել հնդեվրոպական որևէ լեզվից և թերևս առկա լինել հենց վաղնջահայերենում (հմմտ. հ. հնդկ. pát(a)tra-, հուն. πτερόν, հ. վ. գերմ. fedara)։ «Կուրծք» նշանակող լանջ բառի գերմանական և սլավոնական զուգահեռները նշանակում են «թոք» (հմմտ. հ. վ. գերմ. lungūn (հգն.), ռուս. легкие, բայց հայերենը այդ իմաստի համար օգտագործել է անհայտ ծագման թոք բառը. անհայտ է կուրծք բառի ծագումը, թեև բացառված չէ նրա յուրացված լինելը հնդեվրոպական որևէ լեզվից (հմմտ. ռուս. грудь՝ հ.-ե. *gʷrendh-ից և լիտվ. krūtìs՝ հ.-ե. *krūt-ից)։ Անասնի կրծքի համար հավանաբար վաղնջահայերենում գործածվել է երբուծ-ի վաղ ձևը. այդ բառը հին հայերենում ունի հատկապես «անասնի լանջամիս» իմաստը, որ, թերևս, ձեռք է բերել կուրծ-ք բառի մուտքից հետո։

Հայերենը չի պահպանել հորանջելու տարածված հնդեվրոպական անվանումը, որ պիտի ունենար *ձէ-/ձի- արմատային տեսքը (հ.-ե. *g'hei-), թերևս այն դուրս է ընկել ձի բառի հետ համանուն լինելու պատճառով։ Բնիկ հնդեվրոպական չեն նաև յոգնեալ, ճաղատ և կոյր բառերն ու նրանց համանիշները՝ խոնջեալ, վաստակեալ, կթոտ և ճեղ, կուճդ. Հնդեվրոպական ծագման լերկ-ը նշանակում է ընդհանրապես «անմազ» և «մերկ»։

5. Ուտելիք և խմելիք. կերակրի պատրաստում և ամանեղեն։ Այս խմբի բառերն ունեն ինչպես ընդհանուր, այնպես էլ մշակութային արժեք ունեցող իմաստներ։ Առաջին կարգի իմաստները, բնականաբար, ավելի քիչ են ենթակա փոփոխության, և սրանց հնդեվրոպական ներկայացուցիչները լայն չափերով առկա են հայերենում, այդ թվում, իհարկե, նաև նրա սկզբնական վիճակում՝ վաղնջահայերենում։ Սրանք և՛ սովորական չեզոք, և՛ զգացմունքային-արտահայտչական երանգի բառեր են, ընդ որում ուտելու գործողության տարբեր եղանակները ներկայացված են տարբեր բառերով և մարդու ու կենդանիների համար համապատասխան տարբերակումներով՝ ուտեմ, լակեմ, լափեմ, ծամեմ, լմլմեմ, կլանեմ, կրծեմ, որոճեմ։ Տարբերակված են ներկայացված նաև կերակրի պատրաստման տարբեր եղանակները՝ եփեմ, խարշեմ, խորովեմ, խարկեմ, բովեմ։ Հայտնի չէ կերակրի պատրաստման տեղի մասնագիտացման աստիճանը. վառարան, թոնիր և այլ անվանումները ուշ են. վաղնջահայերենի համար ենթադրվում է հնոց-ի սկզբնաձևի գոյությունը՝ «վառարան» ընդհանուր իմաստով։ Ուտելիքի պատրաստման և պահպանման միջոցներից տարածված են եղել կավե (հողե) ամանեղենը և տիկը։ Ամանեղենի այլ տեսակներ նշանակող կաթսայ, սան, տապակ, ափսէ, պնակ, սկուտեղ, գաւաթ, բաժակ, թաս, թակոյկ, սափոր, կուժ, սրուակ, կարաս և այլն բառերը բնիկ հնդեվրոպական չեն, այլ փոխառված են շրջակա հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուներից։ Դանակ-ի հնդեվրոպական բնիկ անունը հայտնի չէ, բայց տարգալ-ը բնիկ հնդեվրոպական է։

Օրվա տարբեր ժամանակների հետ կապված նախաճաշի, ճաշի, ընթրիքի անվանումները չկան։ Բարբառային ակրատ «նախաճաշ» բառը, եթե այն կապ չունի կեր, կուր ձևերի հետ, ուշ ձեռքբերում պետք է լինի։

Խմորի բնիկ հնդեվրոպական անվանումը հայերենը չի պահպանել, բայց հաց բառի հնդեվրոպական ծագումը հավանական է. աղամ, աղաւրիք, ալեւր, բլիթ, բոկեղ, բ. բով (>պով) «խմորի գունդ» բառերը ցույց են տալիս, որ վաղնջահայերին լավ ծանոթ է եղել հացագործությունը։ Կերակրի պատրաստման հետ կապված նշենք երկան և տոռն «սանդի կոթ» բառերը՝ աղաւրիք և մոլ (մլաղաց) բառերի կողքին։

Վաղնջահայերը պիտի գործած լինեն և՛ կենդանական (հմմտ. միս), և՛ բուսական կեր։ Բացի զանազան ուտելի բույսերի անվանումներից, որոնց մասին կխոսվի բուսականության հետ կապված բառերի քննության ժամանակ, վաղնջահայերենում պետք է լինեին դալար(ի) սիսեռն, խստոր, բողկ, չիր բառերի սկզբնաձևերը։ Կան նաև գինուն և խաղողին վերաբերող այգի «խաղողի այգի», գինի, որթ անվանումները. հմմտ. նաև արգատ «որթատունկի էտած ճյուղ». սրանք խոսում են խաղողագործության՝ վաղնջահայերին ծանոթ լինելու մասին։ Սոխի, մի շարք պտուղների (տանձ, խնձոր և այլն) անվանումները բնիկ հնդեվրոպական չեն։

Վաղնջահայերը գիտեին կաթից կարագ և մածուն պատրաստելու եղանակները, որոնց մասին վկայում են կոգի (ավելի ուշ փոխարինվում է կարագ բառով) և մածուն բառերը։

6. Հագուստ, անձնական զարդարանք և խնամք։ Հայերը և մասնավորապես վաղնջահայերը իբրև հագուստի նյութ պիտի օգտագործած լինեն հատկապես բուրդը։ Բրդի համար կան ասր, գեղմն և բուրդ անվանումները. վերջինս ծագում է *bherdh- «կտրել» արմատից, որ վկայում է բուրդը խուզելու սովորույթի մասին։ Հէն-ք, հենում, ոստայն, ստէծ, ստորի, շիւ, առէջ բառերը խոսում են ոստայնանկության արհեստի զարգացած լինելու մասին։ Կարելու հետ կապված նշենք ասեղն, հերիւն, բել (?), բ. կլոք «թելի կծիկ» բառերը։ Բամբակի և վուշի անվանումները բնիկ հնդեվրոպական չեն։ Վաղնջահայերի մոտ բուսական ծագման թելի օգտագործումը հավանաբար շատ տարածված չի եղել, մանավանդ եթե կտաւ բառը կուռ բառից չի ծագում և բնիկ հնդեվրոպական չէ (հնարավոր է սեմական ծագում)։ Հավանաբար լայն չափերով չի գործածվել նաև կաշին, որի բնիկ հնդեվրոպական անվանումը հայերենում բացակայում է. սերեկ «սեկ, կաշվե ծածկոց» բառի հնդեվրոպական ծագումը հավաստի չէ։

Պահպանվել են հնդեվրոպական ծագման զգեստ, աբոց, աձիք, տեռ «դարշ», քող (քաղ) անվանումները, բայց հագուստի առանձին տեսակների բնիկ հնդեվրոպական անվանումներ գրեթե չկան. ձորձ, բաճկոն, շապիկ, քոբանակ, դենջակ, վարտիք, գուլպայ, կաւշիկ, մուճակ, մոյկ, խոյր, գդակ, նարմանդ բառերը կամ անհայտ ծագման են, կամ հայտնի փոխառություններ։

Զարդարանքներ նշանակող զարդ, գինդ, մատանի, ակն «թանկագին քար» բառերը բնիկ հնդեվրոպական են, բայց ապարանջան, մանեակ, բազպանդ, քայր և այլն բառերը մուտք են գործել հայերենի մեջ համեմատաբար ուշ։

Անձեռոց, սրբիչ, ածելի, ածանեմ բառերը կազմված են բնիկ հնդեվրոպական արմատներից, մինչդեռ դաստառակ, սանտր, խոզանակ, զմելին և այլն ուշ շրջանում մուտք գործած բառեր են։

7. Բնակարան, տուն, կահկարասի: Հայերենը լավ է պահպանել բնակության, տան և սրա մասերի վերաբերյալ բնիկ հնդեվրոպական անվանումները՝ տուն, այր, խուղ, դուռն, անդ, յատակ (?), որմն, ձեղուն, առաստաղ, ցիւ, քիւ և այլն: Սակայն բացակայում են վրանի, բակի, գավթի, փականքի հնդեվրոպական անվանումները. լուսամուտ բառը հավանաբար հայկական նորակազմություն է՝ համապատասխան հնդեվրոպական տարրերի հիման վրա (լոյս,-ոյ և մուտ):

Որպես վառելիք ծառայել է հիմնականում փայտը և չորացրած անասնաղբը, որի համար կան քակոր, այլև բարբառային թիրէն, տարբ բառերը: Վառարանի հնդեվրոպական հատուկ անվանում չի պահպանվել. կրակետղ-ը հավանաբար ուշ կազմություն է: Չկա նաև ծխնելույզի բնիկ հնդեվրոպական անվանում:

Տնային կահույքի վերաբերյալ բնիկ հնդեվրոպական ծագման հայերեն անվանումները սակավաթիվ են. կահույքի հետագայում տարածված անվանումները բնիկ հնդեվրոպական չեն. սար-ք բառը, եթե այն իրոք բնիկ հնդեվրոպական և ոչ թե իրանական ծագում ունի, համեմատաբար լայն իմաստով է գործածվում: Սեղան բառի բնիկ հնդեվրոպական ծագումը կասկածելի է. անկողին և նստելի «նստարան, աթոռ» բառերի՝ վաղնջահայերենում նույնակազմ և նույնիմաստ գործածությունը հայտնի չէ: Մահիճ, աթոռ, բազմոց, գահ, գահոյք, լապտեր, կանթեղ, ճրագ, մոմ բառերն ուշ ձեռքբերումներ են, որոնք վաղնջահայերենում բացակայել են:

8. Երկրագործություն, բուսականություն: Հայերենը պահպանել է ծառերի և այլ բույսերի հնդեվրոպական զգալի թվով անվանումներ: Ծառանուններից բնորոշ են կաղնի, մայր(ի), կուենի, եղեւնի, բարտի, հացի, բեղի. կեչու հնդեվրոպական *bherəg'- անվանումն անցել է բարդուն, և ինչ-որ աղբյուրից փոխառվել է կեչի-ն: Հին հայերենը չի պահպանել հաճարենու հնդեվրոպական անվանումը, որ պիտի լիներ *բագ (հ.-ե. *bhāgo-s): Մեծ թիվ են կազմում բույսերի տարբեր մասերի, հատկապես ճյուղի և բողբոջի անվանումները:

Հին հայերենում բավական առատ են եղել երկրագործության հետ կապված բնիկ հնդեվրոպական անվանումները, որ խոսում է նաև վաղնջահայերի մոտ երկրագործության բավականաչափ մեծ զարգացման հասած լինելու մասին՝ արտ, անդ, հարաւունք, այգի, արաւր, հերկեմ (?) բիր, բրիչ, սերմն, բերք, արդիւն-ք, պտուղ և այլն: Բացի հնդեվրոպական երկրագործական տերմիններից, վաղնջահայերենում պետք է հանդես եկած լինեին իմաստով մասնավորված և երկրագործական արժեք ստացած մեծ թվով բառեր. համեմատ. օրինակ, կորի «փոքր ջրանցք՝ արտը ջրելու համար», ոռոգանեմ, առոք «լավ հասած, լիքը (հացահատիկի մասին)», բարդ «խոտի կամ հացահատիկի դեզ», եղան և այլն: Սակայն հին հայերենը չի պահպանել երկրագործական մի շարք կարևոր հասկացությունների՝ շտեմարանի, ակոսի, փոցխի, մանգաղի, հացահատիկի, ցորենի, տարեկանի (հաճարի), վարսակի համար բնիկ հնդեվրոպական անվանումներ:

9. Ֆիզիկական տարբեր գործողություններ. արվեստներ և արհեստներ՝ նրանց հետ կապված հասկացություններով: Ֆիզիկական գործողությունների բնիկ հնդեվրոպական նշանակումներ հայերենը լավ է պահպանել՝ հարուստ լինելով համանիշներով և բարբառային տարբերակներով: Ծռելը, խփելը, պատռելը, քերելը, լցնելը և այլ գործողություններ ներկայացված են բնիկ հնդեվրոպական ծագման զգալի թվով համանիշներով և նշանակման նրբերանգներով՝ կորացուցանեմ, կքեմ, բ. կեռեմ և այլն, հարկանեմ (զարկանեմ), գանեմ, ծեծեմ (?), թաղեմ, ձաղկեմ, ջնեմ, տոփեմ և այլն, ցելում, փեղկեմ, փեռեկեմ, երգիծանեմ, ցտեմ և այլն, քերեմ, քերբեմ, տեռեմ, բ. քեղրդել և այլն, հեղում (զեղում), լնում, ամամ և այլն:

Արուեստ բառի և հատկապես նրա արհեստ տարբերակի բնիկ հնդեվրոպական ծագումը կասկածելի է. ավելի հավանական է իրանական ծագումը: Առանձին արհեստներից հայերի, այդ թվում նաև վաղնջահայերի մեջ լավ զարգացած են եղել կառուցողական արհեստը, ատաղձագործությունը, մետաղագործությունն ու դարբնությունը, կավագործությունը. համեմատ. ատաղձ, երիթ, «մեծ սեպ», թործ «տաշված փոս», թորիծ «ծակվածք», մուրճ, թակն, գերան, հեծան (?), ձող, սիւն, թիթեղն, շաղ-ախ, դարբին, բեքեմ «կռել», սալ «տափակ քար. զնդան», հալեմ, ձուլեմ (ձոյլ), բով, հնոց, դուրգն, արծնեմ «տաք երկաթով փորագրել» և այլն:

Արհեստի հետ կապված նշանակումներից հին հայերենում բացակայում են հետևյալ բառերի բնիկ հնդեվրոպական համարժեքները՝ կառուցանեմ, տաշեմ, ծակեմ, գայլիկոն (շաղափ), սղոց, գամ, (բեւեռ), աղիս, բրուտ, կաւ, հիւսեմ, կողով, զամբիւղ, կթոց, սակառ, քանդակեմ, արձան, դուր, նկար (պատկեր), ներկ և այլն:

Մետաղների անուններից բնիկ հնդեվրոպական է միայն արծաթ-ը: Ոսկի, պղինձ, արոյր, երկաթ, կապար, արճիճ, անագ բառերը հայերենը ձեռք է բերել այլևայլ աղբյուրներից. դրանք թերևս մասամբ (ոսկի, երկաթ) եղել են նաև վաղնջահայերենում:

Հին հայերենում բացակայող բառերի մի մասը վաղնջահայերենում, անշուշտ, առկա է եղել. զարմանալիորեն հին հայերենի կառուցանել, շինել, կերտել, կազմել համանիշներից ոչ մեկը բնիկ հնդեվրոպական չէ. բնիկ հնդեվրոպական հաստատեմ բայը, բացի բուն իմաստից, երկրորդաբար ունի նաև «շինել, կառուցել» իմաստը, որ կարող էր վաղնջահայերենում ավելի լայն գործածություն ունեցած լինել. հնարավոր է նաև ստեղծանեմ բայի սկզբնական գործածությունը հենց այդ իմաստով: Ծակելու հնդեվրոպական նշանակումների համար հիմք ծառայած *bher-, *ter- արմատներից հայերենը պահպանել է բերան (*«անցք»), բիր, բրեմ և բուր, բրբուր բառերը, բայց առանց հատկապես այդ գործողությունը նշանակելու. հ.-ե. *steig- (steig'-?) «ծակել» արմատը հայերենում պահպանվել է ստէծ բառի մեջ, եթե, իհարկե, ճիշտ է այս բառի ստուգաբանությունը. թերևս վաղնջահայերենի համար կարելի է ենթադրել սրա բայական ածանցյալը (ստէծ-, *ստիծեմ), որ հետագայում փոխարինվել է ծակեմ բայով: Հիւսել բառի հնդեվրոպական ծագման վարկածը *tek'þ-ից (Վ. Վինտեր) հնչյունապես չի արդարանում, բայց նրա փոխարեն կարող էր գործածված լինել հ.-ե. *plek'- «հյուսել» արմատի ածանցյալը՝ *les- (*լես) ձևով, որ կարող էր դուրս ընկնել լսում բայի հետ համընկնելու հետևանքով: Նկար, պատկեր, ներկ բառերն իրանական ծագում ունեն. հ.-ե. *peik/g- (peik'-) «գրել, նկարել» արմատը վաղնջահայերենում պահպանված լինելու դեպքում պետք է հետագայում ունենար *նէք, *նէկ կամ *նէս ձևը. համեմատ. ռուս. писать «գրել. նկարել»:

Թված գաղափարների որոշ մասը վաղնջահայերենում չի եղել՝ համապատասխան իրույթներին ու գաղափարներին հայերի անծանոթ լինելու պատճառով. սրանց թվին են պատկանում որոշ մասնագիտացված գործիքների, մետաղների անվանումներ։ Բացի դարբին բառից, արհեստավորների այլ կարգի հին նշանակումներ չեն պահպանվել, որ խոսում է աշխատանքի բաժանման տվյալ աստիճանի՝ վաղնջահայերի մոտ դեռևս թույլ արտահայտված լինելու, արհեստագործության՝ հիմնականում տնային բնույթ կրելու մասին։

10. Շարժում, տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն: Հայերենում լայնորեն ներկայացված են շարժման ու տեղափոխության տարբեր տեսակների նշանակումները, թեև կարելի է նշել, որ վաղնջահայերենի և հին հայերենի միջև զգալի տարբերություններ են եղել բառերի գործածականության և իմաստային ծավալների հարցում։ Այսպես, հին հայերենի շարժեմ բայը վաղնջահայերենում հավանաբար դեռևս չի եղել, գործածության մեջ պիտի եղած լինի բնիկ հնդեվրոպական տղեմ (հմմտ. անտղելի «անշարժ») բայը։ Առկա են ցամաքում, ջրում և օդում շարժվելու տարբեր տեսակների մեծաքանակ բնիկ հնդեվրոպական նշանակումներ, ընդ որում նշանակվում են ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիների շարժման ու տեղափոխման գործողությունների զանազան տեսակները՝ երթամ, գամ, թռչիմ, լողամ, ելանեմ, մտանեմ, իջանեմ, անկանիմ, ընթանամ «վազել», մերձենամ և այլն։ Հեծանիմ բայը խոսում է ձիու՝ իբրև փոխադրամիջոցի գործածության մասին։

Նշենք, որ չի պահպանվել պարելու գործողության բնիկ հնդեվրոպական մասնագիտացված անվանում. խաղ(-ամ) բառը, եթե այն իրոք բնիկ հնդեվրոպական է, բազմիմաստ է։

Վաղնջահայերն ունեցել են ճանապարհի, ճանապարհաշինության և անիվավոր փոխադրամիջոցների հետ կապված զգալի թվով նշանակումներ։ Վաղնջահայերենում ճանապարհ բառը չի եղել, բայց լայնորեն գործածվել է ուղի բառի սկզբնաձևը. ճանապարհ բանալու լայն կիրառության մասին են խոսում հորդ «բացված, տրորված, ուղիղ (ճանապարհ)», հորդեմ «ճանապարհ բանալ» տերմինները։ Առկա են կամուրջ (?), անիւ (?), բ. հոլոլ «անիվ», ալի «լիսեռ, առանցք», լուծ, սամի տերմինները, բայց սայլ, կառք բառերը հանդես են եկել համեմատաբար ուշ։ Չկա փողոց նշանակող հատուկ բառ. փողոց բառի ծագումն անհայտ է, պողոտայ բառը փոխառվել է ավելի ուշ։

Վաղնջահայերը, ինչպես երևում է պահպանված բառերից, ծանոթ են եղել նավագնացությանը և ջրով տեղափոխվելուն։ Դրա մասին են վկայում նաւ, կուր «նավակ», լաստ, թի, հեղի «ղեկ կամ կայմ» (?), թեւ «ղեկ», առագաստ բառերը։

11. Ունեցվածք, սեփականություն և առևտուր: Ունենալու, ստանալու և տալու, նվիրելու վերաբերյալ հայերենի ժառանգած բնիկ հնդեվրոպական ընդհանուր նշանակումները բավականաչափ հարուստ են, մինչդեռ նույնը չի կարելի ասել սեփականության, հարստության և առևտրի վերաբերյալ բառերի մասին։ Ունիմ, կալում, առնում, ստանամ, տամ, ընծայեմ (?), ձաւնեմ, ձ(ե)րեմ (ձիր), որոնեմ, գտանեմ բառերը հայերենի բառապաշարի

կայուն տարրերից են. պահել-պահպանելու, խնայելու, վնասելու, կորցնելու հնդեվրոպական տարածված նշանակումները հին հայերենը չի պահպանել, թեև պետք է ենթադրել, որ դրանք վաղնջահայերենում դեռևս արտահայտվելիս են եղել բնիկ հնդեվրոպական բառերով։

Հին հայերենը հարստության և սեփականության հետ կապված բնիկ հնդեվրոպական քիչ նշանակումներ ունի։ Եթե ճիշտ է ուն «սեփականություն» բառի ահառյանական ստուգաբանությունը, և եթե այն իրանականից չի ծագում, ապա առկա է բնիկ հնդեվրոպական կարևոր մի անվանում, որ պիտի եղած լինի և վաղնջահայերենում. կալուած, ստացուած, ինչք անվանումները երկրորդական կազմություններ են։ Երկրորդական են նաև հարստության ընդհանուր անվանումները, իսկ փողի (դրամ, ստակ), քսակի, գանձի, ժառանգելու հետ կապված բնիկ հնդեվրոպական անվանումներ հայերենում ընդհանրապես չկան. արծաթ բառի «փող» և «հարստություն» իմաստները երկրորդաբար են առաջացել։ Երկրորդական բնույթ ունի նաև հարուստ բառը, որի նախնական իմաստն է «ուժեղ» (հարում «խփել, զարկել» բայից). թերևս հին կազմություն է մեծատուն համանիշը։ Ընդհակառակն, հայերենը հարուստ է «աղքատ» իմաստի բնիկ հնդեվրոպական նշանակումներով՝ աղկաղկ, աղքատ, անքատ (?), փանաք: Ագահի, ժլատի բնիկ հնդեվրոպական անվանումներ չկան. ագահ, ժլատ, կծծի, ռիշտ, գծուծ և այլ բառեր հնդեվրոպական չեն. ընչաքաղց, ընչասէր, արծաթասէր բառերը երկրորդական կազմություններ են։ Գող և ելուզակ բառերը հնդեվրոպական ծագում ունեն, բայց կողոպուտ, յափշտակել, շորթել, աւազակ, հէն բառերը ուշ ձևաքերումներ են, որոնցից վերջին երկուսն իրանական ծագում ունեն և վաղնջահայերենում չեն եղել. նշենք կողոպուտ բառի ակնհայտ նմանությունը հուն. κλέπτω «գողանալ, հափշտակել» բային, որ ծագում է հ.-ե. *K'lep-ից (հին փոխառությո՞ւն)։

Հայերենում չկան փոխի, պարտքի, վճարելու, հաշվի, գրավականի (երաշխիքի), ծախսի, շահի, վնասի, տույժի, վարձի, ռոճիկի, վաճառելու, խանութի, թանկի, էժանի, այսինքն՝ զարգացած առևտրի հետ կապված բնիկ հնդեվրոպական անվանումներ։ Ակնհայտ է, որ ինչպես հնդեվրոպացիների, այնպես էլ վաղնջահայերի մոտ դեռևս զարգացած առևտուր և փոխանակություն չի եղել։ Կարելի է միայն նշել, որ վաղնջահայերը ներքաշված են եղել նախնական առևտրի ոլորտի մեջ. հմմտ. գին, տուր-ք, ագուտ (եթե վերջինս իրանական ծագում չունի), մուտ(-ք), նաս:

12. Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ: Հայերենում լայնորեն ներկայացված են տարածական հարաբերությունների բնիկ հնդեվրոպական նշանակումները, որոնք ամեն մի լեզվի բառապաշարի անհրաժեշտ մասն են՝ անկախ ժողովրդի մշակույթի և քաղաքակրթության աստիճանից։ Զգալի թիվ են կազմում տարածության մեջ գրաված տեղի, այլև ձևի ու չափի բայական նշանակումները՝ դնեմ, նստիմ, դարեմ, հանգչիմ, դլամ, կամ, մնամ, դիզանեմ, թեղեմ, յարեմ, բանամ, գաղեմ, թաքչիմ և այլն։ Շատ են տարածության մեջ գրաված տեղի, ձևի, չափի հետ կապված անվանումները՝ բարձր, ներքին, ցած, վեր, հիմք, հաւ (յաւ), կէտ, սայր, եզր, կողմն, թեր, մէջ, աջ, մերձ, հուպ, հեռի, հարաւ, ձեւ, արդ, մեծ, փոքր, մանր, երկայն, երկար, լայն, անձուկ, հաստ, թանձր, մած, թաւ, թաղկ, նուրբ, զոգ, կոր, կեռ, շեղ, անկիւն, բոլորակ, ոլոր և այլն։ Հին հայերենում չեն պահպան-

վել փակելու, ծածկելու բնիկ հնդեվրոպական անվանումներ. փակեմ, աղխեմ, խնում (խց(ան)եմ), ծածկեմ, պատեմ բայերը բնիկ հնդեվրոպական չեն։ Ծայրի հետ կապված ծայր, գագաթն, կատար-ք բառերը բնիկ հնդեվրոպական չեն. պետք է կարծել, որ սար բառը վաղնջահայերենում դեռևս ավելի լայն նշանակություն է ունեցել՝ նշանակելով «գագաթ» ընդհանրապես և ոչ միայն «լեռնագագաթ». սայր բառի վաղ ավանդված իմաստն է «թրի բերան», թեև հնարավոր է նաև «լեռնագագաթ» իմաստի վաղ գոյությունը (հմմտ. նաև սայր)։ Ահեակ-ը իրանական ծագում ունի, հավանաբար բնիկ հայկական չէ նաև ձախ բառը, մինչդեռ աջ-ը բնիկ հնդեվրոպական է. սա բացատրվում է ձախի բառարգելման (տաբուավորման) միտումով, որին տուրք են տվել նաև հայերը։

Երկրի կողմերի անվանումներից արեւելք և արեւմուտք բառերը բարդություններ են, որոնք թերևս վաղնջահայերենում արդեն գործածական են եղել. հարաւ բառն իմաստային ակնհայտ զուգահեռ ունի իրանականում (հմմտ. ավեստ. paurva- «առաջ. հարավ»), որ խոսում է հայերի, իրանցիների նման, հարավային կողմնորոշման մասին (հին հնդիկների մոտ իշխել է արևելյան կողմնորոշումը՝ pūrva- «առաջ. արևելյան»)։

Ի տարբերություն երկայն-ի և երկար-ի, հին հայերենը կարճի բնիկ հնդեվրոպական անվանում չի պահպանել. կարճ, հակիրճ, համառաւտ, ամփոփ, սեղմ բառերից ոչ մեկի բնիկ հնդեվրոպական ծագումը չի հաստատված. հ.-ե. *mreg'hu-ի *mr̥g'h- «կարճ» տարբերակը հին հայերենում պիտի տար *մարձ ձևը, որ կարող էր դուրս ընկնել իրանական մարզ, մարձ «երկրամաս» բառի համանունության պատճառով. հնարավոր է ենթադրել նաև հ.-ե. *(s)ker- «կտրել» արմատից ծագող մի սկզբնաձևի գոյություն (հմմտ. հ. սլավ. kratъkъ, ռուս. короткий, այլև լատ. curtus «կարճ»). հայ. կարճ-ը ակնհայտ փոխառություն է հնդեվրոպական որևէ լեզվից (իրանական աղբյուրի՞ց), որ նույնպես կարող էր դուրս մղած լինել սկզբնական, ասենք, *քարդ տիպի մի ձև։

Հին հայերենը չի պահպանել բնիկ հնդեվրոպական անվանումներ նոր (անաւր, անգայտ), խոր, ծանծաղ, հարթ, ուղիղ, գունդ, շարք, հավասար և նման գաղափարների համար, թեև կան մերձավոր գաղափարների անվանումներ, որոնցից կարող էին հնում գործածական լինել այլևայլ բառեր։ Հարթ և տափարակ բառերն ակնհայտորեն փոխառություններ պիտի լինեն հնդեվրոպական այլ (իրանակա՞ն) լեզուներից. հարթ բառը զուգահեռ ունի հ. հնդկ. pr̥thu-, ավեստ. pərəthu- «լայն, ընդարձակ» բառերի մեջ, բայց սրանք ծագում են հ.-ե. *pl̥t(h)u- ձևից, որ հայերենում պիտի տար *հաղթ. սպասված ղ-ի փոխարեն ր-ի առկայությունը արիզմ է, որ առկա է նաև մարմին բառում. այս դեպքում էլ պետք է ենթադրել շատ հին փոխառություն. նշենք, որ իրանական բառը փոխառված է քարթվելական լեզուներում (հմմտ. վրաց. parto «լայն, ընդարձակ»)։ Տափ, տափարակ բառերի համար հմմտ. մի կողմից՝ հուն. ταπεινός «ցածր, ցածրադիր», որ կասկածով համեմատում են հ. իսլ. þefja «ճզմել, տոփել, տրորել» բառի ու սրա ցեղակիցների հետ և վերականգնում հ.-ե. *tap- արմատը, մյուս կողմից՝ հայ. տապակ «վահանաձև զարդ» (<իրան.). քիչ հավանական է տափ-ի կապը տոփեմ բայի հետ, որ բնիկ հնդեվրոպական է։

13. Քանակ և թիվ: Քանակ և թիվ ցույց տվող բառերը հիմնականում բնիկ հնդեվրոպական են։ Սա վերաբերում է ինչպես ընդհանուր անվանումներին (քան-, թիւ, ամբ-ողջ, ամէն, յոգն, յոլով «շատ», աւել-ի, բոյլ, հոյլ, լի, սին, ունայն), այնպես էլ թվականներին մինչև հարիւր. կասկածելի է միայն վերջինիս հնդեվրոպական ծագումը. հայերենը կորցրել է հարյուրի բուն հնդեվրոպական անվանումը *k'm̥tom-ից։ Մասն բառի հնդեվրոպական ծագումը կասկածելի է, կես բառի ծագումն՝ անհայտ։

14. Ժամանակ: Հայերենը պահպանել է ժամանակի հետ կապված բազմաթիվ բնիկ հնդեվրոպական անվանումներ, այդ թվում՝ ինչպես տարիքի, ժամանակային տևողության, գործողության տարբեր փուլերի, այնպես էլ տարվա եղանակների, ամիսների, օրերի ու նրանց մասերի հետ կապված։ Առաջին կարգի նշանակումներից հիշենք հաղ (հեղ) «անգամ», տի-ք «տարիք, հասակ», նոր, թարմ, հին, ծեր, երէց, արդ, արդէն, փոյթ, դանդաղ (?), տարտամ, հաւ «սկիզբ», տեւեմ, յաւ «ծայր, վերջ», յար, ստէպ, երբեմն, անդրէն, կրկին և այլն։ Ժամանակ բառը, ինչպես հայտնի է, իրանական փոխառություն է. եթե ճիշտ է ատեան բառի հնդեվրոպական և ոչ իրանական ծագման վարկածը, ապա սրա «ժամանակ» նշանակությունը, այնուամենայնիվ, ուշ շրջանի է, և վաղնջահայերենում ժամանակի ընդհանուր անվանման հարցը բաց է մնում։ Վաղ և ուշ բառերի սկզբնական բնիկ հնդեվրոպական համանիշների գոյության հարցը ևս չի լուծված, եթե, իհարկե, անագան «ուշ» բառի հնդեվրոպական ծագման մեր վարկածը ճիշտ չէ. վաղ, կանուխ բառերի ծագումը հայտնի չէ (վաղ-ը, թերևս, վրաց. xval-ի «վաղը» հետ միասին ուրարտական աղբյուրից է), ուշ-ը իրանական ծագում ունի՝ համապատասխան իմաստափոխությամբ։ Բնիկ հնդեվրոպական ծագում չունեն սկսանիմ, աւարտեմ, պատրաստ և նման տիպի բառերը. հնում կարող էին սկսանիմ-ի փոխարեն գործածական լինել հաւիմ, աւարտեմ-ի փոխարեն՝ բոլորեմ, լնում բայերը։

Օրվա և նրա մասերի համար գործածական են եղել աւր, տիւ, տի, ց-երեկ, գիշեր, երեկ(ոյ), առ-աւ-աւտ (?), օրերի հաջորդման նշանակման համար այսաւր (հին կազմություն է), սերկ (?), երէկ: Տարվա, նրա եղանակների և ամսվա անվանումները բնիկ հնդեվրոպական են՝ ամ, հերու, գարուն, ամառն, աշուն (?), ձմեռն, (յ)եղանակ, ամիս: Հայտնի չեն ամսվա և օրվա ավելի մանրամասն բաժանումների վաղնջահայ անվանումները, եթե այդպիսիք եղել են։

15. Զգայական ընկալումներ: Հոտի, համի, լսելիքի, տեսանելիքի և շոշափելիքի ու մաշկազգայության հետ կապված հիմնական նշանակումները հայերենում բնիկ հնդեվրոպական ծագում ունեն: Բնիկ հնդեվրոպական են, ամենից առաջ, հենց զ-գամ, իմանամ «զգալ» և «հասկանալ. իմանալ», հոտ (հոտոտիմ), համ, լսեմ, տեսանեմ, հուպ (հպիմ), թերևս նաև շփեմ, շաւշափեմ բառերը և բառարմատները։ Բնիկ հնդեվրոպական են նաև զգայարաններով ընկալվող այլևայլ հատկությունների անվանումները՝ քաղցր, աղի, անալի, դառն (?), կծու. փայլուն, աղաւտ, մոյգ, բոսոր, բիլ «բաց կապույտ», դեղին (դեղձան, դեղբ). կարծր, պինդ, տրամ «պինդ», մեղկ, մեղմ, փափուկ (?), դերբուկ, ողորկ, սուր, բութ, գէջ, թաց, հայ, չոր (?), ջերմ, գոլ, գաղջ, ցուրտ, հով (զով), ոյծ «ցուրտ», ջինջ, բոր և այլն։

Հին հայերենը պահպանել է գույնի հետ կապված բնիկ հնդեվրոպական փոքրաթիվ նշանակումներ, հատկապես բիլ, դեղին, դեղձան: Գոյն, երանգ, ճերմակ, սպիտակ, սեաւ, կարմիր, կապոյտ բառերն իրանական փոխառություններ են, բոյր-ի, կանաչ-ի ծագումն անհայտ է։ Կարելի է վստահորեն ասել, որ բիլ-ի և դեղին-ի կողքին վաղնջահայերենը պիտի պահպանած լիներ նաև դրանց բնիկ հնդեվրոպական անվանումները։ Սպիտակի անվանումները կապված են գերազանցապես փայլելու գաղափարի հետ, և այդ գաղափարի հնդեվրոպական առատ արտահայտման պայմաններում դժվար է ասել, թե հայերենը ո՛ր տարբերակը կարող էր ընտրած լինել. հավանական են, օրինակ, *աղբ կամ *աղաւ (*albho- կամ *aləu- «սպիտակ». այստեղից են աղաւնի, թերևս նաև ալաւ(ս)ունք «համաստեղություն»), *լուսն (հմմտ. լսնագոյն «սպիտակ», լուսն «աչքի սպիտակ փառ՝ որպես հիվանդություն»՝ *leuk- արմատից, որտեղից լոյս), *արծ (հ.-ե. *areǵ-, որտեղից արծաթ, արծնեմ, արծարծեմ) ձևերը։ Հնարավոր է բոխ «սև. մութ» բառի հնդեվրոպական ծագման վարկածը (հմմտ. հ. իսլ. þǫka, հ. շվեդ. thökn «մեգ, մառախուղ». հնչյունապես քիչ հավանական է համեմատությունը ռուս. тусклый «աղոտ» բառի հետ՝ *taus- արմատից). սակայն կարող էր գոյություն ունենալ նաև իրան. սեաւ-ի հետ արմատակից բուն հայկական մի ձև. Հ. Աճառյանը նույն արմատից է բխեցնում, օրինակ, նսեմ բառը, թեև կա հնչյունական դժվարություն։ Կարմիրի հնդեվրոպական տարածված նշանակումն էր *reudh-, որ հայերենում պիտի տար *երոյդ. թերևս սրա սկզբնաձևն առկա է եղել վաղնջահայերենում։ Կանաչի հնդեվրոպական նշանակումները գալիս են *ǵhel- «փայլել» արմատից, որ կարող էր նշանակել նաև «դեղին». այն հայերենում պիտի տար *ձել կամ *ձեղ: Հնարավոր է, սակայն, որ դալար բառը հնում գործածվեր ոչ միայն կանաչեղենի, այլև հենց կանաչ գույնի համար. դալ բառի իմաստը Հ. Աճառյանը մեկնում է որպես «մի տեսակ ձուկ», բայց հնարավոր է, որ սա իրոք գույն է նշանակում, ինչպես մեկնված է Նոր հայկազյան բառարանում. այն հանդիպում է հոմանիշների մի շարքում, որտեղ առկա է նաև բիլ-ը, որ Հ. Աճառյանը նույնպես մեկնում է «մի տեսակ ձուկ»։

Հին հայերենում բացակայում են նաև ծանրի և թեթևի բնիկ հնդեվրոպական նշանակումները, որոնք կարող էին ունենալ *կեր (*g^{u}er-) և *լեգ (*leg^{u}h-) կամ լինգ (*leng^{u}h-) ձևերը։

16. Զգացմունք (ֆիզիկական որոշ դրսևորումներով). խառնվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ: Զգացմունքի և խառնվածքի հետ կապված նշանակումները, բնականաբար, նախնական բնույթի են և լայնորեն ներկայացված հայերենի բնիկ հնդեվրոպական բառերի մեջ։ Լավ են ներկայացված նաև բարոյական տարրական գաղափարների և գեղագիտական տարրական ըմբռնումների դրսևորումները։ Վաղնջահայերենում լայն գործածության մեջ գտնվող մի շարք բառեր հետագայում փոխարինվել են ավելի տարածված նշանակումներով և իմաստափոխության են ենթարկվել։ Իրանական ծագման յոյզ բառի փոխարեն հնում գործածության մեջ պիտի եղած լինեն, թերևս, ճոռ և զգացումն բառերի սկզբնաձևերը։ Բնիկ հնդեվրոպական են և վաղնջահայերենից են գալիս հոգ «հոգս», զարմանք, երջանկութիւն, ճէգ (ճիգութիւն), խինդ (?) ծիծաղ (?), խախանք, ծաղր, ձաղ, սէր, ցաւ, մռմռք, տրտում, լամ, ողբ, ատել, ցասումն, մոլիմ, ճեռ, մախ «նախանձ», քէն, սէգ, արի, երկիւղ, սպառնամ, գեղձիմ, ստոյգ, սուտ, մեղմեղանք «կեղծավորութիւն», քաւ, բարի, զարշ, արդար, սխալ, մոլար, մեղ–ք, սաստ (?), լոյտ, գեղ (գեղեցիկ), տ–գեղ բառերը։

Հետագայում սրանց փոխարեն կամ սրանց կողքին հանդես են եկել փոխառյալ և անհայտ ծագման բառեր՝ բախտ, դժբախտ, թշուառ, ուրախ, տխուր, քաջ, վախ, նենգ, ճիշտ, վատ և այլն։ Մարդու ընդհանուր բախտի և ճակատագրի, հաճելիի և ախորժելիի, համարձակության, երախտիքի և շնորհակալության հետ կապված բնիկ հնդեվրոպական նշանակումները հին հայերենում բացակայում են։ Ցանկություն արտահայտող հոմանիշների շարքի մեջ (կամիմ, ցանկանամ, բաղձամ, բղձամ (իղձ), տենչամ, փափագեմ և այլն) ընդհանրապես քիչ են բնիկ հնդեվրոպական բառերը. պետք է կարծել, որ վաղնջահայերենում ավելի լայն գործածության մեջ են եղել գեղձ «ցանկություն», գեղձիմ (–ամ) բառերի սկզբնաձևերը, որոնք գալիս են հ.-ե. *u̯el- «ցանկանալ, ուզել» արմատից։

17. Մտածողություն, միտք: Մարդու մտքի և մտածողության հետ կապված նշանակումները լայնորեն ներկայացված են հայերենի բնիկ հնդեվրոպական բառերի մեջ՝ միտք, բան «բանականություն», ըմբռնեմ, իմանամ, գիտեմ, ճանաչեմ (*ծանաչեմ), ուսանիմ, մոռանամ, իմաստ, գաղտ, ստոյգ, յորդոր, բեբուք, երկեւան, խէթ «կասկած» և այլն։ Իրանականից փոխառյալ յիշեմ բայի հետ միասին հին հայերենում գործածական են եղել համանիշ նկարագրական դարձվածներ։ Հունարենում, լատիներենում, կելտականում, գերմանականում, բալթիականում և սլավոնականում այդ իմաստն արտահայտող բառերը գալիս են *men- «մտածել» արմատից. թերևս այստեղից է ծագում բարբառային մանել «հասկանալ» բայը, եթե այն մանել բայի փոխաբերական գործածությունը չէ. Մեյեն այստեղից է բխեցնում իմանամ բայը, բայց սրա արմատը իմ-ն է և ոչ –ման-ը։ Եթե հայերենը ժառանգել է *men-ը «հիշել» իմաստով և հետո կորցրել, ապա այն հին հայերենում պիտի ունենար *մենեմ (ավելի վաղ՝ *մինեմ) տեսքը։

18. Ձայնական արտահայտություն, խոսք. ընթերցանություն և գիր: Հայերենը պահպանել է ինչպես բնության և կենդանական ձայների տարբեր տեսակների, այնպես էլ մարդկային լեզվի և խոսքի հետ կապված և հնից եկող բազմազան նշանակումներ։ Առաջին կարգի բառերի զգալի մասի բնիկ հնդեվրոպական, թե հայկական բնաձայնական նշանակումներ լինելու հարցը միշտ չէ, որ կարելի է հեշտությամբ լուծել. ձայն, երգ, տաղ (?), կարդամ «ձայնել, գոչել» ոչ բնաձայն բառերի կողքին առկա են մեծ թվով բնաձայն տիպի բառեր, որոնք հաճախ ունեն հնդեվրոպական, երբեմն էլ ոչ հնդեվրոպական լեզուներում զուգահեռներ՝ աղաղակեմ, գոչեմ, շշեմ, սուլեմ, կարկաչ, մռմռեմ «մռնչալ» և այլն։

Մարդկային լեզվին և խոսքին վերաբերող հնդեվրոպական նշանակումներից հիշենք բամ, բան, բայ, բարբառ, ասեմ, գո՛գ «ասա՛», լուր, մունջ, լեզու, բառ, անուն, հարց և այլն։ Հին հայերենը չի պահպանել պատասխանելու և մերժելու բնիկ հնդեվրոպական նշանակումները. պատասխանելը հնդեվրոպական տարբեր լեզուներում արտահայտվում է գերազանցապես ինքնուրույն կազմություններով, որոնցից է նաև իրանական ծագման պատասխանի-ն (pāt(i)- saxuanī?՝ pāti «դեմ, դիմաց, հակառակ» +saxuan «խոսք»):

Գրի և գրելու հետ կապված հին հայերենն ունի գիր (գրեմ), ընթեռնում (բրբրակ «ճարտասան»), կարդամ «ձայնել, բարձրաձայն կարդալ», էջ, տող բառերը, որոնցից վերջին երեքը ակնհայտորեն իմաստային ուշ մասնավորումներ են. գիր-ը (*uēr-) ծագում է *u̯er- «քերել, քերծել» արմատից և նշանակում է հատկապես քարի կամ այլ կարծր նյութի վրա հետք թողնելը (նույն արմատից է գերծում «ածիլել» բայը). հայերենի տիպի իմաստային զարգացում են ունեցել գերմանական խմբի գոթ. writ «գիծ», հ. անգլ. writ «գիր» բառերը: Ընթեռնում և նրա հետ կապված բրբրակ բառերի սկզբնական իմաստը կապված է ոչ թե ընթերցելու, այլ խոսելու հետ, և իմաստի մասնավորումը տեղի է ունեցել հայերենում:

19. Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ. Հասարակական հարաբերություններ: Այս բաժնում ընդգրկված հասկացությունների մեջ հին հայերենի բնիկ հնդեվրոպական նշանակումները մեծ թիվ չեն կազմում: Սա բացատրվում է մասամբ հնդեվրոպացիների և վաղնջահայերի հասարակական պայմանների տարբերությամբ, մասամբ հետագա հասարակական-քաղաքական փոփոխությունների հետ կապված նոր բառերի ներմուծմամբ: Երկիր, կողմն, ցեղ, զարմ, ընտանիք բառերը ակնհայտորեն գալիս են հնդեվրոպական ակունքներից և վաղնջահայերենում լայն գործածություն պիտի ունեցած լինեն: Հավանական է նաև հայերին տրվող արմեն և հայ անվանումների հնդեվրոպական ծագումը: Գաւառ բառի բնիկ հնդեվրոպական լինելը կասկած է հարուցում, իսկ ազգ և գերդաստան բառերի համար ավելի հավանական է իրանական ծագման վարկածը: Հին հայերենը չունի գիւղ, քաղաք, ժողովուրդ, իշխել, թագաւոր (արքայ), թագուհի, իշխան, ազնուական (ազատ, տոհմիկ) բառերի համար բնիկ հնդեվրոպական համարժեքներ. գիւղ և արքայ բառերի բնիկ հնդեվրոպական ծագումը խիստ կասկածելի է, թեև կան դրանք հ.-ե. *ueik´- «տուն, բնակատեղի, գյուղ» (գեւղ <*u̯eik´-io-?) և *rek- «կարգավորել, կարգադրել» արմատներից բխեցնելու փորձեր:

Հասարակական հարաբերությունների վաղ բնույթի մասին որոշ գաղափար են տալիս տէր (<տի-այր), տանուտէր, տիկին, ընդոծին, արբանեակ, ծառայ բառերը. վերջին երկուսի հիման վրա և նկատի առնելով ստրուկ բառի հնարավոր հնդեվրոպական ծագումը, կարելի էր եզրակացնել հայերի մոտ ստրկատիրության գոյության հնարավորությունը (հմմտ. ծառայ «գերի. ծառա. ստրուկ»), սակայն համեմատաբար ավելի ուշ, քան վաղնջահայ լեզվի շրջանն է: Ազատ, հրամայեմ, հպատակ բառերը և նրանց տարածված համանիշները բնիկ հնդեվրոպական չեն, և կարելի է կարծել, որ ազատի ու ոչ ազատի հակադրությունը վաղնջահայերի մոտ խստորեն չի անցկացվել:

Հասարակական կյանքի հետ կապված այնպիսի բառեր, ինչպիսիք են հիւր, ուգնեմ (?), բար-ք, նիւրումն, յիր և այլն, բնիկ հնդեվրոպական են և գալիս են վաղնջահայերենից: Ընդհակառակն, հին հայերենը չի պահպանել բարեկամ, թշնամի, սովորոյթ, վեճ, հանդիպիմ բառերի և նրանց մերձավոր համանիշների բնիկ հնդեվրոպական ձևերը: Ընկեր, դրացի ձևերը հնդեվրոպական հիմքի վրա կազմված հին բառեր են և հավանաբար գալիս են վաղնջական շրջանից: Դժվար է պարզել նկատում, նորեկ բառերի հնության աստիճանը, բայց կազմության ձևը չի վկայում վաղնջահայերենում նրանց գոյության մասին: Աւտար(ական)-ի համար թերևս գործածության մեջ է եղել եկ բառի վաղնջահայ ձևը:

20. Ռազմական գործ: Ռազմական գործի հետ կապված բնիկ հնդեվրոպական բառերը հին հայերենում մեծ թիվ չեն կազմում՝ մարտ (մարտնչիմ), կռիւ (?), բիր «մահակ», աղեղն, նետ, սլաք, փքին, (գեղ)արդն, սուր, թուր, կումբ (?), դրոյշ «հարձակում, գրոհ», գերի, ակլակ «դարան» (?): Հավանական է դարձաղարձ «նահանջ», ընկրկեմ (կրունկն-ից), անձնատուր բառերի՝ հին կազմություններ լինելը (անձնատուր-ը՝ ուշ համաբանությամբ ձևափոխված): Խաղաղ-ի բնիկ հնդեվրոպական ծագումը և սրանից կազմված խաղաղութիւն բառի մեծ հնությունը կասկածելի են: Մարտիկ բառի կազմության հնությունը հայտնի չէ. նրա ի-ա հոլովումը, ի տարբերություն աղջիկ, ծաղիկ բառերի հոլովման տիպի, ցույց է տալիս կազմության ոչ մեծ հնություն. սա նշանակում է, որ «զինվոր» հասկացությունն արտահայտող բնիկ հնդեվրոպական ծագման վաղնջահայ տերմին հին հայերենը չի պահպանել: Բանակ, զաւ-ք, գունդ, պատերազմ, ռազմ, զինուոր, զաւրական, ռազմիկ, զաւրապետ, սպարապետ, զէն, սպառազէն, պարս, տապար, նիզակ, աշտեայ, զրահ, վերտ, նաւշան, սաղաւարտ, վահան, ասպար, նահանջ, պաշտպան, աւար, դարան և այլ բառեր իրանական ծագում ունեն, որոնց բնիկ հնդեվրոպական զուգահեռները միայն մասամբ են հայտնի կամ հնդեվրոպականում ընդհանրապես չեն եղել: Ուշ են մուտք գործել նաև ռազմական այլ տերմիններ՝ փոխառված ուրարտական (բուրգն), սեմական (սուսեր, բերդ և այլն), հունական (ստրատ, ստրատեղատ) և ուրիշ աղբյուրներից:

21. Օրենք: Օրենքի հետ կապված բնիկ հնդեվրոպական տերմինները սակավաթիվ են և արտացոլում են այդ բնագավառի նախնական ըմբռնումները՝ ատեան (?), արդար, մեղ-ք, յ-անց(ան-ք), երդումն, այց, քաւ, արգել(-ան), եղեռն, գող, ուրաստ: Օրենքի հետ կապված որոշ բառեր կազմվել են բնիկ հնդեվրոպական բառերի ու մասնիկների հիման վրա հենց հայերենում՝ իրաւ(-ունք), մեղաւոր, յանցաւոր, մեղադիր, անմեղ, շնութիւն և այլն:

Օրենքի հետ կապված տերմինների՝ հին հայերենում գործող համակարգի մեջ, բնիկ հնդեվրոպական միջուկի հետ միասին, շատ են իրանական ծագման բառերը, որոնք վաղնջահայերենում բացակայել են՝ աւրէն-ք, հրահանգ, պատուէր (պատուիրան), դատ, դատաւոր, վճիռ, դատախազ, ամբաստանեմ, պատիժ, պատուհաս, վկայ, խոստովանեմ, տոյժ, տուգանք, բանտ, զնդան, ուխտ, դրուժ և այլն: Կան նաև այլ ծագման տերմիններ և նորակազմություններ:

22. Կրոն և նախապաշարմունք: Հին հայերենում սակավաթիվ են նաև կրոնի և նախապաշարմունքի հետ կապված բնիկ հնդեվրոպական այն բառերը, որոնց առկայությունը վաղնջահայերենում հավանական է, թեև դրանց կրոնական բնույթն էլ ոչ բոլոր դեպքերում է հավաստելի՝ կրաւն (կրեմ բայից՝ «կարգուկանոն, օրենք. հավատ. կրոն» անցումներով. վերջին իմաստի առկայությունը վաղնջահայերենում կասկածելի է), դի-ք, ձուն «զոհ», ընծայ «զոհ», տաւն, մաղթեմ, աղաւթ-ք (?), երէց, «ավագ. քահանա», սուրբ «մաքուր. սուրբ», անէծ-ք, անդունդ-ք «անդունդ. դժոխք. գերեզման», գէտ «գուշակ, կախարդ», թովեմ, (հ)ոգի, ցոյց «նշան»: Կասկածելի է հաւատ, աղանդ, երկին-ք (որպես պաշտելի առարկա), այս «չար ոգի» բառերի հնդեվրոպական ծագումը. հին կազմություններ և դարձվածքներ են՝ թովիչ, հարցուկ, ձաւնիչ, երեւոյթ, տեսիլ, երկիր պագանեմ:

Նախաքրիստոնեական հայ կրոնի հետ կապված շատ բառեր իրանական ծագում ունեն՝ դեն, պաշտեմ (պաշտաւն), տաճար, մեհեան, բագին, զոհ, յաշտ, մոգ, հմայեմ, վհուկ, աւրհնեմ, սանդարամետ, դեւ, (յուշկա)պարիկ, համբարու «պարիկ», հրաշ-ք, հրեշ և այլն: Հայ հեթանոսական դիցարանը ձևավորվել է իրանական ազդեցության տակ և հելլենիստական շրջանում կրել հունական ազդեցությունը: Բնիկ հնդեվրոպական դիցանուններ գրեթե չկան. Ամանոր-ի հնության ստուգումը պարզ չէ, Վանատուր-ի առաջին բաղադրիչը բնիկ հնդեվրոպական չէ: Աստուած բառի ծագումը պարզ չէ. կան հնդեվրոպական (*i̯ag'i-diu̯-ag'- — Պիզանի), փռյուգիական (հմմտ. Σαβάζι Մառ), իրանական (Լագարդ), փոքրասիական (Ջահուկյան), ուրարտական (հմմտ. ուրարտ. Aštiuzi- — Մելիքիշվիլի) ծագման վարկածներ: Հայկական դիցարանի և դիցաբանության վրա զգալի է նաև փոքրասիական և սեմական ազդեցությունը:

23. Դերանվանական և սպասարկու բառեր ու մասնիկներ: Հայերենի այդ թվում և վաղնջահայերենի բնիկ հնդեվրոպական բառապաշարի անկապտելի մասն են կազմել ես, մեք, դու, դուք, ինքն, իմ, քո, մեր, ձեր, իւր, -ս-, -դ-, -ն-, ո-ք (-չ,-մն,-ր), ի-ք (-մն,-նչ) դերանուններն ու դերանվանական մասնիկները, առ, ընդ, ըստ, վեր, գեր, մի-նչ, ներ, ան «կամ», այլ, բա, եթէ, քան սպասարկու բառերը, այլև ձևաբանական և բառակազմական զանազան նախամասնիկներն ու վերջամասնիկները:

2. ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Հնդեվրոպական ընդհանրությունից անջատվելուց հետո հայերենի ժառանգած խոսվածքային մասնակի տարբերությունները պիտի զգալի չափով խորանային և բազմանային: Կառուցվածքային տարբերությունների հետ միասին վաղնջահայերենը պիտի ունենար նաև բառային տարբերություններ՝ վաղնջահայերի տարբեր հատվածներում միևնույն բառերի իմաստային տարբեր առումներ և գործառության հաճախականության տարբերություններ, միևնույն իմաստների համար տարբեր բառերի (համանիշների) գործածություն: Այլ լեզուների հետ ունեցած շփումները պիտի ուժեղացնեին այդ տարբերությունները և առաջ բերեին նոր տարբերություններ, փոխառությունների գործածության տարածքային անհամաչափություն:

Համեմատաբար սակավ են բարբառների պահպանած հնդեվրոպական այն արմատական ձևերը, որոնք բացակայում են հայերենի գրավոր հուշարձաններում, ընդ որում դրանց մեջ առանձնահատուկ տեղ են գրավում մանավանդ բնաձայնական-նկարագրական, պատկերավոր գործածություն ունեցող բառերը՝ ան «կամ» (հ.-ե. *an. հմմտ. լիտվ. an-gu «կամ»), ապի (և ափու) «հայր» (հ.-ե. *appa. հմմտ. հուն. ἄππα, ἄπφα «հայրիկ,ապի»), ատտա «մայրիկ» (հ.-ե. *atta. հմմտ. հ. հնդկ. attā «մայրիկ»), բունձ «հողակոշտ» (հ.-ե. henb*g'h-. հմմտ. հ. վ. գերմ. bungo «բունձ, հողակոշտ»), գան «զզվանք» (հ.-ե. *ghen-. հմմտ. ռուս. гнус «զզվանք»), գլփել «կորզել, շորթել» (հ.-ե. *u̯el-. հմմտ. գոթ. wilwan «թալանել, հափշտակել»), դադո «հայր. մեծ քույր» (հ.-ե. *dhē-dh(ē)-. հմմտ. շվեդ. däddi «հայրիկ»), դնդել (>դնթել) «հրել», դնդալ «շարժվել», դնգստել (դնգզել), դմբզել «բռնցքահարել», դմբոց «թնդյուն» (հ.-ե. *dhen-, *-dh-, *-gh-, *-bh-. հմմտ. նորվ. բրբռ. denta «հրել», հ. անգլ. dengan «խփել, թրխկացնել», անգլ. բրբռ. dump «թմփացնել, ծանր հարվածել»), թալ «մի ուտելի բանջար» (բայց հմմտ. թաղթ, այլև. թերևս, բրբռ. թելուկ) (հ.-ե. *tāl. հմմտ. լիտվ. at(t)olas «աշնան խոտ»), թնալ, թնթնալ, թնկթնկալ (հ.-ե. *(s)ten-. հմմտ. ռուս. стенать «հառաչել, հեծեծալ», լատ. tono, -āre «որոտալ»), լապռ, լեպռ «թույլ կախ ընկած կաշի» (հ.-ե. *leb-, *lāb-. հմմտ. իսլ. նորվ. lapa «թույլ կախվել», հ. անգլ. ēar-liprica «ականջի բլթակ»), լափ, լուփ «ձեռքի ափ» (հ.-ե. *lēp(h)-. հմմտ. գոթ. lōfa- «ձեռքի ափ»), լաքոշ «լայնաբերան» (հ.-ե. *plā-k- «լայն ու հարթ տարածվել»), լոք «մեծ քայլ» (հ.-ե. *lek-. հմմտ. նորվ. բրբռ. lakka «ցատկել. մանրաքայլ գնալ»), լպուկ, (լո)պկել (հ.-ե. *leub/p. հմմտ. լիտվ. lùpti «կճեպել, պլոկել»), կ(ո)լոր, կ(ո)լոճ (հ.-ե. *gel-. հմմտ. հ. հնդկ. *gula- «գնդակ, գունդ»), ճիսնիլ (<*ճեստնել) «տեսնել» (հ.-ե. *(s)pek'-. հմմտ. հ. հնդկ. páśyati «տեսնում է»), ճլոտել «հրել» (հ.-ե. *pel-. հմմտ. լատ. pellō, -ere «հրել»), ճոտ «կճուճաձև մի աման» (հ.-ե. *ped-. հմմտ. լիտվ. pùodas «կճուճ»), ճուպ (ճուպ տալ «սեղմել») (հ.-ե. *ub-. հմմտ. հ. հնդկ. ubjáti «ցած պահել, սեղմել»), մա, մամ (հ.-ե. *mā, *mam(m)ā. հմմտ. հ. հնդկ mā, ռուս. мама «մայրիկ»), մալամշել, մոլոզվիլ «տխուր՝ մտահոգ նստել» (հ.-ե. *mel-. հմմտ. հուն. μέλομαι «հոգ տանել»), մալանչ (հ.-ե. *mel-. հմմտ. հուն. μαλλός «բրդի փաթիլ»), մուլ «ծուխ», մլալ, մլմլալ (հ.-ե. *mel-. հմմտ. մ. իսլ. smōl, smal «կրակ. աճյուն»), նան (հ.-ե. *nana. հմմտ. հ. հնդկ. nanā «մայր(իկ)»), նիզ «ջղաձգություն» (հ.-ե. *neu-. հմմտ. հուն. νεύω «խթել, հրել, խփել»), սլուլ «սառնամանիք», սղին «սառցաշերտ», բ. սղոն «սառցակտոր», (հ.-ե. *k'el-. հմմտ. լիտվ. šálti «սառչել», pašalis «սառած գետին»), ցեռ (*ցեռն), ցրդել (ցռթել) «ծրատել» (հ.-ե. *sk'er-(d-). հմմտ. հ. ֆրիզ. skern «գոմաղբ»), փափա «կերակուր. հաց» (մնկ.) (հ.-ե. *pap(p)a. հմմտ. լատ. pāpa, pappa «կերակուր»), քեռքափոքիկ «խորդուբորդ» (հ.-ե. *(s)ker- «կնճռոտվել»), քոռ «ցեխ» (հ.-ե. *ker-. հմմտ. ն. պրսկ. kari, karah «կեղտ») և այլն:

Մնացած դեպքերում բարբառներում պահպանված հնդեվրոպական ծագման բառերը, ինչպես մասամբ ցույց է տրվել վաղնջահայերենի կառուցվածքի քննության կապակցությամբ, գրավոր աղբյուրներում և հատկապես գրաբարի հուշարձաններում ավանդված բառերի համարմատ տարբերակներն են, որոնք տարբերվում են գրաբարյան ձևերից ձայնդարձի, աճականի, ածանցի, իմաստի դրսևորման առանձնահատկություններով: Մեզ տվյալ դեպքում մասնավորապես հետաքրքրում են բարբառային այն գծերը, որոնք ակնհայտորեն արխաիկ բնույթ ունեն և հանդես են եկել նաև վաղնջահայերենում։ Թեմատիկ ցանկում և տարածքային բաշխման աղյուսակում բերված բարբառային ձևերը երբեմն դրսևորում են այնպիսի իմաստներ, որոնցով դառնում են իմաստային (թեմատիկ) տվյալ եզրի միակ արտահայտիչները, սակայն մեծ մասամբ դրանք գրավոր աղբյուրներում գործածվող բառերի համանիշներն են, որոնք առանձին դեպքերում հանդես են բերում նրբերանգներ և արխաիկ գծեր։ Խոսենք այդպիսի մի շարք դեպքերի մասին՝ ըստ վաղնջահայերենում դրսևորված թեմատիկ խմբերի։ Սրանց մեջ շատ են հատկապես մասնագիտացված իմաստները։

1) Ֆիզիկական աշխարհի նշանակումների մեջ բուն «ժայռ» իմաստն արտահայտված է միայն հնդեվրոպական ծագման բարբառային քերծ և քուրչ բառերով (ժայռ բառի ծագումն անհայտ է)։ Բարբառներում պահպանվել են ցեխի և տիղմի համար տիլ, քոռ, սառնամանիքի համար՝ սլոլ, հեղեղի համար՝ լավ, սառցահալքի համար՝ նալնալ, կայծի համար՝ անբայր, ծխի համար՝ մուլ համանիշները։ Առկա են մառ «ցլեպ», ցլեպ, սղին «սառցաշերտ», սղոն «սառցակտոր» մասնագիտացված իմաստով բառերը։

2) Մարդկություն, սեռ, տարիք, ազգակցություն արտահայտող բառերի մեջ բարբառայինները գերազանցապես մանկական կամ փաղաքշական բնույթի են՝ ապի, դադո, ատա, մա, մամ, նան և այլն։

3) Կենդանիների՝ գրական հուշարձաններում չպահպանված բարբառային անունները սակավաթիվ են. կարելի է նշել անհայտ (սեմակա՞ն) ծագման ցեց բառի հնդեվրոպական ծագման մղմող համանիշը, թուխ կովի մասնագիտացված բորեկ անվանումը։ Բավական շատ են գրական բառերի բարբառային այն տարբերակները, որոնք հանդես են բերում ինքնուրույն կազմություն կամ բնորոշ գիծ՝ աքլոր՝ աքաղաղ-ի կողքին, մորմոնջ՝ մրջյուն-ի կողքին, կոզնի, կոնձնի՝ ոզնի-ի կողքին և այլն։ Բարբառային կուկու, կուկուկ ձևերը՝ կկու-ի լիաձայն և ածանցավոր ձևերն են՝ թերևս բնաձայնական նորակազմություններ։

4) Մարմնի մասերի, մարմնական գործառությունների և պայմանների հնդեվրոպական ծագման բարբառային անվանումների մեջ հատկապես շատ են գռեհկաբանություններն ու անպատշաճ բառերը, որոնք հազվադեպ են թափանցում գրավոր լեզվի մեջ (մամուխ, պուպուլ, ցէր<ցայր, ցեռ, ցրդել), մանկական և պատկերավոր բառերը (կունի, լաքոշ, լկտել, լպստել, լպուլոլ «խիստ հարբած», լավլագ «նիհար, վտիտ», շիպո «շիլ»), մասնագիտացված բառերը և բառաձևերը (լապռ, լեպռ, լեպ «լեզվի վրայի սպիտակ փառ», նիգ «ջղաձգություն»)։ Կան նաև գրական լեզվի բառերի սովորական համանիշներ՝ կոլ «կոկորդ», կոտուկ «շնչափող», լափ (և լովագ) «ձեռքի ափ

5) Ուտելիքի և խմելիքի, կերակրի պատրաստման և ամանեղենի նշանակումների մեջ, բնականաբար, շատ են մասնագիտացված և կոնկրետ բնույթի անվանումները՝ կապված գյուղական առօրյա կյանքի ու կենցաղի հետ՝ ճուճցել (?), խարկել (հմմտ. խորովեմ), պուտուկ (հմմտ. պոյտն), բրլիկ, բլուղ, պուլիկ, բմբուշ «փափուկ՝ լավ թխած հաց», բուլ «խմորի գունդ»։ Կան նաև դեպքեր, երբ գրական լեզուն պահպանել է միայն ածանցյալ ձևը, բարբառը՝ արմատականը և՝ լակ (գրաբար հուշարձաններում միայն լակեմ)։ Բարբառների համար բնորոշ են նաև մանկական ձևերը, ինչպես փափա «ուտելիք, կերակուր»։ Գրական կրծել ձևի կողքին կա բարբառային **մոռտել** համանիշը։

6) Հագուստի, անձնական զարդարանքի և խնամքի անվանումների մեջ բնիկ հնդեվրոպական բարբառային այն բառերը, որոնք գրական լեզվում զուգահեռներ չունեն, սակավաթիվ են՝ ցկտել «մաշել, պատառոտել (հագուստը)», սերեկ «սեկ», կլոք «թելի կծիկ»։ Գրաբարյան զ-գեստ և զգենում բայերի առանց զ-ի ձևերը պահպանվել են գեստ և գենալ ձևերի մեջ, սարիք և սարդ բառերի նախնական բայական իմաստը՝ թերևս սարել «մանել. լարել» բայի մեջ։

7) Բնակարանի, տան և կահույքի բնիկ հնդեվրոպական՝ միայն բարբառներին հատուկ անվանումներ ու տերմիններ առայժմ գրեթե չեն արձանագրված։ Ջրացրած քակորի՝ որպես վառելիքի բիրէն և տարբ անվանումների բնիկ հնդեվրոպական լինելը կասկածելի է։

8) Երկրագործության և բուսականության հետ կապված հնդեվրոպական ծագման բարբառային բառերը պատկանում են գերազանցապես բուսանուններին և բույսի մասերին՝ բալ (հմմտ. գրական հուշարձաններում հանդիպող բաղբ(իկ) և բայլ), բելուկ (?), մողկ, ոսի, դեղդ, դլբիկ, մոլ, ցաք (ցաք-ատ «էտիչ»), ցռուկ։ Պողել և քեղել ձևերը համապատասխանաբար գրական պեղել և քաղել բայերի ձայնդարձային տարբերակներն են։

9) Ֆիզիկական գործողությունների, արվեստների և արհեստների բնիկ հնդեվրոպական բարբառային նշանակումների գերակշռող մասը կազմում են գործողություն նշանակող բառերը՝ գերազանցապես բնաձայնական և պատկերավոր-նկարագրական բնույթի՝ գմբել, դնգստել, տրաքել, լոպկել, տարտղնել, գրքռել, գրքռցնել, ընդ որում մի շարք բառեր գրական համապատասխան բառերի խոսքիմաստային, ձայնդարձային և աճականական տարբերակներն են՝ կեռել (հմմտ. կեռ), ձաղտել (հմմտ. ձաղկել), փորփիկ (հմմտ. փիրր), քեղրդել (հմմտ. քաղել), ճմռել (հմմտ. ճմլել և ճմիլ)։ Կլմպուր-ը «երդիկից կախված շղթա» և քաղալակ-ը «կողով» գյուղական կյանքի հետ կապված մասնագիտացված բառեր են։

10) Շարժման, տեղափոխության, փոխադրման և նավագնացության հետ կապված նշանակումներից բնիկ հնդեվրոպական բարբառային բառերի մեջ մեծ թիվ են կազմում շարժման և տեղափոխության տարբեր տեսակների բայական նշանակումները՝ դնդել (>դնրել), դնդալ, խլլել, կլապտիլ, կտուտել, ըլկել, լելալ, լպստալ (լպստիլ), լժալ, տորորալ, տորտորալ, ճլոտել և այլն։ Հատուկ հիշատակության արժանի է ճոլոլ «անիվ» բառը, որ ներկայացնում է հ.-ե. *kᵘ̯ekᵘ̯lo-, *kᵘ̯okᵘ̯lo- «անիվ» բառի ձայնդարձային տարբերակը (*kᵘ̯okᵘ̯ol- >ճոլոլ), եթե, իհարկե, ճիշտ է ճոլովեմ բայի բխեցումը *kᵘ̯el- «պտտ(վ)ել» արմատից. այդ իմաստի համար առկա են գրական լեզվում անիւ, որոշ բարբառներում՝ ակ (<ակն) բառերը։

11) Ունեցվածքի, սեփականության և առևտրի հետ կապված բնիկ հնդեվրոպական զուտ բարբառային նշանակումները սակավաթիվ են՝ գըլփիլ «խլել» և կլմբոս «հարուստ», ընդ որում սրանք էլ հատուկ են արտահայտչական-պատկերավոր խոսքին։

12) Տարածական հարաբերությունների՝ տեղի, ձևի, չափի բնիկ հնդեվրոպական բարբառային նշանակումները, մասամբ պատկերավոր-արտահայտչական բնույթ ունեն՝ բրոկիլ, բղբեջել, կճճիլ, կոտիլ, կոնձիլ, մասամբ

սովորական բառեր են՝ գրական համապատասխան բառերի համանիշներ և տարբերակներ՝ կղոն, կոռթիկ, կոռ (համտ. կեռ), կ(ո)լոր (կոլոլ). թեղել բայը հին գրական լեզվում չի ավանդված, բայց կա արմատական թեղ գոյականը:

13) Քանակի և թվի բնիկ հնդեվրոպական՝ միայն բարբառներին հատուկ նշանակումները սակավաթիվ են. կարելի է նշել, այն էլ որոշ կասկածով, միայն առի «շատ, հույժ» և բղող «մեծ կտոր» բառերը:

14) Ժամանակի հետ կապված բնիկ հնդեվրոպական բարբառային անվանումները նույնպես սակավաթիվ են: Ինչպես հայտնի է, ժամանակի ընդհանուր հնդեվրոպական անվանում հայերենը չի պահպանել (ժամանակ բառն իրանական ծագում ունի). որոշ բարբառներում առեան բառի հիման վրա զարգացել է «ժամանակ» իմաստը (առեն «ժամանակ»), բայց այս բառի բնիկ հնդեվրոպական ծագումն էլ կասկած է հարուցում. հնարավոր է իրանական ծագում, թեև նշվող իրանական աղբյուրը հեռու է կանգնած: Բարբառային թոր բառը թարմ-ի արմատական մաքուր ձևն է՝ միջին աստիճանի ձայնդարձով:

15) Զգայական ընկալումների բնիկ հնդեվրոպական բարբառային նշանակումների մեջ համեմատաբար նկատելի են շոշափելիքի հետ կապված նշանակումները՝ քեռափոռիկ, քոփշուռն, լիժ, կլճրիկ, թէն «խոնավ»: Այլ կարգի բառերից նշենք բարբառային ճիսնել (ծագում է հ.-ե. *spek'- տարածված արմատից) և լակ բառերը: Կոկրոտ «կեղտոտ» բառը գրականության մեջ ավանդված կորկ «կեղտ» բառի տարբերակն է, որտեղ հ.-ե. *r-ն չի դրափոխվել (*g^{u}og^{u}ro->կորկ և կոկր–ոտ):

16) Զգացմունքի և նրա դրսևորումների, խառնվածքի, բարոյականության հետ կապված և գեղագիտական ըմբռնումների բնիկ հնդեվրոպական անվանումների մեջ համեմատաբար մեծ թիվ են կազմում զգացմունքների և նրանց դրսևորումների բնաձայնական և արտահայտչական-նկարագրական նշանակումները՝ փռքկալ, մռմուռ, թնալ (թնթնալ, թնկթնկալ), սպռիլ, (սպրդնիլ, սփրթնիլ, գրական սպառդիմ, սպորդիմ), լմկել, մալամշել, մոլոզվել: Այլ կարգի բառերից նշենք շիլ «սխալ» բառը, որ ցույց է տալիս հ.-ե. *skel- «ծռել» և *skhel- «սայթաքել» արմատների կապը. վերջին արմատից են բխեցնում հայ. սխալ բառը:

17) Մտածողության և մտքի բնիկ հնդեվրոպական՝ միայն բարբառներում պահպանված նշանակումները սակավաթիվ են. սալար և գող–ուկ համանիշներից առաջինը գրականության մեջ ավանդված սալարիմ բայի արմատն է, գող–ուկ-ը՝ գաղտնի բառի ձայնդարձային և ածանցական տարբերակը: Կարող էր նշանակալից լինել մանել «հասկանալ» բայը, եթե այն մանել բայի փոխաբերական գործածությունը չէ, այլ ծագում է հ.-ե. *men «մտածել» արմատից:

18) Ձայնական արտահայտության և խոսքի, ընթերցանության և գրի հետ կապված հավանական բնիկ հնդեվրոպական նշանակումների մեջ հատկապես մեծ թիվ են կազմում ձայնական արտահայտությունների և խոսքի տարբեր եղանակների վերաբերյալ բառերը, գերազանցապես բնաձայնական և նկարագրական-արտահայտչական բնույթի՝ ճվալ, շվացնել, մկմկալ (հմմտ. մաքի), գագաշել, կռավել, կ(ա)լանչել, բլբլալ, լփլփացնել (լփռտալ): Աղաղեմ բառը աղաղակեմ-ի ավելի հին՝ առանց -ակ ածանցի ձևն է, անում-ը անուն-ի հնագույն տարբերակը, եթե այն ուշ տարրնմանության արդյունք չէ

19) Տարածքային, հասարակական ու քաղաքական բաժանումների և հասարակական հարաբերությունների նշանակումները, բնականաբար, ընդհանուր հայկական բնույթ են կրում և տեղական բարբառային բնիկ հնդեվրոպական դրսևորումներ գրեթե չունեն: Գրական արգել բառի «բանտ» իմաստը չկա բք–արգ բարբառային բառի մեջ, որտեղ պահպանված է «մաքուր» արմատը: Ինչ վերաբերում է լիպոզ «լպիրշ, լիրբ», լկռվիլ, լկտվիլ բառերին, ապա դրանք գրական լիրբ, լպիրշ, լկնիմ բառերի համանիշներն են և չունեն անառակության, որպես հասարակական որոշակի երևույթի, նշանակման արժեք, այլ հանդես են գալիս որպես գնահատումներ:

20—22) Ռազմական գործի, օրենքի և կրոնի ու նախապաշարմունքի բնիկ հնդեվրոպական տեղայնացված բարբառային անվանումներ գրեթե չկան ակլակ «դարան» բառը ակլակ մտնել, ակլակ դնել արտահայտությունների մեջ չունի մասնագիտացված՝ ռազմական գործի հետ կապված արժեք:

23) Բնիկ հնդեվրոպական դերանվանական և սպասարկու բառերն ու մասնիկները գերազանցապես ընդհանուր հայկական բնույթի են՝ ներկայացված գրեթե բոլոր բարբառներում համապատասխան հնչյունական փոփոխություններով ու առանձնահատկություններով: Միակ բացառությունը, որքանով թույլ են տալիս դատելու մեր ունեցած տվյալները, կազմում է ան «կամ» բառը, եթե այն իրոք հնդեվրոպական ծագում ունի:

3. ՀԱՅԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՀԱՐՑԸ

Գոյություն ունի հայերի չորս անվանում՝ հայ, արմեն, սոմեխի և ֆլա: Առաջինը հայերի ինքնանվանումն է, երկրորդը տրվում է հայերին օտար ժողովուրդների գերակշռող մեծամասնության, երրորդը՝ վրացիների և չորրորդը՝ քրդերի կողմից: Եթե մի կողմ թողնենք վերջին անվանումը, որ ակնհայտորեն պատկանում է նոր ժամանակներին և պատմական էական կռվաններ չի տալիս, այլև «Ասքանազեան ազգն» (Կորյուն), «տունն Թորգոմայ» (Փավստոս, Ագաթանգեղոս) արտահայտությունները, որոնք հենվում են աստվածաշնչի վրա, ապա մեզ հարկ կլինի քննել առաջին երեք անվանումները: Դա հնարավորություն կտա պարզելու հայերի նախապատմության, նրանց բնակության սկզբնական վայրերի ու տեղաշարժերի, էթնիկական կազմի ու էթնիկական փոխհարաբերությունների որոշ հարցեր:

Հայ մատենագրության և հայագիտության մեջ քիչ չեն եղել հայ անվանման մեկնաբանության և ստուգաբանության փորձեր: Ինչպես ամեն մի ժողովուրդ, այնպես էլ հայերը, պահպանել են հայ անվանման ծագման վերաբերյալ ավանդույթներ: Դրանցից հնագույնը, որ տեղ է գտել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ և այլ աղբյուրներում, հայ անունը կապում է Հայկի անվան հետ, այսինքն՝ վերջինս հանդես է գալիս որպես հայերի էպոնիմ. «Իսկ աշխարհս մեր,—գրում է Խորենացին (գիրք 1-ին, ԺԱ),—կոչի յանուն նախնւոյ մերոյ Հայկայ՝ Հայք»:

Հայագիտության ձևավորման ողջ ընթացքում հայերի ինքնանվանման հարցը չի դադարել հետաքրքրության առարկա լինելուց: Առաջ են քաշվել այլևայլ ենթադրություններ ու վարկածներ, առաջարկվել հայ անվանման մեկնաբանության պատմական և լեզվաբանական տարբեր ապացույցներ: Սակայն այսուհանդերձ չի կարելի ասել, որ գիտության զարգացման արդի փուլում մենք ունենք հարցի՝ բոլորի կողմից ընդունված լուծում:

Էթնիկական անունները իրենց բնույթով նման են հատուկ անուններին՝ փաստորեն հանդես գալով որպես այս կամ այն ժողովրդի, ցեղի, տոհմի հատուկ անուն։ Այս առումով նրանց ստուգաբանության ճշգրտությունը հեշտ չէ ապահովել։ Սովորական հասարակ անվան դեպքում մենք գործ ունենք որոշակի իմաստի հետ, և ստուգաբանության դեպքում հնչյունական համապատասխանությունն ստուգվում է իմաստային համապատասխանությամբ. եթե բացահայտվում են տվյալ լեզվին հատուկ հնչյունական օրենքներ, և ստուգացուցիչ կերպով մեկնաբանվում են իմաստային անցումները, ապա ստուգաբանությունն ընդհանուր առմամբ ընդունելի է։ Հատուկ անունների դեպքում մենք հաճախ գործ ունենք մթագնած իմաստների հետ, և ճիշտ ստուգաբանության համար հարկավոր է բազմաթիվ իմաստների միջև ընտրություն կատարել։ Այս պատճառով էլ հատուկ անունների ստուգաբանությունը, մանավանդ հետազոտողի անզգուշության դեպքում, հնարավորություն է տալիս ամեն տեսակի կամայական մեկնաբանությունների։ Եվ իրոք. ժողովուրդների անվանումները կարող են կապված լինել ամենատարբեր իմաստների հետ և նշանակել մարդկային ֆիզիկական ու բարոյական հատկություններ, արտադրական գործունեության տարբեր բնագավառներ, աշխարհագրական օբյեկտներ, դիցաբանական և կրոնական հասկացություններ, կենդանիներ (որպես տոտեմներ) և այլն, և այլն։ Հարցը բարդանում է նաև այն պատճառով, որ էթնիկական անունը կարող է կապված լինել որևէ հատուկ՝ անձի կամ վայրի անվան հետ, և այս դեպքում հանդես են գալիս միջնորդված իմաստներ։ Ահա թե ինչո՛ւ հատուկ անունների դեպքում պետք է փնտրել այնպիսի փաստեր, որոնք նեղացնում են հնարավոր իմաստների շրջանակը, գտնել պատմական համապատասխան ապացույցներ, ամենամեծ զգուշություն ցուցաբերել լեզվաբանական ապացույցների, հատկապես հնչյունական անցումների օրինաչափականությունը որոշելիս։ Կոնկրետացնելով մեր խոսքը հայ անվանման ստուգաբանության շուրջը՝ մենք պիտի փորձենք պարզել նախ՝ հայերի ինքնանվանման և Հայկ անձնանվան հնարավոր ստուգաբանական իմաստները, երկրորդ՝ նրանց հետ զուգադրվող հատուկ անունների և էթնիկական անվանումների բնույթն ու փոխհարաբերությունը, երրորդ՝ թե՛ առաջինների, թե՛ երկրորդների հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական մեկնության սահմաններն ու հնարավորությունները։

Հայ և Հայկ բառերի ստուգաբանական սկզբնական իմաստները պարզելու համար մենք ունենք հետևյալ տվյալները. 1) Հայկը համարվել է լավ որսորդ, այսինքն՝ մարմնավորել է հայերի տնտեսական գործունեության էական կողմերից մեկը. անձնապես նա բնութագրվել է որպես «գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ». 2) Աստվածաշնչի թարգմանության մեջ Օրիոնի Ὠρίων համաստեղության անունը փոխարինված է Հայկի անունով. ժողովրդական երգերից մեկում այդ համաստեղությունը նույնպես կոչվում է հէք. 3) Հայկ բառը գործածված է նաև որպես հասարակ անուն «հսկա» իմաստով՝ հայկից «հսկաների», հայկաբար, հայկաչափ, հայկասիրտ. այս առումը առկա է նաև «Բառգիրք հայոց»-ում, որտեղ հայք-ը բացատրված է «հսկայք». այս գործածությունը կարող է լինել ինչպես երկրորդական՝ հատուկ անունից առնված, այնպես էլ նախնական բնույթի. 4) նույն «Բառգիրք հայոց»-ում հայ բառը մեկնաբանված է «փոքր» 5) Ղարաբաղի բարբառում հայ նշանակում է «դժվարություն, նեղություն, ջանք» (հմմտ. նաև հայ անել «շտապել»). 6) վերջապես, ինչպես այլ ժողովուրդների մոտ, հայ բառը գործածվում է նաև «մարդ» և «հարազատ» (ի հակադրություն օտարի) իմաստներով։ Պատահական պետք է համարել հայ անվանման՝ հայ միջարկության, հայհոյել բայի և հայ «ապականություն, աղբ» բառի հետ ունեցած նմանությունը։

Տարբեր ժամանակներում հայերի ինքնանվանումը զուգադրվել է պատմական աղբյուրներում հիշատակված տարբեր անվանումների՝ ժողովրդանունների, երկրանունների, դիցանունների, անձնանունների հետ, փորձ է արվել դրանց մեջ որոնելու հայերի անվանումը և դրանցով պարզելու հայերի սկզբնական պատմության որոշ կողմեր։ Եթե մի կողմ թողնենք հայ և Հայկ անունները հենիոխների և հիքսոսների, այլև ուրարտական Խալդի աստծու անունների հետ կապելու փորձերը, որոնք հենվում են հնչյունական անցումների կամայական մեկնաբանության վրա և զուրկ են գիտական որևէ արժեքից, ապա կարելի է խոսել հայ անվանումը երեք այլ անվանումների հետ զուգադրելու փորձերը՝ Ḫate/i, Ḫajaša և Παίονες, ընդ որում փորձ է արվել նաև կապ տեսնելու վերջին երկուսի միջև։

Դեռևս XIX դ. վերջերին Պ. Ենսենը իր «Խեթերը և հայերը» աշխատության մեջ [Jensen, 1898], հենվելով խեթերի անվանման հին հիշատակումների վրա (ḫt, ḫate, ḫatti, ḫati), հայտնում է այն կարծիքը, որ այդ անվանումը t>յ անցմամբ օրինաչափորեն տվել է հայ, և որ, հետևաբար խեթերը հայերի նախնիներն են։ Հայ անվանման այս մեկնաբանությունից գիտնականները չեն հրաժարվում նաև խեթական արձանագրությունների հայտնագործումից և վերծանումից հետո։ Հայ անվանումը միևնույն աղբյուրից են բխեցնում հետագայում Հ. Տաշյանը [1920] և Ի. Մ. Դյակոնովը [Дьяконов, 1961, 364—365. 1968, 236—237]. վերջինս ուշադրություն է հրավիրում մասնավորապես այն հանգամանքի վրա, որ ḫate-ն հնում արևելյան Փոքր Ասիայի և Սիրիայի ժողովուրդների ընդհանուր անվանում է եղել և ուրարտացիների կողմից կիրառվել է հատկապես Փոքր Հայքի բնակչության նկատմամբ։

Խեթական արձանագրություններում Հայասա (Ḫajaša) երկրի վերաբերյալ տեղեկությունների հայտնաբերումից հետո է. Ֆոռերը [Forrer, 1939] և Պ. Կրեչմերը [Kretschmer, 1932] մատնանշում են հայ, Հայք և Հայասա անվանումների ակնհայտ կապը, ընդ որում Կրեչմերը Ḫajaša-ի մեջ տեսնում է Ḫaja-/Ḫajo- հիմքը և -ša տեղանվանական վերջածանցը։ Այս տեսակետը հետագայում լայն տարածում է ստանում՝ ենթարկվելով մասնակի ճշգրտումների։ Թեև Հայասայի լեզվի բուն հայկական հնդեվրոպական բնույթը չի ապացուցված (Գ. Ղափանցյանն այն համարել է հիմնականում խուռական, մենք՝ հինանատոլիական), բայց հայ և Հայասա անվանումների կապի դրույթը շարունակում է ընդհանուր ճանաչում ունենալ. Գ. Ղափանցյանն այդ կապը սահմանում է հայերենի խառնածին բնույթի վարկածի հիման վրա, իսկ մենք հայերենի մեջ ենթադրում ենք հայասական (իմա՛ հինանատոլիական) ուժեղ ենթաշերտ (սուբստրատ)։ Հետազոտողների կողմից մատնանշվում է նաև, որ Ḫajaša-ի -aša-ն պետք է համարել լուվական և հիերոգլիֆա-լուվական տիպի սեռական վերջավորություն՝ համապատասխան ստացական և տեղանիշ արժեքով[1]։

---

[1] Վ. Վ. Իվանովը [Иванов, 1983, 30–32] փորձում է Փոքր Ասիայի հնաասուրական (մ.թ.ա. III և II հազ. սահմանագծում) և Էբլայի սեպագիր տեքստերի (մ.թ.ա. III հազ. կեսերին) ḫa-a-ն կապել տեղանվան հետ և ընթերցել որպես Ha-ia- (?)։

Գիտության մեջ հայտնվել է կարծիք նաև հայ անվան՝ հյուսիսային Մակեդոնիայում ապրած և այդտեղից հարավային Մակեդոնիա ու Թրակիա շարժված Παίονες ժողովրդի անվան հետ ունեցած կապի մասին [հմմտ. **Խաչատրյան, 1933, 44**]: Կրեչմերը, Կազարովը, Յոկլը, Կրահեն պայոններին (պեոններ) համարում են իլիրական ժողովուրդ, ընդ որում Կրահեն նրանց անունը համեմատում է իլիրական Paio, Paius անձնանունների հետ: Ընդունելով այս կարծիքը՝ Ա. Մայերը [**Mayer**, 1957—1959] նրանց անունը բխեցնում է հ.-ե. *pei̯(ə)-/poi̯(ə)- «պարարտ լինել, առատ բխել» արմատի մի ածանցյալից, որ ունեցել է «մարգագետին» իմաստը (հմմտ. հուն. ποία «խոտ. արոտ, մարգագետին»), այսինքն՝ Παίονες «մարգագետնայիններ»: Մի շարք հետազոտողներ ավելի հավանական են համարում պայոնների թրակյան ծագումը: Դ. Դեչևը [**Detschew**, 1957, 353] բերում է Πα(ι)-ով սկսվող թրակյան համարմատ անձնանուններ (Παις, Παιβης) և գտնում, որ պայոնները եղել են թրակա-իլիրական ժողովուրդ: Վ. Գեորգիևը [**Георгиев**, 1960, 39], նշելով, որ Ստրաբոնը պայոններին համարել է փռյուգական ցեղ, իսկ Հերոդոտոսի տեղեկության համաձայն նրանք իրենց համարել են տրոյական տևկրերի շառավիղներ, փորձում է Παίονες անվանումը բխեցնել հ.-ե. *pōu- «փոքր» արմատից կազմված *pau̯-i̯ŏn բաղդատական ածականից (հմմտ. գոթ. fawai «քչերը», հուն. παῦ-ρος «փոքր»). միաժամանակ նշելով, որ Ḫai̯aša-ի տարածքը մոտավորապես համընկել է հետագա Փոքր Հայքի տարածքի հետ, Գեորգիևը փորձում է վերջինիս **փոքր** բաղադրիչի հիման վրա **հայ** և Ḫai̯aša անվանումները բխեցնել համապատասխան *pəu̯-i̯os «ավելի փոքր» ձևից, այսինքն՝ վերջին հաշվով ներքին կապ տեսնել **հայ**, Ḫai̯aša և Παίονες անվանումների միջև:

Ի՞նչ կարելի է ասել **հայ** անվանման ḫate/i, Ḫai̯aša և Παίονες անվանումների հետ ունեցած կապի մասին:

1) Ինչպես հայտնի է, Ḫate/i անվանումը բուն խեթական չէ, այլ խեթերին է անցել նրանց պետության հին բնակիչներից, որոնք ակնհայտորեն ոչ-հնդեվրոպական բնույթ են ունեցել և, ինչպես ցույց են տալիս լեզվական տվյալները, հայերի հետ որևէ էական առնչություն չեն ունեցել: Այն հանգամանքը, որ ուրարտացիները Ḫate/i անվանման տակ հասկացել են հատկապես Փոքր Հայքի շրջանը [**Дьяконов**, 1961, 365], չի կարող ապացույց լինել Ḫate/i-ի՝ հայերի ինքնանվանում լինելու վարկածի համար:

2) Ḫai̯aša երկրի անվան ծագումը, ինչպես կտեսնենք, հայտնի չէ: Ճիշտ է, այդ անվանումը արտաքնապես նման է ḫate/i անվանմանը, բայց խիստ փոքր հավանականություն կարող է ունենալ այն ենթադրությունը, թե հայասացիները կարող էին խեթերի նման ժառանգել խաթերի անվանումը և այն դարձնել ինքնանվանում. այս դեպքում հայասացիների համար լռելյայն ենթադրվում է բուն հայկական ծագում (հայերենի համար բնորոշ t>y անցումով), որ առայժմ չի հաստատված հայասական լեզվի մնացորդներով. սրանք միայն հատուկ անուններ են և զուգահեռներ ունեն գերազանցապես փոքրասիական-հինանատոլիական, մասամբ էլ նաև խուռական և թրակյան հատուկ անուններում [**Ջահուկյան, 1976**]: Իհարկե, կարելի է առաջ քաշել այն վարկածը, որ հայասայի բնակիչների մեջ բուն հայեր են եղել, բայց գործածել են այլալեզու անձնանուններ, դիցանուններ և տեղանուններ, բայց Ḫai̯aša-ի Ḫai̯-ի՝ Ḫate/i-ից ծագելու հարցը դրանով չի լուծվի. ընդհակառակն, Ḫai-ի մեջ այս դեպքում շատ ավելի հավանական կլինի փնտրել բնիկ հնդեվրոպական արմատ:

3) Հայ և Παίονες անվանումների կապը կարծես թե աջակցություն է գտնում «Բառգիրք հայոց»-ում բերված **հայ** «փոքր» բառի մեջ, որ Վ. Գեորգիևին անծանոթ է: Սակայն այս վարկածի մեջ կան մի շարք թույլ կետեր. ա) «փոքր» իմաստի դեպքում Գեորգիևը ելնում է **Փոքր Հայք** անվանումից, որ, սակայն, հանդես է եկել Ḫai̯aša-ի ժամանակներից շատ ուշ և չի կարող հիմք ծառայել մեկնաբանության համար. բ) **հայ** բառի համար վերականգնված *pəu̯-i̯os նախաձևը կասկածելի է հնչյունական (*ūi̯ > հայ. յ?) և քերականական առումով. հայերենը չի պահպանել *-i̯es/-i̯os-ով բաղդատականի ձև, և հայտնի չէ, թե ընդհանրապես ունեցե՞լ է արդյոք այն. բաղդատականի համադրական ձևեր չունեն նաև այնպիսի հին լեզուներ, ինչպիսիք հին անատոլիական և թոխարական լեզուներն են [**Rosenkranz**, 1978, 138]. գ) հ.-ե. *pōu-/pəu- «փոքր» արմատից հայերենում պահպանվել են **ուլ** (*pō(u)-lo-) և, թերևս, **փոքր** (*phokur?) բառերը, որոնք հեռու են **հայ** բառից իմաստով և ձևով. դ) պայոնների ցեղակցական պատկանելությունը քիչ հավանական է դարձնում **հայ** և Παίονες անվանումների միևնույն ծագումը. պայոնների մոտ պահպանված անունները [հմմտ. **Detschew**, 1957, 359] կամ իլիրական են (Ἀγριᾶνες, Σκίρτιοι, Ἀστραῖον, Stobi և այլն), կամ թրակյան (Βύμαζος, Γαλεψός, Tranupara և այլն)՝ հեռու լինելով հայկական բնույթ ունենալուց. ճիշտ է, հայ ժողովրդի կազմավորման մեջ կարող էր դեր խաղալ թրակյան տարրը, բայց այդ դերի վերագրումը հենց պայոններին զուրկ է պատմական որոշակի հիմքից. ե) վերջապես, կարևոր է նշել **հայ,-ոց** և Παίονες ժողովրդանունների հիմքերի տարբերությունը. առաջինը ենթադրում է բնավոր թեմատիկ հիմք՝ *-o- ձայնավորով, երկրորդը՝ բաղաձայնական հիմք *-n-ով:

Հաշվի առնելով վերևում կատարված քննության արդյունքները և հայերի անվան ստուգաբանության այլևայլ փորձերը՝ կարելի է հանգել հետևյալ ընդհանուր եզրակացություններին:

1) Խիստ փոքր հավանականություն ունի հայերի ինքնանվան բխեցումը խեթական պետության բնիկների անունից եկող Ḫate/i և իլիրական կամ թրակյան ծագում ունեցող Παίονες անվանումներից: Պատմականորեն և լեզվաբանորեն քիչ հավանական են նաև **հայ** ինքնանվանումը Ḫai̯aša անվանման միջնորդությամբ դրանցից մեկնումեկի հետ կապելու փորձերը:

2) Եթե հայերի ինքնանվանումը իրոք կապված է Ḫai̯aša-ի անվան հետ, ապա հնարավոր է երկու վարկած. ա) եթե այդ երկրի բնակիչները հայեր չեն եղել, այլ հինանատոլիական և, թերևս, մասամբ թրակյան ցեղեր, որոնք ձուլվել են բուն հայերի (արմենների) մեջ որպես ենթաշերտ ու տվել նրանց իրենց անվանումը, ապա Ḫai̯aša-ի անվան մեջ պիտի փնտրել այդ ենթաշերտին և ոչ թե հայերենին հատուկ հնդեվրոպական ծագման անուն. խեթա-լուվական լեզուներում և թրակերենում բուն Ḫai̯-ին համապատասխան հասարակ և հատուկ անուններ չեն հայտնաբերվել. կան միայն առանց սկզբնային h-ի բառեր. մեր «Հայասայի լեզուն և նրա առնչությունը հնդեվրոպական լեզուների հետ» աշխատության մեջ [**Джаукян**, 1964, 67—68] նշվել են հիեր. լուվ. ai̯ās «պատիվ (?)» բառը, այլև հ.-ե. *aios- (Hai̯os-?)

«մետաղ, հատկապես պղինձ. ուժեղ, ամուր» կամ *ai- (*Hai-) «հարձակվել, որոնել, գրավել» (>հայաս. ḫai >ուրարտ. ḫal- «գրավել, տանել») արմատները. Թրակյան տեղանուններում առկա է Αία-δάβα ամրոցի անունը (-δαβα/-δαυα բնորոշ բաղադրիչով<հ.-ե. *dhē-u̯-/dhə-u̯- «նստել. հիմնել»), որի Αία բաղադրիչի ծագումն անհայտ է. այս բոլոր համեմատությունները մնում են միայն քիչ հավանական ենթադրությունների սահմաններում. անհավանական է Ḫai̯-ը հիեր. լուվ. ai̯a-, լուվ. a(i)a-, խեթ. ii̯a- «անել» արմատի հետ կապելու փորձը. բ) եթե Ḫai̯aša-ի բնակիչները հիմնականում հայեր են եղել, բայց կամ ապրել են փռյուգիական և թրակյան ցեղերի հետ միասին, կամ բնիկ հատուկ անունների հետ միասին գործածել են փռյուգիական և թրակյան հատուկ անուններ, ապա Ḫai̯-aša անունը բնականոն կերպով շարունակվում է հայ անվանման մեջ և ամենայն հավանականությամբ բնիկ հնդեվրոպական ծագում ունի։

3) Թե այն դեպքում, երբ Հայասայի հիմնական բնակիչները եղել են հայերը, և հայերի ինքնանվանումը գալիս է Ḫai̯aša անվան արմատից (միայն թե այս դեպքում հարկավոր է բացատրել հայ, -ոց բառի ո-ով հիմքի բացակայությունը Ḫai̯aša անվան մեջ), թե այն դեպքում, երբ հայերի անունն ընդհանրապես կապ չունի Հայասայի անվան հետ, հնարավոր է հայ անվանման բնիկ հնդեվրոպական մեկնաբանությունն ըստ հայերենին բնորոշ օրինաչափությունների։ Ինչպես հայտնի է, հայերենի ա) բառասկզբնային հ-ն կարող է գալ հ.-ե. *p-ից (համմտ. *pā-tro- >հայ. հաւրան «հոտ»), *s-ից (համմտ. *sab-mo->համ) և *H կոկորդայինից (համմտ. Hau̯o-s >հաւ «պապ») կամ հավելվածային լինել (այսինքն՝ հնդեվրոպական զուգահեռներ չունենալ և միայն հայերենին հատուկ լինել՝ որպես ուշ զարգացման արդյունք). բ) ա-ն կարող է գալ հ.-ե. *ă-ից (համմտ. *sal->աղ) կամ որոշ պայմաններում, *o-ից (համմտ. *oid->այտնում). գ) հայ. յ-ն ոչ սկզբնային դիրքում կարող է գալ ինչպես հ.-ե. *-te-ից կամ *-ti-ից (համմտ. *pətēr >հայր), այնպես էլ *-i̯-ից (համմտ. *u̯edosi̯o >գետոյ՝ սեռ. հոլովաձև)։ Բնական է, որ հետազոտողները որոնումները կատարել են նկատի ունենալով մի կողմից՝ հնչյունական այս պայմանները, մյուս կողմից՝ հայ բառի -ո-ով հիմքը (հայ, -ոց)։

Հայագիտության մեջ երկար ժամանակ իշխել է Շպիգելի և Կիպերտի հայտնած այն կարծիքը, որ հայ բառը ծագում է հ.-ե. *poti- «տեր, տանտեր» հիմքից (համմտ. հ. հնդկ. páti-, ավեստ. paiti-, իրան.>հայ. պետ, լատ. potis «կարող, զորեղ, հզոր» և այլն. իմաստի համար համմտ. արիական (հնդիրանական) ժողովուրդների անվանումը (հին իրան. հգն. սեռ. aryānām >մ. պրսկ. ērān >Իրան, հ. հնդկ. ariyá- «տեր» և āriya- «արիացի»). հայ բառի համար պիտի վերականգնվեր *potii̯o- նախաձևը (*pəti- ձայնդարձային ձևը եղակի կլիներ). եթե ճիշտ է մեր սահմանած այն կանոնը, որ *o-ն ա-ի է փոխվում այն դեպքում, երբ հաջորդ վանկերում *-o- չկա, և եթե ճիշտ է Հ. Աճառյանը, որ հոյակապ և հոյանուն բառերի հոյ-ը բխեցնում է *poti-ից, ապա այս ստուգաբանությունը հնչյունապես դառնում է կասկածելի։

Ավելի հավանական է թվում մի այլ ստուգաբանություն. նկատի առնելով, որ Հերոդոտոսը (V գիրք, գլ. 49) հայերին բնորոշում է որպես «շատ ոչխարներ ունեցողներ», անհավանական չի լինի նրանց անունը բխեցնել հ.-ե. *pōi-/pəi- «արածացնել, պահել» արմատից ածանցված *pəi̯o- կամ *pəi̯-i̯o- «հովիվ» տիպի նախաձևից (համմտ. այս արմատից հ. հնդկ. pāyú- «պահապան», pālá- «պահակ, պահապան. հովիվ», հուն. πῶυ «հոտ», ποιμήν «հովիվ» և այլն)։

Եթե հայ անվանումն իրոք կապ ունի Հայասայի անվան հետ, ապա պիտի ենթադրել, որ խեթական աղբյուրներում ḫai̯o- ձևը արտահայտելիս տեղի է ունեցել կամ -o-ի անկում -aša-ից առաջ, կամ -o-ի համաքանական փոխարինում -a-ով. իհարկե, հնարավոր է ենթադրել նաև Հայասայի բնակչության մի մասի համար o>a արտասանություն։

Վերջում հարկ ենք համարում մատնանշել Ḫai̯aša և հայ անունների նմանությունը Կողքիսի հին Αἶα անվանը և թեսալական Αἶα քաղաքանվանը, որոնք համահունչ են հուն. αἶα «երկիր» և αἶα «մայր, մեծ մայր, տատ» բառերին (հնարավոր է Αἴας անձնանվան կապը սրանց հետ). Բրուգմանը միացնում է վերջին երկու բառերը «մայր երկիր» ընդհանուր իմաստով և համեմատում (հատկապես վերջինը) լատ. avia «տատ» բառի հետ. լատ. avia-ն avus «պապ» բառի հետ միասին ծագում է հնդեվրոպական այն արմատից, որտեղից բխեցվում են հայ. հաւ, խեթ. ḫuḫḫaš, լիկ. χuga «պապ» բառերը. սրանց համար վերականգնվում է *au̯o-s կամ, կոկորդայինների հաշվառմամբ, *Ḫauḫo-s նախաձևը. քանի որ խեթ. և լիկ. ձևերի հետ կապված է հայաս. Ḫugganāš անձնանունը, ապա կամ վերջինս հայասացիների մոտ եղել է փռյուգիական փոխառյալ անձնանուն, կամ Ḫai̯aša-ն կապ չունի այս արմատի հետ. եթե ընդհանրապես այս կապը հնարավոր է, ապա պետք է ենթադրել Hau̯i̯o->Hai- (հայ) անցում, որի մեջ *-u̯-ի անկումն առայժմ չի հաստատված այլ օրինակներով։

Օտարների կողմից հայերին տրվող արմեն անվանումը այնպիսի ձևով, որ կասկած չի առաջացնում նրա բնույթի մասին, առաջին անգամ հիշատակված է Պարսկաստանի թագավոր Դարեհ I-ի Բեհիստունյան արձանագրության մեջ՝ մ. թ. ա. 522—521 թթ. Arminə—Հայաստան և arminiya—հայ ձևով։ Հունական մատենագրության մեջ սկսած Հերոդոտոսից (մ.թ.ա. V դ.) Ἀρμένιοι—հայեր և Ἀρμενία—Հայաստան անվանումները հանդես են գալիս պարբերաբար, ընդ որում հույն պատմիչները խոսում են երբեմն ավելի վաղ իրադարձությունների մասին։ Այսպես, Հերոդոտոսը հայերին հիշատակում է փռյուգացիների՝ Եվրոպայից Փոքր Ասիա տեղափոխվելու մասին տեղեկություն տալուց հետո և հայերին համարում «փռյուգական վերաբնակներ» (գիրք VII, գլուխ 73)։ Քսենոֆոնը (մ. թ. ա. 430—355) «Կյուրոպեդիայում» հիշատակում է հայերին Կյուրոսի, այսինքն՝ մ. թ. ա. VI դ. կեսերին տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ։ Ստրաբոնը (մ. թ.ա. I դ.) հայերին հիշատակում է արգոնավորդների առասպելի կապակցությամբ, որ արտացոլում է վաղ հունական գաղութացման դեպքերը (մ. թ. ա. VIII—VI դ. դ.)։

Գիտնականների որոնումները հանգեցրել են արմենների անվանման ավելի վաղ հիշատակումների հայտնագործմանը։ Յ. Մարկվարտը [**Markwart,** 1919. 1928] մասնավորապես մատնանշել է արմենների անվանման հնարավոր կապը Հոմերոսի «Իլիականում» հիշատակված Ἄριμοι և ուրարտական թագավոր Մենուայի (մ.թ.ա. 810—778 թթ.) արձանագրություններից մեկում տրված Urme անվանումների հետ։ Հետագայում Urme անվանման հետ զուգադրվում են նաև ուրարտական Սարդուրի թագավորի (մ. թ. ա. 764—

735) արձանագրություններից մեկում հիշատակված Arme երկրանունը, այլև Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար I-ի (մ. թ. ա. 1116—1090) Urume ժողովրդանունը [մուշկերի և աբեշլայցիների անունների հետ միասին. հմմտ. **Երեմյան**, 1958. 1971, 237—242]։ Urme և Arme անվանումների կապը արմենների անվանման հետ ընդունվում է գրեթե բոլոր հետազոտողների կողմից, բայց ''Αριμοι-ի և Urume-ի կապը վիճարկվում է [հմմտ. **Дьяконов**, 1968, 224—227]։

Կան արմենների անվանման հետ այլ կարգի զուգադրումներ ևս, ընդ որում դրանցից մի քանիսը ցույց են տալիս խոր հնություն։ Այսպես, խեթական թագավոր Թուդխալիա IV-ի (մոտ. 1250—1220) տարեգրության մեջ հիշատակված Armana երկրանունը ոմանք հնարավոր են համարում նույնացնել ուրարտական աղբյուրների Arme-ի հետ [Кифшин, 1955, 65. **Хачатрян**, 1971, 103]։ Դեռ ավելին. որոշ հետազոտողներ սրանց միացնում են աքքադական թագավոր Նարամ-Սինի (Նարամ-Սուեն) (2236—2200 մ. թ. ա.) արձանագրություններում հիշատակված Armana և Armanu երկրանունները, ընդ որում Armani-ի թագավոր է համարվում ոմն Madakina (հմմտ. նաև Armi երկրանունը՝ էբլայից)։ Սրանց հարում են թեսալական և փոքրասիական այն տեղանունների մատնանշումները, որոնք հին հեղինակների և նոր հետազոտողների կարծիքով կապ ունեն արմենների անվանման հետ՝ 'Ορμένιον («Իլիական») և 'Αρμένιον (Ստրաբոն) Թեսալիայում, 'Ορμένιον լեռ Բիթյունիայում, 'Αρμήνη նավահանգիստ Սինոպի մոտ, 'Αρμένιον լեռ Հալիս գետի ակունքներում։ Ավելորդ չէ նշել, որ ինչպես նշված հունական, այնպես էլ սեպագիր աղբյուրների Arme և Urme (*Orme) անվանումներում նկատվում է o/a հերթագայությունը, որ, թերևս, կապ ունի հ.-ե. *o-ի՝ հայերենում տեղ գտած երկակի արտացոլման հետ։ Հայտնի չէ, կապ ունի՞ արդյոք **արմեն** անվանումը հնդեվրոպական այնպիսի ջրանունների հետ, ինչպիսիք են Armeno (Տրիենտի շրջանում), Armenta, *Armantia և այլն [**Krahe**, 1963, 32—33], այլև լիտվ. Armenà և այլն [**Трубачев**, 1968, 209]:

Մի կողմ թողնելով այս բոլոր զուգադրումների հավանականության հարցը (arm-/orm- հնչյունազուգորդումների տարածվածության պայմաններում)՝ կանգ առնենք Armen անվան ծագման հարցի վրա։

Արմենների անվան մեկնաբանության փորձեր առկա են դեռևս հայ հին մատենագրության մեջ։ Խորենացին, **հայ** անվանումը կապելով Հայկի անվան հետ, համապատասխանաբար **արմեն** անվանումը բխեցնում է Հայկի հաջորդներից մեկի՝ Արամի անունից և հայերի համար գործածում **արք արամեանք, արամեան ազն** արտահայտությունները։ Արամի անվան մեջ հետազոտողները տեսնում են ուրարտական Aramu թագավորի անվան հիշողությունը։ Սեբեոսը, ի տարբերություն Խորենացու, **արմեն** անվանումը կապում է ոչ թե **Արամ**, այլ **Ար(ա)մանեակ** (**Արմենեակ, Արմենակ**) անվան հետ. այս անվան տարբերակն էլ, թերևս, պահպանվել է ուրարտական մի այլ թագավորի՝ Erimena-ի (մ.թ.ա. 625—605) անվան մեջ, ընդ որում հնարավոր է նրա հասարակ անուն լինելը, այսինքն՝ ուրարտական վերջին թագավոր Ռուսայի հայկական ծագումը [**Ղափանցյան**, 1940, 225]։

Եթե հայկական աղբյուրները **արմեն** անվանումը կապում են Արամի կամ Ար(ա)մեն(յ)ակի (Ար(ա)մանյակի) անվան հետ, ապա հունական ավանդությունն այն բխեցնում է արգոնավորդների արշավանքի մասնակից, Թեսալիայի Արմենիոն քաղաքից ծագող Արմենոսի ("Αρμενος) անունից [հմմտ. **Ստրաբոն**, գիրք XI, գլ. 4, 8 և 14, 12]։

Հայագետների շրջանում սկսած XIX դարից կատարվել են **արմեն** անվանման ստուգաբանության զանազան փորձեր։ Եթե զանց առնենք **արմեն** անվանման կամայական մասնատումների վրա հիմնվող և գիտական արժեքից զուրկ փորձերը, ապա մնացածները կարելի է բաժանել երկու խմբի՝ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական մեկնաբանությունները։

1) Հենվելով այն բանի վրա, որ աստվածաշնչի եբրայական բնագրի Մինի երկրի անունը ասորական տեքստում փոխարինված է **Արմինա**-ով, մի շարք հեղինակներ (Դարմստետեր, Բոխարտ, դը Կարա, Բասմաջյան) փորձում են **արմեն** անվանման երկրորդ մասում տեսնել Մինի երկրի անունը, բայց տարաձայնում են **Ար**- մասի բացատրության մեջ. Դարմստետերը այն բխեցնում է Արարատից՝ նշելով, որ միացումը կատարվել է արհեստականորեն՝ պարսկական պետական պաշտոնական լեզվում. Բոխարտը և Բասմաջյանը բխեցնում են եբրայերեն har «լեռ» բառից, դը Կարան՝ քաղդյան kar «տեղ, բնակատեղի» արմատից։ Եղել է նաև **ար**-ը **Արա** աստծու անվան հետ կապելու փորձ, սակայն այս դեպքում էլ քիչ թե շատ համոզիչ կերպով չի բացատրվում **-մեն** բաղադրիչը։

2) Մի շարք հեղինակներ **արմեն** անվան երկրորդ մասում տեսնում են ուրարտական -ini մասնիկը (Մարկվարտ) կամ -ni վերջավորությունը (Պիոտրովսկի), ընդ որում Մարկվարտը վերականգնում է ar(i)m- կամ ar(u)m- հիմքը, որ տեսնում է նաև **Արամ** ու **Արմավիր** անունների մեջ, Պիոտրովսկին **արմե**-ն նույնացնում է Սարդուրիի արձանագրության մեջ հիշատակված Arme երկրի անվան հետ։ Որոշ հայ հեղինակներ էլ փորձում են **արմե**-ի մեջ վերականգնել **Արամ(է)** անունը։

Արմեն անվանման ոչ հնդեվրոպական ստուգաբանություններից առաջինը զուրկ է գիտական արժեքից, երկրորդն անբացատրելի է թողնում այդ անվանման այն հիշատակումները, որոնք չեն կարող բխել ուրարտերենից։

Արմեն անվանման հնդեվրոպական ստուգաբանության փորձերի մեջ հիշատակության արժանի են երկուսը.

1) **արմեն** անվանումը բարդ բառ է, որ բաղկացած է **ար**- և **մեն** բաղադրիչներից. Ս. Սիմոնյանը [1939, 35—36] առաջինը կապում է **արի** «քաջ» բառի հետ, երկրորդը՝ մեկնում որպես men «մարդ», որ, ըստ նրա, հանդես է գալիս **մանուկ** բառի մեջ։ Իրականում, սակայն, **արի** բառը **այր** բառի ածանցյալն է, որ սովորաբար բխեցնում են հ.-ե. *aner- «կենսաուժ. այր, տղամարդ» արմատից (Մեյե), թեև կա նաև *ar(i)i̯o- «պետ, տիրող, հրամայող» հիմքից բխեցնելու փորձ (Մանն)։ Ինչ վերաբերում է ենթադրվող -man «մարդ» բաղադրիչին, ապա նրա հնդեվրոպական բուն ձևն է *manu-s «այր, տղամարդ», որ կապ չունի **մանուկ** բառի հետ. վերջինս գալիս է *men- «փոքր» արմատից։ Եթե **արմեն**-ի **ե**-ն նախնական է, ապա այդ անվանման **մեն**-ը չի կարելի բխեցնել *manu-s-ից. այս նույն հիմունքով անհավանական է **արմեն**-ի համեմատությունը գալլ. Ariomanus անձնանվան հետ, որի առաջին մասը *ario հիմքից է գալիս։

2) Երկրորդ ստուգաբանությունը պատկանում է մեզ [**Джаукян и др.**, 1983, 64]։ Մեր կողմից առաջ է քաշվել այն կարծիքը, որ **արմեն** անվանումը ստուգաբանորեն կապված է **արմ(ն)** «արմատ», **գ-արմ** «ցեղ, սերունդ»

արմատ «արմատ. ցեղ, զարմ. հիմք» (հմմտ. Armatana տեղանո՞ւնը) բառերի հետ և գալիս է հ.-ե. *er- արմատի *ormenos անծանցյալից. հայ. բառերին կազմությամբ, ձևով և իմաստով հատկապես մոտ են հուն. ὄρμενος «ցողուն. ընձյուղ», գերմ. ermana-, irmino- «մեծ» և հ. սլավ. ramēno «ուժեղ, հզոր» ձևերը: Հայ. արմ-ը թերևս պահպանված է ուրարտ. armuzi «ընտանիք (?)» բառի մեջ: Այն հանգամանքը, որ հունարենում այն պահպանված է 'Αρμεν- և 'Ορμεν- տարբերակներով, խոսում է այն մասին, որ՝ 1) *en>ին փոփոխությունը հայերենում կամ տեղի է ունեցել ավելի ուշ, կամ այս բառում ընդհանրապես տեղի չի ունեցել (բուն հայ. փոփոխված տարբերակը առկա է արմն ձևում). 2) հ.-ե. *o-ի o և a արտացոլումների մեջ նկատվում է տատանում, որ կարելի է բացատրել *ormenos-ի վերջին վանկի o-ի առնմանական թույլ ազդեցությամբ:

Վրացիների կողմից հայերին տրվող somexi անվանման՝ ուշադրության արժանի երկու մեկնաբանություն է եղել.

1) Ն. Մառը [Марр, 1938, 51] և Գ. Ղափանցյանը առաջ են քաշել և պաշտպանել այն կարծիքը, որ հայերի somexi անվանումը կազմված է so-/sa- հավաքական նախամասնիկից և բուն mexi բաղադրիչից, որ ծագում է mesxi-ից՝ մուշկերի անվանման քարթվելական ձևից: Սակայն մ. թ. ա. XII դարից ի վեր հիշատակվող մուշկերի էթնիկական պատկանելության և բնակության վայրերի հարցերը պարզ չեն. ասուր. mušku, ուրարտ. muški(ni), հիեր. լուվ. muš(i)kai, հին հրեական. mšk, հուն. μόσχοι անվանումների հետ կապվող ժողովուրդներն ու ցեղերը նույնացվում են ինչպես հնդեվրոպական հայերի, փռյուգացիների, մոսխացների, այնպես էլ վրացական մեսխի ցեղի և նույնիսկ ողջ վրացական ժողովրդի հետ (հմմտ. ավարների կողմից վրացիներին տրվող mosuk անվանումը): Այս պայմաններում Մառի և Ղափանցյանի ստուգաբանությունը դառնում է քիչ հավանական, մանավանդ, եթե նկատի առնենք նախ՝ somexi-ի so-ի առանձնացման կասկածելիությունը (տեղացույց նախածանց-վերջածանցն ունի sa-+-o տեսքը, ինչպես Sa-kartvel-o «Վրաստան» բառում) և երկրորդ՝ mesx-i-ի մեջ s-ի անկման ենթադրության չհիմնավորվածությունը:

2) Գ. Խալաթյանցը [Халатьянц, 126] ժամանակին առաջ է քաշել այն տեսակետը, որ վրաց. somexi անվանումը ծագում է խեթական և ակկադական արձանագրություններում հիշատակված Zuḫma/Suḫma կամ Suḫmu երկրի անունից: Այս տեսակետը հետագայում լայն ընդունելություն է գտնում և արտացոլվում Բ. Պիոտրովսկու, Գ. Մելիքիշվիլու, Ի. Դյակոնովի աշխատություններում, բայց կասկածի տակ է առնվում Ս. Երեմյանի կողմից [ՀԺՊ, 1, էջ 240]: Չխոսելով այն մասին, որ այս երկրի կապը հայերի հետ պատմական հատուկ հիմնավորում չունի, նշենք խեթ. z/s-ի և ասուր. s-ի դիմաց վրաց. s-ի առկայության անհավանականությունը:

Մեզ ավելի հավանական է թվում somexi-ի համեմատությունը խեթական արձանագրություններում հիշատակված Šamuḫa քաղաքի անվան հետ, այդ քաղաքը հիշատակվել է Բարձր երկրի, Bittijariga-ի ու Azzi-ի հետ առնչված և հարևան է եղել Հայասա երկրին:

Վաղնջական շրջանում հայոց լեզվի ունեցած շփումների և փոխազդեցությունների հարցը սերտորեն կապված է վաղնջահայերի բնակության վայրերի և տեղաշարժերի հարցի հետ: Սակայն հենց այս հարցում է, որ չկա անհրաժեշտ հստակություն և որոշություն: Հասկանալի է, որ այն լուծելու համար մենք պիտի կարողանանք որոշակի պատասխան տալ երկու այլ հարցի. նախ՝ որտե՞ղ է եղել հնդեվրոպացիների՝ միասնության շրջանում զբաղեցրած բնակավայրը («նախահայրենիքը») և երկրորդ՝ ի՞նչ ժողովուրդների հետ են շփվել վաղնջահայերը և լեզվական ի՞նչ ազդեցություններ են կրել:

Ինչպես տեսանք հնդեվրոպական լեզվին և հնդեվրոպացիներին նվիրված բաժնում, հնդեվրոպացիների բնակության սկզբնական վայրի («նախահայրենիքի») վերաբերյալ կարծիքները տարամիտվում են: Այն տարածված կարծիքի կողքին, որ հնդեվրոպացիները միասնության շրջանի վերջին բնակվել են Եվրոպայում՝ Բալթիկ ու Սև ծովերի միջև ընկած վայրերում և հարակից շրջաններում, վերստին առաջ է քաշվել և պաշտպանվում է մի կողմ թողնված այն կարծիքը, թե հնդեվրոպացիների «նախահայրենիքը» պիտի փնտրել Առաջավոր Ասիայում՝ մասնավորապես Հայկական բարձրավանդակում և հարակից շրջաններում: Երկրորդ կարծիքը, բնականաբար, հայերի նշանակալից տեղաշարժ չի ենթադրում: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ երկու կարծիքների միջև ընտրություն կատարելու համար հարկավոր է լուծել այն հարցը, թե հայերը եղե՞լ են արդյոք Եվրոպայում:

Առաջին կարծիքն ընդունելու դեպքում հարկավոր է որոշել այն ուղին, որով հայերը Եվրոպայից շարժվել են դեպի իրենց բնակության պատմական վայրերը, դեպի Հայկական բարձրավանդակ: Կա այդպիսի երկու հնարավոր ուղի՝ կամ դեպի արևելք՝ հյուսիսսևծովյան շրջանները և ապա Կովկասյան լեռնաշղթայի անցուղիներով դեպի հարավ, կամ դեպի հարավ՝ Բալկանյան թերակղզին և ապա արևելք՝ Փոքր Ասիայով դեպի Հայկական բարձրավանդակ: Հայագետների մեծամասնությունը բացառում է առաջին ուղին՝ այն հատկացնելով բազմամարդ հնդիրանական ցեղերի շարժմանը: Այսուհանդերձ փորձեր են արվել հայ-հնդկական վաղ շփումները հատկացնելու հենց հյուսիսսևծովյան շրջանին, և, ինչպես կտեսնենք, կարծիք է հայտնվել հյուսիսսևծովյան շրջանում բնակված և մ. թ. ա. VIII դ. դեպի հարավ շարժված կիմերների՝ հայերի հետ նույնը լինելու մասին: Շատ ավելի հավանական է համարվում երկրորդ ուղին: Սրա համար բերվում են ինչպես պատմական, այնպես էլ լեզվական ապացույցներ:

Պատմական ապացույցներ ասելով պետք է հասկանալ հին ավանդությունները և մատենագրական վկայությունները: Ինչպես արդեն նշվել է արմեն անվան քննության կապակցությամբ, հին հունական մատենագրության մեջ տարածված է եղել այն կարծիքը, որ հայերը (օտար անվանմամբ՝ արմենները) եկել են Փռյուգիայից: Մ. թ. ա. V դ. հույն պատմիչ Հերոդոտոսը, խոսելով այն մասին, որ փռյուգացիները Եվրոպայից են անցել Փոքր Ասիա, շարունակության մեջ ասում է, որ «արմենները զինված էին փռյուգացիների նման և փռյուգական վերաբնակներ են» [գիրք VII, գլուխ 73]: Մի այլ տեղում [գիրք V, գլուխ 49 և 52] նշում է, որ հայերն ապրել են կիլիկիացիների և մատիենների հարևանությամբ, և որ հայերի ու կիլիկիացիների սահմանը Եփրատ գետն է: Մ. թ. ա. IV դ. հեղինակ Եվդոքսոսը նշում է, որ «արմենները ծագումով Փռյուգիայից են և լեզվով հույժ փռյուգաբանում են»: Դիոնիսիոս Հալիկառնասացին (մ. թ. ա. I դ.) նույնպես խոսում է հայերի և փռյուգացիների համալեզվության և փռյուգացիների նման զինված լինելու մասին: Մ. թ. ա. I դարի հեղինակ Ստրաբոնը հայ-արմենների անունը կապում է առասպելական արգոնավորդներից մեկի՝ Թեսալացի Արմենոսի անվան հետ՝ նշելով, որ նա ծագում է Բոյբեիս լճի մոտ, Փերեի և Լարիսայի միջև գտնվող Արմենիոն քաղաքից, և որ նրա ուղեկիցները բնակություն են հաստատել Ակիլիսենեում և Սիսպիրիտիսում՝ մինչև Կալաքեն և Ադիաբեն [գիրք IX, գլուխ IV, 8 և գլ. XIV, 12]։ Հետաքրքրական է նշել, որ հայկական «Աշխարհացոյց»-ում ևս, հավանաբար հունական աղբյուրների հիման վրա, Թեսալիայի հիշատակության մեջ գրված է. «... յորմէ Հայք»։

Լեզվական ապացույցները մի քանի տիպի են։

Նախ՝ ինչպես տեսանք, նշվում են մի շարք տեղանուններ, որոնք գտնվում են Թեսալիայում ու Փոքր Ասիայում և կապված են հայերի անվան հետ՝ Արմենիոն ('Αρμένιον) (ըստ Ստրաբոնի) և Օրմենիոն ('Ορμένιον) քաղաքներ (ըստ «Իլիականի», II, 2, 734) Թեսալիայում, Օրմենիոն ('Ορμένιον) լեռ Բիթյունիայում, Հարմենե ('Αρμήνη) նավահանգիստ Սինոպի մոտ, Արմենիոն ('Αρμένιον, 'Ορμίνιον) լեռ Հալիս գետի ակունքներում[2]։ Այն հանգամանքը, որ Armen/Ormen- բաղադրիչների դիմաց ուրարտական աղբյուրներն ունեն, հակառակ արդեն բերված մեկնությունների, Arme և Urme ձևերը, հեշտությամբ կարելի է բացատրել ուրարտերենի առանձնահատկություններով. այստեղ ñ-ն հաջորդ ձայնավորով հանդերձ կարող էր ընկալվել որպես -ni վերջավորություն և բաց թողնվել. այլ կերպ ասած ոչ թե Armen անվանումն է վերլուծելի Arm(e)+(i)ni, ինչպես կարծում են Յ. Մարկվարտը և հետագա որոշ հետազոտողներ, այլ -n-ն այստեղ բուն բառամաս է, որ որպես վերջավորություն է ընկալվել միայն ուրարտական աղբյուրներում։ Ինչպես ցույց են տալիս arm և armñ կրկնավոր ձևերը, հնարավոր է ենթադրել նաև հենց սկզբից –ñ-ով և առանց –ñ-ի տարբերակների առկայությունը։

Երկրորդ՝ Փոքր Ասիայի տարբեր մասերում, այդ թվում նաև Արևմտյան մասում նշվում են հայկական ծագման տեղանուններ և հատկապես ջրանուններ, որոնց ստուգաբանությունը մյուս տեղանունների համեմատությամբ ավելի հավաստի է. այսպես, ըստ բուլղարացի նշանավոր լեզվաբան Վ. Գեորգիևի [Georgiev, 1981, 218—219]՝ արևմտափոքրասիական մի շարք ջրանուններ կարելի է բխեցնել հայկական կամ փռյուգական վաղ ձևերից, ընդ որում ջրանունների բուն իմաստները որոշելիս Գեորգիևը հենվում է մասամբ մատենագրական զանազան վկայությունների և հունական լրացուցիչ անվանումների, մասամբ թուրքական անվանումների վրա, որոնք կարող են լինել հին անունների վերարտադրությունը (թարգմանությունը).

Հոմերոսի հիշատակած Σατνιόεις, ուշ Σαφνιόεις գետանուն (հետագա թրք. Tuzli-çay «Աղագետ») <ΣαFτνιοFεν(τ)ς <հայկ. կամ փռյուգ. *saltnio-u̯ents <հ.-ե. *saldnio-u̯ents—հայ. աղտ «աղ»։

Lysis (գետ Փռյուգիա-Կաբալիայում և Պիսիդիայում, հետագա թրք. Boz-çay «Գորշ գետ»), այլև Λυσινία, Λυσινόη (գետին մոտ գտնվող քաղաքների հունականացված անուններ)—հայ. լոյս, -ոյ.

Σαγγάριος (Փոքր Ասիայի երկրորդ մեծ գետը՝ հիշատակված Հոմերոսի «Իլիականից» սկսած, թրք. Sakarya. Թափվում է Սև ծովը) <հ.-ե.*su̯gu̯(o)u̯lo—հայ. անկանիմ; գոթ. sigquan և հայ. գայլ, հ. հնդկ. vari «ջուր», ավ. vairi «լիճ».

Σίβρος (լիկիական գետ՝ հուն. Ξάνθος «դեղին, ոսկյա» և թրք. Ecen-çay «դեղին գետ». գետի հին մակդիրը եղել է ἀργύρεος «արծաթյա»)— հայ. սուրբ «մաքուր», վեդ. śubhra- «փայլուն»։

Բացի սրանցից, Վ. Գեորգիևը բերում և փորձում է հնդեվրոպական ձևերով ստուգաբանել երկու այլ ջրանուն ևս (առանց հայկական զուգահեռներ բերելու), որոնց համար կարելի է նշել հայկական համապատասխան ձևեր՝

պիսիդ. Καραλις լիճ (Strabo, 12, 568, թրք. Kaya-göl «ժայռալիճ» kaya «ժայռ, վեմ, վիմաքար»)՝ *(s)korā, *(skarā կամ *kar(r)ā «ժայռ, քար» նախաձևից +-al(l)i- ածանց—հայ. քար.

տրոյական Κάρησ(σ)ος (թրք. Taş-oluk-dere «քար» + «ջրորդան» + «առու»՝ Kocabaš (Granicus) գետի վտակը)՝ *(s)korā, *(s)korā կամ kar(r)ā «ժայռ, քար»—հայ. քար։

Եթե գնահատենք բերված զուգահեռները, կարելի է ասել, որ ջրանուններից Σατνιόεις-ը և Σαγγάριος-ը չեն կարող բխեցվել հայկական աղբյուրից հնչյունական նկատառումներով. 1) հ.-ե. *s>հայ. h փոփոխությունը զուգահեռ ունի հունարենում ու իրանականում և պիտի տեղի ունեցած լինի շատ վաղ (հմմտ. նաև Halys գետի անունը, որ թերևս աղի բառի հին ձևն է), մինչդեռ այս ձևերում հ.-ե. *s-ի դիմաց առկա է s (σ) 2). *saldnio-u̯ents նախաձևը հայերենում չէր կարող տալ Գեորգիևի վերականգնած ձևը. հ.-ե. *d-ն այստեղ *n-ից առաջ պիտի ընկներ։ Մնացած դեպքերում բերված համեմատությունները հնարավոր են, բայց ոչ լիովին հավաստի։

Երրորդ՝ հայերենը բնութագրվում է նշանակալից մերձավորությամբ Բալկանյան թերակղզու և արևմտափոքրասիական հնդեվրոպական այնպիսի լեզուների հետ, ինչպիսիք են հունարենը, փռյուգերենը, և ավելի քիչ՝ թրակերենը։ Մասնավորապես շատ են հայ-հունական բառային բացառյալ զուգաբանությունները, որոնք, ինչպես կտեսնենք, մասամբ կարող են գալ ոչ թե հնդեվրոպական շրջանից, այլ Բալկանյան թերակղզում հայերի և հույների համակեցության ժամանակից, այսինքն՝ ընդհանուր նորագոյացումներ լինել։ Այս զուգաբանությունները կբերվեն հետագա քննության մեջ։ Որոշ հեղինակներ նշում են նաև հայ-բալկանյան ընդհանուր երևույթներ՝ բառային և կառուցվածքային ընդհանուր գծեր, որոնք խոսում են հայերի՝ Բալկանյան թերակղզում գտնվելու օգտին։ Այս փաստերը ևս կբերվեն վաղնջահայերենի շփումների և փոխազդեցությունների՝ ստորև կատարվող քննության մեջ։

Չորրորդ՝ կան մի շարք հայերեն բառեր, որոնք փոխառվել են Բալկանյան թերակղզու և հարակից շրջանների լեզուներից, այդ թվում՝ Արևմտյան Փոքր Ասիայի լեզուներից։ Այս բառերի հարցը նույնպես կքննվի ստորև՝ վաղնջահայերենի և հնագույն հայերենի օտար տարրերի ընդհանուր հարցի հետ կապված։ Նշենք միայն, որ այս կարգի մի շարք բառերի բուն պատկանելությունը և ծագումը միշտ չէ, որ պարզ են։ Այսպես, օրինակ, Յ. Մարկվարտը [**Markwart**, 1928, 211—232] նշում է **մանր**, սեռ. **մանու** և **սուին** բառերը, որոնք գրեթե նույն նշանակությամբ առկա են Թեսալիային սահմանակից Աթամանիայում և Իլիրիայում։ Սակայն առաջինի համար ավելի հավանական է բնիկ հնդեվրոպական ծագումը, մանավանդ որ առկա է մանուկ, -կան ածանցյալը, երկրորդը, հավանաբար, ծագել է փոքրասիական մակեդոնացիների լեզվից՝ σιβύνη ձևից, որի դիմաց իլիրերենն ունի σιγύνη ձևը [Haas, 1966, 253—254. Ջահուկյան, 1970, 118]։

---

[2] Ինչպես նշվել է, հ.-ե. *o-ի o/a արտացոլումը բնորոշ է հայերենին. նշենք ն en>in անցումը, որ արտացոլված է 'Ορμίνιον ձևի մեջ։ Հետազոտողները փորձում են ա առանձնահատկությունները բացատրել հունական բարբառներով՝ հմմտ. or՝ ar-ի և այ -in՝ en-ի դիմաց [Hauschild, 1964, 83]։

Ի՞նչ առարկություններ կարելի է բերել հայերի՝ արևմուտքից արևելք տեղաշարժվելու վարկածի դեմ.

1) Հայկական ավանդույթը և, մասնավորապես, Հայկի առասպելը ցույց է տալիս հայկական ցեղերի շարժում ոչ թե արևմուտքից արևելք, այլ հարավից հյուսիս։ Ճիշտ է, այս ավանդույթը կարող է հենվել մասնակի փաստերի ընդհանրացման վրա, բայց այսուհանդերձ այն կարոտ է գոհացուցիչ մեկնաբանության։

2) Հայագետների մեծամասնությունը հայերի բուն պատմությունը հնում սովորաբար սկսում էր ուրարտական պետության անկումից հետո, այսինքն՝ VI դարից։ Մի կողմից՝ Հայասայի, մյուս կողմից՝ Ուրմե (Արմե) երկրի հիշատակությունները փոխում են պատկերացումները, և փորձ է արվում այդ պատմությունը տեղափոխելու ավելի վաղ շրջան։ Բնական է համարվում այն ենթադրությունը, որ հայերի երևալը Փոքր Ասիայում պետք է կապված լինի, այսպես կոչված, ծովային ժողովուրդների շարժման հետ՝ մ. թ. ա. XIII դ. վերջերին և XII դ. սկզբներին, և որ հայերը պիտի եկած լինեն փռյուգացիների հետ միասին. սրանց հետ անտիկ հեղինակները հայերին կապում են ցեղակցական մերձավորությամբ. այդ ցեղակցությունը փորձում են ապացուցել նաև մի շարք նոր հեղինակներ։ Սակայն ծովային ժողովուրդների թվարկումների մեջ հայերի անունը չկա։ Ավելորդ չէ նշել, որ եգիպտական աղբյուրներում ծովային ժողովուրդների անվանումները հանդիպում են մ. թ. ա. XIII դարում և XII դ. սկզբներին, ընդ որում եգիպտական գրության եղանակը, որտեղ տրվում են միայն բաղաձայնները, դժվարացնում է դրանց նույնացման հարցը՝ šrdn (սարդե՞ր), kws (kwjš) (աքայացինե՞ր), prst (փղշտացինե՞ր), škrš (սիկուլնե՞ր), rk (լիկիացինե՞ր), trs (տիրսեննե՞ր), djnj (դանայացինե՞ր), wšš, čkr։

3) Ինչպես նշվել է, որոշ հեղինակներ փորձում են ցույց տալ **արմեն** անվան ավելի վաղ հիշատակումներ։ Այդպիսին է համարվում ակկադական թագավոր Նարամսինի (մ. թ. ա. XXIII դ.) արձանագրություններում հիշատակված Armani երկրանունը (հմմտ. նաև Armi երկրանունը էբլայից. Древняя Эбла, 1985, 285), թեև բերվում են մի շարք առարկություններ. չխոսելով այն մասին, որ հիմնական արձանագրության իսկությունը կասկածի տակ է դրվում, նշենք հետևյալը. ա) Armani-ի տեղադրության հարցում կարծիքների միասնություն չկա, և այդ երկրի նույնացումը Հայաստանի հետ կասկածելի է. բ) որպես Armani -ի թագավոր հիշատակված Madakina -ի անունը հայկական բնույթ չունի, իսկ բուն Նարամսինին պատկանող մի արձանագրության մեջ նա կոչված է Red-Adad, որ ակնհայտորեն սեմական բնույթ ունի. գ) հին ակկադերենի և հայերենի համեմատությունը ցույց է տալիս, որ այդ շրջանի համար հայերենում որևէ հավաստի փոխառություն չի կարելի նշել, և որ հետևաբար հայ-ակկադական հարաբերությունների մասին այդ շրջանի համար խոսել դժվար է. դ) Նարամսինի ժամանակներից մինչև մ. թ. ա. XII դ. **արմեն** անվան որևէ հավաստի հիշատակություն չկա, և ենթադրել, որ արմեններն ապրել են այդքան ժամանակ Առաջավոր Ասիայում, բայց չեն հիշատակվել, քիչ հավատալի է։

Բ. ԵԿԱՄՈՒՏ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ. ՇՓՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԱՅ-ՖԻՆՆԱՈՒԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ֆիննաուգրական լեզուները սամոդիական լեզուների հետ միասին կազմում են ուրալյան լեզվաընտանիքը, որի կրողների սկզբնական բնակավայրը համարվում է Արևմտյան Սիբիրի հյուսիսային մասը՝ Ուրալյան լեռների և Օբ գետի միջև։ Կարծում են, որ մոտավորապես մ. թ. ա. IV հազարամյակում ֆիննաուգրական ցեղերը բաժանվել են սամոդիականներից և շարժվել Ուրալից դեպի արևմուտք։ Մ. թ. ա. III հազարամյակում ֆիննաուգրերը դեռևս մեկ միասնություն են կազմել, որից այդ հազարամյակի վերջերին բաժանվել են ֆիննա-պերմյան և ուգրական հատվածները՝ առաջինները արևմուտքում, երկրորդները՝ արևելքում [Гуя, ОФУЯ, 1974, 36. Лыткин, 1975, 84]։ Տարածված է այն կարծիքը, որ ֆիննաուգրական ցեղերը մ. թ. ա. IV հազարամյակում, սամոդիական ցեղերից բաժանվելուց հետո հարևանության մեջ են եղել հնդեվրոպական ցեղերի հետ՝ գտնվելով վերջիններիցս ավելի հյուսիս [Эрдейи, ОФУЯ, 1974, 44]։ Հնդեվրոպացիների նախահայրենիքը Առաջավոր Ասիայում տեղավորելու դեպքում դժվարանում է հնդեվրոպա-ֆիննական վաղ շփումների հետևանքով կատարված փոխառությունների մեկնաբանությունը։

Եթե բացառենք լիովին պատահական զուգադիպությունները, ապա գիտության զարգացման արդի փուլում հնդեվրոպա-ֆիննաուգրական լեզվական ընդհանրությունների մեջ կարելի է պայմանականորեն տարբերել ընդհանրությունների երկու խումբ՝ ժառանգված և ձեռքբերովի։ Ժառանգված ընդհանրությունները նույնպես երկու կարգի են՝ 1) այսպես կոչված, տարրական ցեղակցության բառեր, որոնք պայմանավորված են լեզվաստեղծական ընդհանուր օրինաչափություններով և կարող են հանդես գալ տարբեր բնույթի լեզուների մեջ՝ անկախ նրանց ցեղակցական որոշակի պատկանելությունից՝ դերանվանական ընդհանուր արմատներ, մանկական բառեր, բնաձայնական-նկարագրական բառեր, ձայնարկություններ. 2) եթե ընդունենք նոստրատիկ ընդհանրության վարկածը՝ հնդեվրոպա-ուրալյան հեռավոր ցեղակցության գաղափարով, այդ ընդհանրությունից պետք է ժառանգված լինեն բառեր և բառաձևեր (քերականական և բառակազմական)։ Նշենք, որ նոստրատիկ ընդհանրության վերականգնված բառապաշարի մեջ առկա են, բնականաբար, դերանվանական ընդհանուր արմատներ, բնաձայնական-նկարագրական բառեր և այլն, որոնք կարող են լինել նաև տարրական ցեղակցության բառեր. այսպիսով, այս երկու շերտերի խիստ որոշակի սահմանազատումը հեշտ չէ։ Բնականաբար, բոլոր դեպքերում էլ որպես հնդեվրոպական լեզու այս ընդհանրություններին մասնակցում է նաև հայերենը, որն էլ հենց նկատի կունենանք ստորև կատարվող քննության մեջ։

«Տարրական» ցեղակցության բառերի քննությունը մեր նպատակների համար հատուկ արժեք չունի, ուստի և կբավարարվենք միայն մի քանի օրինակով՝ առնված հայ-ֆիննական զուգադիպումներից՝ ախ — ֆ. āh «ախ» խտիղ, խտղտել, բ. խ(ու)տուտ — ֆ. kutittaa «խտղտել, խտուտ ածել». կոկոն — ֆ. kukka «ծաղիկ». բ. կուտիկ «շան ձագ» — հունգ. kutya, մանս. kutyuw «շան ձագ», ճայ — ֆ. kajava «որոր». փուք, փչել — ֆ. puhua «փչել» և այլն։

Նշանակալից թիվ են կազմում հայ-ֆիննաուգրական այն ընդհանրությունները, որոնք ժառանգվել են նոստրատիկ ընդհանրությունից։ Վ. Մ. Իլլիչ-Սվիտիչի նոստրատիկ լեզուների բառարանում [Иллич-Свитыч, 1971—1976] բերված հնդեվրոպա-ֆիննաուգրական ընդհանուր բառերի ու մասնիկների մեջ հայերենի մասնակցությունը կազմում է մի քանի տասնյակ։ Բերենք որոշ օրինակներ՝ ամ (*āmōr-)—ֆ. amu «առավոտ». բարի — ֆ. paras «ավելի լավ», մոկշ. para «լավ. բարիք». բոյս—ֆ. puu «ծառ». բ. բունձ «հողակոշտ»—էստ. pung, pong «ուռուցիկ բան՝ սոխ, բողբոջ», ուդմ. pog «հողակոշտ»³. բրել—մանս. (հյուս.) pōr- «փորել, բրել», խանտ. (հյուս.) pori- «ծակել». դնել (դիր)— ֆ. teke- «անել». իմ—ֆ. mina (թեք.՝ minu-) «ես». լակել— էստ. lakka- «լիզել», կոմի lak- «լակել». բ. լափ, լուփ «ափ, բուռ»— ֆ. lapa «թիակ», lappea «տափակ», մոկշ. lapa «թաթ». լմել, լմլմել— կոմի l'am- «ճզմել». բ. լոք «լայն քայլ»—սելկուպ. (կետ.) lāka «քայլ». լուսան— սելկուպ. (կետ.) lokka «աղվես». ծունկ—էստ. küünar «արմունկ». կեր, կերակուր, կոկորդ—ֆ. kurkku «կոկորդ». կռունկ—ֆ. kurke- «կռունկ». հացի (հ.-ե. *osk-)—էրզ. ukso, մար. (մարգ.) osko «հացի». ոլ, ճոլոլել—սելկուպ. (տազ.) kol'a «շրջան(ակ)», kol'a- «շրջապտտել». մալել «մանրել. փշրել»—սաամ. (հյուս.) moala «փշուր», moallana «փշրվել». մարտ, մաշել (մարշել)—ֆ. muru «փշուր», murea «փխրուն», murta «կոտրել». մեղր—ուդմ. բ. möl' «քաղցր փայտահյութ». մեռանել—մար. (լեռն.) merce «թուլություն զգալ, ուժը՝ հիվանդ լինել». մոր(ի)—ֆ. marja, էստ. mari «հատապտուղ». շուն—ուդմ. (Գլազով) kyjon (այլ բարբառներում՝ ki(j)on) «գայլ». սառն—ֆ. kirte-, էստ. kits «սառած գետին». սար «լեռնագագաթ»—ֆ. էստ. kiire «գագաթ». սարի-ք «շղթա, կապանք»—կարել. keärie «կապոց». սին «դատարկ»—հ. հունգ. keny «թեթև». սոր «խոռոչ» (հ.-ե. *k'eu-)—ֆ. kaivo «ջրհոր», kaiva «փորել». տալ «ամուսնու քույր»—ֆ. käly «ամուսնու քույր». տատն, տուտն «ծայր պոչ» (հ.-ե. *dud-?)⁴—ֆ. tutka «ծայր». ցելում «ճեղքել»—ֆ. sali «ճղատել, շերտ-շերտ ճղել», հունգ. szil «կտրել, հատել». փերթ—ֆ. päre, վեպս. päreg «տաշեղ». քերել, քերթել—ֆ. kuore «կեղև», խանտ. (արևել.) kor «քերթել». քաղել, բ. քեղել, քեղքել «քերթել, կեղևը հանել»— ֆ. kalvo, kalva «թաղանթ, կեղև» և այլն։

Ձեռքբերովի ընդհանրությունները ենթաշերտային բառեր և փոխառություններ են, որոնք գերազանցապես միջնորդված բնույթի են, մասնավորապես՝ 1) հայերենում հնդեվրոպական նախալեզվից ժառանգված և ֆիննաուգրական լեզուներում հնդեվրոպական նախալեզվից ու նրանից ծագած լեզուներից (իրանական, գերմանական, սլավոնական և այլն) փոխառած բառեր. 2) ֆիննաուգրական լեզուներում նոստրատիկ ընդհանրությունից ժառանգված և հայերենում նոստրատիկ այլ լեզուներից (այդ թվում հնդեվրոպական լեզուներից) փոխառած բառեր. 3) հայերենում և ֆիննաուգրական լեզուներում միևնույն կամ մերձավոր աղբյուրներից (իրանական, թյուրքական և այլն) փոխառած բառեր։ Սրանց հանգամանալից քննությունը դուրս է մեր նպատակներից։ Բերենք միայն որոշ տիպական օրինակներ։

Ֆիննաուգրական լեզուները հնդեվրոպական նախալեզվից և, ինչպես կարծում են, հնդիրանական (արիական) նախավիճակից զգալի թվով բառեր են փոխառել, որոնք հաճախ զուգահեռներ ունեն հայերենում, ընդ որում բավականաչափ մոտ են հայերենի համար վերականգնվող նախաձևերին։ Այսպես, դեռևս ֆիննաուգրական ընդհանրության շրջանում կատարված հնդեվրոպական այս փոխառություններից, որոնք զուգահեռներ ունեն հայերենում, կարելի է նշել գետ, -ոյ (հ.-ե. *u̯ed-)—ֆ. vete «ջուր» (ըստ ոմանց՝ նոստրատիկ ընդհանրությունից եկող բառեր). մեռանել (հ.-ե. *mer-)—ֆ. marras «մեռած. մահ». որբ, -ոյ, արբանեակ (հ.-ե. *orbho-)— orpo «որբ», orpana «զարմիկ, զարմուհի» և այլն [հմմտ. Хакулинен, 2, 1955, 37—38. Collinder, 1977, 145]։ Հնդիրանական նախավիճակից փոխառած ֆիննաուգրական բառերի («մինչարիական շերտ») և հայերենի մեջ առկա զուգադիպություններից նշենք որս, -ոյ—ֆ. porsas «խոճկոր». աղ, -ի (հ.-ե. *sal-)—ֆ. suola և այլն [Лыткин, 1975, 86—87]։

Նոստրատիկ ընդհանրությունից ժառանգած ֆիննաուգրական և նոստրատիկ լեզուներից հայերենի փոխառած ընդհանուր բառերից հիշենք ծորել—ֆ. soro «կաթիլ», sorotta «կաթել», հունգ. csurog «թափվել, հոսել», սելկուպ. sor «հոսել». բ. ծուլ (ծուլ լինել «ցատկել»)— սաամ. (հյուս.) čaello «ցատկել». կար(ել) (եթե քարթվ. աղբյուրից չէ)—ֆ. kääri «փաթաթել», կարել. koärie «կապոց» և այլն։

Բնականաբար, մեզ համար ամենից ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայ-ֆիննաուգրական այն զուգադիպությունները, որոնք կարող էին լինել ֆիննաուգրական ցեղերի և հայերի նախնիների հնարավոր շփման արդյունք, եթե հայերը մյուս հնդեվրոպացիների հետ միասին իրոք բնակվել են Եվրոպայում։ Այս դեպքում կարելի է ենթադրել կամ անմիջական շփում՝ նախքան հայերի շարժվելը Բալկանյան թերակղզին, կամ հնդեվրոպական միջակա օղակներ։ Իհարկե, բոլոր դեպքերում էլ հնարավոր է զուգադիպությունների պատահական բնույթը։ Համենայն դեպս առայժմ դժվար է լիովին բացառել ֆիննաուգրական աղբյուրից հայկական և հայկական աղբյուրից ֆիննաուգրական նախնական փոխառություններ լինելու հնարավորությունը։ Բերենք օրինակներ նախ երկրորդ, ապա, որ մեզ համար հատկապես կարևոր է, առաջին դեպքերի համար։

1. աման (հ.-ե. *sem-). հմմտ. նաև ամամ «լցնել»—ֆ. ammen «դույլ, կթաման».

այգ (հ.-ե. *ai- «այրել, լուսավորել»?)—ֆ. aika «ժամանակ» (եթե կապված չէ լիվերեն համահունչ բառի հետ և սկզբնապես չի նշանակել «չափ») [հմմտ. Хакулинен, 1955, 34, ծան. 4].

երկաթ— վոլգա-պերմ.՝ մար. kürtnö, կոմի kört, ուդմ. kort «երկաթ», որոնց աղբյուր համարվող հնդիրան. ձևերը չունեն «երկաթ» իմաստը. հմմտ. ավ. karəta- «դանակ», օս. kard «դանակ, թուր» և այլն.

թարմ (հ.-ե. *ter-, *tr̥-mo-)—ֆ. tarmo «էներգիա, ուժ» (բրբռ. նաև «ջլապնդություն, ճկունություն») (?).

թեքեմ «կռել, կռելով կոփել. սրել. կրթել» (հ.-ե. *tek-)—ֆ. takoa «կռել».

---

³ Հ.-ե. ձայնեղներին և խուլերին համապատասխանում են ուրալյան խուլերը. որոշ լեզուներում առկա ձայնեղները համարվում են երկրորդական։

⁴ Հնդեվրոպական ձևերը (հայ-գերմանական զուգահեռներով) չունեն Պոկոռնին և Իլլիչ-Սվիտիչը։

կուր «տաշտ. նավակ» (հ.-ե. *gu-ro-?)—ֆ. kuiru «մակույկի տեսակ» (ք. kuiri «գդալ»).

մատ, մատչիմ—պերմ. *matin «մոտ».

նոր (հ.-ե. *neu-)— ֆ. nuori «երիտասարդ».

սալարիմ «վախից թաքնվել», սաղարկեմ «ծածկել, պահել», սալար «ծածուկ, թաքուն» (հ.-ե. *k'el-) — ֆ.-ու.՝ ֆ. salata «թաքցնել»:

2. կառ «փուշ» (և կառ «ծառի մեծ ճյուղ», եթե սխալագրություն չէ)— ֆ. kara «փուշ», karas «մատաղ եղևնի, փշատերև ծառի ճյուղ».

կեչի—ֆ.-ու.՝ ֆ. kaski «այրուտ, անտառում այրված տեղ» (ք. «կեչու շիվ»), կար. kaški «կեչի», էստ. kask, վոգ. kahči, ուդմ. kyž-, կոմի kyž և այլն:

կծծի — ֆ. kitsas «կծծի, ժլատ, ագահ» (ցեղակից լեզուներում՝ «նեղ, սուղ, սերտ»).

ոսկի — ֆ.-ու. *vaśkз «ինչ-որ մետաղ»՝ ֆ. vaski «պղինձ», հունգ. vas «երկաթ» և այլն.

սորել «հոսել, ծորալ»[5] — ֆ.-ու.՝ ֆ. soro «կաթիլ», sorotta «կաթել».

փորեմ — մանս. (հյուս.) pōr- (*pār-) «փորել, բրել», խանտ. porl- «ծակել»:

Եթե ենթադրենք փոխառություն բառասկզբի *s-ի պահպանվածության ժամանակ, ապա սրանց կարելի է միացնել աղի–f—ֆ. suoli, մար. šolo «աղիք» զուգահեռը՝ *solijā >աղի–f անցմամբ: Հայ. գիղ և ֆ. kyla «գյուղ» բառերի նմանությունը պատահական պետք է համարել, եթե հայ. բառը կամ հ.-ե. ծագում ունի, կամ փոխառություն է արևելակովկասյան աղբյուրից և ոչ թե արևելակովկասյան բառերը՝ հայերենից. նշենք, մանավանդ, որ ֆիննական բարբառներում և ցեղակից լեզուներում առկա է «տուն» իմաստը:

2. ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՀՆԱԲԱԼԿԱՆՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

ա) ՀՆԱԲԱԼԿԱՆՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

Եթե ճիշտ է այն կարծիքը, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը եղել է Եվրոպայում, և որ հայկական ցեղերը որոշ ժամանակ բնակվել են Բալկանյան թերակղզում, ապա հայերենի և Բալկանյան թերակղզու հին լեզուների փոխհարաբերությունների ուսումնասիրությունը հատուկ նշանակություն է ստանում: Գիտության զարգացման արդի փուլում հաստատված է, որ այդ լեզուները հնդեվրոպական ընտանիքին են պատկանել և, հետևաբար, բալկանյան հին լեզուների ուսումնասիրությունը կազմում է հնդեվրոպաբանության մի մասը:

Բալկանյան թերակղզու հին լեզուներն ընդհանրապես կարելի է բաժանել երկու խմբի. 1) լեզուներ, որոնք հին ժամանակներից հասել են մեր օրերը և այժմ էլ շարունակում են գործածել որպես կենդանի լեզուներ. դրանց թվին են պատկանում հունարենը և ալբաներենը, սովորաբար դրանց թվին է դասվում նաև հայերենը. 2) լեզուներ, որոնք դեռևս հին ժամանակներում դադարել են կենդանի լինելուց և ներկայացված են գերազանցապես հատուկ անուններով, հին հեղինակների կողմից կատարված՝ բառերի առանձին գրառումներով (գլոսաներով) և երբեմն՝ արձանագրություններով. սրանց թվին են պատկանում թրակերենը և նրան մոտ մինչհունական այն շերտը, որ նույնացվում է պելասգերենի հետ, փռյուգերենը, միսիերենը, դակերենը, հին մակեդոներենը, իլիրերենը. վերջինս շատ հետազոտողներ համարում են ալբաներենի նախորդը: Այս լեզուները կրողները մ.թ.ա. II հազարամյակի կեսերին Բալկանյան թերակղզում տեղաբաշխված են եղել հետևյալ կերպ. հյուսիսում և արևելքում բնակվել են թրակյան և դակյան ցեղերը, արևմուտքում և հյուսիս-արևմուտքում՝ ալբանացիների նախորդները, իլիրացիները (այդ թվում ըստ ոմանց մեսապները), Մակեդոնիայում՝ հին մակեդոնացիները, փռյուգացիները և, ըստ հետազոտողների, վաղնջահայերը, հարավում՝ հույները, որոնք այստեղ շարժվելով մ. թ. ա. III հազարամյակի վերջերին, աստիճանաբար ձուլել են մինչհույներին (պելասգներին) [Нерознак, 1978, 10]:

Մ. թ. ա. XIII դ. սկսվում է, այսպես կոչված, ծովային ժողովուրդների շարժումը Փոքր Ասիա, որի մեջ ներգրավվում են հունական ցեղերը, փռյուգացիները, թրակացիները, միսիացիները և, ըստ շատ հետազոտողների, վաղնջահայերը: Ավելի ուշ՝ մ. թ. ա. IX դ. վերջերին, Փոքր Ասիա են տեղափոխվել նաև մակեդոնական ցեղերը: Այս ժողովուրդների հետ, այսպիսով, հայերը կարող էին շփվել ոչ միայն Բալկաններում, եթե նրանք իրոք բնակվել են այնտեղ, այլև Փոքր Ասիայում և նույնիսկ հարակից շրջաններում. հայտնի է, որ թրակացիների տարածման շրջանը բավականին ընդարձակ է եղել, իսկ միսիացիների անունը թերևս պահպանվել է Մուշ անվան մեջ: Այսպիսով հայերի և հնաբալկանյան լեզուների՝ Բալկանյան թերակղզում շփվելու հարցը կարելի է լուծել՝ հենվելով հատկապես հայ-ալբանական ու հայ-իլիրական և հայ-դակյան ընդհանրությունների վրա. առանձին ուշադրություն կհատկացվի հայ-հունական այն զուգաբանություններին, որոնք կարող են լինել հնդեվրոպական ընդհանրության շրջանից հետո հույների և հայերի համակեցության արդյունք: Եթե հայերը երբևէ շփվել են պելասգների հետ, ապա այդ պետք է տեղի ունեցած լինի շատ վաղ շրջանում. մ. թ. ա. II հազարամյակի վերջերին պելասգների հիմնական մասը պիտի ձուլված լիներ հույներին և մ. թ. ա. I հազարամյակում պահպանված միայն առանձին կղզյակների ձևով, որոնք հայերի տարածման հնարավոր շրջաններից հեռու են ընկած:

բ) ՀԱՅ-ԲԱԼԿԱՆՅԱՆ ԲԱՌԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Եթե հայերենը որոշ ժամանակաշրջան գտնվել է բալկանյան հին լեզուների հարևանության մեջ, ապա, բացի առանձին լեզուների հետ ունեցած ընդհանրություններից, նա պետք է ունենար նաև ընդհանրապես բալկանյան լեզուների կամ նրանց մի մասի հետ ընդհանուր բառեր (բառային «բալկանիզմներ»): Միայն թե դժվարություն է հարուցում հայ-բալկանյան ընդհանրությունների մեջ հնդեվրոպական միասնության շրջանին պատկանող տարածքային բառերը հետագա ընդհանրություններից տարբերակելու հարցը:

Հայերենի բալկանիզմների առանձնացման մեր հնարավորությունները, ցավոք, սահմանափակ են: Եթե բացառենք հունարենը, որ հին գիր ու գրականությունն ունի և հարատևում է մինչև այսօր, ապա մյուս դեպքերում մենք գործ ունենք կամ կենդանի, բայց միայն XVI դ. գրի առնված ալբաներենի, կամ, ինչպես նշվել է, միայն հատուկ անուններով, սակավաթիվ արձանագրություններով, գլոսաներով և սլավոնական ու ռոմանական լեզուներում որպես ենթաշերտ պահպանված սակավաթիվ բառերով ներկայացված մեռած լեզուների հետ:

---

[5] Աճառյանը [ՀԱԲ, 4², էջ 245] միացնում է սոր «ծակ, խոռոչ» բառի հետ, որ անհավանական է:

Վ. Պորցիգի «Հնդեվրոպական լեզվոլորտի անդամատումը» [Porzig, 1954. Порциг, 1964] և Գ. Զոլտայի «Հայերենի տեղը հնդեվրոպական լեզուների շրջանում» [Solta, 1960] աշխատություններում հայ-բալկանյան բառային ընդհանրություններին հատուկ ուշադրություն չի դարձվել: Վ. Պորցիգը, բացի հայ-հունական բառային զուգաբանություններից, բերում է նաև այս տարածքին վերաբերող ընդհանուր ալբանա-հունա-հայկական միայն մեկ զուգաբանություն՝ անուրջ (onorio-) — հուն. ὄνειρος (էոլ. ὄνοιρος, կրետ. ἄναιρος) — ալբ. âdërrë (գեգ.), ëndërrë (տոսկ) «երազ, անուրջ»:

Ֆ. Բալտացեանուն հայերենի և դակամիսիերենի հարաբերությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ [Băltăceanu, 1980] հատուկ ուշադրություն է դարձրել նաև հայ-բալկանյան այն զուգաբանություններին, որ ընդգրկում են հայերենը, դակերենը (այդ թվում՝ ռումիներենում առանձնացվող դակյան ենթաշերտը), հունարենը և ալբաներենը. «Հայերենի, դակա-միսիերենի և հունարենի միջև հաստատված համապատասխանությունները (ինչպես նաև ալբաներենի մասնակցությունն այս զուգաբանություններին),—գրում է նա,—ներկայացնում են հայերենի՝ անտիկ հեղինակների կողմից հաստատված «բալկանյան» ծագման համար կարևոր պատմական մի ապացույց: Նրանք միաժամանակ հետաքրքրական են Բալկանյան թերակղզու հյուսիսի ժողովուրդների պատմության համար ընդհանրապես և դակերեն լեզվի պատմության համար մասնավորապես» [Băltăceanu, 1980, 144]: Բալտացեանուն բերում է 12 ընդհանուր բառ, որոնց մասնակցում է հունարենը, և 2 ընդհանուր բառ, որոնց նա չի մասնակցում.

1) արդն — հուն. ἀθήρ, ἀνθέριξ «ծայր. ծայրակալ (զենքի). քիստ (հասկի)» — ռում. andrea.

2) արգել — հոմ. ἀρχέω «արգելել, ետ պահել» — դակ. Arc.

3) այծ — հուն. αἴξ — դակամիս. Αἰζισις (Azizis — անձնանուն) — (ռում. aiț ?).

4) դամբան — հուն. τάφος «թաղում. գերեզման, դամբան», τύμβος «գերեզմանաթումբ. գերեզման, դամբան» — ռում. dîmb «թումբ, բլուր, բարձունք».

5) կաղին — հուն. βάλανος — ռում. gorun «սպիտակ կաղնի, Quercus dunculata».

6) մեղկ — հուն. βλαδύς «թույլ, մեղկ» — ռում. melc.

7) մոզի — հուն. μόσχος «մոզի, հորթ» — ալբ. muskhë «ջորի» — ռում. mușcoi «ջորի».

8) ուլ — հուն. πῶλος «ձագ. մտրուկ» — ալբ. pelë «զամբիկ» — դակամիս. Pelen.

9) որդի — հուն. πόρτις «ցլիկ. պատանի» — դակամիս. -per, -por.

10) ստերջ — հուն. στεῖρα — ալբ. shtjerrë «երինջ. գառ» — ռում. ştir

11) ձյուն — հուն. χιών — ռում. ţiu.

12) ձոյլ — հուն. χύτλον «լվացման ջուր» — ռում. zoae.

13) բարտի (?) — ալբ. bredh «եղևնի» — ռում. brad «եղևնի».

14) այրեմ — ալբ. voter «օջախ» — ռում. vatră «օջախ»:

Սակայն այս ցանկը խոցելի է տարբեր նկատառումներով.

1) մի շարք դեպքերում բերված զուգահեռները չեն սահմանափակվում միայն բալկանյան տարածքով, այլ ընդգրկում են նաև ուրիշ լեզուներ, ընդ որում հայերենը հազվադեպ է բնորոշվում բալկանյան տարածքի լեզուների հետ հատուկ մերձավորությամբ՝ արգել, կաղին, մեղկ, ուլ, որդի, ստերջ, այրեմ. այծ-ը զուգահեռ ունի նաև ավեստ. izaena- «կաշվյա» (*«այծի կաշուց») բառում, բայց ավելի մոտ է բալկանյան տարածքի լեզուներին.

2) ռումիներենի համար որպես դակյան ենթաշերտի բառեր առանձնացվածներից մի քանիսի՝ այդպիսին լինելը կասկածելի է. այսպես, որպես կաղին-ի զուգահեռ բերված gorun-ի սլավոնական փոխառություն լինելն ավելի հավանական է (հմմտ. բուլղ. горун «կաղնու տեսակ», բուլղ. բրբռ. «սպիտակ կաղնի», սերբախորվ. gorun «կաղնու տեսակ»՝ gora «անտառապատ տեղ» նախաձևից. Георгиев и др., 1971, 266) որպես այրեմ-ի զուգահեռ բերված ռում. vatră-ն կարող է փոխառություն լինել ալբաներենից.

3) առանձին դեպքերում բերված զուգահեռները կասկածելի են. հուն. τύμβος-ը ստուգաբանորեն հավանաբար կապված չէ τάφος-ի հետ և գալիս է *tēu-, *tū- «ուռչել, արմատից. եթե հայ. ձոյլ-ը ծագում է *g'heu-lo- նախաձևից և ոչ *g'heu-tlo-ից, ապա հուն. բառի, առավել ևս ռում. բառի հետ հատուկ մերձավորություն չունի. ինչպես նշում է նաև Բալտացեանուն, բարտի-ի կապը ալբ. berdh և ռում. brad «եղևնի» բառերի հետ կասկածելի է. ալբ. բառը ծագում է *bhrazdh- նախաձևից, որ հայերենում չէր կարող տալ բարտի. վերջինս, ամենայն հավանականությամբ, ծագում է հ.-ե. *bherəg'- «փայլել. սպիտակ» արմատից, որտեղից ծագում են կեչու անունները (հմմտ. ռուս. береза). պատահականորեն նման կամ փոխառություն պետք է համարել վրաց. bardi, մեգր. bərdi, աբխ. a-bard բուսանունները:

Բերված զուգահեռներից համեմատաբար վստահելի են հետևյալները.

1) դամբան — հուն. τάφος — ռում. dîmb (սակայն հմմտ. հունգ. dumb «բլուր»).

2) մոզի — հուն. μόσχος — ալբ. mushkë — ռում. mușcoi (բայց հմմտ. նաև վենետ. musso «էշ»).

3) ձյուն — հուն. χιών — ռում. ţiu:

Սրանց կարելի է միացնել հայ-հնդեվրոպական բառային զուգաբանությունների մեր ցանկում բերված հետևյալ հայ-բալկանյան զուգահեռները.

4) ագանիմ «գիշերել» — հուն. ἰαύω «քնել, գիշերել», αὖλις «օթևան, իջևան» — թրակ. Αυλου-.

5) անուրջ — հուն. ὄνειρος (էոլ. ὄνοιρος) — ալբ. âdërrë (գեգ.), ëndërrë (տոսկ.) «երազ. անուրջ, ցնորք».

6) խստոր — հուն. σκόρ(ο)δον — ալբ. hudhrë, hurdhë (հմմտ. նաև ռում. leurdă «ղանձիլ, արջասխտոր»):

Իմաստային առումով այս բառերը պատկանում են տարբեր թեմատիկ խմբերի, ընդ որում ագանիմ-ը և անուրջ-ը կարելի է հանգեցնել իմաստային միևնույն խմբին, մոզի-ն և խստոր-ը կենդանական և բուսական աշխարհի նշանակումներ են, սևն-ը՝ մշակութային բնույթի բառ, դամբան-ը կապված է թաղման հետ։

Մնացած դեպքերում բերվող զուգաբանությունները կամ հավաստի չեն, կամ ներկայացնում են յուրահատուկ ձայնդարձով, նախահավելվածով, իմաստով և լեզվական այլ առանձնահատկություններով բնորոշվող ձևեր։ Դրանցից են Բալտացեանուի բերած հետևյալ երկու զուգահեռները.

1) արդն—հուն. ἀθήρ, ἀνθέριξ—ռում. andrea. ըստ իմաստի այս զուգահեռը գերադասելի է, բայց ըստ ձևի դժվարություններ է հարուցում, մանավանդ որ թրակ. -αρδις անձնանվանական բաղադրիչը ևս հակված են բխեցնելու հայ. արդն-ի և լիտվ. ar̃das-ի համար վերականգնվող *ardh- արմատից [Detschew, 1957, 23]. լիտվ. ձևը Ֆրենկելը [Fraenkel, 1962, 15] ավելի հավանական է համարում բխեցնել ռուս. арда-ից, որ իր հերթին Ֆասմերը [Фасмер. ЭСРЯ, 1, 85] բխեցնում է կարել. ardo-ից (ֆինն. arta).

2) այծ—հուն. αἴξ—դակամխս. Αἴζισις (ռում. aiţ ?). ավեստյան զուգահեռը իմաստով և ձևով հեռու է կանգնած (ձայնդարձի զրո աստիճան՝ հայերենի, հունարենի և դակերենի լիաձայն աստիճանի դիմաց)։

Սրանց կարելի է միացնել հայ-հնդեվրոպական բառային զուգաբանությունների մեր ցանկում բերված հետևյալ զուգահեռները.

3) արմ(ատ) (զ-արմ)—հուն. ὀρμή «գրոհ, հարձակում. ձգտում» (?)—ալբ. jerm «ցնորվածություն, կատաղություն»—փռյուգ. ἀρμάν (հայց.) «կռիվ, մարտ» (?). արմ-ից միայն ածանցով տարբեր արմն և, թերևս, արմեն բառերը զուգահեռներ ունեն հունարենում, գերմանականում և սլավոնականում).

4) դալուկն, դալար—հուն. θαλερός «դալար, մատաղ», θάλλω «ծաղկել, բխել»—ալբ. dal «ելնել, ծագել, ծլել, ընձյուղել» (-a- ձայնավորում՝ ի տարբերություն դեղ-ի).

5) ինն—հուն. ἔνϜα- (εν-νεϜα-ի կողքին)—թրակ. ενεα (*e- նախահավելված. շեղվում է ալբաներենը՝ nëndë).

6) ուրանամ—հուն. ἀρνέομαι «հերքել, ուրանալ»—ալբ. nërroj (*rrenój) «ժխտել, ուրանալ» (յուրահատուկ իմաստ և ռնգային տարր, ընդ որում հայերենը ձայնավորմամբ շեղվում է՝ *ōr-՝ հուն. և ալբ. *ar-ի դիմաց)։

Որոշ հետազոտողներ [հմմտ. Климов, 1965, 21] նշում են նաև հայ-բալկանյան տիպաբանական ընդհանրություններ՝ եռադաս հոդ, սեռականի և տրականի ձևական համընկում, ապառնիի նկարագրական կազմություն և այլն։

գ) ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՀՈՒՆԱՐԵՆԻ ՎԱՂ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ինչպես արդեն նշել ենք հայերենի՝ հնդեվրոպական լեզուների մեջ գրաված տեղի հարցի քննության կապակցությամբ, հայերենը և հունարենը բնութագրվում են հնդեվրոպական մյուս լեզուներից առանձնացող ընդհանրությունների այնպիսի գծերով, որոնք խոսում են այդ երկու լեզվի ամենավաղ շփումների մասին։ Հենվելով Հ. Պեդերսենի, է. Շվիցերի, Ա. Մեյեի և Ջ. Բոնֆանտեի տվյալների վրա [Pedersen, 1924, 222. Schwyzer, 1939, 57. Meillet, 1936², 142. Bonfante, 1937, 15 և հջ.]՝ Վ. Պորցիգը հնդեվրոպական բարբառային տարբերակմանը նվիրված իր աշխատության մեջ թվարկում է այդ ընդհանրությունները և հայ-հունական վաղ շփումները հատկացնում այն շրջանին, երբ «երկու ժողովուրդների նախնիները ապրում էին Բալկանյան թերակղզու հյուսիսում։ Սա տանում է երկրորդ հազարամյակի սկզբները» [Porzig, 1954, 157]։ Այդպիսի ընդհանրություններ են համարվում հետևյալները. 1) հավելյալ սկզբնաձայնավորի առկայություն. ա) աստղ—ἀστήρ, բ) այր—ἀνήρ, գ) ատամն—ὀδοντ-, 2) սկզբնաձայնավորային ձայնդարձի միևնույն աստիճան՝ ինն—հոմ. εἰνά-, ատտ. ἐνα-. 3) զ-գենում—ἕννυμι. 4) ալի-ք—πολιός. 5) ծաղր, -ու—γέλως 6) աղամ—ἀλέω. 7) եփեմ—ἕψω. 8) աւր—ἦμαρ. 9) ձիւն—χιών. 10) սին—κενός. 11) մեծարեմ—μεγαίρω. 12) սիւն—κίων։ Պորցիգը հատուկ ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ դրանցից հինգը (5, 9, 10, 11, 12) գալիս են հայ-հունական նորաբանությունների այն շրջանից, երբ սատեմայնությունը չէր ձևավորվել, երկուսը (1, 2)՝ ձայնդարձային հին երևույթներ են, երեքը (3, 4, 9)՝ արխաիկ կազմություններ և երկուսը (6, 7)՝ տնային տնտեսությանը վերաբերող բառային յուրահատկություններ։

Իհարկե, Պորցիգի եզրակացությունները անվերապահորեն ընդունելի չեն. 1) վիճելի են նրա եզրակացությունները շփումների հյուսիս-բալկանյան տարածքի մասին. 2) բերված ընդհանրությունները մասամբ կարող են պարզապես հնդեվրոպա-բարբառային արժեք ունենալ, այսինքն՝ գնահատվել որպես բացառյալ (էքսկլուզիվ) զուգաբանություններ հենց հնդեվրոպական գոյության շրջանի համար. այլ կերպ ասած՝ հարկավոր է տարբերել հնդեվրոպա-բարբառային զուգաբանությունները հետագա շփումների հետևանքով առաջացած, այդ թվում՝ երկու լեզուների՝ իրարից և միևնույն աղբյուրներից կատարած վաղ փոխառություններից. 3) ընդհանրությունները հավասարարժեք չեն. եթե հնչյունական և ձևաբանական զուգահեռները խոսում են հնդեվրոպական միևնույն նյութի ձևափոխությունների մասին, ապա բառային զուգահեռները կարող են լինել ինչպես բարբառային զուգաբանություններ, այնպես էլ փոխադարձ և շրջակա լեզուներից կատարված փոխառություններ. 4) Պորցիգի եզրակացությունը հինգ կետերի՝ նախքան satəm խմբի ձևավորումը տեղի ունենալու մասին չեն համընկնում մեր ժամանակագրական պատկերացումների հետ. սատեմայնությունն ակնհայտորեն ընդհանուր հնդեվրոպական հիմք է ունեցել, և դրանով բնութագրվող միավորների ընդհանրությունը գալիս է հնդեվրոպական շրջանից [Djahukian, 1975]։

Եթե այս նույն սկզբունքներով մոտենանք, այսպես կոչված, բառային բացառյալ զուգաբանություններին, այսինքն՝ այն բառերին, որոնք ընդհանուր են միայն հայերենին և հունարենին, ապա կարելի է ասել հետևյալը։ Հ. Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» 1-ին մասում [1940, 86—87] բերում է այդպիսի 41 զուգաբանություն։ Գ. Ռ. Ջոլտան «Հայերենի տեղը հնդեվրոպական լեզուների շրջանում» գրքում որոշ ընտրությամբ թողնում է 27-ը, բայց դրանց միացնում է 25 այնպիսի բառեր, որոնք, այլ լեզուներում զուգահեռներ ունենալով հանդերձ, հայերենի և հունարենի դեպքում առանձնանում են այս կամ այն կարևոր ընդհանուր հատկանիշով [Solta, 1960, 462—466]։ Մեր տվյալներով, որոնք ճշտված են նորագույն աղբյուրներով, դրանց թիվը հասնում է շուրջ ութ տասնյակի [Джаукян и др., 1983]։ Այս բոլորի համադրությամբ առանձնացնենք այն բառերը, որոնք

1) մշակութային ակնհայտ արժեք ունեն և կարող են ընդհանուր փոխառություններ լինել, 2) իմաստով և ձևով այնքան մոտ են, որ կարելի է ենթադրել իրարից կատարած վաղ փոխառություն կամ փոխազդեցություն. 1) **ալեւր** (**ալիւր**), **-ոյ** — ἄλευρον. 2) **աղաւրի-ք** — ἀλετρία (հգն.) «աղացվածք, ալյուր», ἀλετρεύω (անվանածանց բայ) «աղալ». 3) **աղուէս** — ἀλώπηξ. 4) **աման, -ոյ** — ἀμνίον «զոհի արյան գավաթ»[6]. 5) **արդածին** — ἀρτιγένης. 6) **աւել** (**աւելել**) — ὄφελμα, ὄφελτρον (ըստ Հեսիքիոսի) (ὀφέλλω). 7) **աւթ** — ἰαυθμός. 8) **աւձի-ք** — αὐχήν «պարանոց». 9) **դակու** «սուրաց կամ կացին» — θηγάνη «հեսան». 10) **դամբան** (**դամբարան**) — τάφος «դամբան» (τάφρος «փոս», θάπτω «թաղել» (հմմտ. նաև ռուս. dîmb). 11) **եփեմ** — ἕψω (հմմտ. ակկադ. epû(m) «եփել, թխել, խորովել»՝ սեմ. *'pī. պատահական նմանությո՞ւն, թե ընդհանուր հայ-հունական փոխառություն). 12) **թարփ** «ձկնորսական կողով», **թարբ** «վանդակաձև հյուսվածք» — τάρπη (τάρπος) «ուռենու ճյուղից հյուսված մեծ կողով». 13) **թեղի** — πτελέα «ծփենի, կնձնի» (բայց հմմտ. լատ. tilia «լորենի»). 14) **թի** — πτεόν 15) **խստոր** — σκόροδον (σκόρδον, հմմտ. նաև ալբ. hurdhë). 16) **կաղին, -ոյ** — βάλανος. 17) **կամուրջ** — γέφυρα. 18) **ճեռիւն** — περόνη «քորոց». 19) **մոզի** — μοσχίον[7]. 20) **որս** — πόρκος «ուռկան, թարփ». 21) **ռումբ** «նետաքար, նիզակ» — ῥόμβος (ῥόμβος) «հոլ, գավ, թմբուկ, պտույտ» (ῥέμβομαι «թափառել, ման գալ» բայից. հմմտ. նաև ῥάμφος «ծուռ կտուց», ῥαμφή «կեռ դաշույն», ῥομφαία «թրակյան սուր»). 22) **ռունգն** — ῥύγχος «մռութ, կտուց» (հմմտ. նաև փռյուգ. δρουγγος «քիթ»). 23) **սիւն** — κίων. 24) **սուտ** — ψεῦδος:

Միանգամայն հնարավոր է, իհարկե, որ այս ընդհանրությունների մի մասը ուշ շրջանի լինի և պատկանի երկու լեզուների ընդհանուր փոխառությունների թվին՝ կատարված թերևս իրարից անկախ. այդպիսիք կարող են լինել, մասնավորապես. **խստոր** — σκόρ(ο)δον (ալբ. hurdhë, hudhrë), **ռումբ** — ῥόμφος, **ռունգն** — ῥύγχος զուգահեռները, մանավանդ որ վերջին երկու բառերում ձայնավոր նախահավելվածով **եր-** (**ար-**, **որ-**) կամ **եռ-** (**առ-**, **ոռ-**) ձևերի փոխարեն հանդիպում են բնիկ և վաղ փոխառված բառերի համար անսովոր **ռ**-ով սկսվող ձևեր։

դ) ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԱԼԲԱՆԵՐԵՆԸ

Հ. Պեդերսենը [Pedersen, 1906] և ավելի ուշ Վ. Պիզանին [Pisani 1950, 159] խոսել են հայ-ալբանական մերձավոր կապերի մասին և ի թիվս այլ ապացույցների բերել նաև բառային զուգաբանություններ։ Իր «Հնդեվրոպական լեզվոլորտի անդամատումը» գրքում Վ. Պորցիգը [Porzig, 1954] հայ-ալբանական հատուկ զուգաբանություններ չի տալիս։ Գ. Զոլտան [Solta, 1960] բերում է հայ-ալբանական բացառյալ (միայն երկուսին հատուկ) և մի երրորդ լեզու ընդգրկող մի քանի բառային զուգաբանություն.

1) դարձ (դառնամ<*դարձնամ, աոր. դարձայ)—ալբ. dredh «պտտել, ոլորել, դարձնել. մանել». այլ հետազոտողներ սրանց ավելացնում են իրանական (պրսկ. darz «թել», պահլ. darzīk «դերձակ». հավանաբար իրան. աղբյուրից են հայ. **դերձան**, **դերձակ**, **ճանդերձ**), խեթական (tarna- «թողնել») և թոխարական (Ա tärna-, tärk- «թողնել, արձակել») բառեր, բայց սրանց պատկանելությունը Զոլտան կասկածելի է համարում և խոսում հայ-ալբանական բացառյալ զուգաբանության մասին.

2) գինդ—ալբ. vëth «գինդ». հ.-ե. այլ լեզուներում *ṷendh- արմատն այսպիսի անվանական կազմությամբ չի ներկայացված.

3) դայլ—ալբ. dhallë «մածուն» (իմաստա-ածանցական զուգաբանություն) (?)։

Երկու այլ դեպքերում հայ-ալբանական զուգաբանությունները առանձնակի չեն.

1) թարմ—ալբ. trim «քաջ». հ.-ե. *-m-ով ձև ունի նաև հունարենը՝ τράμων «փափուկ». ինչպես տեսնում ենք, այստեղ ըստ կազմության առկա է հայ-հունա-ալբանական զուգաբանություն, որտեղ իմաստով հայերենը և հունարենը ավելի մոտ են.

2) միս—ալբ. mish — թոխ. B misa (հգն.) (*mēns-<*mēms-) կան նաև այլ զուգահեռներ, բայց ամենից ավելի մոտ են այս երեք լեզուների ձևերը։

Հայ-հնդեվրոպական բառային զուգաբանությունների մեր ցանկում տեղ են գտել հայ-ալբանական հետևյալ բացառյալ զուգաբանությունները.

1) բիբ «մի թռչուն» (բնաձ. բառ. հմմտ. բիբեմ, բբեմ)— ալբ. bibë «ճուտ, հնդկահավ» (հմմտ. նաև հուն. πίφιγξ, πιφαλλίς «մի թռչուն»?) (հ.-ե. *b(h)ib(h)-՝ *pip-ի կողքին).

2) գինդ — ալբ. vëth «գինդ, ականջող» (հ.-ե. *ṷendh-).

3) բ. կոտուկ «խոչակ, խոչափող» — ալբ. zgurdhë «փորոտիք» (հ.-ե. *gʷer-).

4) որջիլ — ալբ. erjgëz «մանր ոջիլ, անիծ» (հ.-ե. *er(e)gh-՝ *erek-ի կողքին).

5) որթ (խաղողի) — ալբ. (h)ardhi «խաղողի վազ, որթ». սակայն հնարավոր է համարվում հայ. բառի համեմատությունը նաև հուն. πτόρθος «ընձյուղ, բողբոջ» բառի հետ, որին կասկածով միացվում է նաև լատ. pertica «ձող» բառը [Pok., 1, 1959, 823],

6) սեռն «գուտ. սերտ, խիտ» (սեռնիմ «լցվել, խտանալ») — ալբ. thjerrë «ոսպ» (*«սնունդ») (նույնածանց կազմություն՝ *k'er-n-՝ *k'er- «աճել, աճեցնել, սնել» արմատից)։

Եթե ճիշտ է հատկացվում ալբ. dhallë «մածուն» բառը հ.-ե. *dhēl- արմատին, ապա առկա է հայ. **դայլ** — ալբ. dhallë իմաստա-բառակազմական զուգահեռը։

Բառային այս զուգադիպություններից կարևոր են մասնավորապես **գինդ** — vëth և **որթ** — hardhi զուգահեռները, որոնք մշակութային հատուկ արժեք ունեն։ Մյուսներից քիչ թե շատ էական է **որջիլ** — ergjëz զուգահեռը։ Հետաքրքրական է նշել, որ **որթ** — hardhi զուգահեռը հիշեցնում է նաև թրակյան ardao «գինի» բառը [Hamp, AID, 112] և ենթադրում է ընդհանուր մշակութային աղբյուր-փոխառություն։

---

[6] Սովորաբար կապում են ἀμάω «հավաքել» բայի հետ [հմմտ. Pok., 1, 901], սակայն այլ հետազոտողներ ժխտում են այդ կապը [հմմտ. Chantraine, DELG, 1, 76]։

[7] Հետաքրքրական է նշել, որ Վ. Բրանդենշտայնը [Brandenstein, "Festschrift Debrunner", 82] այս բառը կապում է մուշկերի անվան հետ։ Վերևում նշվեցին բալկանյան և ոչ բալկանյան այլ զուգահեռներ ևս (ալբ., ռում., վենետ.)։

ե) ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԴԱԿԵՐԵՆԸ

Վ. Գեորգիևը [Георгиев, 1957. 1958 և այլն] առաջինն է փորձել հնչյունական որոշակի առանձնահատկությունների հիման վրա առանձնացնել դակերենը (դակամիսիերենը) թրակերենից. նախորդ հետազոտողների մոտ դակյան լեզվական մնացորդները սովորաբար տրվել են թրակերենի մնացորդների անվան տակ [հմմտ. Detschew, 1957]: Գեորգիևն էլ հենց առաջին անգամ փորձել է ցույց տալ ռումիներենում որպես դակյան ներթաշերտ հանդես եկող բառերի մեջ այնպիսի մի զուգադիպություն, ինչպիսին է ռում. <դակ. z- (հմմտ. ռում. zgîi)—հայ. գ-: Հայ-դակամիսիական զուգադիպումների հարցը հետագայում հատուկ քննության է արժանանում մեր [Ջահուկյան, 1968. 1970], ապա Ջ. Գրեպինի [1976] և, ավելի հանգամանորեն, Ֆ. Բալտացեանուի (Băltăceanu, 1979. 1980) աշխատություններում:

Թրակերենի մնացորդներից դակերենի տարրերի առանձնացման հետ միասին ռումիներենի ուսումնասիրողները ընտրել են մի երկրորդ ուղի՝ փորձելով ռումիներենի մեջ տարբերել ներթաշերտային այն բառապաշարը, որի մեջ, անշուշտ, էական բաժին ունի դակերենը: Զուգահեռաբար նրանք փորձել են առանձնացված նյութը հիմնավորել նաև հայերենի փաստերով [հմմտ. վաղ փորձերի համար **Hasdeu**, 1875. 1887—1898 և հետագայում՝ **Reichenkron**, 1958. 1960. 1966a,b. **Poghirc**, 1967. 1973. **Russu**, 1967]: Այս ուսումնասիրողների մեջ մեր նպատակի համար հատուկ հիշատակության արժանի է Գ. Ռայխենկրոնը, որ փորձում է ռումիներենի ներթաշերտի առանձնացումը կատարել մասնավորապես հայերենի հետ համեմատելու միջոցով: Դակերենի տարրերն առանձնացնելիս (թվով 130 բառ) նա ելնում է մի կողմից՝ հնդեվրոպական նախաձևերից, մյուս կողմից՝ ալբաներենի և հայերենի տվյալներից: Ըստ հեղինակի՝ դակերենը, հայերենի նման, երկշերտ է՝ բաղկացած թրակերենին մոտ արևելյան և իլիրերենին մոտ արևմտյան շերտերից: Հայերենի շերտերից մեկը, ըստ Ռայխենկրոնի, բալկանյան ծագում ունի և դակերենի հետ միասին կազմում է թրակերենի մի ճյուղը: Մասնավորապես նա նշում է միայն հայերենում, հունարենում և դակերենում պահպանված որոշակի թվով բառերի նախահնդեվրոպական ծագումը: Սրանց հետ միասին նա հայերենի համար կարևոր է համարում կառուցվածքային այնպիսի գծերի առկայությունը, ինչպիսիք են հ.-ե. *o-ի երկակի արտացոլումը (*o>o և *o>a), բաղաձայնների տեղաշարժը, «s+բաղաձայն» խմբերի յուրատեսակ փոփոխությունը, հ.-ե. *to- և *g'hō նախամասնիկների առկայությունը: Բառապաշարի բնագավառում Ռայխենկրոնը կատարում է հայ-ռումինա-հունական և հայ-ռումինական մի շարք համեմատություններ, որոնք մասամբ հիշվեցին հայերենի բառային «բալկանիզմների» քննության կապակցությամբ. արդն — ռում. andrea. (յ)աւելում — հուն. ὀφέλλω — ռում. învolt, învoalbe. բեկանեմ — ռում. a bocăni, boacan. թաւալեմ — ռում. a tăvăli. թուփ — ռում. tufa. լքանեմ — ռում. a lehai, a lehni. ձոյլ — ռում. zoae. մեզ — ռում. (tă)mînzi, comînji. սիւն — հուն. χίων — ռում. (< դակ.) ţîu. սխալիմ — ռում. (<դակ.) scilcia. ստեպ — ռում. teafăr. տոփեմ — ռում. a zdupăi, dupac. փերթ — ռում. a fărima և այլն: Հնդեվրոպական աղբյուրից բխեցվող այս համեմատությունների կողքին բերվում են նաև այնպիսիները, որոնց հնդեվրոպական ծագումը (մանավանդ հայերենի դեպքում) հավաստիորեն չի ապացուցվում՝ շարժեմ — ռում. a scorni (բխեցվում են հ.-ե. *(s) ker-ից): Այս նույն ձևով Հաժդեուն ավելի վաղ փորձել է համեմատել հայ. շիրիմ-ը ռում. şiroadă «տակառ, չան», şirimpiu «շրանցք» բառերի հետ:

Ռայխենկրոնի համեմատությունները կամ անհավաստի են, ինչպես նշվել է հետազոտողների կողմից, կամ չեն խոսում հայ-դակյան հատուկ կապերի մասին (հայերենը զուգահեռներ ունի նաև այլ լեզուներում): Դրանցից մի քանիսի մասին մենք առիթ ունեցանք խոսելու հայ-բալկանյան ընդհանուր զուգադիպությունների հարցի կապակցությամբ: Ավելորդ ենք համարում խոսել այլ հեղինակների առաջարկած առանձին զուգադիպությունների մասին, որոնք միևնույն բնույթի են:

Դակերենի մնացորդների մեջ բավականին մեծ թիվ են գրավում բուսանունները, անձնանունները, ցեղանունները և տեղանունները: Սրանց համեմատությունը հայերենի հետ հատուկ մերձավոր կապեր չի բացահայտում: Ջ. Գրեպինը [1976] փորձել է որոշել հայերենի՝ դակերենից կատարած փոխառությունները: Հայերեն բառերի՝ դակերեն և ռումիներեն բառերի հետ ունեցած նմանության հիման վրա նա նշում է 5 այդպիսի բառ.

1) դեղ «խոտ, դեղ» — դակ. dela «խոտ, դեղ».
2) դեղին — դակ. διέλεινα «բաց գույնի բույս».
3) դրուագ — դակ. dru- «փայտ».
4) դուն «մի տեսակ մոլախոտ» — դակ. δυν «եղինջ (urtica)».
5) արդն — ռում. andrea (դակ. arden):

Սրանցից արդն-ի մասին մենք առիթ ենք ունեցել խոսելու. այն ավելի շատ կարելի է համարել ընդհանուր բալկանիզմ, քան դակյան փոխառություն, եթե մերժենք հայ. բառի կապը լիտվ. և թրակ. բառերի հետ: Մյուս բառերից դրուագ «սյունագլխի զարդ» բառի բխեցումը դակ. dru «փայտ» բառից և համեմատաբար ուշ հանդիպող դուն «մի տեսակ մոլախոտ» բառի համեմատությունը դակ. δυν «եղինջ (urtica)» բառի հետ՝ կասկածելի են, մանավանդ որ δυν-ի մեկնաբանությունը և ստուգաբանությունը հավաստի չեն: Ինչ վերաբերում է դեղ (հմմտ. խաշն-դեղ, ճակն-դեղ, կապն-դեղ) և -dela -δηλα, -δι(λ)α (հմմտ. δουόδηλα, πραδιλα, προπεδιλα, teudila), դեղին և διέλεινα «բանջի, բարբառ (ծանավոր խոտ)» զուգադիպումներին, ապա դրանք ավելի հավանական է կապել ցեղակցական կապով (եթե, մանավանդ, գալիս են *dhel-ից, ինչպես կարծում են Դեչևը և Ռուսուն, և ոչ *g'hel-ից, ինչպես կարծում է Գեորգիևը). նկատենք, որ հայ դեղ-ը ունի նաև այլ ածանցներով ձևեր՝ դեղձ, դեղր, իսկ դեղին-ը իմաստով հեռու է դակ. διέλεινα բուսանունից և ունի ավելի լայն ու ընդհանուր իմաստ. թերևս հնարավոր լիներ հակառակ փոխառություն ենթադրելը, եթե ընդհանրապես խոսք կարող է լինել փոխառության և ոչ թե ցեղակցական կապի մասին. վերջին դեպքում էլ պետք է նշել բառակազմական ակնհայտ մերձավորությունը:

Հետաքրքրական է նշել, որ դակյան մի շարք բուսանուններում -δηλα, -δι(λ)α բաղադրիչների փոխարեն հանդիպում է -zila-ն (հմմտ. usazila), որ Ռուսուն բխեցնում է *g'il-ից՝ բերելով նաև հայ. ծիղ-ը (Բալտացեանուն ավելացնում է և ծիլ-ը. անկախաբար մենք էլ հայ. ծիլ-ը և ծիղ-ը բխեցրել ենք միևնույն աղբյուրից):

Այլ տիպի համեմատություններից հիշենք Δρομιχαίτης դակյան անձնանվան տոմաշեկյան Տրամախայր մեկնությունը, որ անհավանական է. ավելի հավանական է [illegible] բաղադրիչը համեմատել հայ. խայտ-ի հետ [Ջահուկյան, 1970, էջ 57։]

Եթե ճիշտ է Գեորգիևը, որ դակ. Vedea ջրանունը կապում է հ.-ե. *u̯ed- >հայ. գետ բառի հետ, ապա առկա է հայ-դակյան ծագումնային մերձավոր կապ (բայց ոչ փոխառություն)։

Ինչ վերաբերում է Ջ. Գրեպինի բերած այն զուգահեռներին, որոնց դակյան եզրերը նա վերականգնում է ըստ վերջինիս համար սահմանված հնչյունական համապատասխանությունների, ապա դրանք անհավատալի պետք է համարել՝ բերդ (իրականում սա սեմական ծագում ունի), գրէ (գրեայ) «կռունկ», տուռն «շեղջ, կույտ», տրորեմ, պար, տապար (այժմ ցույց է տրված, որ իրանական ծագում ունի), կուր «նավակ, մակույկ» (<հ.-ե. *gur-?)[8], կուր «վնասակար միջատ»։ Սրանցից գրէ (գրեայ) բառը զուգահեռ ունի ռում. grui «կռունկ» բառի մեջ (Գրեպինն այս զուգահեռը չի նշում), որը Ռուսուն [Russu, 1970] հիշում է տեղական շերտի պատկանող և ալբաներենում զուգահեռներ չունեցող բառերի թվում, բայց որը իրականում գալիս է լատ. grus, սեռ. gruis «կռունկ» բառից։ Այս բառերի մեջ տրված է նաև măceș «մասրենի» բառը, որ հիշեցնում է հայ. մասուր-ը։

3. ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԵՆԹԱՇԵՐՏԻ ՀԱՐՑԸ

ա) ՀԱՐՑԱԴՐՈՒՄԸ

Պ. Կրեչմերի «Հունարեն լեզվի ներածություն» աշխատությունից [Kretschmer, 1896] հետո լայն հիմքեր է նետում այն կարծիքը, որ նախքան հնդեվրոպացիների տարածվելը Փոքր Ասիայում և հարակից շրջաններում տիրապետող են եղել ոչ հնդեվրոպական լեզուները և ժողովուրդները։ Այս տեսակետի հետ են կապված, այսպես կոչված, միջերկրական ու ասիանիկ լեզուների և հնդեվրոպական լեզուների մեջ համապատասխան ենթաշերտերի առկայության վերաբերյալ վարկածները։ Եթե ասիանիկ լեզուների վարկածը, որ պաշտպանվում էր նաև հայ հետազոտող Գ. Ղափանցյանի կողմից, XX դարի երկրորդ կեսին դադարում է ուշադրություն գրավելուց (պարզվում է ասիանիկ կոչված լեզուների ծագումնային տարասեռությունը), ապա միջերկրական ենթաշերտի վարկածը, որ ժամանակին պաշտպանվել է Ա. Մեյեի ու նրա հետևողությամբ, Հ. Աճառյանի կողմից, շարունակում է լայն ուշադրության առարկա լինել։ Միջերկրական ենթաշերտի պրոբլեմին XX դարի երկրորդ կեսին նվիրված աշխատություններից հիշատակենք Բ. Տեռաչինիի [Terracini, 1951], Վ. Չիխարժի [Čihař, 1954], Ջ. Ալեսիոյի [Alessio, 1955], Յ. Հուբշմիդի [Hubschmid, 1960, 1961, 1964], Դ. Հեստերի [Hester, 1968], Վ. Գեորգիևի [Georgiev, 1961, 1981] հոդվածներն ու գրքերը։ Այս հետազոտողների մի մասը շարունակում է աշխատանքը միջերկրական ենթաշերտի ընդհանուր առանձնահատկությունները, հասարակ և հատուկ անունները բացատրելու ուղղությամբ, մյուսը, հատկապես Վ. Գեորգիևը, բացառում է միջերկրական ենթաշերտի գաղափարն ընդհանրապես։ Բնականաբար ենթադրվում է, որ միջերկրական քաղաքակրթությունը և միջերկրական շրջանի լեզուները ազդել են ոչ միայն հունարենի, այլև հայերենի վրա՝ առաջ բերելով ոչ ցեղակցական ընդհանրություններ։ Իր «Հայոց լեզվի պատմություն» 1-ին մասի «Միջերկրական կամ էգեական քաղաքակրթության ազդեցությունը» գլխում Հ. Աճառյանը [1940, 100—104] հակիրճ կերպով խոսելով հունարենի և լատիներենի վրա այդ քաղաքակրթության թողած ազդեցության մասին, անցնում է հայերենի մեջ միջերկրական բառերի առկայության հարցին։ Նա տարբերում է փոխառությունների երկու շերտ՝ 1) անուղղակի՝ հիմնականում հունարենի, մասամբ էլ այլ լեզուների միջնորդությամբ, և 2) ուղղակի՝ «այն ժամանակվա, երբ հայերը գտնվում էին դեռ եվրոպական հողի վրա և շփման մեջ էին Միջերկրականի և էգեական ծովի շրջաբնակ ազգերի հետ»։ Վերջիններիս մեջ նշվում են հետևյալ չորս բառերը. 1) գինի — հուն. Fοινος (լատ. vinum. հնդեվրոպական լեզուներից փոխ են առել կովկասյան և ֆիննա-ուգրական լեզուները, ըստ ոմանց՝ միջերկրական աղբյուրից են ծագում նաև սեմականները). 2) իւղ (եւղ) — հուն. ἔλαιον «ձեթ», ἐλαία «ձիթենի» (լատ. oleum, olivum «ձեթ»). 3) թուզ — հուն. τῦκον (σῦκον), լատ. ficus. 4) սպունգն — հուն. σφόγγος, σπόγγος, լատ. — fungus։

Ի՞նչ կարելի է ասել այս ընդհանրությունների մասին։ 1) Ինչպես արդեն գրել ենք, հնարավոր է գինի բառի հնդեվրոպական ստուգաբանությունը՝ *u̯ei- «ծռել, ոլորել» արմատից (որպես «գալարվող»), թեև սեմական *u̯ainu-ն (արաբ., եթովպ. u̯ain, եբր. jajin, աքկադ. īnu) վկայում է սեմա-հնդեվրոպական հնագույն կապերի մասին. հայերենի օրինաչափ համապատասխանությունը հ.-ե. նախաձևին խոսում է հայերեն բառի ոչ փոխառյալ լինելու օգտին։ 2) Վ. Գեորգիևը [Georgiev, 1960, 48] հակված է հ.-ե. ծագում վերագրել նաև հուն. ἔλαιον-ին՝ այն հանգեցնելով հ.-ե. *loi-u̯o նախաձևին՝ e- նախահավելվածով. հմմտ. լիտվ. lãjus «ճարպ». սակայն նախ՝ լիտվ. բառը փոխառություն է համարվում բելոռուսերենից [Fraenkel, LEW, 1, 335], երկրորդ՝ հուն. բառը նշանակում է բուսայուղ (ձեթ), մինչդեռ լիտվականը՝ կենդանական յուղ (ճարպ). երրորդ՝ Գեորգիևը իր վերականգնման ժամանակ նկատի չի ունենում հայերենը, որի ձևը հնարավոր չէ բխեցնել ոչ *loi-u̯o-ից, ոչ էլ անմիջաբար հունարենից։ Մնում է իրոք ենթադրել մեկ ընդհանուր աղբյուր և այն էլ սեմականից տարբեր, որովհետև սեմականում կա ձեթի այլ անվանում (հմմտ. ասոր. zēt>հայ. ձէթ)[9]։ 3) Թուզ բառը չի կարող բխեցվել հունարենից, և նրա համար պետք է ենթադրել մի այլ աղբյուր՝ *tugh- տիպի նախաձևով, որի մեջ խուլի և շնչեղ ձայնեղի զուգակցումը հնդեվրոպականի համար բնորոշ չէ (եթե *gh-ն աճական չէ), միաժամանակ հայերենի աղբյուրի համար շնչեղ ձայնեղի ենթադրումը անսովոր է, բայց հնարավոր։ 4) Սպունգն բառի մեջ o>ու անցումը ռնգայիններից առաջ հայերենում իրոք ենթադրում է հին փոխառություն. հայերենի բուն հունական փոխառությունների մեջ ε>ի և o>ու անցումները նշված դիրքում սովորական չեն։ 5) Սպունգն բառից տարբեր, բայց ծագումնային առումով նրան մոտ աղբյուրից է ծագում հավանաբար նաև սունկ(ն) բառը, թեև Հ. Աճառյանը, հետևելով Ս. Բուգգեին ու Հ. Պեդերսենին և հակատության մեջ ընկնելով հուն. σπόγγος-ի ու հայ. սպունգն-ի մասին իր ասածի հետ, այն բխեցնում է հ.-ե. *spongos նախաձևից (ըստ է. Լիդենի՝ *spongos>*psongos> սունկ): Հայերենին զուգահեռ բառեր առկա են նաև կովկասյան լեզուներում՝ վրաց., մեգր., ճան. soko-, սվան. sok(w)-, բժժխ., դունդ. зокіо, ցեզ. зikly, բացբ. зoki. սրանց համար ենթադրվում է կամ փոխառություն հայերենից (Աճառյան), կամ ընդհակառակն (Կլիմով): Բոլոր դեպքերում էլ մնում է ենթադրել հայերենի և հունարենի որոշ բառերի համար լեզվական ընդհանուր աղբյուրներ, որոնց «միջերկրական» անվանումը պայմանական պետք է համարել: Նախքան հայերենի և հունարենի ընդհանուր փոքրասիական և լայն առումով, առաջավորասիական աղբյուրների քննությանն անցնելը մի քանի խոսք ասենք «միջերկրական» կոչվածի առանձնահատկությունների և սրանց՝ հայերենի առանձնահատկությունների հետ ունեցած կապի մասին:

---

[8] Հմմտ. նաև միկեն. հուն. ki-u-ro-i, որ համարում են սեմ. աղբյուրից (եբր. kiyy «աման»)։ Եթե հայ. կուր-ը կապ ունի ֆինն. kulru «մակույկի տեսակ» (բրր. kul «գդալ») բառի հետ, ապա ավելի հավանական է հայ. բառի հնդեվրոպական ծագումը։

[9] Աքկադ. ellu(m) «քունջութի լավ ձեթ» բառը հակված են կապելու ellu(m) «մաքուր» բառի հետ [հմմտ. Soden, AHW, 1, 205], որ, սակայն, կասկածելի է (փոխառություն՝ բաղարկությամբ հանդերձ)։

Վ. Ջիխարձը, որի վրա մենք հենվելու ենք ստորև տրվող բնութագրության մեջ, լայնացնում է միջերկրական ենթաշերտի գաղափարը՝ խոսելով «հնեվրոպական ենթաշերտի» մասին (Պ. Ցուշեի տերմինը): Ի մի բերելով նախորդ, հատկապես իտալական, հետազոտողների տվյալները՝ Ջիխարձը նշում է «միջերկրական լեզուների» մի շարք առանձնահատկություններ, որոնք մենք կքննենք հայերենի առանձնահատկությունների հետ ունեցած հարաբերության մեջ:

բ) ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1) Միջերկրական ենթաշերտի համար բնորոշ է ձայնեղների խլացումը և պարզ խուլերի շնչեղացումը (հմմտ. Padus—Patavium—տեղանուն, Adri—Atri — տեղանուն, bala—pala, κυπάρισσος — κυφάρισσος և այլն), մի բան, որ զուգահեռ ունի բաղաձայնների գերմանական և հայկական տեղաշարժերի մեջ. ահա թե ինչու Հ. Գյունտերը այդ տեղաշարժերի մեջ տեսնում էր ենթաշերտի ազդեցություն, իսկ Վ. Բրանդենշտայնը հայկական տեղաշարժը վերագրում էր տիռենյան ազդեցությանը: Ինքը Ջիխարձը հերքում է այդ կարծիքը՝ հայկական տեղաշարժը համարելով մ. թ. ա. VII դ. ոչ վաղ Նշենք, որ այս կարծիքը հիմնավորված չէ, և այժմյան շատ հետազոտողներ տեղաշարժը հակված են համարելու հնդեվրոպական բարբառային զուգաբանություն:

2) Բառասկզբում բացակայում է r-ն, մի երևույթ, որ լայնորեն տարածված է Փոքր Ասիայում և Կովկասում. այդպես է վիճակը նաև հայերենում:

3) L և r ձայնորդների հերթագայությունը (cala—cara, tala—tara, Holconius—Horconia vitis և այլն) տարածված է տարբեր լեզուներում (ըստ Ջիխարձի՝ նաև հայերենում(?)):

4) Առկա է շրթնային b—m հնչյունների հերթագայությունը. այս առումով նշենք հուն. γέφυρα և հայ. կամուրջ, հուն. ἦμαρ — հայ. աւր բառերի փոխհարաբերությունը, բառեր, որոնց (մանավանդ երկրորդին) վերագրվում է հնդեվրոպական ծագում, և որոնց φ—մ, μ—ւ համապատասխանությունը դժվար բացատրելի է:

Միջերկրածովյան ենթաշերտի բաղաձայնական համակարգի համար բնորոշ է պարզ և կրկնակ բաղաձայնների հերթագայությունը (baca—bacca, cara—carra և այլն). այս երևույթը չկա հայերենում, որի համար բնորոշ է կրկնակի բաղաձայնների պարզումը (միայն թե rr-ն անցնում է ռ-ի):

5) Միջերկրածովյան ենթաշերտի համար բնորոշ է a ձայնավորի առատությունը. այս երևույթը բնորոշ է նաև հայերենին:

6) Արևելյան Միջերկրածովքի, Արևելյան Անատոլիայի և Հայաստանի համար բնորոշ է a- նախահավելվածի առկայությունը:

Հայերենը չի բաժանում երկու էական առանձնահատկություն՝ 1) a և e ձայնավորների հերթագայությունը (tala—tellus «հող») և 2) առաջնավանկային շեշտը, թեև առկա է ուժային (ոչ երաժշտական) շեշտ, ինչպես միջերկրածովյան ենթաշերտում:

գ) ՁԵՎԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

1) Միջերկրական ենթաշերտի համար բնորոշ է քերականական սեռի բացակայությունը, մի առանձնահատկություն, որ կա և հայերենում. այստեղ հնդեվրոպական քերականական սեռը վերացել է:

2) Առկա է հոգնակիի -r- կազմիչը, որը բնորոշ է նաև հայերենի հավաքական կազմություններին (-եար>-եր):

3) Միջերկրական ենթաշերտի համար բնորոշ՝ բուսանունների և կենդանական անունների կրկնավոր կազմության հատկանիշը հաճախ բաժանում է և հայերենը, բայց այս դեպքում քիչ հավանական է ազդեցություն ենթադրել:

4) Դժվար է որոշակի բան ասել առանձնացվող ածանցների մասին (-itanus, -esso/-isso, -anka/-enka- -ax, -ex, -ix. -ena, -an-, -te, -etio, -eta- (-etan, -ate), -assos, -inthos և այլն), որոնց մի մասն այժմ մեկնաբանվում է որպես հնդեվրոպական (-inthos, -assos և այլն), մյուսների հարաբերությունը հայերեն համապատասխան ածանցների հետ պարզ չէ. Հնարավոր է պատահական զուգադիպություն, ինչպես միջերկրածովյան տեղանվանական -ena (Cadena, Artena և այլն) և Ուրարտուի ու Հայաստանի տեղանվանական -en, -in- ածանցների դեպքում: Պատահական չէ՞ արդյոք րասանգ, ժառանգ, խոշտանգ բառերի -անգ-ի նմանությունը միջերկրական -anka ածանցին:

դ) ԲԱՌԱՊԱՇԱՐ. ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԵՎ ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲԱՌԵՐ

Միջերկրական ենթաշերտի բառապաշարի համար բնորոշ բառերը պատկանում են հատկապես երկու հիմնական խմբի՝ 1) երկրաձևային-տեղանվանական և 2) միջերկրածովյան բուսական աշխարհին վերաբերող: Իւղ, գինի, ուզ, սպունգն, սունկն բառերի մասին արդեն ասվել է. այստեղ կանգ առնենք այլ հնարավոր զուգահեռների վրա: 1) Հայ. քար բառի մասին արվում է երկու ենթադրություն. այն սովորաբար վերագրվում է հնդեվրոպական *kar- «կոշտ» (և «քար») կամ *(s)ker- «կտրել» արմատներին՝ հնդեվրոպական այլ զուգահեռներով (հ. իռլ. carrac «ժայռ», հ. կիմր. carrecc «քար, ժայռ», հ. կոռն. horgu «քարակույտ» և այլն). սակայն կան հետազոտողներ, որոնք այդ բոլորը, հայերենով հանդերձ, բխեցնում են միջերկրական ենթաշերտից (cara/carra «ժայռ, քար»). որոշ հետազոտողներ քար-ի հետ են կապում քարկառ «քարակույտ» բառը, բայց ըստ Աճառյանի այն կառ արմատի կրկնավոր ձևն է։ 2) Հայ. թաղ-ել «հողի տակ ծածկել» բայի արմատը թերևս կապված է միջերկրական համարվող tala «հող, երկիր» (tara, tarra տարբերակներով) բառի հետ. 3) հայ. կամուրջ-ի և հուն. γέφυρα -ի՝ հնդեվրոպական աղբյուրից բխեցնելու փորձերը քիչ համոզիչ են, և թերևս հնարավոր է ենթադրել ընդհանուր աղբյուր՝ միջերկրականին հատուկ φ/m հերթագայությամբ և -ur- ածանցական մասնիկով. 4) հայ. կաղամախ բառը, որ զուգահեռներ ունի կովկասյան լեզուներում և թրակ. καλαμιν-δαρ (-δαρ՝ «ծառ») բառի մեջ կարող է պատկանել այս ենթաշերտին [Сараджева,1981, ИФЖ, 4,227—229], 5) հայ. աղտիւր, եղտիւր «ճահիճ» բառը՝ a/e հերթագայությամբ (եթե, իհարկե, բառը հնդեվրոպական ծագում չունի, և հերթագայությունը ուշ բնույթի չէ՝ ըստ նախահավելվածային ձայնավորի) միջին օղակներով կարող է կապված լինել պիրենեա-լիգուրա-ալպիական շրջանի sala «ճահճային վայր» բառի հետ. 6) հայ. վազ (խաղողի) բառը Հ. Աճառյանը [ՀԱԲ, 4², էջ 293]. կապում է վազ-ել «ցատկել» բայի հետ, բայց թերևս հնարավոր է կապ տեսնել միջերկրական baca «վազ» (հմմտ. լատ. baca «պտուղ», թերևս նաև Βάκχος աստծու անունը) բառի հետ՝ ինչ որ միջին օղակով։

Սովորաբար կամ միջերկրական, կամ արևելյան ծագում է վերագրվում հայ. սրինգ և հուն. σῦριγξ, -ιγγος բառերին (Հ. Ֆրիսկ, Պ. Շանտրեն և ուրիշներ), որոնք Հ. Աճառյանը բխեցնում է փոքրասիական աղբյուրից, արևելյան ծագման մասին է խոսում արևելքում տարածված զուռնա բառը, որ ամենայն հավանականությամբ կապված է այս բառերի հետ (հմմտ. նաև հիեր. լուվ. šurna «եղջյուր»?)։ Հունարենի հետազոտողները նշում են σῦριγξ, σάλπιγξ, φόρμιγξ երաժշտական գործիքների համար բնորոշ ընդհանուր -ιγγ- ածանցը։

Միջերկրական ենթաշերտի քննության հարցն ավարտենք հայերեն և հունարեն՝ ծագումով ընդհանուր մի զույգի մատնանշումով, որի համար նույնպես ենթադրվում է, թեև որոշ կասկածով, միջերկրական կամ էգեական ընդհանուր աղբյուր՝ գարի—հուն. κρῖ, κριθή. Թեև հունարեն բառերը փորձում են հանգեցնել հ.-ե. *g'herzd(h)- նախաձևին, բայց թե՛ հայերենի, թե՛ հունարենի համար կան հնչյունական դժվարություններ, և հնարավոր է համարվում այստեղ տեսնել էգեական ծագում ունեցող թափառող բառ (հմմտ. նաև վրաց. keri) [տե՛ս **Frisk**, GEW, 2, 18—19. **Chantraine**, DELG, 2, 583]։

Հայ. կասկ «շագանակ» (կասկենի «շագանակենի») և հուն. κάστανα զույգի համար ավելի հնարավոր է համարվում փոքրասիական ընդհանուր աղբյուր ունենալը, քան թե մեկի մյուսից (հայերենի՝ հունարենից կամ հունարենի՝ հայերենից) ծագած լինելը [հմմտ. **Frisk**, GEW, 1, 799. **Chantraine**, DELG, 2, 504]։

Ընդհանուր առմամբ հայերեն և հունարեն մի շարք բառերի աղբյուրը փնտրում են փոքրասիական լեզուների մեջ. բացի վերևում հիշված հայ. սրինգ—հուն. σῦριγξ, հայ. կասկ—հուն. κάστανα բառերից, Աճառյանը փոքրասիական ծագում է վերագրում նաև հետևյալ բառերին. 1) կարիճ — καρί-, -ίδος «խեցգետին», հունարենի ավելի նոր հետազոտողներից Հ. Ֆրիսկը καρίς-ը համարում է հուն. κάραβος «ծովախեցգետին» բառի կրճատ ձևը, ընդ որում Պ. Շանտրենը վերջինս բխեցնում է միջերկրական աղբյուրից. 2) սեխ — հուն. σικύα, σεκούα «դդում կամ սեխ» (ըստ Հեսիքիոսի), σίκυος «վարունգ», փոքրասիական աղբյուր ենթադրելը կասկածելի է. 3) փանդիռն — πανδοῦρ (φάνδουρος, πανδούριον). հնարավոր է, իրոք, փոքրասիական, հատկապես լյդիական ծագում, թեև կան նաև այլ վարկածներ. հմմտ. նաև վրաց. panduri, չեչ. pondur, օս. fändur (-ur) և այլն. 4) արագիլ — πελαργός. ավելի տարածված է հուն. բառի՝ բարդություն լինելու կարծիքը՝ *πελαϝ-αργός «սևվուն սպիտակ». եթե վերջինս ճիշտ է, ապա կամ նմանությունը պատահական է, կամ հայերենը շատ հին փոխառություն է հունարենից. քիչ հավանական է հայ. բառի շումերական ծագման վարկածը (Ղափանցյան)՝ arikgi-lim «երկարոտն մի թռչուն» բառից։

Հ. Աճառյանի բերած աղիւս— ἄλιψ (և λίψ) «քար» զուգահեռը անհավանական է և՛ իմաստային, և՛ ձևական առումով. alips-ի վերջին s-ն վերջավորություն է, իսկ հիմքը համեմատվում է նախասեմական libba «քարի սալիկ» բառի հետ (հմմտ. նաև հուն. ἠλίβατος «զառիվեր, բարձր») [**Furnée**, 1972, 378], մինչդեռ Աճառյանը -s-ն դիտում է որպես հայ. բառի բաղադրիչ, այսինքն՝ հայերենի համար հիմք է ընդունում հուն. ձևը։

Ինչ վերաբերում է Հ. Աճառյանի որպես փոքրասիական նշած ագարակ, ասուած, սայլ բառերին, ապա դրանցից երկրորդի մասին կխոսվի տարբեր առիթներով, ագարակ բառի մասին՝ հնդեվրոպա-սեմական առնչությունների կապակցությամբ։ Սայլ բառը համարվել է կամ բնիկ հայ-փռյուգական ժառանգություն հ.-ե. *K'at- «կռվել, պայքարել» արմատից, կամ փոխառություն հարևան ժողովուրդներից. Ռ. Շմիտը [G, 144, 1967, 148—151] փորձել է ապացուցել σάτιλλα «մի համաստեղություն» (*«սայլ, կառք») բառի թրակյան ծագումը։

4. ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԽԵԹԱ-ԼՈՒՎԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

ա) ԽԵԹԱ-ԼՈՒՎԱԿԱՆ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ԼԵԶՈՒՆԵՐԸ

Ինչպես նշվել է հնդեվրոպական լեզուների քննության ժամանակ, խեթա-լուվական կամ (հին) անատոլիական լեզուները պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքին և ներկայացված են վաղ և ուշ շրջանի լեզուներով։ Ուշ շրջանի հնդեվրոպական լեզուների պատմությունը ժամանակագրորեն համընկնում է հայերենի զարգացման հնագույն շրջանի պատմության հետ, և այստեղ խոսք կարող է լինել միայն վաղ շրջանի անատոլիական լեզուների սեպագիր խեթերենի (նեսերենի), պալայերենի, լուվերենի և հիերոգլիֆյան լուվերենի մասին։ Առաջին երեքի գրավոր հուշարձանները պատկանում են մ. թ.ա. XVII—XIII դ. դ.։ Հիերոգլիֆյան լուվերենի հուշարձանները սկիզբ առնելով սեպագիր լեզուների ավանդման շրջանում՝ XVI դարից, հիմնականում գրված են ավելի ուշ՝ մ. թ. ա. X—VIII դ. դ., այսինքն՝ խեթական թագավորության անկումից հետո։

Փոքր Ասիայում գտնվող խեթական ցեղերի ստեղծած քաղաք-պետությունների միավորումը կատարվել է մ. թ. ա. XVIII դ.՝ Անիտտայի (Anitta) կողմից։ Խեթական պետության ամրապնդման և ուժեղացման մեջ մեծ է հատկապես Թաբառնայի (T/Labarna) դերը։ Խեթական պետության պատմությունը ավանդաբար բաժանում են երեք շրջանի՝ հին (մ. թ. ա. XVIII—մ. թ. ա XVII դ. դ.), միջին (մ. թ. ա. XVI—մ. թ. ա. XV դ. I կես) և նոր (մ. թ. ա.XV դ. II կես—մ. թ. ա. XIII դ.) թագավորությունների։ Խեթական պետությունն իր նվաճումների և տարածման ընթացքում շփման մեջ է մտանում հին աշխարհի նշանավոր պետությունների՝ Եգիպտոսի, Միտանիի, Ասորեստանի և Հայասայի հետ։ Քաղաքական և մշակութային փոխազդեցությունը հանգեցնում է լեզվական փոխազդեցության։ Խեթերենի վրա նշանակալից ազդեցություն է թողնում նաև խեթական թագավորության հին բնակիչների՝ խաթերի լեզուն։ Խեթերենի և պալայերենի մեջ մուտք են գործում կրոնի և պաշտամունքի, պետության և նյութական մշակույթի հետ կապված մեծ թվով բառեր [Камменхубер, ДЯМА, 1980, 27—33]։ Բացի խեթական թագավորության մեջ մտնող ժողովուրդներից, ծայրագավառներում ապրել են մեծ թվով ժողովուրդներ, որոնք գտնվել են կիսանկախ վիճակում։ Դրանցից արևելյան ծայրագավառներում գտնվող մի շարք ժողովուրդներ հավանաբար կարևոր դեր են խաղացել հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում։

Խեթական թագավորության կործանումը կապված է արևմուտքից, այսպես կոչված, «ծովային ժողովուրդների» շարժման հետ։ Մ. թ. ա. XIII դարից հետո խեթա-լուվական ժողովուրդների մնացորդները դեռ բավական երկար շարունակում են իրենց գոյությունը՝ վերջիվերջո ձուլվելով Փոքր Ասիայի բնակչությանը և կորցնելով իրենց լեզուն։

բ) ԽԵԹԱ-ԼՈՒՎԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն հարցի լուծումը, թե որտե՞ղ, ե՞րբ և ինչպիսի՞ ազդեցություն կարող էին թողնել խեթա-լուվական լեզուները հայերենի վրա, կախված է մի այլ՝ հնդեվրոպացիների և, սրա հետ կապված, հայերի սկզբնական բնակավայրի հարցի լուծումից։ Այժմ, երբ կարելի է հաստատված համարել, որ հայերի պատմությունն սկսվում է մ. թ. ա. VI դարից շատ ավելի վաղ, հայերի և խեթա-լուվական ժողովուրդների շփման հնարավորության հավանականությունն ավելի է մեծանում։ Կարելի է ընդունել խեթա-լուվական լեզուների՝ հայերի վրա ազդելու երկու ճանապարհ՝ անմիջական և միջնորդված։

Խեթա-լուվական լեզուների կրողների և հայերի անմիջական շփումը կարող էր լինել մինչև խեթական պետության կործանումը, եթե հայերն իրոք բնակվելիս են եղել Հայկական բարձրավանդակում ու նրան հարող շրջաններում մինչև «ծովային ժողովուրդների» արշավանքները և եթե նրանց մուտքը չի կապված «ծովային ժողովուրդներից» փռյուգացիների շարժման հետ. նշել ենք, որ ծովային ժողովուրդների թվարկումների մեջ հայերի անունը չի հանդիպում։ Խեթական պետության կործանումից հետո հայերի շփումը խեթա-լուվական ժողովուրդների հետ կասկած չի հարուցում։ Ճիշտ է, չի կարելի հայերենի վրա խեթա-լուվական ազդեցության հիմնական աղբյուրը համարել հիերոգլիֆյան լուվերենը [Дьяконов, ПС, 360] (ինչպես կտեսնենք, խեթա-լուվական լեզուներից հայերենի կատարած փոխառությունները հիերոգլիֆյան լուվերենի համապատասխան բառերի հետ հատուկ մերձավորություն չեն ցուցաբերում), բայց ակնհայտ է, որ հայերը բավական երկար ժամանակ շփման մեջ պիտի լինեին այդ լեզուներով խոսողների հետ։ Եթե Հայասայի հիմնական լեզուն խեթա-լուվական է եղել, ինչպես կարծում է հեղինակը [Djahukian, 1969. Джаукян, 1974], ապա կասկած չի կարող լինել, որ հայերենի խեթա-լուվական ծագման բառերի առյուծի բաժինը գալիս է այդ լեզվից։

Զգալի թիվ պետք է կազմեն նաև հայերենի՝ խեթա-լուվական լեզուներից ոչ անմիջաբար կատարած փոխառությունները. դրանք կարող են գալ խուռաուրարտական, սեմական և այլ լեզուների միջնորդությամբ. ինչպես հայտնի է, խեթա-լուվական լեզուների ներդրումն այդ լեզուների մեջ բավական մեծ թիվ է կազմում։

Ինչպես հայտնի է, խեթերենի վերաբերյալ տեղեկությունների համար գիտությունը պարտական է XX դ. սկզբների Բողազքյոյ վայրում Ն. Վինկլերի կատարած պեղումների հետևանքով խեթական թագավորների գրադարանի հայտնագործմանը (1906—1912 թթ.) և չեխ գիտնական Բ. Հրոզնու կողմից դրանց վերծանությանը (1915)։ Սակայն մինչ այդ՝ XIX դ. վերջերին Պ. Ենսենը [Jensen, 1898] ուշադրություն է դարձնում տարբեր աղբյուրներում պահպանված hat- անվան՝ հայերի ինքնանվանման հետ ունեցած նմանության վրա և փորձում է խեթերին համարել հայերի նախնիներ։ Խեթերենի տեքստերի ընթերցումից և նրա հնդեվրոպական բնույթի ապացուցումից հետո սկսվում է հայ-խեթական առնչությունների ինտենսիվ ուսումնասիրությունը։ Սկզբնապես հետազոտողները բավարարվում են հայ-խեթական աչքի ընկնող բառային ընդհանրությունների մատնանշումով՝ առանց հստակորեն տարբերակելու ծագումնային ընդհանրություններն ու հնարավոր փոխառությունները. այս առումով պետք է հատկապես նշել Ն. Մարտիրոսյանի [1924. 1926. 1929] և Գ. Ղափանցյանի [1931. 1940. 1946. 1961] աշխատությունները։ Հ. Աճառյանը թեև անդրադարձել է այս հարցին [1925. 1940], բայց հատկապես չի զբաղվել խեթերենի՝ հայերենի մեջ կատարած բառային ներդրման հարցերով. նա նշել է միայն որպես միակ հավաստի օրինակ խեթ. Muršiliš և հայ. Մուշեղ անձնանունների նմանությունը։ Հայ-խեթական առնչությունների հարցին հատուկ հոդվածներ են նվիրել նաև Ի. Մ. Դյակոնովը [Дьяконов, 1956. 1961] և Տ. Շուլտհայսը [Schultheiss, 1961], բայց Գ. Ղափանցյանի համեմատությամբ նրանք նոր հավաստի նյութ գրեթե չեն բերում։ Հայ-խեթական ցեղակցական փոխհարաբերության հարցն զբաղեցրել է Ջ. Բոնֆանտեին [Bonfante, 1939], Հ. Պեդերսենին [Pedersen, 1945], Գ. Ռ. Զոլտային [Solta, 1960], Ա. Կամենհուբերին [Kammenhuber, 1961], Ա. Վան Վինդեկենսին [Vindekens, 1980], Մ. Մորանիին [Morani, 1981]։ Հայ-խեթական ծագումնային ընդհանրությունների և խեթա-լուվական լեզուներից հայերենի կատարած փոխառությունների սահմանազատման համեմատաբար լրիվ քննությունը կատարել ենք մենք [Ջահուկյան, 1967, 1970]։ Մեզնից հետո հայերենի խեթական փոխառությունների մասին խոսել և լրացուցիչ նյութ ներքաշելու փորձեր են կատարել Ն. Մկրտչյանը [Mkrtschjan, 1974] և Ջ. Գրեպինը [Greppin, 1980. 1982]։

Ի մի բերելով եղած տվյալները՝ կարելի է մատնանշել հայերենի բառապաշարի մեջ հետևյալ բառերը, որոնց աղբյուրը կարող են լինել խեթա-լուվական լեզուները.

բրուտ «խեցեգործ, կավագործ», բրտեղէն «խեցեղեն», բ. բրտին «կավ», բ. բրտանց «կավահանք»—խեթ. purut- «կավ».

գորգ — խեթ. kurka- «ծածկոց (?)».

դանդիխն «դերեզմանային խավար» — խեթ. dandu- «մահ» (danduki- «անցավոր, մահկանացու» բառերում) (?).

ընթրի-ք — խեթ. etri- «ուտելիք, կերակուր, կերակրում» (?).

լախտր (նեխտր) «մի բույս՝ կարոս, apium nodiflorum» — GIŠlaḫḫura- «տերևավոր թուփ» (ըստ Գրեպինի. Յ. Ֆրիդրիխի բառարանում՝ խեթ. $^{\text{GIŠ}}$laḫḫuranuzzi «պտուղ»).

խալամ (հալամ) «անասունի չորացած գանգ» (խալամովին «գլուխն էլ հետը») — խեթ. ḫalanta- «գլուխ»,

բ. խախուրթ «կոկորդ» (ըստ Ղափանցյանի) — խեթ. $^{\text{UZU}}$ḫuḫḫurti-, լուվ. $^{\text{UZU}}$ḫuḫarta- «կոկորդ».

խաղամ «շարժվել, գնալ. արշավել, վազել» (տարբեր խաղամ «խաղ անել. ծաղրել. խայտալ» բայից) — խեթ. ḫalāi- «շարժվել»?

խառն, խառնեմ «խառնել. առաջ քաշել», խուռն «ամբոխ. բազմություն» — խեթ. ḫarnamnii̯a- «խառնել (?). գրգռել. հալածել».

խիշտ «անկողին» (*«հանգստավայր». խշտիք «խղճուկ անկողին», խշտել «հանգիստ տալ, օթևանել») — խեթ. $^{\text{É}}$ḫeštā-, $^{\text{É}}$ḫešti- «դամբարան (?)».

խուլեմ «ցրել, վանել» — խեթ. ḫullāi-, ḫulii̯a- «կռվել. վիճել. տապալել» (?)

խողխողեմ «մորթել, փողոտել, չարաչար սպանել» — խեթ. ḫulḫulii̯a- «կռվել. կռվում խփել, սպանել».

խոխոմ, -ոյ «ձոր. ավազակ, հոսանքի անցած տեղ», խոխոմեմ «ոռոգել, լավ ջրել», խոխոմեալ «ջրատար» — խեթ. ḫunḫumazzi-, ḫunḫuu̯an- «մակընթացություն, հոսանք հեղեղ(?)», ḫunḫuešnant-, ḫunḫuneššar- «ալիք, կոհակ».

խույս (խուսել, խույս տալ «փախչել»). — խեթ. ḫui̯a- «վազել», ḫuu̯āi- «վազել. փախչել, մազապուրծ լինել» և ḫuiš- «ապրել. փրկվել» (բաղարկությո՞ւն).

ծուխ, -ոյ — խեթ. tuḫḫu(u̯ā)i- «ծուխ (?)».

կշտամբել — խեթ. kušduu̯āi- «կշտամբել, նախատել, անվանարկել, զըրպարտել».

կոշնել (կօշնել) «ձոնել, ընծայել» (ըստ Երեմիայի բառարանի) — խեթ. kuššan- «ռոճիկ, աշխատավարձ, վարձատրություն, գին».

հատ, -ոյ (հատանեմ, հատու «սուր, կտրուկ», զատ < զ-հատ, ընդհատ «տարբեր», նհատ «թերի», հատ «որթի հատած ճյուղ») և յատ-անեմ «հատել, էտել», յատ «որթի հատած ճյուղ — խեթ. ḫattāi- «հատել, կտրել. ծակել. պատռել».

հե(ն)գ(ն) «ծաղր. հեճուկ, հակառակություն», հենգնեմ «ծաղրել» — խեթ. ḫinganii̯au̯ar- «զվարճություն, զվարթություն, ուրախություն».

հնձան — խեթ. $^{\text{GIŠ}}$hanza(n) «մի տեսակ սարք, աման».

(հ)սկեմ — խեթ. ušk- «տեսնել» և ḫušk- «սպասել» (բաղարկությո՞ւն).

շեղջ (շիղջ) «կույտ, շեղջ (հատկապես հացահատիկի)» — խեթ. šeli- «հացահատիկի շեղջ (?)».

շեռ «մեզ» — խեթ. šeḫur-, սեռ.-unaš «մեզ».

սկայիմ «չորանալով ճաքճքել» — խեթ. iškallāi- «պատռել, ճեղքել, պոկել (?), շուրթել (?)».

տառեղն «արագիլ» — խեթ. tarlā «մի թռչուն» (ըստ Գրեպինի).

փախ (փախչիմ, փախնում, փախուստ) — խեթ. parḫ- «հալածել, քշել, որսալ. հարձակվել. արշավել տալ, սուրալ տալ (ձիու մասին)», parḫanu- «հալածել տալ. արշավել տալ», parḫeššar- «շտապում, աճապարանք» (հ.-ե. *per-).

փշուր (փշրեմ) — խեթ. paršur- «բրդոշ (?), մանր կտորներից կերակուր», paršulli-, paršiul- «փշուր, բեկոր», parš-, paršāi-, paršii̯a- «փշրել, ջարդել»:

Այս բառերին կարելի է ավելացնել հետևյալ հատուկ անունները.

Ամատունի — հիեր. լուվ. Amatuu̯ana (ցեղանուն. ուրարտական միջնորդությա՞մբ. հմմտ. -ունի).

Հարմա (անձնանուն), Արմաւիր (տեղանուն) — խեթ., լուվ., հիեր. լուվ. Arma-, arma, լիկ. Armāv- «լուսին. լուսնաստված».

Մուշեղ (անձնանուն) — խեթ. Muršiliš (անձնանուն).

Տորք (անձնանուն) — խեթ. Tarḫuna-, լուվ. Tarḫund-, հիեր. լուվ. Tarḫu(n)t-, լիկ. Trqqñt (որոտի աստված. հայերենին ձևով ամենից ավելի մոտ է թրակ. Τορκος անձնանունը, և կարելի է ենթադրել թրակյան միջնորդություն):

Ըստ բերված բառերի խեթա-լուվական լեզուների և հայերենի միջև կարելի է հաստատել հնչյունական հետևյալ համապատասխանությունները. «խեթական բառերը բերվում են առանց հատուկ նշման).

խեթ.	հայ.	Օրինակներ
p/b	փ	parḫ- — փախ. paršur- — փշուր
	բ	purut- — բրուտ (?)
t/d	թ	etri- — ընթրի-ք
	տ	tarlā- — տառեղն. $^{\text{É}}$ḫešti- — խիշտ
	ծ	tuḫḫu(u̯ā)i- — ծուխ
k/g	ք	?
	կ	kušduu̯āi- — կշտամբել. kuššan- — կոշնել
	գ	kurka- — գորգ
z	ձ	$^{\text{GIŠ}}$ḫanzan- — հնձան
š	շ	šeli- — շեղջ.
	ս	ḫušk- (և ušk-) — (հ)սկեմ
ḫ/(h)	խ	ḫalanta- — խալամ (հալամ). ḫulḫulii̯a- — խողխողել. tuḫḫu(u̯a)i- — ծուխ
	հ	ḫinganii̯au̯ar- — հենգն. ḫattāi- — հատանել
	—	ḫeḫur/n- — բ. շեռ(ն)
r	ր	kurka- — գորգ
	ռ	ḫarnamnii̯a- — խառն
	—	parḫ- — փախ. paršur- — փշուր
l	լ	laḫḫura- — լախուր. ḫalanta- — խալամ
	ղ	ḫulḫulii̯a- — խողխողել
m	մ	Muršiliš- — Մուշեղ
		ḫunḫumazzi- — խոխոմ, -ոյ
n	ն	$^{\text{GIŠ}}$ḫanzan- — հնձան
	—	ḫunḫumazzi- — խոխոմ
a	ա	ḫalanta- — խալամ. ḫalāi- — խաղալ. ḫarnamnii̯a- — խառն
e/i	(ը) —’	paršur- — փշուր. $^{\text{GIŠ}}$ḫanzan- — հնձան
	ի	$^{\text{É}}$ḫešti- — խիշտ. ḫinganii̯au̯ar- — հենգն
	ե	šeli- — շեղջ (շիղջ). šeḫur- — բ. շեռ
	(ը) —’	etri — ընթրի-ք
u	ու	$^{\text{UZU}}$ḫuḫḫurti- — բ. խախուրթ. tuḫḫu(u̯ā)i- — ծուխ
	ո	kurka- — գորգ ḫulḫulii̯a- — խողխողել
	(ը) —’	purut- — բրուտ

Հնչյունական համապատասխանությունների աղյուսակի կապակցությամբ կարելի է անել հետևյալ դիտողությունները.

1) Խեթա-լուվական տեքստերում խուլերով և ձայնեղներով արտահայտված հնչյունների դիմաց, առաջին հայացքից առանց որևէ հետևողականության, առկա են ինչպես շնչեղ խուլեր ու խուլեր, այնպես էլ ձայնեղներ։ Եթե խեթա-լուվական և հայերեն բառերի համապատասխանությունները ճիշտ են, ապա հայերենի հնչյունները ավելի հարազատորեն են արտացոլում խեթա-լուվական լեզուների հնչյունական առանձնահատկությունները, քան դրանք տրված են սեպագրերի միջոցով։ Հնարավոր է ենթադրել ինչպես խեթա-լուվական տարբեր լեզուների հնչյունական տարբերություններ, այնպես էլ նրանց և հայերենի միջև զանազան միջնորդ լեզուներ։ Հնդեվրոպական ծագում ունեցող խեթական բառերի հնչյունական աղբյուրները նկատի ունենալով՝ կարելի է ենթադրել խեթա-լուվական լեզուներում որոշակի բաղաձայնական տեղաշարժեր [հմմտ. Ջահուկյան, 1970, 132—133]։

2) Խեթա-լուվական š և ḫ(ḫ) շփականների դիմաց հայերենն ունի սովորաբար շ և խ, բայց առանձին դեպքերում առկա են ս և հ. նկատի ունենալով Ḫai̯aša- և Հայ-ս անվանումների հնարավոր նույնությունը՝ մենք ḫ—հ և š—ս համապատասխանությունները հակված ենք վերագրելու հայասական ներդրմանը։ Եթե ճիշտ է խեթ. ḫalanta- և հայ. խալամ (հալամ) բառերի համապատասխանությունը, ապա առկա է հ-ի արտացոլման տատանում՝ թերևս աղբյուրների տարբերության հետևանքով։ Նշենք նաև հիղ (հիւղ) և խուղ բառերի հարաբերությունը, եթե առաջինի աղբյուրն իրոք հայասերենն է (հմմտ. Laḫirḫila քաղաքանունը). հնարավոր է երկրորդի բնիկ հնդեվրոպական ծագումը (բնիկ հայկական և հայասական ձևերի բաղարկությո՞ւն)։

3) Խեթա-լուվական u և o, e և i ձայնավորների հստակ տարբերակում սեպագրերում չկա. o-ն ընդհանրապես հատուկ նշանակում չունի։ Այս պատճառով էլ պետք է կարծել, որ խեթա-լուվական ձայնավորների տարբերակումը հայերենում ավելի հարազատորեն է անցկացված, քան այդ հնարավորություն են տալիս սեպագրերը։ Միաժամանակ նշենք, որ խեթա-լուվական i, u (հազվադեպ նաև a) ձայնավորները հայերենի նախաշեշտ դիրքում համեմատաբար ուշ շրջանում (մ. թ. II—III դդ.) թուլացել են (փոխվել ը-ի) կամ ընկել։ Էլ ավելի վաղ (մ. թ. VI—V դդ.) պիտի ընկած լինեն նաև խեթական վերջավանկային ձայնավորները՝ բնիկ ձայնավորներին հար և նման. Եթե ճիշտ են purut- և բրուտ, etri- և ընթրի-ք համապատասխանությունները, ապա հայերենի բուն աղբյուրների համար պետք է ենթադրել լրացուցիչ վերջնաձայնավորներով ձևեր՝ *buruti- և *etri̯a-։ Նույն ձևով šeḫur-ի դիմաց բ. շեռ-ի առկայությունը ենթադրում է šéḫur- > šehr- > շեռ(ն), šeli-ի դիմաց շեղջ ձևինը՝ šeli̯- > շեղջ փոփոխություն։ Այսպիսով, i̯ > ջ և hr > ռ փոփոխությունները պատկանում են հայերենի զարգացման ոչ թե վաղնջական, այլ հնագույն շրջանին։

Մի շարք դեպքերում նկատելի է հայերեն և խեթա-լուվական բառերի զուգադիպություն, բայց նրանց ակնհայտ բնաձայնական-նկարագրական բնույթը կասկածելի է դարձնում որոշակի կապ հաստատելու հնարավորությունը.

բ. լալխալ «թույլ լինելով կամ խախտվելով շարժվել. շարժվել, տատանվել» — խեթ. laḫlaḫi̯a- «հուզված լինել (?)», laḫlaḫima- «շարժում, հուզմունք» (?).

բ. լպստել (և լպպել «անհագաբար ուտել») — խեթ. lip(p)- «լիզել, լպստել» (li-lipāi-՝ կրկնավոր ձև).

քրթմնջել (քրթմնջումն, -ուն, քարթմնջումն) — խեթ. kartimi̯a- «բարկանալ, ոխ տածել», kartimi̯anu-, kartimnu- «բարկացնել»։

Մի շարք այլ դեպքերում խեթա-լուվական և հայերեն բառերի իմաստային նմանությունն ակնհայտ է, բայց հնչյունական զանազան պատճառներով դժվարանում է դրանց առնչության հարցի լուծումը.

ապա «հետո» (յապաղել «ուշացնել»)—խեթ. appa «հետո» (խեթական բառի վերջին ձայնավորի պահպանվելը անբացատրելի է. ավելի հավանական է հայ. բառի իրանական ծագումը՝ ապ(ա)- նախածանցի հետ միասին).

արուարձան «քաղաքամերձ բնակատեղի» (աւուարձանեայ «սահմանակից», արուարձային «արվարձանի բնակիչ», արուարձական «սահմանակից») — խեթ. Éarzana- «հյուրանոց, իջևան (?)», arzanant- «բնակեցված (?)» և լուվ. Arzii̯a — վայրի անուն (?) (անբացատրելի է հայ. բառի արու- բաղադրիչը. կա նաև հայ. բառի իրանական ծագման կարծիք).

բա(ղ)խեմ—խեթ. u̯alḫ- «խփել, բախել» (ըստ Շուլտհայսի, սակայն ա) անհավանական է u̯ > բ փոփոխությունը, բ) հայերեն բառի ղ-ն ուշ շրջանի հավելում է. եթե նկատի առնենք u̯ > գ փոփոխությունը, ավելի հավանական է կապ տեսնել խեթ. բառի և հայ. գանել «խփել, զարկել» բառի միջև).

քրքիր «փխրուն, փափուկ» (քրքրեմ «քայքայել, խախտել. պարզել. պրպտել, տնտղել»)—խեթ. kurkurāi- «խեղել, այլանդակել. աղճատել, աղավաղել» (հայերեն բայի ձայնավորումը տարբեր է խեթ. բառի ձայնավորումից՝ ի՝ խեթ. u-ի դիմաց)։

Տարբեր հետազոտողների կողմից առաջարկված հետևյալ համեմատությունները կասկածելի են՝ հայերեն և խեթա-լուվական բառերի իմաստային ակնհայտ տարբերության պատճառով.

խախուց «պանրի մակարդ» (խախուցեմ «մակարդել») — խեթ. ḫaḫḫima- «պնդություն (?)», ḫaḫḫali̯a- «պնդանալ».

խեղբ (խիղբ) «ծիլ, ընձյուղ» կամ «արմատի մազմզուկ» — խեթ. ḫu̯elpi- «մատաղ. թարմ (կանաչ), խակ» (?).

խուլեմ «ցրել, վանել» — խեթ. ḫullāi-, ḫulli̯a- «հաղթել» (ḫulḫulli̯a- «կռվել. կռվում խփել, սպանել»).

խորթ — խեթ. ḫartu̯a-, հիեր. լուվ. ḫartu- «հետնորդ, սերունդ».

խորխ «օձի շապիկ, մորթ, կաշի» — ḫaḫri- «ստոծանի».

կատաղի (կատաղիմ, կատաղենամ) — խեթ. kattau̯annali-, լուվ. kattau̯atnalli- «վրեժխնդիր».

կոտոր, -ոյ (կոտր «բեկոր. խուզում», կոտր, կտիր, բ. կոտր) — խեթ. kutriš- «կարճություն».

մաթուզ «մորու ծառ, arbutus» — հիեր. լուվ. matusa (ma·tú-sà) «մի բույս» (հայ. բառը հանդիպում է ուշ շրջանում, և նրա մեջ զ-ն՝ հիեր. լուվ. s-ի դիմաց համեմատությունը դարձնում է կասկածելի. Աճառյանը, ՀԱԲ, 4², էջ 637, մաթուզ-ը բխեցնում է ադամաթուզից).

շեշտ «շեշտակիորեն, ուղղակիորեն. շեշտ» — խեթ. šešd- (šišd-) «երկար նստել, հանգստանալ. աճել. բարգավաճել».

ուան «աշտանակ» կամ «վառարան, հրարան» — խեթ. ur-, ṷar- «այրել».

սկիս (<գ-կիս-՝ սկսանիմ, սկիզբն) — խեթ. kiš- «դառնալ. պատահել».

փարթել «արտամղվել, արտաքամվել, ծակոտիներով դուրս գալ (հեղուկի մասին)» — խեթ. partāi- «քաշել-հանել, գզգզել».

քծնեմ (քծին) — խեթ. genzuṷāi- «բարեկամաբար վարվել, խնայել, սեր տածել, ուշադիր լինել»:

Կան դեպքեր, երբ հայերենի և խեթա-լուվական լեզուների բառային զուգադիպումների առկայության պայմաններում դժվարանում է նրանց բնույթի մեկնաբանության հարցը.

1) Մի շարք դեպքերում հնարավոր է հայերեն բառերի բնիկ հնդեվրոպական ծագումը, և կամ պետք է հրաժարվել այդ բառերի աղբյուրը խեթա-լուվական լեզուներում փնտրելուց, կամ գտնել ավելի ընդունելի մեկնաբանություն.

աղանդ «կրոն. աղանդ. կախարդանք» (աղանդեմ «աղանդ ստեղծել. կախարդել», աղանդաստր «աղանդապետ») — խեթ. alṷanzaḫḫ(a?)- «կախարդանք», alṷanzaḫḫ- «կախարդել», alṷanzatar-, alṷanzeššar- «կախարդանք», aluanzena- «կախարդանք» (սակայն հմմտ. հուն. ἄλη «թափառում, խռովք», լատվ. aluōt «շրջել. մոլորվել». թոխ. Ա^{Բ} āl- «բաժանվել. հեռանալ» < հ.-ե. *al- «թափառել, մոլորվել». այստեղից են, թերևս, հայերեն և խեթերեն բառերը).

ափ, -ոյ (ափեմ «բռնել, ձեռք բերել») — խեթ. ep(p)-, ap(p)- «բռնել, տեղ գրավել» (սակայն հնարավոր է հայ. բառի ծագումը հ.-ե. *ap- *ēp- «բռնել, վերցնել, հասնել» արմատի aph- տարբերակից, եթե, մանավանդ, ճիշտ է համեմատությունը հուն. ἅφη «շոշափում, հողավորում, բռնում» բառի հետ).

ափն — խեթ. ṷappu- «գետափ» (քիչ հավանական է հնչյունապես, մանավանդ եթե հայ. բառը համեմատելի է հուն. ἤπειρος, դոր. ἄπειρος «ափ, ցամաք» և հ. անգլ. ōfer «ափ» բառերի հետ՝ հ.-ե. *āpero-ից. հայերենը ենթադրում է *ph-ով նախաձև և թերևս *r/n-ով հիմք՝ *āp(h)er/n-).

խանդ (խանտ) (խանդաղ-), խանձեմ «այրել» — խեթ. ḫandāiš «ջերմություն, շոգ», (և ḫantiįāi- «հոգալ, խնամել». հմմտ. ant- «ջերմ» և ḫanzana- «սև»?). հայ. բառերը Հ. Աճառյանը, [ՀԱԲ, 2², էջ 329—330], հակված է բխեցնելու հ.-ե. *(s)kand- «լուսավորել. վառվել» արմատից, սակայն *kh-ով տարբերակ այլ լեզուներում չի ավանդված. հնդեվրոպական ծագման բառերի մեր աղյուսակում այս բառերը դրված են հարցականով:

հանեմ — խեթ. ḫan- «դատարկել, պարպել, ջուրը հանել» (եթե հայերենը խեթ. šanna «մեկ», šannapili- «դատարկ. առանձին», šannapileš- «դատարկել» բառերի šann-ի հետ միասին չի պատկանում հ.-ե. *sen- «առանձին, մեկուսի» արմատին. հնարավո՞ր է արդյոք հուն. ἄντλος «նավամբարի ջուր», ἀντλέω «ջուրը հանել» բառերի հետ միասին բխեցնել միևնույն հ.-ե. արմատից. քիչ հավանական է, բայց հնարավոր խեթ. բառի բխեցումը հայերենից).

հաց, -ի, -ից — խեթ. NINDAḫaz(z)it/da «մի թխվածք» (հմմտ. նաև NINDAharzazu «լողահաց» <խուռ. ? հայ. բառն ավելի ընդհանուր իմաստ ունի և թերևս գալիս է հ.-ե. *pokti- ձևից՝ հ.-ե. *pekṷ- «եփել, թխել»).

հիղ(-ք) (հեղ, հող, հիւղ) «խրճիթ, խուց» — խեթ. (É)ḫīla- «բակ. ցանկապատված տեղ, փարախ». հմմտ. նաև հայաս. Laḫir-ḫila քաղաքանունը (համեմատությունը հնարավոր է, եթե հիղ-ը և նրա տարբերակ հող-ը տարբեր են խուղ-ից, որ բխեցված է *khu-lo- նախաձևից՝ հ.-ե. *(s)keu- «ծածկել». հմմտ. հ. իռլ. cūl «անկյուն. ապաստան, թաքստոց». հնարավոր է ենթադրել երկու ձևերի բաղարկություն).

բ. մառ, բ մեռ «շեղ, մարմնի մեջ մտնող փուշ» (բ. մառել «ծակելով խրվել» և բ. մառել «կպչել») — խեթ. marriįa- «փշրել, մանրել (?)» (երկուսն էլ հ.-ե. mer- «տրորել» արմատի՞ց).

նուազ «թույլ, մեղմ. թերի» — լուվ. niṷalli- «անմեղ» (?) (համեմատությունը կասկածելի է ըստ իմաստի. հայերեն բառը հնարավոր է բխեցնել *nē-ṷal- «ոչ ուժեղ» ձևից՝ *nē- «ան-» և *ṷal- «ուժեղ լինել»?).

շաղ, -ից «ցող. կաթիլ» (շաղախ) — խեթ. šalliįa- «հալչել, լուծվել» (?), šalṷina «շաղախ» (հայ. բառերը Պետերսոնը համեմատում է լիտվ. švelnùs «մեղմ, փափուկ» բառի հետ, որ այնքան էլ հավանական չէ. մյուս կողմից՝ հայ. և խեթ. բառերն իմաստով և ձևերով զգալիորեն տարբեր են).

շանթ (շանդ), -ից — լուվ. Šantaš «որոտի աստված» (հայ. բառը Պետերսոնը բխեցնում է *k'eu- «լուսավորել» արմատից ածանցված *k'ṷṇt- ձևից, որ բերվում է նաև մեր կողմից՝ հարցականով).

տող — խեթ. tuliįa «խորհրդաժողով, դատանստում» (հայ. տող և, թերևս, տաղ բառերը համեմատում են հ. անգլ. talu «պատմություն. շարք», հ. հյուս. tal «հաշիվ, թիվ, խոսք» և այլ բառերի հետ. եթե այս ստուգաբանությունը ճիշտ է, ապա հնարավոր է բացատրել նաև խեթ. բառը. Աճառյանը. [ՀԱԲ, 4², էջ 418] համեմատում է վրաց. ṭoli «հավասար. հասակակից», ṭoleba «բաղդատել» բառերի հետ և բխեցնում ուրարտերենից).

տոփեմ «ծեծել, կոխոտել» — լուվ. dup(p)i-, հիեր. լուվ. *tupi- «խփել» (հայ. բառը սովորաբար բխեցնում են հ.-ե. *deph-ից, որտեղից, թերևս, նաև խեթա-լուվական բառերը, եթե նմանությունը չի հիմնված բնաձայնության վրա. վերջինիս ապացույցը հայերենում դոփել բառի առկայությունն է, որ հավանաբար չի կարելի բխեցնել խեթա-լուվական աղբյուրից, եթե նրան հատուկ է եղել ձայնեղների խլացումը):

2) Առանձին դեպքերում խեթա-լուվական և հայերեն բառերի նմանությունը կարող է պատահական լինել, եթե հայերեն բառերն իրոք հայկական հողի վրա կատարված կազմություններ են (ինչպես կարծում են հայագետները, այդ թվում՝ նաև Աճառյանը), և եթե մենք գործ չունենք փոխառությունների և հայկական ձևերի բաղարկության հետ.

սպանդ «զոհ. զոհաբերություն» (սպանանեմ-ի՞ց) — խեթ. šippand- «զոհաբերել, զոհել».

քորոց (քորեմ-ի՞ց) — խեթ. URUDUkuruzzi «կտրելու գործիք»:

3) Հետևյալ դեպքերում ավելի հավանական է հայերեն բառերի իրանական ծագումը, և խեթա-լուվական ու հայերեն բառերի նմանությունը պատահական պիտի համարել.

աշխար «ողբ, լաց, կոծ,», աշխարեմ «ողբալ, կոծել» — խեթ. išḫaḫru- (ešḫaḫru-) «արտասուք, լաց», íšḫaḫruṷa- «լալ».

իշխան, իշխեմ (հմմտ. իրան. xšī- «իշխել, տիրել» բայը և նրա ածանցյալները) — խեթ. išḫa-, հայց. išḫan- «տեր» լուվ., հիեր. լուվ. ṷašḫa-).

հպատակ (< իրան. hu-pātak-. համմ. ավ. hupāta- «լավ. պաշտպանված») — խեթ. ḫapati- «հնազանդ. հպատակ. ծառա (?)»։

4) Հետևյալ դեպքերում խեթա-լուվական և հայերեն բառերի զուգադիպությունը, թերևս, պատահական չէ, բայց հայերեն բառերը հնարավոր չէ բխեցնել խեթա-լուվականներից.

ջախեմ, ջախջախեմ—խեթ. zaḫ(ḫ)- «խփել» zaḫḫāi- «ճակատամարտ, մարտ. կռիվ». այստեղ նախ՝ խեթ. z>հայ. ջ անցումը չի բացատրվում, եթե նկատի առնենք, որ պայթականների երկրորդ քմայնացումը տեղի է ունեցել հնագույն շրջանում, երկրորդ՝ կան նաև կովկասյան զուգահեռներ՝ վրաց. ǰax- «խփել, զարկել», ճան. ǰax- «մրճահարել». ուտ. caxpesun «ծեծել, փշրել, կոխոտել» [Համմ. Աճառյան, ՀԱԲ, 4^2, էջ 119].

տոռ «տունկի ճյուղ, խաղողի որթի թև» (տոռեմ «ճյուղավորվել, ճյուղեր արձակել», տոռանոց «այգի»)—հիեր. լուվ. tuu̯arš- «խաղողի որթի ճյուղ»[10] (=հուն. θύρσος. հայ. և խեթա-լուվական ձևերը ձևով տարբեր են և ենթադրում են տարբեր աղբյուրներ)։

Վերևում մենք արդեն ունեցանք խոսելու այն մասին, որ եթե խեթ. ḫan- «դատարկել, պարպել, ջուրը հանել» բառն իրոք կապ ունի հայ. **հանեմ** բայի հետ, և որ եթե վերջինս բխում է հ.-ե. *sen- արմատից, ապա հնարավոր է խեթ. բառի աղբյուրը համարել հայերենը։ Այս ենթադրության հնարավորության դեպքում կարելի է մատնանշել խեթա-լուվական մի շարք այլ բառեր, որոնց աղբյուրը կարող էր լինել հայերենը։ Արդեն հիշված բառերից կարելի է նշել հայ. **հաց** (< հ.-ե. *pokᵘt-) և խեթ. $^{\mathrm{NINDA}}$ḫaz(z)it/da «մի թխվածք», հայ. **տող** (< հ.-ե. *del-/dol-) և խեթ. tulii̯a- «խորհրդաժողով, դատարանատեղ»։ Առաջ տանելով վերլուծությունը կարելի է բացատրել այս տիպի հնարավոր և այլ բառեր.

ալի-ք (*polii̯o-՝ հ.-ե. *pel-ից) — լուվ. a(a)li- «ծով (?)». առկա է որպես հատուկ անունների բաղադրիչ.

ասր (հ.-ե. *pok'u-r) — խեթ. $^{\mathrm{SÍG}}$ešri- ($^{\mathrm{SÍG}}$eššari-) «բուրդ. ասր».

թլիփ «եզր» — խեթ. telipuri- «շրջան, գավառ (?), երկրամաս (?)». հայ. բառի ծագումն անհայտ է, բայց այն դժվար է բխեցնել խեթ. բառից, որ ավելի մասնավոր իմաստ ունի.

լուծ (հ.-ե. *i̯ugom) — խեթ. luzzi- «կոռ, պարտադիր աշխատանք». մի կողմից՝ հայ. բառի հնդեվրոպական ծագումն ակնհայտ է և մյուս կողմից՝ խեթ. բառի իմաստը՝ նեղ, եթե սրանք ընդհանրապես կապված են.

խուղ (հիւղ, հիղ. հեղ) (հ.-ե. *khu-l-) — խեթ. $^{\mathrm{É}}$ḫila «բակ. փարախ. գոմ».

հարկանեմ (հ.-ե.) *perg-) — խեթ. ḫark- «ոչնչանալ», ḫarganu- (ḫarqanu-) «ոչնչացնել». քիչ հավանական է խեթ., հայ. և իռլ. ձևերի հիման վրա հ.-ե. մի նոր արմատ վերականգնելը, մանավանդ որ հայ. և իռլ. ձևերը կարելի է բխեցնել հ.-ե. *perg-ից.

մատաղ «մատղաշ, դեռատի, մանկահասակ. մատաղ կենդանի՝ զոհելու ենթակա, զոհ» (հ.-ե. *mad-) — լուվ. $^{\mathrm{SISKUK}}$mantalli- «զոհատեսակ». հայերեն բառի իմաստն ավելի լայն է, և նրա բխեցումը լուվերեն բառից ավելի քիչ հավանական).

տաղ «երգ. ոտանավոր» (հ.-ե. *del-. համմ. նաև տող) — խեթ. talii̯a- «ձայն տալ. հայցել (աստվածներին)» (համմ. նաև talai̯a talai̯ata ստուգաբ. (հայ. > խեթ. ?) կապակցությունը միտանի երգի մեջ).

փող «նեղ անցք. փողրակ, խողովակ», փողրակ «ջրի խողովակ» — խեթ. $^{\mathrm{DUG}}$pulla- «մի տեսակ աման», $^{\mathrm{DUG}}$pulluri(i̯a)- «մի տեսակ աման». հայ. բառերի ծագումը հայտնի չէ (հ.-ե. *(s)p(h)el- «ճեղքել» արմատի՞ց. համմ. հ. վ. գերմ. spuolo «կոճ. փող. խողովակ, փետրափող»), բայց իմաստները ավելի լայն են։

Մի քանի խոսք խեթական թագավորության բնիկների՝ խաթերի, լեզվի՝ հայերենի վրա թողած հնարավոր ազդեցության մասին։ Այդ ազդեցությունը կարող էր արտահայտվել անմիջական ճանապարհով և այլ լեզուների, հատկապես խեթերենի, միջնորդությամբ։ Ստորև բերվող զուգադիպությունների ցանկը, որից բացառված են մանկական և բնաձայն բառերը (համմ. հայ. **մամ** և խաթ. mamma «մայր»), հավաստի ապացույցներ չի տալիս նման ազդեցության մասին. քիչ թե շատ հավաստի կարող էր լինել հայ. **ջնար**—խաթ. zinar զուգահեռը, եթե նախ՝ խաթ. z-ի դիմաց հայերենը չունենար ջ, որ համեմատաբար ուշ ձեռքբերում է, երկրորդ՝ խաթ. բառը (նրանից փոխառված է խեթ. համարժեքը) բնիկ լիներ, կապ չունենար Առաջավոր Ասիայում, հատկապես սեմական լեզուներում տարածված՝ եբր. kinnōr (որտեղից հուն. κινύρα) ու արամ. kinnārā, ասոր. kennārā «կիթառ» (որտեղից հայ. **քնար**) բառերի հետ և երրորդ՝ հայերեն **ջնար**-ի և **քնար**-ի հետ միասին չլինեին վրաց. čianuri «ջութակ» և knari «քնար» տարբերակները, որոնք ենթադրում են նույնպես տարբեր աղբյուրներ (knari-ն հայերենի՞ց՝ նրան բնորոշ i-ի անկմամբ).

ահա — խաթ. ahā «ծիսական մի կանչ».

հագածիմ «կերուխումի ետևից ընկնել» (հագածեալ «ագահ», հագածելի «ախորժելի, հաճելի») — խաթ. $^{\mathrm{LÚ}}$ḫaggazuel «մատռվակ (?)».

ջնար — խաթ. zinar- «Իշտարի գործիք» և «երաժշտությո՞ւն (բացականչություն)».

փաղ-, բաղ- «համա-, -կից» — խաթ. pala (bala, u̯ala) «և, նաև»։

Վերջապես նշենք, որ խեթական տեքստերում որպես փոխառյալ երկու թեք սեպանշանով նշված բառերի մեջ հանդիպող akkuša «որսափոսեր, ծուղակներ» ձևը (հգն.) հիշեցնում է հայ. **ակուս** բառը, որի ծագումը հայտնի չէ. համմ. և akkuša-ի համար խեթ. aggala- «ակոս», որ Բենվենիստը [**Benveniste**, 1962, 107] համեմատում է հուն. ὄγμος «ակոս» բառի հետ։

Հայերենի խեթական փոխառությունների փոքրաքանակության պայմաններում դժվար է հայերենում փնտրել խեթական ծագման ածանցներ։ Եղած մասնակի զուգադիպումները պետք է համարել կամ պատահական, կամ երկու լեզուներում հնդեվրոպական միևնույն աղբյուրից ժառանգած։ Հատկապես աչքի զարնող է գործիքի անուններ կազմող -ոց-ի (**հալոց** (**հալեմ**), **հորոց** (**հորեմ**) և այլն) զուգադիպությունը խեթ. -uzzi համատիպ ածանցի հետ (išḫuzzi- «գոտի» (išḫii̯a- «կապել»), $^{\mathrm{URUDU}}$kuruzzi- «հատող, կտրելու գործիք» և այլն), որոնցից հայերենը բխեցվում է հ.-ե. *-o-sko-ից, որից խեթական ածանցը չէր կարող ծագել. նրա համար ենթադրելի է *-ti-ով հնդեվրոպական ձև. այս դեպքում նմանությունը կամ պատահական է (եթե փոխառությունը բացառվում է), կամ, թերևս, հայերենի՝ նույն *-ti-ով ձևից բխելու արդյունք (համմ. նաև լիկ. atanazi — հայ. **աթենացի**)։

---

[10] Ըստ Գրեպինի. Մերիջին [**Meriggi**, 1962, 136] տալիս է «խաղողի այգի» իմաստը։

5. ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՀԱՅԱՍԵՐԵՆԸ

ա) ՀԱՅԱՍԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Մ. թ. ա. XIV—XIII դդ. խեթական աղբյուրները պատմում են Ḫajaša-Azzi երկրի մասին, որ դիմագրավել է խեթական պետությանը և պատերազմներ մղել նրա դեմ։ Թե որքա՞ն կարևոր դեր է խաղացել Հայասան հին աշխարհի պատմության մեջ և որքա՞ն վտանգավոր եղել խեթական պետության համար, երևում է թեկուզ նրանից, որ հետազոտողները այդ պետության արևելյան և հարավ-արևմտյան հարաբերությունների չորս հիմնական ոլորտներից մեկը համարում են հայասականը՝ դնելով այն լուվականի, աքքադականի և եգիպտականի կողքին [Kronasser, 1956, 20]։

Դեռևս 1920-ական թթ. հետազոտողները ուշադրություն են դարձնում Ḫajaša երկրի անվան և հայերի ինքնանվանման (Hay-k‘) նմանությանը։ Հայասա երկրի աշխարհագրական դիրքի, քաղաքական պատմության և լեզվի մասին գրվում են զանազան ուսումնասիրություններ, որոնցից առանձնապես հիշատակելի են է. Ֆոռերի [Forrer, 1931], է. Կավենյակի [Cavaignac, 1932. 1934], Ն. Ադոնցի [Adontz, 1946], Գ. Ղափանցյանի [Капанцян, 1948], Հ. Մանանդյանի [Манандян, 1956], մեր [Djahukian, 1961. Джаукян, 1964] և Ի. Մ. Դյակոնովի [Дьяконов, 1968] աշխատությունները։

Հայասա երկրի տեղադրության և սահմանների մասին հետաքրքրական տեղեկություններ են պարունակում Վ. Խաչատրյանի «Խեթական պետության արևելյան շրջանները» աշխատությունը և զանազան հոդվածները [Хачатрян, 1971. 1972. 1973]։

Մեզ հետաքրքրող հարցի՝ Հայասայի լեզվի և հայերենի փոխհարաբերության մասին գիտնականները հայտնել են երեք տարբեր կարծիքներ.

1) Ոչ միայն Հայասայի անունն է կապված հայերի անվան հետ, այլև հայասացիները հայերի անմիջական (ուղղակի) նախորդներն են, նրանց լեզուն՝ հայերենի հիմքը։ Այս կարծիքը ամենից ավելի հստակ կերպով ձևակերպված է Գ. Ղափանցյանի կողմից։ Սակայն երբ նկատի ենք առնում, որ Գ. Ղափանցյանը հայերենը համարում է խառնածին լեզու՝ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական (այդ թվում՝ խուռա-ուրարտական) տարրերի խառնուրդով, և որ, սրա հետ կապված, նույնպիսի բնույթ է վերագրում հայասերենին, ապա նրա վարկածի արժեքը զգալիորեն պակասում է։ Նշենք, որ հայ որոշ հետազոտողներ դեռևս շարունակում են պաշտպանել հայասերենի՝ հայերենի ուղղակի հիմք լինելու տեսակետը՝ առայժմ առանց լեզվական հիմնավորման։

2) Հայասայի և հայերի անունների նմանությունը պատահական է, և Հայասան ոչ մի կապ չունի Հայաստանի ու հայերի հետ։ Այս տեսակետը ամենից ավելի հստակորեն ձևակերպել է Ի. Մ. Դյակոնովը, որ Հ. Տաշյանի նման հայ անունը բխեցնում է խեթերի անունից (hati->հայ), իսկ Հայասայի լեզվին, ըստ Գ. Ղափանցյանի բերած զուգահեռների, հատկացնում հիմնականում խուռական բնույթ[11]։ Նշենք, որ վրացական որոշ հետազոտողներ կապ են տեսնում Ḫajaša-ի և Կողքիսի հին անվան՝ Aia-ի միջև, թեև այս տեսակետը չի հիմնավորվում այլ կարգի տվյալներով։

3) Հայասայի անունը կապված է հայերի անվան հետ, բայց հայասերենը հայերենի անմիջական հիմքը չէ, այլ հայերենից տարբեր հնդեվրոպական լեզու, որ հանդես է գալիս նրա մեջ որպես կողմնակի շերտ (ենթաշերտ, սուբստրատ)։ Այս տեսակետը հայտնել է տողերիս գրողը՝ հենվելով հայասական անունների փոքրասիական և հատկապես խեթա-լուվական զուգահեռների վրա, որոնք թվով գերակշռում են Գ. Ղափանցյանի և ուրիշների բերած խուռական զուգահեռներին։ Ըստ այս տեսակետի Հայասայի բուն լեզուն ցեղակից է խեթա-լուվական լեզուներին, իսկ հայերենը ձևավորվել է արմենների լեզվի հիմքի վրա՝ հայասացիների լեզվի ուժեղ ազդեցությամբ. սրանով էլ բացատրվում է հայ և արմեն անունների փոխհարաբերությունը։

բ) ՀԱՅԱՍԱԿԱՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԸ

Հայտնի է, որ Հայասայի լեզվի մասին գաղափար են տալիս միայն հատուկ անունները, որոնք երեք կարգի են՝ անձնանուններ, դիցանուններ և տեղանուններ։ Նախքան դրանց հանգամանալից քննությունը, հարկ ենք համարում Հայասայի վերաբերյալ մեր անգլերեն և ռուսերեն աշխատությունների [Djahukian, 1961. Джаукян, 1964] համեմատությամբ երեք վերապահություն անել։

1) Այստեղ քննարկումից հանված են Իշուվայի ու այլ երկրների հատուկ անունները, և խոսվում է միայն Հայասա-Ազզիի հատուկ անունների մասին։ Սա արվում է մի կողմից՝ քննության միասնությունը չխախտելու և օտարամուտ տարրերը բացառելու նպատակով, մյուս կողմից՝ Իշուվայի լեզվի վերաբերյալ մեր եզրակացությունների փոփոխության հետևանքով. եթե նախկինում մենք առանց բավարար քննադատության ընդունել էինք Գ. Ղափանցյանի կարծիքը Հայասայի և Իշուվայի բնակչության լեզվական ընդհանրության մասին, ապա այժմ հակված ենք կարծելու, որ Իշուվայի բնակչությունը եղել է խուռալեզու կամ խոսել է խուռերենին մոտ լեզվով։ Այս կապակցությամբ հանված են Alššiia և Arihpizzi- անձնանունները, որոնցից առաջինը պատկանել է Հայասայի Դուկկամային համանուն պախուվական Դուգամայից ծագող մի անձնավորության, երկրորդը՝ Իշմերիգացի մեկին։ Հանված է նաև Gabildiš-ը, որի անձնանուն լինելը կասկած է հարուցում[12]։

2) Մատնանշվում են միայն այն զուգահեռները, որոնց բնույթը որևէ կասկած չի հարուցում, որոնց դեպքում գիտնականների եզրակացությունները հիմնականում միասնական են։ Ավելի քիչ տեղ են գրավում համապատասխան զուգահեռներով չհիմնավորվող ստուգաբանական մեկնությունները։

3) Նախորդ աշխատության լույս տեսնելուց հետո հանդես են եկել նոր

---

[11] Այս կարծիքն է հայտնել նաև Վ. Բենեցյանուն [Бэнецьяну, 1961, 105—106]՝ նշելով, որ հայասական անձնանունների և դիցանունների որոշ բաղադրիչներ հանդիպում են նաև նուզյան աղյուսներում [տե՛ս. Purves, 1943]։ Իրականում նուզյան տեքստերի Ann-, Mutt-, -mu- տարրերը հինանատոլիական ծագում ունեն, -ni, -li տարրերը ընդհանուր են հինանատոլիական և խուռական հատուկ անունների համար, որոշ կարգի նմանություններ էլ (հմմտ. նուզ. Mar(r)- և հայաս. Mariia-) հավանաբար պատահական բնույթ ունեն. Իզուր չէ, որ խեթերը խստորեն տարբերում էին հայասացիներին խուռիներից։

[12] Կապ կա՞ արդյոք մի կողմից՝ Išmeriga-ի անվան և խեթ. išmeri- «սանձ» բառի (հ.-ե. *ismen/r-՝ ըստ Է. Լարոշի), մյուս կողմից՝ Gabildiš-ի և Gapiliyanta տեղանվան (Gapil(i)- բաղադրիչների միջև։

5. ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՀԱՅԱՍԵՐԵՆԸ

ա) ՀԱՅԱՍԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Մ. թ. ա. XIV—XIII դդ. խեթական աղբյուրները պատմում են Ḫaiaša-Azzi *երկրի մասին, որ դիմագրավել է խեթական պետությանը և պատերազմներ մղել նրա դեմ։ Թե որքա՜ն կարևոր դեր է խաղացել Հայասան հին աշխարհի պատմության մեջ և որքա՜ն վտանգավոր եղել խեթական պետության համար, երևում է թեկուզ նրանից, որ հետազոտողները այդ պետության արևելյան և հարավ-արևմտյան հարաբերությունների չորս հիմնական ոլորտներից մեկը համարում են հայասականը՝ դնելով այն խուռականի, աքքադականի և եգիպտականի կողքին* [Kronasser, 1956, 20]։

Դեռևս 1920-ական թթ. հետազոտողները ուշադրություն են դարձնում Ḫajaša *երկրի անվան և հայերի ինքնանվանման* (Hay-k') *նմանությանը։ Հայասա երկրի աշխարհագրական դիրքի, քաղաքական պատմության և լեզվի մասին գրվում են զանազան ուսումնասիրություններ, որոնցից առանձնապես հիշատակելի են Է. Ֆոռերի* [Forrer, 1931], *Է. Կավենյակի* [Cavaignac, 1932. 1934], *Ն. Ադոնցի* [Adontz, 1946], *Գ. Ղափանցյանի* [Капанцян, 1948], *Հ. Մանանդյանի* [Манандян, 1956], *մեր* [Djahukian, 1961. Джаукян, 1964] *և Ի. Մ. Դյակոնովի* [Дьяконов, 1968] *աշխատությունները։*

Հայասա երկրի տեղադրության և սահմանների մասին հետաքրքրական տեղեկություններ են պարունակում Վ. Խաչատրյանի «Խեթական պետության արևելյան շրջանները» աշխատությունը և զանազան հոդվածները [Хачатрян, 1971. 1972. 1973]։

Մեզ հետաքրքրող հարցի՝ Հայասայի լեզվի և հայերենի փոխհարաբերության մասին գիտնականները հայտնել են երեք տարբեր կարծիքներ.

1) Ոչ միայն Հայասայի անունն է կապված հայերի անվան հետ, այլև հայասացիները հայերի անմիջական (ուղղակի) նախորդներն են, նրանց լեզուն՝ հայերենի հիմքը։ Այս կարծիքը ամենից ավելի հստակ կերպով ձևակերպված է Գ. Ղափանցյանի կողմից։ Սակայն երբ նկատի ենք առնում, որ Գ. Ղափանցյանը հայերենը համարում է խառնածին լեզու՝ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական (այդ թվում՝ խուռա-ուրարտական) տարրերի խառնուրդով, և որ, սրա հետ կապված, նույնպիսի բնույթ է վերագրում հայասերենին, ապա նրա վարկածի արժեքը զգալիորեն պակասում է։ Նշենք, որ հայ որոշ հետազոտողներ դեռևս շարունակում են պաշտպանել հայասերենի՝ հայերենի ուղղակի հիմք լինելու տեսակետը՝ առայժմ առանց լեզվական հիմնավորման։

2) Հայասայի և հայերի անունների նմանությունը պատահական է, և Հայասան ոչ մի կապ չունի Հայաստանի ու հայերի հետ։ Այս տեսակետը ամենից ավելի հստակորեն ձևակերպել է Ի. Մ. Դյակոնովը, որ Հ. Տաշյանի նման **հայ** *անունը բխեցնում է խեթերի անունից* (hati->**հայ**), *իսկ Հայասայի լեզվին, ըստ Գ. Ղափանցյանի բերած զուգահեռների, հատկացնում հիմնականում խուռական բնույթ*[11]*։ Նշենք, որ վրացական որոշ հետազոտողներ կապ են տեսնում* Ḫajaša*-ի և Կողքիսի հին անվան՝* Aia*-ի միջև, թեև այս տեսակետը չի հիմնավորվում այլ կարգի տվյալներով։*

3) Հայասայի անունը կապված է հայերի անվան հետ, բայց հայասերենը հայերենի անմիջական հիմքը չէ, այլ հայերենից տարբեր հնդեվրոպական լեզու, որ հանդես է գալիս նրա մեջ որպես կողմնակի շերտ (ենթաշերտ, սուբստրատ)։ Այս տեսակետը հայտնել է տողերիս գրողը՝ հենվելով հայասական անունների փոքրասիական և հատկապես խեթա-լուվական զուգահեռների վրա, որոնք թվով գերակշռում են Գ. Ղափանցյանի և ուրիշների բերած խուռական զուգահեռներին։ Ըստ այս տեսակետի Հայասայի բուն լեզուն ցեղակից է խեթա-լուվական լեզուներին, իսկ հայերենը ձևավորվել է արմենների լեզվի հիմքի վրա՝ հայասացիների լեզվի ուժեղ ազդեցությամբ. դրանով էլ բացատրվում է **հայ** *և* **արմեն** *անունների փոխհարաբերությունը։*

բ) ՀԱՅԱՍԱԿԱՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԸ

Հայտնի է, որ Հայասայի լեզվի մասին գաղափար են տալիս միայն հատուկ անունները, որոնք երեք կարգի են՝ անձնանուններ, դիցանուններ և տեղանուններ։ Նախքան դրանց հանգամանալից քննությունը, հարկ ենք համարում Հայասայի վերաբերյալ մեր անգլերեն և ռուսերեն աշխատությունների [Djahukian, 1961. Джаукян, 1964] *համեմատությամբ երեք վերապահություն անել։*

1) Այստեղ քննարկումից հանված են Իշուվայի ու այլ երկրների հատուկ անունները, և խոսվում է միայն Հայասա-Ազզիի հատուկ անունների մասին։ Սա արվում է մի կողմից՝ քննության միասնությունը չխախտելու և օտարամուտ տարրերը բացառելու նպատակով, մյուս կողմից՝ Իշուվայի լեզվի վերաբերյալ մեր եզրակացությունների փոփոխության հետևանքով. եթե նախկինում մենք առանց բավարար քննադատության ընդունել էինք Գ. Ղափանցյանի կարծիքը Հայասայի և Իշուվայի բնակչության լեզվական ընդհանրության մասին, ապա այժմ հակված ենք կարծելու, որ Իշուվայի բնակչությունը եղել է խուռալեզու կամ խոսել է խուռերենին մոտ լեզվով։ Այս կապակցությամբ հանված են Alššiia *և* Arihpizzi- *անձնանունները, որոնցից առաջինը պատկանել է Հայասայի Դուկկամային համանուն պախուվական Դուկկամայից ծագող մի անձնավորության, երկրորդ՝ Իշմերիգացի մեկին։ Հանված է նաև* Gabildīš*-ը, որի անձնանուն լինելը կասկած է հարուցում*[12]*։*

2) Մատնանշվում են միայն այն զուգահեռները, որոնց բնույթը որևէ կասկած չի հարուցում, որոնց դեպքում գիտնականների եզրակացությունները հիմնականում միասնական են։ Ավելի քիչ տեղ են գրավում համապատասխան զուգահեռներով չհիմնավորվող ստուգաբանական մեկնությունները։

3) Նախորդ աշխատության լույս տեսնելուց հետո հանդես են եկել նոր ուսումնասիրություններ ու փաստեր, որոնք մասնակիորեն փոխել են հեղինակի տվյալները և եզրակացությունները: Այս բոլորն անհրաժեշտ են դարձրել վերստին անդրադառնալ Հայասայի լեզվի հարցին, հաշվի առնել եղած քննադատական դիտողությունները և կատարել որոշ ճշտումներ [Ջահուկյան, 1976]: Դիտողությունները երկու կարգի են՝ ընդհանուր և մասնակի: Ընդհանուր բնույթի դիտողությունն այն է, որ հայասական նյութն անբավարար է հիմնավոր եզրակացություններ անելու համար: Սրա հետ ընդհանրապես չի կարելի չհամաձայնել, բայց հարկավոր է նկատի առնել, որ նախ՝ երբեմն բավական ճիշտ եզրակացություններ են արվել նաև ավելի քիչ փաստերի հիման վրա և երկրորդ՝ այդ նույն հիմունքով պետք է ժխտվեն նաև Հայասայի մյուս հետազոտողների եզրակացությունները: Մասնակի դիտողությունները վերաբերում են առանձին փաստերի և ստուգաբանությունների, որոնք մեր քննադատներին բավարար չափով հիմնավորված չեն թվում: Այս կապակցությամբ կարելի է ասել հետևյալը. նախ՝ մեր քննադատների բերած փաստերը քննության առնված հատուկ անունների ընդհանուր թվի համեմատությամբ մեծ թիվ չեն կազմում և քննադատության ճիշտ լինելու դեպքում էլ ընդհանուր եզրակացությունները չեն խախտում (մանավանդ եթե նկատի առնենք մեր արած վերապահումը իշուվական հատուկ անունների վերաբերյալ). երկրորդ՝ մեր բերած մի շարք ստուգաբանություններ առաջարկված են ուրիշների կողմից կամ հենվում են ուրիշների հայտնի եզրակացությունների վրա, սակայն մեր քննադատները, չառարկելով դրանց դեմ առանձին վերցրած (հմմտ. Anni̯aš, Muttiš, Terittituniš և այլն), առարկում են մեր աշխատության դեմ, որտեղ դրանք ի մի են բերվում և հիմք տալիս համապատասխան եզրակացությունների համար. երրորդ՝ որոշ դեպքերում մեր ընդդիմախոսները կրկնում են այն, ինչին պատասխանված է մեր ռուսերեն աշխատության մեջ [**Джаукян**, 1964, 7], և ինչին ավելորդ ենք համարում այստեղ վերստին անդրադառնալ: Առանձին հարցերի մասին ավելի հանգամանորեն կխոսվի հայասական հատուկ անունների քննության ժամանակ:

---

[11] *Այս կարծիքն է հայտնել նաև Վ. Բենեցյանուն* [Бэнецьяну, *1961, 105—106*]*՝ նշելով, որ հայասական անձնանունների և դիցանունների որոշ բաղադրիչներ հանդիպում են նաև նուզյան աղյուսներում* [*հմմտ.* Purves, 1943]*։ Իրականում նուզյան տեքստերի* Ann-, Mutt-, -mu- *տարրերը հնդեվրոպական ծագում ունեն,* -ni, -li *տարրերը ընդհանուր են հնդեվրոպական և խուռական հատուկ անունների համար, որոշ կարգի նմանություններ էլ (հմմտ. նուզ.* Mar(r)- *և հայաս.* Marila-) *հավանաբար պատահական բնույթ ունեն. Իզուր չէ, որ խեթերը խստորեն տարբերում էին հայասացիներին խուռիներից։*

[12] *Կապ կա՞ արդյոք մի կողմից՝* Išmeriga*-ի անվան և խեթ.* išmeri- *«սանձ» բառի (հ.-ե.* *ismen/r-*՝ ըստ Է. Լարոշի), մյուս կողմից՝* Gabildīš*-ի և* Gapiliyanta *տեղանվան* (Gapil(i)- *բաղադրիչների միջև։*

Մեզ ավանդված բուն հայասական անձնանուններն են Anni̯a- [An-ni-ia-], Ḫuqqanā- [Hu-uq-qa-na-a-], Karanni- [Kar-an-ni-], Mari̯a- [Ma-ri-i̯a-], Mutti- [Mu-ut-ti-], U̯annī- [U̯a-an-ni-i-]:

Այս անձնանուններից՝ երեքի խեթա-լուվական բնույթը կասկածներ չի հարուցում: Anni̯a-, Ḫuqqanā- և Mutti- անձնանուններն ունեն խեթա-լուվական վստահելի զուգահեռներ, որոնց հիմքերը միանգամայն գոհացուցիչ կերպով մեկնաբանվում են հնդեվրոպական ծագում ունեցող խեթա-լուվական հասարակ անուններով: Նուզիի աղյուսակների հատուկ անունների հետազոտող Պ. Պուրվեսը An(n)-, Mutt- բաղադրիչներով հատուկ անուններին անվերապահորեն վերագրում է փոքրասիական-խեթա-լուվական ծագում: Հավանական է նաև Karanni-ի խեթա-լուվական-փոքրասիական բնույթը:

Հայաս. Anni̯a- անվան համար հմմտ. խեթ. և լուվ. Anna-, Annania-, Annanza-, Analla-, Animaššani-, Annitti-, Anniu̯ašu-, Anniu̯i̯ani- (ար.), Annita- (իգ.): Սրանք, ըստ Է. Լարոշի և այլ հետազոտողների, կազմված են խեթ. anna- և լուվ. anni(i̯a)- «մայր» հիմքերից, որոնք ծագում են հ.-ե. *(H)an- «արական կամ իգական նախնի» արմատից. այս արմատն ամենայն հավանականությամբ ունի մանկական բնույթ և տարածված է նաև ոչ հնդեվրոպական լեզուներում (թյուրքական, աբխազ-ադըղեական և այլն): Բերված հատուկ անունների խեթա-լուվական բնույթը հավաստելու համար հիմք է ծառայում երկու հանգամանք. ա) թեև ըստ Գ. Ղափանցյանի հայասերենի Anni̯a- անվան նման անուններ կրում են նաև խուռական (Anni̯a), եգիպտական (Ania) ծագում ունեցող անձինք, բայց նախ՝ խուռական անունը ըստ Պուրվեսի պետք է համարել խեթա-լուվական ծագման, և երկրորդ՝ խուռերենում ու եգիպտերենում չկա an- «մայր» անունով արմատ. բ) այդ բաղադրիչով հատուկ անուններ տարածված են գրեթե ողջ Փոքր Ասիայում, թեև ուշ շրջանում դրանք կարող են խառնված լինել լատինական և քրիստոնեական ծագում ունեցող անունների հետ. այդ հատուկ անունների մեջ հանդիպում են ոչ միայն իգական, այլև արական անձնանուններ՝ հատկապես փռյուգիական, իսավրական, կարիական: -i̯a-ն փոքրացուցիչ-փաղաքշական բնույթի մասնիկ է, որ տարածված է հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուներում:

Հայաս. Ḫuqqanā անձնանունը զուգահեռներ ունի Ḫuḫ(ḫ)a- բաղադրիչով խեթական անունների մեջ՝ Ḫuḫhaziti-, Ḫuḫanani-, Ḫuḫarmati-, Ḫuḫašarpa-, Ḫuḫazulma-, որոնք, ըստ Է. Լարոշի, ծագում են խեթ. ḫuḫḫa- «պապ» հիմքից[13]: Այս հիմքը հանդիպում է նաև խեթա-լուվական այլ լեզուներում (հիեր.-լուվ. ḫuḫa-, լիկ. χuga «պապ») և գալիս է *(H)au̯(H)o- «պապ (մոր կողմից)» հիմքից (այստեղից՝ հայ. հաւ «պապ»): Առանձնապես մոտ է հայասական անձնանունը լիկիական ձևին: Սովորաբար այս անուններին են միացնում նաև լիդիական Γυγης անձնանունը [**Heubek**, 1959, 62]: Լարոշը բերում է նաև կապադովկյան (Ḫ)ugani̯a [(Ḫu)-ga-ni-a] անձնանունը (ըստ ICKI 96, 16):

Հայաս. Mutti- անձնանվան համար Յ. Ֆրիդրիխը [KF, 1, 359—379] նշում է խեթ. Mu̯atti- (=լիդ. Μυαττης անձնանունը)՝ ենթադրելով u̯a > u տիպի ամփոփում (կոնտրակցիա)[14]: Ֆրիդրիխի կարծիքն ընդունում են Գ. Ղափանցյանը և Է. Լարոշը: Mu̯a- (>Mu-) բաղադրիչը գալիս է խեթա-լուվական mu̯a- «ուժ» հիմքից, որ ծագում է հ.-ե. *meu̯ə-ից «շարժել»: Այս կարծիքը հաստատվում է երկու այլ փաստով. ա) -mu- բաղադրիչը հանդիպում է նաև հայաս. Tārū-mu- դիցանվան մեջ, որի Tārū-ն նույնական է խեթական Tarau̯aš դիցանվանը, և հանդիպում է նաև խուռիների մոտ (հմմտ. նաև խեթ. Tāru-lilli- „Tāru- աստծուն նվիրված, աստվածային»). ինչպես խեթ. Kappari̯amu- դիցանունը հետազոտողները մեկնաբանում են որպես «Kappari̯a-ի ուժ», այնպես էլ Tārūmu-ն կարելի է մեկնաբանել որպես «Tārū-ի ուժ». բ) ինչպես կտեսնենք, ամենայն հավանականությամբ համապատասխան u̯a > u ամփոփում առկա է նաև հայաս. Karanni-ի մեջ՝ խեթ. Karau̯ani-ի համեմատությամբ, և, հետևաբար, ընդհանուր առմամբ հայասերենին հատուկ է:

Եթե հայաս. Karanni- անձնանունը իրոք կապված է խեթ. Karau̯ani- անձնանվան հետ (հնչյունական հարաբերությունը այնպիսին է, ինչպես հալաս. Mutti- և խեթ. Muu̯atti-, հմմտ. նաև Kunni- և Kuu̯anni-), իսկ այդ լեզվին հավանական է, ապա նրա նկատմամբ կարելի է կիրառել այն ստուգաբանությունը, որ տալիս է Է. Լարոշը Karau̯ani-ի համար: Ըստ Է. Լարոշի [Laroche, 1952, 136] վերջինս կազմված է խեթ. karau̯ar «եղջյուր» բառից, որ, ինչպես հայտնի է, ծագում է հ.-ե. *k'erəu- հիմքից + խեթ. -ar կամ *k'erə- հիմքից + խեթ. -u̯ar [Kronasser, 1956, 64—65] և կապված է խեթ. ḫaršan «գլուխ» բառի հետ: Այս դեպքում խեթ. անձնանվան համար կարելի է նշել հուն. κάρανον «գլուխ», լատ. κάρανος «տեր» և մակեդ. Κοραvος (կամ κοραvος — հատուկ անուն՝ «թագավոր») զուգահեռները [Frisk, GFW, 1, 788]: Այս բոլոր ձևերի արմատն է հ.-ե. *k'er- «մարմնի վերին մաս՝ գլուխ, գագաթ, եղջյուր», որտեղից հայ. սար: Եթե այս ստուգաբանությունը ճիշտ է, Karanni-ի աղբյուրը, ի տարբերություն հայերենի, centum տիպի լեզու է: Ուգարիտյան տեքստերում հանդիպող ակկադ. ^{m}Kar-ra-nu անձնանվան հետ նմանությունը այս բացատրության դեպքում պետք է պատահական համարել, եթե չենթադրենք փոխառություն:

---

[13] Է. Լարոշը [**Laroche**, 1952, 111—112], հիշատակում է նաև ḫuḫa- (թանկագին քարի անուն) բառը (հատկապես մեկ ḫ-ով ձևերի համար), բայց ավելի հավանական է համարում վերևում բերված վարկածը:

[14] Mu-u̯a-> mu- անցման համար հմմտ. նաև Mutta, Muttanani, Mutalli- (Mu̯atalli-ի տարբերակը), Panamuti- [**Laroche**, RHA, 17, 57, 1955, BSL, 55, 1959]:

Հ.-ե. միևնույն արմատից ծագող խեթ. ḫaršan «գլուխ» բառը բավական տարածված բաղադրիչ է խեթա-լուվական հատուկ անուններում՝ Ḫaršanḫila-, Ḫaršumna- և այլն:

Պակաս հավանական է հայաս. Karanni-ն բաժանել Kar- և anni- բաղադրիչների՝ երկրորդը նույնացնելով հայաս. Annii̯a-ի մեջ էլ արտահայտված anni- «մայր» բառի և առաջինը համեմատելով կար. Kar-, լիկ. kar-, ker- (kerēi<*karon) բաղադրիչների հետ (հմմտ. Karḫuḫa- դիցանունը, որի երկրորդ բաղադրիչը հիշյալ խեթ. ḫuḫḫa- «պապ» բառն է). այս Kar-ը նույնացվում է կարիացիների անվան հետ և հանգեցվում է Kar- դիցանվանը [Гиндин, 1967, 108—114]:

Uanni- անձնանունը Է. Լարոշը [Laroche, 1952, 114] բխեցնում է լուվ. u̯an(n)iš հատուկ անունից, որի իմաստը, սակայն, նա հետագայում որոշում է որպես «քարե սյուն, կոթող» և համեմատում հիեր.-լուվ. u̯an-(a)i- նույնիմաստ բառի հետ [Laroche, 1959, 106]: Նա հիշատակում է նաև հիեր.-լուվ. Uana անձնանունը: Մենք կավելացնեինք Οὐαν- բաղադրիչով այն փոքրասիական հատուկ անունները, որոնք կապ չունեն հուն. Fαναξ-ի հետ: Հին անատոլիական Uanni-ն Վ. Դրեսլերը նույնացնում է փռյուգ. Uena-u̯ia (<Uana-u̯ii̯a) անվան առաջին մասի, այլև (նվազ հավանականությամբ) անատ. Tuttuu̯ani-, Urau̯ani- և այլ հատուկ անունների -u̯ani բաղադրիչի հետ [Dressler, 5, 10, 1, 1964, 110]: Այս u̯en- հիմքով անունները չպետք է շփոթել u̯in- հիմքով անունների հետ:

Marii̯a- անձնանվան համար հնարավոր է երկու ենթադրություն:

1) Հայասական անձնանունների մեջ փոքրասիական տարրի ակնհայտ գերակշռության պայմաններում պատահական չպետք է համարել նմանությունը խուռիական, ակկադական ու այլ անձնանուններին և համեմատել խեթ. Marakkui-, Maraššali-, Maraššalii̯a-, պիսիդ. Μαρα-μο(ας), բիթ. Μαρας, լիկ. Marra, Ια-μαρας, Ουα-μαρας անձնանունների և լիդ. Marivda դիցանվան, այլև Mer-, Meri- բաղադրիչներով փոքրասիական այլ անձնանունների հետ: Փոքրասիական Mara-/Mari-/Meri- բաղադրիչի նախնական իմաստը պարզ չէ. ոմանք այն համեմատում են լիկ. B mara- «ավագների խորհուրդ», ոմանք լիդ. marti «սահմանում է, կարգադրում է, հրամայում է», ոմանք խեթ. ^{GIŠ}māri- «նիզակ» բառերի հետ [Гиндин,1967, 116][15]:

2) Marii̯a-ն կարելի է համեմատել խուռ. marii̯annu և ուրարտ. mari- բառերի հետ, որոնք ծագում են հ. հնդկ. márya- «այր, երիտասարդ, կռվարիճ, սիրեկան, փեսացու» բառից. խուռերեն բառը մեկնաբանվում է որպես «երիտասարդ մարտիկ, կառամարտիկ, ազնվական ազնվականության ներկայացուցիչ, ազնվական» [Friedrich, 1952, 322, 327], ուրարտականը՝ որպես «ազնվական» [Дьяконов, 1963, 327]. Հայասական ձևը զուրկ է խուռերենին բնորոշ -(a)nni- [ակկադականացված ձևով՝ -(a)nnu] բաղադրիչից և միաժամանակ, ի տարբերություն ուրարտերենի, ունի -a- տարրը, այսինքն՝ հայասերենը կամ բառն առել է հին հնդկական ցեղերից անմիջաբար, կամ խուռական միջնորդությամբ, բայց դեն նետելով իր համար ոչ բնորոշ տարրը [Marii̯a-ի համար հմմտ. նաև **Иванов**, ПС, 3, 1979, 101—112][16]:

գ) ՀԱՅԱՍԱԿԱՆ ԴԻՑԱՆՈՒՆՆԵՐԸ

Մեզ ավանդված հայասական դիցանուններն են Baltaik [Ba-al-ta-ik], Šillili... [Ši-il-li-li...], Tārūmuš [Ta-a-ru-u-mu-uš], Terittitūniš [Te-ri-it-ti-tu-u-ni-iš], Unagaštaš [U-na-ga-aš-ta-aš], Zakk(an...) [Za-ak-k(an-...)], այլև սկզբից վնասված նշանախմբեր ունեցող և ենթադրաբար վերականգնվող (Izzišt)anuš [(Iz-zi-iš-ta)-an-nu-uš] և (Kar)ḫuḫuš [(Ka-ar)-ḫu-ḫu-uš]: Հանդիպում են նաև հայաս. աստվածների՝ գաղափարագրական (^{d}U.GUR, ^{d}Inanna) և գաղափարագրական-լրացական [^{d}U takšanaš «հավասարության աստված» (խեթ. takšatar, սեռ. takšannaš «հավասարության») կամ «միջօրեի աստված» (խեթ. takšan, սեռ. -aš «կես, հոգ. միջօրե»)[17] նշանակումներ:

Հայասական դիցանուններից երկուսը՝ (Kar)ḫuḫuš (եթե հավաստի է Kar- բաղադրիչի վերականգնումը), Tārūmuš, փոխառյալ աստվածություններ են: Սրանցից առաջինը զուգահեռ ունի լուվ. Karḫuḫaš-ի [Kar-ḫu-ḫa-aš] մեջ, որ Կարքեմիշի գլխավոր աստվածություններից երրորդն էր [**Meriggi**, 1962, 70]: -ḫuḫuš (հայաս. -ḫuḫuš) բաղադրիչը նույնն է հայաս. Ḫuqqanā-ի կապակցությամբ քննված ḫuḫ(ḫ)aš «պապ» խեթա-լուվական բառի հետ և ցույց է տալիս, որ հայասացիները դիցանունն ամբողջությամբ փոխ են առել, առանց կապելու իրենց համապատասխան ḫuqqa- «պապ» բառի հետ. սա երևում է նաև դիցանվան հիմքի այլ ձայնավորումից (a-ի փոխարեն u)։ Tārūmuš-ի Tārū- բաղադրիչը, ամենայն հավանականությամբ, նույնն է խաթական Tārū-ի (ժամանակի աստված) հետ, որ, ինչպես նշվել է, ավանդված է նաև խեթերի և խուռիների մոտ։ Խեթերի մոտ այս աստծու անունից կազմված է Tārū-lilli-ն «Թարու աստծուն նվիրված, թարուական, աստվածային»։ Mutti- անձնանվան քննության ժամանակ մենք բերեցինք Յ. Ֆրիդրիխի և Է. Լարոշի կարծիքը, ըստ որի mu-ն խեթա-լուվական muṷa- «ուժ» հիմքի կրճատ ձևն է։ Լարոշն այդ mu-ն տեսնում է նաև Tārūmuš դիցանվան մեջ՝ նկատի ունենալով խեթ. Kapparii̯amuš «Կապպարյան ուժ» դիցանունը։ Այսպիսով, հայաս. Tārū-mu-ն նույնպիսի կազմություն է, ինչ խեթ. Kapparii̯a-mu-ն և նշանակում է «Թարուի ուժ»։

---

[15] Ի միջի այլոց, Լ. Ա. Գինդինը Marii̯a-ն քննում է հին անատոլիական հատուկ անունների մեջ առանց որևէ վերապահության: Է. Լարոշը [Laroche, 1952, 113] համահունչ խեթական Marri- անձնանունը համեմատում է խեթ. marri «դենը, այն կողմը» կամ marrii̯a- «թափել» բայի հետ: Հալիսի հետ նույնացվող ^{ÍD}Maraššanta-ն (^{ÍD}Maraššantii̯a-) մեկնաբանվում է որպես «կարմիր գետ», և նրա անունը կապվում լուվ. mar(r)u(u̯a)š «կարմիր» բառի հետ:

[16] Հայերենում առկա այնպիսի ակնհայտ հնդկական փոխառության համար, ինչպիսին է ջամբ «ուտելիք, կերակուր» (ջամբել «մանրելով կերցնել, սնուցանել, խնամել») կարելի է ենթադրել հայասական միջնորդություն:

[17] Takšanaš-ի առաջին մեկնությունը Է. Ֆոռերինն է, երկրորդը՝ մերը: Կան նաև ^{URU}Takšana քաղաքանուն և Takšanuman անձնանուն (-uman-ը ածանց է=հայ.-ացի):

Unagaštaš դիցանվան -aštaš բաղադրիչի համար Գ. Ղափանցյանը բերում է մի կողմից՝ խեթ. -ašti- ածանցով կազմությունները՝ նկատի ունենալով նաև հայ. -աստ ածանցը, մյուս կողմից՝ խուռա-ուրարտ. -išta, -išti կազմությամբ հատուկ անունները (խուռ. Enništa, Itḫišta կամ Itḫišti, Tarḫišti, ուրարտ. Argišti)։ Մի կողմ թողնելով -išti բաղադրիչով խուռական և ուրարտական անձնանունների ծագման հարցը[18], նշենք, որ Գ. Ղափանցյանն անուշադրության է մատնում ձայնավորման տարբերությունները։ Հայասերենի -ašta-ի դիմաց խուռերենը և ուրարտերենն ունեն -išti կամ -išta, խեթերենը՝ -ašti-. վերջինս կազմում է վերացական գոյականներ՝ չափ նշանակող ածականներից (հմմտ. talukašti- «երկարություն», palḫašti- «լայնություն» և այլն). այն սովորաբար համեմատվում է սլավ. -ostь-ի հետ և բխեցվում հ.-ե. *-os-tei-ից[19]։ Խեթերենի հայկական զուգահեռները ցույց են տալիս, որ ածանցի սկզբնական գործառությունն ավելի լայն է եղել։ Եթե հայասական -ašta-ն իրոք կապված է խեթ. -ašti-ի, սլավ. -ostь-ի և հայ. -աստ-ի հետ, ապա Unagaštaš-ը կարող է հանդես գալ որպես դիցանուն վերացական երևույթի անձնավորման հիման վրա, որ հնարավոր է, բայց քիչ հավանական։ -aštaš-ի համար թերևս կարելի է ենթադրել խեթ. -ašti-ից տարբեր ծագում (*-os-tos?)։ Նշենք, որ Փոքր Ասիայում տարածված են եղել -αστα(ς)-ով և -αστις-ով վերջացող անձնանուններ՝ գերազանցապես իգական սեռի անձերի համար՝ կար. Αλαστα, փռյուգ., լիկ., պիս. Αρμαστα (պիսիդ. նաև Αρμαστις), լիկ., պիս. Ερμαστα, լիկ. Μαμαστα, պիսիդ. Μαμαστος, իսավր.-կիլ. Κρεσαϲεστις, փռյուգ.-լիկ. Παπυστις։ Հայաս. -aštaš-ի հարցի լուծումը շատ բանով կախված է Unag(a)-ի բնույթից, որ Ղափանցյանը թողնում է առանց մեկնաբանության՝ չգտնելով իր նշած լեզուներում համապատասխան զուգահեռներ[20]։

Անձնանունների մեջ հայասական և խեթա-լուվական մեծ թվով բացահայտ զուգահեռների առկայությունը հիմք է տալիս հավանական համարելու Tarittitūniš դիցանվան մասին Գ. Ղափանցյանի հայտնած կարծիքը, ըստ որի Teri(t)-ը համապատասխանում է խեթ. teri «երեք» և -titūniš-ը՝ հայ. տուռն, տուտն («վերջավորություն, ագի, պոչ») բառերին. ըստ այդմ ամբողջ բաղադրությունը պիտի նշանակած լինի «եռատուտն, եռագի»։ Միայն թե այս դեպքում ճիշտ լինել չի կարող Terittitūniš-ի ղափանցյանական համեմատությունը հուն. Τρίτων-ի հետ (Պոսեյդոնի որդու անունը), որ հակված են բխեցնելու հ.-ե. *trīto- (*trii̯əto-) «խոնավ տարր, ծով» նախաձևից [Pok., 1, 1096. Frisk, GEW, 2, 933—934][21]։ Գ. Ղափանցյանը չի նշում նաև տուռն-ի հնարավոր բուն հնդեվրոպական ծագումը։

Սակայն հնարավոր է -titūniš-ի մի այլ մեկնաբանություն ևս։ Սրա tit- բաղադրիչը մեծաթիվ զուգահեռներ ունի Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի հատուկ անունների մեջ. հմմտ. նախահուն. Τιθωνός (Էոսի ամուսինը), Τιτάν, հգն.-ᾶνες (տիտանները՝ Ուրանոսի և Գեայի զավակ-աստվածները), Τιτώ (արշալույսի դիցուհին), թրակ. -titha, -tita (բաղադրիչ Germetitha դիցանվան և Nusa-tita անձնանվան մեջ), Τιθα, Τιθυτες (անձնանուններ), Τιτις (դիցուհու անուն), լիդ. Τιτακαζος, պիսիդ. Τιτυασσος (անձնանուններ), խեթ. Titai, Tittii̯a (կապադ. Didia, անձնանուններ) և այլն։ Նկատի ունենալով հնդեվրոպ. բառարանի տվյալները և d/t հնչյունական տատանումը՝ հետազոտողները, սկսած Պ. Կրեչմերից, հավանական են համարում համեմատությունը հ. հնդկ. dīti- «լույս, փայլ», ալբ. ditë «օր» և այլ բառերի, այդ թվում նաև հայ. տիւ «օր» բառի հետ (հ.-ե. *dei- «փայլել, շողալ») [հմմտ. **Гиндин**, 1967, 87—90][22]։

Եթե Šilili... դիցանվան մնացած վերջամասը ուղղականի վերջավորություն է (*Šililiš), ապա կարելի է առանձնացնել -(i)li- ածանցը, որ հանդիպում է փոքրասիական ու մասնավորապես խեթ. հատուկ անուններում և ցույց է տալիս պատկանելություն, վերաբերություն կամ սերում։ Խեթ. -ili-ով այս հատուկ անուններից շատերը կազմված են տեղանուններից, ժողովուրդների անուններից և դիցանուններից՝ Antaratli-, Arnili- (հմմտ. հայաս. Arnii̯a քաղաքանունը և զուգահեռ Arn- բաղադրիչով տեղանունները), Ḫaitili-, Ḫakkarpili-, Ḫarapšeli (հմմտ. Ḫarapšeki-), Ḫattušili-, Katapaili-, Kaškaili-, Tarḫunzili- և այլն։ -ili- ածանցը ծագում է կամ հ.-ե. *l-ով ածանցային ձևից, կամ, որ ավելի հավանական է համարվում, խաթական պատկանելության ածանցից, որ առկա է նաև խեթ. դերանունների կազմության մեջ։ Այս դեպքում թերևս ճիշտ է šil(l)-ի մեր համեմատությունը խեթ. šeli- «հացահատիկի շեղջ» կամ, ավելի հավանաբար, šēli- «սրբահարված(?), նվիրված(?)» հիմքի հետ։ Սակայն, ինչպես կտեսնենք, հնարավոր է նաև բառի հայկական մեկնությունը, եթե այն կապված է հայ. սիղեղ (սեղեղ, սիղեխ, սեղեխ) «սրբեկան» բառի հետ։

---

[18] Բացառված չէ ուրարտ. Argišti անձնանվան՝ հ.-ե. աղբյուրից փոխառյալ լինելը։

[19] Է. Բենվենիստը [Benveniste, 1962, 89], հենվելով հատկապես հայկական նյութի վրա, խեթ. -ašti-ն մեկնաբանում է ոչ թե -aš-ti, այլ -a-šti- ձևով, այսինքն՝ a-ն համարում է հիմքակազմ տարր (հմմտ. հայ. իմաստ)։

[20] Անհնար չէ ^{d}Unagaštaš-ի համար ենթադրել ^{d}U nagaštaš ձև (հմմտ. ^{d}U takšanaš), և այդ դեպքում nagaštaš-ը համարել ինչ-որ nagaštiš գոյականի սեռական հոլովաձև (nagaštaiaš>nagaštaš) հմմտ. խեթ. nakki- «ծանր», այլև (հայերեն -աստ-ով զուգահեռների բայական ծագումը հաշվի առնելու դեպքում), naḫ(ḫ)- «վախենալ, հարգել, պատվել, ակնածել, պաշտել, շրջահայաց լինել», որին վերագրում են հ.-ե. ծագում և ուղղակիորեն կապում հ. իռլ. nār «համեստ, պարկեշտ» բառի հետ։ Մեր վերոհիշյալ աշխատության մեջ Unagaštaš-ը բխեցված էր հ.-ե. *ong^{u}- «օծել» արմատից։

[21] Տուտն և տուռն ձևերի՝ հայասական -titūniš-ի հետ կապ ունենալու դեպքում անհավանական է teri(t)-ի խեթական մեկնությունը։

[22] Հատկանշական է, որ մեր կողմից այս արմատին է վերագրվել հայ. տի- (տիեզերք, տի-կին, տի-այր>տէր) բաղադրիչը (հմմտ. լիդ. didis «մեծ»), և նշվել են համապատասխան բառեր կովկասյան, խուռա-ուրարտական լեզուներում, խաթերենում [Djahukian, 1969, 71—72]։

Žakk(an).. և Baltaik դիցանունների մեկնաբանության հարցը ավելի դժվար է։ Եթե բացառենք Գ. Ղափանցյանի կողմից առաջինի համար բերվող խեթ. Zaggagā զուգահեռը (ճշտել Zappiqaga) և լուվ. -zagani-ն, ապա կարելի է նշել խեթ. Zaḫapauteni իգական անձնանունը, որի առաջին մասը թերևս կապ ունի այս դիցանվան հետ[23]։

Baltaik-ի համար հնարավոր է երկու ենթադրություն. 1) կամ -ik ածանցը խուռական ծագում ունի (այն հանդիպում է նուզյան աղյուսներում՝ լինելով հատուկ անունների կազմիչ՝ անորոշ իմաստով), և այդ դեպքում թերևս ամբողջ դիցանունը հայասացիներին է անցել խուռական աշխարհից. Գ. Ղափանցյանը Balta-ի կապակցությամբ հիշատակում է ակկադ. baltu «կենդանի» բառը. 2) կամ -ik-ն ունի փոքրացուցիչ-փաղաքշական արժեք ու հ.-ե. ծագում, և այս դեպքում հնարավոր է Balta-ի համար ևս ենթադրել հ.-ե. ծագում(*bhl-to- «փայլուն»?)։ Համահունչ լիդիական baλta բառի բնույթը պարզ չէ [Gusmani, 1964, 75]։ Ոչինչ չի ասում նաև Baltulḫi ցեղանունը, որ հանդիպում է ուրարտական արձանագրություններում։

դ) ՀԱՅԱՍԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ

Մեզ ավանդված հայասական տեղանունները (քաղաքանուններ, մասամբ նաև երկրանուններ) հետևյալներն են՝ Arḫita [Ar-ḫi-ta, A-ar-ḫi-i-ta], Aripša [A-ri-ip-ša-a, A-ri-ip-ša-aš, A-ri-ip-ša-a-an], Arnii̯a [Ar-ni-i̯a], Arzii̯a [Ar-zi-i̯a], Azzi [Az-zi], Ḫai̯aša [Ḫa-i̯a-ša], Ḫalimana [Ḫa-li-ma-na], Ingalau̯a [In-ga-la-u̯a], Kam... [Ka-am...], Gašmiaḫa [Ga-aš-mi-i̯a-ḫa], Gazū [Ga-zu-u], Laḫirḫila [La-ḫi-ir-ḫi-la], Paḫḫutei̯a [Pa-aḫ-ḫu-u-te-i̯a], Parai̯a [Pa-ra-i̯a], Pāteu... [Pa-a-te-u...], Bittii̯ariga [Bit-ti-i̯a-ri-ga][24], Šapaguru̯anta [Ša-pa-gu-ur-u̯a-an-ta], Tamatta [Ta-ma-at-ta], Duggama(na) [Du-ug-ga-am-ma-na, Du-uq-qa-am-ma, Du-uk-kam-ma-an-na, Du-uk-ka-am-ma-an-na], Ura [U-ra]։ Հայտնի է նաև մի քաղաքանուն, որի ընթերցումը կասկածելի է՝ Qa?-ad-ma?(ku?)-ša?(ta?)։ Հայասայի տերիտորիայում հիշատակված են Laḫa [La-ḫa-a] անունը կրող լեռներ։

Հայասական տեղանունների համեմատությունը փոքրասիական այլ տեղանունների հետ հնարավորություն է տալիս պարզելու կազմության ակնհայտ զուգահեռությունը և բացատրելու կազմիչների մեծ մասի ծագումը։ Կարելի է, իհարկե, ենթադրել, որ հայասական տեղանունները Հայասայի բուն լեզվից անկախ կազմություններ են, սակայն ավելի հավանական է կարծել, որ հայասական անունների գոնե մի մասը տեղական բնույթ ունի, և որ, հետևաբար, նրանց լեզուն կարելի է կապել փոքրասիական և, հատկապես, խեթա-լուվական լեզուների հետ։

Հայասական տեղանունների մեջ կարելի է առանձնացնել ածանցական կազմություններ և բարդություններ։ Առաջինները վերջածանցավոր բնույթի են և բացահայտ զուգահեռներ ունեն փոքրասիական, երբեմն էլ ավելի հեռու տարածված տեղանունների մեջ։ Դեռ ավելին, դրանց կազմությունը մեծ մասամբ խեթա-լուվական բնույթ ունի և կարող է բացատրվել հնդեվրոպական հիմքի վրա։ Հայասական տեղանունների մեջ տեղ գտած վերջածանցները հետևյալներն են [հմմտ. **Капанцян**, 1956, 409—462. **Garstang—Gurney**, 1959. **Monte—Tischler**, 1978].

1) -(a)ḫa (Gašmiaḫa). այս ածանցն զգալի տարածում ունի Փոքր Ասիայի արևելյան մասերում և հարակից շրջաններում։ Գ. Ղափանցյանը [**Капанцян**, 1956, 433] բխեցնում է խուռա-ուրարտ. -ḫi ստացական ածանցից՝ -ḫa ձևի a-ի մեջ տեսնելով տեղացույց վերջավորություն։ Նկատի ունենալով ածանցի տարածման ոլորտը՝ այս կարծիքը կարելի է հավանական համարել, թեև հնարավոր է մատնանշել նաև խեթա-լուվական աղբյուր. հմմտ. խեթ. բայանվանական -eš-ḫa-, -aš-ḫa- բաղադրյալ ածանցի -ḫa-ն ինչպես նաև -(a)ša ածանցի լիկ. Ա -ehi, -ahi տարբերակը (լիկ. Բ esi-ի դիմաց)։

2) -(a)ša [Ḫai̯aša, թերևս նաև Aripša և Qa?-ad-ma?(ku?)-ša?(-ta?)]. այս ածանցը, ի տարբերություն -(a)ḫa-ի, տարածված է Փոքր Ասիայի հատկապես արևմտյան մասի տեղանուններում և ակնհայտ խեթա-լուվական ծագում ունի. այս լեզուներում այն կազմում է սեռական հոլովին զուգահեռ ստացական ածականներ՝ խեթ. -ašša (ḫantašša «ճակատային»՝ ḫant- «ճակատ» բառից), հիեր.-լուվ. -aša, լուվ. ašši, լիկ. B -esi, լիկ. Ա -ehi, -ahi՝ բխելով հ.-ե. սեռական հոլովի *osi̯o վերջավորությունից։ Այսպիսով, Ḫai̯aša- բուն իմաստով նշանակում է «ḫai̯-ական»։

3) -(i)i̯a (Arnii̯a, Arzii̯a, Parai̯a, Paḫḫutei̯a)[25]. այս ածանցը լայն տարածում ունի փոքրասիական տեղանուններում և նույնն է հայասական անձնանունների -ii̯a ածանցի հետ (Annii̯a, թերևս նաև Marii̯a)։ Ամենայն հավանականությամբ այն ծագում է հ.-ե. *-ii̯o- ածանցից։ Որոշ դեպքերում միևնույն տեղանունները հանդիպում են երկու տարբերակով՝ և՛ -(i)i̯a-ով, և՛ առանց -(i)i̯a-ի՝ Ḫuu̯alušša և Ḫuu̯aluššii̯a, Marašanta և Maraššantii̯a, Tapik(k)a և Tapikkii̯a, U̯ilušša և U̯iluššii̯a, Zidakapišaš և Zitakapiššii̯a։ Թեև -(i)i̯a-ով կազմություններ կան նաև ոչ փոքրասիական տեղանուններում, բայց փոքրասիական-խեթա-լուվական տեղանունների -(i)i̯a-ի նույնությունը խեթա-լուվական լեզուների -(i)i̯a- ածանցի հետ կասկած չի հարուցում. այս -(i)i̯a-ով հիմքերը հերթագայվում են -i-ով հիմքերի հետ, որոնց ներկայացուցիչը հայասերենում Azzi տեղանունն է. հմմտ. խեթ. ḫante-zi(i̯a)-(<*(H)anti-ii̯o-), լուվ. tati(i̯a)- «հայր», anni(i̯a)- «մայր», լիկ. kbi(ja) «այլ» և այլն։

4) -(i)t(t)a (Arḫita, Tamatta). դժվար է ասել, -(i)ta- և -tta- ածանցները միանգամայն տարբեր ածանցնե՞ր են, թե միևնույն ածանցի տարբերակները։ Գ. Ղափանցյանը սրանք միացնում է և օրինակներ բերում փոքրասիական ու հարակից շրջանների տեղանուններից։ Սակայն նրա բե-

---

[23] Անհավանական է համեմատությունը խեթ. zaḫ(ḫ)- «խփել, ջախջախել» բայարմատի հետ, որ պահպանված է հայ. ջախել, ջախջախել և բարբ. ու ուտ. համխտում բառերում.

[24] Քաղաքը, թերևս, բուն հայասական չէ, այլ մերթ ընդ մերթ եղել է Հայասայի կազմում։

[25] Վերջինիս -tei̯a-ն Վ. Խաչատրյանը [**Хачатрян**, 1971, 119, ծան. 1] նույնացնում է խուռ. tea- «մեծ» բառի հետ՝ մեկնաբանելով ամբողջ կազմությունը որպես Paḫḫuu̯a Մեծ։

րած օրինակները ակնհայտորեն տարբեր բնույթի ու ծագման են, մանավանդ եթե նկատի առնենք անձնանվանական զուգահեռները (հմմտ. խեթ. Annita, իգ. Annitti՝ հայաս. Annii̯a- կողքին) [հմմտ. **Капанцян**, 1956, 426—429]: Անհնար չէ խեթական ծագում ունեցող տեղանունների մեջ տեսնել հ.-ե. *-t- տարրն ունեցող ածանցական կազմություններ. հմմտ. խեթ. -(a)tt- և -ta- ածանցներով բայանվանական կազմությունները [հմմտ. **Иванов**, 1963, 187—188][26]:

5) -mana, -ma [Ḫalimana, Duggama(na)]. -ma վերջածանցով կազմությունները ևս բավական հաճախադեպ են փոքրասիական տեղանունների մեջ: Գ. Ղափանցյանը շեշտում է -ma-ի գոյածանցական բնույթը՝ բերելով Pergam(a) (ըստ Ղափանցյանի՝ խեթ. bargu- «բարձր» բառից), Tarkuma (Tarku աստծու անունից), Datima [Datt(a) աստծու անունից], Aladarma (aladdari- «հացահատիկ» բառից) օրինակները, թեև նշում է նաև խեթ. -ima բայանվանական վերջածանցի հետ կապելու հնարավորությունը [**Капанцян**, 1956, 424—425]: Թեև -mana-ն համարվում է միևնույն -ma-ն՝ աճած -na-ով, բայց -mana-ն Ḫalimana անվան մեջ թերևս կարելի է դիտել որպես ինքնուրույն ածանց՝ խեթ. -mana-ին զուգահեռ (հմմտ. arunamana- «ծովային»՝ aruna- «ծով» բառից):

6) Թեև -u̯a-ն համարվում է տեղանվանական ամենատարածված ածանցներից մեկը [**Капанцян**, 1956, 436—437], և նրան վերագրվում է «ամրացված կառույց» նշանակությունը [**Brandenstein**, ZO, 2, 1927. B, 1937, 737], բայց -u̯a-ով բոլոր կազմությունները միևնույն արժեքը չունեն: Մի շարք դեպքերում կարելի է առանձնացնել u̯-ն որպես հիմքակազմ տարր և u̯-ն որպես ներհավելական հնչյուն: Այս առումով դժվար է որոշակի բան ասել Ingalau̯a-ի ածանցական կազմության մասին, թեև հանդիպում են Ištanuu̯a (Ištanu դիցանունից), U̯ataru̯a և այլ տեղանուններ: -u̯a-ով կազմությունները մասամբ հ.-ե. բնույթի են (հմմտ. Aḫḫii̯au̯a—աքայացիների անունը), մասամբ (Միտաննիի մերձավոր շրջաններում) թերևս իրոք ծագում են խուռ. սեռականի -u̯e-ից [**Дьяконов**, 1968, 86]:

7) -u̯anta (Šapaguru̯anta). Այս ածանցը հանդիպում է փոքրասիական տեղանունների մեջ -u̯ant/da ձևով [**Капанцян**, 1956, 417. **Laroche**, REA, 19, 69, 1961, 64] և նույնն է խեթ. -u̯ant- (-mant-) ածանցի հետ, որ ածականներ է կերտում բայերից ու գոյականներից (հմմտ. kartimii̯au̯ant- «բարկացկոտ»՝ kartimii̯a- «բարկանալ» բայից, kištu̯ant- «քաղցած»՝ kašt- «քաղց» գոյականից, šamankuru̯ant- «մորուքավոր»՝ zamankur- «մորուք» գոյականից և այլն). -u̯ant-ը բաղկացած է -u̯- և -(a)nt- տարրերից, որոնք հ.-ե. ծագում ունեն [**Kronasser**, 1956, 427. **Иванов**, 1963, 189, 195]. Ամենայն հավանականությամբ միևնույն -u̯ant/da- ածանցն է առկա հին անատոլիական տեղանուններում՝ Gapilu̯anta, Paraššu̯anda, Taniu̯anda, Tapšanuu̯anta, U̯ašatuu̯anda, U̯ti̯anau̯anda (U̯inuu̯andaš), կար. Alabanda,

---

[26] Անհնար չէ ենթադրել, որ հայաս. -(t)ta-ն ծագում է -nta-ից, այսինքն՝ տեղի է ունենում n-ի անկում, ինչպես կապադովկերենում [հմմտ. **Laroche**, REA, 19, 69, 1961]: Վ. Խաչատրյանը [**Хачатрян**, 1971, 127] Tamatta-ի -at(t)a-ն համարում է հավաքական նշանակություն ունեցող խեթ. -atar ածանցի տարբերակը, սակայն վերջինս բաղկացած է -a- հիմքակազմ տարրից և -tar-/-tan- բուն ածանցից, որ վերացական անուններ է կազմում (սա էլ ունի *-t- և *-er-/-en- բաղադրիչները):

լիկ. Arnab/u̯anda, որոնցից երկրորդի Arna- բաղադրիչի համար հմմտ. հայաս. Arnii̯a քաղաքանունը:

Ի՞նչ կարելի է ասել այս տեղանունների մասին:

-(i)i̯a վերջածանցով կազմություններից Arnii̯a-ի Arn- բաղադրիչը բազմաթիվ զուգահեռներ ունի ինչպես փոքրասիական (հմմտ., օրինակ, կար. Ἄρνισσα, լիկ. Arnab/u̯anda, Ἄρνεαι և այլն), այնպես էլ բալկանյան և առավել արևմուտք ընկած տեղանունների մեջ: Սրանց համար, եթե մանավանդ մենք գործ ունենք գետանունների և գետերի հետ կապված տեղանունների հետ, ենթադրում են հ.-ե. ծագում՝ *orno-, *ornā «ալիք, հոսանք, հեղեղ գետ» (*er- «շարժել, հուզել» արմատից, որտեղից խեթ. arāi- «բարձրանալ», arnu- «շարժել, հեռացնել, տանել, բերել»)[27]:

Arzii̯a տեղանունը հանդիպում է նաև խեթական և լուվական այլ տեքստերում. հմմտ. լուվ. arzii̯aššiš «արզիական» և խեթ. A.ŠÀ ar-zi-i̯a-aš «Արզիայի դաշտ» [**Laroche**, 1959, 32]: Ա. Գյոցեն Ars-, Arz [հմմտ. լիկ. erze, Arsis, պիսիդ. Arsas և այլն, ավելի հին Arzanaḫsu, Arza(u)u̯a] բաղադրիչը նույնացնում է խեթ. Éarzana- «հյուրանոց, իջևան», arzanant- «տեղավորված, տնավորված» բառերի արմատի հետ [**Goetze**, 1954, 78]:

Parai̯a տեղանվան Par(a)- հիմքը խեթա-լուվական լեզուներում ներկայացված է լայն ճյուղավորմամբ և հանդես է գալիս հատուկ անուններում (այդ թվում՝ տեղանուններում՝ հմմտ. խեթ. Parii̯ana, Parašša(?), կար. Parableia և այլն). այն ծագումնաբանորեն կապված է խեթ. para «առաջ, դուրս, հեռու», parii̯a(n) «միջով, այն կողմը, դենը», paru «հեռու, ավելի հեռու», լուվ. parran «առաջ, դուրս» և այլ բառերի հետ: Սրանք բոլորն էլ ծագում են հ.-ե. *per- արմատից [այստեղից են հուն. πόρος-ը և թրակ. πα-ρα-ն (տեղանունների բաղադրիչ)՝ «գետանց, անցահուն, ուղի» իմաստով]: Parai̯a անվան մեր համեմատությունը թրակ. Βερ(ρ)οια, Beroe տեղանվան հետ (հ.-ե. *bher-, որից հայ. բերրի) [**Джаукян**, 1964, 59] ավելի քիչ հավանական է, թեև ոչ անհնար, եթե նկատի առնենք թրակա-փոքրասիական և թրակա-հայաստանյան այլ զուգահեռների առկայությունը ևս [**Откупщиков**, 1973, 5—29. Ջահուկյան, *1970, 79—81*]: Կարելի է նույնիսկ ենթադրել Հայաստանում թրակյան շերտ:

Paḫḫutei̯a տեղանվան Paḫḫu- բաղադրիչը ամենայն հավանականությամբ առկա է նաև Paḫḫuu̯a ու Paḫḫurina երկրանուններում և թերևս պահպանվել է Պախուենից վանքի անվան մեջ [**Хачатрян**, 1971, 119]: Սակայն համապատասխան խեթա-լուվական հիմք առայժմ դժվար է նշել: Եթե բացառենք կապը Բաքոսի անվան հետ (լիդ. Baki-, հուն. Βάκχος, Βακχεῖος և այլն), որ մենք նախկինում ենթադրում էինք [**Джаукян**, 1964, 60—61[28]], ապա անհավանական չէ կապը կամ խեթ. panku- «ամբողջ, բոլոր. ամբողջ զորք, ամբողջություն, ժողով. ավագանի» բառի հետ, որ ծագում է հ.-ե. *bhn̥ghu- հիմքից [հմմտ. հ. հնդկ. bahu- «խիտ, հարուստ, շատ», հուն. παχύς

---

[27] Է. Ֆոռերը („Glotta", 26, 1938, *էջ 178*) arna=arinna «աղբյուր» հիմքը համարում է լուվական ծագման: Է. Լառոշը [**Laroche**, 19, 1961, 64] գտնում է, որ Arn-ով բոլոր տեղանունները չի կարելի բխեցնել միևնույն աղբյուրից և մանավանդ լուվերենից [հմմտ. նաև **Гиндин**, 1967, 39—95]:

[28] Որոշ հետազոտողներ կապ են տեսնում Բաքոսի անվան և խեթ. $^{\text{GIŠ}}$paḫ(ḫ)iša- «փայտ (?), ճիպոտ (?)» բառերի միջև:

«հասար», հայ. (<իրան.) բազում «շատ»], կամ խեթ. paḫḫur, paḫḫuu̯ar «կրակ» բառի հետ (հ.-ե. *peu̯ōr-, *pūr-, սեռ. *punes, ներգ. *puu̯eni. Համեմ. հայ. հուր, հն-ոց). Թեև վերջին համեմատությունը նվազ հավանական է թվում հիմքերի տարբերության պատճառով, բայց նրա օգտին է խոսում հայ. Պախուեճից ձևը, որ եթե կապ ունի Paḫḫu-ի հետ, ապա ճշտիվ համապատասխանում է խեթ. բառի տր.-ներգ. paḫḫueni ձևին։

-(i)t(t)a ածանցով կազմված տեղանուններից Arḫita-ի համար միանգամայն հավանական է համեմատությունը խեթ. irḫa- (arḫa-) «շարք, շրջեզր, եզր, սահման», հիեր. լուվ. arḫa- «սահման» (հմն. «շրջան, գավառ, տարածք»), խեթ., լուվ., հիեր. լուվ. arḫa- «դուրս» և այլ բառերի հետ [Капанцян, 1948, 60. Джаукян, 1964, 74—75], որոնք, ըստ Բելարդիի [Belardi, RL, 2, 187—202], բխում են հ.-ե. *erə-, *orə- «նոսր, հեռու, հեռանալ, հեռացնել» արմատից։ Ընդհանուր իմաստը պետք է լինի «սահմանային, եզրական»։ Նկատի ունենալով Արխիտայի եզրային դիրքը՝ Հայասայի հարավային մասերում (Իշուվայի մոտ) գտնվելը՝ ավելի քիչ հավանական է նրա անունը բխեցնել արևմտակովկասյան աղբյուրից (հմմտ. աբխազ. арха «հարթություն» և բրբռ. тła «վայր, տեղ»)։

Եթե Tamatta տեղանվան -tt-ն իրոք խեթա-լուվական ածանցական մասնիկի տարր է, ապա պատահական պետք է համարել ակկադ. Teman և ասոր. Thama տեղանունների հետ ունեցած նմանությունը և այն հիեր. լուվ. Ta-a-ma տեղանվան հետ միասին (հմմտ. նաև խեթ. Tamattaša?) բխեցնել հիեր.-լուվ.-լիկ. tam- արմատից (հմմտ. հիեր. լուվ. ta-ma-ḫa «կառուցեցի», լիկ. tam- «կառուցել») [Kronasser, 1956, 127. Gusmani, 1964, 208]. Վերջինս, եթե ընդհանուր վերականգնումը ճիշտ է, գալիս է հ.-ե. *dem- «կառուցել» արմատից։ Այս դեպքում Tamatta-ի ընդհանուր իմաստն է «կառուցվածք, շինվածք, շենք»[29]։

-mana ածանցով կազմված Ḫalimana քաղաքանվան Ḫali- անկախ բաղադրիչի գոյությունը հաստատվում է խեթական աղբյուրներում հիշատակված Ḫaliu̯a և Ḫalila (վերջինս կաշկացիների երկրում) տեղանունների գոյությամբ (Ḫali-ի հետ հավանաբար կապ չունեն ավելի հեռու ընկած Ḫallau̯a և Ḫalluu̯a վայրերի անունները)։ Ḫalip- բաղադրիչով Ḫalipašuu̯a, Ḫalipšiura, Ḫaliputa տեղանուններում թերևս իրոք պետք է վերականգնել Ḫalip- և ոչ Ḫali- բաղադրիչը, եթե դրանք կապված են խալիբների անվան հետ [Хачатрян, 1971, 127]։ Ḫali- բաղադրիչը մենք հակված ենք կապել խեթ. ḫali(i̯a)- «պահակախումբ. պահակ, գիշերային պահակ» բառի հետ, որ իր հերթին ստուգաբանորեն կապում են ḫalii̯a- «ծնկի գալ» բայի հետ և բխեցնում հ.-ե. *(s)kel- «թեքել. թեք. հմն. կրունկ, ծունկ, ազդր» արմատից [Kronasser, 1956, 38], թեև սա կասկածելի է [Tischler, 1, 130][30]։

Այլ է վիճակը, եթե Ḫalimana անունը կապ ունի Almina (Almena) քաղաքի (խեթական պետության արևելյան ծայրագավառում) անվան հետ. համանուն քաղաքանուններ (Ἀλμήνη, Almana) հայտնի են նաև Պափլագոնիայում և Բալկանյան թերակղզում. բալկանյան քաղաքանունը համարվում է թրակյան և բխեցվում հ.-ե. *al- «աճել, աճեցնել, սնել» արմատից՝ -m- բաղադրիչով [Detsehew, 1957, 13]:

Dugama անունով վայր հիշատակված է նաև Ուրմիա լճից հարավ [Меликишвили, 1960, 425]։ Վերջինիս անունը կարող է ծագած լինել քաղաքացիների տարաբնակությամբ, եթե նմանությունը պատահական չէ։ Հայաս. Duggama(na)-ի հիմքը անհավանական չէ համեմատել խեթ. dug(g)-, duk(k)- «տեսանելի լինել, հարգվել» բայարմատի հետ, որից խեթերենում -a- ածանցով կարող էր կազմվել dugga- գոյականը՝ «տեսանելիություն, հարգանք» իմաստով[31]։ Թերևս այս նույն տարրն է փոքրասիական այլ հատուկ անուններում՝ կար. tukᵒo-, tùk-, կիլ. Tok-oleis, Duk-eris, իսավր. Dukkos, եթե սրանց d/tug/k-ը կապ չունի լուվ. duu̯a- «դնել» բայի հետ [խեթ. dā(i)-], որ գալիս է հ.-ե. *dhē- «դնել» արմատից։

Ածանցական կազմություն ունեցող Gašmiaḫa, Ḫai̯aša, Ingalau̯a, Šapaguru̯anta, թերևս նաև Azzi տեղանունների հիմքերի բնույթի մասին առայժմ դժվար է որևէ հավաստի բան ասել։ Gašmi-ի մեջ համեմատությունը հայ. կազմ, հուն. κόσμος և Ingalau̯a-ի Ingal-ի նույնացումը ակկադ. ekallu <շումեր. é-gal բառերի հետ (Գ. Ղափանցյան) կասկածելի են. Ingalau̯a-ի հետագա Անգեղտուն անվանումը (որպես «անգեղ տուն՝ անգղի տուն») կարող է ժողովրդական ստուգաբանության արդյունք լինել։ Հազիվ թե որևէ կապ լինի Šapagur-ի և լիկ. Բ sabaci «ստացողներ» բառի կամ դակյան Saboces (Σαβῶκες) ցեղանվան միջև (հմմտ. նաև փռյուգիական Σαβάζιος դիցանունը, որոնցից ծագած են համարում հայ. աստուած բառը)։ Մեզ առավել հավանական է թվում Azzi- համեմատությունը թրակյան Ἄζεια-ի հետ, որ Տոմաշեկը կապում է Հեսիքիոսի բառարանում հիշված ἄζα «մեծ, բարձր» բառի հետ [Tomaschek, 2, 1894, 55]. Նախ՝ Azzi երկիրը, ըստ խեթական աղբյուրների, սահմանակից է «Բարձր երկրին» և հիմնականում նույնացվում է հայկական աղբյուրների Բարձր Հայքի հետ. երկրորդ՝ այս դեպքում կարելի է ճիշտ համարել Azzi-ի նույնացումը Ազորդ-ի հետ՝ նկատի ունենալով, որ հետազոտողների կարծիքով Ἄζωρος-ի անունը կապված է թրակյան Ἄζωρος, Ἀζώριον քաղաքանվան հետ [Detschew, 1957, 7]։ Սա, ինչպես այլ դեպքերում, ենթադրել է տալիս Հայասայում թրակյան տարր[32]։

Հայասական մյուս տեղանուններից Ura-ն ակնհայտորեն խեթա-լուվական ծագում ունի. հմմտ. լուվ. և հիեր. լուվ. ura- «մեծ», որ հանդիպում է նաև որպես տեղանունների բաղադրիչ և տեղանուն. հմմտ Arez-ura, Ura-Ḫatu̯aš, կար. Yr-omos, It-yra, լիկ. Ura-, Ora- և այլն [Laroche, 1959, 102]

Aripša քաղաքանունը մենք այժմ հակված ենք բացատրելու արևմտակովկասյան (աբխազ-ադըղեական) հողի վրա։ Ինչպես հայտնի է ըստ խեթական արձանագրության՝ Aripša-ն ծովային դիրք ուներ և գտնվում էր կաշկացիների երկրի մերձակայքում։ Եթե կաշկացիներն իրոք չերքեզների նախնիներն են, ինչպես ենթադրում են շատ հետազոտողներ՝ նկատի ունենալով չերքեզների կաշագ, կեշագ, կոսոգ ինքնանվանումը[33], ապա Aripša-ի -pša-ն կարելի է մեկնել կաբարդ., ադըղ. псы «ջուր» բառով, որ շատ տարածված է հյուսիսային կովկասյան տեղանուններում (հմմտ. Տուապսե). այս դեպքում Ari-ն նույնպես կարող է արևմտակովկասյան ծագում ունենալ։

---

[29] Վ. Խաչատրյանը [Хачатрян, 1971, 127] այս անվան հետ է համեմատում Tamluta տեղանունը։

[30] Հմմտ. նաև ḫali- «փարախ», որի ծագումն անհայտ է (փոխառությո՞ւն) [Tischler, 1, 128—129]:

[31] Այն համեմատվում է այր. duket «թվալ, երևալ, տեսք ունենալ» բայի հետ. հմմտ. Friedrich, HW, 1. Ergänzungsheft, 21։

[32] Թրակյան քաղաքանունը հավանաբար կապ չունի թրակյան այն անձնանունների Az- (Aσ- և այլն) բաղադրիչի հետ, որ համեմատվում է կիլ. Ασις և սկյութ. Αζιας, Αζος, Αζιαγος անձնանունների հետ [Detschew, 1957, 7]։ Սկյութական անունները ծագում են իրան. *hatya- «իսկական, արդար, ճիշտ», *hatya-ka- ձևերից, որոնք իրենց հերթին բխում են հ.-ե. *sn̥t-io-ից («ուղղություն վերցնել, գնալ»)։ Հետաքրքրական է նշել, որ Azzi և Ḫai̯aša անունների իրանական ծագման դեպքում դրանք, բաղաձայնային տարբերությամբ, կարող էին միևնույն բանը նշանակել, որ, սակայն, անհավանական է, նշենք, որ կան խեթ. լիգ. Azzii̯a, Azzari անձնանունները, որոնց ծագումը հայտնի չէ

Նկատի ունենալով հայասական անունների գերակշռող մեծամասնության խեթա-լուվական զուգահեռների ակնհայտությունը՝ կարելի է ընդունել Գ. Ղափանցյանի կողմից Laḫirḫila-ի երկրորդ մասի՝ ḫila-ի համեմատությունը խեթ. ēḫila «բակ. փարախ, գոմ» բառի հետ (սակայն հմմտ. նաև հայ. ճիւղ, որ հանդիպում է նաև ճուղ, ճիղ, ճեղ ձևերով և նույնն է խուղ բառի հետ)։ Այս համեմատությունը հաստատվում է խեթ. Parsanḫila և կար. Suaggela (<*Suu̯aḫila) տեղանունների միջոցով, որոնց մեջ նույնպես առկա է ḫila- տարրը. կարևոր է նշել, որ համապատասխան լիկ. qla-ն մեկնաբանվում է «տաճար»։ Սակայն դժվար է համաձայնել Laḫir- բաղադրիչի ղափանցյանական մեկնության հետ. Գ. Ղափանցյանն այն համեմատում է աքկադ. Laḫirā անձնանվան հետ՝ ամբողջ տեղանունը մեկնաբանելով որպես «Լախիրի հյուղ» [Капанцян, 1948, 60, ծան.]։ Հայասական տեղանվան մեջ սեմական տարրի այսպիսի զուգակցումը քիչ հավանական է, թեև առայժմ դժվար է հավաստի որևէ բան ասել Laḫir-ի բնույթի մասին։ -r/n-ով հիմք ենթադրելու դեպքում այն կարելի է համեմատել խեթ. Laḫinaššiš (Laḫinn-ից) տեղանվան և Laḫinaziti- անձնանվան հետ։ Անհնար չէ կապ տեսնել Հայասայում հիշատակվող Laḫḫa լեռների և Laḫirḫila քաղաքի անունների միջև, բայց այս դեպքում անբացատրելի է մնում Laḫir-ի -ir-ը։ Խեթ. Laḫḫueri անձնանունը Է. Լառոշը համեմատում է խեթ. GIŠlaḫḫura «զոհասեղան(?)», իսկ Laḫḫa- անձնանունը՝ laḫḫa- «ռազմական արշավանք» բառերի հետ, բայց այս անձնանունների կապը Laḫir-ի հետ կասկածելի է։

Եթե մի կողմ թողնենք Pāteu... պակասավոր տեղանունը հետագա Բթառիճ գյուղի անվան մեջ պահպանված խեթ. աղբյուրների Bittii̯ariga (Pattii̯ariga?) տեղանվան հետ նույնացնելու փորձը [Капанцян, 1948, 59], որ չի հաստատվում վերջինիս ավելի ստույգ ընթերցանությամբ, ապա Pāteu-ի համար կարելի է նշել փոքրասիական և ոչ փոքրասիական, հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական մեծաթիվ զուգահեռներ։ Սակայն հայասական անունների փոքրասիական զուգահեռների հավաստիությունը մեզ հիմք է տալիս կանգ առնելու նրանց վրա. հմմտ. հին անատ. Paduu̯a անձնանունը և նրանից կազմված Paduu̯anda տեղանունը, որոնք համեմատվում են լիկ. pad-mruwa, կար. pdov, pede- հատուկ անունների (այդ թվում՝ նաև տեղանունների) հետ, և որոնց համար որոշ կասկածով նշվում է հ.-ե. *ped/pod- «ոտք» արմատը (այստեղից են խեթ. pata- «ոտք», peda- «տեղ, վայր» բառերը)։ Սրանից պետք է ենթադրել, որ քաղաքն ունեցել է հարթավայրային դիրք[34]։

Bittii̯ariga-ի երկրորդ մասը պահպանված է հայկական տեղանուններում հաճախակի հանդիպող առիճ-ի (առինճ, առինջ) մեջ, որ պետք է ունենա «գյուղ, շեն» իմաստը [Աճառյան, ՀԱԲ, 1, 258]։ Եթե առաջին մասը կապ չունի Pāteu...-ի հետ և արտասանվել է ձայնեղ B-ով, ապա կարելի է նշել խեթ. peda- «տանել», լիդ. bita- «խլել» բառերը (կամ խեթա-լուվական համահունչ այլ բառեր)։

Kam... պակասավոր քաղաքանվան այս բաղադրիչը հանդես է գալիս փոքրասիական և ոչ փոքրասիական բազմաթիվ տեղանունների մեջ. նշենք առաջին հերթին լիդ. Kamandōlos, ուշ լուվ. Kam-ure- (տեղանվան կազմում), որոնք համեմատում են լիկ. hri-km̃ma-ի հետ և վերականգնում ընդհանուր *kam(a)- արմատը։ Հմմտ. նաև Kamisa, Kamala, Kamama, Kamaḫana և այլն տեղանունները։ Պարզ չէ սրանց կապը հ.-ե. *kam-er- և *kam-p- հիմքերի հետ («ծռել, կամար կազմել» իմաստով). հնարավոր է, որ բոլոր տեղանունների մեջ մենք գործ չունենք հնդեվրոպական արմատի հետ, և նույնիսկ *kam-p-ի և *kam-er-ի տակ Յ. Պոկոռնու «Հնդեվրոպական ստուգաբանական բառարանում» բերված մի շարք ձևեր անմիջական հնդեվրոպական չեն։ Պուրվեսի նշած նուզյան Kamari-ն, որ հիշատակում է Ղափանցյանը՝ համեմատելով հ.-ե. *kam-er- նախաձևից ծագող բառերի հետ [Капанцян, 1948, 224], խուռական չէ. խուռերենում համապատասխան արմատ չի հայտնաբերված։

Առայժմ դժվար է որևէ հավաստի խոսք ասել Gazū տեղանվան մասին, որ Գ. Ղափանցյանը [Капанцян, 1948 88] համեմատում է, մի կողմից, կաշկայական G/Kazzapa քաղաքանվան, մյուս կողմից՝ Պոնտոսում հիշվող Gazziura (-ura բաղադրիչի համար հմմտ. Ura քաղաքանվան մասին ասածը) ամբողջի անվան հետ։ Եթե ճիշտ է առաջին համեմատությունը, ապա Gazū-ն կապ չունի Պալա երկրում (հետագա Պափլագոնիայում) գտնվող Gaššu լեռնանվան ու խեթ. Gaššu անձնանվան հետ, և թերևս կամ պետք է որոնել կովկասյան աղբյուր, կամ ընդունել անվան ստուգաբանական կապը ուրարտ. gazuli «գեղեցիկ, լավ» բառի հետ (այսինքն ենթադրել հայասական տեղանուններում կովկասյան կամ ուրարտական շերտ)։ Եթե ճիշտ է երկրորդ ենթադրությունը, ապա հայասական քաղաքանունը հին անատոլիական ծագում ունի (հմմտ. -ura-ով տեղանունները)[35]։

ե) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերևում բերված փաստերի հիման վրա կարելի է անել հետևյալ հիմնական եզրակացությունները։

1) Հայասական հատուկ անունների մեջ ակնհայտորեն գերակշռող են փոքրասիական տարրերը։ Հայասական անձնանունները, դիցանունները և տեղանունները մեծ մասամբ զուգահեռներ ունեն փոքրասիական համապա-

---

[33] Կա նաև հակառակ կարծիքը. հմմտ. Волкова, 1973, 22։

[34] Մեր „Хайасский...“ աշխատության մեջ [Джаукян, 1964, 79] այս տեղանունը համեմատված է խեթ. pattar «սկուտեղ(?)» («զամբյուղ(?)») և հայ. պատ բառերի հետ, որ պակաս հավանական է։ Քիչ հավանական է նաև համեմատությունը խեթ. Pitašša տեղանվան հետ, որ Վ. Գեորգիևը [Георгиев, 1958, 172—173] բխեցնում է հ.-ե. *pīdos «աղբյուր» նախաձևից։

[35] Ինչ վերաբերում է Gazzi-ին, ապա Է. Լառոշը [Laroche, RHA, 19, 1961] այն նույնացնում է խեթ. gazzi- (մի տեսակ աման) բառի հետ։

տասխան հատուկ անունների մեջ։ Որոշ դեպքերում մենք գործ ունենք պարզ փոխառությունների հետ, բայց ընդհանրությունների զգալի մասը կարելի է բացատրել հայասացիների մեջ փոքրասիական լեզվական տարրի առկայությամբ և նույնիսկ գերակշռությամբ։ Կարելի է նշել նույնիսկ որոշ օրինաչափ համապատասխանություններ. այսպես, հայասերենին բնորոշ է խեթական միջձայնավորային ḫḫ-ի դիմաց համապատասխան պայթականի առկայությունը (հմմտ. խեթ. ḫuḫḫa- և հայաս. Ḫuqqa-, թերևս նաև խեթ. Tarḫu- և հայաս. >հայ. **Տորք**, ինչպես կար. Tark-, Ōtork-, լիդ. Trok-, Targ-, ուշ լուվ. Tark-, Trok-), uṷa>u ամփոփումը (հմմտ. հայաս. Mutti-՝ Muṷatti-ից)[36]։

2) Նկատի ունենալով, որ հայասական անունների հետ զուգահեռներ ունեցող լեզուները հնդեվրոպական բնույթի են, և որ համեմատվող անունների մեջ առանձնացվող տարրերը մեծ մասամբ հնդեվրոպական ծագում ունեն, կարելի է եզրակացնել Հայասայի բնակչության զգալի մասի համար փոքրասիական-հնդեվրոպական ծագում։ Դեռ ավելին. կարելի է ցույց տալ հայասական զուգահեռների հատուկ մերձավորությունը հին անատոլիական հ.-ե. լեզուներից լուվա-լիկիական խմբին (լուվերեն, հիեր. լուվերեն, լիկիերեն)։

3) Հայասայի անուններում կարելի է մատնանշել արևմտակովկասյան, խուռա-ուրարտական, թերևս նաև սեմական տարրեր, բայց ընիկ փոքրասիական-հնդեվրոպական տարրը ակնհայտորեն գերակշռում է։ Եվ սա հասկանալի է, եթե նկատի առնենք Հայասայի՝ Միտանիից ունեցած զգալի հեռավորությունը և նրա ազդեցության ոլորտից դուրս լինելը։

4) Մեր «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» աշխատության մեջ [**Ջահուկյան**, *1970, 79—81*] բերված են զգալի թվով թրակա-հայասական զուգահեռներ։ Այժմ անդրադառնալով այդ հարցին՝ կարելի է անել երեք հնարավոր ենթադրություն. դրանք՝ ա) կամ նույն տիպի զուգաբանություններ են, ինչպիսիք առկա են Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի հատուկ անունների միջև [**Откупщиков**, 1973, 5—29], բ) կամ պատահական նմանություններ են, գ) կամ ենթադրել են տալիս հայասական տերիտորիայում թրակյան էթնիկական տարր։ Ճշմարտությունը հավանաբար ընդգրկում է երեք ենթադրությունը միաժամանակ, այսինքն՝ մի շարք զուգահեռներ պատահական բնույթ են կրում, մնացած դեպքերում կարելի է նշել մի կողմից՝ թրակա-հայասական զուգաբանություններ՝ պայմանավորված ավելի հնում գոյություն ունեցած մերձավոր կապերով, մյուս կողմից՝ Հայասայում թրակյան էթնիկական տարրի առկայություն։ Վերջին դեպքում պետք է կարծել, որ Հովհաննես Դրասխանակերտցու կողմից Հայկի պապին՝ Թիրասին, թրակացիների նախահայր համարելը իրոք հին հարաբերությունների արձագանք է։ Որ Հայաստանում և մերձավոր վայրերում հնում եղել են թրակյան ցեղեր, երևում է Ստրաբոնի հայտնի տողերից. «Ասում են նաև, թե ինչ-որ թրակացիք (կոչված սարաբարաս[37], այն է՝ գլուխ կտրող) բնակվել են Հայաստանից վերև Գուրանացոց և Մարաց մոտ» [**Ստրաբոն**, *1940, 68*]: Թեև սարապարա բառը բացատրվում է իրանական աղբյուրով (հմմտ. ավեստ. sarah- «գլուխ» և par- «ծակել, կտրել»), բայց այն թրակացիների միջնորդությամբ է Հունաստան հասել [**Detschew**, 1957, 423]: Հայասացիների և հայերի՝ թրակացիների հետ ունեցած վաղ շփումների մասին են խոսում, օրինակ, հետևյալ փաստերը։ Սկայ-որդի անվան Սկայ-ը թրակյան սկայ ցեղանունից է և ոչ սակերի անունից, ինչպես կարծում է Գ. Ղափանցյանը. Տորք անունը իր ո ձայնավորմամբ կարող է աղբյուր ունենալ կամ կարիերենը (հմմտ. Ōtork), կամ, որ ավելի հավանական է, թրակերենը (հմմտ. Τορκος, Τορκους անձնանունը, որ ծագում է նույն աղբյուրից, ինչ փոքրասիական դիցանունը). Թրակյան և հայասական մի շարք անունների նմանությունը թերևս պատահական չէ՝ թրակ. Ἄρνη (տեղանուն) և հայաս. Arniṷa (ընդհանուր փոքրասիական Arn- հիմքից), թրակ. Βερ(ο)ισα (քաղաքանուն) և հայաս. Paraṷa, թրակ. Κασμιλος (ցեղանուն) և հայաս. Gaš.mlaḫa, թրակ. Patavissa (տեղանուն) և հայաս. Pāteu..., թրակ. -tit(h)a (դիցանվան և անձնանվան բաղադրիչ) և հայաս. Terittitūniš (բալկանյան և փոքրասիական այլ զուգահեռներով) և այլն։

5) Հայասայի լեզվի և հայերենի փոխհարաբերության մասին կարելի է նշել հետևյալը.

ա) Եթե հայասացիների զգալի մասի լեզուն իրոք պատկանել է խեթա-լուվական լեզուների խմբին, ապա հայերենի և խեթա-լուվական լեզուների բառային ընդհանրությունների զգալի մասը պետք է գա հայասերենից։ Մեր «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» գրքում (Երևան, 1970) բերված են այդ զուգահեռները, և նույնիսկ փորձ է արված որոշ դեպքերում տարբերակել բուն հայասական բառերը խեթա-լուվական այլ բառերից։ Միաժամանակ, եթե իրոք Հայասայի տերիտորիայում կային թրակյան ցեղեր, այդ նույն գրքում բերված փոխառությունների զգալի մասը պետք է եկած լինի նրանցից։

բ) Հայասայի պատմության, աշխարհագրության, լեզվի ուսումնասիրողները նշել են զգալի թվով զուգահեռներ հայասական անձնանունների, դիցանունների ու տեղանունների և հնից ավանդված հայկական անձնանունների, դիցաբանական անունների ու Հայկական բարձրավանդակի մի շարք տեղանունների միջև, որոնք բերված են մեր „Хайасский язык и его отношение к индоевропейским языкам" աշխատության մեջ (դրանք այս կամ այն տիպով մասամբ հիշատակվեցին վերևում)։ Այստեղ մեր նպատակից դուրս ենք համարում դրանց հանգամանալից քննությունը։ Եթե նկատի առնենք, որ պահպանվածը եղածի մի չնչին մասն է, ապա կարելի է խոսել այն խոր ազդեցության մասին, որ թողել է Հայասան Հայաստանի օնոմաստիկայի վրա[38]։

գ) Ինչպես հայտնի է, խեթական տեքստերում այլ լեզուներից փոխառված բառերը նշանակվում են երկու թեք սեպաձև նշանով։ Թեև ըստ Է. Լարոշի՝ դրանք զգալի մասով լուվական ծագում ունեն, բայց հանդիպում են նաև ոչ լուվական բառեր՝ քերականական յուրահատուկ ձևերով [հմմտ. **Kronasser**, 1962]: Հնարավոր է, որ սրանց մեջ լինեն հայասական բառեր և բառաձևեր։ Հատկանշական է, որ Հ. Կրոնասերի առանձնացրած -(a)ḫa, -ta, -ṷa, -l ածանցները հանդիպում են նաև հայասա. հատուկ անուններում, իսկ tamala-ta- (կահկարասու նյութ, ատաղձ) բառի առաջին բաղադրիչը համընկնում է հայ. տամալ(ի)-ի հետ։

---

[36] Դժվար է ասել, կապ կա՞ արդյոք Տորքի հոր՝ Պասքամի անվան և խեթ. Paškuṷa դիցուհու անվան միջև (հմմտ. նաև կար. Bskove- անձնանունը, խեթ. Paškuṷatti-ն և այլն), որոնք Է. Լարոշը բխեցնում է խեթ. paškuṷāi- «անուշադրության մատնել, արհամարհել» բայից։ Սակայն Պասքամի համար հմմտ. խեթ. pašk- «ամրացնել»։

[37] Փոխանակ սարապարաս։

[38] Զանազան հետազոտողների կողմից անցկացված զուգահեռներին այստեղ ավելացնենք Arḫita (քաղաք)—Երխեբը (գավառ Աղձնիքում), Duggamana (քաղաք)—Թեոմաճ (համապատասխանում է նախկին Տուրուբերանի Մարդաղի գավառին), Ḫalmana (քաղաք)—Ալամաճ (ասուր. Alamun՝ գյուղ Վասպուրականի Անձևացիք գավառում), Ura (քաղաք)—Ուրի (Հուրի գյուղ՝ Գուգարքի հին Քաշչայ քաղաքը) և այլն։

դ) Եթե հայասացիների հիմնական կամ թեկուզ զգալի մասի լեզուն իրոք պատկանում է հնդեվրոպական լեզուների խեթա-լուվական կամ հին անատոլիական խմբին, ապա պետք է հայերենին ձուլվելու ընթացքում նրա մեջ թողած լինի զգալի թվով հնդեվրոպական ծագման այնպիսի բառեր, որոնք չեն բացատրվում հայերենի բուն օրինաչափություններով։ Այս նույն վիճակը պետք է լինի, եթե հայասացիների կազմի մեջ մտել են թրակյան ցեղեր։ Այսպիսով, լիովին հնարավոր է, որ հայերենում պահպանված հնդեվրոպական շատ արմատներ, որոնք անմիջապես չեն գալիս հնդեվրոպական լեզվից և հայերենի բուն հնդեվրոպական միջուկին չեն պատկանում, ունենան անատոլիական-հայասական և թրակյան ծագում։ Նշանակում է՝ մեր „Очерки по истории дописьменного периода армянского языка" գրքում [Джаукян, 1967] առանձնացված հնդեվրոպական այն բառերի մի մասը, որոնք շեղվում են բուն հայերենի հնչյունական օրինաչափություններից, պետք է բացատրվի որպես անատոլիական-հայասական և, թերևս, որպես թրակյան։

6) Վերևում նշվեց հայասացիների մեջ թրակյան տարրի հնարավոր առկայության մասին։ Ընդհանրապես Հայասայի բնակչությունը չէր կարող լիովին միատարր լինել, և հնարավոր է խեթա-լուվական ու թրակյան ցեղերի հետ միասին նաև բուն հայկական տարրի առկայությունը։ Սա մանավորապես հավանական է, եթե Hajaša անունը կապ ունի հայերի անվան հետ, և հայ անունը գալիս է հայերենի բուն հնդեվրոպական շերտից. այս դեպքում կարելի է ենթադրել նաև հայասական մի շարք հատուկ անունների բուն հայկական ծագումը՝ Šillili(-) — հայ. սիղեղ (սեղեղ, սիղեխ, սեղեխ) «սիրեկան» (հ.-ե. *k'ei-, *k'ei-l- «պառկել. հանգստանալ. հանգստավայր, տուն, սիրելի», որտեղից հ. հնդկ. śīla- «սովորություն, բնավորություն», հ. իռլ. cé(i)le «ընկեր, ամուսին»), Terittitūni- — հայ. երի- (հ.-ե. *tri-, հմմտ. երի-ց-ս) և տուտն, տտուն (հ.-ե. *dud-? հմմտ. իռլ. toti «մութ», toti «ծայր քիթ», մ. անգլ. tote «ծայր» և այլն. սակայն հնարավոր է բառերի հուզա-պատկերավոր բնույթը), -ḫila — հիղ (խուղ<հ.-ե. *khu-lo-) և այլն։

7) Խեթական պետության արևելյան ծայրագավառներում գտնվող երկրների ժողովուրդների մեջ, անշուշտ, նույնպես եղել են խեթա-լուվական բնույթի ժողովուրդներ։ Ընդհանրապես այս ծայրագավառներում պետք է բնակված լինեին անատոլիական-հայասական, խուռա-ուրարտական, կովկասյան և այլ բնույթի ժողովուրդներ։ Անհնար չէ, որ դեռևս խեթական շրջանում այստեղ լինեին բուն հայերենով կամ նրան մերձավոր լեզուներով խոսող ցեղեր։ Այս մասին կարելի է որոշ եզրակացություններ անել պահպանված հատուկ անունների հիման վրա։ Այսպես, խեթական Առնուվանդա թագավորի կնքած պայմանագրի մեջ հիշատակված է իշմերիկացի ան Aliu̯ašu՝ այս անձնանունը գրեթե նույնությամբ համընկնում է հայ. աղուէս, սեռ. աղուեսու բառի ենթադրական այն ձևի հետ, որ պետք է միացնող օղակ լիներ հայերենի և հնդեվրոպական նախաձևի միջև (*u̯lōpek'u->*alōpek'u->*aluu̯esu->աղուէս, սեռ. աղուեսու)[39], խեթ. տեքստի a-ն (e-ի դիմաց) կարող էր արտացոլել e-ի նախնական բաց արտասանությունը։ Նույն պայմանագրում հիշատակված է Arziuta անձնանունը, որ թերևս կապ ունի հայ. արծուի, սեռ. արծուոյ բառի հետ. այս բառն իբրև հատուկ անուն օգտագործված է նաև ավելի ուշ՝ ուրարտական տեքստերում Arşibi-ni ձևով (Մենուա թագավորի ձիու անունը). անհնար չէ ենթադրել, որ Arziuta-ն բաղկացած է Arziu- հիմքից և -ta ցուցական հոդից, որ կարող էր խեթերի կողմից ընկալվել որպես անվան բաղկացուցիչ մաս։ Այս նույն ձևով Armatana տեղանունը, որ պահպանվել է հետագա Արմտան-ի մեջ (Մեծ և Փոքր Արմտաններ) և թերևս արմատով ընդհանուր է արմենների անվան հետ [Երեմյան, *1963, 40*], ամենայն հավանականությամբ նույն ծագումն ունի, ինչ հայերենում պահպանված արմ||արմն, արմատ, գ-արմ բառերը (սրանք ծագում են հ.-ե. *er- «շարժ(վ)ել, հուզել, բարձրացնել» արմատից՝ *-m- կամ *-men- մասնիկներով. հմմտ. հուն. ὄρμενος «ցողուն, ընձյուղ», ὄραμνος «ճյուղ» և այլն) [հմմտ. ՀԱԲ, 1, 326—327]։

Խեթական տեքստերում հիշատակված Maldija-ն (հետագա Մալաթիան) որ ուրարտ. տեքստերում բերված է Meliṭe(j)a ձևով, ամենայն հավանականությամբ կապված է հ.-ե. *meli-t- «մեղր» արմատի հետ (հմմտ. հայ. մեղր, հուն. μέλι, -τος, սկյութ. μελιτον, խեթ. milit «մեղր» և այլն)։ Մնձուր, (Մազուր) լեռան (որից Մնձուր գավառ և Մնձուր գետ) անունը (խեթ. Muzuri, հուն. Μονζουδων, Μονζουθον, Μουντθον, արաբ. Mazur, թուրք. Mızur, Muzur, Munzur, Menzur) թերևս կապված է հ.-ե. *men- «ցցվել» արմատից ծագող *mn̥t- «լեռ» նախաձևի հետ (հմմտ. ավ. mati- «լեռան գագաթ», լատ. mons, -tis, կոռն. meneth, բրետ. menez «լեռ» և այլն)։

8) Անհնար չէ խորենացու հիշատակած՝ Հայկի հաջորդների և նախարարական տների որոշ անունների մեջ տեսնել հայասական թագավորների անունների և դիցարանական անունների արձագանքը՝ թրակյան հատուկ անունների հետ միասին. հմմտ. Արա (փռյուգիական դիցանուն), Տորք (փռյուգիական դիցանուն), Կադմոս (Կարիական լեռների աստված, Թեբեի առասպելական հիմնադիր)[40], Հայկակ, Հոյ (հմմտ. Ḫajaša), Սկայորդի (հմմտ. թրակ. Σκαιοι ցեղանունը) և այլն։

9) Եթե ճիշտ է Վ. Գեորգիևի կարծիքը էտրուսկերենի խեթա-լուվական ծագման մասին [**Georgiev**, 1962, 1970—1971, 1974][41], ապա հայասա-էտրուսկյան որոշ զուգադիպումներ լիովին հասկանալի են դառնում, և Հայասային նվիրված մեր աշխատություններում բերված փաստերը նոր լուսաբանություն ստանում։ Այս դեպքում հայ-էտրուսկյան զուգադիպումները պետք է բացատրել որպես հայասերենի՝ հայերենի մեջ ունեցած ներդրման արդյունք։

---

[39] Հետաքրքրական է նշել, այս կապակցությամբ, նույն պայմանագրի՝ թերևս կենտումային հնդեվրոպական լեզվի պատկանող Lupakiu-ta-ն՝ Aliu̯ašu-ի համեմատությամբ (?)։

[40] Կադմոս անունը հույները հավանաբար փոխ են առել փյունիկեցիներից. փյունիկյան qdm արմատը նշանակում է «արևելք»։

[41] Գեորգիևի կարծիքը առայժմ ընդունելություն չի գտել, մանավանդ որ էտրուսկյան ազգակցական անունների և թվականների հնդեվրոպական ծագումը չի հաստատված։

ածանցները հանդիպում են նաև հայաս. հատուկ անուններում, իսկ tamala-ta- (կահկարասու նյութ, տաղձ) բառի առաջին բաղադրիչը համընկնում է հայ. տամալ(ի)-ի հետ։

դ) Եթե հայասացիների հիմնական կամ թեկուզ զգալի մասի լեզուն իրոք պատկանում է հնդեվրոպական լեզուների խեթա-լուվական կամ հին անատոլիական խմբին, ապա պետք է հայերենին ձուլվելու ընթացքում նրա մեջ թողած լինի զգալի թվով հնդեվրոպական ծագման այնպիսի բառեր, որոնք չեն բացատրվում հայերենի բուն օրինաչափություններով։ Այս նույն վիճակը պետք է լինի, եթե հայասացիների կազմի մեջ մտել են թրակյան ցեղեր։ Այսպիսով, լիովին հնարավոր է, որ հայերենում պահպանված հնդեվրոպական շատ արմատներ, որոնք անմիջապես չեն գալիս հնդեվրոպական լեզվից և հայերենի բուն հնդեվրոպական միջուկին չեն պատկանում, ունենան անատոլիական-հայասական և թրակյան ծագում։ Նշանակում է՝ մեր „Очерки по истории дописьменного периода армянского языка“ գրքում [Джаукян, 1967] առանձնացված հնդեվրոպական այն բառերի մի մասը, որոնք շեղվում են բուն հայերենի հնչյունական օրինաչափություններից, պետք է բացատրվի որպես անատոլիական-հայասական և, թերևս, որպես թրակյան։

6) Վերևում նշվեց հայասացիների մեջ թրակյան տարրի հնարավոր առկայության մասին։ Ընդհանրապես Հայասայի բնակչությունը չէր կարող լիովին միատարր լինել, և հնարավոր է խեթա-լուվական ու թրակյան ցեղերի հետ միասին նաև բուն հայկական տարրի առկայությունը։ Սա մանավորապես հավանական է, եթե Hajaša անունը կապ ունի հայերի անվան հետ, և ճայ անունը գալիս է հայերենի բուն հնդեվրոպական շերտից. այս դեպքում կարելի է ենթադրել նաև հայասական մի շարք հատուկ անունների բուն հայկական ծագումը՝ Šillili(-) — հայ. սիղեղ (սեղեղ, սիղեխ, սեղեխ) «սիրեկան» (հ.-ե. *k'ei-, *k'ei-l- «պառկել. հանգստանալ. հանգստավայր, տուն, սիրելի», որտեղից հ. հնդկ. śīla- «սովորություն, բնավորություն», հ. իռլ. cé(i)le «ընկեր, ամուսին»), Terittitūni- — հայ. երի- (հ.-ե. *tri-. հմմտ. երի-ց-ս) և տուտն, տտուն (հ.-ե. *dud-? հմմտ. իռլ. toti «մասուր», tota «ծայր քիթ», մ. անգլ. tote «ծայր» և այլն. սակայն հնարավոր է բառերի հուզա-պատկերավոր բնույթը), -ḫila — ճիղ (խուղ<հ.-ե. *khu-lo-) և այլն։

7) Խեթական պետության արևելյան ծայրագավառներում գտնվող երկրների ժողովուրդների մեջ, անշուշտ, նույնպես եղել են խեթա-լուվական բնույթի ժողովուրդներ։ Ընդհանրապես այս ծայրագավառներում պետք է բնակված լինեին անատոլիական-հայասական, խուռա-ուրարտական, կովկասյան և այլ բնույթի ժողովուրդներ։ Անհնար չէ, որ դեռևս խեթական շրջանում այստեղ լինեին բուն հայերենով կամ նրան մերձավոր լեզուներով խոսող ցեղեր։ Այս մասին կարելի է որոշ եզրակացություններ անել պահպանված հատուկ անունների հիման վրա։ Այսպես, խեթական Արնուվանդա թագավորի կնքած պայմանագրի մեջ հիշատակված է իշմերիգացի ոմն Aliụašu, այս անձնանունը գրեթե նույնությամբ համընկնում է հայ. աղուէս, սեռ. աղուեսու բառի ենթադրական այն ձևի հետ, որ պետք է միացնող օղակ լիներ հայերենի և հնդեվրոպական նախաձևի միջև (*ụlōpek'u->*alōpek'u->*aluụesu->աղուէս, սեռ. աղուեսու)[39]։ Խեթ. տեքստի a-ն (e-ի դիմաց) կարող էր արտացոլել e-ի նախնական բաց արտասանությունը։ Նույն պայմանագրում հիշատակված է Arziuta անձնանունը, որ թերևս կապ ունի հայ. արծուի, սեռ. արծույ բառի հետ. այս բառն իբրև հատուկ անուն օգտագործված է նաև ավելի ուշ՝ ուրարտական տեքստերում Arşibi-ni ձևով (Մենուա թագավորի ձիու անունը). անհնար չէ ենթադրել, որ Arziuta-ն բաղկացած է Arziu- հիմքից և -ta ցուցական հոդից, որ կարող էր խեթերի կողմից ընկալվել որպես անվան բաղկացուցիչ մաս։ Այս նույն ձևով Armatana տեղանունը, որ պահպանվել է հետագա Արմտան-ի մեջ (Մեծ և Փոքր Արմտաններ) և թերևս արմատով ընդհանուր է արմենների անվան հետ [Երեմյան, 1963, 40], ամենայն հավանականությամբ նույն ծագումն ունի, ինչ հայերենում պահպանված արմ||արմն, արմատ, գ-արմ բառերը (սրանք ծագում են հ.-ե. *er- «շարժ(վ)ել, հուզել, բարձրացնել» արմատից՝ *-m- կամ *-men- մասնիկներով. հմմտ. հուն. ὄρμενος «ցողուն, ընձյուղ», ὄραμνος «ճյուղ» և այլն) [հմմտ. ՀԱԲ, 1, 326—327]։

Խեթական տեքստերում հիշատակված Maldiia-ն (հետագա Մալաթիան) որ ասուր. տեքստերում բերված է Meliṭe(i)a ձևով, ամենայն հավանականությամբ կապված է հ.-ե. *meli-t- «մեղր» արմատի հետ (հմմտ. հայ. մեղր, հուն. μέλι, -τος, սկյութ. μελιτον, խեթ. milit «մեղր» և այլն)։ Մնձուր, (Մազուր) լեռան (որից Մնձուր գավառ և Մնձուր գետ) անունը (խեթ. Muzuri, հուն. Μονζουδων, Μονζουθον, Μουντθον, արաբ. Mazur, թուրք. Mizur, Muzur, Munzur, Menzur) թերևս կապված է հ.-ե. *men- «ցցվել» արմատից ծագող *mṇt- «լեռ» նախաձևի հետ (հմմտ. ավ. mati- «լեռան գագաթ», լատ. mons, -tis, կոռն. meneth, բրետ. menez «լեռ» և այլն)։

8) Անհնար չէ Խորենացու հիշատակած՝ Հայկի հաջորդների և նախարարական տների որոշ անունների մեջ տեսնել հայասական թագավորների անունների և դիցաբանական անունների արձագանքը՝ թրակյան հատուկ անունների հետ միասին. հմմտ. Արա (փոքրասիական դիցանուն), Տորք (փոքրասիական դիցանուն), Կադմոս (Կարիական լեռների աստված, Թեբեի առասպելական հիմնադիր)[40], Հայկակ, Հոյ (հմմտ. Ḫajaša), Սկայորդի (հմմտ. թրակ. Σκαιοι ցեղանունը) և այլն։

9) Եթե ճիշտ է Վ. Գեորգիևի կարծիքը էտրուսկերենի խեթա-լուվական ծագման մասին [Georgiev, 1962, 1970—1971, 1974][41], ապա հայասա-էտրուսկյան որոշ զուգադիպումներ լիովին հասկանալի են դառնում, և Հայասային նվիրված մեր աշխատություններում բերված փաստերը նոր լուսաբանություն ստանում։ Այս դեպքում հայ-էտրուսկյան զուգադիպումները պետք է բացատրել որպես հայասերենի՝ հայերենի մեջ ունեցած ներդրման արդյունք։

---

[39] Հետաքրքրական է նշել, այս կապակցությամբ, նույն պայմանագրի՝ թերևս կենտումային հնդեվրոպական լեզվի պատկանող Lupakiu-ta-ն՝ Aliụašu-ի համեմատությամբ (?)։

[40] Կադմոս անունը հույները հավանաբար փոխ են առել փյունիկեցիներից. փյունիկյան qdm արմատը նշանակում է «արևելք»։

[41] Գեորգիևի կարծիքը առայժմ ընդունելություն չի գտել, մանավանդ որ էտրուսկյան ազգակցական անունների և թվականների հնդեվրոպական ծագումը չի հաստատված։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ.
ԱՆՑՈՒՄ ՎԱՂՆՋԱՀԱՅԵՐԵՆԻՑ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻՆ

Ի. ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

1. ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Եթե վաղնջական շրջանի համար ենթաշրջանների առանձնացումը պայմանական բնույթ է կրում, ապա հնագույն շրջանի վերաբերյալ տվյալներն այնպիսիք և այնքան են, որ մենք կարող ենք որոշակիորեն գծել ենթաշրջանների կառուցվածքային և բառապաշարային հիմնական առանձնահատկությունները։ Դեռ ավելին. ինչպես մասամբ ցույց է տրվել ներածական մասում, հնարավոր է որոշակի փուլեր առանձնացնել նաև ուշ հնագույն շրջանի համար։ Այնուհանդերձ նպատակահարմար է հնագույն շրջանի բնութագիրը տալ ոչ թե ըստ ենթաշրջանների, այլ ըստ կառուցվածքի և բառապաշարի տարբեր կողմերի՝ դրանցից յուրաքանչյուրի ժամանակագրական համապատասխան բաշխումներով ու մասնանշումներով։

Ելակետ ունենալով վաղնջահայերենի քննության մեջ բացահայտված վիճակը և հաշվի առնելով գրավոր շրջանի զարգացման վաղ (հատկապես դասական հայերենին հատուկ) փուլի առանձնահատկությունները՝ կարելի է գծել հնագույն շրջանի հնչյունական կառուցվածքի որոշակի պատկերը։

Հնագույն հայերենը բնութագրվում է ձայնավորային համակարգի հետևյալ հիմնական առանձնահատկություններով. 1) վաղնջահայերենի՝ հնդեվրոպականից եկող քանակային տարբերությունները աստիճանաբար վերանում են, և հայերենը դադարում է երկար և կարճ ձայնավորների հնչույթային հակադրություն ունենալուց. եթե այս դեպքում երկար a-ն (ā) առանց որևէ տարբերության համընկնում է հ.-ե. *a-ից, *ə-ից և *ь-ից ծագող, այլև վանկարար ձայնորդների վերացմանը զուգընթաց հանդես եկած լրացուցիչ կարճ a-ի (ă) հետ, ապա երկար e-ն և o-ն (ē, ō) որպես ավելի նեղ ձայնավորներ վերածվում են i-ի և u-ի. սրանով իսկ նախ՝ հին e : ē և o : ō քանակական հակադրությունը վերածվում է e:i և o:u որակական հակադրության, երկրորդ՝ ավելանում է i և u ձայնավորների ընդգրկումը. վերջիններս անկախ ծագման բնույթից (*ī>i, *i>i, *ē>i և *ū>u, *u>u, *ō>u) հնագույն շրջանի վերջերին՝ մոտավորապես մ. թ. III դարից սկսած ենթարկվում են անշեշտ վանկերում միևնույն փոփոխության՝ թուլացմանը (i>ə, u>ə) կամ սղմանը. հավանական է ենթադրել, որ այս շրջանում են կատարվում e>i և o>u փոփոխությունները ռնգայիններից առաջ՝ *heno >*hino (>հին), *conur>*cunur (>ծունր) և այլն. 2) եթե վաղնջահայերենի a տարրն ունեցող au, ai երկբարբառները հնագույն հայերենում պահպանվում են նույնությամբ (գրաբարի վաղ հուշարձաններում դրանք գրվում են աւ, այ), ապա oi երկբարբառը համընկնում է ei-ի հետ (գրաբարի հուշարձաններում այն գրվում է է-ով) և, համապատասխանաբար, eu և ou երկբարբառները միատեսակ կերպով փոխվում են oi-ի (գրաբարի հուշարձաններում այն գրվում է ոյ), որը, այսպիսով, բռնում է ei-ի փոխված նախկին oi երկբարբառի տեղը. 3) մասամբ միջձայնավորային *s>*h-ի անկման հետևանքով հանդես եկած ձայնավորային կապակցությունների, մասամբ էլ ձայնավորների և նախկին պայթականների շփականացման հետևանքով ծագած կիսաձայնների կապակցությունների բազայի վրա հանդես են գալիս նոր երկբարբառներ, որոնք լրացնում են գոյություն ունեցող երկբարբառների քանակը և ընդլայնում գործածության շրջանակները՝ հ.-ե. *sṷesōr>*hweur>kᶜoir (քոյր), հ.-ե. *septm̥>*eutᶜan (>եւթն), հ.-ե. *pətros>*hauro (>հաւր) և այլն. 4) աստիճանաբար հաստատվում է հնդեվրոպական լեզվում բացակայող՝ բարձրացող երկբարբառների և եռաբարբառների համակարգ՝ ia, ua, iai և այլն։

Այս բոլոր փոփոխությունների հետևանքով հնագույն հայերենի զարգացման դեռևս վաղ շրջանում պետք է գոյություն ունենար ձայնավորների և երկբարբառների հետևյալ համակարգը.

e o a i u

ei oi ai ui eu au iu ia ua

iai uai uau uoi

Վաղնջահայերենի ձայնորդների կարգը շարունակում է գոյություն ունենալ գրեթե նույնությամբ, թեև մասնակի փոփոխություններ են տեղի ունենում նրանց իրացումներում. 1) l ձայնորդը աստիճանաբար հանդես է գալիս դիրքային երկու տարբերակի ձևով՝ l և ł, որոնք շրջանի վերջերին վերածվում են անկախ հնչույթների՝ հանդես գալով միևնույն դիրքերում ևս. հմմտ. գրաբարյան աղի և անալի. 2) բառասկզբնային y և w կիսաձայնները հետագա ուժեղացմամբ վերածվում են ǰ և g բաղաձայնների, ընդ որում g-ն այս դեպքում թերևս անցնում է gw միջակա աստիճանով. հմմտ. *yuro> *ǰuro (>ջուր), *yani> *ǰani (> ջան-), *woiniyo> *gwoiniyo > *gwiniyo (>վրաց. γwino)> *giniyo (>գինի). և այլն. Հնարավոր է, որ *y>ǰ փոփոխությունն ընդգրկած լինի նաև եռբաղաձայնական դիրքը (վանկասկիզբը). հմմտ. *genyemi >*ǰinǰemi >ջնջեմ). բառասկզբնային *w-ի վերածվելը g-ի տեղի է ունեցել վաղ հնագույն շրջանի վերջերին. այդ պատճառով էլ այն ընդգրկում է ուրարտական փոխառությունները (հմմտ. Ṷelikuni >Gela(r)kʻuni տեղանունը), բայց չի ընդգրկում իրանական վաղ փոխառությունները, որոնք գերազանցապես պարթևերենից են և պատկանում են ուշ հնագույն (նախագրաբարյան) շրջանին. w>g փոփոխությունն ունենում է նաև մի այլ հետևանք՝ փոփոխվում են w պարունակող նաև այլ կապակցություններ. այսպես, *sṷ-ից առաջացած *hw-ն վերածվում է kʻ-ի (ք)՝ հ.-ե. *sṷidrom > վ.-հ. *hwirton > *kʻirtun (>քիրտն). 3) *s>h փոփոխության հետևանքով r-ի կողքին հանդես է գալիս ṙ-ն՝ rh-ից և hr-ից (*rs, *sr). 4) կիսաձայնների, որպես երկբարբառների երկրորդ տարրերի, կազմն ընդլայնվում է՝ պայթականների շփական տարբերակների կիսաձայնացման հետևանքով՝ հ.-ե. *pətér> վ.-հ. *hatir >հնգ. հ. *háyir (> հայր), հ.-ե. *pətrós > վ.-հ. *hatro >հնգ. հ. *hauro (>հաւր) և այլն. *t>y փոփոխության համար հմմտ. փոխառյալ սայլ բառը՝ σάτιλλα-ից։

Հնագույն հայերենը բնութագրվել է բաղաձայնական համակարգի հետևյալ փոփոխություններով. 1) այս շրջանի ամենից ավելի նշանակալից փոփոխությունը պայթական բաղաձայնների երկրորդ քմայնացումն է, որի հետևանքով առաջանում են *ǰ, č, čᶜ շշական կիսաշփականները և մասամբ, միջձայնավորային դիրքում, ž, š շփականները. այս փոփոխությունն ընդգրկում է ինչպես ետնալեզվային g, k, kᶜ, այնպես էլ առաջնալեզվային d, t, tᶜ պայթականները y-ից և առաջին շարքի e, i ձայնավորներից առաջ. հմմտ. հ.-ե. *gᵘ̯hermo- > վ.-հ. *germo > հնգ. հ. *ǰermo (>ջերմ). հ.-ե. *gem- > վ.-հ. *kem- >հնգ. հ. *čim- (ճիմ-, ճմլել). հ.-ե. *ligh- > վ.-հ. *lig- > հնգ. հ. *liž- (բարբ. լիժ «ողորկ»). հ.-ե. *ṷeikero- > հնգ. հ. *geišero (> գիշեր) և այլն. պայթական բաղաձայնների քմայնացման և կիսաշփականացման այս պրոցեսներն ակնհայտորեն զուգահեռ են y-ի ուժեղացման և ǰ-ի վերածվելու պրոցեսին, ընդ որում որոշ դեպքերում դժվար է դրանց հստակ տարբերակումը. այսպես, գրաբ. ստերջ բառը կարող է ծագած լինել ինչպես հ.-ե. *steri̯ā, այնպես էլ *sterdhi̯ā ձևից. 2) եթե վաղնջահայերենում հ.-ե. *s-ից ծագող h-ի՝ միջին վանկերում ընկնելու հարցը դժվար է դրականորեն լուծել, ապա հնագույն հայերենում այդ պրոցեսի ավարտվելը կասկած չի հարուցում. հենց այս շրջանում է հ.-ե. *sṷesōr-ից ծագած վաղնջահայ *hwe(h)ur-ը դառնում kᶜoir (քոյր)։

Բաղաձայնական կազմի կրած այս փոփոխությունների հետևանքով վաղնջահայերենի բաղաձայնական համակարգը հնագույն հայերենում ստանում է հետևյալ տեսքը.

b(h) d(h) g(h) j(h) ǰ(h) z ž

p t k c č s š

pᶜ tᶜ kᶜ cᶜ čᶜ x h

Հնագույն հայերենի վանկը վաղ շրջանում, նախքան շեշտահաջորդ վանկերի թուլացումն ու անկումը, սահմանափակված է եղել այնպիսի տիպերով, որոնց համար բացառվում է պայթականով վերջանալը. վաղ հնագույն շրջանի վանկը կարող էր վերջանալ միայն ձայնավորով կամ երկբարբառով (այսինքն՝ լինել բաց վանկ), ձայնորդով և շփականով [**Джаукян**, 1978, էջ 139]։

Հնագույն հայերենի շրջանի համար խիստ կարևոր են շեշտի հետ կապված փոփոխությունները։ Հնդեվրոպական ազատ երաժշտական շեշտը այս շրջանի վաղ ենթաշրջանում արդեն վերածվել էր հիմնականում վերջընթեր ուժային շեշտի. ավելի ճիշտ, այդ շեշտը մեծ չափով պայմանավորված էր ձևաբանական գործոնով՝ լինելով շարժական և ընկնելով ուղիղ հոլովներում հիմքային ձայնավորի և թեք հոլովներում՝ վերջավորության վրա։ Սրա հետևանքը լինում է վաղ հնագույն ենթաշրջանի վերջերին շեշտահաջորդ վանկերի թուլացման կամ անկման պրոցեսի ավարտը, այսինքն՝ շեշտահաջորդ ձայնավորներն ընկնում են, իսկ նախաշեշտ ձայնավորները թուլանում են կամ սղվում. *órbo>órb (որբ), սեռ. *orbóyo>orbóy (որբոյ)։ Շեշտի հետ կապված երկրորդ կարևոր պրոցեսը, որ ավարտվում է մ. թ. II դարի վերջերին կամ III դարի սկզբներին, նախաշեշտ վանկերի որոշ ձայնավորների ու երկբարբառների փոփոխությունն է. 1) վերին շարքի i և u ձայնավորները դրա հետևանքով միավանկ հիմքերում թուլանում և փոխվում են ə-ի, իսկ բազմավանկ բառերում սղվում են, եթե բաղաձայնների այնպիսի կուտակում չի ստեղծվում, որ պարտադիր է դարձնում ə-ի արտասանությունը. Համմտ. *dinem > dənem (**դնեմ**), *huroi (սեռ. հ.) > həroi (**հրոյ**). 2) միջին շարքի e և o ձայնավորներով կազմված ei և oi երկբարբառները նեղանում և փոխվում են վերին շարքի i և u ձայնավորների՝ *seirem > sirem (**սիրեմ**), *loisin lusin (**լուսին**), *loisoi (սեռ. հ.) > lusoi (**լուսոյ**). 3) տարբեր աղբյուրներից ծագող ia բարձրացող երկբարբառը, որի i-ն a-ի ազդեցությամբ լայնանում է և մոտենում e-ին (գրաբարում գրվում է **եա**), շեշտից առաջ կարճանում է և վերածվում e ձայնավորի՝ *keac^{c}i > kec^{c}i (**կեցի** «ապրեցի»)։ Այս բոլոր փոփոխությունները ընդգրկում են ոչ միայն հնդեվրոպական ծագման բառերը, այլև իրանական, ասորական, հունական և այլ կարգի այն փոխառությունները, որոնք կատարվել են մ. թ. III դարից առաջ։ Այս փոփոխությունների հետևանքով ստեղծվում է մի վիճակ, երբ՝ 1) նախաշեշտ վանկերում ei, oi, ia (ea) երկբարբառները չեն հանդիպում՝ փոխարինված լինելով i, u, e ձայնավորներով. 2) առաջանում են մեծ քանակությամբ ə-ով վանկեր, իսկ i-ով և u-ով վանկերը մեծ մասամբ գալիս են ei-ով և oi-ով վանկերից. միայն մի քանի միավանկ, հատկապես i-ով և u-ով սկսվող բառերում նախաշեշտ i-ն և u-ն պահպանվում են՝ himan (**հիման**. համմտ. **հիմն**), usoi (**ուսոյ**. համմտ. **ուս**). 3) բառակազմության և թեքման մեջ հաստատվում են շեշտի դիրքով պայմանավորված հերթագայություններ՝ gír—gərói, húr—hərói, séir > sirói, lóis > lusói, keánk^c—kenác^c, keác^c—kec^{c}í և այլն։

2. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Ձևաբանական կառուցվածքի առումով հնագույն հայերենի վաղ և ուշ ենթաշրջանների միջև արմատական հակադրություն է առաջանում շեշտահաջորդ ձայնավորների թուլացման ու անկման և ավելի ուշ՝ շեշտանախորդ վանկերի ձայնավորների ու երկբարբառների կրած փոփոխությունների հետևանքով։ Հնագույն հայերենը վաղնջահայերենի նման շարունակում էր մնալ թեքական լեզու, թեև խոնարհման մեջ, ինչպես կտեսնենք, աստիճանաբար մեծանում է նկարագրական-վերլուծական ձևերի թիվը։

Հնագույն հայերենի համար կարելի է վերականգնել հոլովական համակարգի հետևյալ կարևոր փոփոխությունները. 1) շարունակվում է ձայնավորահիմք և ձայնորդահիմք հոլովումների հակադրության պրոցեսը՝ հնդեվրոպական բնավոր (թեմատիկ) և անբուն (աթեմատիկ) հիմքերի հակադրության փոխարեն. այդ պրոցեսը իր ավարտին է հասնում հատկապես ուշ հնագույն ենթաշրջանում՝ շեշտահաջորդ վանկերի թուլացումից կամ անկումից հետո. թեմատիկ -o-ով հիմքերին հար և նման հոլովվում են նաև նախկին a-ով, i-ով և u-ով հիմքերը, այսինքն՝ բոլոր ձայնավորահանգ հիմքերը սկսում են հոլովվել միատեսակ՝ այդ տեսակետից հակադրվելով ձայնորդահանգ հիմքերին. 2) այս պրոցեսն ուղեկցվում է երկակի թվի և սեռային տարբերությունների վերացման պրոցեսով. երկակի թվի վերացումը տեղի է ունենում նաև խոնարհման համակարգում, ընդ որում հոլովման մեջ պահպանվում են միայն երկակի թվի առանձին հետքեր, որոնք համակարգ չեն կազմում. սեռային տարբերությունների վերացումը ունենում է նաև այն հետևանքը, որ հ.-ե. ար. *i̯os, չեզոք *-i̯om- և իգ. *-i̯ā ձևերի բազայի հիման վրա հանդես է գալիս i-ով վերջացող բառերի մեկ միասնական հոլովում. միայն արական սեռի բառերը շարունակում են մնալ -o-ով հիմքերի մեջ, իսկ տարբեր սեռերով հոլովվող ածականները և իգական սեռի գոյականները սկսում են հոլովվել միատեսակ հարացույցով, որ իր մեջ պարունակում է մասամբ արականի և մասամբ իգականի ձևեր. Համմտ. Հին հայերեն **որդի**, սեռ.-տր. **որդւոյ**, գործ. **որդւով** և **բարի**, սեռ.-տր. **բարւոյ**, գործ. **բարեաւ**. 3) նախկին -ā-ով հիմքերի մեջ, շեշտահաջորդ ձայնավորների թուլացման և անկման ընդհանուր պրոցեսի հետ կապված, սեռական-տրականի ընկած վերջավորությունների փոխարեն հանդես է գալիս հավանաբար նախկին *-i̯o- ածանցից ծագող -i վերջավորությունը, և նախկին *-ā-ով հիմքերի հոլովումը վերակառուցվում է -i/a- հիմքերի ձևով. Համմտ. Հին հայերեն **ամ**, սեռ.-տր. **ամի**, գործ. **ամաւ** և այլն. 4) ինչպես որ նախկին *-ā-ով հիմքերի սեռական-տրականի նախկին վերջավորությունները փոխարինվում են *-i̯o- ածանցից ծագող ձևերով, այնպես էլ հոգնակի սեռական-տրականում այդպիսի դեր է ստանձնում նախկին *-sko- (> c^c = g) ածանցը, որ, սակայն, ի տարբերություն նախորդի, տարածվում է բոլոր հիմքերի վրա՝ հիմքային տարրերի (այդ թվում՝ ձայնավորների) պահպանմամբ հանդերձ. Համմտ. Հին հայերեն սեռ.-տր. **ամաց**, **գետոց**, **սրտից**, **զարդուց**, **անձանց**, **մանուց**. 5) բացի նախկին թեմատիկ հիմքերից, մնացած դեպքերում բացառականի ընդհանուր վերջավորություն է դառնում նախկին *-etes/-etos-ից ծագող -ei (-է) վերջավորությունը. 6) շեշտահաջորդ ձայնավորների թուլացման ու անկման և սրա հետևանքով հոլովական որոշ ձևերի խառնման հետ կապված մեծանում է *en > i/i̯ (ի/յ) և *g'hō > z (զ) նախդիրների դերը, որոնցից առաջինը դառնում է բացառականի և ներգոյականի կազմության պարտադիր տարր, իսկ երկրորդը՝ որոշիչ հայցականի պարտադիր ցուցիչ. Համմտ. Հին հայերեն **ամ**, բցռ. **յամէ**, ներգ. **յամի**, որոշյալ հայց. **զամ**:

Հնագույն հայերենի խոնարհման համակարգը ենթարկվել է հետևյալ էական փոփոխություններին. 1) մի կողմից՝ բնավոր (թեմատիկ) և անբուն (աթեմատիկ) հիմքերի մերձեցումը և մյուս կողմից՝ բնավոր (թեմատիկ) խոնարհման մեջ e/o հերթագայության վերացումը հօգուտ e-ի (հոլովման մեջ գերակշռություն է ստանում o-ն), հանգեցնում են մի վիճակի, երբ խոնարհման բոլոր տիպերի համար հաստատվում է միևնույն կաղապարը՝ ձայնավորների և երկբարբառների տարբեր իրացումներով. այդ պրոցեսը իր ավարտին է հասնում ուշ հնագույն շրջանում՝ շեշտահաջորդ ձայնավորների անկման հետևանքով. Համմտ. Հին հայերեն **բերեմ**, **բերես**, **բերէ** (= berei), **բերեմք**, **բերէք** (= bereik^c), **բերեն** և **մնամ**, **մնաս**, **մնայ**, **մնամք**, **մնայք**, **մնան**. 2) հնդեվրոպական բնավոր (թեմատիկ) ու անբուն (աթեմատիկ) հիմքերի նախկին տարբերությունը ներկայի և սիգմատիկ (*-s-ով) ու ասիգմատիկ (առանց *-s-ի) հիմքերի տարբերությունը աորիստի ձևերում փոխարինվում է ածանցավոր և անածանց (եթե ածանցներ չհամարենք նախկին հիմքակազմ ձայնավորները) հիմքերի տարբերությամբ, ընդ որում ներկայի համակարգում այն դրսևորվում է որպես -n- ու -č^c- (-ն- ու -չ-) ունեցող և չունեցող, իսկ աորիստի համակարգում՝ որպես c^c (ց) ունեցող (ցոյական) և չունեցող (ոչ ցոյական) հիմքերի տարբերություն. այս տարբերությունն ավելի է ուժեղանում շեշտահաջորդ ձայնավորների անկումից հետո, մանավանդ որ նախկին հիմքակազմ ձայնավորներն ընկալվում են որպես վերջավորության տարրեր (այսինքն՝ հ.-ե. *-ā-mi-ի փոխարեն, որտեղ *-ā-ն հիմքակազմ տարր է, *-mi-ն՝ բուն վերջավորություն, սկսում է հանդես գալ -am-ը որպես միասնական վերջավորություն). գերակշռող մեծամասնությամբ ներկայի և աորիստի հիմքերը հակադրվում են այնպես, որ ներկայի ածանցավոր հիմքերին համապատասխանում են աորիստի անածանց (ոչ ցոյական), անածանց հիմքերին՝ աորիստի ածանցավոր (ցոյական) հիմքերը. հմմտ. հին հայերեն ուս-ան-(իմ)—ուս-(այ), բայց մն-(ամ)—մն-աց-(ի). ընդհանուր առմամբ խոնարհման ողջ համակարգը տոգորում է ներկայի և աորիստի հիմքերի հակադրությունը. 3) հ.-ե. *-sk (*sk´)-ից եկող c^c-ով (ց-ով) հիմքերը, որոնք դեռևս վաղնջահայերենում արդեն սկսել էին ընդարձակել իրենց գործածության շրջանակները, այս շրջանում մեծ չափով հանդես են գալիս խոնարհման համակարգում՝ ոչ միայն աորիստում, այլև ապառնիում և, այսպես կոչված, ստորադասականում. հմմտ. հին հայերեն գրեցի, ապ. գրեցից, հրամ. գրեցէք, ստոր. գրիցեմ. 4) մասամբ հնչյունական և մասամբ ձևաբանական ընդհանուր փոփոխությունների հետ կապված հնդեվրոպական ըղձականի և ստորադասականի (կոնյունկտիվի) ձևերը վերանում են, ընդ որում հնդեվրոպական ստորադասականի փոխարեն հանդես են գալիս, ինչպես տեսանք, -ց-ով ստորադասականի նոր ձևեր. 5) հ.-ե. *-lo- ածանցով կազմված դերբայական ձևերի ընդլայնման և տարածման հետ կապված մեծանում է այդ դերբայներով և օժանդակ բայով կազմված վերլուծական-նկարագրական ձևերի տեսակարար կշիռը. հին հայերենում հանդես են գալիս -եալ եմ, -լոց եմ տիպի եղանակային ձևերը, այլև -լի է տիպի ստորոգական գործածության ձևերը. 6) չնայած այս բոլոր պրոցեսներին՝ խոնարհման համակարգում դեռևս շարունակում են գործել մեծ քանակությամբ արխաիկ անկանոն ձևեր, շարունակում է մեծ մնալ տարահիմք (սուպլետիվ) ձևերի տեսակարար կշիռը։

3. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Վաղնջահայերենի համեմատաբար ազատ շարադասությունը, որ նա ժառանգած է եղել հնդեվրոպական լեզվից, հնագույն հայերենում հիմնականում պահպանվում է և անցնում հին հայերենին. ենթակայի և ստորոգյալի, որոշչի և որոշյալի, հատկացուցչի և հատկացյալի, խնդրի և խնդրառուի շարադասությունը կախված է ինչպես նախադասության բնույթից ու տրամաբանական շեշտից, այնպես էլ նրա ոճական կիրառության առանձնահատկություններից. այսպես, որոշչի ետադաս գործածությունը ավելի հատուկ է եղել ճարտասանական և հանդիսավոր, նախադասը՝ առօրյա-կենցաղային, սովորական խոսքին։ Խախտված է որոշչի և որոշյալի համաձայնության պարտադրականությունը. եթե ետադաս որոշչի համաձայնությունը որոշյալի հետ գրեթե ընդհանուր բնույթ ունի, ապա նախադաս որոշիչները սովորաբար չեն համաձայնում։ Որոշչի և որոշյալի համաձայնությունն ընդգրկում է, ի տարբերություն հնդեվրոպականի և, հավանաբար, վաղնջահայերենի, հինգ և ավելի թվականների որոշչային գործածությունը։

Հնագույն հայերենում աստիճանաբար զարգանում է ձևական խնդրառությունը՝ խնդրի հոլովական ձևավորման կախվածությունը ոչ այնքան նախադասության ընդհանուր իմաստից, որքան խնդրառու բառի հետ ունեցած հարաբերությունից՝ ըստ պատմական պայմանավորվածության. այդպիսիք են հին հայերենում, օրինակ, հետևյալ դեպքերը. «բուռն հարկանել զձեռանէ» («բռնել ձեռքից»), «յղել զհողոյ և զջրոյ» («ուղարկել հողի և ջրի ետևից»), «ծիծաղել զնովաւ» («ծիծաղել նրա վրա»), «նախանձել ընդ ումեք» («նախանձել մեկին»), «ասէ ցիս» («ասում է ինձ») և այլն։

Հավանաբար հնագույն հայերենում է զարգանում երեք դեմքերին հարաբերակից ս, դ, ն ետադաս հոդերի լայն կիրառությունը. ընդհանրապես այս շրջանին պետք է վերագրել ցուցականների եռադիմության հաստատումը՝ սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն: Միաժամանակ կարևոր է նշել, որ նախ՝ տեղի է ունենում այս, այդ, այն դերանունների և հոդերի դիմային յուրատեսակ համաձայնություն («զայրն զայն», «զբանս զայսոսիկ» և այլն), երկրորդ՝ հատուկ որոշյալ արժեք է սկսում ձեռք բերել ն հոդը։ Ամենայն հավանականությամբ հնագույն հայերենի շրջանում է զարգանում զ նախդիրի (<հ.-ե. *g´hō)՝ որոշյալ հայցական նշանակելու գործառությունը։

Հնդեվրոպական *i̯o- հարաբերական դերանվան փոխարեն հարցականների հարաբերական գործածության՝ թերևս վաղնջահայերենում սկսված պրոցեսը այս շրջանում ավարտվում է։ Դերբայական դարձվածների հետ միասին հանդես են գալիս շաղկապների բավականաչափ լայն շրջանակով ներկայացված երկրորդական (ստորադաս) նախադասություններ. շաղկապները ձևավորվում են մասամբ հնդեվրոպական սպասարկու բառերի և հարցական դերանունների հիման վրա՝ և, եթէ, այլ, քան և այլն, մասամբ եղած միջոցների զուգորդմամբ ու բաղադրմամբ՝ զի, և—և, եթէ—եթէ, քանզի, քան եթէ, մինչ զի, այսինքն և այլն, մասամբ փոխառյալ բառերի և նրանց ու բնիկ բառերի զուգորդման ու բաղադրման միջոցով՝ կամ, թէպէտ, յորժամ և այլն (կամ-ը, պէտ-ը, ժամ-ը իրանական ծագում ունեն)։

Հնդեվրոպական ծագման ի, զ, առ, ց, ընդ, ըստ նախդիրների կողքին հնագույն հայերենում աստիճանաբար նշանակալից արժեք են ձեռք բերում զգալի թվով նախադրություններ և նույնիսկ ետադրություններ՝ կազմված մասամբ հնդեվրոպական բառերի, մասամբ էլ իրանական և այլ կարգի փոխառությունների հիման վրա. հնդեվրոպական բառերի հիման վրա են կազմավորվել առանց, առաջի, բա(յ)ց ի, զաղա, զկնի «ետևից. հետո», զհետ, իբրև, ի ձեռն, ի մէջ, ի ներքոյ, ի ներքուստ, ի վերայ, ի վերոյ, ի վերուստ, հեռի, հեռէ, մատ ի/առ, մերձ ի, մինչև ի/առ/ց, քան և այլն. իրանական և այլ կարգի փոխառությունների ու անհայտ ծագման բառերի հիման վրա են ձևավորվել աղագաւ (և յաղագս), զաւրէն, ընդդէմ, ի սակս, հանդէպ, հանդերձ, յանդիման, շուրջ, չափ, պէս (և որպէս), վասն և այլն։

4. ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

ա) ՎԵՐՋԱԾԱՆՑՈՒՄ

Վաղնջահայերենից ժառանգելով բառակազմական հիմնական կաղապարները և իրացման միջոցները՝ հնագույն հայերենը դրանք մասամբ փոփոխել է, մասամբ լրացրել նոր կաղապարներով ու նոր միջոցներով (իրացումներով). վաղնջահայերենի մի շարք գործուն ու արդյունավետ կաղապարներ ու միջոցներ դադարել են այդպիսին լինելուց, և առաջացել են նորերը, հին *բաղադրությունների մի մասը դուրս է եկել գործածությունից և փոխարինվել նորերով, հայերենի մեծաքանակ փոխառությունները հիմք են տվել բառակազմական նոր միջոցների ու նոր եղանակների առաջացման համար։*

Վաղնջահայերենից հնագույն հայերենի ժառանգած վերջածանցների հարցը քննելիս հարկավոր է նկատի ունենալ երկու կարևոր գործընթաց. 1) բնավոր (թեմատիկ) և անբուն (աթեմատիկ) հիմքերի հակադրության աստիճանական փոխարինումը ձայնավորահանգ և ձայնորդահանգ հիմքերի հակադրությամբ համապատասխան ազդեցություն է թողնում նաև բնավոր և անբուն հիմքեր կազմող ածանցների փոխհարաբերության վրա. շեշտահաջորդ վանկերի թուլացումից և անկումից հետո բնավոր և անբուն հիմքերի, այլև դրանք կազմող ածանցների հակադրությունն ընդհանրապես դադարում է որևէ նշանակություն ունենալուց. 2) ինչպես այլ դեպքերում, այնպես էլ վաղնջահայերենից հնագույն հայերենին անցնելիս տեղի են ունեցել հիմքերի վերատարալուծման և պարզեցման երևույթներ, որոնք լայն չափեր են ընդունել մանավանդ վաղ հնագույն ենթաշրջանի վերջերից՝ շեշտահաջորդ վանկերի թուլացումից և անկումից հետո. հիմքային ձայնավորների անկումը բառավերջում և նրանց պահպանումը բառամիջում հանգեցնում է այն բանին, որ դրանք գիտակցվում են մասամբ որպես հիմքերից անկախ տարրեր և անցնում հաջորդ բաղադրիչներին, տվյալ դեպքում՝ վերջածանցներին, մասամբ որպես անկախ կազմիչներ, ինչպես -a- (**-ա-**) *հոդակապի դեպքում. վերջինիս տարածումը էական նշանակություն է ունենում ոչ միայն բարդության, այլև վերջածանցման համար, որտեղ առաջանում են հոդակապավոր և անհոդակապ ածանցների խմբեր. հոդակապավոր ածանցները մասամբ գալիս են նախկին բարդություններից՝ դրանց երկրորդ բաղադրիչների ածանցացումով, մասամբ արդյունք են համաբանական և այլ կարգի երևույթների։ Այս երկու գործընթացները քիչ դեր չեն խաղում որոշ ածանցների գործուն և կենսունակ լինելուց դադարելու մեջ։*

Բացի ներքին զարգացմամբ պայմանավորված երկու գործընթացներից, հին հայերենի վերջածանցների կազմավորման համար էական դեր են խաղում նաև արտաքին ենթաշերտային ազդեցությամբ և մեծաքանակ փոխառություններով պայմանավորված երևույթները։ Օտար աղբյուրներից ծագող արմատական և վերջածանցավոր ձևերի միաժամանակյա առկայությունը առաջ է բերում վերջածանցների ինքնուրույն գործածություն, և օտար ածանցներն սկսում են բառեր կազմել նաև բնիկ հայերեն հիմքերից։

Հնդեվրոպական շրջանից եկող և վաղնջահայերենում դեռևս գործող բնավոր (թեմատիկ) ածանցները (*-ko- > *հ. հ.* **-ք**, *-mo- > *հ. հ.* **-մ**, *-ro- > *հ. հ.* **-ր**, *-tero- > *հ. հ.* **-յր**, **-դեր** *և այլն) հնագույն հայերենում իրենց «մաքուր» ձևով հիմնականում դադարում են գործուն լինելուց՝ պահպանվելով մասամբ նախորդ ձայնավորների, մասամբ իրար ու այլ ածանցների հետ զուգակցված բաղադրյալ ածանցների ձևով։ Շեշտահաջորդ վանկերի թուլացումից և անկումից հետո «ձայնավոր+նախկին բնավոր ածանց» կապակցությունները ընկալվում են որպես միասնական ամբողջություններ և տարածվում իբրև այդպիսիններ, ընդ որում որոշ դեպքերում գերակշռություն է ստանում ձայնավորներից մեկը, այլ դեպքերում հանդես են գալիս ածանցի ձայնավորային տարբերակներ։ Այս նույն բանը նկատվում է նաև նախկին անբուն ածանցների դեպքում, որոնք համեմատաբար լավ են պահպանվում*

Եթե նախկին բնավոր և անբուն ածանցներից ծագած տարբերակները բերենք հին հայերենում ավանդված ձևով, ապա կարելի է ասել, որ հնագույն հայերենը ունեցել է վաղնջահայերենի ածանցների և նույնիսկ վերջավորությունների հիման վրա կազմված հետևյալ հիմնական ածանցները՝ **-ի(-ք), -նի, -իչ (-ուչ), -ել (-իլ, -ալ, -ոլ), -եալ, -լի, -լոց, -աղ** *(ոչ գործուն),* **-ին, -ա-յն, -ուն, -ար, -որ, -ուր, -իր, -(ե)րորդ, -եար, -ացի (-եցի), -ացու, -ոց (-ան-ոց), -աց(-ք) (-եաց, -ոյց), -ից-ս, -ոտ, -ոտի, -ուտ, -տի, -որդ, -իկ(ն), -ուկ(ն), -իւն, -ութիւն, -ու-մն, -աւղ (-ող), -եստ (-իստ, -աստ, -ուստ), -ոյք, -ունդ, -ու(-ք), -աւ (-եաւ, -եւ, -իւ, -ով, -ու), -ովի(ն) (-եւի(ն), -ուստ** *(«-ից». հմմտ.* **ուստի**)*։ Սրանց հետ միասին գործում են նախկին բարդությունների երկրորդ բաղադրիչների հիման վրա ստեղծված այլևայլ ածանցներ՝* **-արար, -ագ, -ած (-ած-ոյ, -ած-ու, ած-ոյ-ք, -ու-ած), -ա-կից, -ա-կալ, -ա-մած, -ա-տոր (-տոր), -եղ (-եղ-ի), -ա-ճար (>-ար)**։ *Թերևս փոխառության հիման վրա է ծագել* **-ատ<-հատ** *ածանցը «հատված, կտրված» իմաստով։ Այս ածանցները դրվում են նաև ենթաշերտային ծագման և փոխառյալ շատ հիմքերի վրա՝ նշանակալից չափով ավելացնելով ածանցյալ բառերի քանակը՝* **վայր-ի, դատ-իչ, վայել-ուչ, վար-ել, դիւր-ին, սակ-այն, խաւս-ուն, մք-ար, փոք-որ, ճախճախ-ուտ, փոխան-որդ, ապետ-ութիւն, պաճ-եստ** *և այլն։*

Թվարկվածներին միանում են այն ածանցները, որոնք ծագել են ենթաշերտային ազդեցության և փոխառությունների հիման վրա, երբեմն էլ բարբառային տարբերակների՝ ստանդարտ լեզվի մեջ թափանցելու միջոցով։ Սրանց մասին մենք առիթ կունենանք խոսելու հայերենի կրած օտար ազդեցությունների քննության հետ կապված, բայց այստեղ դրանք բնութագրենք ընդհանուր ձևով։ Հայերենի մեջ, անշուշտ, մեծ տեղ են բռնում ուրարտական և իրանական ծագման ածանցները, որոշ դեպքերում էլ ածանցների բուն աղբյուրներն ընդհանրապես հայտնի չեն։ Իրանական ազդեցությունը որոշ դեպքերում չափազանցված է, զուգադիպումները՝ երբեմն պատահական. մի շարք դեպքերում էլ այն արտահայտվել է միայն գոյություն ունեցող ածանցների տարածման առումով։ Հայերենի մեջ մուտք գործած ածանցների մի մասը գործուն և արդյունավետ է, մյուսները հանդիպում են միայն հազվադեպ օրինակների մեջ։ Ստորև բերվող ածանցների համար նախ տրվում են հնդեվրոպական, ապա այլ ծագման հիմքերից կազմված բառեր, ընդ որում ընտրվում են միայն հին հիշատակություններ ունեցողները. սակայն նկատելի է, որ գրավոր շրջանում տարածված մի շարք ածանցներ դասական փուլի հուշարձաններում ավելի փոքր հաճախականություն ունեն՝ մանավանդ հնդեվրոպական հիմքերի դեպքում. այսպիսով, բերվող որոշ ածանցներ նախագրային շրջանում սակավադեպ գործածություն պիտի ունեցած լինեն, որոշ օրինակներ էլ թերևս մատենագրական կազմություններ են՝ ոչ այնքան հաճախադեպ.

-ա-գար (իրան.)՝ աչագար, գլխագար, այլև խելագար.

-(ա-)գին (իրան.)՝ գորովագին, հիվանդագին, ողբագին, սրտագին, ցասագին, այլև ահագին, դիւագին, կաթոգին (կաթո- հիմք), ուժգին, վշտագին և այլն.

-ա-գոյն (համեմատական ածականի արժեքով. հմմտ. նաև մկբ. -ագոյնս) (իրան.)՝ բարձրագոյն, երկայնագոյն, լաւագոյն, հնագոյն, երկարագոյնս, լայնագոյնս, այլև խոնարհագոյն, հեշտագոյն և այլն.

-ա-ժէտ (իրան.)՝ լուսնաժէտ (ուշ), որկորաժէտ, այլև ախտաժէտ, նենգաժէտ (ուշ).

-ախ՝ թարախ, յ-աճ-ախ, շաղախ, քացախ.

-ակ՝ գիտակ, երգակ, թրթրակ, լծակ, յաջողակ, ստորնակ, տեղեակ, այլև դիտակ, պահակ, վրիպակ և այլն.

-ակ (իրան.՝ -ա-կ(ն)-ի բաղարկությամբ. հմմտ. գիակն, այլև՝ -եակ, -իկ, -ոյկ, -ուկ)՝ անտառակ, գաւառակ, թիակ, որդեակ, այլև երամակ, կղզեակ, վահանակ, վիշապակ և այլն.

-ա-կան (իրան.)՝ առասպելական, արուական, գաղթական, այլև ազգական, իշխանական և այլն. Իրանական ծագման բառերում հանդիպում են նաև առանց ա-ի ձևեր՝ գուժկան, վարձկան.

-ա-կեր (-ա-կար, -ա-կեալ) (իրան.)՝ աղաւթ(ա)կե(ա)ր, այլև վնասակար, համեղակեր և այլն.

-ակի՝ կողմնակի, երկակի, եռակի, քառակի, այլև վաղվաղակի, ուղղակի և այլն.

-այ(-ք) (հմմտ. և -եայ(-ք). մասամբ՝ միայն իրան. հիմքերի հետ, կամ ամբողջովին իրան.)՝ աշնանայք, միջերկր(ե)այ, որկոր(ե)այ, փղոսկր(ե)այ, այլև ակամայ, կամայ.

-ային (-այ+-ին և իրա՞ն.)՝ անդնդային, աշնանային, գարն(ան)ային, մարդկային, ջերմային, այլև աշխարհային, դաշտային և այլն. Հմմտ. նաև -այնի՝ գարնանայնի.

-այլ՝ մռայլ, այլև շռայլ (շիռ. հմմտ. արբ-շի՞ռ).

-ան (մասամբ կամ լրիվ իրա՞ն. հոգնակիի -ան-ը իրանական ծագման է)՝ գլան, դեղձան, թռչան, խարան, կցան, ջնջան, սրբան «հետույք», այլև իշխան, ժաման և այլն.

-անակ (մասամբ իրա՞ն.)՝ (յ)եղանակ, այլև գանձանակ, փոխանակ և այլն.

-անաւր (հ.-ե.?)՝ անդանաւր (ուշ), աստանաւր, ուրանաւր (ուշ).

-անդակ (իրան.)՝ այլանդակ, այլև աւժանդակ, բովանդակ և այլն.

-անի (հմմտ. կենդ-ան-ի)՝ լեզուանի, հոլանի «մերկ» (հոլ-ն առանձին չի գործածված), հովանի, այլև պիտանի.

-անի (հավաքական իմաստով. նախորդի հետ նո՞ւյնը)՝ գլխանի, երիցանի, կանանի, այլև աւագանի և այլն.

-ան-ք՝ բամբասանք, պարմանք, մաղթանք, մեծարանք, մեղադրանք, այլև զրկանք, հրապուրանք և այլն.

-ան-ուտ՝ յորձանուտ (յորձան-ից՝ -ուտ-ով), այլև հոսանուտ և այլն.

-ա-պան (իրան.)՝ դռնապան, լանջապան, այլև բանտապան, պարտապան և այլն. Անհոդակապ տարբերակը բնիկ հիմքերով հին կազմությունների մեջ չի հանդիպում.

-ա-պատիկ՝ կրկնապատիկ, եռապատիկ, այլև բիւրապատիկ, հազարապատիկ և այլն.

-ա-պէս (իրան.)՝ մեծապէս, ստուգապէս, այլև արագապէս, արժանապէս և այլն. Անհոդակապ -պէս-ով և նրանից կազմված -պիսի-ով ձևերը հանդիպում են միայն դերանվանական հիմքերի դեպքում՝ այսպէս, -պիսի, որպէս, -պիսի և այլն.

-ա-ստան (իրան.)՝ այգեստան, անդաստան, ձիաստան, Հայաստան, այլև բուրաստան, դատաստան, Հրէաստան և այլն.

-ա-վար (հմմտ. վար-ել<իրան.)՝ ամպավար, գործավար, այլև զաւրավար, կառավար և այլն.

-ատ (<հատ-)՝ միջատ, ունչատ, պնչատ, այլև գունատ, թլփատ և այլն (ոչ շատ հին կազմություններ).

-արան (իրան.)՝ աւթարան, գելարան, գործարան, այլև գանձարան, դատարան, պահարան և այլն.

-արար (հայ. -արար, մասամբ էլ իրան. -a-čar-՝ վերջին դեպքում երբեմն առանց անկախ գործածվող հիմքերի)՝ աղմկարար, կենարար, կենդանարար, սրբարար, տնարար, այլև խոհարար, հանդերձարար, վնասարար և այլն։

-արէն/-երէն (իրան.)՝ փոխարէն, յունարէն, այլև ասորերէն, հայերէն և այլն (բնիկ հայերեն հիմքերի հետ չի հանդիպում).

-արիմ (հմմտ. -երիմ)՝ հաւատարիմ.

-աւանդ(ակ) (իրան.)՝ բարձրաւանդ(ակ), այլև գահաւանդ(ակ) և այլն.

-աւէտ (իրան.)՝ գինեւէտ, բնչաւէտ, թիկնաւէտ, այլև խաշնաւէտ, շահաւէտ և այլն.

-աւն(-ք)՝ գեղաւն, գողաւն(-ք), գործաւն (=գործօն), կրաւն(-ք), ցրաւն-ք, այլև կարաւն.

-աւրէն (-օրէն) (իրան.)՝ կենդանաւրէն, մարդկաւրէն, այլև աշխարհաւրէն, իշխանաւրէն և այլն.

-բն (<-մն?)՝ սկիզբն (սկսանիմ).

-եակ (-ի+-ակ-ից՝ համաբանորեն տարածված)՝ վեցեակ, տասնեակ, այլև մաշկեակ և այլն.

-եայ(-ք) (հմմտ. -այ)՝ այծեայ, անդեայ (և անդի), բրդեայ, հինգամեայ (=հինգամեան), այլև բեհեզեայ, պաշտաւնեայ և այլն.

-եան (իրան. և հայ. -ի+-ան? հաճախ հերթագայվում է -եայ-ի հետ)՝ արդեան «այժմյան», սերկեան, քառասնամեան, այլև ժամանակեան և այլն. Ծագմամբ սրա հետ կապվա՞ծ է արդյոք -եան(-ք) հավաքականը՝ գործեան, գրեան(-ք), այլև խոզեան, մոգեան և այլն. Հավանաբար մտնում է անձներական թվականների -(ե)քեան/-(ե)քին ածանցի կազմի մեջ՝ ամենեքեան/ամենեքին, երկոքեան/երկոքին, երեքեան/երեքին և այլն:

-եխ՝ զոռեխ (հ.-ե. *gher-՝ բնաձ.?), կեռնեխ (հ.-ե. *ger-՝ բնաձ.?), մեղեխ «կացնի կոթ» (հ.-ե. *mel- «փշրել, խփել, աղալ»?).

-եղէն (-եղ+-էն. վերջինս իրան. թե՞ բրբռ. -էն<-այն)՝ արծաթեղէն, բոցեղէն, հողեղէն, հրեղէն, այլև երկաթեղէն, ոսկեղէն և այլն.

-եմ՝ համեմ (ուշ), այլև խոհեմ.

-ենի (-եան+-ի)՝ լրբենի, հայրենի(-ք), այլև արմաւենի, թզենի, վայրենի, վարդենի և այլն.

-երիմ (հմմտ. -արիմ)՝ մտերիմ, այլև ոխերիմ (և ոխարիմ).

-եց-իկ (-եաց+-իկ)՝ գեղեցիկ, դիեցիկ, երգեցիկ, ընկեցիկ.

-էճ (իրա՞ն.)՝ բուէճ.

-էտ (?)՝ բրէտ (հմմտ. բոռ), կրէտ (հ.-ե. *ger-՝ բնաձ.?), այլև առնէտ (?).

-իճ՝ ուտիճ, լուիճ (ուշ), այլև դառնիճ «դառը. դառնահամ մի բույս», խառնիճ «մանր մորեխ», ճահ/խիճ (հմմտ. ճախ-ին), պատաղիճ «բաղեղ», պատիճ «կեղև» (ուշ).

-իկ (մասամբ *-իկ(ն)-ից, մասամբ էլ իրա՞ն.)՝ աղջիկ (-կան), Աստղիկ (-կան), փոքրիկ (-կան) և հայրիկ, ձկնիկ, մայրիկ, մանկիկ, այլև եղեգնիկ, կարմրիկ, պատանեկիկ (-ակ+-իկ) և այլն. հավանաբար նույն ծագումն ունի հավաքականի -իկ-ը՝ մարդիկ (-կան).

-իկ (իրան. համմ. նաև -աց-իկ, -եց-իկ, -ուց-իկ)՝ թափանցիկ, մարտիկ, այլև (ան)աշխարհիկ, տոհմիկ և այլն.

-իմ (համմ. -ար-իմ, -եր-իմ)՝ միայն օտար հիմքով՝ ուշիմ, թերևս նաև կրճիմ(ն), ճղճիմ.

-իտ՝ միայն օտար հիմքով՝ ձրձիտ «գիշատիչ» (ձրձել «կորզել, կեղեքել»), թերևս նաև կրկիտ.

-իւղ (<*-i-ōl-?)՝ երկիւղ.

-կեան/-կէն (-իկ+-եան կամ -էն, թե՞ իրան.)՝ միայն օտար հիմքով՝ ժանտկէն, ծակոտկեան (-կէն), կռճկէն, հիւսկէն, ճանճկէն (համմ. ճանճիկ).

-կին՝ կրկին, երեքկին, չորեքկին, հնգեկին և այլն (չորեք-ը, հնգե-ն հինգային հին ձևեր են, և կին-ը պետք է համարել հին արմատ կամ մասնիկ).

-կոտ (-իկ/-ուկ+-ոտ. համմ. տաղտուկ—տաղտկոտ)՝ ծիծաղկոտ, մոռացկոտ, նախանձկոտ (և նախանձոտ) (հ.-ե.?), փութկոտ (և փութոտ), այլև դանդաղկոտ, վախկոտ, փախչկոտ և այլն.

-կու (-իկ/-ուկ+-ու)՝ յաղթկու (հ.-ե.?), այլև հուժկու.

-ոգ՝ նորոգ.

-ող՝ գոռող.

-ոյ(-ք)՝ (մասամբ իրանական ծագման բառերում. իրա՞ն.)՝ բարոյք, երեկոյ, խնչոյ-ք (խնճոյ-ք), հետոյ, այլև աղգոյ, ամաւթոյ-ք, արգոյ, հաճոյ(-ք). այս ածանցն է առկա նաև -ածոյ բաղադրյալ ածանցի մեջ.

-ոյզ (համմ. -ոյց)՝ -ելոյզ, *ընկլոյզ, *-փլոյզ.

-ոյկ (իրան.)՝ խարոյկ (խար-<հ.-ե., թե՞ իրան.), այլև ձորձոյկ (? ձորձմոյկ?), պարոյկ.

-ոյն (-ոյ՝ տարբեր աղբյուրներից՝ հոլ. վերջավորություն և ածանց+-ն, եթե ոչ հիմքային -ո- տարր+-յն)՝ գիշերոյն, իսկոյն, միահաղոյն, ողջոյն և մեզոյն (=մեզէն), քեզոյն (=քեզէն).

-ոյս (համմ. -ոյց)՝ -կորոյս.

-որ-(ե)այ(-ք)՝ արտոր(ե)այ, այլև կալորայ, վանոր(ե)այ(-ք).

-շի՝ բոլորշի, լայնշի.

-ոչ (այլև -աչ?)՝ խոռոչ.

-չեայ (-իչ+-եայ)՝ առհաւատչեայ, աւետչեայ.

-ուլ (ոչ բնիկ բառերո՞ւմ)՝ թաթուլ, կափուլ.

-ուկ (համմ. -ակ, -իկ՝) ծիծեռնուկ, մանկուկ, որթուկ, այլև մժղուկ, կանեփուկ և այլն. քարացած կազմություններ են դերբուկ, մանուկ և այլն.

-ուկ՝ հարցուկ, յեղյեղուկ, այլև պարծուկ (=պարտուկ) և այլն.

-ուհի (իրան. հնագույն շրջանում հավանաբար չի եղել)՝ արդարուհի, երանուհի, սրբուհի, այլև թագուհի, իշխանուհի և այլն.

-ունի (-ուն+-ի)՝ ծերունի, տէրունի, այլև արքունի և այլն.

-ունչ (համմ. -իչ, -ուչ)՝ անտերունչ.

-ուստ (համմ. ուստի)՝ ամենուստ, այլուստ, արտաքուստ, այլև արքունուստ, նախուստ և այլն.

-ուրդ (համմ. -որդ?)՝ կացուրդ, այլև ժողովուրդ, խորհուրդ և այլն.

բ) ՆԱԽԱԾԱՆՑՈՒՄ

Հնագույն հայերենում շարունակում են պահպանվել վաղնջահայերենի որոշ նախածանցներ՝ մասամբ մնալով գործուն և արդյունավետ, մասամբ դադարելով այդպիսին լինելուց: Սրանց կողքին սկսում են հանդես գալ նոր նախածանցներ՝ բնիկ բառերի և փոխառությունների հիման վրա. վերջիններիս մեջ մասնավորապես պետք է նշել իրանական նախածանցները:

Ժխտական նախամասնիկներից ան-ը շարունակում է նորանոր կազմություններ տալ՝ որպես գործուն և արդյունավետ ածանց հասնելով մեր օրերը: Բնիկ հնդեվրոպական հիմքերի հետ միասին սկսում են հանդես գալ փոխառյալ հիմքեր, հնդեվրոպական շրջանից ժառանգված և վաղնջահայերենից եկող կազմությունների կողքին՝ նոր կազմություններ: Այն հանգամանքը, որ իրանական փոխառությունների մեջ նույնպես հանդիպում են an- ժխտականով կազմություններ՝ ձայնավորով սկսվող հիմքերից առաջ (բաղաձայններից առաջ հանդես է եկել an-ի a- տարբերակը. համմ. ակամայ), հիմք է տալիս իրանական համատիպ կազմությունների հայտնալու, իբրև հայկական կազմություններ ընկալվելու, և, սրա հետ կապված, ան-ի բառակազմական դերի աշխուժացման համար. այս առումով իրանական ձայնավորասկիզբ հիմքերի դեպքում դժվար է որոշել ան- ժխտականով կազմությունների՝ պատրաստի կերպով փոխառված, թե հայկական հողի վրա հանդես եկած լինելու հարցը. համմ. անազատ, անազդ, անախտ, անապական, անաշխատ, անապաշխար, անարգ, անարժան: Այսպիսի դեպքերում հարցի լուծման հենակետ է ծառայում իրանական լեզուներում նման կազմությունների առկայության կամ բացակայության, նրանց իմաստային և գործառական առանձնահատկությունների որոշումը: Ըստ հնարավորին բացառելով ան-ով և ձայնավորասկիզբ հիմքերով իրանական և հենց գրավոր ավանդման շրջանում հայ հեղինակների ու թարգմանիչների կազմած գերազանցապես սակավ գործածական բառերը՝ դասական հայերենում հանդիպող ան-ով և փոխառյալ հիմքերով մնացած կազմությունները կարելի է վերագրել նախորդ՝ հնագույն շրջանին՝ անբաւ, անբնակ, անզաւակ, անզաւր, անխաբ, անխառն, անխրատ, անհաշտ, անպաշտ և այլն: Հավանական է նաև ան-ով և որոշ կարգի բաղադրյալ հիմքերով կազմությունների՝ անիրաւ, անձեռնհաս և այլն, մասնավորապես ան-ով և բայական հիմքերով այնպիսի կազմությունների՝ հնագույն շրջանին պատկանելը, ինչպիսիք են անարար, անզգայ, անիմաց և այլն: Թեև ան—ելի կաղապարով կազմված բառերը վերագրվել են ետ-դասական շրջանին, բայց դասական շրջանում ան—ալի, ան—ելի կաղապարներով կազմությունների առկայությունը ևս [Առաքելյան, 1976, 263] ենթադրել է տալիս այդ կաղապարներով կազմությունների թերևս ավելի վաղ՝ հնագույն շրջանի վերջերին հանդես գալը, մանավանդ որ առանց -ալի, -ելի մասնիկների կազմությունները կամ ընդհանրապես չեն հանդիպում, կամ հանդիպելու դեպքում իմաստային տարբերակում ունեն՝ անիմանալի, անազդելի, անբժշկելի, անջնջելի, անփոփոխելի և այլն: Սրանք ակնհայտորեն պատկանել են բարձր ոճին և տարածված են եղել ստանդարտ (ավելի ուշ՝ գրական) լեզվում: Ընդհանրապես, ժողովրդախոսակցական լեզվի համար բնորոշ պետք է համարել ան- ժխտականի փոխարեն առանց նախադրության գործածությունը՝ առանց հասանելոյ (=անհաս), առանց գիտութեան (=անգէտ) և այլն:

Տ- ժխտականով հիմքերը V դարում սակավաթիվ են, և պետք է կարծել, որ նրանց սահմանափակման և տ-ի անարդյունավետ դառնալու պրոցեսը տեղի է ունեցել հատկապես հնագույն շրջանում։ Սրանով պետք է բացատրել տ-ով ձևերի կողքին ան-ով զուգահեռ կամ մերձավոր (նույնիմաստ և մերձիմաստ) ձևերի հանդես գալը V դ. և հետագա տեքստերում՝ տգեղ—անգեղ(եայ), տգէտ—անգէտ, տհաճ—անհաճոյ, տհաս—անհաս, տձեւ—անձեւ, տմարդի—անմարդի, տքնիմ—անքուն։

Իրանական բառերի զանգվածային փոխառությունը հիմք է տալիս իրանական ծագման ժխտական նախամասնիկների անկախ գիտակցման համար։ Դրանցից դժ-ը դժգոհ—գոհ, դժկամ—կամ տիպի զույգերում ակնհայտորեն գիտակցվել է իբրև այդպիսին և նույնիսկ տվել դժմիտ կազմությունը՝ դժնեմիտ բարդության կողքին. դժպհի, դժուար տիպի բառերում այն պիտի գիտակցվեր աղոտ կերպով։ Դժ-ով կազմությունների կողքին V դ. և ուշ հանդես են գալիս զուգահեռ ան-ով կազմություններ՝ անգոհ, անկամ և այլն։ Ապ(ա)-ով իրանական կազմությունները մնացել են ընդհանրապես մեկուսի, և ապ(ա)-ն բուն հայկական հիմքերի համար չի գործածվել՝ ապաշնորհ—շնորհ, ապերախտ—երախտիք, ապերասան—երասան, ապուշ—ուշ և այլն. սրանց կողքին V դ. և ուշ գործածված են նաև բուն հայկական կազմություններ՝ անշնորհ, աներասան, աներախտ և այլն։ Իրանական ան-ի ա- տարբերակը հայերեն փոխառություններում խիստ հազվադեպ է և իբրև ժխտական հավանաբար շատ աղոտ է գիտակցվել. համ. ակամայ—կամայ։

Մնացած նախածանցավոր կազմություններից շարունակում են իրենց գոյությունը վաղնջահայերենից եկող այն բառերը, որոնց նախածանցները համընկնում են նախդիրների հետ՝ առ–, զ–, յ– (ի), ընդ–, ց–։ Դժվար է որոշակիորեն ասել, թե այդ նախդիր-նախածանցներով կազմությունները հատկապես ո՛ր շրջանում են հանդես եկել, եթե մենք գործ ունենք հնդեվրոպական ծագման հիմքերի հետ. բնականաբար, հնագույն կամ հին հայերենին են վերաբերում V դարում, հատկապես նրա առաջին կեսին ավանդված այն կազմությունները, որոնց հիմքերը կամ փոխառյալ ու անհայտ ծագման են և պետք է մուտք գործած լինեն նշված շրջաններում, կամ այդ շրջաններին վերաբերող բաղադրություններ են։ Նախդիր-նախածանցներով կազմությունների մեջ պետք է տարբերել երկու տիպ։ Անվանական և անուններից ծագող մակբայական կազմությունների մեջ այս մասնիկները փաստորեն պահպանում են իրենց նախդրային արժեքը, և առկա են յուրատեսակ բառացած՝ պատրաստի կամ քարացած ձևեր՝ առաքուր (աքուր «ոտք»), առժամայն, առհաւատչեայ, առտնին, զառաջեաւ, զկնի, ընդդէմ, յանկարծ, յապահով, յապայ, յարգ, յորժամ, յասօր, ցորչափ և այլն։ Երկրորդ տիպը ներկայացնում են բայերը և բայանունները, որոնց մեջ, սակայն, ոչ հնդեվրոպական հիմքերով կազմությունները սակավաթիվ են՝ զարգանամ, զարհուրիմ, զբաղիմ, ըմբոշխնեմ, ընդգրկեմ, ընդվզիմ, յապաղեմ, յարձակեմ (-իմ)։ Առ–, ըստ–, ց– նախդիրները հնագույն շրջանում դադարել էին գործուն բայական նախածանցներ լինելուց. դասական հայերենում հանդիպում և հավանաբար հնից են գալիս առանձնակի կանգնած առածիմ, ալնում բայերը. պետք է կարծել, որ ց-ն վաղնջահայերենում գործուն բայածանց չէր, իսկ զ–, ընդ– (ըմ–), յ– նախածանցները որպես բայակազմիչներ դարձել էին սակավ արդյունավետ։

Նախդիր-նախածանցների կողքին հանդես են գալիս ընիկ ու փոխառյալ արմատների և հիմքերի բազայի վրա ծագած նախածանցներ, որոնք հաճախ հարաբերակից են այս շրջանում գործող նախադրություններին։ Սրանք բայանուններին ու բայերին տալիս են գերազանցապես տարածա-ժամանակային դիրքի հետ կապված իմաստային երանգներ։ Բուն բայակազմիչ արժեք ունեցողները սակավաթիվ են և նրանց մեծ հնությունը՝ կասկածելի՝ գերազանցեմ, հետազօտեմ, ներգործեմ, վերածեմ, վերաբերեմ։ Ավելի հաճախադեպ են և թերևս բավականաչափ հին (հնագույն շրջանին են պատկանում) հետևյալ ոչ բայական կազմությունները[1].

ապա-՝ ապագայ.

առաջ(ա)-՝ առաջակայ և յառաջ(ա)-՝ յառաջագէտ, յառաջագիր, յառաջադէմ, յառաջադիր, յառաջախաւս, յառաջակայ, յառաջամիտ, յառաջատեղ.

բաց(ա)-՝ բացարձակ, բացաւթեաց (բացաւթեայ).

համ(ա)- (հայ. և իրան. նախածանցների բաղարկմամբ)՝ համամայր, համամիտ.

հեռա-՝ հեռաբնակ, հեռագնաց.

հետ(ա)- «հետո» և «հետևից»՝ հետագնաց, հետահան, հետամուտ, հետաքրքիր.

մերձ(ա)-՝ մերձակայ.

միջ(ա)-՝ միջախառն, միջամուխ, միջամուտ (լինիմ), և միջնա-՝ միջնաբերդ, միջնատուն («ներքնատունս, և միջնատունս, և վերնատունս...», Ծն., զ, 16), միջնորմ.

նախ(ա)-՝ (ոչ բայական) նախաբոյս, նախադուռն, նախածանութ, նախակարգ, նախամեծար, նախաստեղծ.

յետ(ա)-՝ յետագայ, այլև յետեւախաղաց, յետնածեր, յետսամիտ.

ներքնա-՝ ներքնագունդ, ներքնատուն և ներքսա-՝ ներքսակողմն.

վեր(ա)-՝ վերակացու, վերարկու և վերնա-՝ վերնակողմն, վերնատուն.

ստոր(ա)-՝ ստորոտ.

տար(ա)-՝ տարագիր, տարաժամ.

փոխ(ա)-՝ փոխադարձ։

գ) ԲԱՐԴՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԴՐՈՒՄ

Վաղնջահայերենի բարդությունների քննության կապակցությամբ խոսվեց -ա- հոդակապի ծագման և տարածման մասին։ Նշվեց, որ հնագույն հայերենի վաղ փուլում՝ մինչև վերջավորությունների թուլացումը և անկումը, շարունակվել է վաղնջահայերենում եղած վիճակը: Մենք առայժմ հնարավորություն չունենք բուն հնդեվրոպական հիմքերով բարդությունների դեպքում որոշել դրանց հնության աստիճանը, եթե չկան կազմության հնդեվրոպական զուգահեռներ: Մասնավորապես այն բարդությունները, որոնց առաջին բաղադրիչները նախկին ընավոր (թեմատիկ) հիմքերից են գալիս, բայց -ո-ի փոխարեն ունեն -ա- հոդակապ, կարող են ինչպես նախկին բարդությունների համաբանական ձևափոխությունները լինել (հմմտ. ընդոծին—ընդածին, Զորոփոր—Զորափոր զուգահեռ ձևերը), այնպես էլ հանդես եկած լինել հնագույն շրջանի այն փուլում, երբ տեղի է ունեցել -ա- հոդակապի տարածումը: Սրանց ցուցակը բերվեց վաղնջահայերենի բարդությունների քննության կապակցությամբ (հմմտ. լուսաբեր, հողագործ, ձիասէր, նորաբեր և այլն): Ածանցման քննության կապակցությամբ նշվեց, որ -ա- հոդակապը տարածվում է նաև շատ վերջածանցների վրա, որոնք բաղաձայնով սկսվելու դեպքում հանդես են գալիս սովորաբար -ա- հոդակապի հարադրությամբ՝ -ա-ւոր, ա-բար, -ա-ճար և այլն: -ա- հոդակապի դիրքն ավելի է ուժեղանում իրանական մեծաքանակ փոխառությունների և, համապատասխանաբար, -ա- պարունակող իրանական մի շարք ածանցների տարածման հետ կապված՝ -ական, -աստան և այլն, ընդ որում առանձին դեպքերում, ինչպես կտեսնենք իրանական փոխառությունների քննության ժամանակ, տեղի է ունենում հայկական և իրանական ծագման ածանցների բաղարկություն (կոնտամինացիա). հմմտ. dātavar > դատաւոր: Դեռ ավելին. որոշ դեպքերում թերևս -ա-ն տարածվել է նաև իրանական փոխառությունների վրա: Եթե հնդեվրոպական ծագման բաղադրիչներով բարդությունների դեպքում մենք միշտ չէ, որ կարող ենք որոշել դրանց կազմման ժամանակը, ապա բաղադրիչներից մեկի՝ հնագույն շրջանին պատկանելու և V դ. առաջին կեսին հանդիպելու դեպքում կարելի է անվրեպ կերպով խոսել բարդման ժամանակի մասին, եթե, իհարկե, կարողանանք բացառել գրական շրջանում կատարված կազմությունները (մանավանդ հունաձև պատճենումները): Այս կարգի բառերի մի մասը բաղադրյալ ձևերի մեջ կամ չի հանդիպում, կամ հանդիպում է խիստ հազվադեպ, մյուս մասը այնքան է մերվել հայերենին, որ տալիս է զգալի թվով, երբեմն էլ մեծաթիվ բարդություններ ու ածանցումներ. կան դեպքեր, երբ այս կարգի բառերը հանդես են գալիս գրեթե նախածանցների արժեքով՝ ապա-, զուգա- (զոյգ), փոխա- (փոխ) և այլն: Հնագույն հայերենի շրջանում կատարված փոխառությունները բարդությունների մեջ հանդես են գալիս ինչպես սկզբնադիրքում (ներառյալ նաև -աբեր, -ածու, -ակալ, -արար, -արկու բաղադրիչներով բարդությունները, որոնց երկրորդ բաղադրիչները դարձել են փաստորեն ածանցներ, ավելի ճիշտ ածանցակերպներ), այնպես էլ վերջնադիրքում: Ընդամենը հարկավոր է նշել, որ նախ՝ փոխառյալ բաղադրիչներով բարդությունների մյուս բաղադրիչները կարող են լինել ինչպես բնիկ հնդեվրոպական, այնպես էլ միևնույն կամ մի այլ աղբյուրից փոխառյալ, երկրորդ՝ սրանց մեջ հանդես են գալիս նաև բայական բարդ հիմքեր (հմմտ. ակնարկեմ, բռնադատեմ, սպանդագործեմ և այլն), որոնք նախորդ շրջանին հատուկ չեն, երրորդ՝ ամենից շատ բարդության մեջ են մտնում կարճ բառերը: Այսպես կոչված, դասական հայերենի երկերում հանդիպող այս կարգի հիմնական բարդությունները փոխառյալ առաջին (1) և երկրորդ (2) բաղադրիչներով հետևյալներն են.

---

[1] Սրանց մեջ հունաբան հեղինակների գործածած բազմաթիվ նախածանցներ ընդհանրապես չեն հանդիպում՝ բաղ(ա)–, գեր (ա)–, ներ (ա)–, մակ (ա)–, փաղ(ա)– և այլն։ Ի միջի այլոց նշենք, որ Վ. Առաքելյանը իր «Դասական և հետդասական գրաբարը» հոդվածում վիճարկելով դասական շրջանի առանձնացման դրույթը և բերելով մի շարք ճիշտ փաստեր, նկատի չի առնում նախ՝ դասական և հետդասական շրջաններում հանդիպող միատեսակ կազմությունների քանակական հսկայական տարբերությունը, երկրորդ՝ հունաբան հեղինակների մուծած կամ լայն գործածություն հաղորդած ածանցների՝ գրական լեզվի մշակման որոշակի ուղղություն ներկայացնելը և, այսպիսով, դասական լեզվի զարգացման որոշակի փուլ նշանավորելը, երրորդ՝ իր բերած մի շարք կազմությունների ոչ հայկական բնույթը. այսպես, ապա- նախածանցի գոյությունը դասական հայերենում ցույց տալու նպատակով նա բերում է ապագովեմ, ապախուրեմ, ապաշնորհ, ապահարկ, ապերասան(ութիւն) բառերը, որոնց հիմքերն իրանական են (այդ թվում նաև հարկ «տուրք» բառինը, որ Հ. Աճառյանը [ՀԱԲ, 3, 53] սխալմամբ միացնում է հարկանեմ բայի արմատի հետ), և որոնք հետևաբար կարող են պատրաստի ձևով փոխառված լինել։ Հավանաբար այսպիսին է նաև ապալեպ բառը։

1. ախտաբեր, այպն(ա)կատակ, անապատակեաց, անդամալոյծ, անդրիագործ, անուշահամ, անուշահոտ, աշակերտասէր, առատաձեռն, աստատամիտ, ասպարաբեկ, ասպարակիր, արագագիր, արագագնաց (երագագնաց), արագաթեւ, արագոտն, արագընթաց, արձակավայրք, աւարառու, աւտարաձայն, աւտարամիտ, աւտարասէր, աւրէնուսոյց, բազմակալ (<բազմակակալ), բանտամուտ, բանտարգել, բարձրընտիր, բարձերէց, բարձակից, բժաբեր, գահագլուխ, գահերէց, գաւառապետ, գնդաձեւ, դայեկորդի, դաշտահողմն, դաշտաձեւ, դիցասէր, դիւահար(եալ) զատագլուխ, զէնընկէց, զինակիր, թագազարդ, թագակալ, թագակապ, թագաւորագիր, թմբկահար, ժամադիր, ժամակալ, ժանգաբեր, ժանգակեր, ժանտագործ, ժանտահոտ, խահարար, խաւարազգած, խաւարակեաց, խաւարասէր, խնձորաբեր, խորտակարար, խրատ(ա)տու, ծխալից, կամագնաց, կամածին, կամակատար, կամարածու «գոտի կապող» (վերջածանցավոր կազմության արժեք ստացած), կամարակապ, կամարաձեւ, կայսերագիր, կայսերակերպ, կառավար, կառապետ, կառամուտ, կշռարար, կպրաշաղախ, համարագրութիւն, հանապազաւր(եայ) (հմմտ. զաւրհանապազ), հանդարտասիրտ, հանդիսատես, հրամանաբեր, հրամանատու, հրամանատու, հրէակողմն, ճակատամարտ, ճակատատեղ(ի), ճաշագործ, ճարտարաբան, ճարտարագործ, ճարտարախաւս, մակաղատեղ, մահաբեր, մահածին, մահարձան, մահիկեղջիւր, մաճակալ, մարգագետին, մարգարտազարդ, մարմարակուռ, մարմարապատ, մեհենատեղի, մետաքսաւէշ, մշտաբուղխ, մշտագնաց, մշտակատար, մշտնջենակայ, մոգակրաւնկ, յաշտածին, յախտենադիր, յուզախնդիր, նշանագիր, նշանագործ, նշանակիր, նուագածու, նուիրաբեր, շաբաթամուտ, շաբաթակրաւն, շահաբեր, շատակեաց, շինակեաց, շինարար, շղթայագործ, շնորհազարդ, շնորհալից, շնորհակալ, շուշանագործ, ուխտադիր, ուխտակալ, ուշակալ(ու), ուշարար (յուշարար), պահակափոխ, պանուճազարդ, պանդոկապետ, պատառակալ, պատառաքի(ր), պատասխանատուութիւն, պատգամագնաց, պատգամախաւս, պատուակալ, պատկերագործ, պատկերակուռ, պատկերասէր, պատուհասակոծ, պատրաստաբան, պարզամիտ, պղնձագործ, պղնձահատ, պղնձաձոյլ, պոռնկորդի, ռոճկակեր, սահմանադրութիւն, սայլատուն, սեւագործ, սեւադեղ, սկախառն «դեխառ», սկայագործ, սկայազն, սկայազաւր, սպանդագործեմ, սպիտակարար, սպիտակաձի, վահանակիր, վահանափակ, վանատու(ր), վանդակագործ, վանդակակապ, վաստակաբեկ, վաստակասէր, վատանուն, վատասիրտ, վարդաբեր, վարձահատոյց, վարսակալ, վիմահատ, վիճակակալ, վիճակատու(ութիւն), վիշապաքաղ, վշտաբեր, վշտածին, վշտակեաց, վշտատես, վրանգագործ, տարազագործ(ութիւն), տղայաբարոյ, տղայակոտոր, ցեցակեր, փառասէր, քաղաքագիւղ, քաղաքամէջ և այլն.

2. յաղթանդամ, մեծարգի, մեծարգոյ, հայրանարգու, ակնարկեմ, բանարկութիւն, յուղարկեմ, ներարձակ, ձիարձակ, հեռաբնակ, միաւրինակ, միամեան, բարձրագահ, երկնագոյն, բռնադատել, բարեդէմ, երկգիմի, երկդրախախառն, չորեքդրամեան, մեծազաւր, հեծելազաւր, յորժամ, գիշերախառն, ծրկամար, բարեխրատ, ինքնակամ, բարեկամ, դիւակամ, չարակամ, լայնարակշիռ, միակշիռ, ակնկոյր, սնակուշտ, երեքհազարեան, հինգհազարեան, հաւասավեցհազարեան, դիւանամար, խոտանամբար, զաւրհանապազ (հմմտ. հանապազաւր), կիսաման, ջրամարգք, լորամարգ(ի), մտայոյզ, խռովայոյզ, մաղձայոյզ, խաչանշան, միանշան, մատնանշան, բարենշան, քաղցրանուագ, ճո-

գեշահ, մեծաշահ, մարդաշատ, նորաշէն, մարտաշէն, յոգնաշնորհ, ամենայուշ, գիշերապահ, շաբաթապահ, ետեղապահ, կողմնապահ, կենդանապահ, դռնապահ, կռապարիշտ, մառախլապատ, միջապատ, մարմնապատ, եաւթնապատիկ, մեծապատիւ, հաւասարապատիւ, միապատիւ, մարդապատկեր, յայտապատկեր, մարմնապարար, որովայնապարար, երկրապարար, կրկնապարիսպ, միասահման, կամնասայլ, արծաթասպիտակ, ակնավայել, հաստավաճառ, ծիրանեվաճառ, գինեվաճառ, մսավաճառանոց, արգելավանք, իշաւան, աւթեւան, մեծավաստակ, սնավաստակ, մտավարժ, ինքնավկայ, այլատարազ, մեծափառ, արագափոխ, լումայափոխ, կերպարանափոխ, մայրաքաղաք, գետնաքարշ և այլն։

Այս բարդությունները որոշ մասով, անշուշտ, հատուկ են գրական լեզվին և, հավանաբար, կազմվել են հենց դասական շրջանի հեղինակների կամ թարգմանիչների կողմից։ Նկատի ունենալով բարդությունների գործածականությունը, սովորականությունը և ժողովրդական լեզվին հատուկ լինելը՝ կարելի է սրանցից առանձնացնել մի շարք բարդություններ, որոնք հավանաբար գալիս են հնագույն շրջանից։ Այդպիսիք կարող են լինել, օրինակ, 1. անդամալոյծ, անուշահամ, անուշահոտ, աշխատասէր, առատաձեռն, ապարակիր, արագընթաց, աւարառու, բանարգել, բարձերէց, գահերէց, գաւառապետ, գնդաձեւ, դայեկորդի, դաշտակողմն, զաւրագլուխ, զաւրանիստ, զինակիր, թագակալ, թագաւորագիր, թմբկահար, ժամադիր, ժամակալ, ժանգակեր, ժանտահոտ, խրատ(ա)տու, ծխալից, կամակատար, կամարակապ, կամարաձեւ, կայսերագիր, կառավար, հանապազաւր(եայ), հանդիսատես, ճակատամարտ, ճարտարաբան, ճարտարագործ, մակաղատեղ, մահաբեր, մահարձան, մանեակալ, մարմարապատ, մեհենատեղի, նշանագիր, նուագածու, չահաբեր, շինարար, շնորհակալ, պահակափոխ, պանդոկապետ, պատկերագործ, պարզամիտ, պղնձաձոյլ, պոռնկորդի, վահանակիր, վանատու(ր), վատանուն, վատասիրտ, վարսակալ, վիշապաքաղ, տղայաբարոյ, ցեցակեր, փառասէր, քաղաքամէջ, 2. յաղթանդամ, մեծարգոյ, ակնարկեմ, յուղարկեմ, հերարձակ, միաւրինակ, երկնագոյն, բռնադատել, բարեդէմ, երկդիմի, երկաթապատ, հեծելազաւր, մեծազաւր, գիշերախառն, ծխախառն, բարեկամ, ինքնակամ, չարակամ, փայտակերտ, քարակերտ, ակնկոյր, խոտահամբար, կիսամահ, բարեշան, խաչանշան, հոգեշահ, մարդաշատ, նորաշէն, գիշերապահ, դռնապահ, ետեղապահ, մառախլապատ, միջապատ, եաւթնապատիկ, կրկնապարիսպ, կամնասայլ, գինեվաճառ, իշաւան, աւթեւան, պահակափոխ, տեղափոխ, գետնաքարշ և այլն։

Հնագույն հայերենի շրջանում սկսվում և հին հայերենի շրջանում տարածում են գտնում բառակազմության և հատկապես բայակազմության մի շարք նոր երևույթներ։ Մենք առիթ ունեցանք նշելու, որ հանդես են գալիս բարդ հիմքերով բայեր, բայց դրանց քանակը մեծ չէ։ Այս երևույթը զգալի չափով պայմանավորված է բառակազմական մի այլ երևույթի՝ վերլուծական բնույթի, այսպես կոչված, հարադրական կազմությունների, մասնավորապես, բայերի տարածմամբ։ Սրանց հիմնական բաղադրիչները կոչենք հարադրյալներ, հավելվող բաղադրիչները՝ հարադիրներ և բաղադրությունների ամբողջովին առնված՝ հարադրություններ։ Կարելի է տարբերել հատկապես բայական հարադրությունների երկու տեսակ՝ անվանա-բայական և մասնիկա-բայական։ Անվանա-բայական հարադրությունները կազմվում են անվանական բաղադրիչից և բայից, ընդ որում հիմնական իմաստն արտահայտում է անվանական մասը, իսկ բայը կատարում է յուրատեսակ բայական վերջավորության դեր՝ պատասխանի տալ—պատասխանել։ Այս կարգի հարադրությունների տարածումը կապված է առաջին հերթին այնպիսի բառերի հանդես գալու հետ, որոնք ինքնին չեն կարողանում դառնալ բայական հիմքեր (մասամբ՝ այդպիսիք են դառնում աստիճանաբար). դրանք փոխառյալ անուններն են կամ բայական հիմքերի համար անսովոր կազմությունները՝ որոշ մասը նույնիսկ անհոլով։ Մասնիկա-բայական հարադրությունները կազմվում են նախադրությունների և մակբայների հետ համընկնող բաղադրիչից (հարադրից) և որևէ բայից, որի իմաստը լրացվում է այդ բաղադրիչով՝ գերազանցապես տարածա-ժամանակային դիրքի առումով։ Մասնիկ-հարադիրները փաստորեն փոխարինում են համապատասխան բայական նախածանցներին (նախաբայերին), որոնք հնագույն շրջանում և հին հայերենի դասական փուլում լայն տարածում չունեն. դրանք լայնորեն կիրառվում են միայն հունաբան հայերենի տարածման հետ կապված։ Այս կարգի մասնիկա-բայական հարադրությունները հիշեցնում են ժամանակակից անգլերենի ետմասնիկավոր և ժամանակակից հայերենի՝ հատկապես բարբառներից եկող նախամասնիկավոր կառույցները՝ get up—վեր կենալ։

Հարադրությունները երբեմն փոխաբերական, դարձվածաբանական կապակցություններ են՝ բաղադրիչների միասնական ըմբռնմամբ՝ եղջիւր ածեմ «խրոխտանալ»։ Հատկապես անվանա-բայական հարադիրներից կարող են կազմվել համապատասխան տիպի անվանական բարդություններ, որոնց երկրորդ բաղադրիչները հետագայում ընկալվում են որպես ածանցակերպներ՝ ակն ածեմ—ակնածու, պատասխանի տամ—պատասխանատու և այլն։

Անվանա-բայական հարադրությունների անվանական բաղադրիչները կարող են հարադրության կազմի մեջ մտնել անփոփոխ (այց առնեմ «այցելել») կամ հոլովված ու նախդրով օժտված ձևով (զմտաւ ածեմ «մտածել»)։ Վերջիններս ավելի հաճախադեպ են։ Որպես բայական բաղադրիչ՝ համապատասխան սպասարկու իմաստով՝ հանդես են գալիս շատ գործածական բայեր՝ ըստ իմաստի հաճախ կազմելով ներգործականի և կրավորականի, ենթակայականի և առարկայականի զանազան հակադրություններ։ Մի կողմ թողնելով հոլովված և նախդրով օժտված անուններով կազմված մեծաքանակ հարադրությունները՝ բերենք դասական մատենագրությունից առնված «անփոփոխ անուն +բայ» կաղապարով կազմված հարադրությունների օրինակներ, որոնցից շատերը, անշուշտ, հասնում են հնագույն շրջանը՝ ածեմ ակն, եղջիւր, ձայն. առնեմ այց, ժամն, խոստովան, պաշտաւն, պատասխանի, սպաս. արկանեմ խաղ, ձայն, ձեռն. բառնամ ձայն, կական. կացուցանեմ ազատ, թափուր, մերկ. հարկանեմ բուռն, զան, հուր. տամ պատասխանի, տեղի. տանիմ խնամ, փոյթ. ունիմ ակն, խնամ և այլն։

Որպես մասնիկա-բայական նախադրությունների մասնիկային հարադիրներ հանդես են գալիս ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ մակբայա-նախդրական բառեր։ Բերենք հատկապես դասական փուլի մատենագիրներից առնըված գործածության օրինակներ՝ արտաքս ածեմ, ելանեմ, ընկենում, հանեմ. ընդդէմ կամ, լինիմ. ընդ մէջ անկանիմ, անցանեմ. ի բաց առնեմ, առնում, գնամ, ելանեմ, կամ, ստնում, տամ. ի դուրս բերեմ, ելանեմ, կորզեմ. ի խոնարհ արձակեմ, ընկենում, իջանեմ, կախեմ. ի մէջ ածեմ, անցանեմ, բերեմ, մտանեմ. ի ներքս դիմեմ, ընթանամ, կրեմ, մտանեմ, տանիմ. ի վայր արկանեմ, ընկենում, հարկանեմ. ի վեր առնում, արձակեմ, բարձրանամ. բերեմ, հայեմ, հանեմ. յառաջ ածեմ, գնամ, ընթանամ. յետս անկանիմ, դառնամ, դարձուցանեմ, հարկանեմ և այլն։

դ) ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Հնագույն հայերենում շարունակվում է վաղնջահայերենից եկող շատ կրկնավորների գործածությունը, սակայն դրանց կաղապարների մի մասը դառնում է քիչ գործուն, մյուսը՝ ոչ գործուն և անարդյունավետ։ Սրանց փոխարեն սկսում են հանդես գալ կրկնության նոր կաղապարներ և նոր տիպեր։

Նոր հանդես եկած կրկնությունների առաջին տիպը կապված է -ա- հոդակապի գործածության հետ. հոդակապավոր կրկնությունների մեջ կարելի է տարբերել մի քանի տեսակ. 1) անփոփոխ կրկնորդներով՝ գոյնագոյն, մեծամեծ. 2) երկրորդ կրկնորդի սկզբնային պարտադիր մ բաղաձայն՝ առաջին կրկնորդի մեջ բաղաձայնի բացակայության կամ մի այլ բաղաձայնի առկայության պայմաններում՝ աղխամաղխ, արհամարհեմ, խառնամառն. 3) երկրորդ (հիմնական) կրկնորդի առաջին բաղաձայնի կրկնություն առաջին կրկնորդում՝ հաջորդ ա-ով և նրան հաջորդող շրթնայինով (մ, փ)՝ ծամածուռ, կամակոր «ծամածուռ», սափասուտ. 4) առաջին բաղադրիչի ձայնավորի փոփոխություն՝ տեղակայում երկրորդ բաղադրիչի մեջ ու-ով՝ ժանտաժուտ։

Կրկնությունների երկրորդ տեսակը նախդրավորներն են, որոնց մեջ թեև նախդիրները իրենց հիմնական արժեքը պահպանում են, բայց ողջ կրկնությունն ստանում է բառային մեկ միավորի արժեք՝ մասամբ հանդես գալով իբրև մեկ ամբողջություն (խառնիխուռն), մասամբ իր ներսում պահպանելով բաղադրիչների որոշ ինքնուրույնություն (մերթ ընդ մերթ, մի ըստ միոջէ)։

Վերջապես, կրկնությունների երրորդ տեսակը հարադրական կրկնությունն է, որի դեպքում կրկնորդները դեռ լիովին չեն կորցրել իրենց բառային ինքնուրույնությունը՝ պառակ-պառակ «խումբ-խումբ», պատառ-պատառ և այլն։

Այս տիպը լայնորեն ծավալվում է հետագայում՝ ունենալով նաև խոսքամասային փոխանցման դեր՝ գոյականներից կերտելով մակբայներ։

5. ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

ա) ՍՏԱՆԴԱՐՏ ԼԵԶՈՒ ԵՎ ԲԱՐԲԱՌՆԵՐ. «ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ»

Վաղնջահայերենից ժառանգելով բարբառային որոշ տարբերություններ՝ հնագույն հայերենը հայերի բազմացման և տարածման հետ կապված պիտի հանդես բերեր բարբառային նոր տարբերություններ, խորացներ եղած տարբերությունները։ Մենք վստահելի տեղեկություններ չունենք այն մասին, թե այս շրջանում կա՞ր արդյոք որևէ ընդհանուր վերբարբառային լեզու, յուրատեսակ կոյնե, որ գործածվում էր տարբեր բարբառների ներկայացուցիչների ի մի հավաքվելու ժամանակ՝ բանակում, առևտրական հարաբերություններում, արքունիքում։ Մի շարք հանգամանքներ մեզ թելադրում են այդպիսի ստանդարտ լեզվի գոյության փաստը, ցույց տալիս, որ բարբառները հակադրվում էին ոչ միայն իրար, այլև մի ընդհանուր վերբարբառային լեզվի։ Եթե հնագույն հայերենի զարգացման վաղ փուլում դժվար է խոսել այդ մասին, ապա ուշ՝ նախագրաբարյան շրջանում, միասնացման միտումների հետ կապված, ստանդարտ լեզվի կազմավորման փաստը գրեթե կասկած չի հարուցում։

Ամենից առաջ՝ այդպիսի ընդհանուր լեզվի գոյությունը պետք է անհրաժեշտորեն կապված լիներ հայ ժողովրդի կազմավորման պրոցեսի հետ։ Եթե հնագույն հայերենի զարգացման վաղ փուլի համար կարելի է խոսել միայն ցեղային մի շարք միությունների մասին, ապա ուշ փուլում, հատկապես հայ ժողովրդի կազմավորման ավարտի հետ կապված, պիտի ուժեղանային համապատասխան միասնացնող միտումները և անհրաժեշտ դարձնեին մեկ ընդհանուր լեզվի գոյությունը։

Ուրարտական պետության անկումը միաժամանակ նշանավորում էր հայ ինքնուրույն պետականության ստեղծումը և հայ ժողովրդի կազմավորման ավարտը։ Ընդհանուր պետությունը կարիք պիտի զգար ընդհանուր միասնական լեզվի, որ պիտի գործեր պետական-պաշտոնական, ռազմական և այլ ոլորտներում։ Սրան պիտի միանար կրոնական ոլորտում մեկ միասնական ծիսական լեզվի կիրառության պահանջը։ Վերջապես, տեղից տեղ շրջող գուսաններն ու երգիչները, երկրի մի կողմից մյուսը տարածվող պատմությունները, առասպելները, հեքիաթները, վիպական ստեղծագործությունները չէին կարող չհասցնել արտահայտության որոշ եղանակների ստանդարտացման և միասնացման։ Որ հնագույն շրջանի նախագրաբարյան փուլում այդպիսի ստանդարտ լեզու իրոք գոյություն է ունեցել, երևում է հայ գրական լեզվի սկզբնական վիճակից. գրաբարը հենց սկզբից հանդես է բերում զգալի միասնություն, մշակվածություն, արտահայտության եղանակների միատեսակություն, որոնք կարող էին լինել զարգացման բավական երկարատև ուղի անցած լինելու հետևանք։

Ինչպես հայտնի է, ժողովրդական բանահյուսության, վիպական ստեղծագործությունների և մանավանդ աղոթքների, անեծքների լեզուն ստանդարտ է լինում, պարունակում է արտահայտության ստանդարտ և արխաիկ եղանակներ։ Այս առումով ժողովրդական ստեղծագործությունների, կրոնական հին բանաձևերի լեզվի ուսումնասիրությունը հատուկ կարևորություն է ստանում։ Իհարկե, ժողովրդական ու գուսանական ստեղծագործություններում, վիպական հին հատվածներում ու ավանդություններում ստանդարտ լեզվի առանձնահատկությունների հետ միասին չեն կարող հանդես չգալ տեղական, բարբառային գծեր, բայց ամբողջությամբ առնված դրանք կարող են գաղափար տալ ստանդարտ լեզվի հիմնական առանձնահատկությունների մասին։ Հարկավոր է նկատի ունենալ, որ հնագույն շրջանի բարբառային տարբերություններն էլ չէին կարող շատ մեծ լինել և հասնել այն աստիճանի, ինչպիսին մենք տեսնում ենք գրավոր ժամանակաշրջանի հատկապես միջին շրջանում՝ կապված պետականության կորստի, մասնատվածության ուժեղացման, մասնայական գաղթերի հետ։ Նշենք, որ հնագույն շրջանի լեզվի ուսումնասիրության զգալի նպաստ է մատուցում նաև հատուկ անունների ուսումնասիրությունը, որոնց կառուցվածքի մեջ բացահայտվում են հին գծեր։

Հ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմության» 2-րդ մասում փորձել է հատուկ քննության ենթարկել Խորենացու ավանդած վիպասանական տաղերը և Ագաթանգեղոսի ու ավելի ուշ շրջանի հեղինակ Մագիստրոսի (XI դ.) ավանդած մեկական հատվածների լեզվական առանձնահատկությունները։

Մենք ևս բերենք այդ հատվածները՝ գաղափար տալու համար հնագույն հայերենի ուշ՝ նախագրաբարյան փուլի որոշ առանձնահատկությունների մասին, որքանով, իհարկե, դրանք արտացոլում են այդ ժամանակի լեզուն՝ ենթարկված, բնականաբար, լեզվական հետագա փոփոխությունների ազդեցությանը։ Նշենք, որ այդ հատվածներից հնագույնը վերաբերում է Վահագն աստծուն, որ, ինչպես ցույց է տալիս անունը, իրանական ծագում ունի և, հետևաբար, բուն առումով հանդես է եկել հնագույն շրջանում։ Բացառված չէ, իհարկե, որ երգը ավելի հին ակունքներ ունենա, քան Վահագն անունը, և տեղի ունեցած լինի հին հավատքի նոր վերագրում [հմմտ. **Иванов**, 1983]։ Մյուս հատվածներն արտացոլում են Երվանդունիներից մեկի, Արտաշիսյան հարստության նշանավոր թագավորների և Արշակունյան թագավորական հարստության հիմնադիր Տրդատ I-ի կյանքի դեպքերը։

1, 1. Երկնէր երկին, երկնէր երկիր,
2. Երկնէր և ծովն ծիրանի,
3. Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ,
4. Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
5. Ընդ եղեգան փող բոց ելանէր,
6. Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ,
7. Նա հուր հեր ունէր,
8. Բոց ունէր մաւրուս,
9. Եւ աչկունքն էին արեգակունք։
Խոր. Ա. լա

2, 10. Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն
11. Ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով,
12. Եկեալ նստեալ զՇրէշ բլրով,
13. զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով,
14. Կռել կոփել զդուռնն Երուանդայ արքայի։
Խոր. Բ. կե.

3. 15. Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
16. Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց,
17. Ե՛կ հաւանեաց բանից աչագեղոյ դստերս Ալանաց՝
18. Տալ զպատանիդ.
19. Զի վասն միոյ քինու ոչ է աւրէն դիւցազանց՝
20. Զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն,
21. Կամ ծառայեցուցանել(ով) և ի ստրկաց կարգի պահել,
22. Եւ թշնամութիւն յաւիտենական
23. Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել։
Խոր. Բ. ծ.

4. 24. Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս
25. Հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց
26. Ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Ալանաց։
Խոր. Բ. ծ.

5. 27. Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ,
28. Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,

29. Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն,
30. Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
31. Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց,
32. Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
33. Արագ հասուցանելով ի բանակն իւր։
Խոր. Բ. ծ

6. 34. Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,
35. Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն։
Խոր. Բ. ծ.

7. 36. Տենչայ Սաթինիկ տիկին տենչանս՝
37. Զարտախոյր խաւարտ և զտից խաւարծի
38. Ի բարձիցն Արգաւանայ։
Խոր. Ա. լ.

8. 39. Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ՝
40. Եւ դև փոխանակ եդին։
Խոր. Բ. կա.

9. 41. Ճաշ գործեալ Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի,
42. Խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիշապաց։
Խոր. Ա. լ.

10, 43. Արտաւազդայ ոչ գտեալ, քաջի որդւոյն Արտաշիսի,
44. Տեղի ապարանից ի հիմնանալն Արտաշատու,
45. Նա անց գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ։
Խոր. Ա. լ.

11. 46. Մինչ դու գնացեր
47. Եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
48. Ես աւերակացս որպէ՞ս թագաւորեմ։
Խոր. Բ. կա.

12. 49. Դու յորս հեծցիս յազատն ի վեր ի Մասիս,
50. Զքեզ կալցին քաջք,
51. Տարցին յազատն ի վեր ի Մասիս,
52. Անդ կացցես և զլոյս մի տեսցես.
Խոր. Բ. կա.

13. 53. Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի
54. Եւ զառաւօտն նաւասարդի,

55. Զվազելն եղանց և զվազելն եղջերուաց.
56. Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք։
Մագ. լԳ.

14. 57. Իբրև զսէգն Տրդատ, որ սիգալովն

58. Աւերեաց զԹումբս գետոց և ցամաքեցոյց
59. Իսկ ի սիգալն իւրում՝ գլորձանս ծովուց։
Ագաթ. 123

Այս հատվածների քննությունը Հ. Աճառյանը փաստորեն սահմանափակում է բառապաշարի ծագումնային շերտերի վերլուծությամբ, որի մասին մենք կխոսենք հնագույն հայերենի բառապաշարին նվիրված բաժնում։ Նա հատվածների հնչյունական և քերականական առանձնահատկությունների հատուկ քննություն չի կատարում, այլ անում է որոշ անցողակի դիտողություններ (մաւրուս բառի տարբերակների, **մէջք** հայցականի, **հասուցանելով** դերբայական ձևի մասին)։ Մինչդեռ այս երևույթների քննությունը ևս բացահայտում է հետաքրքրական պատկեր։

Վիպասանական հատվածների լեզվի հնչյունական և քերականական առանձնահատկությունները, բնականաբար, հիմնականում համընկնում են դասական հայերենի առանձնահատկությունների հետ։ Նշելի են միայն մի քանի էական գծեր. 1) դեռևս հնագույն հայերենի շրջանում նկատվել են երկբարբառների պարզման երևույթներ. ճիշտ է, է-ն թերևս հայ բարբառների մեծ մասում արտասանվել է երկբարբառային (ei) արտասանությամբ, բայց **ընկեաց>ընկէց** փոփոխությունը վկայում է է-ի հնարավոր մենաբարբառային արտասանության մասին. 2) **զմէջք** ձևը ցույց է տալիս խոսակցական լեզվում անեզական անունների քայքայման պրոցեսի մասին. **մէջք** բառն ընկալվել է (ինչպես աշխարհաբարում) որպես ոչ հոգնակի ձև և չի դարձել **զմէջս**. 3) **Հատուած գնացեալ Վարդգէս Մանուկն...** նախադասության մեջ **հատուած** ձևը գործածված է բուն դերբայական արժեքով, որ վկայում է խոսակցական լեզվում **-ած**-ով ձևերի դերբայացման վաղ պրոցեսի մասին. 4) ժողովրդախոսակցական լեզվին է հատուկ նաև անորոշի գործիականի մակդերբայական գործածությունը՝ համապատասխան **-եալ**-ով ձևերի փոխարեն՝ **հասուցանելով, սիգալովն**, թերևս նաև **ծառայեցուցանելով**. 5) սովորական է անցյալ դերբայի դիմավոր արժեքով գործածությունը՝ առանց օժանդակ բայի՝ **Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն.., եկեալ նստեալ...** սա հար և նման է սլավոնական լեզուներում հ.-ե. *-lo-ով ձևերի զարգացմանը։

Բառակազմական առումով վիպասանական հայերենը աչքի է ընկնում ժողովրդախոսակցական և բանաստեղծական լեզվին հատուկ **-իկ** փոքրացուցիչ-փաղաքշական ածանցի հաճախադիպությամբ, ընդ որում այն դրվում է ոչ միայն գոյականների, այլև ածականների վրա՝ **կարմրիկ, եղեգնիկ, պատանեկիկ, աչիկ**. այն հանգամանքը, որ **աչիկ**-ը **աղջիկ, մանուկ** տիպի բառերի նման ստանում է **-ունք** հոգնակի ձևը, խոսում է **-իկ**-ով, **-ուկ**-ով ձևերի մեջ սկզբնական **-ն**-ի անկման և, հետևաբար, հնդեվրոպական *-i-kon, *-u-kon տիպի ձևերից նրանց ծագած լինելու մասին. այլ կերպ ասած՝ այդ ածանցի տարբերակները, ինչպես նշել ենք, բնիկ հնդեվրոպական ծագում ունեն և հետո են միայն խառնվել իրանական համապատասխան ածանցների հետ, այսինքն՝ ուղղակիորեն իրանականից չեն գալիս։ Հանդիպում են զգալի թվով բարդություններ՝ համեմատաբար կարճ բաղադրիչներով և որոշակի առանձնահատկություններով՝ 1) «ածական+գոյական» տիպի ոչ այնքան հաճախադեպ կազմություններ՝ **քաջազգի, ոսկէաւղ, շիկափող**. 2) «հատկացուցիչ+հատկացյալ» արժեքով բաղադրիչներ ունեցող բարդություններ՝

պետ, գեղջերէց, կայսերագիր, մեղապարտ, պարտատէր և այլն. պետական-վարչական և իրավական ու ռազմական տերմինաբանության մեջ մեծ թիվ են կազմում, ինչպես կտեսնենք, փոխառությունները (հատկապես իրանական փոխառությունները), որոնցից հայկական ածանցներով կազմվել են մեծ թվով նոր բառեր, այդ թվում՝ անուններից բայեր՝ **ազատեմ, աքսորեմ, գաղթեմ, դեսպանութիւն, թագաւորութիւն, իշխանութիւն, հպատակեմ, հպատակութիւն, պետութիւն, վկայեմ, վկայութիւն** և այլն. գ) հայերի ներգրավումը կրոնական նոր ոլորտներում, հայկական կրոնի վրա իրանական ազդեցությունը, ապա քրիստոնեության մուտքի հետ կապված ասորական և հունական տերմինների մուտքը հիմք են տալիս հնդեվրոպական արմատների նեղիմաստ գործածության, նոր կազմությունների, փոխառյալ և բնիկ հիմքերի զուգորդման. այսպես, հավանաբար այս շրջանում են ստացել նեղ՝ կրոնական իմաստ **աղանդ** «դես ու դեն ընկնելը, մոլորվելը, մոլորություն. աղանդ, հերձված», **աղաւթք** «աղաչանք, աղերսանք. աղոթք» (հմմտ. **աղաչեմ**), **երէց** «ավագ. քահանա», **կրաւն** «կարգ, օրենք, սովորություն. կրոն» (հմմտ. (**կրեմ**), **սուրբ** «մաքուր. սուրբ» և այլն. քրիստոնեության մուտքով **դիք** բառն ստանում է միայն հեթանոսական աստծու իմաստ՝ ի հակադրություն **աստուած** բառի. ավելի խիստ հակադրությամբ հեթանոսական աստծու համար ստեղծվում է **չաստուած** բառը. այս բառերից կազմվում են նոր բառեր՝ **աղանդագործ, աղանդաւոր, այլաղանդ, աղանդութիւն, աղաւթ(ա)կե(ա)ր, երիցապետ, կրաւնաւոր, հոգեկրաւն, միակրաւն, նորակրաւն** և այլն. կրոնական տերմիններ են կազմվում հնդեվրոպական նաև այլ արմատներից՝ այս շրջանին հատուկ ածանցներով կամ բարդության միջոցներով ու եղանակներով՝ **բարեպաշտ, բազմամեղ, դիցապաշտ, լուսնապաշտ, հայրապետ, մեղանչական, մեղապարտ, մեղացածին, մեղսաբեր, մեղսածին, մեհենատեղի** և այլն. իրանական, ապա նաև ասորական ու հունական կրոնական բառերից ու տերմիններից կազմվում են նոր բառեր ու տերմիններ՝ **աստուածապաշտ, աւրհնութիւն, եկեղեցական, զոհանոց, հեթանոսական, սատանայութիւն, քարոզութիւն, քրիստոնէութիւն** և այլն. դեռ ավելին. **դրախտ** բառը իր սկզբնական «ծառ, ծառաստան, պարտեզ» իմաստից անցում է կատարում «եդեմ» իմաստին հենց հայերենում. ե) մշակութային նոր արժեքները իրենց հետ բերում են մշակութային նոր բառեր ու տերմիններ հագուստեղենի, բնակարանի, կահույքի և ամանեղենի, արհեստների և արվեստների վերաբերյալ՝ մասամբ հնդեվրոպական արմատներից ու հիմքերից, մասամբ դրանց և փոխառյալ հիմքերի ու այլ տարրերի զուգակցմամբ. իմաստային նեղացման և մասնագիտացման արդյունք են **դարբին, իջ** (հմմտ. **իջանեմ**), **բանաւք** (հմմտ. **բանամ**), **կորի** «արտը ոռոգելու նեղ ջրանցք» բառերի հայտնի իմաստները. հավանաբար այս շրջանին են պատկանում արհեստագործության վերաբերող **ատաղձագործ, արծաթագործ, արծաթազաւծ, արծաթահանք, արծաթեղէն, հացարար (-ոց, -ութիւն), նաւորդ, նաւապետ** և այլն, մշակութային արժեք ունեցող **բանալի, կրակետղ, մեղուանոց** և այլն բառերը. բազմաթիվ հայերեն նոր բառեր են կազմվում մշակութային արժեք ունեցող փոխառություններից՝ **բժշկութիւն, բուժեմ, զմբեթարդ, թարգմանեմ (-ութիւն), խորանարդ, կաւշկագործութիւն, մարգարտազարդ, մագաղաթեայ, պաստառակալ, պատուաստեմ, տախտակագործ, տախտակամած** և այլն։

2) Հնագույն հայերենի շրջանին են պատկանում այն ածանցավոր կազ-

մությունները, որոնց ածանցները հանդես են եկել հենց այս շրջանում, և որոնց ամբողջովին բնիկ կամ ամբողջովին փոխառյալ լինելը բացառվում է. սրանք առաջին հերթին հիբրիդային բառերն են՝ ա) բնիկ արմատով (հիմքով) և այս շրջանում փոխառված ածանցով, բ) այս շրջանում փոխառված հիմքով և բնիկ ածանցով, գ) մի աղբյուրից փոխառված արմատով (հիմքով) և մի այլ աղբյուրից փոխառված ածանցով: Բնիկ արմատական և այս շրջանում գործածություն ստացած ածանցներով կազմությունները հիմնականում բերվեցին ածանցման քննության հետ կապված, և այստեղ դրանք կրկնելու հարկ չկա. նշենք միայն մի քանի տիպական օրինակ՝ այգեստան, աշագար, առասպելական, բամբասանք, բարձրագոյն, գործարան, դռնապան, երգեցիկ, կենարար, հրեղէն, մեծապէս, չորեքկին, տէրունի, փութկոտ և այլն: Փոխառյալ հիմքով և բնիկ ածանցներով մի շարք բառեր հիշատակվեցին հնագույն շրջանին պատկանող բառերի առանձնացման առաջին՝ իմաստային, չափանիշի քննության հետ կապված. այս կարգի բառերի թիվը ընդհանրապես մեծ է, և բոլորի թվարկումը մեզ հեռու կտաներ. բերենք մի քանի տիպական օրինակ. խուռա-ուրարտական հիմքով՝ խարխարուն, խնձորի և այլն. իրանական հիմքով՝ ազատութիւն, ազդեցութիւն, առատութիւն, բազմաւոր, բազմութիւն, բաժանումն, բիւրաւոր, դեսպանութիւն, երամովին, երաշխաւոր, զինուոր (զինու-որ ձևից՝ թերևս իրան. zēnāvar ձևի բաղադրմամբ), խաւարին, կարմրութիւն, մահկանացու, յիշողութիւն, նշանացի, շինութիւն, պաշտպանումն, տանջանք և այլն. սեմական հիմքով՝ կնքաւոր, կնքիչ, կշռաւոր, մաշկեղէն, սատանայաւոր և այլն. զգալի թիվ են կազմում նաև ան-ով ու այլ նախամասնիկներով և փոխառյալ հիմքերով կազմությունները՝ անգոյն, անվիշտ: Տարբեր աղբյուրներից փոխառված բաղադրիչներ ունեցող ածանցավոր բառերի հարցը քիչ թե շատ միանշանակ լուծում է ստանում իրանական ծագման ածանցների դեպքում. ուրարտական և այլ կարգի ածանցների գոյությունը հայերենում հնարավոր է, բայց վերջնական լուծումը առայժմ դժվարանում է նյութի պակասության պատճառով. առանձնապես տարածվում են իրանական ծագման -ական, -(ա)ստան, -ա-պէս վերջածանցներով կազմությունները. հմմտ. սեմական հիմքով և -ական-ով՝ բերդական, գաղթական, սատանայական, քնարական և այլն:

3) Հնագույն հայերենի շրջանին են պատկանում այն բարդությունները, որոնք՝ ա) բնիկ հնդեվրոպական բաղադրիչներ ունեն, բայց իրենց կազմության տիպերով վաղնջահայերենին հատուկ չեն եղել (մասնավորապես -ա- հոդակապով այն բարդությունները, որոնց -ա-ն ակնհայտորեն նոր բնույթ ունի և չի բացատրվում վաղնջահայերենով) և բ) հիբրիդային բնույթ ունեն, այսինքն՝ կազմված են տարասեռ՝ բնիկ և փոխառյալ կամ տարբեր աղբյուրներից փոխառված բաղադրիչներով. այս երկու կարգի բարդությունների մասին էլ խոսվել է հնագույն հայերենի բառակազմությանը նվիրված մասում: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ -ա- հոդակապով ու բնիկ բաղադրիչներով բարդությունների այն մասը, որ անվերապահորեն կարելի է վերագրել հնագույն հայերենի շրջանին, մեծ թիվ չի կազմում. ինչպես նշվել է, վաղնջահայերենում բնավոր (*-o-) հիմքով առաջին բաղադրիչ ունեցող բարդությունները կարող էին համաբանորեն ստանալ *-o-ի փոխարեն -ա-, և այս դեպքում հարկավոր է առաջնորդվել իմաստով ու լրացուցիչ այլ հատկանիշներով: Համեմատաբար ավելի վստահորեն կարելի է խոսել -ա- հոդակապով այն բարդությունների՝ հնագույն հայերենի շրջանին պատկանելու մասին,

որոնք ունեն ձայնորդահանգ հիմք, թեև այստեղ էլ կարելի է ենթադրել հին կազմություն՝ -ա-ի համաբանական տարածմամբ, ինչպես հայտնի է, երբեմն առկա են այսպիսի զուգահեռ ձևեր՝ -ա-ով և առանց -ա-ի. ակնատես (բայց ակնհար), անձնատուր (բայց անձնիրութիւն), աս(ե)ղնագործ, եղընգնահար, թիկնամէջք, մատնացոյց (բայց մատնցոյց), աստ(ե)ղագէտ, աստեղատուն և այլն. կազմության տիպով վաղնջահայերենին չպատկանող բառերից հիշենք ամենացոյց, ամենակերակրիչ, միականի, ակնկառոյց և այլն:

Բերենք մի քանի օրինակ դասական հայերենի երկերում հանդիպող հիբրիդային բարդություններից, որոնք կարող են գալ ավելի հնից. ա) բնիկ առաջին և փոխառյալ երկրորդ բաղադրիչներով՝ ակնահաճոյ, ամենազաւր, ամենաբաւ, մեծագանձ, մեծափառ, միակշիռ, միջնաշխարհ, նորաշէն և այլն. բ) բնիկ երկրորդ և փոխառյալ առաջին բաղադրիչներով՝ անդամալոյծ, աշխարհագիր, աշխարհաւէր, առատաբեր, աւտարաձայն, բերդակալ, բերդամէջ, գահագլուխ, զէնընկեց, ժամագիր (-գրութիւն), մահաբեր, նշանագիր, շինամէջ, սատանայածին, քնարահար և այլն:

2. ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Հնչյունական և քերականական տարբերակների հետ միասին հնագույն հայերենը չէր կարող չունենալ բառային նշանակալից քանակությամբ տարբերակներ: Դրանք պիտի արտահայտվեին ինչպես միևնույն կամ մերձավոր իմաստների համար տարբեր բառերի առկայության, այնպես էլ միևնույն բառերի իմաստային տարբեր զարգացումների մեջ: Այս տարբերակների հայտնաբերման հիմնական աղբյուրը մնում են V դ. և հատկապես նրա վաղ փուլի (դասական հայերենի) հուշարձանները, որոնց գումարվում են ուրիշ լեզուների՝ հայերենից կատարած փոխառությունները և արդի բարբառների լեզվական տվյալների հիման վրա կատարված պատմական վերականգնումները: Բնականաբար, դասական հայերենի հուշարձաններից հարկավոր է առանձնացնել բառային այն տարբերակները և հատկապես համանիշային շարքերը, որոնք կարող էին գործածության մեջ լինել նաև հնագույն շրջանում: Սրանք հիմնականում լայն գործածություն ունեցող բառերն են, այդ թվում՝ հնագույն շրջանում հայերենի կատարած փոխառությունները: Եթե համանիշների որոշ եզրեր ուշ են ավանդված, բայց հնդեվրոպական ծագում ունեն, դրանք, բնականաբար, բերվում են: Բառային տարբերակները և հատկապես համանիշային շարքերը տարբեր բնույթ կարող էին ունենալ. այս առումով պետք է առանձնացնել բարբառային, գործառական և բառային տարբերակներ: Գիտության զարգացման արդի փուլում այդ երեք շերտերի հստակ տարբերակման մեր հնարավորությունները դեռևս սահմանափակ են, բայց որոշ եզրակացություններ այսուհանդերձ կարելի է կատարել: Ինչպես մի այլ առիթով մեր կողմից նշվել է [Джаукян, 1982, 8—10], տարածական բաշխման առումով բարբառային տարբերակները պիտի տային համեմատաբար հստակ պատկեր, որ պիտի տարածել նաև այն պատմական ու գործառական տարբերակների վրա, որոնք բնութագրել են լեզվի գործածության տարբեր տարածքները:

Բառային տարբերակները ընդհանրապես կարող են լինել բառահնչյունական, բառակազմական և բառաիմաստային: Բառահնչյունական տարբեմությունները, որոնց ածանցները հանդես են եկել հենց այս շրջանում, և որոնց ամբողջովին բնիկ կամ ամբողջովին փոխառյալ լինելը բացառվում է. սրանք առաջին հերթին հիբրիդային բառերն են՝ ա) բնիկ արմատով (հիմքով) և այս շրջանում փոխառված ածանցով, բ) այս շրջանում փոխառված հիմքով և բնիկ ածանցով, գ) մի աղբյուրից փոխառված արմատով (հիմքով) և մի այլ աղբյուրից փոխառված ածանցով։ Բնիկ արմատական և այս շրջանում գործածություն ստացած ածանցներով կազմությունները հիմնականում բերվեցին ածանցման քննության հետ կապված, և այստեղ դրանք կրկնելու հարկ չկա. նշենք միայն մի քանի տիպական օրինակ՝ **այգեստան, աշազար, առասպելական, բամբասանք, բարձրագոյն, գործարան, դռնապան, երգեցիկ, կենարար, հրեղէն, մեծապէս, չորեքկին, տէրունի, փուրկոտ** և այլն։ Փոխառյալ հիմքով և բնիկ ածանցներով մի շարք բառեր հիշատակվեցին հնագույն շրջանին պատկանող բառերի առանձնացման առաջին՝ իմաստային, չափանիշի քննության հետ կապված. այս կարգի բառերի թիվը ընդհանրապես մեծ է, և բոլորի թվարկումը մեզ հեռու կտաներ. բերենք մի քանի տիպական օրինակ. խուռա-ուրարտական հիմքով՝ **խարխարուն, խնձորի** և այլն. իրանական հիմքով՝ **ազատութիւն, ազդեցութիւն, առատութիւն, բազմաւոր, բազմութիւն, բաժանումն, բիւրաւոր, դեսպանութիւն, երամովին, երաշխաւոր, զինուոր** (**զինու-ւոր** ձևից՝ թերևս իրան. zēnāvar ձևի բաղարկմամբ), **խաւարին, կարմրութիւն, մանկանացու, յիշողութիւն, նշանացի, շինութիւն, պաշտպանումն, տանջանք** և այլն. սեմական հիմքով՝ **կնքաւոր, կնքիչ, կշռաւոր, մաշկեղէն, սատանայաւոր** և այլն. զգալի թիվ են կազմում նաև **ան**-ով ու այլ նախամասնիկներով և փոխառյալ հիմքերով կազմությունները՝ **անգոյն, անվիշտ**։ Տարբեր աղբյուրներից փոխառված բաղադրիչներ ունեցող ածանցավոր բառերի հարցը քիչ թե շատ միանշանակ լուծում է ստանում իրանական ծագման ածանցների դեպքում. ուրարտական և այլ կարգի ածանցների գոյությունը հայերենում հնարավոր է, բայց վերջնական լուծումը առայժմ դժվարանում է նյութի պակասության պատճառով. առանձնապես տարածվում են իրանական ծագման **-ական, -(ա)ստան, -ա-պէս** վերջածանցներով կազմությունները. հմմտ. սեմական հիմքով և **-ական**-ով՝ **բրդական, գաղթական, սատանայական, քնարական** և այլն։

3) Հնագույն հայերենի շրջանին են պատկանում այն բարդությունները որոնք՝ ա) բնիկ հնդեվրոպական բաղադրիչներ ունեն, բայց իրենց կազմության տիպերով վաղնջահայերենին հատուկ չեն եղել (մանավանդ **-ա-** հոդակապով այն բարդությունները, որոնց **-ա-**ն ակնհայտորեն նոր բնույթ ունի և չի բացատրվում վաղնջահայերենով) և բ) հիբրիդային բնույթ ունեն, այսինքն՝ կազմված են տարասեռ՝ բնիկ և փոխառյալ կամ տարբեր աղբյուրներից փոխառված բաղադրիչներով. այս երկու կարգի բարդությունների մասին էլ խոսվել է հնագույն հայերենի բառակազմությանը նվիրված մասում։ Այստեղ հարկ ենք համարում նշել, որ **-ա-** հոդակապով ու բնիկ բաղադրիչներով բարդությունների այն մասը, որ անվերապահորեն կարելի է վերագրել հնագույն հայերենի շրջանին, մեծ թիվ չի կազմում. ինչպես նշվել է, վաղնջահայերենում բնավոր (*-o-) հիմքով առաջին բաղադրիչ ունեցող բարդությունները կարող էին համաբանորեն ստանալ *-o-ի փոխարեն **-ա-**, և այս դեպքում հարկավոր է առաջնորդվել իմաստով ու լրացուցիչ այլ հատկանիշներով։ Համեմատաբար ավելի վստահորեն կարելի է խոսել **-ա-** հոդակապով այն բարդությունների՝ հնագույն հայերենի շրջանին պատկանելու մասին,

որոնք ունեն ձայնորդահանգ հիմք, թեև այստեղ էլ կարելի է ենթադրել հին կազմություն՝ **-ա-**ի համաբանական տարածմամբ, ինչպես հայտնի է, երբեմն առկա են այսպիսի զուգահեռ ձևեր՝ **-ա-**ով և առանց **-ա-**ի. **ականատես** (բայց **ակնար**), **անձնատուր** (բայց **անձնսիրութիւն**), **աս(ե)ղնագործ, եղընգնաքար, բիկնամէջք, մատնացոյց** (բայց **մատնցոյց**), **աստ(ե)ղագէտ, աստեղատուն** և այլն. կազմության տիպով վաղնջահայերենին չպատկանող բառերից հիշենք **ամենացոյց, ամենակերակրիչ, միականի, ակնկառոյց** և այլն։

Բերենք մի քանի օրինակ դասական հայերենի երկերում հանդիպող հիբրիդային բարդություններից, որոնք կարող են գալ ավելի հնից. ա) բնիկ առաջին և փոխառյալ երկրորդ բաղադրիչներով՝ **ակնահաճոյ, ամենազաւր, ամենաբաւ, մեծագանձ, մեծափառ, միակշիռ, միջնաշխարհ, նորաշէն** և այլն. բ) բնիկ երկրորդ և փոխառյալ առաջին բաղադրիչներով՝ **անդամալոյծ, աշխարհագիր, աշխարհասէր, առատաբեր, ատարաձայն, բերդակալ, բերդամէջ, գահագլուխ, զէնքընկեց, ժամագիր** (**-գրութիւն**), **մահաբեր, նշանագիր, շինամէջ, սատանայածին, քնարահար** և այլն։

2. ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Հնչյունական և քերականական տարբերակների հետ միասին հնագույն հայերենը չէր կարող չունենալ բառային նշանակալից քանակությամբ տարբերակներ։ Դրանք պիտի արտահայտվեին ինչպես միևնույն կամ մերձավոր իմաստների համար տարբեր բառերի առկայության, այնպես էլ միևնույն բառերի իմաստային տարբեր զարգացումների մեջ։ Այս տարբերակների հայտնաբերման հիմնական աղբյուրը մնում են V դ. և հատկապես նրա վաղ փուլի (դասական հայերենի) հուշարձանները, որոնց գումարվում են ուրիշ լեզուների՝ հայերենից կատարած փոխառությունները և արդի բարբառների լեզվական տվյալների հիման վրա կատարված պատմական վերականգնումները։ Բնականաբար, դասական հայերենի հուշարձաններից հարկավոր է առանձնացնել բառային այն տարբերակները և հատկապես համանիշային շարքերը, որոնք կարող էին գործածության մեջ լինել նաև հնագույն շրջանում։ Սրանք հիմնականում լայն գործածություն ունեցող բառերն են, այդ թվում՝ հնագույն շրջանում հայերենի կատարած փոխառությունները։ Եթե համանիշների որոշ եզրեր ուշ են ավանդված, բայց հնդեվրոպական ծագում ունեն, դրանք, բնականաբար, բերվում են։ Բառային տարբերակները և հատկապես համանիշային շարքերը տարբեր բնույթ կարող էին ունենալ. այս առումով պետք է առանձնացնել բարբառային, գործառական և բառային տարբերակներ։ Գիտության զարգացման արդի փուլում այդ երեք շերտերի հստակ տարբերակման մեր հնարավորությունները դեռևս սահմանափակ են, բայց որոշ եզրակացություններ այսուհանդերձ կարելի է կատարել։ Ինչպես մի այլ առիթով մեր կողմից նշվել է [Джаукян, 1982. 8—10], տարածական բաշխման առումով բարբառային տարբերակները պիտի տային համեմատաբար հստակ պատկեր, որ պիտի տարածել նաև այն պատմական ու գործառական տարբերակների վրա, որոնք բնութագրել են լեզվի գործածության տարբեր տարածքները։

Բառային տարբերակները ընդհանրապես կարող են լինել բառահնչյունական, բառակազմական և բառաիմաստային։ Բառահնչյունական տարբեբակներ անելով այստեղ պետք է հասկանալ բառային հատկապես այն տարբերակները, որոնց հնչյունական տարբերությունները մասնակի կամ առանձնակի բնույթ ունեն։ Բուն հնչյունական ընդհանուր և օրինաչափ տարբերությունների մասին մենք խոսել ենք հնչյունական տարբերակների քննության կապակցությամբ։ Այստեղ նկատի առնվող՝ առանձին բառերի և բառախմբերի համար բնորոշ տարբերությունները արդյունք են տարածքային տարբեր ընկալումների և կրկնության ձևերի, միևնույն հարևան լեզվի տարբեր բարբառներից և զարգացման տարբեր փուլերից կատարված փոխառությունների, հնչյունական ոչ գործուն պրոցեսների առաջ բերած տարբերությունների և այլն՝ **առասան—երասան, արհեստ—արուեստ, բաղբանջ—բարբանջ—բարբաջ, երանիկ—երջանիկ, երկայն—երկար, խեղճ—խիղճ** և այլն։

Ավելի էական և ավելի տարածված են արմատակազմական և բառակազմական տարբերակները, որոնց մասին մենք խոսել ենք բառակազմական տարբերակների քննության կապակցությամբ։

Բառաիմաստային տարբերակների երկու հնարավոր դեպքերից,— միևնույն իմաստների արտահայտություն տարբեր բառերով և միևնույն բառերի իմաստային տարբեր գործածություններ,— այստեղ ուշադրությունը կկենտրոնացնենք առաջինի վրա։ Որ միևնույն իմաստները բարբառային տարբեր տարածքներում տարբեր բառերով արտահայտելու դեպքեր հնուց եղել են, և որ դրանք ժամանակակիցների կողմից նկատվել են. երևում է Եզնիկ Կողբացու հայտնի վկայությունից («Եղծ աղանդոց»). «Յորժամ մեք ասեմք թէ ոխք շնչէ, ստորնեայք ասեն՝ այս շնչէ»։ Եթե նկատի առնենք, որ Եզնիկը Այրարատի Կողբ գյուղից էր, ապա պարզ կլինի, որ այստեղ արտահայտված են հյուսիսային և հարավային շրջանների բարբառային տարբերակները։ Հաշվի առնելով մի կողմից՝ V դ. դասական հեղինակների բառագործածությունը (մանավանդ եզրերից մեկի կամ մի քանիսի բնիկ լինելու դեպքում) և մյուս կողմից՝ արդի բարբառային տարբերությունները [հմմտ. Ջահուկյան, 1972, 147—156], մի շարք դեպքերում դժվար չէ որոշել բառային համանիշների բարբառա-տարածական բնույթը. ակնհայտորեն այդպիսի տարածքային տարբերակումներ պիտի ունենային **աղտ—կեղտ, խածանեմ—կծանեմ, պաղ** «սառը»—**սառն** զույգերը։ Մի շարք դեպքերում այդպիսի տարբերություններ պիտի եղած լինեին, բայց արդի բարբառներում համանիշային զույգերը կամ դրանց առանձին եզրերը չեն պահպանվել՝ **այտնում—ուռնում, արկանեմ—արձակեմ—ձգեմ, մորք—որովայն—փոր**, կամ պահպանվել են իմաստային փոփոխություններով՝ **թռչուն—հաւ** «թռչուն, հավք. ընտանի հավ», **մաքուր—սուրբ** «մաքուր. սուրբ» և այլն։ Բարբառային տարբերություններ պետք է ենթադրել առարկայական կոնկրետ իմաստներ ունեցող շատ համանիշների (հատկապես նույնանիշների) համար՝ առարկան տարբեր բառերով անվանելու դեպքում՝ **բէկն>բեկն—մէջք—կուռն, ուլն—պարանոց—վիզ, ուս—նուս** և այլն։

Տարածական տարբերությունների կողքին համանիշային շարքերը պիտի արտահայտեին նաև գործառական, ոճական կամ իմաստային սովորական տարբերություններ (հատկանշման տարբեր աստիճաններ ու եղանակներ, ոճական տարբերակներ և այլն). Եթե հնագույն շրջանի վերջին փուլում հայ ժողովրդի և հայ պետականության կազմավորման կապակցությամբ արդեն առկա էր որոշ ստանդարտ լեզու (կոյնե)՝ ի հակադրություն բարբառների,

ապա զգալի թիվ պիտի կազմեին բարձր և հասարակ, պաշտոնական և առօրյա ոճերի տարբերությունները։ Իրենց հատուկ բառերը պիտի ունենային եկեղեցական-կրոնական և բանաստեղծական ոլորտները։ Ապագային թողնելով այս բոլոր տարբերությունների հանգամանալից քննությունը՝ այստեղ բերենք դասական հայերենի հուշարձաններում առկա այն համանիշային շարքերը (նկատի են առնվում միայն հին իմաստները), որոնք կարող էին հատուկ լինել նաև հնագույն հայերենին, մանավանդ նրա զարգացման ուշ փուլին. դրանք տրվում են ըստ շարքերի առաջին անդամների այբբենական հաջորդականության, ընդ որում շարքերի ներսում համանիշները դասավորվում են հետևյալ սկզբունքներով.

1. Եթե շարքերի մեջ կան հնդեվրոպական ծագման բառեր, ապա նախ բերվում են դրանք, ընդ որում առավելություն է տրվում հավաստի հնդեվրոպական ծագման ձևերին՝ անհավաստի, և արմատական ու առաջնային ձևերին՝ ոչ արմատական ու երկրորդային ձևերի նկատմամբ։ Կիսահնդեվրոպական բարդ կազմությունները, հատկապես հնդեվրոպական երկրորդ բաղադրիչով, տրված են ոչ հնդեվրոպականների հետ միասին՝ որպես ոչ նախնական կազմություններ։

2. Դասական փուլի, հատկապես V դարի առաջին կեսի երկերում չհանդիպող բառերը, եթե հնարավոր է համարվում հնագույն շրջանում դրանց առկայությունը, երբեմն էլ համեմատության համար, բերվում են շարքերի վերջում՝ փակագծերի մեջ առնված **ուշ** նշումով. հնդեվրոպական ծագման բառերի համար, բնականաբար, այդպիսի նշում չի տրվում. այդ նշումը չի տրվում նաև բառական այն ձևերի համար, որոնց արմատները դասական շրջանում հանդիպում են։

3. Եթե շարքերի մեջ հնդեվրոպական ծագման բառեր չկան, ապա առաջին տեղում բերվում են, ըստ հնարավորին, արմատական և հասարակ գործածության բառերը, մանավանդ եթե դրանք առկա են նաև ժամանակակից գրական լեզվում։ Նախածանցներով սովորաբար շարքեր չեն սկսվում՝ բացի այն դեպքերից, երբ բնիկ հնդեվրոպական արմատները նախածանցներով են հանդիպում։

4. Շարքերը, ըստ հնարավորին, կազմվում են միևնույն խոսքի մասերին պատկանող ձևերից, ընդ որում՝ ա) այլ խոսքի մասերի պատկանող համանիշները, ըստ անհրաժեշտության, տրվում են փակագծերում (փակագծերում են տրվում նաև իմաստով փոքր-ինչ հեռու կանգնած բառերը), բ) միայն ոչ արմատական ձևով հանդիպող, բայց տվյալ խոսքի մասին արմատով պատկանող ձևերից հետո դրվում է գծիկ, գ) խոսքամասային տարբերակներից գերադասություն է տրվում, ըստ հնարավորին, արմատական և դասական շրջանի երկերում հանդիպող ձևերին, դ) բացի վերևում հիշված դեպքերից, շարքերի մեջ պահպանվում է այբբենական կարգը։

5. Հիմք է ընդունվում այբբենական հին կարգը, մանավանդ և-ը գրվում է **եւ**, **ու**-ն տրվում է **ո**-ի տակ, օ-ն բերվում է **աւ** ձևով՝ **ա** տառի տակ։

6. Սպասարկու բառերը սովորաբար չեն բերվում. դրանց մասին, ըստ անհրաժեշտության, խոսվել է քերականական կառուցվածքի տարբերակների հետ կապված։

7. Բարբառային բառերը չեն բերվում. դրանցից հնդեվրոպական ծագում ունեցողները քննվել են փաղնջահայերենի բարբառային տարբերակ-

ներին նվիրված հատվածում. մնացածները կամ ուշ փոխառություններ են, կամ անհայտ ծագման բառեր, որոնց հանդես գալու ժամանակը պարզ չէ։

Ագանիմ—ածանիմ—զգենում—զգածիմ—(ս)փածանիմ
ագանիմ—աւթագայիմ
ագազուն—ոստին—չոր—ցամաք—դուս-- սարատ
ագդր—բարձ-ք—երան-ք—զիստ
ալի-ք—կոհակ-ք (ուշ)
ախոռ—ասպաստան
ախորժական—հաճոյ—հեշտ—կամակ (որպէս ած.՝ ուշ)
ածեմ—բերեմ
ակն—գոհար
աղագաւ (յաղագս)—սակս—վասն
աղախին—նաժիշտ
աղաղակեմ—գոչեմ—կարդամ—ձայնեմ—կանչեմ—կոչեմ
աղամ—լեսում (հմմտ. մալեմ)
աղանձ—մուրկ
աղանձեմ—խորովեմ (—տապակեմ)
աղաչեմ—հայցեմ—ողոքեմ—աղերսեմ—եղձանամ—խնդրեմ—պաղատեմ—փարեմ
աղաւաղեմ—այլայլեմ
աղաւթեմ—մաղթեմ
աղաւնի-ք—երկան—մուլ (մլաղաց)
աղբ(ախուղբ)—խուղբ
աղբ—թրիք—կոյ (կու)—քակոր—ապաւառ—կղկղանք
աղէտ—աղն—եղեռն—չարիք—փորձանք
աղիք—աղիորդ—կոյս
աղմուկ—խուճապ—խռով—շփոթ
աղտ—կեղտ—փին (փնթի)
աղքատ—աղկաղկ—անքատ—փանաք—փինատ—ցականել
աճառ—խաղճ
աճեմ—առաւելում—մեծանամ—մոզանամ—ամեթանամ—զարգանամ—յարանամ—յաւթանամ—ուռճանամ
աճին—զազաղ—մոխիր
աճուկ—ցայլ-ք
ամ—տարի
ամամ—լնում
աման—անաւթ
ամբար (համբար(ակ))—մառան—շտեմարան—սենյակ—մթերանոց (ուշ)
(ամբ)ողջ—ամէն (-այն)—բոլոր—բաւանդակ (բովանդակ)—համակ—համաւրէն
ամայի—անապատ (ած.)
ամորձիք—կոկովանք (ուշ)
ամուլ (կնոջ մասին)—սուք (տղամարդու մասին)—ստերդ (ստերջ՝ կենդանու մասին)
ամպ—թուխպ (առանձին՝ ուշ)
ամպրոպ—մրրիկ—փոթորիկ

ամփոփ—կարճ(առաւտ)—հակիրճ—համառաւտ
այլանդակ—տձեւ—անհեթեթ—անճոռնի
այծեամն—յամոյր
այս—դեւ
այսայր—սերկ
այտ—թուշ—թուռ—թուրծ
այտնում—ուռնում—ըմփորտիմ
այտումն—բողջ—ելունդն—խաղաւարտ—խոյլ—պալար
այր—մարդ
այր (քարայր)—անձաւ (պաղանձաւ, քարանձաւ)
այրեմ—խարեմ—խարշեմ—կիզում—վառեմ—տոչորեմ
այց (հայց)—զնին (զննութիւն)—խծբիծ—խոյզ—կտիտ—կրկիտ—հետազաւտութիւն—յոյզ—քնին (քննութիւն)
անարգար—անիրաւ—անաւրէն—ապիրատ
անաւթի—քաղցեալ—անսուաղ—նքթեալ—նքաղեալ—սովեալ (հմմտ. գորսովիմ)
անգոսնեմ (անկոսնեմ, անկուսնեմ)—արհամարհեմ—խշտրեմ—խոտեմ—նշկահեմ (—հապանաս)
անդ—արտ—հարաւանք
անդ (անդաստակ, դրանդ(ի))—սեամ (շեմ՝ ուշ) (հմմտ. բարաւոր)
անդեայ—տուար (դուար)—արջառ—պախրէ—պաճար
անդունդ—խորխորատ—վիհ
անդունդ—դժոխք—տարտարոս
անդրէն—դարձեալ—կրկին—վերստին
անէծք—աւրեր—նզովք
անկողին—խշտի-ք (խշտեակ)—մահիճ
անհաստատ—գեղխ—խախուտ—խարխարուն—խարխուլ—յողդողդ
անձն—ինքն
անձնիր (անցնիր)—իրաքանչիր
անձուկ—նեղ
անմիտ—ախմախ—անոպայ—ապուշ—բախած—մորոս—յիմար—շղու(աբարոյ)—պանդոյր—տխմար (ուշ)
անողորմ—անագորոյն—անգութ—ապառում—բիրտ—դաժան—դժխեմ—դժնեայ—ժանտ—վայրագ (վիրագ)—վայրենի—անպարմ (ուշ)
անուանեմ—կոչեմ—յորջորջեմ
անուր—աւղակ
անուրջ—տեսիլ—երազ
անջատեմ—անջրպետեմ—աձտեմ (ացտեմ)—բաժանեմ—զատեմ—որոշեմ—տրոհեմ—քակեմ—քեցեմ
անսուրբ—անմաքուր—ապախտ—պիղծ—փիծ (առանձին՝ ուշ)
անփորձ—անվարժ—խամ
աշխատիմ—դալակիմ—ճգնիմ
աշտարակ—բուրգն
ապաստան—ապաւէն—պատսպարան
ապարահ—դաշտան—դեղ—տեռատես
ապարան—պալատն (պաղատն)
ապուռ—աւար—կապուտ—կողոպուտ

ապստամբ—անհնազանդ—ընդվզեալ—ըմբոստ—խեռ—հեստ—ստահակ—վտարանջեալ
առագաստ «վարագույր»—վարագոյր—վիժակ
առակ «օրինակ»—աւրինակ
առանձին—բաժան—ի բաց—զատ—յատուկ—ուրոյն (—հեռի. հմմտ. անջատեմ)
առանցք—սեռն—ալի (ուշ)
առաջին—անդրանիկ—նախկին
առաստաղ—ձեղուն—առիք
առաւօտ—այգ—վաղորդայն
առաքեալ—հրեշտակ—պատգամաւոր—սուրհանդակ
առիգած—ղենչակ
առհաւատչեայ—գրաւ—երաշխիք (ուշ)
առն—խոյ
առողջացուցանեմ—ապաքինեմ—բժշկեմ—բուժեմ
ասեմ—բամ—գոգեմ—խաւսիմ
աստուած (քրիստ.)—դիք (հեթանոս.)
ասր—բուրդ—գեղմն—գզաթ—կիղն—սաեւ
ատեան—դատարան
ատեան—ժողով
ատոք—հասուն—վականակ
արած—սպի
արահետ—կածան (հին՝ «նեղ անցք»)—շաւիղ
արատ—բիծ—խայտ—խարխ—պիսակ—կճայեակ (ուշ) (—լուսն)
արբանեակ—ծառայ—սպասաւոր
արբենամ—սխալակիմ
արբուցիչ—մատռուակ
արգահատեմ—գթամ—խղճամ
արգել—խութ—խափան—խոչընդոտ—կրճիմ(ն) (—յաղդեմ)
արգելան—բանտ—բանտարան—գնդան (ուշ)
արդ—այժմ
արդար—անմեղ—անպարտ
արդէն—յառաջ(ն) (յառաջագոյն)—կանխաւ—նախ—վաղ
արդիւնք—բերք—պտուղ—արդասիք (հմմտ. քաղ)
արդն—գայիսոն—նիզակ
արթուն—զգաւն—զգաստ—լուրջ
արեկ—զաւրաւոր (-եղ)—հզաւր—ուժգին
արի—աշխոյժ—կորովի—քաջ
արծաթասէր—զաւշաքաղ
արծարծանեմ—բորբոքեմ
արկղ—տապան
արմ(ատ)—տակ (—ունչ)
արմանամ (զարմանամ)—զմայլիմ—հիանամ—սխրանամ—սքանչանամ
արուարձան—թաղ
արուեստաւոր—ճարտար
արաւ—խոպան—կորդ

արեւածայրք—այգ—արշալուրջք
արտորամ—փութամ—արագեմ—երագեմ—աճապարեմ—ճեպեմ—շութափեմ—շտապեմ
արու—որձ
աւար—ապուռ—կապուտ—կողոպուտ
աւգնիմ—ձեռնտու լինիմ—աւժանդակեմ—աւճան լինիմ—սատարեմ—նպաստեմ (որպես բայ՝ ուշ)
աւդի—*հովի—ոչխար
աւթոց—ծածկոց—(ծածկոյթ)
աւղ—լամբ—գահակ
աւեալ—մոլի—խելագար—խենթ (ուշ)
աւթեւան—իջեւան (իջավան)—հանգրուան—պանդոկ—վան
աւժիտ—պաշտաստական
աւծեմ—մարգեմ
աւր (աւրագիշեր)—տիւ
աւր—տիւ—ցերեկ
աւր—մաղձ
աւփ—ագուռ
ափսէ—պնակ—սկաւառակ—սկուտղ

բագին—մեհեան
բազում—շատ
բաժակ—գաւաթ—խառնարան—տաշտ
բալ—մառ(ն)—մառախուղ—մէգ—մուղա—թուղր—մրրիկ—մշուշ (ուշ)
բակ—գաւիթ
բաղայք—բարուր—պատրուակ
բամբասող—բանսարկու—շողմոգ—չարախոս—փասքոս—բսու (—լարարանեմ)
բայ(ոց)—բոյն—կաղաղ—սոր—որջ
բանակ—գունդ—զաւրք—լակիշ—լաշկար—սահ
բարաւոր «դրան վերին սեմ»—բարապան
բարեխաւս—ջատագով
բարի—լաւ—առաքինի—քաջ
բարկ—կայծակն—շանթ
բարկ—կծու
բարկանամ—զայրանամ—սրտմտիմ—ցասնում—գժգմ(ն)իմ
բարձրաւանդ(ակ)—դահ—դահաւանդ(ակ)—դար
բաւական—հերիք
բաւթ—գոյժ
բեկոր—կոտոր—հատոր (այս ձեւով՝ ուշ) (—նշխար)
բերան—երախ
բերդ—ամուր (ամրոց)—դղեակ
բերկրիմ—զուարթանամ—զուարճանամ—ուրախանամ—ցնծամ
բերրի—յուռթի—արգաւանդ (ուշ)
բեւեռ—ռոն—գամ (առանձին՝ ուշ)—հեղոյս (առանձին՝ ուշ)
բղէտ—խայտ—պիսակ (հմմտ. արատ)
բիր—ձաղկ—ջին—գաւազան—մահակ—ջալոտ(ի)
բիրտ—խաղտ—կոշտ—կոպիտ

բիւրեղ—վան
բոլորակ—բոլորշի—գնդաձեւ (ուշ)
բոզ—անգտի—պոռնիկ—սամտի
բոլորեմ—լնում—կատարեմ—վախճանեմ—վճարեմ—աւարտեմ (որպես բայ՝ ուշ)
բոկեղ—բլիթ—նկանակ—պան
բողբոջ—ընձիւղ—մոլ—պ(լ)պլուկ—պտուկ—ջուլ—խեղր—ծիլ (ուշ)
բողոք—կեղերջ—տրտունջ—քանքատ(եմ) (գանգատ(իմ)՝ ուշ)
բոյլ—երախան—երամ—խումբ—հոյլ—ճահուկ—ջոլիր—ջոկ—տարմ—տորմ
բոյս—տունկ
բոշխնեմ—ըմբոշխնեմ—վայելեմ
բորոտ—ուրուկ—պիսակ
բուծանեմ—բտեմ—սնուցանեմ
բուռ—կիր (ուշ)
բռնեմ—ըմբռնեմ—կալում—ունիմ
բռնցի—կռփաւ—մուրցացի
բրդեմ—մալեմ—մանրեմ—կոտորեմ—ջարդեմ—փխրեմ—փշրեմ (—բեկանեմ)
բրեմ—պեղեմ—փորեմ
բրուտ—խեցագործ

գալարեմ—ոլորեմ
գագաթն—ծայր—կատար
գագաթն—կառափն—գանգ/կ (ուշ) (—խալամ «անասնի չորացած գանգ»)
գահաւորակ—բաստեռն—գեսպակ—ժանուար—լկտի-ք
գաղեմ—թաքուցանեմ—սաղարկեմ—գեղչեմ—ծածկեմ—պահեմ
գաղթական—նժդեհ—պանդուխտ—վտարանդի (հմմ. եկամուտ)
գաղձն—բաղեղն (ուշ)—պատատուկ (ուշ)
գաղտնի—թաքուն—սալար—գանխուլ—ծածուկ
գայթիմ (գթեմ)—սայթաքիմ
գայլիկոն—գչիր (ուշ)—շաղափ (ուշ)
գայռ—տիղմ—ցեխ
գանեմ—թակեմ—ծեծեմ—տոփեմ
գառն—բուծ—որոջ—ամարու (ուշ)
գարշելի—զազիր—նողկալի
գարշիմ—զզուիմ—խորշիմ—նողկ(տ)ամ—պժգամ
գաւառ—կողմն—մարզ—նահանգ
գաւտի—զունար—կամար
գաւտեմարտ(ութիւն)—ըմբշամարտ
գգուեմ—փայփայեմ
գելում—պրկեմ
գեղեցիկ—չնաշխարհիկ—չքնաղ
գեհեն—դժոխք—տարտարոս
գեղեւ—կոյս
գեղձ—տենչանք—ցանկութիւն—փափագ—իղձ (այս իմաստով տռանձին՝ ուշ)—բաղձ(անք) (ուշ)
գեղջկայ (գեղջուկ՝ ուշ)—շինական
գերծում—վիրամ—ածելեմ (ուշ)—սափրեմ

գերմակ—նաշիհ (—ալիւր)
գերփեմ—եղծ(ան)եմ—փլուզանեմ—ապականեմ—աւերեմ—խաթարեմ—խախտեմ—խարխալեմ (խարխարեմ)—քանդեմ—քակացեմ
գէջ—թաց—տամուկ—խոնաւ
գէտ—թովիչ—հարցուկ—դիւթ—իղձ—կախարդ(սար)—կիւս—հմայ(ող)—վհուկ—քաղդեայ (քաւդեայ)
գէր—յայր—պարարակ—պարարտ
գինդ—գորշապահանգ
գիր—թուղթ—նամակ
գիր-ք—մատեան
գիշեր—ցայգ
գիւղ—ագիճ—աւան—շէն
գիրկ—գոգ—խինձ—խորշ—ծոց
գլեմ—գլորեմ—հոլովեմ—թաւալեմ—շրջեմ
գլխաւոր—իշխան—պետ
գոլ—ջեր—ջերմութիւն—տապ—շոգ (այս իմաստով՝ ուշ)
գոլորշի—շոգի
գողանամ—խորեմ
գոմ—ախոռ—մակաղ—փարախ (—մսուր) (հմմ. հանգրուան)
գոյն—թոյր—երանգ—երփն
գոյք—ան—ինչք—ստացուած—աղխ—կահ—կարասի—սեպհականութիւն
գոչեմ—փորոտամ (-եմ)
գովեստ—դրուատ(իք)
գործ—աշխատութիւն—երկ—վաստակ
գորով—խանդաղատութիւն (խանդաղատանք՝ ուշ)
գրգռեմ—դրդեմ—սադրեմ
գրիչ—դպիր

դաժան—դառն—խիստ
դալար—թարմ—մորճ—կանաչ
դալարի-ք—բանջար—կանաչ
դակու «կացին կամ ուրագ»—կացին
դամբան (դամբարան)—գերեզման—շիրիմ
դաշն—պայման—սակ
դաշոյն—վաղակաւոր—վաղր—խարբ (ուշ)
դարան—պահարան
դաւ—դաւաճանութիւն—դրժութիւն—խաբէութիւն—խարդախութիւն—խարդաւանակ—մանկ—նենգ—կել (կէլ) (ուշ)
դեգերիմ—երերիմ—դանդաչեմ—սասանիմ—տատանիմ—տարուբերիմ
դեղ—խոտ
դեղ—բոյժ—դարման—ճար—սպեղանի
դեռ—տակաւին
դերբուկ—առապար—կորէք
դեւ—խարամանի—սատանայ
դէզ—բարդ—թեզ—դրահան—կարկառ—կոյտ—մթեր—յարան—շեղջ—տուռն (—խոկեմ)

դէմ (ընդդէմ)—հակառակ—յանդիման—ներհակ (ուշ)
դէտ—պահապան
դի(ակն)—դէշ—շաղիղ
դիտեմ—զննեմ—հայիմ—նայիմ
դժկամակ—տհաճ
դիմակ—պատրուակ—քաւղ
դիպիմ—հանդիպիմ—պատահիմ
դող—սարսուռ «դող ցրտից կամ վախից»
դորսովիմ «քաղցից նվաղել»—նքողիմ
դրոյլ—դռնապան—բարապան—դարապան—դարապետ
դրոշմ—կնիք

եզր—յաւ—տուսն (տռուն)—ամբոկ—աւարտ—բաւ—զրաւ—ծայր—կատար—
    սպառ—վախճան—վերջ
ելանեմ—ամբառնամ—բարձրանամ—վերանամ
եկ—գալուստ
եկ—եկամուտ—նորեկ—օտարական (հմմտ. գաղթական)
եղան—հեծանոց
եղանակ—ձեւ—կերպ—տարազ—սարաս (ուշ) (հմմտ. ձեւ)
եղանիմ—լինիմ
եող (տեղի)—վայր
երակ—մայր
երան «մեղմ քամի»—սիք
երասանակ—զանդանուանդ—շրուշակ—սանձ—պախու(ր)ց—վարապան
երաստան—ոռ
երբեմն—մերթ
երբոծ «կրծքամիս»—երի
երգ—տաղ
երգիծանեմ—հեգնանեմ (-ում)—ճեղքեմ (-ում)—պատառեմ
երգումն—խոստումն—ուխտ
երես-ք—դէմ-ք
երեւեցուցանեմ—ցուցանեմ—յայտ առնեմ
երեւոյթ—տեսիլ—ուրուական—ցնորք
երէց—աւագ
երթամ—չուեմ—գնամ—խաղամ
երիթ—սեպ—ուռն
երինջ—ընձուղ
երիվար—նժոյգ (—ձի)
երիւրեմ (յ-երիւրեմ)—յօրինեմ
երկայնեմ—յերկարեմ—ձգեմ—մեկնեմ—յոնեմ—պարզեմ—տարածեմ
երկեան (<*երկի-հաւան)—թեթուք—խէթ—կասկած—կարծիք—շուշտ—
    վարանումն—տարակոյս
երկնչիմ (երկիւղ)—ծլիմ—պախիմ—պակնում—վեհերեմ (—հոյ) (հմմտ.
    զարհուրիմ)
երկրագործ—հողագործ—մշակ
երջանիկ—երանիկ (-ելի)—բախտաւոր

եւ—ու
եփեմ—եռացուցանեմ (—խոհակերեմ)

զամբիղ—կողով—որթ—սակառ «մեծ կողով»—սապատ—կեղթ (ուշ)
զանկապան—սռնապան
զառիվայր—շեպ
զարգարեմ—պաճուճեմ—պճնեմ—փերեւեռեմ
զարհուրիմ—սարսափիմ—սարսեմ—սոսկամ (հմմտ. երկնչիմ)
զարմ—սերունդ—ցեղ—ճետ—տոհմ
զաւրագլուխ—զաւրապետ—զաւրավար—սպարապետ
զաւրեղ—աշխոյժ
զաւր(ութիւն)—կար—կարշն—ույժ
զբաղիմ—պարապիմ—պատաղիմ
զբաւսանամ—զուարճանամ
զգամ—ազդ առնում
զգայեմ (ձգտամ)—ործկամ—ժայթքեմ—փսխեմ (—անդրոյթք՝ ուշ)
զգեստ—ագանելիք—հանդերձ—ձորձ—փածանելիք—քոթանակ
զգոյշ—ուշադիր—ուշակալու
զերծ—ազատ—յապահով
զերծանիմ—ազատիմ—ճողոպրիմ—պրծանիմ—փրթանիմ—փրկիմ
զինեմ—վառեմ
զլանամ—զրկեմ
զղջ(ան)ամ—ապաշաւեմ—ապաշխարեմ—սորջանամ (—փաշաման)
զմ(ք)րիմ—ընդարմանամ—թմ(ք)րիմ

էգ—մատակ

ըմբոստ—անհնազանդ—ապարասան—խեռ—հակր—ստամբակ
ըմպեմ—*արքանեմ (կտր. արբի)—խմեմ («խմել» իմաստով՝ ուշ)
ընդեր-ք—փորոտի-ք—ախոնդ(անք) (ուշ)
ընթանամ—սլանամ—սուրամ—վարգիմ
ընթեռնում—կարդամ «բարձրաձայն կարդալ»
ընծայ—ձաւն—ձիր—դահամն—նուէր—շնորհ—պատարագ—պարգեւ
ընծայ—ձաւն—ղամիկ—զեն(ումն)—զոհ—յաղ—յաշտ—ողջակէզ—
    պատարագ—սպանդ
ընկենում—ձգեմ—արկանեմ—արձակեմ
ընկեր—զուգող
ընկղմեմ—ընկլուզանեմ—թաթախեմ—թաթաւեմ—մխրճեմ (մկրտեմ)—
    սուզանեմ
ընկողմանիմ—գայռամ—պառակիմ
ընկրկեմ—նահանջեմ
ընչաքաղց—ագահ

թագաւոր—արքայ
թագուհի—բամբիշն—դշխոյ
թակարդ—գառագիղ—ծուղակ—հաղբ—որոգայթ—վարմ (—երագազ—ցանց)

թաղանթ—պարուտակ
թաղեմ—խորեմ
թամբ—կորդին—համետ
*թանամ—թրջեմ—*խոնաւացուցանեմ*
թանաք—մելան
թանձր—ստուար (հմմտ. թաւ)
թաշկինակ—գաստառակ—սուդար—վարշամակ
թառամ—թարշամ—թոռոմ—թորշոմ—խամրւր
թարախ—շարաւ—ցամհ
թարթ—թարթափ
թաց—խոնաւ—նայ
թաւ—սեռն—սերտ—խիտ—կուռ—հոծ—սեղմ—պայտ (հմմտ. թանձր)
թաւն «ուժեղ անձրեւ»—տեղ—տարափ (—անձրեւ)
թել—թեղան—շաղամաթ—քուղ—դերձան (ուշ)
թեկն—մէջ-ք—կուռն—քամակ
թեղաւշ—մայրի—սոճի (ուշ)
թեղի—կնձնի
թեր—կողմն—կոյս
թեր «տոկոս»—շարիատ—վաշխ—տոկոս(իք)
թերթ—տերեւ
թերի—նուազ—պակաս—սուղ
թեւ—բազուկ
թեքեմ—կռեմ—կոփեմ
թի(ակ)—թեւճակ
թիւ—համար—հաշիւ
թշնամի—դիմադարձ—հակառակորդ—ոսոխ
թոթով—քաղթնատ—թլուատ (ուշ)
թոյլ—կթոտ—տկար—մեղկ
թորեմ—ծորեմ—հոսեմ
թուլանամ—թալ(կ)անամ—թաւշնիմ—կթիմ—նուաղիմ
թուր—սուր—սուսեր
թռչուն—հաւ
թրթռակ—հռետոր (հռետորայ)—ճարտարասան (>ճարտասան)—ճարտարախաւս

ժամանակ—ամանակ (ուշ)
ժառանգ—պայազատ
ժլատ—կարկամ—կծծի—կցիր—ճղճիմ
ժխոր—խղուըրտին
ժողխիմ—նեխիմ
ժողովեմ—հաւաքեմ—ձաձեմ (ուշ)

իբր—զիարդ—որպէս
իգասէր—ճակաճան—մատակախազ—իգախազ (ուշ)—իգամոլ (ուշ)
իմանամ—ըմբռնեմ—հասու լինիմ—հասկանամ (ուշ)
իսկ—հաստատուն—ստոյգ—հաւաստ(ի)—ճիշտ—ճշգրիտ—ճշմարիտ—վաւեր

լակեմ—լափեմ
լամ—արտասուեմ—ողբամ—ողողանամ—քուքամ—քքուիմ—աշխարեմ—դեր գործեմ—կականեմ—կոծիմ (-ամ)—կողկողիմ—ոգամ
լամբար—բազմակ—լապտեր—կանթեղ—ճրագ
լանջ-ք—կուրծ-ք
լար—առասան—խառան—չուան—պարան
լաց—ողբ—ողող—քուք—դեր—եղար—կոծ
լեռում—մալեմ—մանրեմ—խորտակեմ—ջախջախեմ—փշրեմ
լերկ—լեշկ
լի—զեղուն—ակաղձուն—լեցց—պատարուն
լիճ—լիկ
լիրբ—լպիրշ—անամօթ—անպատկառ—ժպիրհ—լկնեալ
լիրբ—լկտի—լպիրծ—անառակ—զեղխ—յալլատ—շաղաշեա—շուայտ—շքթեալ—պակշոտ—վաւաշ—ցոփ
լից—կոճ—կոզափոց—յոյզ—կոռ (ուշ)—վէգ (ուշ)
լկեմ—խոշտանգեմ—խուեմ—կտտեմ—չարչարեմ—տանջեմ—տագնապեմ—տաժանեմ (ներգործ.՝ ուշ)—տաղտապեմ—տառապեցուցանեմ—տոչկեմ—տուայտեմ—ցականեցուցանեմ
լմեմ—ճմլեմ—կակղեմ
լնում—հեղում—թափեմ—վայթեմ—վիժեմ
լոյծ—հեղուկ
լորձն—շողիք—տողուկ
լուծանեմ—արձակեմ—քակեմ
լումայ—խերեւէշ
լուսամուտ—պատուհան (—երդ)
լսեմ—ունկն դնեմ (ունկնդիր լինիմ)—անսամ

խախանք—քրքիջ—քրքանք (ք(ր)քուիմ) (—ծիծաղ)
խախաց—մակարդ
խածանեմ—կծանեմ—հարթեմ
խաղ—կայթ—կաքաւումն—պար—ցուց
խաղաղ—հանգիստ—հանդարտ
խայտառակեմ—անարգեմ—ղարովեմ—ծանակեմ—նաքաղեմ—նախատեմ—նշաւակեմ—պախարակեմ—պարսաւեմ
խանդանք—նախանձ—մախ(անք) (հմմտ. քէն)
խառնեմ—շտողանեմ—շփոթեմ
խառնիճ—խարագուլ—մարախ (մորեխ՝ ուշ)
խարազն—խորգ—քուրձ
խարազան—մտրակ
խարտեաշ—շէկ (առանձին՝ ուշ)
խարիսխ—պատուանդան
խեթ—խոթ—խոլոր (ուշ)
խեթեմ—հրեմ—մղեմ—յադգեմ
խեղ—հաշմ
խիզախ—համարձակ
խիթ—ցաւ
խիթ—խոյթ—կոկորդիլոս—նհանգ—տիտեռն

խլեմ—կորզեմ—յափշտակեմ—շոպեմ—շորթեմ
խնդամ—խայտամ—բերկրիմ—զուարթանամ—զուարճանամ—խրախանամ—ուրախանամ—ցնծամ—հրճուիմ (ուշ)
խնդրունդ—անհարթ—խոժոռ—խոշոր—խորտաբորտ—խորթ (ուշ)
խնջոյ-ք—խրախճան-ք
խոլեմ—հալածեմ—վանեմ—վարեմ—քշեմ
խողխողեմ—մորթեմ—փողոտեմ
խողովակ—ցնցուղ—փող (փող(ո)րակ՝ ուշ)
խոնարհ—համեստ—պարկեշտ (հմմտ. հլու)
խոպան—կորդ
խոստանամ—ուխտեմ
խորշիմ—քաշվիմ
խորշոմ—կնճիռ («խորշոմ» իմաստով՝ ուշ)
խուժդն (խիժդն)—խառնութիւն
խուղ—հիւղ—խրճիթ—տաղաւար
խուն (բրբռ. սուն)—դոյզն—դուն—սակաւ—սուղ
խուփն—կափարիչ
խռիւ—խո(ր)շոտ
խտիր—զանազանութիւն (ուշ)
խրթին—խարուրեալ

ծախեմ—սպառեմ—վատնեմ
ծաղր—կատակ(անք)—այպն—խաղ—հենգն—ցոյց
ծաղրածու—զաւեշտարար—հոպիտ—միմոս—խեղկատակ (ուշ)
ծամեմ—ծանծաքեմ—ծամկ/քեմ
ծանուցանեմ—զեկուցանեմ—յայտնեմ—տեղեկացուցանեմ
ծառայ—արբանեակ—սպասաւոր
ծառայ—ստրուկ
ծարաւիմ—պապախեմ—պապակիմ—պասքիմ (պասուք)
ծեր—ալեւոր
ծնաւտ—ծամելի-ք
ծուռ—գել—թիւր—կեռ—կոր—շեղ—խոտոր—ծեք (—ձախիմ)

կաթ(իլ)—կայլակ—շիթ
կաթսայ—սան
կազամ—խոշտամ
կայծակն—շանթ
կայտառ—առոյգ
կաշի—խազախ—մաշկ—մորթ
կաշկանդեմ—կապեմ—պարաւանդեմ—շղթայեմ (որպես բայ՝ ուշ)
կապարճ—պատկանդարան
կառուցանեմ—շինեմ
կարաւտ—նիազ
կարիք—աղց—հարկ—պէտ-ք
կարծր—պինդ—տրամ—ամուր—բիրտ—խեփ—խիստ—կոշտ—կոպիտ—մեստ (ուշ)

կարկանդակ—քաքար
կարճ(ատ)եմ—կրճատեմ—յապաւեմ—յատանեմ—քշտեմ
կաւշիկ—մոյկ/գ
կեղ—խոց—վէր-ք
կեղեւ—պատեան—պատիճ—կեճեպ (—խեճեպ, փոճոկ) (ուշ)
կեր(ակուր)—ուտելիք—խոհ (խահ, խոխ, խախ)—խորտիկ—ջամբ (—համադամ «համեղ կերակուր») (հմմտ. ուտեստ)
կէս—խեղեփ
կզակ—կլափն
կիթ—մեղեխ
կոկորդ—սոսորդ—փող
կող—կուշտ—պարակ
կողմն—կոյս
կոնք—գաշխուրան
կոշտ—գուղձն (ուշ)
կոչ—հրաւէր
կորճ—պասկուճ
կուզ—կատու (ուշ)
կուճ (կիճ?)—մարմար
կունդ—ճեղ—ճաղատ (ուշ)
կուպր—ձիւթ
կուտ—կորիզ
կոյր—բուտ—խաւր—ճարակ
կուր—մակոյկ—նաւակ
կսկծիմ—մորմոքիմ—ցաւիմ—գարհայիմ—զոփամ—վշտանամ—վշտագնիմ
կտակ—անդարձ
կրակ—հուր
կրաւն—աւրէն—կանոն—կարգ
կրաւն—քէշ—դեն (ուշ)—կեշտ (ուշ) (հմմտ. հաւատ)
կրթեմ—մարզեմ—վարժեմ—հրահանգեմ (որպես բայ՝ ուշ)
կրեմ—տանիմ

հաղ (հեղ)—անգամ
համբարու—հրէշ—ճիւաղ—յուշկապարիկ—պարիկ
համբաւ—հռչակ
հայիմ—նայիմ
հայցեմ—խնդրեմ—յուզեմ (—պահանջեմ)
հանգիստ—խաղաղ—անդորր—անքոյթ—հանդարտ
հանգիստ—դադար—դուլ—խաղաղութիւն
հանգոյց—կնճիռն—կչկուռ (ուշ)—կուղթ (ուշ)
հանգրուան—մակաղատեղ—փարախ
հառաչեմ—թառանչեմ—հեծեմ (հեծեծեմ)
հատանեմ—կտրեմ
հասակ—տի-ք
հասու (ձեռնհաս)—հմուտ—ատակ—բաւակ—կարող
հարթնում—խրտնում—շրտնում—սարտնում

հարկանեմ—զարկանեմ—հարում—բախեմ
հարուստ—մեծատուն—ճոխ—փարթամ (ուշ)
հարսն—նու
հաւ—ծագ—սկիզբն
հաւանիմ—հաճիմ—յաւժարիմ
հաւասար—հանգէտ
հաւատ—դաւանութիւն
հաւտ—հաւրան—երամակ—խաշն—նախիր
հեղգ—ծոյլ—լորտ—յոյլ—կեկս (ուշ)
հեղեղ—ուղխ
հեճուկ—հենգն
հենում (հանում)—հիւսեմ—կկեմ—ստայնանկեմ
հետ-ք—կինք
հերկ(եմ)—վար(եմ)
հերքեմ—պողեմ—վանեմ—վտարեմ—քշեմ—վանդեմ (ուշ)
հեւամ—հինինամ—թասեմ—շմամ
հէն—հրոս
հէք—եղուկ—ողորմ—փինատ—թշւառ—խարուեալ—խաւլ(եալ)—խղճական—փէք (ուշ)
հիւանդ—խաւթ—ախտաժէտ—դար
հիւծիմ—մաշիմ—ներգեւիմ—ծիւրիմ—ծնկ/զիմ—հաշիմ
հիւր—իջաւոր
հիւրընկալ—ասպնջական—վանատուր
հլու—հնազանդ
հմուտ—ճարտար
հնազանդ—հպատակ
հնոց—հալոց—բով—քուրայ
հոգամ—յանձանձեմ—խնամեմ—տածեմ
հոգ-ք—զմբաղ—տատամսութիւն
(հ)ոգի—հագագ—շոգ—շունչ
հողմ—այս—սիք—քամի (ուշ)
հով (զով)—ոյծ—սառն—ցուրտ—պաղ (ած. և գոյ. գործածված ժամանակային տարբեր ավանդումներով)
հովանի—շուք—ստուեր
հովիւ—անդէորդ—խաշնարած—շպետ
հոր—գուբ—խարափ—խոր—ոփ—փոս—խոռ(ոչ) (ուշ) (հմմտ. անդունդ)
հոր—փեսայ
հորձ—յոյզ
հունչ—ձայն—գանգաչ (գանգիւն)
հուպ—կից
հսկայ—տիտան (—վիթխարի՝ ուշ)
հրաման—պատգամ—պատուէր
հրաշ-ք—սքանչ

ձագ—յաւանակ
ձախ—ահեակ

ձար—մազ—վարս (—դէս «երկար մազ»—հեր «գլխի մազ»—ծամ «հյուսած մազ»)
ձեղուն—ցիւ
ձետ—պոչ—տտուն (տուտն)—ագի
ձեւ—արդ—տես(իլ)—կերպ(արան)
ձիգ—պիրկ—գէլ
ձոր—հովիտ

ճեղք—ծերպ
ճեղքեմ—հերձեմ—ցելում—պատառեմ—փեռեկեմ—բզքեմ
ճիրան—մագիլ—ճանկ (ուշ)

մալեմ—ճմլեմ—ճնշեմ—սեղմեմ
մածիմ—մատչիմ—փակնում—կպչիմ (ուշ)
մախաղ—շալակ—պարկ—քուրձ—խորգ («պարկ» իմաստով՝ ուշ)
մաճար—քաղցու—խաղմուղ
մամուռ—լաւռ
մանեակ—մեհեւանդ—քայռ
մանուկ—երեխայ—համբակ—տղայ
մանչ—ուստր
մանր—փոքր
մաշկաթեւ—չիղջ
մասն—բաժին
մատաղ—ճիղմ
մարտ—կռիւ—խազմ—խանգար—կագ—պայքար—վէգ—վէճ (—ոգորիմ)
մատչիմ—մերձենամ
մարթեմ—կարեմ
մարտիրոս—նահատակ
մաւտ—մերձ
մաւր—ճահիճ
մեծագին—թանկ/գ—սուղ («թանկ» իմաստով՝ ուշ)
մեծամիտ—անձնագով—ամբարհաւաճ—ամբարտաւան—գոռ—գոռոզ—խրոխտ—յոխորտ (յախորտ)—պարծուկ—հպարտ—վէս—կոկող (ուշ) —վզան (ուշ) (—շքամ—պանծամ—բրքուիմ)
մեծարեմ—յարգեմ—պատուեմ
մեղ-ք—եղեռն—յանցանք—ոճիր
մեղմ—մեղկ—ամոք (առանձին՝ ուշ)
մեղադիր—ամբաստան—դատախազ
մթար—բիժ—ճայր—ճիպռ (ուշ)
միաբան—ի միասին—միանգամայն—ընդհանուր—հասարակ
միակ—միայն—լոկ—լուր—ստակ—սոսկ (—եւեթ՝ մկբ.)
միտ-ք—խոկ—խորհ(ուրդ)
մխեմ—մուծանեմ—մտուցանեմ—խոթեմ—խրեմ
մխիթարեմ—սփոփեմ—քաջալերեմ
մշտնջենաւոր (մշտնջենական)—յաւէժ—յաւիտեան (յաւիտենական)
մոլար «խաբող»—խաբող—պատրող—շաղաւաշուրթն

մոլորիմ—սխալիմ—գայթիմ—վրիպիմ
մոլեգին—ամեհի—գակատեալ—կատաղի
մոյթ—նեցուկ
մոյն—խեղդեալ— հեղձեալ—մղձկեալ
մութ(ն)—աղջամուղջ—մռայլ—մուղտ—խաւար
մուլ—մուխ—մրրիկ—ծուխ
մուն—մժեղ
մունչ—համր
մուրճ—կռան—ուռն
մրրիկ—փոթորիկ
մուր—մուրճ—ձանձախարիթ (?)—մեղծ (?)

յագենամ—զմայլիմ—զուարթիմ—յուրանամ—յափրանամ—յղփանամ—
    կշտանամ (ուշ)
յախուռն—յամբայր
յածիմ—թափառիմ—կոպանիմ
յառաջամարտիկ—ախոյեան—նահատակ—շահատակ
յառնեմ—կանգնիմ—յոտն կամ
յատակ—թափ—խոր-ք—տակ—ունչ—ալ-ք (ուշ)
յար («միշտ» իմաստը՝ ուշ)—հանապազ—միշտ
յարեմ—հայթեմ—յաւդեմ—բաղեմ—խաղտեմ—կցեմ
յարմար—արժան(ի)—ճահ—համեմատ—պատկան (առանձին՝ ուշ)—
    պատշաճ—վայելուչ
յաւգ—խազ(ալիկ)
յաւակն—ժիտ—ժմերտ—ժպիրհ—խոխոտ—յանդուգն—յախուրտ
    (—իշխեմ—խիզախեմ)
յելուզակ—աւազակ—հէն—հուզկահար (ուշ)
յեղում—դարձուցանեմ—յեղափոխեմ—փոխեմ
յեռում—ընդելուզանեմ—յիրեմ—փողփողեմ
յետին—հուսկ—վերջին
յետին—տրուպ—անարգ—ղածած—նուաստ (հմմտ. սնոտի)
յետոյ—ապա
յղեմ—յուղարկեմ—առաքեմ
յղի—ծննդական—բեղնաւոր
յոգն—յոլով—բազում—շատ
յոգնիմ—խոնջիմ—պարտասիմ—վաստակ լինիմ
յոռի—վատ—վատթար—քեծ—քրէիրուր (—չար)
յորդ—առատ
յորդորեմ—դրդեմ—թելադրեմ—սադրեմ
յորդորումն—խրախոյս—քաջալերութիւն
յորդումն—զեղումն—յորձանք—բղխումն (—հոսանք—վտակ)
յուսահատ—վհատ

նեխ—երր—փուտ
նետ—սլաք (?)—փքին (—հերձակ (?)՝ ուշ կազմութիւն)
ներգեւ—նիհար—վտիտ—նզար (ուշ)
ներքինի—մալեալ—ամորձատ—թաղասմաւոր—կուրտ—քածաւարոտ

նժդեհ—պանդուխտ—վտարանդի
նիւթ—առաղձ—հիւթ—տարր
նկար—պատկեր
նիւթեմ—նաւթճեմ—պաճարեմ—հայթ(հ)այթեմ
նման—գունակ—հանգոյն—պէս—հանգէտ (առանձին՝ ուշ)—քատակ (ուշ)
նուրբ—ցիր—անաւսր—անգայտ—ցանցառ (ուշ)
նսեմ—աղատ
նքոյր—մաղ (—խարբալեմ)

շամբ—խարձ—եղեգնուտ
շաւշափեմ—շփեմ
շող—նշող (նշոյլ)—ճաճանչ—ճառագայթ—շառայլ—շառափիղ
շողամ—փաղփաղիմ (փայլիմ)—փողփողեմ—ցոլամ («շողալ» իմաստով
    որպես բայ՝ ուշ)
շողոմ—շողոքորթ—ստկող—փաղաքուշ—քծնող
շուք—փառք
շպարիմ—սնգուրիմ (սնգոյր)
շփեմ—մարձեմ

ողորկ—կոկ—հարթ—յիղկ (ուշ)
ողորմ—գութ—կարեկցութիւն (ուշ)
ոճ—ստեղն—ցաւղուն
ոմն—ոք
ոռնամ—մռնչեմ
ոսկր—վանդ (ուշ)
ոստ—ողոր—կողր—ճիւղ (ճեղ)—ուռ—ուղէղ (ուշ) (—բարունակ—շիւ)
ոստնում—վազեմ
ոտն—սրունք—ճիւ—աթուր (առանձին անգործած.)—աք
որդի—ծնունդ—սեր(ունդ)—զաւակ—տղայ
որդն—բոռոտ—ճճի
որեար—ամբոխ—բազմութիւն—գունդ—ժողովուրդ—պարոյր—ռայ
որթ—մոզի (հմմտ. ձագ)
որթ—վազ (ուշ)
որկոր—ստուգն (ուշ)
որմ—ցանկ—պատ—պարիսպ
որոնեմ—պտռեմ (ուշ)—փնտռեմ (ուշ) (հմմտ. հայցեմ)
որովայն—փոր—գանձակ—նախիճ

ուլ—ամիկ—բուծ—ալոչ
ուլն—պարանոց—վիզ—ճիտ (ուշ)—շլնի (ուշ)
ուղեղ—խել
ուղի—աղագ—ճանապարհ—ճապաղ (հմմտ. արահետ)
ուղուկ «մի չափ»—քիլ
ուղտ—շառաւն
ունայն—սին—դատարկ—զուր—թափուր—նանիր—պարապ
ունչ—քիթ

ուշ—անագան
ուս—նուս
ուսուցանեմ—խրատեմ—կրթեմ—վարդապետեմ—վարժեմ—հրահանգեմ
 (որպես բայ՝ ուշ)
ուտեմ—փաղաղեմ (—ըմբոշխնեմ—ճաշակեմ)
ուտեստ—սնունդ—թոշակ—հաց—նպար(ակ)—պարէն—պիհ.—ռոճիկ
ուտիճ—ցեց
ուրանամ—ժխտեմ—մերժեմ
ուրուր—ցին
ուրչու—խորթ («խորթ որդի» իմաստով՝ ուշ)

չափ—սակ

պագանեմ—համբուրեմ
պալ (պաղ)—պղպղաքար—ապառաժ—ժայռ—խարակ.—վէմ
պահակ—պահապան
պահեմ—պաշտպանեմ—պատսպարեմ—պահպանեմ (որպես բայ՝ ուշ.
 պահապան-ից)
պայքարեմ—գուպարեմ (-իմ)—մաքառիմ
պաշարեմ—պատեմ
պապանձիմ—կարկիմ—համրիմ (—անամ)
պատանի—պարմանի (ուշ)
պատատեմ—փաթութեմ (փաթաթեմ՝ ուշ)
պատերազմ—ռազմ
պատկինեմ (պատկէն)—պատուաստեմ—պատրուսեմ (ուշ)
պատնէշ—պատուար
պարսաւեմ—բասրեմ
պոստ—բուշտ (առանձին՝ ուշ)
պտուղ—միրգ

ջան-ք—ջուն—փոյթ—ճիգն
ջերմն—տենդ
ջինջ—սուրբ—անապակ—անխառն—զուտ—մաքուր—յստակ—վճիտ

ռունգն—ծուծք—պինչ—փող

սաղաւարտ—գլխանոց (ուշ)
սայր—սլաք—սուին—տէգ
սառն—սառոյց—պաղ
սաստեմ—բասրեմ—դսրովեմ (դսրով առնեմ)—եպերեմ—կշտամբեմ—
 յանդիմանեմ—նախատեմ—պախարակեմ
սար—բարձունք (—լեառն)
սարիք—տի—կապ—վարակ
սար-ք—աճառ (աւճառ)—կազմած—հանդերձանք—սպաս
սեաւ—արջն
սեղան—բագին—զոհարան (-անոց)
սեղեղ (սիղեղ)—հոմանի

սենեակ—սրսկապան
սերմ—հատ—ունդ
սէր—գորով—խանդաղատութիւն—տրփ (տռփ, տարփ)
սնոտի—չնչին—աննշան—բալախ—գձուձ (հմմտ. յետին)
սոր—փոր(ոք)—խոռոչ—խորշ—ծակ—ծերպ (հմմտ. ճեղք)
սուտ—խաբ—կեղծիք
սպանանեմ—սատակեմ
սպիտակ—ճերմակ (ձիու մասին)
սպրդեմ—սողոսկիմ (ուշ)
ստէպ—յաճախ
ստին-ք—տիտ (?)—ծիծ (ուշ)
ստնտու—դայեակ—տիտան (ուշ)
սփածանելի—ղենջակ
(ս)փռիմ—ծաւալիմ—ճապաղիմ—տարած(ան)իմ

վահան—ասպար
վարազ—կինճ
վարձ(-ք)—կաշիկ-ք—մահակ—սխուր—վճար
վերարկու—կրկնոց—մեկնոց—աղաբողոն—նափորտն—փիլոն
վնաս—ահոկ(ութիւն)
վրան—խորան—մաշկն—տաղաւար

տաղտկացուցանեմ—թախանձեմ—ձանձրացուցանեմ
տամ—յանձնեմ
տանիք—ցիւ (ցուիք)—տամալի
տարտամիմ—դանդաղիմ—յամեմ—յապաղիմ—ուշանամ
տեռ—քող (քաւղ)—շղարշ (առանձին՝ ուշ)
տիղմ—սիկ—ցիխ
տիրեմ—իշխեմ (—նուաճեմ)
տղեմ—շարժեմ
տոկամ—տեւեմ—ըմբերեմ—համբերեմ—ժոյժ ունիմ—հանդուրժեմ
տոյժ—տուգան-ք
տողան—դաս—դարգ—երասատ—կարգ—շար-ք
տոռն—կառան—ճոպան—մալուխ—չուան—պարան
տրամիմ—թախծիմ—կղծկիմ—վշտանամ—տխատիմ—տխրիմ
տուր-ք—հաս—բաժ—հարկ—սակ

ցած—խոնարհ—խոնջ—ստոր
ցայտեմ—ցնցղանամ (ցնցուղ)
ցնցոտի—գրգլի—թամբատ—քուրջ (ուշ)
ցոյց—նշան
ցուպ—քուք—գաւազան—մական (ուշ)
ցռուկ—քիթ
ցր(ու)եմ (ցիր, ցրիւ)—ցանեմ—ցնդեմ—վարակեմ

փակ(անք)—աղխ
փակեմ—կափեմ

փայտատ—կացին—տապար
փարթ—քաղիրթ
փափուկ—կակուղ
փերթ—ուշ—պատառ
փշուր—խրխուր (ուշ)
փոկ—հրապար
փողոց—գնեհ
փոշի—մղեղ
փութանակի (փութով)—արագ (երագ)—ճեպով—շտապի—շոյտ—վաղ—
    վաղակի (հմմտ. արտորամ)
փուշ—պսեմն (—տատասկ)

քաղ—նոխազ—քաւշ
քաղ—հունձ—կութ
քաղցր—անոյշ
քամել—կզկզել—մզել
քանդակել—դրաւշել
քար—գիլ
քարակոփ—քարահատ—փաղատոս
քաւել—թողում—խնայել (անխայել)—ներել
քեղի—ղեկ
քեռի—մաւրեղբայր (ուշ)
քերթել—տեռել—մորթել
քէն—հեռ—խեռ—ոխ—վրէժ (հմմտ. խանդանք)
քղանցք—դրաւշակ
քուն—մրափ «նինջ»—նինջ—նիրհ

3. ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ի տարբերություն հնդեվրոպական այլ հին ժողովուրդների (հնդիկներ, իրանցիներ, հույներ և այլն)՝ հայերը հակում են ունեցել բուն հայկական անձնանունները փոխարինելու այլազգի անձնանուններով, այսինքն՝ գործածելու սեփական լեզվական միջոցներով չբացատրվող (ոչ պարզ էտիմոնով), միայն անձնանվանական գործառություն ունեցող միավորներ։ V դ. և ավելի վաղ գործածված անձնանունների մեջ մեծ թիվ են կազմել իրանական ծագում ունեցողները։ Վաղ հայկական պետական կազմավորումների, Արտաշիսյան և Արշակունյան հարստությունների թագավորների անունները հիմնականում իրանական ծագում ունեն։ Իրանական տարրը մեծ թիվ է կազմում նաև Խորենացու տված, այսպես կոչված, հայկազնյան առասպելական թագավորների և նրանց ազգակիցների անունների մեջ [Ջահուկյան, 1981, 3, 48—63]։

Ի մի բերելով օտար և հայ աղբյուրների տվյալները՝ կարելի է մատնանշել V դ. և ավելի վաղ գործածված անձնանունների իմաստային և բառակազմական մի շարք տիպեր։ Նշենք, որ ի տարբերություն հասարակ անունների, հատուկ անունների դեպքում ժամանակագրական տվյալները երկակի բնույթ ունեն. այստեղ հարկավոր է նկատի առնել ոչ միայն մատենագրական աղբյուրների, այլև այդ աղբյուրների մեջ հիշատակված անունները կրող անձերի ապրած ժամանակը։ Ստորև բերվող անձնանունների համար նկատի են առնվել երկու կարգի տվյալներն էլ, այդ թվում՝ նաև առասպելական անձերի վերաբերյալ տեղեկությունները [հմմտ. **Hübshmann**, 1893, **Justi**, 1895. Աճառյան, 1942—1962]։

Բնիկ հայերեն արմատներով կազմված անձնանուններն ըստ կազմության կարելի է բաժանել չորս խմբի՝ 1) պարզ, 2) ածանցավոր, 3) հոլովման կամ խոնարհման ձև ունեցող և 4) բարդ, ընդ որում 1-ին, 2-րդ և 4-րդ տիպերի անձնանունների առանձնացման չափանիշները երկակի են. կարող են լինել ինչպես ածանցավոր և բարդ հասարակ անունների ամիջական փոխանցմամբ (կոնվերսիայով) առաջացած, այսինքն՝ անձնանվանական առումով փաստորեն պարզ կամ նախատիպ, այնպես էլ պարզ հասարակ անուններից հատուկ անձնանվանական (հատկապես փաղաքշական-քաղաքշական) ածանցներով կազմված անձնանուններ։

Ի տարբերություն հնդկական, իրանական, հունական անձնանունների՝ բուն հայկական ծագման անձնանունների մեջ բարդությամբ կազմվածները սակավաթիվ են, գերազանցապես -այր բաղադրիչով՝ **Զարմայր** (հնարավոր է իրանական ծագում. հմմտ. պրամ.<իրան. Zrmr), **Նորայր**, **Ուռնայր** (ուռն «մուրճ» կռան»?+այր), **Տիրայր**. Սյունեցու քերականության մեջ (VIII դ.) հանդիպում է նաև **Կորայր**, որ թերևս հին անուն է։ Հակառակ այլ լեզուների՝ -տուր բաղադրիչով հնագույն անձնանուններ գրեթե չկան. **Տեառնտուր** անունը կրել է մի եպիսկոպոս, որ ապրել է V դ. երկրորդ կեսին և VI դ. սկզբներին. **Աստուածատուր** անունը հանդիպում է VI դարից ոչ վաղ. համեմատաբար ավելի ուշ շրջանից են նաև **Խաչատուր** (XI դ.), **Տիրատուր** (VII դ.) և այլ անձնանուններ, որոնք կապված են հատկապես քրիստոնեության հետ։ Հայերի մոտ գործածության մեջ են եղել նաև **-որդի** բաղադրիչով անձնանունները, ինչպես **Սկայորդի** (սկայ-՝ թրակ. Σκαιοί ցեղանունի՞ց)։ Եթե **Հրաչեայ** անձնանունը իրոք հայկական ծագում ունի և ոչ իրանական (հմմտ. ավեստ. Fračya- անձնանունը), ապա պետք է ենթադրել համատիպ կազմությամբ այլ անձնանունների գոյությունը ևս։

Զգալի թիվ են կազմել փաղաքշական-փաղաքշական **-ակ**, **-իկ**, **-ուկ** ածանցներով անձնանունները՝ կազմված մասամբ հասարակ անուններից, մասամբ այլ անձնանունների կրճատ ձևերից։ Հնդեվրոպական հիմքերից այս ածանցներով կազմված անձնանուններից են՝ **Այրուկ**, **Դատրիկ**, **Եզնիկ**, **Եղբայրիկ**, **Երանեակ**, **Ընձակ**, **Լուսիկ** (հնում՝ արական), **Խաչիկ**, **Խեղակ** (?), **Հաւուկ**, **Զագիկ**, **Զուիկ**, **Մրջիւնիկ**, **Տիրիկ**, **Տիրուկ**։ Հնարավոր է նաև **Արմենակ** (**Արմեն**<*ormenos՝ հ.-ե. *er- «հուզել, բարձրացնել» արմատից, որտեղից նաև **արմ(ն)**, **արմատ**, **զարմ**), **Թաթիկ** (**թաթ**<*tag-t-՝ հ.-ե. *tag- «շոշափել, դիպչել, բռնել» կամ *tata—մանկական բառ?), **Յուսակ**, **Յուսիկ**, (**յ-)ույս**՝ հ.-ե. *euk- «վառվել» արմատի՞ց. այստեղից **ուսանիմ**), **Ցոլակ** (*sk'i̯o-lo-՝ հ.-ե. *sk'āi- «ցոլցլալ, առկայծել» հիմքից?) անձնանունների հիմքերի հնդեվրոպական ծագումը։ Եթե **Ամպակ**-ը և **Առնակ**-ը իրանական ծագում չունեն, ապա նրանց հիմքերը (**Ամպ-**, **Առն-**) բնիկ հայկական են։ Հայտնի չէ **Կայպակ**, **Կողբեակ**, **Կոռնակ**, **Հայցիկ** անձնանունների ծագումը։ **Հայկակ** անձնանունը կազմված է **Հայկ**-ից։

V դ. և ավելի վաղ տարածված են եղել **-ոց** (հ.-ե. *osk'o-?) ածանցով անձնանունները, որոնցից **Տիրոց**-ը և **Քաղոց**-ը հնդեվրոպական հիմքեր ունեն։ Այլ ծագման հիմքերով անձնանուններից հիշատակելի են Ափոց, Բաբոց, Մաշտոց, Վարդոց։

Անհայտ է -իթ-ով կամ -ութ-ով վերջացող Գնիթ (գին-ի՞ց. հմմտ. նաև ծագումով անհայտ Գարեգին), Գորութ (հմմտ. գորո՞վ), Զուիթ անձնանունների ծագումը[1]։

Հազվադեպ են իրանական ծագում ունեցող -ունի ածանցով կազմված իգական անձնանունները՝ Աւագունի (հիմքի ծագումն անհայտ է), Ոգունի (ոգի-ն հ.-ե. ծագում ունի՝ *poṷi̯o-)։

Հոլովման և խոնարհման ձևերից են կազմված Զոմն, Տիրանամ (եթե կապ չունի Տիրան-ի հետ) անձնանունները։ Եթե Արաց-ը հնարովի անուն չէ և իրոք կապված է ուրարտ. Araza դիցանվան հետ, ապա -աց-ը սեռականի վերջավորություն չէ։

Նշանակալից թիվ են կազմում և հասարակ անունների սովորական փոխանցմամբ (կոնվերսիայով) կազմված հատուկ անունները։ Սրանց մեջ ըստ իմաստի կարելի է առանձնացնել մի քանի խումբ.

1) կենդանիների անուններից կազմված անձնանուններ, որոնք թերևս անձնանունների հնագույն՝ տոտեմական շրջանից եկող, շերտն են ներկայացնում՝ Արտոյտ, Ընջուղ, Կորիւն. սրանց պետք է միացնել փոքրացուցիչ-փաղաքշական -իկ, -ուկ ածանցներով կազմված անձնանունները՝ Այծեմնիկ (?) հանդիպում է Աստվածաշնչում, որպես Տաբիթա անվան թարգմանություն. ավելի ուշ՝ XII դարից կա Այծեամն անունը), Գառնիկ, Եզնիկ, Ընձակ, Հաւուկ, Ձագիկ, Մրջիւնիկ։

2) Ազգակցական հարաբերություններ ցույց տվող բառերից կազմված անձնանուններ՝ Դուստր, Եղբայր, Հայր, Հաւրոյ (*pətro. հմմտ. հուն. Πατρο-ով կազմվող անձնանունները), Որդի։

3) Մարմնի մասերի անվանումներից կազմված անձնանուններ՝ Թաթիկ, Թարոզ (թար<հ.-ե.?), Ձեռէս (հասարակ անո՞ւն)։

4) Բնության մարմինների և երևույթների անվանումներից կազմված անձնանուններ, որոնք թերևս գալիս են հեթանոսական շրջանից՝ Արեւ (հմմտ. Յրեւ, Ռեւ?), Լուսիկ. սրանց թվին է պատկանում նաև Աստղիկ դիցուհու անունը, որը, քրիստոնեության մուտքի հետ կապված, V դ. որպես սովորական անձնանուն չի հիշատակվել։

5) Վերացական անուններից կազմված անձնանուններ (հմմտ. հունական համապատասխան անձնանունները)՝ Գիտ, Յոյս (այլև Յուսակ, Յուսիկ)։

6) Գոյականներից և ածականներից կազմված բնութագրիչ անձնանուններ՝ Արբուն, Գեղամ (եթե կապված է գեղ արմատի հետ), Հոյ (հմմտ. Բոյ-ակապ?). հմմտ. նաև Քաջ (ծագումն անհայտ)։

7) Այլ բառերից կազմված անձնանուններ՝ Գինդ (գինդ «ականջօղ, օղ, շրջանաձև զարդ»), Սլաք, Սուր (եթե իրանական ծագման չէ), Տէր (հմմտ. նաև Տիրոտ)։

Այսպիսի անձնանունների թիվը, անշուշտ, ավելի մեծ է եղել հեթանոսության շրջանում, բայց քրիստոնեության մուտքով դրանք դուրս են եկել գործածությունից և փոխարինվել քրիստոնեական պաշտոնական անձնանուններով։

Ավելորդ չենք համարում բերել քննարկված հնդեվրոպական հիմքերով անձնանունների ցանկը. այն անձնանունները, որոնց հիմքերի հնդեվրոպական ծագումը կասկածելի է, բերվում են հարցականով.

Ամպակ (Ամբակ) (հ.-ե.?)
Այծեմնիկ
Այրուկ
Անանուն
Անգեղ (հ.-ե.?)
Անուակ (հ.-ե.?)
Արբուն
Արեւ
Արմենակ (հ.-ե.?)
Արտոյտ
Գառնիկ
Գեղամ (հ.-ե.?)
Գինդ
Գիտ
Դուստր (Դստրիկ)
Եզնիկ
Եղբայր(իկ)
Երանեակ
Զարմայր
Զոմն
Ընձակ
Ընջուղ
Լուսիկ
Խաչիկ
Խնդակ
Կենան (կեան-ի՞ց)
Կորիւն
Հայր
Հաւուկ
Հաւրոյ
Հոյ
Հրաչեայ (հ.-ե.?)
Ձագիկ
Ձեռէս (հասարակ անո՞ւն)
Ձուիկ
Մխիթար (խէթ, խիթամ)
Մրջիւնիկ
Յոյս (հ.-ե.?)
Յուսակ (հ.-ե.?)
Յուսիկ (հ.-ե.?)
Նորայր
Ոգ-ունի
Որդի
Սլաք
Սուր (հ.-ե., թէ՞ իրան.)
Տեառնտուր
Տէր
Տիրայր
Տիրանամ
Տիրիկ
Տիրոտ
Տիրոց
Ցոլակ (հ.-ե.?)
Ունայր
Քաղոց։

Բնիկ հայկական դիցանուններից են Ամանոր-ը և Աստղիկ-ը. սրանցից առաջինը բարդ անուն է՝ բաղադրիչների՝ հայերենի համար անսովոր շարադասությամբ, ընդ որում ամա-ի մեջ պահպանվել է ամ «տարի» բառի հիմքային հին ձևը. սա խոսում է կազմության արխաիկ բնույթի մասին (հմմտ. վիպասանական աշագեղ)։ Ամանոր-ի երկրորդ՝ Վանատուր անվանումը պարունակում է բնորոշ երկրորդ -տուր բաղադրիչը (հմմտ. Տեառնտուր անձնանունը)՝ օտար ծագման առաջին բաղադրիչով։ Աստղիկ-ը փաղաքշական ածանցով կազմություն է։

Փոքրասիական Տորք-ի Անգեղեայ մականվան՝ Խորենացու կողմից տրված մեկնաբանությունը որպես ան-գեղ (=տգեղ) պետք է համարել ժողովրդական ստուգաբանություն. ավելի հավանական է դրա կապը Անգեղտուն գավառի և նախարարական տոհմի անվան հետ։ Հայտնի չէ սրա կապը մի կողմից՝ **Անգեղ** դիցանվան հետ, որով Աստվածաշնչում թարգմանվել է Nergāl (հուն. Ἐργέλ) աստծու անունը, և մյուս կողմից՝ **Անգեղ** անձնանվան հետ, որ Հայկի սերնդին պատկանող Փառնավազի որդու՝ Բագարատի երկրորդ անունն է։ Կապ ունի՞ արդյոք **անգղ** թռչնանվան հետ, ինչպես կարծում է Ն. Ադոնցը։ Թերևս հնարավոր է **անգղ**-ի հնդեվրոպական ծագումը *ank- «ծռել, թեքել» արմատից. թռչունը կարող էր այսպես կոչվել ըստ կտուցի ձևի. հմմտ. նույն արմատից ծագող թոխ. A onkaläm, B onkolmo «փիղ»՝ ըստ կնճիթի ձևի)։

---

[1] Հնարավոր է -իթ ածանցով անունների իրանական ծագումը, մանավանդ եթե այդ ածանցը կապ ունի Բեհիստունի արձանագրության մեջ հիշատակված Ḫaldita անվան -ita-ի հետ. վերջինս սովորաբար համեմատում են հ. պ. Xšaθrita- (<մեդ.)?, ավ. Zairita- անձնանունների -ita-ի հետ [հմմտ. Eilers, 1940, 220, Bănăţeanu, 1957, 80. Schmitt, 1980, 10—11]։ Ի. Մ. Դյակոնովը Ḫaldita-ն ամբողջովին համարում է ուրարտական՝ ենթադրելով *Ḫalditajə սկզբնաձև։

Նանէ դիցուհու անվան՝ **նանե** բառից ծագելը քիչ հավանական է. ավելի հավանական է սրա փոխառյալ լինելը (հմմտ. աքքադ. Nanāja)։

4. ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Եթե նախագրային շրջանի համար մեր առանձնացրած բուն հայկական, այսինքն՝ հնդեվրոպական ծագման հիմքերով կազմված անձնանունների թիվը հինգ տասնյակից հազիվ է անցնում, ապա Հայկական բարձրավանդակի համապատասխան տեղանունների թիվը բավականաչափ մեծ է։ Սա բացատրվում է ոչ միայն այն հանգամանքով, որ տեղանունների թիվը գերազանցում է անձնանունների թիվը, այլև նրանով, որ հայերը, ընդհանուր առմամբ չփոխելով գործածության մեջ եղած տեղանունները, ամեն մի նոր հիմնադրված բնակավայրի պետք է տային նոր անուն. եթե այդ վայրը արդեն հայտնի լեռան, գետի, անձի անունով չի կոչվել, ապա պետք է տրվեին հայկական համապատասխան լեզվամիջոցներով։ Հարկ ենք համարում նշել, որ սովորական բառերի (հասարակ անունների) և անձնանունների հնության աստիճանը որոշելու համար կիրառած եղանակներն այս դեպքում տարբեր են. եթե նախագրային շրջանի հասարակ բառերը և անձնանունները առանձնացնելիս առաջնությունը տրվել է V դ. մատենագրական տվյալներին, ապա այս դեպքում նկատի են առնվել նաև ավելի ուշ հեղինակների տվյալները, մանավանդ եթե այդ տեղանունները հիշատակված են պատմական վաղ իրադարձությունների կապակցությամբ։ Հայտնի է, որ տեղանունները շատ ավելի կայուն են, հեշտությամբ և առանց անհրաժեշտության չեն փոխվում, մինչդեռ անձնանունների գործածությունը մեծ չափով կապված է քաղաքական, մշակութային, կրոնական գործոնների հետ. այստեղ մեծ դեր են խաղում տվյալ ժամանակի ըմբռնումները, մոդան, անձնական հակումները։

Այս առումով նախագրային շրջանի ներկա քննության մեջ նկատի են առնված ոչ միայն V դ. հեղինակների, այլև «Աշխարհացոյց»-ի տվյալները [Երեմյան, 1963], որոնք, հավանաբար, արտացոլում են ավելի վաղ տեղանվանական փաստեր, այլև ավելի ուշ հեղինակների, օրինակ՝ Թ. Արծրունու տվյալները։ Կարելի է ասել, որ այս դեպքում մեզ համար ընդհանուր առմամբ հիմք են ծառայել գերազանցապես Հ. Հյուբշմանի՝ հայկական հին տեղանունների քննության արդյունքները [Hübschmann, 1904. Հյուբշման, 1907]՝ հետագա ուսումնասիրությունների արդյունքների հաշվառմամբ։

Բուն հայկական տեղանունները ըստ կազմության չորս տիպի են՝ 1) բաղադրյալ (տեղանուն-բառակապակցություններ), 2) բարդ, 3) ածանցավոր

և 4) պարզ, ընդ որում սրանց հարաբերությունը համապատասխան հասարակ անունների հետ այնպիսին է, ինչպես անձնանունների դեպքում։ Հարկավոր է նկատի ունենալ, որ բաղադրյալ տիպը կազմում է տեղանունների առանձնահատկությունը. անձնանուններին այն հատուկ չէ։

Բաղադրյալ տեղանունները հաճախ ունեն զուգահեռ բարդ տարատեսակներ՝ մասամբ ըստ էության՝ **Ագռավուց քար—Ագռավաքար**, մասամբ ըստ գրության՝ **Ձորոյ փոր—Ձորոփոր** (**Ձորափոր**)։

Բաղադրյալ տեղանունները կազմված են երեք հիմնական կաղապարային սխեմայով՝ 1) որոշիչ+որոշյալ (ածական+գոյական, 2) բացահայտիչ+բացահայտյալ (գոյական+գոյական) և 3) հատկացուցիչ+հատկացյալ (սեռական հոլովով գոյական+գոյական)՝ բաղադրիչների երկու հնարավոր շարադասությամբ։

Առաջին կաղապարի համար կարելի է նշել երկու դրսևորում. 1) մի դեպքում ածականն ունի տեղանվանական հատուկ գործածություն (հմմտ. **մեծ, փոքր, վերին, ներքին, ստորին, միջին, միւս**), այսինքն՝ ավելանում է արդեն գոյություն ունեցող տեղանվան վրա՝ հակադրվում իրական կամ ենթադրական մի այլ ածականի. հմմտ. **Մեծ Հայք—Փոքր Հայք** և **Բարձր Հայք** (չկա **Ստորին Հայք**). 2) մի այլ դեպքում ածականն ունի ոչ բուն-տեղանվանական գործածություն, այսինքն՝ կապակցությունն առնված է ամբողջությամբ, և կարող է դիտվել որպես շարահյուսական բարդություն և գրվել իբրև մեկ բառ. այսպիսիք են **Բարձր բերդ** (**Բարձրբերդ**), **Երկայն որք** (**Երկայնորք**), **Մեծ այր, Մեծ քար, Սուրբ խաչ, Սուրբ տիկին**։ Քանի որ պարզ չէ երկրորդ բաղադրիչների բնույթը, դժվար է որևէ բան ասել **Մեծիրանք, Մեծկուանք** տեղանունների մասին, որոնց երկրորդ բաղադրիչները որպես տեղանուններ չեն հանդիպում. կապ ունե՞ն արդյոք դրանք **իրան** (?) և **կոյ, կու** (<հ.-ե. *gʷōu- «կղկղանք, գոմաղբ») բառերի հետ։ Ինչ վերաբերում է **Նորշիրական**-ին, ապա այն իրան. Nō-Šērakān-ի (?) առաջին բաղադրիչի՝ հայերեն համարժեքով փոխարինված, այսինքն՝ հայերենի հետ բաղարկված կազմություն է։

Երկրորդ կաղապարով կազմված անունների երկրորդ բաղադրիչները սովորաբար տեղանվանական տերմիններ են, առաջինները՝ բուն տեղանուններ, որոնք կարող են գործածվել նաև ինքնուրույնաբար, առանց երկրորդ բաղադրիչների։ Իբրև երկրորդ բաղադրիչներ կարող են ծառայել և ծառայում են գերազանցապես բնիկ հնդեվրոպական ծագման բառեր՝ **ակն, աղբիւր, այր, բլուր, գաւառ, գետ, դուռն, բումբ, լին, նող, ձոր, ջուր, սար, փոր** (հմմտ. նաև ոչ հնդեվրոպական **ագարակ, աշխարհ, աւան, գիւղ** (?), **ծով** (?), **նովիտ, քաղաք** բառերը)՝ **Գայլ գետ, Գետք աւան** և այլն։

Յուրատեսակ միջին դիրք են գրավում առաջին և երկրորդ կաղապարների միջև **Նոր գիւղ, Նոր քաղաք** տիպի կազմությունները, որոնց բուն անվանական արժեք ունեցողը առաջին բաղադրիչն է։

Երրորդ կաղապարը ամենատարածվածն է. իբրև հատկացուցիչ կարող են հանդես գալ գոյականի ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի սեռականի ձևերը՝ և՛ առաջադաս, և՛ ետադաս գործածությամբ. որպես հատկացյալ ծառայում են գերազանցապես տեղանվանական այն տերմինները, որոնք թվարկվեցին երկրորդ կաղապարի կապակցությամբ. **Ագռաւուց քար** (**Ագռաւաքար**), **Աղաւնոյ գետ, Առնոյ ոտն** (**Ոտն Առնոյ**), **Առուենից ձոր, Արեւու բլուր, Ար-**

տոց գետ, Արքայից գաւառ, Աւետեաց բլուր, Աւետեաց խաչ, Գինոյ բլուր, Դարբնաց քար (Դարբնաքար), Դից մայրի, Կամրջաց ձոր (Կամրջաձոր), Հաւուց թառ, Զորոց գետ, Մայրոց գոմ, Մանկան գոմ, Տուարածոյ տափ (Տուարածատափ), Ցախաց քար, Ցլու գլուխ և այլն. ինչպես տեսնում ենք, այս կաղապարի իրացումների մեջ առկա են նաև փոխաբերական իմաստով կապակցություններ՝ Ցլու գլուխ, այլև Եղջիւր խոյի և այլն։ Այս կաղապարին են պատկանում նաև այն տեղանունները, որոնց մեջ հատկացյալը անձնանուն է՝ Բակուրի վանք, Քարն Բաղակայ, Որբոքոյ[2] քար, Սմբատայ բերդ և այլն։

Յուրատեսակ միջին դիրք են գրավում երկրորդ և երրորդ կաղապարների միջև այն բաղադրյալ տեղանունները, որոնց մեջ հատկացուցիչը փոխարինված է համապատասխան հարաբերական ածականով՝ Գինական գետ (հմմտ. Գինոյ բլուր), Իննակնեան տեղիք, Ուռական գետ և այլն։

Որպես խիստ հազվադեպ՝ չորրորդ կաղապար կարելի է առանձնացնել այն դեպքը, երբ տեղանունը նախադասության արժեք ունի՝ Ընծայեաց Աստուածածինն. համատիպ կազմություն ունի բարդության արժեք ստացած Էջմիածին տեղանունը։

Բարդ տեղանունները ներկայացված են երկու հիմնական տիպով՝ առանց -ա- հոդակապի և -ա- հոդակապով։

Առանց -ա- հոդակապի բարդությունները մասամբ արդեն քննված բաղադրյալ տեղանունների՝ միասնաբար ըմբռնվող ու գրվող տարատեսակներն են, որոնք բնորոշվում են նրանց հատուկ կաղապարներով, մասամբ իսկական բարդություններ, որոնք ունեն բարդությունների համար բնորոշ՝ բաղադրիչ հիմքերին հավելվող իմաստներ (հատկապես ուղղականաձև առաջին բաղադրիչի՝ սեռականի իմաստ, ամբողջ բաղադրության համար՝ «ունեցող» հավելյալ իմաստ և այլն). հմմտ. Աղաղբիւր, Աղբերականք, Աղոջրիկ (Աղւոյ ջրիկ), Անգեղտուն, Գայլաձոր (Գայլեձոր, Գլաձոր), Երկայնորդք, Ծիծռանքար, Հոնընկեց (Հոն-՝ հոների անունի՞ց), Որդանձայր և Այծպտկունք, Արագածոտն, Արծաթաղբերք, Գետեզր, Լուսակունք, Ծաղկոտն և այլն։

-ա- հոդակապով բարդությունները, ինչպես նշվել է, տարածվել են հնդեվրոպական ձայնավորների՝ չեշտահաջորդ դիրքերում թուլանալու և ընկնելու հետ կապված, այսինքն՝ բուն նախագրաբարյան փուլում։ Այսպիսով, օրինակ, սկզբնական *meg´a-ից ծագող մե՛ծա- հիմքը պահպանվել է երկու ձևով՝ չեշտահաջորդ դիրքում՝ մեծ ձևով՝ մե՛ծա->մեծ, չեշտանախորդ դիրքում՝ մեծա- ձևով՝ Մեծագետ, Մեծա-մաւր՝ Մաւր(ն) մեծ, սեռ. Մաւրի(ն) մեծի ձևերի կողքին։ Արխաիկ կազմության տեղանունների մեջ մենք ունենք նաև հիմքային այլ ձայնավորների պահպանման օրինակներ, ընդ որում այդ ձայնավորները դժվար է տարբերակել սեռականի համապատասխան կազմիչներից։ Հիմքային ձայնավորների անկումից հետո բարդությունների մեջ պահպանված ա ձայնավորը, ընկալվելով որպես սեռականի կազմիչից տարբեր տարր (հնդեվրոպական ա-ով հիմքերը եզակի սեռական-տրականում ստանում են ի հոլովիչը՝ փոխանակ սպասված ա-ի. հմմտ. մեծ, սեռ. մեծի, հգն. սեռ. մեծաց, մինչդեռ գայլ, սեռ. գայլոյ, հգն. սեռ. գայլոց)՝ տարածվել է նաև նախապես այլ հիմքերով առաջին բաղադրիչներ ունեցող բարդությունների վրա. այս պրոցեսի մասին են վկայում տատանվող ձևերը՝ Զորոփոր (Զորոյ փոր՝ հին -ո- հիմքակազմիչով) և Զորափոր (ավելի նոր՝ համաբանությամբ տարածված -ա- հոդակապով). ձայնորդահանգ հիմքերի դեպքում հնարավոր է երեք տարբերակ՝ Անգեղտուն (Անգղ-ը կարող է լինել հին հիմքի ձև կամ ավելի նոր՝ սեռականի հոլովաձև), Աստեղաբլուր (հին հիմքի ձևի և համաբանությամբ տարածված -ա- հոդակապի զուգորդում) և Աստղաբլուր (ավելի նոր կազմություն՝ ուղղականաձև հիմքից՝ սովորական -ա- հոդակապով)։ Բերենք ա հոդակապով բարդության օրինակներ՝ Արծուաբեր, Բոլորաքար, Գայլակալ, Գայլատուն (բայց հմմտ. Գայլաձոր, Գլաձոր), Գեղարդաձոր, Գեղարդասար, Գիշերաձոր, Գոմաձոր, Եզնանիստ, Երիցաթումբ, Կամրջաձոր, Նորատուս, Ջերմաձոր և այլն։

Բուն հայկական ծագման տեղանունների մեջ ածանցավոր կազմությունները բաղադրյալ և բարդ տեղանունների համեմատությամբ ավելի փոքր տեղ են գրավում։ Մասնավորապես քիչ են բուն հայկական հիմքերով և հայկական ածանցներով կազմությունները։

Խիստ սակավաթիվ են նախածանցավոր կազմությունները. վկայված համեմատաբար հին տեղանունների մեջ կարելի է նշել, այն էլ պայմանականորեն, բուն հայկական հիմքով և ածանցով՝ Առբերան(ի)-ն, որ փաստորեն նախդրավոր կապակցության (առ բերան(ի)) միասնացումն է որպես տեղանուն և ոչ թե բուն նախածանցավոր կազմություն. Հ. Հյուբշմանը նույն Առբերան-ը համարում է հուն. Περιστόμιον բառից կաղապարված, որ անհավանական է. հիմքի համար հմմտ. Բերան (վայր Գեղարքունիքում) և Տուրուբերան (նահանգ)։ Ամբերդ (Անբերդ) անվան մեջ հիմքը սեմական է, իսկ Ամ-ի համար կարելի է անել երկու ենթադրություն. այն կամ բուն հայկական ծագում ունի՝ *sm̥- «համա-, միա-, միասին», կամ ծագում է պարթևական համապատասխան am-/an- նախածանցից։

Սակավաթիվ են նաև այն վերջածանցավոր կազմությունները, որոնք պարունակում են բուն հայկական (հնդեվրոպական) ծագման հիմքեր և ածանցներ։

Հնդեվրոպական ծագման ածանցներից առաջին հերթին պետք է հիշել -ի-ն (*-i̯o-, *-i̯ā), որ ընկալվում է նաև որպես համապատասխան սեռականի կազմիչ (վերջինս, թերևս, ծագում է այս ածանցից) և հանդիպում է ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի ձևով՝ 1) Արծաքի, Երերի, Երկայնարտի, այլև անծանոթ ծագման առաջին բաղադրիչով՝ Ըշտկամայրի, Թաղամայրի, 2) Ականիք (հմմտ. Ականք), Հացիք, Նորիք, այլև Փլարիք։

Հավանական է, ինչպես նշվել է վաղնջահայերենի քննության կապակցությամբ, -ուտ տեղանվանական կազմիչի հնդեվրոպական ծագումը *-ōd-ից (հմմտ. հուն. -ώδης՝ λυσσώδης «կատաղի», νοσώδης «հիվանդոտ»)՝ Թեղուտ, Կաղնուտ, այլև Ընկուզուտ և այլն։ -ուտ-ի հետ թերևս կապված է նաև -ոտ-ը (*-od-?)՝ Կաշկառոտ։

Հազվադեպ, երբեմն եզակի գործածությամբ հանդիպում են նաև այլ վերջածանցներ՝ -ար (*-əro-? հմմտ. Երեւարք, եթե վերջինս կապ ունի երեւալ բայի և ոչ թե երիւար «լավ ձի» գոյականի հետ), -եալ (*-lo-. հմմտ. Երեւեալ)[3], -ոց (*-o-sk-. հմմտ. Մոխրոց) և այլն։

---

[2] Հին անձնանուն որբ բառի՞ց։

[3] Եթե Երեւեալ և Երեւար տեղանունները ծագում են երեւ- արմատից (հ.-ե. *prep-), ապա հնարավոր է ենթադրել Երեւան անվան մեջ ուրարտ. Erebuni-ի հետագա ձևափոխություն այդ արմատի ազդեցությամբ (ժողովրդական ստուգաբանություն)։

Տեղանվանակազմական արժեք ունի հոգնակիի **-ք** վերջավորությունը (հ.-ե. *-es), որ կարող է հանդես գալ ինչպես առանձին, այնպես էլ այլ կազմիչների հետ միասին՝ գերազանցապես հավաքական արժեքով։ Սրանց մեջ հատկապես պետք է նշել այն դեպքերը, երբ անցում է կատարվում ժողովրդանունից կամ ցեղանունից դեպի տեղանունը՝ **Հայք** «հայեր»>«Հայաստան», այսպես էլ **Անձաւացիք** (**Անձևացիք**), **Արեղեանք**, **Բզնունիք**, **Խոռխոռունիք** և այլն. **-ունի-ք**-ով ձևերը ամենայն հավանականությամբ գալիս են ուրարտերենից։ Հոգնակիաձև (**-ք** պարունակող) այլ տեղանուններից, բացի հիշատակված **Ակաճիք**, **Հացիք** ձևերից, հիշենք **Գուճկանք** (**գուճիկ** եզ. ձևից), **Գոմք**, **Գալարինք**, **Դռունք**, **Եղբարք**, **Երևարք**, **Թեղկենիք**, **Ցռանք**, այլև **Կատակք**, **Կոռանք** և այլն։ Տեղանունների մեջ բավական շատ են **-անք**-ով ձևերը՝ **Կոռանք**, **Ցռանք** և այլն. Ջ. Գրեպինը [**Greppin**, *1976, 61*] հայ. **-անք** ածանցը (**գողանք**, **կրանք** և այլն) բխեցնում է հ.-ե. *-tenos-ից (հմմտ. հ. հնդկ. -tana-, լատ. -tinos) *-tnos ձևից, որ, ճիշտ լինելու դեպքում, կարող է հիմք տալ նաև տեղանունների մեկնաբանության համար։ **-ք**-ով տեղանունների տարբերակներն են իբրև հայցականաձև ըմբռնվող **-ս**-ով ձևերը (հմմտ. **Բլուրս**, այլև **Ժողովս**), որոնք երբեմն կարող են հանդիպել և՛ **ք**-ով և՛ **-ս**-ով. սրանք չպետք է շփոթել վրացական սեռականից (-isi) ծագող և հայերենում համապատասխանաբար **-իս** ձևով հանդես եկող տեղանունների հետ։ **-իս**-ով ձևերից **Ագուլիս** (հին **Արգուլիս**), **Թմնիս** ձևերի հիմքերի ծագումը հայտնի չէ (ժողովրդական ստուգաբանություն է **Ագուլիս**-ի՝ **այգի+լի** ստուգաբանությունը). անհնար չէ այս անունների հնդեվրոպական ծագումը՝ **Արգուլիս**< *arkeu-lijo- (*arku- արմատը հիմք է տվել բուսանունների համար՝ ռուս. ракита «ուռենու տեսակ», հուն. ἄρκευθος, լատվ. ērcis «գիհի») և **Թմնիս** <*temenijos (հ.-ե. *tem(ə)- «մթին», որտեղից մ. իռլ. temen, ռուս. темный)։

Բավական տարածված են իրանական և անհայտ ծագման որոշ ածանցներ, որոնք երբեմն հանդիպում են հնդեվրոպական հիմքերի հետ միասին։ Դրանցից առաջին հերթին հիշատակելի են փոքրացուցիչ **-ակ**, **-իկ**, **-ուկ** ածանցներով կազմությունները, որոնք զուգահեռներ ունեն անձնանունների համապատասխան փոքրացուցիչ-փաղաքշական ձևերի մեջ՝ **Անդակ** (?), **Բրլրակ**, **Երնջակ** (ըստ Օրբելյանի՝ կապված **Երնջիկ** կնոջ անվան հետ), **Թեղեակ**, **Զորակ**, **Գետիկ**, **Մկնիկ**, **Ջերմուկ**, այլև **Բերդիկ**, **Գեւղիկ** (հմմտ. **Գեւղ**), **Բռաստիկ**, **Բզնիկ**, **Դրախտիկ**, **Հայելեակ**, **Նախաջաւանիկ** (հմմտ. **Նախճաւան՝ Նախջաւան**)։

Այժմ լայն տարածված **-ական** ածանցը (<պարթ. -(a)kān) բնիկ հայկական հիմքերի հետ խիստ հազվադեպ է հանդիպում՝ **Գինական գետ**, **Ոստական գետ** և **Ողական**, **Ունեկան**. այլ հիմքերով կազմություններից հմմտ. **Ամրական**, **Բաղասական**, **Բիւրական**, **Կովսական**, **Փառականք** և այլն։ Այսպես նաև **-եան**-ը (հմմտ. իրան. -ijān՝ ուրարտ. -iani-ի կողքին)՝ **Արտաշիսեան**, **Արտաւանեան**, **Գաբեղեանք**, **Գազրիկեան**, **Հանդիսեանք** և այլն։

Հայկական **-աւոր**-ը (հ.-ե. *-ā-bhor-՝ *bher- «բերել» արմատից) հանդիպում է ոչ բնիկ հիմքերի հետ, որ ենթադրել է տալիս պարթ. -vār վերջածանցի հետագա ձևափոխություն՝ բաղարկությամբ (հմմտ. dat(a)vār >**դատաւոր**)՝ **Երազգաւորք**, **Երաշխաւոր** և այլն։

Այժմ նույնպես լայն տարածված՝ երկրանուններ կազմող **-(ա)ստան** ածանցը, որ իրանական ծագում ունի, նախագրային շրջանում լայն տարածում չի ունեցել և բնիկ հայերեն հիմքերի վրա գրեթե չի դրվել. այսպես, **Հայք** անունը ակնհայտորեն ավելի հին է, քան **Հայաստանը**։ **Գողթն**-ից ավելի ուշ կազմված է **Գողթնաստան**։

Թեև **-եստ**-ը հնդեվրոպական ծագման ածանց է (*-esti-), բայց **Առեստ**, **Տափեստ** տեղանունների մեջ նրա առկայությունը դժվար է բացատրել։

Նշանակալից թիվ են կազմում հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական ծագման այն տեղանունները, որոնք արմատական հասարակ անունների հատուկ գործածություններ են՝ առնված ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի ձևով։ Թվարկենք տեղանունների համար հիմք ծառայած հնդեվրոպական ծագման բառերը։ Սրանց մեջ ամենաստվար խումբը կազմում են աշխարհագրական օբյեկտների՝ բնակավայրերի, ֆիզիկական աշխարհի առարկաների, տվյալ վայրին բնորոշ, այդ վայրում աչքի ընկնող իրերի, շինությունների անվանումները՝ **Ածուղ** «ածուխ» (<*անծող. հմմտ. հ.-ե. *ang-?), **Ակունք**, **Աղտք**, **Այրք**, **Բերան** (փոխաբերաբար՝ «գետաբերան»), **Բլուր**, **Բլուրս**, **Գոմք**, **Դռունք**, **Լին**, **Խաչ**, **Կամուրջ** (բրբռ. **Կարմունջ**), **Կից** «կցման տեղ» (հ.-ե.?), **Հորք**, **Ձոր**, **Ձորք**, **Որբք**, **Ջուր** և այլն։ Երկրորդ խումբը կազմում են կենդանիների անունները՝ տրված կամ նմանությամբ, կամ դրանց առատության հիման վրա և այլն՝ **Առեւծ**, **Արծիւ** (**Արծուիք**), **Արջք**, **Գայլ**, **Լոր**, **Ծիծառն** և այլն. ավելի բնորոշ է այդպիսի անունների՝ բարդությունների կազմում հանդես գալը, դրանց հատկացուցչային և բացահայտիչային գործածությունը՝ **Արծուաբեր** (<**Արծուաբերդ**?), **Արջաձոր** (**Արջոց ձոր**), **Գայլակալ** և այլն։ Երրորդ խումբը կազմում են անձերի հատուկ և հասարակ անունները՝ սովորաբար բնակավայրի հիմնադիրների կամ որևէ բանով այն հայտնի դարձնողների՝ **Եղբարք**, **Երէց** և այլն։ Կան նաև այլ հատկանիշներով տրված անուններ՝ **Աշունք**, **Զարդ** և այլն. հնարավոր է նաև օբյեկտը բնորոշող ածականների գործածությունը տվյալ օբյեկտը նշանակող անվան հետ միասին կամ առանց դրա՝ **Դեղձան գետ** (հմմտ. նաև **Կապոյտ**, **Կապոյտք**, **Կարմիր** և այլն)։

Բ. ԵԿԱՄՈՒՏ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ. ՇՓՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԽՈՒՌԱ-ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

ա) ԽՈՒՌԱ-ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԸՆՏԱՆԻՔԸ

Լեզվաբանության մեջ այժմ տարածված է այն կարծիքը, որ խուռերենը և ուրարտերենը կազմում են մեկ լեզվաընտանիք [հմմտ. հատկապես **ДЬЯКОНОВ**, 1960, 369—423, **Diakonoff**, 1971]։ Հնարավոր է, որ այդ ընտանիքը հնում ավելի բազմանդամ է եղել, բայց նրան պատկանող այլ լեզուների մասին մենք առայժմ շատ բան չգիտենք։ Օ. Մասոնը հակված է խուռական բարբառ համարելու Կիպրոսում հայտնագործված և մ. թ. ա. II հազարամյակի 2-րդ կեսին պատկանող կիպրամինոյական այն արձանագրությունների լեզուն, որոնց գիրը ծագում է կրետե-մինոյական գծային վանկագրից [**Masson**, *1972, 159—163*]։ Կարծիք է հայտնվել նաև մ. թ. ա. VIII—II դդ. կիպրական վանկագիր արձանագրությունների՝ հունարենով չմեկնվող մասի լեզվի՝ էտեոկիպրերենի, խուռերենին և ուրարտերենին ցեղակից լինելու մասին [**Джаукян**, 1976, 155—163]:

Խուռա-ուրարտական լեզուները առաջավոր Ասիայի հին և ամենատարածված լեզուներից են։ Մ. թ. ա. III—I հազարամյակներում նրանք խոսվել են Հայկական բարձրավանդակի հարավային շրջաններում և հարևան վայրերում։ Խուռական բնակչությունը տարածված է եղել մասնավորապես հյուսիսային Միջագետքում, հյուսիսային Սիրիայում, Փոքր Ասիայի հարավարևելյան և արևելյան շրջաններում։ Ուրարտացիները բնակվել են խուռիներից ավելի հյուսիս ընկած շրջաններում, մասնավորապես Վանա լճի հարավարևելյան շրջանում, որտեղից նրանք հետո տարածվել են դեպի հյուսիս և արևելք։

Խուռերենը ներկայացված է մ. թ. ա. III հազարամյակի երկրորդ կեսից մինչև XII դ. ժամանակահատվածին, ուրարտերենը՝ մ. թ. ա. IX—VI դդ. պատկանող սեպագիր արձանագրություններով. սակայն ուրարտացիները աստրական աղբյուրներում հիշատակվում են ուրարտերենի գրավոր ավանդման ժամանակաշրջանից շատ ավելի վաղ՝ մ. թ. ա. XIII դարից։

Խուռերենի և ուրարտերենի հետազոտողները այդ լեզուների միջև նշել են քերականական և բառային նշանակալի թվով զուգադիպումներ, որոնք մասամբ ընդհանուր են նաև էտեոկիպրերենի համար, որքանով այդ հնարավոր է պարզել։ Բառային զուգադիպումների քանակը մի քանի տասնյակի է հասնում՝ ընդգրկելով ինչպես անուններն ու բայերը, այնպես էլ ուրիշ խոսքի մասեր. 1) գոյական անուններ՝ խուռ. umini—ուրարտ. ebani «երկիր» (էտեոկիպր. umie), խուռ. ḫari—ուրարտ. ḫare «ճանապարհ», խուռ. pala—ուրարտ. pili «ջրանցք», խուռ. šala—ուրարտ. sila «դուստր», խուռ. šaṷala—ուրարտ. šali «տարի», խուռ. taše—ուրարտ. taše «նվեր» (էտեոկիպր. taši?), խուռ. tini—ուրարտ. tini «անուն» և այլն 2) դերանուններ՝ խուռ. išaš—ուրարտ. ieše «ես», խուռ. ma/e—ուրարտ. mani «նրան», խուռ. uli—ուրարտ. uli(e) «ուրիշ», խուռ. aṷenne/a—ուրարտ. aini(ei) «ինչ-որ մեկը», խուռ. šue(ne)—ուրարտ. šuini «բոլոր, ամբողջ» և այլն. 3) բայեր՝ խուռ. ak-—ուրարտ. ag- «տանել, անցկացնել», խուռ. ar-—ուրարտ. ar- «տալ», խուռ. haš-—ուրարտ. haš- «լսել», խուռ. man(n)-—ուրարտ. man- «լինել, գոյություն ունենալ», խուռ. tan- «անել»—ուրարտ. tan- «անել, շինել» և այլն. 4) մակբայներ և սպասարկու բառեր՝ խուռ. aṷeš—ուրարտ. aše «երբ», խուռ. ad/ti/e- -ուրարտ. edini «համար», խուռ. uja—ուրարտ. ui/e «ոչ, չ-» և այլն։

Այս բոլոր համեմատությունների հավանականությունը դրեթե կասկած չի հարուցում, բայց խուռա-ուրարտական ցեղակցության հարցը լուծելիս հարկավոր է նկատի ունենալ հետևյալ խանգարիչ հանգամանքները. 1) խուռերենը և ուրարտերենը ունեն կառուցվածքային նշանակալից տարբերություններ, և նրանց քերականական ձևերի հանգեցումը միևնույն աղբյուրներին ոչ միշտ է հավաստի, մանավանդ որ համապատասխան զուգահեռներ կան և այլ լեզուների հետ. 2) խուռերենի և ուրարտերենի՝ այժմ հայտնի թվականների մեջ չկան համոզիչ զուգադրումներ. 3) պարզ չէ, թե բառային համեմատություններից որի՛ դեպքում մենք գործ ունենք ցեղակցային կապի վկայության և որի՛ դեպքում՝ փոխառության հետ. շատ պետք է լինեն հատկապես ուրարտերենի՝ խուռերենից, և երկու լեզուների՝ ակկադերենից կատարած փոխառությունները։

Զանազան կարծիքներ են հայտնվել խուռա-ուրարտական և այլ լեզվաընտանիքների փոխհարաբերության վերաբերյալ։ Եթե մի կողմ թողնենք ուրարտերենը անմիջականորեն հայերենի հիմքը համարելու (Հ. Սանդալչյան, Ա. Սաֆրաստյան և ուրիշներ) [**Sandalgian**, 1900. **Safrastian**, 1935], այլև «ասիանական վարկածի» սահմաններում դրանք հայերենի հետ մերձավոր ցեղակցությամբ կապելու (Գ. Ղափանցյան) անհաջող փորձերը, ապա հարկ կլինի կանգ առնել հետաքրքրություն ներկայացնող երկու այլ տեսակետի վրա։

1954 թ. Ի. Բրաունը և Գ. Ա. Կլիմովը [**Браун—Климов**, 1954] հանդես են գալիս ուրարտա-նախյան (ուրարտա-վեյնախյան) ցեղակցության գաղափարով, որ հետագայում փորձում է հիմնավորել է Յ. Դ. Դեշերիևը [**Дешериев**, 1963]: 1967 թ. մենք, ի թիվս խուռա-ուրարտական, հնդեվրոպական, քարթվելական և արևմտակովկասյան ընդհանրությունների, քննել ենք նաև խուռա-ուրարտական և արևելակովկասյան (նախյան-դաղստանյան) ընդհանրությունները՝ հանգելով դրանց միջև քիչ թե շատ մերձավոր կապերի բացակայության գաղափարին [**Джаукян**, 1967a, 171] Սակայն որոշ ժամանակ անց Ի. Մ. Դյակոնովը [**Дьяконов**, 1978, 25—38] վերարծարծում է խուռա-ուրարտական և նախյան-դաղստանյան լեզուների ցեղակցության գաղափարը՝ բերելով նոր փաստեր և հենվելով վերջիններիս նախաձևերի վրա. նա նշում է ձևաբանական որոշ կազմիչներ և 52 բառային ընդհանրություն, որ նրա կարծիքով շուրջ չորս հարյուր խուռական և երկուսուկես հարյուր ուրարտական ճշգրտված իմաստով բառերի առկայության պայմաններում մեծ թիվ է կազմում։ Սակայն բերված նյութի անկողմնակալ քննությունը ցույց է տալիս, որ այն ակնհայտորեն անբավարար է արևելակովկասյան և խուռա-ուրարտական լեզուների մերձավոր ցեղակցության (մեկ լեզվաընտանիքի պատկանելու) հարցը լուծելու համար։

1) Ինքը Դյակոնովը կասկածելի է համարում խուռ., ուրարտ. ar- «տալ» և նախ.-aδλ-, ուրարտ. gazuli «լավ, գեղեցիկ» և նախ. γaz-, խուռ. kē, ուրարտ. gē «(ինչ-որ) տարողություն» և ինգուշ. բցբ. gī «տաշտ», խուռ. kiši (kizi) «երեսուն» (ki «երեք» և ši «տասնյակ», թեև «տաս»՝ խուռ. eman) և դաղ. *c’V, խուռ. niši (nīzi) և դաղ. χV-nč’- զուգահեռները.

2) Չի կարելի մերձավոր ցեղակցության ապացույց համարել ակնհայտորեն փոխառյալ բնույթի հետևյալ բառերը. ուրարտ. arṣibi «արծիվ» և չեչ., ինգուշ. b-arǯu, բացբ. arc’iv, լակ. b-arzu (arǯiw. հմմտ. հայ. arcui, arciw «արծիվ» < հ.-ե. *r̥g´ipi̯o-)[1]. խուռ. marianne «կառավար, երիտասարդ մարտիկ. ազնվական», ուրարտ. mari «բարձր պաշտոնյա, նշանավոր մարդ» և նախ. mayr (mari) «տղամարդ, այր. արի, քաջ»[2]. խուռ. ušḫu «արծաթ» և ավար. ‘arac, անդ. orsi, դարգ. arc, լակ. arcu, թաբաս., ագուլ. ars (վերա-

---

[1] Նախ.-դաղ. բառերը, ամենայն հավանականությամբ և ուրարտերեն բառը ծագում են հայերենից (ուրարտերենում՝ հայկական հին ցեղերի լեզվից). սա միակ լեզուն է, որտեղ հ.-ե. *g´-ն տալիս է ծ (ուրարտ. ṣ, բացբ. c´). Ճիշտ չէ նախ.-դաղ., ուրարտ. և քարթվել. բառերը բխեցնել իրանական աղբյուրից, որտեղ հ.-ե. *g´>z կամ d։

[2] Խուռերեն և ուրարտերեն բառերը ծագում են առաջավոր Ասիայի հնդկական հին ցեղերի լեզվից. հմմտ. հ. հնդկ. marya- «մարդ, երիտասարդ մարդ»<հ.-ե. *meri̯o-, որի *mr̥i̯o- տարբերակից թերևս ծագում է հայ. մարի «էգ թռչուն» բառը։ Եթե նախյան բառերը սրանց հետ կապ ունեն, ապա փոխառություն են։

կանգնվում են (ḫ?)warcʷ-, *(w)arcḫʷ- արմատաձևերը)[3]. Հետաքրքրական է նշել, որ Ի. Մ. Դյակոնովը խուռ. ḫabalgi-ն («երկաթ») փոխառություն է համարում խեթ. ḫabalki-ից, սա էլ՝ արևելակովկասյան աղբյուրից, բայց զուգահեռն այնուամենայնիվ գնում է ցեղակցական կապերն ապացուցող միավորների թվում:

3) Իմաստային և հնչյունական տեսակետից կասկածելի պետք է համարել նաև հետևյալ (հաճախ խուռ. և ուրարտ. բառերին իր իսկ Դյակոնովի վերագրած կասկածելի իմաստներով) զուգահեռները. ուրարտ. aṭ- «սկսվել (?)» և լեզգ. at' «գալ» (*at'-), ուրարտ. erṣid- «բնակեցնել» (և «վերադարձնել»?) և նախ. *erč̣- «վերադարձնել»[4], խուռ., ուրարտ. ḫari- «ճանապարհ» և բեժթ. hino, ցեզ., խվարշ., ղունզ. huni, դարգ. hune, լակ. ḫḫullu (*hʷa+n/l), խուռ. itt- «գնալ» և նախ. *idd- «վազել»[5], խուռ. kerae «երկար, տևական» և ավար. ḫeraw, ախվախ. wa-qḫar-oλda, բագուլ. wa-hə-ruw, դարգ. bu-qḫnaw, լակ. qḫunaw «հին» (*qḫV+ ձայնորդ), խուռ. muši (mūzi) «վեհ(?)» (աստվածների մակդիր) և նախ. butt, ավար. mocc', ախվախ., կարատ., չամալ. bo(r)cc'o, բագուլ. bocc'w և այլն (*mʷa(r)č̣-) «լուսին», ուրարտ. šuri «զենք» (հգն. «զինված ցեղ(?)»՝ կամայական մեկնություն)[6] և նախ. sur «զորք», ուրարտ. ṣi- «հոսել(?)» կամ «տեղալ(?)», ṣue «ծով, լիճ» (նաև «ջուր»?) և դարգ. bi-c'es, լակ. da-r-c'-an, արչ. ba-c'-as, լեզգ. c'-(ur-)-un (*c'w- «հալչել»)[7], խուռ. te-ae, ուրարտ. ṭe-ae «շատ» և խինալ. t'e «մեծ», ուրարտ. teq- «խոնարհվել» և նախ. teq- «սողալ» և այլն:

4) Խիստ սակավաթիվ են այն համեմատությունները, որոնք ընդգրկում են միաժամանակ խուռերենն ու ուրարտերենը և նախյան ու դաղստանյան լեզուները. սովորաբար համեմատվում են այդ զույգերի միայն մեկական եզրերը:

5) Ապացուցողական արժեքից զուրկ են մշակութային արժեք ունեցող և լեզվից լեզու անցնող (հաճախ Առաջավոր Ասիայում լայն տարածում ունեցող) բառերը, որոնք մասամբ բերվեցին՝ խուռ. ḫabalgi- «երկաթ, պողպատ» և նախ.-դաղ. *ba-lḳi-l/n, խուռ. ḫinzureǯe և նախ.-դաղ. *ʼinč- (հմմտ. հայ. **խնձոր**, ասոր. xazzūrā, արաբ. xazzūr), խուռ. puruli «տուն» և դաղ. bV-ttλ'- (եթե b-ն դասանիշ չէ), ուրարտ. šuri «զենք» (հմմտ. հայ. **սուր**) և նախ. *sur «զորք», խուռ. ašḫu «արծաթ» և դաղ. *(ḫ?)warcʷ-, *(w)arcḫʷ- (հմմտ. հայ. **արծաթ**):

---

[3] Դաղստանյան (և նրանց նման քարթվելական) ձևերը ակնհայտորեն ծագում են հ.-ե. աղբյուրից. ինչը Դյակոնովը գրում է. «Չի՞ կարելի արդյոք կապ տեսնել հ.-ե. *r̥g´-ի հետ, հմմտ. հայ. **արծաթ**, հուն. ἄργυρος, փռյուգ. arz, լատ. argentum» [**Дьяконов**, 1978, 34, ծան. 23]:

[4] Անհնար չէ կարծել, որ ուրարտ. erṣi- հիմքը ծագում է սեմական (աքքադ.) աղբյուրից (հմմտ. աքքադ. 'rṣ (erṣetu, irṣitu) «հող, երկիր, շրջան, հովիտ»), և այս դեպքում «վերադարձնել» իմաստ ենթադրելը կամայական է:

[5] Մինչդեռ մեր կողմից կատարված խուռ. itt- «գնալ» և հ.-ե. *i-t-, *i-dh- «գնալ» համեմատությունը ավելի հավանական է:

[6] Անհավանական չէ այս դեպքում էլ ուրարտ. բառը դիտել որպես փոխառություն հին հայկական ցեղերի լեզվից՝ հ.-ե. *k'oro- > հայ. *suro-(> **սուր**) > ուրարտ. šuri (šurə).

[7] Հայ. **ծով**-ը համարվում է ենթաշերտային (ուրարտական) բառ: Եթե հայ. բառը ծագում է հ.-ե. աղբյուրից (հմմտ. իռլ. go «ծով»՝ ըստ Stokes-ի, IF, 12, 191), ապա պետք է անել հակառակ ենթադրությունը:

6) Ինչպես կտեսնենք, խուռա-ուրարտական մի շարք բառեր նույն հաջողությամբ, երբեմն էլ ավելի մեծ հավաստիությամբ կարելի է համեմատել հնդեվրոպական և նոստրատիկ այլ լեզվաընտանիքների համապատասխան բառերի ու արմատների հետ: Եթե բացառենք փոխադարձ շփումների ու ենթաշերտային ազդեցության հետևանքով ծագած բառերն ու փոխառությունները, ապա մնացած զուգադիպումները լավագույն դեպքում կարող են դիտվել հեռավոր և ոչ մերձավոր ցեղակցության, թերևս նոստրատիկ ժառանգության արդյունք. այս դեպքում էլ պիտի ապացուցվի արևելակովկասյան լեզուների նոստրատիկ ծագումը[8]:

7) Գերազանցապես նոստրատիկ զուգահեռներ ունեն նաև այն քերականական կազմիչները, որոնք Դյակոնովը բերում է որպես խուռա-ուրարտական և նախյան-դաղստանյան լեզուների մերձավոր ցեղակցության ապացույց (հմմտ. էրգատիվ, բացառ.-գործ., ուղղորդական հոլովների, հոգնակիի, ածականի կազմիչները և այլն):

8) Խիստ մեծ են խուռա-ուրարտական և նախյան-դաղստանյան լեզուների կառուցվածքային-տիպաբանական տարբերությունները. մասնավորապես պետք է նշել դասի քերականական կարգի և նախամասնիկավորման բացակայությունը խուռերենում և ուրարտերենում՝ արևելակովկասյան լեզուների համար նրանց բնորոշ լինելու պայմաններում: Ինչպես նշում է նաև Դյակոնովը, միանգամայն տարբեր են բայական կառուցվածքները:

Երկրորդ տեսակետը պատկանում է մեզ [**Джаукян**, 1963]. առաջ քաշելով հնդեվրոպական ու խուռա-ուրարտական լեզուների ցեղակցության գաղափարը՝ մենք հետագայում հատուկ աշխատություն ենք նվիրել խուռա-ուրարտական լեզուների՝ նոստրատիկ ընդհանրությանը պատկանելու հարցին [**Джаукян**, 1967б]: Նոստրատիկ լեզվաբանության գաղափարի առաջ քաշողը՝ Հ. Պեդերսենը, իր ժամանակին նկատել է խուռա-ուրարտական էրգատիվի -še և հնդեվրոպական ուղղական (հին «ակտիվ») հոլովի *-se/o վերջավորությունների համընկնումը: Հետագայում հետազոտողները նշում են նաև այլ զուգադիպումներ՝ առանց դրանց իրական բնույթը ճշգրտելու և առանց համակարգային համեմատության: Մենք հանդես ենք եկել համակարգված և հնչյունական որոշակի օրինաչափությունների ենթարկված այնպիսի համեմատություններով, որոնք ընդգրկում են երկու լեզվաընտանիքների քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական բաղադրիչները՝ իրենց քանակով ու հավաստիությամբ մեծ չափով գերազանցելով խուռա-ուրարտական և արևելակովկասյան հավաստի համեմատությունները:

Ահավասիկ մի քանի օրինակ խուռա-ուրարտական և հնդեվրոպական այն զուգահեռներից, որոնք արտացոլում են գտել նաև հայերենում. խուռ., ուրարտ. ag- «տանել», «անցկացնել»—հ.-ե. *ag´- «քշել, տանել» (հայ. **ածեմ**). խուռ., ուրարտ. ar- «տալ»—հ.ե. *ar- «բաժին հանել, հատկացնել. յուրացնել, ստանալ» (հայ. **առնում**). ուրարտ. arniuše «գործ, արարմունք»—հ.-ե. *ar- «հարմարեցնել, կապել, սարքել» (հայ. **առնեմ, արարի**). ուրարտ. at- «ուտել»—հ.-ե. *ed- «ուտել» (հայ. **ուտեմ**). ուրարտ. bauše «խոսք, հրաման»—հ.-ե. *bhā «խոսել, ասել» (հայ. բամ, բան, բառ). ուրարտ. d- «անել»—հ.-ե. *dhē- «դնել, անել» (հայ. դ-ն-եմ, կատ. եդի). խուռ. inu- «ինչպես», anni «այն», -ni (որոշիչ հոդ), ուրարտ. ini «սա», -ni «նրան», -ni (որոշիչ հոդ)—հ.-ե. *e-no- «այն, այս» (հայ. նա, -ն). ուրարտ. kue/i «իսկ, նույնիսկ, նաև»—հ.-ե. *kᵘe «և, նաև» (հայ. -ք՝ ո-ք, ի-ք). խուռ., ուրարտ. man- «լինել, գոյություն ունենալ»—հ.-ե. *men- «մնալ» (հայ. մնամ). ուրարտ. -me «ինձ»—հ.-ե. *me (*eme—1-ին դեմքի անձնական դերանվան թեք հոլովների հիմքը. հայ. իմ, ինձ, ի-ս). ուրարտ. me/i «մի՛»—հ.-ե. *mé «մի՛» (հայ. մի՛). ուրարտ. pari/e «մինչև, դեպի»—հ.-ե. *per(i) «առաջ, այն կողմը» (նաև *peros, *pr̥- *prō և այլն. հայ. առ, հեռի). խուռ., ուրարտ. taše «նվեր»—հ.-ե. *dō- «տալ» (հայ. տամ, տուր-ք). խուռ., ուրարտ. uli «այլ, ուրիշ»—հ.-ե. *al-, *ol- (դերանվանական հիմք, որտեղից *ali̯os>հայ. այլ) և այլն:

---

[8] Հմմտ., օրինակ, Դյակոնովի ցուցակի և Իլլիչ-Սվիտիչի նոստրատիկ բառարանի հետևյալ զուգադիպումները՝ ըստ համարների՝ 3 և 108, 12 և 211, 13 և 116 (216*), 20 և 138, 29 և 323 (326*), 44 և 66 և այլն. հմմտ. նաև մեր՝ հիշատակված աշխատության մեջ բերված օրինակները:

Ինչպես նշվեց, երկու տեսակետները կարելի կլինի համաձայնեցնել, եթե խուռա-ուրարտական և արևելակովկասյան լեզուների ցեղակցության կողմնակիցները մերձավոր ցեղակցության գաղափարից անցնեն հեռավոր ցեղակցության գաղափարին և ապացուցեն արևելակովկասյան լեզուների պատկանելությունը նոստրատիկ ընդհանրությանը[9]:

բ) ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԽՈՒՌԵՐԵՆԸ

Խուռերենը, որ, ինչպես տեսանք, ներկայացված է մինչև մ. թ. ա. XII դ. հասնող գրավոր հուշարձաններով, դրանից հետո էլ մի քանի դար շարունակում է մնալ խոսակցական լեզու: Խուռիների հիմնականում արամեալեզու դառնալու պրոցեսը ավարտվում է հավանաբար մ. թ. ա. I հազարամյակում: Խուռերենը ծաղկում է ապրել և լայնորեն տարածվել հատկապես մ. թ. ա. XVI—XV դդ.՝ Միտանի պետության հզորության ժամանակաշրջանում. ինչպես հայտնի է, Միտանի պետության հիմնական բնակչությունը եղել են խուռիները: Նրանց հետ միասին զգալի դեր է խաղացել նաև հնդկական տարրը, ինչպես երևում է խուռական արձանագրություններում պահպանված հնդկական բառերից, այդ թվում նաև անձնանուններից և դիցանուններից: Միտանիին մ. թ. ա. 1400 թ. մոտերքը խորտակիչ հարված է հասցնում խեթական թագավոր Շուպիլուլիուման: Թեև դրանից հետո միտանական պետությունը որոշ ժամանակ քարշ է տալիս իր գոյությունը, բայց նրա պատմական բախտը արդեն որոշված էր:

Խուռի-ն (Ḫurri) խուռական ցեղերի ինքնանվանումն է, որ հանդիպում է խուռական տեքստերում և անցել է խեթերին, հրեաներին (ḫōrī, աստվածաշնչի հունարեն թարգմանության մեջ՝ χορραῖος), այլև եգիպտացիներին (ḫ'r՝ հավանաբար ḫuru- ձայնավորմամբ): Եթե հայ. խոռ «ժլատ» բառը իրոք կապված է խուռիների անվան հետ (Գ. Ղափանցյան), ապա այն խոսում է,

---

[9] Բացի նշված աշխատություններից, խուռա-ուրարտական լեզուների՝ նոստրատիկ ընդհանրությանը պատկանելու հարցը մենք քննել ենք դեռևս չտպագրված մի հոդվածում՝ հենվելով Իլլիչ-Սվիտիչի նոստրատիկ բառարանի վրա և նշելով մի քանի տասնյակ ընդհանրություն:

հին հրեական ձևի հետ միասին, -o- ձայնավորման օգտին: Ակկադացիներն օգտագործում են Միտանի (Mittani) անվանումը, թեև խուռիների ապրած երկիրը նշանակելու համար ավելի վաղ նրանք գործածել են նաև Շուբարտու (Šubartu, շումեր. Šubir), ավելի ուշ՝ Խանիգալբատ, Խալիգալբատ (Ḫanigalbat, Ḫaligalbat) անվանումները: Կարծիք կա, որ Հերոդոտոսի հիշատակած մատիենները (Ματιηνοί) եղել են խուռիների մնացորդները [**Diakonoff**, 1971, 15]:

Հայերենի՝ խուռերենից կատարված փոխառությունները կարող էին լինել անմիջական, եթե նկատի առնենք խուռալեզու բնակչության հետ հայկական ցեղերի շփման հավանականությունը, և միջնորդված, մասնավորապես ուրարտերենի միջնորդությամբ: Կան դեպքեր էլ, երբ հայերենի՝ խուռերենին մոտ բառի աղբյուրը կարող է լինել ուրարտերենը, եթե այդ բառը հավասարապես պատկանել է երկուսին էլ որպես ցեղակից լեզուների. սրանք էլ փոխառություններ են կատարել ոչ միայն իրարից, այլև միևնույն աղբյուրներից: Եթե մատիենները իրոք խուռական ժողովուրդ են եղել՝ մասամբ կամ լրիվին պահպանած իրենց լեզուն, և եթե պատմական Հայաստանի հարավային մասերում հայերի տարածման ժամանակ բնակվել են խուռալեզու ցեղեր, ապա հնարավոր է ենթադրել նաև խուռական ենթաշերտային ազդեցություն:

Իր «Հայոց լեզվի պատմության» մեջ Հ. Աճառյանը բավարարվում է ընդհանուր դիտողություններով և բերում տեղանուններ ու ցեղանուններից ծագած հասարակ անուններ, որոնք կարող են գալ խուռիներից՝ ուրարտացիների միջնորդությամբ, այլև Հայաստանի այլ ժողովուրդների լեզուներից: Դրանցից ոչ մեկի խուռական կոնկրետ աղբյուրը չի մատնանշվում:

Ավելի հանգամանալից հետազոտություն է կատարել Գ. Ղափանցյանը: Այդ հարցին նա նվիրել է հատուկ հոդված [**Капанцян**, 1951], որի ճըշգրտված տարբերակը հետագայում տեղ է գտել նրա «Հայոց լեզվի պատմության» մեջ [Ղափանցյան, 1961, 104—130]: Առաջինում նա բերում է 23 հասարակ և 16 հատուկ անուն, երկրորդում՝ 20 հասարակ և 14 հատուկ անուն, որոնց աղբյուրը կարող է խուռերենը լինել: Դժբախտաբար, ինչպես այլ դեպքերում, Գ. Ղափանցյանը ելնում է հայերի ու խուռերի «ասիանիկ» ծագման սխալ վարկածից և օգտագործում անհամարժեք ու անհավաստի տըվյալներ: Այսպես, 1) առանց որևէ լուրջ հիմքի նա խուռական բառերի հետ է համեմատում հնդեվրոպական ծագման մի շարք բառեր՝ գեղ, երկար, գինդ, թովել, ճէր (ճեր) «տագերկին», սէր, ընդ որում խուռական բառերի իմաստը, երբեմն էլ հնչյունական ձևը դրա համար բավարար հիմքեր չեն տալիս (gelti «բարեկեցություն, ավետիք», ḫindena «?», kirai «երկար», tiu̯i- «բառ. գործ. բան», Neriu̯ulen—հատուկ անուն (?), šir- «նման լինել, համապատասխանել»). 2) խուռական բառերի համար կամայականորեն ենթադրում է հայերենին մոտ իմաստներ՝ ծառայ—խուռ. šarri «թագավոր» (< ակկադ. šarru), պաղատել—խուռ. pal- (մեկնաբանում է «խնդրել, ուզել», մինչդեռ ենթադրվել է «հարցնել». հետագայում ճշտված է «իմանալ») [**Friedrich**, HW, 1. Ergh., 1957, 36], խաշնգեղ —խուռ. Ḫašuntarḫi (դիցանուն՝ իբր բուսական աշխարհի հետ կապված), շոշոկել «կտրատվել, նազ անել»—խուռ. Šauška (դիցուհու անուն, որ համապատասխանում է Իշտարին). կապակցելի են նաև կանճոխ (կանճուխ) «գավազան, ցուպ, ձող»—խուռ. kanzu-

(ինչ-որ բույս), սուղտ—խուռ. tuldi (ինչ-որ բույս?), ափափայ «դժվարամատույց վայր»—խուռ. papa «լեռ» համեմատությունները. 3) չի ճշտում խուռական բառերի բնիկ, թե փոխառյալ լինելը և տալիս է այնպիսի զուգահեռներ, որոնց դեպքում հայերենի աղբյուրը կարող է լինել նաև այլ լեզվի բառ՝ աստել «ամուսնության համար նշանած ընտրել, աղջիկ տալ» —խուռ. ašti- «կին. կին ամուսին» (ավելի վաղ նշել է, որ խուռերենի աղբյուրն էլ աքքադերենն է), փոխ, փոխեմ—խուռ. puḫ- (puḫizari, puḫugari և puziqarri «փոխ. փոխհատուցում»)[10], շանթ —խուռ. Šantaluggan (որպես դիցանուն հանդիպում է Բողազքյոյի և իբրև անձնանուն՝ Նուզիի տեքստերում. փոքրասիական Šanta դիցանվան և հայ. շանթ-ի հնարավոր կապը վաղուց է նշվել. խուռ. անունը ակնհայտորեն փոքրասիական ծագում ունի. -luggan բաղադրիչն էլ ծագում է խեթ. luk(k)- «լուսանալ» արմատից. հմմտ. lukkai- «վառել»), ուրի-(որդ)—խուռ. ibri (iụri, iruị) «թագավոր» (եթե ուրիորդ-ը իրոք մեկնաբանելի է «տիրորդի», ինչպես կարծում է Ղափանցյանը, ապա նրա ավելի հավանական աղբյուրը համապատասխան ուրարտ. euri «տեր» բառը կարող է լինել): Ինքը Ղափանցյանը «Հայոց լեզվի պատմության» մեջ տեղ չի տալիս ավելի վաղ կատարված մի շարք համեմատությունների, որոնք ակնհայտորեն սխալ են՝ պայիկ «առասպելական էակ»—խուռ. Pai- (հատուկ անունների բաղադրիչ), ծիրանի (իբր թե ոչ ծիրան բառից, այլ «ծիածան» իմաստով համանունից)—խուռ. Tiranna (շումեր. ծագման բառ, որ հանդիպում է խուռ. Ar-tiranna անձնանվան մեջ, ըստ Ղափանցյանի՝ Tiranna —աստվածացված ծիածան), բաղայք «պատրվակ», բաղբաղել «կցկցել՝ սուտ պատճառներ հորինել» —խուռ. pali «կեղծ» (իրականում հայ. բառերը ծագում են բաղ- «կից» արմատից. հմմտ. բաղել «կցել»), պաշար—խուռ. paš(š)- «ուղարկել»:

Գ. Ղափանցյանի համեմատություններից անվերապահորեն ընդունելի կարելի է համարել երկուսը՝ խնձոր—խուռ. ḫinzuri (հավանաբար այստեղից են ասոր. xazzūrā, արաբ. xazzūr «խնձոր», որոնք Հ. Աճառյանը բխեցնում է հայերենից. փոխառյալ են նաև արևելակովկ. «խնձոր» նշանակող բառերը՝ միջնորդված կերպով), խոռ «մլատ» և խուռ. ḫurri (խուռերի ցեղանունը): Փոխ-ը կարող է ծագած լինել ինչպես խուռական, այնպես էլ աքքադական աղբյուրից: Քիչ թե շատ հավանական է աստել բայի բխեցումը խուռ. ašti «կին. կին ամուսին» բառից: Տուղտ-ի աղբյուրը կարող է լինել խուռ. tuldi-ն, եթե Ղափանցյանի տված իմաստային մեկնաբանությունը հաստատվի:

Գ. Ղափանցյանը բերում է նաև հատուկ անուններ, որոնց աղբյուրը կարող է լինել խուռերենը: Սրանցից քիչ թե շատ հավանական են՝ Ակիթ—խուռ. Akitta/i, Արտիթ—խուռ. Arditi (Artiidi, Ardiidi), Բութ—խուռ. Puttu (Puddu, Pata)[11]: Մնացածներից Բագ-ը, Բագուկ-ը, Զիկ-ը ամենայն հավանականությամբ, իրանական ծագում ունեն [առաջին երկուսի մասին տե՛ս Ջահուկյան, 1981, 55, 58]. 2) Զագա, Խուշուշ անունները հանդիպում են ուշ շրջանում և չեն կարող ծագել խուռական աղբյուրից. 3) Դադէ (Դադիու) անվան համար կարելի է նշել խեթա-լուվական, փռյուգական և այլ, Դուդու-ի համար՝ սեմական, փռյուգական, թրակյան զուգահեռներ. ամենից ավելի հավանական է Դադէ-ի ուրարտ. ծագումը՝ Dada(i). 4) Խուբայ (Խուբաս) անձնանունը ամենայն հավանականությամբ ծագում է Խուբ տեղանունից [Աճառյան, ՀԱնԲ, 2, էջ 555]. 5) Հոյ անձնանվան համար, որ հաղորդում է Խորենացին, ավելի հավանական է հայկական ծագում (հմմտ. ճոյ—ակայ). 6) Խնձոր, Խնձորիկ միջնադարյան անունները հայկական նորակազմություններ են. 7) Հնչյունական առումով մերժելի է Համուծ անվան բխեցումը խուռ. Hambizi (Hamburzi) անունից, որ ինքն էլ ծագում է շումերերենից՝ թերևս աքքադական միջնորդությամբ: Քիչ հավանական է Կուառ անձնանվան (ըստ Զենոբ Գլակի՝ հնդիկ Դեմետրե կամ Գիսանե իշխաններից մեկի որդու անունը) համեմատությունը Նուզիի տեքստերում հանդիպող Kuari անձնանվան հետ, որին Ղափանցյանը վերագրում է հնդկական ծագում. Հ. Աճառյանը համարում է Կուառս գյուղի անունից հորինված՝ այն ստուգաբանելու համար:

Հետագա հետազոտողներից Ջ. Գրեպինը [Greppin, 1979] Գ. Ղափանցյանի համեմատություններից ընդունելի է համարում ութը՝ աստեմ, խնձոր, ներ, պաղ-ատ-եմ, պեղեմ (pali «ջրանցք»), փոխ, տուղտ, ծառայ, որոնց գումարում է Ի. Մ. Դյակոնովի տված քարմ-ա-ջուր—խուռ. tarmane «աղբյուր» և իր կողմից առաջարկված ագարակ (խուռ. aụari «դաշտ») և կուտ (խուռ. kate «(հացա)հատիկ») համեմատությունները: Սրանցից ներ, պաղ-ատ-եմ, ծառայ բառերի համեմատությունը, ինչպես նշվեց, անընդունելի է, եթե պեղեմ-ը իրոք կապ ունի pali «ջրանցք» բառի հետ, ապա այդ կապը գալիս է ուրարտ. ցեղակցից՝ pili-ից: Քարմ-ը (հ.-ե. *tər-mo-՝ *ter-ից. հմմտ. հուն. τέρχνον «փափուկ») իմաստային առնչություն չունի tarmane (ուրարտերեն) բառի հետ, որին վերագրված «աղբյուր» իմաստը կասկածելի է: Ագարակ-ի բխեցումը aụari-ից հնարավոր է հնչյունապես, բայց քիչ հավանական է, եթե նկատի առնենք ավելի հավանական զուգահեռների առկայությունը: Կուտ-ը հնչյունապես դժվար է բխեցնել խուռերեն բառից, մանավանդ որ անհնար չէ նրա հնդեվրոպական ծագումը [Ջահուկյան, ՊԲՀ, 1965, 1, 257—258]: Ի. Մ. Դյակոնովը [ДЯМА, 1980, 359] խուռական ծագում է վերագրում հայ. աղխ «ցեղ, զարմ. ժողովուրդ» (*alla(e)ḫḫi «տիրային»՝ allae «տիրուհի», ուրարտ. «տեր»), աղախին (*alla(e)ḫḫini «տնտեսության կառավարիչ,-չուհի»), ծառայ (խուռ. sarri «կողոպուտ»), սակայն այս համեմատությունները իմաստային առումով անհամոզիչ են:

Օգտագործելով եղած հետազոտությունները և դրանց ավելացնելով մի քանի հավանական համեմատություն՝ խուռական ծագում կարելի է վերագրել հետևյալ հայերեն բառերին, ընդ որում որոշ դեպքերում հնարավոր է ենթադրել նաև զուգահեռ որևէ աղբյուր կամ ուրարտերենում չարձանագրված համարժեք.

1. անագ—խուռ. anagi «անագ» (հայերեն բառը սովորաբար համեմատվում է աքք. anāku, շումեր. niggi, naggu բառերի հետ, բայց ամենից ավելի մոտ է խուռ. ձևին).

---

[10] Իր «Հայոց պատմության» մեջ [էջ 116] Գ. Ղափանցյանը գրում է. «Հ. Աճառյանը իր Արմ. բառ.-ում (VII, 189) հայոց բառը դնում է ասորերենից փոխառություն, բայց, ինչպես տեսնում ենք, այդ փոխառությունը, եթե իրոք եղել է, կատարվել է խուռիտ-արիների միջոցով»:

[11] Ավելի քիչ հավանական է հայ. Բութ (Բուտ) անվան բխեցումը ասորերենից՝ «եկեղեցական տեսուչ» [Հ. Աճառյան, ՀԱնԲ, 1, 422]:

2. *աստ «կին» (աստեմ «ամուսնանալու համար նշանած բնորել, կին ուզել», աստող «աղջիկ ուզող, նշանած, փեսացու»)—խուռ. ašti- «կին. կին ամուսին» (<աքքադ. (բաբել.) aššatu- «կին ամուսին»)—Ղափ.

3. խաղող — խուռ. ḫaluli «ինչ-որ պտուղ» (Նուզիի, Բողազքյոյի տեքստերում)[12].

4. խնձոր — ḫinzuri «խնձոր» — Ղափ.

5. խոռ «ժլատ» — ḫurri (խուռիների ինքնանվանումը) — Ղափ.

6. նուռն — խուռ. nuranti «նուռ» (< աքքադ. nurimdu՝ nurmû-ից). Հայերեն բառը կարող է փոխառություն լինել և սեմական աղբյուրից.

7. տուղտ «բույսի տեսակ՝ althaea pallida WK» — խուռ. tuldi «ինչ-որ բույս» — Ղափ.։

Ըստ իմաստային խմբերի խուռական փոխառությունները բաշխվում են հետևյալ կերպ.

2. **Մարդկություն՝** սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն. 2.33 աստեմ. 2.63 աստող.

5. **Ուտելիք և խմելիք.** 5.72 խնձոր. 5.76 խաղող. 5.771 նուռն.

8. **Երկրագործություն, բուսականություն.** 8.531 տուղտ.

9. **Ֆիզիկական տարբեր գործողություններ. արհեստներ և արվեստներ, համապատասխան գործիքներ և նյութեր.** 9.69 անագ.

Սրանց կարելի է ավելացնել կասկածելի երկու բառ, որոնց աղբյուրը կարող է անմիջապես սեմական լինել.

8. փոխ — խուռ. puḫ- (puḫizzari, puḫugari «փոխ(անակություն), փոխհատուցում» (< աքքադ. puḫḫu «փոխել». puḫu «փոխանակություն») (?). Հայ. բառը ըստ Աճառյանի ծագում է ակկադերենից.

9. քաքար «մի տեսակ խմորեղեն, կարկանդակ»—խուռ. kakkari (հմմտ. աքքադ. kakkaru, արամ. kan/kkərā, եբր. kaggara). Հնարավոր է նաև հայ. բառի սեմական ծագումը. Հ. Աճառյանը (ՀԱԲ, 4^2, էջ 568) բխեցնում է ասոր. kakārîθā «մեղրահաց» բառից։

Ինչպես տեսնում ենք, բերված բառերը գերազանցապես մշակութային բնույթի են։ Բացառություն են կազմում **աստ-ել**, **խոռ** և **փոխ** բառերը, որոնցից երկրորդը կազմված է խուռիների անունից՝ նրանց վերագրվող հատկության հիման վրա, իսկ առաջինի և երկրորդի խուռական ծագումը կասկածելի է. մանավանդ **աստել** բայ կազմելը *աստ-< ašti- գոյականի հիման վրա քիչ հավանական է։

Խուռ. tuni «հացի տեսակ» բառին նման է հայ. **դոն** (**թոն**) «հացի տեսակ՝ պաքսիմատ» բառը, բայց նախ՝ Հ. Աճառյանը հակված է հայ. բառին վերագրելու հ.-ե. ծագում (*dōnā «հացահատիկ», թեև պետք է լիներ ***դուն**), երկրորդ՝ tuni-ն կարող է ծագած լինել tuni «պատվանդան» բառից՝ «թխված tuni-ի ձևով» անցումով [հմմտ. **Haas—Wilhelm**, 1974] Իմաստային առումով անհավանական են **ամբասիկ** «մշկահոտ տանձ»—խուռ. ambašši- «զբոսայգի (?)», **անձող** «կավատ»—խուռ. anz- «խոստանալ» (Ֆարբեր—Բուշ) կամ «խնդրել» (ըստ այլոց), **ոսկի**—խուռ. ušḫu- «արծաթ» համեմատությունները։

---

[12] Խուռ. բառի համար տե՛ս **Haas—Wilhelm**, 1974, 90։ Ուրարտերենում կա ḫaluli/e բառ, բայց այն թարգմանվում է «ծես, արարողություն» [**Меликишвили** 1960, 396] կամ «հացկերույթ» [**Дьяконов**, 1963, 88]։

Կան դեպքեր էլ, երբ մենք գործ ունենք, այսպես կոչված, «տարրական ցեղակցության» բառերի հետ՝ բնաձայնություններ, մանկական բառեր և այլն, որոնց դեպքում զուգադիպումներն անխուսափելի են. հմմտ. խուռ., ammati «պապ, նախնի»—հայ. բրբռ. **մա**, **մամ** «մայր» (հ.-ե. *am(m)a, *ma, *mam(m)ā «մայր»), խուռ. attai, ուրարտ. ate «հայր»—հայ. բրբռ. **տատա** (Ակն) «մայր» (հ.-ե. *atta «հայր, մայր»), խուռ. zizzi̯a «կուրծք, ստինքներ, ծծեր»—հայ. **ծիծ** և այլն։

գ) ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՈՒՐԱՐՏԵՐԵՆԸ

Ինչպես նշվել է, ուրարտացիները ասորական աղբյուրներում հիշատակվում են դեռևս մ. թ. ա. XIII դ. սկսած։ Սակայն մինչև IX դ. 60-ական թվականները չի եղել կենտրոնացված ուրարտական պետություն, և ասուրները գործ են ունեցել ուրարտական ցեղամիությունների ու նրանց առաջնորդների հետ, որոնց նրանք թագավորներ են անվանում։ IX դ. հիշատակվում է միասնական պետության առաջին թագավորը՝ Արամուն, որի անունը հավանաբար պահպանվել է Խորենացու հիշատակած առասպելական Արամ թագավորի անվան մեջ։ VIII դարը ուրարտական պետության հզորության շրջանն է։ Այդ դարի վերջերին սկսվում է ուրարտական պետության աստիճանական անկման պրոցեսը, որ ավարտվում է VI դ. սկզբներին։ Սակայն **Ուրարտու** անվանումը դեռ երկար ժամանակ պահպանվում է ժողովուրդների հիշողության մեջ. պարսկական թագավոր Դարեհ I-ի (522—486 մ. թ. ա.) բեհիսթունյան նշանավոր արձանագրության մեջ, որ գրված է երեք լեզվով՝ հին պարսկերենով, էլամերենով և բաբելերենով, հին պարսկերենի Armina և էլամական Ḫarminui̯a անունների դիմաց բաբելական տեքստում հանդիպում է Uraštu անունը, որ ասուրերեն Urartu-ի բաբելական տարբերակն է։ Հավանական է, որ ուրարտական պետության մեջ մեծ դեր են խաղացել հայկական ցեղերը, թերևս ներկայացուցիչ ունեցել ուրարտական գահի վրա (հմմտ. Erimena՝ Ուրարտուի վերջին թագավոր Ռուսայի հայրը) և Ուրարտական պետության կործանումից հետո դարձել երկրի առաջավոր ուժը։

Ուրարտացիների երկիրը ասուրները (ասորեստանցիները) սկզբնապես կոչել են Uruaṭri, հետագայում՝ Urarṭu։ Ուրարտացիներն իրենց կոչել են biainli, իրենց երկիրը՝ Biaina։ Այս անունը պահպանվել է **Վան** (սեռ. **Վանայ**) անվան մեջ։ Կարծիք կա, որ Urarṭu անունն էլ պահպանվել է **Այրարատ** անվան մեջ։

Ուրարտացիների դարավոր համակեցությունը հայերի հետ, ապա և նրանց հետ ձուլվելը պետք է հիմք տար նախ փոխառությունների և առշերտային (ադստրատային), ապա ենթաշերտային (սուբստրատային) ազդեցության համար։ Ուրարտական ազդեցությունն արտահայտվել է ոչ միայն բառապաշարի, այլև հայերենի հնչյունական և քերականական որոշ առանձնահատկությունների մեջ։ Ուրարտական ազդեցությանը կարելի է վերագրել քերականության մեջ եզակի թվում **ի** հոլովման և հոգնակի թվում հոլովման **-ա-ով** հիմքերի գերակշռությունը, **-ն-ով** հիմքերի առատությունը (հատկապես հնդեվրոպական ռնգային հիմքով զուգահեռներ չունեցող հայերեն հիմքերի զգալի թիվը), **-ք** հոգնակերտի կայունացումը և այլն, հնչյունաբանության մեջ՝ վերջընթեր շեշտը, որ հանգեցնում է վերջնավանկերի ձայնավորների թուլացմանը՝ փակ և անկման՝ բաց վանկերում, երկար և կարճ ձայնավորների տարբերության վերացումը, թերևս ձայնավորներից հետո յ-ի հավելումը բառավերջում (-այ, -ոյ, -է<-եյ) [**Джаукян**, 1963, 147]. հարավարևելյան բարբառներում հ-ի խ արտասանությունը և այլն։

Առանձնապես մեծ ազդեցություն թողած պիտի լինի ուրարտերենը հայերենի բառապաշարի վրա՝ ինչպես հասարակ անունների, այնպես էլ տեղանունների մեջ։ Ճիշտ է, պահպանված ուրարտական բառերի և հայերեն բառերի զուգադիպումները թվով մեծ չեն, բայց հնարավոր է որոշ եզրակացություններ անել նաև կողմնակի տվյալների հիման վրա։ Միաժամանակ հարկավոր է նկատի ունենալ հակառակ ազդեցության հնարավորությունը, որ հաճախ հաշվի չի առնվում հետազոտողների կողմից։

Ամենից ավելի հանգամանալից կերպով հայ-ուրարտական լեզվական առնչությունների հարցով զբաղվել է Գ. Ղափանցյանը։ Իր «Ուրարտուի պատմությունը» աշխատության մեջ [1940, 42—44] նա բերում է ուրարտերենի և հայերենի համար ընդհանուր 29 բառ, «Հայոց լեզվի պատմության» մեջ [1961, 131—139] որոշ զտումով և հավելումով՝ 20-ը. 1) աւելի, յաւելում—ուրարտ. abilid- «միացնել, ավելացնել». 2) բաբայ «բլուր»—ուրարտ. baba «լեռ, սար» (=խուռ. bap/b-), 3) աւան — ուրարտ. ebani «երկիր» (=խուռ. umini), 4) որբար «մարդիկ, ժողովուրդ» (ըստ Ղափանցյանի՝ «տերեր, մեծեր»), աւրիորդ «օրիորդ» (ըստ Ղափանցյանի՝ աւրի «տեր» + որդ(ի/)—ուրարտ. euri «տեր» (=խուռ. ibri, iṷri, irṷi), 5) հատանեմ—ուրարտ. ḫat- (ḫatubi-ի «կտրեցի, բաժանեցի». թարգմանությունը Ղափանցյանինն է. ուրիշ հետազոտողներ թողնում են առանց մեկնության), 6) հոսեմ —ուրարտ. ḫuš- «զցել», 7) երկիր — ուրարտ. qi(u)ra «հող» (= խուռ. hab(u)r-), 8) պախրէ «տավար, արջառ, նախիր», պախրայ «զրամ» —ուրարտ. paḫini «արջառ, խոշոր եղջերավոր անասուն, եզ», 9) պեղեմ—ուրարտ. pili «ջրանցք» (=խուռ. pala՝ շումեր. pa-ի կողքին), 10) սան «կաթսա»—ուրարտ. šani «աման», 11) շերտ, շերտեմ—ուրարտ. šerd- «բաժանել, առանձնացնել» (ըստ Ղափանցյանի՝ «ճեղքել», ընդ որում նա հիշատակում է նաև արաբ. šarṭ «մարմինը շառել», ասոր. šǝraṭ «պատառոտել» բառերը), 12) յոյր «պարարտ» — ուրարտ. ṷiri «պարարտ» (?)» (մեկնությունը Ղափանցյանինն է. ընթերցանությունը և մեկնությունը կասկածելի են), 13) ուղի, ուղիղ —ուրարտ. ul- «գնալ, ուղևորվել» (չեզոք), «տանել» (ներգ.), 14) ուղխ—ուրարտ. ulḫ- (ըստ Ղափանցյանի՝ «ոռոգել, հոսեցնել». Մելիքիշվիլին կասկածով մեկնում է «հրամայել»), 15) տոլի «վայրի խաղող» —ուրարտ. uduli (Ղափանցյանը մեկնում է «խաղող», Մելիքիշվիլին և Դյակոնովը՝ «խաղողի այգի». Ղափանցյանը նշում է նաև արաբ. duali (sic) և ասորերեն toli «խաղող» զուգահեռները. ուրարտ. բառն ավանդված է uldi և մեկ անգամ՝ uduli ձևով. ինչպես կարծում է Մելիքիշվիլին, վերջինս թերևս uldi-ի բարբառային տարբերակն է), 16) ծով —ուրարտ. ṣue (ըստ Ղափանցյանի՝ «ծով», ըստ ուրիշների՝ «լիճ». ուրարտերենից փոխառյալ է համարում Ղափանցյանը նաև վրաց. Zγva «ծով» բառը), 17) ծես —ուրարտ. ṣišuli (ըստ Ղափանցյանի՝ «ծես, արարողություն». ուրիշները չեն մեկնում. Ղափանցյանը նշում է նաև վրաց. ċesi նույնիմաստ բառը՝ իբրև ուրարտ. բառին «ազգակից»), 18) բրբռ. որ(ո)փել «հեղուկը՝ գինին, ջուրը և այլն, բաժակով կամ գդալով վերցնել և նորից թափել ամանը» —ուրարտ. urb- «զոհել» (=խուռ. urb-ar- «զոհել». Մելիքիշվիլին տալիս է urpu- ընթերցանությունը, որ ճիշտ չի համարում Դյակոնովը, УПД, էջ 92), 19) ուրու «տեսիլք, ցնորք»—ուրարտ. uruli (ըստ Ղափանցյանի՝ «հոգի». կասկածելի է), 20) գեղ-, գեւղ (գիւղ)—ուրարտ. ṷeli (ըստ Ղափանցյանի՝ «զորագունդ». Մելիքիշվիլին տալիս է «ժողով, հավաք» և «ջոկատ» իմաստները՝ երկուսն էլ կասկածով. Դյակոնովը տալիս է «ջոկատ, աշխարհազոր» իմաստները)։

«Ուրարտուի պատմության» մեջ Ղափանցյանը տվել է նաև այլ զուգահեռներ՝ ինքն, սեռ. ինքեան—ուրարտ. inukani «նույն այդ», աստէն —ուրարտ. ištini «այստեղ», անդէն —ուրարտ. edini «այնտեղից», մես-ուրիւն «նվիրվածություն», մեխիմ «նվիրել» (ըստ Ղափանցյանի. Աճառյանը մեկնում է «գիտություն, ուսում» և «ներս սպրդել»), — ուրարտ. meše «տուրք», շառզանեմ «խառնել» և «բաժանել, քակել» —ուրարտ. suṭuq- (ըստ Ղափանցյանի՝ «ավերել (?)», ըստ ուրիշների՝ «պոկել, շրթել, հեռացնել»), արմ, արմատ, զ-արմ — ուրարտ. armuzi «սերունդ» (և «ընտանիք»), սար — ուրարտ. šeri «առանձին» (ըստ Ղափանցյանի՝ šeri «ավելցուկ» և šer «բարձր»). ողջ — ուրարտ. ulguše (ըստ Ղափանցյանի՝ «առողջություն». սակայն երկլեզվյան արձանագրության մեջ ulguše-ն համապատասխանում է ասոր. balaṭu «կյանք» բառին), փխուր, փշուր—ուրարտ. ipḫ- «ջարդել, փշրել», կապին (մի չափ) —ուրարտ. kapi (մի չափ), պատ, փար —ուրարտ. patari «քաղաք», այլև Արա—ուրարտ. ^{d}Ar'a (դիցանուն), արածեմ, արաւտ—ուրարտ. ^{d}Araṣa (դիցանուն)։

Գ. Ղափանցյանի բերած փաստերը, մանավանդ տեղանունների բնագավառում, լրացվում են մի շարք հետազոտողների կողմից (Ի. Մ. Դյակոնով, Վ. Ի. Բենեցյանու, Ս. Երեմյան, Գ. Ջահուկյան, Ն. Հարությունյան, Մ. Իսրայելյան, Ջ. Գրեպին, Հ. Ղարագյոզյան և ուրիշներ)։ Ավելի վաղ ուրարտական արձանագրություններում հիշատակված տեղանունների և հայ նախարարական տների ազգանունների նմանության մասին խոսել են Կ. Բասմաջյանը և ուրիշները։

Իր «Հայոց լեզվի պատմության» 1-ին մասում, որ լույս է տեսել Գ. Ղափանցյանի «Ուրարտուի պատմության» հետ միաժամանակ՝ 1940 թ., Հ. Աճառյանը բավարարվում է միայն ուրարտա-հայկական մի բառացանկով, որտեղ բերված բառերը «շատ նման են հնչում»։ 1) abilidu-—աւելի, յաւելուլ, 2) atu—ուտել, 3) agu- «տանել»—ածել (*agō), 4) arniuše—առնել, 5) aliki—այլ ոք, 6) ḫarḫaršu-—խարխարել, 7) ieše—ես, 8) qiura «երկիր»—գաւառ, 9) paru-—բռնել, 10) susi «պարիսպ»(?)—սիւս «պարըսպապատ որսատեղի», 11) šia-—չուել, 12) teru-—դիր, 13) uli—այլ, 14) uliše—ուրիշ, 15) ui—ու։ Սակայն այս նմանությունները Աճառյանը պատահական է համարում և ավելի կարևոր գտնում հայերենի այն չստուգաբանված բառերի թվարկումը, որոնք կարող են ծագած լինել փոքրասիական ոչ հնդեվրոպական լեզուներից և ուրարտերենից։

Ի մի բերելով եղած տվյալները՝ կարելի է տարբերել, եթե բացառենք պատահական նմանությունները և «տարրական ցեղակցության» բառերը, զուգադիպումների երեք հիմնական խումբ՝ 1) հնարավոր ցեղակցության արդյունք հանդիսացող բառեր. դրանց թվին են պատկանում հատկապես դերանունները, մի շարք բայերի և սպասարկու բառերի այն զուգադիպումները, որոնք մասամբ բերվեցին մեր կողմից խուռա-ուրարտական լեզուների արտաքին *ցեղակցության հարցը քննելիս. դրանց թվին են պատկանում նաև Հ. Աճառյանի և Գ. Ղափանցյանի կողմից հիշատակված մի շարք «նմանությունները». 2) ուրարտերենից հայերենին անցած բառեր (փոխառություններ և ենթաշերտային բառեր). 3) հայերենից ուրարտերենին անցած բառեր։ Քննենք երկրորդ կարգի բառերը և մի քանի խոսք ասենք երրորդ կարգի զուգադիպումների մասին։ Նշենք, որ կան նաև միևնույն աղբյուրներից հայերենում և ուրարտերենում փոխառված, այլև ուրարտերենի միջնորդությամբ հայերենին անցած բառեր. վերջիններս կքննվեն ուրարտական փոխառությունների թվում։*

Ամենից առաջ պարզենք ուրարտա-հայկական հնչյունական համապատասխանությունների ընդհանուր պատկերը ամենից ավելի հավաստի հատուկ և հասարակ անունների զուգադիպությունների հիման վրա.

Ուրարտ.	Հայ.	Օրինակներ
b	բ	baba «լեռ» — բարձր «բլուր»
		burgana — բուրգն
		Abiliani — Աբեղեանք
	վ, ւ	Biaina — Վան, -այ
		abili-d(u)- — աւելի, յաւելուլ
d	դ (?)	—
	տ	Diau(e)ḫi — Տայք
g	գ	Giarniani — Գառնի (հմմտ. և garini «բերդ, ամրոց»)
		burgana — բուրգն
p	փ	Şupani — Ծոփք
	պ	pili «ջրանցք» — պեղ-ել
		Tušpa — Տոսպ, -այ
t	թ	tia(u)- «ասել, պատմել» — թուել «ասել, պատմել», թիւ ասել (?)
	տ	Alištu — Աղստև
k	ք	U̯elikuni — Գեղա(ր)քունի
	կ	Uškiani — Ոսկեանք
ţ	տ	Ţuaraşini — Տուարած(-ա-տափ)
		Ţušpa — Տոսպ. -այ
		ulţu — ուղտ, -ու
q	կ	qarbi/e «ժայռ(?)» — կարքի (?)
		Quriani (երկիր) — Կուր (գետ)
s	շ	Sirimutara — շիրիմ (?)
š	ս	šani «աման» — սան «կաթսա»
		Alištu — Աղստև
	շ	Anaše — Ալաշ(կերտ) (?)
ş	ծ	şue «լիճ» — ծով
		Şupani — Ծոփ-ք
z	ձ	Alzini — Աղձնի-ք
	զ	Ḫuzana — Խոզան
ḫ	խ	ḫarḫar-š(u)- — խարխարել (խալխալել)
		Ḫuzana — Խոզան
		Aḫuriani — Ախուրեան
	հ	ḫubi — հովիտ
r	ր	Erimena — Արմեն (արմեն)
l	լ (?)	—
	ղ	Alia — Աղի(ովիտ)

1	2	3
		Alištu - Աղստև
m	մ	Erimena — Արմեն (արմեն)
n	ն	šani «աման» — սան «կաթսա»
		U̯elikuni — Գեղա(ր)քունի
	լ (?)	Anaša — Ալաշ(կերտ)
i̯	յ (?)	—
i	ի	tia(u)- «ասել, պատմել» — թիւ (ասել)
	(ը)—	Alištu — *Աղիստ-ու > Աղստև
	ե	pili «ջրանցք» — պեղել
u̯	գ	U̯elikuni — Գեղա(ր)քունի
	-վ, ւ (?)	—
u	ու	burgana — բուրգն
		Quri(ani) — Կուր
		ulţu — ուղտ
	(ը)—	Şupani — Ծոփ-ք
	ո	Ţušpa — Տոսպ, -այ
a	ա	baba «լեռ» — բարձր «բլուր»
		abili-d(u)- — յաւելուլ
e	ե	U̯elikuni — Գեղա(ր)քունի
	ա	Erimana — Արմեն (արմեն) (?)

Աղյուսակի հիման վրա կարելի է անել մի քանի եզրակացություն. 1) ուրարտական ձայնեղներն արտացոլված են հիմնականում որպես ձայնեղներ. հնարավոր է, որ նրանց հատուկ է եղել (ոչ սկզբնադիրքո՞ւմ) շփական β, δ, γ արտասանությունը, որ հիմք է տվել b*-ի երկակի արտացոլման և գրության մեջ* b*-ի և* u̯*-ի խառնման համար. 2) սովորական (շնչե՞ղ) խուլերն արտացոլված են հիմնականում որպես շնչեղ խուլեր,* š*-ից հետո գտնված դիրքում՝ որպես սովորական խուլեր. հավանաբար որոշ տարածքներում եղել է քմայնացում. հմմտ.* Giarniani—Գառնի *(թերևս և* Ziuquni — Ձուկն*). 3)* ţ, q*-ն արտացոլված են որպես սովորական (ոչ շնչեղ) խուլեր. քանի որ* p̣*-ի համար հատուկ նշան չի եղել, այն արտահայտվել է* p*-ով. 4) ուրարտ.* š*-ն և* s*-ն հավանաբար արտահայտել են համապատասխանաբար ս և շ հնչյունները, թեև կան հակառակ արտացոլման փաստեր. այս առումով է ենթադրվել, որ նրանց տարբերությունը եղել է ոչ թե շչականի և սուլականի, այլ ուրիշ կարգի. 5)* ş*-ն և* z*-ն արտահայտել են ամենից առաջ կիսաշփականներ՝ հավանաբար սուլական բնույթի՝ ծ, ձ. բուն ուրարտական բառերում ճ, ջ-ի առկայությունը հավաստիորեն չի պարզված.* Zabaḫe—Ջավախ-ք *համապատասխանությունը խոսում է լոկ այն մասին, որ ուրարտացիները կարող էին ջ-ն արտացոլել* z*-ով, բայց ոչ ուրարտերենում ջ-ի գոյության մասին.* z*-ն կարող էր արտահայտել նաև զ շփականը. 6)* ḫ*-ն արտահայտել է հիմնականում* խ. ḫubi—հովիտ *համապատասխանությունը կարող է ուղղակի ուրարտա-հայկական չլինել (հմմտ. հայ. հավելուրդային* -ու-*ն, որի բնույթը պարզ չէ). 7)* r, l, m, n *ձայնորդներն արտացոլված են հիմնականում որպես* ր, ղ, մ, ն. *հնարավոր է* l*-ի բառասկզբնային* լ *արտացոլումը, բայց հավաստի օրինակներ չկան. 8) բառասկզբի* u̯*-ն արտա-*

ցոլված է որպես գ. այլ դիրքերում թերևս արտացոլումն այնպիսին է, ինչպես հ.-ե. ծագման բառերում. սա խոսում է կ>գ հնչյունափոխության՝ ուշ կատարվելու մասին. 9) a, e, i, u ձայնավորները արտացոլված են հիմնականում նույնությամբ. թերևս եղել է բաց e (əe?) որի պատճառով առկա է Erimena—**Արմեն** համապատասխանությունը. պետք է նկատի ունենալ, որ ըստ գրության առանձնահատկությունների o-ն արտահայտվել է u-ով, e-ն՝ երբեմն i-ով։

Այսպիսով, քիչ թե շատ հավաստի են հայերենի՝ ուրարտերենից կատարված հետևյալ փոխառությունները. 1) **բաբայ** «բլուր»—ուրարտ. baba «լեռ» 2) **բուրգն**—burgana «բուրգ» բերդ, ամրոց»[13], 3) **խարխարեմ** (**խարխալեմ**) «քանդել, խախտել»—ուրարտ. ḫarḫar-š(-u)- «քանդել», 4) **ծով**—ուրարտ. ṣue «լիճ», 5) **սան** «կաթսա»--ուրարտ. šani «աման» (<աքքադ.). 6) ուղտ,-ու —ուրարտ. ulṭu «ուղտ» (<աքքադ.)։

Հայերենի ուրարտական փոխառությունները ըստ իմաստային խմբերի բաշխվում են հետևյալ կերպ.

1. **Ֆիզիկական աշխարհ.** 1.22 բաբայ 1.32 ծով.

3. **Կենդանիներ.** 3.78 ուղտ.

5. **Ուտելիք և խմելիք. կերակրի պատրաստում և ամանեղեն.** 5. 27 սան.

11. **Ունեցվածք.** 11.27 խարխարեմ (խարխալեմ).

20. **Ռազմական գործ.** 20.36 բուրգն։

Եթե ա) ուրարտական t-ն և k-ն կարող էին արտացոլվել նաև որպես խուլեր՝ **տ** և **կ**, բ) ուրարտական բարբառներում առկա է եղել r/l հերթագայությունը կամ ըստ հայերի արտասանական առանձնահատկությունների r-ն և l-ն ընկալվել են ոչ այնքան հստակ տարբերակված, գ) ուրարտ. š-ն իրոք արտացոլվել է (որոշ տարածքներում) ինչպես շ, ապա վերևում բերվածներին կարելի է ավելացնել հետևյալ բառերը ևս. 7) **խաղաղ**—ուրարտ. ḫarare «խաղաղություն, բարօրություն», 8) **կամ** «կենալ, կանգնել, երևան գալ»—ka- «կանգնել, երևալ»[14], 9) **կորդ** «խոպան, անմշակ»—ուրարտ. quldi/e(ni) «կորդ, խոպան, անմշակ, ամայի», 10) **ուրիշ** (**որիշ**)—ուրարտ. uliše (էրգատիվ հոլով) «ուրիշ»։ Միաժամանակ, եթե ուրարտ. ներքոհիշյալ բառերի ընթերցումը ճիշտ է, և եթե որոշ տարածքներում ուրարտական ձայնեղները հայերենում արտացոլվել են ինչպես խուլեր, ապա հնարավոր է հայ. **տոլի** (տոլլի) «խաղող» բառի ծագումը ուրարտ. uduli (uldi) «խաղողի այգի» («խաղող»?) բառից։ Այս նույն պայմաններում հայ. **տի-ն** (**տիկին, տի-եզերք, տի-այր>տէր**) կարող է ծագած լինել ոչ թե հ.-ե. *dei-ից (հմմտ. լիտվ. didis «մեծ»), այլ ուրարտ. ṭeae «մեծ» բառից։

Կան հայ-ուրարտական բառային մի շարք զուգադիպումներ, որոնց դեպքում դժվար է որոշակի ընտրություն կատարել հայերեն (երբեմն էլ ուրարտերեն) բառերի բնիկ, թե փոխառյալ լինելու հնարավոր ենթադրությունների միջև. այս դեպքերում հարցը կարելի է լուծել միայն կողմնակի փաստերի և դատողությունների հիման վրա, այն էլ ոչ բոլոր դեպքերում լրիվ համոզված լինելով այդ լուծման՝ բացարձակ ճշգրտության մեջ. 1) **աւել, յաւելում** բառերը ակնհայտ զուգահեռներ ունեն մի կողմից՝ հուն. ὀφέλλω «մեծացնել, ավելացնել» (*obhel-) և մյուս կողմից ուրարտ. abili-d(u)- «միացնել, ավելացնել» բառերի մեջ. նկատի ունենալով, որ նախ՝ հայերենը և հունարենը ունեն համանվանական **աւել, աւելեմ** և հուն. ὀφέλλω «ավլել» զուգահեռները, երկրորդ՝ ուրարտերեն abili-d(u)- բայաձևը կազմված է abili («ավելի»?)+d(u)- («անել») բաղադրիչներից, որ ցույց է տալիս բայական կազմության երկրորդական բնույթը (բառացի՝ «ավելի անել»?)՝ և երրորդ՝ ուրարտական բառը զուգահեռ չունի խուռերենում,—կարելի է ենթադրել, որ հայ. **աւել** արմատը բնիկ է (*obhel-՝ *o- հավելված+*bhel- «ուռչել, բխել»?), և ուրարտ. abili-ն փոխառություն է հայերենից. 2) **թիւ, թուեմ** «ասել, պատմել», **թուիմ** «համարվել, կարծվել» բառերի համար նշվում են մի կողմից՝ հ. հնդ. taviti «ուժեղ է», tavas- «ուժեղ, ուժ», ավեստ. tavah- «ուժ, զորություն», հուն. ταῦς «մեծ, շատ» (ըստ Հեսիքիոսի), մյուս կողմից՝ ուրարտ. atibi «տասը հազար» զուգահեռները. ամենից ավելի նպատակահարմար է ուրարտ. բառը դիտել որպես հեռավոր ցեղակցության (նոստրատիկ) ժառանգություն (հմմտ. հ.-ե. *tēu-, որտեղից թոխ. B tuman «տասը հազար», ռուս. тысяча, գերմ. tausend «հազար»). այս առումով թերևս կապ ունեն նաև հայ. **թիւ ածել** «առանց եղանակի կարդալ», **թուել** «ասել, պատմել» և ուրարտ. tia(u)- «ասել», tini «անուն», այլև խուռ. tiu̯i- «բառ. բան» բառերը (հմմտ. նաև խեթ. te- «ասել» և ավեստ. dav- «ասել, խոսել»?). թերևս կարելի է ենթադրել հայերեն և ուրարտերեն բառերի հետագա բաղարկում (խառնուրդ). 3) **ծառ** բառը համեմատվում է մի կողմից՝ հուն. γύρρα «ճիպոտ» (ըստ Հեսիքիոսի), γύρσανα «ցախ» (ըստ Հեսիքիոսի), հ. սկանդ. kjarr «թուփ» (հ.-ե. *g'ers- «ծառ, ճյուղ, թուփ»), մյուս կողմից՝ ուրարտ. zari/e (ṣari/e) «(պտղատու) այգի» բառի հետ. նկատի ունենալով հայ. և ուրարտ. բառերի իմաստային տարբերությունը՝ պետք է կամ նմանությունը համարել պատահական, կամ ենթադրել հայ. բառի բաղարկում (կոնտամինացիա) ուրարտերեն բառի հետ. 4) **շերտ, շերտել** բառերը կարելի է մի կողմից բխեցնել հ.-ե. *skher-d-ից (*sker- «կտրել, հատել». շ-ի համար հմմտ. **շեղ**<*skhel-՝ *skel-ից «կտրել, հատել»), մյուս կողմից կապել ուրարտ. šeri «առանձին», šer(i)-d(u-) «առանձնացնել, հեռացնել» բառերի հետ. սակայն նախ՝ ուրարտ. š-ն հավանաբար արտասանվել է **ս** (հմմտ. ուրարտ. Tušpa—հայ. **Տոսպ**), երկրորդ՝ šer(i)-d(u) —բայը կազմված է šeri «առանձին»+d(u)- «անել» բաղադրիչներից, ուստի նմանությունը պետք է պատահական համարել. 5) **ուղի** բառը համեմատվում է մի կողմից՝ հուն. αὐλός «սրինգ. խողովակ», αὐλών «կիրճ. հովիտ. փոս. ջրանցք. նեղուց», ռուս. улица «փողոց» (հ.-ե. *au-lo-s «խողովակ, երկարավուն խոռոչ»), մյուս կողմից՝ ուրարտ. ul(a)- «գնալ», ul(u)- «տանել», թերևս նաև ulušt- «առաջնորդել» բառերի հետ. նմանությունը պետք է պատահական համարել, մանավանդ եթե նկատի առնենք հայերենի սկզբնական ոչ բայական (անվանական) արժեքը. **ուղարկել** և **յղել** (*յ-ուղել) բայերն ակնհայտորեն երկրորդական բնույթի են. իհարկե, կարելի է ենթադրել հայերեն **ուղի**-ի բաղարկում (կոնտամինացիա) ուրարտերեն բառերի հետ՝ իմաստային մերձեցումով. 6) **սուր** «սուր, հատու. սուր, սուսեր. բահի բերան» բառը համեմատվում է մի կողմից՝ մ.վ. գերմ. hār «հեսան», մ. ն. գերմ. haren «սրել, սուր, լինել» (**սուր,-ոյ**< *k'ō-ro- և hār < *kē-r-՝ *k'ē(i)- «սրել» արմատից, որից նաև սայր և սլաք), մյուս կողմից՝ ուրարտ. šuri/e «զենք» բառերի հետ. սակայն հայ. բառը ունի ուրարտ. բառից տարբեր իմաստային շրջանակ, հ.-ե. միևնույն արմատից ծագող հիմքային տարբերակներ (սայր, սլաք) և հ.-ե. այլ լեզուներում ակընհայտ զուգահեռներ, ուստի և սրա բնիկ լինելը գրեթե անկասկած է. եթե ուրարտ. բառի հոգնակիին ճիշտ է վերագրվում «զինված ուժեր» իմաստը (ըստ Դյակոնովի), ապա այն ավելի է հեռանում հայ. բառի իմաստից. այս պայմաններում կամ նմանությունը պետք է դիտել որպես պատահական, կամ ուրարտ. բառը ծագած համարել հայկական աղբյուրից. վերջին դեպքում պետք է բացառել խուռ. šau- «զենք» բառի կապը ուրարտ. šuri/e-ի հետ. 7) ցեղ բառը մի կողմից՝ կապված է համարվում ցելում «ճեղքել» բայի հետ (հ.-ե. *skel- «կտրել»), մյուս կողմից՝ հիշեցնում է ուրարտ. zil(i)bi «սերմ, սերունդ» բառը. եթե նկատի առնենք հնչյունական տարբերությունը, և եթե ուրարտ. բառը հայերենից չի ծագում, նմանությունը պետք է պատահական համարել։

---

[13] Հ. Աճառյանը [ՀԱԲ, I^2 488] բխեցնում է ասորերենից (bŭrgā «աշտարակ»՝ հ.-ե. աղբյուրից), բայց ուրարտական ծագման օգտին է խոսում -ն-ն (<-ni)։ Ուրարտ. բառը նշանակել է «բուրգ, ամրոց». հմմտ. burganani šidištuni «burganani կառուցեց» արտահայտությունը. համապատասխան burgala-(ni)-ն նշանակում է «օժանդակ զորք (?)»։

[14] Եթե ճիշտ է տրված ka-ի իմաստը [հմմտ. **Дьяконов**, 1963, 89]։

Որոշ դեպքերում, թերևս, պետք է ենթադրել հայերենի և ուրարտերենի՝ ոչ թե իրարից, այլ մի երրորդ աղբյուրից կատարված փոխառություններ. ա) հայերեն կապիճ և ուրարտ. kapi բառերը, որոնք նշանակում են սորուն մարմինների (հատեղենի) մի չափ, ծագում են իրանական աղբյուրից, որտեղից նաև հուն. καπίθη, արաբ. qafīz. վրաց. ķabiçi (kabiçi) համիմաստ բառերը[15]. բ) քիչ հնարավոր է, որ հայ. հովիտ-ը անմիջական փոխառություն լինի ուրարտ. ḫubi «հովիտ» («շրջան (?)») բառից, և պետք է ենթադրել մի երրորդ աղբյուր. գ) ամենայն հավանականությամբ իրար հետ կապված են ուրարտ. ipḫ(u)- «ջարդել, փշրել»—հայ. փուխր—վրաց. pxvna «փշրել», pxvieri «փխրուն» և ուրարտ. ni-psi-d(u)- «կտրել (?)» (եթե ni-ն կարելի է առանձնացնել)—հայ. փշուր—վրաց. pšvna «ծեծել, կալսել», pšvneta «տրորել», ադըղ. pšaxwe «ավազ» բառերը, բայց կապի բնույթը պարզ չէ։

Առանձնապես պետք է նշել հնդիրանական ցեղերի ազդեցությունը ուրարտերենի վրա։ Վերևում խոսվեց ուրարտ. kapi բառի իրանական ծագման մասին։ Եթե ճիշտ է Ի. Մ. Դյակոնովի կողմից ուրարտ. mari բառի «ազնվական, տոհմիկ» (знатный) մեկնությունը [Дьяконов, 1963, 89] և համեմատությունը խուռ. marjannu «երիտասարդ մարտիկ, կառավար. ազնվական, տոհմիկ» բառի հետ, ապա ուրարտ. բառը ևս ծագում է հին հնդկերենից (հմմտ. marya- «տղամարդ, երիտասարդ մարդ») անմիջաբար կամ, թերևս, խուռերենի միջնորդությամբ։ Անհնար չէ, որ Ardini քաղաքանվան, Ardiunak տեղանվան, Šelardi դիցանվան, Şinuardi դիցուհու անվան մեջ հետազոտողների կողմից առանձնացվող ardi-ն իրոք նշանակի «աստված» [Джаукян, 1963, 36] և ոչ թե բնիկ ուրարտական լինի, այլ գա սկյութների լեզվից. հմմտ. ալան. ард «աստված» (հ.-ե. *art-, *ṛt-) [Абаев, 1958, 61]։

Արիական տարրեր պետք է լինեն նաև ուրարտական աղբյուրներում ավանդված հատուկ անունների մեջ. հմմտ. թերևս Aria շրջանի (Սևանա լճից արևելք), անունը Kuštašpili անձնանունը (Qumaḫa երկրի թագավորի անունը. հմմտ. պրսկ. Guštāsp < Wištāspa, թեև w>g բաղաձայնային անցման այդքան վաղ վկայությունը համեմատությունը դարձնում է կասկածելի)[16]։

---

[15] Հմմտ. սողդ. kpč (kapīč < kapikā [տե՛ս Боголюбов, 1957, 106—108]։

[16] Այս նույն ձևով ուրարտ. šali և խուռ. šaṷala «տարի» բառերը մոտ են հնչյում պրսկ.

Ուրարտերենի՝ r-ով բառ չսկսելու պայմաններում պետք է կարծել, որ Rusa թագավորի անունը բուն ուրարտական ծագում չունի. և թերևս գալիս է իրան. աղբյուրից՝ rōšan- «լուսավոր» հիմքից (հ.-ե. *leuk-, որտեղից հայ. լոյս)՝ -n-ի գիտակցմամբ որպես -n(i) հոդ (հմմտ. ուղղ. Rusani հոգնակի ձևը՝ անհոդ Rusa և էրգատիվ Rusaše ձևերի կողքին). հավանաբար իրանական ծագում ունի նաև Batu անձնանունը (հմմտ. ավեստ. Wāta «հողմի ոգի>աստված»), թեև w->b- բաղաձայնային անցման այսպիսի վաղ վկայությունը փոքր ինչ կասկածելի է դարձնում համեմատությունը. հայ. Բատ անձնանունը գալիս է կամ սրանից, կամ անմիջաբար իրանական աղբյուրից[17]։ Պատահական չէ՞ արդյոք ուրարտական և արիական հետևյալ բառերի նմանությունը՝ ուրարտ. tašm(u)- «գերել», tašmuše «գերի» և հ. հնդկ. dāsá- «ստրուկ. թշնամի», ուրարտ. šuri/e «աշխարհ. թագավորություն», šaṷe/i «իշխող», šat(u)- «վերցնել» և իրան.՝ ավեստ. xšaθra- «տիրապետություն, թագավորություն», xšayat «իշխում է, տիրապետում է» և այլն (հ.-ե. *kþē(i)-)։

Ուրարտուում թերևս դեր է խաղացել նաև թրակյան տարրը, որի մասին վկայում են զգալի թվով փաստեր. հատկանշական են, մասնավորապես, Diuşini անձնանունը (=թրակ. Diuceres. կրճատ՝ Διονῆς), Išpilibria տեղանունը (-bria = թրակ. βρία «քաղաք») և այլն. հմմտ. նաև U̯edur (գրված նաև Uduri ձևով) ցեղանունը և տեղանունը՝ զուգակցված Etiuḫi/ni երկրանվան հետ, այն շատ մոտ է հնչյում թրակյան βεδυ (vedū < *u̯edō-) «ջուր» բառին, որ ցեղակից է հայ. գետ, -ոյ բառին [այս և այլ փաստերի մասին տե՛ս Երեմյան, 1968, Ջահուկյան, 1976. Джаукян, 1984, Պետրոսյան, 1976, 1977, 1979 և. ը. Карагезян, 1931]։

Թրակացիների կամ փոքրասիական ժողովուրդների միջոցով է անցել ուրարտացիներին փռյուգական Σαβάζιος (Σεβάζιος, Sebadius և այլն) աստծու պաշտամունքը Šebitu ձևով. հավանաբար սրա անունից է կազմված Šebeteria տեղանունը, եթե վերջինս մակեդոնական սավադների ցեղանունից չէ (Σαυάδαι)[17]։ Փռյուգիական Սաբաձիոսի անունից են բխեցնում Մառը և, նրա հետևողությամբ, Աճառյանը հայ. աստուած բառը, որ հնչյունապես քիչ հավանական է։

Այս կապակցությամբ նշենք հայաս. Ḫuggana և ուրարտ. Ḫuka անձնանունների նմանությունը (վերջինս հիշատակված է որպես ստրուկի անուն) [Дьяконов, 1963, 98]։ Ինչպես հայտնի է, հայաս. Ḫuggana-ն փոքրասիական՝ խեթա-լուվական ծագում ունի։

Կան հայ-ուրարտական մի շարք զուգադիպումներ էլ, որոնց բնույթը պարզ չէ, և որոնց նմանությունը հավանաբար պատահական է. 1) գեղ (գեւղ, գիւղ)—ուրարտ. ṷeli «ջոկատ (?), հավաք (?), աշխարհազոր (?)» (ըստ Ղափանցյանի). 2) կարախ «քաշ», կարախել «քաշանալ, զորանալ»—ուրարտ. kar(u)- «հաղթել, նվաճել, (եթե կարախ-ը կապված չէ կարեմ բայի հետ.

---

sal «տարի» բառին, որ ծագում է *sard-ից (հմմտ. հայ. նաւասարդ, երիտասարդ), բայց դժվար է ենթադրել այդքան վաղ *rd>l անցումը։

[17] Ուրարտերենի իրանական փոխառությունների մասին տե՛ս նաև Грантовский 1970։ Սաբաձիոսն սկզբնապես եղել է սավադների աստվածը, ապա ստացել լայն բնույթ։ Ակկադական աղբյուրներում հիշատակված է կապպադովկյան Sabazia անձնանունը, որ հավանաբար կապ ունի Σαβάζιος-ի հետ։

ուրարտ. կամ խուռ. ծագման մասին է խոսում -ախ-ը). 3) ճնստ (խնստ) «խեռ, անհնազանդ»—ուրարտ. ḫašḫi «խռովարար, անհնազանդ (?)»[18], 4) ճոր «չքհոր. հոր, խոր փոս» (հ.-ե. *per-ḱ"g)—ուրարտ. ḫurišḫi «ստորին (?)», 5) շողգամեմ «խառնել (?)» («բաժանել, քակել» ?) —ուրարտ. šutuq(u)- «պոկել, բաժանել, հեռացնել», 6) սիւս «ցանկապատված որստատեղի» (իմաստն ըստ Աճառյանի) — ուրարտ. susi/e «սրբատեղի», 7) սողամ (-իմ), սողոսկիմ — ուրարտ. sulušt(i)- «երեսի վրա ընկնել, խոնարհվել» 8) փար, պատ — ուրարտ. patari/e «քաղաք» (ըստ Ղափանցյանի) 10) փողոց — pulusi «սյուն (արձանագրությամբ)»։

Բացի ուրարտական այն փոխառություններից, որոնց աղբյուրը պահպանված է ուրարտական սեպագիր արձանագրություններում, և որոնցից հավաստիները բերվեցին վերևում, կան փոխառություններ, որոնց ուղղակի աղբյուրը հայտնի չէ, և որոնց մասին կարելի է դատողություններ անել կողմնակի փաստերի հիման վրա։

Նախ՝ մեծ թիվ պետք է կազմեն ուրարտական ծագումով բառերը բառապաշարի այն շերտում, որի հնդեվրոպական ծագումը և մեզ հայտնի լեզուներից փոխառյալ լինելը չի ապացուցված։ Հ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմության» առաջին մասում (էջ 181—185) բերում է չստուգաբանված բառերի մի քանի խումբ, որոնց աղբյուրը գոնե մասամբ կարող է ուրարտերենը լինել. 1) գույների անուններ՝ գորշ, երփն, թոյր, թուխ, լուրջ (լուրթ), խաժ, խարտեաշ, ծաւի, կանաչ, ճամակ «գորշախայտ», ճիր «հակնթագույն, երկնագույն», ճնդիկ «զուտ սև» շառագոյն, շէկ. 2) մետաղների անուններ՝ երկաթ, կապար, ոսկի. 3) բույսերի անուններ՝ եղին, կոտիմն, վարսակ, գարեն, բարբառային մանդակ, մուճուղեզ, օղին և այլն, այլև ծիրան և խնձոր. 4) ամանների անուններ՝ անաւթ, գուշ, խաւեակ, խուփն, խթարդեայ, խեցի, ծափ, կաճոյր, կայթ, կարաս, կեղիկ, կճուճ, կուր, ճաղաղակ, մեսուր, պուտուկ, սափոր. 5) ոստայնանկությանը վերաբերող՝ ազբն, առէջ, թարաբ, գորգ, թել, իլ, ծոպ, կապերտ, կարժ, կծիկ, կկել (կկոց), կարել, ճյուսել, մանել, շաղամար, ոստայն, ստէծ և այլն. 6) ընտանեկան հարաբերությունների նշանակումներ՝ աղջիկ, աներ, եղար, զաւակ, զոքանչ, թայրապոտք, թոռն, լաճ, խնամի, կոյս, փեսայ, քեռի. 7) դրամների անուններ՝ րճիռն, խերեւշ, ճաքարակիտ. 8) գրի հետ կապված բառեր՝ գիծ (գծել), էջ, թանաք, թուղթ, կածին «գրիչ»։

Աճառյանի բերած բառերից մի քանիսի ծագման մասին այժմ կարելի է խոսել ավելի որոշակիորեն. 1) խնձոր բառը ծագում է խուռերենից (ḫinzuri) կամ, թերևս, ուրարտերենից, եթե նրանում եղել է խուռերենի համարժեքը. 2) հավանական է հետևյալ բառերի հնդեվրոպական ծագումը՝ կուռ «տաշտ» (*gu-ro-՝ *geu- «ծռել» արմատից՝ ըստ Լիդենի), պուտուկ (պոյտն-ից՝ *beud- արմատից՝ ըստ Պետերսոնի), առ-կէջ, կէջ (իջ-անել-ի արմատը՝ *ei-dhi- կամ *ei-ghi-՝ *ei- «գնալ» արմատից՝ ըստ Պեդերսենի), թել (*tek-lo-՝ *tek- «գործել, հյուսել»՝ ըստ Ջահուկյանի), քեռի (*su̯esui̯o-՝ ըստ Ջահուկյանի). թանաք (հմմտ. թանալ «թրջել»), թոռն (*torno-՝ *ter- «քնքուշ, թույլ» արմատից՝ ըստ Վիդեմանի. ընդունում է նաև ինքը Աճառյանը. ՀԱԲ, 2², 198), ճոր (*sou̯o-ro-՝ ըստ Ջահուկյանի), ստէծ (*steig'-՝ *steig-ի կողքին «ծակել. սուր». հմմտ. նաև ստէծ < steg'-՝ steg-ի կողքին «ծածկ»՝ ըստ Ջահուկյանի), ոստայն (հմմտ. ոստ), իլ (*ēl-՝ *el- «ծռել» արմատից՝ ըստ Լիդենի). 3) հնարավոր է անաւթ բառի սեմական (հմմտ. աքքադ. unūtu, հմմտ. նաև եգիպտ. hnw.t «եղջյուր. գինու աման»՝ ՀԱԲ, 1², էջ 215), կոյս բառի՝ խեթա-լուվական (հմմտ. խեթ. kūša «հարսնացու»?), վարսակ, խաւեակ, կաճոյր, զաւակ բառերի՝ իրանական, լաճ բառի՝ քրդական (հմմտ. lāj) կամ քարթվելական (վրաց. բրբռ. lač) ծագումը։

Մնացած դեպքերում Աճառյանի կարծիքը մնում է ուժի մեջ, մանավանդ որ որոշ դեպքերում կան նոստրատիկ զուգահեռներ։

Երկրորդ՝ կան հայերեն բառեր, որոնք զուգահեռներ ունեն կովկասյան լեզուներում, բայց իմաստային կամ հնչյունական պատճառներով չի կարելի դրանք բխեցնել իրարից։ Հ. Աճառյանը բերում է մեկուկես տասնյակ այդպիսի բառ՝ ընկոյզ (ունի նաև սեմական զուգահեռներ), ծեփել, ծիրան, ծիրիլ, կաղամախ (ունի զուգահեռ նաև դակերենում՝ χαλαμίν-δαρ), կարաս, կարասիք, կրթել, կռել (կուռ, կռան), կտաւ, ճաճար, ճակ «էգ», ճժար, տող, փանդանեմ «ցրել» (հմմտ. քարթվ. *pant- «ցրել»), փառ «զգեստ»։ Սրանցից կտաւ-ը ամենայն հավանականությամբ ծագում է կուտ-ից (իմաստային հարաբերության համար հմմտ. ավար. բեժ. лъелъ «սերմ, կուտ» և «կտավ»), փառ-ը՝ իրանական աղբյուրից (իրան. *par-, *parwa- (ըստ Բեյլիի), որոնք ծագում են հ.-ե. *pel-, *pel-u̯o- նախաձևերից՝ *pel- «ծածկել»). Մնացած դեպքերում Աճառյանի կարծիքը մնում է հավանական։

Երրորդ՝ կան հայերեն մի շարք բառեր, որոնք զուգահեռներ ունեն նոստրատիկական լեզուներում, բայց բուն հնդեվրոպական ծագում չունեն (շեղվում են հայերենի հնդեվրոպական օրինաչափություններից) կամ ընդհանրապես չկան հնդեվրոպական այլ լեզուներում։ Սրանց հավանական աղբյուրը շատ դեպքերում կարող է լինել ուրարտերենը, մանավանդ որ մի քանիսը քարթվելական զուգահեռներ ունեն. հմմտ. աղիփ (աղփուն «թույլ, տկար»), խորխ, խուղ, գ-ան-խուղ, կար (-ել) (եթե քարթվ. աղբյուրից չէ), կլոր (եթե հ.-ե. ծագում չունի՝ *gu-l-), կոտոր, կոփ, կոփել, կափուցանեմ, կուրտ, (կրտել), լեպ (բրբռ.), լոպկել, պուրծ, պրծանիմ/փրծանիմ (բայց հմմտ. փրցանիմ<հ.-ե.? ձևերի բաղարկությո՞ւն), բրբռ. պոռթել և այլն [Джаукян, 1979, 93—94]։

Կարելի է նշել նաև հայերեն այլ բառեր, որոնք զուգահեռներ ունեն քարթվելական և կովկասյան մյուս լեզուներում, բայց որոնց աղբյուրը կարող է լինել մի երրորդ լեզու՝ ծիր, պտուկ, վաղ (վաղիւ) (վրաց. xval «վաղը») և այլն։ Տուտն (տտուն) բառը համարվում է հ.-ե. ծագման, բայց ունի նաև քարթվելական զուգահեռներ (ճան. dud «գագաթ», մեգր. dud- «գլուխ», սվան. dudūl- «ծծի պտուկ»). Թերևս սրանք մանկական բառեր են և պատկերավոր կազմություններ, որոնք համընկնում են ըստ «տարրական ցեղակցության», հազիվ թե սրանց հետ կապ ունի ուրարտ. dude-ն, որ Ի. Մ. Դյակոնովը մեկնում է որպես «սահմանային» [Дьяконов, 1963, 88]։

Չորրորդ՝ կարելի է որոշ եզրակացությունների հանգել ուրարտական վերջածանցների հայերեն համարժեքների հիման վրա [Джаукян, 1984b] ուրարտական հիմնական վերջածանցներն են՝ 1) գոյականական՝ -ḫi/e (šu-ḫi/e «կարգավորում»՝ š(u)- «կարգավորել. ստեղծել, սարքել» բայից), -ḫini (+ հգն. թ. կազմիչ -li՝ Argisti-ḫini-li- «Արգիշտական» — քաղաքանուն), -še (la-še «նվեր», gunu-še «ճակատամարտ»), -š-ḫi (šuri-š-ḫi «զոմ» կամ «պահետո»), -tuḫi (taršua-tuḫi «մարդամարդություն»). 2) ածականական՝ -(i)ni/e (rusa-ini «ռուսայան, Ռուսա թագավորին վերաբերող», Ḫaldi-ni «խալդյան, Խալդ աստծուն վերաբերող»), -(u)ḫi (diau-ḫi «դիաուխյան, տայոց»), -(u)si (bad-usi «հոյակապ», in-usi «այսպես»). 3) բայական՝ -(a)ḫ- (*nap-aḫ(u)- «զսպել, խաղացնել» ?, tam-ḫ(u)- «հեռացնել»), -an- (ked-an(u)- «ուղարկել»), ar- (šepuḫ-ar(u)- «փչացնել»?), -š- (ḫarḫar-š(u)- «քանդել»), -št- (sul(u)-št «երեսի վրա ընկնել, խոնարհվել»), -(u)l- (ter-ul(u)-, «դնել»)։

---

[18] Իմաստն ըստ Ի. Մ. Դյակոնովի [Дьяконов, 1963, 88]։

Այս առումով անհնար չէ, որ հետևյալ բառերը գոնե մասամբ ուրարտական ծագում ունենան. 1) խ-ով վերջացող (հմմտ. ուրարտ. -ḫi/e) հետևյալ գոյականները և ածականները՝ ա) -ախ-ով՝ բիրախ (եթե ճիշտ չէ Աճառյանի կարծիքը բիր-ի իրան. ծագման մասին՝ tir «նետ», ընդ որում չի բացատրվում -ախ-ը), խաղախ «նավ(ակ)», խիզախ, ձախ, կախ, կամախ «ընձառ», մախ «նախանձ», փարախ (հմմտ. վրաց. parexi «փարախ», հնարավոր է կամ հայ. բառի կովկասյան ծագումը, ինչպես կարծում է Հ. Աճառյանը, կամ հայ. և վրաց. բառերի ուրարտական ծագումը). բ) -եխ-ով՝ զե(ղ)խ, մեղեխ, «կացնի կոթ», մեղմեխ «նենգ, կեղծավոր», մժեխ (մժիխ, մժեղ), նեխ, պարեխ «ժայռ, քարոտ տեղ» (հմմտ. վրաց. parexi «քարայր. անդունդ», որ Աճառյանը համարում է հայերենից փոխառյալ), ցեխ (ցիխ). գ) -իխ-ով մանանիխ, պարիխ «փռոց, կապերտ, գորգ, խսիր». դ) -ոխ-ով՝ կոխ, ճոխ, ոսոխ. ե) -ուխ-ով՝ բուխ, բխել, բուխ, բխել, կանչուխ (կաննոխ) «գավազան, ցուպ, ձող», կանուխ. 2) -սխ-ով վերջացող (հմմտ. ուրարտ. -šḫi/e) հետևյալ գոյականները՝ խարիսխ (հմմտ. վրաց. xarisxi «աստիճան»), խորիսխ «մեղրահաց, մոմով մեղր». 3) -ին-ով վերջացող (հմմտ. ուրարտ. -ini/e)՝ ոչ հնդեվրոպական ծագման ածականները՝ դիւրին, խորին (խոր), խրթին, ճեշտին. 4) -ող- հիմքով բայերը (հմմտ. ուրարտ. -ul-)[19]՝ զվողիմ «մասնակից լինել, գողանալ» (զվող «գործակից» Աճառյանը համեմատում է վրաց. zav- «համաձայնություն» արմատից ծագող բառերի հետ, որ կասկածով բերված է քարթվելական փոխառությունների նաև մեր ցանկում, խճողեմ՝ խճել-ի կողքին), ձախողիմ (սրա նմանությամբ յ-աջ-ող-իմ):

Ուրարտական հատկացական -ḫi/e ածանցը, որ հաճախադեպ է տեղանունների մեջ և հունարեն արտահայտվում է χ-ով (հմմտ. Diauḫi — Τάοχοι), հայերի կողմից կարող էր ընկալվել որպես հոգնակերտ ք-ի համարժեք և արտահայտվել նրա միջոցով՝ Abiliani/eḫe — Աբեղեանք, Diau(e)ḫi — Տայք և այլն։

Եթե Sarduri հատուկ անունը կազմված է, ինչպես կարծում են, Sardi աստվածուհու անունից [հմմտ. Меликишвили, 1960, 440][20], ապա -uri-ն ածանց է և նրան համապատասխանող -որ-ով կամ -ուր-ով վերջացող անունների մեջ թերևս մասամբ առկա են ուրարտական հիմքեր՝ 1) -որ-ով՝ ախլախճոր «ձնծաղիկ», ախճոր (աղճոր, աղխճոր, ախյճոր) «ծառայական, ստոր, գռեհիկ», աղտոր «մի բույս՝ սմաղ», բճղոր (խառնաբճղոր), գլոր (գխտոր, գխրոր) «մի տեսակ ներկանյութ», ժխոր, խեփոր «խեցեմորթի պատյան» (խեփ-անալ «կարծրանալ»), խոլոր (խոլոռ) «խոժոռ, խեթ», խոշոր (և խոժոռ), խրխոր «փշոտ», կոտոր, պղտոր (հմմտ. պիղծ), սալոր (շլոր)- (բայց հմմտ. ակկադ. -šal-lūru(m) «զկեռ»?), սովոր, ստոր, ցնոր, փոփոր «ոլորուն» (փոր «ծալք»՝ փար-ի կողքին). Իհարկե, կան նաև -որ-ով բուն հայկական կազմություններ՝ հնդեվրոպական համապատասխան արմատներից (բեկոր, բոլոր, գլոր, ոզոր, քակոր և այլն), բայց հնարավոր է, որ սրանց մեջ -որ-ը գա ուրարտական որ-ից՝ վերջինիս ընդհանրացմամբ (հմմտ. և -որ-ով բայական կազմությունները). 2) -ուր-ով՝ աբուր[21], ամուր, բաւուր «պատարվակ», գանգուր, բափուր (բափ-), լախուր (նեխուր), կելուր-ք «հմարք» (կել «նենգություն»), կոտուր «տանիք», կոտուր (կց-կոտուր՝ կից. հմմտ. կոտոր), մաքուր, մսուր, տխուր (եթե տ-ն ժխտական չէ), փետուր (եթե ծագում է փետ-ել բայից և ոչ թե հ.-ե. *petr̥-ից՝ մի այլ հ.-ե. լեզվի միջնորդությամբ), փքուր (սակայն հմմտ. նաև փշուր, փսոր). -ուր-ով վերջացող բառերի մեջ նույնպես կան հ.-ե. (անուր< *anō-ro-, բլուր< *bhōl-, բրբուր< *tōr-tōr-, մրուր< *mutro- և այլն) և այլ ծագման բառեր, բայց հնարավոր է բերված բառերի մի մասի ուրարտական ծագումը։

Գ. Ղափանցյանը [1961, 142] ուրարտական -ունի ածանցն է տեսնում արեգունի, գողունի բառերի մեջ։ -ունի-ով են կազմված նաև անզաւակունի, արքունի, խխնջունի, խնամունի, ծերունի, տերունի, տիկնունի բառերը, որոնցից արեգ, գող, տէր (<տի-այր), տի-կին հիմքերը հնդեվրոպական են, զաւակ, արքայ, խխունջ, խնամի բառերը՝ անհայտ ծագման (ուրարտակա՞ն)[22]։

Եթե ընդունենք, որ Ղափանցյանը ճիշտ է, և որ ուրարտ. բառավերջային ձայնավորը մասամբ պահպանվել է, մասամբ ընկել (հմմտ. արծուի և արծիւ զուգահեռ ձևերը), ապա կարելի է նշել -խի-ով, -նի-ով վերջացող բառերի մեջ ևս ուրարտական ձևերի հնարավոր առկայությունը։ Սրանցից -նի-ով վերջացողները գրաբարում մասամբ գիտակցվել են որպես արմատական, մասամբ ածանցական (այդ թվում՝ հավաքական իմաստով) բառեր. վերջիններիս մեջ զգալի թիվ են կազմել հնդեվրոպական ծագման բառերը, սակայն թերևս եղել են նաև ուրարտական ծագման բառեր։ Անհնար չէ, օրինակ, ափնի «հնձից հետո մնացած հասկեր. խաղողի որթ», ան-ճոռնի, ծ(ղ)խնի, ճղնի (ճնղնի, ճնղի) «սպատավոր», պատանի, պարմանի բառերի ուրարտական ծագումը։

Ուրարտական -ni վերջածանցի հիման վրա է Վ. Բենեցյանուն [Bănăteanu, 1960, 359—375. 1961, 85—107 1961b, 515—540] փորձում մեկնել -ենի-ով ծառանունները, -անի-ով հավաքականները, այլև -ունի-ով տեղանունների ու նախարարական տների անունները[23]։ Թեև ի վնաս -ենի-ով ծառանունների ուրարտական ծագման է խոսում խնձորենի, ընկուզենի ձևերի ուշ վկայությունը՝ ի տարբերություն խնձորի, ընկուզի ձևերի, որոնց -ի-ն հնդեվրոպական ծագում ունի (*-ijā), սակայն հնարավոր է ենթադրել -ենի-ի բարբառային պահպանում և հետագա տարածում։

---

[19] Եթե -ող-ը գերբայական ող-ի տարբերակը չէ, այլ խառնվել է նրա հետ։

[20] Կապված չէ՞ արդյոք թրակ. Σαρδοί (Σερδοί) ցեղանվան հետ։

[21] Ըստ Քուշմանյան-Աճառյանի [ՀԱԲ, 12, 90] փոխառություն է հյուսիս-կովկասյան աղբյուրից, բայց բերվող ստ. tur-ն ինքը կարող է փոխառյալ լինել։

[22] Հմմտ. նաև ժողովրդական հեքիաթներում հաճախ հանդիպող նավլունի բառը, որ մատենագրության մեջ պահպանվել է նաւլէն, նաւալունի և այլ ձևերով («մեծ թուր»)։ Հնարավոր է արքայ բառի ծագումը ἄρχων «առաջնորդ, կառավարիչ, իշխող» բառից՝ մարական միջնորդությամբ [հմմտ. Schmitt, 1980 6, 14]։

[23] Ավելի ուշ Վ. Բենեցյանուն փորձում է ապացուցել հայ. գործ. հոլովի -ւ (-վ, -բ) վերջավորության և -եալ է իմ կառույցի ուրարտական ծագումը։

Հինգերորդ՝ բաղաձայնական -ն-ով հիմք ունեցող ոչ հնդեվրոպական բառերը գոնե մասամբ պետք է ունենան ուրարտական ծագում կամ հայերենին անցած լինեն ուրարտերենի միջոցով, եթե նկատի առնենք ուրարտական ni-ով հիմքերի գոյությունը և -ni որոշիչ հոդի առկայությունը (վերջինս կարող էր ընկալվել հայերի կողմից որպես բառամաս)՝ բնդեռն (բնդիռն) «մի բզեզ», գուղձն, եղեամն, եղերդն, եղէգն, լիսեռն, լորձն, խաշն, խոլորձն, խուրձն, կառափն, կառն «թաղիք», կառն «թարախ», կառ(ն) «փուշ», կնճիռն, կոտիմն, ճիւռն(?), ճիգն, ճպուռն, մանգառն «մի խմորեղեն», շուրթն (հմմտ. շուռ և շուրջ), ոլոռն, ոսպն, որդն, որոմն, ուլն «ուլունք», ունն «մուրճ, կռան», պնեղն, սաղմն , սկիզբն, ցակն «աղքատություն»:

Ուրարտ. i-ով հիմքերի առատության պայմաններում[24], կարելի է հայերենի ի հոլովում ունեցող և չստուգաբանված բառերի մեջ ևս փրնտրել ուրարտական հիմքեր՝ ախոյեան, ակումբ, ամբոխ «խլուրդ», անգոյս «աքացի», անաւր, ապառաժ, արփ «եթեր», աքիս, բաղձ, բիծ, գայտ «խիտ», գաւիթ «նախասենյակ», գէշ «դիակ», գիծ, գաւս «չոր», անպտուղ», դիր, «հարթ. հարթ տեղ», զագիր, թախիծ, թաղ «արվարձան, ձլատ, խազմ «կռիվ», խախաց «մակարդ», խաղ «ճահիճ», խառն-f, խուրձ, «եղեգնուտ, շամբ», խեղդ, խիղճ, խիստ, խիտ, խոճաւ, խոշոր, խրամ, խրաց «կոշկի կապ», ծախ, ծայր, ծերպ, ծիրտ, ծոպ, կաճ (կայճ) «թաղիք», կայք «կողով», կայմ, կաճաշ, կանեփ (<ուրարտ.<սկյութ.?), կապերտ, կոպ (կոփ), կուրծ-f (հ.-ե.?), ճամբ «խումբ», ճաշմ (խաշմ), ճեստ «անհնազանդ», ճապաղ, ճոխ, մազ, մախաղ (հմմտ. վրաց. maxali «մախաղ, տոպրակ»), մաղ, մաղձ, մայր «երակ», մքեր, յոխորտ, յուռութ, ճեղ, շեշտ, շփոթ (հմմտ. վրաց. špoti), ողկոյզ, ուղխ «պարտեզը ջրելու փոքրիկ առու», պաղ, պտոյտ, սեղմ, սոր «ուժեղ քամի», սովոր, ստոր, տենչ, ցնոր-f, ցոփ, փթիթ, փոր, փող «կոկորդ», փոս:

Կարելի է նշել ուրարտ. հատուկ անուններից հասարակ անուններ և հասարակ անուններից հատուկ անունների ծագման դեպքեր: Առաջինի համար տիպական օրինակ է ախորան «սրնթաց և աշեղ» բառը, որ ծագում է Ախուրեան գետի անունից [հմմտ. Աճառյան, ՀԱԲ, 2², 99. ՀԼՊ, 1, 199]: Երկրորդ տիպի անցումը երկու կարգի է լինում՝ 1) ուրարտական հասարակ անուն>ուրարտական հատուկ անուն>հայ. հատուկ անուն և 2) ուրարտական հասարակ անուն>հայ. հատուկ անուն. հնարավոր է ենթադրել, որ երկրորդ դեպքում միջին օղակը կորած է. հմմտ. ուրարտ. qarbi/e «ժայռ»>հայ. Կարբի, ուրարտ. garini>«ամրոց, բերդ» (հմմտ. ուրարտ. Gianiani)>հայ. Գառնի[25] և այլն [տե՛ս Арутюнян, 1970 427]:

Ուրարտ. մի արձանագրության մեջ նշված Širimutara («երկիր» Զըլդըր լճից հարավ-արևմուտք) անվան Širim(u)- բաղադրիչը թերևս պահպանված է հայ. շիրիմ բառի մեջ: Զուգադրելով հայ. շիրիմ «գերեզմանաքար» բառը վրաց. širimi «միղաքար», ճան. širimi «ավազ» և այլ բառերի հետ՝ Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3², էջ 521) հայերեն բառի նախնական իմաստը համարում է «քար» և վերջիններս դիտում որպես հայերենից փոխառյալ. եթե վերևում բերված զուգադրությունը ճիշտ է, ապա մենք գործ ունենք հայերենի և քարթվելական բառերի միևնույն աղբյուրի հետ: Ուրարտ. բառի առաջին i-ն հայերենում պահպանվել է (չի վերածվել ը-ի) մեզ անհայտ պատճառով (*ei>*է>ի?):

Ուրարտական ծագում ունեցող հայկական անձնանունների քանակը սակավաթիվ է. քիչ թե շատ հավաստի կարելի է համարել ասորական աղբյուրներում հիշատակված ուրարտ. Aramu-ն, որ հայերին է անցել Արամ ձևով: Եթե Erimena թագավորի անունը կապ ունի արմենների անվան հետ, ապա այն կարող է լինել թե՛ հատուկ և թե՛ հասարակ անուն, ընդ որում ոչ թե ուրարտերենի ներդրում հայերենում, այլ արմեն (Արմեն) անվան հին հիշատակում: Եթե ուրարտ. e-ն արտասանվում էր լայն (+ə? հմմտ. Erimena—արմեն, Meliteja — Մալաթիա), ապա թերևս ուրարտ. Menua անվան մեջ նույնպես առկա է հայ. Մանուկ-ի առանց փոքրացուցիչ ածանցի ձևը (Մանու-<հ.-ե. *mənu- «փոքր»). որոշ հեղինակներ Menua-ի մեջ (էրգատիվ հոլովը՝ Menuaše) տեսնում են Մանաւազ անունը, բայց սա իրանական ծագում ունի. եթե նմանությունը պատահական չէ, ապա խոսք կարող է լինել ուրարտական (>հայ.) անվան իրանական ազդեցությամբ հետագայում ձևափոխվելու մասին:

Հավանական է Դադէ (Դադիւ) անձնանվան ուրարտական ծագումը՝ Dada (Dadi)՝ խուռ. Dada-ի կողքին:

Ուրարտական պանթեոնի ազդեցությունը հայկականի վրա, որքանով կարելի է դատել եղած փաստերից, մեծ չի եղել: Գ. Ղափանցյանը նշում է ուրարտ. Ar'a—հայ. Արա և ուրարտ. Araza-հայ. արած- (արատ՝ որպես արոտի աստված) զուգահեռները [Ղափանցյան, 1940, 43], բայց սրանք կասկածելի են. 1) Ar'a-ն աստվածուհու անուն է, Արա-ն՝ արական անձնանուն, 2) երկրորդ դեպքում էլ ուրարտ. դիցանունը համեմատվում է հայերեն բայահիմքի հետ: Ավելի հավանական է Araza-ի և հայ. արաց ամսանվան կապը, մանավանդ որ հնում վերջինս համարվել է Հայկի որդիներից մեկի անունը:

Վաղուց ի վեր կարծիք է հայտնված -ունի-ով վերջացող նախարարական տոհմանունների և համապատասխան -ունիք-ով վերջացող գավառանունների ուրարտական ծագման մասին[26]: Ճիշտ է, այս դեպքում ուրարտ. -i ձայնավորը պետք է ընկած լիներ, բայց թերևս հատուկ անունների մեջ այն պահպանվել է հատուկ գործածության պայմաններում: Բուն ուրարտական արձանագրություններում -uni-ով հատուկ անունների (հատկապես տեղանունների և ցեղանունների) քանակը շատ մեծ չէ՝ Adaḫuni, Aḫiuni, Aiduni, Apuni, Azameruni, Dirguni, Eruni, Ḫulmeruni, Irpuni, Libituni, Luḫiuni, Luipruni, Maqaltuni, Mušuni, Qaduqaniuni, Qi/eḫuni, Qirpununi, Rašuni (անձնանուն՝ Ruišiani երկրի թագավոր), Tariuni, U̯elikuni (U̯elikuḫi < Գեղա(ր)քունի), Uḫuni, Urieiuni, Ziuquni, Zı(u)quni (դիցանուն): Սրանք դիտարկվող մեծամասնությամբ հավաստի զուգահեռներ չունեն հայկական հատուկ անուններում: «Աշխարհացույց»-ում հանդիպող -ունի-ով վերջացող տեղանունները և մասնավորապես գավառանունները կենտրոնացած են հին Ուրարտուի տարածման հիմնական վայրերում՝ Վասպուրականում՝ Բոզունիք (հմմտ. Բուզունիք նախարարական տոհմանունը), Բուժունիք, Երուանդունիք (հետագա ձևափոխությամբ՝ Երվանդունիք-ից), Կրճունիք, Մեծնունիք (հմմտ. Մեհնունիք նախարարական տոհմանունը), Պալունիք, Պարսպատունիք, Վարաժնունիք, Տրպատունիք, Տուրուբերանում՝ Ապահունիք, Ասպակունիք (Ասպակունեաց ձոր), Արշամունիք (հետագա ձևափոխությամբ), Բզնունիք, Խոր-խոռունիք, Այրարատում՝ Արշարունիք, Հաւնունիք[27], Վարաժնունիք, այլև Կորճայքում՝ Կարթունիք, Սյունիքում՝ Գեղա(ր)-քունի-ք (հմմտ. և հենց Սիւնիք), Արցախում՝ Վայկունիք: Բավականին շատ են հիմնականում նախարարական այն տոհմանունները, որոնք կապված չեն «Աշխարհացոյց»-ում բերված տեղանունների հետ։ Սրանց մեջ առկա են իրանական ծագման հիմքեր (իրանական տարրի առկայություն, ուրարտական անվան ձևափոխություն և -ունի-ի հետագա տարածում)՝ Բագրատունի, Պահլաւունիք, Տրդատունիք, Վազրասպունիք և այլն։ Մյուսներից առանձնապես հայտնի են՝ Ամատունի, Արծրունի, Գնթունի, Գնունի, Մաղխազունի (հմմտ. մաղխազ < հասարակ անունը), Մանդակունի, Որդունի, Սահակունի, Սլկունի (և Սաղկունի), Վահեւունի, Տրունի և այլն[28]։ Այս բոլոր դեպքերում կան հետագա հավելումներ և համաբանական կազմություններ (հմմտ. Uelikuni > Գեղարքունի, որտեղ u̯ > գ և Վահեւունի կամ Վահունի, որի դեպքում չկա օրինաչափ անցում, և որը ակնհայտորեն ուշ կազմություն է կամ հին անվան ձևափոխություն):

---

[24] Թեև i-ն կարող էր լինել թուլացած ə ձայնավորի նշանակում, երբեմն էլ սեպագրային ավելադրություն:

[25] Թերևս ուրարտերեն garini-ից են ծագում կովկ. «պատ, ցանկապատ» նշանակող մի շարք բառեր՝ վրաց. qore «բակի պատ», աբխազ. aguara «ցանկապատ», օս. goren «ցանկապատ, պատ» [այս բառերի համար տե՛ս Абаев, 1, 1958, 524]:

[26] Առաջիններից մեկը այդ մասին է խոսել Կ. Բասմաջյանը [«Բանասեր», 4, 193—196, 239—251, 214—217. հմմտ. նաև Բասմաջյան, 1914, 55—57]: Հետագայում արվել են մեծ թվով ճշտումներ:

Ուրարտական հատուկ անուններում զգալի թիվ են կազմում նաև -ani-ով, ini-ով վերջացողները։ Առանձնահատուկ տեղ են գրավում -iani-ով վերջացողները, որոնց դեպքում վերջին i-ն հայերենում չի ներկայացված՝ Abiliani >Աբեղեան(f), Aḫuriani >Ախուրեան և այլն։ Այսպիսով, -եան-ով նախարարական այն տոհմանունների և աշխարհագրական այն հին անունների դեպքում, որոնք վերջանում են -եանf-ով, և որոնց հիմքերը մեզ ծանոթ ձևերով չեն բացատրվում (երբեմն էլ մեկնվում են, բայց իբրև արդյունք ժողովրդական ստուգաբանության), հնարավոր է գոնե մասամբ ենթադրել ուրարտական ներդրում։ Այսպես, «Աշխարհացոյց»-ի գավառանուններից Վասպուրականում կան՝ Գաբիթեան, Գազրիկեան, այլև Տարգրեան (<Տանկրիայն), Այրարատում՝ Աբեղեանf, Բասեան, Գաբեղեանf, Ծոփաց կողմում (Չորրորդ Հայքում)՝ Խորձեան, Հաշտեան։ Ինչպես տեսնում ենք, -ունի-ի համեմատ սրանց տարածքային բաշխումը տարբեր է, բայց դարձյալ ընդգրկվում են Վասպուրականը և Այրարատը։ Գավառանունների մեջ զուգահեռներ չունեցող նախարարական տոհմանուններից հիշենք մի քանիսը՝ Առաւեղեան, Առաւենեան (Առուենեան, Առաւանեան), Դիմաքսեան, Քողեան և այլն։ Հանդիպում են և զուգահեռ -ունի(f)-ով ձևեր՝ Մաղխազունի—Մաղխազեան և այլն. վերջինս, անշուշտ, նորակազմություն է՝ -եան-ի հետագա տարածման և հայկական ու իրանական ծագման բառերի հետ բաղարկվելու արդյունք։

Եթե հայ. հովիտ-ը իրոք կապ ունի ուրարտ. ḫubi-ի հետ, ապա հայերենի հովիտ բաղադրիչով տեղանունները (հատկապես գավառանունները) պետք է հիմնականում ուրարտ. շրջանից գան և մասամբ ուրարտ. ծագում ունենան. հմմտ. Վասպուրականում՝ Աղի-հովիտ, Արճիշակ-ովիտ, Կոգ-ովիտ, Կուղան-ովիտ, Այրարատում՝ Կոգ-ովիտ, Մոկքում՝ Արգաստ-ովիտ, Ծոփքում (Չորրորդ Հայք)՝ Բալա-հովիտ։ Սա առավել ևս հաստատվում է երկու փաստով. 1) Աղիովիտը տեղադրմամբ համապատասխանում է ուրարտ. Alia-ին[29]. 2) ուրարտ. Tuaraşini ḫubi-ն համապատասխանում է հայ. Տուարածատափ-ին։ Անհնար չէ կարծել, որ Արգաստ-ովիտ-ի առաջին բաղադրիչը գալիս է Argišti-ի անունից։ Նույն Argišti-ն է ենթադրվում նաև Արճեշ քաղաքանվան մեջ։

Տեղանունների -եւան և, թերևս, -(ա)ւան բաղադրիչով շատ անուններ կարող են ուրարտական կազմություններ լինել՝ մասամբ բաղարկված իրան. ծագում ունեցող աւան (հմմտ. հ. պրսկ. āvahanam, պրթ. āvan «ավան, բնակատեղի») բառի հետ. հմմտ. Նախճ-աւան «նախնիների ավան»[30] (ավելի ուշ, ժողովրդական ստուգաբանությամբ՝ Նախիջեւան), Ալեւան (Փայտակարանում) և այլն։

Զգալի է եղել նաև հայկական ցեղերի լեզվական ներդրումը ուրարտերենի մեջ։ Վերևում մենք առիթ ունեցանք հիշատակելու հ.-ե. *ṛgipiḭo- ձևից ծագող հայ. *arcivio (>արծուի, արծիւ) բառի փոխառությունը ուրարտերենում որպես հատուկ անուն՝ Arşibi-ni (Մենուա թագավորի ձիու անունը)[31]։ Ամենայն հավանականությամբ նույն հիմքն է առկա նաև ուրարտ. Arşibedini դիցանվան մեջ, ընդ որում երկրորդ՝ -di- բաղադրիչը կարող է արտացոլել հայ. դի-f «աստված» բառի հիմքը (հ.-ե. *dhēs-, հգն. *dhēses)։ Արդեն նշվել է որ, վստահելի հ.-ե. զուգահեռներ ունեցող հայ. աւելի, բիւ, ծառ, պեղեմ, սուր, ցեղ բառերն են թերևս ուրարտ. abili-d(u)- «ավելացնել», a-tibi «տասը հազար», zari/e «այգի», pili «ջրանցք», šuri/e «զենք», zil(i)bi «ցեղ, սերմ, սերունդ», բառերի աղբյուրը։ Ակնհայտորեն հայկական ծագում ունի Tuaraşini-ն, որ պահպանվել է Տուարած(-ա-տափ) տեղանվան մեջ. այն բաղկացած է տուար (< հ.-ե. *dḭpəro-) և արած- (հ.-ե. *trəg'-) հիմքերից՝ տուարած-ի հետագա կրճատմամբ (հապլոլոգիա)։

Այս փաստերը մեզ իրավունք են տալիս ուրարտերենի բառապաշարի և ուրարտական արձանագրություններում ավանդված հատուկ անունների մեջ փնտրելու հայերեն տարրեր։

Անհնար չէ ենթադրել, որ ուրարտ. aniarduni «անկախ» բառը ոչ թե բուն ուրարտական լինի, այլ հայերենից փոխառյալ՝ ան- ժխտական նախամասնիկով և յ-ար «կից, միացած» արմատով կազմված անյար «չհարող, անջատ» բառից։ (+ուրարտ. du-ni)։ Հնարավոր է նաև, որ ուրարտ. arniuše «գործ, արարք, սխրանք» բայանունը կազմված լինի հայերենից փոխառված առնել «անել, շինել» բայի հիմքից և ոչ թե բուն ուրարտական ծագում ունենա։

Եթե արմեն-հայերի անունը պահպանված է Erimena թագավորի և Arme երկրի անունների մեջ, ապա մենք ունենք հայերենի՝ ուրարտական աղբյուրների միջոցով ավանդված մի վկայություն ևս։ Նշենք, որ Erimena անունը (Errimena ձևով) հանդիպում է նաև Ասորեստանի թագավոր Թուկուլտի-Նինուրտա I-ի ժամանակվա սեպագիր տեքստերում՝ տարբերկրացիների (գերիների և գաղթականների) թվարկման մեջ [հմմտ. Фрайданк, ДВ, 2, 1976, 87–88]։

---

[27] Սա պետք է նույնացնել ոչ թե Abuni- (Apuni) երկրի, այլ Abnuluani- թագավորի կամ ցեղի անվան հետ. սրանց երկիրը գրավել է Արգիշտին՝ խոսելով Տայքի գրավման մասին.

[28] Նախարարական տների ցուցակները տե՛ս հատկապես АДОНЦ, 1908, 236—321։

[29] Հմմտ. նաև Աղի գետանունը։

[30] Նախճները հյուսիսկովկասյան նախյան ցեղերի նախնիներն են (հմմտ. չեչենների ինքնանվանումը՝ НОХЧО, НОХЧИ, բրբռ. НАХЧО)։ «Աշխարհացոյց»-ում հիշատակված Նախճամատ-ը ստուգաբանվում է նախյան լեզուներով՝ «նախճա-լեզու» [հմմտ. Дешериев, 1963, 25]։

[31] Հայերենից են փոխառված վրաց. arçivi-ն և համապատասխան կովկասյան այլ ձևերը։

Եթե հայկական ցեղերն իրոք ապրում էին ուրարտական պետության մեջ՝ ուրարտացիների հետ կողք-կողքի, ապա նրանց լեզուն պետք է հետքեր թողած լինի ուրարտական հատկապես հատուկ անունների մեջ։ Այդ մասամբ երևաց ուրարտ. Arş·bini ձիանվան, Arşibedini դիցանվան, Erimena անձնանվան մասին ասածից։ Նշենք մի քանի այլ հավանական դեպք։

1) Alaini տեղանվան մեջ թերևս առկա է հայերեն աղ(ի)– հիմքը. եթե -aini-ն ուրարտական ածանցական մասնիկ չէ՝ ժառանգված հայերենի կողմից, ապա թերևս ամբողջ բառը զուտ հայկական կազմություն է՝ ածանցական հին ձև։

2) Ուրարտ. Ziuquni աստծու և նրան պաշտող Ziukuni երկրի (շրջանի) անվան մեջ թերևս պահպանվել է հայ. ձուկն, հգն. ձկուն–ք բառի հին ձևը. այդ երկիրը գտնվել է Վանա լճի հյուսիս-արևմտյան ափին, որտեղ հնարավոր էր ձկան աստվածացումը։

3) Եթե ardi-ն իրոք նշանակել է «աստված» և առկա է Şinui-ardi, Šel-ardi դիցանունների մեջ, ապա Şinui- բաղադրիչը կարող է պարունակել հայ. ծին բառի հին ծինու բաղադրիչը, ընդ որում ծին-ը կարող է հնում ունեցած լինել (ինչպես հ.-ե. այլ լեզուներում) նաև «սերունդ, զարմ, ցեղ» իմաստը։

Հնարավոր է նաև Arni, Aui, Irmušini դիցանունների մեջ տեսնել հայ. այր բառի սեռ. առն (թե՞ ուրարտ. ar(a)ni «արդարամտություն, շնորհ»), հաւ «պապ» (հ-ի անկման համար հմմտ. Aldi ձևը՝ Ḫaldi դիցանվան կողքին), -սին (սն–ել) հիմքերը, բայց բոլորն էլ մնում են ենթադրությունների սահմանում։ Ավելի հավանական է ենթադրել Ṭuran դիցանվան հայկական ծագումը՝ տուր–ք բառի հիմքից։ Talapura դիցանունը թերևս ունի հայ. -awora > աւոր ածանցով հիմք (*թաղաւոր?, բայց հմմտ. ուրարտ. pura «ստրուկ»?)։

4) Šeriazi երկրի (շրջանի) անվան մեջ կարող է առկա լինել ինչ որ *Սեր–ք տեղանվան հգն. սեռական Սերեաց-ի հին ձևը (վերջին անշեշտ ձայնավորով՝ $^{\mathrm{KUR}}$Seriazi=երկիր Սերեաց). այդ երկիրը պետք է գտնված լինի այժմյան Էրզրումից հարավ-արևելք՝ Diauḫi-ից (=Տայքից) հարավ. եթե սա ճիշտ է, ապա հ.-ե. *sk (*sk)>հայ. ց փոփոխությունը պետք է մ. թ. ա. VIII դարից առաջ կատարված լինի (տեղանունը հանդիպում է Արգիշտի թագավորի արձանագրությունում)։

5) Սարդուրիի արձանագրության մեջ հիշատակված է Մալաթիա քաղաքի մերձակայքում գտնված Karniši «լեռնային երկիրը». հնարավոր է, որ այս անվան մեջ առկա լինի հայ. քար (հգն. ուղղ. քարինք, հայց. քարինս) բառը, նույնիսկ սրա հգն. հայց. քարինս-ի նախնական ձևը։ Սակայն, ինչպես նշվել է, հայ. բառի հնդեվրոպական (*kar- «կարծր») լինելը կասկած է հարուցում, և Karniši -ն կարող է պարունակել այդ հիմքը նաև անկախ հայերենից։

6) Եթե գիւղ (գեղ–) բառի գ– նախահնչյունը *u̯-ի հետուրարտյան շրջանի ձևափոխությունը չէ (հմմտ. Uelikuni > Գեղա(ր)քունի) և ուրարտական շրջանում որոշ տարածքներում արդեն արտասանվել է հենց g-ով, ապա թերևս նրա հոգնակի ձևն է պահպանված Giluarani-ի մեջ, որ Գ. Մելիքիշվիլին [Меликишвили, 1960, 427] համարում է «ինչ-որ տոհմա-ցեղային միավորի անվանում»։ Ինչպես հայտնի է, գիւղ-ը հանդիպում է գեւղեան, գեղենի, գեղաւրայ-ք (գեղաւրէք) հոգնակի-հավաքման ձևերով և Gilurani-ի մեջ կարելի է տեսնել ինչ-որ հավաքական ձև։

7) Maqaltuni բնակավայրի (գտնվել է Igani երկրում՝ Չըլդըր լճի հարավ-արևմտյան ափին) անունը, ինչպես նշվել է, կարող է հայկական կազմություն լինել՝ տուն բաղադրիչով. հնարավոր է առաջին մասն էլ նույնացնել մական «ոչխարների փարախ» բառի հետ, որ սեմական փոխառություն է (հմմտ. եբր. mik̠əia «փարախ»). Հ. Աճառյանը [ՀԱԲ, 3^2, 231] բխեցնում է ասորական կորած ձևից, բայց այն կարող էր լինել ավելի վաղ շրջանի փոխառություն։

Անհնար չէ կարծել, որ նույն տուն բառի ձայնեղ բաղաձայնային տարբերակն է առկա barzudibiduni կոմպլեքսի մեջ, որ ինչ-որ շինության անուն է և հանդիպում է É «տուն» դետերմինատիվով. այն մեկ անգամ գրված է նաև barzudibidu (ni-ն դիտվել է ուրարտացիների կողմից որպես որոշիչ հո՞դ), մեկ անգամ էլ՝ barzidibiduni։ Այս դեպքում barzu-ի մեջ էլ կարելի է տեսնել բարձր–ի հին բարձու հիմքը (հմմտ. նաև barzani «?» և Barṣia— դիցուհու անուն). անհայտ է մնում dibi-ն։

8) Eraṭele բնակատեղի անվանման մեջ թերևս առկա է հայ. տեղ(ի) (հին եւղ) բառը. Era-ն կարող է լինել կամ ցեղանուն, կամ հայ. երա– «նախկին, առաջին» (հմմտ. երախայրի «առաջին պտուղ») և հայ. երայ (երէ) «որսի կենդանի» հիմքերից որևէ մեկը։

9) Uškiani լեռնանունը թերևս կապված է հայ. ոսկի բառի հետ. եթե ոսկի բառը ուրարտական ծագում ունի (որ հնարավոր է), ապա Uškiani-ն ամբողջովին ուրարտական կազմություն է, այլապես այն փոխառված է հայ. Ոսկեան տիպի նախաձևից (հմմտ. Ոսկեանք)։

2. ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՍԵՄԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

ա) ՍԵՄԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

Սեմական լեզուները սովորաբար բաժանում են երեք խմբի՝ հյուսիս-արևելյան, հյուսիս-արևմտյան և հարավային։ Հյուսիս-արևելյան խումբը ներկայացված է մեռած աքքադերենով, որ ունեցել է երկու բարբառ՝ ասուրերեն (ասորեստաներեն) և բաբելերեն։ Հյուսիս-արևմտյան խմբին են պատկանում՝ ա) այսպես կոչված, քանաանական լեզուները՝ եբրայերենը (հրեերենը, իվրիտը), սրան մերձավոր մովաբերենը, փյունիկերենը, ուգարիտերենը, և բ) արամեերենը իր բազմաթիվ բարբառներով, որոնք բաժանվում են արևմտյան (հինարամեական, պալմիրյան, նաբաթեական, պաղեստինա-արամեական) և արևելյան (ասորական, մանդեական, բաբելոնա-թալմուդյան) բարբառների։ Հարավային խումբը ներկայացված է արաբերենով, հարավ-արաբական հին ու նոր լեզուներով (հին՝ սաբեերեն, մինեերեն, կատաբանրեն, նոր՝ մեհրի, շահրի, սոկոտրի) և եթովպական լեզուներով՝ գեեզ (հին գրավոր լեզու), ամհարերեն, տիգրե, տիգրինյա, հարարի, գուրագե[1]։

Սեմական լեզուները ակնհայտ ցեղակցության մեջ են եգիպտական, բերբերական և քուշական լեզուների հետ, որոնք միավորվում են քամական լեզուների անվան տակ և սեմական լեզուների հետ կազմում են սեմա-քամական լեզուների ընդհանրությունը։ Մ. Կոհենը և ուրիշ հետազոտողներ սեմական լեզուները ոչ թե հակադրում են մնացած երեքին, այլ դիտում նրանց հետ միասին որպես նույն ընտանիքի հավասարազոր անդամներ։

Սեմա-քամական ցեղերի սկզբնական բնակավայրը համարվում է հյուսիսային Աֆրիկան։ Սեմա-քամական ընդհանրության տրոհումից հետո, մ. թ. ա. V—IV հազարամյակներին սեմական ցեղերը զբաղեցնում էին Արաբական թերակղզին՝ զբաղվելով հիմնականում անասնապահությամբ և վարելով քոչվորական կյանք։ Այստեղից նրանք տարածվում են հյուսիս։ Մ. թ. ա. III հազարամյակում սեմական այն ցեղերը, որոնք հետագայում հայտնի են դառնում աքքադացիների անվամբ, սիրիական տափաստաններից սկսում են թափանցել Միջագետքի հյուսիսային մասը։ Աստիճանաբար աքքադները տարածվում են նաև հարավ և խառնվում տեղական շումերական բնակչության հետ։ Միջագետքում հաստատվելուն զուգընթաց տեղի է ունենում նրանց անցումը հողագործության։

Սեմական լեզուները կառուցվածքա-տիպաբանական առումով աչքի են ընկնում հետևյալ առանձնահատկություններով։

1) **Հնչյունաբանություն:** Ձայնավորական կազմը հարուստ չէ. սկզբնապես եղել են միայն a, i, u ձայնավորներ՝ իրենց երկար և կարճ տարբերակներով։ Բաղաձայնական կազմը բնորոշում են՝ ա) սովորական խուլ և ձայնեղ բաղաձայնների կողքին հատուկ սաստկական (էմֆատիկ) բաղաձայնների (ṭ, ḍ, ṣ, ẓ) ու նրանց մերձավոր q-ի, բ) s, š, z շփականների կողքին ṯ, ḏ (θ, δ) շփականների առկայությունը, գ) կոկորդային բաղաձայնների առատությունը՝ ʾ (կոկորդային պայթյուն), h, ḥ, ʿ (նախորդին համապատասխանող ձայնեղ կոկորդային)։ Սեմական նախալեզվի համար վերականգնում են արտասանությամբ s-ի և š-ի միջև գտնվող ś շփականը, որի գոյությունը ենթադրվում է եբրայերեն մի շարք բառերում՝ շատ հնում։ Սեմական նախալեզվի և ժառանգ լեզուների բաղաձայնների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 787-րդ էջի աղյուսակով [Гранде, 1942, 54, 59]:

Բառակազմություն և ձևաբանություն: Սեմական լեզուների մեջ արմատների հիմնական մասը եռաբաղաձայն է. բառակազմական և ձևաբանական իմաստներն արտահայտվում են ձայնավորների հերթագայության և նախածանցների ու վերջածանցների միջոցով։ Անվան մեջ տարբերում են արական և իգական սեռեր, եզակի, երկակի և հոգնակի թվեր, այսպես կոչված, լծորդային (հատկացուցիչ ունեցող) և բացարձակ (հատկացուցիչ չունեցող) վիճակներ. արամեերենի և հատկապես ասորերենի համար բնորոշ է նաև անվան, այսպես կոչված, սաստկական վիճակը (status emphaticus), որ արտահայտվում է որոշյալության -ā կազմիչով. ասորերենում այն փաստորեն դարձել է անվան սովորական վերջավորություն։ Եռահոլով համակարգը (ուղղական՝ -u-ով, սեռական՝ -i-ով և հայցական՝ -a-ով) պահպանվել է ոչ բոլոր լեզուներում և ոչ համատիպ գործածությամբ. այն նույնությամբ առկա է փաստորեն միայն աքքադերենի հին տեքստերում և դասական արաբերենում։

Նախասեմ.	Աքքադ.	Արամ.	Եբր	Արաբ.	Եթովպ.
*t	t	t	t	t	t
*ṯ (*θ)	š	t	š	ṯ	s
*ṭ	ṭ	ṭ	ṭ	ṭ	ṭ
*θ̣	ṣ	ṭ	ṣ	ẓ	ṣ
*d	d	d	d	d	d
*ḏ (*δ)	z	d	z	ḏ	z
*δ̣	ṣ	ʿ (q)	ṣ	ḍ	ḍ
*s	s	s	s	s	s
*ṣ	ṣ	ṣ	ṣ	ṣ	ṣ
*ś	š	s	ś	š	ś
*š	š	š	š	s	s
*z	z	z	z	z	z
*c	—	ʿ	ʿ	ʿ	ʿ
*γ	—	ʿ	ʿ	γ	ʿ
*ḥ	—	ḥ	ḥ	ḥ	ḥ
*ḫ	ḫ	ḥ	ḥ	ḫ	ḫ

Բայական համակարգի համար բնորոշ է, այսպես կոչված, բայատեսակների գոյությունը (սովորական, սաստկական, պատճառական և այլն)։ Ժամանակային տարբերությունները թույլ են արտահայտված և հանդես են գալիս գերազանցապես կերպային տարբերությունների զուգորդությամբ։

բ) ՍԵՄԱ-ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԸ

Սեմական լեզուների և հայերենի բառապաշարի ու նույնիսկ քերականական կազմիչների միջև կան զգալի թվով զուգադիպություններ, որոնք հայերենի՝ այդ լեզուներից կատարած փոխառությունների արդյունք չեն ։ Դրանց մեջ կարելի է առանձնացնել մի քանի շերտ։

Առաջին շերտը կազմում են այն զուգադիպությունները, որոնք, ինչպես այլ առիթներով նշվել է, անկախ ցեղակցական հարաբերություններից և շփումներից, առկա են գրեթե բոլոր լեզուների մեջ և պայմանականորեն կոչվում են «տարրական ցեղակցության բառեր»։ Դրանք առաջին հերթին ձայնարկությունները, բնաձայնությունները և մանկական բառերն են, ընդ որում հայերենի այդ կարգի բառերը մասամբ գալիս են հնդեվրոպական ընդհանրության շրջանից, մասամբ ինքնակա կազմություններ են.

աղաղակ, բրբռ. աղաղել «լալ, գոռալ» (հ.-ե. *alā — բացականչություն). — սեմ. *hll, աքքադ. alālu «ցնծության երգ երգել, ցնծալ», եբր. hillēl, ասոր. hallel «գովել», արաբ. hallala «ցնծալ».

բրբռ. մնկ. բիբի, պիպիկ «երեխա» — աքքադ. bābu, bibû(m), արաբ babba «փոքր երեխա».

---

[1] Ի. Մ. Դյակոնովը [Дьяконов, 1965, 10] արաբերենը՝ մի կողմից, և հարավ-արաբական ու եթովպական լեզուները՝ մյուս կողմից, առանձնացնում է որպես առանձին՝ հարավ-կենտրոնական և հարավ-եզրային խմբեր՝ այսպիսով տարբերելով սեմական լեզուների չորս խումբ։

ծիծ — աքքադ. zīzu «ծիծ», եբր. zīz, արամ. zīzat «կուրծ, ստինք (կենդ.)»։

մռմռալ, -ել «մռնչալ, (բրբռ.) մրթմրթալ, քրթմնջալ» (հ.-ե. *murmur-, *mormor-) — արաբ. mrmr «մրթմրթալ, քրթմնջալ, դառնանալ, բարկանալ», եբր. mrmr «չարանալ» (այլև «մրթմրթալ, քրթմնջալ»)։

հայ. փուք, փչել (փուչ-) [հ.-ե. *p(h)(e)u- «փչել»] սեմ. *pwḫ/ḫ (արամ. puaḫ «փչել»)։

Երկրորդ շերտը կազմում են այն զուգադիպությունները, որոնք սեմա-հնդեվրոպական հեռավոր ցեղակցության արդյունք են և գալիս են խոր հնությունից։ Ահավասիկ այդպիսի բառերի մի շարք՝ առնված Վ. Մ. Իլլիչ-Սվիտիչի բառարանից [Иллич-Свитич, 1971—1976]. այստեղ զգալի թիվ են կազմում բնաձայնական-նկարագրական արմատները, որոնց մասին խոսվեց վերևում։

այրել (հ.-ե. *āter-) — եբր. ḫty/w «կրակ տանել (բերել)»։

անուն (բրբռ. անում)(հ.-ե. *nom-) — աքքադ. nabû(m) «անվանել, կոչել», արաբ. nb' «հայտարարել, հաղորդել»։

ավյուն (հ.-ե. *au-) — արաբ. hwy «ցանկանալ, սիրել», ուգար. hwt «ցանկություն», եբր. 'wy «ցանկանալ» (սեմ. *hwy. համեմ. նաև աքքադ. aba- «ցանկանալ»?)։

աւր (հ.-ե. *āmer-) — աքքադ. amāru(m), ուգար., եթովպ. 'mr «տեսնել», քուշ. > գեեզ. 'āmīr «օր»։

բերել (հ.-ե. *bher-) — աքքադ. (բաբ.) bāru(m), ba'āru «բռնել, որսալ» (սեմ.-քամ. *br)?

բող, բողբոջ (հ.-ե. *bhel-) — արաբ. 'ubl «նորաբույս խոտ, սաղարթ»[2], ասոր. Ibel, եբր. 'abal «մարգագետին, հովիտ» (սեմ.-քամ. *'bl)։

բրել, բրիչ (հ.-ե. *bher-) — արաբ. brw/y «կտրել-հանել», հր.-արամ. brz «ծակել»։

գլուխ (հ.-ե. *ghel-) — արաբ. jaljala, արամ. gulgultā, եբր. gulgōlet-, աքքադ. gulgull(at)u(m) «գանգ. գլուխ»։

դնել (հ.-ե. *dhē-) — արաբ. wdʿ «դնել» [սեմ. *(w)dʿ]։

ելանել (հ.-ե. *el-) — արաբ. ʿlw, ʿly, արամ., եբր. ʿly/w «ելնել, բարձրանալ» (ճիշտ չէ Վ. Մ. Իլլիչ-Սվիտիչի համեմատությունը հ.-ե. *al-ի հետ, որտեղից հայ. այլ)։

եղն(իկ)(հ.-ե. *el-n) — արաբ. iyyal «այծյամ», արամ. 'yl, ասոր. 'aylō «եղնիկ»։

եմ, էակ (հ.-ե. *es-) — արաբ. (la-)isa «(չ)կա» (ժխտականով), աքքադ. ašu «կենդանի էակներ», išû(m) «ունենալ», եբր. yēš, արամ. īt(ai) «է»։

թակել «ծեծել» [հ.-ե. *(s)teb/p-?] — ասոր. ṭpḥ «բռնցքահարել», արամ. եբր. ṭbḥ «սպանել» (այլ կերպ Իլիչ-Սվիտիչը, Опыт,^{2} էջ 108)։

թորել, թրել, թրջել, թրմել (թուրմ), թարախ [հ.-ե. *(s)ter-] — արաբ. ṭry «թրջվել, փափկել (հողի մասին)» [սեմ.-քամ. *ṭ(y)r]։

լակել [հ.-ե.* lak(k)] — արաբ., եբր. lqq «լիզել»։

լմել, լմլմել (հ.-ե. *lem-) — աքքադ. lmm «ծամել, որոճալ» (բայց սա կապվում է lêmu, laḫamu բայերի հետ, որոնք ունեն այլ արմատ՝ միջին կոկորդայինով)։

լու (հ.-ե. *bh/plus-) — արաբ. burγut, ասոր. purtaʿnā «լու»։

ծին, ծնանել (հ.-ե. *g'en-) — արաբ., ուգար. gny, եբր. gny/w «ստեղծել, արարել. ձեռք բերել»։

կեր, կուր, կոկորդ (հ.-ե. *gᵘer-) — արաբ. jrʿ «կլանել, կուլ տալ», ասոր. gagarətō, եբր. gargərōt «կոկորդ»։

կին (հ.-ե. *gᵘen-) — աքքադ. kinītu «հարճ», արամ. knt, ասոր. kənōtō «ընկեր»։

կռունկ (հ.-ե. *ger-) — արաբ. kurkīy, արամ. kurkiā «կռունկ», աքքադ. kurku «հավի տեսակ» (?) (փոխառություն շումերերենի՞ց)։

հան-գի-ստ (հ.-ե. *kᵘei-) — ասոր. qw', եբր. qwy «մնալ, սպասել»։

հոլով «թավալում, գլորում», հոլ (հ.-ե. *kᵘel-) — արաբ. qlb «պտտել, գլորել»։

ձուկն (հ.-ե. *g'hđu-, *g'hi̯u-) — ուգար. dgu «ձկներ» (հավաք.), եբր. dāg.

ճմլել, բրբռ. ճմռել (հ.-ե. *gem-) — աքքադ. kamû(m) «կապել» (տուարեգ. ekmem «սեղմել, ճմլել»)։

մալել «մանրել», մլ-աղաց «ջրաղաց», մեղկ, մեղմ (հ.-ե. *mel-) — արաբ. mlḫ «պոկել. կտրել», արամ., եբր. mll «տրորել»։

մաշել (*մարշել), մարտ «կռիվ» (հ.-ե. *mer-) — եբր. mrḥ, ասոր., աքքադ. mrq «տրորել»։

մարի «էգ թռչուն» (հ.-ե. *mer-) — արաբ. marʿ «տղամարդ», 'imrā'at «կին», ասոր. mārā «տեր», աքքադ. māru(m) «տղա. ձագ»։

մաւր, -մոյն «տիղմ» (հ.-ե. *meu-) — արաբ. mā, ասոր. maiiā (հգն.), եբր. mayim (հգն.), աքքադ. mā'ū, mū «ջուր»։

մեռանել (հ.-ե. *mer-) — արաբ. mrd «հիվանդ լինել», ասոր. mar'ā «հիվանդ»։

մի՛ (հ.-ե. *mē) — արաբ. mā «ոչ»։

մնալ (հ.-ե. *men-) — արաբ. 'mn «ապահով լինել», ասոր. 'amīn «ամուր», եբր. n-'mn «կայուն՝ վստահ լինել»։

որովայն (*krep-?) — արաբ. qurb «աճուկ», qirbat «տիկ», եբր. qereb, աքքադ. qerbu(m) «ներս, միջնամաս»։

ուտել (հ.-ե. *ed-) — աքքադ. ta'û(m) «ուտել. արածել» (սեմ. *t'w)։

սառն, սառնուլ (հ.-ե. *k'er-) — ասոր. qarḥā «վատ եղանակ», եբր. qeraḥ «սառույց. ցուրտ», աքքադ. qarḫu(m) «սառույց»։

սար (հ.-ե. *k'er-) — արաբ. qurnat «եզր», արամ. qarnā, եբր. qeren, աքքադ. qarnu(m) «եղջյուր»։

սարի-ք «շղթա, կապանք» (հ.-ե. *k'er-) — արաբ. karr «թոկ» (սեմա-քամ. *kr)։

տալ «ամուսնու քույր» (հ.-ե. *g'ǝlōu-) — արաբ. kanna (kalna), մեհրի kelōn «հարս» [սեմ.-քամ. *kl(l)]։

ցելուլ, ցեղ (հ.-ե. *skel-) — արաբ. slʿ «ճեղքել», ասոր., եբր. sala, «ժայռ»։

փերթ (հ.-ե. *(s)p(h)er-) — արաբ. fry «կտրել, ճեղքել», արամ. prʿ «քանդել», ասոր. prq «փրկել» (> հայ. փրկել), prq «անջատել» և այլն։

---

[2] Արաբական անվանական ձևերը տրվում են առանց դասական արաբերենի -u(n) վերջավորության։

քար (հ.-ե. *ker-) — արաբ. qāra «ժայռ, բլուր».

քերել, քերթել (հ.-ե. *ker-) — արաբ. qurāma «հացի կեղև», եբր., արամ. qərum «կեղև, կաշի».

քէն (հ.-ե. *kᵘ̯oi-n-) — արամ.՝ մանդ. qina «խանդ» (սեմ. *qn' «քանձել»)³.

քիմ-ք (հ.-ե. *kᵘ̯em-) — արաբ. qmm «խմել»։

Երրորդ շերտը կազմում են այն զուգադիպությունները, որոնք արդյունք են սեմականից կատարված հնդեվրոպական հնագույն փոխառությունների։ Ինչպես նշել ենք հնդեվրոպական բառապաշարի քննության ժամանակ, նախորդ հետազոտողների տվյալների հիման վրա Վ. Մ. Իլիչ-Սվիտիչը [**Иллич-Свитыч, 1964**] առանձնացնում է 24 այդպիսի բառ։ Թեև նա չի պարզում նախասեմերենի կրողների և հնդեվրոպացիների տարածական շփման հնարավորության հարցը և չի խոսում այդ բառերի տարածման ուղիների մասին, բայց նրա բերած նյութը արժանի է ուշադրության։ Այստեղ դրանցից բերենք այն բառերը, որոնք արտացոլված են նաև հայերենում. 1) կով (հ.-ե. *gᵘ̯ou-) — եգիպտ. gw, ագավ. kuwā, կաֆֆա gaû, gō և այլն «եզ» (չկա սեմականում. հմմտ. նաև շումեր. gud «եզ», որ ոմանք համարում են հնդեվրոպականի աղբյուրը). 2) արտ (հ.-ե. *ag'ro-) — արաբ. ḫadr «բակ, բնակավայր», ասոր. ḫērəta «ճամբար», եբր. ḫāṣēr «ցանկապատված հողամաս, բակ» և այլն (սեմ. *ḫdr. սակայն հմմտ. շումեր. agar «արտ»). 3) ցախ (հ.-ե. *(s)k'ăkhā) — աքկադ. šakāku «տափանել». 4) անդ «հանդ» (հ.-ե. *andh-) — արաբ. ḫnṭ «հասնել, պտուղ տալ», արամ. ḫiṭṭā «ցորեն», եբր. ḫnṭ «բողբոջել» (սեմ. *ḫnṭ). 5) դոն «մի տեսակ հաց. պաքսիմատ» (հ.-ե. *dhōnā) — արաբ. duḫn, արամ. duḫ(ī)n, եբր. duḫan, աքկադ. duḫnu «կորեկ». 6) երկան (հ.-ե. *gᵘ̯rānā) — արաբ. grn «աղալ», եբր. gōren «կալ», 7) գինի (հ.-ե. *u̯oino-) — արաբ. wayn-un «սև խաղող», եբր. yayin, աքկադ. īnu «գինի» [եթե չենթադրենք հակառակ փոխառություն կամ փոխառություն միևնույն (միջերկրական) աղբյուրից և՛ սեմականում, և՛ հնդեվրոպականում]. 8) դուռ (հ.-ե. *dhu̯er-) — արաբ. ṭawār «ցանկապատ», ṭūr «բակ», ասոր. ṭəyarā «փարախ», եբր. ṭūr «քարե պատ. սյունաշար». 9) նաւ (հ.-ե. *nāu-) — արաբ. 'inā' «պտուտակ», եբր. 'onī «նավ», աքկադ. unūtu «աման» (> հայ. անօթ?). 10) տաւն (հ.-ե. *dap-) — արաբ. dbḫ «զոհել», ասոր. dəbḫā «զոհաբերություն». 11) աստղ (հ.-ե. *ster-) — աքկադ. Ištaru «Իշտար, աստված՝ աստղով խորհրդանշված», եբր. ʻAštōret, փյունիկ. ʻstrt — Աստարտա. 12) այս «քամի. չար ոգի, դև» (հ.-ե. *ansu-, եթե *ansi̯o- > այս) — արաբ. ḫanzab «դև, սատանա». 13) եւթն (հ.-ե. *septm̥) — արաբ. sabʻat, sabʻ, աքկադ. sibittu, sību «յոթ»։

Չորրորդ շերտը կազմում են այն զուգադիպությունները, որոնք արդյունք են անմիջական կամ միջնորդավորված փոխառության։ Հետագա քննության մեջ մենք կանգ կառնենք հայերենի՝ սեմական փոխառությունների հարցի վրա նախ ընդհանրապես, ապա ըստ հնարավորին դրանք կխմբավորենք ըստ աքկադական, արամեական ու հատկապես ասորական, թերևս նաև վաղ արաբական աղբյուրների։ Նշենք, որ բացառում ենք եբրայերենը, որի ազդեցությունը կապված է հատկապես աստվածաշնչի թարգմանության հետ. բուն եբրայերենը մ. թ. ա. VI դարից որպես խոսակցական լեզու արտամղվում էր արամեերենի կողմից։ Սրա հետ կապված նշենք, որ նաև սեմա-հայկական որոշ զուգադիպությունների դեպքում հնարավոր է ենթադրել հակառակ շարժում՝ սեմական լեզուների՝ հայերենից կատարած փոխառություններ. ինչպես կտեսնենք, դրանք գերազանցապես հատուկ անուններ են, մասամբ էլ, թերևս, հասարակ անուններ։

Այս կապակցությամբ հարկ ենք համարում կանգ առնել հայերենի և շումերերենի փոխհարաբերության հարցի վրա։ Ինչպես հայտնի է, շումերները Միջագետքի հնագույն բնակիչներն են և մեծ ազդեցություն են գործել աքկադացիների վրա, որոնք նրանցից փոխ են առել մեծ թվով բառեր։ Շումերերենի գրավոր հուշարձանները սկիզբ են առնում մ. թ. ա. IV հազարամյակի վերջերից։ Աքկադացիների՝ Միջագետքում բնակություն հաստատելուց հետո շումերները աստիճանաբար դառնում են աքկադալեզու. շումերերենը որպես խոսակցական լեզու դադարում է գործածվելուց մոտավորապես մ. թ. ա. II հազարամյակի կեսերից, թեև աքկադական դպիրները շարունակում էին այն գործածել որպես գրավոր լեզու։ Շումերերենի ցեղակցության հարցը դեռևս բաց է մնում, թեև եղել են այն տարբեր լեզուների, այդ թվում՝ նաև հնդեվրոպական լեզուների հետ կապելու փորձեր (Շ. Օտրան)։ Սակայն կասկած չի կարող լինել, որ շումերերենը նշանակալից ազդեցություն է գործել շրջակա լեզուների, մանավանդ աքկադերենի և աքկադացիների միջնորդությամբ այլ լեզուների վրա։ Նշենք, որ աքկադերենն իր հերթին ազդել է շումերերենի վրա։

Տարբեր ժամանակներում փորձեր են արվել հայերենը կապելու շումերերենի հետ և նույնիսկ ցեղակցական կապեր հաստատելու նրանց միջև։ Սակայն այդ փորձերը կատարվել են գերազանցապես պատմահամեմատական լեզվաբանության նվաճումներին անտեղյակ մարդկանց կողմից և գիտականորեն անհավաստի են⁴։

Իհարկե, հայերենի և շումերերենի միջև կան բառային զուգադիպումներ, բայց դրանք հարկավոր է շերտավորել ըստ հնարավոր աղբյուրների ու անցման ուղիների և բացառել պատահական զուգադիպումները. շումերական միավանկ բառերի մեծաքանակության և դրանց հաճախակի համանունության դեպքում այդպիսի նմանությունները անխուսափելի են։ Հարկավոր է նկատի առնել, որ մ. թ. ա. III հազարամյակում հայերենը նոր է սկսել իր գոյությունը որպես ինքնուրույն լեզու՝ հնդեվրոպականից անկախ։ Հատկանշական է նաև քերականական կառուցվածքների խիստ մեծ տարբերությունը։

Շումերա-հայկական զուգադիպումները մի քանի կարգի են՝ 1) բնաձայնական բառեր, ձայնարկություններ և մանկական լեզվի բառեր՝ ընդհանուր տարբեր լեզուների համար, ինչպես բրբռ. ադե — ad, ad-da «հայր. մայր» աղաղակ — elalu «աղաղակել. ոռնալ». բաղբաջել — bal «խոսել». բրբռ.

---

³ Վ. Մ. Իլիչ-Սվիտիչը չի տալիս հ.-ե. այս զուգահեռը։

⁴ Հմմտ., օրինակ, **Gulbenkian,** 1960։ Այստեղ հեղինակը կամայական համեմատություններ է կատարում՝ առանց հաշվի առնելու հնչյունական օրենքները, առանց տարբերելու հայերենի բնիկ և փոխառյալ բառերը, հին և նոր ձևերը, առանց հիմնավորելու իմաստային անցումները. հմմտ. դէմ-ք (<իրան.) — շումեր. damu, ջիղ (հ.-ե. *g'hislā) — շումեր. gir «ջղայնություն», թուշ — շումեր. dug (tuk), ողն — շումեր. ir, ur «ողնաշար» և այլն։ Անթույլատրելի են, մանավանդ, հայերեն բառերը արմատների կամայական մասնատումներով մեկնելու փորձերը։

պիպի «հնդկահավի ձագ» — bibe «բադ». բրբռ. մնկ. մա «մայր» — ama «մայր». փուք, փուչ-, փչել (<հ.-ե. *phu-k-), բուք (<հ.-ե. *bhu-k-) — bu «փչել» և այլն. 2) Առաջավոր Ասիայի ժողովուրդների մեջ տարածված մշակութային բառեր, որոնց սկզբնաղբյուրը կամ շումերերենն է՝ այլ լեզուների մեջ տարածված աքքադերենի միջոցով ու նրա միջնորդությամբ, կամ աքքադերենը, կամ որևէ այլ, երբեմն անհայտ լեզու՝ ագարակ — agar «դաշտ, արտ» — աքքադ. ugaru(m) և այլն. անագ — nagga — աքքադ. anāku — խուռ. anagi և այլն. թոնիր — tunur, tinur — աքքադ. tinūru(m) — արամ. tannurā և այլն. կաշի — kuš — աքքադ. kušu(m) և այլն. կտաւ — gad(a/u) «վուշ. կտավե հագուստ» — աքքադ. kitū և այլն. մաշկ — maškum — աքքադ. mašku(m) և այլն. ցեց — ziz — աքքադ. sāsu(m) և այլն. 3) Հավանաբար պատահական նմանություններ՝ գէզ, գեզ «արատ, պատռվածք» — guz «կտրատել, պատառոտել». եղեւին (հ.-ե. *el-eu-) — erin «մայրի». խզել (խուզ-), խուզել (խոյզ-) — ḫaz «կտրել-անջատել. ջարդել», մորճ «դալար ճյուղ» (հ.-ե. *mer-?) — mu, muduru «ճիպոտ, գավազան» և այլն: Կան նաև առայժմ դժվար բացատրելի զուգադիպություններ. եթե դրանք պատահական չեն, և եթե շումերերենը չի պատկանում նոստրատիկ ընդհանրությանը, ապա պետք է կարելի է տեսնել տարբեր կարգի միջնորդող օղակներ. հմմտ. ուղի «ոչխար» (հ.-ե. *oui-?) — udu «ոչխար. մանր եղջերավոր անասուն». գնալ — gin «գնալ. ուղարկել». ելանել (հ.-ե. *el-) — il «բարձրացնել, տանել. բերել». ծագ «ծայր» — zag «կողմ. սահման. ընկեզր. դրսի կողմ. բաց դաշտ. անապատ». կամակոր «ծուռումուռ» (եթե կամ-ի մ-ն կոր-ի հնչյունափոխված կրկնավորը չէ) — gam «թեքվել» — աքքադ. kamāsu(m) «թեքվել. ծնկի գալ». կառ (հմմտ. նոստր. *kär∧, քարթվ. *ḳar-/ḳer- «կապել») — kar «կապել» և kar «կապանք». կին (հ.-ե. *gu̯en-, նոստր. *küni) — gin «աղախին. ստրկուհի». կոկ «ողորկ, հարթ» — gug «թանկագին քար մաքուր. փայլուն». կով (հ.-ե. *gu̯ou-) — gu(d) «եզ. խոշոր եղջերավոր անասուն» (բայց հմմտ. áb «կով»). կոր (հ.-ե. *geu-?) — gur «պտտել, շուռ տալ». կուռ, կռել (ըստ Աճառյանի՝ ուրարտերենից) — kur «հաստատել. հաստատանալ» (?). մրջիւն (հ.-ե. *mōr-, *mur-?) — marun (šurun ?) «մրջյուն» (?). ոսկի — guškin «ոսկի». պատ — bad «պատ. ամրոց, բերդ». պար — bar «կողմ. պատել, շրջապատել». քող (քաւղ) — kulla «ծածկոց, քող» և այլն: Այս առումով հետաքրքրական է նշել, որ կան նաև համաբնույթ շումերա-ուրարտական զուգադիպումներ՝ ուրարտ. du- «անել» — շումեր. du «անել. կառուցել». ուրարտ. qi(u)ra «երկիր» — շումեր. kur «տեղ, վայր». ուրարտ. tiau- «ասել», tini «անուն» — շումեր. de «խոսել» և այլն:

գ) ՀԱՅԵՐԵՆԻ ՍԵՄԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամփոփելով իր նախորդների, հատկապես Հ. Հյուբշմանի, հետազոտությունների արդյունքները՝ Հ. Աճառյանը տարբերում է հայերենում ասուրերենից կատարված 27 և ասորերենից կատարված 211 փոխառություն: Կազմելով հայերենի նախագրային շրջանում սեմական լեզուներից կատարված փոխառությունների հնարավոր ցանկը՝ մենք կատարել ենք հետևյալ փոփոխությունները, հավելումները և ճշտումները:

1) Հայերենի աքքադական համարվող փոխառությունների ցանկից հանել ենք այն բոլոր բառերը, որոնց աքքադական ու ընդհանրապես սեմական բնույթը չի հաստատվում աքքադական նորագույն բառարանագրության տվյալներով [Soden, AH, 1965—1981. The Assyrian dictionary, 1956 և հջ.]. դրանց համար երբեմն կարելի է ենթադրել ավելի հավանական այլ աղբյուրներ, որոշ դեպքերում էլ գործ ունենք հին սխալ ընթերցումների հետ:

2) Ավելացված են այն բառերը, որոնք նորագույն հետազոտությունների (այդ թվում՝ նաև հեղինակի աշխատությունների) հիման վրա պետք է սեմական ծագում ունենան [հմմտ. **Джаукян**, 1981. **Djahukian**, 1982. **Дьяконов**, 1982]:

3) Հանված են այն բոլոր բառերը, որոնց սեմական ծագումը կասկածելի է, և որոնք փոխառված են միայն V դարում ու ավելի ուշ: Այս դեպքում, բնականաբար, ոչ միշտ կարող են լինել V դարում և ավելի վաղ կատարված ասորական փոխառությունների ժամանակագրական հստակ տարբերակման չափանիշներ: Մեր կողմից հանված են՝ ա) հայկական աղբյուրներում V դ. հետո վկայված ասորական բոլոր փոխառությունները առանց վերապահության. այն դեպքերում, երբ ժամանակագրական դժվարություններ կան (օրինակ՝ հունաբան վաղ երկերի համար), հարցը լուծվել է հօգուտ V դարի, մանավանդ, եթե բառիմաստը ենթադրում է վաղ փոխառություն. բ) V դ. վկայված այն փոխառությունները, որոնք ասորական բառերի մատենագրական սովորական տառադարձություններ են և մատենագրական աղբյուրներում հանդիպում են 1—2 անգամ, այն էլ միևնույն հեղինակի մոտ. բացառություն է արված միայն ապուղայ և ռ(ա)բունայ բառերի համար, որոնք իրենց նշանակությամբ պետք է հին լինեն. ապուղայ բառը հանդիպում է կանոնագրքում և նշանակում է «ձեթի տիկ»՝ տիկի այն տեսակը, որոնցով ասորի վաճառականները ձեթ էին բերում Հայաստան վաճառելու. ռաբունայ «դրավական, ավանդ» բառը հանդիպում է 2 անգամ, բայց տարբեր հեղինակների մոտ, և ունի այնպիսի իմաստ, որ ենթադրում է փոխառության հնություն. գ) մեկնություններում որպես օտարազգի հիշատակված բառերը: Ստորև բերում ենք այս կարգի բառերի ցանկը.

ստրատեղայ «զորապետ, ստրատեգ». հմմտ. ասոր. estratīgā < հուն. στρατηγός.

տեսարոն «չորս ավետարան». հմմտ. ասոր. ditsron (առանց ձայնավորների նշանների գրված) < (τὸ) διατεσσάρων.

ափիղատոս (< *ափիմղատոս ?) «հոգաբարձու, տեսուչ, վերակացու». հմմտ. apīmlatūs < հուն. ἐπιμελετής.

բեթթիկա «պանդոկ, իջևան». հմմտ. ասոր. bīt- «տուն» և tīqā < հուն. θήκη.

բուծին, -ոյ «պատրույգ». հմմտ. ասոր. (արամ.) būṣīnā (աքքադ. buṣīnum, buṣinnu-) «պատրույգ. աշտանակ. մոմակալ. խնդաս բույսը» (սեմ. աղբյուրից է պրսկ. būzīn).

դասպինիա «դժվարաշնչություն». հմմտ. ասոր. dispənia < հուն. δύσπνοια.

թոհ և բոհ (թոխ և բոխ) «ամայի». հմմտ. ասոր. tōh wə vōh, եբր. tōhu vā bōhu «ամայի և անապատ» (հանդիպում են մեկնություններում որպես օտարազգի բառեր. հայ. թարգմանությամբ «աներևույթ և անպատրաստ»).

իբրամէն, -ու (<*դ(ի)բրամէն. դաբրէովմին) «Մնացորդաց գիրք». Համեմ. ասոր. dibre-yomin, եբր. dibre-hayāmīn.

խարագուլ «մանր մորեխ». Համեմ. ասոր. ḥargəlā «մորեխ» (ḥargala, ն. ասոր. ḥargūl, եբր. ḥargōl, արաբ. ḥarǰal).

մդրէշայ «երգ». Համեմ. ասոր. madrāšā.

մղաւաշէ, -ից «կենդանակերպ». Համեմ. ասոր. malvāšē.

մուղ, -աւք «էգ էշ». Համեմ. ասոր. mūlā.

յաթ «տարր, նախանյութ». Համեմ. ասոր. yāṭā «գոյություն, նյութ» (նշված է որպես ասորական բառ).

յամոյր, -ի, -ոց «վայրի այծ, այծյամ». Համեմ. ասոր. yaḥmūrā, եբր. yaḥmūr (արաբ. yaḥmur «ցիռ»).

յապանաս «արհամարհանք, թշնամություն». Համեմ. ասոր. yap̄anas.

նաբաղել «անարգել». Համեմ. ասոր. nabbel «անարգել», եբր. nbl «նախատել», nābāl «խենթ» (նաբաղ անձնանվան մեկնություն).

նածր-(ացի) «նազովրեցի, քրիստոնյա». Համեմ. ասոր. naṣrāyā (արաբ. naṣrānī. նազովրեցի ձևը հուն. Ναζωραῖος-ից է կազմված).

շումրայ (շամրայ) «վայրի սամիթ». Համեմ. ասոր. šamārā, šamrā, šūmrā. արաբ. šumra (ըստ Աճառյանի՝ šamrā > *շամրայ, ապա արաբ. ազդեցությամբ՝ շումրայ. ըստ Հյուբշմանի՝ արաբերենից, բայց Հյուբշմանը տեղյակ չէ V դ. վկայությանը).

շուփայ «աչքի դեղ, ծարիր». Համեմ. ասոր. šəyāp̄ā (այստեղից արաբ. šiǰāf և պրսկ. šāfā. Հայերենի համար պետք է ենթադրել երկրորդական ասոր. ձև՝ šūp̄ā կամ šāp̄ā > *շափայ, եթե հայ. թարգմանիչը սխալ չի կարդացել šəyāp̄ā-ն).

պապկայ, -ի, -ից «թութակ». Համեմ. ասոր. pap(a)gā (արաբ. babaγa, պրսկ. bapγa և այլն).

պղատայ, -ի, -ից. Համեմ. ասոր. plātiā < հուն. πλατεῖα.

պրակսաւաթայք (պրակս աւաթ(ե)այք, պրակսաւթոյք, պրաքսաւթայք) «Գործք առաքելոց»-ի անվավերական գրքեր. Համեմ. ասոր. prqsvtā (առանց ձայնավորների նշանների) < հուն. Πράξεις αὐτῶν «նրանց գործերը».

սաբա «ծեր». Համեմ. ասոր. sāḇā «ծեր».

տաքատ «զորախումբ». Համեմ. բյուզ. հուն. ταξᾶτος «բերդապահ գունդ» (> ասոր. ? > հայ.՝ Եփրեմ Ասորու երկերում).

տափայ «լաստ». Համեմ. ասոր. ṭaupā «տկալաստ».

փուտկայ (փութկայ), -ի «պանդոկ». Համեմ. ասոր. pūṭqā < հուն. πανδοχεῖον (սրա πανδοχεῖον ձևից է հայ. պանդոկ-ը).

քորայ «երկիր». Համեմ. ասոր. kōrā > հուն. χώρα:

4) Ընդհանրապես չեն բերվում եբրայական համարված բառերը, որոնք հայերենի մեջ մուտք են գործել աստվածաշնչի և եբրայական գրականության թարգմանության միջոցով V դ. և ավելի ուշ՝ հատկապես հունարենի միջնորդությամբ՝ որպես եբրայերեն բառերի հունարեն տառադարձումների համապատասխան հայերեն տառադարձումներ:

Հայերենի սեմական փոխառությունների՝ ստորև տրվող ցանկը կազմված է հետևյալ ձևով. հայերեն բառի կողքին տրվում են սեմական համապատասխան բառերը, ընդ որում՝ 1) մեկից ավելի լեզուներից զուգահեռներ բերելու դեպքում նախ տրվում են հայերենին ամենից ավելի մերձավոր ձևեր ունեցող լեզուները, ապա մյուսները. 2) արամեական ձևերը հիմնականում տրվում են առանց տարբերակման, բացառությամբ ասորերենի, որ տրվում է ասոր. նշմամբ. դրանից տարբեր արամեական ձևերը տրվում են արամ. ընդհանուր նշումով. 3) եթովպական և հարավ-արաբական ձևերը սովորաբար չեն տրվում: Ցանկի ավարտումից հետո կփորձենք ճշտել հայերենի բառաղբյուրները՝ ըստ առանձին լեզուների:

աբեղայ, -ի, -ից. Համեմ. ասոր. aḇīlā.

ադեն, -այ (ադին) «եդեմ, դրախտ». Համեմ. ասոր. 'aḏen, եբր. 'ēḏen. արաբ. 'adn. եբր. ձևից է հուն. Ἐδέμ, որից հայ. Եդեմ.

աթութայ-ք, -ի, -ից «տառ(եր), տառանշան(ներ), գիր (գրեր)». Համեմ. ասոր. āṭūṭā (āṭ-ի հոգնակին).

ախմախ «հիմար, տխմար». Համեմ. արաբ. aḥmaq (հգն. ḥumāqā) «հիմար, տխմար» (ḥmq «հիմար լինել»).

ակուր «բրիչ» (ուշ ավանդված). Համեմ. աքքադ. aqqullu (akkullu < շում.).

ահլ, -ի, -ից «փականք. օղակ. ունեցվածք, ապրանք. բազմություն, ցեղ, զարմ, ժողովուրդ, մարդիկ». Համեմ. արաբ. 'ahl, ասոր. yahlō «ցեղ», արամ. 'ahəlā «ընտանիք. տնեցիներ, ազգականներ. մարդիկ», եբր. 'ōhel «վրան», աքքադ. ālu «տեղ, վայր. քաղաք».

աղց, -ի, -ից «կարիք». Համեմ. ասոր. ālṣā.

ամարու «գառնուկ». Համեմ. ասոր. 'emrā, արամ., եբր. immar, արաբ. immar, amarra և այլն.

ամղան «վերարկու». Համեմ. ասոր. āmlōn (āmelā).

այպն «ամոթ, ծաղր». Համեմ. արաբ. 'ayb «պարսավանք. արատ, թերություն. ամոթ».

անաւթ, -ոյ (ուշ՝ -ի, -ից) «անոթ, աման. զույք, կահ-կարասի. գործիք. միջոց. զինամիջոց». Համեմ. աքքադ. (ն. ասուր.) anūtu, այլև unūtu(m), enūtu(m) «անոթ, աման. գործիք, պիտույք, գույք, կահ-կարասի»[5].

ապուղայ, -ի, -ից «ձեթի ամկ». Համեմ. ասոր. āp̄aulā [< լատ. ampulla «(կաշեպատ) լայնափոր շիշ»].

առնէտ, -ի, -ից. Համեմ. ասոր. arnā'a.

ատշիլ «ծարավել». Համեմ. արաբ. 'aṭiša «ծարավել», 'aṭaš «ծարավ», 'aṭiš «ծարաված, ծարավի» ('ṭš).

աքսոր-ք, -ից. Համեմ. ասոր. aḵsoria (eḵsoria < հուն. ἐξορία).

բասր-ել (բասիր) «պարսավել, անարգել». Համեմ. ասոր. bəsīr «անարգ», bəsar «արհամարհել, մերժել».

բարկ «կայծակ»[6]. Համեմ. արամ. barqā, եբր. bārāq, արաբ. barq, ուգար. brq, աքքադ. be/irqu.

---

[5] Ավելի քիչ հավանական է համեմատությունը խեթ. ḫan- «քաշել, հանել (հատկապես ջրհորից և այլն)», հուն. ἄντλον «նավամբարի ջուր», ἀντλέω «քաշել, հանել» բառերի հետ, որոնց ընդհանրությունը (է. Բենվենիստ) ինքնին կասկածելի է:

[6] Հ. Աճառյանը միացնում է բարկ «կծու, թունդ, դժնյա, բարկացկոտ. շատ սաստիկ. հրբոցի, խիստ տաքացած», բարկանալ «զայրանալ» արմատի հետ (<հ.-ե. *bhr̥gᵘ̯os, *bhorgᵘ̯o-s):

բերդ, -ի, -աց. Համմ. ակկադ. birtu(m), արամ. bīrtā «բերդ, ամրոց».

բոտոտ «ճիճու, որդ, փայտի ցեց». Համմ. ասոր. beltīta «փայտի որդ», արաբ. baṭīṭa, buṭīṭia (նվազական) «ծառի որդ».

բուռ «կիր, գաջ». Համմ. ակկադ. pūlu(m) (pīlu, pēlu) «կրաքար» (ակկադերենից է հուն. πῶρος-ը «տուֆ, փխրաքար»?).

գագաթն. Համմ. qaqqadu(m), kaqqadu(m) «գլուխ, գագաթ», եբր. qodqōd.

գադիշ, -ի, -ից, «դեզ». Համմ. ասոր. gədīšā, եբր. gad̲īš.

գաղութ, -ի (այստեղից գաղթել, գաղթ). Համմ. արամ. (ասոր.) gālūṯ-ā «աքսոր, գաղթ», եբր. gālūt.

գզաթ, -ու «բուրդ». Համմ. ասոր. gezzeta, եբր. gizzā, gizzaṯ, ակկադ. gizzatu (սեմ. gzz «խուզել» արմատից. կապ ունե՞ն արդյոք սրա հետ գէզ «բիծ, ճեղք», գզել, գզգզել).

գուբ, -ոյ «հոր, փոս. բջիջ, փորակ». Համմ. արամ. (ասոր.) gubb,-ā «գուբ, փոս. ջրհոր. բանտ», gōb, ակկադ. gubbu «ջրամբար»[7].

դար, -ու. Համմ. արամ. (ասոր.) dārā, dār, ակկադ. dāru(m) «տևողություն. հավիտենություն».

դարգ «կարգ, շարք». Համմ. արամ. (ասոր.) dargā «կարգ, աստիճան», darəgā «աստիճան».

զոյգ, -ի, -ից, -աց. Համմ. ասոր. zaugā «զույգ. կրկնակ. նման» < հուն. ζεῦγος «լուծ, զույգ».

զոպայ, -ի, -ից (ծոթրինանման մի բույս). Համմ. արամ. (ասոր.) zōpā «զոպա».

զունար «գոտի» (ուշ ներմուծում). Համմ. արաբ. zunnār «գոտի».

թանգար (թանկար), -ի, -աց «վաճառական». Համմ. արամ. (ասոր.) taggār(ā), (մանդ.) tangārā, արաբ. tāǰir, ակկադ. tamkāru(m), damk/garu(m).

թարգման, -ի, -աց. Համմ. արամ. targəmāna (turgəmānā), (ասոր.) targmānā, ակկադ. ta/urgumannu(m), targamannu(m).

թարշիշ, -ի (մի թանկագին քար). Համմ., եբր. taršiš (> հուն. θαρσις > հայ. թարսիս).

իլուլ (եբրայական տոմարի 6-րդ ամիս). Համմ. ասոր. īlūl, եբր. əlūl.

լումայ (լումա), -ի, -ից «մանր դրամ». Համմ. ասոր. lūmā < *nūmā (< լատ. nummus?).

խանձարուր, -ոյ. Համմ. ասոր. ‘azrurā.

խանութ (հանութ), -ի. Համմ. ասոր. ḥānūtā.

խարամանի (խարամայնի, խարաման, այլև ժողովրդական ստուգաբանությամբ Արիման-ի հետ զուգորդվելով՝ հարամանի) «դև, սատանա. չար օձ». Համմ. ասոր. ḥarman(ā) «օձ».

խարբ, -ի «սուր, թուր». Համմ. արամ. (ասոր.) ḥarbā, եբր. ‘ḥareb̲.

խարբալ-ել «մաղել. տակնուվրա անել. վնասել, վրանդել». Համմ. արամ. (ասոր.) ‘arbālā «մաղ», ‘arbēl «մաղել».

խ(ի)լայ «պարգև տրված զգեստ. կանացի շղարշ» [խ(ի)լայել «զգեստ հագցնել»]. Համմ. ասոր. *ḫil'ā, արաբ. ḫil‘a(t) [որտեղից խ(ի)լաթել «զգեստ հագցնել» ?].

խլուրդ, -ի (խլիրդն). Համմ. ասոր. ḫūldā, եբր. ḥoled̲, արաբ. ḫuld. Համմ. նաև ասոր. ḫuldūd̲ā «դաշտամուկ».

խմոր, -ոյ (խմորել, անխմոր, խմեալ). Համմ. արամ. ḥm‘, (ասոր.) ḥma‘ «թթվել, խմորվել», եբր. ḥmṣ, արաբ. ḥamḍ.

խոռ «ծակ, փոս, խոռոչ, ծերպ, խրամ». Համմ. ակկադ. ḫurru, արամ. ḥōrā, (ասոր.) ḥurā, եբր. ḥōr, ḥūr «ծակ» արաբ. ḫurr «ծակել».

ծարիր (ծարոյր, ծարիւր, ծարոր), -ոյ, -ի, -ից «աչքի սև ներկ». Համմ. ասոր. ṣəd̲īd̲ā, ակկադ. ṣadīdu?.

ծիր, -ոյ «շրջագիծ» (ուշ՝ ծրել «գծել, գրել») (քարթվ. *ç$_1$er- «պատկերել. գրել» արմատի կողքին). Համմ. ակկադ. ṣirû «եզր», այլև eṣēru(m), ասոր. eṣāru(m) «նկարել, գծագրել» (տարբերակների միջնորդությամբ փոխառվա՞ծ).

ծնծղայ, -ի, -ից. Համմ. արամ. ṣalṣəlā, (ասոր.) ṣiṣṣəlā, ṣeṣṣəlā, եբր. ṣelṣəlīm, եթովպ. ṣanaṣəl, ṣanaṣəlat.

ծոմ (ուշ -ոյ. ծոմել «ծոմ պահել, օրական միայն մեկ անգամ ուտել»). Համմ. արամ. (ասոր.) ṣōm, ṣōmā, ṣaumā, եբր. ṣōm, արաբ. ṣaum.

ծրար «կապոց. կծիկ. քսակ. (ուշ) ծրարք» (ծրարել). Համմ. ասոր. ṣərār(ā) «քսակ», եբր. ṣərōr «կապոց, տոպրակ», արաբ. ṣurra «դրամ պահելու չորի կապոց».

կաթսայ (կասսայ), -ի, -ից. Համմ. ասոր. qad̲sā (< հուն. κάδος).

կապար, -ոյ (և -ի, -աց?). Համմ. ակկադ. abāru(m) (< շում. ?), արամ. ab(b)ār(a)?.

կարկուրայ, -ի, -ից «նավակ». Համմ. ասոր. qarqūrā.

կացին, -ոյ (ուշ -ի, -աց). Համմ. արամ. (ասոր.) ḥaṣṣīnā, ակկադ. ḫaṣṣinnu(m), արաբ. ḥaṣīn, այլև եգիպտ. krd̲n, եբր. gard̲/zen, արաբ. karzan.

կաւատ, -ի, -աց. Համմ. արաբ. qawwād «միջնորդ, կավատ» (qwd «առաջնորդել, տանել»).

կիր, -ոյ. Համմ. ակկադ. qīru, արամ., արաբ. qīr[8].

կղզի. Համմ. ասոր. qazartā, արաբ. ǰazar, ǰazīra.

կմախք (կմախ-ք «մեռելի ոսկր»). Համմ. ակկադ. kima(ḫ)ḫu(m) (gimaḫu) «գերեզման» (< շում. ?). Թերևս ակկադերենից են արամ. (պալմ., նաբ.) gmḥ, gwḥ «գերեզմանախորշ».

կնիք, -ոյ. Համմ. ակկադ. kanīku(m) «կնքված փաստաթուղթ», kunukku(m) «կնիք».

կշիռ, -ոյ «կշեռք. կշիռ. կշռադատություն» Համմ. ակկադ. gišrinnu(m) «կշեռք» (< շում.), այլև gišru(m) «պահանջ. կամուրջ» (> արամ., մ. եբր. gišr, արաբ. ǵisr «կամուրջ»).

կողեռ «երեխա, մանուկ», կողեռն «ուղտի ձագ». Համմ. արաբ. ǰazūr «ուղտ, ուղտի ձագ».

---

[7] Բայց համմ. հ.-ե. *gupā «փոս, հոր». Հ.-ե. սեմական հնարավոր զուգաբանությո՞ւն:

[8] Հ. Աճառյանը [ՀԱԲ, 2^2, էջ 593] համարում է «ասորեստանյան փոխառություն, որ թեև չի պահված ասորերենում, բայց կա մյուս սեմական լեզուներում, ինչպես եբր. gīr, արամ. gīr, արաբ. ǰīr ...»: Սակայն q-ով ձևերի համար համմ. Soden, AH, 2, 923:

կոթող, -ի «նշանաքար, արձան, կոթող». Համմ. աքք. kudurru «սահման. սահմանաքար»?

կուպր. Համմ. արամ., ասոր. kuprā, եբր. kōpēr, աքք. kupru(m).

հալաւ «զգեստ». Համմ. աքք. ḫalāpu(m) «ներս սողոսկել. հագնել», naḫlaptu(m) «զգեստ. վերարկու».

հաբր-ք (խաբր-ք) «որոգայթ, թակարդ. թակարդի թոկ». Համմ. արամ. (ասոր.) ḥaḇlā «թոկ», եբր. ḥeḇel «թոկ. թակարդ», արաբ. ḥabl «թոկ», ḥibāla «թակարդ», աքք. ḫabālu «կապել», naḫbalu(m) «թակարդ».

հաշիւ, -ի. Համմ. արամ. (ասոր.) ḥəšīḇ «կարծված, համարված, հաշված», ḥšāḇ, եբր. ḥāšaḇ, արաբ. ḥisāb (սեմ. *ḥš/sb «հաշվել»).

հեգ, -ի, -իւ (ուշ՝ -ոյ) «վանկ» (հեգել). Համմ. ասոր. həḡā «կարդալ».

հեգենայ, -ի, -իւ «գիր, այբուբեն». Համմ. ասոր. heḡi̯ānā «կարդալ, հեգել, ընթերցանություն, արտասանություն».

հեթանոս, -ի, -աց. Համմ. ասոր. hīnws (առանց ձայնավորների գրությամբ) (< հուն. ἔθνος).

հռետորայ «ճարտասան, հռետոր». Համմ. ասոր. rhīṭōrā (< հուն. ῥήτωρ > հայ. հռետոր).

հրեայ, -ի, -իւ. Համմ. արամ. (ասոր.) i̯ūḏāi̯ā (īhūḏāi̯a), i̯əhūḏāi̯ē, եբր. հգն. yəhūḏīm, արաբ. yahūd (Համմ. նաև պրսկ. yahūd).

ձանձախարիթ «մուգ, սև. մուգ կարմիր. մուր.» Համմ. ասոր. zəḵorītā «որդան կարմիր».

ձէթ, -ոյ. Համմ. արամ. (ասոր.) zēt (zaitā), zait, եբր. zayit, արաբ. zayt.

ձիւթ, -ոյ. Համմ. արամ. zip̄tā, (ասոր.) zep̄tā, եբր. zep̄et, արաբ. zift (Համմ. նաև պրսկ. zift).

ղեկ (ղեակ), -ի, -աց. Համմ. ասոր. lēqā.

մագաղաթ, -ի «մագաղաթ. գիրք». Համմ. արամ. (ասոր.) maḡallətā, məḡillətā, եբր. məḡillā(t) «թղթապալար, փաթեթ (որպես գիրք)».

մակաղ «ոչխարի փարախ». Համմ. եբր. mīḵəlā «ոչխարի փարախ».

մահիճ, -ի, -աց «անկողին, անկողնակալ». Համմ. արաբ. mahi̯aʿ «ննջարան» (hjʿ «քնել. հանգստանալ»).

մանանայ, -ի, -իւ. Համմ. ասոր. mannā, եբր. mān.

մանգաղ, -ի, -աց. Համմ. արամ. (ասոր.) maggəlā (< *mangəlā), եբր. maggāl (Համմ. նաև պրսկ. mangāl < սեմ.).

մաշկ, -ի, -իւ. Համմ. արամ. maškā, (ասոր.) meškā, աքք. maškū(m) (Համմ. եգիպտ. mśk3, mśk).

մաշկն, -ին «վրան». Համմ. ասոր. maškan «վրան, խորան», աքք. maškanu(m) «դնելու տեղ. կալ. տեղ. շղթա», եբր. miškān «բնակարան. խորան».

մաքս, -ի. Համմ. արամ. maḵsā (miḵsā) > արաբ. maks, (ասոր.) maḵsā, եբր. maḵes, աքք. miksu(m).

մզել (մուզ-). Համմ. աքք. mazû, mazāʾu «մզել, քամել».

մծղնեայ, -ի, -իւ (մի աղանդ). Համմ. ասոր. məṣalləi̯ānē «աղոթական՝ մեսալյան աղանդ».

մտրակ, -ի, -աց. ասոր. maṭrəqā «մտրակ, խարազան. խթան», արաբ. miṭraq «բարդ ձողիկու փայտ, գավազան», miṭrāq «գավազան. սուր».

նաշիհ, -ոյ (նաշհի) «մանր աղացած՝ նուրբ ալյուր». Համմ. ասոր. nəšīpā.

շաբաթ, -ու. Համմ. ասոր. šabbəṯā < եբր. šabbāṯ.

շալակ, -ի, -աց «պարկ. պատգարակ». Համմ. արաբ. šallāq «մորթուցկանի տոպրակ».

շամփուր, -ի, -աց. Համմ. ասոր. šappūḏā «անթրոց, կրակխառնիչ», արաբ. saffūd «շամփուր».

շառաւն «ուղտ». Համմ. արաբ. šārif, հգն. šawārif «ծեր էգ ուղտ».

շար «3600 տարվա շրջան». Համմ. աքք. šār(u) «3600».

շաւիղ, -ի, -աց «նեղ ճանապարհ, արահետ. ոտնահետք». Համմ. արամ. (ասոր.) šəḇīlā «ճանապարհ. հետք», եբր. šəḇīl «նեղ ճանապարհ», արաբ. sabīl «ճանապարհ».

շափիղայ (շափիւղայ, շափիլայ) «մի թանկարժեք քար». Համմ. ասոր. sap̄īlā, եբր. sappīr ?.

շեփորայ (շիփորայ), -ի, -իւ, շեփոր, -այ. Համմ. ասոր. šīp̄ōrā, եբր. šōp̄ār (սեմականն աղբյուրից է պրսկ. šēpōr, šapōr).

շղթայ, -ի, -իւ. Համմ. արամ. šīšiltā, šōšiltā, (ասոր.) šēšaltā, (ն. ասոր.) šišilt'ə, եբր. šelšelet, արաբ. silsila(t).

ոլոռն (Համմ. նաև՝ հալուրի «մի բույս» ?). Համմ. աքք. ḫallūru(m) (ḫi/ullūru, ḫallāru), արաբ. ḫullar, եբր. ḥārūl, արամ. ḫurlā «ոլոռ, սիսեռ».

ուրբաթ, -ու. Համմ. ասոր. ərūḇətā (> արաբ. ʿarūba(t)).

պախրէ, -ի, -իւ (ուշ՝ պախրայ) «տավար, արջառ, նախիր. պարեն, խոչք». Համմ. ասոր. baqrā, եբր. bāqār «արջառ. կով. ցուլ», արաբ. baq(a)ra(t) «եզ. կով» (արաբերենից է պաքարայ «արջառ. եզ»).

պաղաղ [*«խառն, ձուլված» (?)՝ միապաղաղ «միաձույլ, միապաղաղված. հարթ. պարզ» բառերում]. Համմ. աքք. balālu(m) «սրսկել, ցողել. խառնել, ձուլել, միաձուլել»?.

պատ «չորս կողմ, բոլորտիք. պատ», փաթ-, փոթ. Համմ. աքք. paṭu(m) «սահման. շրջան, գավառ» (բայց Համմ. ուրարտ. patari «քաղաք»)?

ռ(ա)բունայ (ըռբունայ) «գրավական, ավանդ». Համմ. արամ. (ասոր.) rahḇōnā, ʿarəbbōnā, եբր. ʿērāḇōn, արաբ. ʿarabūn, rabūn.

սակուր, -ի, -աց (սակր, -եր) «սակրատապար». Համմ. արամ. (ասոր.) seqūrā, saqūria «սակուր», արաբ. ṣaqūr «քարտաշի մուրճ» (< լատ. secūris «տապար, կացին»).

սանդ. -ի, Համմ. աքք. samādu(m) «աղալ», sam/ndu(m) «աղացած», samidu(m) «մի տեսակ ալյուր», sāmidu(m) «ջրաղացպան»?.

սատանայ, -ի, -իւ. Համմ. ասոր. saṭāna (< եբր. sāṭān «հակառակորդ, սատանա», որտեղից հուն. σατάν > հայ. սատան).

սափրել «ածիլել». Համմ. ասոր. spr «ածիլել».

սեռն «սանդուղք». Համմ. արամ. (ասոր.) sarnā, եբր. seren, sarnē[9].

---

[9] Երևի հայ. բառը կապ չունի հ.-ե. *K'ers- «կառք» բառի հետ։ Կապ կա՞ արդյոք սեռն և փսեռն բառերի միջև։

սիք, -ոյ «մեղմ քամի». Հմմտ. աքքադ. zīqu (sīqu) *«քամի» (շումեր.* siq *«քամի»), արամ. (ասոր.)* zīqā *«փոթորիկ», արաբ.* ṣīq[10].

սխուր «վարձ». Հմմտ. եբր. zəkar, seker, sākār *«վարձ», արաբ.* sakarat *«բանվոր», եթովպ.* səkūr *«վարձված»*[11].

սխրանալ «հիանալ, զարմանալ, սքանչանալ». Հմմտ. արաբ. sḥr *«կախարդել. հիացնել»,* siḥr *«կախարդանք, դյութանք».*

սկահ (սկիհ) «բաժակ». Հմմտ. ասոր. esqəpā (*< հուն.* σκάφη *«տաշտ. նավակ. կոնք, ջրաման»,* σκαφίς *«գույլ. կողով. կոնք. ջրաման»).*

սուսեր, -ի, -աց. Հմմտ. ասոր. sapsērā *(Հմմտ. նաև հուն.* σαμψήρα, *մ. պ.* *šafšēr *կամ* *šamšēr, *պրսկ.* šamšīr)?.

սրիկայ. Հմմտ. ասոր. srīqā *«անպիտան մարդ. դատարկ, ունայն»,* sraq *«կողոպտել», արաբ.* sāriq *«գող».*

սրո(վ)բէ. Հմմտ. ասոր. srapē *(հայերեն ձևն ազդվել է* քերովբէ *ձևից. Հմմտ. հուն.* σεραφίμ *<եբր. հգն.* sərāpīm).

տարի. աքքադ. dārītu(m) *«տևողություն, հավիտենություն» (սրա հետ կապված են եգիպտ.* tr *«ժամանակ. ժամանակամիջոց» և քուշ.՝ ագ., բիլ.* tarī *«անգամ, պահ. շրջան». տե՛ս գար).*

տերև, -ոյ. Հմմտ. ասոր. ṭərep̄, ṭarpā, *եբր.* terep̄, ṭārāp̄.

տղայ, -ոյ (ուշ՝ -ի, -ից). Հմմտ. արամ. (ասոր.) ṭalya *«տղայ», եբր.* ṭāle *«գառնուկ, նորածին գառն», արաբ.* ṭālā *«գառ. ուլ. եղնիկի ձագ»,* ṭalay *«գառնուկ. ուլիկ».*

ցեց, -ոյ. Հմմտ. աքքադ. sāsu(m), *արամ.* sās(ā), *եբր.* sās, *արաբ.* sūs(un) *(Հմմտ. նաև հուն.* σής *< սեմ.?).*

ցից, -ոյ (ցցել «անկել», ցցանք «մազափուշ»). Հմմտ. աքքադ. ṣiṣṣu(m) *«ձող. լուծ. ատամնանիճ, կապանք», ասոր.* ṣeṣṣā *«գամ, մեխ, բևեռ».*

փածանել «հագնվել». Հմմտ. աքքադ. paṣānu(m) *«պատել, ծածկել, փաթաթել, քողարկել».*

փեգանայ (փեգենայ) «բատատ, սպանդ (մի բույս՝ ruta)». *Հմմտ. ասոր.* pēgānā (*<հուն.* πήγανον).

փիլիսոփայ, -ի, -ից. Հմմտ. ասոր. pīlōsōpā (*<հուն.*φιλόσοφος *> փիլիսոփա).*

փուխ, -ոյ, փոխել. Հմմտ. աքքադ. puḫḫu(m) *«փոխանակել»,* pūḫu(m) *«փոխանակում, փոխարինում».*

փրկել. Հմմտ. ասոր. prq *«փրկել, ազատել»,* purqānā *«փրկություն», եբր.* pereq *«ազատել», արաբ.* farq *«բաժանել»*[12].

քահանայ, -ի, -ից. Հմմտ. արամ. kāhanā) (kahenā), *հգն.* kāhanaje, *(ասոր.)* kāhnā, *եբր.* kōhēn, *եթովպ.* kāhne *«քահանա», արաբ.* kāhin *«հմայող, կախարդ. տեսանող, մատակարար».*

քաղդեայ (քաւդեայ), -ի, -ից «հմայող, գուշակ». Հմմտ. ասոր. kaldāja *«մոգ, աստղահմա».*

---

[10] *Հ. Հյուբշմանը և Հ. Աճառյանը ենթադրում են ասոր. բրբռ. ձև՝ ց-ով (?)։*

[11] *Ըստ Հ. Աճառյանի [ՀԱԲ,* 4² 225] *ասորական բարբառային որևէ ձևից։*

[12] *Սակայն հմմտ. հ.-ե.* *(s)p(h)er- *«ցրել, ցանել»,* *sphreu-g-, *որտեղից լիտվ.* sprūgti *«փախչել, ազատվել, խույս տալ»։*

քանոն (քանոն) «մահճակալուն. ճաղ. քանոն. կանոն». Հմմտ. ասոր. kanūntā՝ qanūnā *ձևի կողքին (<հուն.* κανών, *որտեղից հայ. կանոն)*[13].

քանքար, -ոյ և -ի, -աց «մի կշռաչափ. այդ չափով ոսկու կամ արծաթի գումար. տաղանդ, շնորհք». Հմմտ. արամ. kankərā (kakkərā), *ասոր.* kakkərā, *եբր.* kikkār, *աքքադ.* kakkaru,

քարոզ, -ի, -աց և -ոյ «մունետիկ. հրամիչ. քարոզ». Հմմտ. արամ. (ասոր.) kārōzā *«մունետիկ»,* kārōz *«հրավիրակ, քարոզ», արաբ.* krz *«քարոզել».*

քուշ, -ի, -ից «արու այծ», քուշել «հարձակվել». Հմմտ. ասոր. kebšā, *եբր.* kebeś, *արաբ.* kabš, *աքքադ.* kabsu *«մատաղ խոյ».*

քաքար, -ի, -աց «մի տեսակ խմորեղեն, կարկանդակ». Հմմտ. ասոր. kakārītā *«մեղրահաց», աքքադ.* kakkaru *«կլոր հաց» (Հմմտ. նաև խուռ.* kakkar, *խեթ.* kaggari).

քերովբէ «մի հրեշտակադաս». Հմմտ. ասոր. k(ə)rōbā, *հգն.* krōbē (*<եբր.* kərūb, *հգն.* kərubīm *>հուն.* χερούβ, *հգն.* χερουβίμ).

քթեթ «կտավե հաստարակ զգեստ. շորի կտոր. (բրբռ.) հարսնազգեստ». Հմմտ. աքքադ. kitītu(m) (kitittu, kitintu) *«կտավե զգեստ»,* kitû(m) *«կտավ», այլև արամ.* kittūna, kuttīnā, *եբր.* kuttōnet *(արևմտասեմ.* ki/e/attān. *Հմմտ. նաև ասոր.* qeṭṭau)[14].

քնար, -ի, -աց. Հմմտ. արամ. kinnārā, *(ասոր.)* kennārā, *եբր.* kinnōr.

քշտել «կտրել, հատել. հարվածել. դիպցնել. քսել». Հմմտ. աքքադ. kašātu(m) *«կտրել, հատել».*

քուեայ (քուէ), -ի, -ից. Հմմտ. արամ. թալմ. qubjā (*<հուն.* κυβεία *«խորանարդ. վեգ»).*

քուսիթայ «կրոնավորի գլխարկ, կնգուղ». Հմմտ. ասոր kōsītā [*<աքքադ.* kusitu(m) *«զգեստ»*?].

քուրայ, -ի, -ից. Հմմտ. արամ. kūr(ā), *(ասոր.)* kūrā, *եբր.* kūr, *աքքադ.* kūru(m).

քուրմ, -ի, -աց. Հմմտ. արամ. (ասոր.) kūmrā, *եբր.* kōmer, *աքքադ.* kumru(m), kumir(t)u։

Կան դեպքեր, երբ հայերեն բառերն ունեն սեմական ակնհայտ զուգահեռներ, բայց այդ բառերի բուն աղբյուրների հարցի լուծումը կապված է դժվարությունների հետ։

1) Մի շարք դեպքերում հնարավոր է հայերեն բառերի նաև հնդեվրոպական մեկնությունը։ Առանձին դեպքերում կարելի է առավելություն տալ այս կամ այն ստուգաբանությանը, մյուս դեպքերում վճռական խոսք ասելը դժվարանում է.

բողկ. Հմմտ. աքքադ. puglu(m), *արամ. ասոր.* puglā *«բողկ» (արաբ.*

---

[13] *Հնարավոր է ենթադրել նաև մ. իրան. որևէ ձև՝ իբրև հուն. և հայ. բառերի միջնորդ օղակ։*

[14] *Հ. Հյուբշմանը [*AG, 208*] և Հ. Աճառյանը [ՀԱԲ, 675—676] ասոր. բառը փոխառություն են համարում հայերենից. ընդհանրապես Հ. Աճառյանը հնարավոր է համարում ընդհանուր աղբյուրը համարել հայերենը [կտաւ բառից. հմմտ. Ջահուկյան, 1976, 45—46], եթե բուն աղբյուրը շումերերենն է, ապա հայերենը պիտի համարել փոխառյալ։*

fuγl) և ակկադ. buqlu(m) «ածիկ», սոր. buqlā «ծիլ, ընձյուղ», արաբ. baql «կանաչեղեն, բանջարեղեն». Աճառյանը համարում է բող-ի ածանցավոր ձևը և բխեցնում է հ.-ե. *bhel-ից. ըստ Պոկոռնու [IEW, 1, 103]՝ ծագում է *bol-ից, որտեղից հուն. βολβός «սոխ». Հնարավո՞ր է արդյոք ենթադրել սեմական փոխառություն հայերենից.

խուց. հմմտ. ակկադ. ḫuṣṣu(m) «եղեգնաշեն խրճիթ» (Աճառյան ՀԱԲ, 2², էջ 422—423). Պատրուբանին, Պետերսոնը և Պոկոռնին [IEW, 1, 956] բխեցնում են հ.-ե. *(s)keu- «ծածկել» արմատից (*khu-sk'o-)՝ խուղ բառի հետ միասին.

կաքավ, -ու (ուշ -ոյ, -ի. -աց). հմմտ. ակկադ. kakkābanu «մի թռչուն՝ խայտահա՞վ (цесарка)», սոր. qaqqəba(nā) «կաքավ». բայց հմմտ. նաև հուն. κακκάβη «կաքավ» (հ.-ե. *kakk-?).

բրբռ. մառ «կծու». հմմտ. արաբ. murr, եբր. mar, ակկադ. marru(m) «դառն» (սեմ. mrr «դառը լինել») (Մկրտչյան). բայց հմմտ. նաև բրբռ. մռմուռ՝ մարմաջ, մորմոք բառերի կողքին, որոնք թերևս ծագում են հ.-ե. *mer- «տրորել» արմատից. հմմտ. գերմ. Schmerz «ցավ», անգլ. smart «ցավել. կսկծալ, ուժեղ (ցավ)» և այլն. իմաստային հարաբերության համար հմմտ. կծանել և կծու.

տամալ, -ոյ (և տամալի. -ւոյ, -եաց) «տանիք». հմմտ. ակկադ. tamliu(m), tamlû(m) «լիցք, տեռաս, հողահարթակ. բլուրք» (malû(m) «լի լինել, լցվել» բայից) [Աճառյան, ՀԱԲ, 4², 367]. ավելի հավանական է բառի հնդեվրոպական ծագումը՝ *dem(ə)- «կառուցել, միացնել, զուգակցել» արմատից. սրա *dom- ձևից ծագում է հայ. տուն բառը, որից և տանիք. հմմտ. նաև հայաս. Tamatta տեղանունը.

տարածել. հմմտ. ակկադ. taraṣu(m) «ձգել, տարածել» (արամ. «ուղղել»). հնարավոր է մեկնել նաև որպես տար+ածել կազմություն.

տեղ «առատ անձրև». հմմտ. սոր. ṭālā «ցող» (եբր. ṭal «ցող, անձրև») [Աճառյան, ՀԱԲ, 4², 392]. ավելի հավանական է տեղ-ի հ.-ե. ծագումը՝ *del-ից [հմմտ. **Pok.**, 1. 196]. հմմտ. հատկապես մ. իռլ. delt «ցող» (այլև գետանուններում), բրետ. delt «խոնավ» և այլն.

ցամաք, -ի, -աց. հմմտ. եբր. ṣmq «չորացնել», ṣōməqīm «չորացած (սալորք)», այլև ṣimmūqā «չամիչ» [Աճառյան, ՀԱԲ, 4², 448՝ սոր. բրբռ. կորած մի ձևից]. բայց հմմտ. նաև հ. հնդկ. kṣāma «այրված, չորացած» (հ.-ե. *ksā- «այրել»). եթե հայ. բառը ծագում է սեմական աղբյուրից, ապա նրա հետ կապված է և սեմական ծագում ունի նաև ամքիլ բրբռ. բառը.

ցիր, ցրիւ. հմմտ. ակկադ. zarû(m) (sarum), սոր. zarā'u «ցրել» (սեմ. *ḏrū, *z/ḏrū/i), zēru(m), zīru «սերմ» (սեմ. *ḏar‘, z/ḏar‘). ավելի հավանական է բառի հնդեվրոպական ծագումը՝ հ.-ե. *(s)ker- «ցատկել» արմատից, որտեղից հ. հնդկ. kiráti «ցրում է, ցանում է, թափում է, նետում է».

փարատ «անջատ», փարատել «հեռացնել, ցրել». հմմտ. սոր. prt «ցրել. տարածել, անջատել», ակկադ. parāṭu «պոկել-հեռացնել. մաքրել». բայց հմմտ. հ.-ե. *(s)p(h)er- «ցրել, ցանել» (**Pok.**, 1, էջ 993):

Որոշ դեպքերում հավանաբար մենք գործ ունենք պատահական նմանությունների հետ. ահա մի քանի օրինակ. հմմտ. ա) հայ. այս «քամի. չար ոգի. դև» — արաբ. ‘ayṭ «մոլեգնել, աղետ բերել, ավերածություն անել» (Մկրտչյան). ավելի հավանական է ենթադրել հայ. բառի հ.-ե. ծագումը *ansi̯o- ձևից (հ.-ե. *ansu- «ոգի, չար ոգի»). հմմտ. հ. հնդկ. ásu-, ավ. anhu- «կենդանություն, շունչ, կյանք». բ) հայ. եփել — ակկադ. epu(m) «թխել, եփել, խորովել». հայ. բառը ավելի վստահելի զուգահեռ ունի հուներենում՝ ἕψω «եփել» (-so-ով ներկա. հմմտ. δέφω և δέψω «տրորել, ճմռել»՝ հայ. տոփել զուգահեռով). գ) հայ. մաքառել — ակկադ. maḫaru(m) «դեմ գնալ, դիմադրել. դիմել. ընդունել». հմմտ. նաև հուն. μάχομαι «մաքառել, մարտնչել, կռվել» (հնչյունական հարաբերության համար հմմտ. ἄρχων «առաջնորդ, իշխող. տիրող» և հայ. արքայ). հուն. μάχομαι-ը կասկածով հանգեցնում են հ.-ե. *mag'h-ին. թերևս հուներենի և հայերենի համար պետք է ենթադրել մի ընդհանուր (ենթաշերտայի՞ն) աղբյուր:

2) Մի շարք այլ դեպքերում սեմական զուգահեռների հետ միասին առկա են նաև իրանական զուգահեռներ, և հայերեն բառերի անմիջական աղբյուրների հարցի լուծումը դժվարանում է. հարկավոր է նկատի ունենալ, որ՝ ա) արևելքում տարածված, հատկապես մշակութային արժեք ունեցող բառերը կարող են անցած լինել հայերենին ոչ բուն աղբյուրից. սեմական ծագում ունեցողները՝ իրանական և իրանական ծագում ունեցողները՝ սեմական միջնորդությամբ. բ) հնարավոր են պատահական համընկումներ. գ) կան դեպքեր, երբ առկա է տարբեր ձևերի բաղարկում.

ագուռ (ուշ ավանդված). հմմտ. ակկադ. agurru(m), որտեղից արամ. āgūr, արաբ. ājurr և այլն, և պրսկ. āgūr (այստեղից է թերևս հայերենը).

ալան «ազնվական (?), իշխան (?)» (ազանազգի բառում. հմմտ. նաև Ալան անձնանունը). ըստ Յուստիի [**Justi**, 1895, 13, 484] Ալան անձնանունը իրան. ծագում ունի (հմմտ. Andalan, Zandalan. սակայն հմմտ. նաև alān, հայ. ալան<*aryana «արիացի»). ըստ Հ. Աճառյանի [ՀԱԲ, 1², 120 ՀԱնԲ, 1, 97]՝ սոր. ‘alānā «առաջնորդ. եկեղեցական առաջնորդ» բառից.

անանուխ, -ոյ. հմմտ. ակկադ. (a)naniḫu, nanaḫu «մի բույս՝ անանուխ». համարվում է փոխառություն. ըստ Ցիմեռնի՝ փոխառված է արամ. nan‘ā-ից (սոր. nān‘ā). ըստ Հյուբշմանի և Աճառյանի՝ սեմական բառերը առնված են իրան. աղբյուրից, որից և համարվում է հայերենը. հմմտ. պրսկ. nānxāh, nānuxēh «հացհամեմ»՝ nān «հաց» և xᵛāh «համեղ» արմատներից.

ապրսամ (ապուրսամ, ապրասամ) «բալասան». հմմտ. սոր. apūrsāmā, pursāmā (<իրան., որտեղից նաև հայերե՞նը).

դոյլ, -ի, -ից և -ոյ. հմմտ. սոր.-արամ. daula (ակկադ. dalu(m), եբր. dəlī, արաբ. dalw) կամ մ. պ. (<սեմ.) dōl.

թագ, -ի, -աց. իրան. *tāg- բառից անմիջաբար կամ սեմական միջնորդությամբ (հմմտ. արամ. tāgā, արաբ. tāj). Ա. Մեյեն հակված է երկրորդ կարծիքին՝ նկատի ունենալով պարթ. t > հայ. թ անցումը փոխանակ ավելի սովորական պարթ. t > հայ. տ անցման.

թոնիր, -ոյ. հմմտ. ակկադ. tinūru(m), tenūru(m) (շումեր. tunur, tinur). ակկադերենից են ինչպես սեմական այլ լեզուների, այնպես էլ իրանական ձևերը՝ առաջին a կամ i և երկրորդ ü ձայնավորով. հայերեն ձևի ձայնավորումը կանգնած է առանձնակի.

թութ, -ոյ. հմմտ. արամ. (սոր.) tūtā և մ.պ.(<արամ.) *tūt. Հյուբշմանը և Աճառյանը ավելի հավանական են համարում իրանական աղբյուրը.

խուրգ, -ոյ «քուրձ». հմմտ. սոր. xurgā «մախաղ, պարկ, պայուսակ» (արաբ. xurǰ, որտեղից, թյուրք. միջնորդությամբ, բրբռ. խուրջին) < մ. իրան. *xvarg (xvarǯ), որտեղից թերևս անմիջաբար հայերենը.

մանիշակ, -ի, -աց. հմմտ. ասոր. mənīškā (< իրան.? հմմտ. մ. պ. vanavšak, պ. banafša). մանուշակ ձևը անմիջաբար իրան. աղբյուրից է. սակայն հնարավոր է ենթադրել հայերենում բարբառային տարբերակներ և ասոր. ձևը փոխառություն համարել հայերենից.

նաւթ, -ոյ և -ի. հմմտ. աքքադ. naptu(m). արամ. (ասոր.) napṭā, nepṭā, արաբ. napṭ և պրսկ. naft. ոմանք ընդհանուր աղբյուր են համարում սեմականը, ուրիշները՝ հնդեվրոպականը. հմմտ. ավեստ. *napta- «խոնավ, թաց» (հ.-ե. *enebh- «թաց. ջուր. ամպ» արմատից). Հյուբշմանը և Աճառյանը նաւթ-ը բխեցնում են պհլ. *naft ձևից:

շկապել «վռնդել, վանել». հմմտ. ասոր. šəqap «հարվածել, խփել. դուրս հանել, դուրս քաշել, նետել» և պրսկ. šikāftan «ճեղքել» ?

շուշան, -ի, -աց, հմմտ. արամ. šūšanətā, (ասոր.) šūšantā, հգն. šušannē, արամ. եբր. šūšan, šōšān, šōšannat, արաբ. sūsan < բոլորը եգիպտ. ššn-ից) և մ. պ. šūšan, sūsan (< սեմ.).

պատառել. հմմտ. աքքադ. paṭāru(m) «արձակել», եբր. pṭr «պատռել, առանձնացնել», արաբ. fṭr «ճեղքել. զատել. ստեղծել» (սեմ. *pṭr «բաժանել. պատռել, ճեղքել») և պրսկ. fatārdan fatārīdan «պատռել».

սափիրայ (սափորեայ) «շափյուղա». հմմտ. ասոր. sapīlā (եբր. sappīr) և հուն. σαπφεῖρος (սրանց բաղարկությո՞ւմը).

սակամոնիա «մի գեղաբույս՝ convolvulus scamonia». հմմտ. ասոր. saqmunia և պրսկ. saqmūniyā, այլև հուն. σκαμμωνία. հավանական է ասորական աղբյուրը.

փիղ, -ի, -աց. հմմտ. մ. պ. pīl (ըստ Հյուբշմանի և Աճառյանի) կամ արամ. pīl(ā), (ասոր.) pīlā.

քթանակ «հագուստ». հմմտ. եբր. kuttōnet, արամ. kittūna, kuttīna, փյուն. ktn «կտավե զգեստ» (> հուն. χιτών)՝ բոլորն էլ աքքադերենից (հմմտ. kitū(m) «կտավ» < շումեր.). սեմական բառը կարող է հայերենին անցած լինել իրանական միջնորդությամբ (հմմտ. -ակ ածանցը).

քրսան «մի ընդեղեն, ոսպնավիկ». հմմտ. պրսկ. karsana և արաբ. karsanna (ըստ Աճառյանի՝ պարսկերենից կամ ասոր. մի ձևից):

Նախկինում կասկածով կամ առանց կասկածի սեմական աղբյուրից համարվող մի շարք բառերի իրանական ծագման հարցը այժմ կարելի է լուծված համարել հօգուտ իրանականի.

դարգիճ «պատգարակ». Հ. Աճառյանը [ՀԱԲ, 1², 637], Հյուբշմանի հետևողությամբ, մատնանշում է ասոր. dargušta «պատգարակ», արամ. dargaš «անկողին» բառերը՝ ավելացնելով, որ դրանք բնիկ սեմական չեն և կարող են հայերենի հետ փոխառյալ լինել իրանականից. դարգիճ-ի իրանական ծագումը երևում է -իճ ածանցից. ըստ Բոգոլյուբովի (ВЯ, 1974, 6, 107—108) աղբյուրն է *dragiča- ձևը՝ *drag- «քաշել» արմատից.

զուրկ, զիրկ (զրկել). Հ. Աճառյանը [ՀԱԲ, 2², 97] հայերեն բառերը բխեցնում է ասորերենից՝ նկատի ունենալով sraq «կողոպտել», srīqā «զուրկ, ունայն, դատարկ» բառերը, բայց հետագայում, մեր մատնանշումով, այստեղից բխեցնելով սրիկայ բառը [ՀԱԲ, 4², 668]՝ զուրկ-ը մեկնաբանում է որպես զ-ով կազմություն և -ուրկ-ը համեմատում է լատ. urgeō, -ēre» «մղել, քշել, ստիպել, սեղմել և այլն» բառի հետ, որ անհավանական է. ավելի հավանական է զուրկ-ի իրանական ծագումը. հմմտ. զուր < zūr.

քաղաք, -ի, -աց բառի աղբյուրը Հ. Աճառյանը համարում է աքքադերենը, բայց kalakku(m) «փոս, փորվածք. նկուղ. գետնափոր պահեստ» (< շումեր.) և kalakku(m) «արկղ» բառերից ոչ մեկը չի կարող հայերենի աղբյուր լինել. ըստ Հ. Բեյլիի՝ իրանական ծագում ունի. հմմտ. մ. պ. kl'k (kalāk) «բերդ, ամրոց» [տե՛ս նաև Schmitt, 1981, 170]:

Կան բառեր, որոնց սկզբնաղբյուրը սեմականն է կամ որոնք ավանդված են սեմականում, բայց սեմական սուլականների փոխարեն համապատասխան շչականների առկայությունը որպես հայերենի հավանական աղբյուր ցույց է տալիս իրանական լեզուներից որևէ մեկը.

խիճ. հմմտ. աքքադ. ḫiṣṣu «խիճ» (արամ., եբր. ḥaṣāṣ, արաբ. ḥaṣā).

ճապուռ «մագիլ, ճիրան». հմմտ. աքքադ. ṣup(u)ru(m) «եղունգ. մագիլ, ճիրան. ճանկ» (արամ. ṭēprā, եբր. ṣipporen, արաբ. ẓufr).

ջնար, -ի, -աց «քնար, տավիղ. կիթառ». հմմտ. աքքադ. zannaru(m) «մի տեսակ քնար» (անծանոթ ծագման) և խեթ. zinnar «1. երաժշտական գործիք. 2. (կանչ արարողության ժամանակ՝ խաթերենից) երաժշտությո՞ւն». զուգահեռ քնար բառը, ինչպես տեսանք, սեմական ծագում ունի (եբրայերենից է հուն. κινύρα-ն):

Թեև վարել բայը զուգահեռ ունի աքքադ. ṷarum «վարել, տանել, առաջնորդել, ղեկավարել» բայի մեջ, բայց նմանությունը պատահական է, հայ. բառը ծագում է իրան. աղբյուրից. հմմտ. vað- «վարել, քշել» (< հ.-ե. *ṷedh-):

3) Առանձին դեպքերում, մանավանդ մատենագրական փոխառությունների դեպքում, դժվար է որոշել հայերեն բառերի ասորական, թե հունական աղբյուր ունենալը, մասնավորապես ասորական այն բառերի դեպքում, որոնք իրենց հերթին փոխառված են հունարենից.

կապելայ (կապեղայ՝ կապել/ղեոն, կապլեոն և այլ ձևերի կողքին) «պանդոկ, գինետուն, հասարակաց տուն». հմմտ. ասոր. qapēlā «գինետուն, պանդոկապետ» < հուն. καπηλεία, καπηλεῖον, καπήλιον «գինետուն» (կապելեոն, կապեղեոն ձևերը հունարենից են, թեև հայ. և ասոր. բառերի իմաստի տարբերությունը խոսում է նաև կապելայ, կապեղայ ձևերի՝ հունարենից փոխառվելու կարծիքի օգտին՝ καπηλεία-ի՞ց).

կոմս, -ի, -ից (կոմէս). հմմտ. ասոր. qōms < հուն. κόμης. կոմէս ձևը անմիջաբար հունարենից է, կոմս-ը՝ թերևս ասորերենից.

մամոնայ, -ի «ունեցվածք, հարստություն». հմմտ. ասոր. māmōnā կամ հուն. μαμ(μ)ωνᾶ (< եբր.).

նափորան, -ան «վերարկու, փիլոն, շուրջառ». հմմտ. հուն. ἀναφέρω «բարձրացնել, տանել, կրել», (ἀ)ναφορά «բարձրացում. կրում», ուշ ἀναφορίζομαι «կրել». հայերենն առնված է հունարենից կամ անմիջաբար, կամ ասորերենի միջնորդությամբ.

սինհոդոս «եկեղեցական համաժողով». հմմտ. ասոր. sunhodos < հուն. σύνοδος, ասոր. աղբյուրի օգտին է խոսում հ-ն, հունարենի օգտին՝ իւ-ն.

սպեղանի. հմմտ. ասոր. ēsplenyā «սպեղանի» < հուն. σπλήνιον «կապպրես»․ ըստ իմաստային մերձավորության հավանական է ասորական աղբյուրը:

Մարանաթայ «նզովք» բառը ակնհայտ տառադարձություն է հուն. μαρὰν ἀθά-ի, որ իր հերթին տառադարձված է արամ. mār-ān 'aṭā «մեր տերը եկավ» նախադասությունից:

Սուսին բառի աղբյուրը կարող է լինել ինչպես ասոր. sūbīnā-ն, այնպես էլ նրա սկզբնաղբյուրը, որի մասին խոսվել է:

4) Վերջապես, կան դեպքեր, երբ դժվար է ընտրություն կատարել սեմական և ոչ սեմական հին ու նոր աղբյուրների (խուռիերեն, ուրարտերեն և այլն) միջև.

անագ, -ի, -ագ (ուշ՝ -ոյ). հմմտ. աքքադ. anāku(m) (եբր. anāk, ասոր. anəkā, արաբ. ānuk) և խուռ. anagi. ընդհանուր աղբյուրը պարզ չէ. փոխառյալ է համարվում և աքքադերենը. հայերենի համար հավանական է խուռական կամ ուրարտական աղբյուրը.

աստել «աղջիկ ուզել», աստուղ «փեսացու». հմմտ. աքքադ. aššatu(m) (< *antatum. հմմտ. ուգար. att, արամ. intətā, ittətā) «կին, կին ամուսին» aššutum «ամուսնություն» և խուռ. ašti- «կին, կին ամուսին» (< աքքադ.):

բուրգն, -ան, հմմտ. ասոր. būrgā (< հ.-ե.) և ուրարտ. burgana «բուրգ, ամրոց» (և «օժանդակ զորք»).

նուռն. հմմտ. աքքադ. narimdu և խուռ. nuranti (< աքքադ.). ի՞նչ հարաբերություն ունեն սրանք մ. պրսկ. anār, պրսկ. nār բառերին.

սան, -ի, -ից (և ու?) «կաթսա». հմմտ. աքքադ. šannu(m) «մետաղյա կաթսա կամ զավաթ» (< շումեր.) > ուրարտ. šani «աման»:

Եւղ բառի աղբյուրը, ինչպես նշել ենք, ավանդաբար համարվում է միջերկրական մի լեզու, որտեղից նաև հուն. ἔλαιον «ձեթ», ἐλαία «ձիթենի, ձիթապտուղ»: Աքքադերենն ունի ulû(m) «լավ յուղ, լավ կարագ» բառը, որի հավանական աղբյուրն է համարվում շումերերենը [**Soden**, AH, 3, 1411]:

Միջերկրական ծագում է վերագրվում նաև **թուզ**, -ոյ բառին, որի համար կան մի կողմից՝ հունարեն և լատիներեն, մյուս կողմից՝ սեմական զուգահեռներ. հմմտ. հուն. (բեովտ.) τῦκον, (հոմեր.) σῦκον, լատ. ficus և աքքադ. tīttu(m), հգն. tīnātu(m) (արամ. tēn/ttā, եբր. tə'ēnā, արաբ tīn). Հավանական է հունարենին, հատկապես τῦκον-ին մոտ աղբյուր՝ *tugho- տիպի *gh-ի սովորական քմայնացմամբ u-ից հետո և -o- հիմքային ձայնավորի պահպանմամբ թեք հոլովներում. սեմական ձևերը հեռու են:

Հայ. **անձրեւ** բառը զուգահեռ ունի սոմալ., եբր. anẓar համանիշի մեջ, բայց նմանությունը պետք է պատահական համարել: Պատահական պետք է համարել նաև ուգարիտ. šrn(') «հացահատիկի տեսակ՝ ցորե՞ն», եթովպ. šernāi «ցորեն» և հայ. **ցորեան** բառերի նմանությունը, եթե չենթադրենք հին միջնորդ օղակ:

Հայերենի սեմական փոխառությունների քննության հետ կապված մի քանի խոսք ասենք այն համընկումների մասին, որոնց համար կարելի է ենթադրել հայկական կամ ուրարտական աղբյուր:

Եթե օտարների կողմից հայերին տրվող **արմեն** անվանումը բուն հայկական ծագում ունի և առնչվել է հայերի մոտ հնում գործածվող ***արմեն** «ցեղ, զարմ» բառից (հմմտ. **արմ**, **արմն** «արմատ», **արմատ** «արմատ. ցեղ, զարմ. հիմք. խարիսխ», **զ-արմ** «ցեղ, զարմ»), որ զուգահեռներ ունի հուն. ὄρμενος «բողբոջ, ցողուն», գերմ. *ermana-, *irmana- «մեծ», հ. սլավ. raměnъ «հզոր» բառերի մեջ և ծագում է *er- «հուզել, բարձրացնել» արմատից, ապա աքքադ. armannu(m), armanû «ծիրան, ծիրանի ծառ», ասոր. ḫazzurā armənājā «ծիրան» (բառացի՝ «հայկական խնձոր»), արաբ. tuffāh-al-armanī «ծիրան» (բառացի՝ «հայկական խնձոր») բառերի աղբյուրը վերջին հաշվով հայերենն է:

Վերևում խոսվեց **բողկ** անվան հնարավոր սեմական փոխառության մասին հայերենից, եթե այստեղ առկա չէ պատահական նմանություն: Այստեղ նշենք հայ. **դդում**, -ոյ բառի և մյուս կողմից՝ աքքադ. dug/kdumu «մի բուսանուն» բառերի նմանությունը. և՛ հայերեն, և՛ աքքադերեն բառերի ծագումն անհայտ է. եթե դրանց միջև կապ կա, ապա ենթադրելի է մի ընդհանուր աղբյուր (ուրարտերե՞նը): Թերևս ուրարտերեն uldi, udulī «խաղողի այգի» բառն է նաև հայ. **առլի** «խաղողի որթ», շու. ṭul «խաղող», եբր. dalijā(h), արաբ. dāliyat «խաղողի որթ» բառերի աղբյուրը [սեմական ձևերի համար տե՛ս **Гранде**, 1972, 15]:

Հ. Հյուբշմանը [AG, 308] ասոր. qəṭṭau «բամբակ» բառի աղբյուրը համարում է **կտաւ** բառը: Հ. Աճառյանը [ՀԱԲ, 2², 676], նշելով բառի տարածվածությունը Առաջավոր Ասիայի լեզուներում, գրում է. «Եթե Հայաստանը հայրենիքն է կտավի, ուրեմն այս բոլոր բառերը ծագում են Հայաստանից, այն է Հայաստանի բնիկ խալդիների լեզվից, որտեղից փոխառյալ է նախ ասուրերենը և այստեղից էլ տարածված ամեն կողմ»: Եթե նկատի ունենանք **կուտ** և **կտաւ** բառերի կապը և **կուտ**-ի հնդեվրոպական ծագման հնարավորությունը (*gudo-) [**Ջահուկյան**, 1965, 157—158. 1976, 46—47], ապա կարելի է **կտաւ**-ի բուն աղբյուրը համարել հայերենը, որի կրողները, ապրելով ուրարտացիների կողքին, նրանց պիտի բառեր տված լինեն: **Կտաւ** բառը երկրորդաբար նորից կարող էր փոխառվել ասորերենի կողմից: Նշենք, որ հայերենը ևս իր հերթին ուշ շրջանում փոխ է առել սեմական աղբյուրից **քթեր** «կտավի հաստարակ զգեստ» և, պարսկական ու թյուրքական միջնորդությամբ, բրդ. **ք(ա)թան** բառերը:

Հ. Աճառյանը [ՀԱԲ, 1², 261], նշելով **առն** «արու վայրի ոչխար, շիկերն» բառի հնդեվրոպական ծագումը (*ṛsen, հմմտ. հուն. ἄρσην, ἄρρην «արու» ἀρνειός «խոյ»), հայերենից փոխառյալ է համարում ասոր. arnā «լեռնայծ» և վրաց. arni «վայրի ոչխար» բառերը: Եթե Աճառյանը ճիշտ է, ապա հավանական է ենթադրել հայ. բառի և բնիկ ասորերեն ձևի բաղարկություն, մի ձև, որի համար նշում են սեմական զուգահեռներ arm/u̯- բաղադրիչով՝ աքքադ. armu «լեռնային արու այծ», aru̯(i)um, armû «արու այծյամ», արաբ. uru̯īya, հաբաշ. aru̯ā «լեռնայծ», եթովպ. aru̯ē «անասուններ»:

Անշուշտ, գրական ձևերի կողքին կան սեմական ծագում ունեցող բարբառային ձևեր, բայց դրանց հնության աստիճանը և փոխանցող բուն ուղիները ոչ միշտ են պարզ. այսպես, բարբառային **դող** «մեծ կճուճ» բառը զուգահեռներ ունի արամ. dūd(ā), ասոր. dūdu «կճուճ» (աքքադ. dudu, եբր. dūd) բառերի մեջ, բայց դժվար է ասորերենը համարել հայերենի բուն աղբյուրը: Այս նույն ձևով էլ **կոտ** «փայտե աման. կարաս. տարողության չափ» բառը զուգահեռ ունի աքքադ. kūtu(m), kuttu(m), kutû «մի մեծ աման» (ուգար. kt) բառերի մեջ, բայց հայերենի բուն աղբյուրը ակնհայտորեն այլ է:

դ) ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԱԿԿԱԴԵՐԵՆԸ

Միջագետքում ակկադական-սեմական ցեղերի ազդեցության ուժեղացումը մ. թ. ա. XXIV դարում կապված է Ակկադի թագավոր Սարգոնի (Շառռուկին) անվան հետ: Հաղթանակ տանելով գրեթե ողջ Շումերի վրա իր իշխանությունը տարածած Լուգալզագեսիի դեմ և շարունակելով պայքարը Շումերի նշանավոր քաղաքների հետ՝ Սարգոնը հասնում է հյուսիսային և հարավային Միջագետքի (լայն առումով՝ Ակկադի և Շումերի) միավորմանը: Սարգոնի հաջորդների իշխանությունը տևում է մինչև մ. թ. ա. XXIII դ. վերջը՝ ընկնելով գուտեական լեռնային ցեղերի հարվածների տակ: Մ. թ. ա. XXII դ. վերջին տասնամյակներից մինչև հաջորդ դարի վերջին տասնամյակները Միջագետքում գերիշխող ուժ են դառնում շումերական Ուր քաղաքի թագավորական III հարստության իշխողները: Արևելքից էլամի և արևմուտքից ամորեական սեմական ցեղերի ճնշման տակ Ուրի իշխանությունը կործանվում է: Հետագա շրջանում զգալի ազդեցություն է ձեռք բերում Միջագետքում կենտրոնական աշխարհագրական դիրք ունեցող Բաբելոնը, որի հզորությունը տևում է մինչև մ. թ. ա. XVIII դ. կեսերը: Դրանից հետո բաբելոնական թագավորությունը դեպի անկում է գնում և բավական երկար ժամանակ ընկնում կասիտների իշխանության տակ: Ասուրական թագավորների ուժեղացմամբ, մանավանդ Միտաննական պետության թուլացումից հետո, Բաբելոնն աստիճանաբար մղվում է երկրորդ պլան: Ասորեստանը դառնում է հին արևելքի հզոր պետություններից մեկը, որի արշավանքներին է ենթարկվում նաև Ուրարտուն: Մի քանի դար տևող հզորությունից հետո Ասորեստանը թուլանում է և մ. թ. ա. 612 թ.փաստորեն դադարում ինքնուրույն գոյություն ունենալուց. այդ թվականին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն գրավվում է Բաբելոնի թագավոր Նաբուպալասարի և մեդական զորքերի կողմից: Նաբուպալասարի հաստատած բաբելոնական թագավորությունը մ. թ. ա. 538 թ. գրավվում է Կյուրոսի զորքերի կողմից և մտնում պարսկական պետության կազմի մեջ:

Ակկադերենը իր երկու բարբառներով՝ ասուրերենով (ասորեստաներենով) և բաբելերենով, որոնք գրի են առնված սեպագրով, անցել է զարգացման մի քանի շրջան: Հին ակկադերենի շրջանում՝ մ. թ. ա. XXIV—XXI դդ. այն դեռևս միասնական լեզու էր. միայն այդ շրջանի վերջերին նկատվում են բարբառային տարբերակման նշանները: Հետագայում կարելի է խոսել ասուրերենի (ասորեստաներենի) և բաբելերենի անկախ զարգացման մասին, ընդ որում դրանցից յուրաքանչյուրը մ. թ. ա. XX—VII դդ. անցնում է իր զարգացման հին (մ. թ. ա. II հազարամյակի մոտավորապես I կեսը), միջին (մ. թ. ա. II հազարամյակի մոտավորապես II կեսը) և նոր (մ. թ. ա. X—VII դդ.) շրջանները: Նոր շրջանում ուժեղանում է արամեերենի ազդեցությունը, տեղի է ունենում ձայնավոր վերջավորությունների անկում: Բաբելերենի համար առանձնացնում են նաև, այսպես կոչված, ուշ բաբելերենի շրջանը, որ տևում է մ. թ. ա. 605 թ. մինչև մ. թ. սկիզբը:

Ասուրերենի (ասորեստաներենի) և բաբելերենի անկախ զարգացման շրջանում այլևս չկան ṭ(θ), ś, ʻ, γ, ḫ հնչյունները. ասուրերենում համընկել են s և š հնչյունները: Սաստկական (էմֆատիկ) բաղաձայնների հակադրությունը ոչ սաստկականներին թույլ է: Ընդհանրապես չեն տարբերվում ṣa-ն և za-ն, ṭi-ն և di-ն, bu-ն և pu-ն: Երբեմն շփոթվում են q-ն և g-ն: Բառասկզբում տեղի է ունենում ձայնեղների և խուլերի, սաստկականների և ոչ սաստկականների տարբերությունների դիրքային չեզոքացում:

Ակկադերենը հայերենի վրա կարող էր ազդել ինչպես անմիջաբար, այնպես էլ միջնորդված կերպով: Հայկական ցեղերը կարող էին անմիջական շփման մեջ մտնել ոչ միայն պատմական Հայաստանի հարավային շրջաններում (այդ թվում՝ ուրարտական պետության կազմում), այլև Փոքր Ասիայի ակկադական գաղութների հարևանությամբ: Իբրև ակկադերենի և հայերենի միջնորդ օղակներ կարող էին ծառայել մասնավորապես ուրարտերենը, իրանական լեզուները, այլև արամեերենը՝ իր տարբեր վիճակներով և տարբեր բարբառներով. հարկավոր է նկատի առնել, որ ակկադերենն ընդհանրապես ուժեղ ազդեցություն է թողել Առաջավոր Ասիայի սեմական ու ոչ սեմական լեզուների վրա, և այդ ազդեցությունից, լինի այն անմիջական թե միջնորդված, չէր կարող զերծ մնալ նաև հայերենը [հմմտ. **Zimmern,** 1917]:

Մինչև Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան» [1—7, 1927—1935] և «Հայոց լեզվի պատմություն» [1, 1940] աշխատությունները տարբեր հեղինակների կողմից հայերենի և ակկադերենի միջև բառային համեմատություններ կատարվել են, բայց դրանք չեն համակարգվել: Հ. Հյուբշմանը իր «Հայերենի քերականության» մեջ [AG, 2, 1897] ակկադական փոխառությունները քննում է ասորականների հետ միասին: Հ. Աճառյանը իր հիշյալ աշխատություններում թվարկում է ակկադերենից կատարած 29 փոխառություն: Հայերենի՝ ակկադերենից կատարած փոխառություններին անդրադարձել են նաև Գ. Ղափանցյանը [1945], Ն. Ադոնցը [1972, 362—392], Ն. Մկրտչյանը [1970, **Мкртчян,** 1979], Գ. Ջահուկյանը [**Джаукян,** 1980. **Djahukian,** 1982, Ի. Մ. Դյակոնովը [**Дьяконов.** 1981]:

Առանց մտնելու այն հիմունքների քննության մանրամասնությունների մեջ, որոնցից ելնելով մենք մերժել ենք մի շարք ստուգաբանություններ և առաջարկել ուրիշները, այստեղ նշենք հետևյալը. ստորև կազմված ցանկից հանված են այն բոլոր բառերը, որոնք կամ չեն հավաստվում ակկադական նորագույն բառարանագրության տվյալներով, կամ հավասար իրավունքով կարող են վերագրվել սեմական այլ լեզուների, հատկապես արամեերենին՝ ասորերենով հանդերձ: Հանված են նաև համեմատաբար կասկածելի ստուգաբանությունները: Ավելացված են որոշ նոր հավանական ստուգաբանություններ: Հայերեն բառերի ակկադական աղբյուրները որոշելիս նկատի են առնվել մասնավորապես հետևյալ հանգամանքները. թողնվել են այն բառերը, որոնք՝ 1) սեմական այլ լեզուներում չունեն վստահելի զուգահեռներ. 2) ակկադերենում փոխառված են շումերերենից. 3) հնչյունական տեսքով ամենից ավելի մոտ են ակկադական բառերին, ընդ որում հաշվի են առնվել այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ ա) հայկական տեղաշարժին համապատասխան ակկադական ձայնեղների խլացումը և բ) արամեա-ասորական միջնադիրքային f, θ, χ-ի (p̄, t, k̲) դիմաց ակկադական սովորական պայթականների առկայությունը. 4) հոլովվում են –ոյ հոլովմամբ, որ թերևս արտացոլում է ակկադ. -u վերջավորությունը.

1. ակուր «բրիչ — ակկադ. aqqullu (akkullu, ankullu) «բրիչ. նիզակ» (< շումեր.).

2. անութ, -ոյ «անոթ, աման. գույք. կահույք, կահ-կարասի. գործիք. միջոց. զինամիջոց» — ակկադ. (Ն. ասուր.) anūtu, այլև unūtu(m), enū,

tu(m) «անոթ, աման. գործիք, պիտույք. պույք. կահույք, կահ-կարասի».

3. բուռ «կիր, գաջ» — աքքադ. pūlu (pīlu, pēlu) «կրաքար» (< հուն. πῶρος «տուֆ. փխրաքար») ?

4. գագաթն — աքքադ. qaqqadu(m) [kaqqadu(m)] «գլուխ, գագաթ».

5. ծիր, -ոյ «շրջագիծ» (ուշ՝ ծրել «գծել») — աքքադ. ṣirû «եզր» [հմմտ. նաև eṣēru(m) «նկարել, գծագրել»].

6. կապար, -ոյ (և -ի, -ագ ?) — աքքադ. abāru(m) [հմմտ. նաև արամ. ab(b)ar(ā)]?

7. կիր, -ոյ — աքքադ. qiru [հմմտ. նաև արամ. qīr]?

8. կղզի — աքքադ. *gzr (հմմտ. ասոր. gazartā, արաբ. ǰazar, ǰazīra) ?.

9—10. կմախ-ք «մեռելի ոսկրոտի». կմախի-ք «մեռելի ողբ» (հմմտ. նաև Կամախ տեղանունը) — աքքադ. gimaḫu [kima(ḫ)ḫu(m)] «գերեզման» (< շումեր.) [հմմտ. նաև արամ. (պալմ., նաբ.) gmḫ «գերեզմանախորշ» < աքքադ.?]?

11. կնիք, -ոյ — kanīku(m) «կնքված փաստաթուղթ», kunukku(m) «կնիք».

12. կշիռ, -ոյ «կշեռք. կշիռ. կշռադատություն» — աքքադ. gišrinnu(m) «կշեռք» (< շումեր.), այլև gišru(m) «պահանգ, կամուրջ» (< արամ. gišr).

13—14. կոզեռ «երեխա, մանուկ». կոզան «ուղտի ձագ» — աքքադ. *gzr (հմմտ. արաբ. ǰazūr) «ուղտ. ուղտի ձագ»)?

15. կոթող, -ի «նշանաքար, արձան, կոթող» — աքքադ. kudurru «սահման. սահմանաքար».

16. հալաւ «զգեստ» — աքքադ. ḫalāpu(m) «ներս սողոսկել. հագնել», naḫlaptu(m) «զգեստ. վերարկու»?

17. մզել (մուզ) — աքքադ. mazû, mazā'u «մզել, քամել».

18. շար «3600 տարի» — աքքադ. šār(u).

19. ոլոռն (և հոլորի «մի բույս») — աքքադ. ḫallūru(m) (ḫi/ulluru, ḫallaru).

20. պաղաղ «-խառն, -ձույլ» (միա-պաղաղ «միաձույլ, միապաղաղված, հարթ. պարզ») — աքքադ. balālu(m) «սրսկել, ցողել. խառնել, ձուլել, միաձուլել».

21. պատ «չորս կողմ, բոլորտիք. պատ» (և փաթ-, փոթ) — աքքադ. paṭu(m) «սահման. շրջան, գավառ» (բայց հմմտ. ուրարտ. patari «քաղաք»)?

22. սանդ, -ի — աքքադ. samādu(m) «աղալ», sam/ndu(m) «աղացած», samīdu(m) «մի տեսակ ալյուր», sāmidu(m) «ջրաղացպան» ?

23. սիք, -ոյ «մեղմ քամի» — աքքադ. zīqu (sīqu) «քամի» [շումեր. siq. հմմտ. նաև արամ. (ասոր.) ziqā «փոթորիկ», արաբ. ṣīq] ?

24. տարի — աքքադ. dārītu(m) «տևողություն, հավիտենություն»?

25. ցից (ցցել «անկել», ցցունք «մազափունջ») — աքքադ. ṣiṣṣu(m) «ձող. լուծ. ոտնակոճ. կապանք» (հմմտ. ասոր. ṣeṣṣā «գամ, մեխ, բևեռ»).

26. փածանել (-իմ) «հագնվել» — աքքադ. paṣānu(m) «պատել, ծածկել, փաթաթել, քողարկել».

27. փոխ, -ոյ (փոխել) — աքքադ. pūḫu(m) «փոխ, փոխանակում, փոխարինում», puḫḫu(m) «փոխանակել» (> խուռ. puḫ- > հայ. փոխ?).

28. քաքար, -ի, -աց «մի տեսակ խմորեղեն, կարկանդակ» — աքքադ. kakkaru «կլոր հաց» (հմմտ. նաև ասոր. kakārītā «մեղրահաց» և խուռ. kakkar, խեթ. kaggari).

29. քթեթ «կտավե հաստակ զգեստ. չոր կտոր. (բրբռ.) հարսանազգեստ» — աքքադ. kitītu(m) (kitittu, kitintu) «կտավե զգեստ», kitû(m) «կտավ».

30. քշտել «կտրել, հատել. հարվածել. փլացնել. քսել» — աքքադ. kašāṭu(m) (kšṭ) «կտրել, հատել»:

Համեմատաբար հավաստի աքքադա-հայկական համապատասխանությունների (անմիջական և միջնորդված փոխառությունների) միջև կարելի է հաստատել հնչյունական հետևյալ համապատասխանությունները (ըստ սկզբնային և միջին դիրքերի).

Աքքադ. հնչյուններ	Հայ. հնչյուններ	Օրինակներ
b	պ	balālu(m) — (միա)պաղաղ?
		*bqr — պախրէ «տավար»?
		abāru(m) — կապար?
	բ	Bel — Բէլ
d	տ	dāritu(m) — տարի?
	դ	dug/kdumu — դդում?
	թ?	kudurru(m) — կոթող?
g	կ	gimaḫu(m) [kima(ḫ)ḫu(m)] — կմախ-ք. կմախիք «մեռելի ողբ»
		gišrinnu(m) — կշիռ
		*gzr — կղզի
		*gzr — կոզեռ «երեխա», կոզան «ուղտի ձագ»
	գ?	
p	փ	paṣānu(m) — փածանել
		pūḫu(m), puḫḫu(m) — փոխ, փոխել
	պ	paṭu(m) — պատ (փաթ, փոթ. հմմտ. ուրարտ. patari «քաղաք»)?
	բ?	pulu(m) [*būlu(m)?] — բուռ «կիր, գաջ»?
t	թ	kititu(m) — քթեթ «կտավե զգեստ»
	տ?	
k	ք	kititu(m) — քթեթ «կտավե զգեստ»
		kašāṭu(m) (kšṭ) — քշտել
	կ	kaniku(m), kunukku(m) — կնիք
		kudurru(m) — կոթող?
ṭ	տ	kašāṭu(m (— քշտել
		paṭu(m) — պատ (փաթ, փոթ)?
q	գ	qaqqadu(m) [*gaggadu(m)?] — գագաթն
	կ	aqqullu(m) — ակուր «բրիչ»
z	ս	ziqu(m) [siqu(m)] — սիք
	զ	mazû(m) — մզել
s	ս	sam/ndu(m) «աղացած» [samādu(m)] «աղալ» — սանդ?
	ց?	sāsu(m) — (արամ. sās) — ցեց?
ṣ	ծ	paṣānu(m) — փածանել
		ṣiru(m) և eṣēru(m) — ծիր և ծրել?
	ց	ṣiṣṣu(m) — ցից
š	շ	kašāṭum — քշտել
	ս	šallūru(m) — սալոր (բրբռ. շլոր)?
		šannu(m)(> ուրարտ. šani) — սան
ḫ	խ	pūḫu(m) — փոխ
	—	ḫullurū(m) [ḫallūru(m)] — ոլոռն?
l(l)	լ	ḫullūru(m) [ḫallūru(m)] — ոլոռն?
		šalluru(m) — սալոր?
	ղ	balālu(m) — (միա)պաղաղ?
	ր	aqqullu(m) — ակուր «բրիչ»?
	ռ	pūlu (*būlu?) — բուռ «կիր, գաջ»?

1	2	3
r	ր	daritu(m) — տարի?
		ṣiru(m) — ծիր
	ռ	*gzr — կոզեռ «երեխա», կոզոն «ուղտի ձագ»
	դ	kudurru(m) — կոթող?
m	մ	mazû — մզել
n	ն	Nanāi — Նանէ
		anūtu [unūtu(m), enūtu(m)] — անութ
ḷ	?	
ụ	?	

Մի շարք դեպքերում հայերեն (հատկապես ուշ շրջանի կամ բարբառային) բառերի համար կարելի է նշել կամ իրոք նշվում են աքքադական համարժեքներ, բայց պատմական, իմաստաբանական, հնչյունական և այլ նկատառումներով դրանք կասկածելի կամ պատահական պետք է համարել (ակնհայտորեն սխալ ստուգաբանությունները չեն բերվում).

ակութ «կերակուր եփելու վառարան» (հանդիպում է միջին շրջանում և բարբառներում). Հմմտ. աքքադ. akukūtu «խանձող» (առնված է անծանոթ լեզվից).

ադագ, -ի, -աց «ճանապարհ, ուղի. միջոց, հնար». Հմմտ. աքքադ. alāku(m) «գնալ», alaktu «ընթացք. ճանապարհ, ուղի»?

ադախին, -ի, -աց, -այց. Հմմտ. աքքադ. alaḫḫinu(m) «ջրաղացպան» (<խուռ. ?).

խծուծ «փուշի թափթփուկ» (ուշ՝ խծծել «կտրատել, պատառոտել», խըղուկ «կալի մնացորդ»). Հմմտ. աքքադ. ḫaṣāṣu(m) «պոկել, փրցնել» (եբր., եթ. ḫṣṣ «անջատել»), ḫuṣṣaṣu (ասոր. ḫaṣṣaṣu) «պոկված, փրցված». ավելի հավանական է համարվում հայ. բառերի քարթվելական աղբյուրը.

խոզ, -ի, -ից, -աց. Հմմտ. աքքադ. ḫuzīru(m) [սեմ. *ḫa(n)zīr].

ծպտել «զգեստափոխվել, կերպարանափոխվել, վտանգից խուսափել, խույս տալ. հալածել». Հմմտ. ṣubātu(m) «կտոր. հագուստ, զգեստ».

կաշառ, -ոյ կամ -ի, -աց. Հմմտ. աքքադ. q(i)āšu(m) «նվիրել»

բրբռ. մալուխ «սրածայր ձող (լծի փոկն ամրացնելու, տրեխը ծակելու, հինվածքը բացելու, գետինը քանդելու և բանջար հանելու համար և այլն)», աքքադ. malāḫu «պոկել, հանել».

բրբռ. մանկեռ. Հմմտ. աքքադ. naqāru. «պատռել, քերել հանել», maqqārum «մի գործիք».

շոր. Հմմտ. աքքադ. šer'tu (šer'itu՝ šer'u-ից) «աստվածային մի ըզգեստ».

պախ «փախ». Հմմտ. աքքադ. palḫu(m) «սարսափելի, ահավոր».

սատար. սատարել. Հմմտ. աքքադ. sadāru(m) «դասավորել. կայանացնել» (արամ., մ. եբր. «կարգավորել»)։

Բացի հասարակ անուններից, հայ մատենագրության մեջ գործածված են նաև աքքադական ծագում ունեցող հատուկ անուններ, մասնավորապես անձնանուններ և դիցանուններ։ Դրանք մասամբ այն անձնանուններն են, որոնք հայոց պատմության հետ առասպելաբար առնչված ասորեստանցիներին են կրում և հայ պատմիչների, հատկապես Մովսես Խորենացու կողմից սովորաբար առնված են այլևայլ աղբյուրներից, այդ թվում՝ նաև ժողովրդական վեպերից ու առասպելներից՝ Բէլ, Նինոս, Շամիրամ։ Սրանց հետ միասին կան հատուկ անուններ, որոնք կրում են հայ անձեր և աստվածներ.

Նանէ (աստվածուհի՝ Արամազդի դուստրը). Հմմտ. աքքադ. Nanāi(a) (աստվածուհի. պաշտամունքը տարածված է եղել ողջ Առաջավոր Ասիայում. բուն աղբյուրը դժվար է որոշել)[15].

Կարդոս (Արա Գեղեցիկի որդու երկրորդ անունը). Հմմտ. աքքադ. qardu(m) «մարտական, հերոսական» (աստվածների և թագավորների մակդիր)[16]։

Աքքադական որոշ անուններ մուտք են գործել Աստվածաշնչի միջոցով՝ Սենեքերիմ, Ադրամելեք և Սարասար (Սանասար)։ Վերջինս դարձել է «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի հերոսներից մեկի անունը։

Այս կապակցությամբ հարկ ենք համարում մի քանի խոսք ասել աքքադական աղբյուրներում հիշատակված վայրերի անունների մասին, որոնք հիշատակված են Ուրարտուի կապակցությամբ, տեղադրվում են Ուրարտուում և ընդհանրապես պատմական Հայաստանի տարածքում։ Եփրատի վերին հովտում տեղադրվող Armanuni$^{\mathrm{KI}}$ քաղաքանունը ակնհայտորեն կապված է հայերի անվան հետ։ Ուրարտուում տեղադրվող $^{\mathrm{URU}}$Šarni տեղանունը կարող է կապ ունենալ հայ. սառն բառի հետ։

Աքքադական փոխառությունների խմբավորումն ըստ իմաստային դաշտերի տալիս է հետևյալ պատկերը.

1. **Ֆիզիկական աշխարհ.** 1.25 կղզի. 1.72 սիք.

2. **Մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն.** 2.27. կոզեռ «երեխա, մանուկ».

3. **Կենդանիներ.** 3.781 կոզոն «ուղտի ձագ».

4. **Մարմնի մասեր, մարմնական գործառություններ և պայմաններ.** 4.771 կմախ-ք «մեռելի ոսկրատի». 4.781 կմախիք «մեռելի ողը».

5. **Ուտելիք և խմելիք. կերակրի պատրաստում և ամանեղեն.** 5.17 -պադաղ «-խառն, -ձույլ». 5.261 անութ. 5.52 քաքար «կարկանդակ». 5.571 սանդ. 5.67 ոլոռն.

6. **Հագուստ, անձնական զարդարանք և խնամք.** 6.11 փածանել (-իմ) «հագնվել». 6.12 հալաւ. 6.231 քթեթ «կտավե զգեստ».

7. **Բնակարան, տուն, կահ-կարասի.** 7.27 պատ. 7.41 [անութ] «կահույք, կահ-կարասի».

8. **Երկրագործություն, բուսականություն.** 8.23 ակուր «բրիչ».

9. **Ֆիզիկական տարբեր գործողություններ, արվեստներ և արհեստներ.** 9.22 բշտել. 9.342 մզել. 9.422 [անութ] «գործիք». 9.511 ցից. 9.551 բուռ «կիր», կիր. 9.63 [-պադաղ] «-խառն, -ձույլ» 9.68 կապար. 9.831 կոթող.

11. **Ունեցվածք, սեփականություն և առևտուր.** 11.62 փոխ. 11.831 [կըշիռ].

12. **Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ.** 12.33 գագաթն 12.88 ծիր «շրջագիծ». [պատ] «չորս կողմ, բոլորտիք».

---

[15] Այս մեկնության դեպքում ճիշտ չպետք է համարել Նանէ անունը խուռա-խեթական Ninata-ի հետ կապելու (Գ. Ղափանցյան) կամ հայ. նան, նանէ, նանի բառերից բխեցնելու (Գ. Կոստանյան) փորձերը։

[16] Ավելի քիչ հավանական է Հ. Աճառյանի ենթադրությունը անվան ասորական ծագման մասին (հմմտ. Կարդոն եպիսկոպոս Անտիոքի)։

14. **ժամանակ.** 14.121 շար «3600 տարի». 14.73 տարի

18. **Ձայնական արտահայտություն, խոսք. ընթերցանություն և գիր.** 18.51 [ծրել (ծիր)] «գծել, գրել».

19. **Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ.** 19.441 կնիք։

Հայերենի աքքադական փոխառությունները, այսպիսով, պատկանում են գերազանցապես մարդկային քաղաքակրթության և մշակույթի բնագավառներին՝ ուտելիք, հագուստ և բնակարան, արհեստ և առևտուր, ժամանակի և տարածության հետ կապված գաղափարներ։ Սակավաթիվ են այն բառերը, որոնք մշակութային արժեք չունեն և արտահայտում են հիմնականում հայերին անծանոթ կամ քիչ ծանոթ առարկաներ ու երևույթներ։ Ընդհանրապես չեն ներկայացված շարժման և տեղափոխության, մարդու հոգեկան հատկությունների, այլև պատերազմի և կրոնի հետ կապված հասկացությունները։

ե) ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԱՐԱՄԵԵՐԵՆԸ. ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԱՍՈՐԵՐԵՆԸ

Մ. թ. ա. II հազարամյակի վերջերին արամեական ցեղերը հարավից շարժվելով զբաղեցնում են Սիրիայի (Ասորիքի) և Միջագետքի հյուսիսային շրջանները։ Արամեերենը աստիճանաբար դառնում է տիրապետող լեզու՝ արտամղելով ամորհերենը, խուռերենը, աքքադերենը. Նոր բաբելոնական թագավորության շրջանից սկսած աքքադերենը հիմնականում միայն գրավոր լեզու է։ Պարսկական թագավորության շրջանում արամեերենը ավելի է տարածվում՝ դառնալով Առաջավոր Ասիայի ընդհանուր հաղորդակցման լեզուն. այդ պետության մեջ այն գրասենյակային պաշտոնական լեզու է և գրականության մեջ հայտնի է «թագավորական արամեերեն» անունով։ Նրանով արձանագրություններ են հայտնաբերված նաև Փոքր Ասիայում և Եգիպտոսում։

Արամեերենի գրավոր հուշարձանները սկիզբ են առնում մ. թ. ա. I հազարամյակի գրեթե սկզբներից, ընդ որում մինչև մ. թ. ա. VII դարը համարվում է հին արամեերենի շրջան։ Մ. թ. ա. VI դարից սկսվում է թագավորական արամեերենի շրջանը։ Մեծ քանակությամբ արամեական գրավոր հուշարձաններ են հանդես գալիս նաև հետագայում՝ գրված տարբեր բարբառներով։ Մեծ թիվ են կազմում արամեերենով գրված վաղ քրիստոնեական հուշարձանները. դեռ ավելին. աստվածաշնչից Եզրի (մ. թ. ա. V—IV դդ.) գրքում նույնությամբ առնված են արամեերեն լեզվով գրված զանազան հատվածներ, Դանիելի գրքի (մ. թ. ա. II դ.) առանձին գլուխներ գրված են արամեերենով։ Արամեերենի ընդհանուր ազդեցությունը շարունակվում է մինչև արաբական նվաճումները։ Մ. թ. VII—XV դդ. արամեերենն աստիճանաբար արտամղվում է արաբերենի կողմից՝ պահպանվելով առանձին կղզյակների ձևով։

Արամեական արձանագրությունները գրված են փյունիկյան գրի տարատեսակով։ Արամեական գիրը հետագայում օգտագործվում է իրանական մի շարք լեզուների, այդ թվում պարթևերենի և միջին պարսկերենի համար։

Արամեական արձանագրություններ են հայտնաբերված նաև Հայաստանում, որոնք խոսում են հայ իրականության մեջ որպես պաշտոնական գրավոր փաստաթղթերի լեզու արամեերենի խաղացած դերի մասին։ Արամեերենի հետ այդ տեսակետից մրցել և հելլենիստական շրջանում կարևոր դեր է խաղացել հունարենը։

Առանձնապես կարևոր է եղել արևելաարամեական բարբառներից մեկի՝ որպես գրական լեզու հանդես եկած ասորերենի, հայերենի կյանքում խաղացած դերը։ Ասորերենի կրողները՝ ասորիները, հնում հիմնականում բաժանել են արամեական ցեղերի ընդհանուր բախտը։ Պարսկական պետության անկումից հետո մ. թ. ա. III—I դարերում Ասորիքը (Սիրիան) եղել է Սելևկյանների թագավորության կենտրոնը։ Մ. թ. ա. 136 թ. այստեղ ստեղծվում է Օսրոյենի թագավորությունը՝ Ուռհա (Եդեսիա) մայրաքաղաքով։ Մ. թ. ա. 83 թ. այն ընկնում է Տիգրան II-ի տիրապետության տակ, մ. թ. ա. 66 թ. վերածվում հռոմեական նահանգի, ապա IV դ. մտնում Բյուզանդական կայսրության կազմի մեջ։ Արաբական նվաճումներից հետո Ասորիքի ասորիները աստիճանաբար դառնում են արաբախոս։

Ասորիները, որպես քրիստոնեական կրոնը առաջինն ընդունած ժողովուրդ, մեծ դեր են կատարել այդ կրոնը տարածելու մեջ։ Ասորերենի գրավոր հուշարձաններն սկսվում են մ. թ. սկզբներից, բայց ասորական գրականության ծաղկումը կապված է քրիստոնեության մուտքի հետ. մ. թ. III—VII դդ. ասորական գրականությունը հարուստ նմուշներ է տալիս՝ հարատևելով մինչև XIII—XIV դդ.։

Ասորական գիրը արամեական գրի մի տեսակն է և սկզբնապես հայտնի է եղել «էստրանգելո» անունով։ V դ. նրա հիման վրա ստեղծվում են յակոբյան կամ արևմտյան («սերտո» կոչված) և նեստորական կամ արևելյան գրատեսակները։ Ձայնավորների նշանակման սովորությունը սկսվում է VI դարից, ընդ որում արևմտյաններն օգտագործում են հունական ձայնավորանիշերի մանր տեսակները, իսկ արևելյանները՝ կետերը, որոնք դրվում են տողավերևում կամ տողատակին։ Կան բարբառային տարբերություններ. արևելյանների ā-ին արևմտյանների մոտ համապատասխանում է ō-ն, արևելյանների ō-ին՝ հաճախ արևմտյանների ū-ն։

Հայերի և արամեացիների, հատկապես ասորիների, հարաբերություններն սկսվել են հին ժամանակներից, բայց առանձնապես սերտ բնույթ են ստացել մ. թ. ա. II դարից սկսած՝ նախ Ծոփքի թագավոր Զարեհի և ապա Տիգրան II-ի օրերում։ Օսրոյենի թագավորներն իրենց կոչում էին ասորիների և հայերի թագավորներ. նրանց տիրույթներում մեծ թիվ էր կազմում հայ տարրը։ Հայաստանի՝ քրիստոնյա դառնալուց հետո այդ կապերն ավելի են սերտանում։

Հ. Հյուբշմանը և Հ. Աճառյանը հայ-արամեական լեզվական հարաբերությունները հանգեցնում են փաստորեն միայն հայ-ասորական հարաբերություններին։ Իրականում այդ հարաբերություններն ավելի լայն են եղել[17]. մասնավորապես պետք է հատուկ կերպով նշել արևմտյան բարբառներին հարող, այսպես կոչված, «թագավորական արամեերենի»՝ հայերենի վրա ազդելու հնարավորությունը, եթե մանավանդ նկատի ունենանք Պարսկական պե-

---

[17] Ա. Գ. Փերիխանյանը [Периханян, 1963] տարբերում է հայերենում արամեական երկու շերտ՝ հյուսիսային Միջագետքի արամեական բարբառից և ասորերենից կատարված փոխառություններ. առաջինները գերազանցապես արհեստավորական-առևտրական, երկրորդները հիմնականում քրիստոնեական-գրքային բնույթի են։ Առաջինների մեջ կան այնպիսիները, որոնք պետք է անցած լինեն իրանական, թերևս նաև ուրարտական միջնորդությամբ։

տության մեջ նրա կատարած դերը։ Այսպիսով, մինչև V դարը ընկած շրջանի համար պետք է տարբերել հայ-արամեական հարաբերությունների երեք հիմնական փուլ.

1) Ընդհանուր արամեական և հատկապես արևմտա-արամեական ազդեցության փուլ, որ ընդգրկում է վաղ ժամանակներից, հատկապես մ. թ. ա. VI դարից մինչև մ. թ. ա. IV—III դդ. այս փուլում հայերենի վրա արամեերենի ազդեցությունը կարող էր հանդես գալ մի կողմից՝ պաշտոնական գրական լեզվի գործածության, մյուս կողմից՝ հարավի արամեախոս բնակչության հետ շփվելու ճանապարհով։ Հաջորդ փուլում էլ պետք է նշել Տիգրան II-ի կողմից Պաղեստինից Հայաստան բերված և մեծ քաղաքներում բնակեցված արամեախոս հրեաների լեզվի հնարավոր ազդեցությունը (բուն հրեաերենը Պաղեստինում դադարել էր կենդանի խոսակցական լեզու լինելուց շատ ավելի վաղ)։

2) Հայ-ասորական էթնիկական փոխազդեցության փուլ. մ. թ. ա. II դ.—մ. թ. II դար. այս փուլում հայերի և ասորիների շփումը տեղի է ունենում ինչպես աշխարհագրական հարևանության, այնպես էլ քաղաքական սերտ հարաբերությունների պայմաններում. Օսրոյենեի պետության մեջ մեծ թիվ էին կազմում հայերը, Հայաստանի հարավային շրջաններում՝ ասորիները. Տիգրան II-ի ժամանակ Ասորիքը շուրջ 17 տարի գտնվել է հայկական քաղաքական գերիշխանության տակ։

3) Ասորական կրոնաքարոզչական և դպրոցական ազդեցության շրջան՝ մ. թ. III—IV դդ. այս փուլում ասորիները, որպես քրիստոնեություն ընդունած առաջին ժողովուրդը, լայն քարոզչական գործունեություն են սկսում Հայաստանում, իսկ հայերի՝ քրիստոնեություն ընդունելուց հետո ազդում հայերենի վրա ինչպես կրոնական-եկեղեցական բնագավառում (հայկական եկեղեցում ծիսական լեզուներ են եղել ասորերենը և հունարենը), այնպես էլ դպրոցական ուսուցման միջոցով. մինչև հայ գրերի գյուտը Հայաստանում գործում էին ասորական և հունական դպրոցներ, օգտագործվում էին ասորերեն լեզվով քրիստոնեական գրքեր, հայերն էլ գնում էին Ասորիք, հատկապես Ուռհա (Եդեսիա)՝ վերջինիս քրիստոնեական մեծ դպրոցում սովորելու համար։

Հայ գրերի գյուտից հետո ասորերենի ազդեցությունը տեղի է ունենում գերազանցապես մատենագրական ճանապարհով՝ ասորերենից կատարված թարգմանությունների միջոցով։

Հայերենի՝ արամեերենից և, մասնավորապես, ասորերենից կատարած հնագույն փոխառությունները վերևում բերված ցանկի համաձայն հետևյալներն են (ըստ հնարավորին առանձնացվում են վաղ արամեական և համեմատաբար ուշ շրջանի բուն ասորական փոխառությունները).

Ա. Վաղ արամեական

1. բարկ «կայծակ» — արամ. barqā *«կայծակ».*

2. բերդ, -ի, -աց — արամ. bīrtā *«բերդ, ամրոց» [բայց հմմտ. նաև աքկադ.* birtu(m)].

3. գաղութ (գաղթ, գաղթել) — արամ. gālūt(ā) *«աքսոր. գաղթ» (ասոր.* gālūtā).

4. գուբ, -ոյ «հոր. փոս. բջիջ. փողրակ» — արամ. gubb(ā) *«գուբ, փոս, ջրհոր, ջրամբար» [բայց հմմտ. ասոր.* gubbā, *աքկադ.* gubbu(m)].

5. դար, -ու — արամ. dār(ā) *«դարաշրջան» [բայց հմմտ. ասոր.* dārā *«դարեր, ժամանակներ», աքկադ.* dāru(m) *«տևողություն, հավիտենություն»*].

6. դարգ «կարգ, շարք» — արամ. darg(ā) *«կարգ, աստիճան» (ասոր.* dargā).

7. թանգար (թանկար), -ի, -աց «վաճառական» — արամ. (մանդ.) tāngāra, taggar(ā) (*ասոր.* taggārā).

8. խարբ, -ի «սուր, թուր» — արամ. (նաև ասոր.) ḥarbā.

9. խմ-որ (խմել «խմորված», անխամ «չխմորված») — արամ. ḥmʻ *«թթվել, խմորվել» (ասոր.* ḥmaʻ).

10. խոռ «ծակ, փոս, խոռոչ» — արամ. ḥōrā *«ծակ» [ասոր.* ḥura, *բայց հմմտ. աքկադ.* ḫurru(m)].

11. կացին, -ոյ — արամ. ḥaṣṣinā [*ասոր.* ḥaṣṣinā, *աքկադ.* ḫaṣṣinnu(m)].

12. կուպր — արամ. (նաև ասոր.) kup̄rā [*բայց հմմտ. աքկադ.* kup̄ru(m)].

13. հաբր-ք (խաբր-ք) «որոգայթ, թակարդ. թակարդի թոկ» — արամ. (նաև ասոր.) ḥablā *«թոկ».*

14. հաշիւ, -ի — արամ. (նաև ասոր.) ḥəšiḇ *«կարծված, համարված հաշված».*

15. ձէթ, -ոյ — արամ. (նաև ասոր.) zēt, *այլև* zait(ā).

16. ձիւթ, -ոյ — արամ. zip̄tā (*ասոր.*) zep̄tā*)*.

17. մագաղաթ, -ի «մագաղաթ. գիրք» — արամ. (նաև ասոր.) maḡallətā *«թղթագալար, փաթեթ (որպես գիրք)».*

18. մանգաղ, -ի, -աց — արամ. (նաև ասոր.) maggəlā.

19. մաշկ, -ի, -ից — արամ. maškā [*ասոր.* meškā, *բայց հմմտ. աքկադ.* mašku(m)].

20. մաքս, -ի — արամ. (նաև ասոր.) maḵsā.

21. շաւիղ, -ի, -աց — արամ. (նաև ասոր.) šəḇīlā *«ճանապարհ, հետք».*

22. շղթայ, -ի, -ից — արամ. šīšltā *(ասոր.* šēšaltā).

23 սակուր (սակր) «ռազմատապար» — արամ. sāqurlā, *(նաև ասոր.)* seqūrā.

24. ցեց, -ոյ — արամ. sās(ā) (*բայց հմմտ. աքկադ.* sāsu(m) *և հուն.* < *սեմ.* σής).

25. քանքար, -ոյ և -ի, աց «մի կշռաչափ. այդ չափով ոսկու կամ արծաթի գումար. տաղանդ, շնորհք» — արամ. kankərā, *(նաև ասոր.)* kakkərā.

26. քնար, -ի, -աց — արամ. kinnarā (*ասոր.* kennarā).

Բ. Բուն ասորական[18]

27. աբեղայ, -ի, -ից — ասոր. aḇīlā.

28. ադեն, ալ (ադին) «եղեմ, դրախտ» — ասոր. ʻəḏen.

29. աթութայ-ք «տառեր, տառանշաններ, գրեր» — ասոր., atutā (āt-*ի հոգնակին).*

---

[18] *Դրանք առանձնացնելիս նկատի են առնվել հատկապես՝ 1) հայերեն բառերի՝ միայն ասորերենում հանդիպելը կամ ասորերեն ձևերին ամենից ավելի մոտ լինելը, 2) բնորոշ վերջնահնչյուններ ունենալը, 3) ասորական բառերի՝ հունարենից փոխառյալ լինելը՝ հայերեն բառերի՝ ասորերեն ձևերին ավելի մոտ լինելու պայմաններում, 4) բառերի՝ ո՛ր իմաստային դաշտերին պատկանելը և այլն։*

30. ալց, -ի, -ից — ասոր. ālṣā.

31. ամարու «գառնուկ» — ասոր. amrā (բայց հմմտ. արաբ. amarra).

32. ամղան «վերարկու» — ասոր. āmlōn (āmelā).

33. ապուղայ, -ի, -ից «ձեթի ափկ» — ասոր. āpaulā | < լատ. ampulla «(կաշեպատ) լայնափոր շիշ»|.

34. առնէա, -ի, -ից — ասոր. arnā'a.

35. աքսոր-ք, -ից — ասոր. aksoria (eksoria < հուն. ἐξορία).

36 բասրել (բասիր) «պարսավել, անարգել» — ասոր. bəsīr «անարգ», bəsār «արհամարհել, մերժել».

37 գադիշ, -ի, -ից «դեզ» — ասոր. gədīšā.

38. զոյգ, -ի, -ից, -աց — ասոր. zaugā «զույգ, կրկնակ, նման» (< հուն. ζεῦγος).

39. զոպայ, -ի, -ից «ծոթրինակերպ մի բույս» — ասոր. zōpā.

40. թարգման, -ի, -աց — ասոր. targmānā.

41. թարշիշ, -ի «մի տեսակ թանկագին քար» — ասոր. taršīš (< հուն. θαρσίς).

42. իլուլ «եբրայական տոմարի 6-րդ ամիս» — ասոր. īlul.

43. լումայ (լոմայ), -ի, -ից «մանր դրամ» — ասոր. lūmā(< լատ. nummus).

44. խանձարուր, -ոյ — ասոր. ʻazrurā.

45. խանութ (հանութ) — ասոր. ḥānūṭā.

46. խարամանի (խարամայնի, խարամուն, հարամանի) «դև, սատանա, չար օձ» — ասոր. ḥarmānā «օձ».

47. խարբալ-եղ «մաղել. ալկուվրա անել, մաքրել, զտանգել» (վաղ արամ. փոխառություն) — արամ.-ասոր. ʻarbālā «մաղ», ասոր. ʻarbēl «մաղել».

48. խ(ի)լայ «պարգեւած զգեստ. կանացի շոր» — ասոր. *ḥil'ā (հմմտ. արաբ. ḥilʻa).

49. խլուրդ (խլիրդն) — ասոր. ḥūldā «խլուրդ», ḥuldūḏā «դաշտամուկ».

50. ծարիր (ծարոյր, -իր, -ուր), -ոյ և -ի, -ից «աչքի սև ներկ» — ասոր. ṣədīḏa.

51. ծոմ — արամ.-ասոր. ṣōmā.

52. ծրար «կապոց. կծիկ. քսակ. (ուշ) ծրար» — ասոր. ṣərārā «քսակ» (եբր. ṣrōr «կապոց, արցակ»).

53. կաթսայ (կասսայ), -ի, -ից — ասոր. qadsā (< հուն. κάδος).

54. կարկուրայ, -ի, -ից «նավակ» — ասոր. qarqurā.

55. հեգ, -ի, -ից «վանկ» — ասոր. həḡā «կարդալ».

56. հեգենալ, -ի, -ից «գիր, այբուբեն» — ասոր. heḡjānā «կարդալը, հեգելը, ընթերցանություն, արտասանություն».

57. հեթանոս, -ի, -աց — ասոր. htnws (առանց ձայնավորների գրության) (< հուն. ἔθνος).

58. հռիտորայ «ճարտասան, հռետոր» — ասոր. rhitōrā (< հուն. ῥήτωρ > հայ. հռետոր).

59. հրեայ, -ի, -ից — ասոր. jūḏājā.

60. ձանձախարիթ «մուգ, սև. (մուգ) կարմիր. մոր» — ասոր. zəḵōrītā «որդան կարմիր».

61. ղե(ա)կ, -ի, -աց — ասոր. lēqa.

62. մանանայ, -ի, -ից, — ասոր. mannā.

63. մաշկն, -կն «վրան» — ասոր. maškan «վրան, խորան».

64. մծղնեայ, -ի, -ից «մի աղանդ» — ասոր. məṣalləjanē «աղոթական՝ մեսալյան աղանդ».

65 մորակ, -ի, -աց. — ասոր. maṭrəqā (բայց հմմտ. արաբ. miṭraq «բուրդ ծեծելու փայտ, գավազան», որ հայերենին ձևով մոտ է, իմաստով՝ հեռու).

66. նաշիհ, -ոյ «մանր աղացած՝ նուրբ ալյուր» — ասոր. nəšīpā.

67. շաբաթ, -ու — ասոր. šabbətā (< եբր. šabbāt).

68. շամփուր, -ի, -աց — ասոր. šappuḏā «անթրոց, կրակխառնիչ».

69. շափիղայ (շափուղայ, շափիլայ) — ասոր. sapīlā.

70. շեփորայ (շիփորայ), -ի, -ից (շեփոր, -այ) — ասոր. šīpōrā (հմմտ. նաև պրսկ. šēpōr).

71. ուրբաթ, -ու — ասոր. ərūḇatā.

72. պախրէ (ուշ՝ պախրայ), -ի, -ից «տավար. պարեն. խինչք» — ասոր. baqra «տավար. կով. ցուլ» ?

73. ռ(ա)բունայ «գրավական, ավանդ» — ասոր. rahbōnā.

74. սատանայ, -ի, -ից — ասոր. saṭānā (< եբր. sāṭān).

75. սափր-ել «ածիլել» — ասոր. spr.

76. սկահ (սկիհ) «բաժակ» — ասոր. esqəpā (< հուն. σκάφη).

77. սուսեր, -ի, -աց — ասոր. sapsērā.

78. սրիկայ — ասոր. srīqā «դատարկ, անպիտան մարդ».

79. սրո(վ)բէ (ձևափոխված՝ քերովբէ-ի նմանակությամբ) — ասոր. srāpē.

80. տղայ — ասոր. ṭaljā.

81. փեգանայ (փեգենայ) «մի բույս՝ սատափ, սպանդ, ruta» — ասոր. pēgānā (< հուն. πήγανον).

82. փիլիսոփայ, -ի, -ից — ասոր. pīlōsōpā (< հուն. փիլիսոփա).

83. փրկ-ել, փրկան-ք — ասոր. prq «փրկել, ազատել», purqānā «փրկություն».

84. քահանայ, -ի, -ից — ասոր. kāhanā (հմմտ. արամ. kāhanā).

85. քաղդեայ «հմայող, գուշակ» — ասոր. kaldājā «մոգ, աստղահմա».

86. քանուն (քանոն) — ասոր. kanūntā և qanūnā (< հուն. κανών > հայ. կանոն) ?.

87. քարոզ, -ի, -աց և -ոյ «մունետիկ, երաժիշտ. քարոզ» — ասոր. kārōzā «մունետիկ», kārōz «հրավիրակ».

88. քուշ «արու այծ» — ասոր. keḇša «մատաղ խոյ» (հմմտ. նաև արաբ kabš).

89. քերովբէ «մի հրեշտակադաս» — ասոր. k(ə)rōḇā, հգն. krōḇē (< եբր. kərub).

90. քոսիթայ «կրոնավորի գլխարկ, կնգուղ» — ասոր. kōsīṯā.

91. քուրայ, -ի, -ից — ասոր. kūrā [արամ. kūr(ā)].

92. քուրմ, -ի, -աց — արամ. — ասոր. kūmrā [հմմտ. նաև աքկադ. kumru(m)].

Արամեական և ասորական ձևերից զգալիորեն շեղվում են մի շարք բառեր՝ ավելի մոտ լինելով եբրայական, եթովպական համապատասխան ձևերին. այս դեպքում պետք է ենթադրել կամ Հայաստանում բնակված հրեաների մոտ պահպանված (բաղարկված) հին ձևեր, կամ արամեական և ասորական բարբառային ձևեր, կամ այդ լեզուների և հայերենի միջև միջնորդ այլ օղակներ.

1. գզաթ, -ու «բուրդ» — ասոր. gezzetā՝ եբր. gizzat և աքկադ. gizzatu ձևերի կողքին.

2. ծնծղայ, -ի, -ից — ասոր. ṣiṣṣəla (ṣeṣṣəlā), արամ. ṣalṣəlā, եթովպ. ṣanaṣəl, ṣanaṣəlat ձևերի կողքին.

3. մակաղ «ոչխարի փարախ» — եբր. mīkəlā.

4. սեռն «սանդուղք» — արամ. — ասոր. sernā՝ եբր. seren ձևի կողքին.

5. սխուր «վարձ» — եբր. səḵar, seḵer, saḵar «վարձ», եթովպ. səkūr «վարձված».

6. տերև, -ոյ — ասոր. tərep̄, tarp̄ā՝, եբր. terep̄ ձևի կողքին.

7. քուեայ (քուէ), -ի, -ից — արամ. թալմ. quḇia՝ q-ի դիմաց անսովոր ք-ով (< հուն. κυβεῖα «խորամանկ. վեգ»).

Հայերենի և արամեերենի ու հատկապես ասորերենի բառային զուգադիպությունների միջև կարելի է հաստատել հնչյունական հետևյալ համապատասխանությունները.

b	բ	bəsīr — բասիր (բասրել)
-ḇ (w)	բ	aḇīlā — աբեղայ
		ərūḇəṯā — ուրբաթ
	ւ(վ)	ḥašīḇ — հաշիւ
		kebšā — քաւշ «արու այծ»
		šaḇīlā — շաւիղ
d	դ	dār(ā) — դար
		dargā — դարգ «կարգ, շարք»
-ḏ (ð)	դ	ʿəḏen — ադեն
		gəḏīšā — գադիշ «դեզ»
	ր	ṣəḏīḏā — ծարիր
		īhuḏāīā — հրեայ
g	գ	galūṯā — գաղութ
ḡ (γ)	գ	pēḡānā — փեգենայ (բույս)
p	փ	pēḡānā — փեգենայ (բույս)
		pīlōsōp̄ā — փիլիսոփայ
-p̄ (f)	փ	sap̄īlā — շափիղայ? (ասոր. s > հայ. շ?)
	ւ(վ)	tərēp̄ — տերև ?
		zīp̄tā — ձիւթ
	բ	srāp̄ē — սրո(վ)բէ
	հ	našīp̄ā — նաշիհ «նուրբ ալյուր»

		esqəp̄ā — սկահ
t	թ	targ(ə)mānā — թարգման
		taršīš — թարշիշ
-ṯ (θ)		aṯūṯā — աթուեթայք
		zeṯ — ձէթ
k	ք	kāh(ə)nā — քահանայ
		kaldāīā — քաղդեայ «հմայող, գուշակ»
		kārōzā — քարոզ
		kebšā — քաւշ «արու այծ»
		kinnārā (ասոր. kennara) — քնար
		kūrā — քուրայ
-ḵ (x)	ք	aḵsoria — աքսոր
ṭ	տ	ṭalīā — տղայ
		ṭərep̄ — տերեւ
q	կ	qadšā — կաթսայ
		qarqūrā — կարկուրայ
		qəṭṭau — կտաւ (> ասոր.?)
z	զ	zōp̄ā — զոպայ (մի բույս)
		zaugā — զոյգ (au > ոյ)
	ձ	zəkōrīṯā — ձանձախարքիթ «մուկ (կարմիր)»
		zeṯ — ձէթ
		zīp̄tā — ձիւթ
		ʿazrūrā — խանձարուր
s	ս	sp̄r — սափրել
		sərīqā (srq) — սրիկայ
		srāp̄ē — սրո(վ)բէ
		bəsīr — բասիր (բասրել)
	շ?	sap̄īlā — շափիղայ
		šappūḏa — շամփուր
ṣ	ծ	ṣərār(ā) — ծրար
		ṣiṣṣəlā — ծնծղայ
		ṣōm(ā) — ծոմ
	ց	ālṣā — աղց «կարիք»
š	շ	šaḇīlā — շաւիղ
		šīpōra — շեփոր (բայց հմմտ. պրսկ. šeյōr < սեմ.)
		šīšīltā — շղթայ
		šūšantā (հգն. šūšannē) — շուշան (բայց հմմտ. եբր. šūšān)
		nəšīp̄ā — նաշիհ
h	հ	həḡā — հեգ
		heḡīānā — հեգենայ
		īhuḏāīā — հրեայ
ḥ	խ	ḥanūṭā — խանութ (հանութ)
		ḥarbā — խարբ
	հ	ḥašīḇ — հաշիւ
		ḥīlʿa — խ(ի)լայ «ծվիլված զգեստ»
ʿ	խ	ʿazrūrā — խանձարուր
		ʿarbālā — խարբալ-ել «մաղել»
l	լ	lūmā — լումայ
		īlūl (< եբր. əlūl) — ելուլ (ամսանուն)
	ղ	aḇīlā — աբեղայ
		ṭalīā — տղայ
r	ր	ʿazrūrā — խանձարուր
	ռ(ն)	*arnāʾat (arnāʾā) — առնէտ
m	մ	magallaṯā — մագաղաթ
		mangəlā (maggəlā) — մանգաղ
		mannā — մանանայ
n	ն	nəšīp̄ā — նաշիհ «նուրբ ալյուր»
ī (j)	յ?	īhuḏāīā — հրեայ
	—?	ṭalīā — տղայ

a	ա	abīlā — աբեղայ
		taršīš — թարշիշ
ā	ա	ātūtā (հգն.) — աթութայք
		dārā — դար
ə	ա	ʿəden — ադեն
		gədīšā — գադիշ
		šəbīlā — շաւիղ
	(ը)	ṣərār(ā) — ծրար
e	ե	hegīānā — հեգենայ
ē	է	zēt (zait) — ձէթ
	ե (եա)	lēkā — ղեկ (ղեակ)
o	ո	ṣōmā (ṣūm) — ծոմ
		zōpā — զոպայ
		kārōzā — քարոզ
i	ի	zipta — ձիւթ
	ե	šipōrā (?) — շեփորայ
ī	ի	īlūl — իլուլ
		bəsīr — բասիր (բասրել)
		pīlōsōpā — փիլիսոփայ
	(ը)	ḥil'a — խլայ (խիլայ)
		kinnārā (kennārā) — քնար
		ṣiṣṣəlā — ծնծղայ
		šišiltā — շղթայ
u	ու	guʿbā — գուբ
ū	ու	qarqūrā — կարկուռայ
		gāʿūt(a) — գաղութ
		kūrā — քուրայ
		lūmā — լումայ
	(ը)	ṭhudāiā — հրեայ
au	ու	āpaulā — ապուղայ
	ոյ	zauga — զոյգ

Կան զգալի թվով հայերեն բառեր, որոնց աղբյուրը սովորաբար համարվում է ասորերենը, բայց բերված զուգահեռները բավարար չափով համոզիչ չեն.

անկան (անգան) «սանդ» (բրբռ. նաև «տաշտ»). Հմմտ. ասոր. aggānā *«ջրաման» (արամ., եբր.* aggān, *աքքադ.* agannu).

դամարիլ «շվարել». Հմմտ. ասոր. dūmārā *«հիացում, ապշություն»,* dəmīrā *«հրաշալի». պատահակա՞ն է արդյոք նմանությունը հայ.* բմբիլ *բառին.*

խարտ, -ի «խարտվածք» (խարտ-ել). Հմմտ. ասոր. ḥrat *«կիսել, ձևել, քերել, փորել» (եբր.* ḥeret *«գրչ. քանդակելու գործիք», արաբ.* ḥarṭ *«ճախարակով հղկել»).*

կասկարայ, -ի, -ից. Հմմտ. ասոր. kaskārā *«կողով»*[19].

կատու, -ոյ (ուշ). Հմմտ. ասոր. qaṭṭū[20].

կեղև, -ոյ (կեղևել). Հմմտ. ասոր. qəlāpā *«գրքի թերթ»,* qəlāp *«կեղևել, մորթազերծել» (աքքադ.* qalāpu(m) *«կլպել», եբր.* qəlep, qəlūp, *արաբ.* qilf, qalāfat *«կեղև» և այլն)*[21].

կողով (կողոփ), -ոյ. Հմմտ. եբր. kəlūb, *ասոր.* kulbāšā, *եթովպ.* karab?, *արաբ.* qilf, *ըստ Աճառյանի՝ ասոր. որ՛է բարբառային ձևից. նույն աղբյուրից է նաև վրաց.* koloɒi *«արկղ» բառը.*

կռիւ, -ոյ. Հմմտ. արամ. qərāḇ, qərābā *«պայքար կռիվ»,* qrḇ *«պայքարել, կռվել» (սեմ.* *qrb *«մերձենալ, մոտենալ»). հավանական է հայ. բառի հնդեվրոպական ծագումը.*

մանգանայ «պատերազմական մի գործիք». Հմմտ. ասոր. manganūn, manganīqā *«մեքենա» և այլն.*

մաշառայ, -ի «թոքախտ». Հմմտ. ասոր. māšrā, *արամ.* məšāra *«կարմիր քամի» (այստեղից պրսկ.* māšrā *«ուռուցք, այտուցք»).*

շերաս (շէրաս, սխալ ընթերցմամբ՝ շերամ). Հմմտ. ասոր. šerāṭā *«մետաքսեղեն». Նույն աղբյուրից են հուն.* Σήρ *«արևելյան մի ժողովուրդ (չինացի՞)»,* σήρ *«շերամ» բառերը. ասորերենով բացատրվում է շ-ն, բայց չի բացատրվում վերջին ս-ն.*

շպար «երեսի ներկ». Հմմտ. ասոր. šappīr *«գեղեցիկ»,* šūpiā *«գեղեցկություն»,* šəpar *«գեղեցկանալ»?*

տառապ-իմ. Հմմտ. ասոր. ṭərep *«հողմնեցնել, անհանգստացնել, չարչարել»,* ṭūrāpā *«դրդում, անհանգստացում, չարչարանք» (արաբ.* ṭrb *«հուզվել, հիանալ, հրճվել»)*[22].

քուրէշ, -ի «առաջնորդ». Հմմտ. ասոր. Kureš *«Կյուրոս».*

Արամեա-ասորական փոխառությունների իմաստային բաշխումը տալիս է հետևյալ պատկերը (վաղ արամեական փոխառությունները առանձնացված են աստղանիշով, կասկածելի ծագման բառերը՝ երկու աստղանիշով).

1. **Ֆիզիկական աշխարհ.** *1.441 թարշիշ «մի թանկագին քար». շափիղայ «մի թանկագին քար». 1.55 *բարկ «կայծակ». 1.831 ձանձախարիթ «մուր».*

2. **Մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն.** *2.25 որդայ. 2.271 խանձարուր.*

3. **Կենդանիներ.** *3.191 **մակաղ «ոչխարի փարախ». 3.20 պախրէ «տափար». 3.29 ամարու «դառնուկ». 3.36 բաւշ «արու այծ». 3.631 առնէտ. խըլուրդ. 3.791 հաղբ-ք (խաղբ-ք) «թակարդ, թակարդի թոկ». 3.811 *ցեց.*

4. **Մարմնի մասեր, մարմնական գործառություններ և պայմաններ.** *4.12 *մաշկ.*

5. **Ուտելիք և խմելիք. կերակրի պատրաստում և ամաններ.** *5.121 մախուլ. 5.231 շամփուր. 5.261 ապուղայ «ձեթի տիկ». 5.27. կաթսայ. 5.34 սկաւ (սկիհ) «բաժակ». 5.53 *խմոր. 5.55 նաշիհ «նուրբ ալյուր» 5.79 *ձէթ.*

6. **Հագուստ.** *6.22**գզաթ «բուրդ». 6.41 ամղան «վերարկու». 6.42 խ(ի)լայ «պարգև տրված զգեստ». 6.55 քուսիթայ «կրոնավորի գլխարկ». 6.931 սափրել. 6.941 ծարիր «աչքի սև ներկ».*

---

[19] *Հմմտ. նաև հուն.* ἐσχάρα *«կրակարան», որից թալմ.* asqala. *Հուն. բառը, ըստ ոմանց՝ հնդեվրոպական ծագում ունի, ըստ այլոց* [Ернштедт, 1953, 26—27]՝ *փոխառություն է եգիպտերենից։*

[20] *Կասկած չի հարուցում հայ. բառի փոխառյալ լինելը, բայց բուն աղբյուրը դժվար է որոշել. ամենից ավելի մոտ է հայերենին ասորերեն ձևը, բայց արդյո՞ք նա է հայերենի աղբյուրը և ոչ թե ընդհանրական։ Հնում ընտանի կատուն հայերենում* կուզ *է կոչվել։*

[21] *Հմմտ. նաև բրբռ.* կլեպ. կլպել, *եթե դրանք կապ չունեն* պ(ո)լոկել *բայի հետ՝ դրափոխությամբ։*

[22] *Սեմական արմատը հավանաբար զուգահեռ ունի հ.-ե.* *(s)ter-p-*ի մեջ, որտեղից նախասլավ.* *torpiti *«տանջել». հայերենի համար կարելի է ենթադրել նաև մի ուրիշ աղբյուր։*

7. **Բնակարան, տուն, կահ-կարասի.** *7.14 մաշկն «վրան».*

8. **Երկրագործություն, բուսականություն.** *8.33 *մանգաղ. 8.421 գարի «գեղ (ցորենի, խոտի)». խարբալ-ել «մաղել». 8.531 գոպայ «ծոթրինաձերպ մի բույս». փեգանայ (փեգենայ) «սատափ, պպանգ.* ruta». *8.56 **տերեւ.*

9. **Ֆիզիկական տարբեր գործողություններ, արհեստներ և արվեստներ, համապատասխան գործիքներ և նյութեր.** *9.18 *շղթայ. 9.192 ծրար «կապոց, կծիկ». 9.25 *կացին. 9.441 քանուն (քանոն). 9.551 *կուպր. *ձիւթ. 9.631 բուրայ. 9.93 աղց «կարիք».*

10. **Շարժում և տեղափոխություն. փոխադրում, նավագնացություն.** *10.651 մորակ. 10.66 *շափիղ. 10.77 սեռն «առանցք». 10.93 կարկուրայ «նավակ». 10.86 ղե(ա)կ.*

11. **Ունեցվածք, սեփականություն և առևտուր.** *11.25 փրկել. 11.431 լումայ «մանր դրամ». 11.441 քանքար «մի կշռաչափ և նրա չափով ոսկի կ արծաթ». 11.461 [Թարշիշ] «մի թանկագին քար». [շափիղայ] «մի թանկագին քար». 11.45 [ծրար] «քսակ». 11.66 *հաշիւ. 11.67 ո(ա)րունայ «գրավական, ավանդ». 11.78 **սխուր «վարձ». 11.84 *թանգար «վաճառական». 11.86 խանութ (հանութ).*

12. **Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ.** *12.72 *գուբ «հոր, փոս. *խոռ «ծակ, փոս, խոռոչ». 12.841. *դարգ «կարգ, շարք».*

13. **Քանակ և թիվ.** *13.351 զոյգ.*

14. **Ժամանակ.** *14.121 *դար. 14.61 շաբաթ «մեկ շաբաթ, մեկ յոթնյակ». 14.63—14.66 [(երկու-, երեք-, չորեք-, հինգ)շաբաթ(ի)]. 14.67 ուրբաթ. 14.68 [շաբաթ] «շաբաթ օր». 14.72 իլուլ «եբրայական տոմարի 6-րդ ամիս».*

15. **Զգայական ընկալումներ.** *15.63 [ձանձախարիթ] «մուգ». 15.66 [ձանձախարիթ] «մուգ (կարմիր)». 15.81 *[քանքար] «տաղանդ».*

16. **Զգացմունք. խառնվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ.** *16.72 սրիկայ. 16.78 բասր-ել (բասիր) «պարսավել, անարգել».*

17. **Մտածողություն, միտք.** *17.21/27 փիլիսոփայ.*

18. **Ձայնական արտահայտություն, խոսք. ընթերցանություն և գիր.** *18.111 եփոր(այ). 18.121 **ձնծղայ. *քնար. 18.211 թարգման. հռետորայ «հռետոր». 18.521 հեգ «վանկ» (հեգ-ել «վանկ կապել»). 18.53 աթութայ-ք «տառեր, գրեր». հեգենայ «գիր, այբուբեն». 18.561 մագաղաթ. 18.61 *[մագաղաթ] «գիրք».*

19. **Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ. հասարակական հարաբերություններ.** *19.221 հրեայ. 19.451 [քանուն] «կանոն». 19.61 *մաքս.*

20. **Ռազմական գործ.** *20.222 *սակ(ու)ր «ռազմատապար». 20.27 *խարբ, սուսեր. 20.35 *բերդ.*

21. **Օրենք.** *21.321/331 **բուեայ (բուէ). 21.371 աքսոր-ք. *գաղութ (գաղթ).*

22. **Կրոն և նախապաշարմունք.** *22.18 քահանայ. 22.182 քուրմ. 22.182/183 աբեղայ. 22.1821 [քուսիթայ] «կրոնավորի գլխարկ, կնգուղ». 22.211 մծղնեայ «մի աղանդ». 22.22 քարոզ. 22.26 ծոմ. 22.311 ադեն «եդեմ, դրախտ». 22.331 սրո(վ)բէ. քերովբէ. 22.34 սատանայ. 22.35 խարամանի «դև». 22.36 հեթանոս. 22.431 քաղդեայ (քաւդեայ) «հմայող, գուշակ»:*

Հայերենի արամեա-ասորական փոխառությունների իմաստային խմբերի ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին.

1. Այդ փոխառությունները իրենց բնույթով մոտենում են իրանականներին և տարբերվում հունականներից՝ ընդգրկելով, բացի դերանուններից և սպասարկու բառերից, մնացած բոլոր խմբերը: Այլ կերպ ասած՝ այդ փոխառությունները չեն սահմանափակվում քաղաքակրթական-մշակութային բնագավառներով:

2. Չնայած արամեա-ասորական փոխառությունների լայն ընդգրկմանը՝ դրանց քանակական բաշխումն ըստ իմաստա-թեմատիկ խմբերի միատեսակ չէ. այնուամենայնիվ ամենից ավելի բազմանդամ են քաղաքակրթական-մշակութային և կրոնական բնագավառները՝ ուտելիքի, հագուստեղենի, երկրագործության, արհեստագործության, փոխադրամիջոցների, առևտրի, գրի և գրականության, այլև ժամանակի հետ կապված հասկացությունները: Համեմատաբար սակավաթիվ են ֆիզիկական աշխարհի, մարդկային տարիքների, մարմնի մասերի, բնակարանի, տարածական հարաբերությունների, քանակի ու թվի, հոգեկան աշխարհի, այլև հասարակական հարաբերությունների, ռազմական գործի և օրենքի հետ կապված բառերն ու տերմինները: Մեծաթիվ են հատկապես կրոնի, տոմարի և գրի հետ կապված անվանումները, որոնք համեմատաբար ուշ շրջանի են և կապված քրիստոնեության մուտքի ու Հայաստանի ասորական դպրոցների կյանքի հետ.

3. Ժամանակագրական առումով համեմատաբար վաղ շրջանի են մարդու առօրյա կարիքների և տնտեսական գործունեության, տարածական ըմբռնումների, ռազմական գործի, քաղաքական կյանքի և օրենքի հետ կապված անվանումները: Համեմատաբար նոր են գրի և կրոնի հետ կապված անվանումները:

գ) ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԱՐԱԲԵՐԵՆԸ

Հայերենի վրա արաբերենի գործած համեմատաբար ուժեղ ազդեցության մասին կարելի է խոսել միայն VII դարից սկսած, երբ Հայաստանն ընկնում է Արաբական խալիֆաթի տիրապետության տակ: Հ. Հյուբշմանը և Հ. Աճառյանը ընդհանրապես ժխտում են մինչ այդ հայերենում արաբական ծագման բառերի առկայությունը [Hübschmann, 1892, 126—268. 1895, 1, 259—280. Հյուբշման, *1894.* Աճառյան, *ՀԼՊ, 2, 169—217*]: *Սակայն կան V դ. մատենագրության մեջ հիշատակված մի շարք բառեր, որոնք սեմական լեզուների համապատասխան բառերի մեջ ամենից ավելի մոտ են արաբականներին: Այսպիսի դեպքերում Հ. Հյուբշմանը և Հ. Աճառյանը կամ ընդհանրապես ժխտում են հայերեն բառերի սեմական ծագումը, կամ ենթադրում փոխառություն ասորական բարբառներից:*

Եթե նկատի առնենք արաբական տարբեր ցեղերի առկայությունը Իրանի և Բյուզանդիայի սահմանամերձ վայրերում VII դարից ավելի վաղ, Հայաստանի հարավային շրջաններին մերձավոր վայրերում «յուրատեսակ ասորա-արաբական կոյնեի» առկայությունը [Пигулевская, *1964, 34*], *ապա թերևս այստեղից կարելի է բխեցնել հիշյալ բառերի մի զգալի մասը* [Մրկրտչյան, *1980—1984*][21], *թեև որոշ դեպքերում էլ կարելի է ենթադրել մեր-*

---

[21] Դժբախտաբար, հեղինակը հավանական բառերի հետ միասին բերում է նաև անհավանական զուգադրություններ:

ծավոր սեմական այլ աղբյուր։ Արաբները, մասնավորապես, դեռ նախքան իսլամի հանդես գալը բնակվում էին հյուսիսային Միջագետքում և V դ. հայ մատենագրության մեջ կոչվում էին իրանական աղբյուրից փոխառյալ բառով տաճիկ (tačīk), որ նշանակում էր և՛ «արաբ», և՛ «արագավազ»։

Հայերենի սեմական փոխառությունների՝ վերևում բերված ցանկից կարելի է առանձնացնել մի շարք բառեր, որոնց քիչ թե շատ հավանական աղբյուրը կարող է լինել արաբերենը («ասորա-արաբական կոյնեն»).

1. ախմախ «հիմար, տխմար» — արաբ. aḥmaq (ḥmq «հիմար լինել»).

2. ահլ «փականք. օղակ. ունեցվածք, ապրանք. բազմություն. ցեղ, գարմ, ժողովուրդ» — արաբ. 'ahl «ընտանիք. ցեղ. մարդիկ» (հմմտ. և ɣalaq, հգն. aɣlaq «փականք, կողպեք»?).

3. այպն «ամոթ, ծաղր» — արաբ. ʻayb «պարսավանք. արատ, թերություն. ամոթ».

4. ատշել (-իմ) «ծարավել» — արաբ. ʻaṭiš «ծարաված, ծարավի», ʻaṭaš «ծարավ», ʻaṭiša «ծարավեց» (ʻṭš «ծարավել»).

5. բատտո «ճիճու, որդ. փայտի ցեց» — արաբ. baṭīṭa, buṭiṭia (նվազական) «ծառի որդ».

6. զունար «գոտի» (ուշ ներմուծու՞մ) — արաբ. zunnār «գոտի».

7. կաւատ — արաբ. qawwad «միջնորդ, կավատ» (qwd «առաջնորդել, տանել»).

8. մահիճ «անկողին, անկողնակալ» — արաբ. mahjaʻ «ննջարան» (hjʻ «քնել, հանգստանալ»).

9. շալակ «պարկ. պատգարակ» — արաբ. šallāq «մուրացկանի տոպրակ».

10. շաաւն «ուղտ» — արաբ. šārif, հգն. šawārif «ծեր էգ ուղտ».

11. սխրանալ «հիանալ, զարմանալ, սքանչանալ» — արաբ. sḥr «կախարդել. հիացնել», siḥr «կախարդանք, դյութանք»։

Իմաստային, հնչյունական և այլ նկատառումներով քիչ հավանական պետք է համարել հայերեն և արաբերեն բառերի հետևյալ համեմատությունները.

խայրի «պատող». հմմտ. արաբ. ḫayr «լավ. լավ բան. բարիք».

խաբ, -ի, -ից, խաբել. հմմտ. արաբ. ḫibb «խաբեբա» (ḫbb «շորորավազքով գնալ». հմմտ. նաև ռուս. xab «խարդախություն». Լ'ին համեմատում է հ. սլ. хабити «փչացնել», սերբ. хабен «վատ» բառերի հետ.

խիլ «որոնում», խլել «խլել, կորզել, հափշտակել». հմմտ. արաբ. ḫl' «հանել. նվիրել. տեղահան անել».

հաշմ, -ի «խեղ, խեղանդամ, հաշմանդամ». հմմտ արաբ. ḫašīm «թույլ փխրուն». hašm «ջարդելը, փշրելը, ջարդում, փշրում», hšm «ջարդել, փշրել, ճզմել»).

հատ-անել. հմմտ. արաբ. ḥādd «սուր», ḥadd «սահման», ḥdd «սահման դնել, սահմանափակել». ավելի հավանական է հայ. արմատի հնդեվրոպական ծագումը.

շառափ «լույս, ճառագայթ». հմմտ. արաբ. šaraf «փառավորություն, շուք», այլ՝ աքկադ. šarāpu(m) «այրել» (սեմ. *ś/šrp).

շարխատ «տոկոս, վաշխ». հմմտ. արաբ. sarwat «վաճառք, մանրածախ առևտուր».

սադիր-, սադրել «հորդորել» (ուշ՝ «թելել, համարել»). հմմտ. արաբ. sādir «առանց երկար մտածելու անող».

վահրան, -ի «տարակույս». հմմտ. արաբ. wahrān «վախեցած. անհանգստացած» (whr «վախեցնել. դժվարին վիճակի մեջ դնել»).

վթար. հմմտ. արաբ. waddar «վտանել. վտանգել, կործանել»։

Մի շարք այլ դեպքերում հայերեն բառերի համար բերվող արաբական զուգահեռները պետք է պատահական նմանության արդյունք համարել.

1) բավարար հիմքեր չկան մերժելու հետևյալ բառերի հնդեվրոպական ծագումը.

ամուլ, -ոլ «չբեր». հմմտ. եբր. aml «չորանալ, թառամել, ցամաքել» և արաբ. mḥl «անպտուղ լինել», māḥil «անպտուղ» (երկրի, հողի, տարվա մասին). սակայն հնարավոր է ամուլ < հ.-ե. *n̥-pōlo- (Մեյե).

խաթարել «քակել, քանդել, ավերել». հմմտ. արաբ. ḫaṭar «վնաս, վտանգ». սակայն հմմտ. հուն. ἀ-σκηθής «անվնաս», գոթ. skaþjan «վնասել» (հ.-ե. *sketh-/skəth-).

խարել «այրել», խորովել, խարշել, խարույկ, բ. խարկել. հմմտ. արաբ. harr «ջերմություն». սակայն հմմտ. հ. իսլ. hyrr «կրակ», լիտվ. kárštas «տաք, կիզիչ» (հ.-ե. *ker-).

մարտ. հմմտ. արաբ. muʿariḍ «հակադրվող, հակաճառող, ընդդիմադիր». ('rḍ «պատահել. դրսևել. առաջարկել. (III ձև) հակադրվել, առարկել». սակայն հմմտ. հուն. μάρναμαι «մարտնչում եմ» (հ.-ե. *mer-).

շերտ, -ի, -եր «կտոր, բեկոր. փայտի կտոր, ցանկապատի ցից, կացին». հմմտ. ասոր. šəraṭ «պատառոտել», արաբ. srṭ «պայման դնել. (II ձև) քերթ անել. պատառոտել. (V ձև) հատվել». հմմտ. նաև ուրարտ. šerid- «առանձնացնել». ավելի հավանական է շերտ < հ.-ե. *skhedro-՝ *sk(h)ed «ճեղքել, կտրել» արմատից (հմմտ. լիտվ. skedervà «տաշեղ», լատվ. škedēns «վառելափայտ»)[22].

շրանալ «խրտնել». հմմտ. արաբ. šurūd «փախուստ» (šrd «փախչել, թափառել» (IV ձ.՝ ašrada «խրտնեցրեց, վախեցրեց, փախցրեց»). բայց հմմտ. խրտնել՝ շ/խ (հ.-ե. *skh/kh-) հերթագայությամբ (հ.-ե. *(s)ker-d- «ցատկել, վեր թռչել»). հնչյունապես հեռու է սարսռալ բայը.

տրուպ, -ի, -աց «աղքատ, ետին, փոքր, խեղճ». հմմտ. արաբ. turba «փոշի, հող», turābī «փոշոտ, հողոտ» (trb «փոշոտ լինել»). Հ. Աճառյանը համեմատում է ռուս. дробь «կոտորանք», дребезги «փշուրներ» բառերի հետ։

2) Առանձին դեպքերում ավելի հավանական է իրանական աղբյուր ենթադրելը.

նկատել. հմմտ. արաբ. nqd «ջոկել. քննարկել, քննել. քննադատել». ավելի հավանական է իրան. *ni-kāta- (հ.-ե. *kʷei- «ուշադրություն դարձնել, նկատել»?).

Հավանական է նաև ստորև բերվող բառերի իրանական ծագումը, թեև որոնց բուն աղբյուրը հայտնի չէ. մատնանշվող արաբ. զուգահեռների նմանությունը պատահական պիտի համարել.

---

[22] Անհավանական է շարել-ը կապել շերտ-ի հետ և բխեցնել միևնույն աղբյուրից։

հրոս «ասպատակող զորք». հմմտ. արաբ. ḥāris «պահապան», ḥaras «պահակախումբ».

վարկ «համարում, կարծիք. վճիռ». հմմտ. արաբ. waraq «տերև. թերթ, թուղթ», warq «արծաթե փող»?

վեհեր «վախկոտ». հմմտ. արաբ. wahr «վախ» (whr «վախեցնել. դժվարին վիճակի մեջ դնել»).

վհատ. հմմտ. արաբ. wāḥada «մենակություն» (wḥd «մենակ լինել»).

ջալլ(ե)ամն, -ման բառի համար Հ. Աճառյանը մատնանշում է արաբ. ẓalīm, հգն. ẓilmān (ẓūlmān?) զուգահեռը, բայց ẓ > ջ անցումը անհավանական է. եթե այս բառերը կապված են, ապա պետք է ենթադրել դրանց միջակա օղակ:

3) Հ. Աճառյանը իրավամբ առանձնացնում է ռայ-ք «բազմություն. հանդես» բառը ավելի ուշ ավանդված ռայ «դրոշակ» բառից, որի աղբյուրն իրոք արաբ. rāja «դրոշակ» բառն է:

Արաբական հին փոխառություններն ըստ իմաստային դաշտերի կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

2. Մարդկություն. սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություններ. 2.331 կաւատ.

3. Կենդանիներ. 3.78 շառան «ուղտ». 3.84 բատա «ճիճու, որդ, ծառի ցեց».

5. Ուտելիք և խմելիք. կերակրի պատրաստում և ամանեղեն. 5.15 տաշել (-իմ) «ծարավել».

6. Հագուստ. 6.57 զունար «գոտի».

7. Բնակարան, տուն, կահ-կարասի. 7.23 աղխ «կողպեք». 7.42 մահի

10. Շարժում, տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն. 10.611 շալակ «պարկ. պատգարակ».

16. Զգացմունք. խառնվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ. 16.15 սիրանալ «հիանալ, զարմանալ, սքանչանալ». 16.25 այպ «ծաղր» 16.46 [այպն] «ամոթ».

17. Մտածողություն, միտք. 17.22 ախամախ «հիմար, տխմար»:

Այսպիսով, արաբական հնագույն փոխառությունները արմատապես տարբերվում են ակկադական և, զգալի չափով, արամեա-ասորական փոխառություններից: Դրանք առավելապես առօրյա կյանքի բառեր են, հատկապես մարդկային հարաբերությունների, հատկությունների, գործառությունների, մարդկանց բնակության և տեղափոխության հետ կապված հասկացությունների նշանակումներ:

3. ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

ա) ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

Հնդեվրոպական լեզվաընտանիքում իրանական լեզուներն առանձնապես մոտ են հնդկական լեզուներին, որոնց հետ միասին հնում կազմել են հնդիրանական հիմք-լեզուն: Իրանական վաղ լեզվավիճակը բավականաչափ մոտ է հնդկական վաղ լեզվավիճակին. ավեստայի լեզուն հնչյունապես, քերականապես և բառապաշարով դեռևս այնքան քիչ է տարբերվում վեդայական հնդկերենից, որ կարելի է խոսել նրանց՝ ինչպես երկու բարբառների մասին և կազմել ընդարձակ զուգահեռ տեքստեր:

Իրանական հիմք-լեզուն առանձնակի գոյություն է ունեցել հավանաբար մ. թ. II հազարամյակում: Հնդկական ցեղերից բաժանվելուց հետո իրանական ցեղերը բնակություն են հաստատում Միջին Ասիայում և հարակից շրջաններում: Այստեղ էլ կազմավորվել են զրադաշտական կրոնի սրբազան գրքի՝ Ավեստայի հնագույն մասերը: Մ. թ. ա. II հազարամյակի վերջերին և I հազարամյակի սկզբներին նրանք տարածվում են արևմուտք՝ մինչև մերձսևծովյան տափաստանները, և հարավ-արևմուտք՝ իրանական կոչված լեռնաշխարհը, այժմյան Իրանի տերիտորիան. արևելքում նրանք հասնում են մինչև հնդկական ցեղերի տարածման սահմանները:

Հնդիրանական լեզուները հնդեվրոպական լեզվաընտանիքում հնչյունական առումով առանձնանում են հետևյալ էական հատկանիշներով. 1) հ.-ե. երկար և կարճ *ē, *ō, *a, ձայնավորները ներկայացված են որպես երկար և կարճ հնդիրանական (արիական)[1] *a. հմմտ. հնդկ. bharāmi, ավ. barāmi և հայ. բերեմ (հ.-ե. *bhere-), հ. հնդկ. ka, ավ. ka- և հայ. ո(վ) (հ.-ե. *kʷo-), հ. հնդկ. ájāmi, ավ. azāmi և հայ. ածեմ (հ.-ե. ag'-) և այլն. 2) հ.-ե. *ə-ն արտացոլված է որպես i. հմմտ. հ. հնդկ. pita, հ. պրսկ. pitā և հայ. հայր. 3) հ.-ե. *s-ն i, u, r, k հնչյուններից հետո վերածվում է շշականի՝ հ. հնդկ. ṣ, իրան. š. հայերենն այս հատկանիշը բաժանում է միայն r-ից հետո գտնված դիրքում, այն էլ ստուգաբանական րշ/ռ տարբերակներով. հմմտ. մի կողմից՝ հ. հնդկ. ni-ṣīdāti, ավ. ni-šasta- (անց. դերբայ) և հայ. նստիմ (հ.-ե. *ni-si-zd-, *ni-zd-) և մյուս կողմից՝ (հ. հնդկ. tṛṣṇa-, tarṣa- «ծարավ», ավ. taršu- «չոր» և հայ. թառամ/թարշամ (հ.-ե. *ters-/tṛs-). 4) l-ն հիմնականում փոխվում է r-ի. հմմտ. հ. հնդկ. roká-, rócas-, ավ. raocah- և հայ. լոյս (հ.-ե. *leuk-).

Իրանական հիմք-լեզուն (ընդհանուր լեզուն) իր հերթին տարբերվում է հնդկականից հնչյունական հետևյալ էական հատկանիշներով. 1) *bh, *dh, *gh շնչեղ ձայնեղները ներկայացված են իբրև պարզ ձայնեղներ, այսինքն՝ իրանական լեզուները պայթականների այս երկու շարքերը չեն տարբերակում. 2) *p, *t, *k, խուլերը նախաբաղաձայնական դիրքում ներկայացված են իբրև *f, *θ, *x. 3) *ph, *th, *kh շնչեղ խուլերը ներկայացված են իբրև *f, *θ, *x շփականներ. 4) *s-ն հիմնականում փոխվել է *h-ի:

Իրանական ընդհանուր լեզվի մասնատման և իրանական ցեղերի տարածման հետևանքով առաջանում են բարբառներ, որոնց բազայի վրա հետագայում ձևավորվում են իրանական լեզուները: Մ. թ. ա. I հազարամյակում, ինչպես ցույց են տալիս եղած տեքստերը և հին հեղինակների վկայությունները, իրանական ժողովուրդների լեզվական տարբերությունները դեռևս բարբառային բնույթ են ունեցել, և իրանական բոլոր բարբառներով խոսողները կարող էին իրար հասկանալ: Այլ կերպ ասած՝ իրանական լեզվախմբի զարգացման հին շրջանը ներկայացված է միայն բարբառային տարբերություններով, որոնք միջին շրջանում սկսում են փոխվել լեզվական տարբերությունների: Դեռ այժմ էլ իրանական որոշ լեզուներով (օրինակ, պարսկերենով և տաջիկերենով) խոսողները կարող են իրար հասկանալ, թեև մեծ

---

[1] «Արիք» անվանումն սկզբնապես հատուկ է եղել և՛ հնդիկներին, և՛ իրանական ցեղերին:

մասամբ տարբերությունները խորացել են մինչև անհասկանալիության աստիճան. իրար, օրինակ, չեն կարող հասկանալ օսը և պարսիկը, օսը և քուրդը, քուրդը և աֆղանը և այլն։

Ինչպես նշել ենք հնդեվրոպական լեզուների քննության ժամանակ, իրանական բարբառները և լեզուները իրենց հերթին ըստ հնչյունական, քերականական և բառային առանձնահատկությունների բաժանվում են արևմտյան և արևելյան խմբերի, որոնց մեջ էլ տարբերվում են հարավային և հյուսիսային ենթախմբեր։ Քանի որ այս ներքին տարբերությունները կարևոր են հայերենի փոխառությունների բնույթը որոշելու առումով, համառոտակի կանգ առնենք նրանց վրա։ «Արևմտյան» և «արևելյան» անվանումների հիմքում ընկած է իրանական բարբառների վաղ տարածումը, որ այժմ զգալիորեն խախտված է. այսպես, արևելյան խմբին պատկանող օսերենը այժմ ընկած է արևմտյան մի շարք լեզուների տարածման հիմնական շրջաններից արևմուտք։

Հայերենի փոխառությունների հայեցակետից մեզ համար էական են հատկապես հյուսիսային և հարավային բարբառների ու լեզուների տարբերությունները, մանավանդ, որ հայերենի փոխառությունները կրում են արևելյան որոշ գծեր։ Հայերենը հնում տևականորեն շփվել է հիմնականում հյուսիս-արևմտյան լեզուների՝ մեդերենի (մարերենի) և պարթևերենի ու սրա ուշ վիճակի՝ պահլավերենի հետ. հարավ-արևմտյան լեզուներից միջին պարսկերենի և նոր պարսկերենի ազդեցությունը երևան է եկել համեմատաբար ուշ։

Արևմտյան և արևելյան խմբերի հնչյունական տարբերությունները հանգում են հետևյալին [Оранский, *1960, 217—218. 1963, 37—38. 1979, 128—*146. Расторгуева, ЯН *1, 196—197.* ОИЯ, *1, 87—97*]. *1) ընդհանուր իրանական բառասկզբնային* b, d, g *ձայնեղ պայթականները արևմտյան խմբում նույնությամբ պահպանվում են, իսկ արևելյան խմբում վերածվում են* β (v, w), δ, γ *ձայնեղ շփականների. ավեստերենը ցույց է տալիս, որ ձայնեղ պայթականները բառամիջում՝ միջձայնավորային դիրքում ընդհանրապես վերածվում էին ձայնեղ շփականների. 2) արևելյան խմբի* c, ǰ *սուլական կիսաշփականների դիմաց արևմտյանում առկա են համապատասխան* č, ǰ *շչականները. 3) ընդհանուր իրանական բառասկզբնային* h*-ն արևմտյանում պահպանվում է, արևելյանում՝ ընկնում. 4) ընդհանուր իրանական* -ft-, -xt- *կապակցությունները արևմտյանում պահպանվում են, արևելյանում՝ ձայնեղանում՝ վերածվելով* -βd-, -γd- *կապակցությունների։*

Հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան խմբերի հիմնական հնչյունական տարբերությունները, հատկապես միջին շրջանում, կարելի է ներկայացնել 491-րդ էջի աղյուսակով [Оранский, 1960, 213—217. 1979, 147—176. Расторгуева, ЯН, 1, 197. ОИЯ, 1, 97—115][2]։

Միջին իրանական շրջանի հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան բարբառների տարբերությունների քննության կապակցությամբ հարկավոր է մի քանի դիտողություն անել. 1) բուն միջին պարսկերեն ասելով հասկանում են հատկապես սասանյան շրջանի (մ. թ. III—VII դդ.) պարսկերենը, մինչդեռ իրանական լեզուների զարգացման միջին շրջանն ընդգրկում է մ. թ. ա. IV—III դարերից մինչև մ. թ. VIII—IX դարերը։ Սա նշանակում է, որ միջին պարսկերենը պարթևերենի համեմատությամբ, որ սկսվում է միջին շրջանի սկզբներից, ունի ոչ միայն բարբառային տարբերություններ, այլև ժամանակային հաջորդականություն։ Հյուսիսային բարբառների տարբերակիչ գծերը սկզբնապես ավելի ընդհանրական բնույթ են ունեցել և ավելի շատ տարածված եղել. միջին պարսկերենի որոշ տարբերություններ արշակունյան շրջանի պարթևերենի հետագա վիճակից՝ պահլավերենից, ավելի ուշ են զարգացել։

Հ.-ե.	*Ընդհ.-իրան.*	*Հյուսիս-արևմտյան*	*Հարավ-արևմտյան*
*d(h)	*d	d, δ, h	d, δ, y, h
*d(h)u̯	*dv	b	d
*g´(h)	*(δ?)	z	d
-g´(h)	*(-δ?)	z	y
*g(h)	*g	g, γ	g, γ, y, v
	*ǰ	ž, ǰ	z
*pr	*fr	fr>hr	fr
*-t-	*-t-	t	t, y
*tr	*θr	hr>rh, h	s
*tn	*θn	θn>hn, n	šn
*ti̯	*θy	θy>hy, h	š (հմպ. šiy)
*k´(h)	*(θ?)	s	θ
*-k´(h)	*(-θ?)	s	h
*k´u̯	*sv	sp	s
*k(u)m	*xm	xm	(h)m
*-st	*st	št	st
*sn	*sn	sn	sn
*su̯	*xv	f	f (հմպ. hv)
*rd(ə)	*rd	rd, rz	l
*rt	*rθ	rθ>rh, h	hl
*rn	*rn	rn	rr
*r̥	*r̥	ar, ur, ir	ur, ir
*u̯	*v	v	v > b
*-u̯-	-v-	v	—

2) Հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան բարբառային որոշ տարբերություններ հանդես են եկել նաև ավելի վաղ՝ հին կոչված շրջանում՝ արտահայտվելով մի կողմից՝ մեդերենի (մարերենի) ու մասամբ ավեստերենի և մյուս կողմից՝ հին պարսկերենի տարբերությունների մեջ։

3) Նոր պարսկերենը միջինի համեմատությամբ ենթարկվել է զգալի փոփոխության, որ խորացրել է հատկապես պարթևերենից ու պահլավերենից նրա ունեցած տարբերությունները։ Մասնավորապես պետք է նշել բառասկզբի v>b, u̯ *անցումները, արշակունյան շրջանի ոչ սկզբնային դիրքի* p, t, k *խուլերի՝ միջին պարսկերենում* β, δ, γ*-ի փոխվելը և նոր պարսկերենում սրանից* b, d, g *դառնալը, նույն շրջանի ձայնավորահաջորդ* č*-ի միջին պարսկերենում* ǰ, ž*-ի, ապա* z*-ի փոխվելը և այլն։ Ահա թե ինչու հայերենը միևնույն բառը փոխ առնելով իրանական լեզուների զարգացման տարբեր շրջաններում և տարբեր բարբառներից՝ դրանք երբեմն պահել է որպես միանգամայն տարբեր բառեր. հմմտ.* վաճառ և բազար:

4) Բարբառային որոշ կարգի տարբերությունների փոխհարաբերության պարզաբանման հարցը դժվարանում է այն փոխառությունների պատճառով, որ հին շրջանում կատարել են հին պարսկերենը մեդերենից (մարերենից), միջին շրջանի հարավ-արևմտյան բարբառները՝ հարավ-արևելյաններից[3]։ Ուշ շրջանի հայ փոխառությունների ճշգրիտ աղբյուրի որոշումը հաճախ դժվարանում է ինչպես իրանական լեզուների՝ միմյանցից, այնպես էլ արաբերենի, պարսկերենի, թուրքերենի՝ միմյանցից կատարած մեծաթիվ փոխառություններով։

---

[2] *Հայերենի փոխառությունների առումով այս հարցն ընդարձակ կերպով քննված է իտալացի հայագետ Ջ. Բոլոնեզիի գրքում* [Bolognesi, *, 1960*]։

բ) ՀԱՅԵՐԵՆԻ ՎՐԱ ԻՐԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Իրանական լեզուների՝ իրանագետների կողմից տարբերվող հին, միջին և նոր շրջանները չեն համընկնում հայերենի զարգացման համապատասխան շրջանների հետ։ Այս տարբերությունները կապված են ինչպես երկու կողմերի զարգացման առանձնահատկությունների, այնպես էլ դրանց շրջանաբաժանման տարբեր սկզբունքների հետ։

Ամենից առաջ՝ հայերենի պատմությունը սկսվում է անմիջապես հնդեվրոպական միասնության շրջանից, իրանական լեզուներինը՝ հնդիրանական միասնության տրոհումից հետո, այսինքն՝ հայերենինը՝ մ. թ. ա. մոտավորապես III, իրանական լեզուներինը՝ մոտավորապես II հազարամյակի սկզբներից։

Երկրորդ՝ իրանական լեզուների գրավոր հուշարձանները սկսվում են հայերենի գրավոր հուշարձաններից ավելի քան մեկ հազարամյակ առաջ. հին պարսկերեն տեքստերը մ. թ. ա. VI—IV դարերից են. ավեստան գրի է առնվել համեմատաբար ուշ՝ միջին շրջանում (կանոնական տեքստը կազմվել է սասանյան շրջանում), բայց իր հնությամբ գերազանցում է հին պարսկերենին՝ հասած լինելով երկարատև բանավոր ավանդությամբ և թերևս արշակունյան շրջանում ունենալով որոշ գրառումներ։

Երրորդ՝ եթե նոր պարսկերեն գրական լեզուն, սկիզբ առնելով IX դարում, գրեթե անփոփոխ կերպով հասել է մեր օրերը, ապա այդ ժամանակաշրջանում հայերենը, անցնելով գրավոր զարգացման իր հին շրջանը, թևակոխել է նախ՝ միջին և ապա նոր հայերենի շրջանները։

Վերջապես, հայերենի գրավոր պատմության շրջանաբաժանմանը հատկացվող «հին, միջին և նոր շրջաններ» անվանումները իրանական լեզուների (և ոչ թե մեկ լեզվի) դեպքում առնում են այլ իմաստ։ Էլ չենք խոսում այն մասին, որ հին շրջանի մեջ ներառվում է նաև նախքան գրավոր ավանդություն առանձին ընկած փուլը՝ հնդկականից բաժանվելուց հետո։

Կարելի է ասել, որ իրանական ժողովուրդների վերաբերյալ առաջին տեղեկությունների ժամանակներից էլ[4] սկսվում է հայ-իրանական շփման պատմությունը, եթե մանավանդ հայերը կազմել են ուրարտական պետության հիմնական ժողովուրդներից մեկը։ Այդ շփումը ուժեղանալով ու թուլանալով, ընդգրկելով հայ ժողովուրդը երբեմն գրեթե ամբողջությամբ, երբեմն էլ որոշ տարածքներում, շարունակվում է մինչև մեր օրերը։

Հայոց լեզվի նախագրային շրջանի զարգացման պատմության հնագույն շրջանը համընկնում է մասամբ իրանական լեզուների զարգացման հին և մասամբ միջին շրջանների հետ։ Հայերենի և իրանական լեզուների, հատկապես պարսկերենի սերտ հարաբերությունները հետագայում էլ շարունակվում են մինչև VII դ. արաբական արշավանքները, ապա նոր թափ ու ընթացք ստանում նոր պարսկերենի շրջանում։

Հին շրջանի իրանական այն բարբառները, որոնց հետ հայերենը պիտի շփված լինի, սկյութերենը, մեդերենը (մարերենը) և հին պարսկերենն են։ Եթե կիմերները իրանական ժողովուրդ են եղել, ապա կիմերերենը նույնպես պիտի մտցնել սրանց մեջ։ Նշենք, որ իրանական ազդեցությունը հայերենի վրա այս շրջանում համեմատաբար թույլ պետք է եղած լինի, և այդ ազդեցության շատ հարցեր մնում են չլուծված, մանավանդ որ ոչ բոլոր դեպքերում կարելի է հեշտորեն տարբերել հին շրջանի և միջինի պարթևական փուլի հայկական փոխառությունները։ Քանի որ կիմերերենի և հայերենի փոխհարաբերության հարցն ունի յուրահատուկ կողմ, քննությունն սկսենք նրանից։

գ) ԿԻՄԵՐԵՐԵՆԻ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԸ

Կիմերները մեծ դեր են կատարել Առաջավոր Ասիայի մ. թ. ա. VIII—VII դդ. պատմության մեջ։ Կիմերների մասին տեղեկություններ են հաղորդում բավականաչափ աղբյուրներ, սակայն այդ տեղեկությունները համառոտ են, միօրինակ, կցկտուր և հնարավորություն չեն տալիս քիչ թե շատ ամբողջական գաղափար կազմելու նրանց սկզբնական բնակության վայրերի, էթնիկական բնույթի և լեզվական պատկանելության մասին [Блаватский, *1948, 1.* Ельницкий, *1949, 14—18.* Крушкол, *1952, 89—91.* Иессен, *1953, 100—110.* Кручков, *1958, 176—195.* Артамонов, *1974, 20—23. 1950, 41.* Дьяконов, 1981, 90—100. Երեմյան, *1968, 90—92*]։ Սկզբնական բնակավայրը հայտնի է միայն ամենաընդհանուր ձևով. այն ընկած է եղել Հյուսիսսևծովյան շրջանում։ Սակայն եղած տեղեկությունների հիման վրա առայժմ հնարավոր չէ ավելի որոշակի սահմաններ նշել։ Հետազոտողները կիմերների բնակության սահմանները մերթ ընդարձակում են՝ ընդգրկելով ողջ Հյուսիսսևծովյան շրջանը մինչև Թրակիա, մերթ նեղացնում՝ սահմանափակելով Թամանյան թերակղզու հյուսիսային մասով, հատկապես ներկայիս Յանատան (Ցանտալովսկի) թերակղզով։ Առաջին դեպքում հավանաբար կիմերների անվան տակ միավորվում են, առանց էթնիկական պատկանելության հստակ տարբերակման, այլևայլ ցեղեր և ցեղախմբեր, երկրորդ դեպքում փորձ է արվում ճշտորոշել բուն կիմերների բնակության վայրը։ Կիմերների անունով մնացած զանազան աշխարհագրական անունների և դրանց տեղադրության քննությունը հարցն արմատապես չեն լուծում, եթե նկատի առնենք հին հեղինակների աղոտ պատկերացումները իրենց երկրից հյուսիս ընկած վայրերի մասին և ուշ փոխանցումների հնարավորությունը։

Կիմերները եղել են քոչվոր ժողովուրդ, լայնորեն զբաղվել են ձիաբուծությամբ և մարտեր են մղել հեծելազորով։ Սրանով էլ բացատրվում են նրանց մեծ շարժունակությունը և մարտական սկզբնական խոշոր հաջողությունները։ Կիմերների քանակի ոչ շատ մեծ լինելը երևում է թեկուզ այն փաստից, որ մարտական որոշ հաջողություններից հետո նրանք խիստ թուլանում են և հավանաբար շուտով հեռանում պատմական ասպարեզից՝ դադարելով գոյություն ունենալուց որպես ինքնուրույն ժողովուրդ։

---

[3] Հմմտ., օրինակ, պարսկերենի հետևյալ պարթևաբանությունները՝ šahr «քաղաք», mihr «սեր», pūr(<puhr) «որդի» և այլն։

[4] Ըստ Է. Ա. Գրանտովսկու [Грантовский, *1970*], որ հենվում է հատկապես հատուկ անունների ստուգաբանության վրա, իրանական ցեղերն Իրանում երևացել են դեռևս XI դ. մ. թ. ա.։

Եղած աղբյուրների համադրությունը ցույց է տալիս, որ կիմերները մ. թ. ա. VIII դ. վերջին տասնամյակներում սկյութների ճնշման տակ[5] թողնում են իրենց սկզբնական բնակատեղին և շարժվում հարավ՝ Առաջավոր Ասիա։ Հերոդոտոսը տեղեկություն է տալիս շարժման արևելյան ուղու մասին. ըստ նրա՝ կիմերները շարժվել են Սև ծովի արևելյան ափերով։ Ստրաբոնը հակված է ընդունելու կիմերների շարժման արևմտյան ուղին՝ Թրակյան Բոսֆորով և Բոսֆորի նեղուցով դեպի Էոլիա, Իոնիա, Պափլագոնիա։ Արդի որոշ հետազոտողներ, նկատի ունենալով Սև ծովի արևելյան ափերով ձիավոր քոչվորների մեծ զանգվածի շարժման դժվարությունը, ենթադրում են, որ կիմերները անցել են Անդրկովկաս նախ Դարյալով և Ալագիրով, ապա շարժվել դեպի արևելա-սևծովյան ափերը [Дьяконов, 1956, 237]։ Ասիայում նշվում է կիմերական երկու հիմնական բնակատեղի՝ Մանա երկիրը Ուրմիա լճի հարավային կողմերում և Կապադովկիան (Գամիրքը)։

Ասուրական աղբյուրները մ. թ. ա. VIII դ. նախավերջին տասնամյակի առաջին կեսին (720—715 թթ. միջև), մինչև Սարգոն II-ի արշավանքը Ուրարտու (714 թ.) [Пиотровский, 1946а, 296. 1959, 232 և հջ.], տեղեկություններ են տալիս ուրարտացիների հետ կիմերների ընդհարման և ուրարտացիների պարտության մասին։ Սակայն հետագայում, ինչպես երևում է, կիմերները դաշն են կնքում ուրարտացիների հետ և վտանգ ստեղծում Ասորեստանի համար։ Մ. թ. ա. 697 թ. Տեուշպայի առաջնորդությամբ նրանք ներխուժում են Ասորեստան, բայց պարտություն են կրում։

Արևմուտքում, ըստ Ստրաբոնի՝ Հոմերոսի ժամանակներում կամ ավելի վաղ, կիմերները ասպատակում են գրեթե ողջ Փոքր Ասիան, ընդ որում Ստրաբոնը նրանց նույնացնում է տրերների հետ, որոնք թրակյան ցեղ են եղել։ Կիմերների հարվածի տակ, հավանաբար ուրարտացիների մասնակցությամբ, մ. թ. ա. 676—674 թթ. ժամանակամիջոցում կործանվում է Փռյուգական պետությունը։ Մ. թ. ա. VII դ. կեսերին կիմերները գրավում են Լիդիան՝ առանց այնտեղ երկար ժամանակով հաստատվելու։ Ընդհարվելով սկյութների հետ և պարտվելով նրանց առաջնորդ Մադիեսից՝ կիմերներն ապաստան են գտնում Փոքր Ասիայի հյուսիսային մասերում՝ Սինոպի մերձակայքում։ Մ. թ. ա. VII դ. վերջերին կիմերները նոր պարտություն են կրում լիդիական թագավոր Ալիատից և դադարում քաղաքական ուժ ներկայացնելուց։

Կիմերական լեզվական տվյալները արտակարգ սուղ են. մեկ հասարակ անուն, կիմերական ժողովրդի անունն ու նրանցից կազմված հատուկ անունները և երեք անձնանուն (կիմերական առաջնորդների անուններ)։ Ահավասիկ դրանք.

1) Հուն. κιμμέριοι (ուշ նաև κίμμεροι «կիմերներ», այլև Κιμμερίη, Κιμμέρια τείχεια, πορθμήια Κιμμέρια, Βόσπορος Κιμμέριος Κιμμερικόν (քաղաք) և այլն. աքքադ. gamirra, gimmirâi, gimirri (բաբել.). եբր. (աստվածաշնչում) Gomer, Gamer, հայ. Գամիրք (Կապադովկիայի հայկական անունը)[6],

2) Հուն. Λυγδαμις աքքադ. D/Tugdammî (ᵐTug-dam-mi-i, ընդ որում mi-ն կարող է ընթերցվել նաև me) [Дьяконов, 1956, 240, ծան.].

3) Աքքադ. Teušpâ.

4) Աքքադ. Sandakšatru (Sa-an-dak-šat-ru, ընդ որում šat/ṭ/d նշանը կարող է ընթերցվել նաև kur, mat/d, lat/d, nat/d, k/gin՝ Sandakkurru և այլն) [Дьяконов, 1956, 239].

5) Հուն. ἄργιλλαι «ստորերկրյա բնակարաններ» (հգն.)։

Կարծիք կա, որ kimmer- անվանումը տրվել է կիմերներին ոչ միայն ուրիշների կողմից, այլև եղել է նրանց ինքնանվանումը [Дьяконов, 1956, 238][7]։ Ըստ տարբեր ուսումնասիրողների՝ այդ անվանումը պահպանվել է վրաց. gmiri «հերոս, հսկա», օս. (վրաց. միջնորդությամբ) goymiri (իրոն.), gumeri, gämeri (դիգոր.) «հսկա, կուռք», հ. ռուս. коумиръ, коумирь «կուռք» բառերի մեջ [Миллер, 1881, 125. Абаев, ИЭСОЯ, 1, 530. Фасмер, 2, 1967, 416. Попов, 1973, 11], ընդ որում օսերենի «կուռք» իմաստը բացատրվում է ռուսերենի ազդեցությամբ՝ անցած եկեղեցական գրքերի թարգմանության միջոցով [Абаев, ИЭСОЯ, 1, 238]։

Բացի կիմերների անվան հետ այս կամ այն ձևով առնչվող Կապադովկիայի հին հայկական Գամիրք անունից, որ թերևս կապված է աստվածաշնչի Gamer անվան հետ, կարելի է կապ տեսնել կիմերների և Լենինականի հին Կումայրի (>Գյումրի) անունների միջև, սակայն ավելի շատ հակում կա Կումայրի-ի -այր- բաղադրիչը նույնացնելու հայ. այր «քարայր, քարանձավ» բառի, իսկ Կում-ը՝ Առաջավոր Ասիայի մի շարք տեղանունների kum բաղադրիչի հետ և վերջինիս ակունքը փնտրելու խուռիերենում [Капанцян, 1948, 50]. Կումայրի-ի՝ կիմերների անվան հետ կապված լինելը մեզ հավանական է թվում հատկապես այն պատճառով, որ Շիրակ տեղանունը համապատասխանաբար կարող է բացատրվել սարմատական սիրակ (σιραχ=շիրակ) ցեղի [Анфимов, 1952, 63] (որ մ. թ. ա. III—II դդ. արդեն հաստատվել էր Մանիչ գետի հովտում) անվամբ, եթե կիմերների կազմում կային նաև այս ցեղի ներկայացուցիչներ։ Այս դեպքում կիմերների անվան սկզբնաձևի հնչյունական փոփոխությունը Կումայրի տեղանվան մեջ պետք է համարել բաղարկման արդյունք։

Կիմերների անվան աղբյուրը հայտնի չէ։ Շատ բան այստեղ կախված է մյուս անունների մեկնությունից, մանավանդ որ կիմեր-ը, ինչպես տեսանք, պահված է նաև g- բաղաձայնով և տարբեր ձայնավորումներով։ Պոսեյդոնիոսը կիմերներին նույնացնում է կիմբրերի (κίμβροι) հետ։ Օ. Ն. Տրուբաչովը, ինչպես կտեսնենք, ենթադրում է թրակյան ծագում։

Եթե մի կողմ թողնենք կիմերների մոնղոլական, ֆիննական և կովկասյան ծագման վերաբերյալ վարկածները, որոնք զուրկ են որևէ լուրջ կռվանից, ապա կարելի է հիշել հետևյալ կարծիքները.

1) Ամենից տարածված կարծիքն այն է, որ կիմերները սկյութների նման

---

[5] Ըստ Հերոդոտոսի՝ «Երկիրը, որտեղ հիմա բնակվում են սկյութները, նախապես պատկանում էր կիմերներին» (Herod. IV, 11), թեև, իհարկե, չի կարելի խոսել կիմերների և սկյութների բնակության վայրերի սահմանների համընկնելու մասին [հմմտ. Блаватский, 1948, 10]։

[6] Ս. Երեմյանը [1963, 46] կիմերների անվան հետ է կապում Կեմերեկ գյուղի անունը, որի նմանությունը կարող է պատահական լինել (Թրք. Կեմերեկ<հայ. Կամարակ. հմմտ. Էվերեկ<Ավերակ)։

[7] Կիմերների անվան թյուրքական մեկնության փորձը Շրադերի կողմից (c'omru «[illegible] քոչվոր») այդ ժամանակաշրջանի համար զուրկ է պատմական հիմքից [հմմտ. Vasmer, 1923, 5]։ Լուրջ չեն հույների ստուգաբանական բառախաղերը κιμμέριοι—κερβέριοι, κιμμέριοι—χειμέριοι և այլն։

իրանական ծագում ունեն (ի միջի այլոց, ըստ Կալիմաքոսի՝ կիմերները սկյութների նման «ձի կթողներ» են)։ Այս կարծիքը հենվում է հատկապես Sandakšatru և Teušpâ անունների ստուգաբանության վրա։ Առաջինի համար նշվում է -kšatru «իշխանություն» (=ավ. xšaθrəm. հ. հնդկ. kšatram, իրան. աղբյուրից ծագող հայ. աշխարհ) բաղադրիչը. վերջինս ավելի մոտ է, սակայն, հին հնդկական, քան իրանական ձևերին, որոնք k-ի դիմաց ունեն x (=սեպագիր ḫ?)։ Երկրորդի մեջ ուշադրություն է գրավում -spā-ն, որ կարող է արտացոլել իրանական անունների -asp- «ձի» բաղադրիչը։ Ֆ. Յուստին առանց վարանման երկուսն էլ դնում է իրանական անձնանունների շարքը՝ առաջինը մեկնելով որպես Sanda-xšaθra «գոհացուցիչ (պատշաճ) իշխանություն ունեցող» (հմմտ. ավ. sand-), երկրորդը նույնացնելով Հերոդոտոսի գրքում հիշատակված իրան. > հուն. Τεῖσπης (=բեհիստունյան արձանագրության Čaišpiš, Աքեմենի որդու անունը). Τέασπις անձնանվան հետ [Justi, 1895, 152][8]։ Sandakšatru անձնանվան «զուտ» իրանական մեկնության դեմ բերվում է երկու ապացույց. ա) Sand- բաղադրիչը զուգահեռներ ունի փոքրասիական հատուկ անուններում, նույն ժամանակների ասուրական աղբյուրները հիշատակում են կիլիկյան Sandasarma և Sanduarri անձնանունները, որոնց Sand(a)- բաղադրիչը նույնացվում է Սանդոն դիցանվան հետ [Дьяконов, 1956, 240][9]։ Ավելորդ չէ հիշել, որ շատ հետազոտողներ կապ են տեսնում Սանդոն (Շանդոն) աստծու անվան և հայ. շանդ (շանթ) բառերի միջև. բ) նշվում է šat/ṭ/d-ի kur և այլն և, հետևաբար, Sandakšatru-ի Sandakkurru և այլն ընթերցումների հնարավորությունը։ Teušpâ-ի հիշյալ մեկնության կողքին Յ. Մարկվարտը [Marquart, 1896,] և Ի. Մ. Դյակոնովը [Дьяконов, 1956, 240] հնարավոր են համարում վերականգնել իրանական Tavaspa- «հզորաձի» նախաձևը (tava- «հզորություն» և aspa- «ձի»), բայց այս դեպքում էլ անբացատրելի է մնում -e- ձայնավորումը [Vasmer, 1923, 6]։ Կիմերական մյուս անձնանուններից Dugdamīš-ը ևս կապվում է իրանական աղբյուրի՝ Զրադաշտի մոր անվան Duγδō-vā-ի մեջ պահպանված Duγδa-ի հետ, բայց այս դեպքում նկատի չի առնվում հուն. Λυγδαμις տարբերակը (*dl նախնական հնչյունի երկակի արտացոլո՞ւմ), որ հայտնի է նաև այլուր և կարող է փոքրասիական ծագում ունենալ [Vasmer, 1923, 5][10]։ Կիմերների անվան իրանական հավաստի մեկնության փորձ մեզ հայտնի չէ։ Կիմերների իրանական ծագման վարկածի դեմ բերվող գլխավոր ապացույցն այն է, որ պահպանված միակ հավաստի անունը իրանական հավաստի զուգահեռներ չունի։ Մ. Ֆասմերը [Vasmer, 1923, 7] գտնում է, որ հիշյալ անձնանունների իրանական ծագումը հավաստելը խոսում է միայն իշխողների՝ իրանական անուններ կրելու, բայց դեռևս ոչ կիմերների և նրանց լեզվի իրանական ծագման մասին։ Ի. Մ. Դյակոնովը [Дьяконов, 1956, 241] կիմերներին համարում է իրանական ժողովուրդ, բայց VII դ. ենթարկված փոքրասիական նշանակալից ազդեցության։ Նա, միաժամանակ, բավարար հիմքեր չի տեսնում կիմերներին ծագմամբ թրակացիների հետ կապելու համար։

2) Նախկինում առաջ քաշվել և վերջին ժամանակներում վերարծարծվել է կիմերների թրակյան ծագման վարկածը։ Այն պաշտպանողները (հատկապես О. Ն. Տրուբաչովը) բերում են երեք կարգի ապացույցներ՝ պատմական, աշխարհագրական և լեզվական [Трубачев 1975, 41-42. 1976, 40-41]։ Պատմական առումով կարևոր է համարվում անտիկ աշխարհի ավանդույթը կիմերների և թրակացի-տրերների կապի մասին[11]։ Աշխարհագրական առումով նշվում է կիմերների՝ ասիական Բոսպորում գտնվելու և սինդերից ու մեոտներից բնականորեն սահմանազատված լինելու փաստը, որ խանգարում է կիմերների իրանական ծագման վարկածին։ Վերջապես լեզվական առումով նշվում է հատկապես նրանց ինքնանվանումը թրակյան լեզվական նյութի հիման վրա բացատրելու հնարավորությունը (ըստ Տրուբաչովի՝ Κιμμέριοι < թրակ. *kir(s)-mar-jo- «սևծովյաններ»)[12], այլև պահպանված միակ հատուկ անվան (գլոսայի)՝ ἄργιλλαι բառի, անհերքելի բալկանյան՝ մակեդոնա-թրակյան բնույթը[13]։ Ի միջի այլոց նշենք, որ Լ. Զգուստան հյուսիսսևծովյան անձնանուններին նվիրված իր աշխատության մեջ [Zgusta, 1955] մեկ տասնյակից ավելի անձնանունների համար ենթադրում է կիմերական աղբյուր, թեև կասկածով (այդ անձնանունները կրող այլ էթնիկական տարր այս վայրերում նա չի գտնում)՝ Σαλα, Σειταλκης, Σευθη, Σισος, Σκιλουρος, Ταρουλας, Χαλαις, Ανοπτηνις, Δροβολους, Σκοζος (այս անձնանունը Մարկվարտը կապում է սկյութների անվան հետ, որ Ֆասմերը ժխտում է)։

---

[8] Մ. Ֆասմերը [Vasmer, 1923, 5] նշում է երկու ընդունելի զուգահեռ՝ հ. հնդկ. candrá «լուսավոր» կամ čànta- «հանգիստ» (իրան. *sānta-) բառերի իրանական հնարավոր համարժեքները՝ ճիշտ չհամարելով Լեման-Հաուպտի վերականգնած zantu-γšaθrya՝ zantav- «երկրամաս, մարզ» [հմմտ. Lehmann-Haupt, Kimmerier, PREA, 21, 1] և Մարկվարտի վերականգնած s(p)əntaxšaθra- [Marquart, 1896] ձևերը (p-ի անկում ենթադրելը այդքան վաղ շրջանի համար կասկածելի է համարում)։ Teušpâ-ի հիշյալ մեկնությունն էլ նա կեղծ է համարում՝ նշելով, որ č-ն t-ով կարող է արտահայտվել հունարենում, բայց ոչ ասուրերենում, որտեղ այն կարտահայտվեր š-ով։

[9] Գ. Շրամը [Schramm 1973] նշում է, առանց հարաբերությունը ճշտելու, սևծովյան Σανδαρξαιου (սեռ. հ.) անձնանունը՝ անհավանական համարելով ավեստ. sand- «կատարել» բայի հետ Լ. Զգուստայի [Zgusta, 1955, 203] կատարած համեմատությունը։

[10] Յ. Մարկվարտը այն մեկնում է ինչպես իրան. Duγδamaēši- «կթողխարավոր, կթվող ոչխար ունեցող» (հմմտ. ավեստ. Dauramaēši «գեր ոչխար ունեցող»)։ Լեման-Հաուպտը նշում է այս անունը կրող երեք անձ՝ Նաքսոսից, Հնոսոսից և Սիրակուզայից։ Մ. Ֆասմերը բերում [illegible] հիշած Λυγδαμις տեղանունը (Մեծ Ասիայում)։ Վ. Ի. Աբաևը [Абаев, 1963, 136] մեկնում է օս. tux-domäg «ուժով սանձող» բառով՝ միաժամանակ բերելով Յ. Հարմատայի կարծիքը կիմերների իշխող խավի իրանական ծագման մասին [Harmatta, 1946—1948, 131]։

[11] Ի. Մ. Դյակոնովը [Дьяконов, 1956, 234] Ստրաբոնի այս տեղեկությունը համարում է անբավարար իրազեկության արդյունք։

[12] Տրուբաչովը այս դեպքում հաշվի չի առնում հետևյալը. 1) թրակերենին ևս հատուկ է բաղաձայնների տեղաշարժը, և հ.-ե. *k ից ծագող թրակյան kh-ն կարող էր նշանակվել հուն. χ-ով, որովհետև նախ՝ շնչեղությունը հունականից ավելի թույլ էր, և երկրորդ՝ մ. թ. ա. III դ. հուն. φ, θ, χ-ն արդեն շփականացել էին [հմմտ. Detschew, 1960, 149]. 2) կիմերների անվան k-ն այլուր արտահայտված է նաև g-ով, որ ցույց է տալիս k-ի kh հնչված լինելու վարկածի անհավանականությունը. 3) հ.-ե. *kers-ը այլուր ներկայացված է ոչ թե kirs-, այլ kris- ձևով. հմմտ. Κρισος գետանունը, որտեղ k-ն տրված է κ-ով և ոչ χ-ով, որովհետև գտնվում է այլ բաղաձայնից առաջ [հմմտ. Detschew, 1956, 150]։

[13] Տրուբաչովը [Трубачев, 1976 40, ծան. 1] նշում է միայն Հեսիքիոսի ἄργελλα. οἴκημα μακεδονικόν («մակեդոնական բնակարան»), ալբ. ragal(ë) «խրճիթ» և ռում. argea [illegible], զետնափոր տուն» զուգահեռները։

3) Վերջապես, գերմանացի գիտնական Գ. Շրամը [Schramm, 1973] հանդես է եկել այն յուրահատուկ տեսակետով, որ կիմերերենը մոտ է հին հայերենին և նույնիսկ նրա վաղ նախավիճակն է։ Շրամը փաստորեն հենվում է միայն աշխարհագրական սակավաթիվ հատուկ անունների մեկնության վրա՝ ենթադրելով դրանց մեջ բաղաձայնների այնպիսի տեղաշարժ, ինչպիսին տեղի է ունեցել հայերենում։ Ըստ Օ. Տրուբաչովի՝ Շրամն ունի կիմերների գրաղեցրած տարածության վերաբերյալ ոչ հստակ պատկերացում, խիստ ընդլայնում է կիմերների տարածման շրջանը և ընդգրկում աշխարհագրական այնպիսի անուններ, որոնք պատկանում են էթնիկական այլ միջավայրերի։ Գ. Շրամը Դոնի հին Τανάϊς և Կուբանի հին Ὕπανις[14] անունները վերագրում է կիմերների լեզվին և նրանց մեջ տեսնում բաղաձայնների տեղաշարժ՝ *Kūbhāni- > *Kūbāni- > K(h)upani- և *Dānou̯i- (*Dānau̯i-) > Tanau̯i-։ Հատկանշական է, որ Շրամը կիմերերենի մնացորդները հայերենով ստուգաբանելու ոչ մի փորձ չի անում և նկատի չի առնում, որ բաղաձայնների տեղաշարժը հատուկ է ոչ միայն հայերենին[15]։ Հայերենի՝ թրակերենից ծագելու հնարավորության մասին ավելի վաղ խոսել է Է. Կավենյակը [Cavaignac, 1963, 47—54]։

Ի՞նչ կարելի է ասել կիմերների լեզվի մասին եղած տվյալների համադրության հիման վրա։

1) Եղած տվյալները ակնհայտորեն անբավարար են կիմերների մասին քիչ թե շատ վստահելի եզրակացություններ անելու համար։ Հին հեղինակները աղոտ գաղափար են ունեցել կիմերների լեզվի, էթնիկական կազմի ու աշխարհագրական տեղադրման մասին, և նրանց տեղեկությունները կարելի է ընդունել միայն վերապահորեն, մանավանդ որ կիմերները շփոթվել են մերթ տրերների (թրակյան ցեղ), մերթ սկյութների հետ։ Պետք է կարծել, որ նախ՝ սկզբնապես կիմերները հյուսիսածովյան վայրերի հիմնական բնակիչները չեն եղել, երկրորդ՝ դաշնակից են եղել թրակյան տրերներին կամ ընդհանրապես ներկայացրել են տարալեզու ցեղախումբ, երրորդ՝ անկախ էթնիկական կազմից, ունեցել են, բացի բուն կիմերական անձնանուններից, նաև այլ ծագման անձնանուններ։ Կարելի է նույնիսկ ենթադրել, որ կիմերների մի հատված (տրերնե՞րը) շարժվել է Առաջավոր Ասիա՝ Ստրաբոնի, իսկ բուն զանգվածը՝ հիմնականում Հերոդոտոսի նշած ուղիով, ընդ որում հետագայում նրանք արևմուտքում կարող էին վերամիավորվել պատերազմական գործողությունների ժամանակ։ Կիմերների՝ Մանայում գտնվելու փաստը խոսում է նույնիսկ նրանց շարժման երրորդ ուղու՝ այժմյան Ադրբեջանի տերիտորիայով հարավ շարժվելու հնարավորության մասին։ Ստրաբոնի կողմից որպես տրերների առաջնորդի անուն հիշատակված Κώβος-ը իրոք բուն թրակյան անձնանուն է և չի կարող մտցվել բուն կիմերական անձնանունների շարքը։

2) Եթե մի կողմ թողնենք Sandakšatru անձնանվան Sandakkurru և այլ ընթերցումները, որոնք քիչ հավանական են, ապա կարելի է ասել, որ ավելի համոզիչ է պահպանված կիմերական անձնանունների մեծ մասի արիական (հնդիրանական) մեկնությունը. Sandakšatru-ն և Teušpā-ն, թերևս նաև Dugdamīš-ը կարող են գոհացուցիչ կերպով բացատրվել հնդիրանական հողի վրա։ Եթե դրանք չեն խոսում կիմերների արիական ծագման մասին, ապա գոնե վկայում են նրանց՝ հնդիրանական ծագման վերնախավ ունենալու փաստը։ Մինչդեռ կիմերների մնացորդները ամբողջապես թրակյան հողի վրա բացատրելու փորձերը առայժմ արդյունավետ չեն։ Ճիշտ Sanda-ի համար կարելի է նշել թրակյան որոշակի զուգահեռներ, բայց նախ՝ դրանք ակնհայտորեն փոքրասիական բնույթի են (հմմտ. թրակ. Σάνδανος գետանունը, որի համար Դ. Դեչևը նշում է լիդ. Σανδανις և կիլիկ. Σανδακος անձնանունները, լիդ. Σανδαινα տեղանունը, կար. Sandalion կղզանունը, այլև թրակ. Σανταβιν[illegible] անձնանունը և հունականացված Ξανδ(ι)οι ցեղանունը) [Detschew, 1957, 420], երկրորդ՝ բոլոր դեպքերում Sanda(a)-ն չի կարելի կտրել -kšatru-ից, և եթե վերջինս ճիշտ է ընթերցվում, ապա Sanda(a)-ն նույնպես պետք է բացատրել հնդիրանական հողի վրա։ Կիմերների էթնիկական անվան թրակյան մեկնությունը քիչ է համոզիչ, իսկ ἄργιλλαι-ի զուտ թրակյան բնույթ ունենալու տեսակետը կասկածելի է։

Պետք է հատկապես նշել կիմերական լեզվական մնացորդներից մի քանիսի պարզ մերձավորությունը հին հնդկական բառերին, մանավանդ եթե բացառենք սինդերի հնդկական ծագման վարկածը [Kretschmer, 1943, 35—49; Трубачев, 1976, 44—63]. ա) կիմեր. ἄργιλλαι և հ. հնդկ. argala-, -ā զուգահեռի առկայությունը, որի համար առայժմ հայտնի չէ իրանական զուգահեռ. բ) Sandakšatru-ի kšatru բաղադրիչի՝ հնդկականին ավելի մոտ ձևը. հմմտ. հ. հնդկ. kṣatram «իշխանություն, զորություն»՝ ավեստ. xšaθram, հ. պարսկ. xšaçam ձևերի դիմաց. այս դեպքում Sanda-ի համար ևս կարելի է նշել հ. հնդկ. ծագում. հմմտ. Śaṇda և Śāṇda անձնանունները, այլև śanta- «հանգիստ, անխռով» և shaṇdha «ներքինի» բառերը. գ) Dugdamīš անունը, հատկապես նրա dugda- բաղադրիչը հին հնդկերենով բացատրելու հնարավորությունը. հմմտ. հ. հնդկ. dugdhá- «կթված»։ Սրանց հակառակ՝ որոշակի հնդկական զուգահեռներ չունեն կիմերների անունը և Teušpā-ն։ Վերջինս ավելի զուտ իրանական կերպարանք ունի։

Հմմտ. նաև թրակ. Ἄργιλος քաղաքանունը, որ Ἀργιας անձնանվան և Αργι-δαυα տեղանվան Αργι- բաղադրիչի հետ միասին Դ. Դեչևը [Detscew, 1957, 23] բխեցնում է հ.-ե. *ar(e)k- «փակել» արմատից՝ համեմատելով լատ. arx «ամրոց», arceō «փակել, նեղփակել», հայ. արգել բառերի հետ։ Նա դժվար բացատրելի է համարում միայն *k-ի դիմաց թրակ. γ-ի առկայությունը։ Սակայն կա նաև *ar(e)g- զուգահեռ արմատը (Pok., 64), որից բխեցված են մակեդ., ալբ. (<մակեդ.) ու կիմերական հիշյալ բառերը, և որից թերևս ծագում է թրակյան արմատը։ Կիմերների անվան տրուբաչովյան մեկնության դեպքում մնում է Temarunda բառի կիմերյան (այլև խեթյան, իրանական) ծագումը, եթե վերջինս կազմված է tem- «մութ սև» + arun- «ծով» (հմմտ. խեթ. aruna-) + -d(h)a < *dhe- «դնել (կրծքով), կաթ տալ, ծծեցնել» բաղադրիչներից) (ըստ Պլինիոսի Temarunda-ն սկյութների լեզվով նշանակում է matrem maris «մայր ծովի»)։

[14] Այս անվանումը միջին դարերում հանդիպում է Cuphis, Κωφῖνα (հայց. հ.), Κωφῆς ձևերով և համեմատվում է Քաբուլ գետի հին Κώφης. Κωφῆν անվան հետ։

[15] Գրքի վերջում Շրամը, որպես հիմնադրույթ, գրում է. «X լեզվի, այն է՝ ենթադրվող կիմերերենի համար արտացոլված հնչյունական հատկանիշները լրիվին համապատասխանում են նաև հայերենին։ Միակ շեղումը՝ հայ. K'-ի և Ὕπανις-ի նախաձայն h-ի համապատասխանության անճշտությունը կարող է հույների կամ կարերի մեղքը համարվել, որոնք Կուբանի անունը փոխ են առել։ Նաև պատմական տվյալների համաձայն լրիվին հավանական է, որ մ. թ. ա. VIII դարում Սև ծովի հյուսիսային ափերից Առաջավոր Ասիա քշված կիմերները, որոնց հետքերը մ. թ. ա. շուրջ 600 թ. կորչում են, և հայերը, որոնք հենց նույն ժամանակ կործանվող կամ մեդացիների կողմից նվաճված ուրարտական պետությունը ներխուժեցին, միևնույն ժողովուրդն են»։

3) Կիմերների լեզվի մնացորդների համեմատությունը հայերենի հետ առայժմ քիչ արդյունավետ է. հավանական թվացող զուգահեռները մասամբ բուն կիմերական կամ բուն հայկական չեն, մասամբ կասկածելի են, մասամբ հավասարապես կարող են մեկնաբանվել ոչ հայկական զուգահեռներով[16]: Այսպես, կիմեր. ἄργιλλα «ստորգետնյա բնակարան» բառը հավասար հավանականությամբ կարող է համեմատվել ինչպես հայ. արգել բառի[17], այնպես էլ թրակյան Ἄργιλος, մակեդոնական ἄργελλα, ալբանական ragal(ë) համիմաստ բառերի հետ. առաջին դեպքում այն կլինի հ.-ե. *ar(e)k-ից՝ հայերենին հատուկ rk>րգ հնչյունափոխությամբ, երկրորդ դեպքում՝ հ.-ե. *ar(e)g-ից: Եթե կիմերերենը իրոք արիական լեզու է, ապա հավանական է երկրորդ ենթադրությունը, և կիմեր. ἄργιλλα-ն կարելի է համեմատել նույն արմատից ծագող հ. հնդկ. argala-, argalā «սողնակ, պարգունակ, նիգ» բառի հետ, որ թերևս կարող էր ունենալ իրան. զուգահեռ ձև՝ շեղված իմաստով: Քիչ հավանական են ինչպես կիմերների անվան համեմատությունը հայ. կիմիր-ական բառի հետ (երկնքի յոթ գոտիներից մեկը՝ ըստ Ա. Շիրակացու), այնպես էլ Sandakšatru-ի Sandakkurru ընթերցմամբ այն կապելը հայ շանդ, շանթ և կուռ (կռել, կուռ-ք), կուր (=կեր), կուռն բառերի հետ. շանդ-ի հոլովումը ցույց է տալիս -i-ով և ոչ -a-ով հիմք. նշենք, որ կուռ-ը Հ. Աճառյանը համարում է ուրարտական փոխառություն, իսկ կուր-ը և թերևս կուռն-ը բնիկ հնդեվրոպական են (*gʷrō- >կուր, *gur-no->կուռն): Կարելի է կարծել, որ Կուբանի անվան բաղաձայնական տեղաշարժի ենթարկված Ὕπανις ձևում սպասված kh-ի դիմաց h-ի առկայությունը ոչ թե հույների կամ կարերի մեղքն է, ինչպես ենթադրում է Շրամը, այլ թերևս հայերեն ճուպ (հմմտ. բրբռ. ճուպ տալ, ճուպ անել և այլն) արմատի հետ բաղարկման ենթարկվելու արդյունք. սակայն այս ենթադրությունը խախտվում է, երբ նկատի ենք առնում, որ բաղաձայնների նման տեղաշարժի ենթարկվել է նաև թրակերենը, որ սրան վերագրող Ὕπ(π)ιος գետանվան արմատը բխեցվում է նույն *ub- արմատից, ինչ հայերեն ճուպ-ը, և որ այն հավասարապես կարող էր հիմք տալ համատիպ բաղարկման համար: Teušpā անունը կարող էր մեկնաբանվել հայերենի հնչյունական օրենքներով ինչպես «աստվածապահ»՝ Teus-<հ.-ե. *diu̯os *(diēu̯s «աստված» բառի սեռականը) և -pā->*pā «պահել, սնել, արածացնել», սակայն նման մեկնություն հնարավոր է նաև թրակերենի հողի վրա (առաջին բաղադրիչի համար հմմտ. թրակյան հունականացված Διος- բաղադրիչների կողքին տեղաշարժի ենթարկված τια- և Tius ձևերը): Հատկանշական է, որ Լ. Զգուստայի կողմից որպես կիմերական առանձնացված հիշյալ տասնմեկ անձնանուններից ոչ մեկը հավաստի հայկական զուգահեռ չունի: Կիմերների «հայկականության» վարկածի դեմ է խոսում նաև այն փաստը, որ կիմերական Dugdamī- (Λυγδαμις) անձնանունը ընդհանրապես հայկական կերպարանք չունի. ինչպես ցույց է տրված մեր «Հնդեվրոպական բաղաձայնների խմբերի արտացոլումը» հոդվածում (ՀԱ, 1976), հայերենը չէր կարող այդ շրջանում ունենալ պայթական բաղաձայնով վերջացող վանկ, մանավանդ որ u-ից հետո հայերենում տեղի է ունենում լրացուցիչ քմայնացում՝ *gh>ձ, *g>ծ, *k>ս հետագա անցումներով. հմմտ. օրինակ *dhugəter>*dhukter> դուստր:

Հետաքրքրական է նշել, որ աստվածաշնչում՝ Եզեկիելի մարգարեության մեջ, որի գրվելու ժամանակը դնում են մ. թ. ա. 593—571 թթ. միջև, Գոմերը (=կիմերներ) և Թորգաման (=հայերը) հիշատակվում են տարբերակված՝ առանձին: Այսպես էլ Դարեհ I-ի Բեհիսթունյան արձանագրության մեջ (մ. թ. ա. 522—521 թթ. դեպքերի նկարագրությունը) կիմերները (որոնց անվան տակ այդ ժամանակ նկատի են առնվում սկյութները) և արմենները (Արմինա—Ուրարտու, Ուրաշտու) նշվում են իրարից անկախ:

Այսուամենայնիվ, հայերի և կիմերների փոխհարաբերության հարցի քննությունը չի կարելի սրանով սպառված համարել: Շրամի վարկածը անընդունելի համարելով հանդերձ՝ չի կարելի մոռանալ, որ կիմերները, հավանաբար հանդես եկած լինելով որպես հայ ժողովրդի բաղադրատարր, պետք է զգալի հետքեր թողած լինեն հայերենի և հայկական հատուկ անունների մեջ:

դ) ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՍԿՅՈՒԹԵՐԵՆԸ

Ի տարբերություն կիմերների, որոնց լեզվական պատկանելության հարցը դեռևս լիովին պարզված համարել չի կարելի, սկյութների լեզվի իրանական բնույթը կասկած չի հարուցում: Սկյութները սակյան ցեղեր են և խոսել են հյուսիս-արևելյան իրանական բարբառով: Նրանց հետ ցեղակցորեն մերձավոր են եղել սկյութների հարևանությամբ նույնպես հյուսիսսևծովյան վայրերում բնակություն հաստատած սարմատները (սավրոմատները), այլև Կասպից ծովից արևելք՝ այժմյան Թուրքմենիայի տերիտորիայում բնակված դահերը և սրանցից ավելի արևելք գտնված մասագետները: Սկյութների հաջորդներն են համարվում Խորենացու հիշատակած ալանները և հետագայում՝ օսերը: Կասպից ծովից արևելք տարածված սակյան ցեղերի հետնորդներին է պատկանել միջին շրջանի իրանական գրավոր լեզուներից մեկը՝ խոտանասակերենը, որի գրավոր հուշարձանները հայտնագործված են XX դ. սկզբին Չինական Թուրքեստանում՝ թոխարական տեքստերի հետ միաժամանակ և վերաբերում են մ. թ. VII—X դդ.: Սկյութերենից գրավոր կապակցված տեքստեր չկան: Սկյութերենը հայտնի է գերազանցապես անտիկ հեղինակների պահպանած զգալի քանակությամբ սկյութա-սարմատական անձնանուններից, տեղանուններից, ցեղանուններից և փոքրաթիվ հասարակ անուններից: Հարկավոր է նշել, որ սկյութների անվան տակ թաքնված են նաև ոչ սկյութական ցեղեր, և ստորև բերվող լեզվական տեղեկությունները փոքր-ինչ ավելի լայն բնույթ պետք է կրած լինեն: Այսուհանդերձ բոլոր դեպքերում էլ խոսքը վերաբերում է Միջին Ասիայից արևմուտք շարժված և հյուսիս-արևելյան իրանական բնույթ ունեցող այն ցեղերի լեզվին, որոնք հանդես են եկել մասնավորապես սկյութների և սարմատների անվան տակ:

Սկյութների վերաբերյալ մատենագրական տեղեկությունները, այլև հնագիտական տվյալները վերաբերում են նրանց մ. թ. ա. VIII—VII դդ. մինչև մ. թ. IV—V դդ. պատմությանը: Ինչպես տեսանք կիմերների վերաբերյալ

---

[16] Հետաքրքրական է նշել, որ Ստեփանոս Բյուզանդացին (ինչպես և Եվստաթիոսը) Պանտիկապեոնը (Παντικάπαιον) հիմնադրված է համարում ոչ թե միլետացիների (ինչպես նշում են Ստրաբոնը, Պլինիոսը, Ամմիանոսը), այլ կողքերի թագավոր Այետոսի (Αἰήτης) որդու կողմից:

[17] Ի միջի այլոց, այս բառն ունի նաև «բանտ» իմաստը, որ մոտ է կիմերականին, և նրա մեջ -ել-ը մասնիկ է [հմմտ. բրբռ. բէարգ բառը. Աճառյան, ՀԱԲ, I², 304]:

հատվածից, ըստ Հերոդոտոսի՝ կիմերները մ. թ. ա. VIII դ. վերջերին հարավ են շարժվել հյուսիսսևծովյան վայրերից՝ այդ ժամանակ Հյուսիսային Կովկասում բնակվող սկյութների ճնշման տակ։ Որոշ ժամանակ անց Դերբենդի կիրճով անցել, այժմյան Ադրբեջանի տերիտորիայով դեպի հարավ շարժվել, այստեղ հիմնավորվել և Առաջավոր Ասիայի զանազան վայրերը ասպատակել են սկսել նաև իրենք՝ սկյութները։ Սկյութների վերաբերյալ առաջին վավերական տեղեկությունները Ասորեստանի թագավոր Ասարհադդոնի ժամանակներից են՝ մ. թ. ա. VII դ. 70-ական թվականներից, ընդ որում սկյութները ասորեստանյան աղբյուրներում հիշատակվում են ašguzâi (asguzâi) *ձևով (հմմտ. նաև բաբելերեն* iškuzâi *և եբրայերեն* aškūz՝ u-*ի երկրորդական երկարացումով)* [Дьяконов, 1956, 242, *ծան. 1]։ Իշպակայայի առաջնորդությամբ և Մաննա երկրի բուն բնակիչների դաշնակցությամբ նրանք հանդես են եկել Ասորեստանի դեմ։ Մ. թ. ա. VII դ. կեսերին ընդհարվելով կիմերների հետ և պարտության մատնելով նրանց՝ սկյութները Առաջավոր Ասիայում դառնում են հզոր ռազմա-քաղաքական ուժ, որ վտանգ է սպառնում այլ երկրների գոյությանը. նրանք ներխուժում են Ասորիք և Պաղեստին, հասնում մինչև Եգիպտոսի սահմանները։*

Իրենց բնակության հիմնական վայրերում շփման մեջ մտնելով իրանալեզու՝ հյուսիս-արևմտյան բարբառով խոսող և լեզվով այն ժամանակ սկյութերենին բավականին մոտ (նրանց համար հասկանալի) մեդերի (մարերի) հետ՝ սկյութները երկար ժամանակ հանդես են գալիս նրանց հետ յուրատեսակ դաշնակցության մեջ, որտեղ առաջնություն են ձեռք բերում մերթ առաջինները և մերթ երկրորդները։ Ըստ Հերոդոտոսի՝ սկյութները 28 տարի (հավանաբար մ. թ. ա. 652—625 թթ.) բացարձակ գերակշռություն են ստանում։ Մ. թ. ա. VII դ. վերջերին Մեդիայի (Մարաստանի) և Բաբելոնի հարվածների տակ Ասորեստանի կործանվելուց հետո էլ սկյութները դեռ երկար ժամանակ շարունակում են քաղաքական նշանակալից ուժ ներկայացնել, որ երևում է աստվածաշնչի վկայությունից (Երեմիայի՝ մ. թ. ա. 593 թ. վերագրվող հատվածից)։

Հավանաբար Մեդիայի և նրա կազմում գտնվող սկյութների հարվածների տակ է կործանվել ուրարտական պետությունը։ Ավելի ուշ սկյութները այլևս այս վայրերում չեն հիշատակվում՝ գտնվելով հավանաբար Մեդիայի բացահայտ գերիշխանության տակ։

Ընդհակառակը, հյուսիսսևծովյան վայրերում սկյութները շարունակում են երկար ժամանակ քաղաքական նշանակալից ուժ ներկայացնել։ Մեդիան նվաճած և առաջնություն ստացած պարսիկները Դարեհի առաջնորդությամբ մ. թ. ա. 513 թ. ներխուժում են Սկյութիայի սահմանները Դանուբից հյուսիս, բայց, ապարդյուն կերպով փորձելով իրենց ենթարկել սկյութներին, ստիպված են լինում ետ քաշվել։ Այդ ժամանակ սկյութները անցում էին կատարում նախնադարյան համայնական կարգերից դեպի դասակարգային հասարակություն, և սկյութական առաջնորդների իշխանությունը ժառանգական էր։ Աստիճանաբար ցեղային միություն է կազմվում, և մ. թ. ա. IV դ. կեսերին տեղի է ունենում սկյութների միավորումը մեկ պետության մեջ։ Այս միավորված սկյութներն էլ մ. թ. ա. 339 թ. Ատեասի (Ἀτέας=(H)atya-) *գլխավորությամբ կռվել են Փիլիպպոս Մակեդոնացու դեմ և պարտություն կրել։ Այդ ժամանակներից էլ հավանաբար սկսվում է սկյութական պետության գոյությունը մերձդնեպրյան և մերձազովյան տափաստաններում։ Մ. թ. ա. III և II դարերի սահմանում իրանական մի ուրիշ ցեղախմբի՝ սարմատների ճնշման տակ սկյութներն իրենց մայրաքաղաքը, որ առաջ գտնվում էր Դնեպրի ստորին հոսանքի շրջանում, տեղափոխում են Ղրիմ։ Սկյութների հետագա առաջխաղացումը դեպի հունական քաղաքները կանգնեցվում է Պոնտական պետության կողմից։ Իր նեղ սահմաններում սկյութական պետությունը հարատևում է մինչև մ. թ. III դ.։*

Լինելով ուրարտական պետության ժողովուրդներից մեկը՝ հայերը պետք է շփման մեջ մտած լինեին սկյութների հետ։ Եթե ճիշտ է Գ. Ղափանցյանի և Բ. Պիոտրովսկու կարծիքը սկյութական թագավոր Պարտատուայի (Պրոտոթյուես) և, ըստ Խորենացու Նինվեի կործանմանը մասնակցած Պարույրի անունների կապի մասին, ապա այն խոսում է հայերի և սկյութների միջև հնագույն մերձավոր առնչությունների առկայության օգտին։ Այս է՛լ ավելի հետաքրքրական կլինի, եթե նկատի ունենանք, որ Պարույրը համարվում է Սկայորդու հաջորդը, և որ վերջինիս անունը սովորաբար կապում են սակերի, իսկ մենք՝ թրակյան ցեղերից մեկի՝ սկայների անվան հետ. սկյութների մեջ թրակյան ցեղերի առկայությունը անհնար չէ։

Հայ և օտար աղբյուրները բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում հայերի և ալան-օսերի հետագա հարաբերությունների մասին։ Հայտնի է, որ մ. թ. ա. II դարում Արտաշես I-ի ժամանակ ալանները որոշ ժամանակ գտնվել են հայերի գերիշխանության տակ և երբեմն-երբեմն ապստամբել։ Հետագայում, հատկապես հայ Արշակունիների օրոք, հայերը հաճախակի են ենթարկվել ալանների արշավանքներին և պատերազմներ մղել նրանց դեմ։ Այդ պատերազմներից մեկը արձագանք է գտել «Արտաշես և Սաթենիկ» վիպական շարքի՝ մեր կողմից արդեն բերված այն հատվածներում, որ մեզ ավանդել է Մովսես Խորենացին. ըստ այդ հատվածների՝ պատերազմի ժամանակ հայերի ձեռքը գերի է ընկնում ալանների թագավորի որդին, և վերջինիս քույրը՝ արքայադուստր Սաթենիկը, հայերի զորքը ալաններից բաժանող գետի մյուս ափից դիմում է Արտաշեսին՝ խնդրելով վերադարձնելու իր եղբորը։ Սաթենիկը դուր է գալիս Արտաշեսին, և քանի որ ըստ ալանների սովորույթի Սաթենիկին կին վերցնելու համար հարկավոր էր մեծ գումար վճարել, Արտաշեսը որոշում է Սաթենիկին առևանգել։ Ամեն ինչ վերջանում է Արտաշեսի և Սաթենիկի ամուսնությամբ։ Հետազոտողները հակված են կարծելու, որ այստեղ խառնված են տարբեր ժամանակների դեպքեր, և խոսքը վերաբերում է Տրդատ առաջինի թագավորության շրջանին. ինչպես հայտնի է մ. թ. 72—74 թթ. հայերը պատերազմներ են մղել հյուսիսից ներխուժած ալանների և նրանց ցեղակիցների դեմ։

Հայ մատենագրության մեջ հաճախ է հիշատակվում մերձկասպյան շրջանում գոյություն ունեցող մազքութների թագավորությունը, որտեղ նույնպես իշխում էին պարթև Արշակունիները։ Իրանական պարթևական ծագում է վերագրվում Բաղասական երկրում բնակություն հաստատած ապարհացիներին, որոնց մի հատվածը մ. թ. I դարում հաստատվում է Ապա(ր)հունիքում՝ տալով վերջինիս իր անունը [հմմտ. Еремян, *1967, 56. ՀԺՊ, 1, 713]։*

Հայերենի և սկյութերենի լեզվական առնչություններն ուսումնասիրելիս կարելի է դիմել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի տվյալների։

Ուղղակի տվյալները սկյութերենի լեզվական այն մնացորդներն են, ո-

րոնք ունեն հայերեն համապատասխան զուգահեռներ։ Այս դեպքում պետք է նկատի առնել նախ՝ սկյութական անունների հունական ու ոչ հունական տառադարձումների բուն հնչման վերականգնման պայմանականությունը, երկրորդ՝ հին շրջանի իրանական լեզուների մերձավորության մեծ աստիճանը, և սրա հետ կապված՝ շատ բառերի սկյութական, թե ոչ սկյութական լինելը որոշելու, սկյութական բառերի սկզբնական ճշգրիտ ձևերն ու իմաստները վերականգնելու դժվարությունները։

Անուղղակի աղբյուրները երեք կարգի են.

1) Հայերենի իրանական այն բաղադրիչների առանձնացումը, որոնք արևելա-իրանական հնչյունական առանձնահատկություններ ունեն՝ c, j սուլական կիսաշփականների առկայությունը՝ համապատասխան č, ǰ շշականների փոխարեն (եթե այդ տարբերությունը կար սկյութական շրջանում), բառասկզբի h-ի անկումը (բացի hi, hu, hv կապակցություններից, որոնց մեջ h-ն փոխվում է x-ի), արևելա-իրանական լեզուներին հատուկ բառասկզբնային b, d, g-ի β (v, w), δ, γ արտացոլումը, որ, սակայն, այս դեպքում հնարավոր չէ ստուգել սկյութերենի եղած տվյալներով, որովհետև բաղաձայնական այդ երկու կարգերը հունարեն պետք է արտահայտվեին միատեսակ՝ β, δ, γ-ով [Абаев, 1949, 209. ОИЯ, 1, 329]. հայերենը, δ, γ չունենալով, դրանք բառասկզբում պիտի արտահայտեր d, g-ով (բառամիջում δ-ն՝ r-ով), իսկ β-ն կարող էր արտահայտել v-ով, որ հետագայում (եթե v>g անցումը տեղի է ունեցել մ. թ. ա.VIII—VI դդ. հետո. հմմտ. ուրարտ. Uelikuni >հայ. Գեղարքունի) պիտի փոխվեր g-ի, սակայն սկյութ. β—հայ. g̑ համապատասխանություն չի նկատվում, հյուսիս-արևելյան բարբառախմբին հատուկ երևույթներից պիտի հիշատակել նաև եռաձայնավորային d-ի և բառասկզբի dv-ի պահպանումը, -t- տարրով հոգնակին. նշենք նաև, որ սկյութերենում արդեն նկատվում են օսերենին հատուկ p, t, k>b, d, g ձայնեղացումը միջին դիրքում (բայց ոչ հետևողականորեն), ti>c(i) անցումը և այլն։

2) Հայերենի այն բաղադրիչների առանձնացումը, որոնք ընդհանուր են օսերենին և իրանական բնույթ ունեն. այս դեպքում էլ հնարավոր է միջնորդված ուշ փոխառություն, և օսերենի նյութը ըստ հնարավորին պիտի ստուգել սկյութերենի նյութով, ընդ որում հարկավոր է նկատի առնել սկյութերենի զարգացման վաղ և ուշ շրջանների առկայությունը։

3) Հայերենի այն բաղադրիչների առանձնացումը, որոնք զուգահեռներ ունեն արևելյան, մասնավորապես հյուսիս-արևելյան լեզուներում և հատկապես խորեզմերենում ու սողդերենում, որոշ չափով նաև բելուջերենում [Baily, HbO, 1958. Герценберг, 1965]. այս դեպքում էլ, իհարկե, չի կարելի բոլոր դեպքերում խոսել հենց սկյութական համապատասխան իրակությունների գոյության մասին։

Սկյութերենին և հայերենին հատուկ հնչյունական զուգահեռ երևույթներից պետք է նշել հատկապես հետևյալները. 1) խուլերի ձայնեղացումը ձայնորդներից հետո, թեև սկյութերենում սա տարածվում է (ոչ հետևողականորեն) նաև այլ դիրքերի վրա, ինչպես հայերենի ուշ շրջանի բարբառներում. հմմտ. հ.-ե *pont->իրան. *pant-> սկյութ. pant-, fand- «ճանապարհ», հ.-ե. *art-, *r̥t-> իրան. art-> սկյութ. arta, arda «աստված» և հ.-ե. *anti > հայ. ընդ, հ.-ե. *art-, *r̥t-> հայ. արդար և այլն. 2) բաղաձայնահաջորդ ձայնորդի դրափոխությունը բաղաձայնից առաջ. հմմտ. հ.-ե. *put-

ro-> իրան. *puθra-> սկյութ. purθa և հ.-ե. *dhabh-ro-> հայ. դարբին և այլն. 3) բառասկզբի որոշ դիրքերում h-ի անկումը. հմմտ. հ.-ե. *septm̥ > իրան. hafta > սկյութ. avd և հայ. եւթն. 4) սկյութերենում ու մերձավոր լեզուներում n-ի առնմանումը հաջորդող s-ին և հայերենում n-ի անկումը s-ից առաջ. հմմտ. man-sag «մարդ-եղջերու» > Μασσαγέται և հ.-ե. *-ns (հգն. հայց. վերջավ.) > հայ. -ս։

Բուն սկյութա-հայկական բառային զուգադիպումները քիչ են և ոչ միշտ են խոսում սկյութական լեզվական ուղղակի ազդեցության մասին։

ե) ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՄԵԴԵՐԵՆԸ (ՄԱՐԵՐԵՆԸ)

Մեդերենը հայերենի հետ ամենից ավելի վաղ շփման մեջ մտած իրանական լեզուներից մեկն է, ընդ որում այդ շփումը բավական երկարատև է եղել։ Ինչպես նշել ենք, մեդերենը հյուսիս-արևմտյան իրանական լեզու է, որի ազդեցությունը հատկապես ուժեղ է եղել մեդական պետության գոյության շրջանում։

Մեդացիները սեպագիր արձանագրություններում հիշատակվում են մ. թ. ա. IX դարից սկսած (ma-dâi, amadâi, matâi)։ Նրանք բնակվելիս են եղել իրանական բարձրավանդակի հյուսիս-արևմտյան ու Ատրպատականի (այժմյան Ադրբեջանի) հարավային մասերում և զբաղվել են հիմնականում անասնապահությամբ (մանավանդ ձիաբուծությամբ) ու հողագործությամբ։ Մեդական ցեղամիության հիմքի վրա՝ մ. թ. ա. VII դ. սկիզբ է առնում մեդական թագավորությունը՝ Էկբատան մայրաքաղաքով (այժմյան Համադանի մոտ)։ Կիաքսար թագավորի ժամանակ մեդացիները բաբելացիների դաշնակցությամբ մ. թ. ա. 612 թ. գրավում են Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն և 605 թ. վերջնական հարված հասցնում Ասորեստանին։ Հնարավոր է, որ Ասորեստանի կործանմանը իրոք մասնակցած լինեն հայերը մեդացիների հետ միասին։ Մեդական թագավորությունը մեծ չափով ընդարձակում է իր սահմանները՝ հասնելով արևմուտքում մինչև Հալիս գետը։ Կիաքսարի որդի Աստիագը (Աժդահակ) արդեն պայքարի մեջ է մտնում մեդացիների նախկին դաշնակից բաբելացիների հետ։ VI դ. կեսերին Մեդիան (Մարաստանը) հաղթվում է իրանական մի այլ ժողովրդի՝ պարսիկների թագավոր Կյուրոսի կողմից և ընկնում Պարսկաստանի գերիշխանության տակ։

Մեդացիները իրենց լեզվով արձանագրություններ չեն թողել, և մեդերենի մասին մեր ունեցած տեղեկությունները խիստ կցկտուր են։ Բացի հատուկ անուններից, մեդական բառեր են պահպանվել հունական աղբյուրներում և հին պարսկական սեպագիր արձանագրություններում. վերջիններս թույլ են տալիս ասելու, որ հին պարսկերենում զգալի թիվ են կազմել մեդական փոխառությունները։ Մեդերենի՝ հին պարսկերենի վրա ունեցած ազդեցության հարցի մասին խոսել են շատերը, այդ թվում նաև Ա. Մեյեն իր «Հին պարսկերենի քերականության» մեջ [Meillet, 1931, 7—13]։ Եղած աղբյուրների հիման վրա մեդերենի վերականգնման փորձ է կատարել Մ. Մայրհոֆերը [Mayrhofer, 1968]։ Մեյեից ավելի վաղ Հ. Հյուբշմանը իր «Պարսկական ուսումնասիրություններ» աշխատության մեջ [Hübschmann, 1895, 231] մեդական աղբյուրից փոխառյալ է համարել հայ. բրինձ, գանձ, պղինձ բառերը, որոնց մեջ առկա է ձ՝ փոխանակ ջ-ի (հմմտ. նաև Գանձակ)՝ ն-ից հետո գտնվող դիրքում։

Հայերենի մեդական փոխառությունները հավաստիորեն առանձնացնելուն խանգարում է հատկապես երկու հանգամանք. 1) մեդերենը և պարթևերենը, զարգացման տարբեր փուլեր ներկայացնելով և բարբառային տարբերություններ ունենալով հանդերձ, ունեցել են ընդհանուր շատ գծեր. երկուսի էլ քիչ հայտնի լինելու պայմաններում մենք հաճախ չենք կարող բացարձակ ճշգրտությամբ ասել, թե հայերեն այս կամ այն բառի աղբյուրը դրանցից հատկապես ո՞րն է. 2) մեդերենը զգալի ազդեցություն է գործել հին պարսկերենի, պարթևերենի՝ միջին իրանական հարավային բարբառների վրա, մի հանգամանք, որ նույնպես դժվարացնում է փոխառությունների բուն աղբյուրների որոշումը [մեդերենի և պարսկերենի փոխհարաբերության մասին տե՛ս **Herzfeld**, 1934].

Մեդերենը հին պարսկերենի համեմատությամբ ունի մասնավորապես հետևյալ առանձնահատկությունները.

Հ.-ե.	Մեդերեն	Օրինակներ	Հին պարսկ.	Օրինակներ
*g'h	z	zūra- «բռնություն, զոռ» vazrka- «մեծ»	d	dān- «իմանալ» daraniya- «ոսկի»
*tr	θr	Miθra (Միհր) xšaθra- «իշխանություն» čiθra- «սերունդ»	ç	Miça (Միհր) xšaça «իշխանություն» čiça- «սերունդ»
*ti̯	θ(i)y	xsayaθiya- «թագավոր»	š(i)y	hašiya- «ճշմարտություն»
*k'	s	asā- «քար»	θ	aθa(n)ga- «քար» θah- «ասել»
*k'u̯	sp	spaka- «շուն» aspa- «ձի»	s	saka- «շուն» asa- «ձի»
*su̯	f	farna «փառք»	(x)uv	(x)uva- «ինքը»

Մեդերենի առանձնահատկությունների մի մասը ունի նաև պարթևերենը, որը, սակայն, որոշ դեպքերում հանդես է բերում ինքնուրույն գծեր. այսպես, եթե *g'h > z, *k' > s, *k'u̯ > sp անցումները հատուկ են նաև նրան, ապա մեդական θr-ի դիմաց պարթևերենը ավելի ուշ ունի θr > hr անցումը, θ-ի դիմաց՝ s, f-ի դիմաց (եթե տվյալները ճիշտ են)՝ xv, vx։

Միջին մեդերենը պետք է ավելի մոտ լիներ պարթևերենին։ Այսպես, Ա. Փերիխանյանը տալիս է միջին մեդերենի, պարթևերենի և միջին պարսկերենի հնչյունական փոխհարաբերության հետևյալ պատկերը.

Իրան.	-θr-	xv-	xš	sp-	-rz-	-rd-	-sy-	-d-	-f-
Մ. մեդ.	-hr-	f-	axš-	asp-, sp-	-rr-	-r(r)-	s-, -s(i)	-h-	-h-
Պարթ.	-hr-	vx	š-	isp-, sp-	-rz	-rd-	-sy-	-d-	-f-
Մ. պրսկ.	-s-	xv	š-	s-	-l- (<-rd-)	-l-	sy-	-y-	-f-

Ըստ այս աղյուսակի, հայերենը որոշ դեպքերում պետք է ավելի մոտ լիներ միջին մեդերենին, քան պարթևերենին. այսպես, իրան. xš խումբը միջին մեդերենում ներկայացված է axš-ով, պարթևերենում՝ š-ով (հմմտ.

աշխարհ, աշխէտ, թերևս նաև աշխատ, աշխար «ողբ, լաց», աշխարաւանդ խումբը միջին մեդերենում ներկայացված է f-ով, պարթևերենում՝ xv-ով (հմմտ. փառ-ք, այլև Փառէն, Փառներսեհ, Փառոխ, Փառնակ, Փառնաւազ, թերևս նաև Փառանձեմ) և այլն։

գ) ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՀԻՆ ՊԱՐՍԿԵՐԵՆԸ

Մեդական պետության դեմ Կյուրոսի տարած հաղթանակից հետո Պարսկաստանը դառնում է Առաջավոր Ասիայի ամենահզոր պետությունը, որի տիրապետությունը տարածվում է նաև Հայաստանի վրա։ Դարեհ I-ի ժամանակ հայկական լեռնաշխարհում կազմվել էին 13-րդ և 18-րդ սատրապությունները։ Պարսկաստանի Աքեմենյան թագավորների տիրապետությունը շարունակվում է մինչև Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Դարեհ III-ի ջախջախումը։

Աքեմենյան թագավորները թողել են սեպագիր արձանագրություններ, որոնք և գաղափար են տալիս հին պարսկերենի մասին։ Այդ լեզուն պատկանում է հարավ-արևմտյան իրանական բարբառներին։ Բացի իրանական արձանագրություններից, որոնց բառապաշարը շատ հարուստ չէ, հին պարսկերենի մասին գաղափար են տալիս նաև մի շարք կողմնակի աղբյուրներ։ Հատկապես մեծ նյութ է տալիս այն հատուկ անունների իրանական ձևերի վերականգնումը, որոնք պահպանվել են աքքադական, էլամական, ուրարտական և հունական աղբյուրներում [հմմտ. **Gershevitch**, 1969a, в. **Mayrhofer**, 1973. 1979. **Hinz**, 1973. 1975, հմմտ. նաև **Грантовский**, 1970]։

Լինելով Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ՝ հայերը, անշուշտ, պետք է ենթարկվեին նրա լեզվական ազդեցությանը։ Սակայն այդ ազդեցությունը շատ ուժեղ լինել չէր կարող, որովհետև այն էթնիկական մերձավոր շփման արդյունք չէր, այլ պետական ազդեցություն։ Բուն հին պարսկական ծագման բառերի առանձնացումը կապված է զգալի դժվարությունների հետ, եթե նկատի առնենք հին մեդերենի և հին պարսկերենի, ընդհանրապես հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան բարբառների փոխազդեցությունները, հին փոխառությունների վրա միջին շրջանի փոխառությունների մակաշերտումը, հին պարսկերենի քիչ հայտնի լինելը, հին իրանական շրջանից միջին իրանականին անցնելու ոչ կտրուկ բնույթը և այլն։

ե) ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՄԻՋԻՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

Միջին իրանական լեզուների հետ հայերենի շփումը շատ ավելի երկարատև է եղել, քան հին իրանական լեզուների հետ։ Եթե սրան գումարենք այն փաստերը, որ Հայաստանում երկար ժամանակ իշխել են իրանական ծագման թագավորներ, և որ հայկական կյանքում ընդհանրապես մեծ դեր է խաղացել իրանական տարրը, ապա պարզ կլիներ այդ ազդեցության չափը։ Մասնավորապես ուժեղ է եղել պարթևական ազդեցությունը։ Ոչ միայն Հայաստանում իշխել են ծագմամբ պարթև թագավորներ, այլև սասանյան տիրապետության շրջանում էլ շփումը Հայաստանի և Պարսկաստանի միջև հիմնականում իրականացել է հյուսիսային իրանական ճանապարհով. բուն միջին պարսկերեն բառերը կարող էին հայերենի մեջ թափանցել պետական պաշտոնյաների ու փաստաթղթերի միջոցով, պարթևերենում տարածված միջին պարսկական փոխառությունների միջնորդությամբ, հայ գրի ստեղծումից հետո՝ նաև գրական փոխառությունների ձևով։ Եթե պարթևերենի կողքին որոշ ժամանակ գոյություն է ունեցել միջին մեդերենը, ապա այն նույնպես պիտի նշանակալից ազդեցություն թողած լինի հայերենի վրա։ Համեմատաբար փոքր պիտի լինեն իրանական այլ ժողովուրդների, այդ թվում ալաներենի բառային ներդրումը։

Պարսկաստանի թագավոր Դարեհ III Կոդոմանի՝ Գավգամելայի հայտնի ճակատամարտում (331 թ. մ. թ. ա.) Ալեքսանդր Մակեդոնացուց պարտվելուց հետո Հայաստանում ստեղծված պետական միավորների թագավորները, հատկապես Երվանդունիները և Արտաշիսյանները, իրանական անուններ են կրել։ Ինչպես հայտնի է, Արշակունիների թագավորական հարստության հիմնադիր Տրդատ I-ը պարթևական ծագում ուներ, և մինչև 428 թ. հայկական գահի վրա իշխում էին նրա հաջորդները։ Այս պայմաններում պարթևական ազդեցությունը պետք է շատ ուժեղ լիներ, և իրոք, հայերենը ձեռք է բերում մեծ քանակությամբ պարթևական ծագման բառեր։

Ցավոք սրտի, վաղ պարթևերենը, եթե նկատի չառնենք հայերենի՝ նրանից կատարած համեմատաբար հին փոխառությունները, քիչ է հայտնի։ Պահպանված արձանագրությունները և մանիքեական տեքստերը [հմմտ. հատկապես Boyce, 1954, 1977, Gignoux, 1972. ОИЯ. 1, 147—232], մեր գիտելիքների շրջանակները զգալիորեն ընդարձակելով հանդերձ, ներկայացնում են պարթևերենի զարգացման համեմատաբար ուշ շրջանը (մ. թ. I դարից ոչ վաղ)։ Հայերենի՝ իրանական փոխառությունների առաջիկա ցանկերում այս կարգի պարթևական զուգահեռները ըստ անհրաժեշտության կնշվեն։

բ) ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի՝ իրանական լեզուներից կատարած փոխառությունները ամփոփված են Հ. Հյուբշմանի «Հայերենի քերականության» 1-ին գրքում [Hübschmann, AG, 1895] և Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» 1-ին մասում [1940]։ Քանի որ Հ. Աճառյանը բերում է Հ. Հյուբշմանի ցանկը գրեթե ամբողջությամբ՝ կատարելով որոշ հավելումներ ու ճշգրտումներ, հետագա քննության մեջ կհենվենք այդ ցանկի վրա։ Վերջինս ընդգրկում է 1405 բառական միավոր, որոնցից «հին շրջանի» բառերը ըստ հեղինակի մտահղացման առանձնացված են շեղատառով։ Սակայն Հ. Աճառյանի «հին շրջանի» ըմբռնումը զգալիորեն տարբերվում է արդի ըմբռնումից և չունի տարբերակման որոշակի չափանիշներ. այստեղ հանդիպում են մեծ թվով այնպիսի բառեր, որոնք արդի շրջանաբաժանմամբ փաստորեն պատկանում են միջին շրջանին (XII—XVI դդ.) կամ չունեն ժամանակագրական ճշտորոշում։ Այնուամենայնիվ ցանկը կարող է օգտակար լինել հայերենի նախագրային շրջանի՝ իրանական աղբյուրներից կատարված փոխառությունները որոշելու համար, եթե այս նպատակով շեղատառ տվածներից առանձնացնենք V դարից ոչ ուշ ավանդվածները, որոնց մեծ մասը, անշուշտ, գալիս է ավելի վաղ շրջաններից։ Ավելի ուշ ավանդված բառերի մեջ նախագրային շրջանում փոխառվածների քանակը խիստ փոքրաթիվ պետք է լինի. այլ կերպ ասած՝ կարող էին լինել խոսակցական լեզվում գործածված և V դ. գրականության մեջ չավանդված փոքրաթիվ բառեր, բայց այդ բանը ճշտելու որոշակի միջոցներ առայժմ չկան։

V դ. գրականության մեջ ավանդված իրանական փոխառությունների՝ ստորև բերվող ցանկը կազմված է, բնականաբար, Հ. Հյուբշմանի և Հ. Աճառյանի ցանկերի հաշվառումով, բայց հենվում է այլ սկզբունքների վրա և մասնավորապես ունի հետևյալ էական տարբերությունները։

1) Եթե Հ. Աճառյանը հիմնականում սահմանափակվում է հայերեն բառերի նոր պարսկական, պահլավական և ավեստայական զուգահեռների մատնանշմամբ (հազվադեպ տրվում են հին պարսկական, սողդական և սանսկրիտական զուգահեռներ), ապա մեր ցանկում նախ տրվում են ծագման համապատասխան նշանով (<) հայերեն բառերի իրանական հնարավոր ձևերը, ապա բերվում են իրանական գրավոր հուշարձաններում ավանդված՝ իմաստով և ձևով մերձավոր բառերը. ճիշտ է, շատ դեպքերում հայերեն բառերի նախապես տրվող ձևերը համընկնում են բերվող իրանական զուգահեռների հետ, բայց նկատի է առնված, որ այս դեպքերում էլ, օրինակ, միջին պարսկերենի՝ հայերենի հետ համընկնող ձևերը կարող էին հայերենին անցած լինել ոչ անմիջապես, կամ՝ որ հայերենի աղբյուրը կարող էր լինել նրա պարթևական կրկնակը։ Իրանական պատմական բառարանագիտության և իրանական լեզուների պատմության մեր իմացությունը առայժմ հնարավորություն չի տալիս բոլոր դեպքերում ճշտորոշելու հայերեն բոլոր բառերի բուն աղբյուրները։ Միջին պարսկերեն և պարթևերեն ձևերի բացակայության դեպքում հայերենի համար վերականգնված աղբյուր-ձևերը օժտվում են աստղանիշերով։

2) Հ. Աճառյանի աշխատությունից հետո և նույնիսկ նրա հրատարակությունից առաջ **հանդես են եկել** նոր ստուգաբանություններ, հրատարակվել նոր նյութեր, որոնք ավելացրել են եղած ստուգաբանությունների քանակը։ Այս առումով ներկա ցանկը պարունակում է զգալի թվով նորույթներ, թեև այս հարցում մենք հանդես ենք բերել զգուշություն և ընտրել ամենից ավելի հավանականները։ Ոչ բոլոր դեպքերում են ընդունվել նաև իր իսկ Հ. Աճառյանի ստուգաբանությունները. դրանց մեջ կան կասկածելիներ։ Ընդհանրապես իրանական ձևերը ճշտված են ըստ իրանագիտական նոր՝ մեզ մատչելի աղբյուրների։

Բացի Հ. Հյուբշմանից [AG, 1—2], Ա. Մեյեից [Meillet, 1911. 1916. 1920. 1921. 1922. Մեյե, 1978], Ռ. Գոտիոյից [Gauthiot, 1919], Հ. Աճառյանից [ՀԱԲ, $1—4^2$. ՀԼՊ, 1], հայերենի իրանական փոխառությունների հարցին ուսումնասիրություններ են նվիրել է. Բենվենիստը [Benveniste, 1927, a, b. 1929. 1945. 1958. 1961. 1964 b. 1966], Մ. Լերուան [Leroy, 1935. 1958, 1960. 1961], Հ. Բեյլին [Bailey, 1956. 1960. 1964. 1980. 1983], Ջ. Բոլոնիեզին [Bolognesi, 1948 a, b. 1951 b. 1958. 1959. 1960. 1961. 1962 b. 1966], Վ. Բելարդին [Belardi, 1950, 1960, 1962. 1978], Ռ. Շմիտը [Schmitt, 1975b, 1980b], հայ հետազոտողներից է. Աղայանը [1974], Գ. Ջահուկյանը [Ջահուկյան, 1981ա, բ], Ա. Փերիխանյանը [Périkhanian, 1968. 1969. 1982, Периханян, 1973, 1982] և այլք. Ջ. Բոլոնիեզիի մենագրության մեջ [Bolognesi, 1960] ի մի են բերված մինչև 1960 թ. այս բնագավառում կատարված հետազոտությունների հիմնական արդյունքները։ Այս հարցի վերաբերյալ կարևոր տեղեկություններ կան ինչպես նշված, այնպես էլ ուրիշ իրանագետների և հայագետների աշխատություններում, որոնցից հիմնականները տրված են գրականության ցանկում։ Հայերեն բառերի իրանական զուգահեռները ճշտված են ըստ նորագույն աղբյուրների. մեր աշխատության գրականության ցանկում բերված են սրանցից միայն հիմնականները. աղբյուրների ավելի հանգամանալից տեսությունը կարելի է գտնել իրանագիտական ընդհանրացնող աշխատություններում [հմմտ. հատկապես HbO, 1. Abt., 4. B., 1. Abschn., Leiden-Köln, 1958. ОИЯ, 1—3, 1979—1982]։ Մեզ համար կարևոր աղբյուրներ են ծառայել, մասնավորապես, սովետական հետազոտողներից (այբենական կարգով)՝ Վ. Ի. Աբաևի, Մ. Կ. Անդրոնիկաշվիլու, Մ. Ն. Բոգոլյուբովի, Լ. Գ. Գերցենբերգի, Ա. Լ. Գրյունբերգի, Ի. Մ. Դյակոնովի, Ի. Ի. Զարուբինի, Ջ. Ի. Էդելմանի, Վ. Ա. Լիվշիցի, Բ. Վ. Միլերի, Տ. Ն. Պախալինայի, Ա.Ն. Ռագոզայի, Վ. Ս. Ռաստորգուևայի, Ս. Ն. Սոկոլովի, Ի. Մ. Օրանսկու, Ա. Ա. Ֆրեյմանի, օտար հետազոտողներից Հ. Վ. Բեյլիի, Է. Բենվենիստի, Մ. Բոյսի, Ի. Գերշևիչի, Հ. Էլֆենբայնի, Ֆ. Ժինյուի, Վ. Բ. Հենինգի, Վ. Հինցի, Հ. Հումբախի, Ռ. Ն. Մակ-Քենզիի, Մ. Մայրհոֆերի, Գ. Մորգենստիեռնեի, Ռ. Շմիտի և ուրիշների աշխատությունները։ Ըստ անհրաժեշտության հարկ է եղել դիմելու նաև Հ. Աճառյանի օգտագործած հեղինակներից Ռ. Գոտիոյի, Հ. Հյուբշմանի, Պ. Հոռնի, Յ. Մարկվարտի, Ֆ. Յուստիի, Հ. Ս. Նիբերգի և ուրիշների աշխատություններին։

Այսուհանդերձ, ինչպես նշվեց, բոլոր դեպքերում էլ կատարվել է որոշակի ընտրություն, և ցանկում տեղ չեն գտել ոչ այնքան հավանական ստուգաբանությունները։ Չեն բերվել նաև այն բառերը, որոնց իրանական ծագումը կասկած չի հարուցում (եթե նկատի առնենք նրանց հնչյունական, բառակազմական և այլ կարգի առանձնահատկությունները), բայց եղած իրանական աղբյուրներում համապատասխան բառեր չեն հայտնաբերված, առաջարկված վերականգնումներն էլ հնչյունական և կամ իմաստային նկատառումներով անհրաժեշտ հավանականությունը չունեն։ Ահա թե ինչու ստորև բերվող ցանկում չկան, օրինակ, հետևյալ բառերը, թեև, ինչպես նշեցինք, նրանց զգալի մասի իրանական ծագումը հավանական է[18]. ամբարճաւան, ապարան «դաշտան», ապարաշ, ապիմակ (ապիկա՞մ), առեան (հ.-ե.?), արդու «մի չափ», արուարձան, աւազակ, աժանդակ, ամանել, ամեան, գերեզման, երագ, զատ, խորան, կարաս, կարճ, կիրճ, հանգրուան, ճառ, ճշմարիտ, մազ, մանուանդ, մողէզ (մողէս), յանդուգն, յաշտել, նկատել, նկուն, նշաւակ, շար, շէկ, պաճոյճ, պանդուխտ, պատան (պատեն), պատանի, պատկառ, պատճառ, պատնէշ, պատում (պատմել), պատրուակ, պար, պարոյր, սոր-(ակալ) «ախոռապետ», վախճան, վառել «այրել», վառել «զինել», վիրգ, վճիտ, տագնապ և այլն։

3) Հ. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանում» և «Հայոց լեզվի պատմության» մեջ հետևողական չէ իրանական և հայկական բառակազմական ձևերի սահմանազատման հարցում. ակնհայտորեն իրանական կազմությունները նա մասամբ բերում է որպես անկախ հայերեն բառեր, մասամբ դնում հայկական կազմությունների մեջ. այսպես, մի կողմից՝ դաշն և դաշնակ տրվում են որպես անկախ հայերեն արմատական բառեր, այսինքն՝ նրանց հարաբերության քննությունը դիտվում է որպես իրանական բառակազմության հարց, մյուս կողմից՝ ակնհայտ իրանական կազմություն ունեցող վարդավիրայ ու ռահվիրայ բառերը «Հայերեն արմատական բառարանում» բերվում են վարդ ու ռահ բառերի տակ և հիշյալ բառացանկում չեն տրվում որպես առանձին իրանական բառեր։ Այս նույն ձևով էլ Հ. Աճառյանը չի ճշտել իրանական որոշ բաղադրիչների անկախ գործածականության և, հետևաբար, հայերեն ինքնուրույն բառային միավոր կամ հայկական բառակազմական մասնիկ դարձած լինելու հարցը. այսպես, -դուխտ-ը («դուստր, աղջիկ») գործածված է միայն որպես անձնանունների, -շատ-ը («քաղաք»), -ոստ-ը («գետ»)՝ միայն որպես տեղանունների երկրորդ բաղադրիչ, բայց դրանք գրված են որպես անկախ բառեր և՛ «Հայերեն արմատական բառարանում», և՛ «Հայոց լեզվի պատմության» համապատասխան բառացանկում։ Այդ նույն ձևով իբրև անկախ բառեր են գրված ասպ- «ձի», բագ- «աստված» բաղադրիչները, որոնք հանդիպում են միայն բաղադրություններում։ Չի պարզված բայահիմք հանդիսացող անունների և համապատասխան բայաձևերի փոխհարաբերության հարցը. այսպես, բառացանկում դէտ և դիտել ձևերը բերված են միևնույն համարի տակ, մինչդեռ բաշխ և բաշխել ձևերը տրված են որպես առանձին բառեր, ընդ որում բաշխ-ի դեպքում ընդգծված և առանձնացված է նրա իմաստային մեկ՝ «հարկ» առումը։ Քննության չի առնվում իրանական ածանցների և եռադաս բաղադրիչների՝ հայերենում անկախ գործածություն ստանալու և հայերեն ածանցների հետ բաղադրվելու հարցը, մինչդեռ այն հաճախ կարող է վճռական լինել իրանական փոխառությունների քանակը և հայերենի բառապաշարի մեջ յուրացվելու աստիճանը որոշելիս։ Այսպես, իրան. համ- նախամասնիկը և նրանից հայ. -այն մասնիկով կազմված համայն բառը, վարտիք և անդրավարտիք բառերը տրվում են առանձին համարներով, փաստորեն որպես անկախ իրանական փոխառություններ. դաստաւոր բառը, որի դեպքում իրան. -var վերջածանցը բաղարկված է հայ. -ա-ւոր ածանցի հետ (հ.-ե. *-bhora), դրվում է որպես անկախ իրանական փոխառություն, մինչդեռ բազաւոր-ը տրվում է բազ բառի տակ։ Այս կապակցությամբ հետաքրքրական է նշել, որ -ւար բաղադրիչը իբրև այդպիսին չի գիտակցվել տաղաւար բառի մեջ և մնացել է իրանական ձևով։ Հավանաբար իրանական ծագում ունեցող մանեակ-ը ավանդված է նաև մանեւոր ձևով։ Կաշակար-ի -կար-ը (-kar) վերիմաստավորվել է կարել բայի արմատի բաղարկությամբ։

Հնարավոր թյուրիմացություններից խուսափելու համար մենք ընդունել ենք հետևյալ միասնական սկզբունքները. բարդ և նախածանցավոր իրանական փոխառությունները տրվում են անկախաբար, իսկ իրանական ածանցներով այն կազմությունները, որոնց բաղադրյալ հիմքերը հայերենում առանձին ավանդված են, բերվում են այդ հիմքերի տակ։ Նշենք, որ հայերենում իբրև անկախ ածանցներ գործածվող իրանական -pān (հայ. -պան), -pat (հայ. -պետ) և այլ բաղադրիչներով ձևերի դեպքում դրանց իրանական, թե հայկական կազմություններ լինելու հարցը դժվարանում է. այս դեպքում հարցը սովորաբար լուծվում է հօգուտ իրանականի, եթե համապատասխան իրանական ձևերն ավանդված են, թեև, իհարկե, սա չի ապահովում հնարավոր սխալներից։ Այն դեպքերում, երբ իրանական անածանց և ածանցավոր ձևերի հարաբերությունը չի գիտակցվում (բաղադրող և բաղադրյալ հիմքեոր իմաստով շատ հեռու են), դրանք բերվում են առանձին՝ փոյչ և փուշակ։

---

[18] Առաջարկվող զուգահեռները և վերականգնումները այստեղ չեն բերվում՝ տեղ խնայելու նպատակով. եթե թվարկվեն բոլոր առաջարկները՝ մեր առարկություններով հանդերձ, կունենանք մի առանձին ընդարձակ աշխատություն։

4) Ցանկից հանված են այն բառերը, որոնց իրանական ծագումը Հ. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանում» իրավամբ կասկածելի է համարում, բայց «Հայոց լեզվի պատմություն» ցանկում տալիս է համապատասխան թվահամարներով. այսպես, կանեփ բառի իրանական ծագումը կամ իրանցիների (սկյութների) միջոցով տարածված լինելը հայտնի է, բայց անհայտ է հայերենի բուն աղբյուրը. կապար-ի (մի բույսի անուն) բուն աղբյուրի իրանական լինելը կասկածելի է (Հ. Հյուբշմանը փոխառություն է համարում հունարենից). սանդալ բառի աղբյուրը Հ. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանում» համարում է հունական կամ իրանական, բայց «Հայոց լեզվի պատմություն» բառացանկում այն բերում է իրանական փոխառությունների մեջ. իրականում հայերեն բառի աղբյուրը հունարենն է (σάνδαλον, որը փոխառված է և պարսկերենի կողմից [հմմտ. Frisk, GEW, 2 675]։ Ընդհանրապես, կան մի շարք բառեր, որոնք հունական ծագում ունեն, բայց հայերենին են անցել իրանական (պարթևական) միջնորդությամբ, հետևաբար պետք է դրվեն վերջիններիս մեջ՝ լամպար (լամբար), կաղապար, սանտր և այլն [Meillet, 1920, 10–12]։

5) Բառացանկը կազմելիս ընդունված են նաև մի շարք մասնակի սկզբունքներ, որոնց մասին հարկ ենք համարում մի քանի խոսք ասել. ա) ի տարբերություն Հ. Աճառյանի՝ օ-ով բառերը տրվում են հին ու գրությամբ և, հետևաբար, բերվում այբբենական այլ կարգով. դրանով իսկ ավելի պարզ է դառնում իրանական համապատասխան ձևերի հետ նրանց ունեցած հնչյունական կապը. բ) եթե հայերեն բառերի և նրա հետ համեմատվող իրանական բառերի իմաստները հիմնականում համընկնում են, իրանական բառերի իմաստները չեն տրվում. Հ. Աճառյանի ցանկում դրանք ընդհանրապես չեն տրվում. գ) ժամանակակից հայերենում չգործածվող և ժամանակակից իմաստից տարբեր իմաստ (իմաստներ) ունեցող բառերի մոտ չակերտների մեջ տրվում են նրանց հին իմաստները՝ Հ. Աճառյանի ցանկի համեմատությամբ ավելի հաճախակի և ավելի հանգամանորեն. դ) իրանական լեզուների համար կիրառվում են սովորական համառոտագրություններ (տե՛ս համառոտագրությունների ցանկը), ընդ որում միջին պարսկերենի մանիքեական և պազենդական տարբերակները դրվում են միայն ըստ անհրաժեշտության՝ պազ. և մնք. նշումներով. մանիքեական պարթևերենի ձևերը սովորաբար տրվում են առանց մնք. պրթ. նշման՝ պարզապես պրթ. ձևով. ե) անունների մոտ փակագծերի մեջ տրվում են նրանց հոլովման տիպերը՝ ի, ի–ա, ո, ու, ան–անց ձևով. զ) եթե հիմքերն անկախ գործածությամբ չեն հանդիպում, նրանց մոտ դրվում է գծիկ.

ագահ (ի-ա) < ā-garh- (?) (*ā-gṛd-՝ հ.-ե. *gṛdh-). հմմտ. ավ. gərəδa-, այլև վրաց. (< իրան.) anga(a)ri (?).

ազատ (ի-ա) «ազնվական, ազատ» < ā-zāt(a)-. հմմտ. ավ. āzāta-, մ. պ. āzāt, պ. āzād.

ազգ (ի-ա) < azg-. հմմտ. մ. պ. azg «ճյուղ» (?).

ազդ < azd(ā). հմմտ. հ. պ. azdā, պրթ. 'zd (azd) «ծանոթ, հայտնի», մ. պ. azd «լուր, տեղեկություն. ազդ».

ազն (ին-ան) (ազնիւ) < ā-zn(a)-. հմմտ. ավ. ā-sna- «բնածին, ազնվական, ազնիվ», մ. պ. (թուրֆ.) 'zn-, (գրք. պհլ.) āznāvar (> վրաց. aznauri) «ազնվական».

ախոռ < ā-xvar. հմմտ. մ. պ. āxvar, պ. āxūr.

ախոռապետ < āxvar(a)pet.

ախորժ (ի) < *ā-xvarž-. հմմտ. ավ. hvarəz- «բարեգործ», մ. պ. xvārak «քաղցրություն, երանություն», օս. xvarz-, xorz- «լավ».

ախորժական (?) < *āxvaržakān.

ախտ (ի) < axti-. հմմտ. ավ. axti- «տանջանք, ցավ. ախտ, հիվանդություն», մ. պ. axt «վատ. տգեղ. հիվանդ».

ախտաժէտ < *axtižat (?). տե՛ս -ժետ (-ժէտ, -ժամ).

ախտար-ք (-աց) «աստղ. բախտ. աստեղահմա» < axtar. հմմտ. մ. պ. axtar «համաստեղություն», (մնք.) 'xtr (axtar) «աստղ», պ. axtar «աստղ. բախտ».

ախտարակ < axtarak.

ակահ «տեղյակ» < ākāh. հմմտ. մ. պ. ākāh, ākās (և ավ. ākas-, պրթ. 'gs).

ակամայ (ի) < a-kāmāy. հմմտ. պրթ. 'g'm'y (agāmāy), մ. պ. akāmak «ակամայական». տե՛ս կամ-ք, կամայ.

ահ (ի), արհ- «ահ, վախ, սարսափ» < ahr-. հմմտ. մնք. 'hr's'd «վախեցած. զարհուրած» (դերբ.), 'hr'y «վախեցնող, զարհուրեցնող»[19].

ահագին < *ahr(a)gīn.

արհական < *ahr(a)kān.

արհաւիր < *ahr(a)βīr (?[20]).

զ-արհուր < ahr-.

ահեակ (ի-ա) «ձախ» < *ā-hōyak (?). հմմտ. ավ. haoya- (փոխկ. havya-), մ. պ. hōyak.

ահեկան (-ի)—հայկական տոմարի 9-րդ ամիս < *āhrakān (āhr- < āθr- «կրակ» ձևից՝ որպես «կրակային»).

ահոկ «հանցանք, վնաս. մեղադրանք» < āhōk. հմմտ. մ. պ. āhōk «հանցանք, մեղք. արատ. մեղադրանք», պ. āhō.

աճառ, աւճառ «(ձիու)սարք. հանդերձանք» < afčārr (*abi-čarna-). հմմտ. մ. պ. afčār «գործիք. սարք», պ. afzār, avzār «գործիք. համեմունք»)[21].

ամբաստան (ի-ա) «հայցվոր. գանգատավոր. հայց. գանգատ» < anbasān. հմմտ. մ. պ. anbasān «հակառակորդ. հայցվոր. գանգատավոր. տարակարծություն», (մնք.) 'mbs'n «հակառակորդ» [Периханян, 1973, 434].

ամբար, համբար (ի-ա) «մթերանոց. մթերք» < (h)ambār ((h)anbār). հմմտ. պրթ. 'mb'rg (ambārag) «ամբար», մ. պ. (h)anbār «հավաքում. պաշար», պ. anbār «ամբար, մթերանոց».

համբարապան < *hambār(a)pān. տե՛ս համբարակ.

ամբարիշտ. տե՛ս պարիշտ.

ամբարտաւան < *anbārtavān. հմմտ. պ. anbārda «լցված, լի. ամբարտավանությամբ լի, ամբարտավան».

---

[19] Է. Բենվենիստը [Benveniste, 1945, 68—69[համեմատում է ավ. aθi-ի հետ։

[20] Երկրորդ բաղադրիչը ծագում է հ.-ե. *bhōi-/bhī- «վախենալ» արմատից. հմմտ. խոտ.-սակ. bīrrai «վախենում եմ»։

[21] Ըստ Դաուսեթի [BSOAS, 1970, 64 և հջ.] աճառ < հ. պ. aćarna- «կահույք. սարքավորում»։

ամբոխ <*anbōx. հմմտ. մ. պ. hanbōh, պ. anbōh (x/h հարաբերության համար հմմտ. մ. իրան. tōxm/tōhm>հայ. տոհմ).

ամիճ (ո) «մսեղեն կերակուր» <amič. հմմտ. մ. պ. amīč «սրբի մաս կերակուր». բանջարեղեն».

անաշխարհիկ (անաշահիկ) «պանդուխտ, օտարական» <*anaxšahrīk (պրթ. կամ մ. մեդ.). հմմտ. մ. պ. anšahrīk «ստրուկ»(< «օտարական»).

անապակ (ի-ա) <*anāpak. հմմտ. ավ. anāpa- «անջուր» (իմա՝ «անխառն (գինի)»), պ. nāb «զուտ, անխառն».

անապատ (ի-ա) <an-āpāt. հմմտ. մ. պ. an-āpāt. տե՛ս ապատ.

անարի (ո-ա) «վիթխարի, անճոռնի» < *an-arī. հմմտ. ավ. anairya-, մ. պ. anēr «ոչ արի».

անգամ <(h)an-gām. հմմտ. մ. պ. hangām «ժամանակ, ժամանակամիջոց, տարվա եղանակ», պ. (h)angām «ժամանակ, ժամանակամիջոց». տե՛ս հանգամանք.

անդաճել (անդիճել, անտիճել) «մտածել, խորհրդածել» <andāč- (*ham-tāč-). հմմտ. մ. պ. andāčak «ապացույց. օրինակ», (մնք.) hnd'č-, այլև 'nd'č-, 'n'dxty «չափել, նախատեսել. դատել», պ. andāča[22].

անդամ (ո, -աւք) <an-dām (han-+dā-(<*dhā-)). հմմտ. ավ. handāman-, պրթ. hnd'm (handām), մ. պ., պ. andām.

անդարձ (ի) «կտակ, կտակագիր» < *andarj (ham-darz/j). հմմտ. պրթ. 'ndrz (andarz) «պատգամ, պատվիրան», մ. պ. (h)andarz «կտակ», (հ)անդերձապետ <(h)andarj(a)pet. հմմտ. մ. պ. andarzpat.

անդերձապետ. տե՛ս անդարձ.

անդոհ «մտատանջություն» <andōh. հմմտ. մ. պ., պ. andōh.

անոյշ (ի) <anōš. հմմտ. պրթ. 'nwšyyn «անուշ, քաղցր», մ. պ. anōš «նեկտար, անմահության ըմպելիք», պ. nōš «կենաց ջուր. անուշահամ բան. քաղցր ըմպելիք».

անուշակ «անմահական» <anōšak. հմմտ. պրթ. 'nwšg «անմահական, հավերժական».

աշակերտ (ի-ա) <ašākert. հմմտ. մ. պ. (մնք.) hš'gyrd (hašāgerd), պ. šāgird.

աշխատ «հոգնություն, չարչարանք. աշխատանք» <*axšāt. հմմտ. պրթ. 'xš'dyy, 'xš'dyft, մ. պ. (մնք.) axšād «նեղություն, չարչարանք».

աշխար (-ել) «լաց» <*axšaδ. հմմտ. պրթ. 'xšd (axšād), 'bxš'h, մ. պ. 'axš'd, 'bxš'y, պ. baxšāy «ներել» (*apa-xšad-' xšad- «խղճալ» արմատից (?) [Benveniste, 1964b, 7][23]. տե՛ս ապաշխարել.

աշխարաւանդ «թագի կապ» <?+βand «կապ». տե՛ս բանդ.

աշխարհ (ի-ա) <(a)xšahr(a)-. հմմտ. ավ. xsaθra-, հ. պ. xšaça- «թագավորություն, իշխանություն», մ. պ. šahr «երկիր. նահանգ. քաղաք», պ. šahr «քաղաք».

---

[22] Հ. Աճառյանը [ՀԱԲ, 1², 187, 189] սրանց միացնում է նաև պ. andīša «խորհուրդ, մտածում, մտատանջություն» բառը (>հայ. անդիշայ «մտածմունք») որը, սակայն, ծագումով տարբեր է։

[23] Պրթ. բառը մեր հավելումն է։ Սրանց հետ ստուգաբանորեն չեն կապված սոգդ. 'γš'ywn-, յիդդա. xšī- «լալ» բառերը, որոնք հայ. բառին իմաստով ավելի մոտ են։

աշխէտ «կարմիր, հրացոյն» < *(a)xšēt. հմմտ. ավ. xsaēta- «փայլուն, լուսափայլ», մ. պ. šēt «փայլ. կարմիր», պ. šēd «արև».

աշտեայ (ի) <aršti-. հմմտ. ավ., հ. պ. aršti- մ. պ. aršt.

աշտուճ, աստուճ (ո) «չոր, ցամաք» («աշտուճ հաց» «ցամաք հաց») <*astūč (?). հմմտ. խոտ.-սակ. astaucā «ցամաք»(?)

ապական-ել «անհետացնել, ջնջել, վերացնել. փչացնել. կեղտոտել» <apakan-. հմմտ. մ. պ. apakan- «դեն գցել», apakanīšnīh «ապականում, փչացում» [Bailey, 1956, 105. Периханян, 1973, 435—436]. տե՛ս վկանդել.

ապակի (ո-ա) (ապիկի) <*āpakī (*āpikī). հմմտ. մ. պ., սոգդ. āpakēnak, սոգդ. āpakēč, պ. ābgīna «ապակի. շիշ».

ապահար(ա)զան <apa-harazan(a)-. հմմտ. ավ. apaharəzana- «արձակում» (harəz- «արձակել»). տե՛ս արձակ.

ապաշաւ (ի, ի-ա) «զղջում. խնայելը, խղճալը» <apa-šav. հմմտ. ավ. apašav- «ետ գնալ. դառնալ, հեռանալ» («արածից ետ գնալ, զղջալ»).

ապաշխար-ել «զղջալ. մեղքը լալ» <apaxšaδ-. հմմտ. պրթ. 'bxš'h, մ. պ. 'pxš'd, 'bxš'y, պ. baxšāy «ներել» [Benveniste, 1964, 7][24]. տե՛ս աշխար.

ապ(ա)սպար-ել «հանձնել» <apa-spār- (api-spār-). հմմտ. մ. պ. apispār, պրթ. 'bysp'r.

ապ(ա)ստամբ (ի-ա) <apa-stamb. հմմտ. մ. պ. apa- «ապա» և հ. պ. stamba- «ապստամբել», մ. պ. stambak «անզուսպ, բռնակալ», պ. sitamba «զոռ. բռնավոր». տե՛ս ստամբակ.

ապաստան (ի, ի-ա) <apa-stān. հմմտ. մ. պ. apastān.

ապատ «շեն, շեն տեղ, բնակելի տեղ» <āpāt. հմմտ. պրթ. 'b'd (ābād), մ. պ. āpāt(ān), պ. ābād(ān).

ապարան (ի, ուշ՝ ի-ա) <apaδān(a)-. հմմտ. հ. պ. apadāna- «պալատ ապարանք. սյունազարդ դահլիճ», պրթ. 'pdn «պալատ».

ապարանջան <*aparanǰan. հմմտ. պ. abranǰan.

ապարասան «անհնազանդ, ըմբոստ» <*apārasan. հմմտ. մ. պ. apā-, apē-, պ. bē- «ապա-, ան-» և մ. պ., պ. rasan «երասան» (հայ. երասան, առասան).

ապարթան-ել «հանդգնել, խրոխտալ» <apartan-. հմմտ. մ. պ. apartanīh «հպարտություն, ամբարտավանություն», պ. bartan «հպարտ, ամբարտավան».

ապաւանդակ «վրանի պարան» <*apa-vandak. (apa- և vand- <հ.-ե. *u̯endh- «ոլորել. հյուսել»[25]). տե՛ս վանդակ.

---

[24] Հ. Աճառյանը [ՀԱԲ, 1², 228] ընդունում է Յ. Մյուլլերի ստուգաբանությունը՝ մ. պ. apāxš, avāxš «բարկացած, զղջած, ապաշխարած»։

[25] Վ. Բելարդին [Belardi, 1978, 10] վերականգնում է իրան. *upa-bandaka- (>apa-vandaka) նախաձև, որ ավելի քիչ հավանական է։

ապաւէն <*apa-vēn. Հմմտ. ավ. apa- (հայ. ապա-) և vaena- «տեսնել».
ապենիազ «անկարոտ» <apēniyāz. Հմմտ. մ. պ. apēniyāz, պ. bēniyāz (niyaz «կարոտ»), տե՛ս նիազ.
ապիրատ «անիրավ, անարդար» <apēδat. Հմմտ. մ. պ. apēdāt, պ. bēdād.
ա(պ)շոպ «շփոթություն, խառնակություն, կռիվ» <*a(p)-šōp. Հմմտ. մ. պ. āšōp, պրթ. պ. āšōb.
ապուխտ <*a-puxt «ան-եփ». Հմմտ. մ. պ. a- «ան»- և puxt «եփած».
ապուշ <*ap(ē)-uš (?). Հմմտ. պրթ. 'by'wš «անզգա, անուշադիր», մ. պ. (մնք.) abīhōš, պ. bē-hōš «ապուշ». տե՛ս ուշ.
ապուռ «ավար, կողոպուտ» <apurr. Հմմտ. մ. պ. ap(p)urr «կողոպուտ», ap(p)urtan, ap(p)ar-, (մնք.) 'pr «կողոպտել».
ապրդում «ձիու թամբի փոկ» < *apar-dum (apar- «վերը» + dum «պոչ»)(?) Հմմտ. պ. pārdum, pāldum «ձիու թամբի փոկ».
առասան «թոկ» <rasan. Հմմտ. մ. պ., պ. rasan, տե՛ս երասան, ապերասան, առասանակ <rasanak.
առատ (ի-ա) «առատաձեռն, անարատ, պայծառ. առատ, լեցուն» <rāt(a)-. Հմմտ. ավ. rāta- «շնորհ», մ. պ. rāt «վեհանձն, բարեբարո», պ. rād «առատաձեռն, կորովի».
ասպազէն (ի-ա) «ձիասարք» <*asp(a)-zēn. Հմմտ. ավ. aspa-, մեդ. *aspa «ձի» և ավ. zaēna-, մ. պ. zēn «զենք» (հայ. զէն).
ասպաճարակական «հովվական» <asp(a)čarakakān. Հմմտ. ավ. aspa-, մեդ. *aspa, մ. պ. asp «ձի» և մ. պ. čarak (հայ. ճարակ) + -akān (եթե հայերեն կազմություն չէ՝ *ասպաճարակ-ից).
ասպաստան (ի-ա) «ախոռ» <aspastān (asp(a)- «ձի» + -stān > հայ.-ստան). Հմմտ. մ. պ. aspastān, պ. asbistān.

ասպաստանիկ «ախոռում պահված, լավ խնամված» < aspastānīk.

ասպատակ (ի-ա) āspa-tāk(a)-. Հմմտ. մ. պ. aspatak (ավ. aspa-, մեդ. *aspa, մ. պ. asp «ձի» և ավ. taka- «վազք», մ. պ. tak «վազք, արշավ» պ. takīdan «արշավել»).
ասպար «վահան» <aspār. Հմմտ. հ. պ. spāra- (Vāyaspāra-), պրթ. 'spr (ispar), մ. պ. spar, (մնք.) ispar, պ. sipar.
ասպարեզ (ի-ա), ասպարէս <asparēz, asparēs. Հմմտ. մ. պ. asp(a)rēs, asprēz, aspras.
ասպետ (ի-ա) «ձիավոր-ազնվական» < *aspet (*aspa-pati-). Հմմտ. հ. հնդկ. aśva-pati- «ձիապետ, ձիատեր».
ասպ(ա)նջական (ի) «հյուրընկալ» <aspanjakan. ašpinjakan. Հմմտ. հ. պ. ašpinja- «հյուրասիրություն, հյուրընկալություն», մ. պ. aspinj-, aspinj- «օթևան, բնակարան», պ. sipanj «հյուր», ասոր. (< իրան.) 'šp(y)zkn' (aspazzakana) «maiordomus».
ատակ «կարող, ձեռնհաս» < *at(t)ak (*at(t)āvaka- < *ati-tāvaka-)[26]. Հմմտ. մ. պ. attūk «ընդունակ, կարող», attān «վճարունակ».
ատրագոյն «հրագույն» < *āturgōn (?) (թե՞ հայկական կազմություն՝ ատր «կրակ» արմատից՝ առանձին փոխառված գույն բառով. Հմմտ. ուշ ատրաշէկ, ատրորակ).

---

[26] Հմմտ. ati-tavana- > attān.

ատրագունակ <*ātur(a)gūnak(?)
ատրուշան <*āturōšan (*ātṛ-aušāna- «կրակարան». *ātṛ- «կրակ» (տե՛ս ատրագոյն) և *auš- < հ.-ե. *eus- «այրել»).
արագ, երագ <*rag (հ.-ե. *legʷh-). Հմմտ. ավ. raγu-, իգ. ravī-, պրթ. rg.
արգ- «հարգ, արժեք արժանիք», յ-արգ, գ-արգ (անարգ «ստոր») <arg- (հ.-ե. *algʷh-). Հմմտ. ավ. arəg- «արժել», սոգդ. 'rγ (arγ), օս., arγ «գին», պրթ. 'rg'w (argāv) «արժանավոր», (մնք.) 'nrg'wyft «անարգանք». տե՛ս արժ-.
արժ- (արժ-էք, արժ-ել) <arž-. Հմմտ. ավ. arəja- «արժեք, արժանիք, արժանի», մ. պ. arj, arž, պ. arz «գին», արժեք». Հմմտ. արգ-.
արժան (ի) <aržān. Հմմտ. պրթ. 'rj'n (aržān), մ. պ. (մնք.) arzān.
արժանի <*aržānī (թե՞ հայկ. կազմություն).
արկանել <(h)ark-. Հմմտ. ավ. harək- «արձակել, գցել».
արձակ (ի-ա) (յարձակիլ) *(h)arjak/(h)arzak (*hṛj/z-). Հմմտ. ավ. harəz-, պրթ. hyrz «արձակել». տե՛ս ապահարզան.
արմաւ (ո, ու) <armāv. Հմմտ. մ. պ. armāv, պ. xurmā.
արշա- «սպիտակ (?), լուսափայլ (?)» (արշալուրշ-ք բառի մեջ, որ ժողովրդական ստուգաբանությամբ դարձել է արշալոյս) <aruša-. Հմմտ. հ. պ. aruša-, ավ. auruša- «սպիտակ».
արշաւ-ել < aδ-šav- (*ati-šyav-). Հմմտ. իրան. ati- նախածանց և ավ. š(y)av-, հ. պ. šiyav-, մ. պ. šav- «գնալ, ուղևորվել, շարժվել».
արոյր (-ի) <rōδ. Հմմտ. ավ. raoiδita «կարմիր, կարմրավուն», մ. պ. rōδ, rōi, պ. rōy «անագ. պղինձ. արույր».
արուեստ (ի) < aruvast (*arvat-ta-). Հմմտ. հ. պ. aruvasta- «ամրություն, առույգություն, ընդունակություն», պրթ. 'rwst «առաքինություն», այլև արամ. (< իրան.) 'rwst «ճարտարություն» (բաղարկություն հայ. -եստ-ով հիմքերի հե՞տ).
արուճանակ «նկարի ուրվագիծ» <aručānak (?). Հմմտ. պ. arčang, artang «նկարների հավաքածու».
արուսեակ «լուսաստղ, վեներա (մոլորակ)» <arusak (?) (arus- «սպիտակ, լուսափայլ» արմատից). Հմմտ. ավ. auruša-, հ. պ. aruša-, մ. պ. arūs «սպիտակ».
արջն «սև, մութ» (նաև արջ-՝ արջ-ասպ բառում) < *arj- (հ.-ե. *ergʷ-/orgʷ- «մութ»). Հմմտ. չեչ.-ինգուշ. (<իրան.), Ӏаьржа, բացբ. Ӏаьрчӏи «սև».
աւազան (ի-ա) < *āvazān. Հմմտ. մ. պ. *əvzan > ասոր. avzānā «մկրտության ավազան», սոգդ. ''aw'zh (awaza) «լիճ».
աւան (ի-ա) < āvān (*ā-vahana-). Հմմտ. հ. պ. āvahana- «բնակավայր» պրթ. āvan.
աւար (ի-ա, ո) <āvār. Հմմտ. պրթ. 'w'r, մ. պ. āvār, բելուջ. āvār.
աւարտ (-ի) <āvart-. Հմմտ. պրթ. (մնք.) an-āvard «անվերջ, անավարտ».
աւգուտ (ի) <aβgūt (*abi-gāva- բայահիմքից). Հմմտ. հ. պ. abigāva- (> արամ. 'bgw), պրթ. 'bg'w «աճ, հավելում», հ. պ. abijav-, մ. պ. aβzūdan, պ. afzūdan «ավելացնել».

աւգտակար <*aβgūt(a)kār.

աւեր (-ի) <avēr. համմ. պրթ. 'wyrn, մ. պ. (պազ.) avīrān, պ. vērān.
  ավերակ <*avērak.
աւշարակ <afšarak. համմ. պ. afšara «պտղահյութ, քամուք».
աւշինդր <*afšind-. համմ. ուշ հայ. ափսինթ (ափսինդ) <հուն. կամ արաբ.
աւշնան «օճառախոտ» <afšnān. համմ. պ. ušnān.
աւտար (ի-ա) <*avtar (*avitara-). համմ. ավ. aiwitara-.
աւրէն (ի-ա) <aβδēn. համմ. մ. պ. aδvēn(ak).
  աւրինակ <aβδēnak.
աւրհն(-ել) <ā-frīn-. համմ. ավ. āfri-vana-, պրթ. 'fryn (afrīn-) «օրհնել», մ. պ., պ. āfrīn «օրհնանք».
բագ «բաժին. ժառանգություն» <bag. համմ. ավ. baga-, baγa-, մ. պ. (պազ.) bag «բաժին, մաս».
բագին (ի-ա) «զոհասեղան» <*bagīn? համմ. ավ. baga-, baγa-, հ. պ. baga-, մ. պ. bag «աստված».
բազէ (ի) <bāz-. համմ. մ. պ., պ. bāz.
բազմակ «ճրագ» <bazmak. համմ. պրթ. bzmg և ասոր. (<իրան.) mazmak «ճրագ. աշտանակ».
բազմ(-ել) <bazm-. համմ. պ., աֆղ. bazm «հացկերույթ, խնջույք».
  բազմական <*bazmakān.
բազուկ (ի-ա) «թև» <bāzūk. համմ. ավ. bāzu-. մ. պ. bāzūk.
բազում (ի-ա) < *bazum (հ.-ե. *bhn̥g'hu-). համմ. խոտ.-սակ. baysga «հաստ. շատ, բազում», բելուջ. baz «հաստ», bāz «շատ, բազում».
բաժ (ի) «բաժին, մաս. տուրք, հարկ» <bāž. համմ. մ. պ. bāž, այլև հ. պ. bāji- «տուրք». տե՛ս բագ «բաժին», բաժակ.
  բաժան (-ել) <bāžān.
  բաժին <bāžīn.
բաժակ (ի-ա) < bāžāk. համմ. ավ. *bajina-, արամ. (<իրան.) bzk. տե՛ս բագ «բաժին», բաժ.
բախտ (ի) <baxt (*bhak-to- <*bhag-to-). համմ. ավ. baxta- «բաժին, վիճակ, բախտ», մ. պ., պ. baxt. տե՛ս բագ, բաժ, բաշխ.
բահ (ու)<*ba(r)h (barϑra-). համմ. պ. bēl, քրդ. bēr «բահ, թի», այլև վրաց. (< իրան.) bari «բահ».
բամբիշն (-ան) «թագուհի» <bānbišn. համմ. մ. պ. bānbišn.
բանուկան «պալատական տիկիններ» <bānūkān. համմ. մ. պ. bānūkān «տիկիններ» (bānūk «տիկին» բառի հոգնակին).
բանդ (բանտ) (ի-ա) <band. համմ. ավ. banda-, մ. պ., պ. band «կապ, կապանք, շղթա», սոգդ. βand «բանտ».
  բանտական <*band(a)kān (?).
  բանտապան <*band(a)pān (?).
  բանտապետ <*band(a)pet (?).
բաշխ (ի) «ողորմություն. հարկ, տուրք» <baxš (հ.-ե. *bak-s- <*bag-s-). համմ. ավ., մ. պ. baxš-, սոգդ. βγš- «բաշխել, բաժին հանել», պ. baxš «բաժին, մաս». տես. բագ, բաժ, բախտ.
  բաշխիշ «պարգև» <baxšišn.
բաստառան «բանտ» <*bastaδān(a)- (թե՞ bast + հայ. -արան). համմ. ավ. basta- «կապված» (banda- «կապել» բայից), մ. պ. bastan «կապել, բանտարկել».
բար- «դուռ» (բարաւոր «դռան սեմ») <*bar-. համմ. պրթ. br (ավ. dvar-, մ. պ. dar)[27].
բարակ «նուրբ» barak, համմ. պ. bārīk, բելուջ. bāraγ.
բարապան (ի-ա) «դռնապան» <bar-pān (?) համմ. պրթ. br (bar = ավ. dvar-, մ. պ. dar «դուռ») և -pān (հայ.-պան) — ածանց. տե՛ս դարապան.
բարապետ «դռնապան» <*bar-pet (?). համմ. պրթ. br (bar = ավ. dvar-, մ. պ. dar) «դուռ» և -pet ? (հայ. պետ). տե՛ս դարապետ.
բարգաւաճ (ի) «պերճ, փառավոր, անվանի, ծաղկած, զարգացած» <*bar-gavač(i)-. համմ. սոգդ. βrγ'wcy «երջանիկ, ունևոր, բարգավաճ».
բարձ (ի) <barj/barz. համմ. ավ. barəziš-, օս. baz, պ. bāliš.
բարսմունք (հգն. սեռ. -մանց) «ոստակ, որ կրակապաշտները բռնում են կրակի առջև» <*barsman-(?). համմ. ավ. barəsman-, մ. պ. (պազ.) barsum, պ. barsam[28].
բաւ «ծայր, սահման, ավարտ» <bav-. համմ. ավ. bav- «դառնալ», baoyo «ավելի երկար», սոգդ. β'w «բավական», β'wwny «ավարտ». տե՛ս բաւանդակ (բովանդակ).
  բաւակ <*bavak.
  բաւական <*bavakān.
բաւանդակ (բովանդակ) <bavandak. համմ. մ. պ, bavandak, bovandak. տե՛ս բաւ.
բդե(ա)շխ (ի-ա) «կուսակալ» <*bidixš(a)- (<*pitiaxša- <*pati-xšāh) (?). համմ. մ. պ. bitaxš «կուսակալ, փոխարքա», այլև արամ. (<պրթ.) bṭḫš-
բժիշկ (ի-ա) <bižišk. համմ. մ. պ. bižišk, bijišk, bisišk, (մնք.) bzišk, պ. bizišk, bijišk.
բիժ (ո) «աչքի ճիպռ» <biž. համմ. պ. bij.
բիւր (ո) «տասը հազար. շատ» <bēvar (*baivar-). համմ. ավ. baēvar-, մ. պ. bēvar, (թուրֆ.) bywr, պ. bēvar, bīvar, օս. birä, berä, bewrä[29].
բնակ (ի-ա) «բնակարան, բնակատեղի» < bunak. համմ. մ. պ. bunak «ճամբար, բնակատեղի», պ. buna «տուն, բնակարան».
բոյժ (ի-ա) «դեղ» (բուժ-ել) <bōž (հ.-ե. *bheug(h)- «հեռացնել, մաքրել, փրկել»). համմ. ավ. baog- (bunja-), պրթ. bwj (bōž). փրկել», մ. պ. (պազ.) bōžišn «փրկություն».
բոյր (բուրել) <*bōδ. համմ. ավ. baoiδi-, պրթ. bwd, սոգդ. bwδ, մ. պ. bōδ, պ. bōy.

---

[27] Բար-ը կարելի է առանձնացնել, եթե բարաւոր-ը հայ. կազմություն է բար-ից և ոչ թե *bar-var ձևի հայերեն վերախմբավորումը։

[28] Ըստ Յ. Մարկվարտի [«Հուշարձան», 282]՝ հին փոխառություն է (հ. պ. *barsmanah-)։

[29] Վ. Ի. Աբաևը [ИЭСОЯ, 1, 262] հայ բիւր-ը համարում է ալանական փոխառություն (համմ. իրոնական biwrä), բայց նկատի չի ունենում հայերենի միջին վանկերի հնչյունափոխության երևույթները մ. թ. II դ. վերջին կամ III դ. սկզբին։ Հայերենին ամենից ավելի մոտ է սոգդ. byurru-ն (-u-ով հիմք)։

բուրաստան «պարտեզ» <bōδastan. համմ. պրթ. bwdyst'n, սոգդ. bwδstn.

բուրվառ <bōδ-vār (?). համմ. սոգդ. βwδβrn.

(ըմ-) բոշխն-ել «վայելել» <bauxšna- (*baug- <հ.-ե. *bheug- «վայելել»). համմ. ավ. baoxšna- «վայելք».

բոր- (բոր-ոտ) <*bor-. համմ. սոգդ. βr'wk' (βārūkə) «բորոտ».

բորակ (ի-ա) <*bōrak. համմ. պ. bōra.

բուն (ի-ա) «ծառի բուն. հիմք. բնիկ» <bun(a)-. համմ. ավ. būna- «հիմք. հատակ», պրթ. bwn, մ. պ., bun «հիմք».

բնակ «բուն, հարազատ» <*bunak.

բնիկ <*bunīk?

բրինձ <birinj (մեդ. ?). համմ. պ. birinj.

գահ (ու) <*gāh(u)-. համմ. ավ. gātu- «տեղ. աթոռ», հ. պ. gāθu-, պրթ. g'h (gāh), մ. պ. (մնք.), պ. gāh «գահ».

գահաւոր (տիտղոս) <*gāh-vār (?).

գահաւոր(ակ) «պատգարակ, գահ» <*gāh-vār(-ak) (?)

գահնամակ «գահացուցակ» <gāhnāmak. համմ. հայ. (<իրան.) գահ և նամակ.

գանձ (ու, ի) <*ganj. համմ. հ. պ. *ganza-, մ. պ. ganj.

գանձանակ (ի-ա) «գանձարան» <ganjānak. համմ. պ. ganjēna.

գանձաւոր (ի-ա) «գանձապահ» <ganj(a)var(a)-. համմ. պ. ganjvar.

գանձակ «փոր, ընդերք» <*ganjak, համմ. պ. ganja «պարկ. քսակ»(?).

-գար (ուշ՝ նաև գար-) «ցավ. հիվանդություն» (աչագար, գլխագար, լեղուագար, խելագար) <*gar. համմ. ավ. garənu- «քոս», խոտ.-սակ. ggarīva «դժբախտություն», մ. պ. garr, պ. gar «քոս» (համմ. և հ. հնդկ. gara- «մի հիվանդություն»).

գաւազան (ի-ա) «անասուն քշելու փայտ. ծեծի փայտ. գավազան» <*gavāzan(a)-, համմ. ավ. gavāza-, պ. gavāza, gāvazana «անասուն քշելու փայտ».

գեր «ողբ, լաց, կոծ» <*gar. համմ. սոգդ. zγ'yr (-γēr) (*uz-garaya-), օս. gär, γär «ճիչ, աղմուկ».

գերդաստան «ծառաների և գերիների ամբողջություն. ունեցվածք, կալվածք» <*gard(a)stān(a)-[30]. համմ. հ. պ. *garda- «ծառա, ստրուկ» (որպես «տնային, տանը պատկանող, οἰκέτης») և հ. պ. -stāna- «տեղ» (հայ. -ստան).

գերդաստական «ծառա» <*gard(a)stakān (?).

գերդաստանիկ «ծառա» <*gard(a)stānīk.

գէս (ո) «մազ» <gēs. համմ. մ. պ., պ. gēs.

գիսակ <*gēsak.

գիսաւոր <gēs(a)var. համմ. մ. պ. gēsvar.

գմբեթ (ի-ա) <gumbaθ. համմ. մ. պ. gumbaθ, gmbat (<ասոր. qubbəθa).

գոմէշ (ո, ի-ա) <gōmēš. համմ. մ. պ., պ. gāvmēš, պ. gāmuš.

գոյն (ի, ո) <gōn (gūn?). համմ. ավ. gaona- «կերպ, եղանակ, գույն», մ. պ. gōn, պ. gūn «գույն».

---

[30] Հ. Աճառյանը [ՀԱԲ, 1², 541] համարում է բնիկ հնդեվրոպական *gherdh- արմատից, բայց *ghe->գե- անցումը հայերենի համար սովորական չէ։

գունակ «նման, պես» <*gōnak. համմ. պրթ. gwng, մ. պ. gūnak, gōnak.

գոյշ (գ-գոյշ) <gōš. համմ. ավ. gaoš- «լսել, ականջ դնել», gaoša-, մ. պ., պ. gōš- «ականջ».

գուշակ «մատնիչ. ազդարար. (ուշ) գուշակող» <gōšak. համմ. մ. պ. gōšak «լրտես».

գոնջ «հաշմանդամ» < *gōnj (?). համմ. պ. gunj «սապատավոր».

գով- <gōβ. համմ. հ. պ. gaub-, մ. պ. gōβ, guftan «ասել», սոգդ. γwβ- «գովել».

գո(ր)շապահանգ «ականջօղ» <*gōš(a)-pahang-. համմ. ավ. gaoša-, հ. պ. gauša-, մ. պ. gōš «ականջ» և pa-hang (հայ. պահանգ).

գումար <gumār (*vi-mār-?). համմ. մ. պ. gumār- «նշանակել»[31].

գումարտակ <gumārtak.

գունդ (ի, ի-ա) «գունդ. գնդաձև իր (անիվ, գլուխ և այլն)» <gund. համմ. ավ. gunda-, մ. պ. gund «խմորի գունդ».

գնդակ <gundak.

գունդ «խումբ. զորախումբ» <gund. համմ. մ. պ. gund «զորաբանակ, զորախումբ, գունդ».

գուշակ. տե՛ս գոյշ.

գուպար «ըմբշամարտ, կռիվ» <*gu-par (*vi-pāra-՝ հ.-ե. *per- «խփել» արմատից). համմ. ավ. pərət- «մարտ», խոտ.-սակ. purr (*pr̥-nu-), «հաղթել, պարտության մատնել». տե՛ս պարտել.

գրապան (ի-ա) «հագուստի վզամաս. եզր. ուսանոց. թիկնոց. գրպան (ուշ)» <*gir(a)pān (?) (<*griva-pāna-). համմ. մ. պ. grivpān, պ. girēvān «հագուստի վզամաս, փողկապ», giribān «գրպան».

գրապանակ «հմայակ, կախարդական գիր» <*gir(a)pānak (?).

գրաւ (ի-ա) (գրաւ-ել) <graβ. համմ. մ. պ. graβ, պ. girav.

գրաւական <graβakān. համմ. մ. պ. gravakān.

գրիւ (ի-ա) (հացահատիկի մի չափ) <grīv. համմ. պրթ. gryw.

գրիւան (ի-ա) (մեկ կամ մի քանի գրիվ) <grīvān (հգն.).

գրոհ (ի) «ժողովուրդ, ամբոխ, բազմություն. բանակ» <grōh. համմ. մ. պ. grōh, պ. gurōh.

դագ «նենգություն, դավ. թակարդ. (ուշ) խաբեական» <*dag. համմ. պ. daγā «կեղծիք, խաբեություն».

դաժան (ի-ա) <dažan (հ.-ե. *dhegʷh-). համմ. պ. dižan, dažan, dužan «դաժան. ախուր», այլև սոգդ. δγ'n «տաքություն». տե՛ս դժնդակ, դժնեայ.

դահամն (-ունք, -անց) «ընծա, նվեր (մանավանդ ուտելեղենով)» <dah-(r)am (?). համմ. ավ. dāθrəm «ընծա, նվեր».

դահանակ «հասպիս (մի տեսակ ազնիվ քար)» <*dahanak. համմ. պ. dah(a)na.

---

[31] Հ. Աճառյանը [ՀԱԲ, 1², 591] իրան. բառը հնարավոր է համարում բխեցնել ասոր. gamaru «լրացնել, վերջացնել», gumūru «ամբողջացնել» ձևերից, որ անհավանական է։

դահեկան-ի) (մի տեսակ դրամ) < *dahakān ? Հմմտ. պ. dahgānī- — մի հին ոսկե դրամ (dah «տաս» բառից՝ «տասանոց»)[32].

դահիճ (ի-ա) <*dahīč. Հմմտ. ասոր. (<իրան.) daxšā (<*dəxeš ?).

դահլիճ <*dahlīč. Հմմտ. պ. dahlīz «նախասրահ», աֆղ. (պ.) dahlīz, dahlīj «պատշգամ, սեմ».

դայեակ <dāyak (հ.-ե. *dhēi-). Հմմտ. մ. պ. *dāyak, պ. dāya.

դանգ, դանկ (ի-ա) (մի կշիռ և դրամ) <dāng. Հմմտ. մ. պ., պ. dāng.

դանդանաւանդ (ի-ա) «սանձ» <*dandān(a)βand(?). Հմմտ. մ. պ., պ. dandān «ատամ» և մ. պ., պ. band «կապ».

դաշն (ին-ան) <*dašn. Հմմտ. մ. պ. dašn.

դաշնակ «եղանակ, կերպ» <dašnak.

դաշտ (ի-ա) <dašt. Հմմտ. մ. պ., պ. dašt, սողդ. δγšt (δaxšt).

դաշտան (ի, ի-ա) <daštān. Հմմտ. մ.պ. daštān (ավ. daxšta- «նշան, դաշտան, ամսական»).

դաշտանիկ «դաշտան ունեցող» <daštānik.

դաս (ու) <das. Հմմտ. խոտ.-սակ. dasa «բաժին, դաս, կարգ»[33].

դաստակ «դաստակ. սրի կոթ» <dastak. Հմմտ. մ. պ. dastak, պ. dasta «կոթ, բռնատեղ».

դաստակերտ (ի, ի-ա) «ագարակ, ունեցվածք, շինվածք» <dasta-kart(a)-. Հմմտ. հ. պ. *dasta-karta- «շինվածք, կառուցվածք», մ. պ. dastkart «դաստակերտ»[34].

դաստապան (-ի) «սրի կոթ» <*dastapān. Հմմտ. մ. պ. dastpānak «կրակի ունելի», պ. dastbāna «ձեռնոց».

դաստառակ «ջնջոց. սրբիչ» <*dastārak. Հմմտ. պ. dastār «թաշկինակ».

դաստիարակ (ի-ա) <*dastyārak. Հմմտ. պ. dastyār «օգնական».

դատ (ի) <dāt. Հմմտ. հ. պ. dāta-, մ. պ. dāt «օրենք, արդարադատություն».

դատախազ (ի-ա) <dāt(a)-xvāz.-xvāz-ի համար Հմմտ. մ. պ. xvāstan (hvāz-), սողդ. γwz- «ուզել, խնդրել, պահանջել». տե՛ս և մատակախազ[35]

դատաստան <dātastān. Հմմտ. մ. պ. dātastān.

դատաւոր <dāt(a)vār (?).

դարան (ի-ա) «պահարան, պահատեղ, թաքստոց» <dāran(a)- (dār- «պահել»). Հմմտ. ավ. darəna- «ապաստան», օս. darān «մակաղատեղ».

դարապան (ի-ա) «դռնապան» <*dar(a)pān(a)-. Հմմտ. մ. պ. darpān, պ. darbān. տե՛ս բարապան.

դար(ա)պաս <*dar(a)pās (?). Հմմտ. պ. darvāza «քաղաքի դարպաս», darēvas «դրանդի».

դարապետ (ի-ա) «դռնապան» <*dar(a)pet-. Հմմտ. մ. պ. dar «դուռ» և pat, pet «պետ».

---

[32] Հ. Աճառյանը [ՀԱԲ, I², 615] համարում է դարեհական ձևից (հ. պ.)՝ ըստ Հակոբյանի։

[33] Ինչ հարաբերության մեջ է այս բառը օս. dasun «դարսել, հիմնել, կառուցել», սողդ. (δys-) «կառուցել», զազա dēsī «պատ» բառերի հետ։

[34] Ա. Փերիխանյանը [Периханян, 1973, 458] karta-< *kṛta ձևը հանում է kar- «հայտարարել, հրապարակել» արմատից։

[35] Ավելի ուշ -խազ-ով կազմվում են փեխազ, իգախազ։

դարաստան (ի-ա) «ծառաստան» <*dāristān. Հմմտ. մ. պ. dār «ծառ» և -(i)stān (հայ. ստան).

դարգիճ «պատգարակ» <*dragīč (?) (*drag- «քաշել») (?). Հմմտ. ասոր. (< իրան.) dargūštā «պատգարակ, օրորոց», արամ. (<իրան.) dargāš «անկողին»[36].

դարման (ո, ի) <darmān. Հմմտ մ. պ., darmān «բժշկություն. դեղ», պ. darmān «ճար, դեղ».

դաւ (ո) <*daβ. Հմմտ. ավ. dab- «խաբել, նենգել», պրթ. db (daβ) «դավ, խաբեություն».

դաւաճան <*daβ(a)čan. -ճան-ի համար տե՛ս -ճան.

դեհկան «կուսակալ» <*dēhkān (dēh > հայ. դեհ «կողմ» և -kān). Հմմտ. ավ., հ. պ. dahyu- «երկիր, նահանգ», մ. պ. dēh, պ. dih «գյուղ».

դեսպակ «պատգարակ» <*dēspak (*dvi-aspaka-). Հմմտ. մ. պ. (գրք. պհլ.) by'spk, եբր. (<իրան.) dīspaq «կառք».

դեսպան < dēspān. Հմմտ. մ. պ. bag-dēspān «արքայական սուրհանդակ».

դերձակ (ի-ա) <darjāk/darzāk. Հմմտ. մ. պ. darzīk. տե՛ս հանդերձ.

դեւ (ի-ա) <dēv. Հմմտ. ավ. daēva-, պրթ. dyw (dēv), մ. պ., պ. dēv.

դէմ (ի-ա) <dēm. Հմմտ. մ. պ. dēm, պ. dīm.

դիմակ <dēmak.

յանդիման <(h)andēman. Հմմտ. մ. պ. hndy:mn.

դէտ (ի-ա) (դիտել) <*dēt ?. Հմմտ. մ. պ. dītan, պ. dīdan «տեսնել».

դիտաւոր <*dēt(a)vār (?).

դիտակ «աչքին երևացող՝ տեսանելի բան» <*dētāk (?).

դժգոյն <duž-gōn. Հմմտ. մ. պ. duž- (հայ. դժ-) և հայ. (<իրան.) գոյն.

դժխեմ (դշխեմ) «դաժան» <duš-xēm. Հմմտ. մ. պ. dušxēm, պ. dužxīm «չարաբարո, վատ բնություն ունեցող».

դժկամակ <duškāmak. Հմմտ. մ. պ. duškām-kartārīh. պ. dižkām.

դժնդակ <*dižandak. Հմմտ. պ. dižand «դաժան, չարաբարո». տե՛ս դաժան, դժնեայ.

դժնեայ (ի) «դաժան, դժնդակ» <duž(a)n- (?). Հմմտ. պ. dužan, dižan «դաժան, չարաբարո». տե՛ս դաժան, դժնդակ.

դժնիկ (ի) «մի տեսակ փուշ» <*duž(i)nīk. Հմմտ. պ. dūža «մի տեսակ փուշ», dūžna «մեղու. խայթոց, կճիթ», dižīna «հերյուն, բիզ» (?).

դժոխ (ո) <dužox (*duž-axva-). Հմմտ. ավ. daožahva-, duž-anhav-, պրթ. dwjx (dožax), մ. պ. dōšaxv- (dōzaxv), (պազ.) dōžax, պ. dōžax.

դժուար (ի-ա) <dužvār. Հմմտ. պրթ. djw'r (dižvār), մ. պ. dušxvār, (պազ.), պ. dušvār.

դժպարտ «չարաչար հաղթված» <*duš-part-. Հմմտ. մ. պ. duž-, duš- (հայ. դժ-) և հայ. (<իրան.) պարտ- (պարտ-ել «հաղթել»).

դիպակ (ի-ա ?) «մի տեսակ գործվածք» <dēpāk. Հմմտ. մ. պ. dēpāk, պ. dēbā.

դիւան (ի-ա) «դահլիճ, ատյան. դպրոց» <dēvān. Հմմտ. մ. պ. dēvān «արխիվ», պ. dīvān «ատյան, դիվան. երգերի ժողովածու».

---

[36] Իրան. ստուգաբանությունը ըստ Մ. Ն. Բոգոլյուբովի [Боголюбов, 1974, 107—108]։ Հ. Աճառյանը [ՀԱԲ, I², 637] բերում է սեմ. զուգահեռներ, բայց նշում սրանց իրան. ծագման հնարավոր լինելը։

դմակ <*dumak. համմ. ավ. duma-, մ. պ. dum(b), dumbak, պ. dum, օս. dymäg, dumäg.

դոլ <dōl (Թէ՞ ասոր. (<իրան.) daula). համմ. մ. պ. dōl «ջրհոր (կենդանակերպ)», պ. dōl «դոյլ».

դորակ (ի) (հեղուկների մի չափ) <dōrak. համմ. մ. պ. dōrak, dōlak, այլև ասոր. (<իրան.) dauraqā «մեծ ջրաման».

դպիր (ի-ա) «քարտուղար, գրագիր» <dipīr (*dipi-bara-). համմ. հ. պ. dipī(y) «արձանագրություն» (փխ.), պրթ. dbyr (dibīr), մ. պ dipīvar, մ. պ. dipīr «դպիր, գրագիր, քարտուղար».

դսրով «նախատինք» <*dusrav (*duš-srava-). համմ. ավ. duššravah-, մ. պ. (պազ.) dusrav «վատահամբավ».

դրախտ (ի-ա) «պարտեզ, ծառաստան» <draxt. համմ. մ. պ. (պազ.) draxt, պ. diraxt «ծառ».

դրամ (ի, ո) (?) (1. մի կշռաչափ. 2. դրամ) <dram (<հուն. δραχμή). համմ. մ. պ. dram, պ. diram.

դրուատ (ի-ա) <*druvata- (հ. պ.՝ ըստ Մարկվարտի). համմ. ավ. drvatāt-, մ. պ. drūt «առողջություն», պ. durōd «օրհնություն, բարեմաղթություն, աղոթք», այլև արամ. (<իրան.) drwt «խաղաղություն, բարեմաղթություն».

դրուժ- (դրուժ, դրժ-ել) <druž-. համմ. ավ. druža-, հ. պ. durujiya-, մ. պ. druxtan, družitan «ստել, դրժել».

դրուժան «խաբեբա» <družan (drōžan?).

դրաւշ (ու, ի) <draiš. համմ. ավ. drafša-, պրթ. drīš (draiš), մ. պ. drafš, պ. dirafš «դրոշ».

դրաւշակ «դրոշ» <drafšak.

դրաւշակ «բդանգք» <drafšak.

երախ «բերան, երախ» (բրբռ. ռեխ) < *rax. համմ. սոգդ. rγ'h, յագնոբ. rax «բերան, երախ»[37].

երախտ- <*raxt-, համմ. հ. հնդկ. rakta- «գունավորված, կարմիր. հուզված, համակիր, սիրահարված». տե՛ս երանգ.

երակ (ի-ա) <rak. համմ. պրթ. (թուրֆ.) rhq, սոգդ. r'k, մ. պ. (թուրֆ.) rg, պ. rag.

երամ <*ram. համմ. մ. պ. ramak, պ. ram(a). տե՛ս նաև ռամիկ.

երամակ <ramak.

երամական «շքախումբ» <*ramakān.

երան (-ք) (ի-ա) <rān. համմ. մ. պ., պ. rān «ազդր, սրունք».

երանգ (ո, ի-ա) <rang. համմ. պրթ. (թուրֆ.) rng, մ. պ., պ. rang գույն».

երաշխ- (երաշխիք) < *raxš-. համմ. օս. aräxsun, aräxsən «համապատասխանել. կարողանալ», այլև հ. հնդկ. rakš- «պահել, պաշտպանել».

երաշտ <*rašt. համմ. պ. rašt «շատ չոր. հող, փոշի».

երասան <rasan. համմ. մ. պ., պ. rasan. տե՛ս առասան.

երիտասարդ < *rētak-sard-. համմ. մ. պ. rētak «երիտասարդ, պատանի» և ավ. sarəda-, մ. պ., պ. sāl «տարի». տե՛ս նաւա-սարդ.

---

[37] Կապ ունե՞ն արդյոք ավ. sraxti- «եզր, անկյուն», պ. rux «այտ» բառերի հետ, որոնք բխեցվում են հ.-ե. *srak^u- նախաձևից:

երկ (ո) <*ark. համմ. մ. պ. (մնք.) arq, սոգդ. 'rk «գործ, աշխատանք».

զամբի(ւ)ղ «կողով» <*zanbīl. համմ. պ. zanbīl, zanbīr.

զան, զան- «կերպ, ձև, տեսակ» <zan(a)-. համմ. մեդ. *zana- (> արամ. zn) «տեսակ. բուն», ավ. zana- «մարդկային սեռ, ցեղ», պրթ. zng (zanag), սոգդ. znk (zanak) «տեսակ».

զանակ «մաս, կտոր» <zanak.

զանգակ <*zangak. համմ. պ. zang, zangul(a), ասոր. (<իրան.) zaggā «զանգակ», zangā «հնչյուն».

զանգապան (զանկապան) «ոտնապան» <*zang(a)-pān. համմ. ավ. zanga-, մ. պ. zang «սրունք» և ավ. -pāna-, մ. պ. -pān «-պան» (հայ. -պան).

զառնաւուխտ «կերպաս, դիպակ» (*«ոսկեհյուս») <*zarna-vuft. համմ. սոգդ. zyrn-wfc. առաջին բաղադրիչի համար համմ. ավ. zarəna-, մեդ. zarna- «ոսկի» (մեդ. zarnakara- «ոսկերիչ») և երկրորդի համար՝ ավ. ubda- «գործված, հյուսված», պ. bāftan «գործել, հյուսել».

զարտակ «դեղին» <zartak. համմ. մ. պ. zartak «ձվի դեղնուց», սոգդ. zyrtk (zērtāk), պ. zarda «դեղին».

զաւակ (ի-ա) <*zavak. համմ. սոգդ. ''zwn (?).

զաւշ- (առանձին՝ ուշ) «վատ, անհագ, ագահ, ցանկասեր. անամոթ, անպարկեշտ» <zauš-. համմ. ավ. zaoša- «հաճույք. ցանկություն», պրթ. zwš (zōš) «սեր».

զաւր (-ու, -աց) <zāv(a)r (?). համմ. ավ. zāvar-, պրթ. z'wr (zāvar), մ. պ., պ. zōr «զորություն», սոգդ. z'wr «զորություն, ուժ. զորք».

զբաւս- < *uz-baus-. համմ. խոտ.-սակ. būsa «կատակ, զվարճություն».

զգոյշ. տե՛ս գոյշ.

զեն «զոհ» (զենուլ «մորթել, զոհել») <z(i)yān. համմ. սոգդ. wzy'n (ōzyān), այլև ուշ հայ. զեան «վնաս».

զէն(-ք) (ու) <zēn. համմ. ավ. zaēna-, մ. պ. zēn «զենք».

զինապետ <*zēn(a)pet.

զմրուխտ (ի-ա, ո) <*zumurruft. համմ. մ. պ. 'wzmbwrt, պ. zumurrud.

զինին <*zinīn (?). համմ. ավ. a-zinavant- «զգաստ, աշխույժ», zaēni-, մ. պ. zēnavand «աշխույժ», սարըկ. zenin «զգաստ, սրատես».

զոհ(ի) <zōhr. համմ. ավ. zaotar- «քուրմ. զոհաբերող», zaoθra- «զոհահեղուկ», մ. պ. (պազ.) zōr «օրհնաջուր».

զուր < zūr. համմ. ավ. zūrah-, հ. պ. zūra- «անարդարություն. սուտ», պրթ. zwr (zūr), մ. պ., պ. zūr «սուտ».

զրադատ <*zūr(a)dat.

զրպարտ- <*zūrpart.

զրահ (ի) (զրեհ) <zrāh. համմ. ավ. zrāδa-, մ. պ. zrāh, zrēh, պ. zirih.

զրահավառ, զրահաւոր <zrāh(a)vār (?).

թագ (ի-ա) <tāg. համմ. մ. պ. t'g, այլև արամ. (<իրան.) tāg, արաբ. (իրան.) tāj.

թագաւոր <tāg(a)vār (?).

---

[38] Այս ստուգաբանությունը կասկածի տակ է առնում է. Բենվենիստը [Benveniste, 1964b, 33-34]։

թակոյկ (ի-ա) «մեծ շրաման» < takōk. հմմտ. մ. պ. takōk «մսի աման», պ. takōk «գինու ըմպանակ».

թմբուկ (ի-ա) < *tumbūk. հմմտ. պ. tunbak, tanbūk, tanbak.

թշնամ-(անք) «անարգանք, նախատինք, հայհոյանք» < duš-nām «վատանուն». հմմտ. մ. պ., պ. dušnām.

թշնամի (ո-ա) < dušman. հմմտ. ավ. duš-mainyu-, պրթ. dwšmyn (dušmēn), մ. պ. dušman, dušmēn, պ. dušman.

թշուառ (ի-ա) < *duš-xvarr (*duš-xvarna-). հմմտ. ավ. dušxvarənah- «վատափառ».

թոշակ (ի-ա) «ճանապարհի պաշար. աշխատավարձ. կերակուր» < tōšak. հմմտ. մ. պ. tōšak, պ. toša «սնունդ, ուտելիք, ճանապարհի պաշար».

թութ (ո) < tūt. հմմտ. մ. պ., պ. tūt (< սեմ.). Թե՞ արամ.-ասոր. tūtā.

ժահ (ու) «ապականություն» < *žah. հմմտ. պ. zahēdan «հոսել», zahō «ականջի կեղտ».

ժամ (-ու, ի-ա) < *žam- (?). հմմտ. մ. պ. zamān, պրթ. jm'n, սողդ. zm'n «ժամանակ» (հմմտ. նաև մ. պ., պ. han-gām «ժամանակ», հայ. (< իրան.) անգամ. հանգամանք) [տե՛ս **Bolognesi**, 1960, 45][39].

ժաման < žamān. հմմտ. մ. պ. zamān.

ժամանակ < žamānak. հմմտ. մ. պ. zamānak.

ժայռ (ժեռ, ժիռ) < *žayr(?). հմմտ. սարըկ. žer «քար, քարաժայռ, ժայռ».

ժանգ (ժանկ) (ո) < *žang. հմմտ. պ. žang, zang.

ժանուար (ի-ա) «դաժանաբարոյ» < *žanβar (*jani-bara-). հմմտ. պ. žanbar, zanbar «մի տեսակ պատգարակ».

ժանտ (ի, ի-ա) «դաժան. չար, վատ» < *žant. հմմտ. ավ. gainti-, մ. պ. gand «ժանտահոտություն», սողդ. γntk «վատ».

-ժետ (-ժէտ, ուշ՝ -ժատ) < žat «-հար». հմմտ. մ. պ. žat (*jata-՝ jan- «խփել, սպանել» արմատից).

ժիր (ի-ա) < žīr. հմմտ. ավ. jīra- «արագաշարժ, ժիր», պրթ. žīr, պ. zīrak «խելացի», աֆղ. žīr «փութկոտ».

իշխ-(ել) < xši- (?). հմմտ. ավ. xša(y)-, հ. պ. xšaya- «իշխել».

իշխան (ի-ա) < xšān(a)-. հմմտ. սողդ. 'γšywny «տեր, թագավոր», պրթ. 'xšynd (xšayant) «իշխան»[40].

լամբար (լամպար, ղամբար) < *lampaδ (պրթ.) < հուն. λαμπάς, -δος (?)[41].

-խազ (ի) «քար» (գայլա-խազ) < *xāz. հմմտ. պ. xāz «մի տեսակ քար». -խազ (ի-ա). տե՛ս դաստախազ, մատակախազ.

խան (ի) «ափսե. սինի» (ուշ՝ խոն «սեղան») < *xvān. հմմտ. պ. xān, xōn «սեղան», աֆղ. xvān «սկավառակ. ափսե». տե՛ս խուն-.

խար «անասնակեր» < xvār. հմմտ. մ. պ., պ. xvār «կեր». տե՛ս խոհ, խորտիկ.

խարազան (ի-ա) < *xarāzān(a)-. հմմտ. ավ. xara-, պ. xar «էշ» և ավ. az- «քշել».

---

[39] Հ. Աճառյանը [ՀԱԲ, 2², 223] ժամ-ը համարում է հայերենում ժաման-ից կազմված ան-ի առանձնացմամբ որպես մասնիկ:

[40] Ի՞նչ հարաբերության մեջ է հայ. և իրան. բառերի հետ խեթ. išḫa- «տեր» բառը, որ ոմանք կապում են հայերենի հետ:

[41] Ըստ Ա. Մեյեի [MSL, 17, 248], որ նշում է հուն. δ-ի դիմաց հայ. ր-ն:

խարակ «ապառաժ, կարծր քար. քար» < *xarak. հմմտ. պ. xāra «մի տեսակ կարծր քար».

խարբուզ «իշայծյամ» < *xarbuz. հմմտ. մ. պ. *xar-buz (xar «էշ» և buz «այծ»).

խաւար (ի-ա) < xvāvar. հմմտ. մ. պ. xvarvaran, (պազ.) xvāvar, պ. xāvar «արեւմուտք. ստորերկրյա (խավարի) աշխարհ».

խոհ (-ի) (խոհ-, խախ) «կերակուր» < *xva(r)h (xvar- «վայելել, խմել»). հմմտ. ավ. xvarəθa- «սնունդ, կերակուր», պ. xvāl «կերակուր». տե՛ս խար, խորակ, խորտիկ.

խոհակեր «խոհարար» < *xva(r)h(a)kar.

խոյզ (ի) (խուզել «որոնել») < *xōz. հմմտ. խոտ.-սակ. kuys (kauz-) «որոնել».

խոյր (ի) «գլխարկ, թագ» < *xōδ. հմմտ. ավ. xaoδa- «սաղավարտ», հ. պ. xauda «գլխարկ», պրթ. xwd (xōδ), պ. xōy «սաղավարտ».

խոնարհ (ի-ա) < *xvānahr (*hu-ā-naθra-. naθ- «ցած» արմատի համար հմմտ. շուղն. nēθ «ցած, խոնարհ»).

խոստպետ «կյուրապաղատ, արքունի իշխան» < ? + pet.

խոստ- «խոստում, ուխտ» < *xvast. հմմտ. մ. պ. xustuk, xustavān «խոստովանող», պ. xust «խոստովանություն».

խոստաւոր < *xvast-var (?).

խոստովան < *xvastuvān (?).

խորակ «մի տեսակ խմորեղեն» < *xvarāk. հմմտ. պ. xōrak «կերակուր». տե՛ս խար, խոհ, խորտիկ.

խորտակ-ել «կոտրատել, ջարդել» < xurtak (*hu-artaka-) «փոքր». հմմտ. մ. պ. hwrtk (xvartak), xurtak «մանր, փոքր», պ. xurda «փոքր. մանր. կոտրանք, մանրուք».

խորտիկ (ի-ա) (բաղադրություններում) «կերակուր, համադամ» < xvartīk. հմմտ. ավ. xvarəti- «ուտելիք, կերակուր», մ. պ. xvartīk «ապուր, արգանակ», սողդ. γwrt (xvart) «ուտելիք, ճաշ». տե՛ս խար, խոհ, խորակ.

խուժ «վայրենի, բարբարոս» < xūž-. հմմտ. հ. պ. Ḫūža, մ. պ. Xužistan, պ. Xužistan, xūzī «խուժիստանցի».

խուժան < xūžan.

խումբ (ի) < xumb (հ.-ե. *kumb(h)-). հմմտ. շուղն. xum «կույտ», վախ. xum «հացահատիկի կույտ, շեղջ».

խուն- (խունաւագութիւն) < xvān «սեղան». հմմտ. պ. xān, xon «սեղան». տե՛ս խան «ափսե, սինի».

խունկ (ո, -ուք) < *xunk. հմմտ. պ. xunk, xung.

խրատ (-ու) < xratu-. հմմտ. մեդ. *xratu- (> աքկադ. iḫratuš), ավ. xratu-, հ. պ. xraθu-, պրթ. xrd, մ. պ. xrat «իմաստություն».

կազմ < *kāz- (*kaz-) «կարգավորել, կառուցել»). հմմտ. պ. kāza «տուն» (?).

կախարդ (ի-ա) < ka-xvard(a)-. հմմտ. ավ. kaxvarəδa-.

կախարդասար (ի-ա) «կախարդ. կախարդական» < *kaxvarda-sar(a)-. հմմտ. ավ. kaxvarəδa- (հայ. կախարդ) և ավ. sarah-, մ. պ. sar «գլուխ» («կախարդների գլուխ՝ կախարդապետ»).

կահ (ի, ու) <*ka(r)h (*karθra-). Համմտ. պ. kalā «ունեցվածք, կահույք».
կաղապար (-ի) <kalapaδ < հուն. καλα-πόδιον (καλο-) «կոշիկի կաղապար» («ոտքի փայտյա կաղապար») [Meillet, 1920, 10—12].
կամք (ի-ա, ո), կամ (շաղկապ) <kām(a)-. Համմտ. ավ., հ. պ. kāma-, պրթ. k'm (kām). մ. պ. kām.
կամակ-ք (ի-ա) «ախորժելի բան, հաճոյ ուտելիք» <kāmak(a)-.
կամակար «ինքնակամ» <kām(a)kār. Համմտ. պրթ. k'mg'r (kāmgār).
կամայ <*kāmāy.
կամար (ի-ա) «գոտի» <kamar(a)-. Համմտ. ավ. kamarā-, մ. պ., պ. kamar.
կապար «մի տեսակ բույս՝ capparis spinosa L.» <kapar. Համմտ. խոտ.-սակ. khavara-, պ. kabar (բայց համմտ. նաև հուն. κάππαρις).
կապէն-ք (ի-ա) «շնության վարձ» <kāpēn. Համմտ. պ. kābīn «հարսնանվեր».
կապիկ (ի-ա) <kapik. Համմտ. մ. պ. kapīk, պ. kabī.
կապիճ (ի-ա) (հատեղենի մի չափ՝ 0,1 գրիվ) <kapīč. Համմտ. հ. պ. >հուն. καπίθη, մ. պ. kapīč, պ. kafīz, այլև, թերևս, ուրարտ. (<իրան. ?) kapi.
կապոյտ <kapōt. Համմտ. մ. պ. kapōt, պ. kabūd.
կապուտակ <kapōtak. Համմտ. նաև հ. պ. kapautaka- «մի կապույտ հանքաքար».
կասել (-ուլ) «մանրել. ցորենը ծեծել. կալսել» <kas- «մանր-(ել)». Համմտ. ավ. kasu- «մանր», խոտ.-սակ. kas- «մանրել, փշրել», մ. պ. kas «մանր», վախան. kas- «կալսել».
կասկ «կեղևահանված և եփված գարի. հաճար» (ուշ ?) <kask. Համմտ. խոտ.-սակ. chaska, պ. kask, մունջան., յազղուլ. kâsk «գարի».
կար «ուժ, կարողություն» <kar-. Համմտ. պրթ. karī «ակտիվություն», մ. պ. kār- «ուժ ունենալ, ի վիճակի լինել, կարողանալ» (?)[42].
կարի <karī (թե kaδī).
կարապետ (ի-ա) «առաջնորդ, ուղեցույց» <*kārapet. Համմտ. հ. պ. *Kārapati- (>էլամ. karabatiš) [Համմտ. Gershevitch, AM, 1951—1952, 144].
կարաւան <karavān. Համմտ. մ. պ. kāravan, պ. kārvān.
կարկեհան «մի հանքաքար» <*karkēhan (*karkaδan (?) <հ. հնդ. karketana). Համմտ. մ. պ. klgyh'n (kargēhan), խոտ.-սակ. kirkīyaṃ, այլև ասոր. (<իրան.) qorkedna, արաբ. (<իրան.) karkahan (karkahān), karkand.
կարմիր (ո) <karīmr. Համմտ. սոգդ. krm'yr, մ. պ. kālmīr (?).
կաւշիկ (ի-ա) <*kafšik. Համմտ. մ. պ. kafš(ak), պ. kafš.
կաւշկակար <kafškar (վերաիմաստավորված և ձևավորված հայերենում).
կերպ (ի) <karp (kerp) (?). Համմտ. ավ. kəhrp-, մ. պ. karp «կերպարանք, կերպ».
կերպաս (ո, ու) <*karpas (*kerpas ?). Համմտ. պ. kirpās, kirbās «բամբակի գործվածք», բելուջ. kurpas, kirpās «բամբակ» (համմտ. հ. հնդ. karpāsa- «բամբակենի»).
-կերտ (բաղադրություններում) <kart. Համմտ. ավ. kərəta-, հ. պ. karta-, մ. պ. kart «արված, կերտված».
կիրթ <kirt (*kṛt-՝ *kar- «անել» արմատից). Համմտ. պրթ. qyrt, kyrd (kirt/d) «արված», kyrdg'r (kirda-gār) «ուժեղ. հզոր. ստեղծող, արարիչ» (բուն իմաստի համար համմտ. խայուշ կրթել «սայուշ անել՝ գործնել») (?).
կնդրուկ (ի-ա) «մի տեսակ խունկ» <*kundurūk. Համմտ. պ. kundur «կընդրուկ», kundurak «խեժ».
կնճիթ «քունջութ, սուսամ» <kunčit. Համմտ. մ. պ. kunčit, kunǰīt, պ. kunǰid, kunǰīt.
կոյտ (ի) <*kōt. Համմտ. պ. kōd «կույտ, դեզ».
կոյր (ի. ի-ա) <kōr. Համմտ. մ. պ., պ. kōr, սոգդ. kwr (kōr).
կոտակ «կարճահասակ, փոքր» <kōtak. Համմտ. մ. պ. kōtak, պ. kōdak «երեխա» (և ավ. kutaka- «փոքրիկ»).
կուզ (ի, ո) «կատու» <kūz. Համմտ. ասոր. (<իրան.) gūzā և քրդ. kuže «կուզ, կզաքիս», kūžā, kuzik «կուզ».
կուժ <*kūž. Համմտ. պ. kūza, քրդ. kūz(ik).
կուշտ (ի-ա) «կող. փոր» <*kušt. Համմտ. մ. պ., պ. kušt, զազա kišt «կող».
կշտապանակ «մի տեսակ զարդ» <kušt(a)pānak.
կռոգպետ «արհեստապետ» <*kirrug-pet. Համմտ. պրթ. մնք.) kirrōg, ասոր. (<իրան.) kārugpat.
կտակ <*gitāk ? Համմտ. մ. պ. gt'k (*gitāk <արամ. <gtt' + -āk) (?).
կուտապ «մի տեսակ խմորեղեն» <kutāp. Համմտ. պ. kūdab կամ gūdab.
կրպակ (ի-ա) «խանութ. գինետուն» <*kurpak. Համմտ. պ. kurba «խանութ».
հազար (ի-ա) <hazār. Համմտ. մ. պ., պ. hazār, պրթ. hz'r (hazār) և ավ. hazanra-).
հազարապետ (ի-ա) <hazār(a)pet.
հազարաւուխտ (ո) (պարսկական մի տիողոս) <*hazār(a)vuft (?). Համմտ. պ. hazaraft. տե՛ս հազար և զառնաւուխտ (?).
հակիրճ <hakirč (*hakṛtčit «մեկ անգամ»). Համմտ. ավ. hakərət, մ. պ. hakirč, hakarč, hakurč «մեկ անգամ» (ժխտմամբ՝ «ոչ մի անգամ, երբեք»), պ. hargiz (*hargiz <hakrič) «ոչ մի անգամ, երբեք» (?).
հաճ (ո) <hač-(?). Համմտ. ավ. hačaiti «ուղեկցում է, հետևում է», haxman «ընկերություն, միասնություն» (?)[44].
համակ «բոլոր, ամբողջ» <hamāk. Համմտ. մ. պ. hamāk, պրթ. hmg.
համասպրամ «անուշաբույր (ծաղկի մասին)» <*ham(a)spram. Համմտ. մ. պ. sp(a)ram, պ. siparam, isparam «ռեհան», սոգդ. sprγwm (sparγum), sprγmk (spraγmak) «ծաղիկ», այլև ուշ հայ. (<իրան.) շահ(ա)սպրամ.
համար (ո, ու) <hamār. Համմտ. մ. պ. (գրաբ.) āmār, պ. hamār «հաշիվ, թիվ, չափ».

---

[42] Ա. Մեյեն [Meillet, 1916, 128] և, նրա հետևողությամբ, Հ. Աճառյանը [ՀԱԲ, 2², 542] համեմատում են սոգդ. k'δy (kāδe) «կարի, հույժ» բառերի հետ։

[43] Հ. Աճառյանը [ՀԱԲ, 2², 630] այս համեմատությունները դնում է կասկածելիների շարքում։ Համմտ. ավելի ուշ ավանդված պատգոսապան բառը։

[44] Ըստ Ա. Մեյեի. ընդունում է Հ. Աճառյանը [ՀԱԲ, 3², 15]՝ բերելով ավ. ձևերը և միաժամանակ մ. պ. sačītan, պ. sazīdan «պատշաճել» բառերը, որոնք սրա հետ կապ չունեն։

համարակար «հաշվակալ» < hamar(a)kar(a)-. հմմտ. հ. պ. *hamarakara- «հաշվակալ», պրթ. ḫmrkr «տնտես».

համաւրէն <hamaβᵟēn. հմմտ. մ. պ. ham-aᵟvēn (aᵟvēn՝ aβᵟēn-ի կողքին, որտեղից հայ. աւրէն) [տե՛ս Периханян, 1973, 483][45].

համբարակ «շտեմարան» < *hambārak. հմմտ. մ. պ. anbārak, hambār, պրթ. 'mb'rg (amʰārag). տե՛ս (հ)ամբար.

համբարակապետ < *hambārak(a)pet.

համբարու «պարիկ» < hambaru. հմմտ. պ. hambaruna «տան ոգի».

համբաւ (ու, ո, ի-ա) < *ham-bāv. հմմտ. խոտ.-սակ. pra-vā «զրույց», այլև հ. հնդկ. sabhā «ժողով» (*«խոսակցություն»).

համբոյր (ի) <*ham-bōᵟ. հմմտ. սոգդ. (մնք.) 'nβyᵟ (*ham-baudaya-) «համբուրել».

համապազ «միշտ» < *han(a)-pāz (*hama-pāza-, որտեղ pāza-ն հ.-ե. *pag'- «ամրացնել, կապել» արմատից) (?).

հանգամանք (-աց) < hangām. հմմտ. մ. պ. hangām «ժամանակ, ժամկետ, հանգամանք», պ. hangām «ժամանակ», տե՛ս անգամ[46].

փուտ (ո) (փտել, -իլ) < pūt. հմմտ. մ. պ. pūtak «փտած, նեխած», պ. pūd «հին, փտած» և ավ. pūiti- «փտոտ, փտում, նեխում»[71].

քաղաք (ի-ա) < *kalāk (*katāka-). հմմտ. մ. պ. kl'k (kalāk) «բերդ, ամրոց», (թուրֆ.) qdg, պ. kada «տուն, բնակարան».

քանդ «քարի վրա փորագրություն» (քանդ-ել «ավերել. տանջել. քարի վրա փորագրել») < kand. հմմտ. մ. պ., պ. kandan «քանդել, փորել, քանդակել, փորագրել».

քանդակ < kandak.

քարշ (-ել) < karš-. հմմտ. ավ. karš-, մ. պ. kašītan, պ. kašīdan.

քէշ (ի) (քեշտ, ուշ՝ կեշտ) «զրադաշտական կրոն» < kēš. հմմտ. մ. պ., պ. kēš, kīš.

քունար-ուկ «մի տեսակ ծառ և նրա պտուղը» < kunār. հմմտ. պ. kunār „Zizyphus spina Christi".

քսակ < *kīsak. հմմտ. պ. kīsa (> հայ. բրբռ. քիսա).

քրքում (-ի) «շաֆրան, զաֆրան» < *kurkum. հմմտ. պ. kurkum։

Վերևում բերված ցանկում իրանական հիմնական փոխառությունների թիվը հասնում է 712-ի, համապատասխան վերջածանցային և վերջածանցակերպային ձևերի հետ միասին առնված՝ 837-ի (մովպետը և պարեկապան-ը մոգպետ-ից և պարճակապան-ից տարբեր բառեր համարելու դեպքում՝ 839-ի)։ Սակայն իրականում այդ թիվը շատ ավելի մեծ է. ինչպես կտեսնենք փոխառությունների հնչյունական և բառակազմական առանձնահատկությունների քննության ժամանակ, կարելի է առանձնացնել հնարավոր իրանական ծագման մեծաքանակ բառեր, որոնց բուն աղբյուրների վերաբերյալ առայժմ հայտնի իրանական տվյալներում վկայություններ չեն պահպանվել։

---

[71] Նման սովորական բառի փոխառությունը (եթե, մանավանդ, նկատի առնենք ո հոլովումը՝ մի կողմից և իրանական ածանցական ձևերի բացակայությունը հայերենում՝ մյուս կողմից) կասկածելի է. Թերևս անմիջապես ծագում է հ.-ե. *put-ի *phu-t- հնարավոր տարբերակից։

Նախքան իրանական փոխառությունների հնչյունական, ձևաբանական, բառակազմական առանձնահատկությունների և իմաստային-թեմատիկ խմբերի քննությանն անցնելը կանգ առնենք բուն հայկական ու իրանական ծագման բառերի հնչյունական առանձնահատկությունների համընկման դեպքերի և իրանական հնագույն փոխառությունների ժամանակագրական շերտերի տարբերակման այն եղանակների վրա, որոնք առաջ են բերում գնահատման տարբերություններ։

Լինելով հնդեվրոպական առանձին խմբերի պատկանող լեզուներ՝ հնչյունական նշանակալից տարբերություններով հանդերձ, այնուամենայնիվ որոշ դեպքերում հայերենը և իրանական լեզուները ունեն այնպիսի բառային ձևեր, որոնք արտաքնապես կարող են համընկնել և, հետևաբար, առաջ բերել տարբերակման դժվարություններ։ Հայերենի՝ հնդեվրոպական լեզուների մեջ գրաված տեղի վերաբերյալ հարցի քննարկումից պարզվեց, որ տարբերակիչ հատկանիշների հետ միասին հայերենը և իրանական լեզուները ունեն նաև ընդհանուր հատկանիշներ. նկատի ունենալով իրանական հնչյունների հայկական փոխառություններում արտացոլվելու առանձնահատկությունները՝ կարելի է ասել, որ հետևյալ դեպքերում մենք կունենանք հայերենի հ.-ե. ծագման բառերի և իրանական փոխառությունների հնչյունական էական համընկումներ հատկապես՝ 1) հ.-ե. *a, *ā, *i, *ī, *u, *ū ձայնավորների. 2) հ.-ե. *m, *n, *r և *l ձայնորդների (վերջինս իրանականում տալիս է հիմնականում r). 3) հ.-ե. *bh, *dh, *gh, *ph, *th, *kh, *k´ և մասամբ *g´h, *s բաղաձայնների և 4) հ.-ե. *sp, *st ու որոշ այլ կապակցությունների դեպքում։ Հայերեն փոխառությունների մեջ՝ ձայնավորների և երկբարբառների երկարության ու կարճության իրանական տարբերությունները վերանում են, և ստացվում են միևնույն ա, ի, ու արտացոլումները. *ph, *th, *kh-ի դեպքում իրանական փոխառությունների f, θ, x-ն հայերենում արտացոլվում են փ, թ, խ և համընկնում հայերեն համապատասխան արտացոլումների հետ. *g´h-ի միջձայնավորային z և k´-ի s (բացի հին պարսկերենից) արտացոլումները համընկնում են հայերեն համապատասխան արտացոլումների հետ. *s-ն բառասկզբի որոշ դիրքերում հայերենում տալիս է հ և համընկնում իրանական համապատասխան արտացոլումների հետ։ Եթե սրանց գումարենք *g´h-ի բարբառային հնարավոր իրանական j արտացոլումը որոշ դիրքերում, հատկապես r-ից հետո (հմմտ. դերձակ, հանդերձ և այլն), ձայնավորների հերթագայությունները, որոնց դեպքում հ.-ե. *e, *ē, *o, *ō, ձայնավորների թուլացած *ə, *a աստիճանները (հմմտ. նաև հ.-ե. *r̥ > հայ. ar, մասամբ նաև հ.-ե. *o- > հայ. a-) կարող են հայերենում արտացոլվել որպես ա և համընկնել իրանական բուն (ոչ թուլացած) արտացոլումների հետ, ուշ շրջանի իրանական ä-ի հայ. ե անցումը, համընկումների քանակն ավելի կմեծանա։ Զգալի համընկումներ կարող են տալ և բնաձայն արմատները։

Վերևում հիշված պայմանների՝ մեկ բառի մեջ համընկնելու դեպքում առաջանում են երկակի գնահատման տարբերություններ, երբեմն էլ հնարավոր է խոսել հայկական ու իրանական ձևերի բաղարկման մասին։ Այսպիսի երկակի գնահատման հնարավորության դեպքում հարցը հօգուտ բառի իրանական ծագման լուծելիս հաշվի են առնվում համապատասխան հնդկական ձևերը, իրանական բառակազմական կաղապարները, իրանական բաղադրությունների և համանիշների առկայությունը կամ բացակայությունը, իմաստային և բառակազմական առանձնահատկությունները, գործածականությունը և այլն։ Այսուհանդերձ մնում են դեպքեր, երբ հարցի լուծումը դժվարանում է. այսպես, **արուեստ** բառի **-եստ**-ը կարծես խոսում է նրա հայկական ծագման մասին՝ հ.-ե. *ar- «կցել, հարմարեցնել» արմատից (հմմտ. լատ. ars «արվեստ»), բայց կա իմաստով փոքր ինչ տարբեր հ. պ. arvastam բառը [**Ջահուկյան, 1981գ**]. **բիր**-ը համարվում է բնիկ հայերեն բառ՝ *bhi-ro-՝ bhei- «խփել» արմատից, բայց հավասար իրավունքով այն կարող է համարվել իրանական փոխառություն, մանավանդ եթե կապված է **բաճ**-ի հետ (*bher- «ծակել, կտրել, ճղել», եթե ոչ *bhdeh-ից՝ «փորել»)[72]. **դայեակ**, **սաուեր** բառերը Յ. Պոկոռնին դնում է բնիկների, Հ. Աճառյանը՝ փոխառությունների շարքում. **դառնամ** (**դարձ**) բայը համարվում է բնիկ, բայց նույն հաջողությամբ կարող է դիտվել որպես իրանական. դժվար է **նաւ** բառի բնիկ, թե իրանական լինելու հարցի որոշումը (հ.-ե. *nāu-), մանավանդ որ կան և՛ բնիկ հայկական, և՛ իրանական բաղադրություններ (հմմտ. **նաւազ** «նավավար», որի մեջ az-ը գալիս է հ.-ե. *ag´-ից. այստեղից է հայ. **ածեմ**-ը). հնարավոր է ենթադրել բաղարկություն. **յատակ**-ը Հ. Աճառյանը բխեցնում է հ.-ե. աղբյուրից (*ped-՝ *ped- «ոտք» արմատից), բայց հնարավոր է իրանական ծագում՝ *ā-tak (հմմտ. **տակ**<tak). ըստ ավելի մեծ հավանականության և տարածված կարծիքների՝ **բու**, **գաւառ**, **թել**, **յաւ**, **սար-ք**, **սաստել** (**սաստիկ**), **սխալ**, **սկունդ**, **սրունք**, **քէն** բառերը դրված են բնիկների շարքում, բայց դրանք հավասար հաջողությամբ կարող են բխեցվել և որոշ հետազոտողների կողմից բխեցվում են իրանական աղբյուրներից՝ **բու** (հ.-ե. bhu-) — պ. būf, būm (բայց **բուէճ**-ի **-էճ**-ը իրանական ծագում ունի, և **բուէճ**-ը պետք է համարել իրան. կազմություն). **գաւառ** (հ.-ե. *ghəu-/ghēu-) — ավ. gava- «գավառ, շրջան»(?), օս. ɣāv «գյուղ». **թել** (հ.-ե. *teklo-) — խոտ.-սակ. ttīla «թել». **յաւ** «վերջ» (հ.-ե. *paus-) — ավ. yav «տևողություն». **սար-ք** (հ.-ե. *kr̥-/ker-) — մ. պ. spar «վահան» (sp > s անցման համար հմմտ. **սպանդարամետ**—**սանդարամետ**) (Վ. Բելարդի, Ջ. Բոլոնյեզի). **սաստ** (հ.-ե. *k´ās-) — ավ. sāstar- «իշխող». **սխալ** (հ.-ե. *skhəl/skhel-) — հ. հնդկ. skhalatē «սայթաքում է, մոլորվում է». **սկունդ** (հ.-ե. *k´u̯ont-) — փարթ. skən, իշկ. skъnûk, յագն. sək°on- «շան ձագ, սկունդ». **սրունք** (հ.-ե. *krūs-) — ավ. sraoni- «հետույք, ազդր». **քէն** (հ.-ե. *k̯ʷoinā) — ավ. kaēna- «պատիժ, հատուցում, վրեժ», մ. պ. kēn «քեն, վրեժ» և այլն։ Է. Բենվենիստը [REA, 1, 273] սրանց միացնում է **դէզ** (հմմտ. ավ. daēz- «դիզել»), **հաս** (**հասանել**) (հմմտ. պրթ. has «հասակ, ծագում»), **սամի** (հմմտ. ավ. yuyō-səmi = վեդ. yugaśmayá-, որտեղ səmi = **սամի**), այլև **իր** (հմմտ. պրթ. 'yr «իր, բան»), **սուրբ** (հմմտ. վեդ. śubhrá- «փայլուն, գեղեցիկ») բառերը, որոնց իրանական ծագումը կասկածելի է. մասնավորապես **իր** բառը ակնհայտ ստուգաբանական շարք է կազմում **ի-մն**, **ի-նչ**, **ի-ք** բառերի հետ (հ.-ե. *kʷi-), իսկ **սուրբ**-ը իմաստով հեռու է վեդայական բառից և ունի հայերենին բնորոշ *bhr > **րբ** դրափոխությունը։ Համեմատաբար ավելի հավանական պիտի համարել **աւգուտ** բառի իրանական ծագումը (հմմտ.

---

[72] Հ. Աճառյանը [ՀԱԲ, 1^2, 392—393] կապում է **բաճ**-ի հետ, բայց համարում բնիկ հայերեն՝ սխալ հիմունքով վկայակոչելով **մաճ** բառը, որ իրականում նույնպես իրանական ծագում ունի։

հ. պ. abigāva- > արամ. ʼbgw, պրթ. ʼbgw «աճ, հավելում», հ. պ. abi-jav-, պ. afzūdan «ավելացնել), որ Է. Բենվենիստը բերում է „աւգնել, աւգնական բառերի հետ միասին՝ առանց սրանց աղբյուր ծառայած ձևերը ճշտելու։ Խարել, խարոյկ, խարշեմ բառերը մենք դրել ենք բնիկ հնդեվրոպականների շարքում, բայց նույնքան հնարավոր է նրանց իրանական ծագումը (հմմտ. -ոյկ ու մ. պ., պրթ. -ōk և հ.-ե. *rs > իրան. rš)։ Առայժմ մենք ավելի հավանական ենք համարել ատեան, աւետ, երանիկ, երջանիկ, մաշել, մոշ, որմ, սռուար, փոր բառերի բնիկ հնդեվրոպական, քան իրանական ծագումը։ Նրանց համար առաջարկված իրանական զուգահեռները բավականաչափ համոզիչ չեն։

Մի քանի խոսք ժամանակագրական հարցերի մասին, որոնց կանդրադառնանք նաև իրանական փոխառությունների հնչյունական առանձնահատկությունների քննության կապակցությամբ։

V դ. ավանդված հայ. բառերը ժամանակագրական առումով միատարր չեն։ Սրանց մեջ կան ինչպես այդ դարից առաջ կատարված հին և միջին իրանական, այնպես էլ հենց այդ դարում կատարված միջին իրանական փոխառություններ, որոնք գալիս են սասանյան փուլից։ Այս փոխառությունների տարբերակման համար հարկավոր է նկատի ունենալ և՛ արտաքին՝ իրանական, և՛ ներքին՝ հայկական, փաստերը։ Առաջին դեպքում բնական է կարծել, որ հին և միջին իրանական փոխառությունները կարելի է տարբերել առաջին հերթին հայերեն բառերի՝ հին, թե միջին իրանական ձևերին մերձավոր լինելու առումով։ Սակայն այս չափանիշն էլ բացարձակ արդյունք չի տալիս, եթե նկատի ունենանք համաբանական (անալոգիական) համահարթման և ժողովրդական ստուգաբանության ու վերաիմաստավորման հնարավորությունը։ Այսպես, հայտնի է, որ հին իրանական շրջանում հոլովական վերջավորությունները հիմնականում պահպանվում են, միջին շրջանում ընկնում. կարծես թե հեշտ է ըստ այդմ անվերապահորեն հին իրանական համարել այն բոլոր փոխառությունները, որոնց մեջ առկա են թեք հոլովների հոլովիչ ձայնավորների, ինչպես նաև բարդությունների առաջին բաղադրիչների մեջ հին իրանական հիմքային ձայնավորներին համապատասխան ձայնավորներ. սակայն եթե այս սկզբունքը ու, ի ձայնավորների դեպքում թերևս որոշ չափով արդարացնում է իրեն (հմմտ. խրատ, սեռ. խրատու, ախտ, սեռ. ախտի՝ ավ. xratu-, axti- ձևերի կողքին), ապա -ա-ով հիմքերի դեպքում բացարձակ արդյունքներ չի տալիս. հոլովման -ա-ով հիմքերի դեպքում հնարավոր է համաբանական ազդեցություն, եթե նկատի առնենք անձերի անուններից շատերի հոլովվելը ի-ա հոլովմամբ և բարդությունների ու ածանցումների մեջ ա հոդակապի համաբանական տարածումը. վերջին հանգամանքով է բացատրվում ու-ով և ի-ով հիմքերի՝ բարդությունների և ածանցումների մեջ ա-ով հիմք, այսինքն՝ ա հոդակապ ստանալը (հմմտ. ախտ, սեռ. ախտի, բայց ախտաժէտ). մասնավորապես հեշտությամբ է տարածվել ա հոդակապը միջին իրանական այն բարդությունների փոխառության դեպքում, որոնց բաղադրիչները հայերենում գիտակցվել են. այսպես, -պետ-ով բարդությունները, անկախ հին, թե միջին շրջանում փոխառված լինելուց, ունեն, հազվադեպ բացառություններով, -ա- հոդակապ, այսինքն՝ գիտակցվում են մեծ մասամբ որպես հայկական բարդություններ, մանավանդ եթե առաջին բաղադրիչները

անկախ գործածություն ունեն. բացառություն են կազմում միավանկ առաջին բաղադրիչներ ունեցող մարդպետ, մարզպետ, մոգպետ բառերը։ Հարկավոր է նկատի առնել նաև միջին իրանական որոշ տարածքներում առանձին արխաիկ ձևերի պահպանված լինելու հնարավորությունը, ձևեր, որոնք կարող էին հայերենի անմիջական աղբյուրը լինել։ Բերենք մեկ օրինակ. հայ. համարակար «հաշվակալ, հաշվապահ» բառը կարող էր գալ ինչպես հ. պ. hamārakara-, այնպես էլ պրթ. hamārkar ձևից (այսպիսի նախաձև վերականգնում են հայ. բառի համար Հ. Հյուբշմանը և, նրա հետևողությամբ, Հ. Աճառյանը)։

Հայկական ներքին աղբյուրները ժամանակագրական հարցերի լուծման համար կարևոր են մի քանի առումով։ Նախ, ինչպես հայտնի է, V դարի համար տարբերում են դասական կամ մեսրոպյան շրջանը (մինչև 460 թ.) հետագա շրջանից. բնականաբար ավելի վաղ շրջանի բառերն առանձնացնելիս առավելությունը տրվում է դասական շրջանի հեղինակներին, որոնց լեզուն մոտ է ժամանակի խոսակցական լեզվին, և որոնց գործածած բառերը գալիս են հիմնականում խոսակցական լեզվից։ Երկրորդ՝ էական նշանակություն ունի աղբյուրների՝ ինքնուրույն, թե թարգմանական լինելը. բնական է կարծել, որ հունարենից, ասորերենից կատարված թարգմանություններում (սաղմոսաշունչ, Ոսկեբերան, Եփրեմ և ուրիշներ), հանդիպող իրանական փոխառությունները պետք է եկած լինեն խոսակցական լեզվից, այսինքն՝ գործածական բառեր եղած լինեն։ Երրորդ՝ էական նշանակություն ունի հայ հեղինակի թեմատիկան. բնականաբար, իրանական կյանքի հետ կապված պատմական և կրոնական-դավանաբանական երկերում տեղ պետք է գտնեին իրանական կյանքի հետ կապված, միայն գրական բնույթ ունեցող կամ խոսակցական լեզվում հազվադեպ հանդիպող, պաշտոնական փաստաթղթերին հատուկ բառեր, որոնք չեն կարող շատ մեծ հնություն ունենալ։ Առանձնապես շատ են այս կարգի բառերը Բուզանդի, Եզնիկի, ավելի ուշ Եղիշեի և ուրիշների երկերում։ Չորրորդ՝ էական տվյալներ է տալիս բառի գործածականության սահմանը. մեկ-երկու անգամ հանդիպող բառերը անվերապահորեն հանելը մենք առայժմ վաղաժամ համարեցինք՝ մինչև բանասիրական ավելի մանրակրկիտ քննություն կատարելը. հմմտ. առունանակ, բանուկան, դեն, զարատակ, խար «անասնակեր» ճիրիկ «մի տեսակ ծաղիկ», ճանբակ, կռտակ, կռոգպետ, ղամղայեալ, ճեմիշ, մենբան, շապստան տակառապետ, պառակ, պէւասպիկ, սակստան անդերձապետ, սաճ, ստակ «պարզ», սմեակ, սոր, սպոյժ, վաղզոճար, տապաստակ, փաղան և այլն։ Այս և ցուցակում տեղ գրաված այլ բառերի զգալի մասը կապված է պարսկական կյանքի հետ և հայերենի համար բնորոշ չէ՝ կռոգպետ, շապստան տակառապետ, սակստան անդերձապետ, փաղան, այլև ճազարաւուխտ, մազդեզն, մաշկապարճէն, ճէշ և այլն։ Նման բառերը հիմնականում միջին պարսկերենից են՝ ի տարբերություն ավելի հին և տարածված բառերի, որոնք հիմնականում պարթևերենից և մեդերենից են։

Այս առումով հետաքրքրական է հայերենի իրանական փոխառությունների համեմատությունը վրացականների հետ, որոնց նշանակալից մասը զուգահեռներ ունի հայերենում և մասամբ էլ կատարված է հայերենի միջնորդությամբ։

Իրանական փոխառությունների բարբառային և ժամանակագրական շերտերը վրացերենի համար տարբերակվելու փորձ է կատարել Մ. Անդրոնիկաշվիլին իր «Իրանա-վրացական լեզվական փոխհարաբերությունների ակնարկներ» գրքում [Andronikašvili, 1966]։

Հին շրջանի համար Անդրոնիկաշվիլին առանձնացնում է մեդական, հին պարսկական, ավեստական, սկյութա-սարմատական և, սրանց հետ կապված, ալանա-օսական բառաշերտեր։

Մեդական համարված գրեթե բոլոր բառերը զուգահեռներ ունեն հայերենում։ Բացի Arṭavaz < իրան. Artavazdah (հայ. Արտաւազդ) և Parnavaz < իրան. Farnavazdah (հայ. Փառնաւազ) անձնանուններից, Անդրոնիկաշվիլին նշում է հետևյալ բառերը՝ 1) bagini < իրան. *bagaina (հայ. բագին), 2) mogvi < իրան. *maguš, ավ. moγu-, հ. պ. magu- (հայ. մոգ, -ու), 3) ganji < իրան. *ganza (հայ. գանձ), 4) (s)ṗilenji < իրան. *pirinj (հայ. պղինձ) և 5) masṗinjeli, այլև Asṗinja — տեղանուն < իրան. *aspinj (-ǰ) (հայ. ասպնջական)։ Սրանցից միայն հայ. ասպնջական-ն է հնչյունապես այնքան տարբերվում վրաց. ձևից (վրաց. j = ձ-ի դիմաց հայ. ջ), որ մեդականի փոխարեն կարելի է ենթադրել այլ՝ պարթևական աղբյուր։

Հին պարսկական ծագում է վերագրվում, բացի parsi (հայ. պարսիկ) ժողովրդանունից, Arṭaban < հ. պ. Artabanu (հայ. Արտաւան), Vašṭasab < հ. պ. Vištāspa (հայ. Վշտասպ) անձնանուններից և Armazi < հ. պ. A(h)uramazda դիցանունից (հայ. Արամազդ, ուշ՝ Որմիզդ), հետևյալ բառերին և արմատներին՝ 1) -art- (m-art-ali «արդար, ճիշտ») < հ. պ. arta-, 2) -arj- (m-arj-ve «ճարպիկ, աշխույժ») < հ. պ. arj- (հայ. ուշ՝ արժան), 3) vani < հ. պ. vahana- (հայ. վան, աւան)։ Սրանցից միայն van-ն ունի հայերենում ուղղակի զուգահեռ, և այն էլ ավելի հավանական է ենթադրել պարթևական աղբյուր, որտեղ առկա է ավելի մոտ ձև՝ բառամիջի h-ի անկումով՝ avān՝ հ. պ. ā-vahanam-ի դիմաց[73]։

Ավեստայի լեզվի բառատարրերից նշվում են հետևյալները. 1) cminda «սուրբ» < ավ. spənta (հմմտ. հայ. սպանդ-՝ սպանդարամետ բառում), 2) ešna, ešnaki «չար ոգի» < ավ. aēšma (չար ոգու անուն), 3) parto «լայն» < ավ. pərəθav- (pərəθu-), 4) droša < ավ. drafša (հայ. դրաւշ, դրաւշակ), 5) jojoxeti < ավ. daožahva- (հայ. դժոխ-ք)։ Ավեստերենի ուղղակի ազդեցությունը վրացերենի և հայերենի վրա ընդհանրապես անհավանական է, և հայ. դրաւշ, դժոխ բառերի ու նրանց վրացական համարժեքների համար ավելի հավանական է ենթադրել միջին իրանական աղբյուր, մանավանդ որ երկրորդ բառում հայ. և վրաց. x-ն (խ) արտացոլում է xv-ն, մինչդեռ ավեստերեն բառաձևը ունի hv-ով ձև։ Վրաց. droša-ն ամենայն հավանականությամբ փոխառված է հայերենի միջնորդությամբ՝ աւ < o հայկական հնչյունափոխությամբ։

Եթե մեդերենի և հին պարսկերենի՝ վրացերենի վրա գործած բառային ազդեցությունը գրեթե նույնությամբ կիսում է նաև հայերենը, որ ունի այդ լեզուներից առնված սեփական, վրացերենի հետ չհամընկնող տարրեր ևս, ապա նույնը չի կարելի ասել սկյութերենի, ալաներենի և առավել ևս օսական ազդեցության մասին. աշխարհագրական դիրքերի և պատմական շփումների ժամանակագրական սահմանների տարբերության հետևանքով այդ ազդեցությունը պետք է ուժեղ լիներ վրացերենի և թույլ՝ հայերենի վրա։ Եվ իրոք, Մ. Անդրոնիկաշվիլու և նրա նախորդ հետազոտողների, հատկապես Վ. Ի. Աբաևի և Գ. Ս. Ախվլեդիանու՝ վրացերենում առանձնացրած շերտը հայերեն այնպիսի զուգահեռներ չունի, որոնք վկայեն հիշյալ լեզուների՝ հայերենի վրա գործած ուղղակի կամ անուղղակի քիչ թե շատ ուժեղ ազդեցության մասին։ Իսկ Անդրոնիկաշվիլին առանձնացնում է վրացերենի՝ այդ լեզուներից փոխառած 108 հասարակ և զգալի թվով հատուկ անուններ, որոնց համար հայերեն ուղղակի զուգահեռներ չի նշում։ Անկախ Անդրոնիկաշվիլու տվյալներից՝ դժվար չէ նկատել վրացերեն բառերի որոշ մասի՝ հայերեն համապատասխան բառերի հետ ունեցած նմանությունը, բայց այդ նմանության բնույթը տարբեր է։ Մի շարք դեպքերում վրացերեն և հայերեն զուգահեռները իրանական ծագում ունեն, բայց գալիս են բարբառային տարբեր աղբյուրներից, ընդ որում վրացերեն բառը միշտ չէ, որ ծագում են սկյութերենից և նրա հետնորդներից (կան նույնիսկ դեպքեր, երբ վրացերեն բառերը կարող են փոխառված լինել իրանական աղբյուրից հայերենի միջնորդությամբ)՝ վրաց. bevri — հայ. բիւր, վրաց. rangi — հայ. երանգ, բրբռ. ռանգ, վրաց. ṭep— «տաքացնել» — հայ. տապ, վրաց. šavi — հայ. սեաւ և այլն։ Որոշ դեպքերում Մ. Անդրոնիկաշվիլու առաջարկած ստուգաբանությունները կասկածելի են. այսպես, ակնհայտորեն հայերեն ծագում ունեն վրաց. առն «վայրի ոչխար» (հայ. առն), buci «գառ» (հայ. բուծ), verji «խոյ, արու ոչխար» (հայ. որձ «արու», յորձ «արու ոչխար»), pinti «զզվելի» (հայ. փնթի «կեղտոտ զզվելի») և այլն։ Հավանական է նաև ḳel- «կաղալ» արմատի հայկական ծագումը, թեև նրա համար որպես աղբյուր ենթադրվող կաղ բառի ծագումը և հարաբերությունը խեղ, շեղ, շիլ բառերի հետ լրիվին պարզ չէ։ Անհավանական է նաև վրաց. aḳuta «խոհանոցային սալօջախ», amindi «եղանակ», mteli «մթել, աստառ» բառերի օսական ստուգաբանությունը՝ նրանց բխեցումը ag-wat «գարեջրի կաթսայի տեղ» (ag «կաթսա» և wat «տեղ»), ämond «երջանկություն, բախտ», myd «ներքին» բառերից, մանավանդ որ դրանց հայերեն զուգահեռները՝ ակութ, բրբռ. ամինդ, բրբռ. մթել (մթիլ) այդ աղբյուրներով չի կարելի բացատրել։ Վրաց. za-, zav- «ծնել» և zrax- «խոսք, խոսել» արմատները կարելի էր համեմատել հայ. զաւակ և զր-ոյց բառերի հետ, բայց Անդրոնիկաշվիլու ստուգաբանությունը բավարար հիմք չի տալիս դրա համար (օս. zajün «ծնել, ձագ բերել», պրս. zāyad «ծնում է»՝ zādan-ից, օս. zərən/zərd «խոսել»՝ ծագումն անհայտ, ըստ Անդրոնիկաշվիլու՝ գալիս է իրան. zūr- արմատից, որից հայ. զուր)։ Այսուհանդերձ միանգամայն հնարավոր է զաւակ-ի և զր-ի իրանական ծագումը։

Մ. Անդրոնիկաշվիլին փորձում է տարբերել նաև վրացերենի միջին իրանական փոխառությունների բարբառային բուն աղբյուրները՝ պարթևերենը և միջին պարսկերենը, սակայն տարբերակումը ոչ բոլոր դեպքերում է հիմնավորված։ Պարթևական է համարվում 70, միջին պարսկական՝ 160 փոխառություն։ Վրացերենի՝ պարթևական ծագման բառերը, ինչպես նշում է Անդրոնիկաշվիլին, կարող են լինել անմիջական կամ հայերենով միջնորդված փոխառություններ և, բնականաբար, գրեթե ամբողջովին զուգահեռներ ունեն հայերենում, ընդ որում վերջիններս գերակշռող մեծամասնությամբ տեղ են գտել իրանական լեզուներից կատարված հայերեն փոխառությունների՝ վերևում

---

[73] Արդյոք. ebani «երկիր» բառը կարո՞ղ է փոխառություն լինել հին իրանական աղբյուրից։

բերված ցանկում։ Ստորև տրվում է պարթևական համարված հայերեն փոխառությունների ցանկը՝ Անդրոնիկաշվիլու համարակալումով, ընդ որում կասկածելի ստուգաբանությունները օժտվում են հարցականով, իսկ հայերենում զուգահեռ չունեցող վրացերենի բառերի փոխարեն դրվում է գիծ՝ 1) աճառ, 2) աւազակ (a-vaz-ak՝ vaz- *«գնալ, ճանապարհորդել»* ?), 3) աւազան, 4) ազն (ազնիվ), 5) համբաւ (ham-bav- *«մխավորում»* ?), 6) համբոյր (ham-bōδ-՝ bōδ *«բույր»* ?), 7) ամբոխ, 8) ամբարտաւան, 9) անազդակ, 10) ատրուշան, 11) բագին, 12) բնակ, 13) բանակ (bānak՝ bān *«տանիք»*, *պ.* bān *«տուն»* ?), 14) —, 15) գունդ, 16) —, 17) գուշակ, 18) դեսպան, 19) դանակ (*հմմտ. պ.* dāna ?), 20) դահլիճ, 21) դաշն, 22) դմակ, 23 —, 24) վան (*հմմտ. պ.* bān ?), 25) վարդ, 26) վարշամակ, 27) *վաշկարան (= մշկարան, *վրաց.* vaškaranii *«պարկ»*), 28) վաշտ (*հմմտ. պ.* gašti *«պահակ»*, gardan *«գումարտակ»*), 29) վիրագ, վայրագ (*հմմտ. հ. հնդկ.* vira, *լատ.* vir *«մարդ»* ?), վիշապ, 31) վագր, 32) սեպուհ, 33) զոհ, 34) —, 35) զուարակ, 36) քաղ, 37) —, 38) համար, 39) —, 40) մարգարէ, 41) —, 42) —, 43) պա(ր)ն, 44) մատակարար, 45) մոյկ (մոյգ), 46) —, 47) —, 48) մուրհակ, 49) ժամ, 50) պարաւանդ, 51) պատանիկ, 52) պարհակ, 53) պատնէշ, 54) պատիւ, 56) պատիժ, 57) —, 58) —, 59) փոխ (*հմմտ. մ. պ.* puh, pīh *«ճարպ»* ?), 60) պատշան, 61) տապաստակ, 62) տաղաւար, 63) հրապարակ, 64) վնաս, 65) հարթ (*pṛth- < *հ.-ե.* *pḷth-, *վրաց.* parto ?), 66) հասակ (*հմմտ. պ.* āsā *«նման»* ?)։

բ) ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հնագույն շրջանի իրանական փոխառությունների հիմնական շերտի մեջ իրանական բաղաձայնների և ձայնավորների՝ հայկականների հետ ունեցած փոխհարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ աղյուսակով[74].

Իրան.	*Հայ.*	*Օրինակներ*
b	*բ*	bāzūk > *բազուկ*. anbār (ambār) > *ամբար*
d	*դ*	dāt > *դատ*. gund > *գունդ*
g	*գ*	gēs > *գէս*. marg (marγ) > *մարգ*
p	*պ*	parīk > *պարիկ*. kapīk > *կապիկ*
	փ	pīl > *փիղ*
t	*տ*	tōž > *տոյժ*. spētak > *սպիտակ*
	թ	tōšak > *թոշակ*. naft > *նաւթ*
k	*կ*	kāpōt > *կապոյտ*
	ք	kand- > *քանդ*. paykār > *պայքար*
ǰ	*ջ*	ǰatagōβ > *ջատագով*. tanǰ > *տանջ*
č	*ճ*	čār > *ճար*. vičār > *վճար*
	չ	čaman > *չաման*
j	*ձ*	ganj > *գանձ*

1	*2*	*3*
-β	*ւ*	dandan(a)βand > *դանդանաւանդ*
-δ	*ր*	bōδ > *բոյր*
-γ	*գ*	moγ (mog) > *մոգ*
f	*փ*	farr > *փառք*
fr, hr	*հր*	framān, hramān > *հրաման*
-f	*ւ*	kafšik > *կաւշիկ*. naft > *նաւթ*. āfrīn- > *աւրհն-*
	խ	hazarāft > *հազարաւուխտ*. zumur(r)uft > *զմրուխտ*
θ	*թ*	
x	*խ*	xrat > *խրատ*. baxt > *բախտ*
xš	*շխ*	vaxš > *վաշխ*
v	*վ*	vat > *վատ*
-v	*վ, ւ, ու*	āvār > *աւար*. bavandak > *բաւանդակ* (*բովանդակ*). patvast > *պատուաստ*
z	*զ*	zēn > *զէն*. vārāz > *վարազ*
ž	*ժ*	žam > *ժամ*. druž > *դրուժ*
s	*ս*	s(i)yāv > *սեաւ*. dastak > *դաստակ*
š	*շ*	šēn > *շէն*. nišān > *նշան*
y	*յ*	yašt > *յաշտ*
-y	*յ*	hramay - (framay-) > *հրամայ-(ել)*
(i)ya	*եա*	(i)yav > *սեաւ*
h	*հ*	shamār > *համար*. dēh > *դեհ*
-hr,		
-hr,	*րհ*	parhak (pahrak) > *պարհակ*
	հ	pa(r)hak > *պահակ*
	ր	par(h)ak > *պարեկ*
r-	*ե/ար*	rasan > *երասան*. rag- > *երագ, արագ*
	ռ	rasan > *առասան*
-r	*ր*	aržan > *արժան*
	ռ	parāv > *պառաւ*
-rr	*ռ*	apurr > *ապուռ*
l	*լ*	laškar > *լաշկար «զորք»*
-l	*լ*	dōl > *դոյլ*
	ղ	dōl- > *դուղել* (*դուլել*) *«խմել ջուր քաշել»*.
m	*մ*	marz V *մարզ*. gumār > *գումար*
n	*ն*	nēzak > *նիզակ*. handēs > *հանդէս*
a	*ա*	hazār > *հազար*
(ä ?)	*ե*	kart > *կերտ*. andarz j- > *անդարձ*
ā	*ա*	xāvar > *խաւար*
va>ō	*ո*	xvastak > *խոստակ*. xvarāk (> xōrāk) > *խորակ*
av	*ով*	dsrav > *զորով*
ē	*է/ի*	dēm > *դէմ*. dēmak > *դիմակ*
	ե	dēn > *դեն*
ō	*ո/յ/ու*	kōr > *կոյր*. patmōčan > *պատմուճան*
	ո	kōtak > *կոտակ*
ī	*ի/(ը)*	sīk > *սիկ «տիղմ»*. vināš > *վ(ը)նաս*
ī	*ի/(ը)*	žīr > *ժիր, ժրանալ*
u	*ու/(ը)*	uxt > *ուխտ*. bunak > *բնակ*.
ū	*ու/(ը)*	sūg > *սուգ, սգալ*

Իրանական փոխառությունները բնութագրվում են հնչյունական մի շարք առանձնահատկություններով, որոնց հաշվառումը կարևոր է չվկայված աղբյուրներ ունեցող բառերի իրանական ծագումը պարզաբանելու համար։

1) Հ.-ե. *u̯*-ով և *i̯ -ով սկսվող բառերը հայերենում ներկայացված են գ և ջ (այլև ձ?), իրանականում՝* v *և* y *սկզբնահնչյուններով. նշանակում է՝ հ.-ե.* u̯-*ի դիմաց* վ *և* y-*ի դիմաց* յ *ունեցող հայերեն բառերի հիմնական աղբյուրը իրանական լեզուները և բարբառներն են. ընդհանրապես անկախ իրանական բառերի հնդեվրոպական աղբյուրների որոշումից՝ հայերենի վ-ով և յ-ով սկսվող (մանավանդ երբ յ-ն նախդրային ծագում չունի) բառերի մեջ* մեծ թիվ պետք է կազմեն իրանական ծագում ունեցողները։ Հավանական է, օրինակ, հետևյալ բառերի իրանական ծագումը, (մանավանդ երբ կան նաև այլ բնորոշ առանձնահատկություններ)՝ **վախճան**, **վականակ** «հասուն», **վահր**, **վաղակաւոր**, **վայել**, **վայր**, **վաստակ**, **վատին** (**վատնեմ**), **վարագոյր**, **վարակ**, **վարապանակ** «երասանակ», **վարակ**, **վարար** (**վրիրակ**) «վավաշոտ» **վարկ**, **վարուժան**, **վարսակ**, **վէժ**, **վէճ**, **վէպ**, **վէս**, **վէտ**, **վէր**, **վքար**, **վիժակ** «ծածկոց, վարագույր», **վիհ**, **վճառ**, **վհուկ**, **վսեամ** (**վսեմ**), **վսեստակ** «ոռճիկ», **վտառ** «երամակ, խումբ», **վտառակ** «ներքնակ», **վտառան** «մեկ ասպարեզ (տարածաչափ)», **վտիտ**, **վրէժ** և **յախուռն** (**յախոր**, **յախուրն**), **յամ** «ուշ (իրան. yam- «պահել»?), **յարակ** «երկար ժամանակ» (եթե **յար** «միշտ» բառից չէ), **յաւակն** «տևողություն» (**յաւակնիմ**), **յիմար**, **յոյզ** «վեզ», **յորնակ** «առյլակ», **յստակ**, **յաժար** և այլն։

---

[74] *Եթե իրան. տառանշանի մոտ գծիկ չկա, ապա նկատի են առնվում տարբեր դիրքերը. հաջորդող գծիկը (ī-, r- և այլն) նշանակում է հնչյունի նախորդող (սկզբնային) դիրքը, նախորդողը (-ī, -r և այլն)՝ հաջորդող (ոչ սկզբնային) դիրքը։*

2) Իրանական լեզուների և հայերենի փոխհարաբերության ընդհանուր քննությունից երևաց, որ հայերը շփվել են գերազանցապես հյուսիսարևմտյան բարբառների կրողների հետ։ Արևմտաիրանական բարբառներում ընդհանրապես բացակայում են սուլական կիսաշփականները. հայերենի իրանական փոխառություններում ն-ից հետո հանդիպող ձ-ն (**բրինձ**, **գանձ**, **բրինձ**)՝ ջ-ի դիմաց, և ր-ից հետո հանդիպող ձ-ն (**դերձակ**, **նանդերձ** և այլն)՝ գ-ի դիմաց, պետք է բարբառային նեղ տարածքներ ընդգրկած լինեն, եթե, իհարկե, գ/ձ հարաբերակցությունը հայկական երևույթ չէ. **մարզաց**, **արցակ** տիպի ձևերը զուտ հայկական փոխանցումներ են. ընդհանրապես բացակայում են ծ ունեցող իրանական փոխառություններ։ Այսպիսով, իրանական փոխառություններին բնորոշ են շշական ջ, ժ, շ (վերջինս համեմատաբար ուշ) և ոչ բնորոշ՝ սուլական ձ, ծ, ց կիսաշփականները։

3) Արևմտաիրանական լեզուների միջին դիրքերի համար բնորոշ β, δ, γ շփականները, այլև տարբեր դիրքերում հանդիպող f-ն հայերենում չեն ունեցել համապատասխան հնչյուններ, ուստի և արտահայտվել են **ւ** (**վ**), **ր**, **ղ**, **փ** (**ւ**, **խ**) հնչյուններով։

4) Հյուսիսարևմտաիրանական hr- (<fr-) և hr>rh>h (<-θr-<հ.-ե. *-tr-) հնչյունակապակցությունները հայերենում համապատասխանաբար ներկայացված են **հր-** (**հրաման**, **հրեշտակ**, **հրովարտակ** և այլն), **րհ** (**ճանապարհ**, **ճիրհ** և այլն), **հ** (**պահակ**՝ **պարհակ** ձևի կողքին), **ր** (**պարեկ**) ձևերով, ընդ որում հաճախ նկատվում է **րհ/հ/ր** հերթագայությունը [հմմտ. Bolognesi, 1951, 154]. կան դեպքեր, երբ հայերենի **րհ**-ի կամ **հ**-ի դիմաց վրացերենն ունի r։ Քանի որ բնիկ հայերեն բառերի համար **հր**, **րհ** զուգորդումները բնորոշ չեն, և բուն հայերեն բառերում **հ**-ն վերջնադիրքում չի հանդիպում, կարելի է ասել, որ **հր**-ով, **րհ**-ով բառերը գրեթե անխտիր և վերջնադիրքային **հ** ունեցողները զգալի մասով (մանավանդ եթե **հ**-ն հերթագայվում է **ր**-ի հետ կամ վրացերենում ունի r-ով զուգահեռ) իրանական ծագում ունեն, եթե նույնիսկ բուն աղբյուրները չեն վկայված[74]. այսպես, հավանական է հետևյալ բառերի իրանական ծագումը՝ **հրաժ–արիմ**, **հրաժեշտ**, **հրամէն** «երեկոյին մոտ ժամանակ», **հրապոյր**, **հրոս**, **հրուանդան**, **ագահ** (հմմտ. վրաց. angari), **բահ**[75] (հմմտ. վրաց. bari), **զարհայիմ** «մորմոքվել», **դիպահ** «առժամյա բանտ», **երան(իկ)** «փառավորված. ուրախ», **պատահ** (**պատեհ**), **վի(ր)հ** (հմմտ. **վիրապ**) և այլն։

5) Բնիկ հայերեն ժ-ով բառերը խիստ սակավաթիվ են՝ **իժ** (*ēghi-) բրբռ. **լիժ** (*ligh-) և այլն։ Պետք է կարծել, որ ժ ունեցող բառերի զգալի մասով, մանավանդ ժ-ով սկսվողները (հայերենը ժ-ով սկսվող բնիկ բառ չունի), իրանական ծագում ունեն՝ **ժանի-ք**, **ժապաւէն**, **ժառանգ**, **ժիտ** «հետաքրքրվող, լկտի, լիրբ», **ժխտ(եմ)**, **ժմերտ** «լկտի», **ժպիրհ** (ըստ Հ. Աճառյանի duž-pitra- «վատահայր» իրան. նախաձևից), **ապառաժ**, **նժոյգ**, **պժգալ** «խորշել» և այլն։

6) Իրանական փոխառությունների համար բնորոշ են **խտ** (<-xt<*-kt-, այլև ft), **շխ** (<xš), **շտ**, **զմ** և այլ տիպի զուգորդումները. մանավանդ **շխ** ունեցող բառերը գրեթե առանց բացառության իրանական ծագում պետք է ունենան (հմմտ. **աշխարհ**, **աշխէտ**, **երաշխ** և այլն)՝ **աշխար(հ)աւանդ** «պանդոկ, գինետուն» (**աշխար(հ)աւանդիկ** «պանդոկապան»), **աշխոյժ**, **երաշխէպ** «հարվածի տեղ. վիշտ» և այլն. **-զմ** ունեցող բառերից **պատերազմ** և **ռազմ** բառերի ծագումը հայտնի է. հնարավոր է նաև **գոհազմ** (մի թանկարժեք քար), **խազմ** բառերի իրանական ծագումը։

7) Իրանական փոխառությունների համար բնորոշ են՝ ա) **գ/ջ/ժ**, **կ/ճ/շ** հնչյունական հերթագայությունները՝ պայմանավորված հ.-ե. *gh, *g, *k բաղաձայնների երկրորդական քմայնացմամբ առաջին շարքի ձայնավորների մոտ. հմմտ. **արգ/արժ**, **բազ/բաժ**, **տուգանք/տոյժ**, **-կար**, **կերտել/ճար** և այլն. **կ/խ** հերթագայությունը՝ պայմանավորված դիրքային փոփոխությամբ (*k-՝ ձայնավորից առաջ>իրան. k>հայ. **կ** և k-, բաղաձայնից առաջ>իրան. x>հայ. **խ**) այլև հ.-ե. *k/kh տարբերակների առկայությամբ (*k>իրան. k>հայ. **կ** և *kh>իրան. x>հայ. **խ**) և այլն։ Այս առումով դժվար չէ այս հերթագայություններն ունեցող հայերեն բառերի մեջ տեսնել իրանական ներդրում։

Իրանական փոխառությունների՝ վերևում կատարված ընդհանուր քննությունից հետո անցնենք նրանց պատմա-ժամանակագրական և տարածական-բարբառային քննությանը։

Իրանական փոխառությունները պատկանում են ժամանակագրական տարբեր շերտերի, և նրանց հնչյունական որոշ առանձնահատկություններ հնարավորություն են տալիս բացահայտելու պատմական հաջորդականության առանձին հարցեր։

1) Հին և միջին շրջանի իրանական լեզուների համար բնորոշ է խուլ պայթական և կիսաշփական բաղաձայնների ոչ շնչեղ արտասանությունը. այս առումով p, t, k, č բաղաձայնների դիմաց հայերենում **պ**, **տ**, **կ**, **ճ** պարզ խուլերի առկայությունը վկայում է նրանց ժամանակագրական ավելի վաղ շերտերի պատկանելու մասին՝ ի տարբերություն **փ**, **թ**, **ք**, **չ** արտացոլումների. վերջին դեպքում, իհարկե, պետք է բացառել իրանական բառերի՝ սեմական միջնորդությամբ փոխառվելու հնարավոր դեպքերը, ինչպես կարծում է Ա. Մեյեն, օրինակ, **թագ** բառի մասին։ Ընդհանուր առմամբ ակնհայտ է, որ V դ. վկայված իրանական հետևյալ փոխառությունները գալիս են համեմատաբար ոչ վաղ շերտերից՝ **փաղան** (**փաղամ**) «լաշակ», **փաշաման**, **փարգաստ** «[illegible] թև», **փերակ**, **փիղ**, **փուշտիպան** «թիկնապան», **փուշտիպանսալար** «թիկնապահապետ», **փուրսիշն** «դատաքննություն», **թակոյկ**, **թիրախ**, **թմբուկ**, **թոյակ**, **քաղ**, **քրահևար** «բարի գործ», **քրքում** **չաման**, **չաշմակ** «արտաք-

---

[74] -ն-ով վերջացողների մի մասը թերևս ուրարտերենից է գալիս (հատկապես բայերի և բայահիմքային ածականների դեպքում)՝ ն/խ հերթագայությամբ։

[75] Ըստ Հ. Աճառյանի [ՀԱԲ, I² 392—393] հ.-ե. ծագում ունի, որ ճիշտ չէ։

նոց»։ Որոշ դեպքերում կան զուգահեռ ձևեր, որոնցից, օրինակ, փուշտիպան, չաշմակ ձևերը ավելի ուշ շրջանի են, քան համապատասխան պաշտպան, ճեմիշ «արտաքնոց» ձևերը։

Եթե ճիշտ են ստուգաբանված պարեգաւտ և պարտէզ բառերը, ապա դրանց մեջ իրան. ձայնեղ d-ի դիմաց առկա է տ, որ արտասովոր երևույթ է։

2) Իրանական որոշ փոխառությունների մեջ նկատվում են պատ-/պայ- և -կան/-եան զուգահեռ ձևերը, որոնցից առաջինները ավելի հին են. համմտ. մի կողմից՝ պատգամ, պատկեր, պատսպարեմ և այլն, մյուս կողմից՝ պայազատ, պայման, պայքար. մի կողմից՝ ոստիկան (ōstīkān, պզ. ōstīyān), մյուս կողմից՝ մատեան (mātyān <?mātīkān).

3) Իրանական r-ով սկսվող բառերը հայերենում ներկայացված են կամ ա, ե նախահավելվածով (ար-, եր-, առ-), կամ առանց նախահավելվածի (ռ-). մի կողմից՝ արագ (երագ), արոյր, երախ, երակ, երամ, երանգ, երաշխ, երաշտ, երասան, երիտասարդ, առասան, առատ, մյուս կողմից՝ ռազմ, ռահ «ճանապարհ», ռամ «գռեհիկ ժողովուրդ», ռոճիկ, ռոշնական «լուսավոր». սրանցից հնագույնները առաջիններն են, որոնք զարգացման տիպով հարաբերակից են հ.-ե. *r-ով, *sr-ով, *pr-ով, *tr-ով սկսվող ձևերից ծագող ա կամ ե նախահավելվածով ձևերին՝ արեգ, երես, երեք, առու և այլն. ավելի նոր են ռ-ով սկսվողները. իրանական որոշ այսպիսի բառեր փոխառվել են տարբեր ժամանակներում տարբեր ձևով, թերևս երբեմն էլ հայ ժողովրդի տարբեր հատվածների կողմից։ Այսպես rasan-ը փոխառվել է երասան, առասան և ռասան ձևերով. ram-ը՝ երամ և ռամ (ռամիկ) ձևերով. rang-ը՝ երանգ և բրբռ. ռանգ ձևերով։

4) Կան իրանական այնպիսի բառեր, որոնց մեջ եղած բաղաձայնական կապակցությունները ժամանակի ընթացքում պարզվել են, որոշ բաղաձայններ էլ ընկել, ընդ որում առանձին դեպքերում դժվար է որոշել՝ այս կամ այն փոփոխությունը գալիս է իրանականի՞ց, թե՞ տեղի է ունեցել հայերենում։

Վերևում մենք խոսեցինք rh կապակցության՝ հայերենում րհ, հ և ր արտացոլվելու մասին։ Ճիշտ է, իրանական բարբառագիտական աշխատություններում նշվում է rh>h փոփոխությունը, բայց հնարավոր է մի շարք դեպքերում րհ>հ և hr>րհ անցում հենց հայերենում. բոլոր դեպքերում էլ եղած տարբերակներից րհ-ով ձևերն ավելի հին են, քան հ-ով ձևերը. համմտ. *բարհ (բրբռ. բհիր) և բահ, մարհ և մահ, պարհ և պահ, պարհակ և պահակ և այլն, այլև xvanahr>խոնարհ, šnohr>շնորհ:

Իրան. xš կապակցությունը համեմատաբար ուշ պարզվել է š-ի։ Հին շրջանի համար ավելի բնորոշ է առաջինը։ Այս առումով հայ. ապաշխարել, աշխատ, աշխար, աշխարաւանդ «թագի կապ», աշխարհ, աշխար(հ)աւանդ «պանդոկ», աշխէտ, աշխոյժ (?), ապաշխարել, բարաշխ «խիստ» բառերը, Աշխէն անձնանունը պետք է ավելի հին փոխառություններ լինեն, քան շխ-ի պարզացմամբ ծագած շ-ով ձևերը՝ շահապ «իշխան», շահապատ «պահապան», շահաստան «մայրաքաղաք» (շահ- šah(r)- <xšahr-), շէն (šēn <xšaina-)։

Հայ. սահման բառը ավելի հին կերպարանք ունի՝ sāhmān, քան վերջինիս ավելի ուշ ավանդված մ. պ. sāmān ձևը, թեև այստեղ հնարավոր է նաև բարբառային տարբերություն։

Ինչպես կտեսնենք հատուկ անունների քննության մեջ, հին կերպարանք ունեն Արամազդ (Auramazda) Վահագն անունները՝ ի տարբերություն ավելի ուշ շրջանի Որմիզդ, Վահրամ անունների։

5) Համեմատաբար ուշ երևույթ է իրան. կարճ a ձայնավորի քմայնացած ä արտասանությունը։ Սակայն թերևս միջին շրջանի որոշ տարածքներում այդ պրոցեսն սկսվել էր։ Եթե պատկեր, ճանդերձ և մի շարք այլ բառերում իրան. a-ի ե արտացոլումը կարելի է բացատրել հայկական հողի վրա կատարված դիրքային հնչյունափոխությամբ, ապա հեշտ չէ նույն ձևով բացատրել ճրաշ/ճրէշ և, թերևս, ճաշտ/ճեշտ տարբերակների առկայությունը՝ առանց իրանական համապատասխան տարբերակներ ենթադրելու։

Հայերենի իրանական փոխառությունների մեջ արտացոլված են ոչ միայն ժամանակագրական, այլև բարբառային տարբերություններ։ Եթե մի կողմ թողնենք այն փաստը, որ տարբեր տարածքներում կարող էին պահպանվել ժամանակագրական տարբեր շերտերի պատկանող երևույթներ[76], և որ, հետևաբար, վերևում բերված փաստերը հաճախ նաև տարածական-բարբառային տարբերություններ են արտացոլում, ապա կարելի է խոսել հատկապես բարբառային տարբեր շերտերի արտացոլման մասին։ Ինչպես նշվել է արդեն, հայերենի իրանական փոխառությունների հիմնական մասը գալիս է հյուսիս-արևմտյան տարածքից և հատկապես պարթևերենից, բայց կան նաև հարավ-արևմտյան տարածքին հատուկ երևույթներ, որոնք գալիս են կամ անմիջաբար (պետական-պաշտոնական բնագավառ, գրական փոխառություններ), կամ միջնորդված կերպով՝ հյուսիս-արևմտյան բարբառային տարածքի միջնորդությամբ։ Այս հարցը հանգամանորեն քննվել է Ջ. Բոլոնիեզիի կողմից՝ նրա «Հայերենի իրանական փոխառությունների բարբառային աղբյուրները» գրքում **Bolognesi**, 1960]։ Այլևայլ նյութեր կան նաև հայ-իրանական լեզվական հարաբերությունները շոշափող ուրիշ աշխատություններում։

Ստորև հնչյունական որոշ առանձնահատկությունների հիման վրա կփորձենք առանձնացնել այն բառաշերտը, որ պետք է լինի հարավ-արևմտյան հին և, հատկապես, միջին շրջանի ներդրում՝ ի տարբերություն հայերենի իրանական փոխառությունների հիմնական զանգվածն ընդգրկող հյուսիս-արևմտյան (մեդա-պարթևական) բառաշերտի։ Գերակշռող մեծամասնությամբ հարավային բառաշերտի բառերը ժամանակագրորեն ավելի վաղ են փոխառված.

1) դ <d<հ.-ե. *d(h)u̯)՝ հյուս. բարբառաշերտից եկող բ-ի դիմաց՝ դարապան «դռնապան» (համմտ. բարապան), դարապետ «դռնապան» (համմտ. բարապետ), դար(ա)պաս.

2) լ, ղ (<l<rd)՝ հյուսիսային բարբառաշերտերից եկող րդ-ի դիմաց երիտասարդ, ճաւասարդ)՝ սալար (սաղար) «զորավար» (համմտ. վաղ sardār).

3) հ (<մ. պ. h<հ. պ. θ<հ.-ե. *k'(h))՝ հյուսիսային բարբառաշերտի ս-ի (<s) դիմաց՝ ակահ «տեղյակ», դահեկան — մի տեսակ դրամ (dah «տասը»).

4) ճ, յ (<մ. պ. h, y<ǰ)՝ հյուսիսային բարբառաշերտից եկող զ-ի (z), այլև բ-ի (<ǰ) դիմաց՝ ուշ շրջանի բաճուանդ «կանացի մի զարդ» (համմտ. հյուս. բազուկ), զրահ (զրայ), սրահ (սրահակ), պայիկ (պայակ) «հետիոտն զինվոր», -վիրայ (ռանվիրայ, վարավիրայ).

---

[76] Համմտ. րթ/հլ (rθ/hl)՝ պարթև և պահլավ ձևերում։

5) հլ (< hl < rϑ)՝ հյուսիսային բարբառաշերտից եկող րթ-ի (< rϑ) դիմաց՝ դահլիճ.

6) պայ- (< pay- < pat-) ածանց՝ հյուսիսային բարբառաշերտից եկող պատ-ի (pat-) դիմաց՝ պայազատ, պայման, պայքար.

7) ջ (< ǰ < y)՝ հյուսիսային բարբառաշերտից եկող յ-ի (յաշտ, յաւետ) դիմաց՝ ջատագով, ջաւիտ:

8) ս (< s < հ.-ե. *k'u̯)՝ հյուս. բարբառաշերտից եկող սպ-ի դիմաց՝ սար-ք (հմմտ. ասպար), սանդարամետ (հմմտ. սպանդարամետ), սան «գորագունդ» (հմմտ. սպան).

9) -վ (< v < γᵛ, gᵛ)՝ հյուսիսային բարբառաշերտից եկող գ-ի (մոգ, մոգպետ) դիմաց՝ մովպետ (սասանյան մ. պ.):

ժ) ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրանական փոխառությունների մեջ գերակշռում են անվանական հիմքերը, հատկապես գոյականները. թվականներից հայտնի են հազար և բյուր. Զգալի թիվ են կազմում բայերը: Սակավադեպ են մակբայները՝ ակամայ, կամայ և այլն: Գրեթե չկան առանձին գործածությամբ հանդիպող սպասարկու բառեր, թեև բուն հայերենում նկատվում են լիիմաստ բառերի՝ սպասարկուների շարքն անցնելու դեպքեր. հմմտ. կամ:

Անվանական հիմքերի մեջ գերակշռում են ի–ա հոլովման պատկանողները, որ բացատրվում է, ինչպես նշել ենք, մասամբ իրանական -a-ով հիմքերի պահպանմամբ, մասամբ հայերենի հոլովման հիմքերի բաշխման ներքին օրինաչափություններով: Հազվադեպ են –ի-ով, ու-ով, և –ո-ով հոլովումները, ընդ որում վերջին տիպի հիմքերի հոլովումը համաբանական է, իսկ առաջին երկուսինը՝ մասամբ իրանական համապատասխան հիմքերի ազդեցության արդյունք է, մասամբ բացատրվում է հայերենի հոլովման հիմքերի բաշխման ներքին օրինաչափություններով: Իրանական -i-ով (ավ. -ay/i-) և -u-ով հիմքերի ազդեցությամբ պետք է բացատրել հետևյալ բառերի հայերեն հոլովումը. 1) –ի-ով՝ ախտ (հմմտ. ավ. axti-), բաժ «տուրք» (հմմտ. ավ. baji-?), ժանտ (հմմտ. ավ. gainti-), խան «ափսե» (հմմտ. ավ. xvaini-). 2) ու-ով՝ բիւր (հմմտ. սակ. byurru ?), գահ (հմմտ. ավ. gatu-, հ. պ. gaϑu-), խրատ (հմմտ. մեդ. *xratu-, ավ. xratu-, հ. պ. xraϑu-) մահ (հմմտ. ավ. mərəϑyu-):

Մեծ թիվ չեն կազմում իրանական ծագման –ն-ով և մանավանդ –ր-ով հիմքերը՝ բամբիշն, բարսմունք (հգն.), դահամն, մազդեզն, աշինգր, ընդ որում ն-ն չի ավանդված դահամն-ի և ր-ն՝ աշինգր-ի իրան. սկզբնաձևերի մեջ. ընդհանուր առմամբ միայն բարսմունք, –անց ձևերի հոլովման պատկերը հին կերպարանք ունի և, թերևս, արտացոլում է հին իրան. -an-ով հիմքի

Սակավաթիվ –ի-ով վերջացող բառերը համապատասխան հայերեն բառերի նման հոլովվում են ո–ա հոլովմամբ՝ անարի, ապակի, բշնամի և այլն:

Կան դեպքեր, երբ հայերենում առկա են իրան. -ān -ով հոգնակիի ձևերը. այսպես, բանուկան «պալատական տիկիններ» ձևը bānūk «տիկին» բառի հոգնակին է. հմմտ. նաև խուժան, պառական: Ընդհանրապես կարծիք կա, որ հայ. –ան, –եան հոգնակերտները գալիս են իրանական աղբյուրից և արտացոլում են -ān, -īyān ձևերը: Այս կարծիքը քիչ հավանական է, եթե նկատի առնենք, որ այդպիսի հոգնակի ունեցող բառերի, մանավանդ –եան-ով բառերի մեջ իրանական ծագում ունեցողները քիչ են և հայերենում միշտ չէ, որ ունեն որոշակի զուգահեռներ. այսպես, բանուկան-ը և պառական-ը չունեն եզակի ձևեր. ան-ով և –եան–ով ձևերի մեջ իրանական հիմք ունեն խուժան-ը[77] մոգեան-ը, նախարարեան-ը, ընդ որում չկան –եան-ը բացատրող -(i)yān-ով իրանական համապատասխանություններ: Համեմատաբար շատ են իրանական ծագում ունեցողները –անի-ով հոգնակերտ ունեցողների մեջ, թեև ոչ գերակշռող՝ անդարձ-անի, զանգականի, հանդերձ-անի, հանդիս-անի, մատեն-անի, մեհեն-անի, նամակ-անի, նշան-անի, պատգամ-անի, սադար-անի, վաճառ-անի, վնաս-անի, վտակ-անի:

Վատթար բառի մեջ –թար-ը ածականի բաղդատական աստիճանի մասնիկն է՝ -tar, բայց վատթար-ը փոխառվել է անկախ դրականի վատ ձևից:

Հետաքրքրական պատկեր են տալիս իրանական բայաձևերի հայերեն արտացոլումները:

Համեմատաբար սակավաթիվ են այն բայերը, որոնց հիմքային ձևերը հայերենում անկախ գործածություն չունեն (կարող են գործածվել միայն իբրև բաղադրությունների երկրորդ բաղադրիչներ, ինչպես նույն տիպի բուն հայերեն բայերը)՝ զարհուրեմ [զարհուր, հմմտ. ա(ր)հ], անդանեմ, ապ(ա)պարեմ, ապարբանեմ, աւրհնեմ, բազմիմ, իշխեմ (? հմմտ. իշխան), խոստովանիմ (հմմտ. խոստ), կասեմ (–ում), հանգրինեմ (ուշ՝ նաև հանգրէն), հմայեմ, հրամայեմ, մարզեմ, մարձեմ, յազեմ, յիշեմ (հմմտ. ուշ), նազեմ (ուշ՝ նազ), պատսպարեմ, պարմայեմ, սրսկեմ, վիրամ (վիրայեմ), վկանգեմ, վտարեմ, տանջեմ (ուշ՝ տանջ):

Մի շարք դեպքերում հիմքերը կարող են գործածվել որոշ կարգի դարձվածային ձևերում, ինչպես քարշ–եմ՝ ի քարշ:

Զգալի թիվ են կազմում այն բայերը, որոնց իրանական համապատասխան հիմքերը կազմում են նաև հարադրական տիպի բարդություններ՝ ամբաստան լինիմ—ամբաստանեմ, խոստովան լինիմ—խոստովանիմ, ասպատակ առնեմ—ասպատակեմ, դարով առնեմ—դարովեմ, պատասխանի տամ—պատասխանեմ և այլն: Այսպիսի բայական ձևերը մեծ թիվ են կազմել նաև միջին իրանական լեզուներում, և հայերենի դասական շրջանում նրանց գործածության առատությունը թերևս իրանական ազդեցության արդյունք է:

Իրանական բայական հիմքերի անմիջական փոխառությունը կարելի է բացատրել իրանական բայերի ներկա ժամանակի հատկապես առաջին դեմքի՝ հայերենի հետ ունեցած նմանությամբ (-am, -em. հմմտ. հայ. հրամայեմ—մ. պ. framāyēm), որ հիմք է տվել ձևերի բաղարկության համար: Հայերենում յուրահատուկ խումբ են կազմում –այ-ով (< իրան. -ay-) հիմք ունեցող բայաձևերը՝ հմայեմ, հրամայեմ, վիրայեմ (վիրամ-ի կողքին). Հավանաբար իրանական ծագում ունի նաև խնայեմ բայը, որի բուն աղբյուրը հայտնի չէ:

---

[77] Ա. Բագրատունին [1852, 48] տալիս է նաև դատ-ի հգն. դատան ձևը, բայց աղբյուրը չի նշում: ՆՀԲ-ում բերված ձևերը եզակի արժեք ունեն:

Համեմատաբար մեծ թիվ են կազմում այն բայերը, որոնց իրանական ծագում ունեցող հիմքերը գոյական և ածական անուններ են, և որոնք հայերենում գիտակցվել են որպես յուրատեսակ անվանածանց բայեր՝ -եմ, -իմ, -անամ ձևերով՝ ամբաստան, -եմ, (հ)ամբար, -եմ, ամբարտաւան, -անամ, -իմ, ապական, -եմ, ապաշխար, -եմ, ապստամբ, -եմ, արշաւ, -եմ, բարգաւաճ, -եմ, գումար, -եմ, դրուատ, -եմ, զգոյշ, -անամ, խրատ, -եմ, ճարակ, -եմ, ճիրճ, եմ, շամբուշ, -իմ, վրէպ, -իմ, տոյժ, -եմ և այլն։

Ինչպես հայտնի է, միջին իրանական շրջանում բայական հին բազմազան հիմքերը վերածվում են երկուսի՝ ներկայի և անցյալի (դերբայականի)։ Անցյալի կամ դերբայական հիմքերի համար բնորոշ է -t տարրի առկայությունը, որ գալիս է հին -ta-ից (հ.-ե. *-to-) և բուն իմաստով համապատասխանում է հայերենի հին -եալ և արդի -ած դերբայական ածանցներին. -t-ին նախորդող տարրերը կամ նույնությամբ առկա են լինում ներկայի հիմքում, կամ հերթագայվում համապատասխան այլ տարրերի հետ. կան նաև տարարմատ հիմքեր։ Անցյալի հիմքը հանդես է գալիս նաև անորոշի մեջ՝ [illegible] -an մասնիկով՝ -tan։

Հայերենում կարելի է արտացոլված գտնել որոշ բայերի միայն ներկայի, այլ բայերի՝ միայն անցյալի (դերբայական), մի շարք բայերի էլ՝ և՛ ներկայի, և՛ անցյալի հիմքերը, ընդ որում վերջիններս հանդես են գալիս որպես միանգամայն անկախ ձևեր, որոնց կապը գերակշռող մեծամասնությամբ չի գիտակցվում։

Հայերենի իրանական ծագում ունեցող բայական հիմքերը, որոնք գրեթե նույնությամբ հանդես են գալիս հայերենի ներկայի հիմքում և որոնք բերվեցին վերևում, իրանական ներկայի հիմքեր են՝ անդաճեմ, աւրհնեմ, յագեմ և այլն։ Ընդամին նշվեց, որ մի շարք բայահիմքեր գործածվում են նաև որպես համապատասխան բայանուններ և բայածականներ. այդ բանը կամ իրանականից է գալիս, որտեղ առկա է գործառական համանունություն (համմտ. gōβ գոյական և goβ-՝ ներկայի հիմք, հայ. գով և գով-եմ), կամ հանդես է եկել հայերենում՝ իրանական բայանունից համապատասխան բայ կազմելու միջոցով։

Ներկայի հիմքը հանդես է գալիս նաև -(ա)նդակ<-(a)ndak դերբայական ածանցով կազմված բառերի մեջ՝ բովանդակ (բաւանդակ<bavandak՝ bav-ից՝ ի տարբերություն անցյալի but- հիմքի), այլև թերևս ամանդակ, դժնդակ, սուրհանդակ և այլն։

Անցյալի դերբայական հիմքը հազվադեպ է հանդես գալիս հայերենի բայաձևերում՝ դիտեմ, անկախաբար՝ դետ (համմտ. dīt-an, ներկ. հիմք՝ vēn-), կերտեմ (համմտ. kart-an, ներկ. հիմք՝ kar-), պատուաստեմ «կցել, միացնել», ուշ՝ «պատվաստել, պատրաստել», անկախաբար՝ պատուաստ (համմտ. patvast-an, ներկ. հիմք patvand-), քանդեմ, վ-կանդեմ «նվաճել» (համմտ. kand-an, ներկ. հիմք՝ kan-. վերջինիս համար համմտ. ապա-կան և, թերևս, ն-կան — հացի մի տեսակ՝ «թաղված»)։

Մյուս դեպքերում անցյալի դերբայական հիմքը հանդիպում է ինքնին անկախ գործածությամբ կամ զանազան բաղադրությունների մեջ, այդ թվում անցյալ դերբայի արժեք ունեցող -ակ-ով (<-ak) ձևերում՝ ամբարտակ (համմտ. ամբար), ապուխտ (a-puxt «չեփած»), բախտ (համմտ. բաշխ<baxš), բաստարան (bast-an, ներկ. հիմքը՝ band-. համմտ. բանդ/բանտ), գումարտակ

(համմտ. գումար), զառնա-ւուխտ (-vuft), խորտիկ (xvart-. համմտ. խորակ), հրեշտակ, յաշտ «զոհ» (yašt-an. համմտ. յազեմ «զոհել»), տաւթ (taft-. համմտ. tap- > տապ)։ Այս նույն ձևով էլ թերևս վաշտ-ը իրոք ծագում է vašt-ից («դարձնել, շրջել». ներկ. հիմք՝ vart- > վերտ), վճիտ-ը՝ vičīt-ից («ընտիր»). Համապատասխան t-ով հիմքային ձևերից են գալիս նաև պատրաստ, պետ ձևերը, որոնց բուն աղբյուրները, սակայն, չեն վկայված։

ժա) ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, հին և միջին իրանական լեզուները աչքի են ընկել նախածանցների և վերջածանցների հարուստ համակարգերով, որոնք իրենց արտահայտությունն են գտել հայերենի իրանական փոխառություններում։ Մեծ է նաև իրանական փոխառությունների մեջ բարդությունների քանակը։ Այս բոլորի հետևանքը եղել է այն, որ իրանական որոշ նախածանցներ ու վերջածանցներ, ինչպես նաև բարդությունների որոշ բաղադրիչներ հայերենում ինքնուրույն գործածություն են ստացել և բառեր կազմել հայկական բառարմատներից ու բառահիմքերից։

Հայերենում իբրև այդպիսիք գիտակցվող նախածանցավոր կազմություններից առաջին հերթին պետք է հիշատակել ապ(ա)-ով (apa-, apē-, apī-) դժ-ով (duž-, duš-) (հ)ամ-/(հ)ան-ով ((h)am-, (h)an-), տար(ա)-ով (tar(a)-) կազմված բառերը, մանավանդ երբ ածանցավոր ձևերի հետ միասին հայերենում առկա են նաև անածանց կամ այլ ածանցներով ձևեր՝ ապարասան—երասան (առասան), ապերախտ—երախտ, դժգոյն—գոյն (համմտ. հան-գոյն), դժկամ—կամակ (կամ, կամակար), դժպարտ—պարտ (համմտ. անպարտ), հանգոյն—գոյն, հանճար—ճար, տարաժամ—ժամ, տարապարտ—պարտ և այլն։

Դրանցից ապ(ա)-ն, թերևս հուն. 'απο-ի հետ մտովին զուգորդվելով, հունաբան հեղինակների կողմից մասամբ հիմք է տվել հունաբան ապա- ածանցի տարանձնացման համար, որով կազմվել են բազմաթիվ բառեր հունական 'απο-ով կազմությունների դիմաց (համմտ. ապացոյց՝ հուն. 'απόδειξις-ի դիմաց) և հետագայում՝ անկախ դրանցից։ Ապ(ա)-ով իրանական մի շարք կազմություններ, բնականաբար, իբրև այդպիսիք չեն գիտակցվել (համմտ. ապաշաւ «զղջում»)։ Հավաստի իրանական ծագում ունեցող ապ(ա)-ով կազմությունները տեղ են գտել իրանական փոխառությունների՝ բերված ցանկում (ապահարզան, ապաշաւ, ապաստան, ապարասան, ապենիազ, ապիրատ, ապուռ, ապստամբ և այլն). դրանց կողքին կան բառեր, որոնց իրանական աղբյուրները չեն հավաստված, բայց որոնց իրանական ծագումը լիովին հավանական է՝ ապալեր «ամայի», ապախտ «անսուրբ, պիղծ», ապահով, ապարհայիկ (պարսկական մի դրամի անուն), ապարաշ, ապաւառ «բակար, [illegible]», ապաւարտակ «արգանդ», ապիզակ «մի զարդ» և այլն։

Դժ-ը (նաև տժ-՝ հայերենում դ>տ անցմամբ) մինչև այժմ էլ ոչ միայն գիտակցվում է որպես ժխտական նախածանց, այլև տրվում իբրև այդպիսին հայերենի քերականություններում։ Իհարկե, այն հայերեն ինքնուրույն նա-

խամանիկ չէ և հանդիպում է միայն իրանական փոխառություններում, բայց վերջիններիս մեջ գիտակցվում է իբրև այդպիսին։ Այդ նույնը, սակայն, չի կարելի ասել բշ- *տարբերակի մասին, որ հանդիպում է* բշնամանք, բշնամի, բշուառ *բառերում. իրանական* d-*ն սրանց մեջ խլացել է հայերենում շ-ի մոտ՝* ու *ձայնավորի թուլացումից հետո։*

(Հ)ամ-/(հ)ան- *նախածանցով իրանական կազմությունների մեջ անկախորեն գիտակցվել է հատկապես առաջին տարբերակը՝ մասամբ բաղարկվելով բուն հայկական՝ հ.-ե.* *sm̥-*ից ծագող բաղադրիչով կազմությունների հետ, մասամբ հունաբան դպրոցի կողմից կապվելով հուն.* 'ομο-*ով կազմությունների օրինակով ձևավորված* հոմ(ա)-*ի հետ, ընդ որում* հոմ(ա)-*ն հունաբան հեղինակների մոտ գիտակցվել է որպես* համ(ա)-*ի տարբերակ (հմմտ.* համանուն *և* հոմանուն)։ (Հ)ամ-/(հ)ան- *ածանցով իրանական կազմություններ են* համասպրամ, համաւրէն, համբարակ, համ(ա)հարզ, հանգամ-(անք), հանգոյն, (հ)անգրէն, հանդարտ, հանդերձ, հանդէս, հանճար *և* (հ)ամբար, ամբարտակ, ամբարտաւան, անգամ, անդան-(եմ), անդամ *և այլն։*

Անհավանական չէ ենթադրել, որ պար(ա)- *ածանցի համար հիմք ծառայած հայ.* պար *բառը հունաբան հեղինակների կողմից կապված լինի իրան. ծագում ունեցող* պարիսպ *տիպի կազմությունների և հուն.* περι- *«շրջա-, պարա-» նախածանցի հետ։*

Իրանական ծագում ունեցող բառերի մեջ հրա- *և* պատ-/պայ- *նախածանցներով կազմությունների մասին մենք առիթ ունեցանք խոսելու իրանական փոխառությունների հնչյունական առանձնահատկությունների քննարկման կապակցությամբ։ Եվ սա պատահական չէ. այդ նախածանցները, չնայած նրանցով կազմված մեծաքանակ բառերի փոխառությանը, հայերենում ինքնուրույնաբար չեն գիտակցվել. թերևս աղոտ կապ զգացված լինի* պատ-*ով կազմությունների և հայ.* պատ *բառի միջև, բայց այդ առիթ չի տվել* պատ-*ի ինքնուրույնացման։ Նշենք որ է. Բենվենիստը հայ.* պատան-*ը, որ* պատ-եմ-*ի հիմքից է, սխալմամբ դիտում է իբրև իրանական* pa- *նախածանցով կազմություն։*

Կան դեպքեր, երբ իրանական նախածանցները ձևով մոտ լինելով կամ պարզապես համընկնելով հայերեն համապատասխան նախածանցների հետ, հիմք են տվել յուրատեսակ բաղարկությունների համար։

Իրանական աղբյուրներից փոխառված ապատ, արի *«ոչ իրանցի»,* աւարտ *բառերի առկայության պայմաններում* անապատ, անարի, անաւարտ *բառերի իրանական, թե հայկական կազմություններ լինելու հարցը դժվար է հավաստիորեն լուծել. իրան. ժխտական նախամասնիկը ձայնավորների մոտ ուներ* an- *ձևը, ինչպես հայերենում, իսկ բաղաձայնների մոտ հանդես էր գալիս հայերենից տարբեր* ա- *ձևով, ինչպես* ակամայ *(հմմտ.* կամայ), ապուխտ *(բառացի «անեփ») բառերում։*

Վարտիք *բառի իրանական ծագման պայմաններում պետք է ենթադրել, որ* անդրավարտիք *բառի հիմքում թերևս ընկած է իրանական կազմություն՝ մ. պ.* andar- *«միջա-, ներքնա-» նախածանցով՝ հայերենում ժողովրդական ստուգաբանությամբ փոխված* անդր(ա)-*ի։ Անհնար չէ, որ այդ նախածանցով կազմություն լինի նաև տարբեր ձևերով գրված* անդր(ա)վար, անդրա(վ)ար, անդուար *«կառածի, կառք» բառը։*

Իրանական hu- *«լավ» նախածանցով կազմությունները հայերենում թերևս մասամբ գիտակցվել են* հզաւր—զաւր *տիպի զուգահեռ ձևերի դեպքում՝ բուն հայկական* հ-լու, հ-մուտ *տիպի* (*su->*հու->հ(ը)-) *կազմությունների կողքին։ Այդ նախածանցով են կազմված* հմայք, հնար, հպատակ *բառերը։ Հնարավոր է նաև* հնազանդ *բառի իրանական ծագումը։*

Հայերենում չեն գիտակցվել որպես բաղադրյալ բառեր իրանական հետևյալ նախածանցներով կազմությունները՝ ā- (ազատ, ախտ, ախորժ, ական *«տեղյակ»,* աւան, աւրհն-եմ), av(i)- *[մ. իրան.* av-, af-՝ ա(ւ)ճառ, աւար, աւէն), ni- (նզով, նկար, նկուն, նման, նշմար. *թեև հմմտ. բուն հայերեն* ն-ստիմ), pa- (պակաս, պահանգ, պահանջ, պանար *«անասուն»,* պաստառ), vi- (վկայ, վկանդ-եմ *«նվաճել»,* վճար, վճիռ, վնաս, վտանգ, վտար-եմ):

Ընդհանրապես պետք է նշել, որ իրանական հիշյալ նախածանցներից մի քանիսը հենց միջին իրանական շրջանում գործուն չեն եղել, այլ հանդիպել են միայն հնից եկող կազմություններում. բնականաբար, սրանք հայերենում էլ գիտակցվել են որպես անբաղադիր արմատներ ու հիմքեր։ Այդպիսիք են, օրինակ, իրանական ā- *և* avi- *(մ. իրան.* av-, af-*) ածանցներով կազմությունները։*

Միջին իրանական apar- *«վրա» ածանցով կազմություն է* ապ(ա)րդում *(ձիու սարքի մաս), եթե ճիշտ է նրա* apar-+dum *«պոչ» մեկնությունը։*

Հնից է գալիս տար(ա)- *ածանցը, որ* տար *ձևով գործածվում է նաև որպես անկախ բառ՝* տար աշխարհ *կապակցության մեջ. հավանաբար իրանական կազմություններ են* տարաշխարհիկ, տարադեմ, տարադիմիկ, տարաժամ, տարակոյս, տարապարտ *բառերը.* տար(ա)-*ն հետագայում ստանում է հայկական ածանցի արժեք և բազմաթիվ նոր բառեր է կազմում. հմմտ.* տարագիր, տարակարծ, *այլև հունաբան* տարբերել, տարաձայնութիւն *և այլն։*

Մեծ թիվ են կազմում իրանական փոխառությունների մեջ վերջածանցավոր կազմությունները. հայերենում ներկայացված են միջին իրանական դրեթե բոլոր վերջածանցները։ Դրանց մի զգալի մասը դարձել է հայերենի սեփականությունը և բառեր է կազմում նաև ոչ իրանական արմատներից ու հիմքերից՝ -ական (-akan), -անակ (-ānak), -(ա)րան (-a-δān՝ -a-dān), -պան (-pān), -պետ (-pat, -pet), -ստան (stān) *և այլն։ Որոշ ածանցներ, բաղարկվելով հայերեն համապատասխան ածանցների հետ, փաստորեն կորցրել են իրենց իրանական բնույթը, և նրանցով կազմված բառերը գիտակցվում են որպես հայկական կազմություններ. այդպիսին է, օրինակ, մ. իրան.* vār-*ը, որով կազմված բառերը հայերենում հաճախ փոխվել են* -աւոր-*ով կազմությունների՝* dātvār *—հայ.* դատաւոր, tāγ-vār—թագաւոր *և այլն։ Կան դեպքեր, երբ հայերեն ածանցների իրանական ծագումը հնարավոր է, բայց ոչ լիովին ապացուցելի. այսպես, հին իրանական լեզուներում հայտնի* aina- *ածանցը, որ ածականներ է կազմել համապատասխան գոյականներից (հմմտ. ավ.* srv-aina- *«եղջերային»,* ayah-aina- *«մետաղյա, երկաթյա» և այլն) [հմմտ.* **Belardi**, AION, 1961, 3, 7 *և հջ.*], *կարող է լինել հայ.* -ային *ածանցով կազմված հին ածականների մի մասի աղբյուրը. սակայն սա չի կարելի պնդել, եթե նկատի առնենք, որ նախ՝ հայերեն ածականները կազմվում են* -ո-*ով և ոչ* -ի-ա-*ով այսինքն՝ ունեն* -ո-*ով հիմք և երկրորդ՝ այդ ածանցը միջին իրանական շրջանում ստացել է* -ēn-*ձևը, որը հայերեն* փոխառություններում ներկայացված է սակավադեպ՝ մաշկապարենէն «շահի վրան» (?), նկարէն (*nikarēn), քաշկէն «գարե հաց» (հմմտ. կասկ «կեղևահանված գարի»). կան նաև -էն-ով հատուկ անուններ (Գուրգէն, Սուրէն և այլն)։ Ավելորդ չենք համարում հիշեցնել ուրարտական աղբյուրներում վկայված տեղանունների մեջ -aini-ով կազմությունների առկայությունը, որոնք, թերևս, գոնե մասամբ իրանական ծագում կարող են ունենալ։ Կան նաև զգալի թվով իրանական ածանցավոր կազմություններ, որոնք հայերենում ներկայացված են հատուկենտ օրինակներով կամ չեն գիտակցվում որպես բաղադրություններ։ Անհնար չէ կարծել, որ հայերենի փոքրացուցիչ-փաղաքշական -ակ-ով, -իկ-ով ածանցների կազմավորման մեջ դեր խաղացած լինի իրանական տարրը. բուն հնդեվրոպական *-k-ով կազմությունները հայերենում պետք է ներկայացված լինեն ոչ թե -կ-ով, այլ ք-ով։

Ստորև բերենք հայերենում հանդես եկող իրանական փոխառությունների հիմնական ածանցավոր կազմությունները, որոնց վերջածանցները մասամբ իրանական համապատասխան վերջածանցներն են (1), մասամբ իրանական բարդությունների երկրորդ բաղադրիչներ՝ հայերենում ածանցական արժեք ստացած (2).

1) -ակ (-ak—գոյականակերտ ածանց՝ գոյականներից ու մասամբ բայահիմքերից ածանցող և -āk—ածականակերտ-դերբայակերտ և մասամբ գոյականակերտ-անձնանիշ ածանց՝ բայահիմքերից ածանցող)՝ անուշակ (հմմտ. անոյշ), առասանակ (հմմտ. առասան, երասան), արծակ, աւերակ (հմմտ. աւեր), աւրինակ (հմմտ. աւրէն), բաժակ (հմմտ. բաժ), բնակ, գիսակ (հմմտ. գէս), գնդակ (հմմտ. գունդ), գունակ (հմմտ. գոյն), գրապանակ (հմմտ. գրապան), դայեակ, դաստակ, դերձակ, դիմակ, դիտակ, դժկամակ (հմմտ. կամ, կամակ), դիպակ, դիմակ, դրաւշակ (հմմտ. դրաւշ), զանակ (հմմտ. զան), զանգակ, թոշակ, խորտակ, կամակ (հմմտ. կամ), կապուտակ (հմմտ. կապոյտ), կտակ, կրպակ, համբարակ [հմմտ. (հ)ամբար], հասարակ, հպատակ, հրապարակ, հրատարակ, հրովարտակ, ճախարակ, ճարակ, մատակ, մուրակ «մուրացիկ» (հմմտ. մուրանամ, մոյր-), մուճակ, մուրհակ, յավանակ, նամակ, նիզակ, շամղիտակ (մի ծաղիկ), պայուսակ, պատմունակ, պատուիրակ (հմմտ. պատուէր), պա(ր)հակ [հմմտ. պա(ր)հ, պարհել], պարարակ (հմմտ. պարար), պիսակ (հմմտ. պէս), սկավառակ, սմբակ, սրմնակ (մի ծաղիկ), սպիտակ, ստամբակ (հմմտ. ապ-ստամբ), սրահակ (հմմտ. սրահ), սրուակ, վանդակ, վատախտարակ (հմմտ. վատ և ախտար-ք), վարշամակ, վիճակ, տախտակ, տոհմակ «ազնվական», քիսակ և այլն.

-(ա)կան, -(ե)կան, -եան (-(a)kān, -(i)kān, -yān — հիմնականում ածականակերտ ածանց)՝ ահեկան (ամսանուն), ասպանարակական (հայ. կազմությո՞ւն), ասպնջական, գրաւական (?), դահեկան, դեհկան, մառեան, մեհեան, մեհեկան, ոստիկան, վաճառական (?, տոհմական «տատա բերդ».

-այ (-āy-<awya—ածականակերտ ածանց)՝ ակամայ, կամայ.

-ան (-ān —գոյականակերտ և ածականակերտ ածանց՝ գոյականներից և -ān — ածականակերտ-դերբայակերտ ածանց՝ բայահիմքերից ածանցող)՝ ապահարզան, արժան (հմմտ. արժ-), (յ)անդիման (հմմտ. դէմ), դրուժան (հմմտ. դրուժ-), երասան, ժաման (հմմտ. ժամ), նշան (հմմտ. նիշ), նուարտան «ծածկոց», պատմուճան, պատուիրան (հմմտ. պատուէր), վահան, տուգան-ք (հմմտ. տոյժ, տուգան-եմ).

-անակ (-anak —հիմնականում ածականակերտ ածանց՝ մ. պ. mart-anak «առնական, արի»՝ mart «այր, տղամարդ» բառից)՝ գանձանակ (հմմտ. գանձ), դահանակ «մի թանկագին քար», ժամանակ (հմմտ. ժամ), նշանակ (հմմտ. նիշ), թերևս նաև աշտանակ, արգանակ, զարգմանակ (մի զարդ) խարդաւանակ (հմմտ. խարդաւան-եմ, խարդախ), հանգանակ, պատժանակ, «բաժակ», վականակ «հասուն». կան նաև հայ. հիմքերից կազմված բառեր՝ այսանակ, անցանակ, (յ)եղանակ, ըմպանակ, նեծանակ, յաղթանակ, ցուցանակ և այլն.

-(ա)նդակ (-(a)ndak՝ դերբայակերտ ածանց)՝ բովանդակ (բաւանդակ), թերևս նաև աւժանդակ, դժնդակ, սուրհանդակ. գիտակցվելով որպես ինքնուրույն ածանցական մասնիկ՝ կազմել է այլանդակ բառը. հայտնի չէ ասպանդակ, կարկանդակ բառերի կազմությունը, թեև առաջինի իրանական ծագումը ակնհայտ է.

-գին (-gīn՝ ածականակերտ ածանց. հմմտ. մ. պ. hēšmgīn «ցասկոտ», šarmgīn «ամոթալի»)՝ ահագին, ուժ-գին.

-իկ և բաղարկությամբ -եակ (-īk—ածականակերտ ածանց)՝ անաշխարհիկ (անաշահիկ), բնիկ (?), գերդաստանիկ «ծառա, աղախին», դժնիկ (?), խորտիկ, կաւշիկ, ճարպիկ, մահիկ, մատենիկ «հեծյալ, հեծելակային» (հմմտ. համիմաստ մատեան), մարզիկ «զինվոր», մարծիկ «մարզիչ», մշտիկ «սրբակիչ», մուրիկ «մուրացիկ» (հմմտ. մուրանող, մոյր-), չապիկ, ոստանիկ (հմմտ. ոստան), պայիկ «բերդապահ», պէշասպիկ «ծիավոր սուրհանդակ», ռամիկ (հմմտ. երամ և ուշ՝ ռամ), ռոճիկ, սարեակ, սպասիկ (սպասեակ. հմմտ. սպաս), տանիկ, տոհմիկ, քաշիկ «թոկ».

-իճ (-īč—գոյականակերտ ածանց)՝ դահլիճ, դարգիճ «պատգարակ», կապիճ (?).

-իշ(ն) (-išn, ուշ՝ -iš—գործողության անուն կազմող ածանց)՝ բաշխիշ (հմմտ. բաշխ-), փուրսիշն «հարցաքննություն».

-կար, -կեր (-kar—գործող անձի անուն և ածական կերտող ածանց՝ kar- «անել» հիմքից)՝ խոհակեր «խոհարար» (հմմտ. խոհ «կերակուր»), մակար, կաւշակակար (վերաիմաստավորված), պահակեր (հմմտ. պահ-), վրնասակար.

-ոյկ (-ōk —գոյականակերտ և ածականակերտ ածանց)՝ բակոյկ, մակոյկ, թերևս նաև խարոյկ (եթե խար-ը բնիկ հ.-ե. չէ), պարոյկ.

-ուար -ւառ, -ւար (>ւոր) (-vār—գոյականակերտ և ածականակերտ ածանց՝ «ունեցող» իմաստով)՝ գահաւոր (տիտղոս), բուրվառ, գահաւորակ (հմմտ. գահ), գանձաւոր (հմմտ. գանձ), դատաւոր, զրահաւառ (զրահաւոր?).

-ուկ (ūk—ածականակերտ ածանց)՝ ճապուկ (հմմտ. ճեպ), ճարտուկ «[illegible]», ջատուկ.

-պան, -պանակ (-pān —գոյականակերտ ածանց՝ «պահող» իմաստով)՝ բարապան, գրապան, դաստապան, զանգապան, կշտապանակ (մի զարդ. հմմտ. կուշտ «կող»), համբարակապան (հմմտ. համբարակ), պաշտպան (հմմտ. պաշտ-), պա(ր)հակապան [հմմտ. պա(ր)հակ), պահապան (հմմտ. պահ-), վարապան, փուշտիպան (հմմտ. պաշտպան).

-պետ (-pet, -pat—գոյականակերտ անձնանիշ ածանց)՝ ամբարապետ (հմմտ. ամբար), (հ)անդերձապետ (հմմտ. անդարձ), ասպահապետ (հմմտ. սպահ, սպայ, սպարապետ), դեհպետ, դենպետ, զինապետ, խոռապետ (չանխոռապետ), կարապետ, կոզպետ *«արհեստապետ»*, համբարակապետ (*հմմտ.* համբարակ), մոզպետ (մովպետ), նահապետ, շահապետ, շպետ *«հովիվ»*, սպարապետ, վաճառապետ, վարդապետ, տակառապետ.

–ստան [-(i)stān —*տեղանվանակերտ ածանց*)՝ ասպաստան, դաստատան, դարաստան, շահաստան, սակստան *«շնանոց»*.

–տակ (*-tak*՝ *դերբայակերտ ածանց*)՝ ամբարտակ, հրեշտակ.

2) –արան (-a-ðān՝ *հ. իրան.* dāna- *«տեղ» բառից*)՝ բատարան *«բանտ»*։

–արար (a-ðar՝ dar- *«պահել» արմատից, բաղարկվել է հայ. արար-ի հետ՝ առնեմ-ից*)՝ մատակարար, նախարար

–զան (*zan- «տեսակ»*)՝ հրաշազան, *այլև հայ. հիմքից*՝ աստուածազան, զարմանազան. *կրկնությամբ*՝ զանազան.

–ժէտ (–ժետ, *ուշ*՝ –ժոտ, –ժատ) (-žat *«-հար, զարկված»*՝ žatan, zatan *«խփել, զարկել» բայի հիմքից*)՝ ախտաժէտ (ժետ), դիւաժետ դիւաժատ), *Թերևս նաև ուշ հանդիպող* նենգ(ա)ժէտ (–ժոտ). *այն գիտակցվել է իբրև ինքնուրույն վերջածանց և կազմել* լուսնաժետ, ոսկորաժետ, որովայնաժետ *բառերը՝ հայկական հիմքերից։*

–ճան (-čanah —*«-մոլ, -սեր, ցանկացող»*)՝ դաւաճան, խրախճան, ճոխաճան *(?)*, տիրաճան:

Հայերենում վերջածանցական արժեք են ստացել նաև աւէն (–աւէն), պէս (–ա–պէս), գար (–ա–գար) *բառերով կազմությունները, ընդ որում առաջին երկուսը շատ կենսունակ են։ Ընդհակառակն,* դատախազ, մատակախազ *բառերի երկրորդ բաղադրիչը որպես ինքնուրույն ածանց տարածվել է ետդասական շրջանում* (գինեխազ, իգախազ):

Իրանական -aiča, -ēč, -īč *և բաղադրված* -(ī)čak *փոքրացուցիչ-փաղաքշական վերջածանցները հանդիպում են համեմատաբար ուշ ավանդված* բուէճ, բուիճակ, դարիճակ *«կաղապար» (մ. իրան.* darīčak *«դռնակ, կաղապար») բառերում և* Մանայճ, Մանէճ *անձնանվան մեջ։ Արդյոք այդ ածա՞նցն է առկա հայկական հիմքերից կազմված* աղուճակ *«աղի փայլուն կտոր»*, բեճակ *«Թիակ» բառերում։*

Հնարավոր է –ուհի *վերջածանցի իրանական ծագումը, բայց մեկնության գոյություն ունեցող փորձերն առայժմ անհամոզիչ են։ Յ. Մարկվարտը* (**Markwart**, C, *7, 1931, 128 ծան. 1) այն բխեցնում էր միջին իրան.* puhr *«որդի» ձևից. է. Բենվենիստը* [**Benveniste**, *1945, 46]* **թագուհի** *բառը բխեցնում է իրան.* taga-bṛθrya *«թագակրուհի» ձևից* (>-wrhi>-urhi>-uhi)՝ *կարծելով՝ որ այս բառից* –ուհի-*ն տարածվել է այլ բառերի վրա [հմմտ. նաև* **Шанидзе**, *1968, 452—454]։*

Իրանական ծագում ունեն նաև –բար-*ը* (վատբար), *Թերևս նաև* –եշտ-*ը՝* (հրաժեշտ, պարկեշտ) *և* –իշտ-*ը՝* (երաժիշտ, նաժիշտ):

Զգալի թիվ են կազմում իրանական փոխառությունների մեջ բարդությունները, որոնց վրա հատկապես կանգ չենք առնի։ Նշենք միայն, որ դրանց երկրորդ բաղադրիչները մասամբ գիտակցվել են որպես ածանցներ և, ինչպես վերևում տեսանք, անցել ոչ իրանական հիմքերին։ Իրանական բարդությունները որպես այդպիսիներ գիտակցվել են հատկապես այն բառերում, որոնց բաղադրիչները փոխառվել են նաև առանձին։ Հատուկ խումբ են կազմում բայահիմքային երկրորդ բաղադրիչներ ունեցող բարդությունները, որոնց այդ բաղադրիչները ինքնուրույն գործածություն են ունեցել կամ հանդես եկել իբրև բայահիմքեր։ Այսպես, դաստակերտ *բառի* կերտ-*ը որպես բայահիմք գիտակցվել է, և համաբանորեն կազմվել է* ձեռակերտ *գոյականը։ Այդ նույն ձևով* –ւանդ(ակ)–*ով կազմված բառերի օրինակով* (–ւանդ<-βand<band- *«կապել» արմատից) կազմվել է* բարձրաւանդակ *բառը. հմմտ.* զահաւանդ(ակ), դարաւանդ, սարաւանդ(ակ), *որոնք Թերևս իրանական կազմություններ են։*

ԺԲ) ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ԽՄԲԵՐԸ

Իրանական փոխառություններն ըստ իմաստային (թեմատիկ) խմբերի բաշխվում են հետևյալ կերպ.

1. **Ֆիզիկական աշխարհ.** *1.1 աշխարհ. 1.214 սիկ «ցեխ, տիղմ». 1.2141 փուտ (փտել). 1.216 բորակ. 1.23 դաշտ. մարգ «մարգագետին». 1.331 ապաղան. 1.36 վտակ. 1.44 խազ «քար» (գայլախազ). խարակ «ապառաժ, կարծր քար» ժայռ (ժեռ, ժիռ), վէմ, 1.441* (**հանքաքարեր, այդ թվում թանկագին**). *դահանակ. զմրուխտ. կարկեհան. 1.531 մահիկ. 1.54 ախտար-ք «աստղ». 1.541 արուսեակ «լուսաստղ, վեներա». 1.751 սրսկ-ել, մշտիկ «սրսկիչ»։*

2. **Մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն.** *2.281 դայեակ. 2.43 զաւակ. աղն «ցեղ, սերունդ», ճետ. 2.56 նահապետ. 2.811 հարազատ։*

3. **Կենդանիներ.** *3.13 մատակ «էգ կենդանի». 3.18 շպետ «հովիվ». ապաճարակական «հովվական». 3.19 ախոռ. ասպաստան. 3.20 պաճար «նախիր, խոշոր եղջերավոր անասուն». 3.201 գոմէշ. 3.32 վարազ. 3.37 նոխազ. 3.451 յաւանակ «ձագ, մատաղ կենդանի (հատկապես էշի, ձիու, եղնիկի)». 3.62 կուզ «կատու». 3.64. մարգ «թռչուն» (լորա-մարգ). 3.641 բազէ. սարեակ. սիրամարգ. 3.721 յովազ. վագր. 3.741 սամոյր. 3.751 խարբուզ «իշայծյամ». 3.76 կապիկ. 3.77 փիղ. 3.791 վարմ «որսացանց, թակարդ». 3.811 մարախ «մորեխ». 3.851 վիշապ։*

4. **Մարմնի մասեր, մարմնական գործառույթներ և պայմաններ.** *4.111 անդամ. 4.131 ճարպ. 4.14 գէս, վարս. գիսուր. 4.141 վիրա-լ (վիրայ-ել) «սափրել». վարսավիրայ. 4.151 երակ. 4.162 կուշտ «կող» (և «փոր»), պատակ. 4.181 դմակ. 4.204 դէմ-ք. դիմակ. 4.205 ճակատ. 4.24 երախ «բերան, երախ». 4.31 բազուկ. 4.311 դաստակ. 4.351 երան(-ք). 4.371 սմբակ. 4.46 դանձակ «փոր, ընդերք», [կուշտ] «փոր». 4.61 նիրհ. 4.661 դաշտան. ճեմիշ «զուգարան, արտաքնոց». 4.75 մահ. 4.751 անուշակ «անմահական». 4.81 հզար. ոյժ. 4.84 ախտ. ախտաժէտ. -ժետ (-ժէտ, -ժատ), -գար 4.841 բիժ. բոր. պիսակ. 4.86 բուժ-ել (բոյժ). 4.87 բժիշկ. 4.871 նշտիր «վիրաբուժական դանակ». 4.88 բոյժ «դեղ», դարման. 4.91 աշխատ-ել «հոգնել», պարտաս-իլ «հոգնել». 4.941 գոնջ «հաշմանդամ». 4.97 կոյր։*

5. **Ուտելիք և ըմպելիք. կերակրի պատրաստում և ամանեղեն.** *5.111 (ըմ-)բոշխն-ել «վայելել». 5.121 նպար(ակ), պիհ «պարեն, ուտելիք». խար «անասնակեր». թոշակ «ճամփի պաշար. կերակուր», պաշար. պատրուճակ «ուտելի կենդանի». ռոճիկ «օրապահիկ, օրվա ուտելիք». պարար «գիրացում». պարարակ «գեր, պարարտ», պարարտ. 5.131 աշարակ. 5.14 սով. 5.261 դոյլ. 5.32 խան «ափսե, սինի». սկավառակ «պնակ, (կերակր)աման». 5.34 կուժ. ապակի (ապիկի) «շիշ». թակոյկ «մեծ ջրաման». շիշ. սրուակ.*

5.35 բաժակ, նուագ «դավաթ, բաժակ», տաշտ «բաժակ, թաս». 5.41 խոհ (խահ-, խախ) «կերակուր». խորտիկ «կերակուր, համադամ». 5.44 ճաշ. 5.511 նկան «մի տեսակ հաց», նկանակ. նշխար «հացի կտոր, կերակրի մնացորդ». 5.52 պախաճճամ «կարկանդակ». 5.521 խորակ «մի տեսակ խմորեղէն», կռապ «մի տեսակ խմորեղէն». 5.611 ամիճ «մսեղէն կերակուր». ապուխտ. պախ «խաշած միս». 5.641 կասկ «կեղևահանված (և եփված) գարի, հարիսա». 5.651 վարունգ. 5.68 սոխ. 5.71 միրգ. 5.751 թութ. 5.751 արմաւ. 5.88 պանիր. 5.921 անապակ «անջուր՝ անխառն (գինի)». մատռուակ։

6. **Հագուստ, անձնական զարդարանք և խնամք.** *6.12 հանդերձ, մենթան «հագուստ». 6.121 պատմուճան «հանդիսավոր զգեստ». 6.13 դերձակ 6.211 (գործվածքի տեսակներ). դիպակ. զառնաւուխտ. կերպաս. սնդուս. տարազ «արվեստավոր գործվածք». 6.34 ճախարակ. 6.381 նարաւտ «գույնզգույն թել». 6.411 պարեգաւտ «վերնազգեստ, կապա». 6.44 շապիկ, պարեհնակ «շապիկ». 6.451 գրապան «հագուստի վզամաս». 6.46 գրաւշակ «քղանցք». 6.48 վարտիք. 6.51 կաւշիկ, մոյկ, մուճակ. 6.551 թագ. աշխարաւանդ «թագի կապ». խոյր. պսակ. 6.57 կամար «գոտի». 6.591 վառ «թագավորական քող». փաղան (փա(ն)ղամ) «լաչակ». 6.711 դամղայեալ «զարդարված, պճնված». 6.721 պախճաւանդ «մի կամարաձև զարդ». 6.731 գո(ր)շապահանգ «ականջօղ». 6.74 ապարանջան. 6.75 մեհեւանդ «մանյակ». 6.81 վարշամակ «թաշկինակ». 6.941 մարձ-ել «շփել, օծել, (մարմինը) յուղով տրորել». սնգոյր «շպար, երեսի ներկ». 6.951 աւշնան «օճառախոտ»։*

7. **Բնակարան, տուն, կահկարասի.** *7.11 բնակ-իլ. վան «բնակություն, բնակարան». ապատ «շեն, շեն, շեն տեղ, բնակելի տեղ». անապատ 7.121 ապարան. դաստակերտ «ագարակ, ունեցվածք, շինվածք». տաճար, «պալատ». 7.122 բնակ «բնիկ, հարազատ», բնիկ 7.13 վրան. տաղաւար «հյուղ, խրճիթ, վրան». 7.14 [տաղաւար]. ապաւանդակ «վրանի թոկ». մաշկապարճէն «թագավորական հարեմի վրան». 7.211 դահլիճ, դիւան «դահլիճ, ատյան. դպրոց», սրահ. պատշգամ 7. 221 բար- «դուռ» (բարաւոր «դռան սեմ»). 7.221 բարապան «դռնապան», բարապետ, դարապան, դարապետ. 7.25 պատուհան. 7.271 պարիսպ. պահանգ (պահանկ) «պատի մեջ ագուցված գերան՝ պատը պահելու համար». 7.281 գմբեթ. 7.41 կահ, սպաս. 7.411 դարան «պահարան». նուարտան «ծածկոց», պաստառ «ծածկոց». շադրուան «վարագոյր», վարագոյր, վիժակ «վարագույր, ծածկոց». 7.421 բարձ. 7.43 գահ, տախտ «աթոռ, գահ. տապաստակ «բազմոց». 7.44 խուն- «սեղան» (խունաւագութիւն). 7.45 բազմակ «ճրագ», լամբար (լամպար, ղամբար), ճրագ. պատրոյգ (պատրույգ). 7.451 նաւթ. 7.46 մոմ։*

8. **Երկրագործություն, բուսականություն.** *8.11 մշակ. 8.12 [մշակ-ել]. 8.13 դարաստան «ծառաստան, պարտեզ», դրախտ «պարտեզ, ծառանոց», պարտէզ. 8.14 ամբար (համբար), համբարակ «շտեմարան, ամբար». 8.141 համբարակապետ, համբարապան. 8.21 վար (վարել). 8.211 մաճ. 8.23 բահ. 8.34 կաս-ել (-ուլ) «կալսել. մանրել». 8.411 առհմական «առատ բերք». 8.48 բրինձ. 8.51 ճարակ «անասնախոտ». 8.53 (զանազան բույսեր). աւշինդր. բազուկ «ճակնդեղ».դժնիկ «մի տեսակ փուշ». կապար. կնճիթ «քունջութ». ճակնդեղ. ճանբակ «մի խնկաբեր բույս». մուրտ. շաման «մի համեմիչ բույս». քրքում «շաֆրան». 8.541 բուն «ծառի բուն». 8.571 (զանազան ծաղիկներ). համասպրամ. հաւրոտ. հիրիկ. մանուշակ. մաւրտ. յասմիկ, նարգէս (նարկէս ,նարկիս). շամդիտակ. սմնակ. 8.58 վարդ. 8.601* (**զանազան ծառատեսակներ**). *նոճ, սարոյ «նոճի». քնարուկ. 8.602 պատուաստ։*

9. **Ֆիզիկական տարբեր գործողություններ, արվեստ և արհեստ, սրանց հետ կապված նյութեր.** *9.12 երկ. 9.13 [աշխատ-ել]. 9.18 պարաւանդ «կապանք, շղթա». 9.19 առասան «թոկ», երասան. 9.25 տապար «կացին». 9.261 խարտակ-ել. 9.33 քարշ-ել. 9.34 վան-ել. 9.341 տապաստ «գետնատարած». 9.412 արուեստ. 9.42 կոզպետ «արհեստապետ», ճարտար. 9.44 կերտ-ել, շին-ել (շէն). 9.45 տաշ-ել 9.451 տախտակ. 9.641 ժանգ (ժանկ). 9.66 սրդինձ. 9.661 արոյր. 9.671 պողովատ. 9.74 [ապակի (ապիկի)]. 9.76 դամբիւզ. սապատ «կողով». 9.761 վանդակ. 9.81 քանդ «փորագրություն, քանդակ», քանդակ. 9.87 նկար, պատկեր. արուճանակ «նկարի ուրվագիծ». 9.88 ներկ (?). 9.943 արժան(ի) «պատշաճ», պատշաճ. 9.93 պէտ-ք. նիազ «կարիք ունեցող, կարոտ,պակաս». 9.95 կար-ել. ատակ «կարող, ձեռնհաս», բաւակ «ձեռնահաս, կարող». 9.97 դժուար. 9.992 աւրինակ «օրինակ. եղանակ, կերպ». դաշնակ «եղանակ, կերպ». հանգամ-անք, հնար, ճար. [տարազ] «միջոց, ձև, եղանակ». պաճար-ք «միջոց, հնարք»։*

10. **Շարժում. տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն.** *10.13 ճախր-ել. 10.25 արկ-անել. 10.32 վիժ-ել (վէժ-). 10.43 վազ-ել «ցատկել, վազել». 10.441 վարձակ «պարուհի». 10.45 ճեմ-իլ. 10.46 [վազ-ել]. 10.491 կարաւան. պայուսակ. 10.64 [վար-ել] «տանել, քշել». 10.661 դաւազան «անասուն քշելու փայտ, գավազան». խարազան. ապրդում «ձիու թամբի փոկ». դանդանաւանդ «սանձ», վարաւանդ «ձիու սանձ». 10.71 ճանապարհ. 10.711 ռահվիրայ «ուղեհարդար, ուղի բացող». 10.751 դահաւոր(ակ) «դեսպակ, պատգարակ», դարգիճ «պատգարակ», դեսպակ «պատգարակ», ժանուար «գահավորակ». 10.761 ճախարակ «անիվ». 10.82 նաւազ «նավավար». 10.83 մակոյկ։*

11. **Ունեցվածք, սեփականություն և առևտուր.** *11.17 պա(ր)հ-ել. 11.211 ապ(ա)սպար-ել «հանձնել». բաշխիշ «նվեր, պարգև», դահամն «ընծա, նվեր», նուէր, շնորհ «պարգև. ձրի». 11.24 [պահ-ել]. պահակեր «պահապան, պահապան (այստեղից ուշ՝ պահպան-ել). սպասիկ (սպասեակ) «խնամակալ, պահպանող». 11.251 ապաստան. 11.27 ապական-ել «ջնջել, վերացնել, փչացնել». աւեր-ել, քանդ-ել. աւերակ. 11.28 վնաս. վնասակար. 10.31 խուզ-ել (խոյզ) «որոնել», զնն-ել (զնին) «քննել, որոնել». յուզ-ել (յոյզ) «փնտրել, տակնուվրա անել». 11.34 արձակ-ել. 11.41 գերդաստան «ծառաների և գերիների ամբողջություն. ունեցվածք, կալվածք». 11.43 դրամ. 11.431 (զանազան դրամներ). դահեկան. դանգ. [դրամ]. նաքարակիտ «մի մանրադրամ». ստեր. 11.45 քսակ. 11.46 գանձ, գանձանակ «գանձարան». գանձաւոր «գանձապահ». հանգանակ «հավաքած գումար». 11.48 պայազատ «ժառանգորդ». 11.481 անդարձ «կտակ(ագիր)», կտակ. բագ «բաժին. ժառանգություն». 11.511 ապենիազ «անկարոտ». 11.52 [նիազ] «կարոտ». 11.53 մուրակ «մուրացկան», մուրիկ «մուրացկան». 11.531 բաշխ «ողորմություն, հարկ, տուրք», մոյր «մուրացկանություն, ողորմություն». 11.54 ագահ, դաւշ «անհագ, ագահ. ցանկասեր». 11.58 հէն «ավազակ». 11.64 պարտ-ք. 11.67 գրաւ, գրաւական, երաշխ-(իք), պարտաշխի «գրավ». 11.68 վաշխ «տոկոս». 11.69 բաժ «հարկ, տուրք», բաշխ «հարկ, տուրք», հարկ «տուրք», սակ «հարկ, տուրք». 11.72 աւգուտ, աւգտակար. 11.74 [վնաս]. 11.751 մուրհակ. 11.77* վարձ-ել. 11.78 [թոշակ], մահակ «վարձ», վարձ, վճար. վարձկան. 11.82 վաճառ-ել. 11.84 վաճառական. վաճառապետ. 11.86 կրպակ. 11.871 արգ- «արժեք», արժ-. արժան «գին ունեցող»:

12. **Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ.** 12.111 ասպարէզ (-էս). հրապարակ. վտաւան «մեկ ասպարեզ, մեկ նետընկեց (տարածություն)». 12.131 բաղմ-իլ. բաղմական «սեղան նստածներ». 12.19 հանդարտ. 12.211 (հ)անգրիճ-ել (հանգրէճ) «հավաքել. վեր քշտել». 12.22 [պատատ-ել] «կցել, հարմարեցնել». 12.232 բաժան-ել. բաշխ-ել. 12.32 խոնարհ «ցած. խոնարհ, համեստ». շեպ «զառիվայր». 12.34 տակ. 12.35 բու «ծայր, սահման, եզր, վերջ». 12.36 կոյս «կողմ». 12.42 ահեակ «ձախ». 12.44 տար «հեռու». 12.441 վտար-ել. 12.51 -զան, զան- «կերպ». աւրինակ. կաղապար. 12.541 (զանազան չափեր). գրիւ «հացահատիկի մի չափ». կապիճ «հատեղենի մի չափ». հրասախ «փարսախ». ման «մի կշռաչափ». մար «մի չափ». 12.55 անարի «վիթխարի, անճոռնի». 12.561 կոտակ «կարճահասակ, փոքր». [խորտակ-ել] «կոտրատել, ջարդել». [կաս-ել. (-ուլ)] «մանրել». 12.61 [արձակ] «ընդարձակ». 12.65 բարակ. 12.74 նկուն «կորացած, նվաստ». 12.83 գունդ «գունդ, գնդաձև իր», գնդակ. 12.91 հաւասար. 12.92 դունակ «նման», հանգոյն «նման», նման, պէս. [աւրինակ]. 12.94 նիշ, նշան, նշանակ:

13. **Քանակ և թիվ.** 13.12 համար. համարակար «հաշվապահ, հաշվակալ». 13.13 բաւանդակ (բովանդակ). 13.14 համակ «բոլոր, ամբողջ», համայրէն 13.15 բազում, շատ. 13.16 յաւէտ «ավելի շատ». 13.17 նուազ, պակաս. 13.18 բաւական. 13.19 գումար. 13.192 ամբոխ. գումարտակ. գրոհ «ժողովուրդ, ամբոխ». երամ, երամակ, երամական «շքախումբ». խումբ. կոյտ. ջոկ. տակ «(մարգարտա)շարք. տրցակ». 13.21 առատ «առատ, լեցուն. առատաձեռն» 13.221 զուր. 13.23 [բազ] «բաժին», [բաժ], բաժին. 13.33 սատակ «պարզ». 13.34 նախ. նախակ «առաջնակարգ դիրք կամ պաշտոն». 13.531 հազար. բիւր:

14. **Ժամանակ.** 14.11 ժամ, ժամանակ. անգամ. 14.14 երիտասարդ. 14.151 պառաւ. 14.16 ուշ. 14.21 արագ (երագ). շտապ. ճեպ. ժիր. տաճիկ «արագավազ» 14.22 -սպոյժ (սպուժ-) «դանդաղում». 14.24 [սպուժ-ել] «դանդաղել, ուշանալ». 14.25 նախ. նաւակատիք «բացման հանդես. տարեդարձ». 14.251 հակիրճ. 14.26 բաւ «ավարտ», սպառ, սպուռ, վճար. 14.29 կազմ «պատրաստ», պատրաստ. ժաման «ժամանակին պատրաստ, փութկոտ». 14.31 հանապազ, միշտ. յավէժ, յաւէտ. 14.331 տակաւ «քիչ-քիչ, հետզհետե». 14.72 (հայկական տոմարի ամսանուններ). նաւասարդ. տրէ (տրեկան), մեհեկան, ահեկան, մարերի, մարգաց, հրո(ր)տ-ից. 14.51 ժամ։

15. **Զգայական ընկալումներ.** 15.22 բուր-ել (բոյր). 15.251 խունկ, կընդրուկ, ստաշխն. 15.261 փուտ. 15.35 անոյշ. 15.411 գոյշ (զգոյշ). 15.51 նըշմար-ել. 15.52 դիտ-ել (դէտ), [զնն-ել (զնին)]. 15.54 դիտակ «աչքին երևացող բան». կերպ. 15.551 հանդէս. 15.61 գոյն, երանգ. ճաճան(չ)աւուխտ «գույնզգույն». 15.611 դժգոյն. 15.62 արշա- «սպիտակ (?), լուսափայլ (?)» (արշալույս-ք). 15.63 խաւար. [պիսակ] «սև նշան». ճարտուկ «ճանճկեն, բծավոր, պիսակավոր». 15.64 ճերմակ, սպիտակ. [արշա-] «սպիտակ (?), լուսափայլ (?)». 1565 արջն «սև, մութ». սեաւ 15.66 կարմիր. աշխէտ «կարմիր, հրագույն», ատրագոյն «հրագույն». 15.67 կապոյտ. 15.69 դարտակ «դեղին». 15.47 սոթ (<*սաւթ) «պինդ». 15.84 աշտուճ (ատտուճ) «ցամաք (հացի մասին)», երաշտ «չոր, ցամաք (հողի մասին)». 15.85 տապ, տաւթ. 15.87 անապակ. [ապատ] «անարատ, պայծառ». պարզ. 15.871 դատատակ «ցնցոց, սրբիչ». 15.881 ժահ «աղտեղություն»:

16. **Զգացմունք, խառնվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ.** 16.12 [յոյզ]. 16.17 բախտ, վիճակ. [ախտար-ք] «աստղ. բախտ. աստեղահմա». 16.18 [բախտ]. 16.19 պատուհաս. թշուառ. 16.21 ախորժ, ախորժական. կամակ-ք «ախորժելի բան. համով ուտելիք», հաճ. [շնորհ] «հաճություն». 16.22 զրաւս-(անք) «զվարճություն». 16.23 ուրախ (խրախ< *հուրախ). 16.27 տարփ (տրփ, տոփ). 16.29 համբոյր. 16.31 [աշխատ] «չարչարանք», տանջ-. 16.32 վիշտ. 16.33 անդոհ «մտատանջություն». 16.34 ապաշաւ «զղջում. խնայելը, խղճալը». փոշիման «զղջում». ապաշխար-ել «զղջալ, մեղքը լալ». 16.37 աշխար(-ել) «լալ, ողբալ», գեր «լաց, ողբ», սուգ. 16.46 պատիւ. [արգ (յ-արգ), արժան]. վեհ 16.461 նշկահ-ել «արհամարհել». նկուն «արհամարհված, ընկճված», նուաստ. 16.47 փառ-ք. բարգաւաճ «պերճ, փառավոր, անվանի». 16.48 ամբարտաւան, վէս «հպարտ, գոռոզ». նազ-ել. 16.51 ապարթան-ել «հանդգնել, խրոխտալ». 16.511 վստահ. 16.53 ահ (արհ-), վախ, սարսափ. ահագին, արհական. արհաւիր. (զ)արհուր-. 15.511 [գոյշ (զգոյշ)] 16.54 վտանգ. 16.61 կամ-իլ. -խազ, -ճան «-մոլ». կամայ. ակամայ. դժկամակ. 16.63 ապաւէն. 16.64 երախտ. 16.68 դագ «նենգություն, թակարդ. խաբեական», մանկ «նենգություն, խաբեություն». դրուժ- (-դրուժ). դրուժան «խաբեբա». 16.72 վատ, վատթար, [զաւշ] «վատ. ցանկասեր». գաժան, դժխեմ, դժնդակ, դժնեայ. ժանտ. խուժ «վայրենի, բարբարոս», խուժան. վատգոհար «ստորացեղ, գռեհիկ». 16.74 վ վրիպական. 16.75 [վնաս] «մեղք». 16.76 [վնաս] «հանցանք». 16.77 վրէպ, վրիպակ. 26.78 գարուլ «նախատինք», թշնամ-(անք) անարգանք, նախատինք, հայհոյանք». 16.79 գով-, գրուատ. 16.81 [շնորհ] «վայելչություն, գեղ»:

Մտածողություն, միտք. 17.11 [ուշ] «ուշք, միտք». 17.12 հանճար «խելք, միտք, իմաստություն». 17.13 անդաճ-ել (անդիճ-ել) «մտածել, խորհրդածել». 17.171 ակահ «տեղյակ». 17.22 ապուշ, պանդոյր «անմիտ, տխմար». 17.251 խրատ, հրահանգ. կիրթ. վարժ. մարզ-ել. 17.26 աշակերտ. 17.27 դաստիարակ. վարդապետ. 17.271 ախտարակ «բնախոս». 17.31 յ-իշ-ել. 17.37 հաւաստ, վաւեր «ստույգ, հաստատուն». 17.41 նպատակ. 17.43 փարգատ «չլինի թե, քավ լիցի»:

18. **Ձայնական արտահայտություն, խոսք. ընթերցանություն և գիր.** 18.111 թմբուկ. 18.12 նուագ. 18.121 տաւիղ «տասնալարյա քնար». վին «մի տեսակ քնար». 18.32 պատասխանի. 18.35 պահանջ. 18.36 խոստ- «խոստում, ուխտ», ուխտ. 18.37 մերժ-ել. 18.41 հրաւէր. 18.411 զանգակ. 18.43 ազդ, համբաւ, պատգամ. 18.431 հրեշտակ «սուրհանդակ, պատգամավոր». 18.51 դպիր. 18.54 նամակ 18.541 պատճէն. 18.61 մատեան:

19. **Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ. հասարակական հարաբերություններ.** 19.14 մարզ. նահանգ. 19.15 քաղաք. ոստան «գլխավոր քաղաք». 19.16 [շէն] «գյուղ» ավան. 19.16 [դաստակերտ] «ագարակ. ունեցվածք. շինվածք». 19.17 սահման. 19.21 ռամիկ «հասարակ ժողովուրդ». 19.23 [ազն] «ցեղ, սերունդ, ազգ. տեսակ». [ճետ] «ցեղ, սերունդ», տոհմ. 19.231 [նահապետ]. 19.31 իշխ-ել. 19.311 կարապետ «առաջնորդ, ուղեցույց». 19.32 թագաւոր. 19.321 [թագ]. [աշխա-

բուանդ] «թագի կապ». [խոյր] «գլխարկ, թագ». [պսակ] «պսակ, թագ». [վառ] «թագավորական քող». գահ, [գահաւոր(ակ)], տախտ «գահ, աթոռ». 19.33 բամբիշն «թագուհի». 19.35 իշխան. 19.35 գահնամակ «գահացուցակ». 19.352 (պաշտոններ, աստիճաններ, տիտղոսներ). անդերձապետ. ասպետ. բանուկան «պալատական տիկիններ». բդե(ա)շխ. գահաւոր. դեհկան. դեսպան. խոապետ. հազարապետ. հազարաւուխտ. հանդերձապետ. մատակարար. մարզպան. նախարար. շահապ. շահապետ. շապըստան տակառապետ. ոստիկան, պատմուճակ, պարէտ. սակստան-անդերձապետ. սեպուհ. տակառապետ. տաճարապետ. 19.36 ազատ «ազնվական», առհմակ «ազնվական», տոհմիկ. 19.38 հպատակ. 19.41 պետ. 19.42/43 գերդաստան «ծառաների և գերիների ամբողջություն». 19.43 [գերդաստան] «ծառա. աղախին», գերդաստանիկ, սպասաւոր. 19.431 [սպաս] «պաշտոն, ծառայություն». 19.44 [ազատ. արձակ]. 19.45 հրամայ-ել. հրաման. հրովարտակ. [պատգամ]. պատուէր, պատուիրան. 19.451 պատուիրակ. 19.461 ապ(ա)ստամբ. ապարասան «անհնազանդ, ըմբոստ», ստահակ «ըմբոստ», ստամբակ «ըմբոստ, անսաստ». [նշկահ-ել] «ապստամբել». 19.52 թշնամի. 19.55 անաշխարհիկ (անաշահիկ) «պանդուխտ, օտարական», աւտար, նժդեհ «պանդուխտ». 19.561 ապ(ա)նջական «հյուրընկալ». 19.58 նպաստ. 19.63 [դագ] «նենգություն, թակարդ». դաւ. 19.631 գուշակ «մատնիչ». դաւաճան. 19.64 հասարակ «ընդհանուր». 19.72 ստահակ «անառակ». 19.721 կապէնք «շնության վարձ»։

20. Ռազմական գործ. 20.12 ա(պ)շոպ «շփոթություն, խռովություն, կռիվ». գուպար «ըմբշամարտ. կռիվ». պայքար. վէգ «վեճ, կռիվ». վէճ. 20.13 պատերազմ, ռազմ. 20.132 թշնամի. [հէն] «թշնամի բանակ». 20.14 հաշտ. 20.141 դաշն. պայման. 20.15 [գրոհ] «բանակ». գաւր, ճամբար «բանակ. բանակատեղի». սահ «բանակ. գունդ, զորագունդ». 20.151 գունդ, սպահ «գունդ, զորաբանակ», սպայ «գունդ, զորաբանակ». վաշտ. մատենիկ «հեծյալ, հեծելակային». 20.152 դրաւշ, դրաւշակ. 20.17 զինուոր, մարզիկ «զինվոր», վաշտկան «զինվոր». պէշասպիկ «ձիավոր սուրհանդակ». 20.171 մարզել. 20.18 հրամ(ան)ատար. սաղար (սալար) «զորավար, զորապետ», սպայապետ, սպարապետ. 20.21 զէն-ք. [կազմ] «զինված». 20.222 [տապար]. 20.23 պարս «պարսատիկ», պարսատիկ (?). 20.25 պատկան «նետ». պատկանդարան «նետաման, կապարճ». 20.26 աշտեայ, նիզակ. տէգ «նիզակի ծայր». 20.271 [դաստակ] «սրի կոթ», դաստապան «սրի կոթ» 20.31 զրահ. վերտ «հյուսված զրահ. զրահավառ, զրահաւոր. 20.311 ա(ւ)ճառ «(ձիա)սարք, հանդերձանք», ասպազէն «ձիասարք». զանգապան (զանկապան) «սրունապան». 20.32 վարապան «կրծքի զրահ». 20.33 սաղաւարտ. 20.34 ասպար «վահան», վահան 20.351 պատուար. [պարիսպ]. պարկէն «քաղաքի պարիսպների շուրջը փորված խրամ». 20.41 պարտ-ել «հաղթել». 20.411 վան-ել «նետել, ցրել, վանել, նվաճել». վկանդ-ել «նվաճել». 20.42 պարտ-իլ «հաղթվել». դժպարտ «հաղթված, պարտված». 20.421 նախճիր «կոտորած (որսի, պատերազմի ժամանակ)». 20.43 արշաւ-ել. 20.431 ասպատակ. 20.44 պաշտպան. պատսպար-ել պա(ր)հակ, պա(ր)հակապան, պարեկապան. փուշտիպան «թիկնապահ». 20.45 նահանջ. 20.48 ապուռ «ավար, կողոպուտ», աւար. 20.49 դարան «թաքստոց»։

21. Օրենք. 21.12 աւրէն(-ք). 20.13 դատ, դատաստան. 20.16 դատաւոր. 21.21 ամբաստան, դատախազ «դատ պահանջող, ամբաստանող». 21.221 ջատագով «դատապաշտպան, բարեխոս». 21.23 վկայ. 21.24/25 խոստ-, ուխտ. 21.34 [վճար] «վճիռ», վճիռ. 21.35 ապիրատ «անիրավ, անարդար». 21.37 տոյժ, տուգան-ք. 21.371 դահիճ. 21.39 բանտ, բաստարան «բանտ», զընդան «բանտ». բանտական. բանտապան, բանտապետ. 21.41 աճոկ «հանցանք, վնաս», [վնաս] «հանցանք». 21.431 ապահարզան. 21.47 [(ուխտա)դրուժ]։

22. Կրոն և նախապաշարմունք. 22.11 դեն «կրոն, հավատ». 22.111 մազդեզն «զրադաշտական կրոն», քէշ (քեշտ) «զրադաշտական կրոն». 22.13 մեհեան, [տաճար]. 22.14 բագին «զոհասեղան». 22.141 ատրուշան. բարսմունք «տրցակ, որ կրակապաշտները բռնում են կրակի առջև». 22.15 զեն «զոհ», զոհ, յաղ «զոհ, զոհաբերություն», յաշտ «զոհ». 22.16 պաշտ-ել. պարիշտ ((ամ-)բարիշտ «անբարեպաշտ, անաստված»). 22.171 [խոստ-, խոստովան-, ուխտ]. 22.18 մոգ. մոգպետ, մովպետ. 22 211 բուրվառ. 22.23 աւրհն-ել. 22.24 նզով-ել. 22.26 [պա(ր)հ-ք] «պաս պահելը». 22.311 [դրախտ]. 22.32 դժոխ, սանդարամետ. 22.33 [հրեշտակ]. 22.34 դեւ. 22.42 հմայ «կախարդանք». կախարդ, կախարդասար. ախտար «աստեղահմա». մարգարէ. գրապանակ «հմայակ». հրաշ. 22.43 ջատուկ. 22.45 համբարու «պարիկ», յուշկապարիկ (վշկապարիք), պարիկ. հրէշ։

23. Դերանուններ և մասնիկներ[78]. 23.51 [դէմ]. 23.52 [հանդերձ]. 23.53 յանդիման. 23.54 վասն. 23.61 [կամ]։

Իրանական ծագման բառերի իմաստային (թեմատիկ) բաշխման հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1) Իրանական փոխառությունները բոլոր կարգի փոխառությունների մեջ միակն են, որ բնիկ հնդեվրոպական բառերի նման ընդգրկում են իմաստային (թեմատիկ) բոլոր խմբերը։ Այսուհանդերձ տարբեր է իմաստային խմբերի մեջ բնիկ և իրանական ծագման բառերի բաշխումը։

2) Իրանական ծագման բառերը ակնհայտորեն զիջում են բնիկ հնդեվրոպական բառերին իրենց թվով, գործածությամբ և բառակազմական արժեքով հատկապես այն խմբերում, որոնք համեմատաբար կայուն են և կազմում են ամեն մի լեզվի անկապտելի սեփականությունը։ Մասնավորապես պետք է նշել իրանական փոխառությունների մեջ դերանունների և միավորներ ու տասնյակներ արտահայտող թվականների բացակայությունը, ֆիզիկական աշխարհին, մարդկային սեռերին և ընտանեկան հարաբերություններին, մարմնի մասերին ու մարմնական գործառություններին, շարժման և գործողության սովորական ձևերին, տարածական էական հարաբերություններին, ոչ գունային զգայական ընկալումներին, ձայնական արտահայտություններին ու խոսքին վերաբերող անվանումների համեմատական սակավաթվությունը։

3) Իրանական փոխառությունները մեծ քանակ են կազմում և առանձին դեպքերում բնիկ հնդեվրոպական բառերին թվով գերազանցում հետևյալ խմբերում ու ենթախմբերում՝ արևադարձային գոտու կենդանիների և

---

[78] Ինչպես հնդեվրոպական ծագման ձևույթների և բառերի քննության դեպքում, բուն իրանական ածանցները այստեղ չեն բերվում. Նրանց մասին տե՛ս իրանական փոխառությունների բառակազմական առանձնահատկություններին նվիրված հատվածում։ Չեն բերվում նաև իրանական բառերից հայերենում նախդիրներով ու հոլովական վերջավորություններով կազմված ածանցավոր բառերը։

կուլտուրական բույսերի, կերակուրների և ամանների, հագուստների և զարդարանքների անվանումներ, գունային նշանակումներ և ամսանուններ, առևտրական, պետական-քաղաքական, ռազմական և իրավական տերմիններ։ Մեծաթիվ են հայ հեթանոսական կրոնի հետ կապված բառերը, կան նաև քրիստոնեական կրոնի բնագավառը անցած իրանական անվանումներ՝ **դրախտ, դժոխք, հրեշտակ** և այլն։ Բարձր թվականներից **հազար**-ը և **բիւր**-ը իրանական ծագում ունեն։ Բնականաբար մեծ թիվ են կազմում իրանական այն փոխառությունները, որոնք կապված են իրանական կյանքի, կրոնի, պետական ու կրոնական հաստատությունների հետ՝ մասամբ անցած հայ իրականությանը պարսկական տիրապետության հետևանքով. հատկապես շատ են զանազան պաշտոնների, աստիճանների և տիտղոսների անվանումները։

4) Ինչպես մասամբ երևաց նախորդ կետում ասվածից, միևնույն խմբերի ու ենթախմբերի մեջ ընդգրկված բնիկ և իրանական ծագման բառերի միջև երբեմն առկա է սեռի և տեսակի, ընդհանուրի և առանձինի հարաբերություն։ Հաճախ են այն դեպքերը, երբ իրանական փոխառությունների մեջ չկան համապատասխան ընդհանուր անվանումներ, բայց շատ են տեսակայինները։ Այսպես, բացակայում է ամանի ընդհանուր անվանումը, բայց կան **դոյլ, խան, սկավառակ, կուժ, բակույկ, շիշ, սրուակ, բաժակ, ճուագ, տաշտ** անվանումները. չկան հացի և թխվածքի իրանական ծագման ընդհանուր անվանումներ, բայց կան դրանց տեսակները նշանակող, երբեմն իրանականից հայերենին անցնելիս մասնակի իմաստ ստացած **նկան, նկանակ, նշխար, պախաննամ, խորակ, կոապ** անվանումները. չկա ծաղկի իրանական ծագում ունեցող ընդհանուր անվանում, բայց մեծ թիվ են կազմում ծաղիկների տարբեր տեսակների իրանական ծագման անվանումները, այդ թվում՝ **մանուշակ, յասմիկ** և այլն։ Բավական մեծաթիվ են միևնույն առարկան կամ նրան մերձավոր տեսակները նշանակող իրանական ծագման հոմանիշները, ընդ որում երբեմն համապատասխան բնիկ համարժեքների բացակայության պայմաններում. այսպես, վարագույրի համար կան **շատրուան, վարագոյր, վիժակ**, պատգարակի ու նրա տեսակների համար՝ **գահաւոր(ակ), դարգին, դեսպակ, ժանուար** հոմանիշները. բանակի և զորքի համար առկա են **գունդ, զաւր-ք, ճամբար, սահ** հոմանիշները. հավանաբար իրանական ծագում ունի նաև **բանակ** բառը։ Կան դեպքեր էլ, երբ հայերենը այդ հոմանիշները վերցրել է իրանական տարբեր աղբյուրներից. հմմտ. **սպայ-, սպար-, սահ**, որոնք ծագում են միևնույն արմատից։

5) Իրանական բառերի՝ հայերենին անցնելիս հաճախ տեղի է ունենում իմաստային որոշ տեղաշարժ, մասնավորապես իմաստի նեղացում և մասնակիացում։ Տարբեր բնագավառների վերաբերող փոխառությունների ստուգաբանական կապերի խզումը նրանց հաճախ հաղորդում է զուտ տերմինային արժեք՝ գործածություն միայն այս կամ այն նեղ բնագավառում։ Իրանական փոխառությունների բառակազմական առանձնահատկություններին նվիրված հատվածում խոսվեց իրանական ծագման որոշ բառերի՝ վերջածանցային արժեք ստանալու մասին՝ **-ա-պէս, -աւրէն** և այլն։ Ընդհանրապես բավականին հաճախակի են խոսքամասային և իմաստային տարբեր կարգի փոփոխություններն ու տեղաշարժերը, որոնք հասցնում են իրանական բառերի՝ միայն հայերենին հատուկ իմաստների։

6) Իրանական փոխառությունների՝ վերևում բերված իմաստային խմբերն ընդգրկում են միայն իրանական ծագման բառերը և բառակազմական ձևերը։ Սակայն, ինչպես նշվել է, կան մեծ թվով հայերեն բառեր, որոնք կազմված են իրանական ծագման արմատներով և հայերեն ածանցներով, հայերեն արմատներով և իրանական ծագման ածանցներով, երբեմն էլ իրանական ծագման արմատներով ու ածանցներով. հնարավոր է, որ հիշյալ ցանկում բերված **-ական, -աւոր, -պետ** և այլ բաղադրիչներով բառերի մի մասը կազմված լինի հենց հայերենում՝ առկա նյութի բազայի վրա։ Իրանական մի շարք փոխառություններ լայն գործածություն են ձեռք բերել և հիմք տվել բազմաթիվ նորակազմությունների համար, մյուսները մնացել են որպես գործածության առանձնակի ձևեր։ Նշենք, որ հատկապես առաջին տիպի բառերն են, որ հարատևել են մինչև մեր օրերը։ Վերևում ասվածների լույսի տակ հարկավոր է որոշ վերապահությամբ վերաբերվել իրանական փոխառությունների՝ բերված իմաստային բաշխմանը։ Այսպես, վերջին խմբում դրված **կամ** շաղկապի և **դէմ, հանդերձ, յանդիման, վասն** նախադրությունների հետ միասին առկա են բազմաթիվ այլ շաղկապներ և նախադրություններ, որոնք կազմվել են իրանական բառերի հոլովական և նախդրավոր ձևերով, իրանական և հայկական ծագման բաղադրիչների զուգակցմամբ. շաղկապներ՝ **սակայն, կամ թէ, վասնզի, որպէս զի, թէպէտ, յորժամ** և այլն. նախադրություններ՝ **պատճառաւ, ընդդէմ, զաւրէն, որպէս** և այլն։

ժգ) ՓՈԽԱՌՅԱԼ ԴԻՑԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Հայկական հեթանոսական դիցարանում մեծ տեղ են գրավել իրանական ծագման աստվածությունները՝ սկսած գերագույն աստված Արամազդից և վերջացրած մանր աստվածություններով ու ոգիներով։ Սրանց անունները հին շրջանի փոխառություններ են։

1. **Արամազդ, -այ** — հ. իրան. A(h)ura-mazdā «տեր իմաստուն». սրա մ. իրան. Ormizd ձևից է տառադարձված **Որմիզդ**-ը, որ հանդիպում է Ագաթանգեղոսի մոտ. կան նաև սրանից կազմված **Որմզդայ** և **Որմզդատ** անձնանունները.

2. **Անահիտ, -այ** — հ. իրան. Anāhitā «անարատ, մաքուր». հնում որպես սովորական անձնանուն չի գործածվել.

3. **Միհր** — մ. իրան. Mihr (< Miϑra-) «բարեկամություն, դաշինք», այլև, որպես արևի աստված, «արեգակ». VII դ. հանդիպում է գործածված որպես անձնանուն. այս հիմքից են ծագում **Միհրան, Միհրբարզան, Միհրդատ, Միհրշապուհ** հայկական անձնանունները։

4. **Տիր, -ի (Տիւր)** — *Tīr (հմմտ. ն. պրսկ. tīr «փայլածու մոլորակ. արեգակնային տոմարի 4-րդ ամիս. ամսվա 13-րդ օր»). իրան. *tīrē ձևից է փոխառյալ հայ. **տրէ** «հայկական տոմարի 4-րդ ամիս» բառը. այս հիմքից են ծագած **Տիրան, Տիրիթ** (?) անձնանունները։

5. **Սպանդարամետ** — Spandāramat «սրբամիտ, սրբանվեր» (*spanta «սուրբ» + *ar-matay- «բարեպաշտ միտք, նվիրվածություն»). սրա sp < s անցումը ներկայացնող (հարավ. բրբռ.) Sandāramat ձևից է ծագում **սանդարամետ** «ստորերկրյա աշխարհ, անդունդ, դժոխք» բառը։

6. **Վահագն** — Varhragn (< *vṛϑra-gna- «հաղթական, հարձակումը խա-

փանող»), գործածված է նաև որպես հատուկ անուն: Նույն ծագման են վերադրում Վահրամ և Վռամ անձնանունները:

Իրանական ծագման անձնանունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ 1) անձնանուններ, որոնց համապատասխան հասարակ անունները հայերենում չկան, և 2) անձնանուններ, որոնք հայերենում ունեն իրանական աղբյուրներից առնված բառային զուգահեռներ. վերջինների դեպքում հնարավոր է հարցի երկակի լուծում. կամ անձնանունը անկախաբար փոխ է առնվել (մանավանդ եթե իրանական աղբյուրներում կան համապատասխան անձնանուններ), կամ կազմվել է հայերենում՝ հասարակ անվան բազայի վրա: Վերջին հարցը պահանջում է հատուկ ուսումնասիրություն, և մեր կողմից չի քննարկվի:

Համեմատաբար մեծ թիվ են կազմում իրանական ծագման արական անձնանունները. իգականները սակավաթիվ են:

Իրանական ծագման անձնանունները որոշ դեպքերում ներկայացված են բառակազմական միևնույն բաղադրիչներն ունեցող խմբերով, այլ դեպքերում կանգնած են առանձնակի:

Նշենք որոշակի վերջածանցներով բնութագրվող խմբերը:

Մեծ թիվ են կազմում հայերի մեջ գործածական իրանական վերջածանցավոր կազմություն ունեցող (սովորաբար փոքրացուցիչ-փաղաքշական) անձնանունները, որոնց անածանց ձևերը երբեմն առկա են հայերենում՝ որպես հասարակ կամ անկախ հատուկ անուններ:

Փաղաքշական ձևերը հաճախ կազմված են ոչ թե փակագծերում բերվող հիմքերից, այլ ավելի ընդարձակ անունների երկրորդ բաղադրիչների կրճատումից.

-ակ (-ak(a)-)՝ Ամբակ (Ամպակ) (*amba- = հ. հնդկ. ámbha- «ուժ, զորություն») (?), Առնակ (arna- «կատաղի». հմմտ. ʼΑρνάκης) (?), Արշակ (arša(n)- «այր, տղամարդ, հերոս»), Արտակ (Արտա-ի համար հմմտ. Արտաւազդ, Արտաւան և այլն), Երազմակ (razm-, որից հայ. ռազմ (պատերազմ), Զանգակ (zang-, այստեղից հայ. զանգակ), Հմայեակ (hu-may-, որից հայ. հմայ-ք), Կայպակ (kaip-?), Մամակ (mām- «մայր» ?), Մանակ (Mana-. հմմտ. Մանաճիհր, Մանաւազ և այլն), Շահակ (šāh- «թագավոր», հմմտ. հայ. Շահ < Šāh), Վաղարշակ (հմմտ. Վաղարշ), Վասակ (vas- «ցանկանալ», որից հայ. վասն. կրճատված ավեստ. vasō-xšaθra- տիպի մի ձևից).

-էն (-ēn < -aina)՝ Աշխէն (axšēn «թուխ, մթագույն» կամ xšēn «տիրուհի»), Արտաշէն (Artaš-՝ Artašaš-ի կրճատված հիմքը), Արտէն (Art-՝ Art-ով սկսվող անունների կրճատված հիմքը), Գուրգէն (Gurgēn. հմմտ. հին Վրկէն), Դատաբէն (Datab- «?»), Կարէն (Kār-. հմմտ. Կար), Շահէն (šahēn «բազե»), Սուրէն (sūra- «ուժեղ, հզոր». հմմտ. Սուր), Վրէն (vīr «այր». հմմտ. Վր-իկ), Վրկէն (Vurkēn. հմմտ. Գուրգէն), Փառէն (*Farrēn՝ farr- > հայ. փառք. հմմտ. նաև Փառոխ),

-այճ, -էճ, -իճ (-aič, -ēč- -īč)՝ Մանէճ (Մանայճ), Վահրիճ:

Իրանական անձնանունների կրճատ ձևեր են կազմվել նաև -ոյ-ի (-ōe, -ōy) հավելմամբ՝ Շերոյ (šēr- «առյուծ»), Սատոյ (sat- «հարյուր»՝ Satasp-ից):

Բավական հաճախադեպ է նաև -ան (-ān) ածանցը՝ Միհրան (Mihr — դիցանուն, որից Միհր), Վահան (vrha- «վահան»), Տիգրան (tigr- «նետ. սուր», որտեղից հուն. τίγρις «վագր». քիչ հավանական է tigra-rāna- «նետամարտ», ինչպես առաջարկում է Աճառյանը), Տիրան (Tīr — դիցանուն, որից հայ. Տիր):

Հատուկ խումբ են կազմում -անոյշ (anōš «անմահ, օրհնված, երջանիկ, գեղեցիկ, քաղցր», որից հայ. անոյշ), -դուխտ (duxt «քույր») և -ուհի (< *ուրհի. ըստ Բենվենիստի՝ -urhi < -wrhi < -bṛθrya, որ քիչ հավանական է) [**Benveniste**, 1945, 46. հմմտ. նաև **Шанидзе**, 1968, 452—454][79] բաղադրիչներով իգական անձնանունները՝ Արշանոյշ, Խոսրովանոյշ, Վարդանոյշ, Զարմանդուխտ, Զրուանդուխտ, Խոսրովիդուխտ, Սանդուխտ, Վարազդուխտ, Վարդանդուխտ: Սրանցից առաջինը կարող է հանդիպել նաև անկախաբար (Անոյշ) և որպես արական անունների առաջին բաղադրիչ (Անուշաւան, Անուշվռամ): Ընդհանրապես այս բաղադրիչները, մանավանդ առաջինը և երրորդը, հայերենում ձեռք են բերել ինքնուրույնություն և նոր անձնանուններ կազմել հայրանուններից՝ Համազասպուհի (Համազասպի դուստրը), Վարդ(ան)ուհի (Վարդանի դուստրը) և այլն:

Իրանական հայտնի անձնանվանական բաղադրիչներով (մասամբ դիցանուններ) կազմություններից են հետևյալները.

Ասպ-, ասպ (asp- «ձի»)՝ Ասպատ, Ասպուրակ(ես), Համազասպ, Շաւասպ, Վջնասպ (?).

Արգ-, Արջ- (arg-, arǰ- (arž-) «արժեք», որոնցից արգ-, (յարգ, զարգ, արժ)՝ Արգամ, Արգաւան, Արջեւան.

Արշ(ա)-, -արշ (arša(n)- «այր, տղամարդ» կամ arša- «արջ»)՝ Արշակ, Արշամ, Արշաւիր, Արշէն, Շաւարշ.

Արտա- (arta- «օրենք, արդարություն»)՝ Արտակ, Արտանէս (< հուն. < իրան.), Արտաշահր, Արտաշամայ, Արտաշէն, Արտաշէս, Արտաշիր, Արտաւազդ, Արտաւան, Արտէն, թերևս նաև Արդուարդ (rt > rd սկլութական ձայնեկացմա՞մբ).

Բագա- (baga- «աստված»)՝ Բագամ, Բագարատ (հին Բագադիա), Բակուր (*bag-pur ?).

Դատ, -դատ, -րատ (-dāt(a)-, -δāt(a)- 1. «-տուր, տրված» 2. «-ստեղծ, ստեղծված»)՝ Դատ, Բագարատ, Միհրդատ, Սպանդարատ, Տրդատ.

Միհր(-) (Մեհր-, Մեհ-, Մեր-) (Mihr — դիցանուն)՝ Միհր, Միհրան, Միհրբարզան, Միհրդատ, Միրշապուհ (Մերշապուհ) և Մեհենդակ, Մեհ(ր)եւան, Մեհրուժան (Մերուժան, Մեհուժան).

Ներսեհ(-), -ներսեհ (narisah- «այրախոս»)՝ Ներսեհ, Ատրներսեհ, Միհրներսեհ, Փառներսեհ.

Շահ- (šāh- «թագավոր»)՝ Շահ, Շահէ, Շահակ, Շահէն.

Շապուհ, -շապուհ (šāh-puhr- «արքայորդի»)՝ Շապուհ, Միհրշապուհ, Մերշապուհ, Ներշապուհ, Սահրաշապուհ, Վարազշապուհ, Վռամշապուհ.

Շաւ (*šāv՝ syāv-ի կողքին, որից հայ. սեաւ. առաջինի համար հմմտ. սողդ. š'w)՝ Շաւասպ, Շաւարշ.

-պետ, -պատ (pet-, pat-, որտեղից հայ. պետ)՝ Ասպետ (հմմտ. ասպետ), Կարապետ (հմմտ. կարապետ), Ասպատ.

---

[79] Միևնույն աղբյուրից է բխեցնում Ա. Շանիձեն նաև աւրի-ուղ բառի առաջին մասը:

Վարազ(-) (varaz-, որից հայ. վարազ)՝ Վարազ, Վարազդատ, Վարազդէն, Վարազդուխտ, Վարազներսեհ, Վարազշապուհ, Վարազվաղան.

Վարդ(-) (vard-, որից հայ. վարդ)՝ Վարդան, Վարդ(ան)ունի և Նուարդ (?)

Տիր-, Տր- (Tīr — գիցանուն, որից հայ. Տիր, Տիւր)՝ Տիրան, Տիրանամ(?), Տիրիթ, Տրդատ (Տրդատունի), Տրէ (հմմտ. տրէ ամսանունը).

-ւազ (-wāza- «-վար» և -βāzu- < -bāzu- < bazuk, որից հայ. բազուկ)՝ Մանաւազ, Փառնաւազ.

-ւան (-βān- «լույս, փայլ»)՝ Անուշաւան (ըստ Յուստիի՝ -աւան, ըստ Աճառյանի՝ -urvān, -arvān «հոգի» ?)՝ Արգաւան, Արջեւան, Արտաւան.

Փառ-, Փառն- (farr-, որից հայ. փառ-ք, farn-)՝ Փառանձեմ, Փառէն, Փառներսեհ, Փառոխ և Փառնակ, Փառնաւազ։

Այլ կարգի իրանական անձնանուններից հայտնի են Ապրսամ (apuršam «բալասան»), Արմոգ (arm- «ձեռք» ?), Բամբիշ(ն) (bānbišn «թագուհի», որից հայ. բամբիշն), Բատ (bāt «հողմի ոգի» ?), Գոտարզ (Gōtarz), Դրաստամատ (durust- «ուղիղ» և mat < *mṛti- «միտք»՝ «ուղղամիտ»), Երուանդ (arvand- «արագաշարժ. քաջ». հմմտ. և Հրանդ), Զարեհ (zareh- «?»), Խոսրով և Խոսրովիկ (xu-srav- «բարեհամբավ»), Հրահատ (f/hrahat «հասկացող, խելոք», եթե fraδāta- «նախա-տուր» ձևից չէ), Յազդ (yazd- «աստված» բառով կազմված անունների կրճատ ձև), Պապ (pap-, որից հայ. պապ), Ռոստոմ (rōst-tahm «հեղեղ-ուժ, գետ-ուժ» կամ «աճ-ուժ»), Սանատրուկ (Sana-Srūk՝ sana- «ամուր»), Վաղարշ (val- «?»), Վստամ (vis-tahm- «մեծազոր»), Տիգրան (tigr- «նետ. սուր») և այլն։

ժդ) ՓՈԽԱՌՅԱԼ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Իրանական տարրի կշիռը պատմական Հայաստանի տեղանունների մեջ կարծես ավելի փոքր է, քան անձնանունների մեջ։ Այսպես, Հ. Հյուբշմանը իր «Հայերենի քերականության» մեջ տալիս է իրանական ծագման 121 անձնանուն և ընդամենը 37 տեղանուն։ Այդ ցանկը նույնությամբ կրկնում է Հ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմության» մեջ։ Այդ ցանկի քննությունը և մի շարք այլ փաստեր մեզ բերում են հետևյալ եզրակացությունների։

1) Հյուբշմանի ցանկում տեղ են գտել տեղանուններ, որոնց իրանական լինելը կարելի է ընդունել խիստ վերապահությամբ. ա) Բագայառիճ (Բագառիճ), Բագնայր և Վարազաբլուր տեղանունների միայն առաջին բաղադրիչներն են իրանական՝ Բագա- (baga- «աստված». հանդիպում է նաև Բագարան, Բագաւան տեղանունների և Բագարատ անձնանվան մեջ, որոնք ամբողջապես իրանական կազմություններ են), Բագին- «մեհյան» (նախորդ իրանական բաղադրիչից ածանցված) և Վարազ(ա)- (varaz(a)- > հայ. վարազ). առիճ-ի ծագումը հայտնի չէ, այն հանդիպում է –առիճ կամ –առինճ ձևով նաև Գուկառիճ, Լուսաքառիճ, Խոկառինճ, Կրառիճ, Զիրառիճ, Մկնառինճ, Տիրառիճ տեղանունների մեջ և առանձնակի գործածված՝ Առինջ, Հառինճ ձևերով։ Քաջնայր-ի այր-ը և Վարազաբլուր-ի բլուր-ը հայկական (հնդեվրոպական) ծագում ունեն (առաջինի համար հմմտ. թերևս հուն. ἄντρ «այր, քարայր», երկրորդի համար՝ կիմր. bal «բարձունք, լեռնագագաթ», հ. իռլ. bali «գետեզրյա բարձրություն, բլուր»). բ) –ական (-akān), –ապատ (apat), –արան (-a-δān), -աւան (āvān), -կերտ (kart), -շէն (šēn) իրանական բաղադրիչներով կազմությունները, որոնք բերում են Հյուբշմանը և Աճառյանը (Վասպուրական, Ներսեհապատ, Պերոզապատ, Վաղարշապատ, Բագարան, Արշակաւան, Բագաւան, Բագուան, Երուանդաւան, Զարեհաւան, Վաղարշաւան, Երուանդակերտ, Խոսրովակերտ, Մանազկերտ < Մանաւազկերտ, Վաղարշակերտ, Վասակակերտ, Վարազկերտ, Վարդանակերտ, Տիգրանակերտ Վարդաշէն. միայն մասամբ են բուն իրանական. այդ բաղադրիչները հայերենում անկախ գործածություն են ունեցել (մասամբ էլ ունեն մինչև այժմ), և այն դեպքերում, երբ առաջին բաղադրիչները իրանական աղբյուրներից փոխառված հայկական անձնանուններ են, հարցը կարող է լուծվել ամեն մի տեղանվան կոնկրետ քննությամբ. այսպես, օրինակ, Վաղարշապատ, Արշակավան, Երվանդաշատ, Երվանդակերտ, Տիգրանակերտ քաղաքները հիմնվել են իրանական անուններ կրող հայ թագավորների կողմից, և դրանց անունները չեն կարող բուն իրանական կազմություններ համարվել։ Հիշյալ բաղադրիչներով կազմվել և կազմվում են հայկական տեղանուններ նաև ոչ իրանական բնույթի բաղադրիչներից. հմմտ. Ղազարապատ, Կորիւնապատ, Թոռնաւան, Ընջղակերտ, Կաւակերտ, Հայակերտ, Զիւնակերտ, Յոլակերտ, Արճունաշէն, Բարձրաշէն, Միջնաշէն և այլն. գ) դժվար է պնդել նաև այն տեղանունների անմիջական իրանական ծագման վրա, որոնց համապատասխան անունները հայերենում տարածված բառեր են. դրանց համար հնարավոր է իրանական հասարակ անուն→հայկական հասարակ անուն→հայկական տեղանուն անցումը հմմտ., օրինակ, Վարազ։

2) Ակնհայտ իրանական բնույթ ունեն –պերոժ (pērōž «-հաղթ») և –ւանդ բաղադրիչներով կազմությունները՝ Որմզդպերոժ, Հրաճռապերոժ, Սպանդարանպերոժ, Բագրեւանդ. սրանց պետք է միացնել նաև ռոտ (rōt) «գետ») և Քուստ (kust «կողմ» բաղադրիչներով կազմությունները՝ Աղուանդռոտ Բաղանռոտ (Ռոտ-ի-Բաղա), Ճուաշռոտ, Քուստ-ի-Փառնէս, Քուստակ. թեև, իհարկե, այս տեղանունների մյուս բաղադրիչները կարող են լինել ոչ իրանական (տեղական) բնույթի։ Իրանական ծագում ունեն Ասպ-ով (asp- «ձի») բաղադրությունները՝ Ասպական, Ասպանեն գետանունները։ Իրանական բնույթի են նաև, այսպես կոչված, իզաֆետային կառույցները՝ հատկացյալ-հատկացուցչի ի–ով միացումները՝ Ռոտ-ի-Բաղա, Քուստ-ի-Փառնէս։ Որոշ տեղանունների իրանական ծագման ապացույց կարող են լինել իրանական այն բաղադրիչները և հնչյունական այն առանձնահատկությունները, որոնց քննության մասին խոսվել է իրանական ծագման հասարակ անունների քննության կապակցությամբ։ Իրանական բնույթի են նաև, ինչպես նշվել է, -ունի ուրարտական վերջածանցով մի շարք տեղանունների հիմքեր՝ Ապահունիք[80], Վարաժնունիք և այլն։

3) Բացի վերևում հիշված բաղադրիչներով կազմություններից Հյուբշմանի և Աճառյանի ցանկում հիշվում է նաև մի քանի այլ տեղանուն՝ Գանձակ քաղաքանունը, Հրազդան գետանունը, Շաւարշան դաշտանուն-գավառանունը։ Դրանց կարելի է ավելացնել՝ ա) Ազատ (հայ. ազատ < āzāt), Երասխ (ըստ

---

[80] Ս. Երեմյանը [1963, 36] Ապահունիք-ը բխեցնում է aparh ցեղանունից։ Սրա հետ կապ չունի պրթ. 'pḫwny (apaxuni) ամանունը։

Ռ. Շմիտի. ZDMG, 1967, 136]՝ a-raxsa-ից «անլույս, մթին». ըստ Վ. Հինցի (Hinz, 1975, 34)՝ միջ. raxs-ից «փայլուն». համեմ. հ. պրսկ. raxϑ-), Ռահ (համեմ. ավ. Raṅha) գետանունները, բ) Կոհեր (համեմ. հ. պրսկ. kaufa-, ավ. kaofa, ն. պրսկ. kōh «լեռ»), Սեպուհ (համեմ. սեպուհ < *visya-puϑra- «իշխան») լեռնանունները, գ) բազմաթիվ քաղաքանուններ, գյուղանուններ և այլ տեղանուններ՝ Դուին (ըստ Խորենացու՝ պարսկերեն «բլուր». համեմ. հ. իռ. dūn «քաղաք» < *«բլուր», հ. անգլ. dūn «բարձունք, լեռ», որոնք ենթադրում են կորած մի իրանական բառ), Նուարսակ և այլն։

4) Բուն իրանական ծագման տեղանունները հիմնականում տարածված են պատմական Հայաստանի հարավարևելյան ծայրագավառներում, հատկապես Պարսկահայքում, Փայտակարանում, Ուտիքում, այլև Արցախում, Վասպուրականում, այսինքն՝ այն մասերում, որտեղ հայերը սերտ շփման մեջ են եղել իրանական ժողովրդի տարբեր հատվածների հետ։

4. ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

ա) ԿՈՎԿԱՍՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ ԵՎ ԲԱՌԲԱՌՆԵՐԸ

«Կովկասյան լեզուներ» անվանումը երկիմաստ է. նրա տակ նկատի են առնվում մի կողմից՝ Կովկասում գտնվող լեզուներն ընդհանրապես՝ անկախ նրանց ցեղական փոխհարաբերությունից, աշխարհագրական առումով, մյուս կողմից՝ միայն Կովկասի այն լեզուները, որոնք չեն պատկանում ոչ հնդեվրոպական (հայերեն, օսերեն, թաթերեն, թալիշերեն և այլն), ոչ թյուրքական (ադրբեջաներեն, կումիկերեն և այլն), ոչ էլ սեմական (ասորերեն) լեզվաընտանիքներին։ Երկրորդ մեկնաբանության դեպքում էլ այդ անվանումը հստակ լեզվաբանական բովանդակություն ձեռք չի բերում։ Բանն այն է, որ լիովին պարզ չէ այս սկզբունքով առանձնացված ցեղակցական խմբերի փոխհարաբերությունը։ Եթե մի շարք գիտնականներ դրանք դիտում են որպես լեզվական մեկ ընտանիքի մեջ մտնող խմբեր[1], ապա ուրիշները եղած փաստերը անբավարար են համարում այդ պնդելու համար։ Ճշմարտությունը հավանաբար այն է, որ մենք գործ ունենք լոկ հեռավոր ցեղակցության հետ։

Տարբերում են կովկասյան լեզուների երեք հիմնական խումբ կամ ընտանիք՝ հարավկովկասյան կամ քարթվելական (երբեմն կոչում են նաև իբերական), արևմտակովկասյան կամ աբխազ-ադըղեական և արևելակովկասյան կամ նախյան-դաղստանյան։ Որոշ հետազոտողներ նախյան լեզուներն առանձնացնում են որպես հատուկ լեզվաընտանիք, բայց դրանք ակնհայտորեն ավելի մոտ են դաղստանյան, քան մյուս լեզուներին։ Երեք լեզվաընտանիքների միջև եղած ընդհանրությունները այնքան շատ չեն, ինչպես սովորաբար ենթադրում են ոչ այնքան խիստ մեթոդներով առաջնորդվող հետազոտողները. Գ. Դեետերսը [**Deeters**, 1963] կովկասյան երեք լեզվաընտանիքների ընդհանուր բառային միավորների քանակը համարում է երկու տասնյակից ոչ այնքան ավելի[2]։ Ահավասիկ ամենից ավելի հավանական համարվող «համակովկասյան» ընդհանրությունները՝ ռուսական տառադարձությամբ [*համեմ.* **Климов**, *1965, 71*].

Արևմտակովկասյան	Հարավկովկասյան	Արևելակովկասյան	Նշանակությունը
гвы	гули	да-кIв	սիրտ
псы	сули	са	հոգի
лы	легъви	дикъ	միս
ца	цали	цер	ատամ
дыгъв	дакъви	дакъ	արմունկ
пкъы	пха	пха (?)	հենք, կմախք
дыгъа	дгъэ	ба-ргъ	արև
мза	мзэ	мадз	լուսին
цв	ваци	оц	ցուլ
кхъва	гъори	кха	խոզ
(тI) къва	тIкъу-би	тIкъва	երկու
х	сами	лъаб	երեք
(т) хвы	ху-ти	хвы	հինգ
пха	пх-	пх	տաք
гIва	кIвам-ли	кIкIум/-р	ծուխ
за	дзэдзви	заз	փոշ
с-	с-	сс-	հյուսել
тэс-	тэс-	тас-	ցրել
кIвыр-	гор-	гир-	գլորվել
з-	дз-	дз-	կթել
ма	ма	ма	նա, այն
ма	ма	ма	մի՛

Այս ընդհանրությունները հավաստարժեք չեն. 1) երեք խմբերի համար վերականգնված ընդհանուր իմաստները որոշ դեպքերում պայմանական են և նշանակալից չափով շեղվում են առանձին խմբերում ու լեզուներում առկա իմաստներից. այսպես, քարթվելական ЦАЛИ-ն բուն նշանակում է «հատ», ДГЪЭ-ն՝ «օր», МЗЭ-ն՝ «արև», ТКЪУ-БИ-ն՝ «երկվորյակ», ВАЦИ-ն՝ «խոյ», ТЭС-ը՝ «ցանել», աբխազ-ադըղեական З-ն՝ «քամել», (тI-)КЪВА-ն՝ «բան», նախյան-դաղստանյան ДАКЪ-ը՝ «կանգուն (չափ)», ПХА-ն՝ «ջիղ», ТIКЪВА-ն՝ «բան» [**Климов**, *1965, 71—72*]. 2) որոշ վերականգնումներ պայմանական բնույթ են կրում կամ չեն հենվում այս կամ այն խմբի լեզուների մեծ մասի տվյալների վրա. պայմանական է 1-ին և 7-րդ օրինակներում да- և ба- դասանիշերի առանձնացումը նախյան-դաղստանյան լեզուներում. 1-ին, 10-րդ և 18-րդ օրինակները հենվում են միայն նախյան լեզուների վրա և այլն [**Климов**, *1965, 71*]. 3) որոշ օրինակներ ակնհայտորեն բնաձայնական են և չեն կարող ցեղակցության վստահելի ապացույց ծառայել. համեմ. խոզի անվանումը, որ դաղստանյան լեզուների մեծ մասում փոխարինված է ուրիշ անվանումով. 4) կովկասյան լեզուների առանձին խմբերի և նույնիսկ ընդհանրության տարբեր ընտանիքների միջև կարելի է բերել ոչ պակաս թվով բառային զուգադիպումներ. այսպես, հենց բերված օրինակներից լուսնի անվանումները (мза, мадз) շատ նման են հնդեվրոպական *me(n)s-ին (համեմ. հայ. **ամիս**, ռուս. месяц), գլորվելու գաղափարի նշանակումները (кIвыр, гро-, гир-)՝ հ.-ե. *ger-/gor-ին, ма «մի՛» մասնիկը՝ հ.-ե. *mē-ին (հմմտ. հայ. մի՛):

---

[1] Վրաց գիտնականները գործածում են նաև «իբերա-կովկասյան լեզվաընտանիք» անվանումը։

Այս բոլոր փաստերը խոսում են այն մասին, որ կովկասյան երեք լեզվաընտանիքների միջև մերձավոր ցեղակցական կապեր չկան. կարելի է խոսել միայն հեռավոր ցեղակցության մասին՝ թերևս նոստրատիկ ընդհանրության ներսում:

Կան նաև բառային այնպիսի զուգադիպումներ, որոնք տարածքային կապեր և շփումներ (կոնտակտներ) են ենթադրում կովկասյան երեք լեզվաընտանիքների միջև՝ զույգ-զույգ համեմատությամբ: Սակայն այս զուգադիպումների քանակն էլ այնքան մեծ չէ, որ իրավունք տա կովկասյան երեք լեզվախմբերը միավորելու մեկ ընդհանուր լեզվաընտանիքի մեջ. այդ զուգադիպումները ոչ մի կերպ չի կարելի համեմատել այնպիսի լեզվաընտանիքների մեջ միավորված լեզվախմբերի ընդհանրությունների հետ, ինչպիսիք են, օրինակ, հնդեվրոպական, սեմական կամ թյուրքական լեզուները: Տիպաբանական առումով կովկասյան երեք լեզվաընտանիքները ի հայտ են բերում ինչպես ընդհանուր, այնպես էլ տարբերիչ գծեր: Հնչյունական առումով ընդհանուր է, այսպես կոչված, ձայնաճեղքային (գլոտալ) կամ ընդհատական (աբռուպտիվ) ետնալեզվայինների և ետին կազմավորման բաղաձայնների որոշ տիպերի առկայությունը: Քերականական կառուցվածքի համար ընդհանուր են կցականությունը, բայի ենթակա-խնդրային և դասային նախամասնիկավորումը, նախադասության, այսպես կոչված, էրգատիվ կառուցվածքը և, դրա հետ կապված, անցողական ու անանցողական բայերի կտրուկ հակադրությունը: Տարբերությունները հանդես են գալիս հիմնականում բաղաձայնական և ձայնավորական համակարգերի հարստության և աղքատության, դասի քերականական կարգի դրսևորումների, հոլովների համակարգի հարստության և աղքատության մեջ և այլն: Սրանց մասին խոսք կլինի կովկասյան առանձին ընտանիքների և հայերենի փոխհարաբերության քննության կապակցությամբ:

Վերևում ասածները պարզ են դարձնում, որ հայերենի և կովկասյան լեզուների փոխազդեցության հարցը նպատակահարմար է քննել ըստ վերջիններիս առանձին ընտանիքների:

բ) ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ (ՔԱՐԹՎԵԼԱԿԱՆ) ԼԵԶՈՒՆԵՐԸ

Հարավկովկասյան (քարթվելական) լեզվաընտանիքը ներկայացված է ընդամենը երեք լեզվով՝ վրացերեն, զաներեն և սվաներեն: Առաջին երկուսը իրար ավելի մոտ են, քան սվաներենը: Զաներենն ունի երկու հիմնական բարբառ՝ ճաներենը կամ լազերենը, որ հիմնականում տարածված է Թուրքական Լազիստանում (փոքր թվով՝ Վրացական ՍՍՀ-ում), և մեգրելերենը, որ գտնվում է Վրացական ՍՍՀ արևմտյան շրջանում: Որոշ հետազոտողներ դրանք առանձին լեզուներ են համարում: Սվաներենի չորս բարբառները տարածված են Վրացական ՍՍՀ հյուսիս-արևմտյան շրջանում:

Քարթվելական լեզուներից վրացերենը ունի V դարից սկսված գրական հարուստ ավանդույթ: V—XI դդ. ընկած շրջանը համարվում է հին, հաջորդը՝ նոր վրացերենի շրջան: Ունի շուրջ մեկուկես տասնյակ բարբառներ՝ քարթլյան, կախեթյան, փշավյան, խևսուրյան, թուշյան, իմերեթական, գուրիական և այլն: Փոքրաթիվ խոսողներ ունեցող վրացական բարբառներ կան նաև Թուրքիայում (իմերխևյան), Իրանում (ֆերեյդանյան՝ Սպահանի նահանգում) և Ադրբեջանական ՍՍՀ-ում (ինգիլոյական):

Քարթվելական լեզուներից վրացերենը և զաներենը բաղաձայնների և ձայնավորների հարաբերությամբ հայերենից քիչ են տարբերվում: Նրանք ունեն հինգ ձայնավոր (a, e, i, o, u) և մոտ երեք տասնյակ բաղաձայն, որոնցից պայթականները տարբերվում են ըստ ձայնաճեղքայնության, ձայնեղության, արտաբերության տեղի: Սվաներենի բարբառները ունեն ձայնավորների ավելի մեծ քանակ՝ 7—18: Վրացերենին հատուկ է բաղաձայնների կուտակումը. իրար ետևից կարող են հանդիպել մի քանի (մինչև 3—4) բաղաձայն: Զաներենն այս դեպքում վրացերենի բաղաձայնական խմբերի մեջ ներմուծում է ձայնավոր, այսինքն՝ բնորոշվում է լիաձայնությամբ: Վրացերենի սուլական հնչյունների դիմաց զաներենում և սվաներենում հաճախ օրինաչափորեն առկա են շշականներ. հմմտ. վրաց. cxwari և մեգր. šxuri, ճան. (m)čxuri «ոչխար» (այստեղից հայ. **ոչխար**):

Քարթվելական լեզուները ձևաբանական առումով կցական բնույթի են՝ թեքական գծերով: Բացակայում են քերականական սեռը և դասը, թեև որոշ հետազոտողներ փորձում են գտնել վերջինիս հետքերը: Հոլովների թիվը ըստ լեզուների 6—11 է, սրանց մեջ տեղ է գրավում էրգատիվը, որ, սակայն, չկա մեգրելական բարբառներում, իսկ վրացերենում և սվաներենում հանդիպում է միայն որոշ ժամանակների դեպքում:

Քարթվելական բայի մեջ տարբերվում են ոչ միայն ենթակայի, այլև խնդրի դեմքերը, առկա են ուղղվածության (վերսիայի) քերականական կարգը, հնարավորական եղանակը և պատճառական սեռը: Զգալի է բայական նախածանցների դերը. հատկապես մեգրելական բարբառում կան ութսունից ավելի պարզ և բաղադրյալ նախածանցներ:

Հայ-քարթվելական զուգադիպումները կարելի է բաժանել երկու խմբի՝ ընիկ և ձեռքբերովի: Առաջին խմբին պատկանում են նախ՝ հեռավոր ցեղակցության՝ նոստրատիկ ընդհանրության միավորները, երկրորդ՝ բնաձայնությունները, ձայնարկությունները և մանկական բառերը. պայմանականորեն այս խմբին կարող են հատկացվել նաև պատահական զուգադիպումները:

Ընդհանուր նոստրատիկ բնույթի զուգադիպումներից հիշատակենք հետևյալ օրինակները. հայ. դա, այդ, -դ (հ.-ե. *to-)—մեգր. te-/ti- «սա, այդ» (նոստր. ?). հայ. դնել — վրաց. d(w)-/dew- «դնել. պառկել», զան. d- «դնել. պառկել», սվան. d- «դնել. հագնել» (*d(w)-. նոստր. *dʌˁʌ «դնել»). հայ. եղն (հ.-ե. *el-en-) —վրաց. irem- «եղնիկ. եղջերու» (նոստր. *ʔili «եղնիկ, եղջերու»). իմ, ինձ (հ.-ե. *(e)ne) — վրաց. me, մեգր. ma, ճան. ma(n), սվան. mi- «ես» (*m-, նոստր. mi «ես»). -լ (դերբայական ածանց՝ ածել, ածեալ) (հ.-ե. *-lo-)—վրաց. -(i)l- (դերբայական ածանց՝ çer-il- «գրված», dum-il- «լռություն, լռել»), զան. -ir- (*-il-. նոստր. *-lʌ- — ածականակերտ ածանց). հայ. լակել — վրաց. loķ-, ճան. loķ-, losķ-, մեգր. loķ- (*loķ-. նոստր. *laķʌ «լիզել»). հայ. լմել, լմլմել — վրաց. lam-/lm- (նոստր. *l'ama «տրորել, փափկացնել»). հայ. ծանեայ (ճանաչել), ծանաւթ (հ.-ե. *g'en-) — վրաց. gen-/gn- «հասկանալ, իմանալ», ճան. gn-, մեգր. gen-/gn- «զգալ, լնել, հասկանալ» (*gn-. նոստր. *KENʌ «իմանալ»). հայ. կեր, կուր, կոկորդ (հ.-ե. *gʷer-) — վրաց. qorq-, մեգր. qorqel- «կոկորդ» (*qorq-. նոստր. *gurʌ «կլլանել»). հայ. ճոլ, ճոլովել (հ.-ե. *kʷel-) — վրաց. ḳwer- «կլոր բլիթ. գլուխ շաքար, գլուխ պանիր», ճան., մեգր. ḳwar «կլոր բլիթ, բոքոն», մեգր. ḳwarḳwalia- «կլոր» (*ḳwer-, *ḳwerḳwer-. նոստր. *kol'ʌ «կլոր»). հայ. մաթիլ (հ.-ե. *math-, թե՞ փոխառություն զաներենից) — վրաց. maṭl-, ճան., մեգր. munṭur-, սվան. məṭ- «որդ» (*maṭl-. նոստր. *mʌtʌ «որդ»). հայ. մի՛ (հ.-ե. mē) — ճան. mo(t), սվան. mad(e), mōd(e) «մի՛» (*mad. նոստր. *mā «մի՛»). հայ. մոր(ի), մորենի, մոշ(այ), բրբ. մոռ (հ.-ե. *moro-) — վրաց. marçqw-, սվան. bäsqi- bäsq- «մորի» (*marçqw-. նոստր. *marja «հատապտուղ»). հայ. նա, այն, -ն (հ.-ե. *n-) — հ. վրաց., ճան., մեգր. -n — եզակի 3-րդ դեմքի ենթակայի ցուցիչ (*-n. նոստր. *NA — ցուց. դերանուն). հայ. որովայն (հ.-ե. *krop-?) — ճան. korba, մեգր. kora «փոր, որովայն» (նոստր. *ḳarb(i) «փոր, փորոտիք»). հայ. սիրտ (հ.-ե. *k'erd-) — վրաց. mḳerd-, մեգր. ḳədər-, ḳidir-, սվան. mučod- «կուրծք» (*mḳerd-. նոստր. ḳErdʌ «կուրծք, սիրտ»). հայ. տալ «տեգերկին» (հ.-ե. *g'ʙlou-) — վրաց. kal- «կին» (նոստր. *kälu «կին, խնամի»). հայ. տի- «մեծ» (տի-կին, տի-եզերք) (հ.-ե. *dei-?) — վրաց., ճան., մեգր. did- «մեծ» (*did-. նոստր. *didʌ «մեծ»). հայ. տուտն, ստուն (հ.-ե. *dud-?) — վրաց. dud- «կատար», մեգր. dud- «գլուխ», ճան. dud- «գլուխ, կատար, գագաթ», սվան. dudul- «առնանքի պսակ» (*dud-. նոստր. *duλʌ «վերջավորություն»). հայ. ցելուլ (հ.-ե. *skel-) — վրաց. cel- «հնձել. գերանդի», մեգր. cal-, ճան. (n)cal- «հնձել», մեգր. cel- «գերանդի» (*cel-. նոստր. *calu «ճեղքել, կտրել»). հայ. փերթ (հ.-ե. *pherk-t-) — վրաց. p(x)reç-, p(x)riç, ճան. bruç-, մեգր. buriç- «պատռվել» (*priç-. նոստր. pär'(a) «պատռել, ջարդել, ճեղքել»). հայ. -ք (ո-ք) (հ.-ե. *kʷe) — վրաց. k(w)e.- մեգր., ճան. ko- — սաստկական-հաստատական մասնիկ (*kwe-. նոստր. *ḳ(o) — սաստկական և միացական մասնիկ). հայ. քերել, քերթել (հ.-ե. *(s)ker-) — վրաց. kerk- «կեղև», kercl- «թեփ, թեփուկ» (<իրա՞ն.) (նոստր. *kar'ä «կեղև»):

Նշանակալից թիվ են կազմում հայ-քարթվելական բնաձայնական (բացահայտ կամ թաքնված), ձայնարկական և մանկական բնույթի ընդհանրությունները, ընդ որում սրանց հայկական ներկայացուցիչները երբեմն գալիս են հնդեվրոպական մակարդակից. հայ. բզեզ, բզզալ — վրաց. bzu-, ճան. buz-al- «բզզալ» (*bzu-). հայ. բու (հ.-ե. *b(h)(e)u-) — վրաց. bu(w)-, մեգր. γu-, ճան. bγu-, (m)γu- (*b(γ)u-). հայ. բրբռ. ծիվ, ծվալ, ծվծվալ — ճան., մեգր. çw- «ասել» (նոստր. *çʌwʌ «ճչալ, ասել»?). հայ. կաքաւ (հ.-ե. *kakk-? — վրաց. ḳaḳab-, մեգր. ḳaḳobe «կաքավ» (*ḳaḳab-). հայ. կկու (հ.-ե. *kuku-) — վրաց., մեգր., ճան. gugul-, սվան. gägo-, gigu-, gego- «կկու» (*gugul-). հայ. կոկոն, կոնգոմ — վրաց. ḳuḳur-, ḳoḳor-, մեգր. ḳwiḳil-, ճան. ḳuḳul- «կոկոն» (*ḳuḳul-). հայ. կռիչ, կռինչ, բրբռ. կռկռալ, նաև կռունկ (հ.-ե. *ger-) — վրաց. mγer- «երգել», մեգր. γor-, γwar- «ճչալ» և այլն (*γar-/γr-), վրաց. γaγad- «ճչալ», մեգր. γarγal- «շաղակրատել» (*γar-γar-). հայ. հազ (հ.-ե. *kʷas-, *-g'h-?) — վրաց. xwel- «հազ», մեգր., ճան. xwal- «հարբուխ», սվան. qweš-, qwäš- «հազ» (*kwez$_1$-). հայ. յոպոպ (հ.-ե. *epop-, *opop- — վրաց., մեգր. opop-, ճան. opampe-, սվան. opopa-, opopä- «հոպոպ» (*opop-). հայ. բրբռ. (մնկ.) փափա «ուտելիք» (հ.-ե. *pap(p)a — վրաց., ճան. papa-, մեգր. papir- «(կաթնա)շիլա» (*papa-). հայ. փուք, փուչ, փչել (հ.-ե. *p(h)u-) — վրաց. *puw- «փքվել, բարձրանալ (խմորի մասին)», մեգր., ճան. pu-, սվան. pw- «եռալ» (*pu-) և այլն:

Համանմանաբար բնաձայնական բնույթ ունի հայ. ծիծ, ծուծ (ծծել) և վրաց., մեգր. juju-, ճան. buj- «ծիծ, ստինք», վրաց. çow-, մեգր., ճան. ç(w)-, վրաց. çuç(w)n-, մեգր. çurçon-, ճան. çuçon-, çiçon-, սվան. çusd- «ծծել» բառերի նմանությունը, թեև, ինչպես կտեսնենք, Հ. Աճառյանը հայ. բառերը դնում է քարթվելական աղբյուրից փոխառյալների մեջ:

Մեծ թիվ են կազմում, այսպես կոչված, ձեռքբերովի ընդհանրությունները՝ իրարից (անմիջաբար կամ միջնորդաբար) և երկրորդ աղբյուրից կատարած փոխառությունները: Հայերենի և քարթվելական (այլև ընդհանրապես կովկասյան) լեզուների ոլորտներից կատարած փոխառությունների մասին մենք առիթ ենք ունեցել խոսելու: Շատ են նաև իրանական, սեմական, հունական, ավելի ուշ՝ թյուրքական աղբյուրներից կատարված ընդհանուր փոխառությունները, ընդ որում արևմտա-իրանական աղբյուրներից կատարված քարթվելական փոխառությունների մի մասը հայկական միջնորդությամբ է:

Հ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմության» մեջ հայերենի և կովկասյան լեզուների զուգադիպումների ընդհանուր քանակը համարում է շուրջ 900, որոնց մեծ մասը, բնականաբար, հայ-քարթվելականն է: Երկար ժամանակ ապրելով կողք-կողքի, գտնվելով քաղաքական ու մշակութային սերտ կապերի մեջ, հայերը և վրացիները չէին կարող իրարից մեծ թվով փոխառություններ չկատարել: Առանձնապես շատ են վրացերենի՝ հայերենից կատարած փոխառությունները, որոնց հանգամանալից քննությունը ավելի շատ վրացերենի պատմության մասնագետների գործն է: Այդ փոխառությունները մեզ հետաքրքրում են այն չափով, որ չափով հնարավորություն են տալիս խոսելու հայերենի մշակութային ազդեցության բնույթի մասին, վերականգնելու հայերեն բառերի որոշ հնագույն նախաձևերը, լուծելու հայերենի պատմական հնչյունաբանության մի շարք կարևոր հարցեր:

Քարթվելական լեզուների այս կամ այն բառի՝ հայերենից փոխառյալ լինելը ակնհայտ է, եթե բառը՝ 1) ունի հավաստի հնդեվրոպական ծագում և արտացոլում է հայերենին բնորոշ հնչյունական առանձնահատկությունները, մինչդեռ քարթվելական լեզուները կամ չունեն համապատասխան նոստրատիկ զուգահեռներ, կամ ունեն իրենց համար բնորոշ ու հայերեն բառից տարբերվող զուգահեռներ. 2) քարթվելական լեզուներում սահմանափակ տարածում ունի (հանդիպում է հատկապես հայերենին մերձավոր բարբառներում) և չի բացատրվում քարթվելական ընդհանուր արմատական ձևերով, երբեմն էլ կովկասյան այլ զուգահեռներով. 3) հայերենում լայն տարածում ունի և կազմված է նրա համար բնորոշ կառուցվածքային կաղապարներով ու միջոցներով. 4) հայերենը փոխ է առել (երբեմն իրեն հատուկ փոփոխություններով) այնպիսի լեզուներից, որոնք անմիջական շփման մեջ են եղել հայերենի, բայց ոչ քարթվելական լեզուների հետ. 5) հանդիպում է հայերենից թարգմանված վրացերեն աշխատություններում. 6) վրացերենի բառարաններում և այլ աղբյուրներում հատուկ նշում ունի հայերենից փոխառյալ լինելու մասին:

Քարթվելական լեզուների, հատկապես վրացերենի՝ հայերենից կատարած փոխառությունները հաճախ հնարավորություն են տալիս վերականգնելու հայերեն բառի հին կերպարանքը և լուծելու բացարձակ ու հարաբերական ժամանակագրության մի շարք կարևոր հարցեր, մանավանդ որ այդ լեզուները, ունենալով հայերենին մոտ հնչույթային համակարգ, ի վիճակի են եղել արտացոլելու այնպիսի երևույթներ, որոնք չէին կարող նույն ճշգրտությամբ հանդես գալ հայերեն բառերի այլ վկայություններում։

Հայտնի է, որ հայերենի համար բնորոշ հնչյունական փոփոխություններ են *g' > ծ, *du̯ > երկ, *p > h (—), *u̯ > (*gv >) գ անցումները, բաղաձայնների տեղաշարժը և այլն։ Նշանակալից է, վրաց. arçivi «արծիվ», γvino «գինի», մեգր. rikali «երկար» բառերի աղբյուրը հայերենն է. հմմտ. հայ. արծուի < հ.-ե. *r̥g'ipii̯o-, հայ. գինի < (*gvinii̯o- < (*հ.-ե. u̯inii̯o-, հայ. երկար < հ.-ե. *du̯āro- և այլն։ Եթե նկատի առնենք, որ մ. թ. ա. VIII դ. ուրարտական արձանագրություններում հիշատակված U̯elikuni (U̯elikuhi) երկրի անունը հայերենում արտացոլված է Գեղա(ր)քունի ձևով, իսկ միջին իրանական vat, vēšap ձևերը՝ վատ, վիշապ ձևերով, ապա հավանական կլինի, որ u̯ (v, w) > գ անցումը հայերենում տեղի է ունեցել վաղ հնագույն շրջանի վերջերին՝ մինչև մ. թ. ա. IV—III դարերը։ Այս ժամանակ էլ փոխ է առնվել վրաց. γwino «գինի» բառը, մինչդեռ venaxi «խաղողի այգի» բառը փոխ է առնված հավանաբար հ.-ե. մի այլ աղբյուրից։ Այս շրջանին էլ վերաբերում են քարթվելական, հատկապես վրացական այն փոխառությունները, որոնց մեջ պահպանվել են հայերենի ձայնավորահանգ, հատկապես -a-ով և -o-ով վերջացող հիմքային ձևերը. բուրդ, -ոյ (հ.-ե. *bhōrdho-, հին իմաստը՝ «կտրվածք», հմմտ. բրդել) — վրաց. burdo «հարդ, կալի մնացորդ». հայ. դեղ, -ոյ (հ.-ե. *dhelo-, հին իմաստը՝ «բույս, խոտ») — վրաց. m-delo «հացաբույս. դեղ. կանաչ մարգագետին». հայ. երդ, -ոյ (հ.-ե. *edhro-?) — վրաց. erdo «հարթ տանիք». հայ. թեփ, -ոյ — վրաց. tebo «գլխի թեփ». հայ. թթու, -ոյ — վրաց. tutubo «չոր քացախ». հայ. ծաղիկ, -ագ, ծաղկոփ (հ.-ե. *g'ъl-?) — վրաց. çalika «վառվառակ (բույս)», çalkoti «բանջարանոց». հայ. կալ, -ոյ — վրաց. kalo «կալ» (> բացբ. klaл). հայ. համ, -ոյ (հ.-ե. *sab-mo-) — վրաց. amo «հաճելի, համով» (թե՞ ուշ փոխառություն համով ձևից). սալ (հ.-ե. *k'əlā) — վրաց. sala «լափուկ, տափակ քար խաղի համար». հայ. սոր, -ոյ «անցք, խոռոչ, որջ» (հ.-ե. *k'ou̯oro- < *k'ou̯əro-) — վրաց. soro «անցք, խոռոչ, որջ». հայ. փոս, -ոյ — վրաց. poso «փոս». հայ. փոր, -ոյ «փոս, խոռոչ. որովայն» — վրաց. poro «փոս, խոռոչ» և այլն։

Կան հնդեվրոպական աղբյուրից եկող քարթվելական այլ բառեր էլ, որոնց հավանական աղբյուրը հայերենն է. հայ. աղանձ (հ.-ե. *iendh-?) — վրաց. alanjwa «վառել, խանձել». հայ. արծաթ (հ.-ե. *arg'əto-? — վրաց. wercxli, մեգր. warčxili «արծաթ» (հմմտ. նաև ավար. гIарац, լակ. арцу, դարգ. арц, թաբ. арс, արչ. арси). հայ. որբ, -ոյ (հ.-ե. *orbho-) — վրաց. obol, մեգր. ombol- «որբ» (հմմտ. նաև աբխ. а-иба, կաբ. ибэ, չեչ. бо, ավար. гьоби). հայ. որձ (*org'h-. հմմտ. ամորձիք, յորձ «արու ոչխար») — վրաց. werji, մեգր. erji «արու ոչխար». հայ. ցախ (հ.-ե. *(s)k'akh-) — մեգր. cxwek̡, ճան. cxwik̡- «չոր ցախ», սվան. cxek̡- «անտառ» (?)։ Հ. Ֆոգտը վրաց. parto «լայն» և poni «անցահուն» բառերի աղբյուրը հակված է համարել հայերեն հարթ և հուն բառերի հնագույն ձևերը, որոնց ժամանակ հ.-ե. p դեռ չէր փոխվել հ-ի։ Հետևյալ բառերի դեպքում ենթադրելի է հնդեվրոպական այլ աղբյուր. հայ. լուծ (հ.-ե. *i̯ugom) — վրաց. uγel-, մեգր. uγu, սվան. ūγwe- «լուծ» (հմմտ. չեչ., ինգ. дукъ, ավար. рукъ, լակ. рукI, լեզգ. ник)։

Քարթվելական լեզուների՝ հայերենից կատարած փոխառությունների հիման վրա կարելի է կատարել նաև ժամանակագրական այլ եզրակացություններ[2]։ Ինչպես ցույց է տվել Հ. Հյուբշմանը, հայերենի նախաշեշտ վանկերում ի—(ը), ու>(ը), է>ի, ոյ>ու, եա>ե անցումները կատարվել են մինչև մ. թ. III դ. սկիզբը. այս դեպքում վրացական այն փոխառությունները, որոնց մեջ այդպիսի անցում է նկատվում, կատարվել են հենց այդ շրջանում[3]. հմմտ. հայ. թթու—վրաց. tutubo «չոր քացախ», հայ. ծնծղայ (< սար. şiṣṣəlā «ծնծղա»)—վրաց. çinçili (-a) «ծնծղա» (անմիջական փոխառություն ասորերենի՞ց), հայ. հրեայ (< սար. īhūḏaja)—վրաց. (h)uria «հրեա» և այլն։

Ինչպես ցույց է տվել Հ. Աճառյանը, հայ. ղ-ն ստացել է ներկա հնչումը IX դարի մոտերքը։ Նշանակալից է, հայերենից մինչ այդ կատարված փոխառությունները՝ 1) ղ-ի դիմաց ունեն l. հմմտ. վրաց. leli «եղեգ»>հայ. եղեգ (եղիգ) և, ինչպես կտեսնենք, 2) քարթվելական γ-ն մինչ այդ կատարված հայկական փոխառություններում արտացոլվում է ոչ թե իբրև ղ, այլ իբրև կ կամ խ. հմմտ. խոճ- և, թերևս կոճան «խոզ» < զան. *γoǰ-՝ γeǰ- «խոզ» ձևի կողքին։

Վրացական հետևյալ բառերն ունեն ակնհայտ հայկական բառակազմական ձևեր, ընդ որում վրացերենում հայկական բուն բաղադրիչները հաճախ չեն արտացոլված՝ վրաց. artawari «ծանրության չափ» < հայ. արտավար, վրաց. maškatela «չղջիկ» < հայ. մաշկաթեւ և այլն [Աճառյան, ՀԼՊ, 1, 206—207]։

Հայերենի՝ քարթվելական լեզուներից կատարած հնագույն փոխառությունների թիվը իր «Հայոց լեզվի պատմության» 1-ին մասում Հ. Աճառյանը համարում է 47՝ 1) աղբ, 2) անբեղ, 3) բակ, 4) բոզ, 5) գաւառ, 6) գոակ, 7) գուրայ, գութան, 8) զովող «ընկեր», 9) լակոտ, 10) խամուր, խամրիլ, 11) խծուծ (կանեփի), 12) խոխոմ «ձոր» (հմմտ. խմել), 13) խոճ(կոր), 14) խում, խմել, 15) խոփ, 16) խոռվել, 17) ծանր, 18) ծիծ, 19) ծուծ, 20) ծիր «գիծ», 21) ծիւ «աթար», 22) ծմել «սպանախ», 23) ծուխ, 24) կոճան «խոզ», 25) հոռի (ամսանուն), 26) ճանճ, 27) ճիպռ, 28) ճկոյթ, 29) ճղոպուր(տ), 30) մակ «վրա», 31) մշակ, 32) շլան «մոխիր», 33) շղու(աբարոյ), 34) շմորիլ «խեղվել», 35) ոչխար, 36) չանչ, 37) պղոն, 38) ջախել, ջախջախել, 39) սահմի (ամսանուն), 40) վաղ, 41) տաղախ «ցեխ», 42) ցմախ (բույս), 43) փարախ, 44) փշուր, փշրել, 45) փոշի, 46) փոշկ «թրիք», 47) փուխր, փխրել:

---

[2] Հ. Ֆոգտը, նկատի ունենալով հայերեն փոխառությունների բացակայությունը համաքարթվելական և վրացա-զանյան նախաձևերում, փորձում է հիմնավորել հայերի՝ այդ շրջանում Կովկասի սահմաններից դուրս գտնված լինելու դրույթը. նշենք, որ ըստ Գ. Ա. Կլիմովի լեզվաժամանակագրական հաշվումների՝ վրացա-զանյան ընդհանրության տրոհումն ընկնում է մ. թ. ա. VII դ. կամ VIII դ., համաքարթվելականինը՝ մ. թ. ա. XIX դ. [Климов, 1961, 145; 1964, 35]։ Սակայն Ֆոգտի փաստարկները կարոտ են ստուգման. հմմտ. վերևում բերված փաստերը արծաթ, որձ բառերի՝ վրացերենում և մեգրելերենում փոխառված լինելու մասին։

[3] Եթե, իհարկե, որոշ դեպքերում մենք գործ չունենք երկրորդական լիաձայնության և ձայնավորների ներդաշնակության հետ՝ հենց քարթվելական լեզուներում։

Գ. Ղափանցյանը հայ-ճանական փոխհարաբերության հարցին անդրադարձել է հատուկ աշխատությամբ [Капанцян, 1952], որը վերամշակմամբ հետագայում մտել է նրա «Հայոց լեզվի պատմության» մեջ [1961, 69—101]. այստեղ նա, բացի բնաձայնություններից, թվարկում է (ելնելով հայերենի «ասիանական» ծագման և խաչավորվածության իր վարկածից) 25 «ընդհանուր» բառ, 14 հայկական փոխառություն ճաներենից և 12 ճանական փոխառություն հայերենից: Իրականում, այսպես կոչված «ընդհանուր» բառերը նույնպիսի փոխառություններ են իրարից կամ երրորդ աղբյուրից, երբեմն էլ պատահական նմանություններ կամ բնաձայնական-նկարագրական կազմություններ են:

Հ. Աճառյանի ցուցակում տեղ գտած մի շարք բառերի համար կարելի է անել հետևյալ վերապահումները. 1) **ալբ** բառը ակնհայտ զուգահեռ ունի խեթ. šalpa- (šalpi-) «կղկղանք» բառի մեջ և գալիս է հնդեվրոպական աղբյուրից [Ջահուկյան, 1979, 23—24]. Հ. Աճառյանի նշած քարթվելական զուգահեռները, որոնք պատկանում են երկու տարբեր արմատների (*lap-/lp- «ցեխ, կավ» և *lb- «փափկացնել»), չեն բացատրում ա- նախաձայնը. 2) **անբեղ** բառի զուգահեռներ են տեսնում ոչ միայն վրաց. anteba «վառել, բորբոքել» բառի, այլև հունարեն ἄνθραξ «ածուխ» և, որոշ կասկածով, խեթ. ant- «տաք» (համեմ. նաև attala- «ածուխ») բառերի մեջ, որոնց հարաբերությունը պարզ չէ. եթե հայերեն, հունարեն և խեթերեն բառերի կապը նախնական է, ապա հնարավոր է վրացերեն բառի փոխառյալ լինելը հ.-ե. աղբյուրից, մանավանդ որ վրաց. բառը չունի քարթվելական որոշակի զուգահեռներ. եթե հայ. **անբեղ** բառը հայկական կազմություն է՝ **ան-** «վրա»+**բեղ** «դեղ, շեղջ, կույտ», ապա նմանությունը պատահական է. բոլոր դեպքերում էլ դժվար է խոսել հայերենի՝ վրացերենից փոխառյալ լինելու մասին. 3) **գաւառ** բառի նմանությունը վրաց. gwari «տեսակ. ցեղ. ընտանիք» բառի հետ ամենայն հավանականությամբ պատահական է, եթե նկատի առնենք իմաստային տարբերությունը (համեմ. ցեղակից սվան. gwäre- «կաշի (եզի կամ կովի)». հայ. բառը ավելի նման է գերմ. Gau «գավառ» բառին, բայց այն ոմանք բխեցնում են հ.-ե. *g'heu- ձևից, որ չպիտի տար հայ. **գաւ-**. 4) **գդակ** և վրաց. (մեգր.՝ ճան.) kuti «գլխարկ» (ըստ Աճառյանի նաև gadia?) բառերի նմանությունը ամենայն հավանականությամբ պատահական է. վրաց. բառի աղբյուրը թերևս իրանական է (համեմ. ավեստ. xaōδa, հ. պրսկ. xauda- և այլն, որոնց հետ նույնական xōδ մ. իրան. ձևից է հայ. **խոյր**-ը). հավանական է նաև հայ. բառի իրանական ծագումը (համեմ. **-ակ**). 5) **գութան** (**գութայ**) բառը զուգահեռներ ունի կովկասյան նաև այլ լեզուներում, այդ թվում նաև իրանական բնույթի օսերենում (guton, goton), ընդ որում դրանք կովկասյան արմատներով չեն մեկնվում. պետք է ենթադրել հայերենի և այդ լեզուների համար մի ընդհանուր աղբյուր (ուրարտերե՞նը). 6) **խմել** «ծծել, իրեն քաշել, խմել» բայի **խում** արմատը (համեմ. **գինեխում** «հարբած») իմաստով հեռու է Հ. Աճառյանի բերած վրաց. xma «վերցնել, վերցնել տանել», xmava «գործածել» ձևերից. էլ ավելի հեռու են նրա կողմից այս արմատի հետ կապվող բրբռ. **խխմել** «շատ թրջել. կակղացնել. ոռոգել. քամել», **խխմիլ** «շատ թրջվել, կակղել, ջուր քաշելով խարխլվել (պատի մասին)» բայաձևերը և **խոխում** «ձոր» բառը. ավելի հավանական է ենթադրել հայ. բառերի համար տարբեր աղբյուրներ, **խում**-ի համար՝ թերևս իրանական աղբյուր (համեմ. հ.-ե. *kᵘem- «ծծել, կլանել»). հավանաբար պատահական է նաև հայերեն և արևելակովկասյան (ավար. ххy-й-зе, բոթլ. ххy-д-и, լեզգ. хъ-ун «խմել» և այլն) բառերի նմանությունը. վերջիններիս մեջ բացակայում է հայ. -մ-ի համապատասխանը. բուն խմելու համար քարթվելական լեզուներն ունեն *tr-, *sw- արմատները. համեմ. նաև *xwlip- «ծծել, խմել, կուլ տալ». 7) հայ. **խռով** «խռովք, շփոթություն. կռիվ, պատերազմ. խռոված, շփոթված» արմատը իմաստով հեռու է վրաց. xro, xrowa, xrooba «խումբ, հոտ, երամ» բառերից, թեև Հ. Աճառյանը փորձում է իր վարկածը հիմնավորել՝ բերելով իմաստային համապատասխան անցման օրինակներ. իրականում վրացական բառերի իմաստը խիստ մասնագիտացված է. կարելի է ենթադրել ընդհանուր իրանական աղբյուր. 8) **ծանր** բառի անկանոն հոլովումը գերազանցապես հ.-ե. ծագում ունեցող բառերի տիպով (**բարձր, մանր, փոքր** և այլն) անբացատրելի է մնում նրան քարթվելական ծագում (վրաց. çona- «կշռել» և ճան. çin-) վերագրելու դեպքում, մանավանդ որ հայերենի **r/ն** հերթագայությունը ցույց է տալիս հին հնդեվրոպական օրինաչափություն. թերևս ենթադրելի է քարթվ. ձևի փոխառություն և նրա բաղարկություն հ.-ե. *gᵘer- «ծանր» արմատից ծագող *-u-r/n-ով հիմք ունեցող ձևի հետ. 9) **ծիծ** և **ծուծ** ձևերի համար Հ. Աճառյանի կողմից բերվող վրաց. juju «ծիծ, ստինքի պտուկ», jija «ստնտու» և çowa, çuçna «ծծել» ձևերը գալիս են տարբեր արմատներից. հայկական և քարթվելական ձևերի նմանությունը (համեմ. նաև արևմտակովկասյան և արևելակովկասյան համանման ձևերը) ընդհանուր բնաձայնական հիմք ունի. եթե **ծուծ** արմատը, թերևս, հնարավոր է կապել քարթվելականի հետ, ապա **ծիծ**-ը հեռու է մնում, մանավանդ որ նա ունի նաև **տիտ** տարբերակը և կարող է բխեցվել հ.-ե. *g'eid- «ծծել» ձևից. 10) **ծիր** «շրջագիծ» բառը վրաց. çer- «գրել» (մեգր. ճան. (n)čar-, սվան. (j)r-) արմատից իմաստով բավականաչափ հեռու է, և թերևս ճիշտ է Հ. Աճառյանը, որ հայերենը և քարթվելական ձևերը փոխառյալ է համարում «կուլտուրական խալդերից» (ուրարտացիներից). ուրարտերենի աղբյուրն էլ կարող էր լինել ակկադերենը. 11) **ծմել** (**ծիմել, զիմել**) «սպանախ» բառը հանդիպում է ուշ շրջանում (XII դ.), և այն չպետք է դրվեր հին շրջանի փոխառությունների թվում, ընդ որում Հ. Աճառյանի բերած վրաց. çamali «դեղ, թույն» զուգահեռը հայերեն բառից իմաստով բավականաչափ հեռու է (հին իմաստը՝ «խոտ». համեմ. սվան. čēm- «չոր խոտ», այլև վրաց. ler-çami «եղեգ»՝ քարթվ. *ç₁em- «խոտ» արմատից). 12) **ծուխ** բառը իմաստով հեռու է Հ. Աճառյանի կողմից բերված զուգահեռներից (վրաց. çuxwa «ցավ, տրտմություն», çuxri «աղջամուղջ, երեկո» և այլն), և վերջիններս չեն կարող հայերենի անմիջական աղբյուրը համարվել. միաժամանակ պետք է նշել, որ «ծուխ» իմաստի համար կա քարթվելական *ķwaml- (վրաց. ķwaml-, սվան. ķwam-, ķwäm)- հիմքը. հայերենից իմաստով և ձևով հեռու է նաև *ç₁w- «այր(վ)ել, վառ(վ)ել» արմատը, որ ունի դաղստանյան զուգահեռներ (լակ. цIун, դարգ. идзес, աղ. ацIцIа, թաբ. иццу «ցավել»). 13) **ճողոպուրտ** «ընկույզ» բառը հանդիպում է Երեմիայի բառարանում և բարբառներում, ուստի այն պետք է հանել հայերենի՝ քարթվելականից կատարած հին փոխառությունների թվից. 14) **մակ** «վրա» բառի ներմուծումը բուն քարթվելական փոխառությունների ցուցակի մեջ վրիպում է. mak-ը պատկանում է նախական բացբիերեն լեզվին. 15) **մշակ, մշակել** բառերի աղբյուրը ոչ թե կովկասյան լեզուներն են, այլ մի երրորդ աղբյուր, որի մեջ առկա է -ակ ածանցը և որն արտացոլված է վրացերենում -a -ով և -āķ-ով ձևերով (muša, mušaķi «աշխատավոր». ամենայն հավանականությամբ մենք գործ ունենք իրանական ընդհանուր աղբյուրի հետ՝ բնորոշ -āk ածանցով և սրա ուշ -a արտացոլմամբ՝ k-ի անկումով (հմմտ. պատակ և պատա). 16) հայ. շլամ «մախիր» բառի բխեցումը šlami «տիղմ» բառից կասկածելի է, թեև Աճառյանը հնարավոր է համարում հայ. բառի իմաստի «տիղմ» մեկնաբանությունը. վրաց. բառն էլ չունի քարթվելական որոշակի զուգահեռներ. 17) պոլոճ «միջատ» բառի համար, որ ունի բարբառային բազմաթիվ տարբերակներ (պոլոճ, բողոճ, բոլոճ, պլոճ, բղոճ և այլն), որպես աղբյուր ենթադրել վրաց. boboli «մեծ որդ» և ճան. boboli «միջատ» բառերը հնչյունապես անհավանական է, մանավանդ որ հայերենն ունի ոչ կրկնավոր ձև՝ վրաց. և ճան. կրկնավոր ձևերի դիմաց. եթե այս բառերն իրոք կապ ունեն, ապա պետք է ենթադրել թերևս մի ընդհանուր աղբյուր (ուրարտերե՞ն). 18) ջախել, ջախջախել բառերի համար որպես զուգահեռ բերված վրաց. jaxeba «խփել», jaxajuxi «աղմուկ, շփոթ», čexa «կոտրել, ջարդել», ճան. jax «մուրճով խփել» և ռուս. цах-песун «ջախջախել», цах-песун «ծեծել, փշրել, կոտրել» բառերի «հարաբերությունը ճշտված չէ», ինչպես նշում է Հ. Աճառյանը [ՀԱԲ, 4², 110]. գործ ունենք կամ բնաձայնական նմանության, կամ միևնույն աղբյուրից կատարված փոխառությունների. հմմտ. նաև խեթ. zaḫ(ḫ)- «խփել», zaḫḫurai- «ջարդել, փշրել». 19) հայ. վաղ, վաղիւ «վաղը», վաղվաղել «շտապել» բառերի անմիջական աղբյուր չէր կարող ծառայել վրաց. xwal «վաղը» բառը, որովհետև ինչպես նշում է Հ. Աճառյանը [ՀԱԲ, 4, 297], հիմնական իմաստը («վաղ, շուտ, առաջ») գտնվում է հայերենի մեջ. ենթադրելի է մի երրորդ աղբյուրը (ուրարտերե՞ն). 20) հայ. փշուր (փշրել), փոշի, փոշկ «թրիք», փուխր (փխրել) բառերի բխեցումը անմիջապես քարթվելական աղբյուրից (հմմտ. վրաց. pšeri «փոշի», pašari «փխրուն» pušwa «քանդել. խառնել» և այլն, pxura «ջնջել, խլել, քանդել», pxuna «փշրել, կոտրատել» և այլն) կասկածելի է. կան նաև արևմտակովկասյան (հմմտ. ադըղ. пшахъуэ «ավազ», որտեղից աբազ. пхъачакхъуа «ավազ»), ուրարտական (īpḫu- «ջարդել») և մանավանդ, փշուր-ի դեպքում, խեթա-լուվական (խեթ. paršur- «բրդուճ», paršulli-, paršiul-, լուվ. paršul- «բեկոր, փշուր») զուգահեռներ և այլն. հմմտ. նաև հ.-ե. *bhes-, *ps-, որտեղից հուն. ψάω «տրորել», ψώχω «տրորելով մանրել» ψάμμος «ավազ» և այլն. պետք է ենթադրել, թերևս, հնագույն շփումներ. Վ. Պիզանին փոշի-ն բխեցնում է հ.-ե. *phorsi̯o- ձևից՝ համեմատելով խեթ. parš- «փշրել» բայահիմքի հետ:

Գ. Ղափանցյանի նշած՝ հայերենի ղանական փոխառությունները կամ կան Հ. Աճառյանի ցուցակում (խամրել, ոչխար, ճաճճ/ջ, լակոտ), կամ ուշ շրջանի գրական ու բարբառային փոխառություններ են (բոզի «արեգակ», կակալ «ընկույզ» և այլն): Ինչ վերաբերում է, այսպես կոչված, «ընդհանուր» բառերին, ապա, ուշ շրջանի փոխառությունները բացառելու դեպքում, դրանց մեջ կարելի է առանձնացնել մի քանի շերտ՝ հայերենից կատարված ղանական փոխառություններ (բարդ—ճան. bardi «բարդ, դեզ», երկար—ճան. rikali «երկար, բարձր», քիթ—մեգր. ni-kiti «դունչ, մռութ, քիթ», փաղփաղել—ճան. paluri «բոց» և այլն), հեռավոր ցեղակցության և հին շփումների արդյունք հանդիսացող բառեր, բնաձայնություններ, պատահական նմանություններ, մի երրորդ աղբյուրից կատարված փոխառություններ և այլն: Կարելի է խոսել միայն հայ. երագագ «որսի ցանց» (արագագ. հմմտ. և ուրագայր) և կիճճ բառերի փոխառյալ լինելու մասին, սակայն դրանցից առաջինը զուգահեռներ ունի նաև արևմտակովկասյան և, թերևս, արևելակովկասյան լեզուներում, իսկ երկրորդի (γeji «խոզ») հնարավոր աղբյուրը զուրկ է ճ-ից (հետագա հավելում հայերենո՞ւմ):

Հայ-քարթվելական զանազան նմանություններ նշվել են նաև հայ, վրացի, ռուս և օտարազգի այլևայլ հեղինակների կողմից: Սակայն դրանց մեջ շատ քիչ են այնպիսիները, որոնք կարելի է առանց վարանման համարել հայերենի քարթվելական փոխառություններ: Դրանցից են, թերևս, հայ. զգուել (Աբուլաձե) և գր–ոյց (Մուրվալյան): Ինչ վերաբերում է հայ. կուռ, կռել և վրաց. ķuriwi «կուռ», ķwert «կռան», ķueṭwa (Մուրվալյան) զուգահեռներին, ապա դրանք հավանաբար գալիս են մի երրորդ աղբյուրից (ուրարտերենի՞ց): Բնաձայնական հիմք ունի կամ պատահական է մեգր. ṗij- «ծայր, շրթունք» և հայ. պինչ բառի նմանությունը, թեև հակում կա հայերեն բառը փոխառյալ համարելու (Կլիմով):

Հաշվի առնելով արված դիտողությունները և ավելացնելով մի երկու հնարավոր փոխառություն ևս՝ կստանանք հայերենի՝ քարթվելական լեզուներից կատարված փոխառությունների 29 միավոր ընդգրկող ցանկ: Սրանց հնագույն շերտը կազմում են ակնհայտորեն ղանական աղբյուրներից առնված հետևյալ 10 բառերը. 1) հայ. լակոտ—ճան. laķoṭi «լակոտ»՝ laķ- (laç-) արմատից (հմմտ. նաև մեգր. laķw- «շուն», վրաց. leķw- «լակոտ»). 2) հայ. խամուր (խամրել)—մեգր. xomula- «չոր» (հմմտ. նաև xumla-, xomila-, ճան. xom(b)u-la-, վրաց. xmel-՝ վրաց.-զան. *qmel- նախաձևից, որ ածանցված է *qam- «չորանալ» արմատից). 3) հայ. խծուծ «կանեփի մնացորդ» (խզուզ «կալի մնացորդ», խծծել «կտրատել պատառոտել») — մեգր., ճան. xoç- «կեղևը հանել», վրաց. xweç- «տաշել» (վրաց. բառի իմաստը երկրորդական է) (?) 4). հայ. խոճ- «խոզ» (խոճ-կոր) (<*γoj-) — մեգր., ճան. γej- «խոզ» (հմմտ. վրաց. γor-). 5) հայ. խրամ «պատի վրա բացվածք» — ճան. γorma- «բացվածք, ծակ», վրաց. γrma- «խոր» (վրաց.-զան. *γrma- կամ γarma-)[4] (?). 6) կոճաճ «խոզ» (<*γoj) — մեգր., ճան. γej- «խոզ» (հմմտ. վրաց. γor-). տե՛ս խոճ- «խոզ»՝ խոճ-կոր բառի մեջ[5], այլև, թերևս, կիճճ. 7) հայ. ճաճճ, ճաճջ, -ի — մեգր. çanji, çandi (հմմտ. ճան. mçaji, վրաց. mçeri, սվան. mēri «ճանճ»՝ քարթվ. *mçer-. հմմտ. նաև աբխ. а-мц «ճանճ»). 8) հայ. ճիպռ (ուշ՝ ճպուռ) «աչքի կեղտ» (բրբռ. ճպուր «ոչխարի աղբ») — զան. çirp- (հմմտ. վրաց. çirpli «ճպուռ»). 9) հայ. ճկոյր (և ծկոյր) — ճան. çulu kiti «փոքր մատ». 10) հայ. ոչխար — ճան. (m)čxu(r)- (mçxur-, mškur-) «ոչխար» (հմմտ. վրաց. cxwar- «ոչխար»): Զանական աղբյուրներից առնված բառերին պետք է ավելացնել նաև հավանաբար վրացերենից կատարված հետևյալ 19 փոխառությունները. 11) հայ. աբեթ — վրաց. abed- (հմմտ. մեգր., ճան. obed-, սվան. haböd- habed-, hobed-) «աբեթ». ըստ Աճառյանի՝ քարթվելական բառերը փոխառություն են հայերենից. թերևս առկա է երրորդ աղբյուր (ուրարտերե՞նը). 12) հայ. բակ — վրաց. baķi «ցանկապատ, փարախ» (ի՞նչ հարաբերության

---

[4] Հայերենի՞ց է արդյոք վրաց. xrami «ձոր» բառը:

[5] Պատահակա՞ն է արդյոք նմանությունը հ. մակեդ. γόταν «խոզ» բառին:

մեջ է մի կողմից՝ ավար. бакī *«տեղ», մյուս կողմից՝ վրաց.* baga- *«մատր, տխտռ», մեգր.* boga- *«տխուռ հատակ», ճան.* boga- *«փարախ» բառերի հետ)* (?). *13)*. *հայ.* բոզ, -ի, -աց — *վրաց.* bozi *«բոզ, պոռնիկ» (համմտ. ճան.* bozo *«աղջիկ»). 14) հայ.* զզուել *«արհամարհել, նախատել. զզվել» — վրաց.* zezwa *«զզվել»* (XI *դ.*), zizɣi *«զզվանք» (ըստ Արալյանի. Աճառյանը երկրորդը փոխառյալ է համարում հայերենից). 15) հայ.* զովող (զուող) *«ընկեր, գործակից» — վրաց.* zawi *«խաղաղություն, համաձայնություն»* (?). *16) հայ.* զր-ույց — *վրաց.* zrinwa *«կովի աղմուկ»,* ziali *«բազմաձայն աղմուկ»,* zraxwa *«խոսք, զրույց» (ըստ Մարվալյանի, եթե ճիշտ են սրանք հանգեցված մեկնության արմատին). 17) հայ.* խտիղ, խտղել — *վրաց.* ɣiṭin- *կամ ճան.* xiṭin- (*մեգր.* xiçin-) *«խտղել» (վրաց.-զան.* *ɣiṭin-) (?). *18) հայ.* խոփ, -ոյ — *վրաց.* xopi, xopi *«թի» կամ մեգր.* xopi, *ճան.* xope[6] (?). *19) հայ.* ծանր (*սեռ.* ծանու, *հգն.* ծանունք) — *վրաց., մեգր., ճան.* çon- *ճան.* cin-, *«կշռել» (վրաց.-զան.* *con-) (?) *20) հայ.* ծիւ *«աթար» — վրաց.* çiwa *«աթար». 21) հայ.* հոռի *«հայկական տոմարի երկրորդ ամիս» — վրաց.* ori, wori *«երկու» (համմտ. մեգր.* žər-, žir-, *ճան.* žu(r)-, ju(r)-, *սվան.* yori-, yerbi-, *քարթվ.* *yor-) (?). *22) հայ.* կրճ(ո)ել (*համմտ. հ.-ե.* *gʷreug'h- *բաղարկությո՞ւն) — վրաց.* ɣriçin/ɣrçen- *«կրճտել» (համմտ. մեգր.* ɣərçkin-, ɣirçkin-, *ճան.* ɣriçkin-, ɣriçkil-, *սվան.* ɣəlçkən- *«ճանճալ»՝ քարթվ.* *ɣrçin-). *23) հայ.* շղու(ա-բարոյ) *«հիմար, անխելք» (ըստ այլ մեկնաբանության՝ «շողոմարար, քծնող») — վրաց.* šlu *«խենթ» (հնարավոր է հակառակ փոխառության ենթադրել). 24) հայ.* շմորիլ *«նեխել» — վրաց.* šmor- *«թթվել, նեխել». (հնարավոր է հակառակ փոխառության ենթադրել). 25) հայ.* չանչ, -ոյ (*ուշ՝* չէչ) — *վրաց.* čenčo *«կեղև, կճեպ»,* čeča *«վուշը մաքրել»* (?). *26) հայ.* սահմի *«հայկական տոմարի երրորդ ամիս» — վրաց.* sami *«երեք» (համմտ. մեգր., ճան.* sum-, *սվան.* semi-՝ *քարթվ.* *sam-). *27) հայ.* տաղախ *«ցեխ, շաղախ» — վրաց.* ṭalaxi *«ցեխ»*[7]. *28) հայ.* ցմախ — *«մի տեսակ լեղի բույս» — վրաց.* çmaxi *«թթու դրած բանջարեղեն» (երկուսն էլ սեմական աղբյուրի՞ց)* (?). *29) հայ.* փանդանել *«ցրել, դես ու դեն քշել» — վրաց.* panṭ (*համմտ. սվան.* panṭ-, pinṭ- *«ցրել»*)։

Հայերենի քարթվելական փոխառությունները ըստ իմաստային (թեմատիկ) խմբերի բաշխվում են հետևյալ կերպ.

1. **Ֆիզիկական աշխարհ.** *1.214 տաղախ. 1.811 աթեթ. ծիւ.*

3. **Կենդանիներ.** *3.25 ոչխար. 3.31 խոճ-, կոճան. 3.32 կինճ (?). 3.612 լակոտ. 3.83 ճանճ (ճանչ).*

4. **Մարմնի մասեր. մարմնական գործառություններ և պայմաններ.** *4.271 կրճտել. 4.341 ճկոյթ. 4841 ճիպո (ճպուռ).*

7. **Բնակարան, տուն, կահկարասի.** *7.15 բակ. 7.271.*

8. **Երկրագործություն, բուսականություն.** *8.211 խոփ. 8.34 խծուծ (խզուզ). (?) 8.531 ցմախ (?). 8.671 չանչ.*

9 **Ֆիզիկական տարբեր գործողություններ.** *9.34 փանդանել.*

14. **Ժամանակ.** *14.72 հոռի. սահմի.*

15. **Զգայական ընկալումներ.** *15.261 շմորիլ. 15.81 ծանր. 15.84 խամուր.*

---

[6] *Բան խոփի համար կա վրաց.* saxnisi *բառը՝* xan-/xn- *«վարել» արմատից։*

[7] *Եթե հայ. բառը կապ չունի* տիլ, տիղմ *բառերի հետ։*

16. **Զգացմունք.** *16.411 զզուել. 16.62 խտիղ (?).*

17. **Մտածողություն, միտք.** *17.22 շղու(աբարոյ).*

18. **Ձայնական արտահայտություն, խոսք.** *18.21 զրույց.*

19. **Հասարակական հարաբերություններ.** *19.53 զովող (?). 19.72 բոզ։*

Քարթվելական փոխառությունները գերազանցապես սովորական՝ առօրյա կյանքի հետ կապված բառեր են։ Զանական փոխառությունների մեջ գերակշռում են կենդանիների անունները (լակոտ, խոճ *«խոզ»,* կոճաճ *«խոզ»,* կինճ, ճանճ/չ, ոչխար). *մյուս բառերն են* խամրիլ (խամուր), խծուծ (խզուզ) խրամ, ճիպո (ճպուռ), ճկոյթ (ծկոյթ): *Վրացերենից կատարված փոխառությունների մեջ մեծ տեղ են գրավում սովորական գործողությունների հետ կապված բառերը՝* զզուել, խտղել (խտիղ), կրճ(ո)ել, շմորիլ *«նեխել»,* փանդանել *«ցրել». մշակութային կյանքի նկատմամբ չեզոք է նաև* շղու(աբարոյ) *«խենթ» բառը։ Քիչ թե շատ մշակութային արժեք ունեն տնային և կառուցողական* (բակ· տաղախ *«ցեխ, շաղախ»), մարդու գոյապահպանմանը և տնտեսական-արտադրողական գործունեությանը վերաբերող* (արեր, խոփ, ծանր՝ *կշռելու գաղափարի հետ կապված,* ծիւ *«աթար»,* չանչ *և, ավելի ուշ՝* ցմախ *«մի տեսակ բույս»), հասարակական-ընտանեկան կյանքի հետ առնչվող* (բոզ, զովող (զուող) *«ընկեր, գործակից»,* զր-ույց) *և տոմարական* (հոռի *և* սահմի՝ *ամսանուններ) բառերը։*

Մենք կանգ չենք առնի ավելի ուշ շրջանում և բարբառների կողմից կատարված փոխառությունների վրա։ Նշենք միայն մի քանի բառ, որոնք ուշ են ավանդված, բայց կարող են լինել հայերենի զարգացման միջին շրջանից ավելի վաղ կատարված փոխառություններ՝ հայ. բոզի *«արեգակ» — վրաց.* mze-, *մեգր.* bža, *ճան.* mžo(r)a-, mžu(r)a-, mjo(r)a, *սվան.* məž-/muž- *«արև». հայ. կ... (մ. հայ.) — վրաց.* qle-, *մեգր.* 'ole-, *ճան.* qole, kole- «penis», *սվան.* qlaw- *«տղա»* (?) (*համմտ. հինալուղ.* кънлы «penis»]. *հայ.* մոծիր ((մոճիր, մճիր, մծիր) *«մոխիր» — ճան.* mṭwer- *«փոշի, մոխիր»* (*մեգր.* ṭwer-, *վրաց.* mṭwer- *«փոշի, փոշեհատիկ», սվան.* ṭwi- *«հող»՝ քարթվ.* *mṭwel-)։ *Նշենք նաև համեմատաբար հին կերպարանք ունեցող բարբառային մի քանի փոխառություններ՝* գլէյ — *վրաց.* gl-ej-, gl-ij- *«պոկել, պատռել».* ճխլել (*այլև ուշ շրջ.* ճխմել *«ճխլել) — վրաց.* çqlet-/çqlit-, *մեգր.* çqilat-/çqiliṭ-, çqirṭ-, *սվան.* çqət-ən- (?) *«ճխլել».* քարդիկար *«գարի և ցորեն (խառնված)» — վրաց.* kari *«գարի»* + diḳa- *«ցորեն» և այլն։*

Կան դեպքեր, երբ հայկական և քարթվելական բառերի նմանության բնույթի ճշգրտումը կապված է որոշակի դժվարությունների հետ։ Այսպես, հայերեն հետևյալ բառերին վերագրվում է հնդեվրոպական ծագում, բայց հարցը չի կարելի լուծված համարել, և, հետևաբար, դժվար է ենթադրել քարթվելական բառերի՝ փոխառյալ լինելը. հնարավոր է պատահական զուգադիպություն. հայ. լեսուլ — *վրաց.* les- *«սրել», մեգր.* las- *«տրորել. լեղլուն խանգարել»,* o-lasir-u *«սրել» (վրաց.-զան.* *les-). *հայ.* ծեծ, ծեծել — *վրաց.* cec- *«մանրել», մեգր.* čač- *«կալսել, ծեծել» (վրաց.-զան.* *c_1ec_1-). *հայ.* ծիլ (ծիւղ, ծիղ) — *վրաց.* çwel *«խլուզ, ծանծ», մեգր., ճան.* çu- *«ծղոտ». հայ.* ծիծաղ — *վրաց.* c- (si-c-i) *«ծիծաղ»), մեգր.* jəc-, jic-, *ճան.* jic-, dic-, *սվան.* cw- *«ծիծաղել». (քարթվ.* *cc-), *հայ.* ցիր, ցրել — *վրաց.* cer-/cr-, *մեգր.* cir-, *ճան.* ncor/(n)cir- *«մաղել» — (վրաց.-զան.* *car-/cr- *«ցրել, մաղել»)։*

Մի քանի դեպքում էլ հայերեն բառերի հնդեվրոպական բնույթն ակնհայտ է, բայց նրանց հարաբերությունը քարթվելական բառերի հետ լիովին պարզ չէ. հայ. ձող, ձեղուն (հ.-ե. g'hel-) — վրաց. jel-, մեգր. ja-, ճան. (n)ja-, mja- «չորսու. ծառ». հայ. ճնշել (հ.-ե. *gen- ?) — վրաց. çnex-/çnix- «ճզմել (խաղողը)» մեգր. çinax-, çax- «ճնշել», ճան. çinax- «ճնշել, ճզմել». հայ. որձ(կ)ալ (ուշ շրջանից ավանդված) (հ.-ե. *reug-) — վրաց. rçqw-/rçqaw- «փսխել. ոռոգել», մեգր. [*rçqw-], ճան. nçkw-al- սվան. [šqw-] «թքել» (քարթվ. *rç₁qw- «փսխել, հեղուկ թափել»). հայ. տիզ (հ.-ե. *dig'h-) — վրաց. ṭil-, մեգր. ṭi(j), ճան. mṭi-, սվան. ṭiš- (քարթվ. *ṭiz₁-. հմմտ. ṭiz-wn- «քթթել») և այլն։

Հետևյալ բառերի դեպքում նմանությունը պետք է պատահական համարել, եթե չենթադրենք բաղարկություն՝ առաջին դեպքում՝ մեգրելերենի, երկրորդ դեպքում՝ հայերենի համար. հայ. երթալ (հ.-ե. *er-th-) — մեգր. rt- «գնալ» (հմմտ. ճան. xt-, xt-, «գնալ», վրաց. xad- «հանել», xd- «հանել, տեղի ունենալ», սվան. qad-/qd-/qed-/qid- «հանել. գնալ. տանել» (քարթվ. *qad-/qd-). հայ. խուարծի «ծիլ» (ուշ խուարծիլ «խաշնդեղ». հայ. խու-ի՞ց) — վրաց. γwarjli «մոլախոտ, չարություն», մեգր. γurjul- «ժանտախտ. դժբախտություն», ճան. γurjul- «թույն. դժբախտություն» վրաց.-զան. *γwarjl- „Lolium temilentum, որոմ". հայ. խրտնուլ (հ.-ե. *(s)ker-ից, որտեղից նաև շրտնուլ ?) — վրաց. kut- «խրտնել, վախենալ, ցնցվել», մեգր. kut- «վախենալ, հեալ», ճան. kut- «վախենալ, խրտնել» (վրաց.-զան. *kṛt-)։

Կան բավականաչափ մեծ թվով հայ-քարթվելական զուգադիպումներ, որոնց հնչյունական ձևերը և իմաստային առնչությունները խոսում են նրանց համար մի ընդհանուր երրորդ աղբյուրի առկայության մասին։ Այդպիսի հավանական աղբյուր է ուրարտերենը, բայց կարող են լինել և այլ աղբյուրներ. հայ. գարի — վրաց. keri «գարի». հայ. երկաթ — վրաց., մեգր. (r)kina-, ճան. erkina- «երկաթ» (վրաց.-զան. *rkina-. հմմտ. նաև լեզգ. pakl, թաբ. pykl «երկաթ»). հայ. ծայր — վրաց. çwer- «ծայր. մորուք» (հմմտ. մեգր. cwanj-, cwand-, սվան. wēre-, wär(e)- «մորուք». ըստ Աճառյանի՝ վրացերենը փոխառված է հայերենից). հայ. ծեփ, -ոյ — վրաց. çebo- (հմմտ. մեգր., ճան. çabu- «խեժ, սոսինձ (բուսական)». հմմտ. նաև վրաց. çeb-, մեգր., ճան. çab- «սոսնձել»). հայ. ծիր «շրջագիծ» — վրաց. çer- (հմմտ. մեգր., ճան. (n)çar-, սվան. (j)r- «գրել». հմմտ. նաև ակկադ. ṣiru «եզր» և eṣeru(m) «նկարել, գծագրել»). հայ. ծով — վրաց., մեգր. zγwa-, ճան. zγua-, zuγa-, սվան. zuγwa, juγwa-, jγwa «ծով» (քարթվ. *zγwa-. հմմտ. ուրարտ. ṣue «ծով»). հայ. ծոր, ծորել — վրաց. çur-, մեգր. çur-/çir-, ճան. (n)çor-/(n)çir- «քամել», սվան. nçur-, nçər- «քամել, զտել» (քարթվ. *çur- «քամել»). հայ. կապ, կապել — վրաց. kar-/kr-, մեգր. kər-, kir-, ճան. kor-, kir- «կապել». հայ. կորդ «խոպան» — վրաց. kordi «խոպան», ճան. kord- «գունդ, հողակոշտ» (հմմտ. ուրարտ. quldi «խոպան, անմշակ» ?). հայ. կր(ի)այ (ըստ Աճառյանի՝ կուր «մակույկ, նավակ» բառից) — վրաց. (r)ku-, kuw-, մեգր. ku- «կրիա» (վրաց.-զան. *rku-) (?). հայ. կուռ, կռել — վրաց. kurtwi «սերտ, հոծ, կուռ», kweri «կ kuerwa «կռել» (ըստ Մորվալյանի). հայ. կուրա, կրտել — վրաց. qwer, մեգր. 'war-, ճան. qwa(r)-, սվան. qor- «կրտել» (քարթվ. *qwer-). հայ. պլոն «միջատ (բրբռ. պոլոն, պողոն, բողոն, բոլոն, պլոն, պղոն, բղոն, պլո, բլո, բղո և այլն — վրաց. boboli «մեծ որդ», ճան. boboli «միջատ». հայ. ջախել, ջախջախել — վրաց. jaxeba «բախել, խփել», ճան. jax «մտրակով խփել» (և ռուս. цахпесун «ջախջախել», цlахпесун «ծեծել, փշրել, կոտրել»). հայ. սենեակ «սենյակ. խուց. շտեմարան. գանձարան» (> վրաց. senaki «խուց») — վրաց. sxwen- «սրահ» մեգր. sxwen(d)-, cxwin(d)- «առաստաղ» (վրաց.-զան. *sxwen «առաստաղ. ձեղնահարկ»). հայ. սունկն (սունգն, սունկ, սունգ, -ոյ) (հմմտ. հուն. σπόγγος «սպունգ», լատ. fungus «սունկ» (ինչ-որ ընդհանուր աղբյուրից) — վրաց. մեգր., ճան. soko- (> հայ. բրբռ. սոկոն), սվան. sok(w)- «սունկ» (հմմտ. բացբ. зокl, բժ., գունզ. зокlо, ցեզ. зукly). հայ. վաղ, վաղիւ «վաղը», վաղվաղել «շտապել» — վրաց. xwal «վաղը». հայ. փշուր, փոշի, փոշկ «թրիք», փուխր — վրաց. pšari «փոշի», pašari «փխրուն», pušwa «քանդել, խռովել» և pxura «ջնջել, խլել. քանդել», pxuna «փշրել, կոտրատել» և այլն։ Հավանաբար մի ընդհանուր աղբյուր ունեն նաև հայ. բրբռ. կոտ «փայտե աման, մի չափ. գանգ» և վրաց. kod- «սորուն նյութերի աման», մեգր. kod- «փայտե աման», ճան. kod- «սորուն նյութերի աման» բառերը (վրաց.-զան. *kod-. հմմտ. *kod- «կտրել, հատել»)։

Այստեղ մենք կանգ չենք առնի հայերենի և քարթվելական լեզուների իրանական փոխառությունների վրա։ Նշենք, որ մի շարք դեպքերում քարթվելական բառերը փոխառվել են հայերենի միջոցով։ Այսպես, Բուդան վրաց. spilenji, մեգր. linji «պղինձ» բառերի աղբյուրը համարում է հայ. պղինձ-ը (հին ձևը *pilinj), որ փոխառված է համարվում մեդերենից (մարերենից)։ Կան դժվար բացատրելի դեպքեր. այսպես, իրանական աղբյուրից պետք է փոխառված լինի վրաց. parto «լայն» բառը (հմմտ. ավեստ. pərəθu- «լայն», <հ.-ե.*pḷt(h)- «լայն և հարթ»), բայց պարզ չէ հարթ բառի հարաբերությունը համապատասխան հ.-ե. արմատի և իրանական ձևերի հետ[8]. անմիջական հ.-ե. ծագում ունենալու դեպքում պետք է բացառվեր *l>r փոփոխությունը (pḷth- >*հալթ. *pləten- ձևից է ծագում հայ. լայն բառը), իսկ իրանական աղբյուրից ծագելու դեպքում չպետք է լիներ *p>h փոփոխությունը, եթե չենթադրենք արտակարգ հին փոխառություն։

գ) ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱԿՈՎԿԱՍՅԱՆ (ԱԲԽԱԶ-ԱԴԸՂԵԱԿԱՆ) ԼԵԶՈՒՆԵՐԸ

Աբխազ-ադըղեական լեզուների քանակը մեծ չէ. այս ընտանիքի մեջ մտնում են աբխազերենը, աբազիներենը, ուբիխերենը, ադըղեերենը և կաբարդիներենը։ Սրանցից առաջին երկուսն իրար հետ և վերջին երկուսն իրար հետ կազմում են մերձավոր խմբեր, որոնց նկատմամբ ուբիխերենը միջակա դիրք է գրավում։

Աբխազ-ադըղեական լեզուները տարածված են Սև ծովից հյուսիս-արևելք ընկած շրջանում՝ Աբխազական ու Կաբարդինո-բալկարական ինքնավար հանրապետություններում և Ադըղեական ու Կարաչայ-չերքեզական ինքնավար մարզերում։ Ուբիխերենի վերջին մնացորդները (երկու տասնյակ խոսողներ) գտնվել են Թուրքիայում։

---

[8] Ինչպես նշվեց այս հատվածի 2-րդ ծանոթության մեջ, Հ. Ֆողտը վրաց. բառը փոխառություն է համարում հայերենից։

Աբխազ-ադըղեական լեզուները հնչյունական առումով աչքի են ընկնում բաղաձայնների հարստությամբ և ձայնավորների աղքատությամբ։ Ուբիխերենի բաղաձայնական կազմը ամենահարուստն է աշխարհում՝ 82. այս ընտանիքում բաղաձայնների ամենափոքր քանակն ունի կաբարդիներենը՝ 47։ Ձայնավորների քանակը, բացառությամբ կաբարդիներենի, 2—3 է. կաբարդիներենն ունի 7 ձայնավոր։ Տարբերվում են քմայնացած և չքմայնացած, շրթնայնացած և չշրթնայնացած, ձայնածերպային (գլոտալ) և ոչ ձայնածերպային բաղաձայններ։ Բացի սուլական ու շշական բաղաձայններից, կան նաև միջին տիպի՝ սուլա-շշական բաղաձայններ։

Բաղաձայնների առատության հետ կապված՝ աբխազ-ադըղեական լեզուները աչքի են ընկնում ձևույթների կարճությամբ (սովորաբար մեկ բաղաձայն՝ միացած հաջորդ ձայնավորի հետ). արմատները հիմնականում միավանկ են։ Զարգացած է նախամասնիկավորումը։ Հարուստ է բայական և աղքատ՝ անվանական թեքումը։ Աբխազական խումբը չունի հոլովում, ադըղեականն ունի 3—4 հոլով (այդ թվում՝ էրգատիվ)։ Բային հատուկ են բազմադիմությունը և ուղղվածության (վերսիայի) կարգը, հնարավորական եղանակն ու պատճառական սեռը, որոնք արտահայտվում են նախամասնիկներով. մնացած կարգերն արտահայտվում են վերջամասնիկներով։ Աբխազական խմբի բայն ունի նաև դասային տարբերակում, ինչպես արևելակովկասյան լեզուներում։

Աբխազ-ադըղեական լեզուները, հատկապես աբխազերենը, հայերենի հետ շփման մեջ են եղել հին ժամանակներից սկսած։ Եթե հայասերենը իրոք հայերենի բաղադրամասերից մեկն է եղել, ապա նրա և արևմտակովկասյան լեզուների շփման մասին է խոսում Հայասայի Aripša քաղաքի անվան -pša-ն (եթե, իհարկե, այստեղ -ša-ն այլ դեպքերում հանդես եկող -ša ածանցը չէ), որ համահունչ է ադըղ., կաբ. псы «ջուր» բառին։ Հնարավոր է նաև Arḫita քաղաքանվան մեկնությունը աբխազ-աբազինական հիմքի վրա. հմմտ. աբխ. арха, աբազ. рхъа «հարթություն» և տեղանունների -тIa «տեղ» բաղադրիչը [**Джаукян**, 1976, 266—267]։

Հայ-աբխազ-ադըղեական զուգադիպումների առաջին շերտը կազմում են այն բառերը և բաղադրիչները, որոնք արդյունք են հեռավոր ցեղակցության (եթե աբխազ-ադըղեական լեզուները պատկանել են նոստրատիկ ընդհանրությանը), հնդեվրոպա-աբխազ-ադըղեական հնագույն շփումների և «տարրական ցեղակցության» (մանկական բառեր, բնաձայնություններ, ձայնարկություններ)։

Նոստրատիկ բնույթի աբխազ-ադըղեական բառեր կան հենց համակովկասյան այն միավորների մեջ, որոնց քարթվելական զուգահեռների նոստրատիկական ծագումը կարելի է որոշակի համարել. 1) աբխ.-ադ. гвы «սիրտ» — քարթվ. gul- «սիրտ» (նոստր. *golHa «սիրտ»). 2) աբխ.-ադ. мза «լուսին» — քարթվ. mz_1e- «արև» (նոստր. *mʌ(z)ʌ «լուսավոր. արև», հմմտ. հայ. ամիս). 3) աբխ.-ադ. ма «նա, այն» — քարթվ. ma «նա, այն» (նոստր. *mu «այն»). 4) աբխ.-ադ. ма «մի՛» — քարթվ. ma «մի՛» (նոստր. *mä «մի՛». հմմտ. հայ. մի՛)։ Նոստրատիկ բնույթի են նաև աբխազ-ադըղեական լեզուների՝ քարթվելականների հետ ունեցած հետևյալ զուգադիպումները՝ 1) աբխ.-ադ. д- «մեծ, շատ» (աբխ. а-ду, աբազ. ду «մեծ», ուբխ. нэ-да, ադըղ. дэдэ, կաբ. дыд «շատ») — քարթվ. did- «մեծ» (նոստր. *did «մեծ». հմմտ. հայ. տի- «մեծ»՝ տի-եզերք, տի-կին). 2) աբխ.-ադ. м(а)тI «օձ» — քարթվ. maṭl- «որդ» (նոստր. *mʌṭʌ «որդ». հմմտ. հայ. մարխլ). 3) աբխ.-ադ. лакIв «լիզել» — lok- «լիզել» (նոստր. *laka «լիզել». հմմտ. հայ. լակել)։

Բացի սրանցից, կարելի է նշել աբխազ-ադըղեական և հնդեվրոպական զգալի թվով զուգահեռներ՝ մասամբ ընդհանուր նոստրատիկ բնույթի, մասամբ հատկապես այդ լեզուներին հատուկ։ Բերենք այս կարգի բառային այն զուգադիպումները, որոնք ներկայացված են նաև հայերենում. 1) հայ. ած-ել (հ.-ե. *ag´-) — աբխ. (а)гара, աբազ. (а)гара «տանել». 2) հայ. աւազ (հ.-ե. *(bh)səbh-՝ *bhes-ից) — աբխ., աբազ. саба, ադըղ. сап, կաբ. сабэ «փոշի». 3) հայ. երկու (հ.-ե. *duōu) — աբխ. а-ϣу-ба, աբազ. гIу-ба, ուբխ. тIкъуа, ադըղ. тIуы, կաբ. тIуу «երկու». 4) հայ. ընդ «հետ, դիմաց» (հ.-ե. *anti) — ուբխ. анцуъ «առաջ». 5) հայ. թաց, թանալ (հ.-ե. *ta-) — աբխ. а-тIатIа, աբազ. тIатIа «մեղմ, թույլ», ուբխ. (а-)тIы «հեղուկ, հոսուն. նոսր», ադըղ., կաբ. тIатIа «փափուկ, թույլ». 6) հայ. լոք «մեծ քայլ» (հ.-ե. *lek-) — աբխ. а-щапIы, աբազ. щапIы, ուբխ. лъа, բբռ. лъакъва, ադըղ. лъэ, лъакъо, կաբ. лъэ, лъакъуэ «ոտք» (նոստր. *l(a)ka «ոտք»). 7) հայ. կով (հ.-ե. *gʷou-) — կաբ. гуу «ցուլ» և ուբխ. гума, ադըղ. чэмы, կաբ. жом «կով». 8) հայ. ձիւն (հ.-ե. *g´hei-) — աբխ. а-жын, աբազ. гъны, ադըղ. кIымф, կաբ. щIымахуэ «ձմեռ». 9) հայ. ձոր (հ.-ե. *g´heu-?) — աբազ. кIвары «ձոր». 10) մ. հայ. մանչ (հմմտ. մանուկ, մանր) (հ.-ե. *men-) — աբխ. а-мачI, ուբխ. мычIы, мэчI, ադըղ. мачIэ, կաբ. мащъэ «փոքր. աննշան». 11) հայ. նա, այն, ն, անդ (հ.-ե. *n-) — ուբխ. ана-н «այնտեղ». 12) հայ. նու «հարս» (հ.-ե. *snusós) — ադըղ., կաբ. нысэ «հարս» (հմմտ. նաև արևելակովկասյան և քարթվելական ձևերը). 13) հայ. սիսեռն (հ.-ե. *k´ık´er-, *k´eik´er-) — աբխ. а-кIыркъвыд, աբազ. кIыркIылаш, кIыркIырлаш (բբռ.) «սիսեռ». 14) հայ. տալ (հ.-ե. *dō-) — աբխ. а-тара, աբազ. а-т-ра, ուբխ. тэ, ադըղ., կաբ. тын «տալ». 15) հայ. ցախ (հ.-ե. *(s)k´ākha) — աբխ. а-цIаацIла, աբազ. цIах, цIагIта «կեչի» (?)։ Այստեղ պետք է հավելել նաև կիսամանկական կամ կիսաբնաձայնական բնույթի այնպիսի զուգադիպումներ, ինչպիսիք են՝ 15). հայ. նան «տատ» (հ.-ե. *(H)an-) — աբխ. ан, աբազ. аны, ուբխ. нэ, ադըղ. ны, կաբ. анэ «մայր». 16) հայ. կոկորդ (հ.-ե. *gʷer-) — աբխ. а-кIыркIы, աբազ. къыркъы «կոկորդ»։ Հայ. կակազ բառը, որ թերևս ծագում է իրան. աղբյուրից, իր կրկնությամբ թաքնված բնաձայնություն ունի և այս առումով նման է ադըղ. къыкъы, կաբ. къыкъ «կակազ» բառերին։

Զգալի թիվ են կազմում հայերենի և աբխազ-ադըղեական լեզուների բնաձայնական, մանկական և ձայնարկական տիպի բառերի զուգադիպումները, ընդ որում հայերենի այս կարգի մի շարք բառեր գալիս են հնդեվրոպական մակարդակից. հայ. բբռ. դադո «հայրիկ», դադա, դադո, դադե «քույր» (հ.-ե. *dhē-dh(ē)-) — աբխ. ди(а) «մայրիկ», աբազ. дада, կաբ. дадэ «պապ». հայ. կկու (հ.-ե. *kuku-) — աբխ. а-куку, աբազ. кIвыкIва ադըղ. кукку, կաբ. кIыгуу-гу «կկու». հայ. կռունկ (հ.-ե. *ger-, նոստր. *karʌ/kurʌ «կռունկ») — ադըղ. къэрэу, կաբ. къру, այլև աբազ. къырлю, къру (փոխառությո՞ւն). հայ. յապաղ (հ.-ե. *epop-, *opop-) — աբխ. абжьоубжьыкь, աբազ. уапIуап «հապաղ». հայ. բրբռ. նան(-ա, -ե, -ի) «մայր» (հ.-ե. *папа, *пепа և այլն) — աբխ. нан «մայրիկ», աբազ. нына, ադըղ. нэнэжъ «տատ», կաբ. нанэ «տատ, տատիկ, պառավ կին». հայ. փուք, փուչ- (փչել) (հ.-ե. *phu-) — ադըղ., կաբ. епщэн «փչել» (пща «փչի՛ր») և այլն: Համեմ. նաև հայ. խռալ, խռխռալ և աբխ. ахырхырбжъ «խռխռոց». հայ. բզեզ, բզզալ և աբազ. быж «բզեզ» և այլն:

Անցնելով երկուստեք կատարված փոխառությունների քննությանը, նշենք, որ դրանց թիվը մեծ չէ և զգալիորեն զիջում է հայ-քարթվելական և, ինչպես կտեսնենք, հայ-նախյան-դաղստանյան փոխադարձ փոխառությունների քանակին:

Հայերենից աբխազ-ադըղեական լեզուների կատարած փոխառությունների թվին են պատկանում թերևս հետևյալները. հայ. արծաթ — աբխ. арадзны, аразны, աբազ. рызна «արծաթ» (ուբխ. дэсвэны, ադըղ. тыжьын, կաբ. дыжьын ձևերի կողքին)[9]. հայ. ափսե (< հուն. ἀψίς) — ադըղ. апс «փայտե աման» [**Шагиров**, 1977, 62]. հայ. գերի — աբազ. гъар, կաբ. гъер «գերի», այլև աբխ. а-гъар «աղքատ», ուբխ. гъыр, ադըղ. гъер «բանտարկյալ» (համեմ. նաև աբխ. (а)гъэры «աղքատ, ճորտ»). հայ. գիշեր (հ.-ե. *u̯eikero-' *u̯ekero-ի կողքի՞ն) — ադըղ. чэщы, կաբ. жэщь «գիշեր» (հանդիպում են ավելի հին джэщ, жэширь ձևերը). հայ. կակաչ — աբխ. а-кIакIач «կակաչ», աբազ. բրբռ. кIакIачI «ծաղիկ» (վրացերենի qaqačo-ի միջնորդությամբ). հայ. կիր (< սեմ). — աբխ. а-кIыр «կիր» (վրաց. ḳiri-ի միջնորդությամբ). հայ. որբ (հ.-ե. *orbho-) — աբխ. а-иба, աբազ. йыба, կաբ. ибэ «որբ»: Հնարավոր է նաև, որ հայերենը լինի վրաց. gomi «գոմ», սվան. gwemi- «մառան», կաբ. гуэн, ադըղ. куэны «մառան, ամբար», օս. gon, gom «մառան, ամբար» բառերի աղբյուրը, եթե, մանավանդ հայ. բառը հ.-ե. ծագում ունի[10]:

Իր «Հայերեն արմատական բառարանում» և «Հայոց լեզվի պատմության» մեջ Հ. Աճառյանը նշում է հայերեն միայն մեկ բառ, որի աղբյուրը կարող են լինել արևմտակովկասյան լեզուները՝ հունաբան հայերենում գործածված եզ «մեկ» (այստեղից եզակի). Համեմ. աբխ. з-ны «մի անգամ», ուբխ. зэ, за, ադըղ., կաբ. зы «մեկ» (համեմ. նաև ադըղ. е-жъ, կաբ. е-зых «ինքը»): Սակայն այս բառն էլ Հ. Պեդերսենը փորձել է բխեցնել հ.-ե. *sem-g'h- ձևից, որ ընդունել է նաև Յ. Պոկոռնին: Ըստ Հ. Աճառյանի՝ այն փոխ է առնվել հյուսիսային հայկական տարածքի միջավայրում և օգտագործվել հունաբան հեղինակների կողմից: Եթե այս ենթադրությունը ճիշտ է, ապա հնարավոր է նաև այլ բառերի արևմտակովկասյան ծագումը. համեմ. հայ. պիշ, պշնուլ (բրբռ. պլշել, պլզել «ակնապիշ նայել», բլշանալ «վատ տեսնել») և աբխ. а-пшра, աբազ. (а)пшра, ուբխ. плъэ, ադըղ., կաբ. плъэн «նայել». հայ. շ/լշ-ով ձևերը լավ են բացատրվում արևմտակովկասյան ձևերի սկզբնական բնույթով: Հնարավոր է նաև հայ. սեամ. (սեմ-, շեամ, շեմ) բառի արևմտակովկասյան ծագումը. համեմ. աբխ. а-щвхымс, щвхъымса «շեմք», թեև նմանությունը կարո՞ղ է՝ և պատահական լինել:

Մի շարք դեպքերում արևմտակովկասյան ձևերը զուգահեռներ ունեն կովկասյան նաև այլ լեզուներում, և միշտ չէ, որ հեշտ է որոշել հայերենի ու այդ լեզուների ընդհանուր փոխհարաբերությունը՝ հայ. առագագ (երագագ) «որսացանց, թակարդ» — աբխ. арагуа «թակարդ, ծուղակ» (համեմ. լեզգ. рикьар, թաբ. рукьар). հայ. բակ — աբազ. бак (< կաբ.?), կաբ. бэкх «փարախ» (համեմ. նաև վրաց. beḳi «փարախ, կենդանիների բակ», ճան. baḳi «մառան», այլև դունզ. бакIи «փարախ», ավար. бокь, անդ. бекь «գոմ, փարախ»)[11]. հայ. զուբան, զուբայ — աբխ. акуатIана, աբազ. кIватан (բառը կա նաև քարթվ. և դաղստանյան լեզուներում. հնարավոր է փոխառություն մի երրորդ աղբյուրից). հայ. խոզ — աբխ. а-хъва, աբազ. хъва, ուբխ. хъва, ադըղ. къо, կաբ. кхъуэ «խոզ» (արմատը կա և արևելակովկասյան և քարթվելական լեզուներում. համեմ. նաև սեմական լեզուները. բնաձայնությո՞ւն). հայ. մոծակ — աբխ. амаца, աբազ. маца, ուբխ. мацIэ, ադըղ. мацI, կաբ. мацIэ «մորեխ». բառը կա նաև հնդեվրոպական և դաղստանյան լեզուներում, ըստ որում Հ. Աճառյանը հայերենը բխեցնում է դաղստանյան աղբյուրից). հայ. փշուր (փշրել), փուխր (փխրել) — ադըղ пшахъэ, կաբ. пшахъуэ «ավազ» (համեմ. նաև վրաց. pxvieri «փխրուն» pxvna- «փշրել»)[12]. հայ. տափ, տափակ (< իրան.?) — կաբ. тафэ «տափաստան» (արմատը կա նաև քարթվելական և դաղստանյան լեզուներում. Աճառյանը քարթվելականի համար ենթադրում է փոխառություն հայերենից, կովկասյան մյուս ձևերը չի հիշատակում). հայ. խուզ (խզել), խույզ (խուզել) — աբխ. а-хIызба, աբազ. хIвспа «դանակ» (համեմ. նաև ավար. хъвазе «հնձել», անդ. бихъузу, ցեզ. (б-)ехваза և այլն «կտրել»). հայ. զզուել — աբխ., աբազ. заз, ուբխ. зэзы, կաբ. зэз «մաղձ» (համեմ. վրաց. zezwa «սիրտը խառնել», որտեղից, ըստ Աբուլաձեի, ծագում է հայերեն բառը). հայ. ցուլ (հ.-ե. ?) — աբխ. а-цв, աբազ., ուբխ. чвы, ադըղ. цвы, կաբ. пы «ցուլ» (արմատը կա նաև դաղստանյան լեզուներում) և այլն:

Մի շարք համընկումներ կամ պատահական են, կամ հնդեվրոպական լեզուներից արևմտակովկասյան լեզուների հնագույն փոխառությունների հետևանք. հայ. արգել (հ.-ե. *arek-) — աբխ. аркра, աբազ. аркIра «փակել» հայ. ափն — աբխ. а-пххьа «ափ». հայ. բզկտել (բրբռ. բզիկ) — ադըղ. бзыгъ, կաբ. бзыгъэ «կտոր». հայ. գետին (հ.-ե. *u̯edeno-. համեմ. խեթ. utne) — աբխ. адгъыл «երկիր» (եթե կապ չունի քարթվ. *tiqa- «գետին, կավ» բառի հետ, որ հին փոխառություն է հ.-ե. աղբյուրից՝ *dheg'hom). հայ. կճճին — աբխ. акъыра, աբազ. айдьыра (բրբռ. кIачIчIа) «կնճիռ». հայ. մեծ (հ.-ե. *meg'-) — աբազ. բրբռ. мачъы «մեծ» (մյուս բարբառի ду = աբխ. (а)ду ձևերի կողքին):

---

[9] Այս բառը տարածված է նաև մյուս կովկասյան լեզուներում, և հետազոտողները ենթադրում են հայկական աղբյուր. Հնարավոր է ենթադրել նաև իրանական աղբյուր՝ մանավանդ з-ով ձևերի համար:

[10] Արմատը կա նաև կովկասյան այլ լեզուներում: Վ. Ի. Աբաևը [**Абаев, ИЭСОЯ,1,524**] և Ա. Կ. Շագիրովը [**Шагиров**, 1, 112] հիշատակում են այս բառերը՝ առանց նշելու հայերենը. Հ. Աճառյանը [ՀԱԲ, 1², 575] վրացերեն բառը փոխառություն է համարում հայերենից:

[11] Հ. Աճառյանը հայերենը բխեցնում է հարավկովկասյան աղբյուրից, որ հավանական է, թերևս այստեղից են և մյուս լեզուների բառերը:

[12] Հ. Աճառյանը բխեցնում է քարթվելական աղբյուրից, սակայն համեմ. նաև ուրարտ. iphu- «ջարդել, կործանել»:

դ) ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԱՐԵՎԵԼԱԿՈՎԿԱՍՅԱՆ (ՆԱԽՅԱՆ-ԴԱՂՍՏԱՆՅԱՆ) ԼԵԶՈՒՆԵՐԸ

Արևելակովկասյան լեզուների մեջ տարբերում են, բացի նախյան խմբից, նաև դաղստանյան լեզուների 4 խումբ՝ 1) ավարա-անդի-ցեզյան, 2) լակյան, 3) դարգիական և 4) լեզգիական։ Այս լեզուները տարածված են Չեչեն-Ինգուշական ԱՍՍՀ-ում, Դաղստանի ԱՍՍՀ-ում և հարակից որոշ շրջաններում։

Հնչյունական առումով արևելակովկասյան լեզուները միատիպ չեն. եթե նախյան և ավարա-անդի-ցեզյան լեզուները ձայնավորներով հարուստ են և բաղաձայններով աղքատ, ապա լեզգիական խմբում գոյություն ունի հակառակ հարաբերությունը, այսինքն՝ տարբերությունը փոխվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք։ Նույն ուղղությամբ փոխվում է թեքականության և կցականության հարաբերությունը՝ պակասում են թեքական տարրերը։ Արևելակովկասյան լեզուները հարուստ են հոլովներով. լակերենում դրանց թիվը հասնում է 40-ի, թաբասարաներենում՝ 48-ի։ Ուղղական կառույցի կողքին կան նաև էրգատիվ, տրական (զգացական բայերի հետ) և այլ կառույցներ։ Հաշվում են երկուսից մինչև ութ քերականական դաս. տարածված են հատկապես տղամարդկանց, կանանց, կենդանիների և իրերի դասերը։

Արևելակովկասյան լեզուները ըստ խմբերի դասավորվում են հետևյալ կերպ.

1) նախյան խումբ՝ չեչեներեն, ինգուշերեն, բացբիերեն.

2) ավարա-անդի-ցեզյան՝ ա) ավարերեն, բ) անդիերեն, բոթլիխերեն, գոդոբերիերեն, տինդերեն, կարատերեն, ախվախերեն, չամալերեն, բագուլալերեն, գ) ցեզերեն (դիդոերեն), խվարշերեն, բեժիտերեն, ղունզիբերեն, գինուխերեն.

3) լակերեն.

4) դարգերեն.

5) լեզգիերեն, թաբասարաներեն, ագուլերեն, ռուտուլերեն, ցախուրերեն, բուդուխերեն, կրիզերեն, ուտիերեն, հինալուղերեն, արչիերեն։

Սրանց շփումը հայերենի հետ նույն ինտենսիվությունը չի ունեցել։ Ամենից ավելի տևական և ուժեղ պետք է լիներ հայերենի շփումը հավանաբար լեզգիական խմբին պատկանող աղվաներենի հետ, որի մնացորդը, թերևս, ուտիերենն է։ Ցավոք սրտի, աղվաներենի լեզվական մնացորդները սակավաթիվ են, աղվանական այբուբենով գրված փոքրաքանակ արձանագրությունները էլ դեռևս լիովին հավաստի ընթերցում չունեն։

Հետագա քննության մեջ մենք կանգ կառնենք՝ նախ՝ արևելակովկասյան-հայկական (այդ թվում՝ նախյան-հայկական), ապա, մասնավորապես, ուտիա-հայկական ընդհանրությունների վրա։

Արևելկովկասա-հայկական ընդհանրությունների առաջին շերտը կազմում են այն բառերը, որոնք չի կարելի անմիջական կամ միջնորդված փոխառության արդյունք համարել։ Դրանք պետք է բացատրել հնդեվրոպական և արևելակովկասյան լեզուների «տարրական» ցեղակցությամբ և, թերևս, հնագույն շփումներով։ Եթե արևելակովկասյան լեզուները ևս պատկանել են նոստրատիկ ընդհանրությանը, ապա հայերենի հնդեվրոպական ծագման և արևելակովկասյան լեզուների փոխառությամբ չբացատրվող բառային ընդհանրությունները պետք է լինեն հեռավոր ցեղակցության արդյունք։ Կարելի է նշել, մասնավորապես, արևելակովկասյան լեզուների բառապաշարի այնպիսի տարրեր, որոնք ունեն նոստրատիկ ընդհանրությանը պատկանող հնդեվրոպական և քարթվելական լեզուների հետ օրինաչափ համապատասխանություններ։ Այսպես, վերևում բերված համակովկասյան բառային ընդհանրությունների մեջ կան այնպիսիները, որոնք ակնհայտ նոստրատիկ զուգահեռներ ունեն՝ որոշ դեպքերում ներկայացված համապատասխան հայերեն բառերով և արմատներով. 1) արլ.-կովկ. да-кIв — *հար.-կովկ.* guli *«սիրտ» (նոստր.* *golHa *«սիրտ»). 2) արլ.-կովկ.* мадз *«լուսին»* — *հար.-կովկ.* mze *«արև» (նոստր.* *mʌ(z') ʌ *«լուսավոր. արև». եթե նոստր. ձևը ճիշտ է վերականգնված, և արլ.-կովկ. ձևը իրոք կապ ունի հար.-կովկ. ձևի հետ, ապա կարելի է նշել հ.-ե.* *mē(n)s- *«լուսին. ամիս» ձևի հետ ունեցած նմանությունը. այստեղից հայ.* ամիս *բառը). 3) արլ.-կովկ.* ма *«նա, այն»* — *հար.-կովկ.* ма *«նա, այն» (նոստր.* ma *«այն». համեմ. նաև արաբ.* mani *«նա»). 4) արլ.-կովկ.* ma *«մի՛»* — *հար.-կովկ.* ma *«մի՛»* — *հ.-ե.* mē *«մի՛»* (> *հայ.* մի՛) *(նոստր.* *mä *«մի՛»)։ Նոստրատիկ զուգահեռներ ունեն նաև արևելակովկասյան և հարավկովկասյան այնպիսի ընդհանուր ձևեր, ինչպիսիք են՝ արլ.-կովկ.* гург *«կլոր»* — *հար.-կովկ.* гргв *«կլոր» (նոստր.* *gUl'ʌ *«կլոր. գունդ». կասկածով այստեղ է հատկացվում հ.-ե.* *ghōl-*ը, որտեղից հայ.* գլուխ). *2) արլ.-կովկ.* чIам- — *հար.-կով.* ч|ам- *«ուտել» (նոստր.* *čʌʕmʌ *«ուտել»)։*

Այժմ կանգ առնենք հայերենի և հատկապես արևելակովկասյան լեզուների այնպիսի ընդհանրությունների վրա, որոնք կարելի է հանգեցնել նոստրատիկ ձևերի։ Բացի վերևում բերվածներից (հայ. ամիս — *արլ.-կովկ.* мадз *«լուսին», հայ.* մի՛ — *արլ.-կովկ.* ма *«մի՛», հայ.* գլուխ — *արլ.-կովկ.* гург *«կլոր»), նշենք հետևյալ հնարավոր զուգադիպումները. 1) հայ.* բարձր *(հ.-ե.* *bherg'h-) — *նախ.* бардз *«բլուր, բարձունք» (փոխառությո՞ւն), չեչ., ինգ.* берд *«ափ, ծովափ», ավար.* борхалъи *«բարձունք» (նոստր.* *berg(i) *«բարձր»)* (?). *2) հայ.* եղն *(հ.-ե.* *el-en-) — *ցեզ.՝ ցեզ.* лъид, *ղունզ.* лад, *բեժ.* лед *«եղնիկ, եղջերու» (նոստր.* *ʔili *«եղնիկ, եղջերու»)· 3) հայ. բրբռ.* լոք *«մեծ քայլ» (հ.-ե.* *lek-) — *լեզգ.՝ թաբ.* лик, *ագուլ.* лек *«ոտք» (նոստր.* *l(a)ḳa *«ոտք»). 4) հայ.* կեր, կուր, կոկորդ *(հ.-ե.* *gʷer(ə)-) — *չեչ.* къамкъарг, *ինգ.* къамарг, *բացբ.* къанкърат *«կոկորդ», չեչ., ինգ.* къурд *«կում» և, թերևս, ավար.* мукъулунъ, *լակ.* къакъари, *դարգ.* кьаьа, *թաբ.* кьаркьар, *արչ.* кьакьара *«կոկորդ» (նոստր.* *gurʌ *«կլանել»). 5) հայ.* կին *(հ.-ե.* *gʷen-) — *ցեզ.՝ խվար.* гъине, *ցեզ.* гьанаби *«կին». (համեմ. նաև դարգ.* хъунул, *կրիզ.* хыныб *և այլն) (նոստր.* *küni *«կին»). 6) հայ.* կռունկ *(հ.-ե.* *ger-) — *ավար., անդ.* кьункьра, *լակ.* кьурукь, кьункь, *«կռունկ» (նոստր.* *karʌ/kurʌ *«կռունկ»). 7) հայ.* մալել, մլ-աղաց *(հ.-ե.* *mel-) — *ցեզ.՝ ցեզ.* мелъи, *խվար.* мелъа, *գին.* милъе *և այլն «կամ». համեմ. նաև հայ.* մեղմ, մեղկ *(նույն արմատից)* — *չեչ., ինգ.* мела *«տաք, թույլ» (նոստր.* *molʌ *«մանրել, ջարդել»). 8)* մառախուղ, մռայլ *(հ.-ե.* *mer-) — *նախ.՝ չեչ.* марха, *ինգ.* морх *«ամպ» (նոստր.* *mArʌ *«բիծ. կեղտոտ»)* (?). *9) հայ.* մեղր *(հ.-ե.* *mel-՝ *medhu-*ի կողքին) — նախ.՝ չեչ., ինգ.* моз, *բացբ.* моцI *«մեղր» (նոստր.* *maiλʌ *«մեղր»)* (?). *10) հայ.* մոր, մորենի *(հ.-ե.* *moro- *«մոշ») — նախ.՝ չեչ.* мер *«մորի, մոշ». 11) հայ.* մա(ր)շել *(հ.-ե.* *mer-, *mer-s-) — *լակ.* муърш бан *«մանրել» (փոխառությո՞ւն), այլև նույն արմատից հայ.* մորչ (մորճ, մորջ) *«ճյուղ. բազ-*

րոջ» — չեչ. маргІал «ճիպոտ, բողբոջ» (Նոստր. *mur «ջարդել, մանրել») (?). 12) հայ. սար (հ.-ե. *k'er(ə)- «եղջյուր, գլուխ, բարձունք») — նախ.՝ չեչ., ինգ., корта «գլուխ», չեչ. кур «եղջյուր» (Նոստր. *KErʌ «եղջյուր»). 13) հայ. տ- «ժխտական մասնիկ»՝ տ-գետ (հ.-ե. *de-, *dē-, *dō) — ավար. до-б (-в, -л, -й), ցեզ. да, լակ. та, լեզգ. атIа, тIе «այն, նա» (Նոստր. *da). 14) հայ. տտուն, տուտն «պոչ, վերջավորություն» (հ.-ե. *dud-?) — լեզգ. ттут «պոչ» (Նոստր. *duλʌ «վերջավորություն»). 15) հայ. քար (հ.-ե. *ker-?) — չեչ. кхēра, ինգ. кхера, кхер «քար» (հմմտ. և դարգ. къаркъ, լակ. чаур «քար» և այլն ?) (Նոստր. *karʌ «ժայռ, սեպաձև բարձունք»):

Բացի վերևում բերվածներից, կարելի է նշել հայ-արևելակովկասյան մի շարք ընդհանրություններ, որոնք պետք է բացատրել հնդեվրոպա-արևելակովկասյան տարածքային կապերով (եթե արևելակովկասյան լեզուները պատկանել են նոստրատիկ ընդհանրությանը և գտնվել հնդեվրոպականների հետ հեռավոր ցեղակցական կապերի մեջ) և հնագույն լեզվական շփումներով: Ստորև բերվող բառերի մեջ հնարավոր են նաև որոշ թվով պատահական զուգադիպումներ, եթե մանավանդ նկատի առնենք որոշ համեմատվող արմատական ձևերի մենաբաղաձայնությունը. 1) հայ. ակն (հ.-ե. *okᵘ- «տեսնել, աչք») — դաղ.՝ ցեզ. иквала, լակ. ккаккам (ккавккун), լեզգ. аккун, թաբ. агуз, արչ. akkус «տեսնել» և այլն և տինդ. гвакIкIа, չամ. гьачIа և այլն «աչք». 2) հայ. աղաւնի (հ.-ե. *al-, *alōu-, *albho- «սպիտակ») — ցեզ.՝ ցեզ. гIалукIа, խվար. алукIа և ցեզ. элбо, դին. олбо, ղունզ., բեժ. илба «աղավնի» (փոխառություն հ.-ե. որևէ լեզվից). 3) հայ. անիծ (հ.-ե. *knid-s «անիծ, ոջիլ») — դաղ., ավար. нацIцI, անդ. ноцIцIи, ցեզ. ноци, լակ. нацI, դարգ. нер, թաբ. ницц, արչ. нацъ «ոջիլ» և լեզգ., ագուլ. нетI, թաբ. нитI, ուտ. натьI «անիծ» և այլն. հմմտ. նաև չեչ. меза «ոջիլ» (և неца «ցեց» ?). 4) հայ. արմ(ն), արմատ (հ.-ե. *er- «շարժվել, բարձրացնել», թե՞ *ṷ(e)rād- «ճյուղ, արմատ») — նախ.՝ չեչ. орам «արմատ». 5) հայ. դու (հ.-ե. *tu- «դու») — ավար.-անդ.՝ ավար. ду-ца «դու» (էրգ. հ. мун-ի), անդ. ду- (2-րդ դեմքի անձն. դեր. թեք. հոլովների հիմք). 6) հայ. երկան (հ.-ե. *gᵘer- «ծանր», *gᵘrāu- «ջրաղաց») — դաղ.՝ խվար.՝ гъемер «անիվ», ղունզ. гъабур, լակ. гъара, դարգ. урхав, լեզգ. регъв, թաբ. раьгъин և այլն «ջրաղաց» (?). 7) հայ. էջ (հ.-ե. *ek'ṷo-, *eik'ṷo- «ձի») — դաղ.՝ լակ. кквацца, դարգ. газа (гадза, гвадза, кквацца), արչ. гвацци «զամբիկ» (?). 8) հայ. ընդ «դիմաց, փոխարեն. հետ» (հ.-ե. *ant- «առաջակողմ, ճակատ», anti «դիմաց»)՝ — դաղ.՝ ավար., արչ. нодо, լակ. нента, դարգ. антта (բրբռ. анда), թաբ. унтI և այլն «ճակատ». 9) հայ. թաղ (հ.-ե. *(s)teg- «ծածկ, փայտ, գերան») — ցեզ.՝ բեժ. тIо(ъ)а, тIогIа «մարճ» (?). 10) հայ. թանալ, թաց, այլև թրջել, թրմել, թրիք, թանաք (հ.-ե. *tā-, *tu- «հալչել, լուծվել») — նախ.՝ չեչ. туьна, ինգ. таьда «թաց, խոնավ» չեչ. тIуналла, ինգ. тIодал «թացություն, խոնավություն». 11) հայ. բրբռ. լեպռ, լապռ (հ.-ե. *leb-, *lab- «թույլ, կախվել») — ցեզ.՝ ցեզ. лIеб, խվար. лIиб, դին. лIебу, ղունզ. лIибу, բեժ. лIибо «տերև» (?). 12) հայ. բրբռ. լիժ «ողորկ» (հ.-ե. *lei- «լորձնոտ, կպչուն. սայթաքել, սահել») — ցեզ.՝ ղունզ. лъиша «կպչել». 13) հայ. լիկ, լին (հ.-ե. *lēg- «կաթել, ծորել, լուծվել, հալչել») — նախ.՝ չեչ., ինգ. лакъа «ծանծաղանալ, սպառվել», лёкъа «չորանալ (գետի մասին)» (?). 14) հայ. լուծ (հ.-ե. *ḭu-gom «լուծ») — նախ.-դաղ.՝ չեչ., ինգ. д-укъ, ավար. рукь, բեժ. йукьо, լակ. рукI, դարգ. дук, լեզգ. вик, թաբ. йурккагъ, արչ. ок և այլն «լուծ». 15) հայ. լքանել (հ.-ե. *ieik- «լքել, թողնել») — ցեզ.՝ դին. лIехва «մնալ». 16) հայ. խածանել (հ.-ե. *khād-) — լակ. къацучин, դարգ. къацIнкис «կծել». 17) հայ. ծունգ, ծունր (հ.-ե. *g'enu-/gonu- «ծունկ») — նախ.՝ չեչ. гола, ինգ. го, բացբ. гауг «ծունկ». հմմտ. նաև խվար., դին., ցեզ кьонту, լեզգ. кьуьнт և այլն «ծունկ» (?). 18) հայ. կարկուտ (հ.-ե. *grod-) — նախ.՝ չեչ. къора «կարկուտ». 19) հայ. կոյ, կու (հ.-ե. *gᵘōu-, *gᵘū- «աղբ, կղկղանք, գոմաղբ») — դաղ.՝ ավար. рак «աթար, գոմաղբ», ուտ. кыб, թաբ. кув, հին. кука և այլն «աթար». 20) հայ. կով (հ.-ե. *gᵘou- «խոշոր եղջերավոր անասուն») — ցեզ.՝ ցեզ. гъуро, խվար. гъвало, դին. гъверо և այլն «անասուն». 21) հայ. կոր, կամակոր (հ.-ե. *geu- «ծռել») — նախ.՝ չեչ. гома, ինգ. гоама, բացբ. гаму «ծուռ» (հմմտ. նաև անդ. кIору, կրիզ., լեզգ. кIир, թաբ. цIур «կեռիկ, ճարմանդ» ?). 22) հայ. կորի «առու» (հ.-ե. *geu- «ծռել, թեքել») — դաղ.՝ ղունզ. куро «առու» (կրիզ., բուդ. кур «գետ», ուտ. кур «ձոր» և այլն. 23) հայ. կորկ «կեղտ» (հ.-ե. *gᵘor-gᵘ(or)o- «կեղտ») — դաղ.՝ լակ. къаIркъи, արչ. мукъур, լեզգ. къар, къур-уш և այլն «կեղտ». 24) հայ. կուռն «մեջք, կռնակ. թև, կողք» (հ.-ե. *geu-ro- *geu- «թեքել, ծռել» արմատից) — նախ.-դաղ.՝ չեչ. куьг, բացբ. ког, кокI, ավար. квер, բեժ., ղունզ. (բրբռ.) коро, լակ. ква, արչ. ուտ. кил «ձեռք». 25) հայ. ձիւն, ձմեռն (հ.-ե. *g'hei- «ձմեռ, ձյուն») — դաղ.՝ անդ. кьину, դարգ. гIине և այլն «ձմեռ» (հմմտ. նաև բոթլ. цIибару, գոդ. цIибуру, կարատ. цIибера, տինդ. цIибор «ձմեռ», ախվ. цIиборо «ձմեռ, աշուն» ?). 26) ձող (հ.-ե. g'hel- «կտրել») — անդ.՝ անդ. жала, բոթլ. жола «ճիպոտ, կող» (?). 27) հայ. մօրուք (հ.-ե. *smek- «մորուք») — նախ.-դաղ.՝ չեչ. маж, ինգ. мадж, բացբ. мачI, ավար. мегеж, ագուլ. мигажу, ագուլ. му(д)жур, թաբ. мижжири, мужжири և այլն «մորուք». 28) հայ. *մոյգ > բրբռ. մուգ (հ.-ե. *smeugh- «ծխել, ծուխ», որտեղից ռուս. смуглый «թուխ». հմմտ. նաև մուրկ < smugro-) — նախ.՝ չեչ. mokxa «մուգ». 29) հայ. նու «հարս» (հ.-ե. *snusós «հարս») — նախ.-դաղ.՝ չեչ., ինգ., ավար., անդ. нус, լեզգ. свас, թաբ. швушв «հարս». 30) հայ. տալ (հ.-ե. *dō- «տալ») — լեզգ.՝ թաբ. туэ, ուտ. та десун «տալ». 31) հայ. տարգալ «դդալ» (հ.-ե. *deru- «ծառ, փայտ») — դաղ.՝ լակ. ттар «ոճի», լեզգ. ттар «ծառ», ագուլ. дар «անտառ» և ուտ. дур, կրիզ. тыр, ագուլ. ттур, լեզգ. тIур «դդալ» (?). 32). հայ. տիւ, տի «օր» (հ.-ե. *dei-, «շողալ» *di-ṷ- «օր») — նախ.՝ չեչ., բացբ. де, ինգ ди «օր». 33) հայ. տիկ (*dig-՝ հ.-ե. *digh-ից «այծ») — ցեզ.՝ ղունզ. тIиra «այծ» (հմմտ. նաև ավար. дегIен, այլև քարթվ. *dqa «այծ»). 34) հայ. ուտել (հ.-ե. *ed- «ուտել») — լեզգ. тIуьн, ագուլ. утI-аьс «ուտել». 35) հայ. փայծաղն (հ.-ե. *(s)p(h)elg'(h)- «փայծաղ») -- արչ. паьрти «փայծաղ». 36) հայ. քացախ (հ.-ե. *kṷāt-so- «խմորիչ» ?) — դաղ.՝ ավար., խվար., արչ. къанцIа, ցեզ. къонцIа, դարգ. къанц «քացախ». 37) հայ. քերել, քերթել քերծել (հ.-ե. *(s)ker- «կտրել») — նախ.՝ չեչ. хера, ինգ. хийра «ճեղք», չեչ., ինգ. херх «սղոց», չեչ. хир «հատված, փորակ» և դաղ.՝ լակ. харци, ավար. хъарси «քերծվածք», լակ. xхартI бан «քերել», xхартIи «քերոց».(?)

38) հայ. քիմ-ք (հ.-ե. *kʷem- «կլանել») (թե՞ ծամել < *g'm̥bh- ?) — նախ.՝ չեչ., ինգ. чам «ճաշակ». 39) հայ. քիւ «տանիքի եզր», ցիւ «տափ կտուր» (հ.-ե. *(s)keu- «ծածկել») — դաղ.՝ դին., ցեզ., խվար. кьIу, բեժ. кьамо (кьавари «տանիքի ծածկ»), թաբ. (բրբռ.) къуй, լեզգ., ռուտ. къав, չամ. акьва «տանիք» և այլն:

Զգալի թիվ են կազմում հայերենի և արևելակովկասյան լեզուների այն զուգադիպումները, որոնք բնաձայնություններ և մանկական բառեր են, ընդ որում հայերեն ձևերը հաճախ հանգում են հնդեվրոպական մակարդակի վերականգնումների.

Հայ. բրբռ. ապի, աֆի, ափո, ափու «հայր» — բեժ. або, գունզ., դին., խվար. абу, ցեզ. абайу, լակ. бутта և այլն «հայր». հայ. բու (հ.-ե. *b(h)eu- — բնաձայնություն) — չեչ. бухIа, գոդ. бухIу, խվար., ագուլ. бугьу, չամ. бухI «բու». հայ. բրբռ. դադա «հայրիկ», այլև դադա, դադո «քույր» (հ.-ե. *dhē-dh(ē) — մանկական թոթովանքի բառ — չեչ. да, дада, ինգ. да, բացբ. дада «հայր», ավար., անդ. дада, արչ. дия, այլև թաբ. дада, լեզգ. диде, հին. даьдаь, թաբ. дадай և այլն «մայր». հայ. բրբռ. դոդոն «լոր» — լեզգ. туртур «լոր». հայ. թուք (հ.-ե. *t(h)ū- «թքել») ?) — չեչ. туй, ինգ. туг «թուք». հայ. խախանք (հ.-ե. *kha kha — ծիծաղի ձայնարկություն) — լակ. хъахъав(у) «ծիծաղ», ցեզ. хъохъолIа «ծիծաղել». հայ. խնչել «խորդալ», միջ. հայ. խնչել «քիթը մաքրել» — ավար. хончIер, ախվ. ххентIе և այլն «խլինք». հայ. խուխ, խորխ — արչ. херх «թուք», ագուլ. хьирхь, լակ. хьурхь «լորձունք». հայ. ծիծ տիտ — ավար. моцIцIо, ռուտ. цIицIик (< հայ. ծիծի՞կ), չամ. чIчIечIе և ռուտ. тIит «ծիծ, ծծի պտուկ». հայ. ծիծառն (*g'oigāron՝ *gar-ից — բնաձ.) — անդ. гьицIирча, гьирцIцIча և այլն «ծիծեռնակ». հայ. ծղրիդ — ցախ. цIирт «ծղրիդ» (հմմտ. և չեչ. цIоз, դարգ. цIерцI, լեզգ. цицIер, այլև կար. мацIə). հայ. ծուծ, ծծել — ավար. цIцIункIизе, անդ. цIцIунну, արչ. цIур бос, ռուտ. ццум песун և այլն «ծծել». հայ. կաքաւ (հմմտ. հ.-ե. *kak(k)-, *ko ko և այլն — բնաձ.) — անդ. гьабгъа, խվար. къакъаба և այլն «կաքավ». հայ. կկու (հ.-ե. *kuku — բնաձ.) — ավար. гагу, արչ. гикку, խվար. куку, լեզգ. ккукку, ккуккум «կկու». հայ. բրբռ. կուրան «թխսկան» — լեզգ. кьуьртIуь «թխսկան». հայ. բրբռ. հա՛ «այո՛» — չեչ. хIаъ, ինգ. хIаа, բացբ. хIа «այո՛». հայ. նան (հ.-ե. *(H)an- «նախնի» — մանկ. բառ) — թաբ. ана «մայր». հայ. ճայ — հին. чIаь «ագռավ», կրիզ. чIагь «ագռավ. եղջերուակ», թաբ. гIагь «եղջերուակ» և այլն. հայ. ճիկ, ճիչ — չեչ. чIик «ճվոց, ծվոց». հայ. բրբռ. (մանկ.) մամալ «ուտել» (հ.-ե. *mā, *mam(m)a «մայր». հմմտ. լատ. mamma «մայր. մոր կուրծք») — չեչ. маъи «մոր կուրծք» (մանկ.). հայ. բրբռ. նան, նանի «մայր, մայրիկ» (հ.-ե. *nana, *nena «մայր, մայրիկ. տատ» — մանկական բառ) — չեչ., ինգ. нана, լակ. нину «մայր». հայ. պապ, պապանձիմ, բրբռ. պաչել — լեզգ. пIагь, пIах, հին. пIа «համբույր» (հմմտ. նաև ավար. уба, տինդ. оба, убачи, գոդ. обади, դին. убай, դարգ. бай, լակ. ппай). հայ. սարսուռ — դարգ. серсер бикIес «դողալ». հայ. փուք, փուչ- (փչել) (հ.-ե. *p(h)u- «փչել») — ավար. пу «փչել», լակ. пурш, դարգ. пуш «փուքս» (հմմտ. նաև բացբ. пхъатуй, թոք») և այլն:

Արևելակովկասյան լեզուներից հայերենի կատարած փոխառությունների հարցին հատուկ ուսումնասիրություն չի նվիրվել, թեև այն ընդվել է այդ լեզուների բառապաշարին նվիրված աշխատություններում[13]: Ամենից ավելի հանգամանորեն այդ հարցին անդրադարձել է Հ. Աճառյանը իր «Հայերեն արմատական բառարանում» և «Հայոց լեզվի պատմության» մեջ՝ ամփոփելով մինչև 1930-ական թվականները կատարված աշխատանքների արդյունքները: Արևելակովկասյան լեզուներից Աճառյանը փոխառյալ է համարում 11 բառ՝ 1) արուր «ոտք», 2) արջն «սև», 3) արջասպ, 4) աւ «ոտք» (?), 5) խոտ, 6) ճաղատ, 7) ճայղ «ցեխ», 8) մագիլ (?), 9) մոծակ, 10) ուղխ, 11) քած:

Ինչպես ցույց է տրված մեր կողմից [Ջահուկյան, 1981ա, 21—22], դրանցից արջն-ը և արջ-ասպ-ի առաջին մասը նախյան լեզուներում (չեչ., ինգ. Iаьржа, բացբ. IаьрчIи «սև») չի կարելի բնիկ համարել. այն փոխ է առնված իրանական աղբյուրից՝ arǰ-/arž- < հ.-ե. *ergʷ-/orgʷ- (հմմտ. հ. հնդկ. rájanī- «գիշեր»): Վերևում նշվել է արդեն, որ կասկածելի է նաև մոծակ բառի կովկասյան ծագումը: Մնացածներին ավելացնելով մի քանի հավանական բառ ևս՝ կունենանք հին շրջանի սկզբին ավանդված փոխառությունների հետևյալ ցանկը[14]. 1) արուր «ոտք» — ուտ. тур «ոտք» (անբացատրելի է մնում ա-ն՝ սկզբնական атур ?). 2) աք «ոտք» — հիր. ак, թաբ. акъ, агъ «ոտք». 3) գանգ (գանկ) — ավար. гвангвара «գանգ». 4) գիւղ — թաբ. гъул, къул, ագուլ. гъул, хIур և այլն «գյուղ». 5) թոք — լեզգ., բուդուխ. тухул, ուտ. тихлих «թոք» (հմմտ. ագուլ. гъудул, ռուտ. худул և այլն). 6) խոտ — արչ. гьоти «խոտ», լակ. хьхьути «մոլախոտ». 7) ծաւի «կապտաչյա» (*«երկնագույն») — լեզգ. ццав, հին. ц(ц)ва «երկինք». 8) կախ — դարգ. кахъес «կախել». 9) կակուղ — լակ. кIукIлусса «փափուկ» (ած.), кIукIлуну «փափուկ կերպով» (մկբ.) (հմմտ. ցեզ. кокору «փափուկ»). 10) կից — տինդ. кицIв «հանգույց» (հմմտ. բագ. гецIер, ավար. кIичI և այլն. հմմտ. նաև հայ. կոճ-ակ — լակ., ռուտ. кIичI, ագուլ. кIуч և այլն «կոճակ» ?). 11) կտուց — դարգ. къудкъуди «կտուց» (?). 12) հարճ — անդ. хьорчIаьи «կին. էգ» (բոտլ. хьаркIаь-и, տինդ. хьакаьу-и), որտեղից նաև վրաց. xarč̣a «հարճ» [հմմտ. **Гудава**, 1954, 10]. 13) մագիլ — ավար. (հար. բրբռ.) малгъ, բագուլ. мигъе «մագիլ». 14) չղջիկ — ցախ. чилхий «չղջիկ». 15) ուղխ (ուխ) «հեղեղ» — ավար. их(х) «գարնան հեղեղ», դին. иху «գետ» և այլն. հմմտ. նաև դարգ. урхъу «ծով», ագուլ. хIул «ծով. լիճ» և այլն. 16) քած — լակ. ка(н)цIа «շան ձագ, լակոտ», լեզգ. кицI «շուն» և այլն (հմմտ. նաև լակ. кк(в)аччи (բրբռ.) «շուն», հին. кач, լակ. куча «քած»):

Հայերենի արևելակովկասյան փոխառությունները ըստ իմաստային խմբերի բաշխվում են հետևյալ կերպ.

1. **Ֆիզիկական աշխարհ.** 1.36 ու(ղ)խ.

2. **Մարդկություն. սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն.** 2.321 հարճ:

---

[13] Ս. Մ. Շահումյանի կողմից 1935 թ. բերվել են հայ-արևելակովկասյան, հատկապես հայ-լեզգիական մեկուկես տասնյակ զուգադիպումներ [**Шаумян**, 1935, 419—426], որոնք մեծ մասամբ պատահական բնույթ ունեն. նշենք միայն հայ. գիւղ, խոտ, մոր (մոռ), ճանճ, ուտել բառերի լեզգիական զուգահեռները, որոնք, սակայն, տարբեր բնույթի են. դրանց մի մասի վերաբերյալ խոսվել է, մյուսները կբերվեն ստորև:

[14] Հայերենի աղբյուրները ճշտված են ըստ կովկասագիտական նորագույն գրականության:

3. Կենդանիներ. *3.611 քած. 3.631 չղջիկ։*

4. Մարմնի մասեր. *4.202 դանդ. 4.231 կտուց (?). 4.341 մագիլ. 4.37 աթուր, աք. 4.401 թոք։*

8. Երկրագործություն, բուսականություն. *8.51 խոտ։*

12. Տարածական հարաբերություններ. տեղ. ձև, չափ. *12.321 կախ. 12.621 կից։*

15. Զգայական ընկալումներ. *15.67 ծախ. 15.75 կակուղ։*

19. Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ. հասարակական հարաբերություններ. *19.16 գյուղ։*

Սրանց պետք է ավելացնել ավելի ուշ շրջանում ավանդված հետևյալ բառերը. 17) աքցան—*ավար.* гъец, *տինդ.* кицlу, *լակ.* къаьцlа, *ագուլ.* къаьц, кьец, *թաբ.* кьанццар *«աքցան». 18)* լելիք *«չղջիկ» — ցեզ.* лалукъи *«չղջիկ». 19)* խլեզ *— ցախ.* калез *«մողես». 20)* կաթել, կաթիլ *— ուտ.* кат *«կաթիլ» (հմմտ. դարգ.* кlантl, *արչ.* кlент, *բեժ.* тlанк *և այլն «կաթիլ»). 21)* ճայղ *«տիղմ» — ուտ.* чlайл *«ցեխ, տիղմ» (հմմտ. ճան.* çalimi *«ցեխ») (?)։*

Հնարավոր է հունարեն դպրոցի գործածած մակ *«վրա» նախածանցի նախյան ծագումը (հմմտ. բացբ.* мак *«վրա»)։ Ավելի քիչ հավանական է* մազ *բառի նախյան ծագումը. եղած զուգահեռները ձևով բավականաչափ հեռու են՝ չեչ.* мас, *չեչ., ինգ.* мерз *«մազ», բացբ.* мачl *«բեղեր»։*

Հայերեն բակ *և* խոփ *բառերի աղբյուրը Հ. Աճառյանը համարում է հարավկովկասյան (քարթվելական) լեզուները, բայց առկա են նաև արևելակովկասյան զուգահեռներ. հմմտ. 1) ղունզ.* бакlи *«փարախ» և ավար.* бок, *անդ.* бекь *«զոմ, փարախ». 2) ախվ.* кькьобо, *ճամ.* кькьоб, *ցեզ.* хъаб, *դարգ.* гъаб *և այլն «խոփ»։*

Մի շարք այլ դեպքերում դժվար է պարզել փոխառության բուն աղբյուրը։ Այսպես, հայ. խարտ *«խարտված»,* խարտել *բառերի աղբյուրը Աճառյանը համարում է ասորերենը (*xrat̨ *«միջից կտրել, ձևել, քերել, փորել»՝ արաբ.* xart̨ *«հախարակով հղկել» ձևի կողքին), բայց կա լակ.* ххартlи *«քերոց» բառը (հմմտ.* ххартlа тlун *«հղկել»,* ххартl бан *«քերել»), որի հարաբերությունը հայերենի հետ պարզ չէ։ Բեժիտերենն ունի* хой *«խոյ» ձևը, բայց այն դժվար է համարել հայերենի անմիջական աղբյուրը, եթե նկատի առնենք* й*-ի ծագումը* р*-ից (հմմտ. ղունզ.* хор*) և արմատի առկայությունը թյուրքական լեզուներում, ընդ որում հայ. բառի հնդեվրոպական ծագումը ևս հնարավոր է։ Նույն ձևով հայ.* կէզ, կիզել *բայը զուգահեռ ունի հին.* кизи *«վառվի՛ր» բայի մեջ և թյուրքական լեզուներում։*

Հայ. կարաս *բառի համար Հ. Աճառյանը նշում է արևելակովկասյան զուգահեռներ, բայց բոլորի աղբյուրը, ոչ առանց հիմքի, համարում է ուրարտերենը։*

Թերևս պատահական է հետևյալ բառերի նմանությունը. 1) արմա *(բբբռ.* արմա*) «խոշոր ալյուր (?)» — ուտ.* арум *«ցորեն»,* арумун *«ցորենի, ցորենային». 2)* խուղ *(հ.-ե.* *khu-l-՝ *keu- *«ծածկել» արմատից) կրիզ., բուդ.* кlул *«տուն, սենյակ» (հմմտ. թաբ., ռուտ., ագուլ.* кал*). 3)* խուրձն *— ցեզ.* хъицу *«դեզ»,* къгинорцlа *«բարդոց. խոտի դեզ». 4)* կծիկ *— ղունզ.* котl, *լակ.* кlут, *թաբ.* цlикв *«կծիկ». 5)* կոտրել *— ավար.* кlотlизе *«կոտրել»,* кьатlыын *«կոտրել, կտրատել». 6)* ճաղ *«մազ» (*ճաղ-ատ*) — լակ.* чlара, *արչ.* чlари, *լեզգ., թաբ.* чlар *և այլն «մազ» (ըստ Աճառյանի, բայց* л*-ով ձևեր չկան). 7)* նկուղ *— արչ.* нокь *«տուն». 8)* ցարասի *«հավամրգի, ցախի» — ցեզ.* цар, *ղունզ.* царас *«եղևնի». 9)* ցից *— բեժ.* цицо *«գերան»։*

Եթե հայ. ցեց *բառը ծագում է սեմական աղբյուրից (հմմտ. ասոր.* säsu *«ցեց»), և եթե բուդ.* цэц *«ցեց» բառի նմանությունը հայերեն բառի հետ պատահական չէ (հմմտ. ցախ.* иц, *լակ.* нувца, *այլև չեչ.* неца*), ապա բուդուխերեն բառի համար պետք է ենթադրել փոխառություն կամ հայերենից, կամ սեմական աղբյուրից։*

Պարզ չէ հայ. ծիլ. ծիղ *և ավար.* цlул *«փայտ», անդ.* цlул *«ճիպոտ, փայտ», հայ.* ճիւղ *(*ճեղ, ճիղ*) և ախվ.* чlули *«ճիպոտ, փայտ», ցախ.* чlил *«ձող», ինչպես նաև հայ.* գէր *(հ.-ե.* *gʰei- ? *հմմտ. ռուս.* жир*) և լեզգ.* гьери *«ճարպ» (հմմտ. լակ.* аьгъушиву*) բառերի հարաբերությունը։ Եթե* ծիլ, ծիղ *բառ'րը հնդեվրոպական ծագում ունեն (**g′ē̆l-*), ապա նրա համար բերված զուգահեռների հետ կապը պատահական է։*

Հնարավոր է, որ բարբառային հետևյալ բառերի աղբյուրը լինեն արևելակովկասյան լեզուները. 1) գռեխ *«թարախ» — ռուտ.* гlирхын, гlирхыд, гlирхыр *«թարախ» (հմմտ. թաբ.* бархун, *հին.* нархун*). 2)* դալա *«վայրի կատու. կզաքիս» — լակ.* тталак *«կզաքիս». 3)* լեկ *«ոչխարի կաշի (մշակված)» — ցախ.* лекlва, *կրիզ.* легl *«խոշոր եղջերավոր անասունի կաշի» (հմմտ. չեչ.* нег*). 4)* խոխ *«դանդ» — թաբ.* хаха, хвахва *«դանդ». 5)* խոյան *«նապաստակ» (Ն. Նախիջ. բբբռ.) — ցեզ.* хъай, *բեժ.* хъийа, хъиялатlа *«նապաստակ» (հմմտ. նաև ղունզ., հին.* хъи, *խվար.* хъе*). 6)* խռամ *«ցորենի տեսակ»,* կոփկ *«ցորենի տեսակ» — ախվ.* кьиру, *անդ.* кьир. *բոտլ., ղող., կարատ.* кьеру, *ռուտ.* кьир *«ցորեն». 7)* կանտ *(Վն.* կանտ(ու)կլուզ *«մանրմունր երեխաներ, ճիժ ու պիժ») — չեչ.* кlант *«տղա, որդի, երեխա». 8)* կեխ *«էշի թամբ» — անդ.* кьекьил *«բարձր», կրիզ.* кьикьер *«թամբ» և այլն (?). 9)* կուկուլ *«խոտի դեզ, բարդոց»—ավար.* гул, *անդ.* кол, *լեզգ.* ккуьл *«խուրձ». 10)* հարայ *— լեզգ.* гьарай *«աղաղակ. ճիչ» (*гьар- + -ай *ածանց). 11)* մախուխ *«ապուր. անհամ կերակուր» — ավար.* махъухъ, пахъухъ, бахух *«հալվա» (?). 12)* պիծի, *նաև* պիճի(կ), պուճուր *«փոքրիկ» — թաբ.* бицlи, *ագուլ., ուտ.* бицlиф *«երեխա» (հմմտ. անդ.* мочl, *ճամ.* мачl, *տինդ.* makla*)։*

Հայերեն բարբառային բբուկ *«կատար. փետուր» և ուտ., կրիզ., ցախ.* бибик *«կատար» բառերի նմանությունը բացատրվում է հավանաբար նրանց բնաձայնական-մանկական բնույթով։*

Եթե ճիշտ է հայերեն հետևյալ բառերի հնդեվրոպական ծագումը, ապա նրանց նմանությունը համապատասխան արևելակովկասյան բառերի հետ պատահական պիտի համարել. հայ. ականջ-ք *(հմմտ.* ունկն <*us-on-ko-m*) — անդ.* гьанкlа, гьантlикlа, *բոտլ.* гьантlукlа, *կար.* гвантикlа *և այլն «ականջ». հայ.* գիշեր *(հ.-ե.* *u̯eikeros *«երեկո») — ցեզ.* нешиpу, *ղունզ., բեժ.* нише, *արչ.* иш, *թաբ.* йишв, *ռուտ.* выш, *ագուլ.* уьш *և այլն «գիշեր». հայ.* գորտ *(հ.-ե.* *u̯orb- *«գորտ» ?) — լակ.* оьрватlи, *բեժ. (բբբռ.)* гlотlе *և այլն «գորտ». հայ.* երգէծ-, երգիծանել *«պատմել» (հ.-ե.* *u̯reid-, -g′-?*) — անդ.* ругъун *«վերք». հայ.* երկին *(հ.-ե. ?) — տինդ.* регьен *«երկինք» (հմմտ. անդ.* решо, *բոթլ., անդ., ղող., կարատ.* решин *և այլն). հայ. բբբռ.* թիր(ր)են *«աթար, տարթ» (հմմտ.* թրիք՝ *հ.-ե.* *ter-*ից* «աթար, տարթ») — ավար. тӀинцӀцӀи, անդ. тӀебтӀел «աթար, տարթ». հայ. մուր (հ.-ե. *meu-t- «խոնավ, կեղտ») — ադղ. мучь «մուր» (հմմտ. արչ. мачӀакул). հայ. շաղ-ել, շաղախ (հ.-ե. *k'u̯el- «աղտոտ») — ավար. шалай «տիղմ». հայ. ցաւ (հ.-ե. *ksā- «այրել») — լակ. цӀуцӀаву (цӀун «ցավել» + մասդարի -аву ածանց). ցին (հ.-ե. *(s)k'leno- ?) — ավար. цӀцӀун, խվար. це «արծիվ»:

Պատահական պետք է համարել նաև հետևյալ զուգադիպումները. հայ. թեթև — ավար. тӀутӀ «թեթև» (մկբ.), тӀутӀаб «թեթև» (ած.). հայ. ճաճանչ — լակ. чани, հին. ччаь և այլն «լույս». հայ. հատ-անել — չեչ., ինգ., բացբ. ата «փշրել, մանրել». հայ. տատասկ — ղունզ. тӀытӀу «մասրենի» և այլն:

Հետևյալ դեպքերում հավանաբար գործ ունենք թափառիկ և ընդհանուր փոխառյալ բառերի հետ. հայ. արագագ, երագագ — լեզգ. ракьар «թակարդ», թաբ. рукьар (լակ. кь(в)атӀ «թակարդ») (հմմտ. նաև արխուզ. арагул «թակարդ»). հայ. երկաթ — լեզգ., ракъ, աղուլ., թաբ. рукь, рукьу «երկաթ» (հմմտ. նաև վրաց. rķina). հայ. ժայռ (< իրան. ?) — թաբ. жжаьргъаьл «ժայռ» (բբառ.) (баьргъаьл, гъарз ձևերի կողքին). հայ. խնձոր — դարգ. гӀинц, ռուտ. инчу անդ. инчи և այլն «խնձոր» (խուռ. ḫinizuri «խնձոր» կամ ուրարտ.). հայ. կաղամախ(ի) — լեզգ. къавах «կաղամախի» և թաբ. къавахун гьар «բարդի». հայ. կապար — ղունզ. кобо «կապար», հայ. կատու — արչ. гату, դարգ. гата, ավար., ախվ. кету, դիդ., ցեզ. кӀетӀу, խվար. кӀитӀу և այլն «կատու». հայ. մոծակ — լակ. мичӀак, ցախ. мичак «մոծակ»[15]. հայ. շիճ(ուկ), բբառ. շիտուկ — լակ. (բբառ.) жит «շիճուկ». հայ. սիսեռ (հ.-ե. զուգաձևերով *k'ik'er- *k'eik'er- «սիսեռ») — դարգ. хъара, լակ. хъоьру, ռուտ., թաբ. хара, ցախ. хара, լեզգ. харар, աղուլ. (բբառ.) ххарар «սիսեռ» (հմմտ. նաև չեչ. хъоьш, վրաց. xanduri). հայ. ցանել, ցան-ք — չեչ. цана «խոտհարք, մարգագետին», լեզգ. цан «վար», цун (անդ. цан) «վարել. ցանել». հայ. տուխ(ն) «մի տեսակ կորեկ» — ղունզ. тӀуго, ցախ. дикӀ, աղուլ., թաբ. дукӀ «կորեկ» (արաբ. duxn «մի տեսակ կորեկ»՝ ըստ Աճառյանի, ՀԱԲ, 4², 425—426). հայ. բբառ. ջիղա «տեգ» — լեզգ. жида «տեգ, նիզակ». հայ. խոր (խորխորատ, խորխորել «կողոպտել, գողանալ», խորխոլիմ «ճարճրվել». հմմտ. խարխարել — ուրարտ. ḫarḫar-š-u-) — թաբ. хъуьр, хъуьл «փոս, հոր», хъуьрхъуьл «խոր փոս», ղունզ. харам, լեզգ. кур, ռուտ. хьвар, լեզգ., թաբ. фур «փոս», այլև ցախ. кӀоран և այլն «խոր» (հմմտ. նաև աքկադ. ḫurru «փոս»):

Ուրարտերենի և արևելակովկասյան լեզուների շփումների մասին են խոսում այնպիսի բացահայտ զուգահեռներ (բացի հայերենի և խուռա-ուրարտական լեզուների փոխհարաբերության քննության կապակցությամբ նշվածներից, այդ թվում՝ վերևում բերված «խնձոր» նշանակող բառերից), ինչպիսիք են ուրարտ. arše «երիտասարդ, պատանի»—լակ. арс, ավար. ваш, դարգ. урши և այլն «որդի, տղա». ուրարտ. mari «ազնվական, տոհմիկ» (հմմտ. խուռ. mariannu «երիտասարդ մարտիկ, ազնվական»< հ. հնդկ. marya-)—չեչ. майр, ինգ., բացբ. мара «մարդ». ուրարտ. qarqarani «զրահ» —լեզգ. кьакъар «սրի պատյան». ուրարտ. uduli «խաղողի այգի»—ուտ. тӀул «խաղող» (հմմտ. հայ. տոլի «խաղողի որթ») և այլն: Դժվար է որոշել թաբ. алъава «ավելացնել» բայի բուն աղբյուրը՝ հայ. աւել, յ-աւելո՞ւլ, թե՞ ուրարտ. abili-du- «ավելացնել»:

Հայերենի և արևելակովկասյան լեզուների փոխհարաբերության հարցի քննությունն ավարտենք՝ նշելով վերջիններիս մեջ զգալի թվով հայկական փոխառությունների առկայությունը, որոնք այդ լեզուներին անցել են անմիջաբար և միջնորդված կերպով՝ հատկապես վրացերենի միջնորդությամբ: Բերենք արևելակովկասյան մի շարք բառեր, որոնց հնարավոր աղբյուրը կարող է լինել հայերենը. այստեղից առայժմ բացառենք հայերենից կատարված նոր ուտիական փոխառությունները, որոնց մասին խոսք կլինի առանձին. հայ. ածուխ (<*անձող, հմմտ. հ.-ե. *angolo-) — աղուլ. цӀамхӀ «ածուխ». հայ. աճուկ (հ.-ե. *peg-. հմմտ. ռուս. пах «աճուկ») — աղուլ. аьчӀ «աճուկ». հայ. սար «բարդ» (հ.-ե. *pok'u- «բարդ») — լեզգ. сар, խվար. гьас և այլն «բարդ». հայ. արծաթ (հ.-ե. *arg'- «փայլել») — ավար. гӀарац, լակ. арцу, դարգ. арц և անդ. орси, թաբ. арс, արչ. арси և այլն «արծաթ». հայ. արծիւ (*r̥g'ipii̯o-) — բացբ. арцӀив «արծիվ» (հմմտ. նաև չեչ. аьрзу, լակ. бардзу. տարբեր է ավար. цӀцӀун). հայ. արջառ (բբառ. աչառ) «խոշոր եղջերավոր անասուն. մոզի» — ավար. гӀарӀар, արչ. хьорчӀи «հորթ». հայ. բարտի — ղունզ. барди «թուփ, թփուտ» (?). հայ. բուք (հ.-ե. *bhau-t- ?) — բժդ. ботӀо «բուք». հայ. դայլ (հ.-ե. *dhē(i)- «ծծել») — (> վրաց. da >) ցախ. да, ռուտ. даъ, աղուլ. ттаъ «դալ» [հմմտ. **Хайадков**, 1973, 52]. հայ. դուստր (հ.-ե. *dhukter- «դուստր») — արչ. дошдур «դուստր» (լակ. душ, թաբ. риш, լեզգ. руш ձևերի կողքին). հայ. եղան (հ.-ե. *kʷel-?) — ավար. лъен, ախվ. лъану, ռուտ. хьлан «եղան». հայ. երկան (հ.-ե. *gʷrānā) — լեզգ. регъв «ջրաղաց», թաբ. раьгъ, раьгъав, раьгъин և այլն «ջրաղաց. ջրաղացաքար» (հմմտ. ավար. гьобо «ջրաղաց», բժդ. гьобой, гьобор «ջրաղաց. անիվ»). հայ. թուր (հ.-ե. *ter- «տրորել, տրորելով ծակել») — ցախ., լակ., չեչ. тур «թուր». հայ. լեզու (հ.-ե. *leig'h- «լիզել») — դարգ. лезми (мез, миз ձևերի կողքին). հայ. կաշի (< սեմ.) — ավար. гъоча, կարատ. хъоча, ճամ. хоша, ցեզ. хӀоши, դիդ. хвиши և այլն «կաշի». հայ. կոյ (> կու) (հ.-ե. *gʷōu- «կեղտ») — թաբ. кув., լեզգ., թաբ. купӀ, հին. кука և այլն «աթար, տարթ». հայ. կոր և ծուռ — անդ. кӀору (հմմտ. կրըզ., լեզգ. кӀир) և թաբ. цӀур «կեռիկ. ճարմանդ». հայ. հալաւ (< սեմ.) — կրըզ. гьалов «հագուստ» (վրաց. halavi «հարսնացուին արվող նվեր փեսայի կողմից»). հայ. հաց (հ.-ե.?) — խվար. кьацӀа, դարգ. кьицӀа, լեզգ. кьас, ցախ. къацӀ «հացի կտոր», այլև խվար. хацӀ «[illegible]», ճամ. эцӀ «հաց». հայ. հուն (հ.-ե. *pont- «արահետ, ուղի») — ցեզ., խվար., ղունզ. гьуни, դարգ. гьуни, хуни և այլն «ուղի, ճանապարհ». հայ. ձեղուն, ձող (հ.-ե. *g'hel-) — դարգ. зехни, дзихни, աղուլ. цӀахун, цӀагьун «գերան». հայ. մանչ (հ.-ե. *men- «փոքր») — անդ. мочӀи, ճամ.

---

[15] Ինչպես նշվել է, Հ. Աճառյանը [ՀԱԲ, 3², 341] հայերենը բխեցնում է կովկասյան աղբյուրից, բայց նկատի չի առնում նախ՝ հնդիրանական զուգահեռները (հ.-ե. *mak'-, mok'-?. հմմտ. հ. հնդկ. maśákaḥ «մոծակ», makṣa «ճանճ», աֆղ. բբառ. masai, m(y)asai և ավեստ. maxsi, սոգդ. mγšk- (maxšika), քրդ mēš), երկրորդ՝ ուտիերեն моцӀак հենց հայերենից փոխառյալ լինելու հնարավորությունը, երրորդ՝ աբխազ-ադըղեական զուգահեռները՝ աբխ. а-мцӀ «ճանճ», а-мцӀа, ադըղ. мацӀ «մորեխ» և այլն: Հավանական է ենթադրել բնաձայնական նմանություն:

мачl, անդ. макlа «երեխա, մանչ». հայ. մորճ (մորչ, մորջ) «ճիպոտ, ճյուղ», մուրճ (հ.-ե. *mer- «տրորել») — դարգ. мурч «փայտ,ճիպոտ» (վրացերենի միջնորդությամբ՝ morči «ճյուղ»). հայ. շաղ (հ.-ե. *k'u̯el- ? «տրդ-մուռ») — դարգ. шах «եղյամ, շաղ». հայ. ոզնի (բրբռ. ոզնիկ, կոզնի, կուզնիկ և այլն) (*og'hinii̯o-՝ հ.-ե. *eg'hi- «ոզնի») — անդ. узрухки, ցեզ. гlузрукь, ավար., խվար. гlужрукь և այլն «ոզնի». հայ. տունկ — ցախ. тlунк «կոճղ». հայ. ցախ (հ.-ե. *k'hakh-, *sk'ākh- «ճյուղ») — ցեզ. цих, գին. чехъ «անտառ» և արչ. цlах-ан «փայտ». հայ. քոր (հ.-ե. *(s)ker- «կտրել») — ռուտ. къаври և այլն «քոր». հայ. տուն (հ.-ե. *dom- «տուն») — թաբ. тlун, լակ. тlуну, դարգ. тlени «ախոռ, մսուր»:

Ամենայն հավանականությամբ հայ. կիր (<սեմ.), մանգաղ (<սեմ.), յարդ, տափակ (<իրան.?) բառերն են նախյան հետևյալ բառերի աղբյուրը՝ մասամբ (կիր, մանգաղ բառերի դեպքում) վրացական միջնորդությամբ. չեչ. кир, ինգ. кlир «կիր». չեչ., ինգ. мангал «գերանդի, մանգաղ», չեչ. хьард «հարդ» (համմ. հին հայ. յ > ժամ. հայ. հ անցումը), չեչ. тlапа, тlапаниг «տափակ»:

Պարզ չէ հայ. խաթար և չեչ. хатар «հանցանք», հայ. խին «յուղ» (խինձի) և չեչ. хьёна, ինգ. хьаьна «յուղալի», հայ. խորշոմ և չեչ. харш «կնճիռ, խորշոմ», հայ. կիր, կրել (< հ.-ե. ?) և չեչ., ինգ. кира «բեռ» բառերի փոխհարաբերության բնույթը:

Մեծ թիվ են կազմում ուտիերենի՝ հայերենից կատարած փոխառությունները: Դրանք մասամբ գալիս են հնից, մասամբ կատարված են ուշ շրջանում՝ գրական լեզվից և բարբառներից: Ուտիերենի բառապաշարի համեմատաբար քիչ ուսումնասիրված լինելու պայմաններում դժվար է հստակորեն սահմանազատել հին փոխառությունները, մանավանդ որ գրաբարյան շրջանի բառերը հաճախ համընկնում են նոր գրական հայերենի համապատասխան բառերի հետ: Հին են, մասնավորապես, այն փոխառությունները, որոնց մեջ հայ. ղ-ի դիմաց առկա է ուտ. л՝ հայ. աղէտ—ուտ. лет «հառաչանք». հայ. կաղ—ուտ. кlала «կաղ». հայ. մանգաղ (< ասոր.) — ուտ. маьнкаьл «մանգաղ» և այլն: Հավանաբար հին փոխառություններ են նաև հետևյալները՝ հայ. զմռիլ (հ.-ե. ?) — ուտ. замару, замарой «թմրում, ընդարմացում, ջղաձգություն». հայ. ծոր, ծորել — ուտ. цlоро-десун «թորել». հայ. կոտոր — ուտ. кlотlор «կտոր». հայ. կոր — ուտ. кlори «կոր, ծուռ». հայ. տապակ — ուտ. тlапlак «տաշտ, տեփուր» (ինքնուրույն փոխառություն հայերենի համար հիմք ծառայած իրանական աղբյուրի՞ց), հայ. տապան — ուտ. тlапlан «տաշտ». հայ. քամ (քամել) — ուտ. каьм «կղկղանք. արտաթորանք» և այլն:

Մի շարք դեպքերում, ինչպես նշվեց, հայ. բառերը պատկանում են ինչպես հին, այնպես էլ նոր գրական լեզվին, և որոշել փոխառության ժամանակը հնարավոր չէ՝ հայ. ավազակ (<իրան.?)—ուտ. абазакl, аваз «ավազակ». հայ. ապուշ (<իրան.) — ուտ. апlуш «թմրած, ապուշ», հայ. կատար — ուտ. кlатlар «կնոջ գլխի զարդարանք. աքաղաղի կատար». հայ. կոճիկ — ուտ. кlоцlикl «սոսինձ», հայ. կործ — ուտ. кlоцl «թեք, ծռված», հայ. մոզի (հ.-ե.) — ուտ. mozi «հորթ. մոզի». հայ. պատառ — ուտ. пlатlар «մի քիչ, մի կտոր» և այլն:

Որոշ հետք են թողել արևելակովկասյան լեզուները հայկական տեղանուններում: Մենք արդեն առիթ ենք ունեցել խոսելու Նախճ-աւան անվան առաջին մասի՝ նախյան ժողովուրդների անվան հետ ունեցած կապի մասին. այժմ էլ չեչեններն իրենց կոչում են нохчо (բրբռ. нахчо), որ պահպանվել է «Աշխարհացույց»-ի հիշատակած Նախճամատեանք (բռց. «նախճալեզվյաններ») ժողովրդանվան մեջ: Բնականաբար արևելակովկասյան ծագում ունի հին Հայաստանի Ուտիք նահանգի անունը, եթե մանավանդ ուտիները հին աղվանների մնացորդն են: Արևելակովկասյան տարրերը զգալի տեղ պետք է գրաված լինեն ոչ միայն Ուտիքի, այլև թերևս Արցախի ու Գուգարքի տեղանունների մեջ: Ցավոք սրտի, այս հարցը բոլորովին չի գրավել հետազոտողների ուշադրությունը: Նշենք միայն, որ հնարավոր է Ուտիքի Տռի, Աղուէ, Արցախի Հարճլանք, Մուխանք, Պիանք, Կողբ գավառանունների արևելակովկասյան ծագումը:

Արևելակովկասյան ծագում ունի Կուր գետի անունը. կրիզերեն և բուդուխերեն լեզուներով кур նշանակում է «գետ», ուտիերեն՝ «ձոր», ղունզ. куро՝ «առու» և այլն:

5. ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՀՈՒՆԱՐԵՆԸ

ա) ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի՝ հունարենից կատարած փոխառությունների հարցը դեռևս XIX դարի վերջերից գրավել է մի շարք ականավոր հետազոտողների ուշադրությունը՝ Հ. Թումբ [**Thumb**, 1900], Կ. Բրոկելման [**Brockelmann**, 1894], Հ. Հյուբշման [**Hübschmann**, AG, 2, 1897]: Իր «Հայոց լեզվի պատմության» 2-րդ մասում [1951, 5—53] Հ. Աճառյանը, ի մի բերելով այս հեղինակների և հատկապես իր «Հայերեն արմատական բառարանի» տվյալները, տալիս է 1066 փոխառության ցանկ, որից 151-ի դեպքում հունարենի աղբյուրը լատիներենն է: Ցանկում շեղատառով առանձնացված են այն բառերը, որոնք այժմ էլ գործածության մեջ են: Բացի սրանցից, առանձին գլխով տրրվում են հայերենի եբրայական փոխառությունները (թվով 138)՝ կատարված հունական միջնորդությամբ: Եթե նկատի առնենք, որ վերջիններս հայերենի մեջ են մտել մատենագրական ճանապարհով (բացի մի քանի կասկածելի դեպքերից)՝ հատկապես Աստվածաշնչի թարգմանության միջոցով, ապա պարզ կլինի, որ նրանց քննությունը դուրս է նախագրային շրջանի պատմությունից և վերաբերում է հայոց լեզվի գրային շրջանի պատմությանը: Բուն հունարենից և հունական միջնորդությամբ լատիներենից կատարված հայկական փոխառությունների ժամանակային պատկանելության հարցն ավելի բարդ է: Իրանական փոխառությունների համեմատությամբ հունական փոխառությունները գերազանցապես մատենագրական բնույթ են կրում, և, ինչպես կտեսնենք, փոքր մասով են միայն առնված մինչև V դարն ընկած շրջանում: Հայերը հույների հետ այնպիսի տևական և անմիջական շփման մեջ չեն եղել, ինչպես իրանական ժողովուրդների հետ: Այդ շփումը հիմնականում քաղաքական-մշակութային և կրոնական բնույթ է կրել:

Եթե բացառենք արդեն քննված հնագույն առնչությունները, ապա հայերենի նախագրային շրջանի համար կարելի է տարբերել հայ-հունական լեզվական առնչությունների 4 հիմնական փուլ.

1) վաղ առնչությունների փուլ (VI դ.—IV դ.)։ Այս փուլում հայերի շփումը հույների հետ պատահական բնույթ է կրել՝ տեղի ունենալով մասամբ առևտրական ճանապարհով (մանավանդ Փոքր Ասիայի ծովափնյա հունական գաղութների հետ), մասամբ արևելքում, հատկապես Պարսկաստանում, ծառայության մեջ գտնվող հույն զինվորների միջոցով։ Զգալի դեր կարող է խաղացած լինել նաև ուրիշ (այդ թվում՝ իրանական, սեմական, փոքրասիական) ժողովուրդների միջնորդությունը։

2) Հունական քաղաքական և մշակութային վաղ ազդեցության փուլ (մ. թ. ա. III դ. 30-ական թթ.—մ. թ. I դարի 60-ական թթ.)։ Այս փուլն սկսվում է Ալեքսանդր Մակեդոնացու՝ դեպի արևելք կատարած արշավանքներով, պարսկական պետության անկմամբ, հունական մշակութային ազդեցության ուժեղացմամբ։ Հայաստանը, որ գտնվել է հելլենիզմի ազդեցության ոլորտում, պետք է ենթարկվեր հունական մշակութային և թերևս, սրա հետ կապված, լեզվական ազդեցության։

3) Հռոմի քաղաքական ազդեցության ուժեղացման և հունական մշակութային ազդեցության շարունակման փուլ։ Այս փուլն սկսվում է Հռոմի՝ Հայաստան կատարվող արշավանքներով, Տիգրան 2-րդի հետ հռոմայեցիների կնքած դաշնագրով. այս փուլում հունական շարունակվող ազդեցության հետ միասին զգալի դեր պիտի կատարեր լատիներենի անմիջական և միջնորդված (հունական միջնորդությամբ) ազդեցությունը։ Մ. թ. I—II դարերի հունական և լատինական արձանագրություններ են հայտնաբերված Գառնիում, Էջմիածնում, Արտաշատում, Տիգրանակերտում, Խարբերդում։

4) Բյուզանդական մշակութային և կրոնական ազդեցության փուլ (IV դ.)։ Այս փուլում Բյուզանդիայի առանձնացմամբ և հայերի ու հույների՝ պաշտոնապես քրիստոնեություն ընդունելով սրանց փոխհարաբերությունը նոր ուղղություն է ստանում։ Հատկապես ուժեղանում է կրոնական կապը, և կրոնական տերմինները լայնորեն մուտք են գործում հայերենի մեջ։

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հելլենիզմի շրջանից սկսած հայերը դիմում էին հունարենին, դրամների վրա գրում հունարեն, թողնում հունարեն արձանագրություններ։ Տիգրանակերտում եղել է հունական թատրոն, Տիգրան 2-րդն իրեն շրջապատել է հույն գիտնականներով, Տիգրանի որդի Արտավազդը գրել է հունարեն ողբերգություններ։ Երկար ժամանակ հայերը պաշտոնական գրությունները գրում էին հունարենով։ Չնայած սրան, Հայաստանը մնում էր «ոչ հունական» (Մոմզենի արտահայտությամբ)՝ արևելյան երկիր։ Կա այն կարծիքը, որ մինչև քրիստոնեության մուտքն ընդհանրապես «հայերենը հունարենից ոչ մի ազդեցություն չի կրել» [Աճառյան, ՀԼՊ, 2, 7]. այս դեպքում խոսքն, իհարկե, վերաբերում է, այն էլ ոչ հավաստիորեն, հայերեն այն ստանդարտ լեզվին, որ V դ. է գրի առնվել և հայտնի է գրաբար անվամբ։ Հասկանալի է, որ առանձին հատվածներում, այդ թվում՝ հունական մշակույթին ծանոթ մարդկանց մեջ, չէին կարող չգործածվել հունարեն որոշ բառեր։ Հունարենի ազդեցությունն ուժեղանում է IV շրջանում, երբ Հայաստանում գործում էին հունարեն և ասորերեն դպրոցներ։

Այս պայմաններում հասկանալի է նաև, որ առայժմ խոսք չի կարող լինել հայերենի՝ հունարենից կատարած փոխառությունները ըստ նշված փուլերի բաշխելու մասին։ Կարելի է միայն ժամանակագրական քիչ թե շատ հստակ սահմաններով առանձնացնել կրոնական բնույթի բառերը, որոնք հիմնականում պետք է հանդես եկած լինեն IV դարից սկսած, այլև այն բառերը, որոնց անշեշտ վանկերում տեղի է ունեցել ձայնավորների ու երկբարբառների թուլացում, և որոնք պետք է փոխառված լինեն մինչև III դ.։ Դեռ ավելին. ընդհանրապես հեշտ չէ նաև հունական փոխառությունների ընդհանուր ցանկից առանձնացնել այն բառերը, որոնք կարող են գալ նախագրային (նախամատենագրական) շրջանից։ Ստորև բերվող ցանկը կազմելիս մենք նախ հանել ենք միայն V դ. մատենագրության մեջ հանդիպող բառերը, ապա առանձնացրել դրանցից այն միավորները, որոնք կարող են գալ ավելի վաղ՝ նախագրային շրջանից։ Այս դեպքում մենք առաջնորդվել ենք որոշակի սկզբունքներով. նկատի են առնվել փոխառությունների՝ 1) հաճախականությունը և տարածվածությունը, 2) իմաստային առանձնահատկությունները, 3) հոմանիշներ ունենալը, թե չունենալը և ունենալու դեպքում՝ համանիշների տարածվածությունը, 4) հայ հեղինակների մոտ, թե՞ միայն թարգմանություններում և դրանց մեկնություններում հանդիպելը, 5) ձևափոխված (այդ թվում՝ ժողովրդական ստուգաբանությամբ), թե՞ պարզ տառադարձություն լինելը, 6) բարբառներում հանդիպելը, 7) հոլովված հանդիպելը և ածանցումներ ու բարդություններ տալը, այսինքն՝ ձևաբանական-բառակազմական մերվածության աստիճանը, 8) հունարեն բառերի նաև այլ (այդ թվում՝ սեմական, իրանական լեզուներում) տարածված լինելը, այսինքն՝ մշակութային ընդհանուր արժեք ունենալը, 9) համեմատաբար միաձև (ստանդարտացված) գրությունը։ Մի շարք դեպքերում խնդիրը հեշտանում է նրանով, որ հայ հեղինակները նշում են բառի հունարեն լինելը, գնահատում են այն դեռևս որպես օտարազգի՝ հայերենի բառապաշարին չմերված, առանձին դեպքերում էլ մեկնում են՝ թարգմանում հայերեն։ Այս բոլորով հանդերձ չի կարելի վստահ լինել, որ առանձնացված բառացանկում տեղ չեն գտել V դարից ոչ վաղ կատարված մատենագրական փոխառություններ, և որ, ընդհակառակն, հանված բառերի մեջ չկան ավելի հնից եկող փոխառություններ (վերջինս ավելի քիչ հավանական է)։ Հ. Աճառյանի ցանկից մենք ընդհանրապես հանել ենք այն բառերը, 1) որոնք հունարենից հայերենին պիտի անցած լինեն իրանական, հատկապես պարթևական միջնորդությամբ (գաղափար—կաղապար, լամպար—լապտեր. հմմտ. հուն. δ>պրթ. δ>հայ. ր փափոխությունը), 2) որոնք հատուկ անուններ են կամ հատուկ անունների արժեք են ունեցել (Ստրիգի, Արիէ՛, Բորբորիանոս, Դեմետեր, Կորես, Կոռնոս, Հերմէս, Ղևտիկոն, Պերիարմենիաս, Եկղեսիաստէս, Սիբիլլա, Փայիրոն), մանավանդ որ դրանք ակնհայտ մատենագրական փոխառություններ են, 3) որոնց՝ հունարենից փոխառյալ լինելը կասկած է հարուցում (հմմտ. կեմ «խոտե պարան», մոռ «մի տեսակ համեմունք»)։

Ընդհանուր առմամբ Հ. Աճառյանի տված 1066 բառից միայն մեկ երրորդից փոքր-ինչ ավելին է հանդիպում V դ. մատենագրության մեջ, ընդ որում լատինական ծագում ունեցող հունական բառերի դեպքում այդ թիվը հասնում է մոտ մեկ հինգերորդի։ Սրանցից էլ հանելով վերևում նշված պայմանները չբավարարող բառերը՝ կստանանք հունարենից հայերենի կատարած այն փոխառությունների ցանկը (թվով 107), որոնք կարող են V դարից վաղ լինել. սրանց մեջ լատինական ծագում ունեցող բառերի քանակը մեծ չէ (12)։

աբբա(յ), -ի, -ից «հայր, երկնավոր հայր՝ աստված. աբբահայր, վանահայր».
հմմտ. հուն. ἀββᾶ(ς) (< արամ.).

ադամանդ (անդ-). հմմտ. հուն. ἀδάμας,-αντος.

ադաբողոն, -ի, -աց «վերարկու, կրանավորի կարճ փիլոն». հմմտ. հուն. ἀναβολή.

այեր, -ի «մթնոլորտ». հմմտ. հուն. ἀήρ.

անդրի, -ւոյ, -եաց (անդրիանդ, -ի, -աց) «արձան». հմմտ. հուն. ἀνδριάς,-άντος.

անթիհիւպատոս, -ի (անթիպատոս) «փոխհիւպատոս». հմմտ. հուն. ἀνθύπατος.

արգասիք. հմմտ. հուն. ἐργασία (> պրթ. > հայ. ?).

արքեպիսկոպոս, -ի, -աց, -ունք. հմմտ. հուն. ἀρχιεπίσκοπος.

աւգոստոս «կայսր» (աւգոստա «կայսրուհի»). հմմտ. հուն. αὔγουστος (իգ. αὔγουστα) (< լատ. augustus).

ափսէ (ափսեայ) «մետաղյա սկավառակ». հմմտ. հուն. ἀψίς.

բաթրոն, -ի, -աց «բազմոց». հմմտ. հուն. βάθρον.

բաղանիք, -եաց. հմմտ. հուն. βαλανεῖον.

բաղիստր (բալիստր) «նետաձիգ գործիք». հմմտ. հուն. βαλίστρα.

բաղսամո(վ)ն «բալասան». հմմտ. հուն. βάλσαμον.

բասիլիսկոս (բասիղիսկոս) «արքայիկ օձ». հմմտ. հուն. βασιλίσκος.

բարբարոս, -ի, -աց. հմմտ. հուն. βάρβαρος.

բեմ, -ի, -աց. հմմտ. հուն. βῆμα.

բիւրեղ (ուշ՝ բերիւղ). հմմտ. հուն. βήρυλλος.

գաղագրի (գաղր-, -գեղ, -գրեղ, -գրո), -ի, -աց, -ից «գազանների արգելանոց. բանտ». հմմտ. հուն. γαλεάγρα.

գրամատիկոս (-մարտիկ, -մարտիկոս) «քերական». հմմտ. հուն. γραμματικός.

դափնի (դափնէ, դափ/բնիդ). հմմտ. հուն. δάφνη «դափնի» (δαφνίς,-ίδος «դափնեպտուղ»).

դ(ե)լփին, -ի, -աց. հմմտ. հուն. δελφίς,-ῖνος.

դենար (դինար), -ի, -աց «մի տեսակ դրամ». հմմտ. հուն. δηνάριον < լատ. denarius.

դստիկոն, -ի «տան հարկ». հմմտ. հուն. δίστεγον.

եթեր, -ի, -ոյ, -աց. հմմտ. հուն. αἰθήρ,-έρος.

եկեղեցի «ժողովուրդ, բազմություն. հավաքույթ. տաճար». հմմտ. հուն. ἐκκλησία.

եպիսկոպոս, -ի, -ից, -աց, -ունք. հմմտ. հուն. ἐπίσκοπος.

զմուռս, -ոյ, -ի, -աց (զմուս-, զմռ-, զմռն-). հմմտ. հուն. σμύρρα, σμύρνα.

թերիակե (թիրյակէ, թիւրակէ) «դեղթափ, հակաթույն». հմմտ. հուն. θηριακή (> ասոր. terjaqē և այլն).

լաւդիկ (լօդիկ) «վերարկու». հմմտ. հուն. λωδίκιον (λώδιξ,-ικος) < լատ. lodix, -icis «վերմակ» (< կելտ. ?)[1].

լեգէո(վ)ն (լէ-, լի-, -եոն), -ի «հռոմեական զորաստորաբաժանում, բազմություն. հռոմեական զինվոր. չար դև». հմմտ. հուն. λεγεών (< լատ. legio, -onis).

լիտր. հմմտ. հուն. λίτρα.

կաթողիկէ (-եայ), -ի, -ից «ընդհանրական (ժողով, եկեղեցի)». հմմտ. հուն. καθολική (իգ. սեռի ձև).

---

[1] Հ. Աճառյանը [ՀԱԲ, 2², 308] հուն. բառը չհիշելով [մինչդեռ տե՛ս Chantraine, DELG, 3, 654] և նկատի առնելով միայն լատինական և գերմանական զուգահեռները՝ գրում է. «Թէ ի՞նչ ճամբով հասած է մեզ՝ յայտնի չէ»

կաթողիկոս, -ի, -աց, -ունք «հայրապետ. հազարապետ». հմմտ. հուն. καθολικός «ընդհանրական».

կամար, -ի, -աւ «շենքի կամար». հմմտ. հուն. καμάρα.

կանթեղ, -ի, -աց. հմմտ. հուն. κανδήλα < լատ. candēla.

կանոն, -ի, -աց. հմմտ. հուն. κανών.

կար(ա)կին, -ի, -աց «կարկին». հմմտ. հուն. καρκίνος.

կեղթ (բրբռ. կաղաթ, կալաթ, կղաթ) «կողով. մի չափ» հմմտ. հուն. κάλαθος (> ասոր. galəttā, վրաց. ḳalata).

կէտ, -ի, -աց (կետ, կետոս) «ծովային մի կենդանի՝ կետ». հմմտ. հուն. κῆτος.

կիտրոն. հմմտ. հուն. κίτρον < լատ. citrus, հյց. citrum.

կիւրակէ. հմմտ. հուն. κυριακή «տերունական (օր). կիրակի».

կղէսար «լեռնանցք, կիրճ. բերդ». հմմտ. հուն. κλεισοῦρα < լատ. clausura.

կղերիկոս, -ի, -աց «կրոնավոր». հմմտ. հուն. κληρικός.

կոնք -ի, -աց. «խեցեմորթ. խեցի. մի հեղուկաչափ». հմմտ. հուն. κόγχη.

կղերք (կղեր-ական). հմմտ. հուն. κλῆρος «հոգևորականություն».

կրկէս. հմմտ. հուն. κιρκήσιον < լատ. circus.

հերետիկոս. հմմտ. հուն. αἱρετικός.

հիւղ(է) (հիղեայ, հիւղայ) «նյութ». հմմտ. հուն. ὕλη.

հիւպատ(ոս), -ի, -ից (հիպատ) «կուսակալ». հմմտ. հուն. ὕπατος.

հռետոր, -ի, -աց. հմմտ. հուն. ῥήτωρ.

մանրագոր, -ի, -աց «թմրեցուցիչ մի բույս». հմմտ. հուն. μανδραγόρας.

մատուռն «վկայարան». հմմտ. հուն. μαρτύριον.

մարմար (V դ. միայն բաղադրություններում. ուշ՝ մարմարիոն). հմմտ. հուն. μάρμαρον.

մարտիրոս, -ից, -աց «նահատակ». հմմտ. հուն. μάρτυρος և μάρτυς,-υρος.

մեղրապոպ, -ի, -ից «շամամ». հմմտ. հուն. μηλοπέπων.

մետաքս, -ի, -ից. հմմտ. հուն. μέταξα (բյուզ. շրջանի բառ՝ IV դարից).

մեքենայ, -ի «գործիք. պատերազմական գործիք. խորամանկություն». հմմտ. հուն. μηχανή, հգն. -αι (> ասոր. mexanē).

մորոս, -ի, -աց «հիմար». հմմտ. հուն. μωρός.

յակինթ «մի ակն. մի ծաղիկ». հմմտ. հուն. ὑάκινθος.

նարդոս, -ի, -ից (-էս, -ին, -ան, -եան) «մի տեսակ ծաղիկ». հմմտ. հուն. νάρδος.

նօտար (ուշ՝ նոտար) «գրագիր». հմմտ. հուն. νοτάριος < լատ. notarius.

ողոմպիադ (ոլոմ-, ողիմ-, ողոմ-, ողիւմ-, ոլիմ և այլն) «օլիմպիադա. օլիմպիական մրցանակ. օլիմպիական տարեհաշիվ». հմմտ. հուն. Ὀλυμπιάς,-άδος.

որթոդոքս, -ի, -աց «ուղղափառ». հմմտ. հուն. ὀρθόδοξος.

որիզ «բրինձ». հմմտ. հուն. ὄρυζα (< իրան.).

պալատն (պաղատն, ուշ՝ պալատ). հմմտ. հուն. παλάτιον, παλάτιν < լատ. palatium.

պաղաթիտ, -ի, -աց «չոր թուզ». հմմտ. հուն. παλαθίς,-ίδος (παλάθη) «չոր մրգի (հատկապես թզի) բլիթ».

պանդոկի (ուշ՝ պանդոկ) «իջևան». հմմտ. հուն. πανδοχεῖον.

պոտագրոս, -ի, -աց «ոտքերի հոդացավ ունեցող». հմմտ. հուն. ποδαγρός (> ասոր. ptagrā podagrā).

պենտեկոստէ, -ի, -իւ «հրեաների՝ Եգիպտոսից ելնելու հիսուներորդ օրը. հոգեգալուստ». հմմտ. հուն. πεντηκοστή.

պնակ, -ի, -աց «կերակրաման». Համմտ. հուն. πίναξ, -κος.

պնակիտ «գրատախտակիկ». Համմտ. հուն. πινακίς,-ίδος, πινακίδιον (> ասոր. penaqidtā).

պոռնիկ, -ի, -աց. Համմտ. հուն. πορνικός «պոռնկական» (πόρνος, իգ. πόρνη «պոռնիկ» գոյականից կազմված ածական)[2].

պրաս, -ի, -ից «սոխազգի մի բույս». Համմտ. հուն. πράσον.

պուէտէս (-տիկոս) «բանաստեղծ». Համմտ. հուն. ποιητής (-τικος).

ռետ(ի)ն, -ի, -ից. Համմտ. հուն. ῥητίνη.

սաղմոս, -ի, -ից, -աց. Համմտ. հուն. ψαλμός.

սատրապ, -ի, -աց. Համմտ. հուն. σατράπης (< իրան.).

սարդիոն «մի տեսակ թանկագին քար». Համմտ. հուն. σάρδιον.

սեբաստոս (իգ. սեբաստէ) «օգոստափառ». Համմտ. հուն. σεβαστός (իգ. -τή).

սիկղ, սեռ. սկեղ «մի կշռաչափ և դրամ». Համմտ. հուն. σίκλος.

սիղղոբայ, -ի, -ից «վանկ». Համմտ. հուն. συλλαβή.

սինկղիտոս, -ի, -աց (սիւնկղիտոս, սինկլիտոս) «ծերակույտ». Համմտ. հուն. σύγκλητος.

սոփեստէս (-ոս). Համմտ. հուն. σοφιστής.

սպունգ, -ոյ. Համմտ. հուն. σπόγγος.

ստադի(ո)ն «մարզատեղ. 600 ոտնաչափ». Համմտ. հուն. στάδιον.

ստամոքս, -ի. Համմտ. հուն. στόμαχος.

ստամն, -ի, -աց «սափոր». Համմտ. հուն. στάμνος.

տաղանդ/ն, -այ, -ի, -ց «մի կշռաչափ և դրամ. ձիրք». Համմտ. հուն. τάλαντον.

տարտարոս «դժոխք, ստորերկրյա աշխարհ». Համմտ. հուն. τάρταρος.

տապալի (տապաղի, ուշ՝ տապեղ) «նարդի». Համմտ. հուն. τάβλα < լատ. tabula.

տիպ, -ոյ «դրոշմվածք, օրինակ, կերպարանք, ձև». Համմտ. հուն. τύπος.

տիտան, -ի, -աց «հսկա, տիտան». Համմտ. հուն. Τιτάν.

տոկոս, -ի, -ից (-իք) «ծնունդ, պտուղ, տոգանք, տոկոս, շահ, վաշխ». Համմտ. հուն. τόκος.

տոմս «թուղթ, թերթ». Համմտ. հուն. τόμος (> ասոր. tumsā. հայերենն այստեղի՞ց).

տոմար, -ի, -աց «հատոր, գրվածք, (ուշ) ժամանակագրություն». Համմտ. հուն. τομάριον.

տպազիոն «մի թանկագին քար». Համմտ. հուն. τοπάζιον.

փասեան «մի տեսակ թռչուն». Համմտ. հուն. φασιανός.

փիլիսոփոս. Համմտ. հուն. φιλόσοφος (> ասոր. pīlōsōfā > փիլիսոփայ).

փիլոն «անթև վերարկու, կրկնոց». Համմտ. հուն. φελόνης (φαιλόνης).

փոս, -ոյ, -ի -ից. Համմտ. հուն. φόσσα < լատ. fossa(?).

քարադր «մի տեսակ թռչուն». Համմտ. հուն. χαράδριος.

քարտ (քարտէս, -էզ) «թուղթ, թերթ, գրականություն». Համմտ. հուն. χάρτης.

քղամիդ, -ի, -աց «պատմուճան». Համմտ. հուն. χλαμύς,-ύδος.

---

[2] Ըստ Հ. Հյուբշմանի [AG, 2, 373]։ Ըստ Ա. Մեյեի [Meillet, 1920, 12]՝ հուն. գոյականը կարող է հայերենին անցած լինել պարթևական միջնորդությամբ և -ik վերջածանցի հավելմամբ։

քոռ «մի կշռաչափ». Համմտ. հուն. χόρ (χόρος) < եբր. kōr.

քսեստ «մի չափ (հեղուկների և սորուն նյութերի)». Համմտ. հուն. ξέστης.

քրիստոն-(եայ), -ի, -ից. Համմտ. հուն. Χριστός, հյց. -όν «Քրիստոս».

բ) ՓՈԽԱՌՅԱԼ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ

Հասարակ անունների հետ միասին հունարենից հայերենին են անցել զգալի թվով հատուկ անուններ։ Իր «Հայոց լեզվի պատմության» մեջ [2, 50—51], հենվելով «Հայոց անձնանունների բառարանի» տվյալների վրա, Հ. Աճառյանը բերում է հունական ծագում ունեցող 143 անձնանուն, որոնք պատկանում են ժամանակագրական տարբեր շերտերի։ Ի տարբերություն հասարակ անունների՝ այստեղ մենք կարող ենք հենվել ոչ միայն V դ. մատենագրական տվյալների վրա, այլև հայկական և օտար աղբյուրների հիման վրա որոշել տվյալ անձնանունները կրողների ապրած ժամանակը։ Հ. Աճառյանի ցանկից հանելով՝ 1) V դարից հետո ապրած կամ հիշատակված անձերի անունները, 2) այն անձնանունները, որոնք կրել են Հայաստանում ապրած, բայց ծագումով ոչ հայ անձեր (Գայիանէ, Զենոբ, Զենոն, Ողոմպիադա), 3) այս կամ այն պատճառով հատուկ համարված հասարակ անունները (համմտ. Բիւզանդ, իմա՛ բիւզանդացի)՝ կարելի է որոշ պայմանականությամբ թողնել ստորև բերվող 52 անունները։ Դրանց մեջ չեն տրված եբրայական ծագում ունեցող՝ թվով մոտ հարյուր անձնանունները, որոնք անցել են հիմնականում ասորերենից. բացառություն է արված երկու անվան համար՝ 1) **Ղազար(ոս)**, որ այդ ձևով ասորերենում չի հանդիպում, այլ առնված է 'El'āzār (**Եղիազար**) անվան կրճատմամբ կազմված հուն. Λάζαρος անունից, և 2) **Մատթէոս**, որ առնված է Ματθαῖος ավետարանիչի անունից. սրա աղբյուրն է համարվում եբր. mattitjahu «Յահվեի (=աստծու) նվեր»։ Հայերեն անվան կողքին փակագծերում տրվում է տվյալ անձնանունը կրող անձի ապրած դարը, այլև, անհրաժեշտ դեպքում, նշում է արվում տվյալ անձնանվան՝ V դ. հայ մատենագրության մեջ հիշատակված չլինելու մասին. երբ այդպիսի նշումներ չկան, ապա պետք է հասկանալ, որ՝ 1) տվյալ անձն ապրել է V դ., և 2) V դ. մատենագրության մեջ համապատասխան հիշատակություններ կան։ Ցուցակը չծանրաբեռնելու նպատակով հունական անձնանվան հասարակ ձևը չի բերվում, եթե համընկնում է հատուկի հետ։ Այսուհանդերձ պետք է նկատի առնել հետևյալը. 1) ոչ բոլոր երկերի՝ V դ. պատկանելու հարցն է որոշակիորեն լուծված. 2) կան անձնանուններ, որոնք V դ. չեն հիշատակված, բայց կարող են գործածության մեջ եղած լինել V դ. և ավելի վաղ. 3) հունական ծագման շատ անուններ կրել են այն անձերը, որոնք ապրել են Բյուզանդիայում կամ նրան մերձավոր վայրերում, Հայաստանի 387 թ. բաժանումից հետո՝ հատկապես նրա հունական մասում. 4) մի շարք հունական անունների հայկական տառադարձությունը պայմանական է՝ հիմնված լինելով օտար (հատկապես հունական) աղբյուրները հետազոտողների արված մեկնաբանության վրա։

1) **Ագաթանգեղոս** — 'Αγαθάγγελος «բարի հրեշտակ».

2) **Ագապես** (IV դ. — 'Αγάπιος (ἀγάπη «սեր» բառից. համմտ. նաև ἀγάπησις «սեր»).

3) Աթանագինէս (IV դ.) — 'Αθηνογένης «աթենածին, Աթենաս աստվածուհուց ծնված».
4) Աթանաս — 'Αθανάσιος «անմահ».
5) Աթենոգորոս (III դ.) (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — 'Αθηνόδορος «Աթենատուր, Աթենաս աստվածուհուց տրված».
6) Ակակ(իոս)(II և III դդ.) (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) 'Ακάκιος «անմեղ».
7) Աղբիանոս (IV դ.) — 'Αλβιάνος < լատ. Albianus «Albius-ի ցեղից, Ալբիուսյան»[3].
8) Աղբիոս (IV դ.) — ''Αλβιος < լատ. Albius (հմմտ. Աղբիանոս)[4].
9) Անդրէաս — 'Ανδρέας (ἀνδρεῖος «առնական»).
10) Անիկտոս (IV դ.) (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — 'Ανίκητος «անհաղթ».
11) Անտիոքոս (IV դ.) — 'Αντίοχος «կառավարիչ, թշնամու կառքի դեմ քշող» կամ «դիմակայող».
12) Անտիպատրոս (մ.թ.ա. I դ.՝ ըստ Ստրաբոնի) — 'Αντίπατρος «հորը փոխարինող».
13) Անտոն (IV դ.) — 'Αντώνιος (''Αντων) < լատ. Antonius.
14) Արիստակէս (III — IV դդ.) — *'Αριστότοκος (ἀριστότοκος «ազնվորդի»)[5].
15) Արքելայոս (IV դ. և ավելի վա՞ղ) — 'Αρχέλαος «ժողովրդիշխան».
16) Բասիլ (ուշ՝ նաև Բասիլիոս) — Βασίλειος «թագավորական». հմմտ. Բարսեղ.
17) Բաս(ոս) (IV դ.) — Βάσσος < լատ. Bassus «հաստ, գեր»[6].
18) Բարսեղ — Βασίλειος «թագավորական». տե՛ս Բասիլ.
19) Գենարեթիոս (IV դ.) — ? (γένος «ծնունդ» կամ γενναῖος «ազատածին, ազնիվ, ազնվական» և ἀρετή «առաքինություն, քաջություն» բառերից).
20) Գէորգ (IV դ.) — Γεώργιος (γεωργός «երկրագործ»).
21) Գրիգոր (II — III դդ.) — Γρηγόριος «արթուն, զգաստ».
22) Դեմետր (IV դ.)[7]. — Δημήτριος (Δημήτηρ-ի՝ երկրագործության աստվածուհու անունից).
23) Դիոսկորոս — Διόσκορος «աստվածորդի, Զևսի որդի».
24) Եպիփան (IV դ.) — 'Επιφανής «հայտնի, երևելի, նշանավոր, փառավոր».
25) Էրատոյ (մ. թ. ա. I դ.՝ ըստ օտար աղբյուրների) — 'Ερατώ (սիրային բանաստեղծության և քնարերգության մուսան՝ ἐρατός «սիրուն, սիրելի» բառից).

---

[3] Հ. Հյուբշմանը [AG, 2, 334] և, նրա հետևողությամբ, Հ. Աճառյանը, [ՀԱնԲ, 1, 103] դնում են հուն. 'Αλβῖνος < լատ. Albinus, բայց սրանք ձևով հեռու են։

[4] Հ. Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» մեջ [2, 50] չի հիշատակում, իսկ «Հայոց անձնանունների բառարանում» [1, 103] հղում է Աղբիանոսին, որ, սակայն, Հայերենում առանձին անուն է։

[5] Ստուգաբանությունը մերն է. Հ. Աճառյանը [ՀԱնԲ, 1, 277] տալիս է հուն. 'Αρίσταρχος և պրթ. ristāxēz» «հարություն մեռելոց» հնարավոր աղբյուրները։

[6] Հ. Աճառյանը [ՀԱնԲ, 1, 384] անվան մեկնությունը չի տալիս։

[7] Ըստ Հովհան Մամիկոնյանի հաղորդած ավանդության՝ անունը պիտի գոյություն ունեցած լինի մի քանի դար ավելի վաղ, ընդ որում պետք է նկատի առնել, որ Դեմետր իշխանի անունը կամ հունականացված է (եթե նա իրոք հնդիկ է եղել), կամ հունական է (եթե Դեմետրի հնդկական ծագման վերաբերյալ ավանդությունը անհավաստի է)։

26) Եւգենէոս (IV դ.) (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Εὐγένιος (εὐγενής «ազնիվ, ազնվացեղ»).
27) Եւթաղիոս (IV դ.) — Εὐθάλιος «բարեբողբոջ, բարեճյուղ».
28) Եւթիոս (IV դ.) (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Εὔθιας (εὐθύς «ուղիղ, ուղղամիտ»).
29) Եւղաղ — Εὐλάλιος (εὔλαλος «գեղեցկախոս»).
30) Եւսեբիոս (IV դ. ուշ՝ Սեբէոս) — Εὐσέβιος (εὐσεβής «բարեպաշտ»).
31) Եւստաթէոս (I դ.) (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Εὐστάθιος (εὐσταθής «բարեկառույց, կայուն»).
32) Եւստաքիոս (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Εὐστάχιος (εὔσταχυς «բարեհասկ»).
33) Զոթիկոս (II դ.) (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Ζωτικός «կենսատու».
34) Թէոդորոս (III դ.) (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Θεόδωρος «աստվածատուր, աստվածանվեր».
35) Կիրակոս (IV դ.) — Κυριακός «տերունի, տերունական».
36) Կիւրեղ (IV դ.) (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Κύριλλος (κύριος «տեր» բառից).
37) Կոստանդին (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Κωνσταντῖνος < լատ. Constantinus (constans, -tis «կայուն»).
38) Հեղինէ (I դ. ?) — 'Ελένη[8].
39) Ղազար(ոս) (IV դ.) — Λάζαρος < եբր. 'Elʿāzār «աստված օգնեց». հմմտ. Եղիազար.
40) Ղեւոնդ(իոս) (II դ.) (ուշ՝ նաև Լևոն). — Λέων, -τος, «առյուծ», Λεόντιος.
41) Ղուկիանոս (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Λουκιανός (լատ. Lucianus «լուսավոր»).
42) Մատթէոս (IV դ.[9], հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Ματθαῖος (< եբր. matitjahū — «Յահվեի (աստծու) նվեր».
43) Մարկոս (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Μάρκος < լատ. Marcus («մուրճ» ?).
44) Մարտիրոս (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Μάρτυρος «վկա, նահատակ».
45) Մելիտոս (Մելիտէ, Մելեա, ուշ՝ Մելիտոն, Մեղիտոն) (III դ.) — Μέλιτος «մեղրային».
46) Պետրոս — Πέτρος «քար, վեմ».
47) Պողիկտոս (III դ.) (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Πολύευκτος «շատ ցանկալի».
48) Պաւղոս (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Παῦλος < լատ. Paulus «փոքրիկ».
49) Սոփիա (III դ.) (հայ մատենագրության մեջ V դ. չի հիշված) — Σοφία «իմաստություն».

---

[8] Եղած ստուգաբանություններն անհավաստի են։ Հ. Աճառյանը գրում է. «Ըստ իս նշանակում է «նվիրական կողով, որ գեղեցիկ ծաղիկներով զարդարելով նվիրում էին Արտեմիս աստվածուհուն» [ՀԱնԲ, 3, 78]։

[9] Այս անունը կրել է Աղվանքի կաթողիկոսներից մեկը, որ նշանակում է, թե այն տարածված է եղել նաև Հայաստանում։

50) Ստեփաննոս (III դ.) — Στέφανος «պսակ».
51) Փաւստոս (IV դ.) — Φαῦστος < լատ. Faustus «երջանիկ».
52) Փիլիպպոս (Փիլիպպէ) — Φίλιππος (կոչ. Φίλιππε) «ձիասէր»։

Բացի հունական անուններ կրելուց, հայերը հելլենիզմի շրջանում ենթարկվում են նաև հունական կրոնական ազդեցությանը։ Հայկական հեթանոսական դիցարանի աստվածությունները համադրվում և բնութագրվում են ըստ համապատասխան հունական աստվածությունների, ստանում նրանց համար բնորոշ գործառույթներ։ Հայերի գլխավոր աստվածը՝ Արամազդը համադրվում է Զևսի հետ (Ζεύς, սեռ. Διός), և պատահական չէ, որ Ագաթանգեղոսը նրանց անունները գործածում է որպես հավասարարժեք. «Եւ անդ կործանեցին զբագինն Զևս դիցն Արամազդայ» (գլ. ճԹ.)։ Այս նույն ձևով էլ մյուս արական աստվածություններից Միհրը սովորաբար համադրվում է Հեփեստոսի (῞Ηφαιστος), Վահագնը՝ Հերակլեսի (Ἡρακλῆς — Հերակղ) և, մասամբ, Ապոլլոնի (Ἀπόλλων). Տիրը՝ Ապոլլոնի, իգական աստվածություններից Անահիտը՝ Արտեմիսի (Ἄρτεμις,-ιδος), Աստղիկը՝ Աֆրոդիտեի (Ἀφροδίτη), Նանեն՝ Աթենասի (Ἀθηνᾶ) հետ. համապատասխան հունական արձանները դրվել են այդ աստվածություններին նվիրված հեթանոսական տաճարներում [ՀԺՊ, 1, 904—905]։ Իհարկե, գործառույթների և բնութագրերի բացարձակ համադրություն տեղի չի ունենում, և նոր անունների տակ էլ հայկական աստվածներն ու աստվածուհիները պահպանում են իրենց բնորոշ գծերը։

գ) ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հնչյունական առումով հնագույն հունական փոխառությունները դրսևորում են մի շարք էական առանձնահատկություններ. 1) բացակայում են հունարենին ոչ հատուկ շչական հնչյունները՝ ճ, ջ, չ, շ, ժ, այլև ծ, ձ, ց հպաշփականները. 2) հիմնականում պահպանվում են կրկնակ բաղաձայնները (աբբայ, սիղղոբայ). բայց հմմտ. ἐκκλησία—եկեղեցի, որտեղ կրկնակ κκ-ի վերածումը պարզ կ-ի գալիս է խոսակցական լեզվից. 3) հուն. υ-ն սովորաբար արտահայտվում է իւ-ով (κυριακή—կիւրակէ), երբեմն ի-ով (τύπος—տիպ), հազվադեպ՝ ու-վ (σμύρα —զմուռս). պետք է կարծել, որ վերջինս ավելի հատուկ է եղել խոսակցական լեզվում գործածական բառերին. 4) հանդես են գալիս բուն հայերեն բառերի համար ոչ բնորոշ (միայն ձայնավորների սղման հետևանքով առաջացող) հնչյունական կապակցություններ՝ փս (ψ), կս (ξ), թր (θρ), հռ (ῥ) և այլն. միայն սաղմոս բառում ընկել է ψ-ի առաջին բաղադրիչը (ψαλμός), որ հավանաբար արդյունք է բառի նախնական բանավոր գործածության. 5) երկար ու կարճ ձայնավորների և երկբարբառների տառադարձությունը հետևողական բնույթ չունի. երկար η-ն և ω-ն կարող են արտահայտվել ինչպես ե-ով և ո-ով βῆμα—բեմ, κανών—կանոն և այլն), այնպես էլ է-ով և աւ-ով (ուշ օ-ով), առաջինը՝ մանավանդ բառավերջում (κῆτος —կէտ, λωδίκιον—լաւդիկ, լօդիկ). հուն. η-ի ի տառադարձությունը պետք է համարել համեմատաբար ավելի ուշ երևույթ՝ ըստ հունական ուշ արտասանության (δηνάριον—դենար և դինար). երկբարբառները համապատասխանաբար տառադարձված են և՛ երկբարբառներով, և՛ մենաբարբառներով. 6) մի շարք դեպքերում նկատվում են հունարեն բառերի զգալի ձևափոխության կամ հնչյունների ոչ սովորական տառադարձության դեպքեր, որոնք հիմնականում արդյունք են այդ բառերի խոսակցական գործածության մեջ համապատասխան ժողովրդական ստուգաբանության և զուգորդային ու դիրքային հնչյունափոխության՝ ἀδάμας, -ντος — անդամանդ/տ՝ ադամանդ/տ-ի կողքին, ἀναβολή — աղաբողոն, ἐργασία — արգասիք,[10], βήρυλλος — բիւրեղ, γαλεάγρα — զառագիղ, γραμματικός — գրամարտիկ(ոս)՝ գրամատիկոս-ի կողքին, ἐκκλησία — եկեղեցի, κάλαθος — կեղբ՝ բրբռ. կաղաթ, կալաթ ձևերի կողքին, κανδήλα — կանթեղ, μαρτύριον — մատուռն, μηλοπέπων — մեղրապոպ, μηχανή — մեքենայ, Ὀλυμπιάς, -άδος — ողոմպիադ՝ ոլիմպիադ-ի կողքին, στόμαχος — ստամոքս, στάμνος — ստոման, τάβλα — տապլի, տապագի. 7) առանձին դեպքերում նկատվում են հուն. ι (i) ձայնավորի սղման դեպքեր, որ խոսում է այդ բառերի փոխառման ժամանակի՝ նախքան III դ. սկիզբը լինելու մասին [Hübschmann, 1898]՝ δίστεγον — դստիկոն, κιρκήσιον — կրկես, πίναξ — պնակ, πινακίς,-ίδος — պնակիտ. 8) կան դեպքեր, երբ հուն. ձայնեղները խլանում են (δίστεγον — դստիկոն, τάβλα (< լատ. tabula) < տապլի). սա պետք է հին բարբառային երևույթի արտացոլում համարել. հաճախակի է -ιδ- > -իտ փոխանցումը՝ πινακίς,-ίδος — պնակիտ, παλαθίς,- ίδος — պաղատիտ. ποδαγρός-ից եկող պատագրոս բառի դեպքում հնարավոր է լատ. ptagrā-ի ազդեցությունը. ավելի սովորական է ձայնեղի դիրքային խլացումը կամ խուլերի ձայնեղացումը ռնգայինից հետո. 9) հին փոխառություններում α-ին և ο-ին այլ ձայնավոր հաջորդելու դեպքում հանդես է գալիս յ ձայնակապը (ἀήρ — այեր), ավելի նորերում՝ ոչ. 11) հուն. ο ձայնավորը սովորաբար արտահայտվում է ո-ով, բայց մի դեպքում փոխվում է ու-ի ռնգայինից առաջ, ինչպես բնիկ հայերեն բառերում՝ σπόγγος, հայց. -ον — սպունգն, մի դեպքում էլ ընկնում է՝ τοπάζιον — տպազիոն։

Հայերենի հունական փոխառությունների հնչյունական համապատասխանությունները կարելի է արտահայտել հետևյալ աղյուսակով (վերևում հիշված անկանոն հնչյունափոխությունները չեն տրվում).

հուն.	հայ.	օրինակներ
β	բ	βαλανεῖον — բաղանիք ἀναβολή — աղաբողոն ἀββᾶ — աբբա(յ)
δ	դ	δίστεγον — դստիկոն ἀνδρίας — անդրի
γ	գ	γαλεάγρα — զառագիղ μανδραγόρας — մանրագոր
π	պ	πίναξ — պնակ μελοπέπων — մեղրապոպ
τ	տ	τύπος — տիպ μέταξα — մետաքս
κ	կ	καμάρα — կամար σίκλος — սիկղ
φ	փ	φιλόσοφος — փիլիսոփա σοφιστής — սոփեստ
θ	թ	θηριακή — թերիակէ αἰθήρ — եթեր
χ	ք	χαρτής — քարտ ἀρχιεπίσκοπος — արքեպիսկոպոս

---

[10] Հնարավոր է փոխառության պարթևական միջնորդությամբ.

1	2	3
ζ	զ	ὄρυζα — *որիզ*
ʽ	հ	ῥήτωρ — *հռետոր*
	—	ῥητίνη — *ռետին*
σ	ս	σίκλης — *սիկղ*
		πράσον — *պրաս*
ρ	ր	βάρβαρος — *բարբարոս*
	ռ	ῥητίνη — *ռետին*
		χόρ — *քոռ*
λ	լ	λίτρα — *լիտր*
		παλάτιον — *պալատն*
	ղ	ὕλη — *հիւղ(է)*
		σίκλα — *սիկղ*
μ	մ	μαρτύριον — *մատուռն*
		στάμνος — *ստաման*
ν	ն	νάρδος — *նարդոս*
		τάλαντον — *տաղանտ/դ*
α	ա	ἀνδρίας — *անդրի*
		δάφνη — *դափնի*
ε	ե	ἐκκλησία — *եկեղեցի*
		μέταξα — *մետաքս*
η	ե	ἀήρ — *այեր*
		βῆμος — *բեմ*
	է	κῆτος — *կէտ*
		πεντηκοστή — *պենտեկոստէ*
	ի	δάφνη — *դափնի*
ο	ո	Ὀλυμπιάς — *ողիմպիադ*
		φόσσα — *փոս*
	ու	σπόγγος — *սպունգն*
ω	ո	κανών — *կանոն*
	աւ (օ)	λωδίκιον — *լաւդիկ (լօդիկ)*
ι	ի	λίτρα — *լիտր*
	—	πίναξ — *պնակ*
υ	ի	ὄρυζα — *որիզ*
	իւ	ὕλη — *հիւղ(է)*
	յ	ὑάκινθος — *յակինթ*
	ու	σμύρνα — *զմուռս*
αι	ե	αἰθήρ — *եթեր*
		αἱρετικός — *հերետիկոս*
ει	ե	κλεισοῦρα — *կղեսուր*
	ի	πανδοχεῖον — *պանդոկի*
οι	ու	ποιητής — *պուետես*
αυ	աւ	αὔγουστος — *աւգոստոս*
ευ	եւ	Εὐσέβιος — *Եւսեբիոս*
ου	ու	κλεισοῦρα — *կղեսուր*

դ) ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձևաբանական առումով կարելի է տարբերել հունարենում 1-ին և 2-րդ հոլովման պատկանող փոխառյալ բառերի երկու շերտ՝ 1) խոսակցական լեզվից եկող և մեծ մասամբ ժամանակագրորեն հին բառեր, որոնց մեջ հունական վերջավորությունները ընկնում են, և 2) ստանդարտ լեզվի ու կրթված խավի կողմից սովորաբար ավելի ուշ կատարված փոխառություններ, որոնց մեջ դրանք պահպանվում են։ Առաջին շերտի բառերը հարկ ենք համարում բերել ամբողջությամբ. **արգասի-ք** (ἐργασία), **բաղանի-ք** (βαλανεῖον), **բաղիստր** (βαλίστρα), **բեմ** (βῆμα), **բիւրեղ** (βήρυλλος), **գառագիղ** (γαλεάγρα), **դենար** (δηνάριον), **եկեղեցի** (ἐκκλησία), **լաւդիկ** (λωδίκιον *կամ* λώδιξ,-ικος), **լիտր** (λίτρα), **կամար** (καμάρα), **կանթեղ** (κανδήλα), **կար(ա)կին** (καρκίνος), **կեղր** (κάλαθος), **կէտ** (κῆτος), **կղեսուր** (κλεισοῦρα), **կղեր-ք** (κλῆρος), **կոնք** (κόγχη), **կրկես** (κιρκήσιον), **հիւղ** (*և* **հիւղէ** (ὕλη), **հի(ւ)պատ** (*և* **հիւպատոս**) (ὕπατος), **մանրագոր** (μανδραγόρας), **մարմար** (μάρμαρον), **մեղրապոպ** (μηλοπέπων), **մետաքս** (μέταξα՝ IV *դ. ոչ վաղ հանդիպող բառ*), **յակինթ** (ὑάκινθος), **նոտար** (νοτάριος), **որթոդոքս** (ὀρθόδοξος), **որիզ** ((ὄρυζα), **պանդոկի** (πανδοχεῖον), **պոռնիկ** (πορνικός), **պրաս** (πράσον), **ռետին** (ῥητίνη), **սատրապ** (σατράπης), **սիկղ** (σίκλος), **սպունգ** (σπόγγος), **ստաման** (στάμνος), **տաղանդ** (*և* **տաղանտ**) (τάλαντον), **տիպ** (τύπος), **տոմար** (τομάριον), **փասեան** (φασιανός), **փիլոն** (φελόνης) **փոս** (φόσσα), **քարադր** (χαράδριος), **քարտ** (χάρτης), **քսեստ** (ξέστης)։ *Այս բառերի թիվը կազմում է մեր կողմից առանձնացվածների կեսից մի փոքր պակաս՝ 46. այստեղ չի մտել* **զմուռս** *բառը* (σμύρνα), *որի* **ս**-*ն անբացատրելի է։ Երկրորդ շերտի բառերից բերենք մի քանի օրինակ՝* **արքեպիսկոպոս** (ἀρχιεπίσκοπος), **բարբարոս** (βάρβαρος), **տոկոս** (τόκος), **պուետես** (ποιητής), **թերիակէ** (θηριακή. *համմ. ասոր.* terjaqē < *հուն.*), **կաթողիկէ** (καθολική), **կիտրոն** (κίτρον < *լատ.* citrum), **սարդիոն** (σάρδιον) *և այլն։ Որոշ դեպքերում մենք գործ ունենք զգալիորեն ձևափոխված (վերջին ձայնավորի անկմամբ կամ փոփոխմամբ բնութագրվող) բառերի հետ, որոնք, ամենայն հավանականությամբ, նույնպես գալիս են խոսակցական լեզվից՝* **մատուռն** (μαρτύριον), **պալատն** (παλάτιον < *լատ.* palatium), **ստամոքս** (στόμαχος), **տոմս** (τόμος. *բայց համմ. ասոր.* tūmsā < *հուն.*)։ **Մեքենայ** *և* **սիղղոբայ** *բառերը հավանաբար գալիս են* μηχανή (*դոր.* μηχανά) *և* συλλαβή *բառերի հոգնակի* μηχαναί *և* συλλαβαί *ձևերից, իսկ* **տապալի** *բառը փոխառված է ամբողջապես՝ հուն.* τάβλα-*ից* (< *լատ.* tabula)։

Հունական 3-րդ հոլովման բառերի դեպքում տեղի է ունենում հետևյալը. 1) առանց հուն. -ς *վերջավորության՝ ձայնորդահանգ բառերի դեպքում դրանք սովորաբար առնվում են նույնությամբ՝* **այեր** (ἀήρ, -ερος), **եթեր** (αἰθήρ, -έρος), **լեգէոն** (λεγεών, -ῶνος < *լատ.* legeo, -onis), **կանոն** (κανών, -όνος), **հռետոր** (ʽρήτωρ, -ορος), **տիտան** (Τιτάν, -ᾶνος). *2) այլափոխ վերջավորություն ունեցող բառերի դեպքում հնարավոր է երկու ելք. ա) ինչպես հունական 1-ին և 2-րդ հոլովման բառերի առաջին շերտում, տեղի է ունենում ուղղականի վերջավորության, ինչպես նաև սեռականում հանդես եկող հիմքակազմ տարրի անկում՝* **անդրի** (ἀνδρίας, -αντος, *բայց համմ. նաև* **անդրիանդ/տ**), **ափսէ** (ἀψίς, -ῖνος), *բ) պահպանվում է բուն հիմքը, որ հանդես է գալիս թեք հոլովներում՝ վերջավորության անկմամբ՝* **ադամանտ/դ** (ἀδάμας, -αντος), **դ(ե)լփին** (δελφίς, -ῖνος), **ողոմպիադ** (ʽΟλυμπιάς, -άδος), **պաղատիտ** (παλαθίς, -ίδος[1], **պնակ** (πίναξ, -ακος), **պնակիտ** (πινακίς, -ίδος, *եթե ոչ* πινακίδιος), **քղամիդ** (χλαμύς, -ύδος)։ *3-րդ հոլովման բառերի դեպքում ուղղականը վերջավորությամբ հանդերձ չի արտացոլվում։*

Հունական ծագում ունեցող բառերը բաղադրության մեջ են մտնում կամ թեքվում սովորաբար հայերենի բառակազմական հիմքերին հատուկ եղանակներով՝ որպես հայերենին մերված բառեր (**ադամանդ—ադամանդեայ**, **արգասի-ք—արգասաւոր**, **բարբարոս—բարբարոսական** *և այլն*), *բայց կան դեպքեր, երբ ստացվում են հայերենի բուն ձևերի և բառակազմական հիմքերի տարբերություններ՝ 1) հունական վերջավորությունների անկումով՝* **ագոստոս—ագոստական**. *2) հունական հայցականի ձևով՝* **Քրիստոս—Քրիստոնե-**

ալ. 3) *հունարենի բառակազմական հիմքերին մոտ ձևերով՝* զմուռս—զմռնենի (σμύρνα) —զմռել (σμύρζα) *(բայց համմ. նաև* զմռսել)։

Հատկապես սովորական է հատուկ անունների -աս, -էս, -ոս *վերջավորությունների անկմամբ և ձևափոխությամբ տեղի ունեցող հոլովումը՝* Արիստակէս—Արիստակայ *և այլն։*

Հունական ծագում ունեցող բառերը հոլովվում են այն ընդհանուր օրինաչափություններով, որոնք բացահայտված են մեր «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» գրքում (Երևան, 1959, էջ 109—122). միայն թե նշենք, որ ոչ բոլոր բառերն են հանդիպում հոլովված ձևով ու, մանավանդ, լրիվ հարացույցով, և որ մի շարք դեպքերում առկա են հատկապես հունարենի բառերին բնորոշ գծեր. դրանցից էականը հատուկ անունների -աս, -էս, -ոս *վերջավորությունների անկման երևույթն է (համմ.* Արիստակէս—Արիստակայ), *թեև շատ դեպքերում դրանք պահպանվում են. վերջին դեպքում բուն հոգնակերտ* -ք-*ի փոխարեն երբեմն հանդես է գալիս հավաքականի* -ունք-*ը (համմ.* եպիսկոպոսունք)։

ե) ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

Հունական փոխառությունների՝ հայերենի բառապաշարին մերվելու աստիճանն ավելի փոքր է, քան իրանական և սեմական փոխառություններինը։ Չնայած սրան՝ հունական հնագույն փոխառությունների մեջ զգալի թիվ են կազմում այն բառերը, որոնք դեռևս շարունակում են իրենց գործածությունը։

Հունական փոխառությունները ըստ կենսունակության բաժանվում են երեք խմբի. 1) բառեր, որոնք մինչև այժմ էլ շարունակում են գործել ժամանակակից գրական լեզվում՝ երբեմն ոճական և գործառական որոշակի սահմանափակությամբ, երբեմն էլ հնչյունական մասնակի ձևափոխությամբ. դրանք կազմում են գերակշռող մեծամասնությունը՝ աբբա(յ), ադամանդ, այեր *(հզվդ.),* անդրի, արգասիք, արքեպիսկոպոս, ափսէ, բաղանի-ք, բաղիստր, բարբարոս, բեմ, բիւրեղ, դափնի, դելփին, դինար, դստիկոն, եթեր, եկեղեցի, եպիսկոպոս, զմուռս, լեգէոն, լիտր, կաթողիկէ, կաթողիկոս, կամար, կանթեղ, կանոն, կարկին, կէտ, կիտրոն, կիւրակէ, կղեր, կոնք, կրկէս, հերետիկոս, հիւլէ (հիւղէ), հիպատոս, հռետոր, մանրագոր, մատուռն, մարմար, մարտիրոս, մեղրապոպ, մետաքս, մեքենայ, յակինթ, նարդոս, նոտար, պալատ, պանդոկի (*ուշ՝* պանդոկ), պնակ, պնակիտ, պոռնիկ, պրաս, ռետին, սաղմոս, սատրապ, սարդիոն, սիկղ, սոփեստէս (*ուշ՝* սոփեստ), սպունգ, ստամոքս, տաղանդ, տարտարոս, տիպ, տիտան, տոկոս, տոմար, տոմս, տպազիոն, փասեան, փիլոն, փոս, քարտ (քարտէզ՝ *իմաստային տարբերակմամբ),* քղամիդ, քրիստոնեայ. օգոստոս *բառը «կայսր» իմաստով չի գործածվում բայց դեռևս հանդիպում է* օգոստափառ *բաղադրությունը. 2) բառեր, որոնք դուրս են եկել և ապա շրջակա լեզուների ազդեցությամբ վերականգնվել՝* ողոմպիադ (*այժմ՝* օլիմպիադա), որթոդոքս (*այժմ՝* օրթոդոքս), պոէտ (*այժմ՝* պոետ). տպազիոն-*ի կողքին գործածվում է* տոպազ *նոր ձևը. 3) բառեր, որոնք դարձել են անգործածական՝* բաթրոն, գրամատիկոս, լօդիկ, կեղթ *և այլն. այս առումով բնորոշ է այն հանգամանքը, որ հունարենից առնված ձևերը երբեմն տեղը զիջել են իրենց այլալեզու կրկնակներին. այսպես,* բաղսամո(վ)ն *բառը իր տեղը զիջել է արաբերենից փոխառված* բալասան-*ին.* թէատրոն *ձևի փոխարեն որպես ավելի սովորական բառ գործածվել է ասորերենի միջնորդությամբ փոխառված* թատր *ձևը, որ դեռ շարունակում է գործածվել բաղադրություններում՝* թատերական, թատերախաղ *և այլն. այժմյան* թատրոն *ձևը երկու ձևերի յուրատեսակ խառնուրդն է։*

Հունարենից հայերենի փոխառած բառերը ըստ իմաստային խմբերի բաշխվում են հետևյալ կերպ.

1. Ֆիզիկական աշխարհ. *1.11 հիւղ(է). 1.221 կղեսուր. 1.331 փոս. 1.441 ադամանդ. բիւրեղ. մարմար. յակինթ. սարդիոն, տպազիոն. 1.71 այեր. եթեր.*

3. Կենդանիներ. *3.671 փասեան. քարադր. 3.651 դ(ե)լփին. կէտ. կոնք «խեցեմորթ». սպունգ. 3.851 բասիլիսկոս.*

4. Մարմնի մասեր, մարմնական գործառություններ և պայմաններ. *4.46 ստամոքս. 4.841 պատագրոս. 4.88 բաղսամո(վ)ն. թերիակէ.*

5. Ուտելիք և ըմպելիք. կերակրի պատրաստում և ամանեղեն. 5.261 *կոնք. 5.32 ափսէ. պնակ. 5.34 ստոման. 5.68 պրաս. 5.751 պաղատիտ.*

6. Հագուստ, անձնական զարդարանք և խնամք. *6.25 մետաքս. 6.41 ադաբողոն. լաւդիկ (լօդիկ). փիլոն. քղամիդ.*

7. Բնակարան, տուն, կահկարասի. *7.121 բաղանի-ք. կրկէս. պալատ. պանդոկի. 7.271 կամար. 7.28 դստիկոն. 7.43 բաթրոն. բեմ. 7.45 կանթեղ.*

8. Երկրագործություն, բուսականություն. *8.41 արգասի-ք. 8.48 որիզ. 8.51 դափնի. զմուռս. կիտրոն. մեղրապոպ. ռետին.*

9. Ֆիզիկական տարբեր գործողություններ. արվեստ և արհեստ. *9.411 [տաղանդ]. 9.422 մեքենայ. 9.471 կար(ա)կին. 9.76 կեղթ. 9.83 անդրի.*

11. Ունեցվածք, սեփականություն և առևտուր. *11.441 դենար. սիկղ. տաղանդ. 11.68 տոկոս. 11.831 լիտր. [կեղթ. սիկղ]. տաղանդ. քոռ. քսեստ.*

12. Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ. *12.521 ստադիոն. [լիտր. կեղթ. սիկղ. տաղանդ. քոռ. քսեստ]. 12.551 տիտան.*

14. Ժամանակ. *14.62 կիւրակէ.*

16. Զգացմունք. խառնվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ. *16.261 թէատրոն. կրկէս, ողոմպիադ. [ստադիոն]. տապալի.*

17. Մտածողություն, միտք. *17.22 մորոս. 17.271 սոփեստէս. փիլիսոփոս.*

18. Ձայնական արտահայտություն, խոսք. ընթերցանություն և գիր. *18.211 հռետոր. 18.531 սիղղորայ. 18.55 պնակիտ. 18.56 տոմս. քարտ. 18.64 տիպ. 18.61 տոմար. 18.66 գրամա(ր)տիկ(ոս). նոտար. 16.67 պուէտէս.*

19. Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ. հասարակական հարաբերություններ. *19.311 սինկղիտոս. 19.32 ավգոստոս. սեբաստոս. 19.35 անթիհիւպատոս (անթիպատոս). հիւպատոս. սատրապ. 19.521 բարբարոս. 19.72 պոռնիկ.*

20. Ռազմական գործ. *20.151 լեգէո(վ)ն. 20.211 բաղիստր. 20.35 [կղեսուր].*

21. Օրենք. *21.12 կանոն. 21.39 գառազիր.*

22. Կրոն և նախապաշարմունք. *22.111 հերետիկոս. որթոդոքս. քրիստոն-(եայ). մարտիրոս. 22.13 մատուռն. 22.17 սաղմոս. 22.181 աբբա(յ). արքեպիսկոպոս. եպիսկոպոս. կաթողիկոս. 18.182 կղեր-ք. կղերիկոս. 22.21 եկեղեցի. կաթողիկէ. 22.211 պենտեկոստէ. 22.32 տարտարոս։*

Ինչ եզրակացություններ կարելի է անել հնագույն հունական փոխառությունների գործառական և իմաստային բաշխման հիման վրա։

1) Ընդհանրապես բացակայում են բայերը, թվականները, դերանունները, սպասարկու բառերը. փոխառությունների գերակշռող մասը գոյական անուններ են, փոքր մասը՝ ածականներ։ Սրանց բառակազմական արժեքն էլ համեմատաբար մեծ չէ։ Նշանակում է՝ հունական փոխառությունները առնըվել են հիմնականում որպես պատրաստի միավորներ. այս առումով բընորոշ են **կղեր–ֆ** և **կղերիկոս** բառերը (թեև հմմտ. նաև **կղերական**)։

2) Փոխառությունների մեջ գերակշռում են մշակութային, առևտրական, հասարակական-քաղաքական և կրոնական բառերը, մասնավորապես այնպիսիները, որոնք կապված են հունական քաղաքակրթության հետ։

3) Կենդանիների ու բույսերի անունները կամ հայերին անծանոթ ու քիչ ծանոթ (հատկապես ծովային կենդանիների) տեսակների անվանումներ են, կամ գալիս են դիցաբանությունից ու կրոնական գրքերից։

4) Համեմատաբար սակավաթիվ են ֆիզիկական աշխարհի, մարմնի մասերի և, փոքր-ինչ անսպասելի է, ժամանակի ու տոմարի, ռազմական գործի, օրենքի հետ կապված անվանումները. V դ. վկայված է շաբաթվա անուններից միայն **կիւրակէ**-ն. **տոմար** բառն իր այժմյան իմաստն ստացել է համեմատաբար ուշ։

6. ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԼԱՏԻՆԵՐԵՆԸ

Հայ-հռոմեական հարաբերությունների պատմությունն ընդգրկում է շուրջ չորս դար՝ կրելով գերազանցապես քաղաքական բնույթ, որին, բնականաբար, ուղեկցում է մշակութային ազդեցությունը։ Հռոմեական նվաճումները արևելքում սկզբնապես ոչ միայն չեն հասցնում հայերի նկատմամբ քաղաքական գերիշխանության, այլև նույնիսկ նպաստում են հայերի քաղաքական անկախությանը։ Սելևկյանների դեմ Մագնեսիայի նշանավոր ճակատամարտում հռոմայեցիների տարած հաղթանակից հետո Արտաշեսը և Զարեհը իրենց հայտարարում են Հայաստանի տարբեր մասերի թագավորներ և անցնում քաղաքական նվաճումների՝ ընդարձակելով իրենց սկզբնական տիրույթները։ Միայն մ. թ. ա. I դարում, Տիգրան 2-րդի ժամանակներում հայ-հռոմեական պատերազմների հետևանքով Հայաստանը դառնում է Հռոմի հովանավորությունը կրող պետություն՝ քաղաքական կախման տարբեր աստիճաններով։

Լատիներենի ազդեցությունը հայերենի վրա պետք է տեղի ունենար առաջին հերթին վարչական օղակներով և Հայաստանում գտնվող հռոմեական բանակի միջոցով։ Հռոմայեցիները Հայաստանում թողնում են նույնիսկ լատիներեն արձանագրություններ։ Հռոմեական ազդեցությունը ուժեղ պետք է լիներ հատկապես այն շրջանում, երբ Հայաստանը հայտարարվում է հռոմեական նահանգ (պրովինցիա), կամ էլ կառավարվում է Հռոմի դրածոների կողմից։ Մ. թ. IV դարում Արևելյան Հռոմեական կայսրության ձևավորմամբ հայերենի վրա լատիներենի ազդեցությունը փաստորեն դադարում է. այդ կայսրության պաշտոնական լեզուն հունարենն էր։

Հայերենի վրա լատիներենի ազդեցությունը տեղի է ունեցել երկու ձևով՝ անմիջաբար և միջնորդված։ Լատիներենից հունարենի միջոցով կատարած հայերեն փոխառությունների մասին մենք առիթ ունեցանք խոսելու հայերենի և հունարենի փոխհարաբերությանը նվիրված հատվածում։ Այնտեղ մատնանշվեցին մի շարք բառեր, որոնք լատիներենից հայերենին են անցել հունարենի միջոցով՝ **աւգոստոս, դենար, լաղիկ, լեգէո(վ)ն, կանթեղ, կիտրոն, կղեսուր, կրկէս, նոտար, պալատ, տապլի, փոս**։

Այստեղ կանգ առնենք անմիջական համարվող փոխառությունների վրա, թեև ոչ բոլոր դեպքերում կարելի է վստահ լինել, որ դրանք հունական միջնորդությամբ չեն կատարվել։ Հենվելով գերազանցապես Հ. Հյուբշմանի վրա՝ Հ. Աճառյանը [**Աճառյան**, ՀԼՊ, 1, 326—329] թվարկում է 10 բառ, որոնք բնականաբար պիտի առնված լինեն, որպես անմիջական փոխառություններ, նախագրային շրջանում [հմմտ. **Meillet**, 1913].

1) **արկղ, -եղ.** հմմտ. ժող. լատ. arcla (հուն. ἄρκλα)՝ գրական arcula-ի դիմաց.

2) **բաստեռն, -ան, -անց** «դահավորակ». հմմտ. լատ. basterna. հուն. փոխառյալ βαστέρνιον ձևը գործածված է հայերենից ավելի ուշ՝ VI դ. (Հուստինիանոսի օրենսգրքում)։

3) **լկտիք** «դահավորակ». հմմտ. լատ. lectica (> հուն. λεκτίκιον > հայ. ղեկտիկ).

4) **կայսր, -եր.** հմմտ. լատ. caesar (> հուն. καῖσαρ > հայ. կեսար).

5) **կառ-ք, -ի, -աց.** հմմտ. լատ. carrus (< գալլ. carros. հմմտ. և հուն. κάρρον < լատ. carrum)[1].

6) **ղենջակ, -ի, -աց** «անձեռոց, սրբիչ». հմմտ. լատ. lentium (linteum) (> հուն. λέντιον > հայ. ղենտի).

7) **մարգարիտ, -ի, -այ.** հմմտ. լատ. margarita (> հուն. μαργαρίτης).

8) **պան** «կլոր հաց, բլիթ». հմմտ. լատ. panis «հաց» (< հուն. πᾶνις).

9) **սիտղ** «դույլ». հմմտ. լատ. situla (> հուն. σίτλα) (?).

10) **սկուտղ, -եղ** (ուշ՝ սկուտեղ). հմմտ. լատ. scutella (> հուն. σκουτέλα).

Սրանցից **սիտղ**-ը գործածված է ուշ շրջանում, և, ինչպես նշում է նաև Հ. Աճառյանը, ավելի հավանական է նրա հունական ծագումը։ Մնացած ինը բառի՝ լատիներենից փոխառված լինելու ապացույցներն էլ համեմատաբար թույլ են. 1) չի կարող լուրջ ապացույց ծառայել բառերի շատ հին լինելու փաստարկը, եթե նկատի առնենք, որ հունական քաղաքական և մշակութային ազդեցությունն էլ հելլենիզմի շրջանում կարող էր այս կամ այն կերպ արտահայտված լինել բառային փոխառությունների ձևով. նկատի ունենալով **բաստեռն, կառք, պան** բառերի հունական զուգահեռ ձևերի համեմատաբար ուշ գործածված լինելը՝ նրանց համար իրոք կարելի է ենթադրել անմիջական լատինական աղբյուր. 2) **արկղ, սկուտղ, ղենջակ** բառերի՝ անմիջաբար լատինական աղբյուրից ծագելը կասկածի տակ է դնում հենց ինքը՝ Աճառյանը՝ հարցը լուծելով հօգուտ լատիներենի՝ առանց համոզիչ հիմնավորման. 3) **մարգարիտ** բառի դեպքում հունարեն μαργαρίτης > լատ. margarita > հայ. **մարգարիտ** անցում ենթադրելը հիմնվում է հայ. բառի հնության վրա (հմմտ. վիպասանական հատվածում «Տեղայր մարգարիտ...»), բայց սա, ինչպես նշեցինք, թույլ ապացույց է. ավելի կարևոր է նշել **մարգարիտ** բառի **ի–ա** հո-

---

[1] Հ. Աճառյանը նշում է, որ այս բառը հունարենում չկա, բայց իրականում այն վկայվում է [հմմտ. Chantraine, DELG, 2, 501]։

լուծումը, որի ա-ն կարող էր արտացոլել լատ. a-*ով ձևը. Հնարավոր է մի այլ ենթադրություն ևս. հունարեն բառը համարվում է արևելյան ծագման, և որպես ապացույց բերվում է պահլավ.* marvārit (*պրսկ.* marvarīd) *բառը, որի փոխառյալ լինելը նույնպես հնարավոր է* [**Frisk,** GEW, *2, 174—175.* **Chantraine,** DELG, *3, 666*]*: Քանի որ* v>g *անցումը սովորական է հայերենի համար և տեղի է ունեցել նաև հայերենի ուրարտական փոխառությունների մեջ, թերևս հենց հայերենը պետք է համարել հունարենի աղբյուրը՝ ենթադրելով, որ նա իր հերթին բառը փոխ է առել իրանականից կամ դրա բուն աղբյուրից՝ բավական հնում: Նշենք, որ կա նաև իրան.* va>*պրսկ.* ga *անցում, բայց սկզբնադիրքում:*

Հայերենի լատինական փոխառությունների առանձնահատկությունների մասին հարկավոր է նշել հետևյալը. 1) այդ բառերում նկատվում է վերջավանկերի նույն կարգի թուլացում կամ անկում, ինչպես բնիկ հայերեն բառերում՝ **կայսր** (*լատ.* caesar>*հուն.* καῖσαρ), **պան** (*լատ.* panis), **սկուտղ** (*լատ.* scutella>*հուն.* σκουτέλα) *և այլն. 2)* **լկտիք** *բառում նկատվում է անկանոն հնչյունափոխություն՝* e-*ի անկում* (*լատ.* lectica>*հուն.* λεκτίκιον)*. 3) եթե սկզբնային* l-*ն* **լկտիք** *բառում պահպանվում է, ապա* **ղենջակ** *բառում այն փոխվում է* **ղ**-*ի՝ առանց նախահար ձայնավորի, որ հատուկ է համեմատաբար ոչ այնքան հին բառերի. մյուս կողմից՝ արտասովոր է* ntj>**նջ** *փոփոխությունը, որ շատ հին լինել չի կարող, ուստի պետք է բարբառային երևույթ համարել. 4) լատիներենից փոխառված բառերը զգալիորեն ավելացնում են* -**ր**-*ով և* **ղ**-*ով հիմքերով հոլովվող բառերի թիվը, որ ընդհանրապես մեծ չէ. 5) բառաիմաստային առումով լատինական ծագման բառերը զգալի գործածություն են ունեցել, հաճախ հանդիպում են բարբառներում և մեծ մասամբ հարատևել են մինչև մեր օրերը՝ հիմնականում պատկանելով մշակութային-քաղաքակրթական և պետական ոլորտներին՝ ըստ թեմատիկ խմբերի բաշխվելով հետևյալ կերպ.*

1. **Ֆիզիկական աշխարհ.** *1.441 մարգարիտ.*

5. **Ուտելիք և ըմպելիք, կերակրի պատրաստում և ամանեղեն.** *5.261 սիսեռ 5.32 սկուտղ. 5.52 պան.*

6. **Հագուստ, անձնական զարդարանք և խնամք.** *6.82 ղենջակ.*

7. **Բնակարան, տուն, կահկարասի.** *7.411 արկղ.*

10. **Շարժում, տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն.** *10.75 կառք. 10.751 բաստեռն. լկտիք.*

19. **Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ. հասարակական հարաբերություններ.** *19.821 կայսր:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. *Հայոց հին գրականության պատմություն, 1, Երևան, 1944 (տե՛ս նաև Երկեր, 3, Երևան, 1968):*

Աբրահամյան Ա. Ա. *Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1958ա. 1963*^{2}***:*

Աբրահամյան Ա. Ա. *Բառաքննական դիտողություններ, ՀԳԱՏ, 1958բ, 4:*

Աբրահամյան Ա. Ա. *Եզնիկ Կողբացու երկի տերմինաբանության մասին, ՊԲՀ, 1971, 3:*

Աբրահամյան Ա. Գ. *Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959:*

Աբրահամյան Ա. Գ. *Ներկա թվականի սկզբնավորությունը ըստ հայ տոմարագետների հաշվումների, ՊԲՀ, 1970, 3:*

Աբրահամյան Ռ. *Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, Երևան, 1965:*

Աբուլաձե Ի. *«Դղեակ» բառի ստուգաբանությունը, ՀԳԱՏ, 1944ա, 1—2:*

Աբուլաձե Ի. *Հին հայերենում գործածված մի նոր բառ, ՀԳԱՏ, 1944ա, 1—2:*

Ագաթանգեղայ *Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Կանայանցի, Տփղիս, 1909:*

Ադոնց Ն. *Հայաստանի պատմություն, Երևան, 1972:*

Ալիշան Ղ. *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895:*

Աղաբեկյան Մ. Ա. *Տարածքային բառազուգաբանությունների սահմանման սկզբունքները, ԼՀԳ, 1971, 12:*

Աղաբեկյան Մ. Ա. *Ստուգաբանական դիտողություններ, ՊԲՀ, 1980, 3:*

Աղաբեկյան Մ. Ա. *Հնդեվրոպական *կ բաղաձայնը հայերենում, ՊԲՀ, 1981, 4:*

Աղայան Է. Բ. *Բարբառային հնագույն տարբերությունները հայերենում, ՀԳԱՏ, 1958ա, 5:*

Աղայան Է. Բ. *Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին, ՊԲՀ, 1958բ, 2:*

Աղայան Է. Բ. *Հայ լեզվաբանության պատմություն, 1—2, Երևան, 1958—1962:*

Աղայան Է. Բ. *Հայերենի հնչույթային համակարգի պատմությունից, ՊԲՀ, 1961, 2.*

Աղայան Է. Բ. *Հայոց լեզվի պատմության հարցերը նորագույն ուսումնասիրություններում (գրախոս.), ՊԲՀ, 1962, 1:*

Աղայան Է. Բ. *Հայերենի հնչույթային համակարգի պատմությունից, ՊԲՀ, 1961, 2:*

Աղայան Է. Բ. *Գրաբարի քերականություն, 1ա, Ձևաբանություն, Երևան, 1964:*

Աղայան Է. Բ. *Հնդեվրոպական* *ger- *արմատը հայերենում, ԼՀԳ, 1967, 5:*

Աղայան Է. Բ. *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974:*

Աճառյան Հ. *Ձայնաբանություն վրացերեն հայերենից փոխառյալ բառերի, «Արարատ», 1898, 7—8:*

Աճառյան Հ. *Հայերենի բնաձայն և կրկնավոր բառերը, ՀԱ, 1899, 7—8:*

Աճառյան Հ. *Քմքականներու կոկորդական մնալը, ՀԱ, 1905, 8—9:*

Աճառյան Հ. *Խ և Կ ձայներուն լծորդութիւնը, ՀԱ, 1909, 5:*

Աճառյան Հ. *Հայ բարբառագիտություն, Մոսկվա—Ն. Նախիջևան, 1911:*

Աճառյան Հ. *Թոխարերեն և հայերեն, ՀԱ, 1912, 1:*

Աճառյան Հ. *Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913:*

Աճառյան Հ. *Մեսրոպյան գրերու հնչումը կամ արժեքը, ՀԱ, 1922ա, 6—7:*

Աճառյան Հ. *Հայերեն տարածված բառերը օտար լեզուներու մեջ, ՀԱ, 1922բ, 8—9:*

Աճառյան Հ. *Հայերենի երկբարբառները, ՀԱ, 1922գ, 10—11:*

Աճառյան Հ. *Հայերենի երկբարբառները և բաղաձայնները, ՀԱ, 1922, 12:*

Աճառյան Հ. *Հիթիտ-հայ բառեր, «Նորք», 1925, 5—6:*

**Այստեղ և այլուր տարեթվերի մոտ՝ վերևում դրված թվանշանները ցույց են տալիս հաջորդ այն հրատարակությունները, որոնք օգտագործված են այս աշխատության մեջ:*

Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան, 1—7, Երևան, 1926—1935. 1971²—1979²։
Աճառյան Հ. Հայոց գրերը, Վիեննա, 1928 (և Երևան, 1968)։
Աճառյան Հ. Հայոց լեզվի պատմություն, 1—2, Երևան, 1940—1951։
Աճառյան Հ. Հայոց անձնանունների բառարան, 1—5, Երևան, 1942—1962։
Աճառյան Հ. Լիակատար քերականություն հայոց լեզվի, 1—6, Երևան, 1953—1971։
Այտընյան Ա.—Չալըխյան Վ. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866։
Առաքելյան Բ. Ն. Հայկ-Օրիոն, ՏՀՖ, 1941, 8։
Առաքելյան Բ. Ն. Լատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից, ՊԲՀ, 1967, 4։
Առաքելյան Վ. Դ. Բայանունը գրաբարի տարբեր խոնարհումների առնչությամբ, ՊԲՀ, 1968, 1։
Առաքելյան Վ. Դ. Դասական և հետդասական գրաբարը, ՊԲՀ, 1976, 1։
Առաքելյան Վ. Դ. Սեռի քերականական կարգը և բայածանցները գրաբարում, ՊԲՀ, 1980, 2։
Առաքելյան Վ. Դ. Բառաբննական դիտողություններ, ՊԲՀ, 1979, 4։
Առաքելյան Վ. Դ. Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981։
Առաքելյան Վ. Դ. Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, 1984։
Ասատրյան Գ. Ս. Հայերենում իրանական մի քանի փոխառությունների հարցի շուրջ, ՊԲՀ, 1982, 2։
Ասատրյան Մ. Ե. Անեզական բառերը հայերենում, ՊԲՀ, 1960, 3։
Աստվածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, Կ. Պոլիս, 1895։
Ավդալբեգյան Թ. Խորենացու «Պատմության» ժամանակաբանական սկզբնագիրը վերականգնելու նոր փորձ, ՊԲՀ, 1964, 4։
Ավդալբեգյան Թ. Միհրը հայոց մեջ, «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969։
Ավետիսյան Տ. Մ. Հայոց անվանման բանաձևերը, ՊԲՀ, 1982, 1։
Արգումանյան Ն. Ա. Հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվող «մատեան գունդ» զորամասը, ՊԲՀ, 1973, 2։
Աւգերեան Մ. Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865²։
Աւետիքեան Գ., Սիւրմելեան Խ., Աւգերեան Մ. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Ա—Բ, Վենետիկ, 1836—1837։
Բագրատունի Ա. Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852։
Բասմաջյան Կ. Իսկական պատմություն հայոց, Կ. Պոլիս, 1914։
Բատրուպանյան Ղ. Ազգային լեզվագիտություն, «Բանասեր», 1902—1903։
Բատրուպանյան Ղ. Ստուգաբանական հետազոտություններ, ՀԱ, 1903—1907։
Բատրուպանյան Ղ. Լեզվաբանական, ՀԱ, 1908—1910։
Բարթիկյան Հ. Մ., Մելքոնյան Հ. Գ. Ադիաբենի պետությունը և Հայաստանը (գրախոս.), ՊԲՀ, 1981, 2։
Բարխուդարյան Ս. Գ. Վելիկուխի երկիրը, ՀԿՊՀԱ, 1, Երևան, 1935։
Բարսեղյան Լ. Ա. Հայասա-Ազզիի ու նրա մի քանի բնակավայրերի տեղադրման հարցի շուրջը, ՊԲՀ, 1963, 3։
Բեդիրյան Պ. Ս. Հայերենի մի քանի բառերի ստուգաբանության շուրջը, ՀԳԱՏ, 1955, 9։
Բեդիրյան Պ. Ս. Ստուգաբանական վերլուծություններ, ՀԳԱՏ, 1956, 7։
Բեդիրյան Պ. Ս. Մի քանի ստուգաբանություններ, ՊԲՀ, 1962, 1։
Բեդիրյան Բ. Նախագրային հայերենի ձայնդարձի համակարգը, ԼՀԳ, 1966, 11։
Բեդիրյան Պ. Ս. Ստուգաբանություններ, ՊԲՀ, 1966, 2։
Բոնֆանտե Ջ. Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների մեջ, ՊԲՀ, 1981, 2։
Գավուքչյան Մ. Արմեն և հայ անունների ծագումը և Ուրարտուն, Բեյրութ, 1973։
Գարագաշյան Ա. Մ. Քննական պատմություն հայոց, 1—4, Թիֆլիս, 1895։
Գրեպին Ջ. Խեթա-հայկական մի զուգահեռ, ՊԲՀ, 1972, 3։
Գրեպին Ջ. Դասական հայերենի դակերենից փոխառյալ տարրերի ուսումնասիրության փորձ, ԼՀԳ, 1976, 4։
Դանիելյան Է. Լ. Մարդերի ցեղը Հին Հայաստանում (մ. թ. ա. V— մ. թ. I դդ.), ՊԲՀ, 1976, 1։
Դյակոնով Ի. Մ. Խեթերը, փռյուգիացիները և հայերը, ՀԳԱՏ, 1956, 11։
Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1912 (աշխարհաբար թարգմանությունը Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970)։
Երեմյան Ս. Տ. Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում, ՊԲՀ, 1958, 3։
Երեմյան Ս. Տ. Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի Երևան, 1963։
Երեմյան Ս. Տ. Նախշ-ի-Ռուստեմի «Քաաբա ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, ՊԲՀ, 1966, 2։
Երեմյան Ս. Տ. Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, ՊԲՀ, 1968ա, 2։
Երեմյան Ս. Տ. Հայկական առաջին պետական կազմավորումները (7-րդ և 6-րդ դդ. մ. թ. ա.), ՊԲՀ, 1968բ, 3։
Երեմյան Ս. Տ. Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, 1970։
Էլչիբեկյան Ժ. Ասորիքը հայկական տերության կազմում, ԼՀԳ, 1970, 6։
Էսապալեան Պ. Շնջրի, կուղբ և ջրշուն, ՀԱ, 56, 1942ա։
Էսապալեան Պ. Երկինք, ՀԱ, 56, 1942բ։
Թումանյան Բ. Ե. Օրվա սկիզբն ու մասերի բաժանումը հին և միջնադարյան Հայաստանում. ՊԲՀ, 1966, 3։
Ինճիճյան Ղ. Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Մեծ Հայք, Վենետիկ, 1832։
Ինճիճյան Ղ. Հնախօսութիւն հին Հայաստանի, 1—3, Վենետիկ, 1835։
Իշխանյան Ռ. Համեմատական լեզվաբանության նոր հայտնագործումները և հայերի ծագման ու հնագույն պատմության հարցերը, ԲԵՀ, 1979, 2։
Իսրայելյան Մ. Ա. Ուրարտագիտական դիտողություններ, ՊԲՀ, 1958, 2։
Իսրայելյան Մ. Ա. Ուրարտագիտական դիտողություններ, ԼԳՀ, 1970, 9։
Լեո, Հայոց պատմություն, Տփխիս, 1917 (տե՛ս նաև Երկերի ժողովածու, 1, Երևան, 1966)։
Խաչատրյան Ա. Հայաստանի սեպագիր շրջանի պատմություն, Երևան, 1933։
Խաչատրյան Մ. Մ. 7-րդ դարի «Աշխարհացույցի» մասին, ՊԲՀ, 1968, 4։
Խաչատրյան Մ. Մ. Հայկական լեռնաշխարհն ըստ Պտղոմեոսի քարտեզագրական տվյալների, ՊԲՀ, 1980, 2։
Խաչատրյան Վ. Ն. Խեթա-հայկական դիցաբանական ընդհանրություններ, ԼՀԳ, 1967, 8։
Խաչիկյան Լ. Ս. Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը, ՊԲՀ, 1963, 4։
Խաչիկյան Լ. Ս. Օտարալեզու հայ գրականությունը չորրորդ դարում, ՊԲՀ, 1973, 3։
Կարագյոզյան Հ. Սեպագիր աղբյուրների Դայաենու երկիրը, ԼՀԳ, 1978, 6։
Կոստանյան Ս. Ս. «Նախարար» տերմինի մասին, ՊԲՀ, 1973, 3։
Կրկյաշարյան Ս. Մ. Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970։
Կորտլանդտ Ֆ. Պատմահամեմատական հնչյունաբանության հարցեր, «Հայոց լեզու և գրականություն», Երևան, 1983։
